ԿԱՐՍԻ ՄԱՐԶԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԿԱԶՄՈՒՄ
(1919 Ապրիլ – 1920 Հոկտեմբեր)

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ
ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆԵԱՆԻ
ՅՈՒՇԵՐԸ

աշխատասիրութեամբ՝
ՎԼԱԴԻՄԻՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

THE MARZ (PROVINCE) OF KARS
WITHIN THE REPUBLIC OF ARMENIA
(April 1919 – October 1920)

MEMORIES OF KARS
GOVERNER
STEPAN GHORGHANYAN (KORGANOV)

Compiled by:
VLADIMIR HARUTYUNYAN

ՀՏԴ 94(479.25):82-94
ԳՄԴ 63.3(5Հ)
Կ 364

ՎԼԱԴԻՄԻՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Կ 364 Կարսի մարզը Հայաստանի Հանրապետութեան կազմում (1919-1920թթ.):Վ. Հարութիւնեան.-Եր.: Հեղ. հրատ. 2018թ., 644 էջ:

Գրքում ներկայացուած են 1919թ. Ապրիլից մինչև 1920թ. Հոկտեմբեր Կարսի քաղաքացիական նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը, որոնք հեղինակը թղթին է յանձնել 1922թ.: Յուշերում ընթերցողը կը գտնի բաւականին նոր փաստեր և տուեալներ, որոնք առնչւում են Կարսի մարզում և առհասարակ Առաջին Հանրապետութիւնում այդ ժամանակաշրջանում ծաւալուած իրադարձութիւններին:

ՀՏԴ 94(479.25):82-94
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-0-2787-6

© Վլադիմիր Հարութիւնեան, 2018թ.

ՆՈՒԻՐՈՒՄ Է ԲՈԼՈՐ ԱՅՆ
ՀԱՅ ՄԱՐԴԿԱՆՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ,
ՈՐՈՆՔ 1918-1921 ԹԹ.
ՓՈՐՁԵՑԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ
ՀԱՅՈՑ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՍՏԵՓԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՂՈՐՂԱՆԵԱՆ

ԱՅՍ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

«Ընթերցողին առաջարկուող սոյն գրքում հաւաքուած և ի մի են բերուած Հայաստանի Հանրապետութեան Կարսի առաջին և միակ նահանգապետ Ստեփան Ղորղանեանի՝ դեռևս չհրապարակուած ձեռագրերը: Ժամանակագրական առումով ընդգրկուած են Հայաստանի առաջին հանրապետութեան գոյութեան այն 18 ամիսները (1919 թ. Ապրիլից մինչև 1920 թ. Հոկտեմբերի վերջ), որոնց ընթացքում Ստեփան Ղորղանեանը եղել է Կարսի քաղաքացիական նահանգապետը: Թէև ինքը՝ հեղինակն էլ իր գրառումները վերնագրել է որպէս «Կարսի նահանգապետի յիշողութիւնները», սակայն դրանք, որպէս յուշեր՝ կարելի է համարել խիստ պայմանական: Այն, իրօք, թուագրուած է ընդամէնը 1922-ով: Հաշուի առնելով ձեռագրի մեզ հասած ծաւալը (ընդունուած ստանդարտի գրեթէ երկու մակերեսն ունեցող 1673 արխիւային թերթ, որից ակնյայտօրէն բացակայում են մի շարք թերթեր), պարզ է դառնում, որ «Կարսի նահանգապետի յիշողութիւնները» սկսել են գրուել, ըստ էութեան, Հայաստանի Հանրապետութեան կործանումից անմիջապէս յետոյ: Այսինքն՝ չափազանց թարմ յետքերով շարադրուած այդ նիւթը դասական առումով յուշագրութեան ժանրից, իրօք, զգալիօրէն տարբերւում է: Իսկ զուտ մարդկային տեսակէտից նման «շտապողականութիւնը» բացայայտ վկայում է այն մասին, որ ձեռագրի հեղինակը՝ անկախութիւնը կորցրած և օտարի կողմից բռնազաւթուած մի երկրի կարևորագոյն տարածաշրջանի նախկին կառավարիչը, որպէս պետական այր և քաղաքացի՝ չափազանց ծանր է տարել կատարուածը և քաջատեղեակ լինելով իրադարձութիւններին, գերազանց տիրապետելով լեզուին և գրչին՝ շտապել է ստեղծուած միանգամայն թշնամական միջավայրում հասցնել գոնէ թղթին յանձնել իր տեսածն ու վերապրածը, փորձն ու դիտարկումները պետականաշինութեան, պետութեան կառավարման և պահպանման հարցերի վերաբերեալ՝ յուսալով, որ յետագայում հաւանաբար էլի կը լինեն հայոց անկախութեան վերականգման հնարաւորութիւններ և իր գրառումներն ինչ-որ չափով օգտակար կը լինեն նոր անկախութեան սերունդներին: Գուցէև ամենևին էլ այդպէս չէ: Պարզապէս, մարդն իր միջով անցկացնելով ու գիտակցելով սեփական պետութեան կորստեան կատաստրոֆիկ հետևանքների ամբողջ սարսափն ու աղետը, ապրելով մեծ ցաւ և

անձնական ողբերգութիւն, և չունենալով արտայայտուելու, կիսուելու և ինչ-որ բան շտկելու որևէ միջոց և հնարաւորութիւն՝ որոշել է թղթին յանձնել իր տեսածը, հասկացածը, զգացածն ու մտածածը: Այսինքն՝ զուտ ժանրային տեսակէտից (եթէ ի հարկէ տուեալ դէպքում դա էական է) Ստեփան Ղորղանեանի այս ձեռագրերը կարող են դասուել նօթերի ժանրին: Իսկ աւելի լայն առումով՝ մեր սեղանին դրուած այս գործն արդէն պատմական տեսակէտից շատ հետաքրքիր, կարևոր ու մեծ արժէք է…

Երբ ես կարդում էի Ստեփան Ղորղանեանի գրառումները՝ բնականաբար գիրքը կազմելու աշխատանքն ինքնըստինքեան պահանջում էր վերընթերցել դրանք նորից ու նորից, ինձ միշտ ուղեկցում էր մի զգացողութիւն, որ շարադրանքի նման ոճին, փաստերի և իրադարձութիւնների վերլուծութեանը, դրանց ներկայացման ու մատուցման այս ձևին՝ նախկինում ես էլի եմ հանդիպել, ճաշակել եմ դրանց վարպետութեան հմայքն ու հիացել: Եկէք, ինչպէս ասում են՝ չեղած տեղը ինտրիգ չինարենք, չհամաձայնողներին էլ թողնենք իրենց կարծիքին, բայց անձամբ ինձ՝ յարգելի՛ ընթերցող, զուգահեռաբար եկող այդ զգացողութիւնը տարաւ և դէմ առ դէմ կանգնեցրեց մեր բեմի և գրչի մեծագոյն վարպետներից մէկի՝ Վահրամ Փափազեանի հատորների առաջ: Եւ ասես ինքնիրեն, առանց հրաւէրի սպասելու՝ գրապահարանից դուրս եկաւ ու գրասեղանիս յայտնուեց նրա «Համլետն ինչպէս տեսայ» վերլուծութիւն-մեկնաբանութիւնը: Բաւական երկար ընդմիջումից յետոյ նորից ընթերցեցի այն, որից յետոյ ևս մէկ անգամ «սանրեցի» Ստ. Ղորղանյանի ձեռագիրը: Եվ շատ բան, ինչպես ասում են, իր տեղն ընկավ, քանզի փափազյանական «Համլետ»-ից հետո արդեն միանգամայն հասկանալի և ընկալելի դարձան ինձ համար նաև «Կարսի նահանգապետի յիշողութիւնները» այդ օրերի իրադարձութիւնների նկարագրման ամբողջ խորութեամբ և ընդգրկմամբ: Դա, ըստ էութեան՝ «Այն օրերը ինչպէս տեսայ» անտեսանելի, բայց թաւածող իմաստային վերնագրով մի վերլուծութիւն-զեկոյց է՝ ուղղուած սեփական ժողովրդին:

«Համլետ»-ի վերլուծութեան հենց սկզբից Փափազեանը դիմում է իր ընթերցողին. «Ամուր կառչի՛ր քո սեփական հոգուդ, որովհետև ճանաչելու և ճաշակելու համար այս գործը՝ պէտք է կարենաս ճանաչել ու հասկանալ նախ և առաջ ինքդ քեզ, ի՛մ ընթերցող»[1]: Եւ շարունակում է. «…Ահա թէ ինչու տեսնելիս կամ կարդալիս այս գործը՝ ընթերցողը կամ հանդիսատեսը ոչ թէ տեսնում է մէկին, որ ինքը չէ, այլ ինքն իրեն՝ ուզի այդ թէ չուզի, միևնոյնն է»[2]:

Մի զուգահեռ ևս «շեքսպիրեան մոտիւներով»: «Համլետ»-ի լաւագոյն էկրանաւորումներից մէկը համարւում է 1964 թ. Գրիգորի Կոզինցևի բեմադրած նոյ-

---

[1] **Փափազեան Վ.**, Երկեր հինգ հատորով, հ. 4, Համլետն ինչպէս տեսայ, Երևան, 1983, էջ 5:
[2] Նոյն տեղում, էջ 6:

նանուն ֆիլմը: Գրեթէ բոլոր կինոքննադատները արժանին մատուցելով դերասանական խմբին՝ միևնոյնն է, միաբերան պնդում են, որ կինոնկարի և նրա ռեժիսորի ամենամեծ նուաճումը նախ և առաջ Էլսինոր ամրոցի՝ խիստ համոզիչ ու ճշմարտանման մթնոլորտի բեմադրումն ու ներկայացումն է: Այնքան ճշմարտանման, որ հանդիսատեսը միանգամից ընկղմւում է մոոտալուտ ողբերգութեան անխուսափելիութեամբ հագեցած այդ մթնոլորտի մէջ, դառնում դէպքերի ընթացքի մասնակիցը, և Էլսինորում բնակուող միւս կերպարների հետ միասին՝ հասնում մինչև ողբերգական աւարտը:

Ստեփան Ղորղանեանի այս ձեռագրի ամենամեծ արժէքն այն է, որ նօթերի հեղինակն ամենայն մանրամասնութեամբ նկարագրում է Հայաստանի կազմում եղած 18 ամիսների ընթացքում Կարսի ամրոցում տիրող մթնոլորտը: Այն մթնոլորտն ու իրավիճակը՝ որոնք չէին կարող ի վերջոյ չհանգեցնել անասելի հետևանքներով սարսափելի համազգային մի աղետի: 1920 թ. Հոկտեմբերի 30-ից յետոյ «**Կարս**» բառը հայերի համար դադարեց կրել նախկին թագաւորանիստ վայրի, նոյնիսկ զուտ բնակավայրի, կամ էլ ինչ-որ աշխարհագրական վայրի անուանման իմաստ ու նշանակութիւն: Այդ օրուանից՝ յատուկ անուն «**Կարս**» -ը վերածուեց անուանական «**ԿԱՐՍ**»-ի և դարձաւ անցած հարիւր տարուայ ընթացքում մեզ պատած ամենասոսկալի ազգային աղետի խորհրդանիշն ու մշտական ահեղ յիշեցումը այդ կատարուածի մասին:

Եթէ Բարձրեալը կամենայ մի օր «բաց դատ» անել և ի ցոյց դնել բովանդակ հայութեանը «**ԿԱՐՍ**»-ի դժոխային կաթսան՝ ապա չի գտնուի այդ օրերին ապրած գէթ մեկ հայ, որ այդ կաթսայում իր պատկերը չտեսնի: Շեքսպիրեան զուգահեռներից անցնենք մեր ազգային պայքարի դասականներից մէկի ուղղակի խօսքին: Նժդեհը «**ԿԱՐՍ**»-ի մասին գրում է. *«Կարսի ամօթը ՀՀ կառավարութեանը չէ միայն, այլ ողջ հայ ժողովրդի: Չափւում են, բախւում են բանակները՝ բայց յաղթում կամ պարտւում են ազգերը, ցեղերը: Կարսի պատերի տակ պարտուողը հայ զինուորն ու զօրավարը չէին միայն, այլ բովանդակ հայութիւնը, հայ ժողովրդի իր ամբողջութեան մէջ անմարտունակ, անարի, անմշակ հոգին…»*[3]:

1920 թ. Հոկտեմբերի 30-ին պատմութիւնը մի հայելի դրեց հայ ժողովրդի առջև և ասաց. «Հա՛յ ժողովուրդ, նայի՛ր այս հայելու մէջ, տե՛ս քո պատկերը՝ և ճանաչի՛ր ինքդ քեզ»: Հայ ժողովուրդն արդէն հարիւր տարի է՝ յամառօրէն խուսափում է նայել այդ հայելուն, առերեսուել ինքն իր հետ: Ստեփան Ղորղանեանն իր գրառումներում ամենայն մանրամասնութեամբ ներկայացնում է հենց այն ամէնը, ինչը գտնւում է այդ հայելու ետևում, ինչը հայերը յամառօրէն չեն ցանկանում տեսնել ու ընդունել արդէն հարիւր տարի: Եւ հենց դա է պատճառը, որ

[3] **Նժդեհ Գ.,** Որդիների պայքարը հայրերի դէմ, Երևան, 2015, էջ 21:

ցայսօր մեզ համար դեռևս հասու չէ, որ մարդու համար բարձրագոյն, անվիճելի և ամենաառաջնային արժէքը սեփական ազգային անկախ պետականութիւնն է: Միայն դրա առկայութեան պայմաններում է, որ մարդու գլխին չեն պայթի 1915, 1918, 1920 և այլ թուականներ, Սումգայիթներ ու Բաքուներ, որ միայն իր պետութեան մէջ անձը կարող է լիովին ինքնառեալիզացուել, ապահով լինել իր և իր սերունդների համար…

Հայ ընթերցողին՝ բացառութեամբ չափազանց նեղ մասնագիտական շերտի, Ստեփան Ղորղանեան անձը հիմնականում անծանօթ է: Մի կողմից դա հետևանք է մեզանում հնուց տեղ գտած այն հիւանդութեան, որ դարեր շարունակ զրկուած լինելով պետականութիւնից և հետևաբար ազգային պետական ու քաղաքական գործիչներ ունենալու հնարաւորութիւնից՝ մենք ստեղծել ենք միֆեր փրկիչ-հերոսի մասին և նրան վերաբերող պատկերացումները միշտ փնտրել ու կապել ենք այս կամ այն զինուորականի, ռազմական գործչի և նոյնիսկ վրիժառու-հայդուկի կերպարի հետ: Իսկ ինչ վերաբերում է արդէն 1918-1921 թթ. Հայաստանի Հանրապետութեանը՝ ապա այնտեղ, ինչպէս յայտնի է, եղել է պրակտիկօրէն միակուսակցական կառավարում (դա էլ ասենք՝ ամենևին էլ ոչ լաւ կեանքից), և յետագայում հիմնական տեղեկութիւններն այդ ժամանակաշրջանին վերաբերեալ հրապարակուել են հենց կուսակցական, իմա՝ դաշնակցական մամուլում: Եւ միանգամայն հասկանալի է, որ ցանկացած հրապարակման կիզակէտում առաջին հերթին պէտք է տեղադրուէին կուսակցական ընկերոջ, պաշտօնեայի պատկերն ու կերպարը, բացայայտուէին ու գովերգուէին իր և իր ընկերների «գործն ու բանը»:

Թէև խորհրդահայ հեղինակներից ոմանք փորձ են արել Ստեփան Ղորղանեանին «խցկել» կուսակցականութեան շրջանակների մէջ՝ յայտարարելով նրան որպես «*հայ լեգալ նարոդնիկ*»[4], սակայն նա երբևիցէ չի անդամակցել որևէ կուսակցութեան, չի յարել որևէ քաղաքական ուղղութեան և հոսանքի: Ստեփան Ղորղանեանի իսկական տարերքը, գործունէութեան ցանկալի բեմն ու ասպարեզը թէ՛ ցարական Ռուսաստանի պայմաններում, թէ՛ հայկական անկախ պետ-ութեան օրոք՝ եղել են պետական կառավարման համակարգը, պետական պաշտօնէութիւնը:

Ստեփան Ալեքսանդրի Ղորղանեանը (1865 – 1925) Ղորղանեանների (Կորգանովների) ազնուական յայտնի տոհմից էր: Դեռ քսան տարին չբոլորած՝ 1885 թ.-ից նա անցել է պետական ծառայութեան՝ Կովկասի տարբեր գաւառներում զբաղեցնելով տարբեր բարձր պաշտօններ:

---

[4] **Եղիազարեան Ա.**, Հայ լեգալ նարոդնիկ Ստեփան Ղորղանեան, Հայկական ՍՍՌ գիտութիւնների ակադեմիայի տեղեկագիր, Հասարակական գիտութիւններ, 1959, № 8, էջ 49-64:

Յատուկ պէտք է նշենք, որ Ստեփան Ղորղանեանը չի եղել և չի կարող համարուել ցարական կառավարչական համակարգի պարզապէս հայազգի կամ ընդամէնը հայկական արմատներով մի ծառայող, և բացի ազգանունից՝ նրա մէջ հայկական ուրիշ ոչ մի բան հնարաւոր չէր գտնել: Այսինքն այն ծառայողներից՝ որպիսիք զգալի թիւ են կազմել թէ՛ ցարական և թէ՛ այսօրուայ Ռուսաստանում, թէ՛ Խորհրդային կարգերի օրոք, թէ՛ այլ երկրներում: Այն ծառայողներից՝ որոնք, եթէ անգամ անտեսենք նրանց պատճառած վնասը, որևէ դրական ներդրում մեր ազգային առաջընթացի հարցում չեն ունեցել և չեն էլ կարող ունենալ: Խօսքն այն տիպի «հայ»-երի մասին է, որոնց դէպքում որքան շուտ կտրուի այդ չարաբաստիկ «…յան»-ով պայմանաւորուած միանգամայն կեղծ և շինծու դարձած պորտալարը, այնքան շուտ և շատ կը շահի հայ ժողովուրդը:

Ստեփան Ղորղանեանը մօտ երեք տասնամեակ լինելով Ռուսական կայսրութեան մեր տարածաշրջանի տեղական կառավարման մարմինների բարձր պաշտօնեայ՝ մշտապէս շփուել ու առնչուել է հայ հասարակութեան հետ, կարելի է ասել, «եփուել է» նրա մէջ, քաջատեղեակ է եղել նրա խնդիրներին՝ ամէնևին հեռու չմնալով նաև նրա ազգային երազներից: Երկար տարիներ «Գաւառական նամակներ» հրապարակախոսական շարքով նա թղթակցել է հանրայայտ «Մշակ»-ին[5], գործուն մասնակցութիւն ունեցել դէպի Արևմտեան Հայաստան զէնքզինամթերք, զինուած խմբեր տեղափոխելու կազմակերպման և իրականացման հարցում[6], Նիկոլ Դումանի հետ կատարել է մի շարք քայլեր՝ որոնց շնորհիւ 1905 թ. հնարաւոր եղան կանխել և չէզոքացնել հայ-թաթարական արիւնալի բախումները Ղորղանեանի ղեկավարած Նոր Բայազէտի գաւառում: Եւ առհասարակ ցարական վարչական մարմինների այդ կառավարիչը նախայեղափոխական թուականներին շատ արդիւնաւետ համագործակցել է այդօրուայ հայկական իրականութեան ամենաազդեցիկ ուժի՝ Դաշնակցութեան հետ: Այսինքն Ստեփան Ղորղանեանը եղել է՝ ինչպէս կասէին, իր բոլոր ցուցանիշներով հայ մարդ, որը ծառայել է այն պետութեան կառավարման համակարգում, որի քաղաքացին էր այդ ժամանակ, բայց միաժամանակ բազմաթիւ և ամուր կապերով կապուած է եղել հայ ազգի և հայ իրականութեան հետ:

Ստեփան Ղորղանեանը Ռուսական կայսրութիւնում պետական ծառայութեան ընթացքում հասել է պետական ծառայողների համար հաստատուած աստիճանակարգի վերևից հինգերորդ հորիզոնականում գրանցուած աստիճանին: Դա պետական խորհրդականի (статский советник) աստիճանն էր, որին զինուորական համակարգում համապատասխանում էր գեներալ-մայորի կոչումը: Ըստ Ռուսական կայսրութիւնում ընդունուած կարգի՝ միայն վերին հինգ աստի-

---

[5] **Եղիազարեան Ա.**, նույն տեղում:

[6] Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆոնդ (ֆ) 1457, ցուցակ (ց) 1, գործ (գ) 1, թերթ (թ) 157:

ճանների ներկայացուցիչներին էր բացառիկ իրաւունք վերապահուած անմիջական մասնակցութիւն ունենալ երկրի պետական քաղաքականութեան մշակման, ձևաւորման և իրականացման գործում:

Շատ ռուս ազնուականների (այդ թւում՝ նաև հայկական արմատներով) նման Ստեփան Ղորղանեանը նոյնպէս կարող էր 1917-1918 թթ.-ից յետոյ թողնել կայսրութեան սահմանները և տեղափոխուել Եւրոպա կամ այլուր: Բայց այդ դժնդակ օրերին՝ նա թէև առանց որևէ պաշտօնի, որոշեց ընտանիքով մնալ այստեղ, իր հողի վրայ, իր ազգի հետ, իր նորանկախ պետութեան մէջ: Եւ շատ քիչ ժամանակ անց, երբ Մուդրոսի զինադադարի (1918 թ. Հոկտեմբեր 30) շնորհիւ Հայաստանի Հանրապետութիւնը հնարաւորութիւն ստացաւ, Սիմօն Վրացեանի ասածի նման՝ «շունչ քաշել», և սկսեցին նշմարուել նաև երկրի սահմանների ընդլայնման որոշակի միտումներ և հեռանկարներ՝ Ստեփան Ղորղանեանը յայտնուեց արդէն նորանկախ հայկական պետութեան կառավարութեան ուշադրութեան շրջանակներում: Դա պայմանաւորուած էր այն հանգամանքով, որ այդ ժամանակ անգլիացիները համաձայն էին, որ Կարսի մարզն ընդգրկուի Հայաստանի Հանրապետութեան կազմում: Բնականաբար բոլոր առումներով կարևորագոյն՝ բայց միաժամանակ բազմաթիւ հակասութիւններով և ռիսկերով հագեցուած այդ տարածաշրջանը հպատակեցնելու, և ինչպէս այսօր կ՛ասեն՝ օրինական դաշտ բերելու, և երկրի հետ ինտեգրելու համար՝ անհրաժեշտ էր տեղում կազմակերպել և ունենալ իշխանական ուժեղ կառոյց: Իսկ այդ ամէնը կազմակերպելու և իրականացնելու համար հարկաւոր էր, որ իշխանական ղեկը գտնուի համապատասխան մարդկային յատկութիւններով և արհեստավարժ անհրաժեշտ հմտութիւններով օժտուած փորձառու կառավարչի ձեռքում: Այդ յատուկ նահանգի քաղաքացիական կառավարման դժուարին ու բարդագոյն գործը Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը վստահում է 54-ամեայ Ստեփան Ղորղանեանին: Գործընթացի սկիզբը դրուած էր դեռևս 1919 թ. Յունուարին[7], իսկ 1919 թ. Ապրիլի 14-ին, անկախ Հայաստանի Հանրապետութեան ներքին գործերի նախարարի հրամանով Ստեփան Ղորղանեանը նշանակւում է Հայաստանի Հանրապետութեան Կարսի քաղաքացիական նահանգապետ, և պաշտօնավարում մինչև 1920 թ. Հոկտեմբեր 30-ը՝ մինչև հայկական զինուժի կողմից Կարսը քեմալական զօրքերին յանձնելը: Կարսի անկումից յետոյ՝ մի շատ կարճ ժամանակահատուած, վարչապետի հրամանով 1920 թ. Նոյեմբերի 5-ից մինչև Առաջին Հանրապետութեան կործանումը, Ստեփան Ղորղանեանն աշխատում է որպէս երկրի ներքին գործոց նախարարի օգնական (այն ժամանակ այդպէս էր կոչւում տեղակալը)[8]:

---

[7] **Յովհաննիսեան Ռ.**, Հայաստանի Հանրապետութիւն, հ. 1, Երևան, 2005, էջ 221-223:

[8] **Յարութիւնեան Վ.,** Կարսի մարզը Հայաստանի առաջին հանրապետութեան կազմում, Երևան, 2016, էջ 245:

1920 թ. Նոյեմբեր-Դեկտեմբերին Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան կազմում Ալեքսանդր Խատիսեանի (պատուիրակութեան ղեկավար) և Աբրահամ Գիլխանդանեանի հետ մասնակցում է Ալեքսանդրապոլում կայացած հայ-թրքական բանակցութիւններին, որոնք աւարտւում են Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրմամբ: Բոլշևիկների ներխուժումից յետոյ, Երևանի նոր իշխանութիւնը՝ ի դէմս Հայաստանի յեղափոխական կոմիտէի (Հայհեղկոմ-Армревком), այդ երեք գործիչներին մեղադրանք է ներկայացնում... Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրելու համար, որակելով այն որպէս հայ ժողովրդի շահերին հակասող քայլ, և որոշում է կայացնում Խորհրդային Հայաստանի տարածքից նրանց արտաքսելու մասին: Խիստ «ժողովրդանպաստ» այդ վճիռն անմիջապէս կեանքի է կոչւում: 1920 թ. Դեկտեմբերի երկրորդ կէսերին Ստեփան Ղորղանեանին «Ալեքսանդրապոլեան դաւադրութեան» երկու «յանցակիցների» հետ՝ հայ բոլշևիկները բեռնատարով տեղափոխում են մինչև այդօրուայ խորհրդայնացուած Հայաստանի սահման՝ Ղարաքիլիսա: Այստեղից էլ այդ երեք «դաւադիրները» գնացքով հասնում են Թիֆլիս, որտեղ էլ աւարտւում է Ստեփան Ղորղանեանի ծառայողական կարիերան[9]:

Ինչպիսի յաջողութիւն և առաջընթաց էլ արձանագրած լինէր Ստեփան Ղորղանեանը Ռոմանովների գահին ծառայելու երեք տասնամեակների ընթացքում՝ միևնոյնն է, նրա կեանքում ամենաողբերգական, բայց ամենագլխաւոր, ամենակարևոր ու ամենահիմաստալից իրադարձութիւնը եղել է ազգային պետութեան գոյութեան վերջին 18 ամիսների ընթացքում Կարսի քաղաքացիական նահանգապետի զբաղեցրած պաշտօնը: Նա այդ կառավարման ամէն մի օրն ու ժամն է փաստօրէն արձանագրել «Կարսի նահանգապետի յիշողութիւններում», որոնք մենք ընկալում ենք որպէս «Այն օրերը ինչպէս տեսայ» նօթերի գրառում:

Համաձայն ընդունուած կարգի, որպէսզի որևէ հեղինակի գրառումների վերաբերեալ շարադրանքը լինի ամբողջական, սովորաբար նշում են՝ թէ յատկապէս ինչով են դրանք ուսանելի և արդիական: Ստեփան Ղորղանեանի գրառումների մասին ոչ թէ պէտք է նշել՝ այլ պարզապէս անհնար է չխօսել, և ոչ թէ «ըստ ընդունուած կարգի»՝ այլ ըստ էութեան և պարտադիր:

Նախ դա բազմաթիւ ու բազմապիսի տուեալներով հագեցած մի տեղեկատու-ձեռնարկ է Կարսի մարզի ֆիզիկական ու տնտեսական աշխարհագրութեան վերաբերեալ: Պարունակում են մանրամասն ու սպառիչ տեղեկութիւններ մարզի ընդհանուր բնապատկերի, կլիմայի, հողային և ջրային ռեսուրսների, օգտակար հանածոների, արոտավայրերի, անտառների ու հանքավայրերի մասին: Վերլուծուած և ներկայացուած են մարզի գիւղատնտեսութեան՝ մեղուապահութիւնից ու կաթնամշակումից մինչև ազնուացեղ ձիաբուծութիւն, արդիւնաբերութ-

[9] Հայկական սովետական հանրագիտարան (ՀՍՀ), հատոր հ. 7, Երևան, 1981, էջ 40-41:

եան՝ բրդի և կաշուի մշակումից մինչև կահոյքագործութիւն, առողջապահական ոլորտի՝ սոճու անտառների առողջարաններից մինչև հանքային ջրերի ու բնական ցեխերի բուժման համալիրների զարգացման հեռանկարները, և առհասարակ՝ տրուած է մարզի տնտեսական հնարաւորութիւնների խիստ հիմնաւորուած գնահատականը: Մենք չծուլացանք և համեմատեցինք ձեռագրում բերուած նկարագրութիւններն ու տուեալները 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ռուսական համապատասխան աղբիւրների հետ: Եւ համոզուեցինք, որ նահանգապետի բերած տուեալները ոչ թէ պարզապէս համընկնում են այդ աղբիւրներում շարադրուածի հետ՝ այլ հասկացանք, որ Կարսի նահանգապետը քաջածանօթ է եղել մարզի ամէն մի գետակին ու լճակին, անտառին ու ձորակին, հանքին ու աղբիւրին, արտին ու խոտհարքին և առհասարակ մարզի ամբողջ ելումուտին: Կարծում ենք՝ հայ ընթերցողին հետաքրքիր կը լինի տեղեկանալ Կարսի մարզի վերաբերեալ նման հարուստ և քաջատեղեակ աղբիւրից…

Կարսի մարզն այն օրերին բնակեցուած էր տարբեր ազգերով ու ցեղախմբերով, որոնց ընդհանուր թիւը էապէս գերազանցում էր մարզ վերադարձած հայերի քանակին: Այդ այլազգիները՝ անկախ ազգութիւնից ու դաւանանքից, ակնյայտօրէն թշնամաբար էին տրամադրուած նորաստեղծ հայկական պետութեան և նրա իշխանութեան հանդէպ: Նրանք պարզապէս չէին ցանկանում համակերպուել հայկական պետականութեան գոյութեան հետ, որը եկել էր նրանց իշխելու: Իսկ յատկապէս մահմեդական տարրին սարսափեցնում էր նաև նախորդ մի քանի տարիների ընթացքում հայերի հանդէպ կատարածի համար այժմ պատասխան տալու և հատուցման անխուսափելիութեան հեռանկարը: Եւ այդ ամէնը շատ հմուտ օգտագործում էին թրքական և ատրբէյջանական գործակալական ցանցերը՝ ձգտելով մարզի մահմեդականութեան շրջանում մշտապէս զգօն ու արթուն պահել հակահայաստանեան օջախները: Ղորղանեանի գրառումները մի հրաշալի դասընթաց են, որտեղ սեփական մօտեցումների օրինակով հեղինակը մեզ է ներկայացնում, թէ ինչպէս կարելի է նման պարագայում, ձեռքի տակ ունենալով ուժային խիստ սահմանափակ ռեսուրսներ, բայց թիկունքում պետութիւն և պետականութիւն՝ խաղաղեցնել, յետոյ էլ աստիճանաբար հպատակեցնել հայկական պետականութեան այդ հակառակորդներին, օրէնքի օգնութեամբ ապահովել նրանց հանգիստ կեանքն ու բարեկեցութիւնը, միաժամանակ օրէնքի ուժով էլ գանձել նրանցից պետութեան գոյատևման համար անհրաժեշտ միջոցներ: Այդ քաղաքական ու տնտեսական, ինչպէս այսօր կ՛ասեն՝ համալիր միջոցառումների շնորհիւ պետութեանդ երեկուայ թշնամին իրեն սկսում է պաշտպանուած զգալ պետութեան կողմից, դառնում է պետութեան օրինապաշտ (բնական է՝ մեծ վերապահումներով) քաղաքացի: Եւ այդ մօտեցումն աւելի ազդու է դառնում տարբեր էմիսարների և գործակալների

սադրանքները չէզոքացնելու համար, քան պատեհ-անպատեհ առիթներով այս կամ այն ձևով ռազմական կոշտ ուժի կիրառումը:

Ինչ վերաբերում է մեզ՝ հայերիս, որպէս այդօրուայ հայկական պետութեան տիտղոսակիր ազգի, ապա դէպքերի և իրադարձութիւնների օրինակներով Ստեփան Ղորղանեանի յուշերում շոշափուած, ներկայացուած ու քննարկուած են մեր ազգի համար բառացիօրէն «յաւերժական» դարձած հարցեր ու խնդիրներ, որոնք արդիական են եղել հարիւրամեակներ առաջ, արդիական էին այն օրերին՝ աւելի քան արդիական են նաև հենց այսօր: Դա, օրինակ, անհատ-հասարակութիւն-պետութիւն կապն է հայկական իրականութեան մէջ, իսկ եթէ աւելի անկեղծ ու ճշգրիտ լինենք՝ իրականում այդ կապի խզուածութիւնն ու բացակայութիւնը մեզանում, որպէս այդպիսին: Ստեփան Ղորղանեանի գրառումներով կարելի է շատ գեղեցիկ դասընթացներ կազմակերպել պաշտօնէական էթիկայի, կառավարման կանոնների, իշխանական տարբեր լծակների արդիւնաւետ օգտագործման և կիրառման վերաբերեալ: Նա մեզ հետ կիսւում է, որ ճակատամարտ և նոյնիսկ պատերազմ շահելը, աշխարհի հզօրների որոշ աջակցութեանն արժանանալն ու պետութիւն ստեղծելու մասին յայտարարելը՝ դեռևս շատ քիչ են: Դրանց հետևում են ամենակարևորն ու դժուարինը՝ պետականութեան ստեղծումն ու կառուցումը, նրա պահպանումը, որոնք ամէն ազգի մօտ չէ, որ ստացւում են: Փորձառու պետական այրը բացատրում է, որ պետութիւնը, հայրենիքը սկսւում են այնտեղ՝ որտեղ ամէն մի քաղաքացի իր տեղում կատարում է իր պարտականութիւնները, իսկ պետութիւնն ու հայրենիքը մարդիկ սկսում են կորցնել այն պահից՝ երբ ամէն մի անհատ պետութեան կողմից իրեն վստահուած հատուածը սկսում է օգտագործել այնտեղից անձնական շահ քամելու համար: Եւ դա ո՛չ թերացում է, ո՛չ զանցանք է և ո՛չ էլ նոյնիսկ յանցանք: Դա հանցագործութիւններից ծանրագոյնն է. դա պետական դաւաճանութիւն է: Հեղինակը շատ յստակ մեզ է ներկայացնում, որ չի կարող լինել մեծ և փոքր չափերի պետական դաւաճանութիւն՝ ինչպէս կնոջ դաւաճանութիւնը չի կարող լինել մեծ կամ փոքր: Ամէն ոք, լինի զինուոր թէ գեներալ, գրագիր թէ նախարար՝ խորտակելով իրեն վստահուած ճակատի հատուածը, նոյն հարիւր տոկոսանոց դաւաճանութիւնն է գործում իր պետութեան նկատմամբ՝ անկախ իրեն վստահուած հատուածի «երկայնքից ու լայնքից»: Ընդհակառակը, «տեղը տեղին» այդ դաւաճանութիւնը հիմնաւորապէս խարխլում, ու բերում քանդելու եզրին է կանգնեցնում պետականութեան՝ տուեալ պարագայում նրա շէնքի, հազիւ նշմարուող պատերը: Հասարակութեան ու պետութեան միջև գոյանում է մի մեծ վիհ, և օտարի ձեռքից սնուող և նրա կողմից գործուղուած «հաստիքային» դաւաճանների մի նոր ոհմակ էլ սկսում է այդ վիհը գլորել աւերուած ազգային պետականութեան բեկորները: Այդ ամէնն ընթերցողը կը գտնի Կարսի նահանգապետի

գրառումներում, և դրանց նմանակն ու կրկնութիւնը սարսափով կը տեսնի նաև մեր օրերում՝ մեր այսօրուայ իրականութեան մէջ:

Այսպիսին մենք տեսանք ընթերցողին ներկայացուող սոյն գիրքը:

* * *

Բերենք նաև որոշ բացատրութիւններ գրքի կառուցուածքի վերաբերեալ:

Ինչպէս վկայում է արխիւային ֆոնդի համառօտ նկարագիրը, այս նիւթերը Հայաստանի ազգային արխիւ են բերուել 28.05.1986 թ. և գտնուել են ցրիւ վիճակում: Համաձայն արխիւից մեզ տրամադրած մէկ այլ տեղեկատուութեան՝ նիւթի վերջնական յանձնումն իրականացուել է 1986 թ. Յունիսի 16-ին՝ Ստեփան Ղորղանեանի որդու՝ Կոնստանտին Ստեփանի Ղորղանեանի հետ կնքուած պայմանագրի կէտերին համապատասխան: Փաստաթղթերի գիտատեխնիկական մշակումից յետոյ ձևաւորուել է 24 արխիւային գործ: Ձեռագրերը գրքում տեղադրուած են համարակալման այն հերթականութեամբ, ինչպէս որ համակարգուած են եղել Հայաստանի ազգային արխիւում:

1-24 համարակալուած բոլոր նիւթերի ուղղագրութիւնը պահպանուած է այնպէս, ինչպէս որ այն շարադրել է ձեռագրի հեղինակը: Առ այդ, սրբագրումները կատարուած են աւանդական ուղղագրութեան կանոնների համապատասխան: Քանի որ ձեռագիրը ամբողջական, խիստ ժամանակագրական կանոններով շարադրուած միասնական մի պատում չէ, մենք նպատակայարմար ենք համարել բնագիր բոլոր 24 նիւթերից առաջ ներկայացնել մի քանի առաւել կարևոր մեջբերումներ բնագրից, ինչը, մեր կարծիքով, որոշակիօրէն կ՛օգնի ընթերցողին կողմնորոշուելու և ընթերցուելիք նիւթի ընտրութեան հարցերում:

Ձեռագրերից յետոյ մենք տեղադրել ենք նաև *ԼՐԱՅՈՒՄ* բաժինը, որը 1920 թ. Նոյեմբերի սկզբներին Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը ներկայացուած Կարսի նահանգապետի հաշուետուութիւնն է իր 18-ամսեայ պաշտօնավարութեան վերաբերեալ: Այդ փաստաթուղթը շատ ներդաշնակ է հիմնական ձեռագրի տեքստի հետ, և բազմաթիւ առումներով իրօք՝ լրացնում է այն: Նշենք միայն, որ արխիւային այս փաստաթուղթը մեքենագիր է և նոր ուղղագրութեամբ, ինչը մատնանշում է որ այն արտատպուել է ձեռագիր բնագրից արդէն խորհրդային տարիներին՝ համապատասխան ուղղագրական (հնարաւոր է՝ ոչ միայն) խմբագրումներով: Այս փաստաթուղթը գրքում ներկայացուած է աւանդական ուղղագրութեամբ:

Գրքի վերջում տեղադրուած են նաև երկու ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐ:

ՅԱՒԵԼՈՒԱԾ 1-ում ներկայացուած է Ստեփան Ղորղանեանի 1920 թ. Դեկտեմբեր 22-ին «ՄՇԱԿ» թերթին տուած հարցազրոյցը, իսկ ՅԱՒԵԼՈՒԱԾ 2-ում ընթերցողը կը գտնի որոշ փաստագրական տեղեկութիւններ Ղորղանեանների

տոհմի և յատկապէս Ստեփան Ղորղանեանի և նրա ընտանիքի մասին: Ստեփան Ղորղանեանի թոռան՝ Նարբէյի ձեռքով գրուած համառօտ ինքնակենսագրականը, որը ներկայացուած է ՅԱՒԵԼՈՒԱԾ 2-ում, նոր ուղղագրութիւնից դարձուել է աւանդականի՝ գրքի ուղղագրական միութիւնը պահպանելու նպատակով:

* * *

Իմ պարտքն եմ համարում երախտագիտութիւնս յայտնել այն անձանց, որոնց բարեացակամ և անշահախնդիր աջակցութեան շնորհիւ հնարաւոր դարձաւ իրականացնել սոյն գրքի ստեղծման մտայղացումը:

Եւ այսպէս, իմ խոնարհումն ու շնորհակալութիւնը «Մոդուս Վիւենդի» կենտրոնի ղեկավար, դեսպան Արա Պապեանին, ՀՅԴ Հայ դատի գրասենեակի պատասխանատու Կիրօ Մանոյեանին, ՀՅԴ պամութեան թանգարանի տնօրէն Անոյշ Ամսէյեանին, իրաւագէտ Մայքլ Բաբայեանին, արևելագէտ Ժոզէֆ Աւետիսեանին, փիլիսոփայ Լևոն Խաչատրեանին, հայոց լեզուի ուսուցչուհի Թամար Մարտիրոսեանին, քիմիկոս Սէյրան Մինասեանին:

Իմ առանձնակի երախտագիտութիւնն եմ յայտնում յուշարձանագէտ Սամուէլ Կարապետեանին և նրա ղեկավարած հաստատութեան աշխատակիցներ Էմմա Աբրահամեանին, Անոյշ Համբարձումեանին, որոնք իրականացրին ձեռագրերի ընթերցումն ու մուտքագրումը և Յասմիկ Յովհաննիսեանին, որը խմբագրեց և սրբագրեց հեղինակի խօսքը:

Յատուկ շնորհակալութիւն եմ յայտնում նաև հայկական հեռուստատեսութեան նախկին հաղորդավարուհի Աիդա Ներսիսեանին և Ստեփան Ղորղանեանի դստեր՝ Մարգարիտի (ամուսնական ազգանունը՝ Ջանփոլադեան) շառաւիղներից Անաստասիա Ջանփոլադեանին և Մատենադարանին՝ գրքի *ՅԱՒԵԼՈՒԱԾ 2* բաժնում տեղադրուած փաստաթղթերի և լուսանկարների պատճէնները տրամադրելու համար:

ՎԼԱԴԻՄԻՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
Մարտ, 2018, Երևան

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ՁԵՌԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ԹԵՐԹԸ

DOC №1

Յուշեր՝ Կարսի նահանգում իշխանութիւն կազմաւորելու համար անգլիական հրամանատարութեան հետ իր վարած բանակցութիւնների, Կարսում հայկական պետական իշխանութեան հաստատման և տեղի ազգաբնակչութեան հետ հայկական իշխանութեան և անձամբ հայ նահանգապետի վարած քաղաքականութեան մասին:

(1922թ.)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Նա տենդոտ զինում էր թուրքերին, «նահանգական կոմիսար» Ձամօեւի գլխի վերայով ձեռք էր մեկնել տաճկաց իշխանութեանը և թուրք ազգային խորհուրդների դիմակի տակ, նախապատրաստական աշխատանքներ էր կատարում Կարսի նահանգում ապագայ Շուրայի համար և այդպիսով ճանապարհ հարթում դէպի Բագու, դէպի ապագայ Ատրբէյջան և համիսլամական երազ...***
- ***Եւ «Հայկական» այդ կարծեցեալ իշխանութեան մթնոլորտում հաստատում էր արդէն Կարսի 18 թուականի անուանի անկումը:***
- ***Պ. Խատիսեան, այն ժամանակ խնամատարութեան մինիստր, ներքին գործոց մինիստր Արամ փաշայի հիւանդութեան ժամանակամիջոցում և մինիստր նախագահ Քաջազնունու արտասահման գնալու պատճառով՝ կատարում էր այս վերջի երկու մինիստրների պարտաւորութիւններն ևս:***
- ***Երկիր կառավարելու գործը միշտ եղել է այն մեծ առանցքը, ուր մարտնչել և խորտակուել են մտքեր:***
- ***Բայց երկիր կառավարելու սիստեմը ստեղծում է ինքը՝ ժողովուրդը...***
- ***Յամենայն դէպս պարզ էր, որ թէև անգլիացիները «յանձնում էին» մեզ Կարսի նահանգը, բայց այդ աւելի դիպլոմատիկ մի փորձ էր, քան թէ միջազգային վճռալից մի ակտ:***
- ***Իսրայէլի այդ ճարպիկ որդին, որ միևնոյն ժամանակ լրտեսի պարտաւորութիւն էր կատարում թիւրքաց[10] հրամանատարի մօտ, շատ շուտ անցաւ անգլիացիների կողմը:***

[10] Հեղինակն օգտագործել է «թիւրքաց» եւ «թուրքաց» ձեւերը, ուր առաջինով պէտք է հասկանալ օսմանեան թիւրքերին, երկրորդով՝ ատրպատականից գաղթած թիւրք թաթարներին:

- *Շուրան այս անգամ շատ արձակ ոճով տեղեկացնում էր, որ նա բնաւ ցանկութիւն չունի ընդունելու դրսից եկած որևէ իշխանութիւն, և խնդրում էր հեռացնել հայերին Կարսից:*
- *Կարս հասանք ժամի 10-ին, արդէն գիշեր էր: Վագզալում կար տեղական թուրքերի մեծ բազմութիւն, բայց արդէն երկչոտ և միայն հետաքրքրուող դէմքեր, բայց անվստահ քայլեր ու մարած տրամադրութիւն...*
- *...և երբ ես կառք էի նստում, թուրք ամբոխը երկար գոչում էր,– Եաշասըն էրմանի հոքիմաթի՝ կեցցէ Հայոց կառավարութիւնը...*
- *Եւ այդ մահմեդականները հայերի պէս՝ հացի խմորն անելիս, հացի գունդերի վերայ խաչի դրոշմ են դնում...*
- *... Կարսի նահանգը դառնում էր այսուհետև այն կենտրոնը, որտեղից պէտք է ծաւալուէր մեր պետականութիւնը:*
- *Երևանը կարծես մնում էր ստուերում, և այստեղ ու այնտեղ սկսում են խօսել Կարսը մայրաքաղաք դարձնելու մասին:*
- *Այդպէս վերջացաւ գեներալ Յովսէփեանի ծաղրածու մարշը դէպի Օլթի, որ չէր կարող չը ձգել Կարսի նահանգում հայկական կառավարութեան համարումը...*
- *Այդպէս էր այն մթնոլորտը, ուր կուսակցական լինելը ինքը օրէնքն էր և ինքը օրինականութիւնը:*
- *Կարսի նահանգը թալանչիների համար այն աւետեաց երկիրն էր, ուր հայ աւազակը շտապում էր անզուգական լինելու:*
- *... գալիս էին այն անամօթները, որ վարկաբեկելով կառավարութիւնը, մեր դարաւոր իղձերը սրբապղծելով՝ իրաւունք էին տալիս օտարներին ատել մեզ և զզուել մեզանից...*
- *Հայ հասարակութիւնը մոգութիւն և հրաշքներ էր սպասում հայկական կառավարութիւնից, իսկ իրան վերապահել էր միայն հետաքրքրուողի և հանդիսատեսի թամաշացու դերը...*
- *Դժուար էր մաքառել այդ մթնոլորտում, երբ այդ այլասեռուած հասկացողութիւնները օրգանական բնոյթ էին կրում...*
- *Զինուորական իշխանութիւնը, այդ ռուսները և ռուսախօսները, մի ցաւ էին երկրի համար*
- *Եւ մինչև ի վերջը ճոճուելով այդ երազալից առանցքում՝ լուծուեց և դղրդալից ընկաւ Հայոց Հանրապետութիւնը:*

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Ցանկ

I 1-31

II **Կարս** 31-92

III **Նորից Կարսում, իմ բանակցութիւններս անգլիական հրամանատարութեան հետ՝ իշխանութիւն կազմակերպելու մասին** 93-154

IV **Կարսի նահանգի ազգաբնակութիւնը և Կարսի գեներալ նահանգապետութիւնը** 154-243

V **Իմ առաջի քայլերը նահանգում՝ քաղաքացիական իշխանութիւն կազմակերպելու խնդրում** 244-302

VI **Ներգաղթի առաջի օրերը, Կարսի քաղաքային վարչութեան սկզբնական կազմակերպութիւնը և մինիստր նախագահ Խատիսեանի առաջի այցը Կարս** 303-335

VII **Կարսի նահանգի ազգային խորհուրդները** 336-370

VIII **Կարսի նահանգի հարստութիւնը և միջվարչական յանձնաժողովը՝ պետական պահեստների գործը կարգի բերելու համար** 371

IX **Կարսի վերաշինութեան փորձերը, աւտօմոբիլ գործը և** մինիստրների խորհ**ուրդի որոշումը ինձ կառավարչապետի իրաւունքներ տալու մասին** 89-104

X **Արդարադատութեան մինիստրութիւնը** 104

Մայիսեան օրերը

Անցնելով Մայիսեան օրերի նկարագրութեանը՝ մենք հարկաւոր ենք համարում մի քանի բացատրութիւններ առաջ բերել այդ առիթով:

Շատերը կարծում են, որ Կարսի նահանգի ռուս ազգաբնակութիւնը առաջնթաց էր խորհրդային գաղափարների բռնկման ընթացքում, և որ երկրի հայ ազգաբնակութիւնը գնաց միայն այդ *(տեքստը խզուած է)*...

I

1917 թուին, ռուս պետական յեղաշրջման օրերում, ես Կարսի զինուորական վարչական շրջանի պետն էի: Կարսը առաջնակարգ զինուորական քաղաք էր, մեծ զօրաբանակով: Ռուս զինուորը դարեր անլեզու՝ հնարաւորութիւն էր ստացել լիովին թափելու *(տեքստը խզուած է)*... ուր և պատուիրել էի ամբարել այդ գրքերը մինչ առանձին կարգադրութիւն: Ես մտադրութիւն ունէի քաղաքի կենտրոնում մեծ գրադարան-ընթերցարան... *(փաստաթուղթը վնասուած է)* ...պետերին:

Ի զարմանս բոլորի՝ ազատ էի մնացել միայն ես: Բացատրում էին, որ այդ բանտարկութիւնները կատարուել էին Թիֆլիզից ստացուած ցուցակով, ուր իմ անունը չը կար:

Բայց մի երկու ժամից յետոյ իմ բնակարանի դիմաց երևաց *(տեքստը խզուած է)*... ինձ պատուի ցոյց անելու համար՝ դեմոնստրատիւ շարուեցին իմ բնակարանի դիմաց, և յայտարարեցին այդ փողոցում վխտող ռուս զինուորներին, որ ես անձեռնամխելի եմ:

Եւ այդ բարոյական մեծ զրահի տակ՝ ես մի երկու ամիս դեռ շարունակում էի պաշտօնավարել, մինչդեռ բոլոր գեներալները, իմ դիրքի բոլոր պաշտօնեաները՝ հեռացել, գնացել էին:

Կարսի այն ժամանակուայ բնիկների մեծամասնութիւնը հայեր էին, և դաշնակցութիւնը տիրեց օրուայ հրապարակը:

Հազիւ թէ պէտք է բացատրել այսօր, որ դրութիւնը տիրապետում էին աւելի ճարպիկ մարդիկ՝ «աշխատաւորութիւն» և «ազատութիւն» կոչումներով վխտողները: Եւ մի ինչ որ Ձամօեւ՝ վրացախօս, այդ օրերում Ձամոյեան դառնալով՝ նախօրոք իրան դաշնակցական էր յայտարարել, ու ինքը իրան Կարսի նահանգական կոմիսար «ընտրել» *(տեքստը խզուած է)*...ազգանունով, որ դեռ յեղաշրջումից առաջ բժիշկ Սուլթանովի հետ միասին վարում էր Կարսում Բագուի թուրք բարեգործական ընկերութեան դրօշակի տակ՝ Մուսաֆաթի քաղաքական գործակալի պարտաւորութիւնները: Այդ խորամանկ ու ճկուն թուրքը փաստօրէն իր ձեռքը առաւ Կարսի նահանգի կառավարչական գործը: Նա տենդոտ զինում էր

թուրքերին, «նահանգական կոմիսար» Ձամօեւի գլխի վերայով ձեռք էր մեկնել տաճկաց իշխանութեանը, և թուրք ազգային խորհուրդների դիմակի տակ՝ նախապատրաստական աշխատանքներ էր կատարում Կարսի նահանգում ապագայ Շուրայի համար, և այդպիսով ճանապարհ հարթում դէպի Բագու, դէպի ապագայ Ատրբէյջան և համիսլամական երազ...

Եւ այդ դաւալից մթնոլորտում, ուր ինքնահաւան և անհոգ դաշնակցութեան զրահի տակ «թագաւորում էր» Ձամօեւ, նրա խելօք օգնականը Կանդեմիրով՝ անպատասխանատու բայց եռանդալից, իշխում և կառավարում էր: Եւ «Հայկական» այդ կարծեցեալ իշխանութեան մթնոլորտում՝ հասունանում էր արդէն Կարսի 18 թուականի անուանի անկումը:

Հայերը, ի դէմս դաշնակցական Ձամօեւի և միւս կուսակցական դատարկաբանների՝ զբաղուած էին ճառերով, ծափերով, և նոցա առանցքում թալանով, իսկ թուրքերը յանձինս Կանդեմիրովի՝ անվրէպ տանում էին իրանց քաղաքական վարքագիծը, և իրագործում ռեալ, դրական նպատակներ, «փայփայում» իրանց հեռաւոր քաղաքական իդեալը... Այդ միջոցում դրութիւնը Կարսի նահանգում բարդւում էր օրից օր և շունը տիրոջը չէր ճանաչում: Եւ այդ աղմկալից օրերում՝ երբ բոլորը միայն խօսում էին և միայն ծափահարում, ես թողեցի պաշտօնս:

Ի ծայր ջղայնացած՝ ես վճռեցի ընդմիշտ հեռանալ կրքալից հրապարակից, և քաշուելով Դիլիջան՝ մի յետ ընկած գաւառակ, վերսկսեցի «Մշակ» լրագրում իմ «Գաւառական նամակներ» ուսումնասիրութիւնները:

Աւելի քան 30 տարի շարունակ մեծ սիրով ուսումնասիրելով գաւառական կեանքը՝ բնականաբար ես այսօր լաւ չէի զգում ինձ իմ առանձնութեան մէջ: Հինը քանդւում էր, ժամանակները փոխւում, և աւերակների վերայ նոր կեանք էր ծլում: Բայց այդ մեծ շինարար աշխատանքում՝ ես մնացել էի անգործ, և հնարաւորութիւն չունէի օգտագործելու երկար տարիների ընթացքում իմ ամբարած վարչական փորձը, և կեանքի բազմատեսիլ դիտողութիւնները:

Այդպէս ճնշիչ անցնում էր ժամանակս՝ երբ 19 թուի Յունուարի 11-ին մեր վաստակաւոր և բազմաշխատ հասարակական գործիչ Սամսոն Յարութիւնեան, այն ժամանակուայ Հայաստանի Հանրապետութեան արդարադատութեան մինիստրը՝ Երևանից հրաւիրեց ինձ հեռախօսի մօտ:

–Մինիստրների խորհուրդը,– ասաց արդարադատութեան մինիստրը,– լսելով այսօրուայ նիստում անգլիական հրամանատարութեան առաջարկը Կարսի նահանգը մեզ յանձնելու մասին՝ միաձայն որոշեց առաջարկել Ձեզ Կարսի նահանգապետի պաշտօնը: Անգլիական գեներալ Բիչ,– շարունակեց Սամսոն Յարութիւնեան,– այսօր Թիֆլիզից մեկնում է Աղէքսանդրապոլ, և դուք պէտք է հենց այսօր ճանապարհուէք՝ որպէսզի գեներալ Բիչի հետ միասին անցնէք Կարս:

Ժամանակի և բարքերի բնորոշման իմաստով՝ չեմ կարող չարձանագրել այստեղ իմ հոգու վերապրումները այդ որպէին: Ես յիշեցի իմ երիտասարդութիւնը, ութսունական թուականների Մշակականների յուզմունքները, մեր քաղաքական «ցնորքները», և այդ բոլորը իրականացած այսօր՝ կանգնած էր իմ առաջ որպէս մի քաղցր ու հմայիչ երազ...

Շնորհակալութիւն անելով կառավարութեանը ինձ արած մեծ պատուի համար՝ ես մի քանի ժամից յետոյ մեկնեցի Դիլիջանից:

Աղէքսանդրապոլ ես հասայ գեներալ Բիչից առաջ, և երկաթուղու կայեարանում ինձ ասացին, որ Երևանից ժամանել է մինիստր Աղէքսանդր Խատիսեան, և սպասում է ինձ:

Պ. Խատիսեան, այն ժամանակ խնամատարութեան մինիստր, ներքին գործոց մինիստր Արամ փաշայի հիւանդութեան ժամանակամիջոցում և մինիստր նախագահ Քաջազնունու արտասահման գնալու պատճառով՝ կատարում էր այս վերջի երկու մինիստրների պարտաւորութիւններն ևս:

Մինիստր նախագահ Խատիսեան ընդունեց ինձ շրջապատուած իր փայլուն շքախմբով, ուր կային գեներալներ, գնդապետներ, պարլամենտի անդամներ ու հասարակական գործիչներ: Հանդիսաւոր յանձնելով հայկական անդրանիկ նահանգապետին կառավարութեան գրաւոր որոշումը ինձ Կարսի նահանգապետ նշանակելու մասին՝ Խատիսեան նորից յուզեց իմ առանց այն էլ շատ բարձր տրամադրութիւնս:

Ի հատուցում Ձեր ժողովրդագիտութեան և դորա հետ կապուած Ձեր գրական գործունէութեան՝ շարունակեց պրեմիերը, Ձեզ վիճակւում է լինել Հայոց Հանրապետութեան առաջի նահանգապետը: Դուք գնում էք գրաւելու այն մեծ առանցքը՝ ուր կուտակուել է մեր ազատագրութիւնը, ուր մոխրացած, մերթ բռնկուել, մերթ մարել են մեր երազները՝ և ուր համայն հայութիւնը յուսում է այսօր իր սպասելիքները և իր դարաւոր իրաւունքը... Մի քանի ժամից յետոյ ճեպընթաց գնացքով Թիֆլիզից եկաւ գեներալ Բիչ և գնդապետ Տեմպերլէյ, որ պէտք է մնար Կարսում որպէս Անգլիայի գերագոյն ներկայացուցիչ, ունենալով իր հետ մի քանի տասնեակ զինուոր: Կայարանում մինիստր նախագահ Խատիսեան դիմաւորեց գեներալ Բիչին և հայկական կառավարութեան անունից շնորհակալութիւն յայտնեց դաշնակիցների վերաբերմունքի համար դէպի հայի արդար և հինաւուրց դատը: Ապա նա ներկայացրեց գեներալին և ինձ որպէս Կարսի նահանգապետի: Չը նայած տիրող սառնամանիքի և գիշերուայ ժամի 2-ին՝ կայարանում ասեղ ձգելու տեղ չը կար:

Միւս օրը մենք պէտք է մեկնէինք Կարս: Փայլուն արտակարգ գնացքը, որ սպասում էր դէպի հինաւուրց Արփաչայ տանելու մեզ՝ զարդարուած էր անգլիական ու հայկական դրօշակներով և կանաչ ժապաւէններով: Ամբողջ Աղէքսանդրապոլը, Կարսի ու թիւրքահայ ամբողջ գաղթականութիւնը հեղեղել էր կայարա-

նը և երկաթուղու գծով բռնել ամբողջ ճանապարհը: Երբ լսուեց գնացքի առաջի սուլոցը՝ մինիստր նախագահ Խատիսեան մի յուզիչ ճառով դիմեց հայ ժողովրդին օրուայ նշանակութեան և մեր անելիքների մասին: Ապա շատ ոգևորուած խօսեց պրիմիերի թիկնապահ գեներալ Բէյ-Մամիկոնեան, որ կեցցէ բացականչեց ի պատիւ դաշնակիցների և ի պատիւ այն Ռուսաստանի, ուր երբեմն պատսպարուել և խնամուել է գաղթական ու ընչազուրկ հայութիւնը:

Երբ գնացքը շարժուելու վերայ էր և Հայոց Հանրապետութեան *(տեքստը խզուած է)* ... և ինքնուրոյնութեան ոչ միայն գաղափարը՝ այլև զգացմունքը: Մենք մեր տանն էինք և կանգնած այն հինաւուրց օջախի շուրջը, որի ծուխը ոչ միայն քաղցր, ախորժելի էր՝ այլև նուիրական որպէս մի դարաւոր ժառանգութիւն: Այդ ժառանգութիւնը անցաւ փորձանքների և արհաւիրքների բովով և այսօր անհասանելի կամօք և հայոց պատմութեան՝ մենք և իրաւատէր էինք և անկախ...

Եւ այդ ոչ միայն տեսիլ էր, ոչ միայն սինեմատօգրաֆիկ ցայտուն մի պատկեր՝ այլ մի մեծ դարագլուխ այն պատմութեան, ուր ժամանակի անիւը զրկանքների և դառնութիւնների հետ միասին՝ բերում է և հատուցում և արդարադատութեան մարմնացում...

II
Կարս

Ի ծայր յուզուած և ընկճուած՝ ես շտապեցի դէպի ինձ յատկացուած կուպեն: Տպաւորութիւնները ոչ միայն շատ բարձր էին՝ այլև այնչափ ծանրաբեռ, որ ես պէտք էի զգում առանձնութեան: Բայց ինձ վիճակւում էին ոչ միայն մեծ, պատմական պարտաւորութիւներ՝ ինձ վերայ ծանրանում, ճնշում էր ինձ իմ պատասխանատուութիւնը երկրի և ժողովրդի առաջ:

Երկիր կառավարելու գործը միշտ եղել է այն մեծ առանցքը՝ ուր մարտնչել և խորտակուել են մտքեր: Քաղաքական միտումները կազմել են միշտ այն խայտաճամուկ տարազը՝ որի ծալքերում բորբոքուել և մարել են աշխարհակալ և փառասէր ձգտումները: Բայց երկիր կառավարելու սիստեմը ստեղծում է ինքը՝ ժողովուրդը, և այն գաղտնիքը, թէ ի՞նչ է պէտք երկիր կառավարելու համար և թէ ինչպէ՞ս պէտք է կառավարել այդ երկիրը՝ մշակում և ձևակերպում է ինքը, կեանքը:

Այդ մեծ գաղտնիքը՝ երկրի սովորութիւնների, նրա ճաշակի, նրա հակումների բաղադրութիւնն է: Եւ օգտագործել այդ բարդ բաղադրութիւնը երկրում իրաւակարգ ստեղծելու համար՝ եղել է միշտ այն պատմական հանգոյցը, որի շուրջը բորբոքուել են այնչափ կրքեր, արիւն ու այնչափ՝ ես...

Ես տարուած էի այդ խուռն մտքերով՝ երբ գնացքը սուլեց Արփաչայի վերայ: Գնացքի կոմենդանտը զեկուցեց, որ չը նայած կարգադրութեան, որ ոչ ոքի չը վերցնել Աղէքսանդրապօլից բացի նահանգապետին ուղեկցող պաշտօնական անձանց՝ երբ գնացքը շարժուել է, նրա վագոններից կպել և անցել են մինչև Արփաչայ 65 հայ գաղթականներ: Այդ ցնցոտիների մեջ կորած մարդիկը՝ Կարսի նահանգի զանազան գիւղերից, այդ սարսափելի ցրտին, բացօթեայ՝ շտապում էին դէպի աւեր օջախներ, դէպի այն երկիրը՝ ուր հանգել է նոցա կացութիւնը, նոցա չարն ու բարին:

Վերադարձնել այդ թշուառներին նորից Աղէքսանդրապօլ՝ դժուար էր, և ես կարգադրեցի տեղ տալ նոցա գնացքում և տանել Կարս:

Երբ գնացքը շարժուեց և մենք անցնում էինք Տաճկաստանի պատմական սահմանը՝ ես ակամայ դարձայ դէպի հեռաւոր անցեալը: Չէ՞ որ այդ այն վայրն է, ուր միշտ բորբոքուել են մեր ազատագրական կայծերը...

Հայ ազգի հռչակաւոր զօրավար իշխան Բեհբութեան, ոչ պակաս մեծադէմք կոմս Լօրիս-Մելիքով և մեծահամբաւ գեներալ Լազարեւ, ոչ միայն այստեղից ռուս տիրապետութիւնն էին տարածում՝ այլև հարթում էին այն պատմական ուղիները, ուր պարբերաբար բռնկուել և մարել են մեր ազգային երազները: Այստեղ անուն և հռչակ են հանել ութսունական թուականների իդեալիստ Սարգիս Կուկունեանները, այստեղ լեգենդար է դարձել Անդրանիկ, այստեղ են ոգևորուել և մեր երգիչ-աշուղները և այդ վայրը միշտ բևեռել է մեր տենչանքները և մեր քաղաքական յոյսերը: Մի կէս ժամից յետոյ հասանք Կարաեալ կայարանը: Այդ այն պատմական բնակատեղին էր՝ որտեղից 77 թուին հռչակաւոր Լօրիս, Կովկասեան ահարկու զօրաբանակի հրամանատարը, արձակեց իր առաջի հրամանը Կարսի ռմբակոծութեան մասին: Կայարանում գնացքին սպասում էր մեծ բազմութիւն շրջակայ գիւղերի թուրքերից, որոնց թւում կային պատուաւոր, դիրք ունեցող թուրքեր՝ իմ վաղեմի ծանօթներից: Երբ գեներալ Բիչ իր շքախմբով դուրս եկաւ վագօնից՝ նրան յետևեցի և ես իմ ուղեկիցներով: Բայց մի քանի րոպէից յետոյ գեներալը ասաց ինձ, որ հայերի երևալը կարող է վատ տպաւորութիւն թողնել թուրքերի վերայ, և խնդրեց ինձ հեռացնել իմ շքախումբը: Այդ առաջարկը այնչափ ծանր և ճնշիչ էր ինձ համար, որ ես նոյնիսկ չէի կարողանում բացատրել, թէ ինչումն է բանը: Հայը, որ վերադառնում էր իր հայրենիքը՝ վերադառնում էր որպէս իրաւատէր, որպէս իշխող՝ և ոչ գաղտնագողի, պէտք է չերևար թուրքերին՝ նոցա տրամադրութիւնը չը փչացնելու համար...

Ինչևիցէ, բայց անգլիացու այդ յայտարարութիւնը ստեղծում էր այն խորթութիւնը մեր և անգլիացիների միջև, որ և յետագայում անանցանելի մի վիհ էր...

Բայց շատ հետաքրքիր և բնորոշ էր, որ տեղացիներին ներկայացնում էր գեներալ Բիչին Գանձակի կողմերից փախած մի արկածախնդիր երիտասարդ,

Բագու-Ատրբէյջանի Մուսաֆաթի վարձկան այն գործակալներից մէկը՝ որոնք այդքան տարի շարունակ պղտորում էին Կովկասի երբեմն խաղաղ ջրերը:

Ռուսերէն կոտրատելով Գանձակի պրիստաւի նախկին գրագիրը՝ ասաց գեներալ Բիչին, որ տեղական թուրք ազգաբնակութիւնը ողջունում է անգլիական գեներալին, և իր գոհունակութիւնն է յայտնում տիրող այն իշխանութեանը, որ ի դէմս Շուրայի՝ կառավարում է Կարսի նահանգը մեր ազատ օրերում, շեշտալից վերջացրեց երիտասարդը իր սերտած դասը: Մենք ուզում ենք օգտուել «ինքնորոշման» սկզբունքից և կառավարուել այնպէս՝ ինչպէս ցանկանում ենք...

Գեներալ Բիչ շնորհակալութիւն անելով՝ մի ինչ որ անորոշ բան ասաց այդ առիթով, և մենք թողեցինք Կարաեալը շատ ծանր տպաւորութեան տակ: Շատ հետաքրքիր ու բնորոշ է, որ մեզ դիմաւորող թուրք անուանիները՝ որոնք բոլորն էլ ինձ ճանաչում էին և բոլորն էլ երբեմն այնչափ պատկառալից էին դէպի ինձ, այսօր ձևանում էին, իբր չեն ճանաչում ինձ, և խուսափում էին նայելու դէպի մեր կողմը...

Նրանք գտնուում էին Մուսաֆաթի *(տեքստը խզուած է)*... Երբ գնացքը կանգ առաւ՝ գեներալ Բիչի սալօնը անցաւ Կարսի ամրութիւնների պարետը, կոմենդանտը, մի փաշայ՝ և ողջունելով անգլիական գեներալին ասաց, որ զօրքերի հրամանատար Շեֆկետ փաշան մի ժամ առաջ պաշտօնական շտապ գործով մեկնեց Սարիղամիշ: Եւ այդ էր պատճառը, որ պարետի ընդունելութիւնը գեներալի մօտ շատ սառն էր, և տևեց երկու րոպէ միայն:

Բայց Շեֆկետ փաշան դիտմամբ էր մեկնել Կարսից գեներալի գալուց մի ժամ առաջ միայն՝ որպէսզի ստիպուած չը լինի դիմաւորելու անգլիացուն և նրա հետ խօսելու: Մեզանից ոչ ոք դուրս չեկաւ վագօնից, թուրքերը թշնամալից խմբւում էին այն վագօնների շուրջը՝ ուր հայեր կային: Գեներալ Բիչ չընդունեց պատուաւոր պահակը, և թիւրք հրամանատարութեան համար միանգամայն անսպասելի՝ կէս ժամից յետոյ մեկնեց Սարիղամիշ, Շեֆկետին հասնելու և նրա հետ տեսնուելու համար: Գիշերը մեր գնացքում անցկացնելուց յետոյ՝ միւս օրը ես ու գնդապետ Տեմպերլէյ աֆտօմօբիլով անցանք քաղաք, թիւրք հրամանատարութեան կողմից մեզ համար պատրաստուած բնակարանը տեսնելու:

Բայց այստեղ մի դէպք ևս տեղի ունեցաւ: Աղէքսանդրապօլից մեկնելիս՝ ինձ ուղեկցողները հայկական մի դրօշակ էին վերցրել իրենց հետ նահանգապետի տան համար:

Երբ Կարսի վագզալում այդ դրօշակը դուրս բերեցին՝ գնդապետ Տեմպերլէյ խնդրեց ինձ կարգադրել, որ դրօշակը մնայ վագոնում, որովհետև, բացատրեց անգլիացին՝ այդ դրօշակը կարող է վատ տպաւորութիւն թողնել թիւրքերի վերայ... Խնդիրը մեզ համար շատ փափուկ, դելիկատ էր ի հարկէ, ես ոչ մի ոյժ չունէի իմ տրամադրութեան տակ, ես դեռ չէի ստանձնել պարտաւորութիւներս, և այդ երերուն ու անորոշ մթնոլորտում՝ անտակտութիւն կը լինէր իմ կողմից յա-

մառելու այս դէպքում: Յամենայն դէպս պարզ էր, որ թէև անգլիացիները «յանձնում էին» մեզ Կարսի նահանգը՝ բայց այդ աւելի դիպլօմատիկ մի փորձ էր, քան թէ միջազգային վճռալից մի ակտ: Այսպէս թէ այնպէս՝ ես ստիպուած էի դառնալից փակելու այդ խնդիրը, և մենք Կարս էինք մտնում համակուած ոչ սուվերէն զգացմունքներով *(տեքստը խզուած է)*... չեն ցանկանում:

Այդ գրութիւնը կազմել էր մի հրեայ, որ շատ լաւ տիրապետում էր թէ՛ անգլերէն և թէ՛ թիւրք լեզուներին: Բագուի Մուսաֆաթ հոգատար կոմիտէն անգլիացիների դերը երկրում նախատեսելով՝ վաղօրոք ուղարկել էր այդ հրեային Կարս, Շուրայի տրամադրութեանը: Իսրայէլի այդ ճարպիկ որդին, որ միևնոյն ժամանակ լրտեսի պարտաւորութիւն էր կատարում թիւրքաց հրամանատարի մօտ՝ շատ շուտ անցաւ անգլիացիների կողմը:

Երբ մի ամսից յետոյ անգլիացիք վճռեցին ցրել Շուրան և բանտարկել նրա անդամներին՝ լեզուագէտ հրեան թարգմանի պաշտօնով անցաւ անգլիացիների մօտ, և մեծ վարպետութեամբ մատնում էր այնուհետև իր հին բարեկամներին:

Երբ մենք գնդապետ Տիմպերլէյի հետ խորհրդակցում էինք ստացուած գրութեան մասին՝ գնդապետը ստացաւ մի այլ նամակ, ուր Շուրան ունկնդրութիւն էր խնդրում նորանից: Երբ գնդապետ Տեմպերլէյ հարցրեց այդ առիթով իմ կարծիքս՝ ես ասացի, որ սակաւախօսութիւնը, լրջութիւնը և խստութիւնը Արևելքում մի ընդհանուր հասկացողութիւն են կազմում: Թոյլ չը տալ մարդկանց երկար ու բարակ խօսելու՝ կը նշանակէ կտրուկ քաղաքականութիւն վարել: Այդ գործելակերպի առաջ Արևելքը սովոր է խոնարհուել, և Շուրան՝ վերջացրեցի ես, պէտք է այդպէս միայն ընդունել:

Գնդապետը միանգամայն համաձայնուեց ինձ հետ: Նշանակուած ժամին գնդապետ Տիմպերլէյ խնդրեց ինձ ևս ներկայ լինել այդ ունկնդրութեանը, և մենք ուղեկցութեամբ մեր շքախմբերի՝ անցանք ընդունարանը: Շուրան բաղկացած էր երեք հոգուց, նախագահ՝ Մամեդ բէկ Ալիբեկով: Նա Երևանի նահանգի, Սուրմալու գաւառի Հիւսէյնքեանդ գիւղիցն էր, իմ վաղածանօթը: Երբ շատ տարի առաջ ես Սուրմալու գաւառապետի պաշտօնակատարն էի՝ այդ Մամեդը իմ դիւանատան գրագիրների թւումն էր: Մեծահռչակ հայատեաց Սուրմալուի գաւառապետ Բօգուսլաւսկու օրով՝ որի հրէշաւոր գործունէութեանը վերջ տուեց դաշնակցութեան մեծահամբաւ գնդակը[11], Մամեդը դարձաւ Բօգուսլաւսկու քարտուղարը, նրա աջ թևը, և մեծ յաջողութեամբ 12 տարուայ ընթացքում զինում էր թուրքերին հայերի դէմ, և ի կատար ածում Բագուի Մուսաֆատ կուսակցութեան ցուցմունքները:

---

[11] Բոգուսլաւսկուն ահաբեկելու մանրամասները տե՛ս **Арутюнян В.** «Дро бросился напе перез…», Голос Армении, 28 мая, 1998.

Ռուս պետական յեղաշրջումից յետոյ փախչելով հայկական վրէժից՝ նա ապաստան էր գտել Կարսում, և այնտեղ էլ ի կատար էր ածում Բագուի քաղաքական պատուէրները:

Շուրայի միւս անդամներն էին՝ Սարիղամիշի անտառների պահապաններից մէկը, մի վայրենի անգրագէտ քուրդ, իսկ միւսը գիւղական տանուտէրի նախկին գրագիրը: Երեքն էլ իր ժամանակին ենթարկւում էին իմ իշխանութեանը, և իրերի դրութիւնը բնորոշելու համար՝ հարկաւոր եմ համարում ասել այստեղ, որ երեքն էլ իր ժամանակին վախենում էին ինձանից, որպէս կրակից...

Երբ մենք մտանք դահլիճ և Շուրայի նախագահը սկսեց իր ատենաբանութիւնը՝ գնդապետ Տեմպերլէյ շատ կոշտ կտրելով նրա խօսքը, և հանելով ժամացոյցը՝ ասաց շատ հրամայալից. «Ձեզ համար ես միայն երեք րոպէ ունեմ, ասացէք ի՞նչ էք խնդրում... »:

Այդ աւելի քան սառն ընդունելութիւնը այնպէս շշմացրեց Շուրայի անդամներին, որ նախագահ Մամեդի խօսքը մնաց նրա բերանում, և նա հազիւ կարողացաւ թոթովել մի քանի անկապ բառ միայն: Գնդապետ Տեմպերլէյ անվերաբեր լսածին՝ ասաց, որ երկիրը յանձնւում է Հայկական կառավարութեանը, որին, ի դէմս նրա նահանգապետի՝ ենթարկւում է Շուրան և դրանով փակեց ունկնդրութիւնը:

Բայց միւս օրը գնդապետ Տեմպերլէյ ստացաւ մի նոր անգլիերէն գրութիւն: Շուրան այս անգամ շատ արձակ ոճով տեղեկացնում էր, որ նա բնաւ ցանկութիւն չունի ընդունելու դրսից եկած որևէ իշխանութիւն, և խնդրում էր հեռացնել հայերին Կարսից: Եւ ի հաստատութիւն այդ վճռական յայտարարութեան՝ Շուրայի տան առաջ, որ մեր բնակարանի դիմացն էր, ի ցոյց մեզ՝ շարուեցին հարիւրի չափ զինուած թուրքեր, իսկ մի ագիտատօր՝ դարձեալ Գանձակի կողմերից մի եկուոր, սկսեց շեշտալից խօսել խռնուած ամբոխի առաջ օրուայ խնդրի մասին:

Այդ միջոցում վերադարձաւ Սարիղամիշից գեներալ Բիչ, և գնդապետ Տեմպերլէյ շտապեց երկաթուղու կայարանը՝ նրան իրերի դրութիւնը զեկուցանելու: Այդ տեսակցութիւնից յետոյ գնդ. Տեմպերլէյ տրամագծօրէն փոխեց իր վերաբերմունքը, գնդապետ Տեմպերլէյ նոյնպէս հեռացաւ Կարսից, և նրա յաջորդը՝ մեր ծանօթ հրեայի միջոցով պարզեց եկուոր թուրքերի, այդ Երևանի և Գանձակի թուրքերի բոլոր դաւերը:

Թիւրքաց զօրաբանակը արդէն քաշուել, անցել էր դէպի Էրզրում, իսկ Կարս էր եկել մօտ 3000 անգլիական զօրք: Յենուելով արդէն այդ ոյժի վերայ՝ անգլիական ներկայացուցիչը ժողովի հրաւիրեց ամբողջ Շուրան: Թուրք անուանիները կարծելով, որ անգլիական գնդապետը գումարում է այդ նիստը երկրի այդ կառավարութիւնը ի դէմս Շուրաի պաշտօնապէս ճանաչելու համար՝ շատ բարձր տրամադրութեամբ լցնում են դահլիճը: Երբ գնդապետը մօտենում է նա-

խագահի աթոռին՝ Կարսի նահանգի դէմքը անմիջպէս փոխւում է: Դահլիճում մնացածները փախչում են առանց ետ նայելու, իսկ երկիրը անիծում է «Ատրբէյջանը», որի ցանցերում 17 թուից տարուբերւում էր միամիտ ժողովուրդը: Մինչ այդ, ես ապաքինուեցի իմ ծանր հիւանդութիւնից և հեռագիր ստացայ ներքին գործոց մինիստրից Ապրիլի 15-ին Աղէքսանդրապոլ լինել, նորից Կարս անցնելու համար:

Այստեղ հարկաւոր եմ համարում աւելացնել, որ տեղական թուրքերի ըմբոստութիւնը գալիս և պահպանւում էր ոչ միայն Բագուի ոսկիներով ու գործակալներով՝ այլև յենւում էր թիւրք հրամանատարութեան վերայ: Գնդապետ Տեմպերլէյ ասաց ինձ մի օր, որ մինչև թիւրքաց զօրաբանակը չը հեռանայ Կարսի նահանգից՝ մենք ոչ մի ակտիւ քայլ անել չենք կարող այստեղ: Տաճկաց հրամանտարը՝ Տեմպերլէյի ասելով, առաջարկում էր նրան իր սուինները՝ Շուրան ցրելու համար, բայց գնդապետ Տեմպերլէյ երկիւղ էր կրում, որ այդ սուինները միայն առ երես կը լինեն անգլիացիների կողմը, և կարող են առաջ բերել երկրում այնպիսի մի շփոթ՝ որից դուրս գալը շատ դժուար կը լինէր: Այդ էր պատճառը, որ գնդապետ Տեմպերլէյ չունենալով իր սեփական ոյժը՝ հրաժարուեց տաճկաց այդ երկդիմի առաջարկութիւնից:

Տաճկաց հրամանատարութիւնը ցոյց էր տալիս անգլիացիներին ձևօրէն մեծ ուշադրութիւն: Մեր գալու միւս օրը նոքա կապեցին գնդապետ Տիմպերլէյի առանձնասենեակը հեռախօսով Բաթումի հետ, և անգլիական սպաները գիշեր ու ցերեկ անդադար ծածկագիր հեռագիրներ էին ուղարկում Բաթումի վերայով Կ.Պոլիս:

Թիւրքերը տենդոտ տեղափոխում էին նահանգից դէպի Էրզրում ինչ որ հնարաւոր էր ռուս անսպառ պահեստներից, ու գլխաւորապէս Կարսի նահանգի մեծաքանակ հացը: Գեներալ Բիչ մի քանի անգամ այդ առիթով բողոքեց, թիւրքերը հաւատացնում էին, որ տանում են իրանց հեռացող բանակի համար մի ամսուայ պաշար միայն, բայց իրօք անխնայ թալանում և կողոպտում էին Կարսի նահանգը:

Անգլիացիների թիկունքում՝ Շեֆկետ փաշան կազմակերպում էր տեղական Շուրան, կառավարութիւնը զինում էր թուրքերին և վարժեցնում նոցա: Այստեղ պէտք է նկատել, որ այդ ժամանակամիջոցում, 18-19 թուականներում, այս և այն գիւղում տաճկաց զինուորները ամուսնացել էին, և այդ մի քանի տասնեակ մարդկանց որպէս զինուորական ինստրուկտօրներ՝ Շեֆկեթ փաշան թողեց Կարսի նահանգում իր հեռանալուց յետոյ թուրքերից վաշտեր ու գումարտակներ կազմակերպելու, ու նոցա վարժեցնելու համար...

Տաճկաց հրամանատարութիւնը շարունակ հաղորդակցութեան մէջ էր Բագուի հետ, և Ատրբէյջանի էմիսարները Արդահան-Թիֆլիզի վերայով անդադար գնում և գալիս էին Կարսից Բագու: Կարսը այդ օրերում նման էր մի քաղա-

քի, որ ոչ իշխանութիւն ունէր և ոչ տէր: Այդ կեղեքիչ մթնոլորտում բոլորը տանում էին, բոլորը շտապում, իսկ օրուայ տարազը՝ «ինքնորոշման» լոզունգը, դա մի զաւեշտալից եղանակ էր, որ պարում էին հրապարակի բոլոր սրիկաները, մեր օրերի բոլոր ազատասէր գողերը, և պղտոր ջրի բոլոր վարպետները: Հայկական մեծահարուստ տները՝ ուր բազմել էին Գանձակից, Հին Նախճաւանից, Բօրչալուից ու Երևանից փախած արկածախնդիր թուրքերը, լի էին կեանքի բոլոր վայելքներով: Երկրից հեռացող տաճկաց բանակը տանում էր հայի տոկուն աշխատանքի բոլոր արժէքաւորները, դաշնամուրը, էլեկտրական մեքենաները, բազմատեսակ գիւղատնտեսական գործիքներ, թանկարժէք կահ-կարասիք, գրքեր՝ թողնելով տեղական թուրքերին բոլոր մնացածը, որ դիզուել և խնամուել է հարիւրաւոր տարիների ընթացքում: Այդ չափ ճնշիչ էր Կարսի մթնոլորտը՝ երբ ես ծանր և անյոյս հիւանդ, 19 թուի Յունուարի 24-ին թողեցի Կարսը:

III
Նորից Կարսում, իմ բանակցութիւնները անգլիական հրամանատարութեան հետ՝ իշխանութիւն կազմակերպելու մասին

1919 թուի Ապրիլի 15-ին ես նորից Աղէքսանդրապոլ էի, ուղևորուելով նորից Կարս:

Ալ. Խատիսեան մինիստր նախագահը՝ նորից եկել էր Աղէքսանդրոպոլ Կառավարութեան հրահանգները ինձ տալու համար: Նորա հետ միասին եկել էր և անգլիական գեներալ Դիւի՝ անգլիական զօրքերի հրամանատարը Կովկասում:

Մինիստր նախագահի սալօն վագօնում կայացաւ մեր խորհրդակցութիւնը իմ միսիայի առիթով: Որոշուեց, որ ես ինձ ուղեկցող պաշտօնեաների հետ, արտակարգ գնացքով անցնեմ Արփաչայը, Կարս, ստանձնեմ պաշտօնս և երբ հեռագրեմ՝ Աղէքսանդրապոլից շարժուի Կարսի նահանգի համար պատրաստուած հայկական երկրորդ հետևակ բրիգադան, և ապա՝ մեր բազմաթիւ գաղթականութիւնը: Ես շատ սիրում եմ մեր երկրի գարունը, նա շատ աղմկալից է և շատ բուրալից: Երբ ջրերը պղտորւում են և չայերը ուժգին աղմկում ու սրընթաց որոտում՝ արթնանում և շարժւում է ամբողջ բնութիւնը: Սելը մեր երկրի բախտն է, մեր երկրի վիճակը: Այդ խայտաճամուկ ջրերը բերում, հոսեցնում են դէպի մեր դաշտերը՝ բերրին ու լիութիւնը, և այդ է պատճառը երևի, որ մեր ժողովուրդը այդչափ սիրում է գարունը և գարնան առաջի արագընթաց և որոտալիցք սելը...

Եւ այդ գեղաձիծաղ օրերում՝ բնաւեր և թշուառ հայութիւնը պատրաստւում էր անցնել Արփաչայ, շտապում էր դէպի այն հանդը՝ ուր այնչափ մեծ սիրով դէպի երկրի քաղցրութիւնը, նա միշտ երկել, հերկել ու կալսել է...

Գաղթականութիւնը բարձել էր արդէն իր սայլերը, և այդ բարք ու բարխանի երկար շարանները բռնել էին դէպի Արփաչայ տանող խճուղին, և մին անգամ երբ ես գալիս էի երկաթուղու վագզալը կամ փողոցով էի անցնում՝ ինձ շրջապատում էին թիւրքահայերը, Կարսի նահանգի հայութիւնը, և մեծ սիրով դէպի ինձ յանձնուած գործը՝ իրաւունք էին խնդրում սահմանը, Արփաչայ անցնելու: Բայց ես պատուիրում էի սպասել իմ այդ առիթով հեռագրական կարգադրութեանը: Եւ Ապրիլի 19-ին, մեծ զատկի թաթախման օրը՝ հազարաւոր ամբոխի բարեմաղթութիւնների ուղեկցութեամբ, իմ յատուկ գնացքը շարժուեց Աղէքսանդրապօլից դէպի հռչակաւոր Արփաչայ:

Նորից Կարաեալ, երկաթուղու առաջի կայանը, նորից բուռն յիշողութիւն, բայց նոր յոյսեր, բուռն եռանդ և շատ բարձր տրամադրութիւն...

Բայց այս անգամ պատկերը արդէն այլ էր: Նոյն թուրքերի աւելի մեծ բազմութիւն, նոյն ծանօթ բայց այս անգամ արդէն աղերսող ու պատկառելից դէմքեր, ժպտող, հինաւուրց աղուհացը և ջերմագին հաւաստիացում խորին յարգանաց և հպատակութեան... Աղէքսանդրապօլից մինչև Կարս ճանապարհը նման էր մի մեծ յուշարձանի, որ վկայ էր մեծ աւերմունքի ու թալանի: Ճանապարհի աջ ու ձախ կողմերում ընկած էին բազմաթիւ լոկոմոտիւներ, հարիւրաւոր ջարդուած վագոններ, աֆտոմոբիլներ, ցեմենտով լի տակառներ, բամբակի վիթխարի հակեր "Торговый домъ бр. Африкянъ" դրոշմով, փամփուշտով լի հազարաւոր արկղներ և այլ ռազմամթերք, իսկ կայարաններում մեծ պահեստներ, ուր թէ՛ թիւրք զօրամասերը և թէ՛ տեղական թուրքերը կուտակել էին ռուս իշխանութեան մեծ հարստութիւնը՝ մեքենաներ, գործիքներ, երկաթ, հացահատիկ, մամլած խոտի լեռներ և այլն:

Ակամայ ապշում, զարմանում ես յեղափոխական ծափերի տակ երկու տարի աւեր, երկու տարի անխնայ թալան, պատերազմի արհաւիրք, բայց երկրի հարստութիւնը դարձեալ ծով, դարձեալ անչափ ու անհամար:

Կարս հասանք ժամի 10-ին, արդէն գիշեր էր: Վագզալում կար տեղական թուրքերի մեծ բազմութիւն, բայց արդէն երկչոտ և միայն հետաքրքրուող դէմքեր, բայց անվստահ քայլեր ու մարած տրամադրութիւն...

Ես դուրս չեկայ վագոնից: Բախտի բերմունքով երևի, մենք Կարս էինք ժամանում Մեծ Զատկի օրը: Մենք բոլորս հաւատացողներ լինելով, տրամադիր էինք այդ զուգադիպութեան մէջ բարութեան ու արդարութեան գրաւական տեսնելու:

Բայց Կարսի հայկական հինաւուրց եկեղեցիների զանգակները լուռ էին, և այդ ճնշում, ընկճում էր մեզ: Հայը դաստիարակուել է սրբութեան և պատկա-

ռանքի մթնոլորտում, մեր մանկութիւնից մենք սիրել ենք «Քրիստոս յարեաւ» քաղցր և ընտանի հոլովի, և այսօր մեծ փափագ էինք զգում լինելու այնտեղ՝ ուր մարդիկ աւետում են իրար այդ դարաւոր և հին ողջոյնը:

Առաւօտը իմ ոստիկանապետը զեկուցեց, որ եկել էր անգլիական պարետի ադիւտանտը և Կարսի թուրք քաղաքագլուխը: Առաջինը ողջունեց հայակական նահանգապետին գնդապետ Պրօսօրի անունից, և տրամադրեց ինձ նրա աֆ-տօմօբիլը, իսկ թուրք քաղաքապետը ներկայեանալով՝ ասաց պատկառալից, որ սպասում է հրամաններիս...

Շնորհակալութիւն անելով անգլիացի գլխապետին, ես նրա ուղեկցութեամբ անցայ Կարսի ամրութիւնները՝ անգլիական հրամանատարին այցելելու, իսկ յետոյ ինձ համար պատրաստուած բնակարանը:

* * *

Տաճկաց զօրաբանակի հեռանալուց յետոյ՝ անգլիացիք ձեռբակալեցին 18 եկուոր թուրք խռովարարներ, Կարսի նահանգը «կառավարող» Շուրան, աքսո-րեցին նոցա Մալթա կղզին և ցրեցին այդ «ինքնորոշուող» հաստատութ-իւնը: Բայց նահանգը կառավարելու համար անգլիացիք կազմեցին գնդապետ Պրօս-սօրի գերիշխանութեան տակ մի խորհուրդ տեղացիներից, որի մէջ մտան մի ռուս, մի մօլական, 2 յոյն և 5 թուրք: Այդ խորհրդի անձնական կազմը վերին աս-տիճանի անյաջող էր: Ռուս ներկայեացուցիչը մի գնդապետ էր: Երբ նորա մեծ հայրենիքը տակնուվրայ եղաւ, և Կարսի պարիսպների վերայ 45 տարուց յետոյ նորից ծածանուեց տաճկական դրօշակը՝ նա հնարաւոր համարեց մնալու Կար-սում, և տրամադրեց իրան թիւրքերին: Իսկ երբ վերջինները թողեցին Կարսը՝ նա տեղաւորուեց Շուրայում, և մեծ եռանդով պաշտպանում էր ազգերի «ինքնո-րոշման» սկզբունքը... Այդ աղմկալից և անցնող օրերում՝ նա տենդոտ լցնում էր իր տունը երկրի բոլոր վայելքներով և չափազանց դժգոհ էր, որ հայերը չեն ու-զում ճանաչել «Կարսի Հանրապետութիւնը»: Մօլօկանը մօտակայ Բլագոդարնօ-յէ մօլական գիւղի մի մեծ վաշխառու էր, և երբեմն կառապան Կարսում: Շատ անգամ, երբ ռուս իշխանութեան օրով ես Կարսի շրջանի պետն էի՝ նա առան-ձին պատկառանքով տանում էր ինձ կառքով: Իսկ այժմ ճաշակելով «ինքնորոշ-ման» գաղափարը՝ նա հաւակնութիւն ունէր երկիր կառավարելու... Յոյներից մէ-կը նոյնպէս ռուս բանակի սպաներից էր: Վերջի պատերազմում նա մեծ յաջողու-թեամբ զարդարեց թէ՛ իր կուրծքը ռուս շքանշաններով, և թէ՛ իր գրպանը ռուս ոսկով, և այսօր ծարաւի էր և իշխանութեան:

Երկրորդ յոյնը՝ պետական յեղաշրջումից առաջ գործավար էր Կաղզուանի գաւառի Խօրասան գաւառակում, իսկ այժմ որպէս օրէնսգէտ՝ վարում էր խորհր-դում նահանգի վարչական մասը: Թուրքերից մէկը՝ ռուս իշխանութեան օրով

Կարսում մրգի խանութ ունէր: Երկրորդ թուրքը մսագործ, ղասաբ, երրորդը՝ գիւղական ուսուցիչ, և վերջինը՝ նորաւարտ բժիշկ Արդահանի գաւառից: Այդ մարդիկը անուանել էին իրենց «մինիստրներ», և իրար մէջ բաժանել «պօրտֆելները»: Կառապանը ըստ իր մասնագիտութեան՝ վերցրել էր «հաղորդակցութեան» մինիստրի պօրտֆիլը, ռուս գնդապետը՝ որի տանը վերջում յայտնուեց հեռագրական պարագաների մի մեծ պահեստ, յատկացրել էր իրան պօստ-հեռագրի մինիստրի պաշտօնը: Գիւղի վարժապետը դարձել էր «լուսաւորութեան և արուեստների» մինիստր, մրգավաճառը՝ ֆինանսների, ղասաբը՝ պետական հսկիչ, իսկ պրիստաւի նախկին գործավար յոյնը՝ արդարադատութեան մինիստր էր կոչւում: Բժիշկը, որ մի ֆանատիկ թուրք էր, և Բագուի Մուսաֆաթ կուսակցութեան գործակալը՝ վերապահել էր իրեն խորհրդի նախագահի բազկաթոռը, և «պրեմիեր» էր կոչւում...

Ախորժակների և ձգտումների այդ հետաքրքիր համերգի սրտովը չէր ի հարկէ, Կարսի նահանգը Հայաստանի Հանրապետութեան կցելը: Նոքա ամէն կերպ խուսափեցին նոր իշխանութիւնից, և փորձեցին լրտեսութիւն անել անգլիացիների մօտ եկուոր հայերի վերաբերմամբ: Այն բանը, որ հայկական նահանգապետի պաշտօնով եկել է մի մարդ, որ ճանաչում է այդ «մինիստրների» թէ՛ տակը և թէ՛ վրեն...

Միւս օրը Երևանից եկաւ գեներալ Դիվի, և ինձ հրաւիրեցին անգլիական շտաբը խորհրդակցութեան:

Կարսի նահանգը կառավարելու համար՝ ասաց ինձ անգլիացի գեներալը, մենք կազմակերպել ենք խորհուրդ, և դուք պէտք է գրաւէք այդ ատեանում նախագահի աթոռը, որպէս Primus inter Paris, որպէս աւագը՝ հաւասարների մէջ: Ես առարկեցի գեներալին, որ մեր կառավարութիւնը չի ժխտում ի հարկէ ժողովրդի գործակցութիւնը, բայց մենք ունենք երկրի պայմաններին համապատասխան մեր կառավարչական սիստեմը և մեր օրէնքները: Մեր խորհրդակցութիւնը տևեց մի քանի ժամ, և ոչ մի եզրակացութեան չը հանգաւ՝ որովհետև գեներալը յամառ պնդում էր, որ Կարսի նահանգի մինիստրները և նոցա խորհուրդը պէտք է Կարսում լինի և ոչ թէ Երևանում:

Միւս օրը Կ. Պոլսից եկաւ անգլիական գեներալ Միլլ, և ինձ նորից հրաւիրեցին անգլիական շտաբը: Դարձեալ նոյն ակադեմիկ խնդիրները, և գեներալները պնդում էին, որ ես ընդունեմ նոցա առաջարկած կառավարչական ձևը: Մեր այդ առիթով տեսակցութիւնը վերսկսուեց և երկրորդ օրը, և անգլիացիները ոչ միայն յամառում էին՝ այլև սպառնում: Տեղեկացրեցի այդ բոլորի մասին Երևան, և երկար տարուբերուելուց յետոյ, չորրորդ օրը այցելեցի անգլիական շտաբը, և յայտնեցի գեներալ Դեւիին, որ ես ընդունում եմ գոյութիւն ունեցող «խորհուրդը», և խնդրեցի հրաման արձակել, որ ես այսօրուանից փաստացի ստանձնում եմ Կարսի նահանգապետի պաշտօնը: Բայց նախքան կատարել իմ այդ պահանջը՝

գեներալ Դիւի խնդրեց ինձ, որ ես մի յուշագիր կազմեմ, իմ որպէս նահանգապետի անելիքների մասին, և ներկայացնեմ գեներալ Միլլին:

Միւս օրը ես երեք թերթից բաղկացած ֆրանսերէն մի գրութիւն ներկայացրեցի գեներալին: Իմ կառավարչական սիստեմի նախագիծը հաւանութիւն էր գտել գեներալ Միլլի և գեներալ Դիւիի կողմից, և գնդապետ Պրոսսօր՝ Կարսի ամրութիւնների անգլիական հրամանատարը, հենց նոյն օրը գրաւոր հրաման արձակեց՝ ինձ Կարսի նահանգապետ ճանաչելու մասին: Միւս օրը, շրջապատուած իմ պաշտօնեաներով և ներկայութեամբ տեղացի հայ և թուրք անուանիների՝ ես հանդիսաւոր կերպով ընդունեցի անգլիացիների կազմակերպած խորհուրդը, որ փաստացի պէտք է կառավարէր Կարսի նահանգը: Բայց ես ընդունեցի այդ «Մինիստրներին» ոչ որպէս Primus inter Paris, ոչ թէ որպէս աւագը հաւասարների մէջ՝ այլ որպէս իշխող ու թելադրող: Եւ «մինիստրների» տրամադրութիւնը իսկոյն մարեց: Խորամանկ բժիշկը ի դիմաց «խորհրդի»՝ յայտնեց երկրի գոհունակութիւնը ինձ նորից Կարսի նահանգում տեսնելու առիթով, և իրանց մեծ պատրաստակամութիւնը կատարելու իմ հրամանները: Ակներև էր, որ «խորհուրդը» այլևս գոյութիւն չունէր...

Խորհրդի անդամները՝ յետոյ պատկառանքով սեղմում էին իմ պաշտօնեաների ձեռքերը և աշխատում նոցա մերձենալու... Այդպէս է Արևելքի հոգեբանութիւնը:

Տեղեկացնելով կատարուածի մասին մինիստր նախագահին՝ ես հեռագրեցի Աղէքսանդրապոլ, որ Կարսի նահանգի համար պատրաստ երկրորդ հետևակ բրիգադան շարժուի դէպի Արփաչայ, և որ իրաւունք տան և գաղթականութեանը անցնելու սահմանը: Միւս օրը Աղէքսանդրապոլ-Կարսի ամբողջ խճուղին բռնուեց անհամար սայլերով ու բեռներով, իսկ երկաթուղու յատուկ գնացքներն էլ բերում էին դէպի Արփաչայ հազարաւոր տարագիր թշուառներ:

Պատմական Շիրակը նորից հմայուեց իր հարազատ, գուրգուրալից լէ-լէ-ով, այդ մեր սրտին և հոգուն ընտանի եղանակը հայրենիքի կարօտն էր երգում և մաճկալի այդ առաձգական և հմայիչ հառաչանքը տանում էր մեզ դէպի մեր երազների քաղցրութիւնը: Գաղթականական գնացքները գալիս էին Կարս լուսաբացին: Այդ միջոցում կայարանումն էին Կարսի գաւառապետը, Կարսի ոստիկանապետը, քաղաքագլուխը և Խնամատար հաստատութիւնների ներկայացուցիչը: Պէտք էր ցուցակագրել գաղթականութիւնը, պէտք էր սայլեր պատրաստել գաւառները ցրուող ժողովրդի համար, պէտք էր հոգալ նոցա ուտելիքը: Այդ բոլորը պահանջում էր բուռն, հոգատար աշխատանք և ես պէտք է վկայեմ, որ մարդիկ անում էին ինչ կարող էին:

Առաւօտուայ ժամը հինգից ես ինքս ոտի վերայ էի արդէն, և շատ սիրում էի դիտել, թէ ի՞նչ բերկրանքով հազարաւոր ընտանիքներ շտապում էն «տուն»: Նոքա օր առաջ շտապում էին դէպի իրենց այն հինաւուրց թոնիրը՝ ուր տարիների

բախտը և ձախորդ օրերը համեմել են հայրենիքի կարօտը: Բայց մինչ այդ բոլորը՝ ես կարգադրեցի, որ մեր զօրաբանակի անցնելու ճանապարհով Արփաչայի ափերից մինչև Կարս նրան հանդիսաւոր դիմաւորէ երկրի թուրք ազգաբնակութիւնը: Իսկ երբ զօրաբանակը մօտենում էր քաղաքին՝ ես շրջապատուած քաղաքացիական պաշտօնեաներով, մի բուռն հայերով և թուրք հոգևորական-ութեան ու թուրք անուանիների մեծ բազմութեամբ, հանդիսաւոր դիմաւորեցի Հայոց Հանրապետութեան զօրաբանակը, և մեծ շուքով՝ ի ցոյց թուրքութեան, առաջնորդեցի զօրքը դէպի Կարս:

Բայց դառնանք մեր վերաբերմունքին դէպի խորհուրդը, որ պէտք է ըստ անգլիացիների՝ կառավարէր նահանգը: Ստանձնելով պաշտօնս՝ ես կանչեցի ինձ մօտ խորհրդի անդամներից ամենախորամանկին, այն յոյնին, որ երբեմն գործաւոր էր ռուս ոստիկանատանը: Ես գիտէի, որ նա Խորասան գաւառակի յոյն գիւղերից է, և մեծ ցանկութիւն ունէր այդ վայրում իշխանութիւն ունենալու: Բացատրելով նրան, որ իմ ցանկութիւնն է նահանգի բոլոր վայրերում ունենալ այնպիսի պաշտօնեաներ՝ որոնք որպէս տեղացիներ մօտ ծանօթ են երկրի անցուդարձին, ես ասացի, որ վստահում եմ նրան Խորասան գաւառակի պետի օգնականի պաշտօնը, և իրաւունք եմ տալիս այսօրուանից պատշաճ ուսադիրներ կրել...

Յոյնի ուրախութեանը չափ ու սահման չը կար:

Պաշտօնավարութեանս երկար տարիների ընթացքում՝ ես սովոր եմ ժողովրդի հետ անմիջական յարաբերութիւններին, և չէի կարող զրկել ինձ այդ բաւականութիւնից նահանգապետի դերում: Այդ է պատճառը, որ իմ բնակարանի առջև աւելի քան որևէ հիմնարկութեան մօտ՝ դուք վաղ առաւօտուանից կը տեսնէիք ժողովրդի մեծ բազմութիւն: Այստեղ էին և թուրքերը և քրդերը և կարապափախները, յոյները, եզիդիք, թուրքմենները, լազգիք և թիւրքերը, և ես սիրում էի այդ մարդկանց հետ խօսել մտերմաբար, առանց ի հարկէ թարգմանի, և ամէն մէկի հետ իր լեզուով և իր բառբառով: Եւ հազիւ թէ պէտք է ասել, որ այդ երկրի սրտովն էր: Յոյնի նոր պաշտօնի լուրը ամենքից շուտ իմացաւ փողոցում խառնուած մեծ բազմութիւնը, և ես լուսամուտից դիտում էի՝ թէ ի՞նչ մեծ հետաքրքրութիւն առաջ բերեց այդ կարգադրութիւնը ժողովրդական խաւերում:

Մի ժամից յետոյ երբ ես անցնում էի փողոցով՝ հանդիպեցի խորհրդի անդամ «ֆինանսների մինիստր» թուրքին: Նա երկիւղածութեամբ և պատկառալից գլուխ իջեցրեց ինձ՝ և երբ ես հարցրեցի նրա քեֆը, տաճիկը խոնարհուելով ասաց. «Սպասում եմ Ձեր հրամաններին, և յոյս ունեմ, որ գեներալը իր խոնարհ ծառային էլ անտես չի առնի իր շնորհներում... »: Ես հասկացայ ի հարկէ, որ նա ակնարկում է յոյնին պաշտօն տալը, և մի երկու ժամից յետոյ ես կանչեցի նրան ինձ մօտ: Ես կազմակերպում եմ՝ ասացի ես թուրքին, որ պատկառալից կանգնած էր դռան մօտ՝ Կարսի քաղաքային ինքնավարութիւնը, դու լաւ ծանօթ ես

բազարի, շուկայի անցուդարձին, և ես քեզ բազարբաշի եմ նշանակում, բազարի տնտեսական վերակացու: Տաճիկը արդէն իր դերումն էր, և խոնարհ գլուխ տալով՝ շտապեց այդ նորութիւնը աւետել փողոցի բազմութեանը: Միւս օրը՝... խորհրդի նախագահ թուրք բժիշկը ունկնդրութիւն խնդրեց ինձանից:

– Սկզբում Շուրան, յետոյ անգլիացիք,– կեղծալից ասաց խորամանկ բժիշկը,– բարձեցին վերաս խորհրդի նախագահի պաշտօնը, մինչդեռ ես միշտ սիրել եմ բժշկութիւնը...

– Ձեր հայրենի Արդահանի շրջանը՝ բժիշկ, – ասացի ես, – նահանգի մութ անկիւններից մէկն է, և իմ առաջի հոգսերից մէկն է՝ այնտեղ մի ձեռնհաս գաւառական բժիշկ նշանակել: Ընդունելով իմ առաջարկը՝ Արդահանի գաւառական բժշկի պաշտօնը, դուք կատարած կը լինէք թէ՛ Ձեր հայրենի երկրի և թէ՛ Ձեր նահանգապետի բուռն ցանկութիւնը:

Խորամանկ թուրքը բաւականութիւնից ժպտաց և ասաց. – այդ հենց իմ piade/ideria-ն է:

Միւս օրը գիշերը՝ ես ստացայ մինիստր նախագահ Խատիսեանից հետևեալ հեռագիրը. «Կառավարութիւնը յանձնարարում է Ձեզ պարոն նահանգապետ՝ յայտնել նահանգի իսլամ ազգաբնակութեանը, և նրա անունից կառավարութեանը դիմող բժիշկ Հաջիեւին, որ կառավարութիւնը շատ գնահատում է նահանգի թուրք ազգաբնակութեան հեռագրում արտայայտած ամենահպատակ զգացմունքը, և երկրի գոհունակութիւնը հայկական իշխանութիւնից՝ և պատուիրում է Ձեզ, պարոն նահանգապետ, ստեղծել նահանգում այնպիսի կացութիւն՝ ուր թուրքերը զգան իրանց ազատ, հաւասար ու երջանիկ... »:

Միւս օրը, ոստիկանապետի միջոցով ես տեղեկացրեցի Ղազուն՝ թուրք հոգևոր կառավարութեան նախագահին և բժիշկ Հաջիեւին, որ մինիստր նախագահի հրամանով պէտք է այցելեմ մզկիթը, և ժամ նշանակեցի: Շրջապատուած իմ շքախմբով՝ նշանակուած ժամին իմ կառքը կանգ առաւ մզկիթի առաջ, ուր ինձ մեծ հանդէսով ընդունեց հոգևորականութիւնը, անուանիները և Կարսի ամբողջ թուրք ազգաբնակութիւնը: Մզկիթում ես կարդացի մինիստր նախագահի հեռագիրը: Ախունդը և բժիշկը այդ առիթով երկար ճառեր արտասանեցին, և երբ ես կառք էի նստում՝ թուրք ամբոխը երկար գոչում էր,– Եաշասըն էրմէնի հոքումէթի՝ կեցցէ Հայոց կառավարութիւնը...

Միւս օրը բժիշկը խնդրեց մինիստր նախագահի այդ հեռագրի պատճենը, և ես պատուիրեցի ընտիր թղթի վերայ տպել այդ հեռագիրը:

Երբ առանձին յանձնարարութիւնների իմ պաշտօնեան յանձնում էր Ախունդին և բժիշկին այդ հեռագրի պատճէնը՝ այդ երկու անուանիները պատկառելից երկու ձեռքով ընդունելով այդ գրութիւնը, ասացին. Ամէն... Մինիստր նախագահ Խատիսեանի հեռագիրը պատասխան էր այն դիմումի, որ թուրք ազգաբնակութիւնը հեռագրով արել էր կառավարութեանը: Մի կողմից տեսնելով իշխան-

ութեան անաչառ վերաբերմունքը, միւս՝ ցանկանալով նահանգապետին հաճոյանալ, թուրքերը դիմում են Երևան՝ իրանց ամենահպատակ յայտարարութիւնով, և ստանում կառավարութեան նախագահի այդ պատասխանը: Այդպէս են ասիացիք իրանց բոլոր տրամադրութիւններում: Մի երկու օրից յետոյ պաշտօններ ստացած խորհրդի անդամները պատրաստւում էին մեկնելու իրանց պաշտօնատեղին, երբ եկաւ ինձ մօտ «հաղորդակցութեան մինիստր» կառապան մօլականը:

– Դուք ինձ պահանջել էք նահանգապետ,– ասաց մօլականը:

Ես չէի կանչել նրան՝ բայց հասկացայ, որ այդ մի պատրուակ էր ինձ տեսնելու:

–Դու, կարծեմ՝– ասացի ես նախկին կառապանին,– մի ժամանակ փոստի սայլակներ ունէիր, ես մտադրութիւն ունեմ նահանգում Զեմսկի համայնական փոստ կազմակերպել, և այդ աշխատանքը ուզում եմ քեզ յանձնել...

–Այդ հենց իմ գործն է, գեներալ, ի՞նչ խորհուրդ, ի՞նչ Շուրա, ի՞նչ բան...

Եւ «խորհուրդը» ինչպէս տեսնում էք՝ լուծուած էր արդէն: Իսկ երբ մի երկու օրից յետոյ ես այցելեցի գեներալ Դիւիին՝ նա ասաց ինձ ժպտալով,– ինչպէ՞ս են գեներալ Ձեր խորհրդի գործերը...

IV
Կարսի նահանգի ազգաբնակութիւնը և Կարսի գեներալ-նահանգապետութիւնը

Կարսի նահանգը Հայաստանի Հանրապետութեան տարածութեան ոչ միայն կէսից աւելին էր՝ նա կազմում էր նրա և մեծագոյն ինտերեսը, այդ հասկացողութեան պետական լայն իմաստով:

Այդ երկիրը, որի 450 հազար ազգաբնակութիւնից հայերը կազմում էին մի քառորդը, եւ մեր օրերում՝ մօտ 300 հազար խայտաճամուկ ազգագրական մի խառնուրդ էր, իր առանձնակի տնտեսական շահերով, իրաւակարգով, սովորութիւններով, տարազով ու հաւատալիքներով:

Կովկասի բազմատեսիլ վայրերում հազիւ կարելի է մատնանշել մի այլ երկիր, որ այդչափ գունաւոր, պատմական, ազգագրական, տնտեսական և կենցաղական բնորոշ գծեր ունենար:

Այն սքանչելի ձորահովտում՝ ուր կարկաչուն վտակները այնպէս ներդաշնակ են Արաքսի սգաւոր, փախչող ալիքների հետ, ուր Մամիկոնեան հարստութիւնը թողել է մեզ ի զմայլում և ի պարծանք իր կիսակործան ռազմական աշտարակները՝ այսօր թափառում են Մամկանի խաշնարած քրդերը, Մամիկոնեանների այդ ազատ զաւակները: Այստեղ են և թուրքմենները, որ իրանց կեն-

ցաղով, սովորութիւններով և աշխատասէր, խաղաղ բնաւորութեամբ՝ գալիս են ասելու, որ նոքա ևս խորթ չեն հայերին: Եւ այդ մահմեդականները հայերի պէս հացի խմորն անելիս՝ հացի գունդերի վերայ խաչի դրոշմ են դնում...

Եթէ Կովկասի ռուս կառավարութիւնը՝ ի դէմս նրա գաւառական և նահանգական վարչութեան, շատ և շատ անգամ եղել է երկրին անտեղեակ, ապիկար և միայն զաւեշտալից՝ այդ չի կարելի ասել երկրի բարձր կառավարութեան մասին: Ռուս պետական իղձերի հանգոյցը դէպի Մերձաւոր Արևելք՝ միշտ կծկուել է Թիւրքաց Հայաստանի դարբասի շուրջը, և Կարսի նահանգը հարիւր տարուայ ընթացքում՝ եղել է այն ռազմաբեմը, ուր ի ցոյց էր դրւում ռուս օրէնսդրութիւնը և ռուս պետականութիւնը: Ռուս պետական մարդիկը իրանց սրտի խորքերում փայփայելով նուաճողական միտումներ՝ հաշուի էին առնում երկրի ուրուագիծը, և այդ է պատճառը, որ Կարսի նահանգը, որ ճաշակների ու շահերի այնպիսի մի մեծ խառնուրդ էր՝ առանձնակի զբաղեցրել է այդ պետական մադկանց: Եւ մինչդեռ Երևանի, Գանձակի, Թիֆլիզի և միւս նահանգները կառավարւում էին ընդհանուր դրութեամբ և ընդհանուր օրէնքներով՝ Կարսի նահանգում Կովկասեան բարձր իշխանութիւնը հարկաւոր գտաւ մատնանշել ժողովրդական կենցաղը, և այդ կենցաղի վերայ հիմնաւորել իր օրէնսդիր և վարչական գործելակերպը: Եւ նա մեծ յաջող-ութեամբ տասնեակ տարիների ընթացքում իր յետևիցն էր տանում այդ բազմալեզու և բազմակենցաղ նահանգը: Եւ եթէ երբեմն ահարկու, հզօր, և երբեմն լայնածաւալ Ռուսաստանը իր ագրեսիւ քաղաքականութիւնը դիմակաւորելու համար պէտք ունէր առանձնակի հոգատարութեան դէպի Կարսի նահանգը՝ և ճանաչում էր այնտեղ սովորական իրաւունքը, յարգում հեղինակութիւնը և երկրի սրբազան կենցաղը՝ հազիւ թէ պէտք է ասել, որ ոչ պակաս նոյն միտումներով, հոգատար պէտք է լինէինք դէպի Կարսի նահանգը և մենք:

Բացի այդ բոլորից՝ Կարսի նահանգը դառնում էր այսուհետև այն կենտրոնը, որտեղից պէտք է ծաւալուէր մեր պետականութիւնը: Եւ եթէ այսօր այդ շրջանը սահմանակցում էր Տաճկաստանի հետ՝ վաղը նա պէտք է մեր թիկունքում մնար, երբ կը բացուէին այն դռները՝ որոնց շուրջը այդքան տարի սաւառնել են հայկական երազները:

Մենք տանում էինք մեր պետականութիւնը թրքաբնակ խիտ վայրերով, հետևապէս մենք պարտաւոր էինք ուրոյն ուշադիր լինել դէպի մեր պետական մեքենան:

Այդ բոլոր հիմունքներով և միտումներով՝ մեր թէ՛ կառավարչական, թէ՛ հասարակական խաւերում և թէ՛ մեր մամուլում՝ Կարսի նահանգը ստանում էր առանձնակի նշանակութիւն: Երևանը կարծես մնում էր ստուերում, և այստեղ ու այնտեղ սկսում են խօսել Կարսը մայրաքաղաք դարձնելու մասին: Այդ բոլոր հիմունքներով՝ ես կարծում եմ, որ գրելով Կարսի նահանգապետութեան պատմու-

թիւնը՝ մենք արձանագրում ենք բազմատեսակ նիւթերի այն մեծ *(տեքստը խզուած է)* … նահանգապետ:

…Այդ մասին ես ոչ մի գրաւոր տեղեկութիւն չունէի իմ կառավարութիւնից, և այդ լուրը լսում էի առաջի անգամ:

Շատ տարօրինակ էր ի հարկէ, որ գեներալ-նահանգապետ նշանակուելու մասին նահանգապետը իմանում էր միայն մասնաւոր, կողմնակի կերպով, և մինչև վերջն էլ այդ մասին նա ոչ մի գրաւոր տեղեկութիւն չը ստացաւ կառավարութիւնից:

Ինձ համար, որ սովոր էի օրինապահութեան և ճշտութեան՝ այդօրինակ վերաբերմունքը դէպի պետական կառավարչական խնդիրները միանգամայն անհասկանալի և միանգամայն անընդունելի էր:

Գեներալ-նահանգապետ Յովսէփեան մի ռուսախօս սպայ էր. պատերազմի քմահաճոյքը մի երկու տարում գլխապետից նրան գեներալ էր դարձրել, իսկ դաշնակցութեան գերիշխանութիւնը տեսնելով՝ նա օր առաջ սկսել էր մերձենալ դաշնակցականներին, իրան կուսակից, «համակրող» անուանել այդ մեծ քաղաքական զանգուածի, և այսօր այդպիսով՝ նա ոչ միայն Կարսի զօրաբանակի հրամանատարն էր, այլև գեներալ-նահանգապետ՝ այդ կարևոր և պատասխանատու նահանգում:

Նա բռնելու, ջարդելու և փշրելու մեծ կողմնակիցն էր, և այդ լօզունգով նա տրամադիր էր կառավարելու երկիրը:

Մենք տրամագծօրէն տարբերւում էինք իրարից մեր հասկացողութիւններով ու աշխարհայեցողութեամբ, և մեր միատեղ աշխատակցութիւնը՝ ես ոչ միայն թիւրիմացութիւն, այլ մի ծաղր էի համարում:

Առանց որևէ կարիքի՝ գեներալը ուզում էր բռունցք բանեցնել և արեան վերայ յենել իր իշխանութիւնը: Իսկ ես, որ աւելի քան երեսուն տարի զբաղուել եմ երկիր կառավարելու գործով, ուսումնասիրել եմ գաւառը և ժողովրդական կեանքը՝ գալիս էի տիրելու երկիրը քաղաքացիօրէն:

Մեր քաղաքակրթական և շինարար աշխատանքը պէտք է կոփէր մեր պետականութեան պատուանդանը, և այդ զրահի տակ՝ մենք անխռով կարող էինք իշխել: Այդպէս էին տրամադրուած և երկիրը և այդ վայրենի կարափափախները, այդ պարթև Մամկանցիք, այդ Զիլան ու Հայդարանլի քաջազնական քուրդ ցեղերը յոգնած և խաբուած իրանց բոլոր յոյսերում ու սպասելիքներում՝ տրամադիր էին հպատակուել և հանգիստ արածացնել իրանց ոչխարն ու տաւարը: Այդպէս էր երկրի բարոյական դէմքը, և ես ուզում էի օգտուել այդ տրամադր-ութիւնից, զբաղեցնել այդ խայտաճամուկ ազգագրական կօնգլօմերատը՝ քաղաքացիական շահերով և այդ առանցքով, անվտանգ և անխռով տանել պետական դեռ անվստահ առագաստները Կարսի նահանգում:

Բայց ամենամեծ դժուարութիւնների մենք կարող էինք հանդիպել Արդահանի հեռաւոր շրջանում:

Այդ շրջանը բնակեցրած է գլխաւորապէս քրդերի բազմաթիւ ցեղերով, թիւրքերով, յոյներով:

Մի կողմից այդ քաջազնական քուրդ ցեղերը դարաւոր թշնամութիւն են մղում իրար հետ՝ միւս կողմից վրէժխնդիր տրամադրուած են դէպի քրդերը թիւրքերը և կարափափախները: Ալպիկ լեռներում՝ միշտ տրամադրուած էր կեղծելու, և այդպիսով գլուխ պահելու:

Յոյները իրար դէմ էին սրում քուրդ ցեղերը, սրում էին թուրքերի և քրդերի թշնամութիւնը՝ և անհանգիստ, երկդիմի համբաւ էին վայելում այդ լեռներում:

Երբ 19 թուին թիւրքաց բանակը թողնում էր Կարսի նահանգը, իսկ մենք դեռ չէինք գրաւել այդ վայրը՝ վրաց գումարտակները Ախալքալաքի վերայով անցան Արդահանի շրջանը և գրաւեցին այդ շրջանի Շաւշետ գաւառակը: Օգտուելով տիրող անիշխանութիւնից՝ վրաց զօրամասերը առաջ խաղացին դէպի Օլթի շրջանի սահմանները և գրաւեցին Արդահանի շրջանի Գէօլ գաւառակը, այն հովիտը՝ ուր խիտ ապրում էին քրդերի բազմաթիւ ցեղեր, թիւրքեր և յոյներ: Երբ 18 թուին Տաճկաց զօրքը խուժեց Կարսի նահանգը՝ յոյներն ու թիւրքերը միանալով սկսեցին ճնշել և թալանել քրդերին:

Լեռների այդ միամիտ և վեհանձն բնակիչները՝ խորթ զաւակներ էին տաճկաց կառավարութեան աչքում, և այդ քրդերին սկսեցին կեղեքել ու թալանել ոչ միայն նոցա դրացի յոյները և թիւրքերը՝ այլև տաճկաց զօրամասերը:

Պէտք է ասել, որ քրդերը Կարսի նահանգում շատ հարուստ են: Արդահանի շրջանի մեծանուն Մուրկանցի Արիֆ աղէն՝ որին մինիստր նախագահ Խատիսեան, շրջագայելով Կարսի նահանգը՝ սպայական ուսադիրներ շնորհեց, ունի 60 հովիւ, չօբան ու մշակ, նրա վրանների առաջ օրական 3000 ոչխար ու 2 հարիւր կով է կթւում: Այդ ցեղապետը 20 թուին ցանել էր իր տան պէտքերի համար 500 փուդ գարի հաց, և երկիւղ էր կրում, որ այդ հացը կարող է և չը բաւականացնել նորան:

– Ի՞նչ ես անում այդչափ հացը,– հարցրեցի ես նրան մի օր:

– Է՜հ, նահանգապետ, – պատասխանեց Արիֆը,– միայն 60 չօբան ունեմ և օրեկան մի այդչափ էլ եկող ու գնացող, մեր տունը ճանապարհի վերայ է...

Այդ միջանկեալը ես առաջ բերեցի դրութիւնը բնորոշելու համար և կրկնելու, որ երկինքը սփռել է այդ վայրում իր բոլոր վայելքները: Թիւրքաց զօրամասերի քաշուելուց յետոյ՝ քրդերը ոտքի կանգնելով յարձակւում են յոյների և տեղական թիւրքերի վերայ, բայց ոչ թալանի մտքով՝ այլ միայն վրէժ առնելու համար: Բայց գալիս են վրացիները և պատկերը նորից փոխւում է: Յոյները բարեկամանում են վրաց սպաների հետ, և նորից սկսում են յարձակուել քրդերի վերայ, թալանել նոցա: Վրաց վաշտերը որպէս իշխանութիւն՝ միջամտում են այդ

կռուին կարգ վերականգնելու իմաստով, բայց իրօք սկսում են անխնայ թալանել քրդերին՝ յոյներին միայն գործիք դարձնելով այդ հարստահար վակխանալիայի մէջ:

Ոչխարի ու տաւարի մեծաքանակ շարքեր, մեծաթիւ սայլեր հացահատիկով, գորգերով և թանկարժէք անօթներով՝ անցնում էին դէպի Վրաստան, իսկ քրդերն ու յոյները եախաբօղազ դարձած՝ իրար օձիքից բռնած շարունակում էին իրանց վրէժը, ի գոհունակութիւն ի հարկէ վրաց արկածախնդիր սպաների:

Երբ վրաց գումարտակները քաշուեցին այդ վայրից՝ ես յատուկ յանձնաժողով նշանակեցի այդ շրջանի վնասները որոշելու: Այդ արձանագրութիւնները ես իւր ժամանակին ուղարկեցի մեր Արտաքին գործերի մինիստրին, և խնդրեցի նրա միջնորդութիւնը վրաց կառավարութեան առաջ՝ հատուցանելու քրդերի այդ վնասները:

Բայց այդ առիթով ես ոչ մի պատասխան չը ստացայ իմ կառավարութիւնից: Այդպիսի ժառանգութիւն էի ստանում ես Արդահանի գաւառում թուրք զօրամասերի և վրաց գումարտակների հեռանալուց յետոյ: Յայտարարելով Արդահանի գաւառը որպէս Հայեաստանի Հանրապետութեան տերիտորեայ՝ պէտք էր ի հարկէ գրաւել երկրի համակրութիւնը:

Յոյն-քրդական յարաբերութիւնները ի ծայր լարուած էին, և այդ մթնոլորտում դժուար էր մեր իրաւակարգի հիմնաւորումը:

Ես գիտէի, որ ժողովուրդը սիրում է պատկառել դատարանի առաջ: Թէև ոչ միշտ ի հարկէ դատարանը բաւարարում է վիճող կողմերը, և դատարանի վճիռը որոշ չափով սփոփում է հրապարակի կրքերը, և որոշ չափով երաշխաւորում երկրի իրաւակարգը: Այդ միտումներով ես հեռագրով միջնորդեցի արդարադատութեան մինիստրի առաջ՝ արտակարգ քաղաքացիական մի ատեան ուղարկել Արդահանի շրջան, պարտաւորեցնելով, որ այդ դատարանը մի ամսուայ ընթացքում, անվճռաբեկ քննի յոյների ու քրդերի այդ մեծ շփոթում առաջ եկած բոլոր քաղաքացիական իրարուց պահանջները: Դորա հետ միաժամանակ, ես յատուկ յանձնաժողով ուղարկեցի Արդահանի շրջանը՝ վրաց զօրամասերի երկրին հասցրած վնասները որոշելու համար:

Հազիւ թէ պէտք է ասել, որ ո՛չ առաջի և ո՛չ վերջի ձեռք առած միջոցներից ես առանձին սպասելիք չունէի: Բայց ինձ պէտք էր արդարադատութեան և անաչառութեան սկզբունքը տեսանելի դարձնել ժողովրդի մէջ: Այն ժամանակուայ արդարադատութեան մինիստր Սամսոն Յարութիւնեան անմիջապէս յարգեց միջնորդութիւնս, և երբ դատաւոր Մարգարեան քննում էր քուրդ-յունական քաղաքացիական պահանջները՝ յանձնաժողովը զբաղուած էր քրդերի վնասները պարզելու խնդրով:

Այդ երկու ակտը մեծ յաջողութիւն ունեցան այդ իմաստով, երկիրը պատկառեց իշխանութեան վերաբերմունքի առաջ, կրքերը միանգամայն մարեցին՝ և

ինձ յաջողուեց այդպիսով զբաղեցնել երկիրը քաղաքացիական շահերով, և ցրելով կրքալից մթնոլորտը, ճանապարհ հարթել *(տեքստը խզուած է)* .... վայրը գեներալ նահանգապետը ուղարկեց իր վաշտերը, դաշտային, զինուորական դատարան կազմակերպեց և սկսեց հրով ու սրով կերտել մեր պետականութիւնը...

Նա հազարաւոր տուգանքի ենթարկեց քուրդ գիւղերի հասարակութիւնները և բազմաթիւ բռնութիւններ գործ դրեց քրդերի շրջանում:

Թէ ո՞ւր գնացին այդ տուգանք մեծ գումարները՝ ես չը գիտեմ, բայց եթէ վրաց թալանի օրով քրդերի հարստութիւնը հոսում էր դէպի վրաց սահմանները՝ այդ հայ սպաների գերիշխանութեան օրով քրդական ոչխարն ու տաւարը անցնում էր դէպի Աղէքսանդրապոլ...

Երբ կեղեքուած ու հարստահարուած քրդերի բողոքը հասաւ մինչև երկինք՝ զօրաց մինիստրը ստիպուած էր քննութիւն նշանակել գեներալ Յովսէփեանի և նրա արբանեակ սպաների ապօրինութիւնները պարզելու: Այդ քննութիւնը կատարեց գնդապետ, յետագայում գեներալ Ղազարեան: Նա ճշտեց, որ դաշտային դատարանի զրահի տակ՝ քրդերից յափշտակուած ոչխարն ու տաւարը հայ սպաները ուղարկել են Կարս, Աղէքսանդրապոլ, բայց գնդապետի *(տեքստը խզուած է)* .... շրջաններում, որպէս ըմբոստ ու թալանչիներին ոչ ձայնակցող սպայ[12]...

Մեր զօրաբանակի Կարս գալուց մի քանի օր յետոյ՝ գեներալ նահանգապետ Յովսէփեան հաղորդեց ինձ, որ նա զօրամաս է ուղարկում Օլթի շրջանը (գաւառը) գրաւելու համար, և խնդրեց ինձ այդ շրջանի քաղաքացիական իշխանութիւնը պատրաստել իր զօրամասերի հետ այդ շրջանը անցնելու համար:

Դաշնակցութեան կուսակցութեան *(տեքստը խզուած է)*... Հռովմեացիների հռչակաւոր իրաւունքը, բնորոշելով ժառանգութեան գաղափարը՝ ասում է, որ եթէ լոյս աշխարհ եկած մանկան սիրտը բաբախել է գէթ *(տեքստը խզուած է)*...

Օլթի - Կարսի նահանգի ծայրագաւառն է, և Կարսից մինչև Օլթի 200 վերստ է խճուղով: Այդ գաւառը ռուս տիրապետութեան օրով բնակեցրած էր բացառապէս քրդերով, թիւրքերով, թուրքմեններով, յոյներով և շատ փոքր թուով հայերով:

Շատ հարուստ այդ գաւառը՝ որի ածխահանքերը, աղը և միրգը մեծ հռչակ ունեն, սահմանակցում է Տաճկաստանի ամենավայրենի տարածութեան հետ, ուր միշտ բնակալել են աւազակախմբեր և այս ու այն տեղից փախած արկածախնդիր մարդիկ:

---

[12] Գեներալ Ղազարեան, քեամալիստների գերութիւնից ազատուելուց յետոյ, յետին չքաւորութեան մէջ ապրում էր Թիֆլիզում: 23 թուին, Թիֆլիզի Միքայէլեան կամուրջից նա իրան Կուր գէտը նետեց ու խեխդուեց: Անկարող լինելով որևէ աշխատանք գտնելու, ի ծայր չքաւորութեան հետ մաքառելու մթնոլորտում՝ նա կորցնում է հաւասարակշռութիւնը և վերջ տալիս իր կեանքին: (*Ծանօթագրութիւնը բնագրի հեղինակինն է - Վ.Հ.)*

Կարսի նահանգի հայկական իշխանութեան նախօրեակում՝ Բագուի Մուսաֆաթ կենտրոնական կոմիտէն այդ տարածութեան իր գործադիր ոյժերը Օլթի փոխադրեց, և այդ օրուանից Օլթի շրջանը խռովարարների կենտրոնատեղու համբաւ ստացաւ:

Մեր Կարս գալու օրից՝ Կարսի և նրա շուրջը վխտող Բագուի Մուսաֆաթ գործակալները քաշուեցին դէպի հեռաւոր Օլթի, և այնուհետև Բագուն կապ էր պահպանում Օլթիի հետ Ճորոխի հովտով, Վրաստանի վերայով:

Այդ օրերում Անատոլիաի թիւրքաց զօրամասերը կատարելապէս լքել էին, և Տաճկաց իշխանութիւնը թէ՛ Օլթի շրջանում, և թէ՛ սահմանակից Թորթում գաւառում՝ միանգամայն գոյութիւն չունէր: Այստեղ ու այնտեղ մնացած թիւրքաց զօրամասերի ողորմելի մնացորդները սոված, մերկ, առանց կապի ու փոխադրական միջոցների՝ խառնուել էին երկրի քուրդ բանդաների հետ, և հրոսակախմբեր կազմելով՝ ապրում էին թալանով և ոչ մի իշխանութիւն չէին ճանաչում:

Բայց եթէ Բաբելոնի այդ խառնակութիւնը բնական հետևանք էր մեծ պատերազմի և Տաճկաստանի պարտութեան, միւս կողմից այդ շփոթը օգտագործեց իր միտումներում Բագուի Մուսաֆաթը, և իր գործակալների միջոցով այդ անիշխան դրութիւնը ի ծայր հասցրեց:

Նա օգտուեց բոլոր պայմաններից՝ երկրի մեծ հեռաւորութիւնից, նրա վայրենի կենցաղից, Տաճկաստանի պետական անզօրութիւնից, և Օլթին պատնէշ դարձրեց հայկական իշխանութեան առաջ խաղալու ընթացքում:

Կարս անցնելով Կարսի նահանգը գրաւելու համար՝ մենք պէտք է ի հարկէ հաշուի առնէինք այդ բոլոր պայմանները մեր ապագայ մարշի ընթացքում դէպի երկրի ներսը: Բացի այդ, մենք պէտք է նկատի ունենայինք, որ Կարսի նահանգի հայ ազգաբնակութեան ներգաղթը՝ այսինք այն տարրի ներկայութիւնը, որի վերայ հայկական կառավարութիւնը յամենայն դէպս պէտք է յենէր իր սուվերնիտետը, դեռ գրեթէ չէր սկսուել:

Ճանապարհի վերայ էր դէպի Կարսի նահանգը՝ և թիւրքահայ բազմահազար գաղթականութիւնը: Այդպիսով, անցնելով Օլթի, 200-300 վերստ հեռանալով Կարսից՝ մեր իշխանութեան բազայից, մենք մեր յետևում, թիկունքում, թողնում էինք ծով թուրքութիւն, մի մեծ վայրենի տարածութիւն՝ ուր ոյժը գէթ առ այժմ յամենայն դէպս օրէնք է: Ինչպէս ես արդէն յիշել եմ՝ ինձ պաշտօնի կոչեցին յանպատրաստի, և ինձ ոչ ժամանակ և ոչ հնարաւորութիւն տուեցին հարկաւոր պատրաստութիւններ տեսնելու իմ մեծ աշխատանքի համար: Ես Կարս էի անցնում առանց աշխատակիցների, պաշտօնեաների, և միայն Աղէքսանդրապօլում ստիպուած էի ընդունելու մի խումբ անձանց՝ զանազան պաշտօնների համար: Այդ մարդկանց ես չէի ճանաչում, նոցա մեծ մասը բերել էր իր հետ այն ժամանակուայ ներքին գործոց մինիստրի օգնական և պաշտօնակատար մինիստրի Սարգիս Մանասեան, մի քանիսն էլ եկել էին դարձել ոչ պակաս

պարտաւորեցուցիչ ինձ համար՝ դաշնակցական յանձնարարականներով: Եւ պաշտօնեաների ընտրութեան մասին՝ երբ պատրաստ գնացքը կանգնած սպասում էր հայկական նահանգապետին Կարս տանելու համար, խօսք չէր կարող լինել ի հարկէ: Միւս կողմից հազիւ թէ պէտք է ասել, որ առաջի օրուանից ես չէի կարող սակարկել մինիստրի պաշտօնակատարի ու նրան համանման կուսակցական ջոջերի հետ, և ստիպուած էի Կարս անցնելու այն հատուկենտ մարդկանցով՝ որոնք այդչափ ճեպընթաց և այնչափ վայրիվերոյ կցուել էին Կարսի նահանգի կառավարչական բարդ գործին... այդպէս էր իրերի ու պայմանների դրութիւնը՝ երբ գեներալ նահանգապետ Յովսէփեան հաղորդեց ինձ, որ նա - «զօրք» է ուղարկում Օլթի՝ Կարսի նահանգը միանգամայն գրաւած լինելու համար:

Բայց Օլթի գրաւելու խնդիրը չէր կազմում իմ առաջիկայ անելիքների հոգսը: Այն բոլոր հիմունքներով ու պատճառներով, որ մենք առաջ բերեցինք այստեղ՝ ես չէի շտապում Օլթի: Ինձ պէտք էր դեռ կայուն դիրք ստեղծել մեր իշխանութեան համար Կարսում, ծաւալել մեր իրաւունքները Կարսի շուրջը, Կարսի, Կաղզուանի և Արդահանի շրջաններում ամրացնել մեր թիկունքը, տիրապետել դրութիւնը՝ այդ հասկացողութեան բարոյական, իրաւական իմաստով, և ապա որպէս յետևանք մեր կառավարչական բնական ընթացքի՝ անցնել և Օլթի: Այդ ժամանակամիջոցում մենք կոփած կը լինէինք մեր իշխանութիւնը այդ երեք շրջաններում (գաւառներում), և այդ իրաւական զրահի տակ՝ արդէն Օլթի անցնելը կ՛ունենար պետական իմաստ, և լրջութիւն ունեցող մի ակտ:

Բացի այդ բոլորից՝ ես մարդիկ չունէի դեռ շրջանի քաղաքացիական իշխանութեան համար:

Բայց իմ այդ բոլոր բացատրութիւններս անզօր էին գեներալ Յովսէփեանին համոզելու համար, նա առանց կարիքի և պատճառի դեմօնստրատիւ շառաչում էր իր սուիններով, և շատ հեղինակալից բոլոր պատեհ ու անպատեհ դէպքերում ընդգծում, որ նրա իրաւունքը նրա սուրն է, և այդ սրով նա պէտք է ճանապարհ հարթէ մեր կառավարչական ընթացքի համար ոչ միայն Կարսի նահանգում, այլև դէպի Վան, Էրզրում...

Գեներալի այդ բրաւուր գոռում գոչումը ջղայնացնում էր երկրի բանիմաց շրջանները, և մեր պետական նպատակներին շատ աննպաստ մթնոլորտ ստեղծում թէ՛ Կարսի նահանգում և թէ՛ նրա սահմաններից դուրս:

Այսպէս թէ այնպէս՝ ես չէի կարող այդ բրաւուր գեներալի առաջը կապել, և նա Մայիսի մէկին՝ իր Կարս գալու չորրորդ օրը, գրաւոր հրաման արձակեց իր դէպի Օլթի առաջ խաղալու մասին:

Ես ստիպուած էի ժամանակաւորապէս միայն երեք պաշտօնեայ նշանակել Օլթի շրջանի վարչական իշխանութեան համար, որոնք մեր զօրաբանակի հետ պէտք է Օլթի անցնէին:

Բայց միւս օրը պարզուեց, որ զէնքով այդչափ քաջազնալից շառաչող գեներալ նահանգապետը՝ այդ հեռաւոր շրջանը գրաւելու համար ուղարկել է միայն երեսուն հետևակ զինուոր ու մի սպայ...

Երբ ես բողոքեցի այդ առիթով՝ գեներալ-նահանգապետ Յովսէփեան հեղինակալից առարկեց, որ նա մեծ «բռունցք է» պահում Կարսում, և «ռազմական միտումներով» չի կարող ջլատել իր ոյժերը, միանգամայն բաւական համարելով Օլթին գրաւելու համար և երեսուն զինուորը...

Երբ մեր այդ փոքրիկ էքսպեդիցեան հասնում է Օլթի՝ նոցա մօտ գալիս է Օլթի շրջանի Շուրայի ներկայացուցիչը Գանձակի կողմերի թուրքերից, և առաջարկում է մերոնց հեռանալ՝ որովհետև Շուրան չի ճանաչում հայկական իշխանութիւնը:

Տորա հետ միասին՝ փողոցներում սկսում են վխտալ զինուած հեծեալ խմբեր, որ թշնամալից տրամադրութիւն են ցոյց տալիս դէպի եկուորները: Պէտք չէ ասել, որ եթէ գեներալ նահանգապետը, քաղաքացիական իշխանութիւնը Օլթի ուղեկցելու համար ուղարկէր մի երկու գումարտակ հետևակ, մի այդչափ էլ հեծեալ, լեռնային մի երկու թնդանօթի հետ՝ այդ ոյժը արդէն մարմնացած օրէնք կը լինէր այդ հեռաւոր վայրում, և այնտեղ թառած արկածախնդիրները փախուստ կը տային:

Բայց երբ այդ աւազակախմբերը իրանց առաջ տեսան միայն 30 զինուոր՝ նրանք աւելի լրբացան, և մերոնց մնում էր միայն վաղօրոք հեռանալ, աւելորդ բարդութիւններ չը ստեղծելու համար:

Այդպէս վերջացաւ գեներալ Յովսէփեանի ծաղրածու մարշը դէպի Օլթի, որ չէր կարող չը ծգել Կարսի նահանգում հայկական կառավարութեան համարումը, և համապատասխան կերպով չանդրադառնալ և դէպի Թիւրքաց Հայաստան:

Մինիստր նախագահ Խատիսեան նամակով ինձ ցաւ յայտնեց այդ առիթով, բայց այդ մարշի վերին աստիճանի անտակտ բնոյթը պատկանում էր բացառապէս գեներալ-նահանգապետ Յովսէփեանին, որին մեր կառավարութիւնը, ինչ-ինչ պատճառներով յանձնել էր Կարսի նահանգի թէ քաղաքացիական և թէ զինուորական գերիշխանութիւնը: Այդ օրուանից մենք չը կարողացանք այլևս ուղղել մեր սխալը:

Օլթի շրջանի գրաւումը զուտ քաղաքացիական խնդիր էր՝ և ենթակայ յետևապէս Կարսի նահանգապետի իրաւասութեանը: Բայց զօրաց հրամանատարութիւնը ոչ մի կերպ չէր ուզում հասկանալ իր դերը և տեղը մեր կառավարչական անելիքների ընթացքում, և կամայականօրէն իր վերայ վերցնելով պետական խնդիրների լուծումը՝ երկրում քաոս ու անիշխանութիւն էր ստեղծում:

Կառավարութիւնը մինչև ի վերջը չը կարողացաւ սանձարկել այդ գեներալներին ու գնդապետներին, այդ Ռուբէն փաշաները մինչև ի վերջը գնացին այդ

բրաւուր գեներալների յետևից՝ ու իւրայնի Սեդան ստեղծեցին Օլթի շրջանում, ուր ընկաւ և Կարսը: Բայց այդ բոլորի մասին իւր տեղում:

Գեներալ նահանգապետ Յովսէփեանի այդ բոլոր և անպատասխանատու էքսպերիմենտներից յետոյ՝ ինձ համար պարզ էր ի հարկէ, որ իրերի այդ դրութիւնը այդպէս շարունակուել չի կարող:

Ես ի ծայր ջղայնացել էի, պօմպադուր գեներալ-նահանգապետը իր վարչական էքսպերիմենտները երկրի գլխին փորձում էր անպատասխանատու, իսկ երկիրը հաշուի էր առնում միայն ինձ՝ և ինձ ուղղում իր ցաւերը, պահանջներն ու սպասելիքները: Ինձ մնում էր միայն հրաժարուել պաշտօնից՝ և հրապարակը յանձնել ի սխրագործութիւն իրան «կուսակցական» անուանող այդ ռուսախօս գեներալին:

Բայց նախքան այդ քայլը՝ ես յատուկ սուրհանդակով ուղարկեցի մինիստր նախագահին մի պատճառաբանուած զեկուցում իրերի դրութեան մասին նահանգում: Շօշափելով գեներալ նահանգապետի լիազօրութիւնների իմաստը՝ ես բացատրեցի, թէ օրէնսդրական ի՞նչ հիմքեր են առաջ բերում երկրում գեներալ նահանգապետի լիազօրութիւնները, և որ այդ տուեալները մենք չունէինք: Ես միակ հայն էի, որ անցայ Արփաչայը, և մենք տիրեցինք Կարսի նահանգը առանց մի գնդակ անգամ արձակելու: Երկիրը դիմաւորեց մեզ աղ ու հացով, մեզ յաջողուեց միանգամից կապանքել նահանգի անուանիներին՝ շօշափելով նոցա փառասիրական թոյլ կողմերը, և մեզ մնում էր միայն կերտել՝ և այդ ուղղութեամբ հլու և հպատակ տանել մեր յետևից մեզ անձնատուր եղած երկիրը:

Վերջապէս մատնանշեցի ես իմ զեկուցման մէջ, անգլիացիները, որ այնպէս յամառ ստիպում էին ինձ ընդունել խորհուրդը՝ չեն կարող ոչ մի կերպ հաշտուել գեներալ-նահանգապետի սանձարձակ և ջարդարար իրաւունքների հետ, և ինձ միանգամայն զարմացնում է, թէ ի՞նչ հիմունքներով և պատճառներով կառավարութիւնը առանց նոյնիսկ ինձ տեղեկացնելու՝ զինուորական դրութիւն է յայտարարել Կարսի նահանգում, և ի դէմս գեներալ-նահանգապետի և իմ՝ երկիշխանութիւն ստեղծել երկրում: Կառավարչական այդ գործելակերպը արմատում երերում էր երկրի հանգիստը, և ոչ մի կերպ չէր համապատասխանում մեր ներկայ պահանջներին և նպատակներին: Այդ միտումներով ես խնդրում էի մինիստր նախագահին՝ միջնորդել կառավարութեան առաջ, վերացնել զինուորական դրութիւնը Կարսի նահանգում, բայց գեներալ Յովսէփեանի վարչական փորձերի հռչակը Երևան էր հասել իմ զեկուցումից առաջ և Մայիսի 20-ին, ուրեմն մեր Կարս գալու օրից մի ամիս յետոյ, ես ստացայ պրեմիեր Խատիսեանից հետևեալ հեռագիրը՝ Մինիստրների խորհուրդը լսելով Կարսի դրութեան մասին խնդիրը՝ որոշեց վերացնել Կարսի գեներալ նահանգապետի պաշտօնը:

Ռուս օրէնսդիր փորձերից յայտնի են, որ երբ կառավարութիւնը այստեղ կամ այնտեղ վերացնում էր գեներալ-նահանգապետի պաշտօնը՝ այդ լիազօր-ու-

թիւնների վարողին տեղափոխում էին առհասարակ մի այլ տեղ, անձնական անխուսափելի թիւրիմացութիւններին տեղիք չը տալու համար: Բայց մեր կառավարութեան ուշադրութիւնից վրիպեց անշուշտ խնդրի այդ փափուկ կողմը, և գեներալ Յովսէփեան զրկուելով գեներալ նահանգապետի պաշտօնից՝ մնաց այնուամենայնիւ Կարսում որպէս 2 հետևակ բրիգադի հրամանատար, և շարունակեց Կարսի նահանգում դարձեալ զինուորական սպառնալից դրութիւն պահել: Նա շարունակում էր և այնուհետև շառաչել իր սուիններով՝ անդադար ջղայնացնելով թէ՛ վարիչ և թէ՛ հասարակական շրջանները:

Իրան վիրաւորուած համարելով՝ նա այդ օրուանից մեծ աղմուկ արշաւ կազմակերպեց նահանգի ադմինիստրացիայի, իմ դէմ, մի քաջարի արշաւ, որ լուծուեց Կարսի անկումով և մեծաչափ նպաստեց Հայոց Հանրապետութեան խորտակմանը:

Բայց այդ մասին իւր տեղում:

V

Իմ առաջի քայլերը նահանգում՝ քաղաքացիական իշխանութիւն կազմակերպելու խնդրում

Ինձ պաշտօնի կոչեցին ինձ համար միանգամայն անսպասելի կերպով, և ես հնարաւորութիւն չունեցայ աշխատակիցներ հրաւիրելու:

Երբ Աղէքսանդրապօլից ես Կարս էի մեկնում՝ մինիստր նախագահ Խատիսեան ասաց ինձ. «Աշխատեցէք շրջապատելու Ձեզ բարձր ուսում և անուն ունեցող մարդկանցով»: Կարսից ես հայ լրագիրներին մի նամակ ուղղեցի, ուր գաւառ էի հրաւիրում մեր ինտելեգենցիային: Բացի այդ, ես բազմաթիւ դիմումներ արեցի մեր հասարակական գործիչներին, մեր դիւանագիտական ներկայացուցիչներին այս և այն պաշտօնի համար համալսարանական ուսում ունեցող մարդիկ ուղարկելու, բայց իմ այդ բոլոր դիմումներս մնացին առանց յետևանքի: Այստեղ պէտք է նկատեմ, որ ռուս պետական յեղաշրջումը և յետագայ օրերը վերագնահատեցին բոլոր արժէքաւորները, և հրապարակում տիրեց աղմուկ և անիշխանութիւն: Մարդիկ մոռացան իրանց տեղը, կոչումը և կարողութեան չափը, և դատաւորի, դատարանի անդամի և գաւառապետի պաշտօնների համար թեկնածու չէր գտնւում, ցանկացող չը կար: Բոլորը բարձրից էին բռնում, բոլորը ուզում էին մինիստր, կամ նահանգապետ լինել: Եւ եթէ թափուր էին հարկային տեսուչների, դատաւորների, պրոկուրորների և այլ բարձրաստիճան պաշտօններ, պատճառը այն էր, որ մեր այլասեռուած ինտելեգենցիան վերևից ներքև էր նայում այդ պաշտօններին: Ապա դուք կարող էք երևակայել մեր կառավարութեան դրութիւնը երկրի կառավարչական ապարատը կազմակերպելու գործում:

Քարտուղարների, գործավարների, պրիստաւների և այլ նմանօրինակ պաշտօնների մասին՝ ոչ ոք լսել անգամ չէր ուզում, և թէ ինչպէ՞ս պէտք է կառավարուէր երկիրը առանց այդ մեծ և փոքր պաշտօնեաների՝ յայտնի չէր:

Մեղադրողի դիրքերը միշտ աւելի կայուն են եղել քան պաշտպանի դրութիւնը, և շատ շատերը այսօր շռայլում են իրանց անբաւականութիւնը՝ ի հաշիւ վարելով, այլև գրականութեան մէջ հետաքրքրուել եմ այդ խնդիրներով, որ մենք գնում ենք այն նահանգը՝ ուր պէտք է սկսուի մեր պետական աշխատանքը, որ ես ուրախութեամբ նոցա ձեռներեցութիւն կը տամ և այլն, բայց այդ բոլոր գաղափարական շոյող բացատրութիւնները չը յուզեցին երիտասարդներին: Նրանք հրաժարուեցին օգնել հայ անդրանիկ նահանգապետին՝ և մնացին Թիֆլիզում: Նոցանից մէկը գերադասեց յետոյ ալիւրի մի պահեստում ինչ մի պաշտօն ունենալ, իսկ միւսը մեր աշխատանքը զառանցանք *(տեքստը խզուած է)*... մի անգամ և այնուհետև Մանուկը վախճանուել է, ժառանգութեան գաղափարը արդէն անուրանալի է, նա իրաւաբանական հասկացողութիւն է արդէն: Մեր պատմութեան ամբողջ տարածութեան վերայ պետական տենչանքները ... տրամադրութիւնը 30 տարի առաջ ցայտուն և շատ բնորոշ առաջ եկաւ այն մեծ գաղափարական անդրադարձումներում՝ ուր դաշնակցութիւնը այնպէս մեծ անուն ու հռչակ հանեց:

Դաշնակցութեան այդ ցաւալից փոթորկալից երկունքը լուծուեց *(տեքստը խզուած է)* ... առաջ են տարուել բազմատեսակ ձևերով, և վերջին 30 տարուայ ընթացքում՝ ազատագրական այդ տրամադրութիւնը յղի էր ի դէմս դաշնակցութեան:

Չի կարելի ուրանալ պատմութիւնը, ինչպէս չի կարելի չարձանագրել, որ մտքի, մեր գրականութեան, մեր զգացմունքների առաջադիմական օտարազգի հասարակական կարծիքն է ի նպաստ մեզ ուղղում: *(տեքստը խզուած է)*... Երկրորդը առարկում էր, որ նա որոշ փաստաբանական կլիենտուրա ունի և այլն:

Եւ եթէ Կարս գալու օրից և մինչև ի Կարսի անկումը ես մարդ չէի գտնում իմ օգնականի *(տեքստը խզուած է)*... մեր պետական գաղափարի իրագործմամբ և այդպիսով դաշնակցութեան ձեռքից, որպէս մի անուրանալի ժառանգութիւն, մենք ստացանք մեր յոյսերի և մեր երազների իրագործումը:

Եւ անկախ բոլոր յետագայ հանգամանքներից, անկախ նորանից պաշտօնի համար՝ հետևապէս պարզ կը լինի իմ դրութիւնը այլ բազմաթիւ պաշտօնների համար թեկնածու հրաւիրելու խնդրում: Ինձ շատ մտատանջում էր լաւ դիւանապետ ունենալու խնդիրը: *(տեքստը խզուած է)*... Թէ ինչպէ՞ս խնամուեց և ինչո՞ւ վատնուեց այդ ժառանգութիւնը՝ դաշնակցութիւնը զուտ ազգային մեր միակ հարազատ զանգուածն էր, որին վիճակուեց այնպէս անձնուրաց և այնպէս մրրկայոյզ լոյս աշխարհ բերել մեր պետական առագաստները: Նահանգապետի դիւանատան ձեռնհաս կառավարիչը աւելի մեծ նշանակութիւն ունէր ինձ համար՝

քան փոխնահանգապետի դեկօրատիւ պաշտօնը: Դիւանապետը պէտք է լինէր օրէնքներին, գրականութեանը տեղեակ մի մարդ՝ գրելու, զեկուցումներ կազմելու շնորհք ունեցող:

Եւ ես մի նամակ գրեցի Երևան, մինիստրների խորհրդի գործերի վարիչ, պարլամենտի անդամ Գէորգ Խատիսեանին՝ այդ պաշտօնի համար ինձ մի երիտասարդ իրաւաբան ուղարկել: *(տեքստը խզուած է)*... այդ մեծաղմուկ ծննդաբերութիւնը ժառանգելու և կեանքի քաղցրութիւնը վայելելու համար՝ յետոյ ներս խուժեց երկրի տականքը, իսկ դաշնակցութեան գաղափարները որպէս մարմնացում մեր իդէալների՝ մնացին այնտեղ, բարձրում... Մի քանի օրից յետոյ Գէորգ Խատիսեանի յանձնարարականով եկաւ ինձ մօտ մի երիտասարդ:

Բարեկամս գրում էր. «Ուղարկում եմ դիւանապետի պաշտօնի համար իրաւաբան Չալխուշեանին»: Ես ակամայ յիշեցի այդ խորհրդածութիւնը և առաջ բերեցի այդ դիտողութիւնները մեզ հետաքրքրող խնդիրը բնորոշելու և պարզելու համար:

Երբ մի երկու իրաւաբանի, որ դաշնակցական չէին, ես առաջարկեցի իմ դիւանատան կառավարչի *(տեքստը խզուած է)*... նա մեր յայտնի հասարակական գործիչ Գր. Չալխուշեանի որդին է: Գրիգոր Չալխուշեանին ես երբէք չէի էլ տեսել, բայց գիտէի նրան որպէս «Մշակ»-ի աշխատակից և հօր «հռչակը» որոշ երաշխիք *(տեքստը խզուած է)*...շատ հետաքրքիր և շատ բազմակողմանի զարգացում պահանջող պաշտօնը, նոքա երկուսն էլ հրաժարուեցին: Ես աշխատեցի պարզել երիտասարդներին, որ ես զբաղուել եմ երկրի վարչական գործերով ոչ միայն կեանքում, վարչական այլև այլ պաշտօններ *(տեքստը խզուած է)*... «համալսարանական», բայց գրել-կարդալու հետ նա առհասարակ գլուխ չունէր... Եւ ինձ համար ստեղծւում էր մի շատ փափուկ դրութիւն: Ես չէի կարող դիւանատանս կառավարչի պատասխանատու և շատ լուրջ պաշտօնում պահել մի մարդու, որ ոչ գրել գիտէր, ոչ լուրջ աշխատել: Միւս կողմից նրան ուղարկողը ականաւոր դաշնակցական էր և եկող երիտասարդը վաղօրոք ինքն էլ մտել էր դաշնակցութեան կուսակցութեան մէջ: Բացի այդ բոլորից, ինչպէս և չը լինէր, նա ուղարկուած էր ինձ մօտ որպէս «Մեր նշանաւոր հասարակական գործչի որդին», որ թէև անցեալում ջերմեռանդ «Մշակական էր», այժմ ոչ պակաս «դաշնակցական», նա բացի այդ, այդ օրերում Հայաստանի Հանրապետութեան դեսպանն էր գեներալ Դենիկինի մօտ... Պէտք է ասել, որ ես անկուսակցական՝ չէի կարող միանգամայն անտես առնել այդ բոլորը: Տակտը և հեռատեսութիւնը պահանջում էին մի պատուաւոր ելք գտնելու այդ փափուկ դրութ-իւնից մի կերպ դուրս գալու համար: Բացի այդ, ես տեսնում էի, որ երիտասարդը, որպէս իր օրերի հարազատը՝ աշխատելու հետ գլուխ չունի:

Այդ բոլոր պատճառներով և ի նկատի առնելով, որ դիւանապետի լուրջ պարտաւորութիւնները միանգամայն խորթ էին այդ ոչ բանիմաց երիտասար-

դին՝ ես մի առ ժամանակ անցնելուց յետոյ արձակեցի հետևեալ գրաւոր հրամանը. «Նահանգապետի դիւանատուն ժամանակաւոր *(տեքստը խզուած է)*... բայց այդ օրերում ընկաւ Խատիսեանի կաբինետը, իսկ Հայաստանի դիկտատօր Ռուբէն փաշան տրամադրութիւն չունէր երկրի քաղաքացիական գործերով զբաղուելու, և մենք թաղեցինք քրդական խնդիրը: *(տեքստը խզուած է)*...վարիչ պարտաւորութիւնները յանձնարարում եմ դիւանատան աւագ գործավարին, իսկ դիւանապետ Չալխուշեանին յանձնարարում եմ ստորագրել ի տեղի նահանգապետի՝ ընթացիք, երրորդական գրութիւնները», այսինքն այն թղթերը՝ որոնք առաջ են գալիս ի կատարումն իմ կարգադրութիւնների և մակագրութիւնների: Այդպիսով բարդ էին երիտասարդի պարտաւորութիւնները: Ի տեղի նահանգապետի՝ նա ստորագրում էր անցագիրները, մանր, այս և այն գաւառական հաստատութեան անունով թղթերը, և առ հասարակ այն բոլորը, որ կարելի էր ստորագրել առանց կարդալու... «Հասարակական գործիչը», նրա որդին և մոլեռանդ «կուսակցականները»՝ բաւական էին այդ «ի տեղի նահանգապետի» դեկօրատիւ ստորագրութեամբ, իսկ երկիրը և լուրջ մարդիկ՝ որոնք դիտում էին Կարսի անցուդարձը, հասկանում էին ի հարկէ այդ ակամայ ֆորմուլայի իսկական իմաստը...

Իսկ հրապարակի աղմկող, թունդ դաշնակցականները անտեղեակ օրէնքի, կարգի՝ կարծում էին, որ «իրանց մարդը» գրաւել է փոխնահանգապետի պաշտօնը...

Այդպիսով փոխնահանգապետի պաշտօնը ամբողջ ժամանակ և թափուր էր և ոչ... Այդ դրութիւնը որոշ չափով բաւարարում էր և ինձ: Ես գիտէի, որ եթէ կենտրոնը ինքը մարդ նշանակելու լինի այդ պաշտօնի համար՝ ամենայն հաւանութեամբ կ՛ուղարկէ մի կուսակցական տիրացու, լաւագոյն դէպքում՝ մի վարժապետ: Եւ այդ միտումներով ես խնդիրը թողեցի բաց մինչև ի վերջը: Այդպէս էր այն մթնոլորտը, ուր կուսակցական լինելը ինքը օրէնքն էր և ինքը օրինականութիւնը:

Դառնալով նահանգի վարչական կազմի խնդրին՝ ես պէտք է ասեմ, որ պաշտօններ ստանալու համար ինձ մօտ գալիս էին բազմաթիւ բախտախնդիրներ զանազան յանձնարարականներով, և շատ անգամ մէկը 3-5 յանձնարարական նամակներ տարբեր դիրքի, և շատ անգամ պետական ու հասարակական նշանաւոր մարդկանցից:

Թիֆլիզի մեր դիւանագիտական ներկայացուցիչը ուղարկել էր մի երիտասարդ, և շատ գովում էր նրան: Ես ուրախութեամբ նրան պաշտօն տուեցի ի հարկէ, և շատ գոհ էի այդ ընդունակ և բանիմաց երիտասարդի գործունեութիւնից: Բայց մի երկու ամսուց յետոյ Կարսի շրջանապետը, որի մօտ էր պաշտօնավարում երիտասարդը՝ Դիլիջանի դատաստանական քննիչից մի գրութիւն էր ստացել, որ այդ երիտասարդը, որ առաջ պաշտօնավարել է Դիլիջանում՝ մեղ-

ադրւում է երեք գործերում կաշառակերութեան մէջ, և քննիչը խնդրում էր բանտարկել նրան:

Մի այլ երիտասարդ, որ եկել էր Կարս պաշտօն ստանալու՝ բերել էր մեր կառավարութեան երկու բարձրաստիճան մարդկանցից յանձնարարականներ, և շրջանապետի, գաւառապետի պաշտօն էր խնդրում:

Հարց ու փորձից պարզուեց՝ առաջինը, որ պարոնը ոչ մի բառ հայերէն չը գիտէ, չունի նոյնիսկ միջնակարգ ուսում, և վերջապէս եղել է ինչ-որ բանկում հաշուապահի օգնական, իսկ Հայաստանում ուզում է անպատճառ գաւառապետ լինել... Յանդգնութիւնը՝ ինչպէս տեսնում էք, չափ ու սահման չունէր, և ես չը գիտէի, թափել զայրոյթս նախ այս երիտասարդի վերայ՝ թէ այն մեծապատիւ պարոնների վերայ, որոնք ուղարկել էին ինձ այդ գաւառապետացուին և որոնց այնչափ մտատանջում էր Հայաստանի բարգաւաճումը... Ես երկար բացատրեցի իմ այցելուին, որ նրա պահանջը առնուազն անհամեստութիւն է, որ շրջանապետ լինելու համար պէտք է փորձ, պէտք է գիտութիւն և այլն: Վերջ ի վերջոյ, յանձնարարական տուողներին չը վիրաւորելու համար՝ ես այդ պարոնին մի անպատասխանատու պաշտօն տուեցի և ուղարկեցի Կաղզուանի շրջանապետի մօտ: Բայց մի ամսից յետոյ նա հրաժարական տուեց և տեղաւորուեց աղի պահեստում, աւելի փոքր ռոճիկով, մի աննշան պաշտօնով: Պարզ էր, որ նա անցել էր այնտեղ գողութեան համար: Ես հեռագրով առաջարկեցի աղահանքի կառավարիչ ինժեներին՝ անմիջապէս արձակել պաշտօնից այդ պարոնին:

Բայց մեր դիպլօմաւոր հանքաբանին պէտք էր երևի այդ «մասնագէտը», և ինժեները փորձեց առարկել ինձ այդ առիթով:

Ես ստիպուած էի սպառնալ ինժեներին՝ իսկ նա ստիպուած էր բաժանուել աղի պահեստում նորան այդչափ պէտք աշխատակցից...

Այդ ինժեներն էլ դաշնակցական չէր, նա իրան ինչ որ «էս-էր» էր անուանում:

Պաշտօնեաներ գտնելու համար ինձ խորհուրդ տուեցին դիմել Գանձակ՝ այնտեղի դաշնակցութեան լիդերին: Իմ հեռագրին՝ ուղարկել ինձ երեք իրաւաբան վարչական այս ու այն պաշտօնների համար, Գանձակի դաշնակցութեան պարագլուխը պատասխանեց, որ կարող է ուղարկել այսինչ պարոններին, բայց երեքն էլ պահանջում են, որ նոցա կայանը Կարս քաղաքը լինի, և նախօրոք հարցնում են. «Ինչպէ՞ս է Կարսի կլիման, կեանքի ի՞նչ յարմարութիւններ կան և այլն»: Ինչպէս տեսնում էք, երեքն էլ «իդեալիստ»-ներ էին, երեքն էլ «տարուած իրանց հայրենիքի բարգաւաճման գաղափարներով»...

Բայց ես չը պատասխանեցի նոցա, մենք խօսում էինք տարբեր լեզուներով, ու երկրպագում տարբեր սրբերի...

Աչքի ընկնող մի հասարակական գործիչ ուղարկում է ինձ մօտ մի երիտասարդ և գրում. «Ոչ մի կերպ չը կարողացայ ազատուել այս գրաբերից և ստիպ-

ուած էի այս յանձնարարականը տալու իրան, բայց զգուշացնում եմ պաշտօն տալ նորան՝ վտանգաւոր է, նա արբեցող է... »:

Ես ստիպուած էի ցաւ յայտնել եկուոր պարոնին, որ ազատ պաշտօններ չունեմ առայժմ, և աւելացնում էի այդպիսով այն մարդկանց թիւը՝ որոնք այս ու այն դիպուածով անբաւական նահանգապետից, անկիւններում անպատասխանատու հոլովում էին Կարսի հայկական նահանգապետի անունը...

Այդպէս էին այն բազմաթիւ կամայ և ակամայ յանձնարարողները՝ որոնք այնչափ «նպաստում» էին մեր պետական աշխատանքներին: Պաշտօնեաներ գտնելու խնդրում իմ դրութիւնը միանգամայն կրիտիկական էր:

Ես մարդ չէի գտնում՝ բարձր, պատուաւոր պաշտօնների համար, իսկ վարչական հաստատութիւնների պետերն էլ՝ իրանց հերթին մարդիկ չէին գտնում իրանց ենթակայ պաշտօնների համար: Եւ մարդկանց այդ սովը, հասարակական-պետական գործակցութեան ոչ միայն բացակայութիւնը՝ այլ ինտելեգենցիայի երես դարձնելը հայրենի հրաւէրից, կատարւում էր ի ցոյց օտարազգիների այն վայրում՝ ուր կուլտուրտրեգերը ի հարկէ հայը պէտք է լինէր: Իմ դրութիւնը այդ խնդրում ես կրիտիկական անուանեցի՝ որովհետև ես աւելի շատ մարդիկ էի արձակում պաշտօններից, քան թէ ընդունում:

Մեր իշխանութիւնը Կարսի նահանգում տևեց տարի ու կէս, և այդ ժամանակամիջոցի ընթացքում ես պաշտօնից արձակեցի, դատի տուեցի և նոյնիսկ բանտարկութեան ենթարկեցի մինչ դատաստանական քննութիւնը՝ 150 պաշտօնեաներ, շրջանապետից (գաւառապետից) սկսած մինչ շրջանի կառավարութեան գործավարը:

Կովկասի պաշտօնական տարեգրութեան մէջ գէթ այդ մի չը լսուած թիւ էր: Իշխանաւորի խստութիւնը, սպառնալիքը, պաշտօնանկ լինելը և նոյնիսկ դատի տալը՝ չէր սանձահարում ապիկար և թալանի տենչով բռնուած մարդկանց: Կարսի նահանգը թալանչիների համար այն աւետեաց երկիրն էր՝ ուր հայ աւազակը շտապում էր անզուգական լինելու: Գալիս էին միայն գողերը՝ միայն հարստանալու և իրանց ապահովելու համար:

Սիրելու և աշխատելու ոչ ոք տրամադրութիւն չունէր: Հայ ինտելիգենցիան կամ երես էր դարձնում հայրենի ծխից՝ գերադասելով այդ ծուխը հեռուից դիտել և անպատասխանատու քննադատել երկրի պետական անցուդարձը, կամ գալիս էին այն անամօթները, որ վարկաբեկելով կառավարութիւնը, մեր դարաւոր իղձերը սրբապղծելով՝ իրաւունք էին տալիս օտարներին ատել մեզ և զզուել մեզանից... Այդպէս էր հայ ինտելիգենցիայի վերաբերմունքը դէպի հայրենիքի սրբազան գաղափարը:

Ադմինիստրացիան գործունէութեան այն բազմատեսիլ և բազմակողմանի տարածութիւնն է՝ ուր գիտութիւնը և փորձը լծորդում են մէկը միւսին: Դժուար է գտնել աշխատանքի աւելի էնցիկլոպեդիկ շրջան՝ ուր կեանքը կը կուտակէր այդ

չափ պէսպէս պահանջներ, ձևեր ու բնական օրէնքներ: Եւ երկիր կառավարելու համար՝ լինէր նա գաւառակ, թէ գաւառ, պէտք էր և գիտութիւն և փորձ, պէտք էր լրջութիւն, սէր դէպի գաւառը և ժողովուրդը, պէտք էր մեծ տակտ և մեծ բարեխղճութիւն: Բայց ուր էր հայ ոսկեզօծ երիտասարդութիւնը, ո՞ւր էին մեր բազմաթիւ իրաւաբանները, մեր ոչ սակաւաթիւ համալսարանականները: Նրանք մեծ քաղաքներում ծամծմում էին մեր հասցէին ակադեմիկ խորհրդածութիւններ, թողնելով ցանկացողներին զրկանքների և գլուխ ցաւացնելու իրականութիւնը...

Եւ ինչպէ՞ս կարող էր կոփել, ամրանալ և գործել երկրի պետական մեքենան՝ երբ աշխատելու ոչ ոք տրամադրութիւն չունէր, երբ պաշտօնեաները սնկի պէս բուսնում և չքանում էին՝ թողնելով երկրին միայն դառնութիւն, ցաւ և միայն զզուանք...

Իմ այդ յուսահատ րոպէներից մէկում՝ ես մի ընդարձակ գրութեամբ դիմեցի պարլամենտի նախագահին և դաշնակցութեան բիւրոյին, և հայրենիքը վտանգի մէջ է pereat patria կոչի տակ՝ խնդրեցի արտակարգ միջոցներ ձեռք առնել: Ուղարկելով իմ այդ գրութեանս պատճէնը և բոլոր մինիստրներին՝ ես միջնորդում էի բռնի բերել հայրենիք աշխատանքից խուսափող մեր ինտելիգենցիան, քառապատկել ու տասնապատկել պաշտօնեայի ռոճիկը, դատարանը ֆիկցիայից իրականութիւն դարձնել, սպառնալ և անխնայ հաշուել...

Բայց իմ այս դիմումս մնաց առանց հետևանքի և նոյնիսկ առանց պատասխանի: Իսկ բարքերը արագընթաց լքում էին՝ գողանալու և հարստանալու տենչը հրդեհել էր երկիրը, և դժուար էր ասել՝ թէ ո՞ր թշնամին էր աւելի վտանգաւոր, դրսի՝ թէ ներսի: Այդպէս էր ընդհանուր առմամբ ադմինիստրատիւ գործը նահանգում: Բայց այդ խնդրին մենք դեռ կը դառնանք:

VI

Ներգաղթի առաջին օրերը, Կարսի քաղաքային վարչութեան սկզբնական կազմակերպութիւնը և մինիստր նախագահ Խատիսեանի առաջին այցը Կարս

Իմ յարաբերութիւնները անգլիացիների հետ, որ սկզբի օրերում լաւ չէին՝ սկսեցին հարթուել: Անգլիացիք ուլտիմատիւ կերպով ստիպեցին ինձ ընդունելու իրանց կազմակերպած խորհուրդը, բայց երբ ես նոցա համար միանգամայն անսպասելի լուծեցի այդ հաստատութիւնը՝ նրանք շատ գոհ մնացին: Բացի այդ, ես չէի կարող չը նկատել, որ ես խորհրդի անդամների ճաշակովը չէի: Իր գալու օրից՝ նրանք կօնֆիդեցեալ շարունակ ամբաստանում էին հայերին անգլիացիների առաջ, և ես ստիպուած էի այդ առիթով մի քանի անախորժ բացատրութիւններ տալու անգլիական գեներալին:

Բայց խորհուրդը ցրելուց յետոյ՝ նորա անդամների դէմքը պարզուեց անգլիացիների համար, և այդ «մինիստրները» առհասարակ կորցրեցին երկրում իրանց նշանակութիւնը:

Կարսը կերպարանափոխւում էր ժամէժամ: Ամէն մի գնացք բերում էր հայրենիք շտապող Կարսեցիներին, և քաղաքը անդադար լցւում էր: Բայց շատերը դեռ 18 թուականի սարսափների տակ՝ չէին վստահանում ընտանիքով տեղափոխուելու հայրենիք, և առանձին անհատներ միայն գալիս էին տեղնուտեղը ծանօթանալու դրութեան հետ, տեսնելու իրանց տները, և ապա նորից գնում էին՝ վերջնականապէս յետոյ վերադառնալու համար:

Եկուոր թուրքերը, Երևանցիք, Գանձակեցիք և հին Նախճաւանցիք՝ շտապում էին դատարկել հայկական տները, և ես միջոցներ էի տալիս նոցա՝ իրանց երկիրը ապահով վերադառնալու: Մեծ դժուարութիւնների հանդիպեցի այդ առիթով գաւառներում:

Շորագեալի հայկական գիւղերը բոլորը բռնուած էին թուրքերով, իսկ տարագիր հայը՝ եկել և կանգնել էր իր սայլերով ու բարխանով իր հինաւուրց դռանը: Բայց և այնպէս, մեզ յաջողուեց առանց բարդութիւնների լուծել այդ փափուկ խնդիրը, և թուրքերը՝ մեր հին դրացիք, մի երկու օրում դատարկեցին հայկական գիւղերը: Գարունը ծաւալւում էր և դաշտերը բացւում էին, օրուայ միակ հոգսը երկրի տնտեսութիւնն էր, վարն ու ցանքը, և մարդիկ անձնատուր եղած իրանց այդ ծով պէտքերին՝ միանգամայն մոռացան քաղաքականութիւնը և նրա հետ կապուած արկածները: Ես գործ դրեցի իմ բոլոր վարչական փորձառութիւնս և ժողովրդական խաւերում իմ ունեցած վաղեմի բարեկամական կապերս՝ վերականգնելու թուրքերի և հայրենիք վերադարձող հայերի միջև բարի դրացիութիւնը, և այդ տրամադրութիւնը երկրի սրտովը լինելով՝ տարածւում էր մեր քունջուբուջախները, և նպաստում իրաւակարգի ստեղծման գործին: Թուրքերը, որ ունէին և՛ տաւար և՛ երկրագործական գործիքներ ու սերմացու՝ այստեղ և այնտեղ սկսեցին օգնել իրանց նորեկ հայ դրացիներին վարուցանքում, և մի քանի օրուայ ընթացքում՝ կարծես չքացաւ, մոռացուեց այն վրիժառու տրամադրութիւնը, որ այնչափ հարստութիւն գործածեց, և թափեց այնչափ արիւն:

Ես օր ու գիշեր զբաղուած էի, և մտաբերելով իմ անցեալը, իմ երիտասարդութիւնը՝ ես չէի յիշում իմ այդ անցեալում այդչափ եռանդ և աշխատելու այդչափ ծարաւ: Գաւառներում կազմակերպում էի իշխանութիւնը, վարչական բարդ ու պատասխանատու մարմինները: Ես պէտք է հաշուի առնէի երկրի մօտակայ անցեալը, նրա գունաւոր ազգագրական կազմը, նահանգի տնտեսական տարբեր պայմանները, այստեղ ու այնտեղ դեռ տակաւին իշխող ֆեոդալական մթնոլորտը և առանձին մարդկանց մեծ ազդեցութիւնը: Ինձ պէտք էր համաձայնեցնել իմ վարչական միտումների հետ այս և այն վայրում ցեղերի և անուանի աղալարների իրար հետ թշնամութիւնը և մրցումը: Եւ օգտագործելով երբեմն այդ պայ-

մանները երկրում կրքերի հաւասարակշռութիւնը պահպանելու համար՝ ես այդ առանցքում առաջ էի տանում ամուր իշխանութեան կազմակերպութեան գործը:

Ինչպէս տեսնում էք՝ դժուար է մի առ մի արձանագրել այստեղ վարչական գործելակերպի շրջապատ բոլոր պայմանները, այդ ինքը կեանքն է՝ իր հազարաւոր, երբեմն անտեսանելի կողմերով, պատճառներով, առիթներով և հետևանքներով:

Արևը դեռ չը ծագած՝ իմ բնակարանի դիմաց խմբւում էին բազմաթիւ խնդրատու, գանգատաւոր և երկրի զանազան անկիւններից եկած անուանի, մեծ և փոքր մարդիկ: Վերջիների մէջ էին այն ցեղապետները, աղալարները և առհասարակ դիրք և անուն ունեցողները՝ որոնք պարտաւորութիւն էին համարում գալ Կարս, նահանգապետին, իրենց վաղեմի ծանօթին՝ գլուխ իջեցնելու համար:

Բայց կային և այնպիսի մարդիկ միջին դասակարգից՝ կարա-չուխալու անուանուածները, որ իրենց գործերով գալով Կարսի բազարը՝ անյարմար էին համարում չը տեսնել նահանգապետին, որի հետ նոցանից ամէն մէկը կարող էր խօսել իր լեզուով և իր բարբառով:

Բացի այդ, երկար տարիների ընթացքում դիտելով և ուսումնասիրելով գաւառական կեանքը՝ ես չէի կարող չը նկատել, որ մարդիկ գիւղերից կենտրոն գալով՝ լինի այդ նահանգական, գաւառական քաղաք կամ գաւառակի կենտրոն, միևնոյն է՝ իրանց բազարի հետ միասին պէտք է տանէին իրանց գիւղերը և լեռները այդ կենտրոնների օրուայ նորութիւնները, և մեծ մարդկանց՝ իշխանաւորներին, վաճառականներին և այլ աչքի ընկնող մարդկանց հետ տեսնուելու տպաւորութիւնները: Ի հարկէ վերջիններին վերաբերմամբ խնդիրը ստանում էր առանձնակի նշանակութիւն՝ երբ նահանգապետը, գաւառապետը, դատաւորը և միւսները՝ մատչելի, ժողովրդական մարդիկ էին: Այդ դէպքում նորանց այցելում են բոլորը, և ամէն մէկը աշխատում է գիւղերում մի բան ասելու այդ այցել-ութեան առիթով: Այդպէս է գաւառի դէմքը, նրա վերաբերմունքը դէպի հասարակական խնդիրները, այդպէս է երկրի հոգեբանութիւնը:

Եւ ես, սիրելով երկիրը և այդ ժողովուրդը՝ ոչ միայն հաւատում էի նոցա, այլև այդ հազար ու մի ծանօթութիւնները և հանդիպումները աշխատում էի օգտագործել ի նպաստ երկրի և կառավարութեան: Կարսը այդ օրերում նման էր մի *(տեքստը խզուած է)*... ինարաւոր լինէր քաղաքային վարչութեան ընտրութիւնները կազմակերպել, մի հաստատութիւն, և ես ժամանակաւոր քաղաքագլուխ նշանակեցի բժիշկ Լևոն Քալանթարեանին՝ նրան օգնութեան տալով բժիշկ Արմենակ Ասօյեանցին, յանձնարարելով նոցա կազմակերպել ժամանակաւոր վարչութիւն, *(տեքստը խզուած է)*... պատուհանները, կիսաւեր դռները, և այդ եռուն ու տենդոտ աշխատանքը մի ցայտուն բացատրութիւն էր՝ թէ որչա՞փ քաղցր և

ախորժելի է հայրենիքի ծուխը, և որքա՞ն սրբազան՝ սեփականութեան մեծ և դարաւոր սկզբունքը:

Քաղաքը կարգի բերելու համար՝ ինձ հարկաւոր էր, մինչ *(տեքստը խզուած է)*... ջրանցքը, շուկան, լուսաւորութիւնը և քաղաքի այլ անյետաձգելի պէտքերը հոգալու համար, ու աշխատանքի այդ բուռն օրերում՝ Մայիսի 12-ին, մեզ խրախուսելու, ցուցմունքներ տալու և նահանգի իշխանութեանը համարում եւ շուք տալու համար՝ Կարս ժամանեց մի քանի ժամով մինիստր նախագահ Խատիսեան: Երկաթուղու կայարանում նորան դիմաւորեց ամբողջ քաղաքը՝ որի մեծամասնութիւնը դեռ թուրքեր էին, քաղաքացիական և զինուորական իշխան-ութիւնը, անգլիական զօրքի հրամանատարը: Սալօն-վագօնում իմ համառօտ զեկուցումս նահանգի դրութեան մասին ընդունելով՝ հայկական պրեմիերը անցաւ դէպի խառնուած ժողովուրդը, որ շատ բարձր տրամադրութեամբ ընդունեց նրան: Գոհունակութիւն յայտնելով երկրում տիրող խաղաղութեան համար, և մատնանշելով, որ պատմական այդ մեծ անցուդարձի օրերում՝ երբ տեղափոխւում են ամբողջ քաղաքներ ու գաւառներ, նա տեսնում է ազգութիւնների մէջ միայն ներդաշնակ տրամադրութիւն, որ գրաւական է երջանիկ ապագայի:

Ապա մինիստր նախագահը դարձաւ դէպի ինձ՝ և ասաց, որ կառավարութիւնը գոհ է իմ աշխատանքով, շնորհակալութիւն յայտնեց ինձ կառավարութեան անունից, և մենք մեկնեցինք քաղաք: Շատ բնորոշ է հայ ժողովրդի հոգեբանութեան համար, որ երեկ տարագիր և այսօր տուն դարձող հայը՝ շտապեց իր հայրենիքի առաջին քաղաքացուն ընդունել այն սրբարանում, ուր միշտ պատսպարուել և ծխացել է նրա մրմունջը, նրա իղձերը, նրա հաւատամքը և նրա սրբազան սրբոցը:

Հայերը շտապեցին դէպի իրենց եկեղեցին՝ և այդ ժողովրդական տաճարի դիմաց սպասում էին հայրենի կառավարութեան ղեկավարին: *(տեքստը խզուած է)*... մեր սրտին և ականջին ընտանի աղօթքը՝ և բազմութեան շարքերով անցաւ բերկրալից հեկեկանք և մեծ զգայնութիւն...

Ապա քաղաքագլուխ բժ. Քալանթարեան՝ շատ զգացուած և շատ բարձր տրամադրութեամբ դիմեց մինիստր նախագահին:

– Աշխարհի անցուդարձը և քաղաքական պատահարները՝– ասաց քաղաքագլուխը,– անցել, գնացել են, իսկ հայ ժողովրդական եկեղեցին՝ որին երկինքը հաւատացել է իր ջերմութեան և սիրոյ մեծ գաղտնիքը, դարեր շարունակ մնում է իւր տեղում, մնում է սիրուած իւր ժողովրդից՝ վշտահար և յուսատու հայ երկրի համար: Եւ այսօր, երբ դարբնւում է հայ պետականութիւնը՝ հայ ժողովուրդը մի առանձին բերկրանք է զգում ողջունելու Ձեզ, պարոն մինիստր նախագահ, այս ալևոր կամարների տակ:

Պրեմիեր Խատիսեան, ոչ պակաս յուզուած և գրեթէ շնչասպառ՝ պատասխանեց.

– Ինձ վիճակւում է ոչ միայն առաջին անգամ այցելել Կարս որպէս ներկայեացուցիչ հայրենի կառավարութեան, ես բախտաւոր եմ տեսնելու *(տեքստը խզուած է)*…

Բայց այն անհատները, որոնք պղտոր ջրում իրանց միշտ լաւ են զգում, և յիմարացնելով երկիրը՝ առաջ են տանում իրանց քմահաճոյքը և իրանց վայելքները, դեռ արթուն են և սպասում պատեհ օրերի և յարմար առիթի: Բագուի Մուսաֆաթը դեռ տակաւին պահպանել էր Կարսի նահանգում իր կազմակերպութիւնը, նա ունէր այստեղ իր գաղտնի գործակալները, և եթէ մինչ այդ նոքա աշխատակցում էին Շուրայի հետ, և նրա անուան տակ կապում համիսլամութիւնը՝ այսօր այդ արկածախնդիրները պէտք է հանդէս գային այլ տարազով և այլ ձևով: Բագուի թուրքութեան համար միևնոյն էր՝ թէ ո՞վ և ի՞նչ կերպ առաջ կը տանէր այդ գաղափարը: Բագուն տալիս էր ընդհանուր դիրեկտիւները, դրամական և այլ միջոցները՝ թողնելով իր գործակալներին գործի մանրամասնութիւնները և երկիրը շահագործելու երկրորդական խնդիրը: Շուրայի և խորհրդի խափանումից յետոյ՝ բազմաթիւ ձրիակերներ մնացին առանց վաստակի, զրկուեցին իշխանութիւնից, դիրքից և նշանակութիւնից:

Փողը և իրաւունքը միշտ ալեկոծել են տիեզերքը, և կեանքի այդ երկու մեծ խթանների շուրջը պտոյտ է գործել միշտ պատմութիւնը: Եւ նախկին Շուրայի, նախկին խորհրդի չորս կողմը երբեմն վխտողները՝ բնականաբար չէին կարող հաշտուել հայկական իշխանութեան հետ, և մի ելք էին որոնում դրամ և նշանակութիւն ստանալու համար:

Ձգտումների այդ մթնոլորտում յղացաւ Կարսի նահանգում թուրք ազգային խորհուրդների գաղափարը: Այդ խորհուրդը կազմակերպուեց եկուոր Գանձակից, և այլ տեղերից փախած թուրքերից և տեղացիներից՝ որոնք չէին ցանկանում աշխատակցել ինձ մերձեցող թուրքերի հետ, և տրամադրութիւն ունէին ձեռք բերելու սեպարատ իրաւունքներ և իշխանութիւնից անկախ դիրք:

Երբ կազմակերպուեց թուրք ազգային խորհուրդը՝ այդ իմաստով բացուեց և ռուս ու յոյն արկածախնդիրների ախորժակը, և այդ խորհուրդները բուսան մէկը միւսի յետևից սնկի պէս:

Ես մանրամասն տեղեկութիւն ունէի ի հարկէ այդ կազմակերպութիւնների մասին, և մեծ ուշադրութեամբ դիտում էի նոցա: Որպէս «ինքնավար» հաստատութիւններ՝ այդ անձաբնոյթ խորհուրդները միայն «ի գիտութիւն» էին գրաւոր հաղորդում իրանց լոյս աշխարհ գալը նահանգապետին, միանգամայն անտես առնելով ոստիկանապետին, գաւառապետներին և վարչական այլ ինքնուրոյն անձանց: Դորանով այդ արկածախնդիրները ուզում էին ընդգծել խաւար երկրի առաջ՝ թէ ո՞ր չափ բարձր հաստատութիւն է խորհուրդը, որ անտես առնելով գաւառապետներին և միւսներին՝ ուղղակի դիմում է նահանգապետին, և միայն

նրան հաշուի առնում... այդ մեզ լաւ ծանօթ Արևելքի հոգեբանութիւնն է: Եւ մենք շտապեցինք հատուցանել մեր պարտքը՝ տալ նոցա ըստ արժանւոյն: Ես պատուիրեցի իմ դիւանատան պետին անպատասխան թողնել այդ խորհրդի ինձ ուղղած բոլոր բազմաթիւ գրաւոր դիմումները: Բայց այդ մասին յետոյ:

Այդ օրերում Կարսի ոստիկանապետը զեկուցեց ինձ, որ առաւօտուայ գնացքով եկել է Թիֆլիզից ռուս գնդապետ Տրօնով, որին իբր թէ Կարսի նահանգի ռուս ազգաբնակութիւնը «ընտրել է» ռուս ազգային խորհրդի նախագահ: Բախտի բերմունքով՝ ես ճանաչում էի այդ գնդապետին: Շատ տարի առաջ նա պրիստաւ էր Կարսի նահանգում, թալանեց Զարիշատի գաւառակը, և որպէս վստահելի ռուս՝ այն էլ զինուորական, աւելի բարձր պաշտօնով տեղափոխուեց Թիֆլիզի նահանգը:

Յետոյ նա գաւառապետ էր այն կողմերում, և Կոմս Վօրօնցովի օրով փոխնահանգապետի թեկնածու էր համարւում: Այդ գնդապետը այն ճարպիկ *(տեքստը խզուած է)*... նա սրբութիւն չէր ճանաչում: 17 թուի խորտակուած յոյսերից յետոյ՝ նա շտապում էր դէպի խաղաղ նաւահանգիստ, և ամենալաւ կայանը՝ Կարսի խաւար նահանգն էր, ուր գնդապետի աստիճանը կարող էր հմայել մարդկանց, և այդ կեղևի տակ՝ նա կարող էր թէ՛ դիրք և թէ՛ եկամուտի նոր աղբիւր ստեղծել:

Նա գրագրութեան մէջ մտաւ Կարսի ռուս արկածախնդիրների հետ՝ և նոքա նրան Կարսի նահանգի ռուս ազգային խորհրդի նախագահ «ընտրեցին»:

Գնդապետը իր անցեալում սիրում էր միշտ յարմարուել մեծամեծ թուրքերի ցանկութիւններին: Գնդապետի այդ աշխատանքը միշտ լաւ վարձատրւում էր, իսկ այժմ քաղաքական լաւ հոտառութիւն ունենալով՝ գնդապետը նախքան «հասարակական» նոր պաշտօն ստանձնելը, հարկաւոր էր համարել այցելել Բագու... Եւ այդ բոլորը ես գիտէի: Ես գիտէի, որ այդ գնդապետը պէտք է այդ երեք ազգային խորհրդների նախագահների մէջ աւագի դերը ստանձնէր և ստորերկրեայ արշաւ պէտք է կազմակերպէր հայկական իշխանութեան դէմ նահանգում: Մի երկու ժամից յետոյ զգեստաւորուած գնդապետը ներկայեացաւ ինձ:

Ես ընդունեցի նրան ոտի վերայ.

– Պատիւ ունեմ ներկայանալու Ձերդ գերազանցութեանը,– Կարսի նահանգի ռուս ազգային խորհրդի նախագահ...

– Պարոն գնդապետ,– սառը, անվճռաբեկ պատասխանեցի ես: *(տեքստը խզուած է)*... Պատշաճ հրամաններ տուեցի այդ առիթով:

Եւ նոյն օրուայ գնացքով՝ ճարպիկ գնդապետը ընդմիշտ թողեց Կարսը... Ես ստիպուած էի այդ արտակարգ միջոցները ձեռք առնելու այդ գնդապետի դէմ, որովհետև նա եկել էր միայն ինտրիգներ և միայն խռովութիւն առաջ բերելու նահանգում:

Բոլորի վերայ այդ անսպասելի կարգադրութիւնը մեծ տպաւորութիւն էր թողել քաղաքում, և «խորհուրդները» ձեռք ու ոտք էին ընկել այդ առիթով: Բայց «ազգային» այդ որջերում դեռ տակաւին եռում էին դաւերը, թուրքերը կապ ունէին Բագուի հետ, ռուսները՝ Թիֆլիզի ու հիւսիսային Կովկասի: Այդ խորհուրդները հաւակնութիւն ունէին քաղաքական-վարչական դեր խաղալու երկրում, և փորձեցին կառավարութեան մէջ իրանց թագաւորութիւնը ստեղծելու: Նրանք սկսեցին նահանգում ամէն տեսակի խնդիրներ ու գանգատներ ընդունել, միջամտում էին բոլոր հասարակական, քաղաքացիական և քրէական գործերին՝ և միջնորդի պարտաւորութիւններ ստանձնեցին ժողովրդի ու իշխանութեան միջև: Այդ գործելակերպը պէտք է միանգամայն անջատէր երկիրը կառավարութիւնից՝ և հետևապէս պէտք է ձգէր և իշխանութեան համարումը երկրի առաջ: Եւ այդ բոլոր գործերի, խնդիրների, դատերի, պահանջների և ընթացիկ թիւրիմացութիւնների առիթով՝ նոքա դիմում էին միայն նահանգապետին, ու ժամանակի տարազը պահպանած լինելով՝ «հարցապնդում» անում...

Այստեղ հարկաւոր եմ համարում ասել, որ այդ բոլոր թղթերը գրւում էին Բագուից և Թիֆլիզից ուղարկուած վարպետների ձեռքով:

Ես պատուիրեցի դիւանապետիս՝ այդ բոլոր գրութիւնները անպատասխան թողնել:

Ոչ մի պատասխան չը ստանալով ինձանից՝ նրանք փոխեցին իրանց տակտիկան, և իրանց դիմումներով ու հարցապնդումներով՝ նորանք այնուհետև սկսեցին հեղեղել գաւառապետներին և վարչական միւս պաշտօնեաներին: Ես պատուիրեցի և վերջիններին՝ գրագրութեան մէջ չը մտնել այդ խորհրդների հետ, և այդպիսով վերացնել խորհրդների այդ միջնորդ դերը:

Երկրի յետնկաց և մթին անկիւնները, որ սկզբից մի իշխանութիւն էին տրամադիր ճանաչելու ի դէմս այդ խորհրդների՝ աստիճանաբար հասկացան նրանց նպատակները: Բայց մեր իշխանութիւնը օրեցօր տիրապետում էր դրութիւնը, և ազգային խորհուրդները սկսեցին կորցնել իրանց նշանակութիւնը: Մի փոքր անց՝ այդ «նախագահները» հերթով շտապում էին դէպի իմ ընդունարանի նախասենեակը, ուր ծառայողներից հոգատար տեղեկանում էին նահանգապետի առողջութեան ու տրամադրութեան մասին...

Այնուհետև այդ «նախագահները» մեծ պատիւ էին համարում հանդիսաւոր օրերում՝ եկեղեցում, զօրահանդէսներում և զանազան ընդունելութիւնների ժամանակ նահանգապետի շքախմբում լինել, և օգտւում էին ամէն մի առիթից՝ իմ աչքին երևալու և իրանց ծառայութիւնը առաջարկելու...

Երբ ես վերադառնում էի Կարս՝ նահանգում կատարած իմ ճանապարհորդութիւնից, ինձ դիմաւորող գաւառապետի, ոստիկանապետի և միւս պաշտօնական անձանց շտապում էին կցուելու և այդ նախագահները: Եւ այդ նախագահ-

ներից ամէն մէկը, առանձին ունկնդրութիւն խնդրելով՝ իր զեկուցումն էր անում երկրի նորութիւններից և օրուայ հարցերից...

Երբ ես սպասում էի օտարազգի ներկայացուցիչներին՝ ամերիկացիներին, ֆրանսիացիներին, անգլիացիներին՝ այդ նախագահները շտապում էին իմ պաշտօնեաների միջոցով իմանալու իմ տրամադրութիւնը, և ցուցմունքներ էին խնդրում իրանց ասելիքների մասին օտարազգիների առաջ...

Այդպէս էին ասիական «ինքնավար» և «ինքնորոշուող» առաձգական և շուտ գունատուող «գաղափարները»: Ի վերջոյ երբ սկսեցին խօսել, որ մեր կառավարութիւնը հայկական շքանշանների մասին օրէնք է մշակում՝ այդ «նախագահները» մեծ ջատագով իմ պաշտօնեաների միջոցով ուզում էին իմանալ իմ վերաբերմունքը դէպի իրանց ծառայութիւնը, և յոյս էին յայտնում, որ ես կը զարդարեմ և նոցա կուրծքը հայկական շքանշաններով...

Պատմութեան համար նիւթեր արձանագրելով՝ ես չեմ ուզում ծածկել այստեղ, որ ես օգտագործում էի մարդկանց այդ թուլութիւնը դէպի այդ pijon et joujou-ի այդ ունայնութիւնը, և պատեհ դէպքերում օրօրում էի նոցա այդ ծարաւը, որ և բնորոշ էր և զաւեշտալից...

Բայց Բագուի Մուսաֆաթ Կոմիտէն իմացել էր արդէն *(տեքստը խզուած է)*...

VII
Կարսի նահանգի ազգային խորհուրդները [13]

VIII
Կարսի նահանգի հարստութիւնը և միջվարչական յանձնաժողովը՝ պետական պահեստների գոյքը կարգի բերելու համար

Կարսի նահանգի վարչական կազմակերպութիւնը մի հետաքրքիր կալեյդասկոպ էր, ուր բազմատեսիլ պատկերները յաջորդում էին մէկը միւսին: Թւում էր, որ հայ հասարակութիւնը, որ սիրում էր պարծենալ իր ինտելիգենցիայով, իր վաճառականութեամբ, իր կապիտալով և իր շինարար հակումներով՝ պէտք է հանդէս գար պետական գործունէութեան այս մեծ ասպարէզում: Բայց նա միանգամայն անտարբեր էր դէպի երկիրը, և ուզում էր կարծել, որ ամէն բան պէտք է անէ հայկական կառավարութիւնը, և այդ առանց ձեռնհաս մարդկանց,

[13] Սոյն վերնագրին համապատասխանող տեքստը արխիւային փաստաթղթերում բացակայում է:

առանց միջոցների և առանց այն բարձր տրամադրութեան, որ պէտք է փառէր հայ մթնոլորտում:

Հայ հասարակութիւնը մոգութիւն և հրաշքներ էր սպասում հայկական կառավարութիւնից՝ իսկ իրան վերապահել էր միայն հետաքրքրուողի և հանդիսատեսի թամաշացու դերը...

Պատեհ դէպքերում՝ ինչպէս 20 թուին, Կարսի անկման նախօրեակում, նա ձրի հանդէս-բողոքներ էր կազմակերպում Թիֆլիզի արուարձաններում, ուր ճառախօսները մրցում էին իրար հետ՝ ի հաշիւ «աշխատաւոր մասսաների», սպառնալիքներ ուղղելով Տաճկաստանին, և Թիֆլիզի Սեպտեմբերեան բուրալից օդում՝ անպատասխանատու բայց սրտոտ բռունցքներ սասանեցնելով...

Այդ բոլորը ձրի էր, անպատասխանատու, վաղուայ լրագրերում կարելի էր կարդալ այդ սպառնալից ճառերը՝ հետևապէս ինչո՞ւ չանել, ինչո՞ւ գէթ այդ էֆեմեր միջոցներով հայրենասիրութեամբ չը զբաղուել: Ռուս պետական ձգտումները դէպի արևելք, դէպի տաճկական սահմանները՝ եղել են միշտ տարերային, և պարփակել են սլաւոն ազգութեան տենդենցիան՝ աճելու և տարածուելու իմաստով:

Եւ ռուս պետական քաղաքականութիւնը, որպէս արտայայտիչ այդ ազգային ձգտումների՝ տարիների մեծ տարածութեան վերայ բևեռել է այստեղ իր ամբողջ ուշադրութիւնը և իմաստը:

Կարսի նահանգը եղել է այն հեռաւոր դիրքը՝ որի ստորոտներում շարունակ մարզուել և արշաւալից թմբակահարել է ռուս զօրաբանակը: Արփաչայի տարածութեամբ և դէպի Բին-գէօլ, դէպի Արաքսի բիւրեղեայ ակունքը՝ հարիւր տարուայ ընթացքում արշաւել են ռուս գիտնականները և մասնագէտները: Ծայրէ ի ծայր և բազմակողմանի ուսումնասիրելով երկիրը՝ ռուս կառավարութիւնը վերջին յիսուն տարուայ ընթացքում անհաշիւ վարկ է բացում Կարսի նահանգի և ռազմական պէտքերի համար, և հեղեղում երկիրը այն բոլոր միջոցներով, որ պէտք է կոփէր ռուս զօրաբանակի յաղթական ընթացքը դէպի Բոսֆորի կապուտակ ջրերը...

Եւ Կարսի նահանգի բազմաթիւ և հարուստ խճուղիները՝ այդ հեռաւոր նախապատրաստութիւնների գլուխ գործոցն էին:

Լեհաստանից յետոյ՝ խճուղիների *(տեքստը խզուած է)*...

...ը, Բեգլի-Ահմեդը և այլ ռազմական կայանները՝ 50 տարուայ ընթացքում զբաղեցրել են բազմաթիւ ինժեներ, գիւղատնտես, անտառապետ և այլ մասնագէտներ՝ որոնք ամէն մէկը իր մասնագիտութեան շրջանում շարունակ շինել են և շարունակ մեծաքանակ հարստութիւն ամբարել: Բաւական կը լինի կարծեմ ասել, որ Կարսի շուրջը նոքա ամբարեցին աւելի քան 300 վերստ տարածութեան համար ուղղաձիգ երկաթուղու համար բոլոր պէտք պարագաները:

Կարսի և Սարիղամիշի զինուորական պահեստները՝ մեքենաների, տեխնիկ գործիքների և շինութեան բազմատեսակ նիւթերի այն մեծ շտեմարաններն էին, որ ամբարում էին Թիւրքաց Հայաստանի ապագայ ռուս գաղութների համար պէտք պարագաները:

Գալով բուն ռազմամթերքին՝ չափազանցութիւն չի լինի եթէ ասելու լինեմ, որ այդ մասում ոչ ծայր կար, ոչ հաշիւ...

Փամփուշտի և բազմատեսակ ռումբերի պաշարը լեռներ էին կազմում, երկաթէ մացառոտ, հեռագրական և հեռախօսի լարեր կային հազարաւոր վերստ տարածութեան համար: Ձիու նալ կար մի քանի միլիոն զոյգ, իսկ բահ, բրիչ, երկաթ, ցեմենտ, ապակի, աղ, կաշի, երկաթէ մեխ, տախտակ և հազար ու մի բան՝ անթիւ ու անհամար:

Սարիղամիշի ու Արդահանի անտառապետութեան շրջանում՝ պատերազմի ընթացքում ռուս կառավարութիւնը պատրաստել էր երկաթուղու գլխի համար շպալ, շինութիւնների համար գերաններ և վառելափայտ՝ քառասուն հազար քառակուսի սաժեն: Եւ այդ բոլոր դէպի ներս, դէպի Տաճկական Հայաստան տեղափոխելու համար, այն վայրերը՝ ուր Կոմս Վօրօնցով յոյս ունէր ի դէմս ռուս կոզակ գաղութների, ռուս պետականութեան առաջնթաց կայաններ հիմնել...

Եւ այդ այն օրերումն էր՝ երբ խորտակելով Կարինի, Էրզրումի ամրութիւնները, Կովկասեան զօրաբանակի հրամանատար գեներալ Իւդենիչ ուղարկեց շրջակայ բոլոր առանձին իշխանաւոր անձանց հետևեալ գաղտնի շրջաբերականը.

«Թիւրքաց Հայաստանը գրաւելուց անցնելով երկրի ներսի աշխատանքներին՝ և ի նկատի ունենալով, որ այդ տարածութիւնները պէտք է բնակեցուեն ռուս տարրով, առարկում եմ Ձեզ բոլոր միջոցներ ձեռք առնել՝ արգելելու հայերին բնակատեղի հաստատել այդ վիլայէթներում, և իրաւունք չը տալ նոցա՝ հողաբաժիններ և որևէ անշարժ կայք գնելու Թիւրքաց Հայաստանում»:

Որպէս Կարսի շրջանապետ տողերիս գրողն էլ՝ ստացել էր այդ շրջաբերականը:

Այսպէս թէ այնպէս՝ Կարսի նահանգի գրաւումով մենք ժառանգում էինք ոչ միայն մի գեղեցիկ, ալպիկ տնտեսութիւն, ոչ միայն հարուստ անտառներ, աղահանք, քարածուխ և այլ հանքեր՝ մեզ վիճակւում էր ստանալ և այն մեծ հարստութիւնը, որ ռուս պատմութիւնը ընթացք տալով իր ձգտումներին դէպի արևելք՝ յիսուն տարի շարունակ տենդոտ և առատալից ամբարել և կուտակել է Կարսի նահանգում: Այդ այն մեծաքանակ և անգին նիւթերն էին՝ որոնցով մենք կարող էինք սկսել երկրի վերաշինութիւնը:

Եւ զբաղեցնելով այդ քաղաքացիական աշխատանքով մարդկանց, և նրա հետ կապուած հեռանկարներով երկրի բոլոր ազգութիւնները՝ այդպիսով ի ցոյց դնելով մեր քաղաքակրթական կորովը, մենք յետ կը մղէինք Բագու՝ Ատրբէյջա-

նի բոլոր դաւերը: Երկիրը ուրախութեամբ մեզ հետ կը լինէր այդ դրական և ռէալ աշխատանքում, իսկ այստեղ ու այնտեղ երբեմն բռնկուող և մարող քաղաքական զառանցանքները՝ կը դառնային երկրի համար միայն զաւեշտ և միայն խաբուսիկ ուրուական:

Եւ հայոց կառավարութիւնը հաշուի առնելով երևի այդ բոլորը՝ կանգ էր առել այդ հարցի վերայ: Ինձ Կարս ուղարկելու օրը՝ նա կազմակերպել էր և մի յատուկ յանձնաժողով իմ նախագահութեամբ, այդ մեծ հարստութիւնը ուսումնարսիրելու, ժողովելու, կարգի բերելու և պահպանելու համար: Այդ յանձնաժողովը, որ Միջվարչական էր անուանւում՝ բաղկացած էր բոլոր մինիստրութիւնների ներկայացուցիչներից: Իսկ ինձ մնում էր ցաւել միայն, որ լսելով այդ մեծ խնդիրը և կազմակերպելով այդ յանձնաժողովը՝ մինիստրների խորհուրդը հարկաւոր չէր համարել լսելու այդ առիթով նոր նշանակուած նահանգապետի կարծիքը, մի կարծիք, որ յամենայն դէպս հիմնուած էր նրա մօտ ծանօթութեան վերայ Կարսի նահանգի անցեալի և ներկայի հետ: Post factum ես իմացայ այդ յանձնաժողովի մասին Աղէքսանդրապօլում՝ երբ Ապրիլին գնում էի Կարս, և ուր այդ յանձնաժողովի անդամները ներկայացան ինձ՝ ինձ Կարս ուղեկցելու համար: Երբ ես ընդունում էի ինձ ներկայացող այդ պաշտօնեաներին՝ ես չէի կարող ուշադրութիւն չը դարձնել, որ զինուորական իշխանութիւնը, ի դէմս սպաների, այն էլ ռուսների՝ ուղարկել էր հինգ մարդ, մինչդեռ միւս մինիստրութիւնները ունէին այդ յանձնաժողովում մի մի ներկայացուցիչ: Ճիշտ է ի հարկէ, Կարսի նահանգը միշտ զինուորական վայր է եղել, 50 տարուայ ընթացքում, այդտեղ կուտակուած հարստութիւնը ձեռք է բերուել զինուորական մինիստրութեան վարկերով: Բայց այստեղ ժառանգութեան խնդիր չէր՝ այլ պետական մի մեծ խնդիր, որ պէտք է լուծուէր պետական մակարդակով, և ոչ մի կերպ ինչ-որ զինուորական միտումներով, և այն էլ անցորդ և անտուն ինչ-որ ռուսների ձեռքով...

Յամենայն դէպս խնդիրը նրանումն էր, որ եթէ ռուս պետութիւնը Կարսի նահանգում իր պատրաստութիւնն էր տեսնում իր մեծ նուաճողական նպատակների համար՝ այդ նպատակները մենք չունէինք: Կարսը մեզ համար այլևս այն ահարկու խրամատը չէր՝ որի պարիսպների տակ Կոմս Լօրիս Մելիքով և գեներալ Լազարեւ աշխարհահռչակ դարձան, մենք չունէինք այսօր և այն զօրավարները, որ գէթ մօտ նմանութիւն ունենային այդ մեծանուն գեներալների հետ: Եւ այդպիսով՝ աշխատանքների համար այդչափ նիւթ: Այդպէս էի ես հասկանում իրերի և մեր անելիքների իմաստը: Բայց մի երկու օրից յետոյ պարզուեց, որ մինիստրների խորհուրդը շատ արագընթաց և շատ հարևանցի՝ եթէ չասենք վայրիվերոյ կերպով, է լսել այդ հարստութեան մասին զեկուցումը, և յանձնաժողովի անդամները ոչ որոշ ցուցմունքներ ունէին իրանց անելիքների մասին, և ոչ ընդհանուր սիստեմ ու ծրագիր: Ամէն մէկը իր համար էր՝ և բոլորը ոչ ոքի...

Մի բան միայն պարզ էր, զինուորական իշխանութիւնը լաւ հոտառութիւն ունենալով՝ բոլորից շուտ լսեց այդ պահեստների ախորժալից բուրմունքը, և զինուորականները թալանի այդ առանցքում գրոհի տրամադրուած՝ գերիշխանութեան ձգտեցին այդ յանձնաժողովում: Ռուս գնդապետները պահեստների բոլոր արժէքաւորների վերայ իրանց veto-ն դնելով՝ անվճռաբեկ էին անուանում այդ զինուորական իշխանութեան «իրականութիւն» և «ռազմական» նշանակութիւն ունեցող գոյքը:

Այդ «ռազմական» իրերի թումն էր ապակին, երկաթը, կաշին, զանազան մեքենաներ և այլ վալիւտաին ապրանք, որ շատ բարձր էր սակագնում այդ օրերում... Բայց մի քանի օրից յետոյ պարզուեց արդէն, որ երբեմնի ահարկու բանակի այդ ողորմելի մնացորդները, ի դէմս յանձնաժողովի հինգ ռուս գնդապետ անդամների՝ մեծ անձնական ախորժակ ունէին դէպի այդ հարստութիւնը, և որպէս ռուս երևի՝ իրանց օրինաւոր ժառանգներ էին համարում այդ *(տեքստը խզուած է)*...աւետեաց երկիրը, բազմատեսակ յանձնարարութիւններով, տիտղոսներով, լիազօրութիւններով և պաշտօններով ամէն մի գնացքով գալիս էին բազմատեսակ սիրողներ...

Գիշատիչ այդ մթնոլորտում մեծ հրդեհի նշաններ տեսնելով՝ ես պահանջեցի պետական *(տեքստը խզուած է)*...

պետական կօնտրօլը դիտում էր Կարսում կատարուող ալան-թալանը՝ միայն Երևանից...

Գուցէ իւր տեղին կը լինի յիշելու այստեղ, որ Հայաստանի Հանրապետութեան վերահսկիչն էլ ռուս էր...

Բայց մինչ այդ, յանձնաժողովի զինուորական անդամները կարողացան ձայնակցութիւն ստեղծել Կարսի նահանգի զօրաց հրամանատարութեան հետ, կապ ստեղծեցին երկաթուղու մի քանի ինժեներների և պաշտօնեաների հետ՝ և այդպիսով թալանը կատարւում էր «կազմակերպուած» և ոչ թէ հատով, ֆուրգոններով, վագոններով՝ այլ նոյնիսկ յատուկ «զինուորական» (անձեռնմխելի) գնացքներով...

Այդ օրերում Սարիղամիշում թալանուեց մի մեծ պահեստ:

Ես նախնական քննութիւն նշանակեցի. պարզուեց, որ այդ մեծ թալանը կազմակերպել են գլխաւորապէս և Սարիղամիշի մեր զօրամասի ռուս սպաները, ընկերակցութեամբ ինժեներների, երկաթուղու այլ պաշտօնեաների, երկաթուղու միլիցեայի մասնակցութեամբ, վերջապէս՝ Սարիղամիշում կանգնած մեր զօրամասի զինուորների: Այդ «կոլլեկտիւ», մեծաղմուկ գողութեան մասին ես մի քանի հեռագիր ուղարկեցի Երևան: Եկաւ այդ առիթով Երևանից գեներալ Սիլիկով, որ հայերէն ի հարկէ չը գիտէր, բայց «քննական» գործը ձգձգուեց, և մեծ գողերը՝ մեծ աւարով հանդերձ փախան ժամանակին...

Կարսի նահանգապետը ի հարկէ ոչ մի պաշտօնական գրաւոր տեղեկութիւն չը ստացաւ գեներալ քննիչից՝ զինուորական այդ «խիստ քննութեան» մասին, բայց այստեղ ու այնտեղ խօսում էին, որ գեներալը տակտիկական միտումներով ստիպուած էր լռելու...

Յամենայն դէպս պէտք է ասեմ, որ Սիլիկով մեր աչքի ընկնող, եթէ չասենք միակ լուրջ գեներալն էր՝ բայց կաշկանդուած «կուսակցական» միտումներով, և ձայնակցող՝ հրապարակի աղմկահար դաշնակցականներին:

Ամէնքից շուտ այնյայտացաւ ներքին գործոց մինիստրութեան ներկայացուցիչ դաշնակցական Արտուշ Քոչարեանը:

Որպէս բոլոր ֆելդշերները՝ յեղափոխական օրերում իրանց «բժիշկ» էին անուանում, իսկ դատարանի նախկին գրագիրները՝ «իրաւաբան», այնպէս էլ ներք. գործ. ներկայեացուցիչ Արտ. Քոչարեանը՝ իրան «ինժեներ» էր կոչում *(փաստաթղթի բնագրում այս հատուածը կրկնւում է)*...:

Թէ՛ իմ գոռում գոչումների ազդեցութեան տակ, թէ՛ նախատեսելով բարդութիւնները՝ Միջվարչական այդ յանձնաժողովի անդամները սկսում են չքանալ մէկը միւսի յետևից: Մէկը պաշտօնապէս հիւանդանում էր, միւսը արձակուրդ խնդրում մի երեք օրով, երրորդը պաշտօնական գործերով էր գնում Երևան, բայց փաստը այն էր, որ բոլորն էլ այլևս չէին վերադառնում...

Բայց այդպէս չէր ուզում հասկանալ իրերի դրութիւնը՝ սուիններով շառաչող գեներալ նահանգապետ Յովսէփեան: Անջատ իմ կարգադրութիւններից, և որպէս ընդիմադիր ցոյց իմ իրաւասութիւնների դէմ՝ այդ ալեկոծ և բորբոքալից *(տեքստը խզուած է)*...դպրոցներն էլ ... քաղաքային ակումբը ունէին իրանց մեծ գրատուները, և այդ բոլոր 18 թուի գաղթին մնացել էր Կարսում: Թալանի հրդեհը հաշուի չէր առել ի հարկէ գրական այդ մեծ հարստութիւնը, և այդ գրքերի ու գրութիւնների այդ տասնեակ հազարները թափթփած մնում էին այստեղ ու այնտեղ:

Գործադրեցի բոլոր տեղերից գրքերը ժողովել, և մի քանի օր շարունակ գործող ֆուրգոնները բերում էին այդ գրքերը քաղաքային վարչութեան շէնքը, *(տեքստը խզուած է)*...

IX

Կարսի վերաշինութեան փորձերը, աւտօմոբիլ գործը և մինիստրների խորհրդի որոշումը ինձ կառավարչապետի իրաւունքներ տալու մասին

Կարսի ռուս զինուորական հիմնարկութիւնները, Կարսի շտաբի և զինուորական ակումբը՝ ունէին շատ հարուստ և մեծ գրատուն: Կայսերական գանձա-

ռանը միջոցնէր չէր խնայում ամբարելու այդտեղ՝ երկրին, քաղաքականութեան պատմութեան վերաբերեալ գրականութիւնը, և Կարսի շտաբի գրադարանը մեծ անուն ունէր Կովկասում: Բացի այդ, Կարսի բազմաթիւ դպրոցները, ռեալական ուսումնարանը, իգական գիմնազիան, ռուս Մարիամեան ... հայ... ու... *(տեքստը խզուած է)*...

Ես ստիպուած էի միջամտելու ի հարկէ: Ես բացատրեցի քաջարի գեներալին, որ ինձ, որպէս նահանգապետի՝ ինժեներ Կուրեատովի բոլշեւիկ լինելը յայտնի չէր, որ իրաւակարգային խնդիրները *(տեքստը խզուած է)*... ... նահանգապետի և ոչ զինուորական գեներալի իրաւասութեանը, որ գեներալը կարող է իր կառդոնները, ...ունեցած տեղեկութիւնները *(տեքստը խզուած է)*...

Ամիսներ սպասելուց յետոյ, և մի քանի անգամ յիշեցնելով լուսաւորութեան մինիստրին իմ այդ առիթով նրան դիմումս՝ մինիստրը պատասխանեց վերջապէս, որ պատշաճ վարկ չի գտնում հասարակական գրատան-ընթերցարանի համար: Կարսում այդ միջոցում սկսուեց և քեամալիստների արշաւը դեպի Կարսի նահանգը, և ես արդէն հնարաւորութիւն չունէի զբաղուելու այդօրինակ խնդիրներով:

Այդ բազմահազար ֆօլիանտներն էլ մնացին ի հարկէ Կարսում, ուր մնաց անչափ հարստութիւն և անչափ յոյսեր *(տեքստը խզուած է)*... նահանգում և հողերի խոշորագոյն կադաստրը չը կարողացաւ կոփել թուրք ազգաբնակութեան առաջընթաց դիրքերը, և նրանք կրաւորական էին՝ Կարսի նահանգում իրանց բոլոր բարենպաստ պայմաններով հանդերձ:

Այդպէս էր դրութիւնը Կարսի նահանգում մինչև 1914 թուականը, մինչև մեծ պատերազմը *(տեքստը խզուած է)*... ուսաւոր..., բացատրեցի, որ Աղէքսանդրեան կենտրոնական փողոցի վերջում, Կարս չայի ափում՝ մի ընդարձակ հրապարակ կայ, որ շատ յարմար էր այդ տեսակի մի հասարակական յիմնարկութեան համար, որ արքունի պահեստներում շինութեան համար ամէն տեսակի պարագաներ ունենք, և եթէ այդ բոլորին մինիստրութիւնը որոշ վարկ տայ շինութեան միւս ծախքերի համար՝ մենք մի ամառուայ ընթացքում կը ստեղծենք քաղաքի կենտրոնում մի շատ աչքի ընկնող շէնք:

Իսկ մինչ այդ կարգադրեցի այդ հրապարակը պարտէզ դարձնել *(տեքստը խզուած է)* ... մի տեսիլ և նախկին հայկական կառավարութեան նախագահը իջնում էր կեանքի այդ կրքոտ ու աղմկալից հրապարակից *(տեքստը խզուած է)*... Խատիսեանին ճաշակով պավելեօնի մի յատակագիծ պատրաստելու: Այդ պրոյեկտը ու շինութեան նախահաշիւը ես ներկայեացրեցի ...մինիստր *(տեքստը խզուած է)*... և ոչ բնաւ ինքը՝ որևէ այդ ուղղութեամբ կարգադրութիւն անել:

Հազիւ թէ պէտք է բացատրել, որ իրան իրական համարող գեներալի *(տեքստը խզուած է)*... չէին պարփակւում իմ այս բոլոր կարգադրութիւններս, և ես ստիպուած էի բարեկամօրէն խնդրելու գեներալին՝ ձեռք քաշել այդ *(տեքստը*

խզուած է)...թիւնից և ինժեներ Կուրեատովին ... արձակելու *(տեքստը խզուած է)*...

Այդ լիազօր աչքը վերադարձնելու, կամ նորան մի այլ «հաւատարմատարով» փոխարինելու մասին՝ ես 18 հեռագիր ուղարկեցի ներքին գործ. մինիստրին, և այդ իմ բազմամեայ դիմումներին՝ մինիստրի օգնական Մանասեան պատասխանեց միայն մի անգամ, ... կը գայ, բայց նա չեկաւ, ...ները *(փաստաթուղթը վնասուած է)*... առանձնապէս հետաքրքրւում էր ապակու և երկաթէ պահեստներով: Ասում էին, որ նորա բնակարանը՝ Ղարաքիլիսայ կարծեմ, Կարսի պահեստների կողոպտման պատճառով, խուզարկուեց...

Այսպէս թէ այնպէս՝ այդ ծպտեալ կերպով չքացած ներկայացուցիչին ես Կարսում չը տեսայ այլևս: Միայն շատ յետոյ, Կարսի անկումից յետոյ՝ Թիֆլիզում, Երևանեան հրապարակում ես միշտ հանդիպում էի թէ այդ պարոնին և թէ յանձնաժողովի մի երկու ռուս գնդապետ անդամներին: Նոքա բոլորն էլ շատ գոհ էին իրանց վիճակից, շատ լաւ հագնուած և եռանդալից վալիւտաի «աշխատանքներ» էին կատարում, ու Բօրսայում անուն ունէին...

Բայց շատ հետաքրքիր է, որ «ինժեներ» Արտ. Քոչարեանը մտել էր այդ յանձնաժողովի կազմի մէջ ոչ միայն որպէս ներքին գործոց մինիստրի ներկայացուցիչ՝ այլև որպէս դաշնակցութեան հաւատարմատար, որպէս մի մարդ, որ պէտք է իշխող կուսակցութեան աչքը լինէր պետական այդ մեծ հարստութեան պահպանութեան գործում... Պէտք է ասե՞լ արդեօք, որ նահանգապետի դրութիւնը և տրագիկ էր և կոմիկ, և յամենայն դէպս շատ դելիկատ և շատ փափուկ...

Ինչևիցէ, Միջվարչական յանձնաժողովում մնացին միայն զինուորականները, որոնք Կարսի կօմենդատ գեներալ Փիրումովի զրահի տակ՝ անվրէպ շարունակում էին մեծաղմուկ արշաւը դէպի այդ պահեստները և անսպառ հարստութիւնը: Իմ բազմաթիւ հեռագիրներս կառավարութեանը՝ յանձնաժողովի բացակայող անդամների տեղը նորերը ուղարկել, մնում էին անպատասխան կամ լուծւում էին խօստումներով՝ որոնց իրագործումը ես *(փաստաթուղթը վնասուած է)*... պարլամենտի անդամ Գէորգ Խատիսեան, և ես փորձեցի օգտուել նորա ազդեցութիւնից՝ իշխող կուսակցութեան ուշադրութիւնը հրաւիրելու այդ մեծ և կեղտոտ գործի վերայ:

Ուսումնասիրելով բոլոր նիւթերը և ի մօտոյ ծանօթանալով գործի դրութեան հետ՝ Գ. Խատիսեան, կառավարութեան կարգադրութեամբ ստանձնեց նորա լիազօրի պարտաւորութիւնները պետական գոյքի գործում: Նա նորից, փաստալից և պատճառաբանուած մի մեծ գրութեամբ կրկնեց իմ բոլոր այդ առիթով ասածները՝ բայց և նա այդ մեծ կռւում հանդիպեց Կարսի կօմենդանտ գեներալ Փիրումովի զրահին, և այս վերջինի հետ շատ խոշոր անախորժութիւններից յետոյ՝ ստիպուեց հեռանալ Երևան...

Բռնւում էին գողացած իրերով ոչ միայն սայլերի շարաններ՝ այլ ամբողջ վագոններ: Բայց գործը ոչ միայն չէր պարզւում՝ այլ վճռի մասն կծիկը աւելի և աւել էր ծաւալւում ու խճճւում...

Վերջ ի վերջոյ այդ բոլոր աղաղակող պատկերներից յետոյ՝ Երևանի Զօրաց մինիստրութիւնը հեռացրեց վերջապէս յանձնաժողովի մի երկու ռուս գնդապետների, բայց նոցա տեղը դարձեալ ռուսներ ուղարկեց, և այնպիսի հմտալից վարպետներ՝ որոնց առաջ նոցա նախորդները աշակերտներ էին...

Առարկել չէր կարելի ի հարկէ, այդ բոլորը զրահաւորուած էր «ռազմական», «զինուորական» միտումներով, մի ուրուական՝ որի առաջ երկիւղածութեամբ խոնարհւում էր ոչ միայն կառավարութիւնը, այլև մեր աստղերի պալատը՝ դաշնակցութեան բիւրոն, որ անտեսանելի և անպատասխանատու տնօրինում էր հայկական ճակատագիրը... Բայց պետական գոյքի այդ մեծ ամբարները մեծ հռչակ են ստանում Կարսի սահմաններից շատ հեռու, և հրեայ, ռուս և հայ գիշատիչները՝ սկսում են վխտալ երթևեկող գնացքներով: Այդ մեծ հարստ-ութեան շուրջը մարդկանց ախորժակը այնպէս էր բռնկուել, որ կռուել այդ մեծ և փոքր գողերի դէմ՝ անհնար էր: Ես մեծ գրաւոր զեկուցում ուղարկեցի այդ առիթով Երևան, և խնդրեցի լուծել այդ յանձնաժողովը:

Բացատրելով, որ թալանուող և կորչող պետական գոյքը պարունակում է մեր երկրի վերաշինութեան համար շատ և շատ նիւթ, որ այդ երկաթը, փայտը, ցեմենտը և այլ պարագաների մի մասը մենք կարող էինք արտահանել Թիֆլիզ, Բագու և նոյնիսկ արտասահման, և փոխարէնը ստանալ մեզ պէտքականը՝ ես միջնորդում էի կառավարութեան առաջ ձեռնհաս ինժեներներից, անտառապետներից, ֆինանսիստներից և այլ մասնագէտներից մի յանձնաժողով ուղարկել որին և լիազօրել, անկախ զանազան վարչութիւնների պրետենզիաներից՝ տիրելու այս և այն գոյքը, օգտագործել այդ հարստութիւնը պետական շահերի լայն մակարդակով: Միևնոյն ժամանակ ես միջնորդում էի, որ այդ կոմիտէն ենթարկուի պարլամենտի մի ազդեցիկ և հեղինակաւոր անդամի հսկողութեան, որպէս նախագահի: Այնուհետև մի քանի անգամ կրկնեցի իմ այդ առիթով հարուցած միջնորդութիւնս, և ամիսների ընթացքում պատասխան չընստանալով՝ ես ստիպուած էի ի միջիայլոց և այդ գործի համար Երևան գնալու:

Իմ Կարս գալու օրից ես այնչափ զբաղուած էի, որ մինչ այդ հնարաւորութիւն չէի ունեցել Երևան անցնելու: Դժուարանում էի նահանգից բացակայելու և այն պատճառաւ, որ մինչև ի վերջը օգնական, փոխ-նահանգապետ չունէի, և ինձ այդպէս և չը յաջողուեց մարդ գտնելու այդ սկզբից և վերջ թափուր պաշտօնի համար:

Այդ ժամանակամիջոցում Խատիսեանի կաբինետը ընկել էր:

Ներկայանալով նոր մինիստր նախագահ Համօ Յովհանջանեանին՝ ես բացատրեցի նորան իմ գալու այդ նպատակներից մէկը, և խնդրեցի շուտափոյթ

լուծել խնդիրը: Մինիստրը խնդրեց ինձ զեկուցել այդ խնդիրը մինիստրների խորհրդի առաջիկայ հերթական նիստում: Թէ որտե՞ղ էին իմ և պարլամենտի անդամ Գ. Խատիսեանի խնդրի առիթով բազմաթիւ զեկուցումները, հեռագիրները և այլ գրութիւնները կառավարութեան դիւանում՝ ոչ ոք չը գիտէր... Միւս օրը մինիստրների խորհուրդը լսեց զեկուցումս և որոշեց բաւարարել միջնորդութիւնս: Թողնելով մինիստրական դահլիճը՝ ինձ զբաղեցնում էր մի հարց, կարդո՞ւմ են այդ ատեաններում նահանգապետի *(տեքստը խզուած է)*...

Ինձ թւում էր, որ պետական առագաստները խճճուել և թուլացել են, որ նաւաստիների ներդաշնակութիւնը վերածուել է մի ինչ-որ աղմուկի, և ես որպէս նահանգապետ՝ վերադառնում էի ջարդուած յոյսերով, և ի ծայր երերուած հաւատով դէպի իմ անելիքները...

Մի ամսից յետոյ եկան այն «մասնագէտները»՝ որոնց ես սպասում էի պետական գոյքերի խնդիրը կարգի բերելու համար: Երեքն էլ դաշնակցական պարլամենտի անդամներ էին, Լևոն Թադէոսեան՝ որին կուսակցականները Պապաշա են կոչում, Արտ. Աբեղեան. երկուսը ուսուցիչ, երրորդն էլ, որ իրան գիւղատնտես անուանեց՝ Մաքսապետեան: Եւ այդ մարդիկ իրանց անձնական բոլոր շիտակութեամբ և մեծ հայրենասիրութեամբ հանդերձ՝ ոչինչ չէին կարող անել ի հարկէ իրանց յանձնուած գործում: Յարգելի ուսուցիչները՝ երեքն էլ շատ համակրելի մարդիկ, իրանք էլ չը գիտէին թէ ի՞նչ են անում, իսկ մինչ այդ՝ վրայ հասաւ թիւրքաց բանակը, և վարժապետները թողեցին ոչ միայն թիւրիմացութեամբ իրանց յանձնուած գործը՝ այլև այն երկրի սահմանները, որ տարի ու կէս շարունակ սպասում էր ձեռնհաս, հեղինակաւոր և կարող մարդկանց...

Այստեղ չեմ կարող չը յիշել մի զաւեշտալից միջանկեալ, որ շատ բնորոշում է մեր ժամանակը և հասարակութեան վերբերմունքը դէպի երկրի լուրջ խնդիրները: Երբ Միջվարչական այդ յանձնաժողովի անդամները զանազան պատրուակներով՝ լաւ բեռնաւորուած ի հարկէ, չքանում էին մէկը միւսի յետևից Կարսից, իսկ պատասխանատուութիւնը գէթ բարոյական՝ մնում էր ինձ վերայ, ես մի շարք հեռագիրներով պահանջում էի լրացնել այդ բացակայող պարոնների տեղերը: Ինձ հարկաւոր էր գէթ Սարիղամիշի շրջանի համար մի մասնագէտ, մի ինժեներ կամ գիւղատնտես, այդ վայրի անտառային անհուն հարստութեան վերայ հսկելու, և ընդհանուր ուղղութիւն տալու այնտեղ կատարուող աշխատանքներին: Եւ այդ միջոցում Երևանից գալիս և ներկայեանում է ինձ մի պարոն, որ և բերում է մինիստրի գրութիւնը՝ նորան յանձնելու Սարիղամիշի շրջանի պետական գոյքերը, կարգաւորելու և շահագործելու աշխատանքը: Ես շատ ուրախ էի տեսնելու պարոնին, որ արտաքուստ լաւ տպաւորութիւն էր թողնում, և ինձ հետաքրքրում էր, թէ մեր այդ բազմատեսակ պետական տնտեսութեան ո՞ր ճիւղումն է մասնագէտ պարոնը: Բայց իմ այդ առիթով հարցը՝ ակամայից յուզեց այցելուիս, և նա ինքն էլ զգալով դրութեան փափկութիւնը՝ ժպտալով ասաց. «Ես

գեղարուեստագէտ եմ, ազատ նկարիչ...»: Եւ նա անպայման գեղարուեստական նուրբ հոտառութիւն ունէր՝ Սարիղամիշի գեղածիծաղ բնութիւնը ընտրելով իր սիւժետների և ոգևորութիւնների համար, բայց ինչո՞վ էր մեղաւոր երկիրը, հայ ժողովուրդը և հայ կառավարութիւնը...

Օրեցօր ես նորանոր ապացոյցների էի հանդիպում մեր կառավարչական անսիստեմ իմաստում:

Օրեցօր աճում և բազմանում էին տեսակ տեսակ պաշտօնեաներ, լիազօրներ և ներկայացուցիչներ: Նոցանից ամէն մէկը հաւակնութիւն ունէր ձևանալու, աղմկելու, անվերջ խօսելու՝ բայց ոչ աշխատելու և պատասխանատուութիւն կրելու: Թէ որտե՞ղ էր սկսւում մէկի իրաւասութեան սահմանները, և որտե՞ղ էին վերջանում այդ ծփալից իրաւունքները՝ դա անշուշտ Պոլիշինելի գաղտնիքն էր:

Այդ բազմաթիւ եկուոր երիտասարդութիւնը, մտատանջուած երևի «աշխատաւոր մասսաների» ցաւերով՝ գալիս էին միայն աղմկելու, գալիս էին շփոթելու կառավարչական դեռ տակաւին անկերպարանք խմորումը: Եւ այդ աղմկալից անցուդարձը կատարւում էր ի հաշիւ քայքայուող երկրի, բայց առանց որևէ ռիսկի՝ այդ սիրողների համար: Դարերի ընթացքում մեր փայփայած անկախութեան գաղափարը, որ իրականացած այսօր ի դէմս Հայոց Հանրապետութ-եան՝ կանգնած էր մեր առաջ, վարակել էր մարդկանց սանձարձակ տրամադրութեամբ: Բոլորը ձգտում էին անկախ լինել՝ բայց և բոլորը հաւակնութիւն ունէին իշխելու, թելադրելու և դեր խաղալու: Բայց այստեղ վերջանում էր ինքն-ըստինքեան անկախութեան գաղափարը, և ստեղծւում էր իրաւունքների և հասկացողութիւնների մի մեծ շփոթ, որի ծալքերում բորբոքւում էր անիշխանութ-իւնը:

Երկաթուղին, փոստը, հեռագիրը, երկաթուղու ոստիկանութիւնը, քաղաքագլուխը և բոլորը՝ տալիս էին միայն մինիստրների անունները, և այս վերջիններից բացի՝ ոչ ոքի ճանաչել չէին ուզում: Այդ բազմաթիւ մեծ և փոքր պաշտօնները պահեստապետից սկսած մինչև հիմնարկութեան գլուխը՝ շատ բնական էին համարում ոչ միայն անձամբ, այլև գրաւոր, թէ՛ պաշտօնական և թէ՛ մասնաւոր նամակներով դիմելու ուղղակի մինիստրին, միանգամայն անտես առնելով, որ նոցա և մինիստրի միջև կան բազմաթիւ աստիճաններ, որոնց ներդաշնակութիւնն է միայն ստեղծում իրաւունքի և իշխանութեան իմաստը:

– Ի՞նչ արեցիք դուք,– հարցրեցի ես մի օր Կարսի քաղաքագլուխ Նոհրատեանին, - Ձեզ պէտք եղած ալիւրի պարկերի, մեշօկների մասին:

– Հեռագրեցի Համոյին,– շատ հանգիստ պատասխանեց կուսակցական քաղաքագլուխը:

– Բայց ո՞վ է Համոն,– չհասկանալու դրեցի ես ինձ:

– Մինիստր նախագահ,– հեղինակալից պարզեց ինձ քաղաքագլուխը, առանց հասկանալու ի հարկէ՝ թէ որչա՞փ ողորմելի է այդ ֆամիլեար ընկերվար մտածելակերպը:

Դժուար էր մաքառել այդ մթնոլորտում՝ երբ այդ այլասեռուած հասկացողութիւնները օրգանական բնոյթ էին կրում, երբ մարդիկ չէին ուզում հասկանալ տարրական քաղաքավարութեան, տարրական կարգապահութեան, սուբօրդինացիայի պահանջները, երբ «ընկերվար» սկզբունքը գալիս էր երերելու և քանդելու իրաւունքը, պարտաւորութիւնը և պատասխանատուութիւնը:

Եւ այդ խլացուցիչ համերգո՛վ էինք մենք սկսում կերտել մեր պետականութիւնը:

Վարչական կազմակերպչական անյետաձգելի կարգադրութիւնները անելուց յետոյ՝ իմ Կարս գալու հենց առաջի օրերում, ինժեներներից, քաղաքացիներից և վարպետներից ես մի յանձնաժողով գումարեցի, և յանձնարարեցի քաղաքի աւերուած տների վերանորոգութեան համար մի յատակագիծ մշակել: Պատերազմի ընթացքում ռուս կառավարութիւնը թէ՛ Կարսի պարիսպներում և թէ՛ երկաթուղու տարածութեամբ կառուցել էր փայտեայ բազմաթիւ և ահագին պահեստներ՝ Կովկասեան միլիոնանոց բանակի տնտեսական պէտքերի համար: Այդ պահեստները չօգտագործուեցին նոյնիսկ իւր ժամանակին, և այսօր նոքա արժէքաւոր էին միայն որպէս այն մեծահարուստ նիւթը՝ տախտակը, գերանները, երկաթը, ապակին, որ կարելի էր գործադրել երկրի պէտքերի, երկրի վերաշինութեան համար: Այդ շինութիւններից ստացուած պարագաները գնահատւում էին միլիոն ոսկով: Որոշեցինք քանդել այդ պահեստները՝ և այդ տախտակը, գերանները և միւս պարագաները վճարով՝ ըստ գնահատութեան այդ յանձնաժողովի, բաժանել քաղաքացիներին՝ քաղաքը վերաշինելու համար, իսկ փողը գանձել յարքունիս: Այդ առիթով արձանագրութիւնները ուղարկեցի Երևան՝ բայց այդ մեծ գործը փչացնում էր զինուորական իշխանութեան ախորժակը, և նա,մեծ ազդեցութիւն ունենալով Երևանում՝ աստղերի պալատում, սեփականացրեց և այդ պահեստները, առարկելով, որ այդ բոլորը զինուորական գոյք է, և պէտք նոցա: Ես նոյնիսկ պատասխան էլ չը ստացայ իմ այդ առիթով դիմումին: Այդ առանցքում այդ շինութիւնները չքանում էին մէկը միւսի յետևից՝ և այդ երկաթը, գերանները, ապակին սիստեմատիկ հոսում էր Կարսի սահմաններից դուրս... Չէ՞ որ այդ բոլորը վալիւտաին ապրանք էր և շատ արժէքաւոր Թիֆլիզի, Աղէքսանդրապոլի և այլ քաղաքների շուկայում:

Դժուար է երևակայել անգամ, թէ ի՞նչ անսիստեմ մթնոլորտ, ի՞նչ անիշխանութիւն էր տիրում մեր բոլոր կառավարչական աշխատանքներում: Զինուորական իշխանութիւնը՝ այդ ռուսները և ռուսախօսները, մի ցաւ էին երկրի համար, և կառավարութիւնը՝ նոցա քմահաճոյքների ի կատար ածողը: Շատ հետաքրքիր է, որ դաշնակցութիւնը, որ իր անցեալում եղել է այնչափ ինքնուրոյն, այնչափ վստահ իր անելիքներում, և այնչափ խեղճուկ և երբեմն քաջազնալից յանդուգն՝ այսօր խաղալիք էր այդ աւելի քան ողորմելի գեներալների և գնդապետների ձեռքում: Բայց կողմնակի դիտողի համար աւելի վիրաւորականը այն էր, որ կա-

ռավարութիւնը, պարլամենտը և հռչակաւոր բիւրոն՝ խունկ էին ծխում զինուորական այդ ի ծայր տափակութիւնների առաջ, և Հայոց Հանրապետութեան միակ ապաւէնը՝ ի դէմս այդ գեներալների և գնդապետների տեսնում: Եւ զինուորականների այդ ազդեցութիւնը կառավարչական խաւերում այնչափ մեծ էր, որ եթէ այդ ռուսների և ռուսախօսների մէջ գտնուէր մի քիչ թէ շատ ընդունակ և բանիմաց մարդ՝ նա մեծ յաջողութեամբ կարող էր տապալել այդ երերուն կառավարութիւնը, և զինուորական դիկտատուրա յայտարարել: Այդ գնդապետները և ձգտում էին այդ գերիշխանութեանը՝ բայց նոքա ոչ շնորհք և ոչ սրտոտութիւն ունէին այդ քայլի համար: Նրանք բաւականանում էին և նորանով, որ դաշնակցութիւնը պատկառում էր նոցա առաջ, և կատարում նոցա բոլոր քմահաճ պահանջները:

Եւ մինչև ի վերջը ճոճուելով այդ երազալից առանցքում՝ լուծուեց և դղրդալից ընկաւ Հայոց Հանրապետութիւնը: Շատ հետաքրքիր էր, որ ամէնուրէք ուր կար իրաւունքի և նիւթական որևէ շահ՝ զինուորականները զրահաւորուած «-ռազմական» և «պատերազմական» միտումներով, իրանց veto-ն էին յայտարարում այնտեղ, և կառավարութիւնը՝ անվճռաբեկ ընդունում էր այդ պահանջները: Եւ այդ գերիշխան ձգտումների մէջ՝ մեծ կռուաձաղիկ էր աֆտօմօբիլի գործը:

Ռուս իշխանութիւնը Կարսի նահանգում թողել էր մեզ աֆտօմօբիլների մեծ արհեստանոցներ իրանց բոլոր պարագաներով, և հարիւրաւոր ամէն տեսակի աֆտօմօբիլ: Այդ մեքենաների մեծ մասը ընկած էր Տաճկաստանի սահմանից մինչև Արփաչայի ափերը՝ բոլոր բազմաթիւ խճուղիներով, և մեծ արժէք էին ներկայացնում: Եթէ յիշելու լինենք, որ Կարսը Կովկասեան ռուս մեծ զօրաբանակի կենտրոնն էր՝ ուր կարկատւում և կարգի էին բերւում բանակի բոլոր ճակատներից եկած մեքենաները, դուք որոշ հասկացողութիւն կ՛ունենաք այն մեծ այդ իմաստով պահեստի մասին, որ ներկայացնում էր Կարսը: Եւ մեր առաջի անելիքն էր ժողովել այդ հարիւրաւոր այստեղ ու այնտեղ թափուած մեքենաները, և նորոգելով Կարսի կենտրոնական արհեստանոցում՝ ստեղծել երկրի տրանսպորտը, որ մեր շինարար և պետական աշխատանքի առաջի պայմանն էր:

Շատ բնորոշ է մեր օրերի տարազի համար, որ բազմաթիւ հմուտ և անուանի հայ ինժեներների թւում՝ մեր կառավարութիւնը չը գտաւ մի լուրջ և հեղինակաւոր ինժեներ, որին կարելի լինէր յանձնել այդ մեծ և կարևորագոյն գործի կազմակերպութիւնը: Կարսի նահանգապետը Կարս եկաւ առանց աֆտօմօբիլ ունենալու իր տրամադրութեան տակ: Իմ բազմաթիւ հեռագիրներից յետոյ՝ ամբողջ հանրապետութեան կարիքների համար Կարսում եղած արհեստանոցները կարգի բերելու համար, կառավարութիւնը լուծեց վերջապէս այդ խնդիրը: Այդ մեծ գործը՝ ուր ռուս իշխանութեան օրով Կարսում զբաղուած էին տասնեակ յատուկ ինժիներներ, մեր կառավարութիւնը յանձնարարեց մի 18-20 տարեկան թերուս տղայի, որ մինիստր նախագահ Քաջազնունու որդին էր:

Պէտք չէ ասել, որ այդ մի ծաղր էր երկրի առաջ, և վերին աստիճանի վիրաւորական բոլորիս համար: Ես չեմ կասկածում ի հարկէ, որ դաշնակցական այդ պատանին համակուած էր հայրենասիրական տենչով, բայց և այնպէս՝ մեծ անհամեստութիւն էր թէ նորա և թէ նորան ուղարկողների կողմից ընդունել մի մասնագիտական մեծ պարտաւորութիւն, ուր պէտք էր գիտութիւն և գէթ մի քանի տարուայ փորձառութիւն: Բայց այդ զաւեշտ պատկերը բախտի բերմունքով՝ տևեց մի քանի օր միայն: Ապագայ «ինժեները» հիւանդացաւ և ես ուղարկեցի նորան Երևան, իր ծնողների խնամքին... Իսկ մինչ այդ, բռնկւում է և զինուորականների ախորժակը այդ հրապուրալից հարստութեան շուրջը, և զօրաց իշխանութիւնը աֆտոմօբիլի գործը յայտարարում է միայն «ռազմական» և միայն «-պատերազմական» պէտքերի գոյք: Մինչ կառավարութիւնը Երևանում վիճում է այդ առիթով իր գեներալների ու գնդապետների հետ՝ աֆտոմօբիլի հարստութիւնը հալւում էր օրեցօր և թանկարժէք իրերը նորա պահեստներից անցնում էին Թիֆլիս և այնտեղ ծախւում...

Երկար սակարկութիւնից յետոյ, աֆտոմօբիլի գործը կառավարութիւնը որոշում է յանձնել Հաղորդակցութեան մինիստրութեանը, և Կարսի աֆտո արհեստանոցները կարգի բերելու համար՝ հրաւիրւում է Թիֆլիսից մի ռուս ինժեներ, Կուրբատով: Բայց Կարսի զինուորականները ոչ մի կերպ չէին հաշտւում այդ դրութեան հետ, և անպատճառ ուզում էին աֆտոմօբիլի գործը իրանց ձեռքը ձգել: Գեներալները և սպաները բռնի տանում էին գարաժից այս և այն մեքենան, մի երկու օրից փչացնում, ձգում էին և նորը յափշտակում ինքնագլուխ, բռնի տանում էին մեքենաների արժէքաւոր մասերը և այլն: Երբ այդ սանձարձակ դրութեան, այդ թալանի մասին արհեստանոցների կառավարիչ ինժեները բողոքեց՝ գեներալ Փիրումով յայտարարեց, որ ինժեները «բոլշեւիկ է», փչացնում է Կարսի զինուորութիւնը, և մի վաշտ զինուոր ուղարկեց այդ ինժեներին ձերբակալելու: Դժուար է ի հարկէ երևակայել աւելի վայրենի մթնոլորտ, դժուար է այդ պայմաններում խօսել օրէնքների և իրաւակարգի մասին: Ինժեներին մի ելք էր մնում միայն, և թողեց Կարսը և փախաւ Թիֆլիս: Պէտք է այն էլ ասել, որ գեներալ Փիրումովի յետևում թաքնւում էին բազմաթիւ մեծ և փոքր ինտրիգանտներ, և ուղղակի գողեր՝ որոնք օգտուելով, որ այդ աւագ գեներալը առհասարակ չէր ծանրաբեռնում իրան մտածելու աշխատանքով, դրդում էին նորան դէպի ամէն տեսակի անհեթեթ և արկածալից գործ: Ինչևիցէ, բայց իրողութիւնը այն էր, որ աֆտո արհեստանոցները դադարեցին աշխատել: Երևանի կառավարութիւնը անզօր էր զինուորականների այդ ոտնձգութունների դէմ, և աֆտոմոբիլի գործը Հայաստանում քայքայուեց ի սպառ: Բաւական է ասել, որ այդ հարիւրաւոր աֆտոմոբիլներից կառավարութիւնը չը կարողացաւ նոյնիսկ մի լաւ աֆտոմօբիլ ստանալ: Իրերը բնորոշելու համար բաւական կը լինի ասել, որ ոչ մինիստրները և ոչ Կարսի նահանգապետը մինչև ի վերջը չունէին իրանց մեքենան: Ես ամա-

չում եմ ասել անգամ, որ Հայկական պրեմիերի աֆտոմոբիլը այնչափ խղճուկ էր, այնչափ անգոյն, որ յամենայն դէպս համապատասխան չէր երկրի առաջի քաղաքացու դիրքին:

Երբ մինիստր նախագահ Խատիսեան գալիս էր շրջագայելու Կարսի նահանգը՝ ես ստիպուած էի ամերիկացիներից երկու աֆտոմոբիլ խնդրելու: Իսկ հայկական բանակի սպարապետը բեռնակիր աֆտոմոբիլով էր գնում զօրքերը դիտելու...

Աֆտո արհեստանոցների վերայ միլլիոններ ծախսեցին՝ բայց գէթ նմուշի համար երկիրը մի աֆտոմոբիլ չը տեսաւ: Կարսի նահանգապետը, որ բոլորից շատ պէտք ունէր շրջելու միջոցների՝ Կարսի անկումից միայն 3 ամիս առաջ կարողացաւ ստանալ մի բեռնակիր մեքենայ, բայց այդ մեքենան էլ աւելի արհեստանոցումն էր կանգնած... Այդպէս էր Հայաստանի վերաշինութեան գունալից պատկերներից մէկը, ուր հայկական գեներալները և սպաները ցոյց տուեցին իրանց «ռազմական» և «պատերազմական» բոլոր արժանաւորութիւնները...

Անցնելով Կարսի նահանգի անցուդարձի այլ տեսիլներին՝ ես կ՛ուզէի ծանրանալ իրերի բարոյական, հասարակական, քրէական և իրաւական դէմքի վերայ:

Ամէն մի վարչութիւն, ամէն մի հաստատութիւն՝ իրան անկախ էր զգում, անկախ էին համարում իրան և այդ հիմնարկութիւնների պաշտօնեաներից ամէն մէկը: Բոլորը տոգորուած էին «ինքնորոշման» տենչանքով, ոչ ոք ենթարկուել չէր ուզում, և բոլորը նայում էին իրար՝ վերևից ներքև: Բոլորը ուզում էին իրաւունք բանեցնել, պոկել որտեղ այդ հնարաւոր էր, հեղինակաւոր ձևանալ, սպառնալ մինիստրով, պարլամենտով և ոչ պակաս բաներով՝ աչքաթող անելով, որ վերաբերմունքի այդ գործելակերպը կրճատում է հենց իրանց օրերը և ի վախճան տանում այդ անցնող և գլորուող ժամանակը...

Բայց շատ հետաքրքիր և բնորոշ էր, որ այդ բոլորով հանդերձ, բոլորի դիմումները, պահանջները, սպասելիքները և նամանաւանդ հարցապնդումները՝ ուղղւում էին նահանգապետին: Բոլորը իրանց «անկախ» և ինքնուրոյն էին համարում, բոլորը խօսում էին մինիստրի հետ, բայց գործնականում՝ կեանքում, բոլորը դառնում էին դէպի նահանգապետը, և առաւօտուանից մինչև ուշ գիշեր՝ պաշարում նորա դուռը: Ինձ վերայ ծանրանում էր մեծ բարոյական պատասխանատուութիւն այդ բոլոր հակասութիւնների առանցքում: Ես մերթ հիասթափւում էի, մերթ նորից թափով գործի անցնում, և ինձ այդ ճնշող և ի ծայր անհանգստացնող տարուբերումների միջոցին՝ ես վճռեցի նորից և նորից դարձնել կառավարութեան ուշադրութիւնը երկրի այդ դրութեան վերայ:

Ես մեծ պատճառա *(փաստաթուղթը վնասուած է)*... տուեալները: Բացի այդ, նկատի ունենալով Կարսի նահանգի առանձնակի քաղաքական նշանակութիւնը՝ մի նշանակութիւն, որ անտես չէր առնում նոյնիսկ հզօր ռուս կառավար-

ութիւնը, ես գտնում էի, որ նահանգապետը, որպէս կառավարութեան գերագոյն ներկայացուցիչ նահանգում՝ պէտք է որոշ պատասխանատուութեան հետ ունենայ և որոշ իրաւունքներ: Մենք դեռ չունէինք ի հարկէ մեր օրէնսդրութիւնը, և ղեկավարւում էինք ռուս օրէնքներով: Իրանց բոլոր թերութիւններով հանդերձ՝ այդ օրէնքները յամենայն դէպս, պարունակում էին մեզ համար շատ ուսանելի բան, և մենք պէտք է հաշուի առնէինք այդ օրէնսդրութիւնը:

Եթէ նահանգապետին դուք ուղղում էք Ձեր բոլոր պահանջները, Ձեր բոլոր հարցապնդումները նահանգի անցուդարձի մասին, եթէ ի եզրակացութիւն նահանգապետի՝ դուք ուղարկում էք բազմատեսակ խնդիրներ և միջնորդութիւններ, եթէ դուք պահանջում էք, որ նահանգապետը ոչ միայն հսկի ոստիկանութեան վերայ, այլև վարէ Ձեր քաղաքականութիւնը երկրում, և համաձայնեցնէ նահանգի տարբեր հոսանքները կառավարութեան միտումների հետ՝ ապա դուք պարտաւոր էք ճանաչել այդ նահանգապետի պատշաճ իրաւունքները, և նորա ու միւս վարչութիւնների միջև պարտաւոր էք ստեղծել օրինական և ո՛չ քմահաճ փոխյարաբերութիւն: Մատնացոյց անելով մեր օրերում բուսած խնամատարական, գաղթականական, պարենաւորման և այլ հաստատութիւնների վերայ՝ ես բացատրեցի իմ յուշագրում, որ այդ վարչութիւնները ժամանակակից սատրապների այն որջերն են, ուր ամէն բան կայ՝ բացի երկրի և ժողովրդի շահերից... Աղահանքի շուրջը՝ օրինակ, ստեղծուել էր պաշտօնեաների մի բարդ ապարատ, ուր մարդկանց ախորժակը աճում էր օրեցօր: Այդ աղը ոչ միայն հրապուրում էր բոլորին՝ նա մոռացնել էր տալիս օրէնքները հաշուետուութեան, իշխանութեան ենթակայ լինելու անհրաժեշտութիւնը: Այդ շահաւետ հաստատութեան կողքին՝ օրինակ, «ինքնորոշման» երևի օրէնքներով բուսել էր մի այլ հրապուրիչ հաստատութիւն, այդ խոտ կալսելու, մամլելու վարչութիւնները:

Այստեղ պէտք է ասեմ, որ Կարսի նահանգի խոտը անուանի է, և իւր ժամանակին նա արտահանուել է Բաթում և արտասահման: Եւ ահա այդ հաստատութեան շուրջը ևս բռնկւում է մարդկանց գիշատիչ ախորժակը, և խոտ շտեմարանելու այդ հաստատութիւնը դառնում է այն անկիւնը՝ ուր թափանցել չէր կարելի...

Այդ աղի, խոտի, այդ գաղթական, խնամատար և այլ հաստատութիւնների կառավարիչները՝ փայլում էին հրապարակում իրանց առանձին-առանձին սեփական կառքերով, աչքի ընկնող նժոյգներով, և կազմում էին կառավարութեան մէջ առանձին իշխանութիւն, և նրանք խօսում էին ուղղակի մինիստրների հետ՝ և ոչ ոքի ճանաչել նահանգում չէին ուզում: Իսկ հազարաւոր բողոքները այդ հաստատութիւններում տիրող զեղծումների մասին՝ թափւում էին նահանգապետի մօտ, բայց նահանգապետը՝ որին ոչ մի չափով ենթակայ չէին այդ խոտի, աղի և այլ «շահաւետ» ու «ինքնորոշուող» «լիազօրները»՝ իրաւունք ունէր միայն

ձրի հանդիսատես լինելու, թէ ո՞ր չափ ինքնագոհ էին կեանքի վայելքների այդ հարազատները...

Դարձնելով այդ բոլորի վերայ կառավարութեան ուշադրութիւնը, մատնանշելով, որ նահագապետը գէթ դեռ ռուս տիրող օրենքներով պէտք է որոշ փոխյարաբերութիւնների մէջ լինի նահանգի քաղաքացիական հաստատութիւնների հետ, կօնտրօլի և կառավարչական աշխատանքները իրար հետ համաձայնեցնելու իմաստով՝ ես գտնում էի, որ այդ բոլոր քաղաքացիական մարմինների անջատ և միանգամայն սեպարատ գործունէութիւնը, չի համապատասխանում օրէնքի իմաստին և կառավարութեան միտումներին: Շատ հասկանալի է ի հարկէ, որ այդ մարմինների ամէն մի ներկայեացուցիչը՝ հեռու Երևանից, իրան իր շրջանում մի նահանգապետ էր համարում, և ամէն կերպ աշխատում էր հեռացնելու իրանից ամէն մի աւելորդ աչք, որ կարող էր խանգարել նորա կօնֆիդեցիալ հաշիները...

Եւ ես հաւատացած էի, որ իմ զեկուցումս, որ հիմնաւորուած էր օրէնքներով և տուեալներով՝ կը յանձնուի իրաւաբանական մի յանձնաժողովի, ուր արդարադատութեան մինիստրը՝ որպէս օրէնքների պահապանը, կը բարձրացնէ իր հեղինակաւոր ձայնը ի պաշտպանութիւն իրաւական ակներև շփոթի և անիշխանութեան: Բայց իմ այդ զեկուցումս մնաց առանց հետևանքի: Ինչպէս յետոյ պարզուեց՝ պարլամենտի պատկառելի նախագահ, օրինակ Աւետիք Սահակեանը՝ որին շատ բնորոշ իր կուսակիցները հայր Աբրահամ էին կոչում, ոչ միայն չէր կարդացել այդ յուշագիրը՝ այլ նոյնիսկ տեղեակ չէր նորա գոյութեան մասին: Պատասխանեց ինձ միայն այն ժամանակուայ ֆինանսների մինիստր Սարգիս Արարատեան. «Ես մեծ բաւականութեամբ կարդացի Ձեր զեկուցումը, և միանգամայն համաձայն եմ Ձեզ հետ: Ես յոյս ունեմ տեսնուել Ձեզ հետ Կարսում, և մենք դեռ կը խօսենք այդ մասին»: Եւ այդ գրում էր ինձ մի մինիստր՝ որին ամէնից քիչ էր վերաբերւում այդ զեկուցումը, և մի մարդ, որի հետ ես այն ժամանակ դեռ պատիւ չունէի ծանօթ լինելու:

Բայց այդ առիթով ես կ՛ուզէի պատմել մի երկու կուրիօզ, ուր որոշակի բնորոշւում է մեր կենտրոնի անցուդարձը:

Մի շատ գաղտնի և շատ կարևոր ծրար՝ ներքին գործերի մինիստրի անունով, ես յանձնարարեցի ուղարկել Երևան՝ յատուկ սուրհանդակի, մի պաշտօնեայի միջոցով: Երևան հասնելով՝ սուրհանդակը յանձնում է ծրարը մինիստրութեան հերթապահին, որ մի օրիորդ էր: Վերջինս շատ հանգիստ, և որպէս իր սովորական անելիքը՝ բաց է անում ծրարը և ուզում է կարդալ նահանգապետի «շատ գաղտնի» մակագրութեամբ գրութիւնը...

-Այդ ի՞նչ էք անում օրիորդ, - ճչում է սարսափահար եղած սուրհանդակը, - այդ շատ գաղտնի գրութիւնը մինիստրի անունովն է...

– Ոչինչ,– սառնալից պատասխանում է օրիորդը, - մեզանում այդպէս է, առաջ մենք ենք կարդում, և եթէ մի կարևոր բան է լինում՝ տալիս ենք մինիստրին...

Այդպիսով, ինչպէս տեսնում էք՝ նահանգապետը իր սպասելիքներում այստեղ գտնւում էր ինչ-որ օրիորդների կամքում, որովհետև նոցա էր վերապահուած որոշելու՝ ո՞ր գրութիւնն է կարևոր, և նոցանից ո՞րը կարելի է տալ մինիստրին կարդալու...

Իմ բազմաթիւ զեկուցումներս մնում էին առանց պատասխանի, և այդ ի ծայր ջղայնացնում էր ինձ: Այդ օրերում եկաւ Կարս պարլամենտի ազդեցիկ անդամ Գէորգ Խատիսեան, և ես առաջի հերթին սկսեցի գանգատուել նորան, որ կառավարութիւնը չի լուծում իմ բազմաթիւ դիմումներս:

–Գիտէք,– նոյնպէս շատ հանգիստ ասաց ինձ դաշնակցութեան երդուեալներից մէկը,– երբ ես Կարս էի մեկնում՝ ինձ յանձնեցին Ձեր մի քանի դեռ չը բացուած ծրարները, և Մանասեան՝ ներքին գործերի մինիստրութեան կառավարիչը ասաց ինձ, տար այդ ծրարները քեզ հետ, այնտեղ ժամանակ շատ կ՛ունենաս, կարդայ, տես ի՞նչ է գրում նահանգապետը, և այնտեղ միասին վերջացրեցէք...

Ի հարկէ ինձ ոչինչ չէր մնում ասելու...

Մանասեան՝ անհասանելի կամօքն Աստըծոյ, այսօր մինիստր Հայաստանի, կարծում էր, որ նա դարձեալ կուսակցական մթնալից նկուղներում է, ուր մթնոլորտը տնավարի էր, և ամէն գործ կարելի էր «մի կերպ վերջացնել»... Եւ այդ երկու պիկանտ կուրիօզները՝ լիովին կարծում եմ բնորոշում են մեր օրերում տիրող «խիստ կարգերը»...

Ինչևիցէ, բայց ես շատ ուրախ էի, որ *(փաստաթուղթը վնասուած է)*... եկել դաշնակցութեան մի ... դիմաց ներկայացուցիչ և ծանօթաց... Գ. Խատիսեանին իմ վերջի յուշագրի հետ, որ ես ուղարկել էի մինիստր նախագահին՝ նահանգի կառավարչական ապարատի մասին, ցաւ յայտնեցի, որ կառավարութիւնը անուշադրութեան մատնեց իմ այդ առիթով պատճառաբանուած զեկուցումս: Գ. Խատիսեան խոստացաւ խօսել այդ առիթով պարլամենտի ազդեցիկ և բանիմաց անդամների և կառավարութեան հետ, և մի ամսից յետոյ մինիստրների խորհուրդը որոշեց տալ ինձ Կարսի նահանգում կառավարչապետի իրաւունքներ, այսինքն այն իրաւունքները, որ ռուս օրէնքներով ունէր Կովկասի փոխարքան՝ քաղաքացիական իրաւասութեան շրջափակում:

Բայց ես առանձնակի իրաւունքների չէի ձգտում, ես խնդրում էի միայն համաձայնեցնել նահանգի ցիր ու ցան քաղաքացիական վարչական մարմինները՝ նոցա գործունէութեան իմաստում, ինչպէս այդ նախատեսում և ընդունում էր և ռուս օրէնսդրութիւնը, վերապահելով նահանգապետին աւագի դերը:

Բայց եթէ մինիստրների խորհուրդը կառավարչապետի իրաւունքներ տուեց նահանգապետին՝ առանձին մինիստրութիւնները մոռացան երևի այդ առիթով հարկաւոր կարգադրութիւններ անել, և տալ իրանց ենթակայ մարմիններին թէ Երևանում և թէ Կարսի նահանգում պատշաճ ցուցմունքներ և հարկաւոր լրացուցիչ բացատրութիւններ: Բացի այդ, մինիստրութիւնները իրանք հաշուի չէին առնում կառավարութեան որոշումը, և նոցանից ամէն մէկը շարունակում էր իր սեպարատ գործունէութիւնը՝ անտես առնելով նահանգապետին յատկացուած իրաւունքները և նորա օրինական կարողութիւնը, միջամտելու իրաւասութեան այս և այն շրջափակում: Այդպիսով, մինիստրների խորհրդի որոշումը՝ ադմինիստրատիւ այդչափ խոշոր հարցի մասին, մնաց որպէս մի ակադեմիկ հասկացողութիւն միայն: Եւ նահանգի բազմաթիւ քաղաքացիական հաստատութիւնները՝ անտեղեակ ընդհանուր նահանգական հաստատութիւնների օրէնքներին, շարունակում էին քշել իրանց էշը, և աւելի ու աւելի երերում էին երկրի քաղաքական և քաղաքացիական հաւասարակշռութիւնը:

Ես պէտք չունեմ այստեղ պարզելու ի հարկէ, որ օրէնքը չի կարող գործադրուել բռնունցքով: Նորա առաջ պէտք է խոնարհուի երկիրն ու մարդիկ, և այն ժամանակ միայն օրէնքը կ՛ունենայ իր վեհ նշանակութիւնը և իմաստը: Ես ուզում եմ ասել, որ եթէ մարդիկ, ի դէմս հաստատութիւնների և նոցա մեծ և փոքր պաշտօնեաների՝ տրամադիր չէին յարգելու օրէնքը և պատկառելու նորա առաջ, բարոյական այդ այլասեռ հասկացողութիւնների մթնոլորտում՝ ոչինչ չէր կարելի անել:

Ինչպէս յետոյ պարզուեց, մինիստրութիւնների բարձր պաշտօնեաներն անգամ չէին ըմբռնել ինձ կառավարչապետի իրաւունքներ տալու մասին կառավարութեան որոշումի իմաստը, և ոչ մի հասկացողութիւն չունէին այդ որոշման մէջ շարուած օրէնքների մասին...

Եւ այդ այդպէս լինելուց յետոյ՝ պէտք է զարմանալ միթէ, որ խոտի և աղի այդ լիազօրները՝ ոչ մի ախորժակ չունէին ճանաչելու և կարգելու այն օրէնքները, որոնք գալիս էին սանձահարելու նոցա մեծ ախորժակը...

Այդպէս էր Հայաստանի Հանրապետութեան չար ոգին, և այդ դրութեան հետ պէտք էր հաշտուել: Եւ արհաւիրքների այդ օրերում՝ երբ հինը քանդւում էր և ժամանակները փոխւում, նոր կեանքը ծլում էր առանձնակի պայմաններում: Դարաւոր կապանքները բացւում էին ուժգին, և որոտալից տարածում աւեր, բեկորներ և ապագայ... Բայց այդ փլատակների տակից պէտք է առաջանար նոր դրութիւն և նոր խմորում՝ և հանգէր նոր ձևերի և այլ նորմաների: Եւ այդ միակ սփոփանքն էր, որ մենք կարող էինք ասել այդ առիթով՝ բուռն անբաւականութիւնների և բուռն մեղադրանքների դէմ:

X
Արդարադատութեան մինիստրութիւնը

Անցնելով արդարադատութեան գործին՝ նահանգում մենք պէտք է ծանրանանք մեր պետականութեան գլխաւոր իմաստի վերայ: Իրաւունքը և դատարանը միշտ զբաղեցրել են ժամանակի առաջադիմական մտքերը, արտայայտելով օրուայ տրամադրութիւնը և նորա պահանջները: Ռուս ազատագրական տենչանքները շարունակ սաւառնել են դատարանի շուրջը, և նորա փայլուն իրաւագէտները եղել են ռուս ազատագրական դատի փայլուն պաշտպանները: Երկրի յետադէմ և պահպանողական հոսանքը ի դէմս ռեակցիայի՝ միշտ ճնշել, կապանքել է իրաւունքը, բայց դատարանը այնուամենայնիւ եղել է միշտ առաջադիմական ընթացքի կենտրոնում, և նա է ռեկլամինտացիայի ենթարկել քաղաքական հասուն պահանջներն ու ժամանակի տրամադրութիւնը:

Հայ հասարակութիւնը, հայ ինտելիգենցիան, որ 70-80 թուականներից մեծապէս ենթարկուել է ռուս քաղաքացիութեանը՝ իւր հասարակագիտական ձգտումներում նոյնպէս յառեց դէպի դատարան: Իր հայրենիքի բարգաւաճման մեծ նախանձախնդիր այդ ժամանակաշրջանի հայ երիտասարդութիւնը՝ իրաւաբանութեան մէջ է որոնում իր երկրի պաշտպանութեան գաղտնիքը, և նա մեծ բազմութեամբ նետւում է իրաւաբանութիւնը ուսումնասիրելու:

Իրաւազուրկ հայը ձգտում էր զրահարուելու իրաւական գաղափարներով՝ կարծելով երևի, որ իրաւունքը գոյութեան առաջի պայմանն է, և այդտեղ է աշխարհի յաջողութիւնների և բախտի գաղտնիքը:

Եւ այդիսով հայ հասարակութեան մէջ առաջ է գալիս իրաւաբանների մեծ բազմութիւն, որ ի դէմս երբեմն ականաւոր դատաւորների, տաղանդաւոր դատաստանական քննիչների և փայլուն փաստաբանների՝ տալիս է լուրջ օրէնսգէտներ, և դատական մեծ սպասելիքները՝ դէպի մեր բազմաթիւ իրաւաբանները: Այդ իրաւագէտները ժամանակին զբաղուել են հասարակական խնդիրներով, նոքա երբեմն շատ անձնուրաց հունցել են մեր ազատագրական երազները, փայփայել են մայրենի գրականութիւնը, և մեծապէս աշխատակցել են ազգային գաղափարներին: Եւ հայ հասարակութիւնը կարծում էր, որ այդ պատրաստուած մարդկանց շուրջը կը խմորուի մեր պետական կազմը, և այդ իրաւաբանները անցնելով ոչ միայն դատաստանական հիմնարկութիւնները՝ այլ աշխատակցելով կառավարութեան հետ նորա վարչական միւս ասպարէզներում, փայլ և իրաւական հմայք կը տան կազմակերպուող պետութեանը:

Բայց այդպէս էր ոչ միայն իր երկրի կարծիքը՝ այդպէս էին տրամադրուած կարծելու և մեր հարևանները, որ իրանց բոլոր բացասական դէպի մեզ վերաբերմունքով հանդերձ՝ խոստովանում էին մեր ինտելիգենցիայի, մեր իրաւաբանների բազմութիւնը և գերակշռութիւնը:

Եւ մտքերի ու տրամադրութիւնների այդ մթնոլորտում՝ հայ հասարակութիւնը չէր կարող չողջունել հայրենի կառավարութեան արդարադատութեան առաջի մինիստրին:

Ի դէմս մեր բազմաշխատ և գործունեայ Սամսոն Յարութիւնեանի՝ երկիրը հակուած էր տեսնելու իւր անցուդարձին մի տեղեակ և կարող մարդու:

Գաւառացի Սամսոն Յարութիւնեան՝ տասնեակ տարիներ զբաղուել է մեր հասարակական գործերով, և մեծ սիրով դէպի երկիրը՝ նա առանձնակի եռանդով և տոկունութեամբ տարել է այդ աշխատանքը մինչև այսօր: Ժամանակը չէ ի հարկէ արձանագրելու հրապարակի վերայ կանգնած մեր սակաւաթիւ հասարակական գործիչների դրական և բացասական կողմերը, բայց Սամսոն Յարութիւնեանն իր բոլոր թեր և դէմ կողմերով հանդերձ՝ պատկանում է մեր հասարակական ջոջերի այն խմբակցութեան, որին վիճակուեց շարունակ աշխատել և շարունակ հմայուել հայրենի իդեալներով:

Եւ տուեալների այդ նախօրեակում՝ կազմակերպւում է Հայաստանի դատաստանական իշխանութիւնը:

Հակառակ երկրի սպասելիքներին՝ Արդարադատութեան մինիստրութիւնը չկարողացաւ հմայել կեանքում, իրականութեան մէջ օրէնքի իմաստը: Փոխանակ իր անաչառ և կանգուն առագաստների յետևից տանելու կառավարչական հոգսալից նաւը՝ մեր արդարադատութեան մինիստրութիւնը չկարողացաւ ստեղծել անվճռաբեկ պատկառանք դէպի դատարան: Եւ փոխանակ հեղինակաւոր ակօսելու մեծահամբաւ աշխատանքի դաշտը, և օրինական ընթացք տալու ծանրացող պետական նաւին՝ մեր palais de justice-ը գնաց իր օրերի հոսանքի յետևից:

Եւ նա ոչ միայն ենթարկուեց այդ յորդորալից հոսանքին՝ այլև մեր պետութեան գոյութեան վերջի տարուայ ընթացքում նա միանգամայն մանրացաւ և հիւծուեց: Մեր պետականութեան վերջի տարուայ ընթացքում՝ պետական սաղմում արդէն չէր զգացւում Արդարադատութեան մինիստրութեան գոյութիւնը, նա դարձել էր կառավարչական երրորդակի մի ատեան, մի անգոյն դեպարտամենտ, որի գոյութիւնը ոչ թէ անհրաժեշտ ...այլ միայն տանելի, որպէս մի հաստատութիւն, որ կարող էր և լինել և չլինել...

Հայաստանը մի երկիր էր՝ ուր զէնքը, արիւնը և պատիւը դեռ տակաւին գրաւում էին մեր հասկացողութիւնների և զգացմունքների մեծագոյն մասը:

Քաղաքացիական գաղափարները պատուաստի շրջանումն էին դեռ, և իրերի ու հասկացողութիւնների այդ մթնոլորտում՝ քրէական գործերը գրաւում էին նախամեծար դրութիւնը:

Եւ Սամսոն Յարութիւնեան, որ ծնուել և մեծացել է այդ վրէժխնդիր և քաջազնալից ձորերում՝ չը պէտք է մոռանար մեր երկրի այդ առանձնակի հակումը,

և նա պէտք է ծանրանար խիստ և անաչառ քրէական դատարան ստեղծելու վերայ:

Իրաւակարգը մեզ համար դեռ տակաւին քրէական հասկացողութիւն է, մենք սիրում ենք խստութիւնը, լուրջը, մենք սիրում ենք տեսնել ամէն մէկին իր տեղում, և բարոյագիտական այդ դասաւորումների ծալքերումն է դաստիարակուել մեր վերաբերմունքը դէպի կարգը և կանոնը:

Դեռ ռուս իշխանութեան ժամանակ՝ մեր մամուլը և հասարակական կարծիքը սիրում էին շատ զբաղուել երդուեալների դատարանի խնդրով: Ժողովրդական այդ մեծ տենդենցիայի շուրջը մենք սիրում էինք խմորել մեր հեռաւոր երազները, չկարծելով երևի, որ իրականութիւնը շատ մօտ է, և այդ երազները քաղցրալից են՝ որպէս վերջին հմայիչ տեսիլ...

Դեռ երեկ մենք բուռն կերպով բողոքում էինք ռուս պրօկուրորների և ռուս դատաստանական քննիչների դէմ: Այդ մարդիկ, անտեղեակ երկրին և նորա լեզուին՝ գալիս էին վերլուծելու մեր հոգեբանութիւնը, և մենք բուռն կերպով այդ առանցքում պահանջում էինք երդուեալների դատարան, ուր մենք կարող կը լինէինք հասկանալ իրար: Այդպէս էր մեր տրամադրութիւնը մեր պետականութեան նախօրեակում: Եւ յանկարծ, արդարադատութեան քրէական բաժինը կազմակերպելու դատաստանական պալատի պրօկուրորի պաշտօնով՝ հրաւիրւում է հայ ազգանունով Մելիքով, մի ռուսախօս պաշտօնեայ, այդ ողորմելի ոչնչութիւնը անտեղեակ երկրի անցեալին և ներկային, մեր լեզուին, մեր իղձերին և տրամադրութիւններին՝ գալիս էր գլուխ կանգնելու մի մեծ գործի, երկրի իրաւակարգի, որի յաջող քայլերիցն էր կախուած շատ և շատ բան:

Եթէ ռուս իշխանութեան օրով իր հարստութեան և իր ամուսնական կապերի շնորհիւ այդ տափակութիւնը կարողացել էր ստանալ միայն շրջանային պրօկուրորի օգնականի պաշտօն՝ այդ նորան հիմք չէր տալիս հայկական կառավարութեան օրով այդպէս թռիչք անելու և սաւառնելու դէպի պալատի պրօկուրորի մեծ պաշտօնը, որի մասին իր ժամանակին նա երազել անգամ չէր կարող՝ իր բոլոր ազգակցական և նիւթական կարողութեամբ հանդերձ: Թէ ո՞ւր էին մեր տաղանդաւոր և կարող իրաւաբանները, և թէ ինչո՞ւ նոքա ցանկութիւն չունեցան փայլելու իրանց նորածին հայրենիքում՝ չը գիտեմ: Փաստը այն է միայն, որ պետական մեծ աշխատանքը սկսելով՝ դատաստանական ամենամեծ պաշտօնի համար մենք կոչեցինք մի ռուսախօսի, որ ոչ միայն առնչութիւն չունէր մեր պատմութեան, մեր ազգային ուրոյն դէմքի հետ՝ այլև մի ծաղր էր մեր ինքնասիրութեան և մեր ազգային պատուի համար:

Կարսի նահանգը, իր չորս մեծ գաւառներով և չորս քաղաքներով՝ ութ ամսուայ ընթացքում ունէր միայն մի դատաստանական քննիչ և մի հաշտարար դատաւոր: Քրէական գործերը Կարսի նահանգում՝ և առաջ կազմում էին դատարանի գործերի 75 տոկոսը, և այդպիսով պարզ էր, թէ ո՞ր չափ ուժեղ պէտք է լինէր

այդ նահանգում քրէական իշխանութիւնը: Բայց իմ բազմաթիւ այդ առիթով գրաւոր և հեռագրական դիմումներս Շրջանային դատարանի ռուս նախագահին, պալատի ռուսախօս պրօկուրորին, պալատի աւագ նախագահին և վերջապէս արդարադատութեան մինիստրին՝ մնում էին անհետևանք: Նահանգի իրաւակարգի պատասխանատուութիւնը ինձ վերայ լինելով՝ ես իրաւունք ունէի պահանջելու, որ ինձ այդ գործում օգնէ դատաստանական իշխանութիւնը: Երկիրը սովոր էր ակնածութեամբ վերաբերուելու դատաստանական իշխանութեանը, այդ իշխանութիւնը պահպանում էր երկրում իրաւունքների հաւասարակշռութիւնը, սանձահարում էր ոստիկանութեան կամայականութիւնը, և այդպիսով շրջապատի իրերի բոլոր թերութիւններով հանդերձ՝ նա կարողանում էր բարձր պահել արդարադատութեան և օրէնքի որոշ անձեռնամխելութիւնը:

Իր ժամանակին պարզաբանուած, վերլուծուած և դատուած ոճիրը՝ որոշ դրական կապ ունէր առաջիկայ ոճրագործութեան հետ, և յաջող լուսաբանուած քրէական հանգոյցը, պատուի և գոյքի բաւարարութիւն ստացած պահանջը՝ գալիս էին փափկացնելու մարդկանց մէջ ոճրիմաստ տրամադրութիւնը:

Եւ այդ բոլոր միտումներով և աչքի առաջ ունենալով, որ միայն ադմինիստրատիւ միջոցները բաւական չէին երկրի մէջ հանգստութիւնը պահպանելու համար՝ ես եռանդալից պահանջում էի կազմակերպել նահանգում դատաստանական պատշաճ իշխանութիւն:

Ամիսների ընթացքում բացի խոստումներից ոչինչ այդ ուղղութեամբ չը տեսնելով՝ ես հեռագրով դիմեցի մինիստր նախագահին, և մատնանշեցի, որ չի կարելի զրկել երկիրը արդարադատութիւնից:

Այդ բոլոր գրութիւններից և պահանջներից յետոյ՝ Երևանից ուղարկուեց վերջապէս 4 դատաստանական քննիչ, նոցանից երկուսը ռուսներ էին, և չորսն էլ ոչ իրաւաբան: Եւ այդ մարդիկ, որ ռուս իշխանութեան օրով դատաստանական քննիչների մօտ թարգման էին և հաշտարար դատաւորի մօտ գործարար միայն՝ գալիս էին դատաստանական իշխանութիւն կազմելու Կարսի նահանգում:

Մի ընդարձակ գրութեամբ արդարադատութեան մինիստրի անունով՝ ես բուռն կերպով բողոքեցի այդօրինակ վերաբերմունքի համար դէպի պետական և հասարակական շահերը: Իմ այդ գրութեան մէջ, որի պատճէնն ես հարկաւոր համարեցի միաժամանակ ուղարկել և դաշնակցութեան բիւրոյին՝ ես բացատրեցի, որ ռուս իշխանութեան օրով դատարանը այն միակ հաստատութիւնն էր, որի դռները փակ էին թերուսների և ոչ իրաւաբանների համար, որ մենք հայերս՝ Կովկասի միւս ազգութիւնների հետ, իւր ժամանակին շատ հետաքրքրուել և զբաղուել ենք արդարադատութիւնը ժողովրդականացնելու խնդրով, և միշտ երազում էինք մեր խղճի մթնոլորտում խօսելու մեր մայրենի լեզուով:

Եւ այժմ, երբ մեր իղձերը իրականացել են աւելի լայն մակարդակով, երբ մեզ վիճակուել է կազմել մեր պետութիւնը՝ մենք, որ տուել ենք ռուս դատարանին եզակի և փայլուն իրաւաբաններ և օրէնսգէտներ, լցնում ենք մեր սեփական առաջի դատարանը գրագիրներով, ռուսներով և ռուս դիւանների մանր պաշտօնեաներով:

Եւ այդ բոլորով հանդերձ՝ աւելացրեցի ես իմ գրութեանս մէջ, հեղեղել հայկական դատարանը օտարազգիներով, և ստիպել հային իր տանը խօսել ոչ պետական լեզուով, այլ դարձեալ և ռուսերէն և դարձեալ թարգմանի միջոցով՝ այդ արդէն մի դրութիւն է, որի առիթով պէտք է ոչ միայն ցաւել՝ այլև բուռն բողոքել և բաղխել բոլոր դռները...

Մի քանի օրից յետոյ նշանակուած ռուս քննիչներից մէկը գնաց մի սպանութեան գործով թուրք գիւղերը՝ և վերադարձաւ այնտեղից իր սեփական ձիով: Այդ ձին նա ընծայ էր ստացել մեղադրող թուրքից: Եւ այդպիսով, եթէ իրանց իշխանութեան օրով ռուս կաշառակեր պաշտօնեան կաշառք էր վերցնում ահ ու դողով, գաղտագողի՝ այսօր ռուս այդ նախկին գրագիրը հայկական քննիչ դարձած՝ անում էր այդ ի ցոյց մարդկանց, ծաղրելով այն իշխանութիւնը, որ միջոց էր տալիս նորան թալանելու երկիրը:

Բացի այդ, արդարադատութեան այդ ներկայացուցիչը աջ ու ձախ հայհոյում էր հայկական կառավարութեանը, և բացատրում էր թուրքերին և մոլոկաններին, որ հայ իշխանութիւնը տևողական չէ... որովհետև դատաստանական քննիչի բռնած դիրքը սպառնալից էր երկրի իրաւակարգի համար՝ ես ծածկագիր հեռագիր ուղարկեցի այդ առիթով արդարադատութեան մինիստրին, և խնդրեցի անյապաղ հեռացնել նահանգից այդ սրիկային:

Ռուս միւս քննիչը, որ Արդահանի գաւառի համար էր ուղարկուած՝ ոչ մի տրամադրութիւն չունէր Արդահան գնալու: Նա մօտ երկու ամիս զանազան պատրուակներով մնաց Կարսում, մինչև որ ես ստիպուած էի հրաւիրել նորան ինձ մօտ, և հրամանալից ձևով առաջարկելու անմիջապէս իր պաշտօնատեղին մեկնելու:

Բայց շուտով պարզուեց, որ այդ ռուսը, որ գնում էր այդ հեռաւոր և զուտ թուրքաբնակ գաւառը որպէս ներկայեացուցիչ հայկական արդարադատութեան՝ բարեկամացաւ սահմանի այն կողմը Վրաստանում ապրող մի քանի շօվինիստ վրացի պաշտօնեաների հետ, և շրջապատեց իրան այն թուրքերով, որ օգտւում էին ամէն մի պատեհ դէպքից՝ կշտամբելու հայկական իշխանութիւնը...

Մի ամսից յետոյ՝ Երևանից եկաւ Արդահանի գաւառի համար նշանակուած և հաշտարար դատաւորը: Նա էլ ռուս էր, վաղուց պաշտօնավարում էր Երևանի նահանգում, յայտնի էր թէ որպէս արբեցող և թէ որպէս ոչ նորմալ մարդ:

Հաշտարար դատաւորների մէջ մէկն էր միայն իր կոչման բարձրութեան վերայ, այդ Կարսի հաշտարար դատաւոր Մկրտիչ Մարգարեանն էր, որի հետ

մենք մինչև ի վերջը մնացինք Կարսում, և մինչև ի վերջը շարունակում էինք մաքառել նահանգի անմխիթար դատաստանական կազմի դէմ: Առաջ երդուեալ հաւատարմատար իր հայրենի Ախալքալաքում՝ Մարգարեան հրաժարուել էր Երևանում աւելի բարձր պաշտօն ընդունելուց, և գերադասել էր գալ այն գաւառը՝ ուր պէտք էր պատուով ներկայեացնել հայկական արդարադատութիւնը: Անկախ և անաչառ դատաւոր՝ դատաւոր 64 թուականի իմաստով, և մեծ հայրենասէր Մարգարեան գերի ընկաւ Կարսի անկման օրը, և այլևս չը վերադարձաւ հայրենիք: Եւ դժուար է ասել, որ աւելի բախտաւո՞ր են նոքա, որ ականատես են ներկայ օրերի, թէ դատաւոր Մարգարեան, որ չը տեսաւ իւր հայրենիքի աւերը և չը լսեց մեր պետական առագաստների դղրդալից խորտակումը...

Դատաստանական կազմի խայտաճամուկ դէմքը՝ ի նկատի ունենալով երկրի առանձնայատկութիւնը, թուրքերի դարաւոր տրամադրութիւնը ռուս պաշտօնեաներին կաշառելու՝ ես մի քանի անգամ դիմեցի Երևան, խնդրելով ուղարկել Կարս շրջանային դատարանի պրօկուրօրի օգնականներից մէկին, որ հսկէր այդ երբեմն գրագիր-թարգման, իսկ այժմ դատաստանական քննիչների գործունէութեան վերայ:

Պրօկուրօրի ներկայութիւնը այդ հեռաւոր նահանգում ես հարկաւոր էի սա գտնում՝ և ընդհանուր իրաւակարգային միտումներով: Չէ՞ որ նա օրինականութեան աչքն է և այն օրէնքի ներկայացուցիչը, որի համար բոլորը հաւասար են և բոլորը պատասխանատու:

Եկաւ և պրօկուրօրի օգնականը՝ մի Գանձակեցի հայ երիտասարդ, մի ինչ-որ Մատինեան: Ես միշտ տրամադրիր էի ցանկանալու, որ Հայկական կառավարութեան պաշտօնեան հայ լինի ոչ միայն իր ազգանունով՝ այլև իր հոգու վերապրումներով: Եկուոր երիտասարդը խուսափում էր հայերէն խօսելուց, և ինձ համար գաղտնիք մնաց՝ չը գիտէ՞ր նա իր մայրենի լեզուն, թէ ռուսախօս գեներալներին և սպաներին նմանուելով՝ անյարմար և աւելորդ էր համարում խօսել այդ լեզուով:

Այսպէս թէ այնպէս, այդ այն պրօկուրօրը չէր, որ պէտք էր հայկական առաջի նահանգում, և մենք դատաւոր Մարգարեանի հետ շատ անգամ այնուհետև խօսում ենք այդ խնդիրների մասին և մտածում ...

Դատաստանական քննիչների թւում՝ որպէս երևի մի թիւրիմացութիւն, կար մի համալսարանական հայ երիտասարդ, դարձեալ Գանձակեցի՝ Եղեան ազգանունով: Նա եռանդոտ և առաջադիմական մարդու տպաւորութիւն էր թողնում, և մի երկու ամսից յետոյ ցանկութիւն յայտնեց ադմինիստրացիա անցնել: Իր այդ ցանկութիւնը նա բացատրում էր նորանով, որ հակուած է աւելի դրսի, ժողովրդական բնոյթ կրող գործունէութեան:

Ես շատ ուրախ էի ընդունել այդ համալսարանականի ըստ երևոյթին գաղափարական ցանկութիւնը աշխատակցելու ինձ հետ, և մի երկու ամսից յետոյ

ես նշանակեցի դատաստանական քննիչ Եղեանին՝ Կարսի շրջանապետի (գաւառապետի) պաշտօնակատար:

Բայց մի ամսից յետոյ բացուեց երիտասարդի անձնուէր ժողովրդական պատկերը, նա սկսեց աջ ու ձախ թալանել իր այդ «սիրուած ժողովուրդը»: Ես նախնական քննութիւն նշանակեցի, հեռացրեցի պարոնին պաշտօնից, և հանգամանքների արտակարգ բնոյթը աչքի առաջ ունենալով՝ ես նորան նախնական տնային բանտարկութեան ենթարկեցի:

Կովկասի վերջի հարիւր տարուայ տարեգրութեան մէջ՝ այդ առաջի դէպքն էր, երբ նահանգապետը գաւառապետի նկատմամբ ստիպուած էր դիմելու այդպիսի մի արտակարգ և խիստ միջոցի:

Բայց այդ սուր միջոցը ինձ պէտք էր մեր օրերի ապականուած մթնոլորտի վերայ ճնշում գործելու համար, և ի նկատի առնելով և այն, որ այդ անամօթ թալանը կատարել է մի համալսարանական հայ երիտասարդ, որ դեռ երեկ արդարադատ պատգամներից էր խօսում: Բայց այդ մեծ աղմուկ գործում՝ ես հանդիպեցի երիտասարդ պրոկուրորի մեծ ընդդիմադրութեանը: Այստեղ պարզուեց, որ այդ երկու իրաւաբանները ոչ միայն հայրենակիցներ են, երկուսն էլ Գանձակեցի՝ այլև ազգականներ: Պրոկուրորի օգնականը այդ գործի առիթով նոյն օրը այցելեց ինձ, և միջնորդում էր բանտարկութիւնից ազատել իր ազգականին: Նա տքնում էր բացատրելու ինձ որպէս իրաւաբան երևի, որ այդ թալանը գաւառապետը կատարել է ոչ ի պաշտօնէ՝ այլ որպէս մի մասնաւոր մարդ, հետևապէս և մեղադրանքը նորա վերայ պէտք է բարդուի մասնաւոր կերպով: Հազիւ թէ պէտք է ասել, որ մենք խօսում էինք երիտասարդ պրոկուրորի հետ տարբեր լեզուներով և իրար հասկանալ չէինք կարող:

Երբ գործը անցաւ դատաստանական քննիչին՝ վերջինս չը բաւականացաւ նահանգապետի ձեռք առած միջոցներով նախկին գաւառապետի դէմ, և տնային բանտարկութիւնը վերածեց բանտի: Պրոկուրորի օգնականը օգտուելով իր իրաւունքներից՝ առաջարկեց դատաստանական քննիչին բանտարկութիւնից ազատել Եղեանին, բայց այստեղ միանգամայն անսպասելի իր համար՝ պրոկուրորը հանդիպեց երիտասարդ քննիչի բուռն ընդդիմադրութեան:

Կաշառակերութեան մէջ մեղադրուող և բանտարկուած նախկին գաւառապետը, միացած նորան համակրող պրոկուրորի հետ՝ դիմեցին հեռագրով Երևան: Նոքա բողոքեցին նահանգապետի բռնութեան և կամայականութեան դէմ, որի ազդեցութեանը՝ նոցա բացատրութիւններով, ենթարկուել էր և դատաստանական քննիչը, և միջնորդում էին Երևանի առաջ օգնել բանտարկեալին: Քրէական օրէնսդրութիւնը շատ որոշ նախատեսել է այդօրինակ գործերի ընթացքը, և պէտք էր զարմանալ միայն, որ պրոկուրորի օգնականը դիմում էր բարձր իշխանութեանը մի խնդրով, որի իրաւասութիւնը շատ տարրական էր, շատ պարզ: Բայց յեղափոխական տրամադրութիւնը մոռացութեան է տալիս երևի և անսա-

սան օրէնքները, և Երևանը քննիչի վերայ ճնշում գործ դնելով՝ առաջարկեց մեղմացնել բանտարկուածի վիճակը, բանտարկութեան փոխարէն այլ միջոց ընտրելով նորա դէմ: Ով ծանօթ է ռուս պետական գործերի անցուդարձին՝ նա գիտէ անշուշտ, որ երբ ադմինիստրատիւ մի պաշտօնեայ մեղադրւում էր կաշառակերութեան և առհասարակ պաշտօնական զեղծումներում՝ շատ մեծ թափով ընդհարւում էին նրան երկրի դատաստանական և վարչական իշխանութիւնները: Եւ երբ ադմինիստրացիան միջից կէս էր լինում արդարացնելու «ամբաստուածին»՝ դատարանը շատ բարձր, գաղափարական տրամադրութեամբ ասում էր՝ թող կործանուի աշխարհը, միայն թէ ճշմարտութիւնը յաղթանակէ... Բայց հայկական կառավարութեան օրով հասկացողութիւները տեղափոխուելու ձգտում ունէին, և դատաստանական իշխանութիւնը գալիս էր այսօր պաշտպանելու կաշառակեր գաւառապետին, որին նահանգապետը բանտարկում և հալածում էր...

Բայց համարձակ և անկախ իր համոզմունքներում՝ դատաստ. քննիչ Եսայեան չը համաձայնուեց իր բարձր իշխանութեան ցանկութիւնը կատարելու, և առ ձևի միայն կատարելով Երևանի հրամանը՝ նա որոշեց դրամական գրաւականով միայն արձակել բանտարկեալին: Բայց այդ գրաւական գումարը քննիչը այնչափ մեծ նշանակեց, որ բանտարկուածը կամ չը կարողացաւ ներկայացնել, կամ երկիւղ կրեց այդչափ մեծ գումարի տէր յայտարարելու իրեն...

Բայց այդ էլ չօգնեց: Յամառ քննիչին սկսեցին այդ առիթով պաշարել ամէն կողմից՝ և նա ստիպուեց փոքրացնելու գրաւականի գումարը, և բանտարկութիւնից ազատեց մեղադրուողին:

Բանտից ազատուելով՝ նախկին գաւառապետը շտապում է Երևան, ուր զինուորական մինիստրութեան մէջ, զօրաց գլխաւոր շտաբում՝ նա ոչ պակաս կապեր ունէր: Եւ մի քանի օրից յետոյ՝ նա վերադառնում է Կարս, արդէն զինուորական համազգեստով: Հայկական գլխաւոր շտաբը՝ մեր պետական իղձերի այդ արթուն պահապանը, ուր բնակալել էին դարձեալ ռուսները և դարձեալ ռուսախօսները, նշանակել էր այդ դատի տակ գտնուող մարդուն՝ զինուորական գաղտնի խուզարկու լիազօր (**ՍՏվՑՐՕ ՐՈՉՉպՊՍՈ**) Կարսի նահանգում... Եւ աւելի քան տարօրինակ է կարծեմ, որ զինուորական իշխանութիւնը իր այդ ոճրագործ-լիազօրին Կարսի նահանգը ուղարկելով՝ հարկաւոր չէր համարել նոյնիսկ տեղեկացնելու այդ մասին՝ ինչպէս որ այդ ընդունուած է օրէնքով, Կարսի նահանգապետին:

Միանգամայն անկախ նահանգում, նոր տարազով այդ մեր ծանօթ համալսարանականը՝ սկսում է իր զինուորական գաղտնի խուզարկու գործունէութիւնը. հարուստ քրդերին կալանաւորելով՝ մի քանի օրից յետոյ արձակելու համար... Նա պետական զինուորական դաւադրութիւններ էր որոնում հարուստ քրդերի մէջ, և իր այդ մահկանացուներիս անհասանելի աշխատանքներում՝ այդ «լիազօրը» ներդաշնակ էր միայն զօրքերի հրամանատար գեներալ Փիրումովի

(*փաստաթուղթը վնասուած է)*...մների հետ...կարմրում էի երկրի առաջ, ես պատասխան չէի գտնում ինձ այդ առիթով դիմումներին: Ի՞նչ համարում, ի՞նչ հմայք կարող էր ունենալ այդ վայրենի ձորերում այն իշխանութիւնը, որ ինքը շոշափում էր իր արժանապատուութիւնը:

Ես տեսնում էի, որ իրերի այդ առանցքում՝ իրաւակարգի մասին խօսք չի կարող լինել, և ես յատկապէս այդօրինակ խնդիրները պարզելու համար՝ գնացի Երևան:

Մինիստր նախագահ Յովհանջանեան (Օհանջանեան) հրաւիրեց ինձ մինիստրների խորհրդի: Նահանգին վերաբերեալ մի քանի խնդիրների մասին զեկուցումս վերջացնելուց յետոյ՝ ես շարունակեցի, «Օգտւում եմ դէպքից՝ հրաւիրելու կառավարութեան ուշադրութիւնը մի գործի վերայ ևս»: Համառօտ կրկնելով նախկին գաւառապետի պատմութիւնը՝ ես զարմանքս և զայրոյթս յայտնեցի զինուորական բարձր իշխանութեան վերաբերմունքի մասին: Այդ իշխանութիւնը մեծ և պատասխանատու պաշտօն է տալիս նախկին գաւառապետին, որ արձակուած էր պաշտօնից, բանտարկուած և այժմ դատի տակ էր: Այդօրինակ կարգադրութիւնը երերում է երկրի իրաւակարգը, անբարոյականացնելով մեր առանց այդ էլ ապականուած մթնոլորտը: Իմ այս վերջի յայտարարութիւնս՝ հայկական կառավարութեան բարձր ատեանում մինիստր նախագահ Համօ Յովհանջանեանի հրաւէրով, ես ստիպուած էի ռուսերէն անելու, որովհետև զօրաց մինիստրի պաշտօնակատար գեներալ Հախվերդով հայերէն ոչ մի բառ չը գիտէր:

Նորին գերազանցութիւնը լաւ չզգալով իրան իմ այդ յայտարարութիւնից յետոյ՝ մի երկու անգամ ջղայնօրէն ցնցուեց իր բազկաթոռում, և շատ անվստահ թոթովեց, բայց... Բայց մենք չը գիտէինք այդ...

Ես մեծ ցաւ յայտնեցի այդ առիթով, իսկ մինիստր-նախագահը, որ ոչ պակաս իրան լաւ չէր զգում այդ միջոցում՝ խոժոռեց աչքերը դէպի ռուսախօս գեներալը և ասաց, այնուամենայնիւ հարկաւոր է պատշաճ կարգադրութիւն անել... Միւս օրը այդ խուզարկու լիազօրը հեռագրով յետ կանչուեց Կարսից՝ և նորան տեղաւորեցրեցին գլխաւոր շտաբի մոբիլիզացիոն բաժանմունքում: Մարդկանց յարաբերութիւնները, կապերը, հեռաւոր միտումները, միացած ընդհանուր մտածելակերպի հետ՝ ստեղծում են երբեմն այնպիսի փափուկ դրութիւն, որ պէտք է ընդունել լռութեամբ: Եւ մենք ստիպուած էինք լռութեամբ անցնելու զինուորական իշխանութեան այդ նոր կարգադրութեան առջևից: Չէ՞ որ անկարելի է անընդհատ բողոքել, և շարունակ ընդհարուել մարդկանց հետ...

Այդպէս գունաւոր են մեր հայրենի արդարադատութեան պատմութեան պատկերները:

Ռուս իշխանութեան օրով՝ Երևանի և Կարսի նահանգները կազմում էին մի՛ դատաստանական շրջան, և ունէին մի՛ շրջանային դատարան, որ Երևան էր:

Բայց մեր արդարադատութեան մինիստրութիւնը, որ մարդ չէր գտնում դատաստանական քննիչի պաշտօնի համար անգամ՝ հարկաւոր գտաւ Կարսի նահանգում ունենալ առանձին շրջանային դատարան: Եւ Կարսի անկման գրեթէ նախօրեակում՝ եկաւ այդ դատարանը, երեք հոգուց բաղկացած:

Դատարանի հանդիսաւոր բացմանը հրաւիրուած էր ի հարկէ և նահանգապետը: Դատարանի նախագահ Մելքոնեան՝ ջերմեռանդ դաշնակցական, մի համակրելի անձնաւորութիւն, և մէկը այն անկեղծ հայերից, որ սիրում են հայրենի երգները՝ դարձաւ հանդիսականներին մի ճառով, ուր բնորոշեց հայկական դատարանի իմաստը, և մեր անելիքները ճշմարտութիւն և արդարադատութիւն կերտելու գործում:

Բայց նախագահի այդ դիմումը պէտք էր թարգմանել հայերէնից ռուսերէն դատարանի անդամներին՝ որոնցից մէկը ռուս էր, միւսն էլ մի համակրելի հայ, որ հայերէն չը գիտէր...

Այդպէս էր հայկական շրջանային դատարանը Կարսի նահանգում, և մենք թողեցինք դատարանի դահլիճը ոչ սուվերէն տրամադրութեամբ, և ոչ որևէ յոյսերով ու սպասելիքներով...

Յամենայն դէպս, այդ դատարանի բացման առիթով տրամադրութիւն և գէթ յոյսեր ստեղծելու համար՝ ես հեռագրեցի կառավարութեանը և հայկական հեռագրական գործակալութեանը Երևանում, որ ԸՁԸ էր կոչւում:

Քրէական գործերը անկապանք և անդատ՝ աճում, բազմանում էին: Վրէժը, արիւնը և խոցոտուած պատիւը պահանջում էին իրական հատուցում՝ իրաւունքները: Իսկ գալով հեռագիրների բովանդակութեան (*փաստաթուղթը վնասուած է)*.... այդ առիթով էլ շատ անգամ կարելի էր ասել **ՃվպրՌ Ցօ, ՎՏպ չՏՐպ**... Եւ եթէ այդօրինակ անփոյթ և առնուազն անշնորհք կերպով խմբագրուած հեռագիրներ ուղարկւում էին երկրի միակ նահանգապետին՝ դուք կարող էք երևակայել, թէ ի՞նչ շփոթ, ի՞նչ էր տիրում պաշտօնական միւս գրութիւններում, որոնք ստացւում էին նահանգապետից ցածր աստիճանով մարդկանց անունով, և կրում էին այս և այն պաշտօնեայի ստորագրութիւնը...

Այդպէս էր մեր «պետական» անցուդարձի մթնոլորտը:

Հայկական իշխանութիւնը Կարսի նահանգում տարածուեց սկզբում երեք գաւառներում միայն, Կարսի, Կաղզուանի ու Արդահանի շրջաններում: Ինչ որ վերաբերւում է այդ նահանգի չորրորդ շրջանին՝ Օլթիին, այդ շրջանը մինչև 20 թուի ամառը մնում էր մի ինչ-որ չէզոք զօնա: Տաճկական կառավարութիւնը, քայքայուած և ուժասպառ՝ փաստօրէն չէր տիրում այդ շրջանը, ինչպէ՞ս իսկ հատուցումը պէտք է տար երկրի դատաստանական իշխանութիւնը, որ ոչ դիրք ունէր և ոչ հեղինակութիւն: Երբ ոստիկանութիւնը ձերբակալեց մի մեծ աւազակ, որ մեղադրւում էր մի քանի սպաննութիւնների և մի քանի կողոպուտների մէջ, և անխոցոտելի էր իր «դաշնակցական» զրահով՝ Երևանի դատաստանական իշ-

խանութեան դիրք ունեցող մի պաշտօնեայ պրօկուրատուրայի կազմից՝ մասնաւոր նամակ է գրում Կարսի դատաստանական քննիչին. "Երաշխաւորութեամբ արձակեցէք Մացակին, մեր լաւ տղերքանցից է"...

Ես կարծում եմ, որ նոյնիսկ այդօրինակ վերաբերմունքը դէպի ոճրագործը՝ ստեղծում էր մեր օրերի ոճրագործ մթնոլորտը, և վարկաբեկելով դատաստանական իշխանութիւնը՝ գցում էր երկրում և համայն կառավարութեան վարկը: Այդ մասնաւոր, ընկերվար նամակները, այդ «ընկերները» և այդ «տղերքը»՝ չէին վրիպում հասարակութեան աչքից, և այդ երկիրը չէր կարող պատկառել մի պրօկուրորի առաջ, որ գալիս էր պաշտպանելու գողին և մարդասպանին: Այդ թեթև՝ եթէ չասենք աւելին, վերաբերմունքը դէպի երկրի խիղճը՝ վերացնում էր իշխանաւորին, ենթակային և յանցաւորին բաժանող բնական շերտերը, և ստեղծում էր կամայական և անիշխան մթնոլորտ՝ ուր բոլորը «ընկերներ էին», հետևապէս և բոլորն էլ ոճրագործ... Դատաստանական այդ իշխանութիւնը կորցնում էր արդէն իշխանութեան հմայքը, և փոխանակ ուղղութիւն տալու պետական առագաստներին իր անկաշառ ճշտութեամբ և հեղինակութեամբ՝ նա կուլ է գնում իր օրերի յորդորալից ջրերին... Եւ եթէ հայրենի կառավարութեան ստեղծման օրերում մենք այնչափ մեծ հաւատ ունէինք դէպի արդարադատութեան մինիստրութիւնը՝ նորա գոյութեան վերջի տարուայ ընթացքում նա կորցրեց երկրի համակրութիւնը, և նորա վաղեմի վերաբերմունքը դէպի այդ օրինական հաստատութիւնը:

Արդարադատութեան վերջի երկու մինիստրութիւնները միանգամայն անգոյն էին և միանգամայն անկերպարանք: Շրջանային դատարանը, դատաստանական պալատը և վերջապէս սենատը՝ աւելի ակադեմիկ քան ռեալ հասկացողութիւններ էին: Թէ ի՞նչ էր երկիրը նոցա համար՝ չը գիտեմ, բայց երկրի համար նրանք անհոտ և անհամ մի հասկացողութիւն էին, և մինչև ի վերջն էլ մնացին երկրից մեկուսացած և երկրին անծանօթ...

Արդարադատութեան վերջի երկու մինիստրութիւնների գոյութիւնը՝ նօմինալ էր միայն, նոցա ոչ ճանաչող կար և ոչ էլ հաշուի առնող: Իսկ վերջի վեց ամսուայ ընթացքում, արդարադատութեան վերջի մինիստրութեան օրով՝ պետական առագաստները կորցրել էին արդէն օրինականութեան կուրսը: Խախտուած և իրաւազուրկ՝ օրէնքը սաւառնել, անցել էր դէպի ամպամած ճշմարտութիւնը, և պետական ճկուն առագաստները ընկնելով անպատասխանատու դիկտատօր Ռուբէն փաշայի ձեռքը՝ գնում էին քմահաճոյքների և արկածների սայթաքուն ջրերով...

Չի կարելի ուրանալ, որ արդարադատութեան մեր առաջի մինիստրը գործի էր անցնում մեծ սիրով դէպի իր հայրենի երազները, բայց պէտք է այն էլ ասել, որ բազմաշխատ Սամսոն Յարութիւնեան գալիս էր կերտելու արդարադատութիւնը՝ մաշուած շաբլօնով և հնացած չափերով:

Նա հաշուի չառաւ երկրի առանձնայատուկ բնոյթը, մեր օրերի իմաստը և շրջապատ պայմանները:

Սենատը, դատաստանական պալատը և երդուեալների դատարանը որպէս ճշմարտութիւն՝ անուրանալի են ի հարկէ, բայց նոքա աւելի մօզաիկ գծեր են միայն մեծ գործում, և այն էլ միայն կանգուն պատուանդանում:

Արդարադատութեան մեր անդրանիկ մինիստրը սխալուեց և իր սպասելիքներում: Սամսոն Յարութիւնեանին չը յաջողուեց համախմբել իր շուրջը մեր բազմաթիւ լուրջ իրաւաբաններին: Դատաստանական իշխանութիւնը կազմակերպուեց ռուսներից, ռուսախօս հայերից, նախկին դատաստանական հիմնարկութիւնների մանր-մունր հայ պաշտօնեաներից, և շատ փոքրաթիւ համալսարանականներից՝ որոնց մէջ միայն մի երկու անուն ունեցող իրաւաբան:

Դատաստանական այդ կազմը չէր կարող օրինականութեան կորիզը դառնալ նոր պետութեան մէջ, և նա կորցրեց և երկրի հաւատը դէպի դատարանի բարձր և կարող իմաստը: Դատաստանական այդ կազմակերպչական անյաջող աշխատանքների մթնոլորտում՝ երդուեալների դատարանը օրինակ, մի շռայլութիւն էր, որ շոյելով մեր օրերի դեմօկրատիկ (*փաստաթուղթը վնասուած է)*... կամաւորների նոր և նոր խմբեր՝ ոչինչ չէին օգնի, նրանք կը մեծացնէին միայն ընդհանուր շփոթի ծաւալը, բայց երբէք չէին փրկի դրութիւնը՝ ի նկատի առնելով այն անվիճելի ճշմարտութիւնը, որ 1000 հոգուց լաւ կազմակերպուած գումարտակը՝ ուր ամէն բան չափուած և ձևած է, աւելի բարձր է քան տասը հազարանոց խուժանը: Իսկ մենք այդ օրերում լցնում էինք մեր բանակը այդ խուժանով, և հիմնօրէն երերում այդ բանակի կորովը և նշանակութիւնը: Այդպէս է մօտաւորապէս մեր զօրաշարքերի լքման ընդհանուր բացատրութիւնը:

Երբ մենք հասանք Կարայեալ կայարանը, հայ ազգաբնակութիւնով խիտ Շիրակը՝ մենք հանդիպեցինք խումբ-խումբ գիւղացիների, որոնք դատարկ սայլերով վերադառնում էին Աղէքսանդրապօլի կողմից իրանց գիւղերը: Այդ յանկարծակի քարուքանդ եղած մարդիկ՝ գալիս էին մի աւելորդ անգամ նայելու *(տեքստը խզուած է)*... բնազդը միայն, ոչինչ չէր տալիս երկրին ըստ էութեան և պահանջի:

Երդուեալների դատարանը առանց լուրջ և հեղինակաւոր դատաւորների, առանց կարող և ինքնուրոյն դատաստանական քննիչների և առանց վերջապէս ադմինիստրատիւ այն ներդաշնակ ապարատի, որ կոչուած է մշակելու և դասաւորելու կեանքի չարն ու բարին՝ խղճի այդ ատեանը մի հրավառ տեսիլ էր միայն, որ պէտք էր լրագիրներին, և օրեցօր նորութիւններ սպասող սիրողներին:

Եւ երկիրը, որ տեսնում էր դատաստանական իշխանութեան անկազմակերպ և թիւրալից դրութիւնը՝ չէր կարող հմայուել սենատով և երդուեալների դատարանով:

Մի համակրելի Յովհաննէս Սպենդիարեան՝ հին փաստաբան, մեծ սիրահար հայրենի յուշերի, շատ լուրջ իրաւաբան և մէկը սակաւաթիւ անկեղծ հայերից՝ չէր կարող միայնակ սրբագործել արդարադատութեան պատգամները: Անտարակոյս՝ Սպենդիարեան պատիւ կը բերէր նոյնիսկ ռուս մեծ սենատին: Բայց հայկական սենատը առանց անցեալի, առանց հիմունքների, առանց նախնական դատարանի՝ դա մի էֆեմիր կոչում էր միայն և ոչ աւելի:

Եւ մենք կարծում ենք, որ սենատոր Սպենդիարեան մի մեծ թիւրիմացութիւն էր հայկական արդարադատութեան մի... (*փաստաթուղթը վնասուած է)*... աշտարակում: Մենք տրամադիր ենք հմայուելու այդ սրբագործ աշտարակով, մեծ տրա... (*փաստաթուղթը վնասուած է)*... ունէինք նորան ձեռներեց տեղ տալու, և երբէք չէինք կարող երազել, որ նա կը մնայ կեանքից անջատ, և մեր սպասելիքներից շատ հեռու... Բայց ո՞ւր էր այն բազմակողմանի նիւթը՝ ինքը կեանքը, որ պէտք է ամբարուէր այդ բարձր հաստատութիւնների համար արդարադատութեան սկզբնական մշակների ձեռքով, և ո՞վ պէտք է ժողովէր և վերլուծէր այդ նիւթը՝ երևի ռուսները, ռուսախօսները և հայ նախկին թարգմանները ու գրագիրները...

Այդպէս էր հայկական արդարադատութիւնը՝ մեր պետութեան ամբողջ ընթացքում:

Բայց եթէ հայկական արդարադատութեան անդրանիկ մինիստրը տոգորուած էր մեծ ցանկութիւններով և անվիճելի եռանդով՝ նորա երկու յաջորդները գալիս էին միայն ժառանգելու նորա բազկաթոռը: Նրանք ոչ անուն ունէին և ոչ որևէ տուեալներ այդ բարձր կոչման համար: Նրանք անփառունակ յաջորդեցին մէկը միւսին, և առանց որևէ յետք թողնելու պատմութեան մէջ՝ լուծուեցին ու անյայտացան մեր երկրի ընդհանուր շփոթում և ընդհանուր անիշխան մթնոլորտում: Սամսոն Յարութիւնեանից յետոյ արդարադատութեան մինիստրութիւնը որպէս գործօն մարմին՝ դադարում է գոյութիւն ունենալ: Նա այնուհետև միայն քաշ է գալիս իր օրերի յետևից առանց նոյնիսկ ցանկութեան՝ գրաւելու կառավարչական սաղմում իր առաջի և պատուաւոր տեղը: Իսկ կեանքի բարդուող պայմանները աստիճանաբար ստեղծում են երկրում կամայական մթնոլորտ՝ որին սանձահարելու կարողութիւն չունէր այլևս հայկական վերջի անգոյն գեներալ պրոկուրորը:

Եւ այդ սնանկութիւնը ոչ միայն ցաւալի էր՝ այլև ճակատագրական ու չարագուշակ...

XI *(IX ջնջած)*
Հայ եկեղեցին

Հաւատացող ազգութիւնների թւում հայերը միշտ պահպանել են իրանց աչքի ընկնող տեղը, և հայ ժողովրդական եկեղեցու շուրջը տարիների ընթացքում խմորուել են մեր ազգային, քաղաքակրթական և ազատագոչ տենչանքները: Եւ եթէ մեր «կուսակցութիւնները» ժամանակի տարազը պահպանելու համար երևի, շտապեցին բաժանել եկեղեցին պետութիւնից, իսկ «անջատուածները» միանգամայն ժխտեցին այդ «մասսայի» անունից հայ դարաւոր, նուիրական սրբութիւնը՝ հայ ժողովուրդը իր ամբողջութեամբ մնաց իր հաւատացող առանձնութեան մէջ: Նա շարունակեց պատկառել իր եկեղեցու առաջ և կեանքի արհաւիրքներից պատսպարուելով նրա մամռացած կամարների տակ նա սիրում էր սփոփել իրան հինաւուրց հաւատով, և լսել այնտեղ մայրենի և գթալից մրմունջներ... Եւ արձանագրելով մեր յիշողութիւնները Կարսի նահանգի անցուդարձից, ժողովելով նիւթեր մեր կարճատև պետականութեան պատմութեան համար՝ հայկական կառավարութեան առաջի նահանգապետը պարտաւորութիւն է զգում յիշելու և այն դիպուածները, որ կապուած են հայ եկեղեցու հետ, և որոնց հետ ի պաշտօնէ նահանգապետը առիթ է ունեցել շփուելու:

Շատ բնորոշ է հայ աշխարհի հոգեբանութիւնը այդ առանցքում: Երբ ես ստանձնեցի պաշտօնս և մի քանի օրից յետոյ Կարս հասան գաղթական հայութեան առաջի շարանները, և իմ բոլոր պաշտօնական ապարատը գիշեր ու ցերեկ զբաղուած էր անյետաձգելի պարտաւորութիւններով՝ ընդունել գաղթականներին, ուտելիք և սայլեր մատակարարել նորան գաւառները ցրուելու համար, երբ կատարւում էր եռուն աշխատանքը երկրի քաղաքացիական իշխանութիւնը կազմակերպելու համար՝ իմ բնակարանի առաջ երևաց ժողովրդի մի մեծ բազմութիւն: Այստեղ էին միայն Կարսի քաղաքացիները, այստեղ էր և շրջակայ և հեռաւոր հայ գիւղացիութիւնը: Երբ ես դուրս եկայ ընդունելու ժողովուրդը՝ մի պատկառելի մարդ, շատ յուզուած, ասաց.

–Նահանգապետ, բախտի ձախորդ փորձանքներից ազատուելով, և այսօր նորից իր կիսակործան հայրենիքում՝ հայ ժողովուրդը մեծ փափագ ունի ծունկ չոքելու այն սրբարանում, ուր տասը դար շարունակ չի հնչել նրա մայրենի լեզուն: Ցրուելով գաւառները և անցնելով մեր մարած օջախների վերաշինութեան գործին՝ մենք ուզում ենք օգտուել այսօր մեր պետական իրաւունքներից, և մեր մեծերի հինաւուրց օրինակով ուխտագնաց աղօթել այն կամարների տակ, որ այդչափ դար շարունակ անջատ է եղել մեզանից: Հրամայի՛ր, նահանգապետ,– աղերսալից ասաց ժողովրդի հաւատարմատարը,– բանա՛լ սուրբ Առաքելոց հինաւուրց տաճարի դռները՝ և թոյլ տուր մեզ այնտեղ աղօթել այդչափ փորձանքներից ազատուելու առիթով...

Սուրբ Առաքելոց հռչակաւոր հայ եկեղեցու կամարները բարձրանում են Կարսի ահարկու Կարադաղ ամրութիւնների ստորոտում:

Կարսը մեծահռչակ բնական բերդ է, և մեծահամբաւ Կարադաղը՝ նորա ամրութիւնների գլուխ գործոցը:

Կատաղի և փրփրալից քերելով ժամանակի և բնութեան այդ հսկայ բեկորի պատուանդանը՝ նորա տակով աղմկալից անցնում է Կարս չայը, և Մեծ Հայաստանի բարձունքներում զուլալուող ջրերը շրխկալով գալիս և գնում են Արփաչայի հետ միասին Արաքս դառնալու...

Դարերի ընթացքում այստեղ մարտնչել են բազմաթիւ բռնակալներ:

Թնդանօթների որոտալից առանցքում՝ Կարսը տարուբերուել է փոփոխակի բախտով, և Բագրատունեաց մեծահռչակ հարստութեան անկումից յետոյ՝ իջաւ Կարադաղի վերայից և հայկական վերջի դրօշակը: Այնուհետև դարերի ընթացքում՝ Կարսը ձեռքից ձեռք էր անցնում, և Կարադաղը անխռով ծածանել է մերթ պարսից, արաբացոց, մերթ յունաց, տաճկաց և ռուսաց դրօշակները:

Բայց անհասանելի են բախտի ուղիները, և Կարադաղին վերստին վիճակվում է աւետել Վանանդի հայկական իշխանութիւնը, և 12 դար ընդմիջումից յետոյ՝ Կարադաղի վերայ նորից բարձրացաւ հայկական դրօշակը, իսկ սուրբ Առաքելոց եկեղեցու դարաւոր զանգակները նորից հնչեցին ախորժ և ընտանի մեր սրտի համար...

Այդպէս է մեր դարաւոր այն սրբութիւնը՝ որի վերայ օդում, Կարադաղի հրամանալից բարձունքներից՝ փառել են մերթ հայկական և մերթ բազմաթիւ օտար դրօշակներ:

Ես ի ծայր յուզուած էի ժողովրդի այդ դիմումով:

Տատանուելով՝ ես մի երկու րոպէ խօսք չէի գտնում պատասխանի համար: Որպէս մառախուղ՝ իմ առաջ անցնում էին դարերը իրանց ճնշիչ վեհութեամբ: Որպէս երազ՝ Կարադաղի վերայ ես նորից տեսնում էի հայկական դրօշակը, և այն ժողովուրդը՝ որին «սոցիալիստները» ուզում են անջատել իր եկեղեցուց, որպէս իր սուվերէն առաջի պարտաւորութիւն՝ գալիս է մեծարելու և փառաբանելու իր այդ դարաւոր սրբութիւնը...

Այդպէս է հայ ժողովրդական եկեղեցին, և ինքը՝ հաւատացող հայ ժողովուրդը իր հոգու խորքերում: Կովկասեան մեծահռչակ ռուս պատերազմների ընթացքում՝ հայկական անունը ստացաւ առանձնակի հմայք:

Երբ 54 թուին մեծահամբաւ գեներալ իշխան Բեհբութեան Բաշկադիկլարի և Քիւրուկ Դարայի ձորում ջարդեց տաճկաց 60 հազարանոց ահարկու բանակը՝ դորանով հարթեց Կոմս Մուրաւեովի դափնալից ընթացքը դէպի Կարս, Կարադաղ: Կարսի այդ հռչակաւոր բանալին ընկաւ երիտասարդ գնդապետ Լօրիս Մելիքեանի դիւանագիտական միջոցների առանցքում:

– Դու զարմացրիր ամբողջ աշխարհը,– գրում էր իշխան Բեհբութեանին՝ Բաշկադիկլարի պատմական ճակատամարտի առիթով ռուս մեծակարող կայսրը,– բայց ես էլ կը զարմացնեմ քեզ...

Եւ ի վարձատրութիւն այդ մեծ յաղթանակի՝ ուղարկում է նորան իր վերայից սուրբ Անդրէյի ոսկէ շղթան, ռուսական առաջի շքանշանը, որ այն ժամանակներում կրում էին միայն թագաւորական տան անդամները: Եւ անուանի Կոմս Մուրաւեով՝ շրջապատուած հռչակաւոր հայ զօրավարներով, յաղթական մտնում է Կարս:

Կարսը՝ գրում էր իր կայսրին ռուս հրամանատարը, խոնարհուեց Ձեր կայսերական մեծութեան առաջ, և մեր ռազմական դափնիքը հիւսեցին երկու հայ զօրավարներ, գեներալ Իշխան Բեհբութեան և գնդապետ Լօրիս Մելիքեան: Վերջինս ցոյց տուեց առանձնակի փայլուն դիւանագիտական և վարչական տաղանդ: Կարսի անկումից դեռ առաջ՝ նա բանակցութիւնների մէջ մտաւ այդ նահանգի քուրդ անուանիների հետ, և շրջապատուած իր փայլուն շքախմբով՝ գնդապետ Լօրիս, առանց մի գնդակ արձակելու մտել էր Կաղզուան, և մեծ շքով այնտեղ ընդունուել:

- Այդ բոլոր միտումներով՝ – գրում էր Կոմս Մուրաւեով իր կայսրին,– ես հարկաւոր համարեցի գնդապետ Լօրիս Մելիքեանին նշանակել Կարսի նահանգապետ: Նա գիտէ վարուել մարդկանց հետ, գիտէ հմայել երկիրը, և իր այդ մեծ վարչական տակտով՝ պատիւ կը բերէ ռուս իշխանութեանը, Հայաստանի այդ նախադուռ աշխարհում:

Այդպէս էր ռուս նշանաւոր զօրահրամանատարի կարծիքը այն մարդու մասին, որին վիճակուած էր 25 տարուց յետոյ՝ արդէն որպէս հռչակաւոր հրամանատար Կովկասեան ահարկու բանակի, նորից գրաւելու Կարսը, լինելու այնուհետև ռուս լայնածաւալ Ռուսաստանի առաջի մինիստրը, և գերելու Աղէքսանդր II սիրտը...

Գնդապետ Լօրիս Մելիքեանն օգտուեց Կոմս Մուրաւեովի վերաբերմունքից, և Կարսի նահանգապետ դառնալով՝ նա բացեց սուրբ Առաքելոց եկեղեցու դռները հայ ժողովրդի առաջ: Եւ դարերի ընթացքում մզկիթը նորից վերածուեց հայ տաճարի, ուր ժողովուրդի հետ միասին՝ դարաւոր դադարից յետոյ, ծնկաչոք աղօթեց գնդապետ Լօրիս և ոչ պակաս մեծահամբաւ Իշխան Բեհբութեան: Բայց դաշնագրի համաձայն՝ Կարսը նորից անցաւ թիւրքերի ձեռքը, և Բագրատունեաց տաճարը նորից մզկիթ դարձաւ:

Շատ ուշագրաւ է, որ Կարսի առաջի հայ նահանգապետ գնդապետ Լօրիսին՝ 25 տարուց յետոյ նորից վիճակւում է յաղթական մտնել Կարս:

Բայց այս անգամ Կարսը ընկնում է մեծանուն զօրավարի հարուածների տակ, և Կովկասեան ահարկու զօրաբանակի հրամանատար աւագ զօրավար Լօրիս Մելիքեան՝ շրջապատուած Լազարեւ, Տէր Ղուկասով, Շելկովնիկով, Ալխազով, Քիշմիշեան և Տէր Ասատուրով անուանի և փայլուն հայ գեներալներով՝ հանդիսաւոր ընդունում է Կարսի պարիսպների տակ տաճկաց խոնարհուած հրամանատարի ձեռքերից այդ անառիկ ամրութիւնների դարաւոր բանա-

լիները: Կարադաղի վերայ նորից բարձրացաւ ռուս դրօշակը, և զօրավար Լօրիս շրջապատուած հայ նշանաւոր քաջ գեներալներով՝ նորից անցաւ սուրբ Առաքելոց եկեղեցին, և նորից լսեց այնտեղ մայրենի աղօթքը:

Բայց ութսունական թուականներում ընկաւ մեծահամբաւ Կոմս Լօրիս, Ռուսաստանում գերիշխեց յետադէմ ընթացքը, սկսուեց Կովկասի ռուսացումը և ռուս հոգևորականութիւնը անուշադիր դէպի Կարսի առաջնորդ յայտնի Աղուանեան եպիսկոպոսի բուռն բողոքները՝ գրաւեց ս. Առաքելոց եկեղեցին, և այնուհետև 40 տարուայ ընթացքում մեր այդ տաճարը ուղղափառ աղօթատուն էր:

Այս դարու 18 թուին ռուսները նորից թողեցին Կարսը, և սուրբ Առաքելոց եկեղեցին նորից դարձաւ մզկիթ: Երբ մենք հաստատուեցինք Կարսի նահանգում՝ տեղական թիւրքերը շարունակում էին տիրել ս. Առաքելոց եկեղեցին: Ժամանակները փոխուել էին, «ինքնորոշման» մառախլապատ սկզբունքները այս հեռաւոր վայրում ունէին իրանց առանձնակի համեմը, և թուրքերը տրամադրութիւն չունէին յանձնելու մեզ այս տաճարը:

Մենք գալիս էինք տիրելու Կարսի նահանգը ո՛չ ոյժով, և մեզ շրջապատող պայմանները հրամանալից պահանջում էին այդ առանցքում մեծ տակտ և շրջահայեաց քայլեր: Այդ բոլոր միտումներով՝ ես վաղաժամ էի համարում շօշափել այդ եկեղեցու փափուկ խնդիրը այդչափ շուտափոյթ, և այդ իմաստով տալով իմ բացատրութիւնները ժողովրդին՝ հաւաստիացրեցի նորան, որ իւր ժամանակին ես կ՛անեմ հարկաւոր կարգադրութիւնը: Մի քանի օրից յետոյ նոյն խնդրի առիթով եկաւ ինձ մօտ Աղէքսանդրապօլից և Արտակ վարդապետը, և ես նորից կրկնեցի, թէ ինչու ես չեմ շտապում այս խնդրում:

Բայց մի ամսից յետոյ երբ մենք ամրապնդեցինք, և երկրի ձեռներեցութիւնը ես կենտրոնացրել էի իմ ձեռքում՝ ես պատուիրեցի հասկացնել տալ թուրք անուանիներին, որ աւելի լաւ է իրանք խնդրեն ինձ ընդունել տաճարը՝ քան թէ ես ստիպուած լինեմ ինքնուրոյն այդ առիթով քայլեր անելու...

Եւ միւս օրը՝ թիւրք Ղադին, շրջապատուած մոլլաներով և անուանիներով ներկայանալով ինձ՝ ասաց արևելեան քաղցրալից խորամանկութեամբ.

–Տաճարը ամենակարողի տունն է, և մենք պարտաւոր էինք պահպանել Ձեր հինաւուրց եկեղեցին Ձեր բացակայութեան ժամանակ: Այժմ դուք մեր գլխի վերայ էք եկել՝ և մենք խնդրում ենք ընդունել տաճարը...:

Ես շնորհակալութիւն արեցի Ղադուն այդ զգացմունքների և հպատակութեան հաւաստիացման համար, և պատուիրեցի ոստիկանապետին՝ առաջնորդել թուրք պատգամաւորութիւնը հայոց առաջնորդի մօտ:

Կորիւն վարդապետ կարգադրեց ընդունել եկեղեցին, և տաճարը կարգի բերելուց յետոյ՝ նշանակուեց առաջի հանդիսաւոր ժամասացութիւնը, և նորա ընդարձակ և գեղեցիկ բացում զօրահանդէսը:

Այնտեղ էր այդ օրը ամբողջ քաղաքը, եկեղեցում ասեղ ձգելու տեղ չը կար:

12 դար ընդմիջումից յետոյ՝ Կարադաղի վերայ նորից ծածանուեց հայկական դրօշակը, և Հայոց առաջնորդը ս. պատարագից յետոյ հայ նուիրական տաճարում շատ բարձր տրամադրութեամբ օրհնեց հայ զինուորութիւնը և հայ ժողովուրդը:

Մի երկու խօսք էլ այդ փոխանորդի մասին:

Շատ ուշագրաւ զուգադիպութիւն պէտք է համարել, որ մեր մարտնչող երազների մթնոլորտում նորից կենդանութիւն ստացած տաճարում՝ առաջի պատարագը գալիս էր մատուցանելու մեր մարտիրոսութիւնների տարեգրութեան մէջ ոչ անյայտ մի կուսակրօն՝ Կորիւն վարդապետ, ազգական Վասպուրականի Արծուի, գաղափարական հայդուկ էր, և դաշնակցութեան մեծահամբաւ օրերում՝ փոխանորդ Գանձակի: Եւ ժամանակին նա մեծ անձնուիրութեամբ հունցել է դաշնակցութեան իմաստը, և խաչուելով հայրենի իդեալների համար՝ շղթայակապ դեգերել է Սիբիրի խորքերում:

Բայց անհասանելի կամօքն հայոց պատմութեան՝ մեր տենչանքների այդ արիւնոտ և շղթայակապ երկունքը լոյս աշխարհ է բերում Հայոց Հանրապետութիւնը:

Եւ ռուս հեռաւոր բանտերում ապաշխարող Կորիւն վարդապետը՝ նորից վեղարի տակ գալիս է խնկարկելու հայրենի սրբերին:

Որպէս երազալից հատուցում իր կրած մեծ տառապանքների՝ վարդապետին վիճակ է ընկնում Բագրատունեաց հռչակաւոր տաճարում օրհնելու հայկական բանակը, և նա տարուած և հմայուած այդ գերբնական տեսիլով՝ նորից երկրպագում է Հայոց արարչին, և ջերմալից օրհնում հայ ժողովուրդը և հայկական բանակի կայտառ շարքերը...

Առաջի անգամ դարերից յետոյ՝ հնչեց այդ մամռացած պարիսպների տակ հայկական «հանդարտ» հրամանատարութիւնը, և զօրավարը կեցցէ բացականչեց Հայոց առաջի Հանրապետութեանը...

Այդ արկածալից մթնոլորտում՝ կարծես պատասխանելով երկրի վերապրումներին, որպէս մի վեհափառ զգացմունք հնչեց երաժշտութեան «Մեր Հայրենիքը»: Եւ «Ամենայն տեղ մահը մի է» բռնկեց բազմութիւնը՝ շատ բարձր սուվերէն իմաստով: Յուզուած և բերկրալից՝ ձայնակցեց նորան հազարաւոր ամբոխը, որ երկար կեցցէ էր կոչում, դառնալով դէպի հինաւուրց եկեղեցին և անսասան Կարադաղ, ուր օդում հպարտ և իշխանալից՝ նորից փառում էր հայկական դրօշակը...

Ոչ միայն եկեղեցին՝ տաճարի մեծ գաւիթը, այլև առջևի մեծ փողոցը բռնուած էր բազմութեամբ:

Այստեղ էին և թուրքերը: Ինձ հետաքրքրում էր մօմենտի հոգեբանութիւնը, և ես ակամայ դարձայ դէպի թուրքերի խուռն բազմութիւնը: Նրանք ապշած էին

և ի ծայր ընկճուած... Դժուար էր հաւատալ ի հարկէ, որ 12 դար դադար առնելուց յետոյ՝ հայկական պետականութիւնը կարող է նորից հանդէս գալ, և այդ իրականութիւնը որպէս մի երազ՝ փառում էր այդ օրը Կարսի բուրալից օդում...

Թուրքերը դառնացած էին և շատ ընկճուած, նրանք ակնածութեամբ էին նայում դէպի իշխանութիւնը, և կարծես պաշտպանութիւն ու գթութիւն էին խնդրում...

Իսկ հայ ժողովուրդը տարուած իր ճակատագրական յաջողութիւններով՝ նորից իր տանն էր, իր օջախի մօտ, և անցնելով երկրի վերաշինութեան գործին՝ նա սկսում էր այդ աշխատանքը տոգորուած սուվերէն և ազատ զգացմունքներով...

Այդ հազարաւոր ամբոխի մէջ դժուար էր գտնել անվերաբեր տրամադրութիւն, և ես թողեցի եկեղեցին բուռն յիշողութիւնների մտքերի և վերապրումների տակ...

Այդ օրը ես ուղարկեցի Էջմիածին՝ նորին վեհափառութեանը, ամենայն հայոց կաթողիկոս Գէորգ V-ին հետևեալ պաշտօնական հեռագիրը. «Այսօր, ժողովրդի, զօրաց և պաշտօնէութեան ահագին բազմութեան ներկայութեամբ՝ ս. Առաքելոց հինաւուրց եկեղեցում կատարուեց մեր առաջի հանդիսաւոր ժամասացութիւնը: Բագրատունեաց այդ մեծագործուն տաճարում, որ մերթ մզկիթ էր, մերթ ուղղափառ աղօթատուն, և տասը դար շարունակ երբէք մայրենի մրմունջների ապաստարան՝ նորից հնչեց մայրենի ախորժ և գթալից հոլովը:

Եւ բախտից հալածուած հայ ժողովուրդը՝ դարեր տարագիր, նորից խոնարհուեց այն սեղանի առաջ, ուր երբեմն աղօթել և սփոփուել են նորա սուվերէն և հռչակաւոր նախնիքը:

Ձեկուցանելով Հայոց հայրապետին երկրի այսօրուայ բարձր տրամադրութիւնը՝ ես ի դիմաց նահանգի հայ ազգաբնակութեան խնդրում եմ Ձերդ սրբութիւնը օրհնել մեր վերաշէն աշխատանքը, ի պարծանք հայ կառավարութեան և ի սփոփումն սուրբ Էջմիածնի»:

Նորին վեհափառութիւնը հեռագրով իր օրհնութիւնը ուղարկեց հայ ժողովրդին, իսկ մի ամսից յետոյ Հայոց Հայրապետը մեծ պատիւ արեց նորան՝ Կարսի նահանգապետին ուղարկելով ինքնագիր մակագրութեամբ իր լուսանկարը:

Բայց և այդ թանկագին նուէրը մնաց Կարսում՝ ուր մնաց իմ գրադարանս, ձեռագրերս և տասնեակ տարիների իմ ամբողջ ունեցուածքս...

Ես միշտ սիրել եմ զբաղուել երկրի կենցաղով, և նահանգում կատարած իմ պաշտօնական անցուդարձի ժամանակ՝ միշտ հետաքրքրուել եմ ժողովրդի վերաբերմունքով թէ դէպի ժամանակակից հասկացողութիւնները, և թէ նորան հետաքրքրող երևոյթները: Ոչ միայն գիւղերում և կայաններումն էի ես զրոյցի բռնուում գիւղացիների հետ՝ այլև սիրում էի ճանապարհով անգամ անցողներին կանգնեցնել և հարց ու փորձ անել:

Երբ մի օր ես գնում էի դէպի Կաղզուան՝ ճանապարհին հանդիպեցի մի խումբ գիւղացիների, որոնք իրանց գիւղի քահանայի հետ ոտով անցնում էին: Սովորական հարց ու բարովից յետոյ՝ պարզուեց, որ 18 թուի գաղթին Քիրս գիւղի եկեղեցում մնացած անօթները տարուել են մօտակայ թուրք գիւղը, և թուրքերը այժմ պատրաստականութիւն էին յայտնել յանձնելու հայերին այդ իրերը: Ես ճանապարհին հենց գրեցի գաւառապետին՝ աջակցել գիւղացիներին այդ գործում, և նրանք մեծ գոհունակութեամբ շարունակեցին իրանց ճանապարհը:

Մի այլ անգամ, դէպի հնադարեան Բագրևանդ անցնելիս՝ ես կանգ առայ Գիւլ-Հեյրան գիւղում: Այդ փոքրիկ աղքատ գիւղը ընկած է հռչակաւոր Ալաջայի բարձունքներում, այնտեղ ուր 77 թուին հայազգի գեներալ Շելկովնիկով ջարդեց Մուխտար փաշայի բանակը, և որից յետոյ երկրի աշուղները երգում էին «Աւերուես դու, Ալաջադա՛ղ, գնացողը չը դարձաւ այլևս... »: Ներքևում որպէս մի չքնաղ հեռանկար՝ կարկաչելով սրընթաց անցնում է Ախուրեան, և օդը տոգորուած է ալպիկ բուրմունքով: Գրեթէ ամբողջ գիւղը ես գտայ եկեղեցու մօտ: Վերջի գաղթից յետոյ աւերուել և փչացել էին թէ եկեղեցին և թէ ուսումնարանը, և հասարակութիւնը դեռ երկու ամիս առաջ վերադարձած՝ մտատանջուած էր իր եկեղեցին և հովանու տակ միշտ պատսպարուած իր ուսումնարանի վերաշինման հոգսերով: Տեսնելով իմ չորս կողմը դառն աղքատութիւն, հացի և շորի մեծ կարօտ, աւերուած և բլած խրճիթներ և ամբողջ գիւղում մի քանի կենդանիներ միայն՝ ինձ չէր կարող չը յուզել, որ այդ պայմաններում հայը զբաղւում էր իր եկեղեցով և իր դպրոցով: Ես խոստացայ հասարակութեանը՝ յանձնարարել Կարսի նահանգի ուսումնարանների տեսչին, կազմակերպել այդ գիւղում ուսումնարանական գործը, և խօսել յաջորդի հետ եկեղեցու մասին: Երբ ես այցելեցի առաջի անգամ Արդահան՝ այդ քաղաքի մի բուռն հայ հասարակութիւնը նորից վերադառնալով իր հայրենի անկիւնը, դիմեց ինձ դարձեալ եկեղեցու և դարձեալ ուսումնարանի մասին: Եւ այդպէս նահանգի ո՛ր հայաբնակ անկիւնը անցնելիս՝ ես ամենուրէք հանդիպում էի նոյն խնդիրներին, և երկրի նոյն հոգեբանութեանը... Որպէս նահանգապետ՝ ժողովրդի հետ միասին մտածելով և զգալով, ես դժուարանում էի ասելու, անջատուա՞ծ է իրօք եկեղեցին հայ պետութիւնից, թէ այդ մի դարձուած էր՝ մի տուրք ժամանակի քմահաճ պահանջներին... Յամենայն դէպս, երկիրը ոչ մի տրամադրութիւն չունէր այդօրինակ մտածելու, և իմ հասկացողութիւններում չէր պարփակւում հայ ժողովրդական եկեղեցին բաժանուած հայ պետութիւնից...

Մենք մնում էինք ջերմ հաւատացող, և մեր հայրենի ծխի մոլեռանդ սիրահար, և ես կարծում եմ, որ և մեր կառավարութիւնը պէտք է այդ առանցքում հունցէր իր կորովը, և այդ առանձնակի՝ մեզ յատուկ պայմաներում զարգացնէր պետական գաղափարը: Մեր ներքին և արտաքին թշնամիների դաշնակից ոյժերին մենք պէտք է հակադրէինք մեր ազգայնօրէն կրթուած և տրամադրուած

բանակը, և նոյն ուղղութեամբ պէտք է յառէինք և մեր պետական առագաստները:

Բայց հայկական զօրքը ընդգրկեց ռուս շաբլօնը, և առաջնորդուեց հայ հոգեբանութեանը միանգամայն օտար և խորթ մարդկանցով:

Զօրաց այդ շարքերում չանդրադարձան մեր ազգային և նուիրական երազներին, և մեր բանակը ազգային դաստիարակութիւն չը ստանալով՝ չունէր և ազգային նախանձախնդիր դիւթիչ և մեծ կորով:

Հայ ժողովրդական եկեղեցու հմայքը գալիս է միայն լրացնելու այդ խորհրդածութիւնների իմաստը՝ և մի աւելորդ անգամ ասելու, որ հայկական պետութիւնը չէր կարող անջատ լինել հայ ժողովրդական եկեղեցուց:

Հայ պետականութեան խանձարուրը՝ հայ ժողովրդի սրբազնագոյն ծալքերն են, և հայ կաթողիկոսը, եպիսկոպոսը, հայ վարդապետը և քահանան՝ միշտ (*փաստաթուղթը վնասուած է)*... ...ռավառել են այդ ծալքերում ... ազատագրական և պետական տենչանքները: Մեր ազատ և ինքնայատուկ տրամադրութիւնները միշտ կ...ուել են մեր ժողովրդա... շուրջը, և մեր նշանաւոր եկեղեցում՝ Տաթևում և սուրբ Կարապետ վանքում, մենք միշտ զինուել ենք և միշտ ջերմալից աղօթել մեր քաղաքական և պետական երազների իրագործման համար...

Այդպէս է հայ եկեղեցին՝ հայ ժողովրդի հոգեբանութեան և տրամադրութիւնների իմաստում: Դերիքը և Նախավկան չեն կարող անջատ լինել հայ ժողովրդից, և եթէ մեր այդ հինաւուրց սրբարանների շուրջն է բորբոքուել մեր ազատագրական կորովը՝ հետևապէս այդ բովի միջից առաջացած պետութիւնը չի կարող խզուած լինել նոցանից:

Գէթ այդպէս է երկրի բնազդը, և այդ բնազդը մենք ոչ միայն պարտաւոր էինք յարգել և պահպանել՝ այլ պէտք է մեծապէս հաշուի առնէինք այդ բոլորը մեր պետական աշտարակի կառուցման գործում:

XI

Իմ զեկուցումները, մեր թիւրքաց գաղթականութիւնը և Ամերիկայի գեներ. Հարբօրդ

Շրջապատուած ներսի և դրսի հազար ու մի արգելքներով և խոչընդոտներով՝ մեր կազմակերպչական աշխատանքները առաջ էին գնում այնուամենայնիւ մեծ թափով և տենդոտ: Կարսի նահանգը օրեցօր գրաւում էր մեծ ուշադրութիւն, և հայութիւնը, թիւրքահայ գաղթականութիւնը, իր հեռանկարներով, սպասելիքներով և աշխատալից տրամադրութեամբ՝ խմբւում և կուտակւում էր Կարսի նահանգում: Եւ եթէ ռուսների համար հարիւր տարուայ ընթացքում Շիրակը այն վայրն էր՝ ուր շարունակ մարզւում և թմբկահարում էր ռուս բանակը, դէպի Տաճ-

կական Հայաստան արշաւելու և նուաճելու համար՝ հայութեան համար էլ այդ բուրալից դաշտերը այսօր այն կայանն էին, որտեղից նա պէտք է անցնէր իր աւեր և ամայի հայրենիքը:

Զարմանալի բնոյթ ունի մեզանում հայրենիքի կարօտը, ինչպէս և աշխատելու ու ստեղծելու կորովը: Դեռ երեկ ցնցոտիների մէջ կորած և յուսահատ հայութիւնը, կորցրած տուն տեղ և դարաւոր հանգիստ՝ այսօր մի տնտեսական ժամանակաշրջան բոլորելով իր երկրում, և հարազատ կառավարութեան հովանու տակ՝ ուշքի էր եկել և կերպարանափոխուել: Մոռացուելու վերայ էր անցեալի դառնութիւնը, երկիրը նորից լի, առատ էր, և մի երկու լաւ բերք ևս, ասում էր ժողովուրդը, և դարձեալ նոյն խերը և դարձեալ նոյն բեարաքեաթը... Եւ երբ Կարսի նահանգի բնիկները միանգամայն տեղաւորուելով մեծ սիրով դէպի հայրենի հողը՝ անցնում էին վերաշինութեան գործին, թիւրքահայ գաղթականութիւնը լճանում էր գլխաւորապէս Սարիղամիշի ուղղութեամբ: Այդ Ախլաթցիները, Մշեցիք և Թիֆլիսցիք՝ նման էին աւելի քոչուորների, և նոցա բնակավայրերը կրում էին ժամանակաւոր տեսք:

Զինուած՝ նոքա տենդոտ լրացնում էին ոտի վերայ իրանց տնտեսութիւնը, և շատ բարձր տրամադրութեամբ թմբակահարելով դէպի Տաճկական սահմանը՝ սրտատրոփ սպասում էին գարնան օրերի: Շատ և շատերը ունէին Արդահան բաւականաչափ տաւար ու ոչխար, բոլորը շտապում էին ձեռք բերել սայլեր ու ֆուրգոններ, բոլորը բարձում էին, ամրացնում անիւները, և տարուած աւետեաց երկրի հեռանկարներով՝ տարածում էին իրանց շուրջը շատ բարձր տրամադրութիւն...

Խիզախ և սրտոտ համբաւ վայելելով՝ տաճկահայերը սարսափ տարածեցին երկրում, և տեղական թուրք և քուրդ ազգաբնակութիւնը, որ կարծես թէ Հայեաստանի անկախութեան հակառակորդն էր, անհամբեր սպասում էր Սեւրի վճռին: Թուրքերը շտապում էին, որ օր առաջ բացուեն հայ տենչանքների նուիրական դռները, և այդ մեծ մութ անցքի առջև խմբուած տաճկահայերի հարիւր հազարանոց բանակը անցնէ իր հայրենիքը... Իսկ տեղացի հայերի հետ՝ ասում էին թուրքերը և քրդերը, մենք դարաւոր հարևաններ ենք, և շատ խաղաղ ու հանգիստ կ՛ապրենք մեր ընդհանուր հայրենիքում:

Թիւրքահայերը, որ անցնող, գնացող մի բազմութիւն էր՝ հաշուի չէր առնում բնականաբար երկրի մնայուն շահերը: Իրանց բնակատեղուն թիւրքահայերը վերաբերւում էին որպէս ժամանակաւոր կայանի, և տեղացիների հետ բարի դրացիութիւն չէին ստեղծում: Ինչպէս թուրքերը՝ տեղացի հայ ազգաբնակութիւնն էլ տենչում էր, օր առաջ հեռացած տեսնել թիւրքահայերին, չէ՞ որ նոքա գրաւում էին նոցա գիւղերը, և խտացնում նահանգի բնակչութիւնը:

Երկրի այդ տրամադրութիւնը, որ փառում էր օդում՝ չէր կարող չանդրադառնալ և դէպի Տաճկական Հայաստան: Բայց այդտեղ այդ լուրը առաջ էր բերում արդէն շփոթ և ջղայնացում...

Մարդկանց առաջ վերականգնում էր վրէժի ուրուականը, և տաճիկներն ու քրդերը չէին կարող չը զգալ, որ պարտքի հատուցումը և բնական է և անխուսափելի...

Բացի այդ, այդ տրամադրութիւնը Տաճկական Հայաստանում եռանդալից հունցում էին Բագուի էմիսարները և այն թուրքերը, որոնք Կովկասից փախչելով, ապաստան էին գտել այնտեղ: Այս վերջինները յաջողութեամբ կրում էին Բագուի պրոպօգանդիստների պարտաւորութիւնները, և օրեցօր բոցաւառում էին ազգամիջեան թշնամութիւնը:

Բայց թիւրքահայ գաղթականութիւնը շարունակ գալիս էր, շարունակ բռնում Տաճկական Հայաստանի սահմանները և ուժեղանում:

Կարսի նահանգը, որ դեռ մի քանի ամիս առաջ զուտ թուրքաբնակ մի մեծ տարածութիւն էր, որին մենք մօտենում էինք զգոյշ և ոչ վճռակի՝ այսօր արդէն մերն էր, այդ բառի լայն հասկացողութեամբ:

Նահանգի ազգաբնակութեան դեռ ոչ երրորդ մասը կազմելով՝ մենք այնուամենայնիւ տիրապետում էինք դրութեանը, և մեր իրաւակարգային բոլոր թիւրիմացութիւններով հանդերձ՝ մենք մեզ մեր տանն էինք զգում:

Իրաւունքի իմաստը երևի աւելի բարոյական հասկացողութիւն է, և ամենից առաջ ունի մեծ հոգեբանական նշանակութիւն: Մենք իրաւատէր էինք զգում մեզ երկրում, և այդ երկիրը, որ դեռ երեկ այնպէս սպառնալից և այնպէս անմատչելի էր՝ այսօր միանգամայն ենթակայ և միանգամայն նուաճուած էր: Ես միշտ մեծ ուշադրութեամբ հետևել եմ երկրի վերապրումներին, և իւր ժամանակին ուսումնասիրել եմ ժողովրդի հակումները, նորա վերաբերմունքը դէպի օրէնքը և իրաւունքը, նորա հոգեբանութիւնը: Եւ այսօր, երբ ինձ վիճակւում էր պետական մեծ պարտաւորութիւնների հետ կրել և մեծ պատասխանատուութ-իւն՝ պատմութեան այս մեծ էկրանի վերայ ես չէի կարող չը տեսնել և այն ուղիները, որով պէտք է ընթանար մեր պետականութիւնը:

Այդ առիթով ես մի շարք զեկուցում-ուսումնասիրութիւններ ուղարկեցի մինիստր նախագահին, իսկ պատճէները՝ պարլամենտի նախագահին և բոլոր մինիստներին, փաստերով և տուեալներով ներկայացնելով նահանգի տնտեսական, իրաւակարգային, քաղաքական և հասարակական պատկերը, ես բնորոշեցի երկրի տրամադրութիւնը և նորա սպասելիքները: Շատ պարզ էր, թէ ի՞նչ էր սպասում մեզանից այդ խայտաճամուկ նահանգը, և ի՞նչ պետական և տնտեսական քաղաքականութիւն կարող էր ապահովել մեր թիկունքը, երբ մենք առաջնորդելով թիւրքահայ գաղթականութիւնը դէպի Տաճկական Հայաստան՝

կը թողնէինք Կարսի նահանգի սահմանները, այդ վայրը պետութեան ներսի տարածութիւն դարձնելով:

Ես զեկուցանում էի կառավարութեանը, որ այսօր, երբ մենք անցանք Արփաչայ և Կարսի նահանգապետի տան վերայ ծածանուեց Հայոց Հանրապետութեան դրօշակը՝ երկիրը ընդառաջ եկաւ մեզ աղուհացով, յոգնած զէնքի շառաչիւնից և անվերջ ... (*փասփաթուղթը վնասուած է)*... ճառերից և ծափահարութիւններից: Նահանգը ծարաւի էր խաղաղ և հանգիստ կենցաղի, ազգաբնակութիւնը սպասում էր մեզանից կայուն օրէնք, լուրջ իրաւակարգ և վերականգնում այն պետական և հասարակական հաստատութիւնների՝ որոնց ներդաշնակ աշխատանքը ստեղծում է կեանք և պետականութիւն:

Այդ հիմունքներով ես նորից ու նորից շտապեցնում էի կառավարութիւնը՝ տալ երկրին լրիւ դատաստանական կազմ, վերականգնել պօստ-հեռագրական կայանները, ի նկատի առնելով, որ մենք ունէինք այդ նահանգում մեզ բոլոր այդ գործի համար պէտք պարագաները: Միջնորդում էի բանալ Արդահան և Կաղզուան (*փասփաթուղթը վնասուած է)*...ցնորքներով: Եւ ես բացատրում էի, որ հողի մշակութեան ձևերը, կաթնատնտեսական մեքենաները, խոտի մամլումը, ճանապարհների ապահովութիւնը և այն հազարաւոր խնդիրները, որոնց հաւաքածուն ինքը քաղաքացիութիւնն է՝ կազմում են այն առանցքը, ուր բովւում է ժողովրդական կեանքը: Եւ ես թախանձալից միջնորդում էի կառավարութեան առաջ զբաղեցնել երկիրը քաղաքացիական այդ հարցերով՝ հաւաստիացնելով ամէն անգամ, որ այդ միակ ուղին է մեր պետական կուրսում, և այդպէս գնալով՝ մենք կը տանենք երկիրը մեզ հետ, կը տանենք հլու և հպատակ:

Եւ ամէն անգամ ներկայացնելով կառավարութեանը իմ այդ առիթով դիտողութիւններս, և նորից ու նորից պահանջելով բաւարարելու երկրի սպասելիքները՝ ես ամէն անգամ օգտւում էի առիթից, ընդգծելու սուինների հետ, այո՛, բայց (*փասփաթուղթը վնասուած է)*... ...ների վերայ, երբէք...

Ես ամէն անգամ միջնորդում էի՝ տալ ինձ քաղաքացիական միջոցներ երկիրը կառավարելու համար, և նորից ու նորից հաւաստիացնում էի, որ միայն բռունցքով և միայն սուիններով մենք չենք կարող կոփել մեր պետականութիւնը:

Եւ մտքերի ու հասկացողութիւնների այդ մթնոլորտումն էր կարծես առաջ գնում մեր պետական աշխատանքը, և մենք օրեցօր նուաճում էինք նոր դրութիւն և կանգուն դիրք: Բայց շատ բնորոշ և նշանակալից է, որ իրերի և տրամադրութիւնների ընդհանուր ընթացքը տանում, բևեռում էր երկրի ուշադրութիւնը տաճկական սահմանի վերայ, ուր թիւրքահայ զանգուածները օրեցօր մեծանում էին և օրեցօր ուժեղանում: Նոցա յետևում կանգնած էր մեր պետականութիւնը, հասարակական կարծիքը, և հեռաւոր Եւրոպայում հունցուող հայկական դարաւոր դատը: Այդ բարձր տրամադրութիւնը ընկճում և թուլացնում էր երկրի թուրք ազգաբնակութիւնը, իսկ միւս կողմից անդրադառնալով դէպի Տաճկական Հա-

յաստան՝ առաջ էր բերում այնտեղ իրարանցում և յուսահատ դրութիւն: Տաճկաց շատ նօսր զօրամասերը՝ ցրուած երկրի այս ու այն անկիւնում, որպէս և մեր սահմանում, չէին ներկայացնում ոչ մի լուրջ ոյժ: Թուլացած և յօգնած պատերազմից՝ դասալիքութիւնը թիւրք զօրաբանակում աճում էր օրեցօր:

Խախտուել էին արդէն մեծ և փոքր շերտաւորումները, և ընկերվար միտումները երերում էին թիւրք զօրքի հիմքերը: Սահմանագծի վերայ կանգնած տաճկաց զօրամասերի սպաները և զինուորները յարաբերութեան մէջ էին մտնում մեզ հետ, և չէին ծածկում մեզանից, որ իրանք ժամանակաւոր պահապաններ են միայն մեր իրաւացի ժառանգութեան...

Եւ այդ է պատճառը, (*փասփաթուղթը վնասուած է*)... Հայաստանի թիւր... թիւնը, անվստա... ցնցւո..., երբ լսում էր թիւրքահայ գաղթականութեան թմբկահար տրամադրութիւնը, և մեր օրեցօր աճող ոյժը և պետական նշանակութիւնը:

Այդպէս էր օրերի մթնոլորտը՝ երբ տարածուեց ամերիկական գեներալ Հարբօրդի գալու լուրը:

Սեւրի դաշնագիրը՝ մարշալ Վիլսոնի Հայաստանի լայնածաւալ սահմանները, Ամերիկաի մանդատը, և մեր գունաւոր ու գեղածիծաղ սպասելիքները զբաղեցնում էին մամուլը և հասարակական կարծիքը:

Մինիստր նախագահը հաղորդելով ինձ, որ գեներալ Հարբօրդը գալիս է Տաճկաստանից և Կարսի վերայով կանցնէ Երևան՝ պատուիրեց ինձ առանձնակի ընդունելութիւն ցոյց տալ Ամերիկայի պատուիրակին: Նորան դիմաւորելու համար կառավարութիւնը իր կողմից ուղարկել էր զինուորական մինիստր Արարատովին, որի շքախմբումն էին գեներալ Չումարով, գեներալ Օսէփով և գեներալ Փիրումով:

Ամերիկան ուղարկում էր իր պատուիրակին՝ ծանօթանալու այն երկրի ուրուագծի և տրամադրութիւնների հետ, որ յենուելով իր ազգային հնագոյն ձգտումների վերայ՝ այսօր իրագործում էր իր այդ ազգային տենչանքները: Պէտք չը կայ ասելու այստեղ, որ բացի երկրի տարազից և ստատիստիկ, վիճակագրական թուերից՝ գեներալ Հարբօրդը ցանկութիւն ունէր տեսնելու և հայ մինիստրին և հայ գեներալին: Անտարակոյս, նա ցանկանում էր լսել, թէ ի՞նչ է հետաքրքրում հայ մինիստրին, և թէ ինչպէ՞ս էին հրամանատարում իրանց լեզուով հայ զօրավարները: Բայց որպէս ճակատագրական ծաղր՝ ամերիկացուն դիմաւորելու համար ուղարկուած թէ մինիստրը և թէ գեներալները բոլորն էլ ռուսախօսներ էին, զուտ ռուս հոգեբանութեամբ մարդիկ, հայերէն չիմացող և հայութեան հետ ոչ մի առնչութիւն չունեցող...

Գեներալ Հարբօրդի թարգմանը երեք լեզու գիտէր՝ անգլերէն, հայերէն և տաճկերէն: Եւ այդ շատ հասկանալի էր ի հարկէ, չէ՞ որ նա գալիս էր ուսումնասիրելու Թիւրքեան, ապա և Հայաստանը: Բայց հայ մինիստրի և հայ գեներալների հետ Հարբօրդ ստիպուած էր խօսելու երկու թարգմանների միջոցով: Ես

թարգմանում էի մեր գեներալների ասածները ռուսերէնից հայերէն, իսկ Հարբօրդի թարգմանը վերածում էր իմ ասածները անգլերէնի...

Թէ ի՞նչ տպաւորութիւն ստացաւ գեներալ Հարբօրդ հայ մինիստրից և հայ գեներալներից այդ բարդ թարգմանութիւնների առանցքում՝ չը գիտեմ, միայն տարօրինակ թուաց շատերին, որ դիմաւորումից յետոյ, թէ Սարիղամիշում և թէ Կարսում ամերիկացին չը յոգնեցրեց այլևս մեր գեներալներին իր հարցերով հայկական իղձերի մասին... Գեներալ Հարբօրդին Տաճկաստանի սահմանում դիմաւորելու համար մենք մեկնեցինք յատուկ գնացքով, և արդէն մեծ սալօն վագօնում, Կարսից մինչև Սարիղամիշ, հայկական պատուիրակութիւնը ոչ մի առնչութիւն չունէր Հայաստանի Հանրապետութեան սպասելիքների հետ: Գեներալները բացառապէս ռուսերէն կոտրատելով՝ վերսկսեցին իրանց յիշողութիւնները ռուս անցուդարձի մասին, և նոցանից ամէն մէկը մեծ բաւականութեամբ դրուատում էր ռուս իրաւակարգը, ռուս ճաշակը և ռուս մտածելակերպը...

Եւ գեներալ Հարբօրդ՝ դառնութեամբ ասաց ինձ հայերէն, ինձ ուղեկցող իմ պաշտօնեաներից մէկը, ի դէմս ռուսների այդ մեծ երկրպագուների՝ պէտք է ծանօթանայ հայկական առանձնայատուկ գծերի հետ, մեր իղձերին և մեր սպասելիքներին բաւարարութիւն տալու համար:

Սարիղամիշից մենք աֆտոմօբիլներով անցանք դէպի սահմանը, գեներալ Հարբօրդին դիմաւորելու համար: Բայց ճանապարհին յայտնուեց, որ գեներալը մի ձորում կանգնեցրել է իր գնացքը, որ բաղկացած էր 8 ընտիր աֆտոմօբիլներից, և վրաններ բանալով քչքչան ջրերի մօտ՝ էլեկտրական լոյսով լուսաւորում էր այդ գեղեցիկ ձորը, այնտեղ գիշերելու համար: Այդ տեղեկութիւնը ստանալով՝ ես դէպի այդ ձորը ուղարկեցի Կարսի գաւառապետին, իմանալու մանրամասնութիւնները և զեկուցելու գեներալին, որ մենք առաւօտուանից սպասում ենք նորան: Գեներալ Հարբօրդ՝ շնորհակալութիւն անելով գաւառապետին, ասել էր, որ նա գիշերելու է իր իջած տեղում, և առաւօտը կը լինի Սարիղամիշ: Ամերիկացիք կատարում էին իրանց այդ երկար ճանապարհորդութիւնը մեծ յարմարութիւններով, վրաններով, առանձին աֆտոմօբիլ-խոհանոցով, մթերանոցով, էլեկտրական առանձնակի լուսաւորութեամբ, մահճակալներով, աթոռներով և սեղաններով:

Միւս օրը առաւօտուայ ժամի եօթին՝ մենք դարձեալ նոյն տեղումն էինք, երբ երևաց գեներալ Հարբօրդի գնացքը: Ես դեռ մի քանի օր առաջ պատուիրել էի գաւառապետին՝ տեղեկացնելու շրջակայ ազգաբնակութիւնը գեներալի գալու մասին, և մի երկու հարիւր լաւ ձիաւորներ, խայտաճամուկ տարազներով՝ մեզ հետ միասին դիմաւորեցին ամերիկացի գեներալին: Կանգնեցնելով գնացքը՝ գեներալ Հարբօրդ դուրս եկաւ իր աֆտոմօբիլից, ընդունեց հայկական կառավար-ութեան ողջոյնը, և դիտելով տեղացիների ձիարշաւը՝ մեզ հետ միասին անցաւ Սարիղամիշ: Սարիղամիշը մի զօրաքաղաք է, հրաշալի կլիմայով, անտա-

ռապատ լեռներով, բիւրեղանման ջրերով, ջրանցքով և շատ լաւ շինութիւններով:

Ռուսների օրով նա զօրքերի ձմեռային կայանն էր, իսկ ամառը կովկասեան ամբողջ զօրաբանակը այնտեղ էր կատարում իր մարզումները:

Մենք ևս Սարիղամիշը դարձրինք Կարսի նահանգի մեր զօրքերի կենտրոնատեղի, և ամերիկացուն ի ցոյց դրեցինք մեր զօրական կորովը:

Հայկական զօրքը ի դէմս հայ շարքային զինուորի՝ շատ քաջարի և լաւ տեսք ունէր, և գեներալ Հարբօրդ բաւականութեամբ դիտելով մեր զօրահանդէսը՝ ակներև գոհ մնաց իր տեսածից:

Այսուհետև, ընդունելով զինուորական ակումբում առաջարկուած նախաճաշը՝ նա մեզ հետ միասին արտակարգ գնացքով մեկնեց Կարս:

Կարսի ամրութիւնները ողջունեցին Ամերիկայի պատուիրակին բոլոր թնդանօթների որոտով, իսկ երկաթուղու վագզալում, որ զարդարուած էր դրօշակներով, գորգերով և կանաչով, յաղթական կամարով՝ նորան դիմաւորեց պատուաւոր պահակը, հոգևորականութիւնը, քաղաքի ամբողջ ազգաբնակութիւնը, որի անունից քաղաքագլուխը աղուհացով ներկայացրեց գեներալին: Ապա ես ներկայացրեցի նորան բոլոր ազգութիւնների ներկայացուցիչներին, պաշտօնէութիւնը և գեներալ Հարբօրդ աֆտօմօբիլով մեկնեց քաղաք, ուր մեծ դժուարութեամբ ընդունեց բերդապետից առաջարկուած ճաշը, և այն էլ այն պայմանով, որ ճաշը 40 րոպէից աւել չը տևի: Հազիւ թէ պէտք է ասել, որ մեր ասիական մթնոլորտում այդչափ ճշտութիւնը հնարաւոր չէր: Գեներալի թարգմանը զգուշացրել էր մեզ, որ գեներալը բաժակաճառեր չի սիրում, և խնդրում է չը ձգձգել ճաշը: Բայց և այնպէս, ի հարկէ հնարաւոր չեղաւ անհամ ու անմիտ ճառերից խուսափել, որոնց ժամանակ գեներալ Հարբօրդ անհամբեր ցնցւում էր բազկաթոռում, և շարունակ ջղայնոտ ժամացոյցին նայում...

Պէտք է ասել, որ գեներալ Հարբօրդ մեծ անախորժութեամբ ընդունեց զինուորականների ճաշը, և ես հոգուս խորքերում ցաւում էի, որ գեներալները այնչափ տակտ չունեցան իրանց արժանապատուութիւնը ամերիկացիների աչքում չը ձգելու...

Չը գիտեմ, ի՞նչ կարիք կար ստիպելու մարդուն ընդունել մի պատիւ, որից նա այնպէս արհամարհալից հրաժարւում էր... Ինչևիցէ, բայց երբ գեն. Հարբօրդ, մեր գեներալների տաղտկալի թախանձանքներից յետոյ համաձայնուեց միայն 40 րոպէ նոցա հասարակութեան մէջ մնալու՝ ես հարկաւոր համարեցի նորից զգուշացնելու գեներալ Փիրումովին բաժակաճառերի մասին: Պայմանաւորուեցինք գեներալների հետ, որ գեն. Փիրումով, որպէս տանտէր՝ որի զինուորական իշխանութիւնը ճաշկերոյթ էր կազմակերպել, կ՛ողջունի գեն. Հարբօրդին և ուրիշ ոչինչ: Եւ նա այդպէս էլ արեց: Բայց որչա՞փ մեծ եղաւ բոլորի զարմանքը, երբ գեն. Փիրումովի շտաբի պետը, պատերազմից առաջ մեր եկեղեցիներից

մէկում տիրացու, այժմ փոխգնդապետ, բարձրացաւ տեղից և մի անհամ ու անվերջ ատենաբանութիւն սկսեց հայկական հիւրասիրութեան, Հայաստանի, Ամերիկայի և այլ չը գիտեմ ինչ բաների մասին... Շատերը մեզանից իրանց լաւ չէին զգում այդ միջոցում, գեներալ Հարբօրդ իր աթոռի մի կողմից միւսն էր նետւում, մինչև որ աւագ սպաներից մէկը մի կերպ հասկացրեց տիրացու ճառախօսին, որ պէտք է վերջացնել...

Բայց նորանից անմիջապէս յետոյ վեր թռաւ մի այլ կրակոտ ճառախօս, քաղաքագլուխ Նոհրատեան, և ինքն էլ ուզեց փայլել ամերիկացիների առաջ: Այստեղ գեներալ Հարբօրդի համբերութիւնը սպառուեց և նա առանց քաշուելու բարձրացաւ իր տեղից շնորհակալութիւն անելու տանտիրոջը, երբ քաղաքագլուխը ինքնամոռաց խօսում էր...

Այդչափ աննպաստ, անտակտ և ծանձրալի պայմաններում՝ գեներալ Հարբօրդ վայելեց հայկական աղուհացը: Եւ նա ի հարկէ չէր կարող հմայիչ տպաւորութիւն տանել մեր տիրացու ճառախօսի յիշած «հայկական հիւրասիրութեան» մասին...

Արտակարգ գնացքը պատրաստ էր, և ես սպասում էի գեներալի մեկնելուն, որպէսզի հեռագրեմ մինիստր նախագահին: Բայց որչա՜փ մեծ էր մեր զարմանքը՝ երբ միանգամայն անսպասելի կերպով գեներալ Հարբօրդ յայտնեց, որ շարունակում է իր ճանապարհորդութիւնը դարձեալ աֆտօմօբիլով, և մեկնեց Երևան ոչ Աղէքսանդրապօլի վերայով՝ այլ Կաղզուան և Արաքս: Թէ ի՞նչ տպաւորութիւն էր տանում երկրի մասին Ամերիկայի պատուիրակը այդչափ սրընթաց անցնելով Թիւրքիա և Կովկաս՝ դժուար էր ասել, բայց բնազդօրէն մենք տրամադիր էինք կարծելու, որ Ամերիկաի մանդատը մի խաբուսիկ երազ է...

XII
Զեմսկի հաստատութիւնների խնդիրը՝ Կարսի նահանգի համար

Ինչպէս որ բոլոր ժամանակները ունեցել են իրանց քմահաճոյքը՝ այնպէս և մեր օրերը կրում էին ժամանակի հետքերը, նոցա բոլոր դրական և բացասական, լուրջ և զաւեշտ կողմերով:

Երբ մեր պետական հասարակական հրապարակի վերայ կուտակուած էին երկրի հազարւոր խնդիրները՝ որոնք սպասում էին հերթի, աշխատողների և միջոցների՝ մի խումբ մարդիկ անտես առնելով երկրի դէմքը, մեր իրաւական հասկացողութիւնները, մեր անցեալը, պետական արդի հիմունքները և ժամանակի ոգին՝ այստեղ և այնտեղ բարձրացրեցին զեմսկի, համայնական արդէն հնացած մտքերի սկզբունքները: Մեր երկրի գլխին այդ և շահաւետ և անպատասխանատու էքսպերիմենտ կատարելու խնդրում՝ ձուլւում և միախառնւում են երկու տեսակի «սիրողներ»: Մի կողմից մի բուռն ֆանատիկ իդեալիստներ, անտեղ-եակ

հարցի պատմութեանը և մեր երկրի վարչական-հասարակական բնոյթին, իսկ միւս՝ մի մեծ բազմութիւն անգործների, որոնց մեծ ախորժակը հարստանալու և հրապարակում աղմկելու տենչը պահանջում էին «անկախ» և «ինքնորոշուող» դիրք ու պաշտօններ...

Բոլորը ուզում էին մինիստր և նահանգապետ լինել, բայց այդ պաշտօնները ջուխտուկենտ էին, և ոչ բոլորի համար մատչելի: Իջնել դէպի ցած՝ մեր օրերի երիտասարդութիւնը չէր ուզում, իսկ հարստանալու և անպատասխանատու փայլելու տրամադրութիւնը շատ բարձր լինելով՝ պէտք էր մի այլ հրապարակ, միանգամայն անկախ կառավարութիւնից, հասարակութեան աչքից հեռու, բայց ժողովրդական, դեմօկրատիկ դրօշակի տակ՝ յանուն երկրի և յանուն «տանջուած ժողովրդի»...

– Բարձրում տեղ չունեմ,– ասում են մեր թուրքերը,– իսկ ներքև նստել չեմ ուզում... Եւ տրամադրութիւնների այդ մթնոլորտում՝ բացուող ախորժակը առաջ բերեց զեմսկի, համայնական հաստատութիւնների անհրաժեշտութիւնը մեզանում:

Երևանում այդ խմորը շատ շուտ եկաւ ու բարձրացաւ:

Մեր պարլամենտում, ուր գերիշխում էին կրթութիւն և դաստիարակութիւն չունեցողները՝ կարիք չը կար մեծ ոյժով հունցելու այդ խմորը, և զեմսկի հաստատութիւնների անհրաժեշտութիւնը Երևանի նահանգի համար ընդունւում է շատ կարճ ժամանակում:

Ինչ-որ վերաբերւում է Կարսի նահանգին՝ կառավարութիւնը տրամադիր չէր հաշուի չառնել Կարսի նահանգապետի կարծիքը, և ես հարցապնդում ստացայ այդ առիթով ներքին գործոց մինիստրից:

Ես երկար, հիմնաւորուած և պատճառաբանուած զեկուցում ուղարկեցի բոլորին այդչափ հետաքրքրող այդ խնդրի մասին: Զեմսկի համայնական մտքերը՝ գրում էի ես ներքին գործերի մինստրին, բուն ռուսական ծնունդ են, և Ռուսաստանի պատմութեան մէջ գրաւում են մեծ և պատուաւոր տեղ:

Զեմստվոն այն նուիրական կորիզն էր, որի շուրջը խմորուեց և զարգացաւ ռուս առաջադիմական տրամադրութիւնը: Զեմստվոյի զրահի տակ՝ ռուս ինտելեգենցիան մեծ արշաւանք կազմակերպեց իր ժամանակի յետադէմ, ռեակցիոն կառավարութեան դէմ, և զեմստվոն ոչ թէ նպատակ էր՝ այլ միայն մի միջոց, որով ռուս առաջադիմական հասարակութիւնը կռւում էր կառավարչական կապանքների դէմ, և նոր ուղիներ էր հարթում երկրի քաղաքական վերածնութեան համար: Եւ եթէ «դէպի ժողովուրդը» տրամադրութիւնը առաջ եկաւ զեմսկի հովերից՝ և մեծ յամառութեամբ առաջնորդուեց դէպի երկրի խորքերը, ռուս անձնուէր ուսուցչի՝ ջատագով այդ նուիրական գաղափարների իմաստը, այնու-ամենայնիւ մնաց միշտ կապուած ռուս եզակի ինտելիգենցիայի և ռուս առաջադիմական ազնուականութեան հետ:

Իր զարգացման սկզբնական շրջանում՝ զեմստվոն տիրում էր իր ժամանակի մտքերը, և նորա շրջափակումն էին միայն անդրադառնում ռուս ազատագրական երազները: Բայց երբ ժամանակի ծանրութեան տակ աստիճանաբար ընկնում էին ռեակցիոն կապանքները՝ զեմստվոն կորցնում էր իր վաղեմի իմաստը և հմայքը, և մնում էր միայն որպէս մի նուիրական սրբութիւն, որի ինքնամոռաց ամրութիւնների տակ ջախջախուեց և թուլացաւ Ռուսաստանի բռնապետական ռեժիմը:

Եւ զեմստվոն գոյութիւն ունէր շնորհիւ ռուս բազմաթիւ և եզակի ինտելիգենցիայի ու ռուս ազնուականութեան:

Բնորոշելով խնդիրը ռուս հայեցակէտով և ռուսական միտումներով, և անցնելով հարցին մեր իղձերին նորան ծառայեցնելու՝ ես միանգամայն բացառում էի զեմստվոյի ընդօրինակումը: Պետական դեմօկրատիկ ձևը ինքնըստինքեան վերացնում է երկրի լայն զարգացման բոլոր արգելքները, և դորանով բացառում պետութեան առանձին իշխանութիւն հիմնելու միտքը և անհրաժեշտութիւնը:

Միւս կողմից, ո՞ւր է այն ինտելիգենցիան, ո՞ւր է հասարակութեան այն պատրաստուած դասակարգը, որի շուրջը պէտք է խմորուեն զեմսկի հաստատութիւնները:

Եթէ այնպէս պատուաւոր պաշտօնների համար՝ որպէս դատարանի նախագահ, դատարանի անդամ, հարկային տեսուչ, գաւառական բժիշկ և այլն, մենք մարդիկ չենք գտնում՝ և մեր պետական աշխատանքները վերապրում են մեծ ճգնաժամ, երկրի ո՞ր տականքներից դուք պէտք է կազմակերպէք զեմսկի հաստատութիւնները: Վերջապէս Ռուսաստանի շինական ռեֆօրմը՝ որի մթնոլորտում մենք դեռ ապրում ենք, ազատագրական այնպիսի լայն ասպարեզ է, որտեղ դեռ երկար տարիներ մենք կարող կը լինէինք զարգացնելու մեր ինքնագործունէութիւնը և բաւարարելու երկրի օրուայ պահանջները:

Շինական ռեֆօրմը համայնական ինքնավար գործունէութեան այն մեծ ասպարեզն է՝ ուր դուք կարող էք արծարծել Ձեր զեմսկի մտքերը:

Գալով Կարսի նահանգում զեմսկի հաստատութիւններ ստեղծելու մտքին՝ ես այդ ցանկութիւնը ոչ միայն անիրագործելի էի համարում, այլև գտնում էի, որ այդ ցանկութիւնը տանում է մեզ դէպի զաւեշտ, դէպի ծաղր մեր լուրջ պետական տրամադրութիւնների առանցքում:

Կարսի նահանգը Անդրկովկասի ազգագրական խայտաճամուկ վայրերից մէկն է: Այդ երկրում, ուր խաշնարած և երկրագործ գօտիները յաջորդում են մէկը միւսին, ուր կենցաղավարում է տասնեակ ազգութիւն, բազմաթիւ լեզու և աւելի բազմազան բառբառ, ուր մարդիկ միանգամայն քաջազնական շրջանում են ապրում, ուր հարիւրաւոր վերստ տարածութեան վերայ դուք չէք գտնի մի գրագէտ մարդ՝ խօսել այդ երկրում զեմսկի հաստատութիւնների մասին, կը նշանակէ ծաղրել և՛ երկիրը և՛ պետութիւնը: Զեմսկի հաստատութիւններ մտցնել մի

երկրում, որ տակաւին բաժանուած է ազգութիւնների, ցեղերի, թայֆաների և առանձին ցեղապետների ազդեցութեանն ու մրցման շրջանների՝ կը նշանակէ ձգել այդ դիւրաբորբոք և հեշտավառ նահանգը ճարպիկ աֆերիստների ձեռքը, որոնք զեմսկի անուան տակ կը լցնեն իրանց գրպանները, և միանգամայն կը քայքայեն երկիրը, և իրաւակարգը սօդօմ կը դարձնեն:

Եթէ ռուս իշխանութիւնը, Կարսի տիրապետութեան աւելի քան 40 տարուայ ընթացքում, հարկաւոր համարեց կառավարել այդ երկիրը ոչ ընդհանուր քաղաքացիական օրէնքներով, որ կրում էին զինուորական-ժողովրդական վարչութեան անունը, և աստիճանաբար պատուաստել այդ երկրի ձորերում քաղաքացիութիւնը՝ այդ իշխանութիւնը ոչ միամիտ էր և ոչ այնչափ յիմար, ինչպէս որ այդ կարծում են մեր օրերում: Ըմբռնելով երկրի տրամադրութիւնը և հաշուի առնելով ի հարկէ իր պետական միտումները՝ ռուս իշխանութիւնը զինուորական փայլուն տեսք տուեց իր կառավարութեանը այդ նահանգում: Իսկ երկրի իրական պահանջները բաւարարելու համար՝ նա ժողովրդական բնոյթ տուեց իր այդ վարչութեանը, ստեղծելով դատավարութեան յատուկ ձև, ընդունելով և համայնական սկզբունքը երկրի ներքին, տնտեսական կեանքում:

Եւ այսպէս թէ այնպէս, երկրի կառավարչական այդ սիստեմը ունէր ոչ միայն իր իմաստը և նշանակութիւնը՝ այլև իր կշիռը քառասուն տարուայ ընթացքում: Երերել այդ իրաւակարգը միայն օրուայ քմահաճ տարազի համար, և զեմսկի հաստատութիւններ մտցնել միայն ընդօրինակելու ցանկութիւնից դրդուած՝ ես այդ պետական իմաստի գործ չէի հաշւում, և կարծում էի, որ նորութիւնների սիրահարները իրանց այդ էքսպերիմենտները չը պէտք է կատարեն ժողովրդի գլխին՝ և պետական իբր թէ միտումներով: Զեմսկի հաստատութ-իւններ տալով Կարսի նահանգին՝ մենք հրապարակ կը ձգենք դրսից եկող տականքը: Եւ այդ բազմաթիւ թերուս գիշատիչները գերիշխելով այդ մութ և անգրագէտ վայրում՝ խաղալիք կը դարձնեն երկիրը և նորա բազմացեղ ազգաբնակութիւնը: Այդ ինքնավար հաստատութիւնները մի որևէ հեռաւոր Կաղզուանում ու Արդահանում արկածախնդիրների ձեռքը ընկնելով՝ միանգամայն կը ժխտեն կառավարչական որևէ միջամտութիւնը իրանց … հաշիւներում և այդպիսով կը ստեղծեն մի դրութիւն՝ ուր զեմստվոյի պատասխանատու անուան տակ կը վխտան բոլոր սրիկաները և բոլոր հեշտասէրները: Ես գտնում էի, որ իրաւունքների ապակենտրոնացման խնդիրը մեր երկրի համար չի կարող շաբլօնով վճռուել, որ վարչական և տնտեսութեան ֆունկցիաները չեն կարող փարբակուել մի իշխանութեան մէջ, և այդպիսով չի կարելի շփոթել իրաւունքների այդ երկու տարբեր սկզբունքները՝ և սոսկ դօկտրինային զոհել երկիրը, նորա ցաւերն ու պէտքերը:

Այդ հիմունքներով ես բուռն կերպով հրաժարուեցի Կարսի նահանգի համար զեմսկի հաստատութիւններից, խնդրելով, որ այդ օրէնսդիր էքսպերիմենտ

փորձերը կատարեն այլ վայրերում: Եւ բացի Կարսի նահանգից՝ զեմստվոն ստեղծուեց մեր երկրի միւս մասերում:

Թէ ի՞նչ անիշխանութիւն, բաբելօնեան ի՞նչ շփոթ առաջ բերեց այդ ներմուծութիւնը՝ դորա մասին կարծում եմ այսօր երկու կարծիք չը կայ: Դէպի զեմստվօ վազեցին բոլոր թոկից փախածները: Ոստիկանութիւնից և այլ տեղերից բոլոր արտաքսուածները, բոլոր նախկին գրագիրները, անյաջող վարժապետները և բոլորը՝ որոնք իրանց նախկին անպլուան անհամապատասխան էին գտնում իրանց յատուկ ընդունակութիւների համար... Եւ զեմստվոյի առաջադիմական ֆերմայի տակ՝ սկսուեց մեծ թալանը, բոլորը տանում էին, բոլորը շտապում և բոլորը բարձր կոչում՝ ժողովուրդը պէտք է ազատ լինի իր կառավարչական ձևերում, բոլորը ժողովրդին՝ և ամէն բան նորան... Եւ այդ վայնասուն մթնոլորտում բռնկուեց երկրի «կազմակերպուած» թալանը:

Կարսի նահանգին կից վայրերում անիշխանութիւնը աճում էր օրեցօր, և անդրադառնում դէպի Կարսի նահանգը: Մի երկու գաղտնի գրութեամբ ես իրազեկ արեցի ներքին գործերի մինիստրին Աղէքսանդրապօլում տիրող անիշխանութեան մասին, և միջնորդում էի օր առաջ միջոցներ ձեռք առնել սանձահարելու զեմսկի դիմակի տակ թաքնուած մեծ ախորժակը: Եւ հենց այդ օրերում՝ Աղէքսանդրապօլ տեղի ունեցաւ մի այսպիսի դէպք: Կարսից՝ Աղէքսանդրապօլի վերայով Բաթում էին գնում առևտրական գործերով երկու հարուստ անասնապահ թուրքեր, մի ռուս սպայի հետ: Այդ հարուստ թուրքերին յետևում էին դեռ Կարսից, և Աղէքսանդրապօլի վագզալում այդ երեք ճանապարհորդն էլ անյայտանում են:

Ինչպէս յետոյ պարզուեց, Կարսի և Աղէքսանդրապօլի «ընկերները» տեղեկանալով, որ այդ թուրքերը Բաթում են գնում մեծ գումարով՝ հետևում են նոցա և Աղէքսանդրապօլի վագզալում, Աղէքսանդրապօլի իշխանաւորներից մէկի անմիջական մասնակցութեամբ՝ կողոպտում են այդ երեք ճանապարհորդներին էլ և սպաննում: Իւր ժամանակին ես գաղտնի գրութեամբ հաղորդեցի այդ մասին ներքին գործերի մինիստրին, բայց գործը ինչ-ինչ միտումներով՝ ընթացք չը ստացաւ...

Այդչափ խիստ և անողոք էր հայկական արդարադատութիւնը:

Երբ մի երկու ամսից յետոյ ռուս սպայի կինը գալիս է Աղէքսանդրապօլ իր ամուսնուն որոնելու, և դիմում է վագզալում մեծ իշխանութիւն ունեցողին՝ կինը ուշաթափ է լինում նորա սենեակում տեսնելով իր մարդու իրերը... Այդ մութ եղեռնագործութիւնը կապում էին և Կարսի մի գեներալի անուան հետ: Սպայի այրին դիմում է դատաստանական քննիչին՝ Աղէքսանդրապօլի պրօկուրորի օգնականին, բարձրանում է մեծ իրարանցում, բայց և այնպէս այդ մեծ ոճիրը ոչ մի ընթացք չի ստանում, որովհետև զեմստվոն ոստիկանութեանն էր, ոստիկանութիւնն էլ զեմստվոյինը: Եւ ո՞վ պէտք է պարզէր գործը՝ երբ բոլորը կապուած էին

իրար հետ, ոստիկանութիւնը գիտէր «ինքնավար» մարմինների գաղտնիքները, իսկ վերջինս ոստիկանութեան և երկաթուղու միլիցիայի մութ գործերը, և այդ «հաւասար» իրաւունքների մթնոլորտում՝ բոլորն «ընկերներ» էին, և բոլորը «ժողովրդի» համար ցաւող և «նորա համար գործող»... Այդ կեղտոտ մթնոլորտում, ուր պաշտօնական զրահի տակ այդ «ընկերները» զբաղուած էին միայն թալանով, սպաննութիւններով և միայն բազմատեսակ զեղծումներով ու ինտրիգներով՝ խօսք չէր կարող լինել ի հարկէ իրաւակարգի մասին: «Ինքնավար» զեմստվոն չը բաւականացաւ երկրի տնտեսական և կրթական հոգսերով՝ նա ձգտեց իշխելու և իրան ենթարկեց և ադմինիստրացիան:

Եւ համայնական իմաստի այդ երկու մեծ հատուածները մէկը միւսին լրացնելով՝ հնձում էին և աջ և ձախ, դիմակաւորուելով «երկրի» շահերով և «ժողովրդի» ցաւերով...

XIII
Կարսի քաղաքային վարչութիւնը

Երբ Կարսի բնակչութիւնը սկսեց վերադառնալ քաղաք՝ ես հարկաւոր համարեցի արձակել բժիշկ Քալանթարեանին Կարսի քաղաքագլխի ժամանակաւոր պաշտօնավարութիւնից, և քաղաքագլուխ նշանակեցի մինչ օրինաւոր ընտրութ-իւնները՝ մի Կարսեցի, Նոհրատեան ազգանունով: Նոհրատեան իւր անցեալում եղել է ծխական ուսումնարանի ուսուցիչ, իսկ վերջի տարիներում նա նաւթի խանութ ունէր Կարսում, և դաշնակցութեան պարագլուխն էր Կարսում: Հաշուի առնելով այս վերջին հանգամանքը, և նկատի ունենալով, որ այդ պարոնը մեծաչափ ցանկութիւն ունէր հրապարակում դեր խաղալու և փայլելու, ի նկատի ունենալով գլխաւորապէս և այն, որ առաջիկայ «ընտրութիւնների» ժամանակ այսպէս թէ այնպէս Նոհրատեան՝ որպէս (*փասպաթուղթը վնասուած է)*... թեկնածու, քաղաքագլուխ «կ՛ընտրուի», ես քաղաքական տակտ համարեցի ինքս նորան այդ պաշտօնը առաջարկելու, և դորանով փակելու ինտրիգան խնդիրը:

Ես յոյս ունէի մի կողմից, որ պարոնը գուցէ և պիտանացու լինի քաղաքային գործերում, և միւս կողմից կարծում էի, որ այդպէս մեծ պաշտօն ստանձնելով՝ Նոհրատեան կը դադարէ հասարակական մթնոլորտը պղտորելու, չէ՞ որ այդ թուլութիւնը ունեն բոլոր կուսակցութիւնների շատ անդամները...

Բայց ես սխալւում էի:

Կարսը դեռ տակաւին չէր ստացել իր առաջուայ տեսքը: Ազգաբնակութիւնը ցրուած էր Ռուսաստան, Հիւսիսային Կովկաս, Թիֆլիզ՝ և հայրենիք վերադառնալու ձգտումը բնազդօրէն կարծես թէ դանդաղում էր...

Այդ պայմաններում՝ քաղաքային իրաւասուների ընտրութիւնների մասին մտածել դեռ շուտ էր: Բայց այնուամենայնիւ մի բուռն մարդիկ՝ որոնք հասարակական շահերի վարագոյրի տակ միշտ յաջող տանում են իրանց անձնական գործերը, այստեղ և այնտեղ սկսեցին հունցել քաղաքային ընտրութիւնների խնդիրը:

Օրուայ հրապարակը միշտ տիրել են ճարպիկները՝ որոնք իրանց գոռումգոչումներով, ի հաշիւ ի հարկէ «աշխատաւոր մասսաների»՝ իրանց հետևիցն են տարել էքսպանսիւ ամբոխը: Եւ այդ առանցքում դժուար է երբեմն լուրջ խնդիրների մասին խօսել և դժուար է դիմադրել հոսանքին, որ գալիս է յանուն ժողովրդի և յանուն ազատագրական գաղափարների...

Բայց Կարսում ոչ ընտրող կար դեռ՝ ոչ էլ ընտրուող: Ինտելիգենցիան խուսափում էր հայրենի ոչ բուրալից ծխից, և հրապարակը մնում էր պատահական մարդկանց, բախտախնդիրներին՝ որոնք անպատասխանատու փորձեր էին անում երկրի պետական և հասարակական ասպարէզներում:

Այդ բոլորը ես գիտէի ի հարկէ, և գիտէի գուցէ աւելի լաւ քան ով և իցէ, բայց և այնպէս ես պէտք է տեղի տայի հրապարակի պահանջին, և ինքս ինքնաբերաբար նշանակեցի Կարսի քաղաքային իրաւասուների ընտրութիւնը:

Պէտք է ասեմ այստեղ, որ «հասարակական գործիչները», որոնք շահագրգրուած էին այդ ընտրութիւններով՝ պաշտօններով և այլ հազար ու մի նիւթ-ական միտումներով, հունցում էին այդ ընտրութիւնները շտապեցնելու խնդիրը և Երևանում: Եւ կառավարութիւնը, որ իր հերթին ի հարկէ քաշում էր այդ «-ազդեցութիւնների լուծը»՝ ինձ մի երկու անգամ այդ առիթով հարցապնդում արեց...

Եւ ես ակամայ նշանակեցի այդ «ընտրութիւնները», որպէսզի խուսափեմ «-հակայեղափոխական» մեղադրութիւնից...

Բայց քաղաքում ոչ ձայնաւորների կօնտինգետ կար, և ոչ քաղաքագլխի թեկնածու: Դաշնակցութիւնը ի դէմս նորա Կարսի պարագլխի՝ առաջ քաշեց վերջինի թեկնածութիւնը, և Նոհրատեան Կարսի քաղաքագլուխ «ընտրուեց»:

Բայց դեռ ընտրութիւններից առաջ պարզուեց, որ Կարսի քաղաքագլխի մեծ, պատասխանատու և պատուաւոր պաշտօնը չի բաւարարում արդի քաղաքագլուխ Նոհրատեանի պահանջներին ու ճաշակին: Նա իրան կոչուած էր զգում աւելի բարձր թռիչքների համար, և շատ շուտ հանդիսադրեց իր այդ մեծ ախորժակը: Նա տեսնում էր, որ Կարսի նահանգում մեր պետական գործը շատ է յաջող, հարթ է ընթանում, որ նահանգապետը կառավարութեան գերագոյն ներկայեացուցիչն է նահանգում, որ բոլորը նորան են դիմում: Եւ նախկին խանութպանը կարծելով, որ երկիր կառավարելը մի հաճոյք է միայն և ոչ պարտաւորութիւն՝ բռնուեց մեծ խանդով նահանգապետ դառնալու: «Ընկերների» միջո-

ցով, այստեղ ու այնտեղ, նա եռանդալից սկսեց արծարծել, որ Կարսի պատասխանատու նահանգապետը պէտք է «անպայման կուսակցական» լինի...

Վարժապետը հաշուի չառաւ երևի, որ նոյն դաշնակցութեան կուսակցութիւնը առաջ քաշեց արդի անկուսակցական նահանգապետի թեկնածութիւնը, և որ նորա հաւանութեամբ այդ նահանգապետը առաջ է տանում նահանգում պետական քաղաքականութիւնը և պետական գործը:

Քաղաքագլուխը չը գիտէր, որ թէ մինիստր նախագահ Խատիսեանից և թէ նորա յաջորդ Համօ Յովհանջանեանից այդ նահանգապետը մի քանի գրաւոր հաւաստիացում ունէր, որ կառավարութիւնը միանգամայն հաւանութիւն է տալիս նորա կառավարչական գործելակերպին, և շատ գոհ է նորա աշխատանքներից:

Նա չը գիտէր նոյնպէս, որ նոյն կարծիքը ունէին նահանգապետի մասին և պարլամենտի առաջաւոր պատգամաւորները: Տարուած իր բուռն ցանկութիւններով նահանգապետ լինելու՝ քաղաքագլուխը փորձեց այդ նպատակով մի քանի անգամ Երևան գնալու, բայց այնտեղ նորան հասկացրին, որ նորա մեծ ախորժակը համապատասխան չէ նորա փոքր կարողութեանը... Եւ նա ընդմիշտ թողեց փայփայելու իրան Կարսի նահանգապետ տեսնելու քաղցր երազը... Բայց իրաւունքի, իշխանութեան կորովը միշտ կազմել է այն առանցքը՝ ուր ծնուել և խորտակուել են մարդկանց փառասիրական ձգտումները: Իշխելու և հրամանատարելու ծարաւը հրապարակ են հանել բոլոր ներելի և աններելի միջոցները, և այդ բոլոր մեծ և փոքր ելևէջների վերայով միշտ բարձրացել և իջել է մարդկանց եսը, և նոցա անհագ փառասիրական տենչը: Թողնելով Կարսի նահանգապետ դառնալու միտքը՝ քաղաքագլուխը մեծ եռանդով սկսեց ձգտել ձեռք բերելու աւելի լայն վարչական իրաւունքներ, և դեռ քաղաքի հազար ու մի պէտքերին ձեռք չը զարկած՝ նա ձգտեց իրան ենթարկելու քաղաքի ոստիկանութիւնը:

Եւ այդ ուղղութեամբ աշխատողը նա չէր միայն:

Բոլոր գիւղերը՝ Դիլիջանը, Ղարաքիլիսան, Աշտարակը, Ղամարլուն, Իգդիրը, էլ չեմ ասում փոքրիկ քաղաքների մասին՝ Աղէքսանդրապօլը, Նոր Բայեազէտը՝ բռնուած էին «ազատագրուելու» մեծ տենչով:

Պրիստաւի նախկին գրագիրները, ծխական ուսումնարանի վարժապետը, դպրոցներից արձակուած ծոյլ աշակերտները և հեշտասէրների խայտաճամուկ բազմութիւնը՝ պաշարել էր հասարակական սեղանը, և քաղաքային զեմսկի հաստատութիւնների շուրջը վխտում էին մեծ ախորժակներ և անպատասխանատու գոչումներ:

Պարլամենտը՝ դեռ տակաւին երերուն օրէնսդիր հաստատութիւնը, չունէր իր կամքը և իր պետական դէմքը: Նա դեռ չէր առաջնորդում հասարակական կարծիքը, նա գնում էր իր ժամանակի հոսանքի յետևից, և եռացող կեանքի այդ

հախուռն ալիքները, ուժգին մեր սաղր պետական ափերում՝ լափեցին և պարլամենտը և մեր պետականութիւնը...

Եւ այդ պարլամենտը՝ որին պակասում էր գիտութիւնը, կեանքի դիտողութիւնները, և նոցա ծալքերում պետական տակտը և լրջութիւնը՝ չը կարողացաւ արտայայտել պետական տրամադրութիւն և անկախ գաղափարներ: Գոյութեան կռւում՝ նա միայն ձայնակցեց դատարկաբան հրապարակին, և անտես առնելով հայկական կաբինետի լուրջ անդամների կարծիքը նոյնիսկ՝ պետական և հասարակական հաստատութիւնները խաղալիք դարձրեց աւանտիւրիստների ձեռքում:

Մի շարք փոթորկալից նիստերում՝ ուր կառավարութեան ձեռնհաս և ոչ դեմագօգ անդամները պահանջում էին թողնել օրէնսդիր անպատասխանատու էքսպերիմենտները, պարլամենտը տհաս, բայց մեծամասնութիւն կազմող ձայների առաւելութեամբ՝ ենթարկեց երկրի ադմինիստրացիան, ոստիկանութիւնը այդ աշտարակներին, դիլիջաններին և ղամարլուներին, և արմատում երերեց երկրի իրաւակարգը, որ և դղրդալից բլեց Կարսի անկումից յետոյ:

Եւ Կարսի քաղաքագլուխը, որ տենչում էր իրեն շրջապատուած տեսնել ոստիկանապետով, պրիստաւներով և շքով՝ մի քանի անգամ ուխտագնացութիւն կատարեց Երևան, ուր պատշաճ «ընկերական շրջաններում» եռանդալից արծարծում էր «ժողովրդացնել» երկրի իշխանութիւնը...

Իշխանութիւնը ժողովրդի համար՝ անվիճելի ի հարկէ լօզունգի տակ, այդ նախկին գրագիրները, վարժապետները և բոլոր թոկից փախածները անվրէպ հունցում էին իրանց ճաշակի խմորը, և քաղաքական մթնոլորտի տարուբերումներից օգտուելով՝ գրոհ էին գործում երերուն և անվստահ պարլամենտի վերայ: Ի զուր էին ներքին գործերի մինիստրը և կառավարութեան բանիմաց անդամները բողոքում այդ առիթով: Ի զուր էին նոքա զգուշացնում պարլամենտը՝ չը խաղալ դեմագոգ, խաբուսիկ կրակի հետ, Աշտարակի և Դիլիջանի նախկին գրագիրները շարունակում էին իրանց էշը քշել, և պարլամենտի պատասխանատու անուան տակ՝ թխում էին թէժալից զաւեշտ և ձրի օրէնքներ...

Այդ ժամանակամիջոցում ես ներկայեացրել էի քրեական ոստիկանութիւն կազմակերպելու նախագիծը: Այդ պրոեկտն էլ ի հարկէ պէտք է ստանար օրէնսդիր մարմնի հաւանութիւնը: Այդ հաւանութիւնը ստացուեց, բայց և քրէական միլիցեան ինչպէս որ քաղաքի ոստիկանութիւնը՝ «պարլամենտը» ի յարգանս Կարսի քաղաքագլխի ջերմեռանդ ուխտագնացութեան Երևան, անջատեց նահանգապետի իրաւասութիւնից և ենթարկեց դեռ մօտիկ անցեալում նաֆթի խանութպանին...

Ես չէի ուզում հաւատալ, որ մեր օրերի անորոշ, անկայուն, կազմակերպչական և անցող ժամանակամիջոցում՝ կարող են տեղի ունենալ իրաւունքի ապակենտրոնացման և համայնական անպատասխանատու, եթէ չասենք՝ զաւեշտ

փորձեր: Քաղաքական, ներքին և արտաքին բոլոր պայմանները գալիս էին ասելու, որ մեզ պէտք է լուրջ և խիստ իշխանութիւն, և որ երկիրը վերապրում է դեռ առանձնակի մի շրջան, որ պահանջում է իրաւունքի կենտրոնացում:

Երևանից «պարլամենտական ընկերները» հեռագրել և շնորհաւորել էին իրանց քաղաքագլխի նոր և մեծ իրաւունքները, իսկ երբ այդ զաւեշտ օրէնքը ստացուեց Կարսում՝ ես մի երկար և պատճառաբանուած զեկուցում ուղարկեցի այդ առիթով ներքին գործերի մինիստրին: Ես խնդրում էի պարզել նահանգապետի փափուկ այդ միջանցքում դրութիւնը՝ և բացատրել, թէ ի՞նչ պարտաւորութիւններ և պատասխանատուութիւն ունի նահանգապետը, որ զրկւում է միջոցներից, գործօն ապարատից և հետևապէս իրաւունքներից:

Բայց զուգընթաց դորա հետ բոլոր տեղերում՝ բացի Կարսի նահանգից, սունկի պես բուսնում էին զեմսկի հաստատութիւնները: Դէպի այդ «ինքնորոշուող» մարմինները՝ որպէս գիշերային թիթեռ, կրակի վերայ թափուեցին մեր օրերի բազմաթիւ սիրողները: Նրանք «հարուածային» կարգով կազմակերպեցին իրանց հարկաւոր հաստատութիւնները, և կառավարութիւնից շարունակ և շարունակ վարկեր պահանջելով՝ միանգամայն անտես առան առանձին մինիստրութիւնները: Նոքա «համայնօրէն» սպառում էին այդ առատ վարկերը ու երկրի տնտեսութ-իւնը, և իրանց ինքնիշխող ճանաչելով՝ չէին ենթարկւում կառավարութեանը:

Եւ այդպիսով մինիստրները դարձան մինիստրներ առանց պօրտֆելի, իսկ «զեմսկի» աշխատանքների այդ խայտաճամուկ վարպետ-մասնագէտները զրահաւորուած «ինքնորոշման» անվճռաբեկ լօզունգով՝ հնձում էին և աջ և ձախ, հնձում էին շտապ, նախազգալով երևի, որ ամէն բան ունի իր վախճանը, և պէտք է օգտուել հանգամանքներից՝ որչափ որ այդ հնարաւոր է և որքան կարելի...

Երևանում ոստիկանութիւնը չէր ուզում ճանաչել իր շեֆին, ներքին գործերի մինիստրին, առարկելով, որ նա զեմստվոյին է ենթարկւում: Իսկ զեմստվոն և ոստիկանութիւնը բաժանելով իրար մէջ ազդեցութիւնների շրջանները՝ հնձում էին ամէն մէկը իրան «յատկացուած» «զօնայում», և մէկը միւսին չէր խանգարում... Երբ յետոյ ես տեսնուեցի ներքին գործերի թէ նախկին և թէ այդ օրերի մինիստրի հետ՝ երկուսն էլ դառնութեամբ ասում էին այդ antant cordial-ի մասին, խրուել ենք և սանձը դուրս է եկել մեր ձեռքից... Իսկ հիմա, ասում էին մինիստրները՝ յանձնարարել ենք սենատի նախագահին մի յանձնաժողով կազմի, և վերլուծի այդ իրաւունքների, պարտաւորութիւնների և պատասխանատուութեան մեծ հանգոյցը, և մի կերպ վերականգնի կառավարչական համարումը երկրում... Թէ ի՞նչ արեցին այդ առիթով մեր համակրելի իրաւաբանութեան կանդիդատները՝ չը գիտեմ, գիտեմ միայն, որ մի փոքր անց այդ սենատօրներն էլ աճապարեցին դէպի նաւահանգիստ՝ թողնելով օրէնսդիր հարցերում փորձուած վարժապետնե-

ին փրկել պետական ջարդուած առագաստները, և անյուսալի խորասուզուող պետական խարիսխը...

Շատ հետաքրքիր է, որ մեր համակրելի, ընդունակ և անկեղծ գործողներից մէկը՝ պարլամենտի անդամ Սահակ Թորոսեան, որ խաչւում էր պարլամենտում յանուն զեմստվոյի և յանուն «ինքնավար» մարմինների՝ նախագիծը օրէնք դառնալուց յետոյ երես դարձրեց այդ «աֆտօնօմ» միաւորներից...

Յետոյ, Ռուբեն փաշայի միահեծան վեցամսեակում կատարելով ներքին գործերի մինիստրի օգնականի պաշտօնը, և ընդհարուելով այդ քմահաճ փաշայի հետ՝ Թորոսեան տեսնում էր արդէն մրրկալից ալիքները և խորտակուող յոյսերը, և բարձրաձայն մեղայ կանչելով իր գաղափարական սխալների համար՝ նա ուժգին դարձ և յետ էր թմբկահարում... Բայց վիճակը արդէն ձգուած էր, և մեր իդեալիստ ժողովրդասէրին վիճակւում էր ականատես լինելու, թէ ինչպէ՞ս թէօրիան երբեմն տրամագծօրեն բաժանւում է գործնականից...

Դառնալով այդ օրէնքի կեանքի մէջ կիրառման հարցին՝ ես պէտք է ասեմ, որ ես վճռեցի հնարաւորին չափ անտես առնել պարլամենտի այդ որոշումը:

Ես շարունակում էի խստօրէն իմ պահանջները դէպի ոստիկանութիւնը, պահանջում էի ի կատար ածելու իմ ցուցմունքները, և խեղճ ոստիկանապետը, որ մի բարեկիրթ մարդ էր՝ մնացել էր երկու կրակի մէջ: Նա չը գիտէր, թէ որտե՞ղ են սրբերը, խստապահանջ նահանգապետը՝ թէ իր ընկեր քաղաքագլուխը...

Պարզ էր ի հարկէ, որ իրերի և հասկացողութիւնների այդ մթնոլորտում մենք ոչ մի յուսալից սպասելիքներ չունէինք, բայց alea iacta est և մենք ստիպուած էինք թիավարելու այդ մրրկալից և յուսահատ առանցքում... Կարսի նահանգում զեմստվօ մտցնելու մասին իմ տուած եզրակացութեան առիթով՝ ես երկար զրոյց ունեցայ այն ժամանակուայ ներքին գործերի մինիստրի օգնական Սարգիս Մանասեանի հետ:

Չառարկելով ինձ, որ զեմստվոն անընդունելի է Կարսի նահանգի համար՝ Մանասեան մի շատ հետաքրքիր բացատրութիւն տուեց, թէ ի՞նչ միտումներից ստիպուած կառավարութիւնը համաձայնուեց այդ ինքնավար հաստատութիւնները կազմակերպել մեր երկրի միւս մասերում:

Մենք շատ լաւ հասկանում ենք,– ասաց դաշնակցութեան (*փասպաթուղթը վնասուած է)*... հետեւեալ քուրմերից մէկը,– Ձեր այդ առիթով տուած բոլոր բացատրութիւնները և միանգամայն համաձայն ենք, որ զեմստվոն, պատրաստ օտար քաղաքական և վարչական կլիմայի՝ խորթ և անընդունելի է մեր երկնքի տակ: Բայց,– շարունակեց Մանասեան,– մեր պետական ձախորդ շրջապատի մէջ՝ մենք ստիպուած ենք հաշուի առնել հրապարակի շատ անգամ և անիրաւացի պահանջները, և քաղաքական միտումներով բաւարարութիւն տալու նոցա...

Եւ մեր տուած այդ ակամայ մեծ զոհերի թուին մենք պէտք է կցենք և զեմստվոն Երևանի, Աղէքսանդրապօլի և միւս շրջաններում:

Յեղափոխութիւնը գոգռեց շատերի ախորժակը՝ և բազմաթիւ մարդիկ,– ասաց Մանասեան,– հրապարակ ընկան որպէս «գործիչներ» և երկրի համար «-ցաւողներ»:

Եւ դոցա թւում ոչ միայն նոքա էին, օր առաջ շտապել էին մկրտուելու (*փաստաթուղթը վնասուած է)*... նայիրութեան աւազանում, այլև զանազան «էս-էր»- «-էմիսէրներ» և առհասարակ «կուսակցական» դիմակի տակ վխտող անյայտ և կասկածելի տիպեր...

Այդ բոլոր պոռոտախօս գոչումներին և օդը յեղափոխական բռունցքներով անպատասխանատու սասանեցնող «ընկերներին»՝ մենք չէինք կարող ի հարկէ տեղ տալ պետական հիմնարկութիւններում: Իսկ զբաղեցնել նոցա պէտք էր, պէտք էր մի բան ձգել նոցա բերանը՝ և այդպիսով կտրել նոցա «յեղափոխական» ձայնը... Եւ մենք ստիպուած էինք,– վերջացրեց Մանասեան,– ստեղծել այդ «ինքնավար հաստատութիւնը»՝ որպէսզի մի զբաղմունք տանք այդ անգործ, անհանգիստ և միշտ խօսող ու աղմկող մարդկանց...

Այդ մթնոլորտումն էր յղացել հայկական զեմստվոն՝ մեր կառավարութեան ականաւոր մարդկանց մէկի բացատրութիւններով: Եւ այդ փաստը նոյնքան ցաւալի է, որքան և իրաւացի:

Վարչական միտումները միշտ քաղաքական են եղել իրանց բնոյթում, և դորանումն է նոցա պետական իմաստը: Բայց խեղճ Մանասեան՝ որին վիճակուած չէր տեսնել այդ «ինքնավար» հաստատութիւնների լքումը, և այն զարհուրելի անիշխանութիւնը, որ ստեղծուեց նոցա օրով երկրում, չէր կարող երազել անգամ, որ այդ զեմստվոն այդչափ չարագուշակ է նորա փայփայած ազգային իղձերի համար:

Կառավարութեան ներկայացուցչի այդ բացատրութիւնները շատ հետաքրքիր էին: Կարելի էր առարկել նոցա դէմ, կարելի էր զարմանալ անգամ, որ իր քաղաքական միտումներին կառավարութիւնը այդչափ մեծ զոհ է տալիս, բայց հաշուի առնելով օրերի մթնոլորտը՝ մենք պէտք է ասենք, որ կառավարութեան այդ գործելակերպը ունէր և իր իմաստը:

Ես ուզում եմ օգտուել առիթից և մի քանի խօսք ասել Մանասեանի մասին, բնորոշելով նորան թէ որպէս երդուեալ դաշնակցականի և թէ որպէս հասարակական պետական գործչի:

Սարգիս Մանասեանի հետ ես առաջի անգամ ծանօթացայ 19 թուին, Աղէքսանդրապօլի վագզալում, երբ Կարսի հայկական նահանգապետ նշանակուելով՝ գնում էի իմ պաշտօնատեղին: Որպէս ներքին գործոց մինիստրի օգնական՝ Մանասեան ուղեկցում էր մինիստր նախագահ Ալ. Խատիսեանին, որ եկել էր Աղէքսանդրապօլ Կարսի նահանգապետին նախնական հրահանգներ տալու համար:

Ես նախապաշարուած էի Մանասեանի դէմ նորա անուան շուրջը կուտակուած բազմաթիւ պատմուածքների պատճառով, և բնականաբար շատ զգոյշ էի և շատ շրջահայեաց: Բայց իմ ստացած տպաւորութիւններս հենց առաջի օրուանից գալիս էին ասելու, թէ որչա՜փ զգոյշ պէտք է վերաբերուել մարդկանց լեզուներին, բաժանելով մասնաւորը ընդհանուրից:

Թէ ո՞վ էր Մանասեան իր մասնաւոր կեանքում, և իր կուսակցական անցեալում՝ չը գիտեմ, ինձ զբաղեցնում էր այդ բոպէին մինիստրի օգնական Մանասեանը և ես չէի կարող չը տեսնել իմ առաջ խելօք, (*փաստաթուղթը վնասուած է)*... մի մարդ, որ իր հոգա... ...ումներով ուզում էր հարթել ... ընթացքի առաջի ուղիները: Այնուհետև ես ամիսների ընթացքում թէ առիթ եմ ունեցել տեսնուելու Մանասեանի հետ՝ նա մի 2 անգամ եկել էր ինձ մօտ Կարս, և թէ նորա հետ պաշտօնական գրագրութեան մէջ եմ եղել: Ես մեծ բաւականութեամբ դիտում էի, թէ ինչպէս նախկին ուսուցիչը համակերպուել է պետական հասկացողութիւնների շրջափակում, և ըմբռնում վարչական խնդիրների իմաստը: Դորա հետ ես տեսնում էի՝ ինչպէս այդ մոլեռանդ դաշնակցականը իր յետևումն էր թողնում իր սխոլաստիկ ընկերներին: Եւ ես շատ անգամ մտածել եմ, որ Մանասեան կարող էր հայկական Ֆուշեն լինել՝ եթէ միայն աւելի կրթուած և աւելի աշխարհ տեսած մարդ լինէր...

Բայց և տարբերուելով իր խելքով իր սխոլաստիկ ընկերներից՝ Մանասեան չէր այրում այդ առանցքում իր վաղեմի առագաստները: Ներողամիտ և բարեկամալից դէպի շարքային դաշնակցականը՝ նա չէր առարկում այդ տափակ հաւատացողներին: Նա անջատ նոցանից՝ տանում էր պետական գիծը, և լծորդաբար այն մարդկանց հետ՝ որոնք ըմբռնում էին կեանքի զարկերակը և գնում այդ շօշափումների յետևից:

Չեմ ծածկի այստեղ, որ շատերը նոյնիսկ նորա կուսակիցներից՝ զգուշացնում էին ինձ նորա ինտրիգան տրամադրութիւնների մասին, բայց և այնպէս *(տեքստը խզուած է)*...

ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 1, թթ. 1-513, բնագիր, ձեռագիր:

DOC №2

Յուշեր՝ Կարսի կառավարչական մարմինների անտարբերութեան և դրանցում տիրող անիշխանութեան մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Եւ մենք պէտք է նկատենք այստեղ, որ նահանգը անդադար այցելողների խոշորագոյն մասը կազմում էր այն բազմութիւնը, որ իրան իրաւացի թէ անիրաւունք՝ «դաշնակցական» էր անուանում:***
- ***Պէտք է ասել այստեղ, որ նահանգը գաստրոլների և թամաշի եկող «ընկերների» այդ բազմաթիւ միտումները ծգում էին միայն իշխող կառավարութեան համարումը և պատիւը երկրի առաջ, և երերում նահանգում իրաւակարգի մատաղ ծիլերը:***
- ***Շատ բնական է ի հարկէ, որ դաշնակցութիւնը կառավարութեան գլուխ անցնելով՝ պէտք է տանէր իր պետական վարքագիծը, բայց այդ դեռ չէր նշանակում, որ ամէն մի դաշնակցական, որ իր անցեալում տիրացու կամ սափրիչ էր՝ իրաւունք ունի խառնուելու պետական գործերի ընթացքին, և տոն տալու նորան:***
- ***Եւ այստեղ խախտւում է երկրի հաւատը դէպի պետական իմաստը, այստեղ առաջ է գալիս իշխանութեան գաղափարի քայքայումը:***
- ***Եւ այդ մթնոլորտում չէր կարող զարգանալ ու ամրանալ կառավարական հմայքը ու համարումը...***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

... Հայութեան բանիմաց և դրական տարրը բաւականանում էր միայն պլատոնիկ վերաբերմունքով դէպի Կարսի նահանգը: Նա շատ հետաքրքրւում էր Կարսի նահանգով, ուշադիր կարդում էր լրագիրներում այդ վայրի մասին պատահական թղթակցութիւնները, շոյում էր իր ապագայ միտումները և անելիքները այդ նահանգում, բայց առ այժմ այդքան, և սպասում... Իսկ նահանգը անցուդարձ անելու և աղմկելու գալիս էին գլխաւորապէս դէպի գործ առհասարակ շատ թեթև վերաբերմունք ունեցողները, այն անհոգ և թեթևընթաց բազմութիւնը՝ որի համար ամէն տեղ հարսանիք է, և ամէն տեղ թամաշայ: Եւ մենք պէտք է նկատենք այստեղ, որ նահանգ անդադար այցելողների խոշորագոյն մասը կազմում էր այն բազմութիւնը, որ իրան իրաւացի թէ անիրաւունք՝ «դաշնակցական» էր անուանում:

Եթէ այդ կուսակցական, գաղափարական մասը տիրել էր երկրի իշխանութիւնը՝ դաշնակցութեան զրահի տակ տեղաւորուած գիշատիչ և թալանչի մեծ բազմութիւնն էլ այսօր գալիս *[էր]* հպարտալից ասելու, մենք ևս հերկել ենք... Այդ անկիրթ և կիսագրագէտ «ընկերները»՝ խօսում էին միշտ շատ հեղինակալից և իշխանալից, ու հաւակնութիւն ունէին երկրի իշխանութիւնից յայտնի ուշադրութիւն և մեծաշնորհ տեղ պահանջելու:

Շատ ծիծաղելի էին ի հարկէ այդ բազմաթիւ վարժապետները, տիրացուները և գործակատարները՝ բայց այսօր նոքա բոլորն էլ «ընկերներ էին», իշխող կուսակցութեան «համահաւասար անդամներ», և բոլորովին չէին ուզում հասկանալ, որ «դաշնակցական» անպատասխանատու եարլիկը նոցա իրաւունք չի տալիս դեռ միջամտելու հրապարակի բոլոր գործերին, թելադրելու և պահանջներ անելու: Պէտք է ասել այստեղ, որ նահանգը գաստրոլների և թամաշի եկող «ընկերների» այդ բազմաթիւ միտումները՝ ձգում էին միայն իշխող կառավարութեան համարումը և պատիւը երկրի առաջ, և երերում նահանգում իրաւակարգի մատաղ ծիլերը:

Որչափ իրաւասու որ չը լինէր այդ պարոնների ախորժակը հրապարակում ձևանալու և մի բան անելու՝ այնուամենայնիւ տեղական իշխանութիւնը որոշ չափով ընկճում էր այդ մթնոլորտում, և ակամայից յարմարւում և զիջում...

Նահանգի պաշտօնեաներից շատերը շատ լաւ հասկանում էին ի հարկէ, որ «դաշնակցական» տիտղոսը դեռ իրաւունք չէ տալիս տեղից վեր կենողին թելադրելու և հրամայելու: Բայց այնուամենայնիւ պաշտօնէութիւնը չէր կարող չը տեսնել, որ այդ ամէն մի տեղից վեր կենող*[ի]* յետևում կանգնած է «պատասխանատու մի ընկեր», և կտրուկ լեզուն իր կողմից կարող է անախորժ բարդ-ութիւններ առաջ բերել... Իսկ կառավարութեան գլուխ անցած մարդիկ՝ բարձիթողի անելով կուսակցական երբեմն դիսցիպլինար սանձերը, միանգամայն անուշադիր էին, թէ ի՞նչ մեծ խառնիճաղանչ թանձրութիւն է թագնւում դաշնակցութեան դրօշակի տակ, և թէ ի՞նչ է անում այդ գաղափարազուրկ և դոնկիխոտ տարրը գաւառներում: Այդ պարազիտները շարունակ գալիս էին Կարսի նահանգը և գնում, շարունակ ինչ որ հարցուփորձ անում, շարունակ ինչ որ «շտապ ուսումնասիրում», իրանց յուշատետրում նշանակում և շարունակ «կուսակցական» խորհրդածութեան հրաւիրում իրանց «տեղական ընկերներին»:

Եւ այդ բոլորը կատարւում էր ի հարկէ անջատ նահանգի իշխանութիւնից: Նահանգի այդ այցելուները միշտ իրանց անցուդարձին տալիս էին «զուտ կուսակցական» բնոյթ, բայց և ամէն մի քայլափոխում շեշտում էին, որ տեղական իշխանութիւնը իրանց նայում է*[ր]* վերևից ներքև, որպէս ենթակայի և կուսակցութեան միտումները ի կատար ածողների:

Շատ բնական է ի հարկէ, որ դաշնակցութիւնը կառավարութեան գլուխ անցնելով՝ պէտք է տանէր իր պետական վարքագիծը, բայց այդ դեռ չէր նշանա-

կում, որ ամէն մի դաշնակցական, որ իր անցեալում տիրացու կամ սափրիչ էր, իրաւունք ունի խառնուելու պետական գործերի ընթացքին, և տոն տալու նորան: Մենք պարտաւոր էինք ի հարկէ կատարելու դաշնակցական կառավարութեան ցուցմունքները և պահանջները՝ բայց մենք չէինք կարող բաւարարել ամէն մի դաշնակցականի կապրիզը և քմահաճ պահանջը: Եւ այստեղ խախտւում է երկրի հաւատը դէպի պետական իմաստը, այստեղ առաջ է գալիս իշխանութեան գաղափարի քայքայումը: Եւ պէտք է ասեմ, որ այդ «կուսակցականների» և «անկուսակցականների» աննպատակ, շարունակ անցուդարձը՝ շատ ժամանակ էր խլում ինձանից, և բացի այդ, շնորհիւ բարձր կառավարութեան թուլութեան՝ շփոթում էր կառավարչական կուրսը: Այդ բազմաթիւ անկոչ հիւրերը՝ ոչ այնքան դիլիկատ իմաստով, որչափ «հասարակական և կուսակցական կոնտրոլի» իրաւունքը ընդգծելու համար՝ միշտ այցելում էին նահանգապետին: Մի կողմից ես շատ ուրախ էի բազմաթիւ մարդկանց հետ շփուելու, ծանօթանալու: Այդ պէտք էր ինձ թէ իմ իրազեկ լինելու մասին - ի՞նչ են խօսում և ի՞նչ մտածում դրսում, և թէ այցելուներիս ծանօթացնելու նահանգի անցուդարձի ու պահանջների հետ:

Բայց կրկնում եմ, այդ խառնիճաղանջ բազմութեան մեծագոյն մասը ոչ լուրջ, դրական լինելով՝ աւելի ձանձրացնում էր ինձ, և միայն ժամանակ խլում ինձանից:

Չընդունել ես չէի կարող ի հարկէ, իսկ վարժապետներն ու տիրացուները չէին ուզում հասկանալ տարրական քաղաքավարութիւնը, և երբեմն ժամերով նստում նահանգապետի առանձնասենեակում: Շատ հետաքրքիր է, որ և Երևանի կառավարութիւնը, պարլամենտի անդամները և կենտրոնի բոլոր հասարակական գործիչները՝ պահանջ էին զգում ժամերով լսելու այդ «տեղերից վերադարձած իրազեկ ընկերների զեկուցումը» - ասեկոսները, և զբաղուելու երբեմն այն ծաղրալից և պիկանտ առաջարկութիւններով, որ անում էին այդ բազմագոյն և բազմաճաշակ «ճանապարհորդները»:

Եւ այստեղ ևս մենք *[h]*անդիպում էինք դարձեալ մի ապացոյցի, որ մեր բարձր կառավարութիւնը իր բոլոր անկեղծ ցանկութիւններով հանդերձ՝ օրգանապէս անկազմակերպ էր: Նա ոչ մի կանոնաւոր ինֆորմացիա չունէր երկրի դրութեան մասին, մեր Մինիստրութիւնները, առանձին-առանձին վերցրած և բոլորը միասին որպէս կառավարութիւն՝ առանձին ինֆորմացիոն բիւրօ չունէին: «Տեղեկութիւնները» և «փաստերը» բոլորը աւելի քան պատահական էին և աւելի քան քմահաճ, կասկածելի, միտումնաւոր ու վայրիվերոյ: Բոլորը «տեղեկութիւններ» էին հաղորդում, բոլորը «կարծիքներ» և «պահանջներ» յայտնում, բոլորը պարլամենտի բազմաթիւ անդամները, հասարակական գործիչները, «վստահելի տղերքը» և միւսները՝ պաշարում էին Մինիստրների առանձնասենեակը ու նոցա հետ միասին վերլուծում իշխանութեան անելիքները...

Տեղերից այդ բոլոր շփոթալից և շատ անգամ կրքալից և ճիշտ տեղեկութիւնները՝ միանգամայն շփոթում էին կառավարչական մթնոլորտը, և երերուն ու անհետևող պետական ընթացք ստեղծում: Պէտք է ասել մի՞թէ, որ կառավարչական մթնոլորտի այդ բաբելոնեան շփոթը խախտում էր երկրում կառավարութեան համարումը, և աստիճանաբար ձգելով ժողովրդի աչքում իշխանութեան նշանակութիւնը՝ քայքայում էր սուվերէն և անկախ գաղափարը: Այդ անվերջ բա*[մ]*բասալից ու միտումնաւոր «տեղեկութիւնների» հետևանքով՝ կառավարութեան գրեթէ ամէն մի քայլը հակասում էր մէկը միւսին, և աստիճանաբար կորցնում էր իր իշխանալից և անվճռաբեկ իմաստը: Չը կար կառավարչական մի որոշում՝ որին բեկանել անկարելի լինէր:

Կառավարչական բոլոր կարգադրութիւնները՝ բռնութիւնների ու քմահաճ պահանջների ու կարիքների մթնոլորտում էին կատարւում: Ազդեցիկ կուսակցականները, իսկ երբեմն և «վստահելի տղերքը»՝ կարողանում էին բեկանել կառավարչական այս և այն որոշումը, և այդ պայմաններում՝ ոչ ոք երաշխաւոր չէր, թէ ի՞նչ է սպասում նորան վաղը: Ամէն մի կուսակցական աւելի իրազեկ էր կառավարութեան անելիքներին՝ քան թէ օրինակ, նահանգապետը: Եւ այդ նահանգապետը հաւաստել էր այսօր, որ նորա ամենաօրինական կարգադրութիւններն անգամ չեն բեկանուի վաղը, տեղի տալով արկածախնդիր «կուսակցականի» խորհուրդներին ու քմահաճ ցանկութիւններին:

Եւ ճշմարտութիւնը պահանջում է ուղղակի ասել, որ այդ «ընկերվար» գործելակերպը ջերմ էր դարձրել այդ անցորդ տափակութիւնների ձեռքում մեր ամբողջ կառավարութիւնը, իր բոլոր թէ ընդունակ և թէ անգոյն Մինիստրներով:

Իսկ Մինիստրների դիւանների խառնիճաղան*[ջ]* կազմը գալիս էր միայն լրացնելու այն ընկերական համերգը՝ որի խլացուցիչ հնչիւնների ներդաշնակութեամբ լուծւում և քայքայւում էր մեր պետականութիւնը: Դիւանների այդ մեծ և փոքր պաշտօնեաներն էլ կիսագրագէտ ու անկիրթ՝ իրանց հերթին էին «անկախ» ու «կտրուկ» քաղաքականութիւն վարում, և դրանով լրացնում երկրի ընդհանուր շփոթը և ընդհանուր անիշխանութիւնը: Շատ բնորոշ է, որ կառավարչական այդ վայնասուն մթնոլորտում՝ հրապարակում աղմկողների նշանաբանն էր «ազգային» հասկացողութիւնը:

Բայց այդ «ազգայինը» չափազանց սուղ էր և չափազանց տափակ ու շովինիստ: Մենք կարծում էինք պարտաւոր ենք անել ամէն տեսակի անհեթեթ բան, և հաւակնութիւն ունէինք այդ իմաստով ոչ միայն կառավարել երկիրը՝ այլև մեր «կուլտուր» ազդեցութեանը ենթարկել երկրի օտարազգիներին: Եւ մեր «ազգայնացումը» նոյնպէս թեթևամիտ էր, անցողական ու զաւեշտ:

Շատ անգամ՝ եթէ չասենք միշտ, «ի տեղի մինիստրի» ստորագրութեամբ ես ստանում էի ինձ միանգամայն անյայտ մարդկանց հեռագիրները հետևեալ զաւեշտ հասցէով.- «Կարս, Վանանդի նահանգապետին»: Այդ խղճուկ մարդկանց

աշխարհայեացքը բնորոշելու համար՝ դժուար էր կարծեմ աւելի ցայտուն օրինակ բերել:

«Ի տեղի Մինիստրի» հեռագիրը ստորագրող պարոնը աչքաթող էր անում անշուշտ, որ Կարսում մի նահանգապետ կար, և հետևապէս «Վանանդի» բառը ոչ միայն աւելորդ էր՝ այլ և ծաղրալից: Նա գալիս էր միայն ասելու, որ հասարակ հեռագիր գրելու անգամ շնորք չունէին այդ մարդիկ: «Վանանդ» բառը, не къ селу, не къ городу, կցելով հեռագրին՝ այդ ազգասէրները ուզում էին ընգծել իրանց «ազգային» տրամադրութիւնը, և այդ թեթևալից վերաբերմունքով էին ուզում արտայայտել երկրի օտարազգիների առաջ իրանց սուվերէն... *(առկայ է տեքստի խզում)*

...նա չէր իշխում Ալաշկերտ և միւս վայրերում: Թիւրքաց իշխանութեան վերջին կայանն էր Էրզրումը, իսկ այնտեղից դէպի Հայաստանի սահմանները՝ երկիրը կառավարւում էր ինքն իրան: Այնտեղ վխտում էին քիւրդ հրոսակները, այնտեղ դեգերում էին Բագուի թուրք գործակալները, մտքեր պղտորում, և թէ ո՞ւմն էր պատկանում այդ վայրը՝ ոչ ոք որոշ հասկացողութիւն չունէր: Եւ ընդհանուր առմամբ այդ վայրերում տիրում էր կատարեալ անիշխանութիւն և կատարեալ քաոս: Պէտք չը կայ ասելու, որ եթէ մեր կառավարութիւնը լուրջ կազմակերպութիւն ունենար, և Կարսի նահանգը չուղարկեր ինտրիգան գեներալներ և օտարացած սպայութիւն՝ մենք դեռ 19 թուին կը տիրէինք ոչ միայն Օլթիին, այլև Ալաշկերտի հովիտը, և ո՞վ գիտէ՝ գուցէ իրերը այն ժամանակ և այլ ընթացք ստանային: Ինչևիցէ, բայց Օլթին գրաւելու խնդիրը փափկալից էր մեզ համար, և Կարսի նահանգապետը այդ առիթով բազմաթիւ գրաւոր զեկուցումներ ներկայեացրեց կառավարութեանը:

Այդ զեկուցումների հետևանքով ի հարկէ, կառավարութիւնը պարտաւոր էր յատուկ, մասնագէտ յանձնաժողովներում մանրամաս մշակել մեր բոլոր անելիքների ծրագիրը, և մենք պէտք է Օլթի մտնէինք զինուած ոչ միայն սուիններով ու ռումբերով՝ այլ և երկրի կազմակերպչական բոլոր միջոցներով:

Օլթիի շրջանում բնակակալել էին Բագուի գործակալները և այն բոլոր թուրք պրովակատորները՝ որոնք փախան Կարսից, երբ մենք մտնում էինք այնտեղ: Այդ ագիտատորները բոլորը Երևանի Գանձակի և Բագուի զանազան գաւառներից էին, և լաւ տեղեակ մեր անցուդարձին:

Նոքա պղտորում էին այդ տարածութեան մտքերը, բորբոքում առաջ բերում Կարսի նահանգում, նոքա գործում էին Բագուի հրահանգներով, կապ ունէին Ատրբէյջանի Երևանի դիւանագիտական ներկայացուցչի հետ, Թիֆլիզի և Էրզրումի հետ, և վերջում մեծ աշխատանք թափեցին 20 թուին քեմալիստների հետ՝ հայկական իշխանութիւնը տապալելու գործում: Իւր ժամանակին Կարսի նահանգապետը այդ բոլոր տեղեկութիւնները հաղորդել էր կառավարութեանը, և ամէն անգամ հրաւիրել նորա ուշադրութիւնը՝ քաղաքական այդ բարդալից

դրութեան վերայ: Այդ բոլոր պատճառներով՝ մեզ համար վերին աստիճանի նշանակալից էր Օլթին գրաւելու խնդիրը, բայց այդ գրաւումը պէտք է կատարուած լինէր ոչ թէ հայդուկային սիստեմով՝ այլ լուրջ աշխատանքների առանցքում, ուր մենք կարող կը լինէինք հեղինակալից մեր յետևից տանելու այդ երկրի բազմատեսակ ազգութիւնները, ենթարկելով նրանց մեր օրինականութեանը, մեր խաղաղ և աշխատալից տրամադրութեանը, ընդառաջ բերելով այդ լեռներում կուլտուր և դրական հեռանկարներ:

Բայց մենք ոչնչից, ոչի՛նչ արեցինք այդ ուղղութեամբ: Ռուս կայսերական «օրիենտացիա» ունեցող մեր հրամանատարութիւնը՝ ջղայնալից լուսացնում էր Օլթիի հարստութեան բուրմունքը զգալով, իսկ մեր մինիստրութեան դիւաններում պետական խնդիրները այն մարդկանց ձեռքում էր, որոնք մի հեռագիր գրելու շնորհք ... (*կայ պակասող թերթ, առկայ է տեքստի խզում*)

...բոլորը «հետաքրքրւում էին» ածխահանքով, ապագայ երկաթուղագծով, երկրի մեծառատ մրգերով և ձորերի գեղատեսիլ պատկերներով՝ բայց այդ բոլորը դիլետանտ, բոլորը թեթևալից, և բոլորը անցողական: Պէտք էր զարմանալ միայն, որ կառավարութիւնը Օլթիի վերաբերեալ խնդիրները հնարաւոր չը համարեց ուսումնասիրելու յատուկ յանձնաժողովներում փակելով բաց դռները «մեր ընկերների» և «վստահելի տղերքի» առաջ: Պետական միտումները ու կառավարութեան ապագայ անելիքները Օլթիի երկնակամարում՝ չէին զգացվում: Այնտեղ գալիս էին և գնում, խօսում, քննադատում, կարծիքներ յայտնում, միջամտում երկրի ինտրիկներին՝ ու հեռանում առանց հետքերի, առանց որևէ բան կատարած լինելու, և առանց ի հարկէ որևէ պատասխանատուութեան, եթէ ոչ երկրի՝ գեթ իրանց խղճի առաջ:

Հաղորդակցութեան Մինիստրի օգնական Յովհանջանեան՝ որին «ձախ դաշնակցական» էին անուանում, զբաղուած էր՝ ասում էին, թէ Օլթիի ածուխով և թէ դէպի Օլթի երկաթուղի տանելու նախագծով:

Նրա վագոնը շարունակ կանգնած էր այդ ամիսներում Կարսի վագզալում, և նա շարունակ ինչ որ խորհրդակցում էր «ձախ դաշնակցականների» հետ: Շատ զարմանալի է, որ Մինիստրի օգնականը երկրի համար այդչափ մեծ խնդիրները արծարծում էր առանց ուսումնասիրելու այդ հարցերը մասնագէտների միջոցով, և առանց կառավարչական որոշ ցուցմունքների, և առանց որևէ ծրագրի: Ինչպէս ընդունուած էր մեր ժամանակներում՝ Երևանում այդ Յովհանջանեանին ասել էին, թէ լաւ է էլի, Աւետիսը գնում է Կարս՝ որոշ մի բան անի թէ ածխի և թէ երկաթուղու մասին...

Բայց տիրող հասկացողութիւնները բնորոշելու համար՝ ես պէտք է յիշեմ այստեղ մի միջադէպ, որ իր բոլոր մասնակի բնոյթով հանդերձ, գալիս է գծագրելու մեր օրերի հրապարակի տրամադրութիւնը:

Մինիստրի օգնականը գալով Կարս այն խնդիրների համար, որոնց մասին Կարսի նահանգապետը ամիսների ընթացքում տասնեակ թերթերից զեկուցումներ էր ուղարկել Երևան՝ հարկաւոր չը համարեց ոչ միայն խօսել նահանգապետի հետ այդ խնդիրների մասին, այլ և աւելորդ համարեց երևի, նոյնիսկ այցելել նորան:

Երբ նահանգապետը այդ առիթով իր զարմանքը յայտնեց պարլամենտի կրթուած անդամներից մեկին, որ *[նու]*նպէս դաշնակցական էր, նա բացատրեց, որ մինիստրի օգնականը, որպէս «ձախ դաշնակցական» և «սոցիալիստ»՝ խուսափում է իշխանութիւն ունեցող մարդկանցից, և ուզում էր իրան «ազատ» պահել...

Եւ մեզ մնում էր միայն ցաւել, որ երկրի բախտը գտնւում է այդօրինակ տհասների ձեռքում: Բայց մեզ համար աւելի ցաւալին այն էր, որ կառավարութիւնը վստահում էր այդչափ մեծակշիռ խնդիրներ այդ «սոցիալիստներին» և այդ «ձախերին»: Յետագայում ես պատահմամբ ծանօթացայ այդ «մինիստրի օգնականի» հետ Կարսի վագզալում, և իմ նորա դէմ տրամադրութիւնս իջաւ միանգամից: Ես տեսնում էի իմ առաջ մի ողորմելի մարդ, որի հետ լուրջ խօսել չարժէր: Գուցէ նա լաւ «ընկեր» էր, գուցէ «վստահելի տղաներից» մէկը՝ բայց այնուամենայնիւ ես այլևս առիթ չունէի քաղաքավարութեան և այլ պահանջներ...*(առկայ է տեքստի խզում)*

... Այդ միջոցներում Կարս էր եկել և մի այլ սանովնիկ՝ ֆինանսների Մինիստրի օգնական, կամ նորա խորհրդի անդամ, լաւ չը գիտեմ, Համբարձում Մելիքեան: Նորա հետ ես ծանօթ չէի: Լսել էի միայն, որ նա Բագուի նաֆթահորերի քմահաճներիցն է, և այժմ որպէս «ֆինանսիստ»՝ կոչուած էր բարձր պաշտօնի: Ասում էին, որ նա դաշնակցական է, և որպէս երևի այդպիսին Կարս ժամանելով՝ նա հարկաւոր համարեց տեսնուելու միայն «ձախերի» հետ, և նահանգապետին ի հարկէ պատիւ չարեց իր այցելութեամբ: Թէ ինչո՞ւ համար էր եկել այդ հեղինակաւոր ֆինանսիստը Կարսի նահանգը, և թէ ի՞նչ եզրակացութիւնների էին հանգել նորա ծրագրային որոշումները՝ ես չը գիտեմ ի հարկէ: Ինձ միայն զարմացնում էր, որ այդ «ֆինանսիստը», որ Կարս էր գալիս անշուշտ այն բազմաթիւ խնդիրների առիթով՝ որոնց մասին Կարսի նահանգապետը բազմաթիւ ուսումնասիրութիւններ և զեկուցումներ է ուղարկել կառավարութեանը, գէ*[թ]* այդ խնդիրներով այդչափ զբաղուած մարդու հետ նա հարկաւոր չը համարեց եթէ ոչ խօսելու՝ գէ*[թ]* տեսնուելու և ծանօթանալու:

Բայց Մելիքեան այդ օրերում ոչ միայն մին դրամատէր էր՝ այլ և Հայաստանի սանովնիկ, և նա կարծում էր երևի, նահանգապետը պարտաւոր է խոնարհուել այդ երկու մեծ գերբնական ոյժերի դաշնակցութեան առաջ, և դիմաւորելու նորան վագզալում...

Բայց Մինիստրի հարուստ օգնականը չը գիտէր անշուշտ, որ նորա *[և]* նահանգապետի պաշտօնները միանգամայն համահաւասար են իրար, և որ ծիծաղելի կը լինէր տեսնելու նահանգապետին՝ նորան ենթակայի դերում...

Այդ բոլոր պատկերները գուցէ մասնաւոր բնոյթ ունեն, բայց նոքա այնչափ գունալից են և այնչափ բնորոշ մեր հասկացողութիւնների և մեր պաշտօնական անցուդարձի իմաստով, որ մեր յիշողութիւնները մեր վերապրած օրերի մասին թերի կը լինէին առանց այդ կոմիկ և զաւեշտ գծերի:

Այդպէս էր այն «Պետական-հասարակական» անցուդարձը՝ երբ մարդիկ գնում և գալիս էին, հրապարակում տարազ, մեծ իրարանցում ստեղծում՝ բայց միայն աղմկում ու շփոթում:

Պէ՞տք է միթէ ասել, որ երկիրը տեսնում էր այդ բոլորը, բայց չէր տեսնում իրան պէտք պետական լրջութիւնը:

Ժողովրդի գործնական բնազդը անզուգական է, ժողովուրդը շատ նուրբ հոտառութիւն ունի դէպի երկրի կարդինալ խնդիրները, և ժողովրդական դիտողութիւնը շատ շուտ ըմբռնում է հրապարակի անցուդարձը, և շատ շուտ իր ճիշդ որոշումը կայացնում:

Եւ այդ մթնոլորտում չէր կարող զարգանալ ու ամրանալ կառավարական հմայքը ու համարումը, այդ պրեստիժը օրեցօր ընկնում, թուլանում էր՝ և իր յետևից տանում իրաւակարգը, որի բլումը և ակներև էր և անխուսափելի:

Այդպէս էր հայկական երազների խորտակման նախօրեակը:

ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 2, թթ. 1-21, բնագիր, ձեռագիր:

DOC №3

Յուշեր՝ դաշնակցութեան անցեալի, ռազմական ուժերի հրամանատար Դումանի, ռուսական պաշտօնեաների հակահայկական գործողութիւնների, դեպի Կովկաս ունեցած անտարբերութեան և 1905 թ. հայ-ատրբէյջանական ընդհարումների բռնկման մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Այդ կուսակցութեան ամենաուժեղ տարիներում ես գաւառապետ էի, և պէտք է արձանագրեմ այստեղ, որ ռուս իշխանութիւնը երկրում մի խղճալի ոչնչութիւն էր այդ մեծահռչակ կուսակցութեան առաջ:***
- ***Ռուս պաշտօնեաները կամ կաշառուած էին՝ կամ գերի դաշնակցութեան ձեռքում:***
- ***Հարիւր տարի շարունակ ռուսները Կովկասում զբաղւում էին միայն կաշառակերութեամբ, արբեցողութեամբ, թղթախաղով ու իրանց կանանց շուրջը կազմակերպուող ճաշկերոյթներով ու զբօսանքներով...***
- ***Այդ պայմաններում, դաշնակցութիւնը որպէս գաղափարական կուսակցութիւն՝ միանգամից փիրեց անցուդարձի հրապարակը:***
- ***Ռուս պաշտօնէութիւնը դաշնակցութեան գրպանումն էր, և նրա դաշոյնի ծայրում:***
- ***Այդպէս կարող և այդչափ հեղինակաւոր էր այդ կուսակցութիւնը իր փայլի և հմայքի ամենամեծ շրջանում:***
- ***Բայց անհասանելի են ամենակարողի ուղիները, և հայոց դաշնակցական կաբինետին վիճակուած չէր ժառանգելու իր հռչակաւոր կուսակցութեան կորովը և փայլը:***
- ***Դաշնակցութիւնը չը կարողացաւ ընդգրկել պետական իդեալները, և կարողութիւն չունեցաւ բարձրանալու դէպի պետականութեան անաչառ ու սկզբունքային աստիճանները:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Ծանրանալով Կարսի նահանգի վարչական անցուդարձի վերայ՝ ես չեմ կարող չընդգծել երկու հետաքրքիր զուգադիպութիւն. դաշնակցութիւնը որպէս գաղափարական կուսակցութիւն իր անցեալում՝ և Հայոց Հանրապետութեան դաշնակցական կառավարութիւնը ներկայում:

Այդ կուսակցութեան ամենաուժեղ տարիներում ես գաւառապետ էի, և պէտք է արձանագրեմ այստեղ, որ ռուս իշխանութիւնը երկրում մի խղճալի ոչնչութիւն էր այդ մեծահոչակ կուսակցութեան առաջ: Ռուս պաշտօնեաները կամ կաշառուած էին՝ կամ գերի դաշնակցութեան ձեռքում: Յամենայն դէպս, ամբողջ ռուս պաշտօնէութիւնը ահաբեկուած էր այդ տարիներում, և նա կատարում էր իր պարտաւորութիւնները ըստ ձևի միայն, միայն աղմուկ՝ բայց ոչ գնում իր պարտքի ուղիներով: Իր քրէական հետազօտութիւններում և յետապնդումներում՝ ռուս պաշտօնեան դիտմամբ շեղւում էր ուղիղ ճանապարհից: Նա դիպմամբ շփոթ էր ստեղծում քննական գործում՝ շինծու և միայն հաւանական բացատրութիւն տալով դիպուածին, իսկ չարագործներին յետապնդելու գործում նա անցնում էր տրամագծօրէն տարբեր կողմը, և այնտեղ շատ աղմկալից և շատ եռանդոտ հալածում անտես ոճրագործին...

Եւ հետևանքը ամէնուրէք միատեսակ էր, ոճիրը չէր լուսաբանւում, իսկ չարագործները «անյայտ մարդիկ» էին յայտարարւում...

Ռուս իշխանութիւնը Կովկասում իր հարիւր տարուայ տիրապետութեան ընթացքում առհասարակ, և դաշնակցութեան փայլի շրջանում մասնաւորապէս՝ երբէք իրազեկ չի եղել երկրի անցուդարձին:

Յենուելով իր ոյժի, իր սուին[*ն*]երի վերայ՝ նա օգտագործել է միայն մեր աշխարհի առանձնակի ազգագրական, տնտե*[սական պայմանները...]* և միայն թագաւորել է՝ ոչ կառավարել:

Հարիւր տարի շարունակ, ռուսները Կովկասում զբաղւում էին միայն կաշառակերութեամբ, արբեցողութեամբ, թղթախաղով ու իրանց կանանց շուրջը կազմակերպուող ճաշկերոյթներով ու զբօսանքներով...

Հասարակական բնոյթ ունեցող երևոյթները ու քրէական ոճիրները չէին հետաքրքրում ռուս պաշտօնեային՝ որպէս սկզբունք ու ճշմարտութիւն: Հասարակական խնդիրները և քրէական հանելուկային ոճիրները այդ պաշտօնեաները ո՛չ կարողութիւն և ո՛չ էլ տրամադրութիւն ունէին հասկանալու և վերլուծելու: Իրերի այդ մթնոլորտում՝ նրանք գնում էին միայն օրերի աղմկալից հոսանքի յետևից, և այդ առանցքում միայն շահւում և միայն վայելում:

Այդ պայմաններում, դաշնակցութիւնը որպէս գաղափարական կուսակցութիւն՝ միանգամից տիրեց անցուդարձի հրապարակը: Եւ պաշտօնէութիւնը տգէտ, կաշառակեր, արբեցող, անպատուախնդիր և ի ծայր անամօթ՝ պէտք է տեղի տար այն մարդկանց, որոնք իրանց մեծագոյն մասում բռնուած էին ազատակիր և բարձր հայրենասէր զգացմունքներով:

Եւ այդպիսով, ռուսը հրապարակի անցուդարձի միայն պաշտօնական պատասխանատուն էր՝ առանց իրազեկ լինելու այդ կեանքին, իսկ դաշնակցութիւնը տեղեակ օրեցօր կատարուող բոլոր անցքերին՝ իր ձեռքումն էր պահում երկրի բորբոքման իմաստը և գաղտնիքը: Ռուս պաշտօնէութիւնը դաշնակցութ-

եան գրպանումն էր և նրա դաշոյնի ծայրում: Պաշտօնեան իր սրտի ամբողջ հոգով ատում էր հայութիւնը, բայց Կովկասում նա ոչ ամօթ և ոչ պատուի զգացմունք ունէր, և այդ հոգեբանութիւնը նրան վարձկան և երկչոտ էր դարձնում մեր երկրում:

Որպէս գաւառապետ՝ ես ինքս բազմաթիւ դէպքերում օգտուել եմ դաշնակցութեան հարուստ ինֆօրմացիայից, և շատ անգամ ազդեցիկ և լուրջ դաշնակցականների միջոցով հարթել եմ գաւառի բազմատեսակ թիւրիմացութիւնները, և ոճիրների առաջն առել:

1905 թուին հայ-թուրքական թշնամութեան բռնկման օրերում երբ ես Նոր Բայազէտի գաւառապետն էի՝ նահանգապետը ինձ Երևան պահանջեց: Երևանը նման էր մի պայթալից կաթսայի՝ ուր եռում էր ազգամիջեան կիրքը: Հայերը չէին կարողանում անցնել թուրքերի թաղը, թուրքերն էլ պատսպարուել էին իրանց թաղերում: Իսկ իշխանութիւնը, երերուն մի ֆիկցիայ դարձած՝ գաղտնագողի մի թաղից միւսն էր անցնում, համոզում-խաբում, բայց իրօք ոչինչ չէր անում: Եթէ Գանձակ ու Բագու ազգամիջեան կռուալից ձեռներեցութիւնը թուրքերին էր պատկանում՝ Երևանում հայերը միշտ շատ բարձր էին տրամադրուած և միշտ թմբկահար դիրք էին գրաւում: Աստաֆեան փողոցի սկզբում, հասարակական այգու դիմաց՝ որտեղով որ պէտք էր անցնել նահանգապետի մօտ, կանգնած էին դաշնակցութեան մարդիկ, մեծ բազմութիւն զինուած և սպառնալից: Հռչակաւոր կուսակցութեան ռազմիկ ոյժերը գտնուում էին Դումանի հրամանատարութեան տակ, և Դուման այդ տարիներում մեծ համբաւ, մեծ անուն ունէր Երևանի նահանգում: Մեր մի քանի տաքգլուխներ՝ Նոր Բայազէտի գաւառում մի շարք անհեթեթութիւններ էին թոյլ տուել իրանց, և ես ուզում էի այդ մասին խօսել Դումանի հետ: Գիշերը, իմ հին բարեկամ՝ երդուեալ հաւատարմատար գուբբ. Մնացականեանի հետ ես այցելեցի Դումանին: Դաշնակցութեան ոյժերի հրամանատարը ապրում էր քաղաքի կենտրոնում: Պատշգամբը լցուած էր զինուած մարդկանցով, մի երկու հերթապահ դաշնակցութեան զինուորների էլ մենք հանդիպեցինք Դումանի նախասենեակում: Յամենայն դէպս ես իմ չորս կողմս տեսնում էի մի շատ լուրջ կազմակերպութիւն, որ կրում էր շատ խիստ իշխան-ութեան բոլոր նշանները: Այդ իշխանութիւնը սաստիկ կօնսպերատիւ էր, բոլորը՝ նահանգապետից սկսած, ձևանում էին թէ չը գիտեն նրա գոյութեան մասին, բայց բոլորն էլ մեծ չափով հաշուի էին առնում այդ անտեսանելի ոյժը և սարսափում նորա առաջ:

Դուման շատ մտահոգ էր և շատ հոգսալից, նա ասեց, որ Երևանի բորբոքումը կարող է պայթել, բայց տրամադրութիւնների ձեռներեցութիւնը նրա ձեռքում լինելով՝ նա յոյս յայտնեց, որ կարող կը լինի պայթումի առաջն առնել: Բայց և այնպէս՝ աւելացրեց Մառախլապատ դաշնակցականը, թուրքերին ես սպառնալիքի տակ կը պահեմ, որպէսզի ապահովեմ Երևանի նահանգի հանգիստը:

Դուման խոստացաւ սանձահարել կրակոտ դաշնակցականներին Նոր Բայազէտի գաւառում, և ես թողեցի հեղինակաւոր դաշնակցականի շտաբը մեծաչափ բաւարարուած իմ սպասելիքներում: Դուման կատարեց իր խոստումը, և այդպիսով գաւառապետի ու դաշնակցութեան ներկայացուցչի համաձայնութիւնը հարթում էր կեանքի բնական խոչընդոտները, և այդպիսով ինձ յաջողուեց Նոր Բայազէտի լայնածաւալ գաւառում հանգստութիւն պահպանել այն օրերում, երբ մեր չորս կողմը հրդեհ էր ու արիւն:

Այդպէս կարող և այդչափ հեղինակաւոր էր այդ կուսակցութիւնը իր փայլի և հմայքի ամենամեծ շրջանում:

Բայց յետագայում ճակատագրին հաճոյ էր իմ և երկրորդ պաշտօնական հանդիպումը՝ երբեմն ամենակարող դաշնակցութեան հետ: Բայց այս անգամ մենք հանդիպեցինք հրապարակով և ոչ կօնսպերատիւ: Դաշնակցութիւնը Հայոց Հանրապետութեան կառավարութիւնն էր, իսկ տողերիս գրողը՝ Կարսի հայկական նահանգապետ:

Բայց անհասանելի են ամենակարողի ուղիները, և հայոց դաշնակցական կաբինետին վիճակուած չէր ժառանգելու իր հռչակաւոր կուսակցութեան կորովը և փայլը:

Ժամանակի յորձանքները կարծես հեղեղել էին դաշնակցութեան իմաստը, և նրա երազները փարում էին արդէն ժամանակակից կրքերից դուրս...

Իսկ այստեղ՝ իրական հրապարակում մնացել էին մի բուռն մարտնչողներ, մի բուռն վաղեմի հմայքի և վաղեմի հռչակի պահապաններ: Բայց այդ սակաւաթիւ իդեալիստներին՝ դաշնակցութեան դրօշակի տակ շրջապատում էին միայն գիշատիչները ու միայն տափակութիւնները, իսկ այդ բազմութիւնը չէր կարող վաղեմի տրամադրութիւն ստեղծել:

Դաշնակցութեան պատասխանատու դրօշակի տակ, այդ բազմաթիւ արկածախնդիրները իրանց անձնական գործերն էին միայն կարգաւորում, և այստեղ խախտւում և սնանկանում էր դաշնակցութեան իմաստն ու նշանակութիւնը:

Վերին աստիճանի հետաքրքիր է, որ օգտուելով դաշնակցութեան հեղինակութիւնից որպէս գաւառապետ, որպէս հայկական նահանգապետ՝ ես այլևս չէի տեսնում հրապարակում դաշնակցութեան վաղեմի անվճռաբեկ կորովն ու կամքը: Մանրանալով և հիւծուելով՝ դաշնակցութիւնը, ինչպէս որ իւր ժամանակին ռուս իշխանութիւնը, ի պաշտօնէ էր միայն տիրում հրապարակը: Տէր և տնօրէն երկրի այսօր՝ դաշնակցութիւնը էլ իրազեկ չէր հրապարակի անցուդարձին: Ինչպէս և ռուս պաշտօնէութիւնը՝ դաշնակցութիւնը այսօր նիրհում էր իր վաստակաւոր բարձունքներում, և այդ օրօրալից միջանցքում ճոճուելով՝ կառավարութիւնը միայն թագաւորում էր, բայց ոչ թիավարում:

Շատ բնորոշ է, որ դաշնակցութիւնը որպէս իշխանութիւն՝ յառեց իր վաղեմի գործելակերպին: Նա կորով չունեցաւ անջատուելու իր հայդուկային կօնսպերա-

տիւ բնոյթից, և ոչ գաղտնագողի՝ այլ հրապարակավ կերտելու իր սուվերէն ու անվճռաբեկ իրաւունքները: Դաշնակցութիւնը չը կարողացաւ ընդգրկել պետական իդեալները, և կարողութիւն չունեցաւ բարձրանալու դէպի պետականութեան անաչառ ու սկզբունքային աստիճանները:

Կառավարութեան անդամներից մի քանիսը, ինչպէս և պարլամենտի մեծամասնութիւնը՝ մինչև ի վերջը չը կարողացան համակուել պետական իմաստով: Այդ մարդիկը մինչև ի վերջը մնացին նկուղներում, և փոխանակ իշխանալից և հրապարակով կերտելու պետական սիստեմը՝ նրանք գերամեծար համարեցին մնալ նկուղներում, և սրտոտութիւն չունեցան անցնելու կառավարչական աշխատանքներին պետական մակարդակով, հրապարակական ու անվճռաբեկ թափով: Աստղերի պալատի, բիւրոյի և միւս հաստատութիւնների մի քանի անդամները՝ սեպարատ, անջատ իրարից էին հետաքրքրւում երկրի անցքերով, և ոչ ուսումնասիրում այդ անցուդարձը պետականօրէն:

Այստեղ ու այնտեղ այդ մարդիկը ունէին իրանց «վստահելի տղաները», և նոցա միջոց էին դիտում երկրի անցուդարձը, և այդ «վստահելի տղաների» վայրիվերոյ տեղեկութիւնների հիման վերայ՝ նոքա վարում էին երկրի քաղաքականութիւնը: Շատ բնորոշ է, որ կենտրոնական վարիչ մարմինները շատ անգամ անջատ նահանգապետից՝ յանձնարարում էին սրան և նրան «տեղեկութիւններ» հաղորդել «գաւառներից»: Եւ այդ պատահական, անսիստեմ, անիմաստ և շատ անգամ կրքալից տեղեկութիւնների հիման վերայ՝ կայացնում էին խոշորագոյն որոշումներ, և այդ առանցքումն էր տարւում երկրի քաղաքականութիւնը…

Այդ նիստի մեզ համար միանգամայն անսպասելի միջանկեալը առաջ բերեց կողմերի մէջ բնական սառնացում, և կօնֆերանսը ցրուեց այս անգամ լուռ, զսպուած և խորհրդալից…

Վերադառնալով մեր բնակարանը և պատմելով մեր խորհրդականներին պատահածը՝ մենք անմիջապէս անցանք խնդրին և զբաղուեցինք նորանով 15 ժամ, ցրուելով միայն լուսադէմ:

Աւելի քան դժուարին էր մեր դրութիւնը: Երկիրը տակնուվրայ էր լինում արտաքին և ներքին ոյժերի գրոհից: Հ. Յովհանջանեանի կաբինետը ընկել էր երկրի բուռն զայրոյթի և պատմական չը լսուած պարտութիւնների տակ: Նոր կառավարութիւնը կազմակեր…*(շարունակութիւնը բացակայում է)*

ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 3, թթ. 1-13, բնագիր, ձեռագիր:

DOC №4

Յուշեր՝ Արդահանի օկրուգի իշխան, մեծահարուստ Ջալալ-բեկի ու գնդապետ Կադիմովի մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Ջալալ բէկը, նորա հայրը, նորա եղբայրները և որդիքը, բոլոր ընտանիքը՝ այդ տոհմը տասնեակ տարիների ընթացքում իրանց ձեռքումն էին պահում Արդահանի բոլոր գաւառապետներին:***
- ***18 թուին, երբ ռուս զօրաբանակը թողեց Կարսի նահանգը և թիւրք զօրամասերը ներս խուժեցին՝ փախան ի հարկէ և Արդահանի հայերը, և ասում են, որ Ջալալ բէկ, նոր իշխանութեանը հաճոյանալու համար՝ հայկական կոտորած կազմակերպեց Արդահանի գաւառում:***
- ***Երբ Արդահանի շրջանապետ, գաւառապետ ես նշանակեցի Իբրահիմ բէկ Կադիմովին՝ որին յետոյ Մինիստրների խորհուրդը գնդապետի աստիճան շնորհեց, Ջալալ բէկ կորցրեց իր վաղեմի համարումը և նշանակութիւնը:***
- ***...վրացիները փայփայում էին և իրանց հեռանկարները թէ՛ Օլթիի և թէ՛ Արդահանի գաւառների մասին, և յոյս ունէին մեծապէս օգտագործել այստեղ Ջալալ բէկի մեծ անունը և նշանակութիւնը:***
- ***Առերես նրանք սիրալիր էին՝ բայց Կադիմովի դիրքը և աճող հեղինակութիւնը և համարումը խախտել էին միանգամայն Ջամալի հանգիստը, և նա հաւասարակշռութիւնը կորցրած՝ բոլոր միջոցներով ձգտեց տապալելու այն մարդուն, որ այնպէս նսեմացրեց երկրում իր հմայքը և նշանակութիւնը...***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Արդահանի շրջանը

Գրաւելով Արդահանի գաւառը՝ մենք ձեռք էինք բերում ոչ միայն մի հարուստ և լայնածաւալ երկիր, բնակեցրած քրդերով, թիւրքերով, թուրքերով և յոյներով՝ այլև ժառանգում էինք ազգամիջեան յարաբերութիւնների մի մեծ հանգոյց, ուր ռուս տիրապետութեան ամբողջ ընթացքում զբաղեցրել է կառավարչական և հասարակական շրջանները:

Արդահանի շրջանը ընկած է այն հարուստ լեռնաշղթայում՝ որի միջով անցնում գնում է դէպի ծով Քուր գետը: Երկրի ալպիկ բուսականութիւնը զարգացրեց

այդ լեռներում գերազանց խաշնարածութիւն: Հացով, մրգով և աղով հարուստ Օլթիի շրջանը մի կողմից, Ախալցխա-Բաթումի ճանապարհն էլ միւս՝ առաջ բերեցին ապրանքների մեծ փոխանակութիւն այս տարածութեան վերայ, և այդ-պիսով զարգացրին եռուն ու հարուստ կեանքը:

Աջարիան՝ Կովկասեան քմահաճ կիրճերի այդ թագուհին, որ ընկած է ազ-գերի և յարաբերութիւնների այդ անցուդարձի երկար առանցքում՝ միշտ զբա-ղեցրել է այդ լեռների քաջազնական տրամադրութիւնը: Աջարիայի ազնուակա-նութիւնը դեռ տակաւին պահպանել էր իր վաղեմի հմայքը և ազդեցութիւնը, իսկ երկիրը դեռ հեռու քաղաքակրթական կենտրոններից՝ շարունակում էր զբաղուել ասպետական իդեալներով և այն անցուդարձով, ուր փառքը, պատիւը, կինը և դաշոյնը՝ դեռ մի իմաստ մի հասկացողութիւն էին կազմում: Թէ՛ տաճկաց տիրապետութեան ժամանակ և թէ՛ ռուս իշխանութեան օրով՝ այդ գունաւոր և ազդեցիկ ազնուականութիւնը իր ձեռքումն էր պահում երկրի գերիշխան գաղտ-նիքը: Իսկ տեղական իշխանութիւնը թողնելով այդ բէկերին և աղալարներին մարտնչելու և թագաւորելու արտոնութիւնը՝ բաժանում էր այդ կատաղի ոյժերը, և այդ առանցքում կառավարում և ինքը իրան շատ լաւ զգում... Եւ այդ Աջարիա-յի մի մեծատուն շատ հարուստ՝ մեծ կապեր և ազդեցութիւն ունեցող թէ՛ Թիւր-քիայում և թէ՛ Ռուսաստանում Օլթի-Արդահան-Բաթում ուղղութեամբ՝ Ջալալ բէկ Խիմշիեւ, բնակալել էր Արդահան քաղաքում, ունէր իր շատ ճաշակով և շատ շքեղ ապարանքը, շուէյցարական ստիլով կառուցած: Բայց այդ գեղեցիկ և գե-ղարուեստական վիլլայի ճակատին՝ սպիտակ մարմարեայ մեծ քարի վերայ ոսկէ տառերով թիւրքերէն փորագրուած է. «Ջալալ բէկ՝ իշխան և մեծատուն Աջարիա-յի և Արդահանի... »:

Այդ ապարանքը հիւրասիրել է թիւրք մութասերիֆներին և ռուս գաւառա-պետներին, այստեղ յղացել են մեծ ոճիրներ, ի կատար են ածուել դարան, սպա-նութիւն, յանդուգն յարձակում և ասպատակում, և այդ բոլոր արիւնոտ և եղեռ-նագործ աւանտիւրաների փրկութեան համար՝ ծախսուել է Աջարսկիների մեծա-քանակ ոսկին...

Այդպէս է Արևելքի փառասէր հոգեբանութիւնը:

Ջալալ բէկը, նորա հայրը, նորա եղբայրները և որդիքը, բոլոր ընտանիքը, այդ տոհմը՝ տասնեակ տարիների ընթացքում իրանց ձեռքումն էին պահում Ար-դահանի բոլոր գաւառապետներին: Ոչ միայն այդ գաւառի՝ այլև հարևան երկր-ների ամբողջ անցուդարձը կատարւում էր այդ ապարանքի առջևից, և Ջալալ բէկը իրազեկ էր այդ տարածութեան բոլոր գործերին:

Նորա ապարանքը ձգւում էր այն բարձրավանդակի վերայ, որին արևելքում Ախար-բախար (հոսում-նայում) են կոչում: Հազարաւոր չայեր ու ջրեր բարձրից ներքև ընկնելով՝ զանգահարում և աղմկում են Քուռ գետի հովիտը և ստեղծում են միայն հմայք և միայն անհոգ տրամադրութիւն...

Այդ ապարանքի շուրջը միշտ խմբուել է ժողովուրդը, այստեղ եկել են պատմելու, խնդրելու, գանգատուելու և միջնորդելու: Վաղ առաւօտուանից մինչև ի ուշ գիշեր՝ այստեղ հիւրասիրուել են բազմաթիւ մարդիկ զանազան աստիճանների և դասակարգի, և այդ աղմկալից ու խայտաճամուկ ճախարակում՝ հունցուել է ոչ միայն ոճիրը, կիրքը և փառքի տենչը՝ այլև բարին, գեղեցիկը և վեհանձնը...

Այդպէս է ազնուական ապարանքի տիպարը Արևելքում:

Դժուար է որոշակի ասել ոսկի էր դիզում այստեղ Ջալալ բէկը՝ թէ ծախսում էր միայն իր անսպառ հարստութիւնը: Մի բան միայն ակներև էր՝ նորա ելքը աւելի մեծ էր քան մուտքը:

Եւ նա առնում, ստանում էր ոչ թէ դիզելու համար՝ այլ միայն ծախսելու, փառք և անուն վաստակելու համար: Իր ձեռքում պահելով երկրի ամբողջ իշխանութիւնը՝ կաշառելով, մեծարելով և սպառնալով, նա իրան էր թողնում այդ փառքով և անուամբ հմայուելու արտօնութիւնը, և դորանումն էր այդ ոսկու, ոճրի և արկածների իմաստը և նշանակութիւնը:

Գաւառապետները, պրիստաւները, դատաստանական քննիչները և միւս պաշտօնեաները՝ քմահաճ խաղալիք էին այդ հարուստ, ազդեցիկ և բռնակալ բէկի ձեռքում, և նա տարիների ընթացքում իշխում էր այդ տարածութեան վերայ առանց տիտղոսի միայն, առանց աստիճանի և իրաւասութեան:

Այդպէս էր Ջալալ բէկի հռչակը Արդահանում և նորա շուրջը:

18 թուին, երբ ռուս զօրաբանակը թողեց Կարսի նահանգը, և թիւրք զօրամասերը ներս խուժեցին՝ փախան ի հարկէ և Արդահանի հայերը, և ասում են, որ Ջալալ բէկ նոր իշխանութեանը հաճոյանալու համար՝ հայկական կոտորած կազմակերպեց Արդահանի գաւառում:

Բայց այսպէս թէ այնպէս՝ երբ Կարսի նահանգը անցաւ հայկական իշխանութ-եանը, և մենք գրաւեցինք Արդահանի գաւառը՝ Ջալալ բէկ թողեց իր հռչակաւոր ապարանքը և իր ամբողջ ընտանիքով գաղթեց Քուռ գէտի այն կողմը՝ Վրաստան:

Գրաւելով Արդահանը՝ ես կարգադրեցի յարքունիս գրաւել այդ ազնուական ապարանքը, և այնտեղ հաստատեցի գաւառական կառավարութիւնը: Եւ այնուհետև ես շատ սիրում էի անցնել Արդահան, կանգնել այդ կախարդ ապարանքի պատշգամբում, և մոռանալով ներկան և ապագան՝ դառնալ այն անցեալը, ուր երբեմն իշխել և ահաբեկել է այդ անուանի իմարաթ ապարանքը...

Երբ Արդահանի շրջանապետ, գաւառապետ ես նշանակեցի Իբրահիմ բէկ Կադիմովին՝ որին յետոյ Մինիստրների խորհուրդը գնդապետի աստիճան շնորհեց, Ջալալ բէկ կորցրեց իր վաղեմի համարումը և նշանակութիւնը: Արդահանի հայկական գաւառապետը, ինքը թուրք, և կապեր ունեցող՝ կարիք չունէր միջնորդի: Բացի այդ, այդ երկու բէկերը ազգակից էին իրանց բնոյթով. երկուսն էլ

փառասէր, երկուսն էլ հռչակ և անուն տենչող և երկուսն էլ շատ խելօք և նոյնչափ խորամանկ...

Եւ այդ խոշոր և ոչ օրդինար երկու դէմքը՝ չէին կարող բնականաբար պարփակուել մի տարածութեան վերայ: Իրանց խառնուածքով նրանք բացառում էին մէկը միւսին, և այդ օրուանից այդ երկու նշանաւոր բռնակալների միջև ծագեց մեծ մրցում, ու խմորեց իր շուրջը ոչ միայն ամբողջ Արդահանի՝ այլև հարևան գաւառների քաջազնական ուշադրութիւնը: Ջալալ բէկ մեծաչափ հարուստ էր, անուանի, հինաւուրց ազնուական, արտօնատէր և մեծ ազգակացական կապերով թէ՛ Տաճկաստանում և թէ՛ Աջարիայում: Տաճկաստանի քաղաքական գործիչները զառանցելով համիսլամական ուղղութեամբ՝ իրանց ձեռքումն էին պահում Ջալալ բէկին: Այդ նորան չէր արգելում ի հարկէ բարեկամութիւն անել և վրաց իշխանների հետ: Վրաց կառավարութիւնը իր հերթին կարծում էր, որ Ջալալ բէկին արտօնելով և շոյելով՝ նա ամուր կը լինի Աջարիստանում, և բացի այդ, վրացիները փայփայում էին և իրանց հեռանկարները թէ՛ Օլթիի և թէ՛ Արդահանի գաւառների մասին, և յոյս ունէին մեծապէս օգտագործել այստեղ Ջալալ բէկի մեծ անունը և նշանակութիւնը: Ջալալ բէկ, այդ ոչ պակաս դիպլօմատը՝ շատ լաւ հասկանում էր այդ բոլորը, և մեծաչափ ինքը օգտագործում այդ զաւեշտ առանցքը: Նա լայն բացեց վրաց թաւադ իշխանների առաջ իր հարուստ և հիւրասէր դռները, և վրաց ազնուականութիւնը տարուեց նորա ապարանքի փայլով և կեանքի վայելքներով...

Առատ կերուխումը, զուռնան, սազանդարը, արևելեան լարախաղները և բացօթեայ հռչակաւոր պարը՝ խելքամաղ արեցին վրաց իշխաններին:

Ջալալ բէկ՝ այդ խորամանկ ասիացին, շատ լաւ ըմբռնել էր իրերի իմաստը, և լայն բաց էր արել իր գրպանը:

Նա որսի էր հրաւիրում վրաց անուանիներին մի այնպիսի փայլով՝ որի մասին խօսում էին ոչ միայն Հայաստանի և Վրաստանի լեռներում, այլև Թիւրքիայում:

Նա տասնեակ վրաններ էր տարածում գեղատեսիլ վայրերում, տասնեակ խոհարարներ ու սպասաւորներ:

Այլ դէմք էր գնդապետ Կադիմով: Նա հին Նախճաւանցի էր:

Կադիմովների մեծ ընտանիքը շատ աշխատասէր ռանչպարների, հողագործի անուն ունի Հին Նախճաւանի գաւառում: Այդ գաւառի մեծ տափարակը, Արաքսի հովիտը՝ ջրովի ցանքերի պլատօ է, և երկրագործութիւնը շատ զարգացած է այստեղ: Հողը և ջուրը միաչափ արժէք ունեցող հարստութիւն է այդ գաւառում, և այդ պատճառով հողերի ոռոգման գործը երկրի մեծ տնտեսական խնդիրներից մէկն է: Ջրաբաշխական այդ հետաքրքիր սովորութիւններ-օրէնքները ստեղծել, առաջ են բերել ջրից օգտուելու խայտաճամուկ մի սիստեմ, և ջրաբաշխական այդ գործը խմորել է իր մէջ երկրի բոլոր առանձնայատկութիւն-

ները: Հին Նախճաւանի գաւառը Պարսկաստանի այն ֆէօդալ անկիւններից մէկն է՝ ուր բռնօրէն և միահեծան իշխել է թուրք ազնուականութիւնը: Ռուս տիրապետութիւնը, ռուս դատարանը և իրաւակարգը՝ վերլուծեց այդ մենաշնորհ դրութիւնը, բայց և այնպէս թուրք խաները և բէկերը միշտ տրամադիր էին իշխելու և բռնանալու: Ջուրը այդ գաւառում աւելի թանկարժէք է քան թէ հողը, և ջրի օգտուելու սիստեմը առաջ բերեց յատուկ ջրաբաշխական հաստատութիւն, որ Միրաբութիւն էր կոչւում: Թէև այդ ադմինիստրատիւ օրգանը ինքնըստինքնեան պէտք է կանոնաւորէր տնտեսական այդ բարդ յարաբերութիւնները՝ բայց թուրք ազնուականութիւնը անտես առնելով այդ օրէնքները՝ որոնք գալիս էին հաւասարակշռելու հողի բոլոր մշակների իրաւունքները դէպի այդ հողն ու ջուրը, առաջ բերեց այստեղ իր դաւադրութիւնները և այդ յարաբերութիւնները արիւնով շաղախեց...

Ռանչպարները, գիւղացիութիւնը, որ ուզում էր յենել իր իրաւունքները օրէնքի վերայ՝ հրապարակով բաժանուեց խաներից ու բէկերից: Նա սկսեց յամառ մրցել ազնուականութեան հետ, և այդ կատաղի կռիւը առաջ եկաւ ջրպետի, միրաբի ընտրութիւններում: Եւ որպէս փորձուած հողագործ այդ պատասխանատու պաշտօնի համար, և որպէս հակադիր ազնուականութեան ոտնձգ-ութիւնների՝ գաւառի երկրագործ ազգաբնակութիւնը երկար տարիների ընթացքում ընտրում էր գնդապետ Կադիմովի հօրը:

Եւ նա համարւում էր այդ դասակարգային կռւում՝ գիւղացիութեան ճարպիկ ու ուժեղ պարագլուխը: Այդ դեմօկրատիկ ընտանիքից էր հայկական իշխանութեան օրով Արդահանի շրջանապետ գնդապետ Կադիմով:

Կադիմովի երևալը այդ վայրում շրջանապետի դերում՝ միանգամայն խախտեց Ջամալ բէկի բոլոր հաշիները: Նա կորցնում էր այդ տարածութեան իր բոլոր հեղինակութիւնը, նա այլևս չէր կարող տոն և ընթացք տալ այդ երկրի գործերին: Եւ այստեղ սկսուեց այդ երկու ուժեղ մարդկանց միջև մրցումը, որ աճում էր օրեցօր, և օրեցօր սուր և թշնամալից բնոյթ ստանում:

Առերես նրանք սիրալիր էին՝ բայց Կադիմովի դիրքը և աճող հեղինակութիւնը և համարումը խախտել էին միանգամայն Ջալալի հանգիստը, և նա հաւասարակշռութիւնը կորցրած՝ բոլոր միջոցներով ձգտեց տապալելու այն մարդուն, որ այնպէս նսեմացրեց երկրում իր հմայքը և նշանակութիւնը...

Կադիմով շատ հեռատես էր, և հաշուի առնելով իր հակառակորդի բոլոր նիւթական, քաղաքական և բարոյական ոյժերը՝ եկաւ այն եզրակացութեանը, որ միայն ազգամիջեան առանցքում տեղի ունեցող պառակտումը կարող է տապալել Ջալալին: Եւ ահա թէ ինչպէ՞ս Կադիմով ձևակերպեց այդ դրութիւնը: Արդահանի և Օլթիի գաւառների ազգաբնակութեան մեծամասնութիւնը կազմում են բազմաթիւ քիւրդ ցեղեր: Բայց քրդերի մեծ տոկոսը սփռուած է և Կարսի ու Կաղզուանի շրջաններում: Այդ բազմաթիւ ցեղերը երբեմն թշնամի իրար հետ՝

այնուամենայնիւ կազմում են այն մեծ զանգուածը, որ պաշտպանելով քրդական պատիւը, թասիբը՝ իր մեծ և ընդհանուր խնդիրներում գիտէ ձուլուել ի պաշտպանութիւն իր ցեղային պատուախնդրութեան:

Տաճկաց տիրապետութեան օրով քրդերը երկրի ազգաբնակութեան թէև ստուար մեծամասնութիւնը՝ ընկճուած և խորթ զաւակներ էին: Ռուս տիրապետութեան օրով նրանք դարձեալ կթան կով էին բոլոր ուժեղների ձեռքում: Թիւրք տարրը, որպէս և թուրքերը՝ գերազանց խորամանկ և գերազանց պօլիտիկ՝ իրանց ձեռքումն էին պահում տեղական իշխանութիւնը, և բոլոր ասպարէզներում յետ մղելով քրդերին՝ ճնշում և հալածում էին վերջիններին:

Երբ վրացիք տիրեցին 19 թուին ամբողջ Արդահանի գաւառը՝ քրդերը նոյնպէս մեծապէս տուժեցին: Ջալալ բէկը դարձեալ հովանաւորեց իր ցեղակից թիւրքերին եւ թուրքերին, և նոքա բոլորը միացած ախորժալից վրացիների հետ՝ սկսեցին այդ անիշխան օրերում թալանել և կեղեքել քրդերին:

Հայկական իշխանութիւնը հանգցրեց այդ մեծ հրդեհը՝ և գնդապետ Կադիմով համակրութիւն ձեռք բերեց քրդերի մէջ: Եւ մինչ Ջալալ, շարունակելով հին սիստեմը՝ շարունակում էր իրան թիւրքերի և թուրքերի պաշտպան և ներկայացուցիչ համարել, Կադիմով յենուեց քրդերի վերայ՝ և քրդերի էլ-աղասի հռչակուեց:

Դաստիարակուած ադմինիստրատիւ մթնոլորտում՝ Կադիմով քաղաքական հոտառութիւն ունէր: Նա հաշուի առաւ ոչ միայն այն, որ քրդերը կազմում են Կարսի նահանգում մեծամասնութիւն՝ այլ գլխաւորապէս և այն, որ նա գաւառապետ է, և նորա թիկունքում կանգնած է հայկական իշխանութիւնը...

Չափելով և կշռելով իր և իր հակառակորդի ոյժերը՝ Կադիմով տեսաւ, որ մինչ Ջալալ պէտք է յենուի իր հարստութեան և իր գունատուած հմայքի վերայ, և իրաւական դիրք չունենալով՝ կարող է գործել միայն դարանում, ինքը կը յենուի ոչ միայն երկրի մեծամասնութեան վերայ՝ այլև օրէնքի: Եւ Ջամալ պարտուեց այդ առանցքում:

Կադիմով շրջապատեց իրան բացառապէս քրդերով և հայերով, և ձեռք բերեց մեծ հեղինակութիւն և մեծ անուն: Շարունակելով իր քաղաքականութիւնը՝ Կադիմով ամուսնացաւ մի քրդուհու հետ, և դորանով հրապարակով ընդգծեց իր համակրանքը քրդերին: Պէտք չը կայ ասելու ի հարկէ, որ մեր կիսավայրենի քրդերի համար մեծ պատիւ էր փեսայ գաւառապետը:

Գնդապետի աստիճանը մեծապէս հմայեց այդ լեռներում Կադիմովի անունը՝ և այդ աստիճանով պարծենում էին և քրդերը:

Մինիստր նախագահ Խատիսեան այցելելով Արդահան՝ ուսադիրներ շնորհեց մի քանի քիւրդ ցեղապետների, որոնց Ջալալ վերևից ներքև էր նայում: Այդ ուսադիրները իւր ժամանակին մեծ աղմուկ հանեցին մեր լեռներում, և օրուայ

այդ մեծ նորութիւնը տարածուեց ոչ միայն ամբողջ Կարսի և Բաթումի նահանգներում՝ այլ անցաւ և Թիւրքաց Հայաստան:

Իմ հակառակորդ գեներալները հեգնում էին այդ ուսադիրների առիթով: Բայց ես կարծում էի, որ եթէ երկրի հոգեբանութեան մէջ այդ փայլուն ժապաւէնները դեռ ունէին իրանց մեծապատկառ իմաստը, եթէ այդ էժանագին միջոցներով ես կարող եմ զբաղեցնել մարդկանց, եթէ այդ ժապաւէններով այս սանձարձակ և վայրենի ձորերում ես կարող եմ գէթ առ ժամանակ կապանքել ոճիրը՝ իրաւակարգ ստեղծել և տածել պետական քաղաքական կուրսը: Ինչո՞ւ ինձ խորշել այդ միջոցներից, որ միանգամայն և անմեղ էին և լոյեալ:

Այսպէս թէ այնպէս, բայց քրդերի մեծ զանգուածը Կադիմովի առաջնորդութեամբ, այդ ուսադիրները Կադիմովի գնդապետի աստիճանը՝ ձգեցին Ջալալի վաղեմի վարկը երկրում, և քրդերը կուռ կերպով շրջապատեցին Կադիմովին:

Նորա տունը դարձաւ մի ուխտատեղի, ուր վաղ առաւօտուանից գնում էին ոչ միայն գանգատաւորը և խնդրատուն՝ այլև այն բոլոր մարդիկը, որոնք հարկաւոր էին համարում գլուխ իջեցնել, ողջունել մի մարդու, որ ունէր ժողովրդական տենդենցեայ, և գիտէր ժողովրդի հետ վարուելու կերպը: Այցելուների այդ մեծ բազմութիւնը՝ ի դէմս գէթ նոցա մեծերի, հիւրասիրւում էր Կադիմովի մօտ, բայց նա էլ նուիրաբերում էր այն բոլորը՝ ինչ որ ինքը վայելում էր նորա սեղանից: Այդպէս է Արևելքի պահանջը, և այդ սովորութիւնները, որ կրում են հնութեան հետքեր՝ և՛ պատուալից են և՛ սրբազան:

Եւ այդպիսով և այս ասպարէզում՝ Ջալալ չէր կարողանում մրցել Կադիմովի հետ: Այդ բոլոր տուեալների առանցքում՝ երկրի այդ երկու ականաւոր մարդկանց թշնամութիւնը սկսեց սպառնալից կերպարանք ստանալ, և Ջալալ միջոցներ էր որոնում սպանել տալու գնդապետ Կադիմովին:

19 թուի վերջերում բռնուեց Ջալալ բէկի մի նամակը այդ իմաստով՝ և ես Կարսից մի քանի հայ կտրիճ ուղարկեցի Արդահան, յատկապէս Կադիմովի պաշտպանութեան համար: Գնդապետ Կադիմով անցուդարձ էր անում գաւառում բացառապէս քրդերի և հայերի ուղեկցութեամբ, և շատ անգամ փոխում էր ճանապարհը այլ ուղիներով անցնելով՝ որպէսզի խուսափի Ջալալի դարանից և զանազան դիպուածներից: Ջալալ իր հերթին՝ շրջապատել էր իրան կարափափխներով: Նա չէր անցնում երբէք մեր կողմը, իսկ իր վայրերում՝ նորա անցուդարձը շրջապատուած էր հարիւր զինուած հեծեալ կարափափխներով: Նա խուսափում էր և հիւրասիրութ-իւններից՝ և աշխատում էր ճաշել միայն իր տանը, իսկ գիւղերում՝ իր մօտ ազգականների մօտ: Նա երկիւղ էր կրում, որ կարող է ճաշակել Կադիմովի թոյնը...

Այդ երկու ախոյանները չէին տեսնւում իրար հետ՝ բայց սիրալիր բարևներ էին ուղարկում իրար, և Ջալալ շատ անգամ Բաթում մեկնելիս՝ յատուկ մարդ էր

ուղարկում Արդահանի գաւառապետի մօտ, իմանալու արդեօք որևէ բանի կարիք ունի՞ գնդապետը Բաթումից բերելու...

Եւ ո՞ր չափ ժպտալից և սիրալիր են Արևելքում երկու հակադիր ոյժերի յարաբերութիւնը՝ նոյնքան նա թունաւոր է և նոյնքան սպառնալից...

Եւ այդ գիտէին ոչ միայն իրանք՝ այդ երկու թշնամիները, որոնք վիճում էին գերիշխանութեան համար երկրում, այդ գիտէր ամբողջ երկիրը, և դորանով զբաղւում էին մեր անհոգ և լի ու առատ լեռներում...

Այդպէս է Արևելքի վրէժխնդիր դէմքը, և այդպէս են դեռ այն բարոյական հասկացողութիւնները մեզանում, որոնցով ապրում և զբաղւում են մարդիկ:

Դեռ 19 թուին ձմեռը՝ Արդահանի շրջանապետ Կադիմով հաղորդեց ինձ, որ Ջալալ բէկ յարաբերութեան մէջ է մտել Բագուի թուրքերի գործակալների հետ, և պղտորում է մտքերը Չլդըր գաւառակի կարափափախների մէջ, և գաւառապետը զինուորական ոյժեր է խնդրում՝ այդ խռովարար բոյնը պատժելու համար: Երբ ես այդ առիթով բանակցութեան մէջ մտայ զինուորական իշխանութեան հետ՝ վերջինը ըստ իր տակտիկայի, սկսեց ձգձգել խնդիրը: Գնդապետ Կադիմով նորից եռանդալից ոյժ պահանջեց՝ բացատրելով, որ պէտք է մինչև գարուն բռունցք ցոյց տալ այս տարածութեան վերայ, որպէսզի գարնանը բարդութիւններ առաջ չը գան: Եւ այդ միջնորդութեանը գնդապետ Կադիմով աւելացրեց. «Ես խնդրում եմ, որ մի գումարտակ հետևակ, երկու թնդանօթով միայն երևան այդ որջանոցում, որպէսզի Ջալալ բէկից ներշնչուած ըմբոստ տրամադրութիւնը միանգամայն անյայտանայ: Եւ ես բաւական եմ համարում այդ գումարտակը այն պատճառով, որ ես պատրաստ կ՛ունենամ նորա թիկունքում հազար զինուած քիւրդ ձիաւորներ, որոնք կը լրացնեն պակասը՝ եթէ այդ պէտք լինի... »

Գումարտակը շարժուեց Դեկտեմբերին, եղան ըմբոստութեան մասնակի դէպքեր, բայց գաւառակի ամբողջ ազգաբնակութիւնը աղ ու հացով դիմաւորեց զօրքը, և 2000 հրացան ներկայացրեց ադմինիստրացիայի պահանջով: Այդպէս լուծուեց և այն դաւադրութիւնը, որ գծել էր գնդ. Կադիմովի համար Ջալալ բէկ:

Երբ մեր գեներալները մեծ ինտրիգներ կազմակերպեցին Կադիմովի դէմ, և պահանջում էին ոչ միայն հեռացնել նորան պաշտօնից՝ այլև ձերբակալել, ես մանրամասն հաղորդեցի կառավարութեանը իմ այդ բոլոր տեղեկութիւնները և բացատրութիւններս:

Երբ 20 թուին մենք երկրորդ անգամ Հին Նախճաւանը գրաւելու վերայ էինք՝ Ներքին գործոց մինիստր Գիւլխանդանեան առաջարկեց գնդ. Կադիմովին Հին Նախճաւանի գաւառապետի պաշտօնը, բայց հեռատես և լուրջ Կադիմով՝ հրաժարուեց այդ առաջարկութիւնից: Հին Նախճաւանի գաւառում մենք մեր առաջի գրաման ժամանակ այնպէս էինք ձգել մեր վարկը, որ Կադիմով տատանւում էր այդ պայմաններում պատասխանատու պաշտօն ստանձնել այդ վայրում, և վերջապէս նա գիտէր, որ մարգարէն իւր գաւառում պատիւ չունի...

Շատ բնորոշ պէտք է համարել, որ… բայց այստեղ յիշողութիւններիս ժամանակագրական կարգը պահպանելու համար՝ հարկաւոր եմ համարում պատմել մի դէպք, որ կապուած է գնդ. Կադիմովի անձնաւորութեան հետ: Այդ դէպքը պատահեց իմ նահանգից բացակայ ժամանակ, երբ ես գնացել էի Երևան: Եւ ես կ՛ուզէի մի քանի խօսք ասել թէ՛ Երևան իմ գնալու մասին առհասարակ, և թէ՛ Կադիմովի հետ պատահած դէպքի մասին:

Մի տարի Կարսում նահանգապետութիւն անելուց յետոյ՝ ես առաջին անգամն էի հնարաւորութիւն ունենում հանդիպել Երևան: Դէպքերը, բազմատեսակ հազարաւոր աշխատանքը այնպիսի շշմեցուցիչ արագութեամբ էին յաջորդում մէկը միուսին, որ նահանգապետի ներկայութիւնը Կարսում պէտք էր անդադար: Եւ ես բառի բուն նշանակութեամբ՝ չէի նկատում նոյնիսկ, թէ որպիսի՞ մագիք թափով էին անցնում իմ օրերը: Էնցիկլօպեդիք աշխատանքը, անյետաձգելի պահանջները, հեռագիրների տարափը, արտաքին և ներքին կարևորագոյն նորութիւնները և խնդիրները՝ տեղում էին անդադար, և ստեղծում շնչասպառ պարտաւորութիւնների և հմայիչ հեռանկարների մթնոլորտ: Եւ կանգնած Կարսում, քաղաքական և պետական բազմատեսակ հոսանքների կենտրոնում՝ ես ամբողջովին տարուել էի այդ աշխատանքով, և օրը 18 ժամ անդադար ինքնամոռաց գնում այդ հախուռն ծփումի հետ: Այդ ժամանակամիջոցում…*(շարունակութիւնը բացակայում է)*

ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 4, թթ. 1-20, բնագիր, ձեռագիր:

DOC №5

Յուշեր՝ գեներալներ Փիրումովի և Յովսէփեանի կողմից գնդապետ Կադիմովին հետապնդելու, սպաննելու, նրանց վարքագծի և գեներալների գործողութիւններին իր տուած գնահատականի մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Սևրը և Ուիլսոնը այն մոգական պատկերներն էին՝ որոնց շուրջը համախմբւում էին հայկական բոլոր վերապրումները...***
- ***Պէտք էր ստեղծել երկրի վարչութիւնը, կառավարչական անհրաժեշտ մարմինները, պէտք էր գէթ ուրուագծել այն բարդ մեքենան, որ պէտք է իշխէր և կառավարեր այդ վիլայէթները:***
- ***Գեներալները, իրանց ապագայ դափնիքը աւելի բարձր գնահատելու համար՝ զեկուցել էին բարձր հրամանատարութեանը, որ դէպի Օլթի մարզը շատ վտանգաւոր է, և չէ կարող ի կատար ածուել նոցա հրամանատարութեան տակ գտնուող բանակով միայն:***
- ***... օգտուելով իմ բացակայութիւնից՝ գեներալները հրդեհել են նահանգը:***
- ***Համօ Յովհանջանեան ոչ միայն Մինիստր նախագահն էր՝ նա դաշնակցութեան առաջի քրմապետն էր, և կուսակցութեան սրբազնագոյն խորանի երդուեալ պահապանը:***
- ***Եւ թողնելով Մինիստրական ապարանքը՝ ես չէի կարողանում բացատրել ինձ - կօշմար է այդ՝ թէ հայկական հայդուկ իրականութիւն...***
- ***Պէտք է զարմանալ արդեօք այդ բոլորից յետոյ, որ քեամալիստներից չորս անգամ աւելի ուժեր ունենալով՝ մենք վարկաբեկեցինք զինուորական բախտը Կարսի մեծահռչակ ամրութիւնների տակ:***
- ***Բոլորը գիտէին, որ այդ թալանները կատարուել են զօրաց հրամանատարութեան զրահի տակ, բոլորը գիտէին, որ նահանգապետը անզօր է այն մարդկանց դէմ, որ մեր աստղերի պալատում ունէին խնամակալ մեծ ձեռքեր:***
- ***Երբ Քեազիմ Կարաբեկիր փաշան սկսեց իր արշաւը դէպի Կարսի նահանգը՝ գներեալ Փիրումով, Յովսէփեան և նոցա արբանեակները նորից փորձեցին օգտագործել մօմենտը և տապալել գնդ. Կադիմովին:***
- ***...այդ պատերազմական ռազմական տեղեկութիւնները ոչ միայն միշտ խախուտ, հարևանցիօրէն էին՝ այլև տենդենցիօզ ու սուտ:***

- ***Գնդ. Կադիմով մի խումբ հայերի իր գրպանից մեծ գումար ճանապարհածախք տուեց՝ և Արդահանի բոլոր հայերը անվնաս անցան Վրաստան:***
- ***Աշխարհիկ փառքի և անուան համար մենք մեր ամբողջ կեանքում խմորում ենք կայծակող կրքեր, դիզում ենք ոսկի, հարստութիւն և վերջում դաշոյնի մի հարուածով լուծելով այդ կրքոտ ու եսական հանգոյցը՝ անդունդ ենք գնում մեր բոլոր ոսկիներով և հարստութեամբ:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Ես իմ հոգու ամբողջ թափով ձգտում էի սպառել հրապարակի բոլոր կարևորագոյն պահանջները և հարցերը, և հեղեղում էի կառավարութիւնը՝ իմ գրաւոր, հեռագրական զեկուցումներով ու նախագծերով երկրի դատաստանական, տնտեսական, վարչական, ֆինանսական, զինուորական, կրթական և այլ բազմատեսակ պէտքերի մասին: Բայց իմ այդ բազմաթիւ դիմումներս մնում էին գրեթէ անպատասխան, և ինձ պէտք էր այդ պատճառով հանդիպել Երևան անձամբ տեսնուելու կառավարութեան անդամների հետ, նորից և նորից պարզելու, որ մենք պէտք է զբաղեցնենք երկիրը՝ քաղաքացիական զառանցանքներին վերջ տալու համար: Բացի այդ, մենք ներգաղթի նախօրեակումն էինք:

Սևրը և Ուիլսոնը այն մոգական պատկերներն էին՝ որոնց շուրջը համախմբւում էին հայկական բոլոր վերապրումները, իսկ այդ մեծ և երկար ճանապարհը պէտք ունէր նախապատրաստական աշխատանքների: Մենք պէտք է անցնէինք աւետեաց երկիրը ոչ հանպատրաստից՝ այլ կոփած շարքերով և ներդաշնակ քայլերով: Պէտք էր ստեղծել երկրի վարչութիւնը, կառավարչական անհրաժեշտ մարմինները, պէտք էր գէթ ուրուագծել այն բարդ մեքենան, որ պէտք է իշխէր և կառավարեր այդ վիլայէթները: Ի հարկէ Կարսի նահանգապետը անմիջական կապ չունէր այդ մեծ աշխատանքների հետ: Բայց Կարսի նահանգը այն դարբասն էր՝ որով պէտք է կատարուէր այդ ներգաղթը, Կարսի պլատոյում խմբուել ու լճացել էր թիւրքահայութեան 200 հազարանոց գաղթականութիւնը, Կարսի նահանգը կապուած էր մեզ յատկացուած բոլոր վիլայէթների հետ իր անցեալով ու ներկայով: Մեր ներգաղթը վերջապէս պէտք է կատարուէր քրդերի միջով, այն քրդերի՝ որոնց ցեղակիցները և ազգակիցները ապրում և թափառում են Կարսի լեռներ-ում: Կարսի նահանգապետը կանգնած էր այդ մեծ անցուդարձի կենտրոնում, նա որոշ չափով տեղեակ էր երկրի անցեալին և ներկային, և որպէս կառավարութեան գերագոյն ներկայացուցիչ այդ սահմաններում՝ նա աւելի քան ով և իցէ բարձր պաշտօնեաներից, շահագրգռուած էր երկրի ապագայ սահուն ընթացքում:

Այդ բոլոր տուեալների հիման վերայ՝ ես կարծում էի, որ կառավարութիւնը իմ մասնակցութեամբ կը մշակէ իր ապագայ անելիքները այդ ուղղութեամբ, և ես բոլոր գրաւոր և բանաւոր նիւթերով 20 թուի Մայիսի 20-ին մեկնեցի Երևան: Որչափ և տարօրինակ թուի այդ՝ ես չէի կարողանում հեռանալ նահանգի սահմաններից և այն պատճառով, որ սկզբից և մինչև Կարսի անկումը՝ ես օգնական փոխ-նահանգապետ չունէի:

Կառավարութիւնը ըստ երևոյթին չէր կարողանում համապատասխան թեկնածու գտնել այդ պաշտօնի համար, բայց միւս կողմից՝ ինձ թւում էր, նա չէր էլ մտահոգւում այդ խնդրով:

Իրերի ընթացքը Կարսի նահանգում հենց սկզբից շատ հարթ էր, կառավարութիւնը բաւական էր բարեյաջող դասաւորուած պայմաններով, և միանգամայն հաւանութիւն տալով իմ կառավարչական կուրսին՝ նա պէտք է խոստովանել, չէր էլ միջամտում նահանգի վարչական ներքին անցուդարձին:

Մինիստր նախագահ Խատիսեան՝ անցնելով վերջի անգամը Կարսի նահանգը և տեսնելով, որ փոխնահանգապետի պաշտօնը սկզբից և եթ թափուր է՝ ասաց ինձ, ինչո՞ւ օգնական չէք հրաւիրում Ձեզ համար, այդ հնարաւորութիւն կը տար Ձեզ յաճախ Երևան գալու: Իսկ մենք՝ աւելացրեց պրիմիերը, շատ անգամ պէտք ունենք խորհրդակցելու Ձեզ հետ: Ես բացատրեցի կառավարութեան նախագահին, որ ես ամիսների ընթացքում դիմել եմ մի երեք անձնաւորութեան, առաջարկել եմ նոցա Կարսի փոխնահանգապետի պաշտօնը՝ բայց նոցանից ամէն մէկը այս և այն պատճառներով հրաժարուեցին: Իսկ կառավարութեան առաջ ես այդ առիթով չեմ միջնորդել՝ որովհետև տեսնում էի, որ կենտրոնն էլ պաշտօնեաներ չունի:

Ինչ և իցէ, ես մեկնեցի Երևան այն օրերում՝ երբ գեներալ Փիրումով և Յովսէփեան, պատրաստուելով Օլթի անցնելու՝ իրաւունք էին ստացել Երևանից կանոնաւոր զօրքը կամաւորական խմբերով ուժեղացնելու: Գեներալները իրանց ապագայ դափնիքը աւելի բարձր գնահատելու համար՝ զեկուցել էին բարձր հրամանատարութեանը, որ դէպի Օլթի մարզը շատ վտանգաւոր է, և չէ կարող ի կատար ածուել նոցա հրամանատարութեան տակ գտնուող բանակով միայն: Կառավարութիւնը համաձայնուել էր, և պատշաճ վարկեր էր բացել գեներալներին: Օգտուելով այդ առաձգական իրաւունքներով՝ գեներալները իրանց շուրջն էին ժողովել բոլոր «թոկից փախած» բախտախնդիրներին, և նոցանից «ժամանակաւոր խմբեր» կազմակերպել:

Օգտուելով նահանգապետի Երևան մեկնելուց՝ այդ «լրացուցիչ զօրամասերը», անպատասխանատու ի հարկէ «թոյլտութեան» հիման վերայ՝ յարձակուեցին նահանգի զանազան մասերում քուրդ և թուրք գիւղերի վերայ, թալանեցին գիւղերը, քշեցին նոցա տաւարն ու ոչխարը և «շտաբում» բաժան-բաժան արեցին…

Թուրքերը և քրդերը տեսնում էին ի հարկէ, որ այդ թալանչիները զինուորներ են, և նրանք իրաւունք ունէին հաւատալու, որ թալանը կազմակերպուած է զինուորական բարձր իշխանութեան գիտութեամբ: Այդ չտեսնուած թալանների մասին ես Երևանում մի շարք հեռագիրներ ստացայ Կարսից, և ստիպուած էի շուտափոյթ վերադառնալ Կարս, տեսնելով, որ օգտուելով իմ բացակայութիւնից՝ գեներալները հրդեհել են նահանգը: Բայց շատ հետաքրքիր է, որ գեներալները իրաւունք էին համարել իրանց միջամտելու Երևանում և այդ խնդրում: Գեներալ Փիրումով հեռագրում էր Սպարապետին, որ ադմինիստրացիաի անհոգութեան պատճառով թալանը մեծ ծաւալ է ստացել նահանգում: Բայց գեներալը չէր բացատրում ի հարկէ, որ այդ թալանը կազմակերպել էին այն խմբապետները՝ որոնք ուսադիրներով պճնուած, կամաւորական խմբեր էին կազմել իբր թէ դէպի Օլթի անցնելու համար: Վերադառնալով Կարս՝ ես մեծ զեկուցում ուղարկեցի այդ առիթով ներքին գործերի Մինիստրին, բայց Ռուբէն փաշան անուշադիր թողեց և այդ գրութիւնը:

Բայց դառնանք իմ Երևանի այցին: *(առկայ է տեքստի խզում)*

...նահանգապետին և անցնելով Մինիստր նախագահի դահլիճը՝ ես բռնուած էի հայրենի ... պարծանքով: Ինձ չէր ճնշում այլևս կայսերական բռնալից գերիշխանութիւնը, այդ ապարանքը այն տաճարն էր՝ ուր իջել և թառել էին մեր դարաւոր երազները, և ինձ թվում էր, որ ես մէկն էի այն բազմաթիւներից՝ որոնց համար և քաղցր և ախորժալի է հայրենի իշխանութիւնը:

Այսպէս էին իմ վերապրումները՝ երբ ես հանդիպեցի հայկական պրեմիերին:

Համո Յովհանջանեան ոչ միայն Մինիստր նախագահն էր՝ նա դաշնակցութեան առաջի քրմապետն էր, և կուսակցութեան սրբազնագոյն խորանի երդուեալ պահապանը:

Եւ ինձ թւում էր, որ Կարսի նահանգապետի ունկնդրութիւնը կը տևի մի քանի ժամ, որ ես նորից ու նորից կ՛անցնեմ նորա մօտ և կը բաւարարեմ իմ բոլոր դիմումներս:

Բայց հեղինակութիւնը և հմայքը խոշորալից են միայն որոշ տարածութեան վերայ, և այդտեղ է երևի, տեսողութեան մեծ գաղտնիքը:

Համո Յովհանջանեան համեստ և ամօթխած էր, նա շատ քաղաքավարի էր, շատ դելիկատ, անտեղի զգոյշ, և այդ բոլոր փափակալից գծերով սպառում էր հայկական նոր պրիմիերի ուրուագիծը:

Բայց ինձ շատ զարմացրեց, որ դաշնակցութեան գաղտնիքների այդ լիազօրը ոչ մի հետաքրքրութիւն ցոյց չը տուեց դէպի այն բոլոր խնդիրները, որ ես աշխատում էի առանց հարցերի շարելու նորա առաջ: Նա լսում էր իմ զեկուցումը կարծես յակամայից՝ որպէս մի անցնող զրոյց, և ես չէի տեսնում, որ իմ բազմատեսակ յայտարարութիւններս մեր կառավարչական և պետական անցուդար-

ձից, համակէին պրիմիերի ուշադրութեանը, և առաջ բերէին հասկանալի տրամադրութիւն և վճռալից կորով:

Մեր տեսակցութիւնը տևեց գուցէ մի կէս ժամ, պրիմիերը խոստացաւ հրաւիրել ինձ Մինիստրների խորհրդի հերթական նիստին, իսկ ինքը ոչ մի ակնարկ անգամ չարտայայտեց, թէ հետաքրքրւում է Կարսի նահանգով և այն բոլոր խնդիրներով, որոնց մասին ես այնչափ գրել և հեռագրել եմ Կարսից:

Եւ ես թողեցի Մինիստր-նախագահի առանձնասենեակը՝ և հիասթափուած և ընկճուած...

Որպէս դաշնակցական առհասարակ, և որպէս գաղափարական գործիչ մասնաւորապէս՝ Համօ Յովհանջանեան անբիծ համարում ունի, և նա մէկն է իր այն ընկերներից, որին բոլորը սիրում են և որի մասին երկու կարծիք չը կայ այդ իմաստով:

Որպէս ժառանգական պահապան դաշնակցութեան պատգամների՝ Համօ գուցէ անփոխարինելի է իր երդուեալ հաւատարմութեամբ, բայց որպէս նախագահ կառավարութեան՝ նա մի թիւրիմացութիւն էր, եթէ չասենք աւելի:

Հանրապետութեան երկունքի օրերում հաւասարակշռութիւնը կորցնելով՝ դաշնակցութիւնը ուզեց փրկել դրութիւնը հայդուկ հմայքով, և իր բիւրոն կառավարութիւն յայտարարելով՝ նա դէպի նախագահի բազկաթոռը մղեց դաշնակցութեան հլու և հպատակ Համօյին...

Համեստ և ամօթխած, Համօ խոնարհւում էր կուսակցութեան որոշումի առաջ, անվերաբեր էր վերապրումներին, բայց նա քաշում էր այդ չարաբախտ լուծը միայն իր պատասխանաւութեամբ, բայց ուրիշների գերիշխանութեամբ...

Խմորւում էր մեծ դրամատիկ հանգոյց, և այդ կապանքը դառնալից՝ լուծելու վիճակ էր ընկել այն մարդուն, որ գուցէ աւելի քիչ, քան ով և իցէ, պատասխանատու էր դաշնակցութեան մեծ և փոքր սխալների համար...

Այդպէս էր իմ տպաւորութիւնը պրիմիեր Համօ Յովհանջանեանի հետ տեսակցութիւնից յետոյ:

Աստիճանական հերթով՝ ես պէտք է այցելէի այնուհետև ներքին գործոց Մինիստրին, որ միևնոյն ժամանակ և Զօրաց Մինիստր էր: Երբ Ալ. Խատիսեանի իրաւակարգային կուրսից յետոյ հայրենիքը վտանգի մէջ յայտարարուեց՝ Ռուբէն փաշան ընդգրկեց այդ երկու նշանաւոր Մինիստրութիւնների պորտֆիլները:

Այդ մինիստրի հետ էլ ես ծանօթ չէի: Նորա մասին ես շատ բան էի լսել, ասում էին, որ նա խելօք և լուրջ դաշնակցական է, համեստ, եռանդոտ և որպէս ռադիկալ դաշնակցական՝ շատ վճռալից: Բայց այդ բոլորը չէր կապւում նորա Մինիստրական ընթացքի հետ, և ես տարուբերւում էի այդ կարծիքների և փաստերի առանցքում: Ասում էին, որ փաշան «զբաղւում է» գլխաւորապէս «զինուորական» գործերով, իսկ երկրի ներքին գործերը երրորդական են, և ոչ շտապ համարելով՝ նա յանձնել է իր աշխատակիցներին, իրան վերապահելով միայն

Մինիստրի զրահը և հմայքը: Այսպէս թէ այնպէս, ես պէտք է ներկայանայի այդ Մինիստրին, բացի այն, որ թէ ներքին և թէ զինուորական բազմաթիւ կարևորագոյն խնդիրների մասին ես նորից պէտք է բանակցէի Մինիստրի հետ, ի նկատի առնելով, որ իմ բազում գրաւոր զեկուցումներս և հեռագիրներս մնում էին անպատասխան: Բայց իմ առաջի այցը այդ օրերի ամենակարող մարդուն՝ անյաջող էր: Մինիստրը չընդունեց ինձ, առարկելով, որ «զբաղուած է զինուոր-ական գործերով»:

Ի հարկէ, Կարսի նահանգը Հայաստանի կարևորագոյն այդ տարածութիւնը և Հանրապետութեան գրեթէ կէսը, եթէ ոչ աւելին՝ չէր կարող նշանաւոր «ռազմագէտի» հոգսերում նախամեծար տեղ գրաւելու հաւակնութիւն ունենալ, բայց և այնպէս ես կարծում էի, որ գէթ քաղաքավարութիւնը պահանջում էր մի երկու րոպէյով ընդունել Կարսի նահանգապետին, որ գալիս էր մայրաքաղաք առաջի անգամ, և որ Մինիստրի հետ նոյնիսկ պատիւ չունէր ծանօթ լինելու:

Մեր «յեղափոխական», «դեմոկրատ» և սանձարձակ օրերում՝ իմ այդ էտիկ պահանջը գուցէ և ժամանակակից չէր, բայց ես բոլորել էի յիսուն տարիս օրինական և դելիկատ շրջափակում, և այդ բոլոր միտումներով՝ մինիստրի այդ պատասխանը ոչ միայն տարօրինակ էր թւում ինձ, այլև չէր պարփակւում իմ հասկացողութիւններում:

Միւս օրը ես պէտք է տեսնուէի Մինիստրի հետ ներքին գործոց Մինիստրութեան շէնքում, և նա ընդունեց ինձ աւելի քան մի ժամ սպասել տալուց յետոյ:

Թէ ի՞նչ «կուսակցական», «ռազմական» և «պետական» մեծ գործերով էր զբաղուած այդ օրերի Հայաստանի այդ մեծ պետական դէմքը՝ մեզ, մահկանացուներիս համար այդ անիմանալի է ի հարկէ:

Վերջապէս, երկար սպասելուց յետոյ դահլիճի «ընկերվար» մթնոլորտում՝ ես արժանացայ վերջապէս, տենչալի ունկնդրութեան:

Առաջի հանդիպումիս տպաւորութիւնը ասում էր ինձ արդէն, որ Կարսի նահանգը շատ քիչ է հետաքրքրում ամենակարող մինիստրին, բայց այնուամենայնիւ ես ինքս սկսեցի զեկուցումս, տեսնելով մինիստրի անվերաբեր տրամադրութիւնը:

Որչափ և տրամադրուած չը լինէր Ներքին գործերի մինիստրը զբաղուելու Կարսի նահանգի շատ կարևոր և շատ լուրջ գործերով՝ Կարսի նահանգապետը այնուամենայնիւ օգտւում էր դէպքից գէթ թռուցիկ կերպով կրկնելու այն բոլորը, ինչ որ նա արծարծել էր իր բազմաթիւ գրութիւններում: Բայց այդ միջոցում մատուցարանի վերայ բերեցին մինիստրի համար միայն նախաճաշիկ, և նա շատ ախորժելից զբաղուեց նորանով:

... Ես շարունակում էի ի հարկէ զեկուցումս, երբեմն կանգ էի առնում, ցանկանալով գէթ դորանով մի րոպէ հեռացնել Մինիստրի ուշադրութիւնը՝ ըստ երևոյթին համեղ նախաճաշից, բայց մեր «ռազմագէտը» շարունակում էր իր գոր-

ծը, և միայն երբեմն թափահարում պետական հոգսերով ծանրաբեռնուած գլուխը, թէ որպէս նշան իր ուշադրութեան դէպի իմ զեկուցումս և թէ որպէս հաւանութիւն իր ախորժելից ուտելիքի...

Ես չը կարողացայ հասկանալ, հետաքրքրւում էր Մինիստրը երկրի որևէ գործերով արդեօք:

Իմ ժամուկէս զեկուցման ընթացքում նա լուռ էր, և ես ակամայ կրճատեցի իմ ասելիքներս՝ դելեկատ, փափուկ դրութիւնից դուրս գալու համար... Որպէս ասիստենտ իմ ունկնդրութեան՝ իմ դիմաց նստած էր ներքին գործերի Մինիստրի օգնական Սահակ Թորոսեան: Հրապարակի ակտիւ դէմքերի թւում Թորոսեան մէկն էր այն անձնաւորութիւններից, որոնք ամօթխած և համեստ շրջապատում պարփակում են անկաշառ ազնւութիւն, և զգայուն, անկեղծ ազգային գործով: Թորոսեան ևս լուռ էր ամբողջ ժամանակը, բայց ինձ թւում էր, որ նա իր պատրօնի փոխարէն լաւ չէր զգում իրան: Եւ որչափ անվերաբեր էր դէպի նահանգապետի զեկուցումը Մինիստրը՝ այնչափ լարուած ուշադրութեամբ էր լսում ինձ նրա օգնականը:

Երբ ես բարձրացայ տեղիցս՝ Մինիստրը ասաց, որ նա վճռել է հեռացնել Կարսի նահանգից գեներալ Յովսէփեանին, և ցանկութիւն յայտնեց դարձեալ խօսելու ինձ հետ: Եւ ինձ այն ժամանակ թուաց, որ նա մինչ այդ լսում էր, իսկ յետոյ կը խօսի: Մինիստրը խնդրեց ինձ այցելել իրան նոյն շէնքում երեկոյեան ժամի հինգին:

Իմ երկար տարիների պաշտօնաւորութեան ընթացքում՝ ես շատ սիրել եմ ճշտութիւնը, և երբեմն առիթ չեմ տուել սպասելու ինձ ոչ միայն իմ իշխանաւորներին, այլ և ինձ ենթականերին: Եւ առանց 10 րոպէի հինգը ես արդէն Մինիստրի ընդունարանումն էի: Բայց Մինիստրը չը կար, ի հարկէ ես սպասեցի նորան մինչև ժամի 5, բայց անցաւ և վեցը, իսկ մինիստրը դարձեալ չը կար և նորա գալու մասին ոչ ոք ոք մի տեղեկութիւն չունէր:

Եւ թողնելով Մինիստրական ապարանքը՝ ես չէի կարողանում բացատրել ինձ, կօշմա՞ր է այդ՝ թէ հայկական հայդուկ իրականութիւն...

Միւս օրը, պատահմամբ նոյն շէնքում հանդիպելով ինձ՝ Ռուբէն փաշան ասաց.- Ախ, ես միայն հիմա եմ մտաբերում, որ ժամադիր էի արել Ձեզ, մոռացայ...

Եւ այդ ասում էր այն մարդը, որ հաւակնութիւն ունէր երկու Մինիստրութիւն կառավարելու...

Ինձ ոչինչ չէր մնում ասելու, ես ոչ մի տրամադրութիւն էլ չունէի այնուհետև տեսնուելու այն մարդու հետ, որ ոչ միայն այդչափ բոբիկ էր պետական-կառավարչական գործերում՝ այլ և հասարակ և տարրական քաղաքավարութեան իմաստում:

Բայց այդ օր, Մայիսի 28-ին՝ Հայաստանի Հանրապետութեան տարելիցի օրը, երբ ես պատրաստւում էի անցնելու կառավարչական ապարանքը՝ Կարսից ես ստացայ հետևեալ ծածկագիր պաշտօնական հեռագիրը.- «Գեներալ Յովսէփեան իր կամաւորական խմբերի առաջնորդ Մուրադխանին իր աւտօմոբիլով ուղարկել է Արդահան գնդապետ Կադիմովին սպաննելու համար: Հաճեցէք անյապաղ միջոցներ ձեռք առնել»:

Այդպիսով, ինչպէս տեսնում էք՝ Կարսի գեներալները ուզում էին լիուլի կերպով օգտագործել նահանգապետի նահանգից բացակայութիւնը - նրանք թալանել տուեցին քիւրդ գիւղերը, և հեռագրեցին, որ Կարսի ադմինիստրացիան թոյլ է: Միւս կողմից, օգտուելով դէպքից՝ նրանք մահափորձ կազմակերպեցին այն Կադիմովի վերայ, որին նրանք այդքան ժամանակ անհետևանք ամբաստանում և հալածում էին: Այդ երկու մեծ գեներալները ուզեցին մի անգամից տապալել Կարսի նահանգապետին: Ստանալով այդ ծածկագիր հեռագիրը՝ ես շտապեցի Մինիստր նախագահի մօտ: Այդ միջոցում պրիմիերի առանձնասենեակումն էին Ռուբէն փաշա և երկրագործութեան Մինիստր Վրացեան: Հաղորդելով նոցա ստացուած տեղեկութիւնը՝ ես բացատրեցի, որ Կադիմովի սպաննութիւնը թուրքութեան կենտրոնում կարող է մեծ բռնկում առաջ բերել նահանգում, որի առաջ կը նսեմանայ մեր Նախճաւանի պատմական նահանջը, և խնդրեցի հեռագրական միջոցներ ձեռք առնելու այդ կեղտոտ և երկրի իշխանութեան համար այդչափ արատաւորիչ դաւադրութեան առաջն առնելու համար: Թէ ինչպէս զգաց իրան «Զօրաց և Ներքին գործոց Մինիստր» Ռուբէն փաշան՝ չը գիտեմ, բայց խմբապետ Մուրադխանին նա հեռագրով պահանջեց Երևան: Ես չը գիտեմ ի հարկէ, թէ ինչպէս բացատրուեցին այդ հերթական իշխանագործութեան մասին այդ երկու «ընկերները», ես գիտեմ միայն, որ քաջարի գեներալները դարձեալ մնացին իրանց տեղերում: Հայաստանի դիկտատօրը ճակատագրական ընթացքով գնում էր դէպի անդունդ, և նրան վիճակ էր ընկել երևի, այդ խորխորատը գնալ իր գեներալներով շրջապատուած....

Պետք է զարմանալ արդեօք այդ բոլորից յետոյ, որ քեամալիստներից չորս անգամ աւելի ոյժեր ունենալով՝ մենք վարկաբեկեցինք զինուորական բախտը Կարսի մեծահռչակ ամրութիւնների տակ:

Եւ շատ հասկանալի հոգեբանական առանցքում՝ մեր զօրաբանակը չէր կարող կռուել և յաղթել: Նա իր չորս կողմը տեսել էր միայն թալան, միայն ինտրիգ ու միայն ոճրալից խաղաղ ազգաբնակութիւնը թալանելու և կեղեքելու կազմակերպութիւնը, որպէս և Արդահանի գաւառապետ Կադիմովին սպաննելու փորձը գաղտնիք չը մնաց ի հարկէ երկրում:

Իր կեանքի դէմ պատրաստուած մահափորձը, որ իր ժամանակին խանգարել էր նահանգապետը՝ իմացաւ ի հարկէ և ինքը Կադիմովը:

Բայց նա այնչափ խելօք և լուրջ մարդ գտնուեց, որ խուսափեց նոյնիսկ խօսելու այդ մասին իր նահանգապետի հետ: Վերջինի համար՝ որպէս հայի և նահանգապետի, գեներալների այդ կեղտոտ դաւադրութիւնը նա շատ փափուկ, դելեգատ խնդիր էր համարում, և գնդապետ Կադիմով նոյնիսկ առիթ չը տուեց ինձ կարծելու, որ նա իրազեկ է այդ սև պատմութեան մասին:

Դառնալով երկրի քուրդ և թուրք ժողովրդի վերաբերմունքին դէպի այդ երկու աղաղակող անցքերը՝ ես պէտք է ասեմ, որ իմ դրութիւնս աւելի քան դժուարին էր ժողովրդի առաջ:

Բոլորը գիտէին, որ այդ թալանները կատարուել են զօրաց հրամանատարութեան զրահի տակ, բոլորը գիտէին, որ նահանգապետը անզօր է այն մարդկանց դէմ, որ մեր աստղերի պալատում ունէին խնամակալ մեծ ձեռքեր:

Պէտք չը կայ ասելու, որ այդ մթնոլորտում պետութեան պրիստիժը, համարումը, միանգամայն ընկնում էր, երկիրը չէր տեսնում իր առաջ անաչառ կառավարութիւն, նա տեսնում էր գեներալներ և խմբապետներ, որոնք իրանք էին և օրէնք և իշխանութիւն:

Ի զուր էր նահանգապետը այդ առիթով բազմաթիւ զեկուցումներ և ծածկագիր հեռագիրներ տեղում Երևան: Փիրումով, Յովսէփեան՝ անսխալական հեղինակութիւն էին Երևանի առաջ, և նոցա ուղղուած բոլոր սլաքները չէին անդրադառնում Աստղերի պալատում:

Ահա թէ ինչով էին զբաղուած Կարսի գեներալները և գնդապետները՝ Կարսի անկման և Հայաստանի Հանրապետութեան խորտակման նախօրեակում:

Եւ ես թողեցի Երևանը ջարդուած և փշրուած յոյսերով: Եւ եթէ հրապարակում դեռ մնում էին մի բուռն մարդիկ, անկեղծ, ցաւալից և կարող՝ պետական նաւի առագաստները միանգամայն խռովալից էին և միանգամայն խաբուսիկ...

Այդչափ անմխիթար էին տպաւորութիւններս՝ մայրաքաղաքին իմ այս այցից յետոյ:

Բայց դառնանք Արդահանի գաւառի մասին մեր ասելիքներին:

Երբ Քեազիմ Կարաբեկիր փաշան սկսեց իր արշաւը դէպի Կարսի նահանգը՝ գներեալ Փիրումով, Յովսէփեան և նոցա արբանեակները նորից փորձեցին օգտագործել մօմենտը և տապալել գնդ. Կադիմովին:

Այդ զօրավարները ժողովի հրաւիրեցին ինձ, մինիստր Վրացեանին, Բաբալեանին և պարլամենտի մի քանի անդամների՝ որոնք այդ օրերում Կարս էին, և շատ խորհրդաւոր՝ իրանց մեծ ռազմական միտումների որոշումը յայտարարեցին, որ անյապաղ պէտք է բանտարկել գնդ. Կադիմովին: Ես բուռն կերպով առարկեցի, ինձ միացան կառավարութեան և պարլամենտի անդամները: Գեներալները ուզում էին երևի բանտարկել Կադիմովին նորա համար, որ տաճկաց արշաւից ութ օր առաջ նա այդ մասին ինձ ծածկագիր հեռագիր էր ուղարկել: Բայց այդ հեռագիրը ես ստացել էի միայն իններորդ օրը, որովհետև գեներալնե-

ը կարգադրել էին հնարաւորութեան չափ ուշացնել նահանգապետի հեռագիրները: Նրանք ձգտում էին, որ նահանգապետը իրազեկ չը լինի նահանգի անցուդարձին, և իրանք օր առաջ Երևան այս և այն տեղեկութիւնը ուղարկելով՝ հնարաւորութիւն ունենան այդ տեղեկութիւններին իրանց ցանկալի գունաւորումը տալու:

Իսկ այդ պատերազմական ռազմական տեղեկութիւնները ոչ միայն միշտ խախուտ, հարևանցիօրէն էին՝ այլև տենդենցիօզ ու սուտ:

... Այդ տեղեկութիւնները խմբագրւում էին որոշ միտումներով, միայն գեներալները ուռցնում էին դրութիւնը, տասնապատկում թշնամու քանակը, նրա յարձակման դէպքերը հնարում: Եւ այդ բոլորը անում էին միայն նրա համար, որ յաջողութեան դէպքում մեծ դափնիք պահանջեն, իսկ մինչ այդ, գէթ աղմկեն իրանց շուրջը, և ձրի հերոսի հռչակ ստանան: Գնդ. Կադիմովի շուրջը հունցուող ոտնձգութիւնները այնչափ էին, որ Կարս գալու ժամանակ նա քաղաքում ստիպուած էր շրջելու թիկնապահներով:

Երբ մեր զօրքերը սկսեցին տենդոտ դատարկել Կարսի նահանգը, և Տաճկաց բանակը առաջանում էր՝ հայ ժողովուրդը փախչում էր բոլոր ուղղութիւններով: Փախան և Արդահանի գաւառի բոլոր հայերը:

Գնդ. Կադիմով մի խումբ հայերի իր գրպանից մեծ գումար ճանապարհածախք տուեց, և Արդահանի բոլոր հայերը անվնաս անցան Վրաստան: Բայց գնդ. Կադիմովի առաջ դրուած էր անլուծելի դելլիմայ՝ մնալ Արդահանում, թէ փախչել և ո՞ւր:

Նա գիտէր արդէն, որ գեներալները և նոցա արբանեակները վաղուց որսում են նորան, որ մի խումբ տաքագլուխ արկածախնդիր՝ որոնք թագնւում են դաշնակցութեան դիմակի տակ, կարող են հետևել նորան Հայաստանում:

Վրաստան անցնել նա չէր կարող նոյն միտումներով և թէ այն պատճառով, որ հայկական քաղաքականութիւն վարելով Վրաստանի սահմանում՝ նա ցանկալի հիւր չէր կարող լինել Վրաստանում: Մնում էր ուրեմն Արդահանը: Այդ գաւառի քրդութիւնը նորա ազգաբնակութեան գերազանց մասն էր կազմում, այդ քրդութիւնը գիտէր, որ գնդ. Կադիմով պաշտպանելով քրդերին զինուորականների բռնութիւններից և կեղեքումից՝ զինեց իր դէմ նորա հրամանատար կազմը, և գնդապետը վճռեց մնալ քրդերի պաշտպանութեան տակ: Երբ տաճկաց զօրամասերը գրաւեցին Արդհան՝ թիւրքերը ձերբակալեցին գնդ. Կադիմովին: Մի քանի օր նա ենթարկուեց տնային բանտարկութեան, իսկ յետոյ նորան տարան դէպի Մերդենեք, ուր գտնւում էր այն ժամանակ Կարսի նահանգապետ Ռուշդի փաշան: Ասում են, որ Կադիմովին յաջողուեց կաշառել այդ փաշային՝ և նա վերադարձաւ Արդահան:

Տեղեկանալով Կարսի անկման մասին՝ գնդ. Կադիմով անմիջապէս գալիս է Կարս իմ մասին շատ անհանգիստ լինելով, բայց իմանալով, որ Կարսի անկու-

մից միայն 10 րոպէ առաջ ինձ վիճակւում է մեկնել Կարսից՝ Կադիմով վերադառնում է Արդհան: Այնուհետև նա զբաղւում է գիւղատնտեսութեամբ: Երբ 22 թուի Յունուարին ես գրում էի այս տողերը՝ ես տեղեկութիւն ստացայ, որ Արդահանում սպանուել է Ջալալբէգ Աջարսկին, իսկ գնդապետ Կադիմով ձերբակալուել է... ուրեմն կատարուեց այն, ինչ որ պէտք է կատարուէր:

Երբ պայմանները տրամագծօրէն փոխուել էին, և երբ երկրում իշխում էր այն կառավարութիւնը, որին միշտ ... էր Ջալալ, նա գրաւում է իր նախամեծար տեղը Արդհանի գաւառում, և սկսում է հալածել գնդ. Կադիմովին:

Նորից և աւելի մեծ թափով բռնկւում են կրքերը, և ասիական դաշոյնը վերջ է տալիս այն բռնակալին, որ տասնեակ տարիների ընթացքում կեղեքել և բռնացել է: Թէ ո՞րչափ մեղաւոր է այդ սպաննութեան մէջ գնդ. Կադիմով՝ չը գիտեմ, ի հարկէ մի բան միայն ակներև է, որ այդ քրէական պրոցեսը կը կլանի նորա բոլոր ունեցուածքը:

Շատ ուշագրաւ է այդ առանքում արևելքի հոգեբանութիւնը: Աշխարհիկ փառքի և անուան համար մենք մեր ամբողջ կեանքում խմորում ենք կայծակող կրքեր, դիզում ենք ոսկի, հարստութիւն՝ և վերջում դաշոյնի մի հարուածով լուծելով այդ կրքոտ ու եսական հանգոյցը, անդունդ ենք գնում մեր բոլոր ոսկիներով և հարստութեամբ:

Հռչակաւոր և մեծանուն Ջալալ զոհուեց իր անհագ փառասիրութեան, ցիրուցան եղաւ նորա հետ միասին և նորա հսկայական հարստութիւնը: Իսկ գնդ. Կադիմով՝ նոյն ասիացին իր բնոյթում, ստիպուեց մարտնչելու Արդհանի այդ հզօր բռնակալի դէմ, և թակարդ ընկնելով՝ դուրս գալ այդ ծուղակից ի սպառ կողոպտուած և թալանուած...

Կովկասում սովորութիւն է ասել, որ մեր երկրի անուանիները դիզում են իրանց հարստութիւնը տարիների ընթացքում՝ և մի քանի ամսում սպառում դատարանների և իշխաւորների շէմքերում...

Կարսի բանտում Կադիմովին մի երկու ամիս պահելուց յետոյ՝ գնդապետին տեղափոխում են Սիվասի բանտը, ուր նա տառապում էր երկու տարի: Սիվասի բանտից նա ինձ երկու նամակ էր գրել, խնդրելով տեղեկացնել իր ազգականներին՝ իր նիւթական նեղ վիճակի մասին:

Յաջողւում է արդեօք, Կադիմովին արդարանալ և ազատուել՝ թէ փախուստ է կատարում բանտից, հաստատ տեղեկութիւն չունեմ, գիտեմ միայն, որ մի ամիս առաջ նա նորից յայտնւում է Արդահանում, ուր թողել էր իր ընտանիքը, տունը և տեղը: Բայց իր վերադարձից մի քանի օրից յետոյ՝ ինչ որ մարդիք, զինուած գնդացիրներով, յարձակւում են նորա տան վերայ և սպաննում գնդապետ Կադիմովին:

Այդպէս լուծուեց այն մեծ դրամատիկ կապանքը, ուր խճճուել էին քաղաքական և անձնական միտումներ:

ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 5, թթ. 1-27, բնագիր, ձեռագիր:

DOC №6

Յուշեր՝Կարսի համար թուրքերի մղած պատերազմի, ռազմական գործողութիւնների, հայ նշանաւոր գեներալների ու զօրահրամանատարների, իշխան Բեհբութովի 1854թ.-ին տարած յաղթանակի վերաբերեալ տեղեկութիւնների և Կարսի մարզի տնտեսական կեանքի մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Մեր հրամանատարութիւնը ոչ մի հասկացողութիւն չունէր թշնամու ոչ միայն մօտալուտ անելիքների մասին՝ այլև նորա ոյժերի, նորա հրամանատար կազմի մասին:***
- ***Աւելի պատեհ և աւելի անպատասխանատու պայմաններ գողերի համար՝ դժուար էր երևակայել, և ճարպիկ մարդիկ անվրէպ հնձում էին, ակնթարթը ձեռքից չը թողնելու համար...***
- ***...հակառակ մեր հրամանատարութեան ուռցրած տեղեկութիւներին՝ քեամալիստների թիւը մի 4 անգամ մեր զօրաբանակից փոքր էր:***
- ***Երկու կողմերն էլ, տնտեսական աշխատանքի մէջ մի դաւանանք գտնելով՝ ցանկանում էին միայն իրաւակարգ և հանգիստ, և ամբողջ սրտով պատրաստ էին պաշտպանելու այն իշխանութիւնը, որ կ՛ապահովէր նոցա այդ հանգիստը և այդ հալալ աշխատանքը:***
- ***Զինուորական խուզարկու մարմինը, որ յանձնուած էր Կարսում մի ողորմելի ռուսախօս հայ գլխապետի՝ մի ծաղր էր և ոչ լուրջ հաստատութիւն:***
- ***Հոկտեմբերի 15-ին, առաջի և վերջի կռուից յետոյ՝ մեր հրամանատարութեան կատարեալ սնանկութիւնը կասկածից դուրս էր:***
- ***Եւ այդ օրերում ես ստանում եմ գեն. Յովսէփեանից հետևեալ ռուսէրէն տելեֆօնագրումը այն ճակատից, որտեղից նա Հոկտեմբերի 15-ին այնպէս խայտառակ կերպով փախաւ Կարաբեկիր փաշայի թնդանօթների առջևից:***
  Արփաչայի մօտ, Կարս-Աղէքսանդրապօլ խճուղու վերայ՝ ոստիկան-ութիւնը բռնել է իր եղբօր տաւարը, որ նա տանում էր Լօռի, առարկելով, որ այդ տաւարը գեներալինն է, և այդ առիթով չար լեզուները իմ հասցէին տարածում են նենգ զրպարտութիւններ: Բարեհաճեցէք հրամայելու վերադարձնել բռնուած տաւարը եղբօրս՝ որովհետև ես մասնակից չեմ այդ տաւարին:
- ***Հոկտեմբերի 28-ին գիշերը՝ Կարսի ոստիկանապետը զեկուցեց ինձ, որ դասալքութիւնը ահռելի է դարձել, որ փախչում են աւագ սպաները և***

իրանց յետևից տանում ամբողջ գումարտակներ, որ ոստիկանութիւնը, որ բռնել էր ճանապարհները՝ հնարաւորութիւն չունի կանգնեցելու այդ հոսանքը:

- *Այդ վճռական յարձակումը վիճակ էր ընկել գնդապետ Մազմանեանին: Դա այն գնդապետն էր, որ 18 ամիս շարունակ միայն թալանով էր զբաղուած Արդահանի գաւառում...*
- *Արժանաւորութիւններին անհամապատասխան աստիճանները, նսեմացնելով այդ աստիճանների իմաստը՝ անբարոյականացնում են և մարդկանց:*
- *Այդ բոլոր տուեալները գալիս էին մի աւելորդ անգամ ընդգծելու մեր նախամեծար դրութիւնը և ասելու, որ գէթ պաշտպանուելու և երկար պաշտպանուելու համար մենք ունէինք անհամեմատ մեծ առաւելութիւն:*
- *.... յենարանների վերայ, որպէս մի ուրուական, կանգնած էր գունատ և անտարբեր դէմքով գեներալ Փիրումով: Այնտեղ էր մինիստր Բաբալեան, նախկին զինուորական մինիստր գեներալ Արարատով, անբախտ գեներալ Կազարով, Գարեգին եպիսկոպոսը, մի քանի գնդապետներ, Կարսի քաղաքագլուխ Նոհրատեան և ուրիշները: Բոլորը կորցրել էին իրանց, բոլորը լուռ էին և բոլորը ինչ-որ մի բանի էին սպասում...*
- *Առաջ եկաւ գեներալ Կազարով և շատ հանգիստ ասաց ինձ,– ամէն բան վերջացած է, զօրքը միանգամայն հրաժարւում է կռուել և ես մնացի հրամանատար առանց զօրաբանակի...*
- *Եւ Կարաբեկիր փաշա, գերելով գեներալ Փիրումովին՝ անմիջապէս պահանջեց դադարեցնել Զէյթուն զրահակիր գնացքի գործունէութիւնը:*
- *...այդ բացատրութիւններում մեր անկազմակերպութիւնն էր, ապիկարութիւնը և այն բացասական գծերի հաւաքածուն, որ խախտում է զօրական կորովը և այդօրինակ անլսելի պարտութիւն առաջ բերում...*

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Ո՞րչափ և զօրեղ լինէր «Աստղերի պալատը»՝ հասարակական կարծիքը ունէր իր նշանակութիւնը և Հայաստանի դիկտատոր Ռուբէն փաշան տրամադիր էր կարծես, փոխել Կարսի զօրաց հրամանատար կազմը:

Նա գտնում էր, որ գեներալ Փիրումով անգոյն և որևէ ձեռներեցութիւնից զուրկ մի մարդ էր՝ և խաղալիք գեներալ Յովսէփեանի և այլ տիրացուների ինտրիգան ձեռքերում, և նա համաձայնուել էր վերջապէս հեռացնել Կարսի նահանգից այդ ինտրիգանին: Բայց կաշկանդող «կուսակցական կապերը» ձգձգում էին խնդիրը, իսկ երբ սկսուեց քեամալիստների արշաւը՝ Հայաստանի դիկտատորը գտաւ, որ տեղափոխել զօրավարին պատերազմի ընթացքում՝ չի կարելի,

և սպասում էր, որ այդ գեներալները յաղթական դուրս գան այդ պատերազմից...

Բայց մեր պատերազմական քարտերը շփոթի ենթարկուեցին հենց սկզբից: Մեր հրամանատարութիւնը ոչ մի հասկացողութիւն չունէր թշնամու ոչ միայն մօտալուտ անելիքների մասին՝ այլև նորա ոյժերի, նորա հրամանատար կազմի մասին:

Իսկ թէ ինչ դրութեան մէջ էր Կարսի բերդը, նրա նշանաւոր ամրութիւնները՝ մենք այդ գիտենք արդէն: Կարսի շտաբը անուանական էր միայն: Շտաբի պետը՝ փոխգնդապետ Վահան Տէր-Առաքելեանը, մեծ պատերազմից առաջ տիրացու մեր եկեղեցիներից մէկում, ու սիրուած էր Կարսի խնջոյքներում իր ժողովրդական երգերի համար միայն:

Բայց ոչ մի հասկացողութիւն չունէր իրան յանձնուած գործի մասին: Կարսի ամրութիւնները, քարտէս ասուած բանը, որ նա պէտք է մեծ ուսումնասիրութեան ենթարկէր՝ նա չը գիտէր: Զուրկ գիտութիւնից և բնածինից, անտարբեր իր պարտաւորութիւններին, և ոչ մի համարում չունենալով ոչ զօրաց շարքերում, ոչ էլ հասարակութեան մէջ՝ գեներալ Փիրումով իր «ընկերներով» չէր կարող դէպի յաղթութիւն առաջնորդել բանակը:

Զօրքի պարենաւորման գործը՝ չը նայելով այդ տարուայ շատ առատ բերքին, չը նայելով այն մեծաքանակ հացին և այլ մթերքներին, որ մեր զինուորականները կրել էին իւր ժամանակին Օլթի գաւառից՝ ամենաողորմելի ճգնաժամ դրութեան մէջ էր: Եւ բաւական կը լինի այստեղ արձանագրել այդ առիթով, որ այդ միջոցին Կարսի անկումից մի 10 օր առաջ՝ մի զօրամաս, քաղցած, ստիպուած էր կողոպտելու մի պահեստ՝ ուր մեր գնդապետները իրանց համար հաց էին ամբարել...

Բայց Կարսի նահանգի բերքը այդ տարին այնչափ առատ էր, Օլթիի գաւառից կողոպտուած գիւղերի հացը այնչափ էր, որ մենք երկու տարով կարող էինք ապահովել Կարսի նահանգի բոլոր զօրամասերը: Զօրաց պարենաւորման գործի գլուխ դարձեալ ռուսախօս մի գեներալ...*(առկայ է տեքստի խզում)*

...ժողովրդի մեծ... *(անընթեռնելի)* թէ շատ խիտ է...*(անընթեռնելի)* դանդաղ էր շարժւում: Եւ ես վճռեցի Արփաչայը ջրով անցնել, օգտուելով, որ այդ օրերում «Արփաչայը քչացել էր, ճամբէքն էլ կոշտացել»...*(առկայ է տեքստի խզում)*

Եւ ես յիշեցի հռչակաւոր Օվեդիի պատկերալից խօսքերը՝ si licet exemplis [in paruo grand] ibus uti...:

(առկայ է տեքստի խզում)...Լօմիզէ ազգանունով:

Կարս գալով նորա անկումից մի հինգ օր առաջ՝ տեսնուեց նահանգապետի հետ, և ընդգծելով զօրաբանակի պարենաւորման կրիտիկ դրութիւնը՝ ասում էր, որ նա հաց ունի զօրքի համար միայն մի քանի օրուայ...

Իսկ տասնեակ և հարիւր հազարաւոր տաւարից, որ բռնագրաւել էին կամ որպէս «պատերազմական աւար» տարել էին մեր զինուորականները մեր քիւրդ գիւղերից՝ պարենաւորման գեներալը ունէր միայն 400 գլուխ ոչխար...

Երևանից եկած այդ գեներալը դիմեց նահանգապետին, որ հաց ու մսացու տաւար հաւաքուի բանակի համար նահանգի թուրք ազգաբնակութիւնից: Եւ ես պէտք է նորից դիմէի այն թուրքերին՝ որոնց մենք 18 ամսուայ ընթացքում շարունակ կեղեքել ու ճնշել էինք: Բացի այդ, ես պէտք է անէի այդ Կարսի անկումից հինգ օր առաջ՝ երբ թշնամին արդէն անցել էր Կարսի ամրութիւնների գօտին, և երբ գեներալ Փիրումով՝ Կարսի հրամանատարը, Կարսի պաշարումը աչքի առաջ ունենալով՝ իր պահեստներում գէթ մի տարուայ պարէն պէտք է ունենար իր բանակի համար...

Բայց պարէնաւորման գեներալի այդ պահանջը, որպէս և մեր ընդհանուր դրութիւնը ոչ միայն տրագիկ, ողբերգական էր՝ այլև կոմիկ ու զաւեշտ...

Այդ խառնաշփոթ առանցքում՝ պահեստապետները և այլ կարող մարդիկ, տենդոտ վերջացնում էին իրանց «գործունէութիւնը», և եռանդալից զեկուցում՝ ո՛չ հաց ունենք, ո՛չ միս և ո՛չ խոտ... Աւելի պատեհ և աւելի անպատասխանատու պայմաններ գողերի համար՝ դժուար էր երևակայել, և ճարպիկ մարդիկ անվրէպ հնձում էին՝ ակնթարթը ձեռքից չը թողնելու համար...

Չնայելով այդ բոլոր աննպաստ և մռայլ պայմաններին՝ ես դարձեալ կարծում էի, որ առանց ճակատամարտի թիւրքաց բանակը չէր կարող պաշարել Կարսը: Իսկ մեր զօրաբանակը չը նայելով փախչող հրամանատար կազմին և նորան յետևող զինուորութեանը՝ դեռ դաշտումն էր, Կարսի առաջաւոր և շատ ուժեղ դիրքերում: Բացի այդ, հակառակ մեր հրամանատարութեան ուռցրած տեղեկութիւններին՝ քեամալիստների թիւը մի 4 անգամ մեր զօրաբանակից փոքր էր: Եւ այդ ոյժերով Կարաբեկիր փաշան ոչ մի կերպ չէր կարող պաշարել Կարսը: Կարսի ամրութիւնների տրամագիծը 25 վերստ է, այդ տարածութիւնը կազմուած է ահռելի ամրութիւնների գօտիանման շերտերից, իսկ մենք այդ գօտիյում յամենայն դէպս ունէինք 20 հազարանոց բանակ, մի բանակ, որ գրեթէ 4 անգամ մեծ էր թշնամու բանակից:

Այդ բազմաթիւ դիրքերի գօտին ժամանակակից տեխնիկայի վերջին խօսքն էր, և նախքան մօտենալ Կարսին՝ Կարաբեկիր պէտք է մի քանի ճակատամարտ տար մեզ: Նա պէտք է իր ատամներով նուաճէր մի գօտին միւսի յետևից, նա դեռ պէտք է ջարդէր այդ գոօտիներում մեր զօրքը՝ և ապա միայն մօտենար Կարսի պարիսպներին և այնտեղ կանգ առնէր... Իսկ այստեղ նա պէտք է կռուէր Կարսի բացուածքներից որոտող հարիւր ծանր թնդանօթի հետ, և այդ ծխալից մթնոլորտում միայն նա կարող էր պաշարել Կարսը...

Իսկ ձիւնը արդէն տեղում էր, սառնամանիքները սկսուել էին, և մեր հակառակորդի դրութիւնը օրեցօր դժուարանում էր:

4-5 հազարանոց բանակով ներս խուժել երկրի ներսը՝ որտեղից թիւրքերը հեռացել էին 50 տարի առաջ, յաղթահարել վիթխարի ամրութիւնների մի շարք, ջարդել այդ խրամատներում հայկական 20 հազարանոց բանակը, հարկադրել նորան պատսպարուել Կարսի պարիսպներում, և յետոյ կամ յարձակում գործել այդ ժայռոտ և մռայլ բերդի վերայ՝ կամ երկար ու ձիգ ժամանակով պաշարել նորան: Այդ միանգամայն անհնարին էր թէ՛ ռազմական գիտութեան տեսակէտի, թէ՛ լոգիկ իմաստով: Ես էլ չեմ ուզում ասել, որ Կարսը նուաճելու համար Կարաբեկիր պէտք է դեռ ստիպէր հայկական աւելի քան հարիւր ծանր թնդանոթները, որ տասը տարուայ ռազմամթերք ունէին՝ լռելու: Իսկ այդ այնչափ էլ հեշտ գործ չէր: Այդ բոլոր տուեալները, որ ոչ միայն ակներև էին՝ այլև անվիճելի, հիմք էին տալիս մեզ կարծելու, որ չը նայելով մեր բոլոր ձախ պայմաններին՝ մենք դեռ կանգուն և ամուր էինք:

Վերջապէս ես հակուած էի ընդունելու, որ մենք պէտք է պատրաստ լինէինք պաշարմանը, բայց պաշարումը երկար ու ձիգ խնդիր է, և ես տրամադիր էի այդ առանցքում յուսալու, որ մեր թիկունքում կանգնած է ոչ միայն համայն հայութիւնը՝ այլև միջազգային իրաւունքը և նորա երդուեալ ներկայացուցիչ Եւրոպան...

Բացի այդ՝ Թիֆլիզից, Երևանից և Աղէքսանդրապօլից գալիս էր կարծես թէ շատ բարձր տրամադրութիւն: Երկաթուղու գնացքները շարունակ բերում էին ոչ միայն բազմաթիւ վաշտեր՝ այլև մասնաւոր մարդիկ, որ հետաքրքրուելով իրերի դրութեամբ՝ ինքնաբերաբար յուսալից տրամադրութիւն էր ստեղծում: Թիֆլիզի և Երևանի լրագիրները աղմկում էին մթնոլորտը: Այդ ձրի և անպատասխանատու յօդուածները ալիքանման բարձրանալով դէպի Կարս՝ չէին կարող չանդրադառնալ դէպի մեր իղձալից ապագան, և այդ բոլոր տուեալներում՝ մենք տրամադիր էինք լաւատես լինելու, և չէինք ընկճւում և թնդանօթների՛ որոտի տակ:

Ի հարկէ մենք գիտէինք լրագիրների մեծատառ սպառնալիքների իմաստը, մենք գիտէինք և Թիֆլիզի փափկասուն բուրժուազիաի ցոյցերի իսկական արժէքը, բայց հոգեբանական վերապրումներում այդ բոլոր խթանները դրական են, չը նայելով նոցա բոլոր խաբուսիկ և անցող իմաստին...

Այդ ջղային օրերում՝ եկաւ Կարս մի երիտասարդ սպայ, մի ինչ-որ Միշա Տէր-Պօղոսով: Նա իրեն գեներալ Բագրատունու ադիւտանտն էր անուանում, և եկել էր մինիստր նախագահ Համօ Յովհանջանեանի գրաւոր յանձնարարականով «թատերաբեմի» և առ հասարակ պատերազմական գործի դրութեան հետ ծանօթանալու, և կառավարութեան նախագահին այդ մասին զեկուցում տալու համար:

Այդ սպան մեր ոսկեզօծ երիտասարդութեան այն երամիցն էր՝ ուր չեն վարում, այլ միայն հնձում են...

Վօայեաժոր իր բնոյթով՝ երիտասարդը ի հաշիւ ի հարկէ «աշխատաւոր մասսաների», շարունակ անցուդարձ էր անում Եւրոպայ, և հեղինակալից կորո-

վով եկել էր այսօր ուսումնասիրելու իր հայրենիքի տագնապը: Բայց նախքան դիրքեր այցելելը՝ նա հարկաւոր համարեց գեներալ Փիրումովի բնակարանում զեկուցում տալու Հայկական հարցի դրութեան մասին Եւրոպայում...

Ես էլ էի հրաւիրուած այդ դասախօսութեանը, բայց ես գերադասեցի իմ ընթացիկ գործով զբաղուել, թողնելով Զօրաց հրամանատարին և նորա շտաբին այդ դասախօսութեան մեծ հաճոյքը: Միւս օրը արտասահմանից մեզ պատիւ արած պիժօնը մեկնեց «ճակատ», և հեղինակաւոր դիտեց «ռազմաբեմը», իր արժէքաւոր նկատողութիւնները արեց հրամանատարութեանը, և ճեպընթաց մեկնեց Երևան՝ ուր մինիստր-նախագահ սպասում էր նորա եզրակացութիւններին...

–Շտապում եմ,– ասում էր երիտասարդը, հրաժեշտ տալով,– և ստիպուած եմ Երևանից նորից անցնել Եւրոպայ... Շատ եմ հոգնել, շատ,– աւելացրեց երիտասարդը,– կ՛ուզէի հիմա էլ հայրենիքում աշխատել՝ բայց կառավարութիւնը նորից ուղարկում է ինձ Փարիզ, ի՞նչ արած, հասարակական լուծ է, պէտք է տանել...

Այդ զաւեշտ միջադէպը ես առաջ բերեցի ոչ միայն ընթերցողի մռայլ տրամադրութիւնը ցրելու համար՝ այլ որպէս մի բնորոշ գիծ մեր հասարակական կեանքի ուսումնասիրութեան համար: Վօայեաժոր երիտասարդը օգտւում էր դէպքից միայն, և այդ իր համար բարեյաջող պայմաններում՝ իր համար վայելք և հաճոյք ստեղծում: Բայց մեզ զարմացնում էր կառավարութեան նախագահը, որ երկրի այդ տագնապ և վճռական օրերում անգամ՝ հնարաւոր էր համարում գաստրօլների ուղարկել դեռափթիթ ու արկածալից սիրողներ...

Այդօրինակ թեթև՝ եթէ չասենք աւելին, վերաբերմունքը դէպի երկիրը և պետական գաղափարը վիրաւորական երկրի համար՝ միանգամայն ձգում էր այդ երկրի առաջ կառավարութեան համարումը: Եւ ամէնուրէք լսւում էին վիրաւոր սրտի նկատողութիւնները՝ մի՞թէ պատերազմի ընթացքի հետ ծանօթանալու համար կառավարութիւնը չը գտաւ մի աւելի կարող և լուրջ մարդ...

Այդ երիտասարդը դարձեալ թռաւ արտասահման՝ այս անգամ իրօք, այնտեղ դասախօսելու, թէ որչա՞փ յիմար մարդիկ են այդ հայերը, որ շարունակ վարում են, աշխատում՝ բայց չեն հնձում ու իր պէս անուշ վայելում...

Այդ ձրի և անպատասխանատու այցելուները որպէս ծաղր դառնալից՝ հրապարակում գալիս և գնում էին թողնելով երկրին ամոքել այդ դառնութիւնը:

Իսկ իրանք տանում էին երկրից «ծանր տպաւորութիւններ», և աշխատում էին օր առաջ թողնելու այն վայրը՝ ուր սերունդների մի շարք փութել է այնքան աշխատանք, արիւն և այնչափ արցունք...

Այդ բախտախնդիրը իրան ինչ որ «էս-էր» էր անուանում, և եկել էր մի քանի օրով Հայեաստան «հասարակական հոսանքների հետ ծանօթանալու համար»...

Եւ երևի այդ է պատճառը, որ մեր պրեմիերը այնչափ մեծ երկիւղածութեամբ էր խնկարկում այդ «յեղափոխականին»...

Այդ չարաբախտ տարին Կարսի նահանգում առանձնակի էր բերքը, արտակարգ առատ, խոտը անհաշիւ, աշունը երկար, անոյշ և հրաշալի, և ժողովուրդը վերջացնում էր այդ տնտեսութիւնը շատ նպաստաւոր պայմաններում: Այդ տարի ու կէս ժամանակի ընթացքում, հայ ժողովուրդը կարողացել էր վերականգնել իր բարի դրացիական յարաբերութիւնները այլազգիների հետ, և հարևանները վերսկսել էին իրար հետ վաղեմի տնտեսական աշխատակցութիւնը: Քրդերը, որպէս և առաջ՝ սկսել էին մզդուրութիւն, հովութիւն անել հայերի մօտ, իսկ հայերը ըստ սովորութեան՝ «եղով» էին տալիս քրդերին իրանց տաւարը[14]:

Հայերը դարձեալ՝ մանրուք, չարչի-խուրդասի էին տանում վաճառելու թուրք վայրերը, և հաց, ձու հաւաքողները միայնակ՝ դուք կը հանդիպէիք թուրք հեռաւոր անկիւններում: Թուրքերն ու քրդերը, իրանց հերթին՝ գալիս էին հայ արհեստաւորների մօտ իրանց պատուերներով և երկրի ժողովրդական խաւերում: Այդպիսով շատ կարճ ժամանակում վերացուեց երեկուայ խորթութիւնը:

Խոտի արտահանութիւնը նահանգից մեծ ծաւալ ստանալով՝ բազմաթիւ հայ գիւղեր երկրի այդ տնտեսութեամբ էին զբաղւում, և շատ ու շատ մարդիկ թուրք գիւղերում կանխիկ վճարներ էին տուել, եկող գարնանը խոտ ստանալու համար: Նորից նշանակութիւն ստացաւ կաթնատնտեսութիւնը, և հայերը, որ պատերազմից առաջ և պատերազմի ընթացքում մեծ չափով պանիր և իւղ էին պատրաստում՝ բանակցութիւնների մէջ մտան թուրքերի և քրդերի հետ, և գարնան օրերից պէտք է մեծ թափով անցնէին այդ աշխատանքներին:

– Հաւատա՞նք, նահանգապետ խուճապին, և բռնենք պանդխտութեան ճանապարհը, թէ մնանք այստեղ և մեռնենք մեր տներում...

Իմ առաջ կանգնած էին մարդիկ, որ տեղահան էին արուած առանց նախազգուշութեան, որ թողել էին կաթսաները կրակի վերայ և հացը թոնրում...

Կաղզուանը մեր զօրքը դատարկեց երկու ժամուայ ընթացքում, իսկ մի շաբաթից յետոյ եկողները պատմում էին, որ այնտեղ թուրք զօրքի մասին ոչ մի տեղեկութիւն չը կար: Իսկ թէ ո՞ւմ առջևիցն էր փախչում մեր զօրաբանակը, և թէ ինչո՞ւ էին բոլորը Կարսի թնդանօթների հովանու տակ կուտակւում՝ այդ մի գաղտնիք էր, ուր թափանցում էին միայն մեր գեներալներն ու սպաները: Նրանք ասում են, որ «ռազմական միտումներով» նոցա պէտք է օր առաջ դէպի Կարս քաշել մեր ամբողջ զօրաբանակը, և այնտեղ երևի թիւրքերին ջարդել: Բայց այդ ռազմական միտումները բերեցին մեզ ոչ միայն Կարս՝ այլ Աղէքսանդրապօլ, և հայ ժողովուրդը կարօտ մնաց այն ճակատամարտին, որ երկու ամսից

[14] Աշնան վերջին՝ երբ տաւարը ցամաքելու վերայ է, փոքր տնտեսութիւնները տալիս են իրանց աւելորդ տաւարը խոտաշատ գիւղեր մինչև Գարուն, և ստանում են իւղի որոշ քանակութիւն: Այդ սովորութիւնը մեզանում անուանւում է *[եղով տալ]*...

աւելի նահանջելով՝ գեներալ Փիրումով պատրաստում էր տալու Կարաբեկիր փաշային...

Ինձ պէտք չէ ասել, որ հոգսերի և զբաղմունքների այդ առանցքում մարդիկ ո՛չ ժամանակ և ո՛չ էլ տրամադրութիւն ունէին քաղաքական արկածներով զբաղուելու:

Երկու կողմերն էլ տնտեսական աշխատանքի մէջ մի դաւանանք գտնելով՝ ցանկանում էին միայն իրաւակարգ և հանգիստ, և ամբողջ սրտով պատրաստ էին պաշտպանելու այն իշխանութիւնը, որ կ՛ապահովէր նոցա այդ հանգիստը և այդ հալալ աշխատանքը:

Այդպէս էր երկրի տիպարը այդ պատմական օրերում:

Իսկ հայ ժողովրդի համար աւելի նուիրական էր այդ հանգիստը: Նա դեռ նոր էր դարձել օտարութիւնից, նորից բոցավառել հինաւուրց օջախը և նորից տնտեսել իր աշխատանքը: Բացի դրանից, իրաւատէր զգալով իրան այժմ՝ հայը յոյս ունէր հանգիստ անձնատուր լինելու իր ազատ և անկախ զբաղմունքներին, և այդ առանցքում նա փայփայում էր իր հեռանկարները:

Եւ երբ ստեղծուեց խուճապը, երբ մեր զինուորականները անկախ և անջատ երկրից և ժողովրդից՝ թողնում և հեռանում էին հայրենի սահմաններից, հայ ժողովուրդը քարացած, կանգնած էր իր տեղում: Մարդիկ չէին ուզում հաւատալ իրանց աչքերին, նրանք դեռ կալերումն էին, դեռ խոտատեղի գլխին, և հանկարծ՝ թողնել այդ բոլորը, թողնել այդ աշխատանքը և հեռանալ...

Երբ Կարսի անկումից մի քանի օր առաջ ես կառքով անցնում էի քաղաքով՝ ինձ կանգնեցրեց ժողովրդի մի բազմութիւն: Ինձ շրջապատող ժողովրդի դիմումը շփոթեցրեց ինձ: Նա ուզում էր լսել նահանգապետից հաւաստիացում, որ խուճապը չափազանցրած է, նա տրամադրութիւն չունէր առաջ գնալու, և աղերսում էր ասելու՝ մնացէք, փորձանքը կանցնէ...

Մի րոպէ տատանումից ու յուզմունքից յետոյ՝ ես պատասխանեցի.

– Ես և իմ ընտանիքս մնում ենք մեր տեղում և ոչ մի ցանկութիւն չունենք փախչելու, իսկ եթէ,– վերջացրեցի ես,– մեր ճակատին գրուած է թողնել այս երկիրը՝ մենք ճանապարհ կ՛ընկնենք Ձեզ հետ միասին...

Նահանգապետի այդ պատասխանը, որ դեռ տակաւին պաշտօնաւորում էր՝ բարձրացրեց ժողովրդի ընկճուած տրամադրութիւնը, և ես անցայ բուռն բարեմաղթութիւնների ուղեկցութեամբ...

Զինուորական ժողովում, որ կայացաւ Կարսի անկումից մի քանի օր առաջ՝ և ուր ինձ հետ միասին ներկայ էր և մինիստր Բաբալեան, նորից բարձրացաւ հայ ժողովրդից նահանգը դատարկելու խնդիրը: Այդ առիթով ես յայտարարեցի, որ Կարսի զօրաբանակի մեծ մասը տեղացիներ են, որ հեռացնելով ազգաբնակութիւնը՝ մենք լքումի կը մատնենք զօրամասերի շարքերը, որ զինուորը՝ նորա ընտանիքը գնալուց յետոյ ինքն էլ կը հետևի նորան, և մեր ոչ մի միջոցը չի կա-

րող կանգնեցնել դասալիքութիւնը: Բացի այդ, աւելացրեցի ես, դուք տեսնում էք, թէ ինչպէ՞ս ժողովուրդը տրամադիր չէ թողնելու իր բնակատեղին, և այդ տրամադրութիւնը պէտք է հաշուի առնել: Վերջապէս՝ ասացի ես, մենք պէտք է լսենք մեր հրամանատարութեան հեղինակաւոր յայտարարութիւնը դրութեան մասին: Յոյս ունի՞ նա արդեօք դիմադրելու իր հակառակորդին, և թէ որչա՞փ կանգուն ենք մենք, այդ բառի լայն իմաստով...

Գեներալ Փիրումով, որ պառկած էր անկողնում, և իբր թէ հրամանատարում էր՝ ասաց որ դրութիւնը ծանր է, բայց ոչ յուսայատական, և եթէ Երևանից հասնեն այն զօրամասերը, որ մենք սպասում ենք՝ մենք երկիւղ կրելու ոչինչ չունենք...

Բայց գեներալի այդ յայտարարութիւնը նորան արուած հարցապնդման պատասխանի ընդհանուր բնոյթ էր կրում, և չէր յենւում տուեալների վերայ: Հակառակորդի ոյժերի, նորա ուր լինելու և նորա նպատակների մասին մեր հրամանատարութիւնը միայն հաւանական ենթադրութիւններ էր անում, բայց ոչ փաստեր առաջ բերում: Այն ազգութիւնների ներկայացուցիչներին, որոնց այդ դէպքում նա կարող էր խուզարկու իմաստով օգտագործել՝ նա թշնամացրել էր իր հետ, և նրանք բոլորը փախել, գնացել էին: Զինուորական խուզարկու մարմինը, որ յանձնուած էր Կարսում մի ողորմելի ռուսախօս հայ գլխապետի՝ մի ծաղր էր, և ոչ լուրջ հաստատութիւն:

Եթէ նորա նախորդը՝ ինչպէս յիշում էք, սկսեց իր Կարսի նահանգում գործունէութիւնը նրանով, որ «գաղտնի գործերի» համար բանտարկում էր միայն հարուստ քրդերին, և փրկանք ստանալով արձակում նոցա՝ այս խուզարկու կապիտանը ժամանակակից այդ արհեստին էլ անընդունակ էր: Նա զբաղուած էր միայն ինտրիգներով, իր գեներալներին դուր գալու համար նա հետաքրքրւում էր ոստիկանութեան գործունէութեամբ, գաղտնի քննութիւն էր կատարում, թէ այս և այն ոստիկանը որչա՞փ կաշառք է ստացել, և դորանով սպառում իր կոչումը:

Գեներալ Փիրումով-Յովսէփեանի «Կամաւորական խմբերը» երկրի տականքներից կազմուած՝ կատարում էին իբր թէ առաջաւոր մասերի պարտաւորութ-իւններ և «հետազօտելով» «ռազմաբեմը»՝ մեր շտաբին իբր թէ տեղեկութիւններ էին հաղորդում թշնամու քանակի, դիրքերի և տրամադրութիւնների մասին:

Այդ խմբերը հեռանում էին, ճիշտ է, իրանց կայաններից՝ բայց նրանք գնում էին միայն գաստրոլների դէպի քուրդ և թուրք գիւղերը, ահաբեկում խաղաղ ժողովուրդը, կոտորում, ջարդում, թալանում, և վերադառնալով «շտաբին»՝ «ստուգուած» ճիշտ տեղեկութիւններ էին տալիս թշնամու մասին...

Այդ ծայրահեղ սուտ և հնարած «տեղեկութիւնները» Կարսի շտաբը հեռագրով հաղորդում էր Երևան, և այդ էր պատճառը, որ Զինուորական մինիստրը՝

ամենակարող Ռուբէն փաշան, արգելեց նահանգապետին լուսաբանել թատերաբեմի դրութիւնը, որովհետև նահանգապետի տուեալները տրամագծօրէն տարբերւում էին շտաբի «ճիշտ տեղեկութիւններից»…

Այդչափ ողորմելի էին մեր հրամանատարութեան տեղեկութիւնները իր հակառակորդի մասին, և այդ միանգամայն սուտ և միանգամայն ֆանտաստիկ տեղեկութիւններով զբաղեցնելով երկու ամսից աւելի կառավարութիւնը և հասարակաց կարծիքը՝ մեր հրամանատարութիւնը դէպի Աղէքսանդրապոլ էր առաջնորդում հայկական բանակը…

Հայ ազգի նշանաւոր գեներալ Կոմս Լորիս-Մելիքով, Տէր-Ղուկասով, Լազարեւ և միւսները՝ ռազմաբեմ էին դուրս գալիս շրջապատուած երկրի բոլոր ազգութիւնների նշանաւոր մարդկանցով: Այդ մէլիքները, խաները, բէկերը և աղալարները գեներալների պատուաւոր թիկնապահներ լինելով՝ բերում էին նոցա բոլոր ռազմական տեղեկութիւնները, և Կոմս Լօրիս, իր վրանում նստած՝ մանրամասնօրէն գիտէր, թէ որքա՞ն գումարտակ ունէր Մուխտար փաշան, որտե՞ղ են սփռուած այդ ոյժերը, ի՞նչ միտումներ ունի տաճկաց հրամանատարը, ո՞ր ճանապարհով նա կարող է առաջ խաղալ և այլն:

Իսկ մեր գեներալները և գնդապետները գերադասում էին նստել քաղաքում, զբաղուել ինտրիգներով, բուրդ և այլ իրեր հաւաքել, և իրանց տրամադրութեան տակ ոչ մի թուրք և ոչ մի քուրդ չունէին:

Երկրի բոլոր ազգութիւնները՝ սիստեմատիկ հալածանքներից յետոյ միանգամայն երես դարձրեց զինուորական իշխանութիւնից, և պէտք չը կայ ասելու այստեղ, որ իրերի այդ առանցքում՝ մեր հրամանատարութիւնը չէր կարող իրազեկ լինել իր շրջապատի մասին:

Հոկտեմբերի 15-ին, առաջի և վերջի կռուից յետոյ՝ մեր հրամանատարութեան կատարեալ սնանկութիւնը կասկածից դուրս էր: Այդ տեսնում էին բոլորը, այդ գիտէին և այն երկու մինիստրները՝ որոնք Կարսումն էին այդ օրերում:

Եւ այդ օրերում ես ստանում եմ գեն. Յովսէփեանից հետևեալ ռուսէրէն տելեֆօնագրումը այն ճակատից՝ ուր նա Հոկտեմբերի 15-ին այնպէս խայտառակ կերպով փախաւ Կարաբեկիր փաշայի թնդանօթների առջևից:

Արփաչայի մօտ, Կարս-Աղէքսանդրապոլ խճուղու վերայ՝ ոստիկանութիւնը բռնել է իր եղբօր տաւարը, որ նա տանում էր Լօռի, առարկելով, որ այդ տաւարը գեներալինն է, և այդ առիթով չար լեզուները իմ հասցէին տարածում են նենգ զրպարտութիւններ: Բարեհաճեցէք հրամայելու վերադարձնել բռնուած տաւարը եղբօրս, որովհետև ես մասնակից չեմ այդ տաւարին: Բայց այդ մեծաքանակ տաւարը բռնուած էր ոչ Կարսի նահանգում՝ այլ Աղէքսանդրապոլի գաւառում, և թէ ինչով վերջացաւ գործը՝ ես ոչ ժամանակ ու ոչ տրամադրութիւն ունէի զբաղուելու: Այդ բոլոր թէ՛ ակներև և թէ՛ գաղտնի տուեալները և հանգամանքները՝

միանգամայն երերելով զինուորական իրաւակարգը, խախտել էին թէ զօրաց շարքերում և թէ երկրում հրամանատարութեան համարումը:

Այդ բոլորը Երևանում գիտէին ի հարկէ, զարմանալի էր միայն, որ ոչ ոք չէր ուզում պարզել իրան, թէ ո՞վ է խառնաշփոթ մթնոլորտում հրամանատարում զօրաբանակում, և ո՞ւմ յետևիցն է գնում զօրքը, որ փաստօրէն յանձնուած էր իր ճակատագրին...

Գեներալ Փիրումով, նորա շտաբի պետ Տէր-Առաքելեան և շտաբի աւագ սպայ փոխգնդապետ Աւշարով՝ շարունակ կռւում էին իրար հետ, հայհոյում իրար, և դժուար էր ասել՝ մասնաւոր, անձնական թէ պաշտօնական ծագում ունէր այդ անպատկառ հայհոյանքը... Գեներալ Յովսէփեան կռւում էր իր երկու գնդապետների՝ Արութիւնովի և Միրիմանովի հետ: Գնդ. Յարութիւնեան գրաւոր դիմեց այդ առիթով Զօրաց բարձր իշխանութեանը՝ և ոչ երկդիմի դարձուածով գեն. Յովսէփ-եանին գող անուանեց: Գեն. Յովսէփեան իր հերթին միջոցների մէջ խտրութիւն չէր դնում, և հայհոյում էր իր գնդապետներին: (Հաշմանդամային, ինտենտանտ գնդապետ Աւալով՝ գանգատուելով, որ արքունի պահեստները դատարկ են, մինչ Օլթիի թալանից յետոյ նոքա պէտք է լի լինէին հացով, նոյնպէս հայհոյում էր գեներալներին և ամբողջ հրամանատար կազմին, և սուր լեզու բանեցնում...)

Իրերի իսկական դրութեան մասին այդ արքունի տնտեսութեան մէջ՝ ասում էր գնդ. Աւալով. «Ես գրաւոր մեծ զեկուցում եմ ուղարկել Հայկական բանակի գլխաւոր ինտենտանտ գեներալ Լօմիզէին, և նա գիտէ, թէ բանը ինչումն է... » Գեն. Լօմիզէն այցելելով նահանգապետին Կարսի անկումից մի քանի օր առաջ՝ ասում էր նորան. «Գնդ. Աւալովի զեկուցումներից ես գիտեմ ամէն բան... »:

Բոլորը գիտէին, բոլորը տեղեակ էին՝ բայց և այնպէս բոլորն էլ լռում էին, և դորանումն էր դրութեան և՛ տրագիկ և՛ կօմիկ բնոյթը...

Հրետանու փոխգնդապետ Իգիթխանեան՝ համակրելի հայ սպայ, մէկը այն փոքրաթիւ հայ սպաներից, որ տոգորուած էին ազգային ...ճանաչութեամբ, յարգ չունէր գեներալների մօտ:

Գեներալները հայհոյում էին նորան՝ որովհետև նա չէր կապանքում իր լեզուն...

Եւ այդ հրապարակում, ուր իշխանաւորը կռւում և հայհոյում էր իր ենթակային, իւր ենթական իր հերթին՝ իրանց անուններովն էր անուանում իր մեծերին այդ հրապարակում, ուր ի ցոյց էր բերուած մեր ներքին կեղտն ու ապականութիւնը, այդտեղ խօսք չէր կարող լինել լուրջ ու հեղինակաւոր իշխանութեան մասին: Շարքային զինուորը իրազեկ էր իր հրամանատար կազմի այդ անցուդարձին, և զինուորութեան շարքերը լքւում էին այնչափով՝ որչափով որ առաջ էր գնում իշխանաւորների պառակտումը:

Այսպէս թէ այնպէս՝ Երևանը համոզուեց վերջապէս, որ Կարսի հրամանատարութիւնը դէպի խայտառակ պարտութիւն է առաջնորդում մեր բանակը, և Կարսի անկումից միայն չորս օր առաջ՝ Ռուբէն փաշան վճռեց հեռացնել հրապարակից գեն. Յովսէփեանին, հանգիստ տալով նորան թիկունքում:

Հոկտեմբերի 27-ին գեներալ Յովսէփեանի փոխարէն՝ առաջաւոր զօրաբանակի հրամանատար նշանակուեց գեներալ Կազարով, դարձեալ ռուսախօս, իսկ գեն. Փիրումով անկողնում պառկած՝ անվրդով պահում էր հրամանատարութեան գերագոյն իշխանութիւնը...

Թէ ինչո՞ւ ամիսների ընթացքում Զօրաց մինիստրը հնարաւոր չէր համարում փոխել հրամանատար կազմը, և ինչո՞ւ այդ հնարաւոր եղաւ Կարսի անկումից միայն երեք օր առաջ՝ այդ էլ երևի մի այնպիսի ռազմական գաղտնիք է, որ իր հետ տարաւ Ռուբէն փաշան, որպէս յիշողութիւն իր անցած փառաց...

Բայց այդ միջոցում արդէն պարզուել էր, որ հակառակորդը ծանրանում է դէպի Կարս՝ ոչ այն ուղղութեամբ, ուր հռչակաւոր գնդ. Փիրվերդիեւ փախուստի էր վարժեցնում իր գումարտակները, այլ տրամագծօրէն հակառակ կողմից:

Գեն. Նազարբեկով Երևանից ցոյց էր տուել անկողնում պառկած գեն. Փիրումովին, որ տաճկաց գլխաւոր ոյժերը կ՛իջնեն դէպի Կարս Ալաջաւազինքից լեռների փեշերով, և հրամանալից պահանջում էր ուշադրութիւն դէպի այն կողմը: Իսկ Կարսի «շտաբը» այդ ուղղութեան մասին չէր էլ երազում ի հարկէ:

Այդ նկատումներով՝ Երևանից մի յատուկ զօրաբանակ են ուղարկում 4 թնդանօթով ու գնդացիրներով, աւելի քան հազար սուին, փոխգնդապետ Կօնդախչեանի հրամանատարութեամբ թշնամու թիկունքում ցոյց անելու համար: Գնդ. Կոնդախչեան ռուսաց սուրբ Գէորգի սպայական շքանշան ունէր, և լաւ զինուորականի անուն: Բայց Բագրատունեաց հարստութեան հռչակաւոր ամառանոցում՝ Բագրևանդի մօտ փոխգնդապետն հանդիպում է քուրդ հրոսակախմբի, և թողնելով թնդանօթները, իր բոլոր տրանսպորտը, ծանրութիւնները՝ ամենախայտառակ կերպով փախչում...

Այդ օրհասական օրերում, երբ Կարսի ոչ միայն օրերը՝ այլև ժամերը հաշուած էին, Հոկտեմբերի 27-ին Երևանից Կարս եկաւ գեներալ Կազարով: Այդ այն գեներալն էր, որ մի տարի առաջ, բազմաթիւ գանգատների և երկրի ընդհանուր դժգոհութեան պատճառով, Կարսի նահանգն էր ուղարկուած քննելու զինուորականների վերայ տրուած գանգատները: Այդ քննութիւնը պարզեց գեն. Յովսէփեանի և նորա շուրջը խմբուած սպաների թալանները և զեղծումները, բայց այդ քննութիւնը ի հարկէ մնաց առանց հետևանքի:

Սպարապետ Նազարբեկով, Կարսի անկումից մի քանի օր առաջ այցելելով Կարսը՝ երևի իր վերջի հրաժեշտը տալու այն չքնաղ վայրերին, ուր նա 18 թուից այնպէս եզակի անյաջող և այնպէս աղմկալից պաշտպանում էր հայրենիքի պատիւը, չէր կարող չը տեսնել զօրաբանակի ընդհանուր լքումը, և մեր զօրական

կատարեալ սնանկութիւնը: Բայց հայկական Կամարելեան և այս աներկբայ և անտարակոյս փաստերի առաջ՝ չէր կարողանում բաժանուել Փիրումով - Յովսէփեանից:

Հայկական Կամարելեան գերադասեց քմահաճ բախտի այդ իր սիրելիներին զոհել ազգային այն անհուն երազները, որ մերթ իրականացած, այսօր վերջին անգամ գուրգուրալից վարում էին հայրենի վշտահար երկնակամարի տակ...

Գնդապետ Յարութիւնեան, որ Կարսի տիրապետութեան օրից մեծ խոչընդոտ էր Փիրումով Յովսէփեանի՝ «նոր տնտեսական քաղաքականութեան» մթնոլորտում հեռացուած էր գնդի հրամանատարութիւնից, քեամալիստների հետ պատերազմի ընթացքում:

Երկար միջնորդութիւնից յետոյ՝ ամենակալ Ռուբէն փաշան ունկնդրութիւն շնորհեց գնդ. Յարութիւնեանին: Գնդապետը բացատրեց բոլոր անցած գնացածը, և մի մեծ գրաւոր զեկուցում ներկայեացրեց, որի հիման վերայ թէ՛ գեներալ Յովսէփեան և թէ՛ նորա «գնդապետները» ու «կապիտանները» պէտք է ոչ թէ հրամանատարէին, այլ հեղինակալից պէտք է գրաւէին դատարանում մեղադրական նստարանի կենտրոնական տեղը...

Բայց այդ ևս ի հարկէ չօգնեց:

Բայց գեն. Յովսէփեան, իր բոլոր դևային միտումներով հանդերձ՝ չէր կարող չը տեսնել, որ իր նահանջի ընթացքում ևս հասել է արդէն վերջի կայանի, և գտնուում է Կարսի պարիսպների տակ, որ նահանջելու տեղ նա այլևս չունի, որ այստեղ կապանքուել է արդէն պայթալից դրութիւնը, և միակ ելքն է փախուստ՝ ամենախայտառակը և անամօթը: Եւ Հոկտեմբերի 27-ին գեն. Յովսէփեան հեռախոսով հոխորտում է իր ննջարանում հանգստացող «գործող բանակի հրամանատար գեն. Փիրումովին», որ նա ծանր հիւանդ է, և խնդրում է արձակել իրան ճակատի հրամանատարութիւնից:

Այդ միջոցին, անսպասելի հասնում է Կարս գեներալ Կազարով, որ անկախ գեն. Յովսէփեանի հիւանդութիւնից՝ պէտք է փոխարինէր նորան:

Գեն. Փիրումով իր զինակցի հիւանդութիւնը լսելով՝ առաջարկում է Երևանից դարձեալ նոր եկած գնդապետ Քալանթարեանին փոխարինել գեն. Յովսէփեանին: Բայց գնդ. Քալանթարեան արդէն իրազէկ շրջապատին՝ առարկում է, որ նա կը ստանձնէ հրամանատարութիւնը՝ որոշ ձևականութիւնները կատարելուց յետոյ: Նա միջնորդում է յանձնաժողով՝ գեն. Յովսէփեանի առողջութիւնը քննելու համար: Գալիս է յանձնաժողովը, և բժիշկ Միրզոյեան չափելով հիւանդ գեներալի տաքութիւնը՝ յայտնում է, որ ջերմաչափը ցույց է տալիս 36, և գեն. Յովսէփեան բժշկական հետազօտութիւնից յետոյ՝ յանձնաժողովի կողմից յայտարարւում է միանգամայն առողջ...

Այնուհետև ջերմաչափի 36 ցուցմունքը պատմական է դառնում, և ստանում «գեն. Յովսէփեանի աստիճան» անունը: Չի կարելի ուրանալ, որ գեն. Յովսէփեան յիմար մարդ չէր, բայց և այնպէս՝ գերի իր կրքերի, նա ընկաւ այնպիսի կոմիկ հակասութեան մէջ, որ կատարեալ առողջ լինելով՝ հիւանդ յայտարարուեց...

Մի քանի ժամից յետոյ Կարս եկաւ գեներալ Կազարով, և փակեց այդ ֆարսը, ու բժշկական հետազօտութիւնից յետոյ կատարելապէս առողջացած գեն. Յովսէփեան, պատերազմի հանելուկային կորիզը գեն. Կազարովին յանձնելով՝ ինքը անցաւ թիկունքում հրամանատարելու...

Գեն. Կազարովի գալը՝ Կարսի մեր գեներալների սրտովը չէր, և այստեղ սկսւում է սովորական ինտրիգը: Եւ երբ Կարաբեկիր փաշայի առաջաւոր զօրամասերը երևում էին արդէն Կարսի պատուհաններից՝ Փիրումով, Յովսէփեան, սկսում են ամէն տեսակի խոչընդոտներ ստեղծել ճակատի նոր հրամանատար գեն. Կազարովի առաջ: Միանգամայն ծիծաղելի կը լինի ասել, որ գեներալ Կազարով միջոցներ չէր գտնում ռազմաբեմ մեկնելու համար: Շատ հետաքրքիր է, որ Կարսի «շտաբում» նոր հրամանատարը քարտէսի աւելորդ օրինակ չէր կարողանում գտնել, ու ռազմաբեմ է մեկնում վերջապէս առանց քարտէսի...

Բայց աւելի հետաքրքիրն այն է, որ գեն. Յովսէփեանի կայանը գալով՝ գեն. Կազարով չի գտնում այնտեղ այն քարտէսը, որի վերայ պէտք է նշանակուած լինէին այն կէտերը, որտեղով որ շարժուել է թշնամին, և ուր է նա այժմ:

Եւ հազիւ թէ պէտք է բացատրել, որ առանց այդ նշանների, առանց այդ ռազմական քարտէսի՝ ինքը, Նապոլեօն՝ ոչինչ չէր կարող անել:

Բայց շարունակենք մեր պատմութիւնը: Գեն. Յովսէփեանի կայանը դաշտումն էր, երկաթուղու գծի վերայ, վագօնում: Թողնելով այդ այնուհետև հռչակաւոր վագօնը նոր հրամանատար գեն. Կազարովին՝ գեն. Յովսէփեան վերցնում է վագօնից հեռախօսի ապարատը և միակ լամպը՝ առարկելով, որ այդ իրերը իր անձնական սեփականութիւնն է...

Նոր հրամանատարը չի գտնում իր «շտաբում» ոչ մի տեղեկութիւն՝ թէ ի՞նչ զօրամասեր են նորան ենթարկւում, որտե՞ղ են նոքա, նոցա քանակը, հրամանատար կազմը, և առհասարակ այն այբուբէնը՝ առանց որոնց կարդալ անկարելի է...

Ինչևիցէ, հարևանցիօրէն ծանօթանալով դրութեան հետ՝ գեն. Կազարով գտաւ, որ զօրաբանակը միանգամայն կազմալուծուած է, որ զօրաց շարքերը հալւում են ժամէժամ, որ հրամանատար կազմը միանգամայն անընդունակ, անհեղինակ, ապիկար ու անպատուախնդիր, որ այստեղ և այնտեղ ցրուած մասերը ոչ իրար հետ կապ ունեն, և ոչ իր՝ գեներալի, և այդ մթնոլորտում կարելի է միայն խելագարուել, անձնասպանութիւն գործել, և ոչ հրամանատարել...

Հոկտեմբերի 28-ին, գիշերը՝ Կարսի ոստիկանապետը զեկուցեց ինձ, որ դասալիքութիւնը ահռելի է դարձել, որ փախչում են աւագ սպաները, և իրանց յետևից տանում ամբողջ գումարտակներ, որ ոստիկանութիւնը, որ բռնել էր ճանապարհները՝ հնարաւորութիւն չունի կանգնեցելու այդ հոսանքը:

Ես պատուիրեցի ոստիկանապետին անցնել գեն. Կազարովի մօտ, և զեկուցել նոր հրամանատարին՝ բայց գեներալին յանձնարարել էին հրամանատարելու մի բանակ, որ ամբողջովին արդէն քայքայուած էր: Եւ նա իրաւունք ունէր ասելու Ռուբէն փաշային՝ եկայ Կարս, բայց բանակ չեմ տեսնում...

Եւ այդ տրագիկ պայմաններում՝ նոր հրամանատարը ստիպուած էր ինքը յարձակում գործելու թշնամու վերայ, որ արդէն իջնում էր դէպի Կարսի դարպասը: Այդ վճռական յարձակումը վիճակ էր ընկել գնդապետ Մազմանեանին: Դա այն գնդապետն էր, որ 18 ամիս շարունակ միայն թալանով էր զբաղուած Արդահանի գաւառում, և որի զեղծումների մասին գեներալ Կազարով՝ գնդապետ այն ժամանակ, առիթ էր ունեցել քննութիւն կատարելու: Եւ այսօր, ենթակայ գեն. Կազարովի՝ գնդապետ Մազմանեան կոչուած էր կատարելու այդ գեներալի առաջի հրամանը, մօտեցող թշնամու վերայ յարձակում գործելու մասին...

Եւ իբր մեր առաջաւոր մասերի հրամանատար՝ գնդ. Մազմանեան մերկացնում է սուրը և յառաջ նետւում, նորա գումարտակները, որ մեր Կարսի տիրապետութեան օրից վարժւում էին թալանի ու կողոպուտների ասպարէզում միայն՝ հրաժարուեցին քաջ գնդապետի հրամանը կատարելուց և փախան դիրքերից...

Խղճի խայթոց էր, թէ հոգեբանական մի այլ վերապրում՝ բայց գնդ. Մազմանով չը կարողացաւ հոգու հաւասարակշռութիւն պահպանել այդ ծախորդ մթնոլորտում, և իր սեփական ատրճանակի մի գնդակով վերջ տուեց իր արկածալից կեանքին: Իր կեանքի գնով ի հարկէ՝ նա ուզում էր ամոքել այդ մեծ խայտառակութիւնը, բայց զօրամասերի փախուստը հայրենիքի այդ երկունք օրերում թալանների գլուխ գործոցն էր... Գնդ. Մազմանեան սրտոտ երիտասարդ էր, և կարող էր իր հայրենիքի լաւ զինուորական լինի: Գերագոյն արժանաւորութիւնների տէր լինելով՝ նոյնիսկ նա չէր կարող 24 տարեկան հասակում գնդապետ և գնդի հրամանատար լինել:

Արժանաւորութիւններին անհամապատասխան աստիճանները, նսեմացնելով այդ աստիճանների իմաստը՝ անբարոյականացնում են և մարդկանց: Իրերի և հասկացողութիւնների այդ մթնոլորտում՝ բոլորը ուզում էին գնդապետ և գեներալ լինել, իսկ թէ ո՞վ պէտք է կրէր սպայի առաջի, երկրորդ և երրորդ աստիճանները՝ յայտնի չէր: Մի բան միայն յայտնի էր, որ սպայական առաջի աստիճաններից խորշում էին բոլորը, և բոլորը յառում էին դէպի գնդապետի տիտղոսը: Այդ առանցքում չէր կարող հետևողականութիւն ստեղծուել, փոքր աստիճանները և փոքր պաշտօնները կորցրել էին իրանց նշանակութիւնը, որովհետև բոլորը բարձրից էին բռնում, և արհամարհում ցածրի ելևէջները:

Բարձր կառավարութիւնը չընմբռնեց մարդկային հոգու այդ տարրական տրամադրութիւնը, և չը ստիպեց մարդկանց շարժուել աստիճանաբար և ներքևից վերև: Եւ մեծ թռիչքների առանցքում՝ հարթուեցին ընդունակութիւնները և արժանաւորութիւնները, և բոլորը միանգամից դարձան գնդապետ ու գեներալ:

Իսկ այդ կարգի գեներալների վերաբերմունքը դէպի քմահաճ գնդապետները՝ առիթ տուեցին անիշխան տրամադրութեան, ուր ծայր և սկիզբ ստացաւ արկածը ի դէմս թալանի և կեղծիքի: Եւ այդպիսով երիտասարդ Մազմանեան, որ իւր ժամանակին կարող էր պատկառելի գնդապետ լինել, և դէպի դափնի տանել իր գումարտակները՝ շեղուեց բնական ուղուց, և բախտի քմահաճոյքին յանձնուած՝ մեծ դրամատիկ հանգոյցում լուծեց կեանքի պրոբլեմը...

Եւ եթէ գնդ. Մազմանեան անձնասպանութիւն գործելով քաւեց իր մեղքը իր խղճի առաջ՝ պատմութեան և երկրի հանդէպ պատասխանատուն այդ մեծ ողբերգութեան համար մնաց մեր բարձր հրամանատարութիւնը: Բայց շատ ուշագրաւ հոգեբանական տեսակէտից՝ դասաւորւում են ձախորդ դէպքերը, և որպէս չարագուշակ օղակներ՝ պաշարում մեր ճակատագիրը: Գնդ. Մազմանեանի անձնասպանութիւնից յետոյ՝ առաջի հետևակ գնդի հրամանատարութիւնը յանձնւում է գնդ. Միրզոեւին, որ մեր նախածանօթն է, գեն. Փիրումովի յայտնի փեսան:

Ես չէի ասի բախտի բերմունքով՝ այլ կ՛ասէի բախտի ծաղրով, այդ ողորմելի ոչնչութիւնը պէտք է ընդունէր Կարաբեկիր փաշայի մենամարտը, և լուծէր գէթ պաշտօնապէս՝ պատերազմի բախտը...

Բայց այդ գնդապետը, որ միշտ իր հաշուի տէրն է եղել, գերադասեց փախուստը՝ իրան վիճակ ընկած պատմական այդ մեծ դերին, և թողնելով լքուած ու քայքայուած զօրամասերը՝ իր արբանեակ սպաների ուղեկցութեամբ, գնդապետ Միրզոեւ փախաւ Աղէքսանդրապոլ, նախօրոք ի հարկէ փոխադրելով այնտեղ իր ծանրութիւնները և բոլոր ունեցածը...

Բայց զարմանալի զուգադիպութեամբ, այդ բոլոր կուրիոզներին առաջինը պէտք է հանդիպէր Կարսի նահանգապետը, որ առանց այդ էլ լաւ ուսումնասիրած էր այդ բոլոր «գնդապետների» տակն ու վրան...

Երբ Կարսի անկման երկրորդ օրը ես մտնում էի Աղէքսանդրապոլ՝ առաջի ծանօթը որին ես հանդիպեցի, այդ գնդ. Միրզոեւն էր: Նա ձիով էր, և «յաղթողի» իմպօզանտ տեսք ունէր: Նա կարգադրում էր դէպի երկաթուղին պետական սայլերի վերայ բարձած իր իրերը, նա փախաւ բոլորից առաջ՝ Կարսի անկումից առաջ:

Այդ միջոցում Աղէքսանդրապոլ էր ժամանել և Ռուբէն փաշան՝ այդ բոլոր «գնդապետների» խնամակալը:

Եւ ինձ միայն զարմացնում էր, որ նա ոչ միայն հենց այդ րոպէին նորան կախաղան չը հանեց՝ այլ նոյնիսկ չը բանտարկեց: «Գնդապետ» Միրզոեւները

Զօրաց մինիստրի և Երևանից Կարսի անկման առիթով Աղէքսանդրապոլ ժամանած այլ բարձրաստիճան մարդկանց ներկայութեամբ՝ «առանձին վագոններ» ստացան մինչև Թիֆլիզ, և բարձելով իրանց իրերը՝ իրանք ևս «անփորձ» ճանապարհ ընկան Թիֆլիս...

Եւ իրերի այդ առանցքում՝ մենք դեռ հաւակնութիւն ունէինք մեր անկախութեան և պետականութեան մասին խօսելու... Հոկտեմբերի 28-ին գիշերը՝ ոստիկանապետը զեկուցեց ինձ, որ գեն. Փիրումով իր արբանեակներով, լուսաբացին գաղտնագողի փախչում է դէպի Աղէքսանդրապոլ, նկատի առնելով, որ Կարսը միանգամայն վտանգուած է: Հրամանատարի այդ խայտառակ փախուստի մասին ես անմիջապէս տեղեկացրեցի մինիստր Բաբալեանին: Ի ծայր յուզուած՝ մինիստր Բաբալեան անմիջապէս գնաց գեն. Փիրումովի մօտ:

Թէև դեռ ժամի 12 էլ չը կար՝ բայց թէ հրամանատար Փիրումով և թէ նորա «շտաբը» անոյշ քնած էին...

Երբ մինիստրը մտնում է գեներալի ննջարանը՝ հայկական «գործող» բանակի հրամանատարը, յօրանջելով ասաց դժգոհ,– Է՜հ, նոր էր աչքս կպել...

Մինիստրը կոշտ կտրելով՝ ասաց,– գեներալ, ես եկել եմ պետական կարևորագոյն գործով, պահանջեցէք շտաբի պետին...

Շտաբի պետը, որ պառկած էր միւս սենեակում՝ խնդրում է մինիստրին իր ննջարանը, բայց Բաբալեան յուզուած, շատ բարձր գոռում է,– Ես կառավարութեան ներկայացուցիչն եմ, բարեհաճեցէք ներկայանալ...

Երբ գալիս է «շտաբի» պետը՝ մինիստր Բաբալեան բացատրութիւն է պահանջում զօրքերի հրամանատարից, թէ ի՞նչ հիմունքներով, առանց նոյնիսկ իրան իրազեկ անելու ու ամբողջ նահանգի հայ ազգաբնակութիւնը երեսի վրայ թողնելով՝ նա իր արբանեակներով լուսաբացին փախչում է քաղաքից...

Գեներալը կմկմաց, իսկ շտաբի պետը փորձեց առարկել, որ այդ հրամանատարի իրաւունքն է, և նա ղեկավարւում է «ռազմական» միտումներով: Մինիստրի և այդ երկու զինուորականների միջև առաջ է գալիս շատ սուր ընդհարում, և Բաբալեան, անվճռաբեկ առաջարկում է գեներալին տեղից չը շարժուել... Ընկճուած և թակարդ ընկած՝ գեներալը ստիպւում է հնազանդուել: Հանգիստ քնել ժամի տասն և մէկին՝ Կարսի անկման նախօրեակում, և լուսաբացին գաղտնագողի փախչել Կարսից «ռազմական» միտումներով: Այդ կարող էր անել միայն մեր օրերի հայկական հրամանատարը, և նա փորձեց անելու այդ, պատմութեանը յանձնելու իր տիպարը, և իր օրերի անհոգ ու ապիկար տրամադրութ-իւնը:

Թէ ի՞նչ ոյժերով էր գնում գեն. Կազարով ընդունելու Կարաբեկիր փաշայի մենամարտը՝ շատերի համար հանելուկ էր:

Գեն. Յովսէփեան, որին հնարաւորութիւն էին տալիս տարի ու կէս ժամանակամիջոցի ընթացքում պարապել ինտրիգներով, թալանով և ոչ զինուորական գործով, և որին «ռազմական» միտումներով չէին կարողանում փոխարինել

մինչև ի վերջը այլ հրամանատարով՝ այդ գեներալին հնարաւոր համարեցին հեռացնել ռազմաբեմից, և տանել մի ապահով տեղ Կարսի անկումից միայն երկու օր առաջ:

Այդ թիկունքում տեղաւորուեց և 4-րդ հետևակ գունդը, և զօրքերի հրամանատար գեն. Փիրումով իր «շտաբով» յոյս ունէր ինքը ևս «ռազմական» նկատումներով լոյս *[29]* Հոկտեմբերին անցնել այդ թիկունքը, և գեն. Յովսէփեանի ու գնդապետ Միրիմանովի հաւատարիմ պաշտպանութեան տակ մտնելով՝ հերոսների այդ խմբակցութիւնը ծպտեալ կերպով պէտք է այնուհետև փախչէր Աղէքսանդրապոլ...

Այդպէս էր այդ հանճարեղ ռազմագիծը, դեսլոկացիան: Գեն. Կազարովի անմիջական տրամադրութեան տակ հետևապէս մնում էր 5-րդ հետևակ գունդը, որ Կաղզուանից փախչելու վարժուած՝ հալուեց Կարսի պարիսպների տակ արդէն... Առաջին հետևակ գունդը, որ փախաւ դիրքերից՝ գնդ. Մազմանեանի անձնասպանութիւնից մի 10 րոպէ առաջ, Կարսի պահակային գումարտակը, որ հետևակ գնդի էր վերածուած կարծեմ: Այդ այն հռչակաւոր զօրամասն էր, որի հրամանատարը գեն. Փիրվերդիեւ ի փախուստի էր վարժեցնում իր զինուորներին, կամաւորական մի քանի խմբեր, ինչ-որ նորեկ կազմակերպութիւններ և 2-րդ հետևակ գունդը հրետանիով, գնդապետ Հասան Փաշայեանի հրամանատարութեամբ:

Այս վերջին զօրամասը ուղարկուած էր Երևանից, և փոխգնդապետ Կոնդախչեանի ուղղութեամբ նա պէտք է անցնէր հակառակորդի թիկունքը, դեմօնստրացիա անելու համար: Բայց գնդ. Հասան Փաշայեան գերադասեց ոտը կախ ձգել, և տեղ չը հասաւ...

Եւ այդ հատուկենտ ոյժերօվ գեն. Կազարովին հրամայել էին վերջի և վճռական ճակատամարտ տալ Կարաբեկիր փաշային:

Սեպուհը աչքի փուշ էր գեներալների համար:

Նորան Կարս էին ուղարկել առանց իր բրիգադայի, ուղարկել էին հասարակական կարծիքի ճնշման տակ, բայց բոլոր միջոցներ էին ձեռք առել՝ հնարաւորութիւն չը տալու Սեպուհին ակտիւ գործունէութեան համար:

Սկզբից Սեպուհին տուել էին նորա երկու գնդերից մի գումարտակ միայն, առանց հրետանու և լրացուցիչ մասերի: Յետոյ, երկար հեռագրական բանակցութիւններից յետոյ, և վերջապէս Սեպուհի հրաժարականից յետոյ՝ նորան տուեցին դարձեալ ինչ-որ մի երկու զօրամաս, բայց քայքայուած և գործի անպէտք: Բացի այդ, Սեպուհ ուղարկուած էր ոչ գլխաւոր ճակատ, այլ այն ուղղութեամբ, ուր կարելի էր միայն ցոյց անել և ոչ ճակատամարտի բռնուել: Սմբատի զօրամասերը նոյնպէս անկազմակերպ էին և առանց որոշ դասի, առանց կապի միւս զօրամասերի հետ, և առանց հեղինակաւոր հրամանատարութեան: Գեն. Փիրումով խնդրել էր նահանգապետին՝ տրամադրել իրան նահանգի թէ՛ հեծեալ

և թէ՛ հետևակ միլիցիան, բայց Զօրաց իշխանութիւնը կարողութիւն չէր ունեցել կազմակերպելու և օգտագործելու այդ ոյժը:

Այդ բոլոր լրացուցիչ մասերը խառնուել էին իրար, խանգարում էին մէկը միւսին, և աննպատակ դէսուդէն ընկնում: Կարսի հրամանատարութիւնը ճիշտ տեղեկութիւն չունէր անգամ, թէ ո՞ւր են նորա ոյժերը: Եւ Բաբելօնի այդ խայտառակութիւնը այնպիսի մի շփոթ էր՝ իւր նպատակի և ներդաշնակութեան մասին խօսք չէր կարող լինել:

Կարսի ամրութիւնների հարիւր ահռելի թնդանօթները, իրանց տասը տարուայ ռազմական պաշարով՝ պէտք է սպառնալիքի տակ պահէին հակառակորդին, և հնարաւորութիւն տային մեր բանակին՝ հարկաւոր դէպքում անփորձ նահանջելու դէպի Կարսի պարիսպները: Գալով յետագայ դէպքերին՝ թշնամին կարող էր մօտենալ Կարսի պարիսպներին, և պաշարել Կարսը միայն նորանից յետոյ, երբ նորան կը յաջողուէր ջարդել Կարսի ամրութիւնների գէթ գլխաւորները: Բայց այդ մեծ յաղթանակի համար՝ թշնամին պէտք է թէ՛ ժամանակ ունենար և թէ՛ մեծ ոյժ:

Այդ բոլոր տուեալները գալիս էին մի աւելորդ անգամ ընդգծելու մեր նախամեծար դրութիւնը, և ասելու, որ գէթ պաշտպանուելու և երկար պաշտպանուելու համար՝ մենք ունէինք անհամեմատ մեծ առաւելութիւն:

Բայց մենք մի աւելորդ անգամ ուզում ենք ասել, որ մեր հրամանատարութիւնը կարողութիւն չունեցաւ օգտագործելու այդ ամրութիւնների մեծ գօտին: Նորա հարիւրաւոր թնդանօթները, որի զգայուն լարերը պէտք է զօրքի հրամանատարի առանձնակում հանգչէին՝ կարող էին այնպիսի վայնասուն բարձրացնել Կարսի տասնեակ վերստի շուրջը, կարող էին այնպիսի հրային սիմֆօնիա ստեղծել, որի սարսափը միայն բաւական էր թշնամու գէթ տրամադրութիւնը ընկճելու համար: Բայց այդ ամրութիւնների վիթխարի թնդանօթները ո՛չ կապ ունէին իրար հետ, և ո՛չ հաղորդակցութիւն՝ «շտաբի» հետ: Ամրութիւնների սակաւաթիւ սպաները օգտուելով տիրող պայմաններից՝ թողել և փախել էին, և ի - զուր էր Կարաբեկիր փաշան զարմանում, որ ամբողջ ժամանակ ռուս Կարադաղ ամրութիւնը, գեներալ Ֆադիեւի ֆօրտը, Լազարեւի կաիլին և միուսները *[լռում են]:*

Երբ Կարսի պաշտօնական անկումից 10 րոպէ առաջ ձիով դուրս գալով Կարսից մենք գիշերը հասանք մի ռուս գիւղ՝ մենք այնտեղ հանդիպեցինք հրետանու մի քանի սպաների: Այդ սպաները այս և այն ֆօրտի հրամանատարներն էին, բայց նոքա դեռ մի օր առաջ թողել և հեռացել էին իրանց դիրքերից:

Մենք մնացել էինք,– ասաց նոցանից մէկը, սպայ Սերգէյ Բեգզադով,– ֆօրտերում առանց որևէ տեղեկութիւնների, հրամանների, ցուցմունքների և առանց որևէ կապի հրամանատարութեան հետ, և մեզ մնում էր միայն թողնել մեր դիրքերը և օր առաջ փախչել թշնամու ձեռքը չընկնելու համար: Մեր բարձր դիրքե-

ից *[մեր]* սպաները *[տեսնում էին]* թէ ինչպէս են փախչում այս և այն տեղից մեր վաշտերն ու գումարտակները, և մեզ ոչինչ չէր մնում այլևս անելու... Անիշխանութիւնը և աներևակայելի շփոթը այդ օրերում զօրաբանակում անցել էր բոլոր սահմանները, ճանապարհները: Ահաբեկուած էին, զինուորական զգեստով թալանչիները վխտում էին թուրք, քուրդ և ռուս գիւղերի շուրջը, և ամէն մէկը իր իրաւունքն էր օգտագործում...

Մէկը ձի էր «բռնագրաւում», միւսը՝ տաւար, ոչխար, բուրդ և այլն, և բոլորը բացատրում էին, որ պատշաճ վկայական ունեն...

Իրաւունքի և իրաւակարգի հասկացողութիւնը չքացել էր, և մինիստրների խորհրդի նշանաւոր որոշումը «կենտրոնացնել զինուորական և քաղաքացիական իշխանութիւնը Կարսի նահանգում գեն. Փիրումովի հմտալից ձեռքում»՝ ստացել էր իր հարազատ մարմնացումը...

Մի գնդապետ Մերդէնեկի շրջանում խուճապի ենթարկուած՝ այնպէս էր կորցրել իրան, որ թողնելով իր իրերը, ոտով փախչում էր դէպի Կարս: Եւ այդ խուճապը նա առաջ էր բերել առանց որևէ յենքի և պատճառի: Ինչպէս վերջում յայտնուեց՝ տաճկաց գլխաւոր ոյժերը, ճակատը Ալաճայի կողմերումն էր, իսկ Ալաճայից մինչև Մերդէնեկ մօտ 200 վերստ է: Մերդէնեկի շուրջը, Օլթիի սահմաններում՝ մեր հակառակորդը ունէր ցոյցային զօրամասեր միայն, և տեղական խուժանը, մեզանից կողոպտուած քրդերին: Բայց չէ՞ որ մենք էլ ունէինք այդ ուղղութեամբ մօտ 2000 կանոնաւոր սուին, ուժեղ հրետանի, և այդ ոյժերի թիկունքում Սեպուհի գումարտակները: Բայց այդ բոլորով հանդերձ՝ մենք չը կարողացանք մինչև ի վերջը ձեռներեցութիւնը թատերաբեմում մեր ձեռքը առնել: Ռուսախօս գնդապետ Սերմաքեշով, որ դեռ պատերազմից առաջ զբաղուած էր Մերդէնեկում իր տնտեսութեամբ, և քուրդ գիւղերն էր ռմբակոծում թնդանօթներով՝ նորան սայլեր ուշ ուղարկելու համար, այժմ երբ հերթը եկել էր գործելու՝ միանգամայն կորցրել էր իրան: Պառաւ կնոջ պէս նա այս և այն կողմն էր նետւում՝ առանց պատճառի և առիթի խուճապում երկրի խաղաղ ազգաբնակութեանը, ընկճում բոլորի տրամադրութիւնը և կոտրում զօրքի կորովը: Բաւական կը լինի ընդգծել կարծեմ, որ Մերդէնեկը թողնելուց դեռ մի ամիս առաջ՝ նա փակեց այնտեղի հեռագրակայանը, և այդպիսով մենք մի ամիս շարունակ հեռագրական կապ չունէինք այդ թատերաբեմի հետ: Եւ այդ բոլոր խայտառակութիւնները կատարւում էին ոչ միայն երկրի այլազգիների առաջ՝ այլև թշնամու առաջաւոր դիրքերի դիմաց: Տաղանդաւոր հրամանատարների այդ վարմունքը անդրադառնում էր դէպի երկիրը, և հիմնօրէն երերում մեր դրութիւնը Կարսի նահանգում: Այդ բազմաթիւ «գնդապետները» առանձին-առանձին վերցուած՝ ամէն մէկը ինքնորոշուող ինքնակալներ էին: Այդ «գնդապետները» փաստօրէն չէին ենթարկւում ոչ ոքի, և մէկը ձգում էր աջ, իսկ միւսը ձախ...

Եւ այդ բազմահնչիւն համերգում՝ ուր ամէն մէկը իր համար էր նվագում, ստեղծուել էր այնպիսի մի խլացուցիչ մթնոլորտ, ուր ապաւինելու այլևս ոչ մի յոյս և հնարաւորութիւն չը կար:

Գեն. Կազարով, որ գնացքից ուղղակի ռազմաբեմ էր անցել՝ նման էր մի ջարդուած մակոյկի, որ գոյութեան կռուի բնազդով միայն նետւում էր ալեկոծ և խռովալից ովկիանոսի լափիւներում...

Գեն. Կազարովին վիճակուած էր ժառանգելու այն խմորը, որ տարի ու կէս ժամանակի ընթացքում ինքնահաւան հունցում էր Փիրումով-Յովսէփեանի ընկերութիւնը: Իսկ հայ ժողովուրդը, որ այնպէս ծարաւի էր խաղաղ աշխատանքի, և որ այնպէս մեծ սիրով նորից բոլորել էր իր վաղեմի յերդիսը (*երդիկը*) նորից թողնում էր իր մուրազը և դարձեալ անցնում Արփաչայ... Այսպէս էր վերջանում մեր պօմպադուրների զաւեշտ գործունէութիւնը Կարսի նահանգում: Գեներալ-գնդապետների այդ անպատասխանատու փորձերը՝ հայ ժողովրդի տանող և համբերող գլխի վերայ, կարող էին և զաւեշտ լինել՝ եթէ միայն նրանք այնչափ դառնալից և այնչափ ողբերգական չը դառնային... Վերջի օրերը, առաւօտուանից մինչև արևանիստ՝ Կարսի մի քանի ֆօրտերից որոտում էր հրետանին: Ինչպէս յետոյ պարզուեց՝ այդ թնդանօթաձգութիւնը և անհաշիւ էր և աննպատակ: Թնդանօթը երկու ելակէտ ունի: Նա կամ ռմբակոծում է, կամ նախապատրաստում է գումարտակների արշաւը:

Ո՛չ այս և ո՛չ այն՝ մեր հրամանատարութիւնը աչքի առաջ չունէր: Երբ այդ մասին ես հարցրեցի գեն. Փիրումովին՝ նա անհոգ բաւականութեամբ, անկողնում պառկած՝ ասաց,– թող տրաքացնեն, ռումբը անհաշիւ է: Պատերազմի այդ շառաչիւնի տպաւորութիւնը փոփոխակի էր: Առաջ մարդիկ կարծում էին, որ զինուորական իշխանութիւնը, որ իր տրամադրութեան տակ միայն Կարսի պարիսպներում ունէր հարիւրից աւել թնդանօթ և ռումբի լեռներ, իր ձեռքն է առել թատերաբեմի ձեռներեցութիւնը, և կրաւորական դարձրել հակառակորդին: Բայց մի երկու օրից յետոյ այդ բարձր տրամադրութիւնը ընկճուեց, իսկ վերջում ռումբերի պայթումը այլևս ոչ մի տպաւորութիւն չէր թողնում: Մարդիկ կարծես հիասթափուել և հաշտուել էին իրանց ճակատագրի հետ, և անվերաբեր այստեղ և այնտեղ պայթող ռումբերին՝ խորասուզուած և տարուած արհաւիր անսպասելիքներով, սպասում էին վերջի տեսիլի...

Հոկտեմբերի 29-ին ես հիւանդացայ և անկողին մտայ: Միւս օրը Հոկտեմբեր 30-ին, երբ ես ժամի 11-ին սպասում էի բժշկին՝ եկաւ շնչասպառ ոստիկանապետը և զեկուցեց, որ քաղաքը խելակորոյս դատարկւում է, բոլորը փախչում են, որ խուճապը աննկարագրելի է: Տաճկաց զօրքը մօտենում է վագզալին...

Ես հագնուեցի, կարողացայ ընտանիքս կառք նստեցնել և ուղարկել դէպի Աղէքսանդրապօլ, իսկ ինքս ձիով նահանգական միլիցիայի տեսուչ Հրաչեայ

Աւետիսեանի և մի խումբ ոստիկանների հետ անցայ մեր շտաբը, գեն. Փիրումովի մօտ:

Քաղաքը միանգամայն այլայլուել, կորցրել էր իր տեսքը: Խելագարուած մարդիկ չէին հասկանում, թէ ինչ են անում: Նրանք չէին լսում իրարու, չէին կարողանում հասկանալ ասածը, և բոլորը տենդոտ և յուսահատ՝ այս և այն կողմն էին նետւում...

Թողնելով ամբողջ բնակարանս բաց և հնարաւորութիւն չունենալով ոչինչից ոչինչ վերցնելու՝ յետոյ ես մեծ դժուարութեամբ կարողացայ *[գնալ]* դէպի շտաբը: Փողոցներում, բառիս բուն նշանակութեամբ՝ ասեղ ձգելու տեղ չը կար:

Սայլեր, բեռնակիր տաւար, ձիաւորներ և անթիւ ոտաւոր խառնուած իրար՝ ալիքանման հոսում էր դէպի ձորը, դէպի ռազմական խճուղին, որ տանում է Աղէքսանդրապոլ:

Մինչև այդ, ես Կաղզուանի գաւառապետ Ժամհարեանին ուղարկեցի վագզալ՝ իմանալու, թէ ի՞նչ է կատարւում այնտեղ:

Գաւառապետը ուշացաւ, չը վերադարձաւ, և ինչպէս յետոյ պարզուեց՝ նա ընկել էր քաղաք թափուող քուրդ հրոսակների ձեռքը և սպաննուել: Մի այլ պաշտօնեայ վագզալից գալով զեկուցեց, որ վագօնները լի էին մարդկանցով և իրերով, որ երբ Վազինքէյի ուղղութեամբ, վագզալից մի քանի վերստ հեռու միայն՝ թշնամին կրակ է բացում մեր զօրամասերի վերայ, և նրանք թողնում են իրանց դիրքերը և փախչում: Վագօնները ծայրէ ի ծայր լցրած ժողովուրդը՝ թողնելով վագոններում ամէն բան, նետւում է քաղաք և վագզալը դատարկւում է մի քանի րոպէում: Իսկ այդ միջոցում վագզալ է թափւում թուրք և քուրդ խուժանը, որ ուղեկցում էր Կարաբեկիր փաշայի բանակը:

Եւ եթէ մարդկային զոհերի թիւը այդ միջոցում քիչ է լինում, և թուրք խուժանը մի երկու ժամով ուշանում է մտնել քաղաք՝ այդ պէտք է բացատրել նորանով, որ այդ խուժանը այդ միջոցում զբաղուեց թալանով, կողոպտելով հայկական հարստութեամբ լի վագօնները...

Կարս-Աղէքսանդրապոլ ռազմական խճուղին երկու ճիւղ ունի: *(Տեքստը խզուած է)*...վագզալի մօտով ...երկաթուղու ...միւսը անցնում է...

(տեքստը խզուած է).... յենարանների վերայ, որպէս մի ուրուական՝ կանգնած էր գունատ և անտարբեր դէմքով գեներալ Փիրումով: Այնտեղ էր մինիստր Բաբալեան, նախկին զինուորական մինիստր գեներալ Արարատով, անբախտ գեներալ Կազարով, Գարեգին եպիսկոպոսը, մի քանի գնդապետներ, Կարսի քաղաքագլուխ Նոհրատեան և ուրիշները: Բոլորը կորցրել էին իրանց, բոլորը լուռ էին և բոլորը ինչ-որ մի բանի էին սպասում...

Քաղաքագլուխ Նոհրատեան միայն նետւում էր անկիւնից անկիւն՝ և շարունակ կրկնում էր,– հարկաւոր է խորհրդակցել...

Ես մի երկու հարցով դիմեցի խմբուածներին՝ բայց բոլորն էլ կարծես քարացել էին...

Առաջ եկաւ գեներալ Կազարով և շատ հանգիստ ասաց ինձ,– ամէն բան վերջացած է, զօրքը միանգամայն հրաժարւում է կռուել, և ես մնացի հրամանատար առանց զօրաբանակի...

(տեքստը խզուած է)...[Խճուղին անցնում է] ձորով, բերդի շտաբի մօտով և շեղուելով առաջի գծից դէպի ձախ, միայն 20 վերստ անցնելուց յետոյ մօտենում է երկաթուղագծին, և ձուլւում խճուղու առաջի ճիւղի հետ:

Վագզալը միանգամայն վտանգուած լինելու պատճառով՝ այլևս հնարաւորութիւն չը կար այդ խճուղով փախչելու, և այդ պատճառով հարիւր հազարանոց գաղթական հոսանքը մտաւ ռազմական ձորը, և միանգամայն հեղեղեց այդ խճուղին:

Երբ ես անցնում էի Աղէքսանդրեան՝ Կարսի գլխաւոր փողոցով, վագզալի և գանձարանի կողմերից լսւում էին արդէն գնդացիրները...

Բերդի շտաբի առաջ խառնուած էր այնպիսի մեծ բազմութիւն, որ շարժուել անգամ այնտեղ անկարելի էր: Շտաբի դռների առաջ կանգնած էր մի աւտօմոբիլ և մի երկու կառք, որով երևի պէտք է փախչէր շտաբը: Այնտեղ էր Կարսի հարիւրաւոր սպայութիւնը, զանազան հիմնարկութիւնների պաշտօնեաները և քաղաքացիները, որոնք դեռ յուսով նայում էին շտաբի պատշգամբին...

Երբ ես իջայ ձիուց և մտնում էի շտաբը՝ դռան մեջ հանդիպեցի այլալուած շտաբի պետին, որ գոռում էր ինչ որ մարդկանց,– հեծնելու ձի տուէք...

Այդ րոպէին քաղաքից դուրս գալու միակ հնարաւոր միջոցը այդ էր, որովհետև խճուղին այնպէս էր բռնել գաղթականութեան լափինը, որ կառքով անցնել այլևս անհնարին էր: Գեն. Փիրումովի դահլիճը լի էր գեներալներով և սպաներով: Դահլիճի մէջտեղում այդ վայրկեանում աւելի ուժեղ և ի մօտոյ լսուեցին գնդացիրների և մաուզէրների տրաք-տրաքոցը: Տիրեց ընդհանուր յուզմունք և իմ պաշտօնեաներից մէկը, որ ուղեկցում էր ինձ՝ մօտենալով ասաց,– շտապեցէք, մի րոպէ ևս և մենք հնարաւորութիւն չենք ունենայ անցնելու... Եւ երբ դարձայ դէպի ելք՝ դռան մօտ դարձեալ պատահեցի շտաբի պետին, աւելի գունատուած այս անգամ, նա բարձր գոռում էր, շտապելով դէպի ներս,– փախչել կարելի լինի գուցէ ֆօրտ Աղէքսանդր II-ի վերայով, միւս անցքերը բռնուած են...

Հազարաւոր հարց ու պատասխանների առանցքում՝ ես նստեցի ձին և դէպի առաջ տարածուող ժողովրդի ալիքի հետ ուղղեցի ընթացքս դէպի կիրճը, դէպի Կարս-չայի ափերով օձապտոյտ ռազմական խճուղին...

Ճանապարհի աջ կողմից, Կարադաղ ամրութիւններից, որ հրամանատարում է թէ՛ դէպի վագզալ և թէ՛ դէպի այն տարածութիւնը, ուր պէտք է կայանար Վազինքէյի ճակատամարտը, ի զարմանս բոլորի՝ թնդանօթ չէր լսւում: Բայց այդ

բարձրութիւններից դէպի ձորը՝ դէպի մեզ իջնում էին խումբ-խումբ մարդիկ, և այստեղ ու այնտեղ լսւում էր հրացանի ու մաուզերի պայթումներ...

Սկզբից մենք կարծում էինք, որ այդ մեր կամաւորներն են և մաուզերներով ուզում են կանգնեցնել փախչող մեր գումարտակները: Բայց մի րոպէից յետոյ մեր յետևում պայթեց վերևից նետուած մի ռումբ՝ առաջ բերելով մեծ շփոթ, և ժողովրդի ալիքը դէպի առաջ կատաղի աճեց: Արևը ջերմացնում էր կիրճը, և փայլում ձորում: Երբ հրացանները աւելի արագ սկսեցին որոտալ այն բարձրութ-իւնից, որի տակով մենք անցնում էինք ինձ ուղեկցող ձիաւորներից մէկը ասաց ինձ, որ պէտք է ծածկել ուսադիրներս, որոնք փայլատակելով արևից, կարող են նպատակի ծառայել... Այդ վայրկեանին նորից լսուեց ուժգին տրաք-տրաքոցը բարձրից, և մենք թափով քշեցինք մեր ձիանքը...

Բայց շարժուել այդ ճանապարհով՝ շատ և շատ դժուար էր, ճանապարհը ամբողջովին մարդկային մի հեղեղ էր և մի սրտաճմլիկ տեսարան: Հազարաւոր կանայք, ծեր, երեխայ՝ ոտով, մեծ շալակներով, ցեխի մէջ կորած, հազիւ կարողանում էին շարժուել, ամէն տեղ հառաչանք, ամէն տեղ անէծք, լաց ու յուսահատ ճիչ...

Բայց այդ մեծ խուճապային գաղթի տեսքը առանձնակի էր, դժուար էր որոշակի ասել, ժողովրդական մասսաներն էր այդ՝ թէ նահանջող ու փախչող զօրքը...

Ամէն քայլափոխում զինուած զինուորների և սպաների մեծ և փոքր խմբեր, վաշտերի դաշտային խոհանոցները, ուր եփւում էր գումարտակի օրուայ ճաշը, բազմաթիւ տաւար, ոչխար, նորից զինուած զինուորների խմբեր, ոտով, ձիով և կառքերով սպաներ, և այդպիսով տասնեակ վերադիրի վերայ, Կարսից մինչև Աղէքսանդրապօլ՝ մի ամբողջ զօրաբանակ ցիրուցան, անկազմակերպ և ի ծայր լքուած և արդէն զինուորական հմայքը և փայլը կորցրած հայկական զօրաբանակի թշուառ բեկորները... Առաջի կայանում, Մելիքքէօյ գիւղում՝ խառնուած և մեծ շփոթի մէջ կանգնած էր հետևակ գնդի մի գումարտակ: Հրամանատար գնդապետը կանգնած էր ճանապարհի մէջտեղում և հարցուփորձ էր անում մարդկանց Կարսի անցուդարձից: Գնդապետը ոչ մի կապ չունէր ո՛չ Կարսի և ո՛չ իր մօտակայ իշխանութեան հետ, և չը գիտէր իր անելիքը...

Այդ զօրամասն էլ ի հարկէ արդէն լքել էր, շարքերը նոսրանում էին, բոլորը գնում, ցրւում էին:

Մէլիքքէօյ խճուղին երկու ճիւղ ունէր, մէկը գնում էր դէպի երկաթուղու գիծը և այնտեղից Աղէքսանդրապօլ, միւսը թեքւում էր դէպի ձախ, դէպի լեռները՝ ուր կանգնած էր իր շտաբով հրամանատար Սեպուհ: Արդէն մթնելու վերայ էր, և ես թեքուեցի դէպի ձախ:

Սեպուհ ոչ մի կապ չունէր Կարսի հետ: Թիկունքում գտնուող գեներալ Յովսէփեանից, որին ենթարկել էին Սեպուհին՝ նա առաջարկութիւն էր ստացել նա-

հանջել դէպի Աղէքսանդրապոլ, ի նկատի առնելով, որ Կարսը արդէն ընկել է: Սեպուհի շտաբը գտնուում էր Նօվօտրոյիցկայեայ ռուս գիւղում: Սեպուհի հեռախօսի կապը իր ցիրուցան եղած մասերի հետ գրեթէ փչացած լինելով՝ նա հազիւ կարողացաւ հարկաւոր հրամաններ արձակել նահանջի մասին:

Ստիպուած եղանք թուրք և ռուս գիւղերից բազմաթիւ սայլեր ու ֆուրգոններ պահանջել... տալ այդ հազարաւոր արկղները լի փամփուշտով ու ռումբերով:

Նահանգի թուրք ազգաբնակութիւնը, այն գիւղերը՝ ուր չէր հասել մեր զինուորական թալանչիների ձեռքը, ...միանգամայն լոյեալ մնացել էին...: Ադմինիստրացիայի մի ...հայ պաշտօնեաներ, որ... գաւառներում, թուրք վայրերում՝ ընդհակառակը աջակցութիւն էին ստացել թուրք և քուրդ ազգաբնակչութիւնից... կողմում, երկաթուղու ուղղութեամբ, դէպի նշանաւոր Բաշ-Գադիկլար, լսւում էին թնդանօթի պայթումներ: Այդ այն վայրն էր՝ ուր 54 թուին նշանաւոր իշխան Բեհբութեան շատ փոքր ոյժերով ջարդեց տաճկաց մեծ բանակը, և պարգևատրուեց կայսերական առաջի շքանշանով: Ես յիշեցի այդ ակամայ՝ երբ մեր աջ կողմում պայթում էին թնդանօթները, իսկ մեր զինուորութեան առանձին խմբեր, ինչպէս և մասնաւոր մարդկանց մեծ բազմութիւն՝ շարժւում էին ոչ այդ մեծ ճանապարհներով: Այդ գաղթականութիւնը և փախչող զինուորութիւնը գնում էին բազմաթիւ ուղղութիւններով, և նոցանից և ոչ մէկը չենթարկուեց այդ ծով թուրքութեան մէջ որևէ բռնութեան և անախորժութիւնների:

Մեր նահանջի ընթացքում մենք անցանք տասնեակ թուրք գիւղերով, բայց այդ վայրում մենք չը լսեցինք այդ դիպուածներում ընդունուած հրացանի մի որոտ անգամ: Մենք գնում էինք դէպի Կարայեալ լեռներով, և մօտակայ թուրքերը մեր առաջն անցած ճանապարհ էին ցոյց տալիս մեզ, և լեռնային գետերը անցնելուց օգնում:

Այդպէս էին այն թուրքերը և քրդերը Կարսի նահանգում՝ որոնց մեր ռուսախօս գեներալները ուզում էին անպատճառ դաւադիր դարձնել, և այդ առանցքում խախտել կառավարութեան առաջ Կարսի նահանգապետի հեղինակութիւնը:

Սեպուհի կայանը բուն հայկական շտաբ էր, ոչ մի ռուսական խօսք և ոչ մի ռուսախօս ու ռուս:

Մինչ արւում էին հարկաւոր կարգադրութիւնները նահանջի համար՝ մթնեց, և մենք Սեպուհի հետ ձիով ժամի 9-ին միայն կարողացանք թողնել մեր բնակատեղին, և զօրամասերի հետ միասին շարժուել դէպի Արփաչայ:

Ճանապարհին Սեպուհ մի քանի րոպէյով հանդիպեց գեն. Յովսէփեանի շտաբը: Բայց այստեղ արդէն այլ պատկեր էր:

Եթե Սեպուհ շրջապատուած էր...*(տեքստը խզուած է)*...գիշերը խաւար էր աւելի քան երբևիցէ:

Նահանջը պատերազմի դաշտում պարտութեան համաձայնալից ձևն է, և մեր զօրամասերը շարժւում էին այդ մթութեան մէջ ոչ միայն անտեսանելի, այլև լուռ ու մտախոհ: Շարժուածքի ամէն մի տրոփիւն խանգարում էր տիրող լռութիւնը, իսկ մենք բոլորս ոչ միայն ցաւալից զգում էինք մեզ համակող դառնութիւնը՝ այլև լարուած ոյժերով լսում լեռների խորհրդալից հանգիստը: Ձախորդ օրերը՝ յիշեց Սեպուհ աշուղ Ջիւանուն, կուգան ու կ՛երթան...

Եւ մենք, թափահարելով կարծես մեզ պաշարող թախծալից խաւարը՝ ուժգին քշեցինք մեր ձիանքը յառաջ...

Այդպէս էր լուսանում մեզ համար Հոկտեմբերի 31-ը:

Մենք իջնում էինք Շիրակի դաշտը: Մեր առաջ ծաւալւում էր այն հոչակաւոր տափարակը, որ այնչափ ընտանի էր հայ սրտի համար: Հողը և ջուրը միշտ կը լինեն կեանքի այն հատուածները՝ որոնց խմորումը սերունդների համար և համով է և հոտով: Եւ Շիրակի ռանչպարը հերկելով բերրի դաշտերը՝ ակօսել է ոչ միայն հարուստ, արգաւանդ ուղիներ, այլև ամբարել երկրում ջերմալից սէրը դէպի հայրենի երկինքը, և այնտեղ փառող նորա երազները... Շիրակը Վանանդի սիրտն է, և Բագրատունեաց հարստութեան մեծահամբաւ դափնալից պսակը: Իմ կեանքը գաւառներում անցնելով՝ ես շատ սիրում էի վաղորդեան լոյսը, և միշտ սովորութիւն եմ ունեցել արևից շուտ վեր կենալու:

Եւ կարծես ի հատուցում հոգու այն մեծ յուզմունքների, որ վերապրում էի ես, ինձ վիճակ էր ընկել վերջին անգամ տեսնելու արևածագը Շիրակի դաշտում:

Թիւրքաց Հայաստանի դարբասներից սկսած մինչև Արդահանի սարալանջերը՝ բոլոր ջրերի ու չայերի դարձը ուղղուած է դէպի Շիրակ: Եւ այդ բազմահնչիւն և բազմատեսիլ սրընթաց ջրերը վերևից ներքև ընկնելով՝ արծաթելում են Շիրակի տափարակը, և գեղարուեստական մեծ տեսիլի հետ միասին՝ տալիս են ժողովրդին անուանի հաց և մեծ հարստութիւն:

Շիրակը բուն հայկական է, աշխատասէր, տոկուն, շինարար և տնտես: Նորա ազդեցութիւնը երկրի տնտեսական կեանքում շատ մեծ է, նա միշտ կապուած է եղել Կարսի նահանգի բոլոր վայրերի հետ բազմաթիւ գործնական կապերով, և որոշ չափով իր ձեռքումն էր պահում նահանգի շուկան:

Այդպէս էր նշանաւոր Շիրակը իր տեսքով և իր գործնական իմաստով:

Իջնելով Շիրակի տափարակը՝ մեր ճանապարհը ձգւում էր երկաթուղու գծով, և մենք կանգնած էինք հոչակաւոր Բաշգադիկլարի դիմաց:

Այնտեղ էր տեղափոխուել գիշերը գեներալ Յովսէփեան իր շտաբով, և մեր առաջն էր հայկական Զէյթուն զրահակիր գնացքը:

Շիրակի վաղորդեան խորին լռութեան մէջ՝ մերթընդմերթ որոտում էին զրահապատի թնդանօթները, և պայթալից ռումբերը արձագանք տալով Ալաջայի ստորոտներում՝ կարծես թէ նոր տրամադրութիւն և նոր յոյսեր էին ստեղծում: Այդ այն նշանաւոր Բաշգադիկլարն էր, ուր 54 թուին իշխան Բեհբութեան 3000

հոգով ջարդեց թիւրքաց 60 հազարանոց բանակը, և իր այդ պատմական յաղթութեամբ՝ հարթեց Կօմս Մուրաւիովի դափնալից ընթացքը դէպի Կարս:

– Դու զարմացրիր ամբողջ աշխարհը,– գրում էր այդ առիթով ռուսաց կայսրը իշխան Բեհբութեանին,– իսկ ես կը զարմացնեմ քեզ:

Եւ յատուկ հրովարտակով յանուն գեներալ իշխան Բեհբութեանի՝ նա շնորհում է նորան կայսերական տօհմին միայն վերապահուած ռուս գերագոյն շքանշանը, սուրբ Անդրէյի շղթան: Այդպէս էր հայ զօրավարը իր անցեալում:

Հոկտեմբերի 30-ի կօշմար օրը և նորան յետևող մթնալից և խորհրդաւոր գիշերը անցել էին կարծես որպէս մի ճնշող երազ: Եւ այսօր լոյսը և արևը ջերմալից սփոփում էին մարդկանց ջղերը, և ի դիմաց նոր տեսիլների և նոր տպաւորութիւնների՝ խմորում էին նոր յոյսեր և նոր վերապրումներ...

Այդպիսի հոգեբանական տարուբերումների մէջ էր և այն բազմահազար հայութիւնը, որ այդ միջոցին որպէս մի մեծ լափին՝ ծփում, անցնում էր Բաշգադիկլարի առջևով:

Բայց Բաշգադիկլարի, յետևապէս և Կարսի բանալին՝ Քիւրակ Դարայի կիրճն է:

Եթէ դուք թերթելու լինէք ռուս-տաճկական պատերազմների պատմութիւնը Կովկասի սահմաններում՝ Քիւրակ Դարային դուք կը հանդիպէք և 29 և 54 և 77 թուականներում:

Երբ 29 թուին նշանաւոր Կօմս Պասկեւիչ, շրջապատուած հայ կամաւորական շարքերով անցնում էր Արփաչայ՝ այդ ուղղութեամբ առաջի անգամ խմորուեցին մեր ազգային և քաղաքական հեռանկարները:

Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակեցին, յետոյ մեծահռչակ կաթողիկոս ամենայն հայոց՝ ռուս զօրքի առաջն անցած, շատ բարձր տրամադրութեամբ կանգ առաւ Քիւրակ Դարայի կիրճում: Եւ երբ խաչով ու զէնքով զրահաւորուած հայ խրոխտ վեղարաւորը ուժգին և սպառնալից բախում էր Քիւրակ Դարայից Կարսի դարբասը՝ Կարսի յուզուած և ահաբեկուած հայ ժողովուրդը դիմեց հետևեալ պատկերաւոր գրութեամբ Կօմս Պասկեւիչին. «Աղալար Աղասի (իշխանների իշխան) տիրացու (գրագէտ) Պասկեւիչ, ամա՛ն, ամա՛ն, դուն գիտես, գլուխտ ֆօն (այնտեղ) թրջես՝ այստեղ թրաշես (ածիլես, շտապիր այսինքն), որսերուն կըտրինգը, էգերուն դուն գիտես... (հայ արու ազգաբնակութիւնը կոտորում են, իսկ կանանց բռնաբարում) »:

54 թուին Քիւրակ դարա դարձեալ այն հանգոյցն էր, ուր լուծուեց Կարսի բախտը:

Ինչպէս 29 թուին՝ 54 թուականի ռուս արշաւն էլ դէպի Տաճկական Հայաստան համեմուած էր քրիստոնեայ և հայ ազգային միտումներով, և Պետերբուրգի այն ժամանակուայ ռուս թերթերից մէկում երևաց այդ օրերի հոգեբանութեանը համապատասխան մի հաղորդագրութիւն:

Բաշգադիկլարի նշանաւոր ճակատամարտի նախընթաց գիշերը՝ մի հովիւ Քիւրակ Դարայի կիրճում տեսել էր երկնքում մի գերբնական տեսիլ: Երկինքը բոցավառուել էր, և այդ անհուն տարածութեան մէջ իշխանալից փառում էր ոսկէ մեծ խաչը, օրհնելով հայ զօրավար իշխան Բեհբութեանին, և Քիւրակ Դարայի ձորում խմբուած նորա 3000 քաջերին...

Երբ այդ տեսիլի միւս օրը իշխան Բեհբութեան քաջութեան եզակի հրաշք ցոյց տուեց՝ այդ թղթակցութիւնը մեծ ֆուրոր, մեծ սենսացիա առաջ բերեց ռուս մայրաքաղաքում եւ արքունի Քիւրակ Դարայի... անցեալում: Այդ վայրենի և չքնաղ ձորում՝ ուր հազարաւոր չայեր ու ջրեր վերևից ներքև ընկնելով, ստեղծում են մի հմայիչ սիմֆոնիայ, մելամաղձոտ համերգ՝ նա տեսնում էր Ներսէս Աշտարակեցու զինուած իմպօզանտ ուրուականը:

...Իսկ այնտեղ, երկնքում, բախտի գաղտնիքը որոնելով՝ Կոմս Լօրիս երազում էր տեսնել դարձեալ այն զօրաւիգ խաչը, որ 54 թուին դէպի գերբնական յաղթութեան առաջնորդեց իշխան Բեհբութեանին...

Այդպէս էին հռչակաւոր զօրավարի հոգեբանական վերապրումները, երբ 77 թուին նրա հրամանատար մեծ սպիտակ վրանը ձգուեց Քիւրակ Դարայի քչքչան աղբիւրների մօտ: Այստեղից նա ուղարկեց դէպի նշանաւոր Ալաջայ՝ հայ ազգի անուանի գեներալ Շելկովնիկովին, այստեղից նա ուղղեց իր թնդանօթները դէպի սեպաձև Վազինքէյ, և վերջապէս Քիւրակ Դարա հիւսուեցին այն փայլուն դափնիքը, որոնցով 77 թուին բախտը այնպէս անձրևեց Կոմս Լօրիսի, գեն. Լազարեւի և միւս հայ փայլուն զօրավարների անունները:

Այդպէս էր նշանա[ւոր] լրագրի այդ թղթակցութիւնը, և աւելացրեց, որ զօրաւիգ խաչը երևաց այնտեղ՝ ուր սփռուած էր հրամանատար իշխան Բեհբութեանի մեծ սպիտակ վրանը...

Երբ 77 թուին, Կովկասեան ահարկու բանակի համանատար Կոմս Լօրիս Մելիքով պատրաստւում էր ռմբակոծել Կարսը՝ նա դարձեալ կանգ առաւ Քիւրակ դարայի ձուրում: Ֆատալիստ իր կրթութեամբ՝ Կոմս Լօրիս իր հաւատալիքների գերին էր: Նրա յիշողութիւններում վերականգնել էր Քիւրակ Դարան պատմութեան մէջ, և երկրի հաւատալիքներում հարիւր տարի շարունակ: Բայց դառնանք մեր նահանջի պատմութեանը:

Երբ մենք Սեպուհի հետ իջանք Բաշգադիկլարի հովիտը՝ թէ՛ այդ նշանաւոր տափարակը, ճանապարհների այդ հանգոյցը դէպի Կարս, և թէ՛ Քիւրակ դարան դեռ տակաւին մեր ձեռքումն էին:

Զէյթունի թնդանօթները գլորում էին իրանց ծանրալից ռումբերը Քիւրակ Դարայի վերայով դէպի Վազինքէյ բարձունքը, և այնտեղ մեծ յուզմունք, մեծ շփոթ առաջ բերում դէպի Կարս իջնող թիւրք զօրաշարքերում:

Եւ Կարաբեկիր փաշա, գերելով գեներալ Փիրումովին՝ անմիջապէս պահանջեց դադարեցնել Զէյթուն զրահակիր գնացքի գործունէութիւնը: Նա առա-

ջարկեց հայկական բանակի երեկուայ հրամանատարին այդ իմաստով գրաւոր հրաման արձակել ում հարկն է, և գեն. Փիրումովի այդ գրութիւնը թիւրք հրամանատարը ուղարկեց դէպի Բաշգադիկլար, իր սուրհանդակներով:

Իսկ մինչ այդ, զրահակիրը ահաբեկում էր իր չորս կողմը և կենդանացնում մեր յիշողութիւններում նախկին Քիւրակ Դարէն և նախկին Բաշգադիկլարը...

Երեկուայ ընկճուած և յուսահատ վերապրումները կարծես թէ լուծուել և անցել էին որպէս մի կոշմար երազ, և մեր առաջ խմորւում և կերպարանք էին ստանում նոր դիպուածների և նոր հեռանկարների հմայիչ ուրուագծերը:

Մեր բանակի բոլոր լքուած ու ցիրուցան եղած ոյժերով հանդերձ, Բաշգադիկլարի շուրջը մենք ունէինք դարձեալ մի քանի հազարանոց մի բռունցք: Մեր ձեռքումն էին Բաշգադիկլարը, Քիւրակ դարէն: Մեր առաջն էր զրահակիր Զէյթունը և նորա հեռանպատակ թնդանօթները շօշափում էին Կարսի ամրութիւնների փեշերը, և սարսափ տարածում երկաթուղու գծով: Եւ մի րոպէ մենք նորից վերանում էինք դէպի հաւերժ երազներ: Մեզ թւում էր, որ անցածը մի խաբուսիկ տեսիլ էր միայն, և որ մեր կենսունակ կորովը դեռ տակաւին այստեղ էր: Մեզ պակասում էր մի իշխանալից հրամանատար միայն՝ և հայ քաջերը պատրաստ կը լինէին կրակ նետուելու: Մեզ թւում էր, որ մեր զինուորական ընկճուած մթնոլորտը կարող էր նորից հրավառուել, մի տաղանդաւոր զօրավար՝ և հայկական բանակը անձնուրաց կ՛երթար նորա փայլատակող սրի յետևից... Եւ մենք ունէինք բոլոր այդ իմաստով տուեալները՝ ռազմական դիրքեր, թշնամու բանակից գերազանց մեծ ոյժ, զրահակիր գնացք և ի լրումն այդ բոլորի՝ սթափուած և վրէժալից ժողովրդական տրամադրութիւն: Բայց մեր բանակի հրամանատարը՝ գեն. Յովսէփեան, շրջապատուած Օրլովսկիներով, Երուսալեմսկի, Գրօսս և Միրիմանովներով՝ շտապում էր դէպի ելք միայն: Այս անգամ նա նահանջում էր կրկնակի եռանդով, և իր այդ երկչոտ ու խուճապալից ընթացքում՝ նա աչքաթող էր անում պատմական Բաշգադիկլարը և հռչակաւոր Քիւրաք Դարէն: Գեներալին չէր հետաքրքրում ի հարկէ հայ իղձերի խորտակումը: Եւ շրջապատուած իւրային սպաներով՝ նա շփոթալից թողնում էր Բաշգադիկլարի բնական ռազմաբեմը, և չէր տեսնում իր առաջ Ներսէս Աշտարակեցու, Կոմս Լօրիսի և գեն. Լազարեւի փառքալից, փառող և փառաբանուող ոգիները...

Եւ մենք նորից յուզուած և նորից համակուած իրագործելի և խաբուսիկ հեռանկարներով՝ թողեցինք Բաշգադիկլարը և անցանք Կարայեալ:

Նոյեմբերի մէկն էր: Արևը մի առանձնակի գուրգուրալից ջերմութեամբ լուսաւորում էր Շիրակի դաշտը, և կարծես նորից մարդկանց աշխատանքի կոչում:

Աշունը շատ հմայիչ է Կարսի նահանգում: Երկիրը լիուլի լցւում է կեանքի բարիքներով, և բնութիւնը վերջին անգամ ձմռադէմ իր չուելով՝ համակում է երկինքը, լեռները և նազելից օդը մի կախարդ հմայքով:

Շիրակի մեծահարուստ հայ գիւղերը, որոնց հացաշատ հռչակը այնչափ անուանի է դարձել Վանանդի աշխարհում՝ Փալդրվանը, Օղուզլին, Ուզունքիլիսէն, Կըզըլ Չախչախը, Փիրվալին, Կադիկլարները, Օջախ Կուլին և միւսները՝ արդէն դատարկ էին: Կարսի խուճապի ալիքները ամէնից առաջ փախցրեցին այդ վայրի ազգաբնակութիւնը: Իսկ Թիւրքաց Հայաստանի սահմաններից շարժուող գաղթական լափինը՝ անդադար գալիս էր դէպի Արփաչայ, և Շիրակի հմայիչ դաշտը դարձնում բացօթեայ հսկայ կայան: Բազմահազար գաղթականութիւնը իջել էր ջրերի և աղբիւրների մօտ, և սփռել արևի առաջ անձրևից նամացած իր շորերը և կարպետները: Իսկ հարիւրաւոր խարոյկների ծաւալուող ծուխը՝ հեռուից գալիս էր ասելու մեզ, որ այստեղ շարունակւում է այն կեանքը, որ ունի իր հայրենիքը, իր օջախը և իր սեփական երկինքը:

Մեր նահանջող զօրամասերը այս տափարակում միանգամայն հալուել և խառնուել էին գաղթական շարքերին: Արևի առաջ փայլատակում էին զօրաց սուինները, տալով այդ վայրին մեծ թատերաբեմի ռազմական մեծ ոյժերի կուտակման պատկեր: Այստեղ ու այնտեղ լսւում էր մեր երկրի թախծալից լէ-լէն, իսկ Հաջի Փերի գիւղի [բնակիչները] վերադառնում էին դատարկելու իրանց հացի հորերը, ամբարները: Շատերը գալիս էին հաւաքելու իրանց տներում դեռ մնացած իրերը, բայց կային և այնպիսիները՝ որոնք վերադառնում էին գէթ մի անգամ ևս աչքի անցնելու այն օջախը, որի շուրջը նոքա այնչափ աղօթել, հրճուել և ընկճուել են...

Այդպէս է հայը, և այդպէս է նորա սէրը դէպի հայրենի երկինքը և իր հանգիստ ու հալալ նիստ ու կացը:

Շարան-շարան այդ եկողները թողնելով տունը, երեխաներին Աղէքսանդրապոլ, կամ նորա գիւղերում՝ ամէն քայլափոխում կանգնեցնում էին ինձ ու հարցուփորձի ենթարկում: Ագահութեամբ լսելով պատասխաններս՝ նրանք չէին բաւականանում դորանով, և նոր ու նոր հարցերով դիմում էին ինձ ուղեկցող պաշտօնեաներին: Իրանց ամբողջ էութեամբ նոքա ուզում էին լսել թշնամու պարտուելը և նորա նահանջը, և սրտատրոփ սպասում էին իրանց գիւղերը վերադառնալու հրամանին:

Այդչափ ջղային, զգալից և ռօմանտիկ էր այդօրուայ մթնոլորտը: Հայկական բանակը հրաման էր ստացել բռնելու Արփաչայի ընթացքը, և տեղաւորուելու այդ ուղղութեամբ ընկած գիւղերում: Սեպուհ նշանակուած էր թիկունքի հրամանատար, գեներալ Յովսէփեանին նորից յանձնուած էր ճակատը՝ և նորա ձեռքումն էր Զէյթուն զրահակիր գնացքը: Աղէքսանդրապոլից գալիս էին զօրաց նոր գնացքները, ճանապարհին բերանից բերան էին անցնում սենսացիօն լուրեր մեր «նոր ոյժերի» և «բարձր» տրամադրութեան մասին՝ և մենք բոլորս ակամայ բռնուած էինք նոր յոյսերով և նոր սպասելիքներով:

Կարայեալ երկաթուղու կայարանը, ուր 76 թուին առաջի անգամ տեղաւորուեց Կօմս Լօրիս Մելիքովի շտաբը՝ վերածուել էր դարձեալ հրամանատար և աղմկալից վայրի: Հեռաւոր հորիզոնում կանգնած էր գոլորշիներում կորած Զէյթուն զրահապատ գնացքը, աջ ու ձախ վխտում էին զինուորական գնացքներ և մեր գումարտակները նորից կազմակերպւում ու լրացւում էին: Իսկ այնտեղ, դէպի Բաշկադիկլար՝ ստէպ ստէպ փայլատակում էր թնդանօթը, և սփոփիչ արձագանք տալով լեռնաշղթաներում՝ մարում էր խորհրդաւոր և յուսալից մթնոլորտում...

Կեանքը և յոյսը միշտ լրացրել են մէկը միւսին, և մարդիկ այդ առանցքում միշտ երազել են և միշտ լաւատես եղել:

Կարսը ընկել էր, մեր սպայութիւնը, զօրքը, փախել ու ցիր ու ցան էին եղել, գաղթականութեան մնացորդը հասել էր Արփաչայ՝ բայց օրուայ նոր սիտուացիան և իրերի նոր դասաւորումը ստեղծում էին նոր վերապրումներ և նոր հեռանկար:

Զօրաց նոր դեսլօկացեան պահանջում էր վարչական որոշ կարգադրութիւններ, և ես ուղարկեցի Արփաչայի գիւղերը ինձ ուղեկցող մի քանի պաշտօնեաներ, յանձնարարելով նոցա մնալ թիկունքի հրամանատարի տրամադրութեան տակ, և հարթել բոլոր թիւրիմացութիւնները՝ որոնք կարող էին այդ մթնոլորտում առաջ գալ ժողովրդի և զօրաց նոր դասաւորումների առանցքում:

Ինձ թւում էր դարձեալ, որ մենք կարող էինք վերականգնել դրութիւնը: Ես կարծում էի, որ կառավարութիւնը հայութեան հետ միասին ոտի կանգնած՝ կը ստեղծեն նոր բանակ, և երկու ամիս անփառունակ նահանջից յետոյ կատաղի յարձակման անցնելով՝ մենք նորից և աւելի բարձր տրամադրութեամբ կը բախենք այն մեծ դարբասը, որ տանում է Վարագ և Կարին: Բերլինի վեհաժողովի 61-րդ յօդուածից յետոյ՝ հայութիւնը գտնւում էր քաղցրալից հիպնոզի տակ, և կէս դար շարունակ ճոճուելով այդ յոյսերի և երազների առանցքում՝ մենք դեռ հաւատում էինք դարձեալ, յառնում դէպի անդանոր... Այդ բոլոր ներքին և արտաքին պայմանները՝ չէին կարող գէթ մի երկու օրով չը ստեղծել նոր տրամադրութիւն, և մենք տեսնում էինք, թէ ինչպէ՞ս դէպի դարձ էին ուղղւում գաղթականութեան ալիքները:

Զօրաց նոր դիսլօկացեան, նոր պատրաստութիւնները և կարծես եռանդուն անցուդարձը՝ միանգամայն փոխում էին երկրի պատկերը: Իսկ գնացքների և զրահակրի ուժգին սուլոցը միախառնուելով անցնող գումարտակների երաժշտութեան խրախուսող և տրամադրող հնչիւնների հետ՝ բռնկում էին օդը և համակում մարդկանց սիրտը վրէժի, ոյժի և տիրելու մեծ ծարաւով:

Այստեղ ես բաժանուեցի Սեպուհից: Նա մնում էր Արփաչայի վերայ, դեռ Կարսի նահանգում նա պէտք է դասաւորէր իր գումարտակները և դարան մտնելով՝ կապէր այնտեղ իր ապագայ յարձակման միջոցները...

Երբ ես վերջին անգամ սեղմելով հրամանատար Սեպուհի ձեռքը, և շրջապատուած իմ ուղեկիցներով նստում էի ձիս՝ զինուորական երաժշտութիւնը, ի պատիւ երևի Կարսի նահանգապետի՝ նուագեց մեր ազգային հիմնը, մեր հայրենիք, թշուառ, անտէր: Լսում էի ես նազելի մեղեդին, և ինձ թւում էր, որ օդում փարում էին հայ ժողովրդի վերապրումները: Անցեալը, այդ խռովալից և խայտաճամուկ տարիները որպէս մի քաղցր մշուշ՝ ձգւում էին իմ առաջ իրանց բոլոր տեսիլներով: Իմ ամբողջ էութիւնս հրդեհւում էր նորից գործելու և նորից հրամանատարելու ծարաւալից իմաստով:

Երկու մեծ հոգեբանական վերապրումներ իմ մէջ յաջորդում էին …*(տեքստը խզուած է)*

…գեներալները, որ նոյն վայրումն էին՝ ուր անուն և հռչակ էին ստացել 54 և 77 թուականներում հայ փայլուն զօրավարները, չէին ուզում նմանուել իրանց այդ անուանի և մեծաքանքար նախորդներին…

Յետոյ պարզուեց, որ Բաշգադիկլարում որոտում էր մեր Սասուն զրահապատ գնացքի հրետանին, և ահաբեկում տաճկաց փոքրաթիւ գումարտակները:

Շօրագեալի հայկական գիւղերը, որոնց միջով մենք անցնում էինք՝ դատարկ էին արդէն, բայց յերդիսները դեռ շարունակում էին ծխալ…

Շատ բնորոշ էր զինուորների տրամադրութիւնը, որ ճանապարհի ամբողջ տարածութեամբ ժողովրդի հետ միասին էին շարժւում առաջ:

Նրանք միանգամայն անհոգ էին դէպի իրանց դեռ երեկուայ պարտաւորութիւնները, նրանք կարծես մոռացել էին իրանց կոչումը:

Հրացանը սայլի վերայ ձգելով՝ զինուորները կարգաւորում էին իրանց տան իրերը, քշում ու արածեցնում էին տաւարն ու ոչխարը, նրանք միանգամայն անձնատուր էին եղել իրանց ընտանեկան հոգսերին՝ մոռանալով ի սպառ, որ իրանք զինուորներ են…

Բազմաթիւ սպաները զանազան աստիճանների՝ հակասական պատմութիւններ էին անում, թէ ինչո՞ւ նրանք հեռացան ռազմաբեմից: Մի բան միայն ակներև էր, որ այդ բոլոր ասպետները թողել էին իրանց դիրքերը՝ սիստեմի, հսկողութեան, կապի և ներդաշնակութեան կատարեալ բացակայութեան շնորհիւ միայն:

Հազիւ թէ պէտք է ասել, որ բաւական չէր ուժեղ զօրակոչ յայտարարել, և բռնի ուղարկել մարդկանց ռազմաբեմ:

Սիստեմը, կարգը, կանոնը և մտածուած, չափուած ու ձևած կազմակերպութիւնը կազմում են ամէն մի գործի իմաստը, և նորա կէսից աւել են:

Բայց այդ տարրականը մենք չունէինք: Զօրակոչի յատակագիծը, որ պատերազմի առաջի պայմանն է՝ մենք չունէինք, գոնէ չը գիտէր այդ մասին նահանգապետը, այն մարմնի ներկայացուցիչը՝ որի միջով պէտք է ի կատար ածուէր

զօրակոչը: Զօրակոչը կատարւում էր վայր ի վերոյ, առանց սիստեմի, տուեալների և առանց որևէ պատասխանատուութեան:

Զօրամասերը լրիւ չէին, նրանք բացի այդ՝ ցրուած էին:

Գնդի մի գումարտակը Կարս էր, միւսը՝ Դիլիջան, երկրորդը՝ Իգդիր, և այդպէս անվերջ: Հայկական փոքրիկ բանակում այդ շփոթը միանգամայն երերում էր զօրաց ամբողջութիւնը, և մենք չէինք կարողանում կրթել զօրամասի շարքերը և դաստիարակել որոշ զօրական միաւոր: Իսկ նիւթական միջոցների սուղութիւնը լրացնում էին այդ թերութիւնները, և մենք հնարաւորութիւն չունեցանք ստեղծելու այն բանակը, որ ոչ միայն ազգայնական լինէր՝ այլև կուշտ, հագնուած, փայլուն, ներդաշնակ և ահարկու...

Հրամանատար կազմը կամ խորթ օտար էր, կամ ոչ բաւական ուշադիր դէպի իր կոչումը, և այդ մթնոլորտում նա հեղինակութիւն ու համարում չունէր:

Այդ առանցքում՝ զօրական շարքերը պէտք է տարուբերուէին պատահական պայմաններում, և չէին կարող սիստեմի, ոյժի և մեծ կորովի գաղափար ստանալ: Մենք հեռացանք մեր դիրքերից՝ պատմում էին Կարսի և Աղէքսանդրապօլի միջև մեզ պատահող բազմաթիւ սպաները, որովհետև մենք կապ չունէինք մեր հրամանատարութեան, մեր իշխանութեան հետ: Մենք չը գիտէինք՝ թէ ի՞նչ է կատարւում նոյնիսկ մեր հարևան զօրակայանում, դիրքերում, մենք պատասխան չէինք ստանում մեր բազմաթիւ դիմումներին, և մեր բազմաթիւ անյետաձգելի պահանջները չէին բաւարարւում:

Այն ահարկու դիրքերը որտեղից շարունակ պէտք է որոտար մեր թնդանօթը՝ լռում էին, մենք դիտում էինք, թէ ինչպէ՞ս այս և այն տեղից խումբ խումբ փախչում ու հեռանում էր զինուորութիւնը: Շատ անգամ իրանց սպաներին հետևելով՝ և մեզ ոչինչ չէր մնում անելու: Մենք ևս փախանք...

Այդ բացատրութիւնները ունէին ի հարկէ իրանց իմաստը, այդ բացատրութիւններում մեր անկազմակերպութիւնն էր, ապիկարութիւնը, և այն բացասական գծերի հաւաքածուն, որ խախտում է զօրական կորովը, և այդօրինակ անլսելի պարտութիւն առաջ բերում...

(տեքստը խզուած է) Նոր և նոր զօրակոչը,...

(տեքստը խզուած է)...հայրենի օջախին, գալիս էին տեղեկութիւններ ժողովելու, թէ ինչ է կատարւում այդ կողմերում, և տրամադիր էին հաւատալու, որ կ՛անցնէ փոթորիկը և իրանք նորից կը վերադարնան իրանց տեղերը...

Իսկ տեսնելով նահանջող զօրամասերը՝ ինքն իրան բացատրութիւն չը տալով, ժողովուրդը հակուած էր նորից իր երկրում հարազատ իշխանութիւն տեսնելու, և այդ առանցքում ոգևորուելու ու յուսալու...

Դէպի Արփաչայ եղանակը տաքացել էր, և գաղթականութիւնը կանգ էր առել Ախուրեանի ափերում:

Հազարաւոր սայլեր, տաւար ու ոչխար՝ բռնել էին խճուղու աջ և ձախ կողը, այստեղ և այնտեղ բռնկուել էին խարոյկներ, և այդ ձմռան դէմ բացօթեայ իջևանները՝ և սառսուր և յուսահատութիւն էին տարածում իրանց չորս կողմը... Դէպի Աղէքսանդրապոլ տանող Արփաչայի կամուրջը այնպէս էր բռնուած անընդհատ հոսող գաղթականութեամբ, որ մենք ստիպուած էինք օգտուելու Արփաչայի սաղր տեղերով անցնել գետը ձիով:

Սեպուհ հրաման էր ստացել կենտրոնացնելու նահանջող բոլոր զօրամասերը Արփաչայի տարածութեամբ ընկած գիւղերում, և կապ պահելու Սասուն զրահապատ գնացքի հետ: Այդ խաբուսիկ կարգադրութիւնները որոշ չափով գործնական մթնորոտ էին ստեղծում, և մարդիկ տրամադիր էին հեռաւոր ենթադրութիւններ անելու վերստին վերականգնելու վաղեմի դրութիւնը: Ո՞րչափ և ակներև լինէր մեզ համար մեր կատարեալ զինուորական և պետական սնանկութիւնը, և ո՞րքան և խաբուսիկ այդ բոլոր զառանցանքները՝ բայց մարդիկ միշտ և բոլոր հանգամանքներում մնում են յուսացող և լաւատես, և մենք չէինք կարող դուրս լինել այդ ընդհանուր հոգեբանութիւնից: Եւ վերջին անգամ անցնելով Արփաչայ՝ մենք նոյնպէս սպասում էինք հրաշքի, և նոյնպէս հաւատում ճշմարտութեան և արդարութեան յաղթանակին...

Եթէ շատերը իր ժամանակին տեղափոխել էին Կարսից իրանց բոլոր ունեցածը և իրանց ընտանիքները՝ ես այդ հնարաւոր չը համարեցի սկզբունքային պատճառներով:

Օգոստոսի կէսից կառավարութիւնը հարկաւոր համարեց «Կարսի նահանգի և քաղաքացիական իշխանութիւնը կենտրոնացնել գեն. Փիրումովի հմտալից ձեռքերում»: Թէև այդ ակտը ընդգծում էր նահանգապետի ենթակայ դերը՝ բայց երկրի գիտակցութեան մէջ նահանգապետը մնաց իր նախամեծար տեղում, և նահանգը շարունակում էր իշխանութեան գերագոյն ներկայացուցիչ ճանաչել դարձեալ նահանգապետին:

Բոլոր օրէնսդիր և ձևական կողմերը մի կողմը դնելով՝ ես պարտաւոր էի հաշուի առնել երկրի այդ տրամադրութիւնը, և աւելի արժէքաւոր ու բարձր համարելով ժողովրդի այդ վերաբերմունքը դէպի ինձ՝ քան դիկտատոր Ռուբէն փաշայի քմահաճ «օրէնքը» գեն. Փիրումովին գեներալ նահանգապետ նշանակելը, ես շարունակում էի իմ կառավարչական և պետական կուրսը:

...ի նկատի առնելով, ժողովուրդը շարունակում էր ինձ համարել նահանգի առաջի իշխանաւոր, և նահանգապետի անզգոյշ քայլը կարող էր առաջ բերել մեծ խուճապ՝ ես հնարաւոր չը համարեցի շարժուել Կարսից: Ես և իմ ընտանիքս թողեցինք Կարսը այն շորերով, որ մեզ վերայ էր Հոկտեմբերի 30-ին, և թողեցինք մեր բնակարանը մեր այն բոլոր իրերով, որ կարող էր ունենալ իմ հասակի և դիրքի մի մարդ: Թողեցի այնտեղ այն բոլորը, որ ձեռք էի բերել 40 տարուայ ընթացքում...

Ես թողեցի Կարսը նորա անկումից 10 րոպէ առաջ միայն՝ երբ թիւրք առաջաւոր մասերը արդէն կողոպտում էին վագօնները և քաղաքի հեռաւոր մասերը, երբ մեր զօրքը խելակորոյս փախչում էր, իսկ մեր սպայութեան մի մեծ խումբ բոլորելով գեն. Փիրումովի շտաբը՝ դեռ օգնութիւն և փրկութիւն էր սպասում...

Թողնելով Կարսում իմ ամբողջ ունեցածս՝ ես անցնում էի...*(շարունակութիւնը բացակայում է)*

ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 6, թթ. 1-100, բնագիր, ձեռագիր:

DOC №7

Յուշեր՝ վրացիների կողմից Արդահանի օկրուգի գրաւման, Կարսի անկման, հայ-թուրքական յարաբերութիւնների խզման, հրամանատարութեանը չենթարկուող հայ զինուորների բողոքի ցոյցերի, Կարսի ամրութիւնների, վարչապետ Ա.Խատիսեանին մարզի տարբեր քաղաքներում ցոյց տուած ընդունելութեան, Սարդարապատի ճակատամարտի զօրահրամանատարների, Սեպուհի գնդերի, հասարակական գործիչ Չալխուշեանի, մարզի տնտեսական տարբեր ճիւղերի, երկաթուղին Սարիղամիշից Օլթի տանելու, ռուս աղանդաւորների, յոյն և քիւրդ բնակչության էական գծերի, զինակոչի, ռուս սպաների վարքագծի, Երևանում Կարմիր խաչի կազմակերպման և նման հարցերի մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Այդ ուղութեամբ ռուս գանձարանը կառուցել էր երկաթուղու մեծարժէք կայաններ, որոնց միջև երթևեկում էին մօտ 3000 վագոններ ու այդչափ էլ պլատֆորմ:***
- ***Կաղզուանը մի հարուստ գաւառ է: Աղահանքը, պղինձը, երկաթը, արծաթը, բազմաթիւ հանքային տաք և սառն ջրերը դարերի ընթացքում բևեռել են այստեղ մարդկանց ուշադրութիւնը:***
- ***Այդպես է գաւառի առանձնակի հոգեբանութիւնը, ուր ձուլւում, միախառնւում է և հայը, և թուրքը և քուրդը:***
- ***Լարուել և համակերպուել ժողովրդի հետ՝ և շատ հեշտ է և շատ դժուար:***
- ***Նահանգի 12 վայրերի բժիշկների պաշտօնները մինչև վերջն էլ մնացին թափուր, և նահանգական բժիշկը նման էր հրամանատարի, որ ոչ զօրք ունէր և ոչ ռազմամթերք, դեղորայք...***
- ***...բայց այդ առանցքը շատ փոքր էր, հայրենի պետական իլլիւզեան կարճատև և հայկական օրերը արդէն հաշուած էին...***
- ***Եւ այդ խորթ ու անպիտան միջոցներով՝ մենք ուզում էինք կերտել մեր անկախութիւնը և մեր ինքնուրոյնութիւնը...***
- ***Շատ հետաքրքիր է, որ դաշնակցութիւնը, որ իր անցեալում եղել է այնչափ ինքնուրոյն, այնչափ վստահ իր անելիքներում և այնչափ խիզած ու համառ՝ այսօր խաղալիք էր այդ ողորմելի գեներալների և գնդապետների ձեռքում:***
- ***Հայկական զօրաբանակը կրիտիկ մօմենտում մի աֆտօմօբիլ անգամ չունէր: Թէ ո՞ւր չքացան այդ բազմաթիւ աֆտօմօբիլների հետ միասին և հազարաւոր ձիերը և եզները, որ զինուորական իշխանութիւնը անդա-***

դար բռնագրաւում էր տարիուկէս ժամանակի ընթացքում Կարսի նահանգում իր «ռազմական» և պատերազմական պէտքերի համար՝ դա նոյնչափ հետաքրքիր որչափ և մութ պատմութիւն է:

- *Եւ այդ թէ՛ զինուորական և թէ՛ քաղաքացիական անիշխանութեան մթնոլորտում՝ իրաւակարգը պէտք է ընկներ:*
- *Քրդերը Կարսի նահանգի այն հզօր տարրն էին, որին մենք կարող էինք օգտագործել մեր պետական գործելակերպում:*
- *Մենք կարծում էինք, որ փոքր գումարներով, հատուկենտ մարդով և տնային միջոցներով՝ մենք կարող ենք և պետական աշտարակը կերտել: Եւ մենք ի հարկէ չարաչար սխալուեցինք, և նոյնչափ տուժեցինք:*
- *Այդ մթնոլորտում ամենաքաջազնալից բանակն էլ պէտք է պարտուէր, և մենք կուլ գնացինք այն ծախորդ ընթացքին՝ ուր ամէն ինչ մեր դէմ էր, և մենք բոլորի դէմ:*
- *Իսկ մինչ փաշան «կուսակցական» շրջաններում զբաղուած էր «տակտիկական» հարցերով՝ քեամալիստները եռանդալից կազմակերպւում էին, օգտագործում մեր բազմաթիւ պետական սխալները, իրանց կողմը քաշում քրդերին, և մեր գլխի վերայով ձեռք էին մեկնում վրացիներին:*
- *Կարսի նահանգը լցուեց բախտախնդիրներով միայն, պատահական մարդկանցով՝ որոնք շտապում էին միայն կեղեքել և փախչել:*
- *Սահմանապահ 17 ռուս սպաները կազմակերպեցին իրանց զօրամասերը անցորդներից և բախտախնդիրներից, և իրանք էլ այդ հրոսակախմբերի գլուխը անցած՝ սկսեցին աջ ու ձախ թալանել:*
- *...հայկական կառավարութիւնը գալիս էր այդ աշխարհը միայն ռուսներով և այն հայերով, որոնք ոչ մի առնչութիւն չունենալով հայութեան հետ՝ նոյնիսկ ծաղրում էին իրանց մայրենի լեզուն...*
- *Հայ երիտասարդութեան մի մասը փախչում է դէպի Թիֆլիզ, Բագու, Ռուսաստան, միւսը, որ մնում էր Հայաստանի սահմաններում՝ մի կերպ «տեղաւորւում էր» և սպասում ռուս և ռուսախօս սպաների հետ միասին, թէ երբ կը շառագունէ հիւսիսը, և ե՞րբ վերջապէս կը վերանան այդ «ազգային» կապանքները...*
- *Ռուբէն փաշան գտնում էր, որ հայկական պետականութիւնը ինքը ռուսախօս և օտարացած սպայութիւնն է:*
- *Թողնելով ճակատը, Տաճկաստանի սահմանը՝ սպաները, զինուորները և «կամաւորները» փախչում էին դէպի երկրի ներսը, և յարձակում գործելով մեր քուրդ և թուրք գիւղերի վերայ՝ աւերում և կողոպտում էին ազգաբնակութիւնը:*

- *«Վերջ տուեցէք զինուորական այդ գեգեմօնեային, ի դէպ պետականութիւնը կը պայթէ»: Եւ նա պայթեց 10 օրից յետոյ՝ երբ ընկաւ Կարսը, իսկ նորա հետ և Հայոց Հանրապետութիւնը...*
- *Ո՛չ Կաղզուան և ո՛չ Սարիղամիշ մենք թշնամի չը տեսանք՝ բայց և այնպէս գեներալ Փիրումով-Յովսէփեան, «առանձին սաղրական միտումներով» հարկաւոր էին համարում տենդոտ դատարկել այդ վայրերը, տնաւեր անել հայ ազգաբնակութիւնը և փախուստի տրամադրել այն զօրքը՝ որին նոքա տարի ու կէս ժամանակամիջոցի ընթացքում դաստիարակում էին միայն թալանի և միայն կեղեքումների վարժողութիւններում:*
- *...երկրի քուրդ և թուրք ազգաբնակութիւնը միանգամայն ապշած է, թէ ինչու մեր գնդերը փախչում են, երբ մեր դիմացի թշնամին թէ դեռ շատ հեռու է և թէ շատ թոյլ:*
- *Հրամանատարութիւնը կանգնած էր երկրի առաջ իր բոլոր անկարող մերկութեամբ...*
- *Կարսը՝ Կրօնշտատից յետոյ, համարւում էր առաջնակարգ բերդ, և անառիկ ամրութիւնների համաշխարհային հռչակ ունէր:*
- *Այդ հանդիպումը վերջացաւ մեր պարտութեամբ, հրամանատար կազմը փախաւ առաջինը, զինուորները հետևեցին նորան...*
- *Ամենքից առաջ՝ լուսաբացին, գաղտագողի, պետական բեռնակիր աֆտօմօբիլներով և սայլերով՝ մեր հրամանատարութիւնը փոխադրեց դէպի Աղէքսանդրապօլ իր ընտանիքները, իր բոլոր ունեցուածքը, իրերը, պաշարը և վերջի ջարդուած աթոռը:*
- *Դասալիքութիւնը այդ օրերում համաճարակի բնոյթ էր ստացել: Փախչում էին ոչ միայն անհատներ՝ այլ ամբողջ վաշտեր, եթէ չասենք գումարտակներ:*
- *Զինուորական գործը մեր երկրում եկել էին վարելու ռուսները և ռուսախօսները, և պետական այդ հիմունքը մինչև վերջը մնաց նոցա ձեռքում և նոցա կամայական հաճոյքից կախուած:*
- *Իսկ երկրի վերջի վեց ամսուայ հոգևարք ընթացքում՝ զինուորականները Հայոց աշխարհի տէր և տնօրէնն էին: Զրահաւորուած Ռուբէն փաշայի անսխալականութեամբ՝ նոքա այդ անպատասխանատու և անվճռաբեկ ֆիրմայի տակ սկսեցին այն արիւնալից արհաւիրքը, որ դղրդալից լուծուեց Կարսի անկումով, ապա և Հայաստանի Հանրապետութեան խորտակմամբ:*
- *Թէ ինչպէ՞ս այդ օտարացած սպայութիւնը, անտեղեակ հայ լեզուին, երկրին, մեր պահանջներին և մեր պատմութեան իմաստին՝ պէտք է*

կրթէր հայ վաշտերը, դա ոչ միայն հարց էր՝ այլ մտատանջութիւն, որ պէտք է ունենար պետական բնոյթ:

- *Եւ այդպիսով մեր պետականութիւնը, երբ այդ պէտք էր՝ չունէր այն ոյժը, որ պէտք է պաշտպանէր երկրի պատիւը և մեր լինել կամ չը լինելու խնդիրը:*
- *Եւ այդպէս տրամադրուած հրամանատարութիւնը՝ չէր կարող դաստիարակել հայ զինուորութիւնը, նա չէր կարող ազգային բանակ ստեղծել: Նա միայն վարակեց հայկական զօրամասերի կուսական շարքերը, քայքայեց հայկական ազգային բանակի մեծ գաղափարը, և խորտակելով մեր զօրական կորովը՝ դէպի անդունդ տարաւ մեր պետական նորածիլ վերապրումները:*
- *Գեներալներն ու սպաները բանակի մի կողմն էին, իսկ զինուորութիւնը, մասսան, բուն հայութիւնը՝ այլ բանակ էր, տարբեր հոգեբանութեամբ, մտածելակերպով և ազգային կորովով:*

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Իշխանութիւնից յետոյ՝ Կարսի նահանգը դարձել էր մի մութ և վայրենի որջ: Ճանապարհները կտրուած, փակուած էին, քուրդ և թուրք հրոսակախմբերը սանձարձակ և անիշխան վխտում էին նահանգում: Դադարել էր երկրում անցուդարձը, գիւղատնտեսական փոխյարաբերութիւնները կանգ էին առել, առևտուր չը կար և կեանքը միանգամայն մարել էր: Հազիւ թէ պէտք է ասել, որ իրաւակարգ ստեղծել այդ մթնոլորտում՝ բաւական դժուարին մի աշխատանք էր: Երկրի ճանապարհները կեանքի երակը համարելով՝ ես ուզում էի նախ կենդանացնել անցուդարձը երկրում, գտնելով, որ ազատ և մատչելի երթևեկութիւնը նահանգում կը ստեղծի բնական տնտեսական դրութիւն, և հետևապէս կամրապնդի և երկրի իրաւակարգը:

Ինչպէս իր տեղում արդէն յիշել եմ՝ Կարսի նահանգը ունի խճուղիների շատ հարուստ և խիտ ցանց, և ճանապարհների հաղորդակցութեան իմաստով՝ նա Կովկասի աչքն էր: Այդ լայն և շատ խնամքով պահուած խճուղիները՝ շերտաւորում են Կարսի նահանգը բոլոր ուղղութիւններով, և կապում Կարսը Աղեքսանդրապոլը, Սարիղամիշը, տաճկաց սահմանագլուխ Կարաուրգանը, Արդհանը, Կաղզուանը և Օլթին իրար հետ, և այն էլ բազմաթիւ ուղղութեամբ: Այնպես օրինակ, դէպի Արդահան, Ախալքալաք և Ախալցխայ խճուղիները՝ Կարսից գնում են երեք ուղղութեամբ, դէպի Աղեքսանդրապոլ երկու գծով և այլն: Ճանապարհների այդ հարուստ ցանցը ունէր բացառապէս ռազմական նշանակութիւն, և կառուցուել էր պատերազմական միտումներով:

Ընկած լինելով Շիրակի բերրի դաշտով, Արդահանի սքանչելի խաշնարած տարածութիւններով, Չլդըր լճի գեղաձիծաղ ափերով և Մերդենեկ-Սարիղամիշի անտառապատ լեռների միջանցքով, ու Կաղզուանի քարածուխի ու աղի հարուստ կիրճերով՝ այդ ճանապարհները ստեղծում էին և մեծ արդիւնաբերական-տնտեսական հեռանկարներ:

Կարսը 60 վերստ տարածութեան վերայ՝ կապուած է Մերդենեկ զօրակայանի մօտ ձիաքարշ երկաթագծով:

Այդ ուղղութեամբ ռուս գանձարանը կառուցել էր երկաթուղու մեծարժէք կայաններ՝ որոնց միջև երթևեկում էին մօտ 3000 վագոններ ու այդչափ էլ պլատֆօրմ: Այդ բոլորը այժմ կանգ էր առել, այդ միլլիոններ արժեցող կառուցուածքը սպասում էր ձեռներեց աշխատանքի, և մենք պէտք է վերականգնէինք այդ ճանապարհը՝ երկրում կեանք, լիութիւն, իրաւակարգ և հանգիստ ստեղծելու համար:

Այդ բոլոր միտումներով ես յանձնարարեցի երկու ինժեներների՝ այդ ճանապարհը վերականգնեցնելու համար մի նախագիծ մշակել, և կցելով այդ նախագծին իմ այդ առիթով մանրամասն բացատրութիւններս՝ ուղարկեցի ճանապարհների հաղորդակցութեան մինիստրին: Ես միջնորդում էի 200 հազար ռուբլի հայկական բօնաներով միանուագ վարկ բանալ ինձ այդ ճանապարհը կարգի բերելու, 50 հազար էլ ամսական ընթացիկ աշխատանքների համար: Եւ հազիւ թէ պէտք է բացատրել, որ այդ աւելի քան չնչին գումարը մեծամեծ վաստակով մօտակայ ամիսներում կը մտնէր թէ գանձարանը և թէ երկրի տնտեսական ամբարը: Հարկաւոր եմ համարում նկատել այստեղ, որ այդ միանգամայն պատրաստի ճանապարհը ընկած է հարուստ խաշնարած վայրով: Չորս կողմը սքանչելի ալպիկ բուսականութիւն, քչքչան աղբիւրներ և լեռնային սառցալից ջրեր, պատերազմից առաջ տասնեակ կաթնատնտեսական գործարաններ, ոչխարի և տաւարի անվերջ երամներ:

Մերդենեկում միլիարդների արժէք ունեցող երկաթուղու պատրաստի շպալ, հազուագիւտ նարզան, որ արտադրում է օրը մոտ 300 վեդրո, և տորֆի հարուստ տարածութիւններ: Գալով խճուղիներին՝ նոցա բոլոր տարածութեամբ ռուս իշխանութեան օրով երթևեկում էր պետական փոստը, կային փոստի կայաններ և կազմակերպուած հաղորդակցութիւն սայլակներով և կառքերով, պատերազմի հեռանկարները աչքի առաջ ունենալով՝ ռուս կառավարութիւնը այդ բոլոր ճանապարհների տարածութեամբ պատրաստել էր մեծաքանակ խիճ, որ կը բաւարարէր ճանապարհներ հարթելու համար գեթ 10 տարուայ ընթացքում: Իսկ եթէ գնահատելու լինենք այժմ ռեմօնտի այդ պատրաստութիւնը՝ նորա արժողութիւնը առասպելական կը լինէր: Եւ ես ուզում էի օգտագործել և այդ խճուղիները:

Ինժեներներից և տեղացի բանիմաց մարդկանցից ես մի յանձնաժողով գումարեցի, և պատուիրեցի ուսումնասիրել այդ տարածութիւններով հաղորդակցութիւնը վերականգնելու խնդիրը, և մի նախահաշիւ մշակել՝ զեմսկի համայնական փոստ ստեղծելու համար: Այդ պրոեկտն էլ իմ բացատրութիւններով ես ներկայացրեցի Հաղորդակցութեան մինիստրին:

Պէտք է նկատել այստեղ, որ այդ բոլոր նախապատրաստական աշխատանքներին երկիրը իրազեկ անելու համար նահանգի այս և այն վայրից ես խորհրդածութեան էի հրաւիրում բանիմաց և ազդեցիկ մարդիկ:

Այդ փորձուած երկրագործները, անասնապահները և երկրի բազմատեսակ խոջաներ-դիլբելունները՝ մեծ սիրով հետևում էին այդ աշխատանքներին, և նահանգում բարձր տրամադրութիւն էին ստեղծում ժողովրդի սպասելիքների իմաստով: Եւ այդպիսով ես օգտագործում էի այդ մարդկանց երկու ուղղութեամբ, օգտւում էի նոցա գործնական ցուցմունքներով, և նոցա միջոցով զբաղեցնում էի երկիրը քաղաքացիական սպասելիքներով, և այդպիսով թուլացնում էի քաղաքական զառանցանքները, և կողմնակի այդ ուղղութեամբ ազդեցութիւնը:

Այնուհետև ամիսների ընթացքում բազմաթիւ գրութիւններով և հեռագիրներով ես խնդրում էի մինիստրին՝ շտապեցնել իմ երկու միջնորդութեան լուծումը, բայց ես կամ պատասխան չէի ստանում՝ կամ ինձ պատասխանում էին թէ «կարգադրութիւնը արուած է... »:

Հոգնելով շարունակ յիշեցնելուց մինիստրութեանը՝ ես ութ ամիս սպասելուց յետոյ յատուկ պաշտօնեայ ուղարկեցի այդ առիթով Երևան:

Այնտեղ պարզուեց, որ մինիստրութեան մեջ ոչ ոք չի յիշում անգամ ձիաքարշ երկաթուղու մասին միջնորդութիւնը, և երկար որոնումներից յետոյ՝ այդ գրութիւնը գտան դիւանատան մի փոշոտ անկիւնում...

Բայց ութ ամսուայ ընթացքում այդ նախահաշիւը կորցրել էր արդէն իր նշանակութիւնը, և պէտք էր նոր նախահաշիւ մշակել: Նոյն վիճակումն էր և Զեմսկի փոստի նախագիծը: Երկար որոնումներից յետոյ՝ այդ գրութիւնը գտան պարլամենտի ինչ մի յանձնաժողովում, անշարժ *(տեքստը խզուած է)*... Այդ երկու խնդիրներն էլ իմ անվերջ դիմումներից յետոյ՝ վայրիվերոյ լուծուեցին վերջապէս, բայց Կարս հասան այն օրերում՝ երբ մենք արդեն թողնում էինք Կարսը...

Այդ երկու մեծ նախաձեռնութիւնների հետ միաժամանակ՝ ես միջնորդեցի կառավարութեան առաջ երկրի և մի շարք այլ կարիքների համար:

Կարսի նահանգը գերազանց խաշնարած երկիր լինելով՝ անասնապահութիւնը նահանգի գլխաւոր տնտեսութիւնն էր կազմում: Կարսի նահանգի կաթի մթերքները, աննման կարագը և պանիրը՝ դեռ պատերազմից առաջ մեծ չափով արտահանւում էին դէպի Թիֆլիզ, Բաթում, և այնտեղի շուկաներում մեծ յաջողութեամբ մրցում Սիբիրից ստացուած իւղի հետ: Բայց պատերազմը աւերելով

երկիրը՝ խափանեց նահանգի և կաթնատնտեսական զբաղմունքը, և տասնեակ կաթնատնտեսական գործարաններ փակուել էին:

Կովկասը, որ ձիաների մեծ հռչակ ունէր՝ այլևս ձի չէր տեսնում իր ձորերում, իսկ Կարսի ալպիկ բուսականութիւնը պարփակում էր բոլոր տուեալները՝ ուր ձիու տեսակները կարող էին զարգանալ: Այդ միտումներով ես յանձնարարեցի գիւղատնտեսների և անասնաբոյծերի մի խմբակցութեան՝ բազմակողմանի ուսումնասիրել երկրի հարստութեան այդ երկու ճիւղն էլ, և նախագիծ մշակել նահանգի իմ մատնանշած վայրերում հիմնելու պետական կաթնատնտեսական գործարաններ, անասունների ընտիր տեսակները զարգացնելու կայաններ, անասնաբուժարաններ և ձիու ընտիր տեսակները առաջ բերելու կայան:

Թռչնաբուծութիւնն էլ Կարսի նահանգում երկրի տնտեսութեան մի մեծ բաժին լինելով՝ և ի նկատի առնելով, որ Կարս-չայի հովիտը, որ ընկած է Սարիղամիշ-Կարս-Աղէքսանդրապոլ երկաթուղու գծով՝ մի գերազանց մարգագետին է, ուր բնութիւնը ինքը մատնանշել է մարդկանց թռչնաբուծութեամբ այնտեղ պարապելու համար, ես մշակել տուեցի մասնագէտ գիւղատնտեսներին մի նախագիծ այդ տնտեսութեան համար, և այդ բոլոր պրոյէկտները ուղարկեցի Երևան:

Եւ ես նորից ու նորից կրկնեցի, որ երկիրը սպասում է մեր քաղաքացիական աշխատանքներին, որ մենք ունենք բոլոր տուեալները և յարմարութիւնները՝ հարստացնելու և գանձարանը և երկրի տնտեսութիւնը, և որ այդ աշխատանքները զբաղեցնելով ազգաբնակութիւնը՝ կը նուաճեն մեզ համար երկիրը առանց գնդակի և առանց բռունցքի: Իսկ նահանգը ամբողջովին լսողութիւն դարձած մեր այդ բոլոր նորան վերին աստիճանի հետաքրքրող և շահագրգրող ձեռնարկութիւնների առիթով՝ հակուած էր միանգամայն խոնարհուելու այն կառավարութեան առաջ, որ այդչափ մեծ ցանկութիւններով բարին ու գեղեցիկը պատուաստելու՝ գալիս է իր իրաւակարգով և իր պետական հոգացող տրամադրութեամբ: Եւ ես յոյս ունէի, որ դրսի բոլոր արկածախնդիր ոտնձգութիւնները, Բագուի վարձկան բոլոր էմիսարների աշխատանքը մեր դէմ զինելու մահմեդականութիւնը և անջատելու նորան մեզանից՝ ոչ մի յաջողութիւն չեն ունենայ: Չէ՞ որ ժողովրդի խելքը նորա աչքումն է, իսկ այդ աչքը տեսնում է միայն բարին, միայն շահաւետը և այն բոլորը, որ նորա սրտովն էր և նորա իղձերով: Եւ բուռն հաւատով դէպի վարչական, կառավարչական այդ գործելակերպը՝ ես ներկայացրեցի կառավարութեանը իմ այդ բոլոր ձեռնարկութիւնների նախագիծը:

Ուսումնասիրելով Կաղզուանի գաւառը և նկատի առնելով, որ Կաղզուանը բացառապէս պարապում է այգեգործութեամբ՝ իսկ քաղաքի ներքևում ընկած լայնածաւալ դաշտերը չեն մշակւում ջրի պակասութեան պատճառով, ես յանձնարարեցի մի ինժեների հետազօտել երկրի այդ երկու կարիքը և ինձ զեկուցել: Խնդրի ուսումնասիրութիւնը ցոյց տուեց, որ Կաղզուանի թէ դաշտերը և թէ սքանչելի այգիները կարելի է որոգել Արաքսի ջրով: Արաքսը՝ մեր տառապանք-

ների այդ հինաւուրց վկան, յորձանք տալով Կաղզուանի պարիսպների տակ՝ սրընթաց փախչում է դէպի ցած, դէպի սքանչելի Հաջի-Բայրամ, ուր գրկախառնուելով Ախուրեան-Արփաչայի հետ՝ անցնում է դէպի մեր հռչակաւոր Արարատեան դաշտը և այնտեղ պար բռնում... Ինժեների զեկուցումից երևաց, որ Արաքսի ջուրը հեշտութեամբ կարելի է հանել Կաղզուանի բարձունքը, ոռոգել բոլոր դաշտերը, բոլոր այգիները՝ և հարիւրապատկել հողի բերրիութիւնը: Իսկ այդ վիթխարի ջրվէժից կարելի էր յառաջ բերել մեծ ոյժ՝ բանեցնել բոլոր ջրաղացները, և առատ լոյս տալով ամբողջ Կաղզուանին և նորա օդում կախուած այգիներին՝ ստեղծել գիշերը այդ ձորում մի ֆանտաստիկ տեսիլ...

Բացի այդ, այգեգործութիւնը Կաղզուանում, նախնական ձևի լինելով՝ ես ցանկութիւն յայտնեցի Կաղզուանում ունենալ մի օրինակելի այգի և այգեբանական դպրոց:

Կաղզուանը մի հարուստ գաւառ է: Աղահանքը, պղինձը, երկաթը, արծաթը, բազմաթիւ հանքային տաք և սառն ջրերը՝ դարերի ընթացքում բևեռել են այստեղ մարդկանց ուշադրութիւնը:

Կարսի պարիսպներում, զինուորական նպատակների համար՝ ռուս իշխանութիւնը կուտակել էր 300 վերստ տարածութեան համար երկաթուղու ռելս, իր բոլոր պարագաներով... Ներկայացնելով կառավարութեանը իմ բոլոր դիտողութ-իուններս և ուսումնասիրութիւններս Կաղզուանի գաւառի տնտեսական դրութիւնը բարձրացնելու մասին՝ ես ցանկութիւն յայտնեցի օր առաջ օգտագործել Կարսի պարիսպներում կուտակուած զինուորական երկաթուղու բոլոր պարագաները, և այդ երկաթէ ուղեգծով կապել Կարսը Կաղզուանի հետ: Բայց իմ բոլոր այդ առաջարկութիւններս՝ վերլուծուած ուսումնասիրութիւնների տուեալների և նախագծերի, մնացին այնտեղ, Երևանում՝ անշարժ և անհետևանք: Ես չէի ցանկանայ ասելու ի հարկէ, որ կառավարութիւնը տրամադիր չէր ընդյառաջ գալու երկրի այդ մեծ պահանջներին: Բայց ես կարծում եմ, որ կառավարութիւնը իր ձեռքի տակ չունէր աշխատակիցների տեղեակ և լուրջ կօնդիգետ:

Մինիստրը կարծես զբաղուած էր գլխաւորապէս քաղաքական խնդիրներով, իսկ կեանքը իր դրական պահանջներով՝ մնացել էր եթէ ոչ անուշադիր, գէթ այնտեղ, ուր նորանով հետաքրքրուում էին անցողակի և վայրիվերոյ...

Իմ այդ բոլոր նախագծերս ես ներկայացրել էի Երևան աշնանը, և ամէն մի առիթից օգտուում էի յիշեցնելու, որ ձմեռուայ ընթացքում մենք պէտք է տեսնենք մեր բոլոր պատրաստութիւնները՝ որպէսզի գարնան հետ միասին մեծ թափով անցնենք շինարար աշխատանքներին: Երկար տարիներ գաւառում ապրած լինելով՝ ես շատ սիրում էի հետաքրքրուել երկրի տրամադրութիւններով, և սիրում էի դիտել ժողովրդի վերաբերմունքը դէպի կեանքը:

Շատ հետաքրքիր է, որ ձմեռուայ վերջում՝ արդէն գարնանադէմ, գաւառը ամբողջովին տարուում է իր գալիք գիւղատնտեսական հոգսերով: Հողն ու ջուրը,

նորա մշակութեան և ոռոգման ձևերը, գիւղատնտեսական մեքենաները, տաւարը, ոչխարը և արօտը՝ դառնում են գաւառի առանձնակի հոգսերի և մտատանջութեան խնդիրները: Այդ օրերում գիւղացին սիրում է զննել իր արօրը ու գութանը, լրացնել նոցա պակասները, նորից և նորից մեծ սիրով և յուսալից փայփայում է իր լծկանը, և անհամբեր սպասում գարնան օրերին: Եւ շատ բնորոշ է, որ ամէն տեղ, ուր և անցնելու լինէք դուք այդ ժամանակամիջոցում՝ դուք ամէն մի գիւղում, գաւառի ամէն մի անկիւնում կը լսէք նոյն զրոյցը, նոյն հոգսերը, նոյն հողը, նոյն ջուրը և դարձեալ նոյն տաւարն ու ոչխարը:

Այդպէս է գաւառական կեանքը գարնանադէմ օրերում:

Եւ ես ուզում էի մեծապէս օգտագործել պետական միտումներում գաւառի այդ առանձնակի հոգեբանութիւնը, և կապել երկրի շահերը՝ նորա կառավարութեան հոգսերի հետ:

Եթէ դուք խորասուզուելու լինէք այդ օրերում դէպի գաւառական կեանքի թանձրութիւնը՝ այնտեղ ուր դանդաղ և անհոգ տարածւում է մեր հինաւուրց թոնրի ծուխը և նորա հետ ինքը՝ գաւառական կեանքը, նորա հոգսերով, ուրախութիւններով, նորա դարաւոր սովորութիւններով ու հաւատալիքներով՝ դուք այնտեղ չէք տեսնի ազգութիւն և դաւանանք: Այստեղ մոռացւում են ցեղական և դաւանաբանական տարբերութիւնները, բոլորը ռանչպար են, հողագործ, բոլորը անասնապահ են, խաշնարած, բոլորը տարուած են հողի, ջրի և «ապրանքի»՝ ոչխար-տաւարի իմաստով ու շահերով:

Եւ բոլորը միանգամայն մոռանալով քաղաքական և կողմնակի խնդիրները, մոռացութեան տալով անգամ գաւառի և նահանգի կենտրոնները, նորա գաւառապետներով, մեծերով և դատաւորներով՝ ապրում և տարւում են այն քաղցր և ախորժելի հանդով, ուր մանկական օրերից նա սովոր է «տաւրի գնալ», սովոր է հստաղ և մզդուր լինել...

Այդպես է գաւառի առանձնակի հոգեբանութիւնը, ուր ծուլւում, միախառնւում է և հայը, և թուրքը և քուրդը: Իրերի և հասկացողութիւնների այդ մթնոլորտում՝ դուք կը տեսնէք միայն երկրի ժողովուրդը, անվերաբեր նորա ազգային և կրօնական տարբերութեանը, և մի որպէ մոռացութեան տալով աշխարհի ունայն անցուդարձը՝ դուք բաւականութիւն կը զգաք բնութեան այդ հարազատ պարզութեան մէջ... Եւ ես, որպէս նահանգապետ, որպէս իմ կառավարութեան ներկայացուցիչ՝ ուզեցի արձագանք տալ երկրի այդ օրերի տրամադրութեանը, և վճռեցի նահանգի անուանի երկրագործներից և խաշնարածներից մի խորհրդակցութիւն գումարել իմ նախագահութեամբ: Ես պէտք է հրաւիրէի և ձեռնհաս գիւղատնտեսներ ու անասնաբոյծ այդ ժողովին մասնակցելու համար, և ուզում էի խօսել երկրի հետ նորա լեզուով, նորա սրտով և նորա հակումներով: Ես կարծում էի՝ առաջինը, որ մեր այդ հանդիպումը ժողովրդի հարազատ ներկայացուցիչների հետ մեզ մեծ նիւթ կը տայ երկրի տնտեսական ուսումնասիրութեան

համար, երկրորդը, նա կը պարզէ երկրի օրուայ սպասելիքները, և երրորդ, ընդհանուր տրամադրութիւն ստեղծելով երկրի և իշխանութեան միջև՝ կը հարթէ մեր օրերի ազգամիջեան և քաղաքական խորթութիւնը:

Այդ մասին ես իրազեկ արեցի Երևան, և ստացայ կառավարութեան հաւանութիւնը:

Նահանգը, որ այդ օրերում տոգորուած էր իր առօրեայ հոգսերով, և պատրաստւում էր դաշտային աշխատանքների՝ մեծ բաւականութեամբ իմացաւ այդ ժողովի մասին, և ժողովրդի նոյնիսկ այդ հաւանութիւնը դէպի կառավարչական ձեռներեցութիւնը՝ ստեղծում էր յաջող մթնոլորտ իրաւակարգային իմաստով:

Բայց այդ օրերում, երբ նահանգապետը պատրաստւում էր հողի ու ջրի մասին խօսելու երկրի հետ՝ Կարսի քաջարի գեներալները, սպաները և դաշնակցական ընկերները, իրանց լիդեր Նոհրատեանի առաջնորդութեամբ՝ անբաւական տիրող խաղաղ մթնոլորտով, և նահանգապետին տապալելու համար՝ իրանց հերթին ուզեցին զբաղուել «Կառավարչական» գործերով: Յենուելով իրանց ձեռքում խաղալիք դարձած բանակի վերայ՝ այդ արկածախնդիր «կուսակցականները» «հարկաւոր» համարեցին սրով և հրով «զսպելու» թուրքերի հակայեղափոխական դաւերը: Նրանք յայտարարեցին, որ «հայրենիքը վտանգի մեջ է» և մեծ արշաւ կազմակերպեցին դէպի Արփաչայի ափերը, և ռմբակոծեցին թուրք գիւղերը՝ և գրեթէ ամբողջ գաւառակը ի սպառ թալանեցին... Ռուսախօս գեներալները, սպաները և «կուսակցականները» ուզում էին ապացուցանել, որ նահանգապետը երկիր կառավարել չը գիտէ, որ խաղաղ միջոցները անպէտք են, որ թուրքերին պետք է ջարդել և փշրել, իսկ դորա համար պետք է ոչ թէ քաղաքացիական նահանգապետ՝ այլ զրահակիր բռունցք ի դէմս գեներալ-նահանգապետի, մի տիտղոս, որ կռուածաղիկ էր դարձել այդ ռուսախօսների միջև...

Պէտք չը կայ ասելու կարծեմ, որ այդ «պատերազմական»՝ առանց պատերազմի մթնոլորտում, մենք չէինք կարող հանգիստ զբաղուել քաղաքացիական աշխատանքներով: Բայց այնուամենայնիւ, կառավարութեան այդ անկեղծ ցանկութիւնը գործակցել ժողովրդի հետ՝ չը մնաց առանց հետևանքի:

Երբ գիւղատնտեսական սպասելիք խորհրդակցութեան լուրը տարածուեց նահանգում՝ երկրի զանազան անկիւններից եկան Կարս և ներկայացան ինձ մօտ 30 թուրք, քուրդ և թիւրք անուանիներ, որոնք գոհունակութեամբ յայտնելով նահանգի խաղաղ անցուդարձի համար՝ միջնորդեցին ինձ նոցա հետ միասին տեղեկացնել այդ մասին բարձր կառավարութեանը:

Ազգութիւնների այդ մեծանուն ներկայացուցիչները մի քանի օր մնացին քաղաքում, հիւրասիրուեցին քաղաքացիների և կառավարութեան կողմից, փոխանակուեցին այդ առիթով մինիստր նախագահ Խատիսեանի հետ հեռագիրներով, և գոհ սրտով վերադարձան իրանց վայրերը, տարածելով երկրում մեզ նպաստ տրամադրութիւն և պատկառալից վերաբերմունք դեպի իշխանութիւնը:

Լարուել և համակերպուել ժողովրդի հետ՝ և շատ հեշտ է և շատ դժուար: Մօտենալ նորան իրան ըմբռնելի և հարազատ հասկացողութիւններով խօսել նորա հետ նորա լեզուով և նորա սրտովը՝ կը նշանակէ տիրել վաղեմի գաղտնիքը, թէ ի՞նչ է պէտք երկիր կառավարելու համար, և թէ ինչպէս պէտք է կառավարել այդ երկիրը:

Այդպէս է ժողովրդի հոգեբանութիւնը, և այդչափ էինք մենք հասկանում մեզ յանձնուած մեր մեծ պարտաւորութիւնների իմաստը:

XIII (*ջնջուած է*)

XV

Կարսի նահանգի տնտեսական դէմքը *(մատիտագիր)*

Շատ ուշագրաւ պէտք է համարել, որ Կարսի նահանգը, որ գերազանց անասնապահ և կաթնատնտեսական երկիր է՝ չը գրաւեց ոչ կառավարութեան, ոչ էլ մեր բազմաթիւ դիպլօմաւոր գիւղատնտես բնակիչների ուշադրութիւնը: Եւ աւելի հետաքրքիրն այն է, որ եթէ առաջներում և հայ գիւղատնտեսը եղել է իր հայրենիքի լուսաւոր գաղափարների առաջի ռահվիրանը՝ մեր օրերի ազատագրման միջոցում, այդ միշտ բողոքող և առաջադիմական գիւղատնտեսը կարծես չքացաւ և անյայտացաւ հրապարակից: Երկրի գիւղատնտեսական ծով կարիքները կարապան չէին գտնում հրապարակի պոռատախօս և դատարկաբան «քաղաքագէտների» բազմութեան մէջ, և երկրի տնտեսական դրութիւնը տեղի տալով քաղաքական անվերջ ու անհամ հոլովներին՝ միայն քարշ էի գալիս ժամանակի հոսանքի յետևից:

Մեր Երկրագործութեան մինիստրութիւնը, որ երկու տարուայ ընթացքում ձեռքից ձեռք էր անցնում՝ զբաղուած էր երևի աւելի ակադեմիկ խնդիրներով:

Մեր բազմաթիւ գրաւոր դիմումները երկրի գիւղատնտեսական պէտքերի մասին՝ ոչ մի արձագանք չէին գտնում այդ հեղինակաւոր բարձր պալատում: Մենք ծարաւի էինք տեսնել նահանգում գէթ մի գիւղատնտես, որ գար կառավարութեան յանձնարարութեամբ եթէ ոչ բաւարարելու նահանգապետի բազմաթիւ պահանջները՝ գէթ ուսումնասիրելու և պարզելու երկրի տնտեսական ուրուագիծը, և կառավարութեան այդ առանցքում անելիքները և սպասելիքը: Այդ մինիստրութեան ներկայացուցիչները՝ որպէս «լիազօրներ» բայց ոչ մասնագէտներ, գալիս էին Կարսի նահանգը միայն տաւար գնելու համար՝ և նահանգապետի մեծաչափ աջակցութիւնն էին պահանջում այդ առիթով: Այդ «լիազօրների» թւում, որոնք առատ ապահոված էին բազմատեսակ վկայականներով և իմ անունով յատուկ յանձնարարական նամակներով՝ կային բոլորը, բացի գիւղատնտես մասնագէտներից: Այստեղ էին պրոֆեսիոնալ սպեկուլեանտները, փոդ-

ռատչի կապալառուն, հայ և ռուս սպաներ, քաղաքային վարչութիւնների գործակալներ, մութ անցեալով նորեկ առևտրականներ և բոլոր հեշտասէրները՝ բացի կառավարութեան ու երկրի հարազատ հաւատարմատարներից: Տենդոտ և շտապ, շուկայի կարիքը աչքի առաջ ունենալով՝ բոլորը տաւար էին գնում, դատարկում նահանգը, և տաւարի այդ անհուն երամները քշում տարբեր ուղղութիւններով՝ հարստացնելով *(փաստաթուղթը վնասուած է)*... Նոցա պէտք էր արժան մսացու և այլ տաւար՝ կենտրոնների շուկաների համար, և այդ «ազգասէրները» մրցում էին իրար հետ այդ ասպարէզում՝ բոլոր ներելի և աններելի միջոցներով աւերելով և քանդելով երկիրը: Բայց հայրենիքի այդ նախանձախնդիրների թւում կային և այնպիսի միամիտներ՝ որոնք փորձում էին բացատրել նահանգապետին, որ նրանք տանում են երկրից միայն «թուրքի» տաւարը...

Եւ նահանգապետը անյուսալի պարզում էր այդ ողորմելի լիազօրներին, որ նա ո՛չ թուրք և ո՛չ հայի նահանգապետ է, այլ միայն նահանգապետ, միայն ներկայացուցիչ երկրի իշխանութեան, որ նորան վերապահուած չէ հովանաւորել մէկին և ճնշել միւսին, որ նա պարտաւոր է իշխել իրաւակարգը և կառավարել նահանգը՝ անվերաբեր երկրի ազգագրական կազմին...

Բայց այդ բոլորը ի հարկէ գայլի գլխին աւետարան էր...

Այդօրինակ վերաբերմունքը չէր կարող ի հարկէ չը խորթացնել դէպի մեզ թուրք ազգաբնակութիւնը...

Կ՛ասեմ աւելի, այդ գիշատիչ յարձակումը Կարսի նահանգի վերայ՝ հայ ազգաբնակութեան սրտովը չէր: Նա տեսնում էր միայն պահանջ, միայն արտահանութիւն՝ այն էլ շատ կասկածելի և երկդիմի միտումներով, և ոչ մի քայլ դրսից դէպի ներս, ոչ մի վերաշինութիւն և երկրի զարգացում: Փոխանակ մեծաչափ պահպանելու և զարգացնելու նահանգի հարուստ անասնապահութիւնը, փոխանակ կաթնատնտեսական գործարաններ, անասնունների ընտիր տեսակների կայաններ հիմնելու, փոխանակ տարածելու երկրում անասնաբուծութեան անհրաժեշտութիւնը և սովորեցնելու ժողովրդին, թէ ինչպէ՞ս պէտք է պահել, խնամել տաւարը՝ մենք միայն տանում էինք երկրից, այն էլ սպեկուլատիւ նպատակներով, քշում դէպի դրսի շուկաները մեր անհուն երամները:

Իմ բազմաթիւ գրութիւններից, հեռագիրներից և երբեմն և կծու բողոքներից յետոյ՝ մեր Երկրագործութեան մինիստրութիւնը ուղարկեց վերջապես մի անասնաբոյժ, այն էլ ոչ հայ... Եւ այդ միակ անասնաբոյժը մի ամբողջ նահանգի համար՝ մի նահանգ, որ գերազանց անասնապահ երկիր է: Եւ ես չը գիտէի ծաղր է այդ, թէ կառավարչական մի ակտ, որ գալիս էր աւետելու երկրին կառավար-ութեան հոգսերը դէպի այդ խաշնարած նահանգը... Այդ օտարախօս անասնաբոյժը ուղարկուած էր առանց հարկաւոր վիրաբուժական գործիքների, առանց դեղորայքի, առանց նիւթական որևէ միջոցների և առանց նոյնիսկ հրահանգի: Բացի այդ, նա ամիսների ընթացքում ռոճիկ էլ չէր ստանում...

Երբեմն նա գրում էր Երևան ռուսերէն իր շաբլօն պաշտօնական թղթերը՝ որոնց պատասխանը ի հարկէ չէր սպասում: Ո՛չ երկիրը գիտէր այդ անասնաբոյժի գոյութեան մասին, ո՛չ էլ նա ի հարկէ տեղեակ էր երկրից: Ամէն մէկը իր համար էր և այդ կենտրոնախոյս առանցքումն էր երևի տեսնում Երկրագործութեան մինիստրութիւնը իր կոչումը և նշանակութիւնը: Այդ զաւեշտ պատկերները հանդիսադրւում էին ի վճիռ երկրի, և նահանգապետը, որ օրեցօր շփւում և ընդհարւում էր գիւղացիութեան հետ՝ ստիպուած էր կարմրելու և լռելու... Ոչ պակաս հետաքրքիր ուշագրաւ էր և բժշկական սանիտարական մասը: Ես երկար տարիների ընթացքում դիտել եմ մեր գաւառներում հայ գաւառական բժիշկների գործունէութիւնը, և նոցանից շատերը մեր անձնական բարեկամներն էին: Ռուս իշխանութիւնը քաղաքական-պետական առանձին նշանակութիւն չէր տալիս գաւառական բժշկին Կովկասում, և այդ է պատճառներից մէկը գուցէ, որ հայ բժիշկը առանց մեծ արգելքների՝ միշտ պաշտօն էր ստանում մեր երկրի մթին անկիւններում: Որպէս և դատաստանական գործիչները՝ այդ հայ բժիշկները միացած առաջինների հետ, միշտ մարտնչել են մեր գաւառներում առաջադիմական գաղափարների համար, և ազգային-հասարակական բոլոր հաստատութ-իւններ-ի ոգին լինելով՝ գաւառական հայ բժիշկը մեծ սիրով դէպի երկիրը, տարիների ընթացքում առաջ է տարել ազգային ազատագրութեան մեծ դատը: Գաւառական մեր բոլոր դպրոցները, գաւառական մեր փոքրիկ ինտիլիգենցիան, այդ ռոմանտիկ մտաւորականութիւնը՝ միշտ կապուած են եղել հայ գաւառական բժշկի հետ, և նորա շուրջն էր խմորւում մեր հասարակագիտական տրամադրութիւնը և մեր բանասիրութիւնը: Այդ մթնոլորտումն են սկսել սիրել և յուզուել մեր պատկառելի հասարակական գործիչ բժշկապետ Բագրատ Նաւասարդեան, բժ. Աղ. Ղազազեան և յետագայ բազմաթիւ մեծ և փոքր հայրենասէր հայ բժշկներ: Այդչափ համակրելի և այդչափ ուսանելի է հայ գաւառական բժիշկը իր անցեալում: Եւ երբ ես առաջի անգամ, որպէս հայկական նահանգապետ անցնում էի Արփաչայ, գնում էի իմ պաշտօնատեղին, իմ մտքերի, յիշողութիւնների և ապագայ անելիքների խուռն հեռանկարում՝ ես մեծ սիրով դառնում էի դէպի հայ գաւառական բժշկի տիպարը: Բայց մտքերը քաղցր էին աւելի իրանց անցեալում, և ես մտաբերեցի Տուրգենեւի գեղեցիկ խօսքերը. Какъ хороши, какъ свежи были розы... Մեծ դժուարութիւններով մեզ յաջողուեց հրաւիրել Կարսի նահանգի համար մի երկու հայ բժիշկ միայն, և նրանք էլ գալիս էին միայն Կարսում ապրելու պայմանով՝ հրաժարուելով վաղեմի գաւառից, որպէս սատանայից:

Կարսի նահանգական բժիշկի պաշտօնը դեռ Կարս չը մեկնած՝ Աղէքսանդրապօլից հեռագրով ես առաջարկել էի Կարսեցի բժիշկ Կարապետ Ղազանչեանին: Բայց նա հեռագիրս չէր ստացել Թիֆլիզում, և այդ թիւրիմացութեան պատճառով ես ստիպուած էի ընդունել մի վրացախօս հայ բժշկի թեկնածութիւնը, որ յամենայն դէպս ոչ մի կերպ չէր համապատասխանում բժշկի այն տիպարին,

որի հետ ես մտածում էի աշխատակցելու հայրենի անդաստանում: Բայց մի երկու խօսք բժ. Ղազանչեանի մասին:

Մի ամսից յետոյ նա ինքը եկաւ Կարս, և ես նորան քաղաքային բժիշկ նշանակեցի: Կենսունակ և անկեղծ դաշնակցականների շարքերում՝ բժ. Ղազանչեան աչքի էր ընկնում իր կրակոտ բնոյթով և մեծ եռանդով: Նա անցաւ Կարսի այն բանիմաց դաշնակցութեան գլուխը, որ հակուած էր երկրի դրացիների հետ գործակցելու, և գալիս էր թիկունք տալու Կարսի նահանգապետին՝ նորա այդ քաղաքական գծում: Մենք բարեկամացանք բժ. Ղազանչեանի հետ, և նա օրը մի քանի անգամ բազմաթիւ հասարակական և պաշտօնական գործերի առիթով հանդիպում էր ինձ:

Երբ չարաբախտ Հոկտեմբերի 30-ին տաճկաց զօրքը ներս էր խուժում Կարս, և ես շտապ թողնում էի քաղաքը՝ բժ. Ղազանչեան, որ իմ բնակարանի դիմացն էր ապրում, ջղայնալից անցուդարձ էր անում իր տան առաջ...

Երբ քաղաքը արդէն տակն ու վրայ էր եղել և բոլորը խելակորոյս փախչում էին՝ ինձ տարօրինակ թուաց բժիշկի այդ զբօսանքը, և ես մի պաշտօնեայ ուղարկեցի նորան շտապեցնելու...

Եւ երբ մի երկու րոպէից յետոյ, ես ձիով անցնում էի Աղէքսանդրեան փողոցով, որ ծայրէ ի ծայր լցուած էր փախչող ժողովրդով՝ հանդիպեցի բժշկին: Նա քայլում էր հանդարտ, և կարծես անվրդով թողնում էր հայրենի քաղաքը...

Իմ կոչին շտապել՝ բժիշկը ոչինչ չը պատասխանեց, իսկ նորա դեգերող աչքերում ես տեսնում էի արդէն անտարբեր տրամադրութիւն դէպի կրակը, արիւնը և հեկեկանքը...

Այնուհետև մենք այլևս չը տեսնուեցինք: Թիւրքերին ասել էին, որ բժիշկը Կարսի դաշնակցութեան պարագլուխն է, բայց քեմալիստներին չէին բացատրել երևի, որ նա այն դաշնակցութեան պարագլուխն էր, որ ուզում էր հաշտ ապրել իր դրացիների հետ, և իր հոգու բոլոր անկեղծութեամբ անվրէպ տանում էր այդ քաղաքական գիծը՝ և մեծ կռիւ մղում այդ առիթով Կարսի գեներալների դէմ, որ ջարդելու, մաքրելու և թալանելու մթնոլորտում միշտ յաղթական էին, և միշտ քաջարի...

Եւ եթէ ճիշտ են հրապարակում պտտուող լուրերը, որ բժ. Ղազանչեան զոհուեց իր օրերի վրէժալից պահանջներին, մենք պէտք է վկայենք այստեղ, որ այդ եղեռնալից թիւրիմացութիւն էր, եթէ չասենք ծաղր ճշմարտութեան առաջ յամենայն դէպս, ցայտուն դաշնակցական բժ. Ղազանչեան՝ կապեց իր վերջի օրերը Կարսի և իր թշուառ հայրենիքի դրամատիկ վիճակի հետ, և Կարսի նախկին նահանգապետը, երախտալից և անկեղծ սրտով, պարտաւորութիւն է համարում ասելու իր բարեկամի յիշատակին. sit tibi terra levis.

Բայց դառնանք բժշկական գործին նահանգում:

Գաւառները մնում էին առանց բժշկի, առանց որևէ բժշկական օգնութեան: Երբ մենք գրաւում էինք Օլթի գաւառը՝ ուր բնակչութիւնը բացառապէս այլազգի է, ես պետական քաղաքական միտումներով անհրաժեշտ գտայ այնտեղ հայ գաւառական բժիշկ ուղարկել: Ես յիշեցի իմ բարեկամ իդեալիս՝ հայ գաւառական բժշկներին և բուռն կերպով տրամադիր էի հաւատալու, որ եթէ երբեմն հայ գաւառական բժիշկը մեծ սիրով դէպի հայ հասարակական ձգտումները ակօսել է հայկական գաւառները՝ նա վերադիր ոյժերով կ՛անցնէ այսօր այդ աշխատանքին իր սեփական երկրում, թևանցուկ իր հայրենի կառավարութեան հետ: Բայց ես չարաչար սխալուեցի: Ոչ ոք հայ բժիշկներից Կարսում չը համաձայնուեց նոյնիսկ ժամանակաւորապէս գնալ Օլթի: Ձայնակցեց ինձ միայն բժ. Ղազանչեան՝ բայց ես նորա ներկայութիւնը Կարսում անհրաժեշտ էի գտնում: Պատուիրեցի նահանգական բժիշկին գնալ Թիֆլիս՝ յատկապէս այդ գաւառի համար մի գաղափարական հայ բժիշկ հրաւիրելու համար: Բայց նորա բոլոր այդ ուղղութեամբ որոնումները ապարդիւն անցան: Թիֆլիզի բազմաթիւ, նոյնիսկ ամենաէժանագին հայ բժիշկը՝ հրաժարուեց «Հայաստանից», և ես մեծ դառնութեամբ լսեցի նահանգական բժիշկի զեկուցումը, որ նա բերել է մի հրեայ բժիշկ, որ իրեն սակայն ռուս էր անուանում...

Բայց այդ միջանկեալում ոչ միայն դառնութիւն էր՝ այդտեղ կար և այրող ամօթ... Հրեան դուր չեկաւ ինձ հենց այն օրը, երբ նահանգական բժիշկը ներկայացրեց ինձ նորան, և ես հենց նոյն օրը յայտնեցի նահանգական բժիշկին իմ անորոշ կասկածներս այդ ճարպիկ հրեայի մասին: Մի ամսից յետոյ պարզուեց, որ նա մեծամասնական տրամադրութիւններ ունի, և նա թողեց Կարսի նահանգը...

Նահանգի 12 վայրերի բժիշկների պաշտօնները մինչև վերջն էլ մնացին թափուր, և նահանգական բժիշկը նման էր հրամանատարի, որ ոչ զօրք ունէր և ոչ ռազմամթերք, դեղորայք...

Բայց հայ ժամանակակից բժշկի վերաբերմունքը դէպի իր հայրենի երկիրը բնորոշելու համար՝ ես հարկաւոր եմ համարում մատնացոյց անել մի երկու դէպք:

Երբ մենք տիրեցինք Օլթի գաւառը, և սիրողների առաջ բացուեց հեշտ հարստանալու հեռանկար՝ մի հայ զինուորական բժիշկ մեծ ցանկութիւն յայտնեց անցնելու այն երկիրը, ուր մարդիկ հնձում էին առանց ցանելու: Իսկ մի երկու շաբաթից վերադառնալով այդ աւետեաց երկրից՝ իդեալիստ բժիշկը բերեց իր հետ տաւարի և ոչխարի մի երամ... Այդ էլ նորա բաժինն էր ընդհանուր տանող-տանողի, ոգևորուած երևի իր հայրենիքի հեռանկարներով՝ նուիրեց իրան խնամատարական գործին, և Խնամատարութեան մինիստրութիւնը նորան Կարսի բոլոր որբանոցների կառավարիչ նշանակեց:

Մի քանի ժամանակից յետոյ ես տեղեկացայ, որ բժիշկը մեծաչափ շռայլ կեանք է վարում, որ որբանոցները դարձրել է մի վերտեպ՝ ուր նա իր ժամանակը վատնում էր իր սիրուհիների հետ:

Երբ այդ առիթով ես ձեռքի տակ բաւականաչափ փաստեր ունէի՝ ես յանձնարարեցի ոստիկանապետին քննութիւն կատարել: Քննութիւնը պարզեց, որ որբերը ոչ միայն անխնամք էին միանգամայն՝ այլև բոլորովին չէին կերակրւում և դարձել էին կմախք, որ մի քանի օրուայ ընթացքում սննդի պակասութիւնից և ծայրահեղ հակառողջապահիկ պայմաններից՝ մեռել էին 40 հոգի, որ փոխանակ թաղելու այդ երեխաների դիակները՝ բժիշկը իր համախոհներով ձգում էին մօտակայ ձորը և ձիւնով ծածկում, իսկ որբանոցի մատեաններում ի հարկէ թաղման ծախքը ունէր իր պատուաւոր տեղը...

Երբ այդ բոլորը պարզուեց՝ ես հրամայեցի ոստիկանապետին անյապաղ բանտարկել թէ՛ բժիշկ Մամիկոնեանին և թէ՛ նորա բոլոր աշխատակիցներին, և հեռագրեցի Երևան դատաստանական պալատի պրօկուրորին՝ առաջիկայ գնացքով ուղարկել Կարս դատաստանական արտակարգ գործերի քննիչ, իսկ մինչ այդ, այդ գործի առիթով բոլոր ձերբակալուածներին պատուիրեցի պահել բանտում ց'իմ առանձին կարգադրութիւն:

Թէ՛ որպէս զաւեշտ, թէ՛ որպէս մեր օրերի բնորոշ մի գիծ, որ յամենայն դէպս պատիւ չէր բերում ի հարկէ դատաստանական պալատի պրօկուրորին, պատահեց այդպիսի մի դէպք: Համաձայն իմ հեռագրի՝ մի քանի օրից յետոյ եկաւ արտակարգ գործերի քննիչը: Ներկայանալով ինձ՝ նա զեկուցեց, որ հնարաւորութ-իւն չունի ընդունելու այդ մեծ գործը, որովհետև ինքը դատարանի անդամ է, և օրէնքով նախնական քննութիւն անելու իրաւունք չունի: Այդ տարրական օրէնքը ինձ էլ ի հարկէ յայտնի էր, բայց ինձ միանգամայն զարմացնում էր, որ պարոնին ուղարկել է դատաստանական բարձր ատեանը, ուղարկել է մի այնպիսի մեծ աղմուկ գործի համար, և վրիպել էր կայացնել գրաւոր որոշում, որի բացակայութիւնը օրինազանց էր դարձնում բոլոր յետագայ գործողութիւնները, և իրաւունք չէր տալիս դատարանի անդամին ձեռնամուխ լինելու գործին: Վերջում պարզուեց, որ դատաստանական արտակարգ գործերի քննիչի Երևանից բացակայութեան պատճառով՝ և օգտուելով դէպքից, որ դատարանի անդամներից մէկը իր գործերով գնում էր Աղէքսանդրապոլ, նորան ասել էին պալատում. «մի անցիր Կարս, տես ինչ է պատահել այնտեղ...»

«Ընկերական» տեսակէտից այդ հասկանալի էր ի հարկէ, բայց իրաւաբանական լեզուով այդ մի պիկանտ կուրիոզ էր: Դատարանի անդամը կատարել էր այդ կիսապաշտօնական և անպատասխանատու յանձնարարութիւնը՝ բայց շատ բնական էր, որ նա չէր կարող ընդունել մի արտակարգ նշանակութիւն ունեցող մի գործ, ուր տասնեակ մարդիկ բանտարկուած էին և չէր կարող դատաւորից իրան դատաստանական քննիչ դարձնել: Պէտք էր զարմանալ միայն, որ բարձր

դատաստանական հիմնարկութիւնը թոյլ էր տուել իրան այդպիսի «տնավարի» վերաբերմունք: Չէ՞ որ այնտեղ նստածները յամենայն դէպս իրաւաբաններ էին, և յետոյ միայն «ընկերներ»...

Ինչևիցէ, դատարանի անդամը գնաց՝ իսկ ես մի կծու հեռագիր ուղարկեցի Երևան, և մի քանի օրից յետոյ եկաւ վերջապէս մի ռուս դատաստանական քննիչ: Այդ գործը մեծ իրարանցում առաջ բերեց Երևանում: Որբանոցների գործը այնպիսի մի քաոս էր՝ ուր ոչ սկիզբն էր երևում և ոչ ծայրը: Ես մի շարք հեռագիրներով պահանջեցի Խնամատարութեան մինիստրութիւնից յատուկ յանձնաժողով ուղարկել այդ մթնալից լաբիրինտը լուսաւորելու համար, և Խնամատարութեան մինիստրը ուղարկեց իր օգնականին՝ մի քանի պաշտօնեաների հետ: Բայց համակրելի երիտասարդի ոյժերից վեր էր բացել այդ կեղտոտ հանգոյցը: Այդ մեծ խայտառակութիւնը վերջացաւ նորանով, որ խնամատարութեան մինիտրը ստիպուած էր իր բոլոր որբանոցները յանձնել Ամերիկացիներին: Իսկ վերջինները ընդունելով հայկական այդ հաստատութիւնները՝ 600 որբերից 500-ն ուղարկեցին հիւանդանոց, բոլորը հիւանդ, նիհար, բոլորը կմախք էին դարձել... Այդպէս էր հայ բժշկի խնամատար վերաբերմունքը դէպի նորա հոգսերին յանձնուած հայկական որբանոցը:

Այդ հրէշ բժիշկը հիւանդացաւ բանտում և մեռաւ, ծածկելով ապագայ դատարանի առաջ այդ գործի նոյնքան հետաքրքրիր, որքան և մութ թերթերը...

Ռուս իշխանութեան օրով բժշկական, անասնաբուժական, գիւղատնտեսական և ճարտարապետական-ինժեներ մասերը կազմում էին նահանգական կառավարութեան առանձին առանձին բաժինները՝ ենթակայ նահանգապետին: Բայց մեր օրով ամէն մի մինիստր իրան էր վերապահել նահանգական վարչութեան այդ ֆունկցիաները: Բժշկական մասը վերցրել էր Խնամատարութեան մինիստրը, անասնաբուժական և գիւղատնտեսականը՝ Երկրագործութեան մինիստրութիւնը, ճարտարապետականը՝ Հաղորդակցութեան նախարարը, թողնելով նահանգապետին միայն պատասխանատուութիւնը այդ բոլորի համար...

Շատ հետաքրքիր է, որ բոլոր այդ խնդիրներում նոյն մինիստրութիւները նահանգապետիցն էին պահանջում նոցա հարկաւոր տեղեկութիւնները, նորա կարծիքն էին հարցնում, խնդրում նորա աջակցութիւնը: Բայց և այնպէս, նոքա անջատել էին նահանգապետից այդ բոլոր ատեանները՝ դարձնելով նոցանից ամէն մէկը նահանգում մի ինքնիշխան, կամ գուցէ աւելի ճիշտ անիշխան հաստատութիւն:

Նահանգի այդ բոլոր հաստատութիւնները, որ առաջ կազմում էին նահանգական կառավարութիւն, և գտնւում էին նահանգապետի հսկողութեան և նորա կօնտրօլի տակ՝ այժմ սանձարձակ «ինքնորոշուողներ» էին, հեռու մինիստրութիւնից, այսինքն այն ատեաններից՝ ուր իրանք էլ այնչափ տեղեակ չէին իրանց պարտաւորութիւնների և իրանց իրաւասութեան մասին... Եւ այդ առանցքում

զարմանալի չէ, որ խնամատարութեան ներկայացուցիչ բժիշկը հայկական որբանոցը դարձրել էր իր հեշտասէր պահանջների և վայելքների վայր:

Մինիստրութիւնը մի պարտաւորութիւն ունէր ինքնորոշուող բժշկի հանդէպ, նա վարկեր էր բանում նորան, ինչպէս զեմստվոներին՝ իսկ բժիշկը վատնում էր այդ անվերջ գումարները, և հազարաւոր որբեր սովամահ դարձնում:

Անցնելով կառավարչական այդ սիստեմի միւս մասերին՝ հետաքրքիր կը լինէր տեսնել, թէ ի՞նչեր էին անում նահանգում մեր մինիստրութիւնների միւս լիազօրները: Անջատուած նահանգապետից, նորան չենթարկուելով՝ այդ լիազօր մարմիններից ամէն մէկը մի մութ թիւրիմացութիւն էր պետական լուրջ գործում...

Կաղզուանի աղահանքը օրինակ, այն հրապուրիչ հաստատութիւնն էր՝ ուր նոյնիսկ շատ չնչին ռոճիկով ձգտում էին պաշտօնավարելու մեր անձնուէր իդեալիստները... Աղը, ասում էին «ընկերները», մեր պետական վալիւտան է, այդ գործը պահանջում է առանձնակի ուշադրութիւն, և բոլորը թափւում էին այդտեղ՝ կարծելով, որ ոչ ոք չի տեսնում օրը ցերեկով կատարուող թալանը: Երբ այդ ազգանուէր հոգացողութիւնը Կաղզուանի աղահանքի շուրջը անցաւ բոլոր չափ ու սահմանները՝ ես յանձնարարեցի Կաղզուանի գաւառապետին գաղտնի քննութիւն կատարել այդ մեծ և կազմակերպուած գողութեան մասին: Քննութիւնը պարզեց, որ արքունի աղի պահեստների շուրջը վխտում էին բոլոր հաստատութիւնների պաշտօնեաները: Այստեղ էր Կարսի քաղաքագլուխ Նորիատեան, Կարսի ինժեներ Քոչարեան, այստեղ էին հայ և ռուս սպաներ, Թիֆլիզի և Երևանի զանազան մութ մարդիկ: Քննութիւնից երևաց, որ այդ բոլոր մեծ և փոքր ընկերները, զինուորական և քաղաքացիական պաշտօնեաները՝ պայմանաւոր ծածկագիր հեռագիրներով իրար հետ գրագրութեան մէջ էին: Հաղորդում էին իրարու շուկայի գները, աղի տեղափոխութեան միջոցների կերպը, աղի պահանջելիք քանակը, իրանց խոստացած «աշխատանքը» և անելիքները և այլն և այլն: Կարսի քաղաքագլուխ Նորիատեան օրինակ, ստանում էր Կաղզուանից անստորագիր հետևեալ հեռագիրը. «Աղը առատ է, որքան շատ այնքան լաւ, շտապեցէք, տեսնուեցէք Զարուհու հետ... »:

Ինժեներ Քոչարեան ստանում էր Կաղզուանից անստորագիր հետևեալ հեռագիրը. «Պատրաստ է հազար փութ, հոգացէք սայլեր, շտապեցէք... »:

Եւ այդ հեռագիրը ստանում էր հաղորդակցութեան ճանապարհների մի ինժեներ, որ աղի հետ ոչ մի առնչութիւն չունէր...:

Մի ինչ-որ պարոն ստանում էր Կաղզուանից հետևեալ հեռագիրը. «Աղը պատրաստ է, շտապեցէք տեսնուելու գնդապետի հետ, մուշտարին շատացել է...»:

Գաւառապետը պահանջել էր Կաղզուանի հեռագրատանից աղի վերաբերեալ ուղարկուած հեռագիրների պատճէները, և այդ դոկումենտների մի մեծ կապոց կցել էր իր քննական գործին:

Այդ մի մեծ հայկական պանամա էր, ուր աշխատակցում էին տարբեր պրոֆեսեաների և տարբեր հասարակական ու պաշտօնական դիրքի մեծ և փոքր գողեր:

Երբ ես ստացայ այդ հետաքրքիր և մեր օրերի հասարակական բարքերի այդ պատկերազարդ հանդէսը՝ ես սկզբից ուզում էի բանտարկել այդ բոլոր դիմակաւորուած «հասարակական գործիչներին», որոնց թիւը կարծեմ 42 էր: Բայց հաշուի առնելով շրջապատ մթնոլորտը, մեր դատարանի միանգամային անկարողութիւնը և այն մեծ շատ մեծ արգելքները և անախորժութիւնները որոնց ես անպայման կը հանդիպէի՝ ես ինձ մօտ հրաւիրեցի խորհրդակցութեան համար այդ օրերում գոյութիւն ունեցող արտակարգ դատարանի նախագահ իրաւաբան Մդիվանեանին: Վերլուծելով ընդհանուր դրութիւնը և նկատի առնելով, որ այդ գործը պարունակում էր իր մէջ թէ պաշտօնական զեղծումների և թէ սպեկուլեացիաի բոլոր տուեալները՝ մի ոճիր, որ արտակարգ դատարանի իրաւասութիւնն էր, մենք որոշեցինք այդ գործը ուղղել այդ դատարանը և ես ձեռնպահ մնացի այդ բոլոր մեծապատիւ «հասարակական գործիչներին» կանխ-օրէն բանտարկելու մտքից: Ես յոյս ունէի, որ այդ դատարանի ձեռքից չէին խուսափի ժողովրդի և երկրի անունից գոչող այդ դեմագոգ գողերը: Բայց քաղաքական մթնոլորտը թանձրանում էր ժամէ ժամ, մեր զօրքը մեր ռուսախօս գեներալների և գնդապետների առաջնորդութեամբ նահանջում էր անտեսանելի թշնամու առջևից, և մի քանի շաբաթից յետոյ ընկաւ առանց որևէ դիմադրութեան, և հսկայ Կարսը թողնելով իր փլատակների տակ և այն մեծաքանակ նիւթը, աղահանքի շուրջը կատարուած «աշխատանքը»՝ ուր այնքան նախատինք, ամօթ և դառնութիւն կար...

Օգտւում եմ առիթից՝ յիշելու այստեղ աղի հետ կապուած մի այսպիսի դէպք ևս: Երբ ռուսախօս գեներալ-գնդապետները ստիպում էին հայկական բանակին նահանջել և թողնել այն երկիրը, ուր հորդառատ արիւնով շաղախուել և հունցուել էր մեր ազատասիրութիւնը, մեր թիկունքի հերոսները ևս շտապում էին ճշտել ու վերջացնել իրանց հաշիւները... Ֆինանսների մինիստրութեան լիազօր ներկայացուցիչ Կարսի նահանգում՝ Տիգրան Աղամալեան, որ մի սատրապ էր նահանգում, որի համար, բացի իրանից և երկնքից՝ ոչ ոք չը կար, որ ունէր իր կառքը, իր հիանալի նժոյգները, և որ ապրում էր իր բաւականութիւնների և իր հաճոյքների համար, յարմար առիթ գտաւ իր միլիոնանոց հաշիւները մաքրելու համար:

Կարսի անկումից մի 4-5 օր առաջ՝ նա յայտնեց Կարսի գաւառապետին, որ հայկական նահանջող զօրքը թալանել է աղի պետական մեծ պահեստը, որ

գտնուում էր Բեգլի Ահմեդ հայկական մեծ գիւղում, Կարս-Կաղզուան ճանապարհի վերայ: Բայց ես արդէն գիտէի բանը ինչումն է, և գաւառապետին հարկաւոր ցուցմունքներ տալով յանձնարարեցի խիստ քննութիւն կատարել: Քննութիւնը պարզեց, որ աղի այդ մեծ պահեստը վաղուց դատարկ էր, որ ֆինանսների ներկայացուցիչը օգտուում էր դէպքից միայն, ի հաշիւ նահանջող թշուառ հայ բանակի, մաքրելու այդ աղի իր մութ հաշիւները և ընդհանուր շփոթի առանցքում ծածկելու մեծ գողութեան հետքերը:

Եւ վերջապէս, եթէ հայկական զօրքը խելակորոյս փախչում էր՝ ձգելով ճանապարհին նոյնիսկ իր հրացանը, միթէ նա տրամադրութիւն կ՛ունենար թալանելու աղի մեծաքանակ պահեստը, և ուր վերջապէս՝ այդ թշուառականը պէտք է տանէր աղի մի քանի փթանոց ահագին բեկորները...

Կարսի տագնապ օրերում՝ ես, մինիստր Վրացեան և մինիստր Բաբալեան նստած էինք անկողնում պառկած հիւանդ գեներալ Փիրումովի ննջարանում, երբ ոստիկանութիւնը բերեց նորա շտապը մի խումբ զինուորներ՝ որոնք փախել էին դիրքերից: Պատուիրեցին նոցանից մի երկուսին բերել գեներալի ննջարանը՝ դրութեան մասին հարցուփորձ անելու համար: Այդ միջոցում շտապի պետը նկատեց, որ այդ զինուորները բոբիկ են:

– Ո՞ւր են Ձեր նոր ամերիկական կօշիկները, որ դուք բոլորդ էլ, - ասաց փոխգնդապետը,– ստացել էք այս երկու օրս:

– Աղա ջան,– կմկմալով ու իր վիզը քորելով, ասաց զինուորներից մէկը,– ոտքներս հուպ էր տալիս բատինկեն, փախնելուս հանեցինք ու ձգեցինք...

– Այ անիծուես դու,– գոռաց ու տեղից վեր թռաւ կրակոտ մինիստր Բաբալեան...

Եւ այդ ողորմելի աբարանցի զինուորը, որ լաւ փախչելու համար հանում և ձգում էր իր նոր կօշիկներն անգամ՝ շալակում և փախցնում էր Տիգրան Աղամալեանի 5-6 փթանոց աղի վիթխարի բեկորները...

Բայց դառնանք Տիգրան Աղամալեանի անձնուէր վաստակներին:

Աղի շահագործութեան այդ մեծ վարպետը՝ ունէր և այլ մասնագիտութիւն: Նորան յանձնարարել էին խոտի կալսումը և մամլումը նահանգում, և մեծամեծ վարկեր էին բացում նորա այդ մեծ աշխատանքների համար:

Կարսի նահանգի խոտը շատ գովական է և շատ անուանի: Դեռ պատերազմից առաջ՝ նա մեծ չափով արտահանւում էր դէպի Բաթում, իսկ մեր օրերում նա շատ արժէքաւոր էր որպէս վալիւտային ապրանք:

Խոտի տարեկան բերքը Կարսի նահանգում պէտք է միլիարդ փութեր հաշուել, հետևապէս նա կը բաւարարէր ոչ միայն հայկական բանակի պահանջները՝ այլև որպէս էքսպորտ մեծ հարստութիւն էր պետութեան համար:

Բայց թէ ի՞նչ փորձեր և էքսպերիմենտներ էր անում այդ առանցքում այդ աղի և միևնոյն ժամանակ և խոտի վարպետ Տիգրան Աղամալեան՝ չը գիտեմ,

յայտնի էր միայն, որ զուգընթաց խոտի պետական պահեստների հետ, նա ունէր խոտի աւելի մեծ շտեմարաններ, որ իր մասնաւոր սեփականութիւնն էր... Ասում էին, որ այդ խոտը նաև Նոհրատեան, Կարսի քաղաքագլուխը՝ արտահանում էին դէպի Բաթում, և մեծամեծ վաստակ ստանում: Իսկ հայկական բանակը, հայկական հաստատութիւնները՝ ի հարկէ խոտ չէին ստանում...

Խոտի այդ «ինքնորոշուող» հաստատութիւնն էլ ի հարկէ ենթակայ չէր նահանգապետին: Նահանգապետին վերապահուած էին միայն հանդիսատես լինելու իրաւունքները, թէ ինչպէ՞ս այդ ճարպիկ լարախաղները պտտեցնում էին իրանց փորձուած ձեռքերում աղքատ պետութեան միլիոնները, և ի՞նչ մեծ պաֆոսով նոքա պատշաճ տեղերում խօսում էին «երկրի» մասին և «տանջուած ու հարստահարուած հայ ժողովրդի» անունից...

Բայց վերջի ամիսներում, ֆինանսների մինիստրութեան այդ լիազօր Տիգրան Աղամալեանին, որպէս երևի լաւ ֆինանսիստի՝ ենթարկեցին նահանգի գանձարանները և հարկային տեսչութիւնը... Տիգրան Աղամալեան, ինչպէս և քաղաքագլուխ Նոհրատեան՝ զրահաւորուած էին դաշնակցութեան անխոցոտելի վահանով: Երկուսն էլ դաշնակցական պերսօնաներ էին, լիդեր, երկուսն էլ «ընկերական շրջաններում» կշիռ ունէին: Կուսակցական պատգամները մի կողմից՝ իսկ դրամական կօնֆիդեցեալ հաշիւները միուս, մեծ մերձեցում էին ստեղծել Կարսի այդ երկու «Աւագ ընկերների» միջև, և նոքա անվրէպ հնձում էին և հարկաւոր տեղերում շատ բարձր խօսում «ժողովրդի» և «ազգի» մասին: Բայց Տիգրան Աղամալեան աւելի խելօք և աւելի խորամանկ քան Նոհրատեան՝ յայտնի էր և անցեալում: Պատերազմի ժամանակ նա Էրզրումի կողմերում ինչ-որ ազգային կազմակերպութեան գլուխ էր անցել: Նորա ճարպիկ ձեռքերում անյայտացան մեծամեծ «ազգային» գումարներ, այդ մասին իւր ժամանակին գրուեց կարծեմ «Մշակ» լրագրում:

Բայց կուսակցական դիսցիպլինան այնուամենայնիւ, հարկաւոր էր համարել նորից կցելու վաստակաւոր ժողովրդասէրին հասարակական աշխատանքների լծին, և հաւատարմօրէն վստահել էր նորան աղի և խոտի շահաւետ և բուրալից գործը:

Որպէս երկու անբաժան համամիտներ՝ Տ. Աղամալեան և Համօ Նոհրատեան, Կարսի անկման օրը բանտարկուեցին և երկուսին էլ տաճկաց հրամանատարութիւնը գլխատեց: Կարաբեկիր փաշայի շտապում՝ այդ բոլոր «գործիչների» մասին շատ մանրամասն տեղեկութիւններ կային: Թիւրքերը գիտէին, որ այդ երկու դաշնակցականները միշտ սրում էին հայկական տականքները տեղական մահմեդականների դէմ, և այդ վայնասուն մթնոլորտում՝ լցնում իրանց գրպանները:

Այդպէս էր հայկական կառավարութեան ֆինանսական լիազօրը Կարսի նահանգում:

Նկարագրելով մեր պետական հաստատութիւններում բնակածների գիշատիչ ախորժակը՝ ես պէտք է ասեմ, որ խնամատար-պարենաւորման հիմնարկութիւնները շատ յաջող ամբողջ ժամանակամիջոցում մրցեցին իրանց միւս «ընկերների» հետ, և այդ ուղղութեամբ նոքա աննման էին: Բայց պետական այդ բազմաճիւղ «տնտեսութեան» հաշուեկշիռի ներդաշնակութիւնը փչացնում էր պարենաւորման Կարսի ներկայացուցիչ Կարապետ Պարոնակեան և նորա դէմ դատական «ընկերների» համաձայնալից նիզակները:

Սկզբից Պարոնակեան ամբաստանուեց որպէս «հակայեղափոխական»: Շատ զաւեշտալից էր, որ յեղափոխութեան մէջ սպիտակած Պարոնակեանին մեղադրում էին, որ նա կողմնակից չէ ջարդել և փշրելու սիստեմին, որ նա յարում է միւս «վնասակար» քաղաքականութեանը, նահանգապետի հետ միասին մերձենում է թուրքերին, և դորանով՝ ասում էին «ընկերները», ջլատում է դաշնակցութիւնը:

Բայց երբ այդ տարազաւոր միջոցը չօգնեց՝ «տղերքը» գողացան նորա դրամարկղից 50 հազար ռուբլի, ամբաստանեցին դորանում Պարոնակեանին՝ և նա թողեց պաշտօնը:

Քննութիւնը չը ճշտեց ամբաստանութիւնը, իսկ դառնալով գործի իմաստին՝ պէտք էր զարմանալ միայն, որ Պարոնակեան, որ իր տրամադրութեան տակ հարիւր միլիոններ ունէր՝ սահմանափակեց իր պահանջը 50 հազարով, և այն էլ այդչափ կոպիտ ձևով... Ինչևիցէ, բայց Կարսի պարենաւորման համով և հոտով պատառը իր ձեռքը ձգեց Պարոնակեանի օգնական Ցոլակ Յակոբեան, պարսկաստանցի դաշնակցական՝ անշուշտ «ձախերից»: Եւ այնուհետև մեծ վարպետութեամբ ձայնակցելով Տիգրան Աղամալեանի «նոր տնտեսական քաղաքականութեանը՝ այդ Ցոլակը իր բարդ հաշիւները թողեց Կարսի փլատակների տակ, այնտեղ, ուր մնացին Տ. Աղամալեանի, Նոհրատեանի և միւսների աղի և խոտի հաշիւները...

Պարենաւորման նոր լիազօր Ցոլակի եղբայրը պարլամենտի անդամ էր, և այդ մեծ կապերով էին բացատրում այն վստահ գործունէութիւնը, որ ցոյց էր տալիս Ցոլակը Տ. Աղամալեանի և միւսների համերգում...

Արձանագրելով մեր պետական անցուդարձը Կարսի նահանգում, և մեր յիշողութիւններում անցնելով այն բազմաթիւ մարդկանց մօտով՝ որոնց հետ ես առիթ եմ ունեցել շփուելու, ես կ՛ուզէի մի երկու խօսք էլ ասել Պարոնակեանի անձնաւորութեան մասին:

Երբեմն ուսուցիչ հայկական ուսումնարանի՝ Կարապետ Պարոնակեան պատկանում է մեր գաւառական ինտելեգենցիայի այն համաստեղութեանը, որ այնչափ մեծ սիրով 80 թուականներում տարուեց հայրենի հեռանկարներով: Նա մոլեռանդ դաշնակցական էր, և ոխերիմ թշնամի «ռուս օրիենտացիայի», և մէկը անկեղծ և ժողովրդական ազգասէրներից: Նա ուղղեկցել է ինձ Կարս առաջի

օրուանից, և ես միշտ բանականութեամբ դիտել եմ նորա եռանդուն աշխատանքը: Որպէս տարուած և հմայուած երիտասարդ՝ նա վաղ առաւօտուանից մինչև ուշ գիշեր զբաղուած էր, և դուք նորան միշտ կը տեսնէիք գաղթականութեան ծալքերում, շրջապատուած այդ ցնցոտիների սիրով ու գուրգուրանքով: Եւ եթէ այդ նահանգի միւս հայ պաշտօնեաների համար մի Կարս, մի Արփաչայ, կամ Տեկոր ու Բագարան հասարակ աշխարհագրական անուններ էին՝ Պարոնակեանի հասկացողութիւններում այդ անունները գաղափար էին, որոնց մասին խօսելիս նա յուզւում և տարւում էր...

Ես սիրում էի երբէմն խօսել այդ սպիտակած արդէն դաւրիշ-իդեալիստի հետ, և շատ անգամ հրաւիրել եմ նորան ինձ մօտ և խորհրդակցել: Այդպէս է այն համակրելի անձնաւորութիւնը, որ պարփակում էր դաշնակցութեան վաղեմի անկեղծութիւնը, և շատ հեռու էր աղմկելու և ձևանալու ժամանակակից թուլութիւնից:

Անցնելով իմ յիշողութիւններում նահանգի վարչական միւս հաստատութիւններին՝ ես կ՛ուզէի ծանրանալ երկաթուղու, խճուղիների, փոստի և հեռագրական գործի վերայ:

Հայաստանի երկաթուղիների պետը՝ Փիրումով, մի հայ ինժեներ էր, որ ռուս իշխանութեան օրով մի աննշան պաշտօն ունէր Կարս-Սարիղամիշ գծի վերայ, նա այդ փոքրիկ կտորի վերակացուի օգնականն էր:

Թէ ո՞ր արժանաւորութիւնների համար այդ ողորմելին յետին ենթակայից Քաջազնունու կառավարութեան մէջ դարձել էր երկրի բոլոր երկաթուղիների տնօրէնը՝ այդ մի անհասանելի գաղտնիք էր, որ զարմացնում էր անշուշտ շատերին: Ես դժուարանում էի երբեմն հասկանալ Հայաստանի երկաթուղիների այդ պետին, նա ոչ ռուսերէն գիտէր և ոչ հայերէն... Միակ արժանաւորութիւնը, որի վերայ և հենւում էր երևի ինժեներ Փիրումով՝ այդ նորա ընկերվար յարաբերութիւնն էր երկաթուղու բոլոր ծառայողների հետ, ինժեներից սկսած մինչև վերջին բանուորը: Ընկերվար սկզբունքը ունի իր մեծ և բարձր իմաստը ի հարկէ, բայց երբ այդ «մօտ յարաբերութիւնները» երերում են իրաւակարգը, ոտնակոխ են անում իրաւունքները, պարտաւորութիւնները, և մեծ գործը քաոս և անիշխանութիւն դարձնում՝ այդ ընկերվար տրամադրութիւնը հանդուրժելի չէ պետական լուրջ գործում: Ո՛չ նոյնիսկ միջակ մասնագէտ՝ այլ նոյնիսկ ո՛չ հեռաւոր ակնարկ անգամ միջակ վարչական ընդունակութիւնների մասին, երկաթուղիների այդ պետը մի առանձնակի թիւրիմացութիւն էր մեր նոր կերպարանք ստացող պետական սաղմում:

Նա միանգամայն անբարոյականացրեց ենթակայի և իշխողի միջև առանցքը, և բոլորին «ընկերներ» դարձնելով՝ յոյս ունէր այդ ընկերվար թիկունքների վերայ ամրացնել իր բարձր պաշտօնը: Եւ երկաթուղին, որ երբեմն ժամացոյցի ճշտութիւն ունէր՝ դարձաւ սանձարձակ մի բազար:

Երկաթուղու ստորին ծառայողները կայաններում ժամերով կանգնեցնում էին գնացքը, արբում և օրգիաներ կազմակերպում:

Կարսի և Աղէքսանդրապօլի միջև արբած կոնդուկտօրները և մեքենավարը հինգ ժամ դաշտում կանգնեցրել էին գնացքը, և ստիպում էին ճանապարհորդներին դուրս գալ վագոններից և նոցա հետ միասին պարել, Աղէքսանդրապօլից զուռնա բերելով իրանց հետ...

Այդ դէպքի մասին ես հեռագրեցի երկաթուղիների պետին և հաղորդակցութեան մինիստրին, բայց հետևանքի մասին չը գիտեմ մինչև այսօր էլ:

Գնացքների երթևեկութեան ոչ միայն ժամը՝ այլ նոյնիսկ օրը շատ անգամ յայտնի չէր: Նոյնիսկ Կարսի պէս առաջնակարգ կայանում ճանապարհորդները ստիպուած էին սպասելու գնացքին օրերով, և բացի այդ, գիշերում էին կայանում՝ որովհետև յայտնի չէր *(տեքստը խզուած է)*...գնացքը կանգնեցրին մի ինչ որ ագարակի, բօստանի մօտ՝ և 8 ժամ մի սպեկուլեանտ ձմերուկ էր բարձում այդ «յատուկ» գնացքի ապրանքատար վագոնը... Մի այլ կայանում՝ Սարդարապատ կարծեմ, գանգատւում էր պարլամենտի նախագահը, մենք ստիպուած էինք դարձեալ անվերջ սպասել, որովհետև գնացքի արբած ծառայողները զուռնա բերելով՝ պարում էին կայանում...

Մեզ զարմացնում էր միայն, որ պարլամենտի ալեզարդ նախագահը պատմում էր այդ բոլոր տեսիլները ինձ՝ փոխանակ արտակարգ և բռնալից միջոցների դիմելու և ոտի կանգնեցնելու երկրի ամբողջ իշխանութիւնը...

Եւ եթէ այդպիսի «յարմարութիւններով» ճանապարհորդում էր Հայաստանի առաջի քաղաքացին՝ դուք կարող էք երևակայել հասարակ մահկանացուների դրութիւնը: Բայց այդ կամայական, սանձարձակ և ի ծայր անիշխան դրութիւնը, որ տիրում էր սկզբում հայկական երկաթուղիներում՝ լրացնում էր երկաթուղու յատուկ միլիցիան, որ գծի ամբողջ տարածութեան վերայ կազմակերպուած մի ահարկու հրոսակ էր:

Այդ գիշատիչ բանդան լարուած ջատագով՝ որսում էր ճանապարհորդների մէջ հարուստ թուրքերին և հայ անճարներին, և թալանում նոցա աջ ու ձախ:

Կարսի վագզալում երկաթուղու միլիցիապետը ուշացնելով գնացքի առաքումը մինչև կէս գիշեր՝ իր *(տեքստը խզուած է)* ...թէ ե՞րբ է գալու այս կամ այն կողմից գնացքը: Երկաթուղու մեծ հարստութիւնը, որ թափուած էր այստեղ ու այնտեղ՝ փայտեղէն, երկաթ, զանազան պարագաներ, գործիքներ, այդ բոլոր մեծ փշրանքները երբեմն հզօր և հարուստ Ռուսաստանի՝ գոգռում էր բազմաթիւ ախորժակներ...

Մի սպեկուլեանտ, լսելով, որ Կարսի վագզալում երկաթուղու մի ինժեներ տախտակ է ծախում՝ գալիս է այդ առիթով Կարս: Բայց ինժեների և սպեկուլեանտի սակարկութիւնը լսում է պահեստապետը՝ և յետոյ ասում սպեկուլեան-

տին. «Ի՞նչ կարիք կայ ինժեների հետ խօսելու և տախտակին 60 ռուբլի տալու: Պահեստը իմ ձեռքումն է, և ես նոյն տախտակը քեզ 20 ռուբլով կը տամ...»:

Երբ ես իմացայ այդ կատակերգիկ դիպուածի մասին՝ ես յանձնարարեցի արձանագրութիւն կազմել, քննութիւն կատարել և գրագրութիւնը ուղարկեցի ուր հարկն էր: Բայց ի հարկէ այդ արձանագրութիւնն էլ գնաց միայն կուտակելու այն բազմատեսակ նիւթերը՝ ուր մեր ժամանակակից բարքերն էին և խայտաճամուկ տեսիլները մեր հասարակական կեանքի ուսումնասիրութեան համար:

Երբ ես սպասում էի պարլամենտի նախագահ Ա. Սահակեանին՝ նրա գնացքը ութ ժամ ուշացաւ, և մեր օրէնսդիր այդ բարձրագոյն ատեանի աւագը՝ դառնալից գանգատւում էր ինձ, որ Երևանից 10 վերստ միայն անցած Ուլուխանլու կայարան-ում, նորա «յատուկ» օգնականը և միլիցիօներների հետ միասին կողոպտեց 12 թուրք ճանապարհորդի: Երբ ինձ տեղեկացրեցին այդ մասին՝ չը - նայելով որ երկաթուղու գիծը էքստերրիտորեալ էր համարւում, ես ուղարկեցի Կարսի ոստիկանապետին պարզելու այդ մեծ թալանը: Երկաթուղային միլիցիապետը վերջին պատերազմի հայ սպաներիցն էր, նորա տանը՝ որպէս և նորա օգնականի մօտ, գտան թալանուած իրերը՝ ոսկեղէն արծաթեղէնը և այլ արժէքաւորները: Ես կարգադրեցի բանտարկել երկաթուղու միլիցիապետին իր ամբողջ կազմով: Թալանուածները, ի մեծ ամօթ հայ իշխանութեան՝ միաձայն ճանաչեցին ի դէմս բանտարկուածների այն մարդկանց, նոցա վագոններում: Այդ խայտարակ դէպքի մասին ես հեռագրեցի Երևան, մեծ աղմուկ բարձրացրեցի, պահանջեցի վերջ տալ նահանգում այդ բոլոր անիշխան և «ինքնորոշուող» հաստատութիւններին, պահանջեցի ենթարկել երկաթուղու միլիցիան նահանգի սահմաններում, նահանգապետին, բայց ես ոչ միայն բաւարարութիւն՝ այլ նոյն իսկ և պատասխան չը ստացայ:

Դատաստանական քննիչը մի քանի ամիս պահեց այդ գողերին բանտում, բայց յետոյ արձակեց:

– Իսկ դա՞տ, դատարա՞ն,– գուցէ հարցնի ընթերցողը:

Հայկական դատարանը հաւատարիմ մնաց իր բնոյթին, նա մինչև ի վերջն էլ մնաց մեզ համար մի սֆինքս՝ և այդ յանդուգն գողերից և ոչ մէկին մենք չը տեսանք մեղադրական նստարանի վերայ: Բայց այդ դեռ ոչինչ: Մի քանի ամսից յետոյ ոստիկանապետը զեկուցեց ինձ, որ բանտից արձակուած Կարսի երկաթուղային նախկին միլիցիապետը վերադարձել է Երևանից, և նորան վերադարձրել են իր պաշտօնը, նա նորից միլիցիապետ է նշանակուել...

Ինձ ոչինչ չէր մնում անելու, ես ստիպուած էի օրինազնացութիւն, բռնութիւն գործ դնելու՝ իրաւակարգը նահանգում փրկելու համար, և պատուիրեցի ոստիկանապետին՝ առաջարկել այդ հերոս սպային առաջիկայ գնացքով թողնել Կարսի նահանգի սահմանները, իսկ հակառակ դէպքում՝ նորից բանտարկել այդ աւազակապետին:

Այդ աւելի քան զաւեշտալից պատահարի մասին ես մի երկար հեռագիր ուղարկեցի թէ՛ երկաթուղապետին և թէ՛ Հաղորդակցութեան մինիստրին, բայց պատասխան նոցանից չը ստացայ: Բայց այս պատկերը թերի կը մնայ՝ եթէ ես չաւելացնեմ այս տողերին և հետևեալը. Կարսից արտաքսուած երկաթուղու նախկին միլիցիապետը մի քանի օրից յետոյ նորից եկաւ Կարս, բայց այս անգամ որպէս սպայ: Զինուորական իշխանութիւնը հաշուի չառնելով այդ սպայի արկածալից մօտիկ անցեալը՝ հնարաւոր էր համարել յանձնել այդ աւազակին հայ զինուորի կրթութեան գործը...

Եւ որովհետև այդ առաջի դէպքը չէր՝ ես մի գաղտնի գրութեամբ Զօրաց մինիստրի անունով հաղորդեցի նորան Կարսի նահանգի քաղաքացիական հաստատութիւններից արտաքսուած մի շարք սպաների ազգանունները, որոնք յետոյ ընդունուել էին զօրաց *(տեքստը խզուած է)*...տեղ հասած ապրանքը այդչափ թանկ էր: Մի երիտասարդ մի յանձնարարական նամակով եկել էր ինձ մօտ պաշտօն խնդրելու: Ես առաջարկեցի նորան գաւառապետի օգնականի կարծեմ, պաշտօնը. մի պաշտօն, որ շատ լուրջ և պատուաւոր է: Բայց միւս օրը նա հրաժարուեց այդ առաջարկութիւնից՝ առարկելով, որ երկաթուղու վերայ նորան աւելի լաւ պաշտօն են առաջարկել: Ես գիտէի ի հարկէ, որ երիտասարդը, որ ոչ ինժեներ էր, չէր կարող երկաթուղում իմ առաջարկած պաշտօնից աւելի բարձրը ստանալ, և պատուիրեցի Կարսի ոստիկանապետին իմանալ, թէ ինչո՞ւմն է բանը: Պարզուեց, որ պարոնին առաջարկել էին երկաթուղու ապրանքատար բաժնում կշեռքի հսկիչի պաշտօն, մի պաշտօն, որ ստոր պաշտօնների շարքումն է, շատ փոքր ռոճիկով, իսկ դիրքի և զբաղմունքների բնոյթի կողմից ևս՝ համեմատուել անգամ չի կարող ի հարկէ գաւառապետի օգնականի պաշտօնի հետ: Բայց կշեռքի տարուբերումները շատ շահաւետ էին և շատ բուրալից, և այդ միտումներով էլ այդ պարոնը վազում էր դէպի երկաթուղին...

Այդ բարձր իդեալներով էր տարուած հայ երիտասարդութիւնը՝ իր թախծալից հոգսերում հայրենի երկրի վերաշինութեան օրերում:

Այդպէս էր հայկական երկաթուղին՝ մեր վաղանցուկ պետական ընթացքում: Մեր երկաթուղու յետագայ պետերի օրով մթնոլորտը օրեցօր տրամադիր էր ծիածանելու, բայց այդ առանցքը շատ փոքր էր, հայրենի պետական իլլիւզեան կարճատև և հայկական օրերը արդէն հաշուած էին...

* * *

Անցնելով նահանգի ճարտարապետական վարչութեան կազմակերպութեանը՝ մենք պէտք է ասենք, որ նա էլ նոյն ողորմելի դրութիւնն էր ներկայացնում: Հարուստ խճուղիները ունէին մի քանի տարուայ պատրաստի խիճ՝ ճանապարհները նորոգելու համար: Երկիրը մեծ պէտք ունէր վերաշինուելու՝ բայց բո-

լորը միայն խօսում էին, իսկ գործի չէին անցնում, կամ գալիս էին անձնական և հաշուելից միտումներով: Կարսից Արդահան խճուղին գնում է երեք ուղղութեամբ, բայց մեր օրով գլխաւոր երթևեկութիւնը կատարւում էր մի գծով միայն, Մերդենեկի վերայով: Բոլոր ճանապարհների պահպանութեան, խնամելու համար՝ տարուայ սկզբում վարկ էր բացւում, հետևապէս դէպի Արդահան տանող այդ երեք խճուղին էլ պէտք է կանոնաւոր լինէր:

Մի օր ես հրաւիրեցի ինձ մօտ նահանգի քաղաքացիական ինժեներների պետին՝ ինժեներ Լևոն Խատիսեանին, որ մի շատ համակրելի և գերմանացու ճշտապահութիւն ունեցող մարդ էր, և հարցրեցի նորան Արդահան տանող խճուղիների դրութեան մասին:

–Այն գիծը,– ասաց ինժեներ Խատիսեան,– որով գլխաւորապէս երթևեկում են, շատ կանոնաւոր է, իսկ ինչ որ վերաբերւում է երկու միւս ճանապարհներին՝ ես հաստատը չը գիտեմ, բայց կը տեղեկանամ իմ այն ինժեներից, որի հսկողութ-եան և պատասխանատուութեան տակ են այդ երկու ճիւղ...:

Մի երկու ժամից յետոյ ինժեներների պետը զեկուցեց, որ ինչպէս հաւաստիացնում է իր օգնականը՝ այդ երկու գծի վերայ խիճը նոր է սփռուած և ուղիները միանգամայն կանոնաւոր են: Վերջացնելով այդ ճանապարհների ռեմօնտը՝ աւելացրեց ինժեներ Խատիսեան, նորա օգնականը նոր վարկ է պահանջում իր ապագայ անելիքների համար: Ես ոչինչ չասացի ինժեներ Խատիսեանին, որովհետև նա տեղեակ չէր գործի իսկական դրութեան մասին, իսկ ես գիտէի, որ այդ երկու խճուղին էլ զարհուրելի դրութեան մէջ են: Ես ասացի ինժեներ Խատիսեանին, որ գնում եմ Արդահան, և առաջարկեցի նորան ուղեկցել ինձ, և բոլորը կարծում էին, որ գնում եմ այն խճուղով՝ որով բոլորն են երթևեկում: Բայց դիւանատանս կառավարիչը հեռագրել էլ Արդահանի գաւառապետին ի գիտութիւն՝ թէ ո՞ր ճանապարհովն է նահանգապետը մեկնում Արդահան, և այն ինժեները, որ նոր էր սպառել պատշաճ վարկը այդ ուղին կարգի բերելու համար՝ ձեռք ու ոտք ընկած, ուղարկել էր ինձ մօտ ինժ. Խատիսեանին, համոզելու ինձ, որ խիճը այդ գծով դեռ նոր է սփռուել և չի մամլուել, որ աֆտոմոբիլը դժուարութեամբ կանցնէ, և թախանձանօք միջնորդում էր ինժ. Խատիսեանի միջոցով, որ ես անցնեմ Արդահան այն ճանապարհով՝ որով գնում և գալիս են բոլորը, և ոչ թէ նոր ռեմօնտի ենթարկուած խճուղով: Ես բացատրեցի իմ բարեկամ ինժեներ Խատիսեանին, թէ ի՞նչ են ասում այդ ուղու մասին իմ տեղեկութիւնները, և միւս օրը մենք նորա հետ մեկնեցինք Արդահան այն ճանապարհով՝ որի ռեմօնտը ինչպէս հաւատացնում էր նորա օգնական ինժեները, նա նոր է վերջացրել: Բայց բանից դուրս եկաւ, որ ռուս պետական յեղաշրջումից յետոյ՝ երկու տարուայ ընթացքում մարդկային մի ոտ անգամ չի եղել ճանապարհի այդ տարածութեան վերայ: Խճուղին ծայրէ ի ծայր կանաչել, ծածկուել էր բուսականութեամբ, խոտով, իսկ «սփռուած խիճը»՝ որի մասին խօսում էր ինժեները, գոյութիւն ունէր

միայն նորա հաշիւներում, որ նա նոր էր ներկայացրել՝ նոր վարկեր, նոր «դժուարին» աշխատանքի համար պահանջելով...

Վերադառնալով Կարս՝ ես ասացի ինժեներների պետին, որ թէև նահանգի ճարտարապետ. գործը գտնւում է մինիստրի իրաւասութեան ներքոյ՝ այնուամենայնիւ, որպէս նահանգապետ և կառավարութեան գերագոյն ներկայացուցիչ երկրում՝ յանձնարարում եմ Ձեզ առաջարկել Ձեր օգնական ինժեներին հրաժարական տալ, և առաջիկայ գնացքով թողնել Կարսի նահանգի սահմանները, ի դէպ ես հրաման կ՛արձակեմ բանտարկելու նորան... Եւ մի քանի օրից յետոյ հայրենասէր ինժեները մեկնեց Կարսից:

Ոչ պակաս ցայտուն դէմք էր վերջինի ընկերակից մի այլ հայ ինժեներ, որ Կարսի քաղաքագլուխ Նոհրատեանի հետ ինչ որ կապեր ունէր Կաղզուանի աղի շուրջը: Այդ ինժեներին մինիստրութիւնը յանձնարարել էր Արաքսի վերայ ժամանակաւոր կամուրջ կառուցանել՝ յատկապէս աղը Կաղզուանի հանքերից Կարս տեղափոխելու համար, բայց վարկերը գանձարանում նահանգապետի անունովն էր բացել: Ես միանգամայն դէմ էի, որ այդ մեծ աշխատանքը յանձնուի այդչափ մեծ ախորժակ ունեցող ինժեների, և երբ այդ օրերում հաղորդակցութեան մինիստրի օգնական ինժեներ Յովհանջանեան Կարս եկաւ՝ ես ասացի նորան իմ կասկածների մասին: Ինժեներ Յովհանջանեան պատասխանեց, որ միանգամ-այն համամիտ է ինձ հետ, և խնդրեց փող չը տալ այդ ինժեներին, մինչև որ վերադառնայ Երևան, և այդ առիթով մի որևէ կարգադրութիւն կ՛անէ: Այդ օրերում մեր զօրքը եռանդալից արդէն նահանջում էր հայրենի սահմաններից, և օդում տիրում էր տենդ ու իրարանցում: Ակներև էր, որ ինժեները ուզում էր օգտուել շփոթալից մթնոլորտից, և պատերազմի շառաչման տակ՝ շտապ «կառուցանել» կամուրջը: Եւ այնուհետև ամէն օր ներկայանալով ինձ՝ նա խնդրում էր ստորագրել գանձարանի պահանջագիրը, փող տալ իրան, բացատրելով, որ ժամանակը անցնում է, որ նա հարկաւոր պատրաստութիւնները տեսել է, ծախքեր է արել և այլ ... Բայց ես գիտէի, որ նա ոչ միայն ոչ մի ծախք չէ արել՝ այլ անելու էլ տրամադիր չէ: Նրան հետաքրքրում էին միայն միլլիոնները, որոնց վարկը գանձարանում նահանգապետի տրամադրութեան տակ էր: Ես օրեցօր սպասում էի Երևանից այդ առիթով կարգադրութեան, և դանդաղեցնում էի ինժեներին պահանջագրի ստորագր-ութիւնը: Այնուհետև ես երկու ծածկագիր հեռագրով դիմեցի Երևան, և խնդրեցի շտապեցնել լուծելու կամրջի խնդիրը, բայց իմ այդ հեռագրական դիմումներին ինժեներ Յովհանջանեանից՝ մինիստրի օգնականից, ես պատասխան չը ստացայ: Այդպիսի դիպլօմաւոր գործիչներ էր տալիս իր հայրենիքին հայ հասարակութիւնը: Բայց մի երկու խօսք էլ Կարսի նահանգի աւագ ինժեներ Լևոն Խատիսեանի մասին: Ինժեներ Խատիսեանին պաշտօնի Կարս ես հրաւիրեցի: Նա իմ մօտ բարեկամներիցն էր: Նա աւարտել էր իր բարձրագոյն ուսումը Գերմանիա, և շատ ճշտասէր և ճշտապահ

մարդ էր, և եզակի անկաշառ: Երբ մեր կառավարչական շրջաններում արծարծուեց դէպի Օլթիի քարածուխը երկաթուղի կառուցանելու խնդիրը՝ ինժ. Խատիսեանին յանձնարարուեց ուսումնասիրել այդ գծի ուղղութիւնը: Եւ որովհետև այդ գիծը պէտք է կցուէր Կարս-Սարիղամիշ երկաթուղուն՝ ինժեներ Խատիսեան իր հետազօտութիւնները սկսեց Սելիմ կայեարանից, որտեղից ձիով, մի քանի մարդկանց ուղեկցութեամբ 20 թուի Դեկտեմբեր 13-ին մեկնեց դէպի Օլթիի ձորը: Բայց այդ ձորում տաճկաց զօրքերի առաջաւոր մասերը՝ ի դէմս Տաճկաստանում կազմակերպուած հրոսակամբերի, արդէն ներս էին խուժել մեր սահմանները, և ահաբեկել մեր լքուած զօրամասերի առաջաւոր մասերը: Թողնելով իրանց գերազանց հրամանատար դիրքերը կազմալոյծ՝ մերոնք խելակորոյս փախչում էին, և այդ մեծ փոթորկի խառնաձքում ընկաւ ինժ. Խատիսեան: Ինչպէս և շատ շատերը՝ նա ևս չէր կարծում, որ մեր զօրաբանակը իր թնդանօթներով և գնդացիրներով այնպէս անամօթ կը թողնէ իր հրամանալից դիրքերը, մի խայտառակ փախուստ՝ ուր զինուորները յետևում էին միայն իրանց փախչող սպաներին... Եւ ինժ. Խատիսեան զոհ գնաց այն գնդակներից մէկին, որ վայրիվերոյ որոտում էին այդ ձորում, ուր բոլորը փախչում էին՝ հաշիւ չը տալով իրանց, թէ ո՞ւր է թշնամին, և ո՞ր չափ ուժեղ... Ընդհանուր շփոթի մէջ մերոնք իրար վերայ էին կրակում՝ և ասում են, որ ինժ. Խատիսեան այդ խուճապի զոհն էր: Ես շատ աշխատեցի ինժ. Խատիսեանի գէթ դիակը գտնել, քրդեր ուղարկեցի՝ բայց իմ բոլոր աշխատանքս մնաց առանց հետևանքի: Բայց դառնանք մեր պատմութեանը:

Մեր գաւառներում բաղնիքի մասին մարդիկ ոչ մի հասկացողութիւն չունեն, չափազանցութիւն չի լինի եթէ ասեմ, որ մեզանում լուացւում են երկու անգամ՝ ծնուելիս և մեռնելիս... Եւ խօսել այդ պայմաններում առողջապահիկ բժշկական յարմարութիւնների մասին՝ կը նշանակէ զբաղուել ակադեմիկ խնդիրներով: Այդ բոլոր խորհրդածութիւնների հիման վերայ՝ ես մտադրութիւն ունէի նահանգի գէթ ամէն մի գաւառակում մի օրինակելի հասարակական բաղնիք շինել, և յանձնարարեցի ինժեներներից մէկին՝ նախագիծ մշակել: Սանիտարական բժշկական մասը գտնւում էր Խնամատարութեան մինիստրութեան իրաւասութեան ներքոյ, և ես այդ նախագիծը ներկայացրեցի նորան, և հարկաւոր վարկ խնդրեցի: Այնուհետև ես մի քանի անգամ յիշեցրեցի այդ միջնորդութիւնս՝ բայց պատասխան նոյնիսկ չը ստացայ: Բայց մեղաւորը միայն մինիստրը չէր ի հարկէ: Մինիստրական մեքենան մի բարդ հիմնարկութիւն է, իսկ հայ հասրակութիւնը ոչ մի տրամադրութիւն չունէր մասնակցելու հայրենիքի ստեղծագործ աշխատանքներում: Մինիստրական դեպարտամենտը, բաժինները՝ լցուած էին տհասներով, կիսագրագէտներով, գործի մասին ոչ մի հասկացողութիւն չունեցողներով և շատ քիչ մարդկանցով՝ որոնք աշխատելու և սովորելու տրամադրութիւն ունէին: Այդ միջանցքում խռնուած էր մեծ բազմութիւն, մեծ հաւակնութ-

իւն, մեծակարծիք մթնոլորտ, մեծ պահանջներ, ձրի և անպատասխանատու կրիտիկա-պօռոտախօսութիւն՝ բայց ո՛չ գիտութիւն, ո՛չ լուրջ վերաբերմունք և ո՛չ աշխատելու հակում: Այդպէս անփառունակ էր մեր մինիստրութիւների ներքին կազմը:

* * *

Հաղորդակցութեան մինիստրութիւնը պարփակում էր իր իրաւասութիւններում և փոստ-հեռագիրը: Կարսի նահանգում, Կարսի պարիսպներում՝ նախկին իշխանութիւնը թողել էր մեզ այնչափ նիւթ երկրի հեռագրացանցը և հեռախօսը կանոնաւորելու և զարգացնելու համար, որ հարկաւոր էր միայն ցանկութիւն և գործի կազմակերպչութիւն:

Պատերազմի ընթացքում ռուս կառավարութիւնը՝ Կարսը, Սարիղամիշը, Կաղզուանը և այլ վայրերը հեռագրացանցի և հեռախօսի պարագաների մեծ պահեստներ էր դարձրել: Նահանգի բոլոր քաղաքների և զօրակայանների միջև կար ոչ թէ մի մի հեռագրագիծ՝ այլ վեց և աւելի գիծ: Կարսի ամրութիւնները, որ 25 վերստ տրամագիծ ունէին՝ բոլորը կապուած էին թէ՛ իրար հետ և թէ՛ Կարսի հետ առանձին հեռագրական գծերով և առանձին հեռախօսներով: Եւ հազիւ թէ պէտք է ասել, որ մենք կարող էինք օգտագործել այդ մեծաքանակ նիւթը ոչ միայն Կարսի նահանգի պէտքերի համար՝ այլև միւս վայրերը բաւարարել: Բայց զինուորական իշխանութիւնը՝ ի դէմս առանձին ախորժակների, իր վետօն էր դնում Կարսի նահանգում բոլոր արժէքաւորների վերայ, յայտարարելով այդ գոյքը «զինուորական», և կառավարութիւնը խոնարհւում էր այդ բոլորի առաջ: Այդ մեծ հարստութիւնը շարունակ տանում էին Կարսից, շարունակ կրում «զինուորական» պէտքերի համար: Բայց թէ ո՞ւր էին գնում այդ անվերջ վագոնները, ո՞վ էր տանում այդ հարստութիւնը, և որտե՞ղ էր նա հալւում՝ այդ էլ երևի «զինուորական», «ռազմական» գաղտնիք էր...

Մի անուրանալի փաստ միայն մեծ հարցական նշանի բնոյթ ունէր այդ առանցքում: Երբ Կարսի անկումից մի շաբաթ առաջ զօրքերի հրամանատար գեներալ Փիրումով զինուորական ժողով հրաւիրեց օրուայ խնդրի մասին՝ այդ ժողովին ներկայ էին երկու մինիստր, Վրացեան և Բաբալեան և ես: Ժողովում հրետանու, արտիլերեայի հրամանատարը, որ ի հարկէ հայ չէր, զեկուցեց, որ Կարսի բազմաթիւ ամրութիւնները, այսինքն այն ահռելի, անձեռնամխելի ժայռերը՝ որոնց վերայ կանգնում էր հարիւրից աւելի ծանր թնդանօթ, ոչ հեռագրական և ոչ հեռախօսի կապ ունեն ոչ իրար հետ և ոչ իր գնդապետի հետ և ոչ բերդի շտաբի հետ... Այդ պայմաններում՝ ընդգծեց գնդապետը դառնալով դէպի գեներալ Փիրումով, որ անվրդով պառկած էր անկողնում, ես հնարաւորութիւն չունեմ իրազեկ լինելու, թէ ի՞նչ է կատարաւում իմ խնամքին յանձնուած բազմաթիւ

ֆօրտերում, հետևապէս և զրկուած եմ հնարաւորութիւնից հարկաւոր կարգադրութիւներ անելու:

– Գուցէ մեզ օգնէ նահանգապետը,– դարձաւ դէպի ինձ գեներալ Փիրումով, որ ակներև չէր կարող սպասել, որ երկու մինիստրի ներկայութեամբ և այն էլ այդպիսի օրհասական րոպէում՝ կարող էր առաջ գալ իր համար այդպիսի մի փափուկ խնդիր...

– Իմ անձնական տրամադրութեան տակ,–ասացի ես–ունեմ երկու հեռախօս ապարատ, մէկը իմ առանձնասենեակումն է՝ միւսը իմ պաշտօնական ընդունարանում, և կարող եմ նոցանից մէկը տրամադրել գնդապետին: Բայց չէ որ շարունակեցի ես, Ձեզ պէտք են մի քանի տասնեակ տելեֆօնի ապարատ, և ինչպէ՞ս դուք մի երկու օրում կարող էք վերականգնել այդ մեծ տարածութեան վերայ հեռախօսի ցանցը, որ աւերուել և փչացել է ռուս պետական յեղաշրջման օրերից...

Երկու մինիստրներն էլ ցնցուելով իրանց աթոռներում՝ լաւ չէին զգում իրանց, ի հաշիւ քաջարի գեներալի, իսկ բախտաւոր հրամանատարը, ըստ երևոյթին՝ նոյնիսկ այդ րոպէին էլ կարողութիւն չունէր ըմբռնելու դրութեան լրջութիւնը, և իր մեծ պատասխանատուութիւնը երկրի և պատմութեան առաջ...

Բայց այդ դիպուածի մասին միայն հարևանցիօրէն և ի միջի այլոց:

Եւ այդ մեծ հարստութիւնով փոխանակ նոր և նոր հեռագծեր կառուցանելու երկրում՝ մենք հնարաւորութիւն չունեցանք կանոնաւորելու նոյնիսկ այն գծերը, որոնք գոյութիւն ունէին և մեզ պէտք էին: Հեռագրական կապը թէ՛ նահանգում և թէ՛ Երևանի հետ ընդհատւում և խանգարւում էր ոչ թէ ժամերով ու օրերով՝ այլ շաբաթներով ու շարունակ: Ես ռմբակոծում էի իմ այդ առիթով պահանջներով հեռագրական գլխաւոր վարչութեան պետից սկսած մինչև մինիստր նախագահը, բայց իմ տարիուկէս ժամանակամիջոցի ընթացքում բուռն բողոքներս մնում էին առանց հետևանքի: Առաջի աշնանը տեսնելով հեռագրացանցի վիճակը նահանգում՝ ես մանրամասն իրազեկ արեցի այդ մասին Հաղորդակցութեան մինիստրին, և խնդրեցի կտրուկ միջոցներ ձեռք առնել՝ մինչև ձմեռ վերականգնելու մեզ պէտք բոլոր հեռագրական գծերը, ի դէպ մենք կարող էինք ամբողջ ձմեռ մնալ առանց կապի: Բայց ժամանակը անցնում էր և այդ առիթով ոչ մի կարգադրութիւն չը կար: Ես մի քանի անգամ նորից կրկնեցի իմ միջնորդութիւնս, բայց գործին ձեռնարկող չը կար: Այն ժամանակ ես խնդրեցի 4-րդ հետևակ բրիգադայի հրամանատար Սեպուհին տրամադրել ինձ իր բրիգադայի կապի վաշտը, և մենք Սեպուհի հետ վճռեցինք մեր միջոցներով վերանորոգել գէթ նահանգում հեռագրացանցը: Եւ անցնելով գործի, ես հեռագրով հաղորդեցի այդ մասին Հաղորդակցութեան մինիստրին: Բայց մեր այդ ձեռնարկութիւնը շօշափել էր պօստ-հեռագրական գլխաւոր վարչութեան պատիւը և նորա պետը մինիստրի անունից, հեռագրեց մեզ չը միջամտել նորա գործերին, և մենք դա-

դարեցրեցինք մեր արդէն սկսուած աշխատանքները: Բայց պօստ-հեռագրական դեպարտամենտի կառավարիչը և մինչև Կարսի անկումը՝ համր մնաց դէպի իմ այդ առիթով բազմաթիւ բողոքները, և հեռագրացանցը Երևանից մինչև Կարս և Կարսի նահանգում մնաց նոյն դրութեան մէջ, հեռագրական կապը խզուում էր շաբաթներով, գէթ մի երկու անգամ և մենք հեռագրական հաղորդակցութիւն չունէինք Երևանի հետ ոչ միայն օրերով՝ այլև շաբաթներով, իսկ նահանգում և ամիս էր տևում:

Երբ մենք պէտք է գրաւէինք Օլթին, և ես նախապատրաստական աշխատանքներ էի կատարում այդ առիթով՝ ես երեք ամիս առաջ խնդրեցի Հաղորդակցութեան մինիստրին, ուղարկել Կարս Օլթու համար հեռագրատան պաշտօնեաների կազմը, ապարատ և բոլոր պէտք եղած պարագաները: Մի ամսուայ ընթացքում ոչ մի պատասխան չը ստանալով՝ ես հեռագրով կրկնեցի իմ պահանջը: Ի պատասխան իմ այս վերջի հեռագրի՝ ինձ հաղորդեցին, որ առաջարկուած է փօստ հեռագրական գլխաւոր վարչութեանը անել պէտք եղած կարգադրութիւնը: Բայց անցաւ մի ամիս էլ, իսկ այդ կարգադրութիւնը տեղ չէր հասնում: Մեր յառաջխաղացումը դէպի Օլթի սպասւում էր օրեցօր, և ես նորից հեռագրեցի դեպարտամենտի կառավարչին: Բայց որչափ մեծ էր զարմանքս և զայրոյթս՝ երբ վերջինը պատասխանեց ինձ, որ նա անկարող է պատշաճ կարգադրութիւն անել, որովհետև Օլթին դեռ մեր սահմաններում չէ: Ես այդ ողորմելի պատասխանը ուղարկեցի մինիստրին, և խնդրեցի ազատել ինձ հարկաւորութիւնից բանակցելու մի մարդու հետ, որի հետ մենք խօսում ենք տարբեր լեզուներով: Մինիստրը պատասխանեց, որ խիստ հրամայուած է այդ կառավարչին անյապաղ կատարել իմ բոլոր պահանջները, բայց նա դարձեալ ոչինչ չարեց և մենք Օլթի մտանք առանց հեռագրական կապ ունենալու Կարսի հետ...

Այդ չարաբախտ հեռագրական կապը հաստատուեց Օլթիի հետ միայն երկու ամսից յետոյ, այսինքն այն օրերում՝ երբ մենք արդեն թողնում և փախչում էինք այդ վայրից...

Այդպէս էր Հաղորդակցութեան դեպարտամենտի կառավարիչը, հայ մեծ պաշտօնեան կատարում իր մինիստրի «խիստ» և «անյետաձգելի» հրամանները: Եւ այդպէս էր նորա վերաբերմունքը դէպի այնպիսի մի մեծ խնդիր, որ ունէր այդչափ մեծ պետական-քաղաքական նշանակութիւն: Եւ այդ հաստատութեան գլուխ կանգնած էր մի հայ, որ չը գիտէր իր լեզուն, որի համար խորթ էր հայ պետականութիւնը, հայի վաղեմի երազները: Եւ այդ խորթ ու անպիտան միջոցներով՝ մենք ուզում էինք կերտել մեր անկախութիւնը և մեր ինքնուրոյնութիւնը...

Շատ և շատ անգամ ես չէի ստանում մինիստրների և նոյնիսկ մինիստր-նախագահի հեռագիրները, իսկ նոքա էլ չէին ստանում իմ հաղորդագրութիւնները: Եւ եթէ այդչափ «ընկերվար» տրամադրուած հաստատութիւնը այդչափ անհոգ էր դէպի նահանգապետի ու մինիստրների հեռագիրները՝ դուք կարող էք

երևակայել Ձեզ մասնաւոր հեռագիրների, իսկ միւս պաշտօնեաների հեռագիրների վիճակը: Այդ առիթով ես մի քանի անգամ բողոքեցի Ներքին և Հաղորդակցութեան մինիստրներին: Հեռագրատունը մի բազար էր Հայաստանում, ուր բոլոր «հասարակական գործիչները», բոլոր բազմաթիւ «լիազօրները», բոլոր «ընկերները» իրանց «պապոնց տանն էին»:

Ռուս պետական յեղաշրջումից յետոյ քաղաքացիութիւն ստացած «ուղիղ գծով» խօսելու իրաւունքը ընդհանուր և համատարած էր: Թէ՛ պաշտօնեաները և թէ՛ մասնաւոր մարդիկ՝ առանձին կարիք չունէին հեռագիրներ ուղարկելու թէ՛ իրանց պաշտօնական և թէ՛ իրանց մասնաւոր գործով: Նրանք ուղղակի գնում էին հեռագրատուն, կապւում էին Երևանի, Աղէքսանդրապօլի և միւս վայրերի հետ, հրաւիրում էին այդտեղերի իրանց ծանօթներին ու երկար ու բարակ, ժամերով զրոյցի բռնուելով՝ զբաղեցնում էին մեր միակ հեռագրական գիծը: Իսկ այդ ժամերի ընթացքում շատ անգամ կարևորագոյն պաշտօնական հեռագիրները մնում էին թափուած երեսի վերայ: Ում սապօն էր պէտք, ում հարկաւոր էր իմանալ մէկի առողջութիւնը, կամ օրուայ նորութիւնները՝ նա գնում էր հեռագրատուն, կանչում էր ապարատի մօտ իր ծանօթին այս կամ այն հիմնարկութիւնից, մինիստրութիւնից, պարլամենտից, և ծանր ու բարակ սկսում էր զրոյցը: Հեռագրատան պաշտօնեաներն էլ շատ փափուկ դրութեան մէջ էին այդ առանցքում: Գալիս էր ուղիղ գծով խօսելու գեներալը, գալիս էր պարլամենտի անդամը նորութիւններ իմանալու հեռագրատուն, գալիս էին բազմատեսակ «լիազօրներ» և «ներկայացուցիչներ», որ կամ «իրաւունքի տէր էին» կամ յամենայն դէպս իրաւունք ունեցողների հետ մօտ յարաբերութեան մէջ էին: Եւ ինչպէս հեռագրատան պաշտօնեան կարող էր արգելել այդ մեծ և փոքր մարդկանց մտնել հեռագրատուն, խօսել Երևանի մեծ մարդկանց հետ, և կարդալ նոյն հեռագրատանը և ուրիշների հեռագիրները... Եւ միթէ պէտք է զարմանալ, որ այդ շփոթ մթնոլորտում կորչում էին նոյնիսկ նահանգապետի և մինիստրների հեռագիրները, միթէ կարելի էր զարմանալ, որ նահանգապետին ուղարկուած հեռագրի բովանդակութիւնը ուրիշները նորանից առաջ էին իմանում: Մարդիկ քաղաքացիական իմաստով սանձարձակ էին դարձել, և չէին ուզում տարրական պարտաւորութիւններ հասկանալ: Եւ եթէ քաղաքացին տրամադիր չէր յարգելու պետական հաստատութիւնը, ինքը իրան՝ ի՞նչ վերաբերմունք դէպի իր պաշտօնը և իր պարտաւորութիւնները մենք կարող էինք սպասել և պահանջել հեռագրատան մի փոքրիկ պաշտօնեայից: Այդ մթնոլորտում չէին կարող դաստիարակուել և կոփուել նորա օրինականութիւնը և ճշտապահութիւնը, և նա էլ գնում էր իր օրերի հոսանքի յետևից: Նահանգապետը՝ գուցէ աւելի քան ով և իցէ նահանգում, իրաւունք ունէր ի հարկէ օգտուելու հեռագրի ուղիղ գծով, բայց ես երբէք ինձ թոյլ չէի տալիս այդ, և գնում էի հեռագրատուն այն ժամանակ միայն՝ երբ ինձ հրաւիրում էր Երևանից մինիստրներից մէկը: Ես տրամադիր էի կարծելու,

որ նահանգապետի այդ վերաբերմունքը որոշ կրթական նշանակութիւն կ՛ունենայ, բայց ես սխալւում էի: Ժողովելով բոլոր այդ ուղղութեամբ տուեալները և փաստերը, և ներկայացնելով կառավարութեանը՝ ես գրում էի, որ ռուս իշխանութեան օրով հեռագրատան դուռը ոչ ոք չը գիտէր, որ ապարատների դահլիճը սրբութեան սրբոց էր, ուր մուտք ունէին միայն և միայն հեռագրատան պաշօնեաները: Նոյնիսկ մեծ պատերազմի ընթացքում՝ երբ կառավարութիւնը ուղարկում և ստանում էր մեզանից ոչ պակաս կարևորագոյն հեռագիրներ՝ ոչ ոք հասկացողութիւն անգամ չունէր ուղիղ գծով խօսելու մասին, և այդ չէր դանդաղեցնում հեռագրական աշխատանքը: Եւ ոչ միայն պաշտօնական՝ այլև մասնաւոր հեռագիրները մենք ստանում էինք մինչև ի վերջը մեծ ճշտութեամբ: Բայց պետական յեղաշրջումը երերեց երկրի իրաւակարգը, և ընկերվար տրամադրութիւնը տիրեց հրապարակը: Հեռագրատունը, որ գնում էր մեր օրերի առաջընթաց հոսանքում համայնական բոլորից առաջ՝ և երկիրը զրկուեց ճշտութիւնից փոստ-հեռագրական միջանցքում: Ներկայացնելով այդ բոլոր խորհրդածութիւնները կառավարութեանը, և մատնացոյց անելով, որ փոստ-հեռագրական գործի կանոնաւորման հետ կապ ունի երկրի իրաւակարգը, երկրի տնտեսութիւնը, առևտուրը և այլն՝ ես միջնորդում էի միանգամ ընդմիշտ վերջ դնել ուղիղ գծով խօսելու ներմուծութեանը, և առանց որևէ բացառութեան՝ փակել բոլորի համար, մինիստրից սկսած, հեռագրատան-ապարատի դուռը: Եւ այն ժամանակ միայն՝ վերջացնում էի ես իմ դիմումը, փոստ-հեռագրական պաշտօնեան կը վերադառնայ իր պարտաւորութիւններին և ճշտութեանը:

Բայց երևաց, որ ուղիղ գծով խօսելու սիրահարները շատ են, և իմ խիստ առիթով պահանջներս մնացին առանց հետևանքի: Հեռագրական գիծը զբաղեցնում էին իրանց մասլահաթներով գլխաւորապէս զինուորականները, և «ռազմական» վահանի տակ բռնութիւն գործ դնում հեռագրատան հայ թշուառ պաշտօնեայի վերայ: Այդ գեներալներին և սպաներին դուք ամէն օր կը հանդիպէիք հեռագրի ապարատի դահլիճում: Գալիս էին խմբերով, կապւում Երևանի կամ Աղէքղսանդրապօլի հետ, և սկսում իրանց ծանօթների հետ քեֆ, հալ, ի՞նչ թազա խաբար կայ Երևան, և այդպէս ժամեր շարունակ: Այդ մթնոլորտում օրէնքը կորցնում էր իր սրբութիւնը, հմայքը և այս պայմաններում հեռագրատան պաշտօնեան օրինազանց էր լինում, նա միայն կեղծում էր: Իսկ այդ բոլորը բացառօրէն անդրադառնում էր դէպի պետական գործի ընթացքը, և առաջ բերում ընդհանուր շփոթ և ընդհանուր անիշխանութիւն: Շատ պարզ էին ի հարկէ այդ տարրական ճշմարտութիւնները, բայց այլասեռուել էր հասարակական մթնոլորտը, և մարդիկ բթացել էին ոչ միայն դէպի պետական, հասարակական պատիւը՝ այլև դէպի իրանց անձնական պատուասիրութիւնը:

Գալով փոստի գործին երկրում, մենք անցնում էինք արդէն դէպի այն անմխիթար տարածութիւնը՝ ուր ոչ ծայր կար, ոչ սկիզբ: Փոստը ամբողջովին պա-

տահական բնոյթ ունէր: Նամակները, պետական ծրարները, լրագիրները կարող էին և ստացուել և ոչ: Սարիղամիշից գնդի հրամանտարը ուղարկում է փոստով Երևան մի քանի պաշտօնական ծրար՝ բայց մի երկու օրից յետոյ մի սպայ պատահմամբ այդ ծրարների կապոցը գտնում է Սարիղամիշի և Կարսի միջև մի կայանում: Ես քննութիւն նշանակեցի այդ առիթով, և պարզուեց, որ Սարիղամիշի փոստատունը, փոխանակ ծրարելու ամբողջ ուղարկուելիք թղթակցութիւնը մի փոստ-ծրարի մէջ՝ ինչպէս այդ ընդունուած է, և կնքելու այդ մի չեմօդանում՝ մասնաւոր կերպով տալիս է նամակների և պաշտօնական ծրարների մի կապոց պատահմամբ Կարս գնացող մէկին, խնդրելով յանձնել այդ կապոցը Կարսի փոստատունը: Բայց այդ պարոնը ճանապարհին կամ կորցնում է կապոցը, կամ գուցէ հենց մի կողմ է շպրտում: Այդ առիթով կազմուած արձանագրութիւնը ես պատուիրեցի ուղարկել ուր հարկն է, բայց նա էլ ի հարկէ մնաց առանց հետևանքի: Մի օր, Աղէքսանդրապոլ ես մտայ փոստի յատուկ վագօնը, որ Կարս էր գնում, և ի՞նչ տեսայ, սեղանի վերայ թափուած էր ամբողջ փոստային թղթակցութիւնը: Պատահական մարդիկ բոլորելով այդ սեղանը՝ հետաքրքրուում էին նամակներով, կարդում էին լրագիրները, և առանց գէթ նորից ծալելու այդ թերթերը՝ ձգում էին սեղանի վերայ... Այդպէս է երևի հասկանում «ազատութիւնը» թղթակցութեան «անձեռնամխելիութիւնը»: Պաշտօնական շատ ծրարներ ես չէի ստանում, կորչում էին և իմ թղթերը, այնպէս որ կարևոր պաշտօնական ծրարները շատ անգամ ես ստիպուած էի ուղարկել Երևան յատուկ սուրհանդակներով: Գալով լրագիրներին՝ բաժանորդները ստանում էին թերթերը շատ անկանոն, կեղտոտուած և արդէն մի քանի անգամ կարդացուած...

Այդպէս էր մեր ընկերվար և համայնական մթնոլորտը: Եւ այն մարդիկ, որ կոչուած էին մարտնչելու իրաւակարգի ուղիներ հարթելու երկրում՝ այդ խեղդիչ մթնոլորտում պէտք է երկաթէ ջղեր ունենային: Խախտուել էին տարրական հասկացողութիւնները, մարդկանց մէջ բթացել էր պարտաճանաչութեան զգացմունքը, և հրապարակի տրամադրութիւնը ստացել էր տարերային բնոյթ, որ թէև անցողական էր՝ բայց հորդորալից և աւերիչ:

Բայց այստեղ մի պատկեր ևս մեր այս անցուդարձից:

Դժուար է երևակայել անգամ, թէ ի՞նչ անսիստեմ մթնոլորտ, ի՞նչ անիշխանութիւն էր տիրում մեր բոլոր կառավարչական ատեաններում: Զինուորական իշխանութիւնը, այդ ռուսները և ռուսախօսները՝ մի ցաւ էին երկրի համար, իսկ կառավարութիւնը նոցա քմահաճոյքների ի կատար ածողը: Շատ հետաքրքիր է, որ դաշնակցութիւնը, որ իր անցեալում եղել է այնչափ ինքնուրոյն, այնչափ վստահ իր անելիքներում, և այնչափ խիզախ ու համառ՝ այսօր խաղալիք էր այդ ողորմելի գեներալների և գնդապետների ձեռքում: Բայց կողմնակի դիտողի համար աւելի վիրաւորականը այն էր, որ կառավարութիւնը, պարլամենտը հռչակաւոր բիւրոն՝ խունկ էին ծխում զինուորական այդ տափակութիւնների առաջ,

Հայոց Հանրապետութեան միակ ապաւէնը ի դէմս այդ անընդունակ գեներալների և գնդապետների տեսնում: Եւ զինուորականների այդ ազդեցութիւնը կառավարչական շրջաններում այնչափ մեծ էր, որ եթէ այդ ռուսների և ռուսախօսների մէջ գտնուէր մի քիչ թէ շատ ընդունակ և բանիմաց մարդ՝ նա մեծ յաջողութ-եամբ կարող էր տապալել այդ երերուն կառավարութիւնը, և զինուորական դեկտատուրա յայտարարել: Այդ գնդապետները և ձգտում էին այդ գերիշխանութ-եանը՝ բայց նոքա ոչ շնորհք և ոչ սրտոտութիւն ունեցան այդ քայլի համար: Նրանք բաւականանում էին և նորանով, որ դաշնակցութիւնը պատկառում էր նոցա առաջ, և կատարում նոցա բոլոր քմահաճ պահանջները: Եւ մինչև ի վերջը ճոճուելով այդ երազալից առանցքում՝ լուծուեց, դղրդալից ընկաւ Հայոց Հանրապետութիւնը: Շատ հետաքրքրիր է, որ ամէնուրէք ուր կար իրաւունքի խնդիր, կամ նիւթական որևէ շահ՝ զինուորականները զրահաւորուած «ռազմական», «պատերազմական» «միտումներով», իրանց veto-ն էին դնում և կառավարութիւնը երկիւղածութեամբ խոնարհւում էր այդ բոլոր պահանջների առաջ: Եւ այդ գերիշխան ձգտումների մէջ՝ մեծ կռուածաղիկ էր աֆտօմօբիլ գործը:

Ռուս իշխանութիւնը Կարսի նահանգում թողել էր մեզ աֆտօմոբիլների մեծ արհեստանոցներ իրանց բոլոր պարագաներով, և հարիւրաւոր ամէն տեսակի աֆտօմօբիլ: Այդ մեքենաները ընկած էին տաճկաստանի սահմաններից մինչև Արփաչայի ափերը՝ բոլոր բազմաթիւ խճուղիներով, և մեծ արժէք էին ներկայացնում: Եթէ յիշելու լինենք, որ Կարսը Կովկասեան ռուս մեծ զօրաբանակի կենտրոնն էր՝ ուր կարկատւում և կարգի էին բերւում բանակի բոլոր ճակատներից եկած հազարաւոր մեքենաները, դուք որոշ հասկացողութիւն կ՛ունենաք այն մեծ այդ իմաստով պահեստների և արհեստանոցների մասին, որ գտնւում էին Կարսում: Եւ մեր կառավարչական առաջի անելիքն էր՝ երկրի տրանսպորտը կազմակերպելու համար ժողովել այդ հարիւրաւոր մեքենաները և նորոգել նոցա: Չէ՞ որ տրանսպօրտը մեր պետական և շինարար աշխատանքների առաջի պայմանն էր:

Շատ բնորոշ է մեր օրերի տարազի համար, որ բազմաթիւ հմուտ և անուանի հայ ինժեներների մէջ՝ մեր կառավարութիւնը չը գտաւ մի լուրջ և հեղինակաւոր ինժեներ, որին կարելի լինէր յանձնել այդ մեծ և կարևորագոյն գործի կազմակերպութիւնը:

Կարսի նահանգապետը Կարս եկաւ առանց ի հարկէ աֆտօմօբիլի և որևէ կառք ունենալու իր տրամադրութեան տակ: Իմ բազմաթիւ դիմումներից յետոյ աֆտօմօբիլ արհեստանոցների գործը կարգաւորելու համար, և Կարսում ամբողջ հանրապետութեան համար աֆտօմօբիլ կենտրոնական արհեստանոց ստեղծելու մասին՝ կառավարութիւնը լուծեց վերջապէս այդ խնդիրը: Այդ մեծ գործը՝ ուր ռուս իշխանութեան օրով Կարսում զբաղուած էին տասնեակ ինժե-

ներներ, մեր կառավարութիւնը յանձնարարեց մի 20 տարեկան տղայի, ինչ որ ուսումնարանի աշակերտի, որ մինիստր նախագահ Քաջազնունու որդին էր:

Պէտք չը կայ ասելու, որ այդ մի ծաղր էր երկրի առաջ, և վերին աստիճանի վիրաւորական բոլորիս համար: Ես չեմ կասկածում ի հարկէ, որ այդ դաշնակցական տղան համակուած էր հայրենասէր տենչով, բայց և այնպէս մեծ անհամեստութիւն էր ընդունել այդ հասակում մի պարտաւորութիւն, ուր պէտք էր գիտութիւն, փորձ և լրջութիւն: Բախտի բերմունքով՝ այդ տղան մի երկու օրից յետոյ հիւանդացաւ, և ես պատուիրեցի ուղարկել նորան Երևան իր ծնողների խնամքին: Իսկ մինչ այդ բռնկւում է և զինուորականների ախորժակը այդ հրապուրալից հարստութեան շուրջը, և զօրաց իշխանութիւնը աֆտօմօբիլ գործը յայտարարում է «ռազմական» և «պատերազմական», և ձգտում է իւրացնել ամէն բան:

Մինչ կառավարութիւնը Երևանում վիճում է այդ առիթով իր գեներալների և գնդապետների հետ՝ աֆտօմօբիլ հարստութիւնը հալւում էր օրեցօր, և այդ պարագաների պահեստներից թանկարժէք իրերը անցնում էին Թիֆլիս և այնտեղ ծախւում...

Երկար սակարկութիւնից յետոյ՝ աֆտօմօբիլ գործը կառավարութիւնը որոշեց յանձնել Հաղորդակցութեան մինիստրին, և Կարսի աֆտօ-արհեստանոցները կարգի բերելու համար հրաւիրեց Թիֆլիզից մի ռուս ինժեներ: Բայց Կարսի զինուորականները ոչ մի կերպ չէին ուզում հաշտուել գործի այդ ելքի հետ, ու անպատճառ ուզում էին աֆտօմօբիլ գործը իրանց ձեռքը ձգել: Գեներալները և սպաները բռնի տանում էին գարաժից այս ու այն մեքենան, մի երկու օրից յետոյ փչացնում, ձգում և նորը յափշտակում, տանում: Երբ այդ սանձարձակ դրութեան մասին արհեստանոցի կառավարիչ ինժեները բողոքեց՝ գեներալ Փիրումով յայտարարեց, որ ինժեները բոլշեւիկ է, փչացնում է հայ զինուորութիւնը,և մի վաշտ զինուոր ուղարկեց նորան ձերբակալելու:

Դժուար է ի հարկէ երևակայել աւելի վայրենի մթնոլորտ, և դժուար է խօսել այդ պայմաններում օրէնքի և իրաւակարգի մասին: Ինժեներին մի ելք էր մնում՝ և նա թողեց Կարսը և փախաւ Թիֆլիս: Պէտք է այն էլ ասել, որ գեներալ Փիրումովի յետևում թագնւում էին բազմաթիւ մեծ և փոքր զինուորականներ, որոնք օգտուելով այն հանգամանքից, որ այդ աւագ գեներալը առհասարակ չէր ծանրաբեռնում իրան մտածելու աշխատանքով՝ դրդում էին գեներալին ամէն տեսակի անհեթեթ գործողութիւնների: Ինչևիցէ, բայց խնդիրը այն էր, որ այդ անիշխան պայմաններ-ում աֆտօ-արհեստանոցները դադարեցին աշխատել: Երևանի կառավարութիւնը անզօր էր զինուորականների ոտնձգութիւնների դէմ, և աֆտօմօբիլ գործը Հայաստանում քայքայուեց ի սպառ: Բաւական է ասել, որ այդ հարիւրաւոր աֆտօմօբիլներից կատավարութիւնը չը կարողացաւ գէթ մի աֆտօմօբիլ ստանալ: Եւ իրերը այդ ուղղութեամբ բնորոշելու համար բաւական կը լինի ասել, որ ոչ մինիստրները, ոչ սպարապետը և ոչ նահանգապետը մինչև

ի վերջը չունեցան իրանց աֆտոմոբիլը: Ես ամաչում եմ ասել նոյնիսկ, որ հայկական պրեմիերի աֆտոմոբիլը այնչափ խղճուկ էր, այնչափ անգոյն, որ յամենայն դէպս համապատասխան չէր երկրի առաջի քաղաքացու դիրքին: Երբ մինիստր նախագահ Խատիսեան գալիս էր շրջագայելու Կարսի նահանգը՝ ես ստիպուած էի ամերիկացիներից երկու աֆտոմոբիլ խնդրելու: Իսկ հայկական բանակի սպարապետը այս և այնտեղ դրուած զօրամասերը այցելելու՝ բեռնակիր աֆտոմոբիլով էր գնում, որ ճանապարհին մի քանի անգամ ջարդուում էր փչանում, և հազար ու մի պատահարների ենթարկում ծերունի սպարապետին: Աֆտո-արհեստանոցների վերայ միլիոններ ծախսուեց՝ բայց գէթ նմուշի համար երկիրը մի աֆտոմոբիլ չը տեսաւ: Կարսի նահանգապետը, որ բոլորից շատ պէտք ունէր շրջելու միջոցներում՝ Կարսի անկումից մի 3 ամիս առաջ միայն կարողացաւ ստանալ իր համար մի բեռնակիր մեքենայ, բայց այդ մեքենան էլ աւելի արհեստանոցումն էր կանգնած...

Երբ քեամալական զօրաբանակը մօտենում էր Կարսին, և դէպի մեր դիրքերը պէտք էր ռազմամթերք տանել՝ զօրքերի հրամանատարը խնդրեց նահանգապետի մեքենան: Հայկական զօրաբանակը կրիտիկ մօմենտում մի աֆտոմոբիլ անգամ չունէր: Թէ ո՞ւր չքացան, այդ բազմաթիւ աֆտոմոբիլների հետ միասին և հազարաւոր ձիերը և եզները, որ զինուորական իշխանութիւնը անդադար բռնագրաւում էր տարիուկէս ժամանակի ընթացքում Կարսի նահանգում իր «ռազմական» և պատերազմական պէտքերի համար՝ դա նոյնչափ հետաքրքիր որչափ և մութ պատմութիւն է: Դառնալից փաստը այն է միայն, որ Կարսի հայկական բանակը տրանսպորտ չունէր, և կրիտիկական րոպէում գեներալ Փիրումով նահանգապետի բեռնակիր մեքենան էր խնդրում փախչող գունդերին փամփուշտ հասցնելու համար...

Այդպէս էր Հայաստանի վերաշինութեան գունալից պատկերներից մէկը, ուր մեր գեներալները և գնդապետները ցոյց տուեցին իրանց «ռազմական» և «պատերազմական» բոլոր արժանաւորութիւնները... Եւ այդչափ ձախ պայմաններով էր շրջապատուած Կարսի նահանգում քաղաքացիական իշխանութեան աշխատանքը:

XIV

XVI-4 բրիգադը (մատիտագիր)

19 թուի ամառը լուր տարածուեց, որ կազմակերպւում է 4-րդ հետևակ բրիգադան, որի շտաբը պէտք է Կարսում լինի: Իսկ մի փոքր անց մինիստր նախագահից ես մի մասնաւոր նամակ ստացայ, ուր պ. Խատիսեան տեղեկացնում էր ինձ, որ այդ բրիգադայի հրամանատար նշանակուած է Սեպուհ: Պրեմիերը յանձնարարում էր իմ ուշադրութեանը և իմ հոգսերին, մեր երազների համար

տարիներ մարտնչած այդ հայդուկին: Այն ժամանակ ես դեռ պատիւ չունէի Սեպուհի հետ ծանօթ լինելու, բայց որպէս նահանգապետ ես պարտաւոր էի կատարելու կառավարութեան նախագահի յանձնարարութիւնը, որ թէև տրւում էր ինձ մասնաւոր կերպով: Երբ Սեպուհ պէտք է գար Կարս՝ ես յանձնարարեցի Կարսի ոստիկանապետին դիմաւորել հրամանատարին երկաթուղու վագզալում, և իմ անունից ողջունել:

4-րդ հետևակ բրիգադան նոր էր կազմակերպւում, և Սեպուհն ինքը հայութեան և նորա երազների մարմնացում՝ բնականաբար պէտք է և բրիգադային տար զուտ ազգային զօրամասի դէմք:

Սեպուհի բրիգադայի առաձգական հրամանատար կազմը բացառապէս հայեր էին, շատը տաճկահայ և ոչ մի ռուսախօս: Եւ դա շատ բնական էր՝ որովհետև Սեպուհ ինքը ռուսերեն չը գիտէր, և ռուսախօսութեան հետ ոչ մի ընդհանուր բան՝ բացի խորին ատելութիւնից, չունէր:

Սեպուհ միւս օրը այցելեց ինձ, ես տրամադրեցի բրիգադայի հրամանատարին իմ աջակցութիւնը նորան յանձնուած գործում, և մենք մտերմացանք և բարեկամներ դարձանք:

Սեպուհ միանգամից բևեռեց իր վերայ երկրի և հասարակութեան ուշադրութիւնը: Հեղինակաւոր էր հայերի մէջ, իսկ թուրքերը և միւս ազգութիւնները տեսնելով նորա մօտ յարաբերութիւնները նահանգապետի հետ՝ շատ անգամ նորա միջնորդութեանն էին դիմում այս և այն գործում նահանգապետի մօտ: Այդպիսով Սեպուհ ժողովրդական մարդու համբաւ ստացաւ Կարսի նահանգում, և մենք հայերս սիրում և նախամեծար էինք համարում 4-րդ հետևակ բրիգադան՝ որպէս մի զօրամաս, որ բուն հայկական էր և պատրաստ զոհուելու հայրենի իդեալների համար: Այդ բոլորը սաստիկ դուր չէր գալիս թէ Կարսի և թէ Երևանի ռուսախօս գեներալներին ու գնդապետներին, և Սեպուհ՝ իր բրիգադայով խորթ զաւակ դարձաւ զինուորական իշխանութեան համար: Վեհապետների այդ տրամադրութիւնը անդրադարձաւ ի հարկէ դէպի միւս սպայական շարքերը, և այդպիսով բոլոր ռուսապաշտ և ռուսախօս զինուորականները բաց թշնամալի դիրք բռնեցին թէ դէպի 4-րդ բրիգադան առհասարակ, և թէ դէպի նորա հրամանատար Սեպուհ՝ մասնաւորապէս:

Թէ՛ Զինուորական մինիստրութիւնը և թէ՛ Կարսի զօրքերի հրամանատար գեներալները ամէն տեսակի արգելքներ էին հարուցում այդ բրիգադայի կազմակերպչական աշխատանքների ընթացքում, և այն, որ կարելի և մատչելի էր միւս զօրամասերի համար՝ այդ անկարելի և արգելւում էր 4-րդ հետևակ բրիգադայի համար:

Կարսի ռուսախօս գեներալները նոյնիսկ հարկաւոր չը համարեցին վերադարձնելու հրամանատար Սեպուհի վիզիտը՝ նորան փոխ այցելութիւն տալու, որովհետև վերևից ներքև էին նայում նորա վերայ, և արհամարհալից «խմբա-

պետ» անուանում: Բայց և այնպէս այդ բրիգադան կազմակերպւում էր շատ յաջող, և օրեցոր ստանում էր խրոխտ և լուրջ ոյժի համբաւ:

Նորա հայ հրամանատարը դաստիարակում էր հայկական զօրամաս, և այդ ազդում, պետական պատկառանք էր առաջ բերում թուրք ազգաբնակութեան մէջ: Բացի այդ, հրամանատար Սեպուհ խիստ էր դէպի իր սպաները, այդ լրջ-ութիւնը անդրադառնում էր զինուորների շարքերը, և առաջ էր գալիս օրինակելի կարգապահութիւն և ստեղծւում մեծ ոյժ:

Այդ բոլորը սաստիկ դուր չէր գալիս «հայ գեներալներին և գնդապետներին», որոնց հետ Սեպուհ ստիպուած էր թարգմանի միջոցով խօսելու, և նորին գերազանցութիւնները տանել չէին կարողանում այդ համարձակ և պատուաւոր հայդուկին: Նորա յաջողութիւններում գեներալները մեղադրում էին նահանգապետին, իսկ միւս կողմից գտնում էին, որ Սեպուհն էլ ոյժ և թիկունք է նահանգապետի համար, և այդ երկուսը ներդշնակ՝ կարող են յաջող կերպով առաջ տանել նահանգի հանգիստ կեանքը, որ ի հարկէ ձեռնտու չէր այդ գեներալներին: Այդ ժամանակամիջոցում իմ և Սեպուհի յարաբերութիւնները մի կողմից, և Կարսի գեներալների միւս՝ սկսեցին օրեցօր բարդանալ: Մի պաշտօնական խօսակցութիւն Սեպուհի և գեներալ Փիրումովի միջև առիթ տուեց մեծ անախորժութիւնների այդ երկու զօրավարների միջև, և կոպիտ, անթոյլատրելի բնոյթ ստացաւ: Գեներալը ռուսերէն կոտրատելով՝ նայում էր ազգային հերոսին բարձրից, իսկ Սեպուհ հպարտ և ինքնաճանաչ՝ վերաբերւում էր ռուս գեներալին որպէս մի ողորմելի ոչնչութեան...

Այդ միջադէպը անցել էր փողոց, և գեներալի համար շատ աննպաստ տրամադրութիւն ստեղծել: Հաշուի առնելով բոլոր հանգամանքները, և նկատի ունենալով, որ այդ երկու զինուորականների օրեցօր բարդուող յարաբերութիւնները կարող են անդրադառնալ նահանգի ընդհանուր կացութեան վերայ՝ ես նոյն օրը ծածկագիր հեռագիր ուղարկեցի մինիստր նախագահին այդ անախորժ պատահարի և այդ երկու զօրավարների շատ սուր յարաբերութիւնների մասին, և միջնորդեցի անյապաղ միջոցներ ձեռք առնել: Կառավարութեան նախագահը յանձնարարել էր ի հարկէ Զօրաց մինիստրին՝ մի կերպ հարթել այդ անախորժութիւնները, բայց փոխանակ այդ յանձնարարութիւնը տալու մի հեղինակաւոր և կարող մարդու՝ Կարս ուղարկեցին, այդ զօրավարներին «հաշտեցնելու» համար դարձեալ մի ռուսախօս գեներալ... *(տեքստը խզուած է)*...պետական նշանակութիւնը և որ թիւրքահայութիւնը գերադասում է ծառայել այդ բրիգադայում՝ յուսալով, որ այդ զօրամասով նա կ՛անցնէ իր հայրենիքը, տաճկական Հայաստան:

Բայց իմ այդ միջնորդութիւնը ռուսախօս զօրաց մինիստր Արարատով բացառել էր, իսկ հայկական կառավարութիւնը անվճռաբեկ խոնարհւում էր այդ ռազմագէտների առաջ:

Երբ ստացուեց բրիգադայի Աղէքսանդրապոլ տեղափոխելու հրամանը՝ Արդահանի և Կաղզուանի քրդերը ինձ մօտ մի պատգամաւորութիւն էին ուղարկել միջնորդելու, որ հրամանատար Սեպուհ մնայ Կարսի նահանգում: Քրդերը առարկում էին որ թիւրքահայերի մեծամասնութիւնը Կարսի նահանգումն է, որ նրանք ենթարկւում են Սեպուհի հեղինակութեանը, և այդ բրիգադայի ներկայութիւնը այս վայրում՝ կ՛երաշխաւորէ թիւրքահայ բազմութեան լոյալ վերաբերմունքը դէպի երկրի այլազգիները: Բացի այդ, Արդահանի քրդութիւնը հարստահարուած գեներալ Յովսէփեանի բրիգադայով, որի մի մասը կանգնած էր Արդահանի գաւառում, միջնորդում էին տեղափոխել Սեպուհի զօրամասը այդ գաւառը: Եւ այդ քրդերը աւելացնում էին՝ Սեպուհ անուն ունի և տաճկական սահմաններում, և նորա բրիգադայի ներկայութիւնը այդ սահմանագծում սանձահար կ՛ազդի այդտեղի արկածախնդիրների վերայ, և կ՛ապահովէ մեր սահմանակից տարածութեան խաղաղութիւնը: Այդ մասին էլ ես տեղեկացրեցի կառավարութեանը, բայց զօրաց իշխանութիւնը արեց իր ասածը, և 4-րդ բրիգադան տեղափոխեցին Կարսի նահանգից:

Բայց 20 թուի չարաբախտ ամառը, թիւրքահայերը, որոնցից գեներալ Փիրումով և գեներալ Յովսէփեան կամաւորական խմբեր էին կազմում Օլթիի վերայ յարձակուելու համար, և *(տեքստը խզուած է)*…

Եւ անվերաբեր ազգութեան և կրօնի՝ թիւրքահայը ի ծայր ջղայնացած, փորձում է այսօր իր վրէժխնդիր դաշոյնը բոլոր պարանոցների վերայ լինի, այդ հայ, թուրք թէ քուրդ, միևնոյն է՝ արիւնը արիւնով է սրբագործւում…

Եւ ուսումնասիրելով այդ ոճրագործ տրամադրութիւնը, ուսումնասիրելով երկրի քրէական մթնոլորտը՝ մենք պէտք է հաշուի առնենք, գրում էի ես Երևան, ոչ միայն մասնաւոր դէպքերը և առանձին թալանը, մենք պէտք է պատկերացնենք մեզ այդ վերածին տեսիլի ամբողջ ուրուագիծը, նորա անցեալով, պատճառներով և ժամանակակից առիթներով…

Միակ և բնական ելքը այդ արտակարգ և դժուարին դրութիւնից՝ այդ թիւրքահայ գաղթականութեան ներգաղթն է: Եւ այն օրը՝ իմ խորին հաւատով, գրում էի ես կառավարութեանը, երբ կը բացուեն Տաճկական Հայաստանի արիւնոտ և աւետալից դռները՝ այն օրը կը բլի և տասնեակ տարիների մեծաքանակ և լճացած վրէժխնդիր տրամադրութիւնը: Իսկ մինչ այդ, ասում էի ես, պէտք են պետական և ոչ ադմինիստրատիւ ու դատաստանական միջոցներ՝ այդ սպառնալից տրամադրութիւնը իջեցնելու համար: Պէտք է հոգատար վերաբերմունք դէպի թիւրքահայերը, պէտք է պետական մաշտաբով զբաղեցնել այդ աշխատալից մասսաները ձրի հացի փոխարէն, որով լցւում են կողմնակի գրպանները միայն, պէտք են հասարակական աշխատանքներ, պէտք է անկախ վարձի աղբիւր ստեղծել ժողովրդի համար, և պէտք են պետական մեծ միջոցներ՝ այդ անտուն և անտեղ մասսաների դառնալից օրերը սփոփելու համար: Անցնելով այդ ընդհա-

նուր խորհրդածութիւններից մասնաւոր և կոնկրետ միջոցների՝ ես նորից շոշափեցի 4-րդ հետևակ բրիգադան Կարս տեղափոխելու խնդիրը: Սեպուհ՝ գրում էի ես մինիստր նախագահին և Ներքին գործերի մինիստրին, հեղինակաւոր է թիւրքահայերի մէջ, և նա կարողութիւն կ՛ունենայ սանձահարելու իր հայրենակցիներին: Տաճկահայերը, որպէս և քրդերը՝ շատ մեծ նշանակութիւն են տալիս թասիբ հասկացողութեանը, և այդ հասկացողութեան իմաստը կապուած է անուան, համարումի և դիրքի հետ: Այդ դիրքը, համարումը և անունը ունի նոցա հայրենակից Սեպուհը, և նորա իրաւակարգային պահանջը կը լինի թիւրքահայերի համար պատուի, նամուսի և թասիբի խնդիր: Բացի այդ,– աւելացնում էի ես,– թիւրքահայերը, որպէս սրտոտ և քրդաբնոյթ ժողովուրդ՝ ահ ու սարսափ են տարածում ոչ միայն տեղական այլազգիների վերայ, նոցանից վախենում և սարսափում են և Տաճկաստանում: Եւ տրամադրել այդ ոյժը մի կարող և հեղինակաւոր մարդու ի դէմս Սեպուհի՝ կը նշանակէ մեծ սպառնալիք ստեղծել տաճկական սահմանագլխում...

Այդ բոլոր միտումներով ես նորից ու նորից միջնորդում էի տեղափոխել Սեպուհին իր բրիգադայով Կարսի նահանգ, և երաշխաւորում էի շատ կարճ ժամանակում բազմապատկել նորա սուինները: Կարսի նահանգից 4-րդ բրիգադան տեղափոխուելուց յետոյ՝ ինչպէս որ այդ ես իւր ժամանակին զեկուցել էի կառավարութեանը, դասալիքութիւնը այդ բրիգադայում հասաւ մեծ չափերի, թիւրքահայերը փախչում էին Կարսի նահանգը: Բայց եթէ նոքա ուրախութեամբ ծառայում էին 4-րդ բրիգադայում՝ 2-րդ հետևակ բրիգադայից, որի հրամանատար էր գեներալ Յովսէփեան, նրանք փախչում էին, ու մենք այնտեղ խորթ և օտար ենք՝ ասում էր տաճկահայը:

Բայց իմ այդ զեկուցումից ոչ մի հետևանք չունեցաւ, ռուսասէր գեներալները լսել անգամ չէին ուզում: Սեպուհին նրանք խմբապետ էին անուանում, իսկ նորա բրիգադան՝ աւազակախումբ: Իսկ նահանգապետը կարծում էր, որ կամ պէտք էր լուծել այդ զօրաբանակը՝ կամ պէտք էր հաշուի առնել նորան: Ի դէպ մենք անբարոյականացնում էինք մեր ամբողջ զօրաբանակը, և երերում կառավարչական պատուանդանը: Բայց զինուորական իշխանութիւնը այդ օրերում, մեր պետութեան վերջի վեցամսեայ ընթացքում անվճռաբեկ արտօնութիւն էր ձեռք բերել բոլոր պետական խնդիրներում, և երկրի դիկտատոր Ռուբէն փաշան՝ այն ժամանակուայ զօրաց և ներքին գործոց մինիստրը, իր քմահաճ ձգտումների սանձերը թողած՝ արագընթաց և փրփրալից տանում էր թշուառ երկիրը դէպի խորխորատ:

XV

Ես կուզէի առանձնապես ծանրանալ քրդերի մասին իմ դիտողութիւնների վերայ, որովհետև քրդերը մեր 7 հնագոյն հարևաններն էին և մեր երկրի այն տարրը՝ որի հետ մենք միշտ հաշտ էինք և միշտ կապուած պատմական, կենցաղագրական և տնտեսական բազմաթիւ կապերով:

Դեռ իմ անցեալում, ես տարիների ընթացքում թէ՛ ի պաշտօնէ և թէ՛ մասնաւոր կրօնքում շփուել եմ քրդերի հետ մեր երկրի բոլոր անկիւններում: Քրդերը եղել են միշտ ընտանի հայկական գաւառներում, և եթէ թուրքերը ու հայերը միշտ կազմել են եթէ ոչ թշնամի՝ գէթ տարբեր շահերի և ձգտումների բանակներ, մրցել են իրար հետ՝ քրդերը յամենայն դէպս եղել են միշտ հայերի հետ, եղել են նոցա ազդեցութեան և հովանաւորութեան տակ: Կարսի նահանգը գերազանց քրդական երկիր է: Գրեթէ ամբողջ Արդահանի և ամբողջ Օլթիի գաւառները, Կաղզուանի գաւառի կէսից աւելին և Կարսի գաւառի մի մասը քրդերի բազմատեսակ ցեղեր են: Իսկ այդ վայրերից այն կողմը՝ դէպի տաճկական Հայաստան, տարածւում է դարձեալ քուրդ խիտ ազգաբնակութիւնը: Այդպիսով, հայկական այդ մեծ պլատօյում հայերն ու քրդերը կազմում են բնակչութեան այն մեծ զանգուածը՝ որի շահերի, ճաշակի և իղձերի իմաստը ամբողջովին ներդաշնակ է և կատարեալ տիրապետող այդ տարածութեան վերայ:

Ստանձնելով Կարսի նահանգապետի պաշտօնը՝ ես շատ ուրախ էի, որ ինձ նորից վիճակւում է քրդերի հետ ապրելու:

Դեռ իմ մանկութիւնից՝ ես իմ չորս կողմս լսել եմ քուրդ լեզուն: Մեր հովիւները քրդեր են եղել, ես շատ սիրում էի ... գիշերները Այրիջայի և Սինակի տարածութեամբ վրանների շուրջը լսել քուրդ բլուլը-սրինգը: Գարնանը չուել սարերը, և շատ անգամ նոցա հետ եայլի գնալ... Ուզում եմ ասել, որ և որպէս Կարսի նահանգապետ՝ ես անցնում էի մի շրջան, ուր դէմքերը, կեանքի պայմանները և ընդհանուր մթնոլորտը ինձ ոչ միայն ծանօթ՝ այլև ընտանի էին, և ես մեծ սիրով անցայ դէպի քրդերը և իմ պարտաւորութիւնները: Ինձ վիճակւում էր, որպէս հայկական նահանգապետ՝ շարունակելու քրդերի հետ այն բարեկամութիւնը, որ դարերի ընթացքում եղել է հայ ժողովրդի և քուրդ բազմաթիւ ցեղերի միջև, և իմ առաջ ծաւալւում էր հայ-քրդական դաշնակցութեան մեծ պատկեր, որ ունէր ոչ միայն ազգագրական, պատմական տնտեսական անցեալ՝ այլ ունէր և իր մեծ ապաքաղաքական իմաստը...

Մեր օրերի բոլոր քաղաքական և հասարակական հովերով հանդերձ, մեր բոլոր անձնական առաջադէմ գաղափարներով հանդերձ՝ ես ծնունդ էի իմ ժամանակի և մեր շրջապատի:

Ֆեոդալ աւատական հասկացողութիւնները դեռ տակաւին ունէին մեր ծորերում իրանց հմայքը և նշանակութիւնը: Եւ մեզանից ամէն մէկս, որպէս և ես ի

հարկէ, որոշ չափով, նոյնիսկ անգիտակցօրէն՝ համակուած էինք երկրի այդ ճաշակով, և այդ գունալից տրամադրութիւններով: Եւ այդ էր պատճառը, որ ինձ շատ զբաղեցնում և շոյում էր քրդերի համով և հոտով բնորոշումը, էլ աղասի՝ ժողովրդի առաջնորդ կոչումը, և ես մեծ պատիւ էի համարում հայկական նահանգապետ լինելու այդ պատուալից և առանձնայատուկ անուան տակ:

Եթէ Կովկասի հարիւր տարուայ տիրապետութեան ընթացքում կայսերական Ռուսաստանը շատ յետևողալից ճնշել է մեր ազգային տրամադրութիւնը, և հայերը միշտ եղել են ռուս քաղաքական հոգսերի իմաստը Կովկասում՝ քրդերն էլ կազմել են միշտ այն տարրը, ուր լիուլի արտայայտուել է ռուս չինովնիկի և ռուս սպայի կապտալից բռնութիւնը, և նորա շահագործող հակումները: Մեր լեռներում ու ձորերում չուող քուրդ ցեղերը, աշիրաթները՝ եղել են ռուս պաշ--տօնեաների համար վանդակապատ այն վայրենի անասունը, որոնց որսը նոցա համար եղել է և զուարճալի և շահաւետ: Ռուս մեծաւորի անխնայ և կոպիտ բռունցքը միշտ անպատասխանատու ջարդել է այդ ձորերում քրդերին, և այս հայհոյանքի և ծեծի առանցքում նա միշտ կթել է քրդին, և ինքը շահուել ու հարստացել: Քուրդը՝ ասում էին միշտ Ռուսաստանի տականք ռուս պաշտօնեաները, զինուորները, կօզակները, սպաները և նոյնիսկ դիպլօմաւոր ռուս պաշտ-օնեաները՝ մի անասուն է, որին պէտք է նախ ծեծես որպէս պատիւ նորա համար, համաձայնուես հիւրասիրուելու նորա մօտ...

Ուր են Ձեր լաւ կարպետները ու գործուածքը, ո՞ւր է Ձեր այնինչ յայտնի ձին՝ հարցրել եմ ես շատ անգամ անուանի քրդերի մօտ լինելուս: Էհ, աղայ ինչ ես հարցնում, բոլորը շան փայ եղան, բոլորը կերան այդ անկուշտ, ագահ ու անաղուհաց ռուսների չինովնիկները: Եւ երբ 18 թուին ռուսները թողեցին Կովկասի սահմանները՝ քրդերը ևս միւս ազգութիւնների հետ միասին, լցուած էին խորին ատելութեամբ դէպի այն իշխող բռնապետները, որ միայն հայհոյում, ջարդում և միայն թալանում էին երկիրը: Այդպէս էր Կարսի նահանգի քուրդ ազգաբնակութեան վերաբերմունքը դէպի կայսերական Ռուսաստանը՝ հայկական իշխանութեան նախօրեակում:

Կարսի նահանգի հայերը առհասարակ և Շիրակի ազգաբնակութիւնը մնասնաւորապէս՝ հարուստ մարդկանց հոչակ ունէին միշտ Կովկասում, և այդ հարստութիւնը խմորւում և մեծանում էր գլխաւորապէս անասնապահ զբաղմունքներում: Հայերի խաշնարած տնտեսութիւնը այդ նահանգում գտնուում էր բացառապէս քրդերի ձեռքում, և այստեղ անուն և հոչակ է ստանում Կարսի նահանգի մզդուրը, չօբանը:

Մեր չօդար, անասնապահ զբաղմունքներում՝ չօբանը այն մեծ վարպետն էր, որ տարիների ընթացքում իր ձեռքումն էր պահում մեր կաթնատնտեսական յաջողութիւնների համեղ գաղտնիքը: Հայերը հաւատում էին քրդերին իրանց ամբողջ հարստութիւնը, և քրդի շիտակութիւնը մեծ համարում, մեծ կշիռ ունէր

երկրում: Քրդերը իրանց հերթին իրանց բոլոր գործնական աշխատանքներում հաւատում էին միայն հայերին՝ և այդ մթնոլորտում առաջ էր գալիս հայ-քրդական բարեկամութիւնը: Կարսեցի բոլոր հայերը կապուած էին նահանգի բոլոր նշանաւոր քրդերի հետ բազմաթիւ գործնական, տնտեսական, առևտրական կապերով, իսկ նահանգի մնացած քրդութիւնը, երկրորդակի տնտեսութիւնը՝ գտնւում էր հայ գիւղացիութեան ձեռքում: Հայերը մտցնում էին գանձարան քրդերի հարկը, հայերը դատարաններում փաստաբաններ էին վարձում քրդերի համար, հայերը վարում էին քրդերի բոլոր դրսի, կառավարչական հասարակական բնոյթ ունեցող գործերը, իսկ քրդերը հարազատ և գերազանց հաւատարմալից՝ պահպանում էին հայերի ամբողջ հարստութիւնը, արածեցնում նոցա մեծաքանակ տաւարն ու ոչխարը: Եթէ ռուս պաշտօնեաները միշտ դաշնակցել են թուրքերի, թուրք ազնուականութեան հետ հայերի դէմ նոցա վարած կռւում՝ քրդերը այդ մեծ մրցման մէջ միշտ հայերի կողմնակիցներն էին: Թուրքերը առհասարակ, և թուրք ազնուականութիւնը մասնաւորապէս՝ միշտ անհամբերատար է եղել դէպի հայերի աշխատաւոր և ինքնուրոյն տրամադրութիւնը: Եւ որովհետև հայկական բնոյթի այդ գծերը նախամեծար դրութիւն էին ստեղծում հայ ժողովրդի համար կեանքի մրցալից ասպարեզում՝ հայկական այդ յաջողութիւնները օրգանապէս տանելի չէին թուրքերի համար:

Թուրքը միշտ շոյում էր երկրի ռուսներին, և միշտ առ երես՝ նոցա հեղինակութեան առաջ խոնարհւում: Իսկ հայերը կամ անվերաբեր էին դէպի այդ սուտ հեղինակութիւնը՝ կամ շատ անգամ բողոքող ռուս իշխանաւորի անիրաւութիւնների և բռնութեան դէմ: Եւ այստեղ շաղկապւում է ռուս-թուրքական համաձայնութիւնը՝ ուղղուած հայերի դէմ: Քրդերը չէին կարող անցնել այդ դաշնակցութեան կողմը, որովհետև թէ՛ թուրք անուանիները և թէ՛ ռուս պաշտօնեաները միշտ կեղեքել են քրդերին, և միշտ բռնացել են նոցա վերայ: Իսկ քրդերը հալածուած և թոյլ՝ միշտ տրամադրութիւն են ունեցել ենթարկուելու հայերի լուրջ և գործնական ազդեցութեանը, որպէս նոյնպէս հալածուած, ճնշուած՝ բայց իրանցից շատ բարձր կարող ժողովրդի:

Թէ որչա՞փ մեծ էր հայերի ազդեցութիւնը և նշանակութիւնը քրդերի մէջ Կարսի նահանգում՝ ես գիտեմ այդ ոչ տեսական և ընդհանուր դիտողութիւնների հիման վերայ: Դեռ հայկական իշխանութիւնից առաջ ես պաշտօնավարել եմ Կարսի նահանգում, և այսօր լուսաբանելով հայ քրդական յարաբերութիւնների շատ հետաքրքիր պատկերը՝ ես անցնում եմ այդ խնդրին ոչ տեսական գործելակերպով:

Նստած Կարսում, Կաղզուանում, Թախթում (Սարիղամիշ) և կամ որևէ Շիրակում՝ դուք խելօք, լուրջ և հաշուելից հայ առևտրականից և հայ գիւղացու միջոցաւ ոչ միայն կարող էիք ունենալ նահանգի քրդութեան բոլոր անցուդարձի տեղեկութիւնները՝ այլև այդ համեստ և կեանքի բովից անցած հայերի միջոցաւ

դուք կարող էիք լուծել քրդական վայրերում ամէն տեսակի խնդիրներ և ծրագիրներ:

Կարսի, Կաղզուանի բանիմաց առևտրականի և Շիրակի խելօք և կեանքի փորձանքներում բովուած գիւղացու համարումը նահանգի քրդութեան մէջ այնչափ մեծ և այնչափ հեղինակալից է, որ քրդերը անվճռաբեկ գնում էին այնտեղ, ուր ցոյց էին տալիս նոցա հայերը: Ու թէ տնտեսական և թէ հասարակական կառավարչական իմաստով՝ դուք կարող էիք անել քուրդ շրջաններում ամէն բան այդ հայերի միջոցաւ և այդ հայերի հեղինակութեամբ: Այդպէս էր քրդերի տրամադրութիւնը դէպի նահանգի հայերը:

18 թուին, սկզբում տաճկական տիրապետութեան ամիսները, իսկ թիւրքաց բանակի հեռանալուց յետոյ վերջիններին ձեռքով կազմակերպուած շուրան՝ Կարսի նահանգի քրդերի համար մեծ պատուհաս էր: Հայ և յոյն ազգաբնակութեան գաղթից յետոյ՝ քրդերը միակ կաթնատու կովերն էին այդ եկուորների համար: Թէ՛ տաճկաց հրամանատարութիւնը և թէ՛ եկուոր թուրքերը արհամարհալից էին նայում քրդերի վերայ, և միայն կեղեքում ու թալանում նոցա: Պէտք չէ ասել այդ երկու իշխանութիւնների հեռանալը չէր կարող քրդերի սրտովը չը լինէր, և երբ նահանգը անցաւ հայոց կառավարութեանը՝ քրդերի մէջ բնականաբար պէտք է վերականգնէր վաղեմի տրամադրութիւնը դէպի հայերը: Բայց մեր այդ մտերմական յարաբերութիւնները քրդերի հետ փչացան 17-18 թուին՝ ռուս պետական յեղաշրջումից յետոյ:

Երբ Կարսի նահանգի իշխանութիւնը անցաւ մի խումբ «ընտրուած» «յեղափոխական» պատահական անցորդների ձեռքը՝ որոնց գլխում կանգնած էր, որպէս Կարսի «յեղափոխական կօմիսար» վրացախօս ինչ որ Ձամօյեւ, նախօրօք զրահաւորուելով դաշնակցականի տիտղոսով՝ հայ-քրդական հին բարեկամութունը ոչ միայն փչացաւ, այլև ծայրահեղ սուր բնոյթ ստացաւ: Պատերազմի ընթացքում Ձամօյեւ որպէս փաստաբան՝ վարում էր Կարսում էժանագին դատաստանական վարչական գործեր, և միշտ պատկառալից կատարում էր Կարսի ոստիկանութեան յանձնարարութիւնները: Երբ 14 թուին Կարս էր գալիս Նիկոլայ II կայսրը՝ Ձամօյեւ ձեռք ու ոտք ընկած, միջնորդում էր ոստիկանապետի առաջ, որ թագաւորին ի դիմաց քաղաքի աղ ու հաց ներկայացնելու մեծ բախտը և պատիւը իրան յանձնուի (Կարսը դեռ քաղաքային վարչութիւն, քաղաքագլուխ չունէր): Նահանգապետը յարգեց ոստիկանապետի միջնորդութիւնը, և Ձամօյեւ հասաւ իր նպատակին աղ ու հացի ափսէյով նա էր կանգնած կայսեր գալու ժամանակ: Բայց երիտասարդի բաղձալից յուզմունքը այնչափ բարձր էր, որ նա չը կարողացաւ արտասանել իր պատրաստուած ամենահպատակ ճառը, խօսքը բերանումը մնաց՝ և կայսրը տեսնելով երիտասարդի շփոթը, ստիպուած էր ինքը մի երկու խօսք ասելու, փակելով դորանով անյարմար դրութիւնը: Բայց 17 թուին, յեղաշրջումից յետոյ՝ Ձամօյեւ յանկարծակի թունդ յեղափոխական դար-

ձաւ, և թունդ՝ առանց հայերէնի, դաշնակցական: Հանդէս գալով իր օրերի տարազով և իրան Կարսի նահանգի կօմիսար յայտարարելով՝ նա շրջապատում է իրան իր ընտրող «դաշնակցական ընկերներով»: Այդ «յեղափոխականները» դաշնակցութեան պատասխանատու զրահի տակ՝ անցան քրդական վայրերը, և աջ ու ձախ սկսեցին թալանել և կեղեքել քրդերին: Ստեղծուեց մի զարհուրելի մթնոլորտ: Կարսի և առհասարակ 14 թուի սահմանների պաշտպանութեան մասին խօսք չէր կարող լինել: Բոլորը բռնուած էին ժամանակի տենդով, բոլորը խօսում էին, բոլորը ճառում, ծափահարում՝ և այդ մեծ աղմուկի առանցքում «ընդունակ յեղափոխականները» անվրէպ տանում, թալանում էին: Իսկ երբ 18 թուին հայերը որպէս գլուխ գործոց, Կարսի նահանգում իրանց կուտակած «յեղափոխական աշխատանքների» ստիպուած էին փախչելու՝ մեր «անձնուրաց յեղափոխական տղերքը» այստեղ և այնտեղ սրի քաշեցին հարիւրաւոր քրդեր, և ապա փախան...

Այդպէս էր Կարսի նահանգի վերջի տպաւորութիւները մեզանից:

Բայց և այնպէս, քրդերը շատ լաւ գիտէին, որ պատահական և անցորդ Զամօյեւ և Co հայ ժողովուրդ չէ, որ այդ արկածախնդիրները այն մարդիկը չեն՝ որոնց հետ քրդերը դարաւոր բարեկամներ էին: Եւ երբ 19 թուին գնացքները իրար յետևից բերում էին Կարսի նահանգը վերադարձող հայութիւնը՝ քրդերը մեծ սիրով հանդիպում էին այն մարդկանց, որոնց հաւատում էին և որոնց հետ երկար տարիների ընթացքում զարգացնում էին իրանց տնտեսութիւնը: Որպէս նահանգապետ՝ ես շտապում էի, որ օր առաջ վերադառնան Կարսի անուանի առևտրականները, արհեստաւոր դասակարգը և գիւղացիութիւնը: Ես գտնում էի, որ երկրի իրաւակարգի ուղիները կը հարթեն այդ դրական և լուրջ ոյժերը, և որ մեր իշխանութիւնը յենուելով այդ ժողովրդական և հեղինակաւոր մարդկանց վերայ՝ կարող կը լինի նպաստաւոր պայմաններում կազմակերպել կառավարչական ապարատը:

Իմ պաշտօնական պարտաւորութիւնների ընթացքում ես երբէք անջատ չեմ եղել երկրի այդ դրական և փորձուած ոյժերից: Ես սիրել եմ խորհրդակցել այդ մարդկանց հետ գաւառի բազմատեսակ հարցերի մասին, օգտուել նոցա ամբարուած դիտողութիւններից ու փորձեց, դիմել նոցա միջնորդութեանը կեանքի այս այն դիպուածի դժուարին, անախորժ թիւրիմացութիւնը հարթելու համար, և ես միշտ մեծ յաջողութիւն էի գտնում իմ այդ գործելակերպում: Եւ ես չէի կարող չը նկատել, որ իմ կառավարչական այդ սիստեմը երկրի սրտովն էր: Ժողովրդի աչքում այդ դրութեան հեղինակութիւնը ընդգծելու համար՝ ես հարկաւոր էի համարում հրապարակով ի ցոյց երկրի մեծարել և ուշադիր լինել այն լուրջ խելօք և ծանր վաճառականին, արհեստաւորին և ռանչպարին՝ որոնք վայելում էին երկրի համակրանքը և վստահութիւնը: Եւ իմ քաղաքականութեան այդ հաշիւներում ես երբէք չէի սխալւում, իմ կառավարչական գործելակերպը ծաւալւում և ժո-

ղովրդականութիւն էր ստանում, և ես տեսնում էի թէ ինչպէ՞ս գնալով այդ ուղութեամբ՝ ես իմ յետևիցն եմ տանում այդ բազմազեղուն բազմացեղ երկիրը:

Եւ տոգորուած այդ համոզմունքներով, հաւատալով որ միայն այդպէս կարելի է կառավարել երկիրը, և այդ շրջափակում ստեղծել ցանկալի իրաւակարգը՝ ես 19 թուին անցայ Կարսի հայկական նահանգապետի պարտաւորութիւններին:

Կառավարութիւնը միանգամայն հաւանութիւն էր տուել իմ այդ կառավարչական սիստեմին, և ես սրտի մեծ ուրախութեամբ դիտում էի, թէ ինչպէս փոքր առ փոքր վերականգնում են երկրի հին բարեկամութիւնը հայերի և քրդերի միջև: Սկզբում ես յատուկ մարդիկ էի ուղարկում քուրդ վայրերը՝ նոցա մեծամեծներին քաղաք բերելու այս և այն պատրուակով, և թէ առևտրականներին ու թէ գիւղացիներին՝ ինքս էի աջակցութիւն առաջարկում վերականգնելու քրդերի հետ հին հաշիւները, հին դրացիութիւնը: Իմ այդ կառավարչական միտումները երևի առիթ տուեցին Երևանում ստեղծելու մի յատուկ մարմին քրդերի պէտքերը հոգալու համար, նոցա համար յատուկ դպրոցներ, հիւանդանոց, դեղատուն, սպառողական խանութ հիմնելու համար: Այդ գաղափարով տարուեց և նորանով զբաղուելու մեծ ցանկութիւն ունէր երիտասարդ իրաւաբան Պարոյր Լևոնեան, և քուրդ լեզուին և կենցաղին լաւ ծանօթ ... համեստ բանասէր Լազոն, բայց և այս խնդրում մենք կանգ առանք դարձեալ միևնոյն խոչնդոտի առաջ՝ կառավարութիւնը միջոցներ, փող չունէր: Մինչդեռ այդ քրդական կոմիտէի լուրը տարածուել էր քուրդ վայրերում, և քրդերը մեծ հետաքրքրութեամբ սպասում էին այդ յատուկ իրանց համար գալիք բարիքները:

Կառավարութեան այդ գործնական և դրական քայլերը գալիս էին յիշեցնելու քրդերին, լուրջ և գործնական հայ առևտրականին ու գիւղացուն՝ որոնց հետ նա միշտ վարել է իր տնտեսութիւնը, և քրդերը չէին կարող ի հարկէ չը համակուել յուսով և հաւատաով դէպի հայկական կառավարութիւնը: Այդ միջոցում քուրդ այս այն վայրում՝ ես արծարծեցի քրդերից հեծելազօր կազմակերպելու ծրագիրը, և պատկերացնելով քրդերին այդ զօրամասերի գունալից տարազը՝ մեծ տրամադրութիւն ստեղծեցի նոցա մէջ: Բացի այդ բոլորից՝ տեսնելով, որ քրդերը ամէն կերպ տրամադիր են մերձենալու մեզ տարուելով կեանքի շուքով և իշխանալից հմայքով՝ ես ազդեցիկ քրդերին պաշտօններ տուեցի, մի քանիսներին զէնք կրելու իրաւունք, և շոշափեցի քրդերի ասպետալից տրամադրութիւնը: Այդպիսով օրեցօր աճում և ծաւալւում էր հայ-քրդական բարեկամութիւնը՝ թուլացնելով թուրքերի ձգտումները դէպի Բագու, Մուսաֆատ, ու Տաճկաստան...:

Բացի այդ բոլորից՝ մենք պատրաստւում էինք մի յատուկ քուրդ գնացք ուղարկելու Երևան: Ես պէտք է ինքս առաջնորդէի այդ քրդական մեծ պատգամաւորութիւնը, պէտք է ներկայացնէի քուրդ բազմաթիւ ցեղերի, աշիրաթների և թայֆաների ներկայացուցիչներին կառավարութեանը: Ծրագրել էինք գնացքի հանդիսաւոր ընդունելութիւնը Աղէքսանդրապօլի վագզալում, մեծ զօրահանդէս

Երևանում և հանդիսաւոր ընդունելութիւն քուրդ ներկայացուցիչների՝ պարլամենտի դահլիճում: Կառավարութեան նախագահը, շրջապատուած մինիստրներով ու գեներալներով՝ պէտք է յայտնէր քրդերին կառավարութեան վստահութիւնը, նոցա անուանիներին պէտք է սպայական աստիճաններ, ուսադիրներ տար: Ապա ի պատիւ այդ քրդերի՝ հանդիսաւոր ճաշկերոյթ կը լինէր, և քրդերը մեծ շքով պէտք է մեկնէին Երևանից՝ տանելով իրանց լեռները հայկական իշխանութեան հմայքը և առատութեան համբաւը:

Ես կազմել էի արդէն պատգամաւորների անուանացուցակը, և քրդերը մեծ իրարանցման մէջ էին՝ նոքա նորոգում էին իրանց զգեստները, պատրաստում արծաթապատ թրերը, խտացնում գունաւոր թաշկինակներով իրանց քոլոզգլխարկները, և երազում այն պատիւների մասին, որ սպասում էր նոցա հայկական իշխանութեան կողմից: Բայց բախտը առհասարակ չէր շոյում հայկական երազները, և մեզ վիճակուած չէր տեսնելու այդ գունալից և սուվերէն պատկերը: 20 թուի Ապրիլի վերջերում, արդէն այդ ծրագրի իրագործման նախօրեակում՝ յանկարծակի ամպեց հայկական երկինքը, և երկրի այս և այն կողմերում բռնկուեց ռուս բոլշեւիկ սպառնալիքը: Մի ակնթարթում կանգ առաւ երկրի վերածին և շինարար տրամադրութիւնը: Հարուածը դարանից էր՝ և շատ բնորոշ մեր օրերի և բարքերի տեսակին... Նա խմորւում և պայթում էր մեր ազգային տրամադրութիւնների ցայտուն սրտում՝ Աղէքսանդրապոլում: Գիւմրին՝ Աղէքսանդրապոլը, մի մեծ հռչակ է վայելել մեր ազգային վերապրումներում: Աղէքսանդրապոլը բուն հայկական քաղաք էր միշտ, և հայկական շօվինիզմի վայր էր համարւում: Աղէքսանդրապոլը տուել է հայութեան ոչ միայն շատ ընդունակ մարդիկ վաճառականութեան, արհեստի, գիտութեան և հասարակական ասպարեզներում՝ այլև շատ սրտոտ ու քաջ մարդիկ: Աղէքսանդրապոլցի հայրենասէր ազգասէրը յայտնի էր մեր երկրում, և շրջակայ թուրքերը միշտ դողացել և պատկառել են Աղէքսանդրապոլցու առաջ: Եւ այդ ցայտուն հայկական վայրին՝ անհասանելի կամօքն պատմութեան, վիճակ է ընկել առաջի հակազգային շարժման կենտրոն լինելու: Բայց այդ մասին ի միջի այլոց միայն, դառնանք քրդերի մասին մեր ասելիքներին: Հայ հասարակութիւնը ի դէմս հայկական կառավարութեան կազմակերպչական շրջանի՝ չը տուեց իր դրական և բանիմաց ոյժերը: Կարսի նահանգը լցուեց բախտախնդիրներով միայն, և քրդերը դարձան նոցա կեղեքումների օբեկտը: Նահանգի զինուորական իշխանութիւնը ի դէմս իր բազմաթիւ ռուս և ռուսախօս սպաների՝ հայկական իղձերի հետ ոչ մի առնչութիւն չունեցող այդ անցորդների, մեծաչափ սկսեցին բռնանալ քրդերի վերայ, կեղեքել և թալանել նոցա: Հայ գեներալները առարկում էին, որ նահանգում դաւադրութիւն է խմորւում: Թողած իրանց պարտաւորութիւնները՝ նրանք զբաղուեցին երկրի ներքին քաղաքական խնդիրներով: Նրանք սիստեմատիկ հալածանք կազ-

մակերպեցին այդ քրդերի դէմ, և այդ քաղաքական աղմուկի առանցքում աւելի ճարպիկները՝ կթում և թալանում էին այդ քրդերին:

Որոշ չափով քրդերը գիտէին ի հարկէ, որ այդ հրապարակում անզուգօրէն փայլող գեներալ Յովսէփեան և միւսները՝ ոչ հայ ժողովուրդն և ոչ էլ նորա կառավարութիւնն էին: Բայց և այնպէս այդ Ջունուքցիները, Ջալալցիք, Մամկցիք և միւս բազմաթիւ քուրդ ցեղերը տեսնում էին, որ թէ կառավարութիւնը և թէ ժողովուրդը խաղալիք են այդ «քաջ» գեներալների և գնդապետների ձեռքում, քրդերը տեսնում էին, որ հայ գաւառը, հայ վաճառականը, արհեստաւորը և հայ գիւղացին մի կողմից, և հայ գեներալ-սպաները միւս՝ տրամագծօրէն տարբեր, մէկը միւսին բացառող կողմեր էին: Իսկ կառավարութիւնը տարուած այդ տարուբերումներով modous wiwendi որոնելով՝ գնում էր ոչ ժողովրդի առջևից: Երերուելով իր զինուորականների կարծեցեալ հեղինակութեան առաջ՝ կառավարութիւնը չը կարողացաւ սանձահարել այդ գիշատիչ ախորժակները:

Եւ այդ թէ՛ զինուորական և թէ՛ քաղաքացիական անիշխանութեան մթնոլորտում՝ իրաւակարգը պէտք է ընկներ: Եւ քրդերը դարձան այն համեղ որսը՝ որի յետևից ընկան մեր թէ քաղաքացիական և թէ զինուորական հմտալից վարպետները: Փախչելով մեր այդ եռանդոտ որսորդներից դէպի երկրի ձորերը և լեռները՝ մեր բռնութիւններից ահաբեկուած քրդերը տարածեցին այդ հալածանքների մասին պատմուածքները և դէպի Տաճկաստան: Երբ խմորուում էր տաճկաց մեծ ազգային ժողովը և թիւրքերը ժողովներ ունեցան այդ առիթով Բիթլիս և Էրզրում՝ մեր հայ-քրդական այդ շատ սուր յարաբերութիւնները այնտեղ հաշուի առնուեցին: Եւ հազիւ թէ այսօր պէտք է ասել, որ եթէ Քեազիմ Կարաբեկիր փաշա սկսեց իր 20 թուի արշաւը Հայաստանի վերայ շատ և շատ փոքր բանակով՝ 4-5 հազար միայն կանոնաւոր զօրքով, նա մեծ չափով յենւում էր իր անելիքներում իր համար այդ նպաստաւոր մեր երկրում դրութեան վերայ:

Մենք ունէինք բոլոր տուեալները՝ Կարսի նահանգը մեծ պատնէշ դարձնելու թիւրքական յարձակումների դէմ: Կարսի նահանգը աւելի քան կէսով բնակեցրած էր քրդերով, որ այնպէս տրամադիր էին մերձենալու մեզ: Իսկ մենք փոխանակ կոփելու այդ տրամադրութիւնը և ի դէմս այն ժողովրդի, որ միշտ տիրել և հմայել է այդ լեռնոտ երկիրը, փոխանակ սպառնալից բռունցք ստեղծելու մեր սահմաններում՝ մենք յետ մղեցինք դէպի մեր հովանին նետուող այդ քրդերին:

Եւ մենք առատօրէն հնձեցինք մեր ցանածը... Այդպէս էին հայ-քրդական յարաբերութիւնները մեզ զբաղեցնող ժամանակամիջոցում: Քրդերը Կարսի նահանգի այն հզօր տարրն էին, որին մենք կարող էինք օգտագործել մեր պետական գործելակերպում: Քրդերը ընտանի էին մեզ, կապուած մեզ հետ դարերի ընթացքում բազմաթիւ կապերով, և իրանց բնոյթով ու հոգեբանութեամբ շատ մօտ էին մեզ:

Կարսի նահանգի քուրդ ազգաբնակութիւնը իր ճնշող բազմութեամբ և բարեկեցիկ տնտեսութեամբ՝ միշտ հաշիւ է առնուել տաճկաց և թէ ռուս կառավարութիւններից:

Թուրքերը և թիւրքերը այստեղ փոքրամասնութիւն են: Պատմութեան ընթացքում նոքա կազմել են քրդերի հակադիր կողմը, ճնշել են քրդերին և միշտ ձգտել են որպէս ուղղափառ մահմեդականներ՝ գերիշխելու երկրում և իրանց ենթարկելու հարուստ քուրդ ազգաբնակութիւնը:

Եթէ թուրքերը և թիւրքերը եղել են միշտ գերազանց մոլեռանդ մահմեդականներ, եթէ մահմեդականների այդ ֆանատիկ զանգուածը այս և այն չափով զբաղուել է միշտ քաղաքական-պետական խնդիրներով՝ քրդերը ոչ ծայրահեղ կրօնաւոր էին և ոչ էլ նամանաւանդ քաղաքականութեան մասին երազողներ: Քրդերը՝ ազգակից հայերին աւելի դրական և լուրջ խառնուածքին, և նոցա բնոյթում չը կար թուրք-թիւրքական նենգութիւնը, խորամանկութիւն և խառնակիչ հակումները, այդ բոլոր պատճառներով քրդերը միշտ մերձեցել են հայերին՝ և միշտ թուրք-թիւրքական ոյժերի հակադիր կողմն են կազմել: Կարսի նահանգում մեր կառավարչական գործելակերպում մենք չէինք կարող անտես առնել այդ առանձնայատուկ գծերի և տրամադրութիւնների իմաստը: Շրջապատուած բազմատեսակ բացասական պայմաններով՝ ի նկատի առնելով Տաճկաստանի, Բագուի և Մուսաֆաթի ձկտումները քայքայել Հայաստանը, և այդ տարածութեան վերայ նորից վերականգնել տաճկաց տիրապետութիւնը՝ հաշուի առնելով այն աւելի քան թոյլ ոյժերը և միջոցները, որ ունէր այդ մեծ պատմական պրոցեսում Հայկական կառավարութիւնը՝ մենք պէտք է մեծ ուշադրութեամբ ծանրանայինք հայ-քրդական բարեկամութեան վերայ, և մեր քաղաքական միջոցների մէջ այդ դաշնակցութիւնը հզօրագոյնը դարձնէինք: Հայ-քրդական այդ դաշնակցութիւնը Կարսի նահանգում կ՛ունենար մօտ 400 հազար կուռ ազգաբնակութիւն, որի առաջ նահանգի մի քանի տասնեակ հազար թուրքերը և թիւրքերը կը լինէին մի թիւ, որ իրերի ընթացքում ոչ խորհրդակցային և ոչ վճռական նշանակութիւն ունենալ չէր կարող:

Բայց դառնալով այդ նշանակութիւնից դէպի հակառակ կողմը՝ մենք կը գտնէինք, որ Երևանի նահանգում, Արարատի, Մասիսի ստորոտներում և Արաքսի հովտում սփռուած բազմաթիւ քուրդ ցեղերը կազմում են Կարսի նահանգի քուրդ զանգուածի մի մասը: Այդ բոլոր քրդերն էլ իւր ժամանակին միշտ բարեկամ են եղել հայերի հետ, միշտ մերձեցել են մեզ: Այդ քրդերն էլ նոյնպէս միշտ մեր չօբան-մզդուրներ են եղել, և Երևանի նահանգի ամբողջ քուրդ ազգաբնակութիւնը միանգամայն ենթարկուել է հայերի ազդեցութեանը: Երբ դեռ 77 թուի պատերազմի նախօրեակում, ռուս դատաստանական ռեֆորմայի օրերում բռնկուեց Կովկասի հողային խնդիրը՝ և հայ թուրքական մրցող յարաբերութիւնները գունաւորուեցին շատ ցայտուն կերպով, քրդերը անցան մեր կողմը:

Այստեղ տեղը չէ առաջ բերելու այդ մերձեցման պատմութեան մանրամասնութիւնները, կ՛ասենք միայն, որ քրդերի այդ համակրալից դէպի մեզ տրամադրութիւնը գնում էր և Արաքսի հոսանքով: Եւ եթէ մենք վարպետօրէն օգտագործէինք քրդերի այդ հակումները՝ մեր այդ դաշնակցութեանը անպայման կը ձայնակցէր և թիւրքաց Հայաստանի քրդութիւնը: Այդպիսով Արաքսից և Արագածից սկսած՝ Կարսի նահանգի վերայով, ուր կը լինէր այդ համաձայնութեան իմաստը, մենք կը շաղկապէինք մեզ հետ Ալաշկերտի և Վանի քրդալից հովիտը, և համարձակ կարող էինք թելադրող լինել և դէպի Կարին: Մեր տրամադրութեան տակ կը լինէր մի քանի հարիւր հազար քրդութիւնը, և մեզանից կախուած կը լինէր ձևել և չափել այդ զանգուածը՝ պետական և հրամանալից ընթացք տալով այդ բնական և հարազատ դաշնակցութեանը: Այդ բոլոր միտումներով՝ ես փորձեր արեցի կապ հաստատել այդ ուղղութեամբ տաճկական Հայաստանի մի քանի նշանաւոր աշիրաթների հետ, մարդիկ ուղարկեցի այդ յանձնահարարութիւններով դէպի Ալաշկերտ, Վան և Էրզրում, և փոխանակուեցի այդ իմաստով մի քանի քուրդ նշանաւոր ցեղապետների հետ հաւաստիացումներով: Այդ մասին ես իւր ժամանակին իրազեկ եմ արել ներքին գործերի մինիստրին: Բայց պէտք չը կայ ասելու, որ այդ բարդ և մեծ գործը պահանջում էր մեծ միջոցներ և բազմաթիւ ինտելիգենտ ոյժեր, որ չունէր մեր կառավարութիւնը:

Անցնելով պետական գաղափարների իրագործմանը՝ մենք չէինք կարողանում անջատուել մեր այն մասնակի միջոցներից, որոնցով իրականացան մեր ազգային իղձերը: Մենք կարծում էինք, որ փոքր գումարներով, հատուկենտ մարդով և տնային միջոցներով՝ մենք կարող ենք և պետական աշտարակը կերտել: Եւ մենք ի հարկէ չարաչար սխալուեցինք, և նոյնչափ տուժեցինք:

Երբ 20 թուի գարնանը Էրզրում գումարուեց թիւրքաց մեծ ազգային ժողովը, որ գալիս էր առաջնորդելու Տաճկաստանի նորագոյն քաղաքականութիւնը՝ որոշուեց Սեւրի դաշնագրի առիթով բանակցութիւնների մէջ մտնել Հայաստանի կառավարութեան հետ, հայկական խնդիրը անջատ Սեւրից, համաձայնալից լուծելու համար: Եւ ի կատարումն այդ արձանագրութեան՝ Անգորաի արտաքին գործերի մինիստրը դիմեց մեր կառավարութեանը, այդ մասին մի գրութեամբ: Պատասխան չը ստանալով իր այդ դիմումին՝ թիւրքաց դիւանագէտը կրկնեց իր նօտան, որով Անգորան առաջարկում էր համաձայնութեան գալ Հայաստանի սահմանների մասին, և անջատ մեծ պետութիւնների որոշումից լուծել հայկական հնագոյն խնդիրը: Թէ ի՞նչ միտումներով էր ձգձգում Երևանում այդ նօտայի պատասխանը՝ չը գիտեմ, գիտեմ միայն, որ այդ երկու նօտային պատասխանեց ի դիմաց կառավարութեան՝ մինիստրի մի ինչ որ քարտուղար: Շատ հետաքրքիր է, որ կառավարութեան պատասխանը այդ կարևորագոյն հարցի մասին ուղարկւում է Էրզրում՝ ոչ Կարսի նահանգապետի միջոցով, որ թէ իր կապե-

րով երկրում և տաճկաց սահմաններում և թէ արծարծուող խնդրի իմաստով աւելի ձեռնհաս և նպատակայարմար պէտք է համարուէր:

Այդ յանձնարարութիւնը ստանում են Կարսի մեր ռուսախօս գեներալները, որոնք իրանց հերթին այդ հաւատարմութիւնը տալիս են Սարիղամիշի ոչ մի բառ հայերէն չիմացող մի գնդապետի: Սարիղամիշի այդ ռուսախօս սպաները, որպէս իրանց օրերի հմուտ դիւանագէտներ՝ իրանց կողմից ինչ որ բաներ են գրում թիւրքերեն մեր սահմանի այն կողմը, և ստացւում է մի ծաղրալից տեսիլ՝ եթէ միայն նա այդչափ դառնալից չը լինէր հայ ժողովրդի համար: Գէթ այնպիսի տպաւորութիւն էր ստացւում, որ պետական և քաղաքական այն մեծ խնդիրը, որ պարփակում էր իր մէջ այնքան յուզմունք և այնչափ արիւն, այն խնդիրը, որ հայկական դատ է կոչուել սերունդների բերանում՝ զբաղմունք էր դարձել մի ինչ որ քարտուղարի և կիսագրագէտ ռուսախօս գնդապետի և տիրացու սպաների ձեռքում: Եւ նոյնիսկ այսօր, երկու տարի այդ դառնալից օրերից յետոյ երբ ես գրում եմ այս տողերը՝ ինձ այրում է այդ պատկերի ամօթը, ի՞նչ կարծիք կարող էին ունենալ Անգորայում մեր մասին, երբ մեր նուիրական խնդրի, մեր ճակատագրի լուծումը գալիս էին տալու ինչ որ փոքրիկ, շատ փոքրի մարդիկ՝ արատաւորելով հայկական մեծահոչակ խելքը և մեր մեծ համարումը օտարների աչքում... Եւ երբ այդ քարտուղարն ու Սարիղամիշի ռուսախօս սպաները վճռում էին մեր լինել կամ չը լինելու խնդիրը՝ գէթ Կարսի նահանգապետը, որ գտնւում էր քաղաքական բորբոքումի կենտրոնում, և որին յամենայնդէպս աւելի տեսանելի էին իրերը, ոչնչից ոչինչ չը գիտէր մեր «դիւանագիտական քայլերի» մասին: Եւ այդպէս, ինչպէս տեսնում էք՝ գեներալ Փիրումովին և միւս ռուսադաւաններին վիճակւում է ոչ միայն դէպի փախուստ առաջնորդել հայկական բանակը քեամալիստների հետ պատերազմում, բայց և նախապէս մասնակցել է Հայաստանի սահմանների մասին բանակցելու և այդ քեամալիստների հետ...

Եւ մարգարէ չը պէտք էր լինել գուշակելու՝ թէ ի՞նչ հետևանք պէտք է ունենային մեր հմտալից դիւանագիտական այդ փորձերը: Հեղինակալից փոխանակուելով Անգորայի հետ հարց ու պատասխաններով հայկական արևելեան հարցի մասին՝ Սարիղամիշի մեր սպաները զուգնթաց այդ «դիւանագիտական քայլերի հետ» աւելի մեծ եռանդով վերսկսեցին երկրի ներսում իրանց «պահպանողական» քաղաքականութիւնը: Տեսնելով, որ ինքը մասնակցում է կառավարութեան նոյնիսկ դիւանագիտական գաղտնիքներին՝ մեր ռուսախօս հրամանատարութիւնը շատ բարձր տրամադրութեամբ այնուհետև հանդէս է գալիս իր կեղեքիչ և բռնալից վերաբերմունքով դէպի Կարսի նահանգի քրդերը: Այդ գեներալներն ու գլխապետ-կապիտանները գիտէին, որ քրդերին հովանաւորում և պաշտպանում է նահանգապետը: Եւ ի ապացոյց քաղաքացիական իշխանութեան այդ «սխալների»՝ նրանք այս և այն «ըմբոստ» և «դաւաճան» յայտարարութիւնների տակ սկսեցին ամէնուրէք հալածել ջարդել ու թալանել քրդերին:

Քրդերի ալեկոծ անբաւականութիւնը բուռն կերպով անդրադառնում է դէպի Տաճկաստան, և Էրզրումի համագումարի մթնոլորտում՝ շատ նպաստաւոր դրութիւն ստեղծում:

Օգոստոսին Կեազիմ Կարաբեկիր փաշան միայն 4-5 հազար կանոնաւոր զօրքով, շրջապատուած անբաւական մեզանից և մեզանից կեղեքուած և թալանուած մեր քրդերի մեծ բազմութեամբ՝ սկսում է իր արշաւը դէպի Կարս: Հմուտ դիւանագէտ գեներալներն ու սպաները ռազմաբեմը օտար և խորթ հրապարակ համարելով իրանց ընդունակութիւնների համար՝ երկչոտ և առանց յետ նայելու փախուստ են տալիս բոլոր մեր անզուգական դիրքերից, և երեք ամսից յետոյ հայկական երազների վայրը նորից կիսւում է երկու հնագոյն մասերի՝ Արփաչայի վերայ ծածանւում է կիսալուսինը:

Բայց և այնպէս, այսօր այդ բոլոր յուզմունքներից և դառնութիւններից յետոյ՝ ես մեծ բաւականութեամբ կ՛ուզէի արձանագրել այստեղ հետևեալը:

Կարսի նահանգի քրդերը նորից ընկան թիւրք բռնութիւնների տակ, և նոցա համար վերացուեց արդարադատութեան և օրինականութեան հեռանկարն անգամ: Այդ քրդերը ցրուած Արփաչայի հոսանքով՝ երազիկ են ի հարկէ և Երևանի նահանգի նոր ռուս իշխանութեան, բոլշեւիկների մասին: Կարսից եկուորները «կուսակցութիւններից» շատ հեռու և չէզոք մարդիկ՝ հասարակ գիւղացիները, անցեալ օրը պատմում էին Թիֆլիզում Կարսի նահանգի քրդերի տրամադրութեան մասին, մենք կ՛ուզենք՝ այստեղ ու այնտեղ մրմնջում են քրդերը, միայն Խատիսովի (հայկական) կառավարութիւնը... քրդերը զգում և հասկանում են, որ նոցա կեղեքել և թալանել է ոչ հայկական կառավարութիւնը: Քրդերի գիւղերից բուրդ փախցնող Կարսի քաղաքագլուխ Նոհրատեանը և գեներալ Փիրումով իւրայինների հետ իրանց «դաշնակցական» անուանելով՝ ոչ կառավարութիւն էին և ոչ նուիրական դաշնակցութիւն: Քրդերը հասկանում են, որ այդ ցեցերը երկրի և ժամանակի պատուհասն էին միայն, իսկ բուն հայ ժողովուրդը եղել է միշտ քրդերի հետ և միշտ կարեկից և հոգացող նոցա: Եւ եթէ մեզ վիճակուած է նորից տնօրինելու մեր բախտը և նորից և նորից մեր հինաւուրց թոնիրը վառելու՝ մենք դարձեալ կը լինենք քրդերի հետ: Նոցա հետ միասին, որպէս բնական և հարազատ համաձայնութիւն՝ հայ-քրդական դաշնակցութիւնը հանդէս կը գայ ապագայ հայկական պետական ասպարէզում: Եւ հաշուի առնելով անցեալի սխալներն ու դառնալից թիւրիմացութիւնները՝ մենք շատ բարձր տրամադրութեամբ դէպի մեր կոչումը, կը դարբնենք քրդերի հետ միասին մեր ընդհանուր հայրենիքի ապագայ քաղաքական ապագան:

Այդպէս են մեր դիտողութիւնները հայ-քրդական համաձայնութիւնների մասին: Այդպէս է այդ համաձայնութեան իմաստը անցեալի տուեալներում և կեանքի գունալից պատկերներում: Ինչպէս արդէն յիշել ենք՝ քրդերը կազմում են Կարսի նահանգի ազգաբնակութեան մեծագոյն մասը: Թէ թիւրքաց կառավա-

րութիւնը և թէ 77 թուից յետոյ ռուս իշխանութիւնը ոչ միայն հաշուի են առել նահանգի այդ մեծամասնութիւնը՝ այլև յենուել են քրդերի վերայ իրանց քաղաքական գործելակերպում:

Բացի դորանից, Կարսի նահանգի սահմաններից դէպի Տաճկական Հայաստան սկսւում է ծով քրդութիւնը, բազմաթիւ ցեղեր ու աշիրաթներ՝ ուր Կարսի նահանգը ունի բազմաթիւ ազգականներ ու կապեր: Բայց սահմանի այս և այն կողմը սփռուած քրդութիւնը կապուած է իրար հետ և ցեղային ու աշիրեթ իմաստով: Եւ այդպիսով այդ լայնածաւալ լեռները կարծես մի ամբողջութիւն են կազմում, ուր կրօն-հաւատալիքները, սովորութիւնները և առանձնակի կենցաղի ընդհանուր գծերը շաղկապում են իրար հետ դարերի քաջազնական շրջանի այդ ցայտուն մնացորդներին:

Իսկ եթէ այդ բոլորին դուք աւելացնելու լինէք այն խաւարը, որ տիրում էր այդ լեռներում՝ ճանապարհների բացակայութիւնը, եզակի տգիտութիւնը և երկրի գլխովին անգրագիտութիւնը՝ դուք կը ստանաք երկրի այն տիպարը, ուր պետական քաղաքականութիւնը պէտք է ունենար իր յատուկ կուրսը, ընթացքը: Աչքի անցնելով Կարսի նահանգի վերջի 50 տարուայ պատմութիւնը՝ մենք տեսնում ենք, որ ռուս իշխանութիւնը այդ վայրը բացառապէս քրդական է անուանել, և միշտ զբաղուել է քրդական հարցով: Ի հարկէ, նրա միտումների մէջ չէր մտնում քրդերին կրթելու և լուսաւորելու նպատակը: Նա զբաղուած էր քրդերով և ընդգծում էր քրդական հարցը այնչափով միայն՝ որչափով որ այդ խնդիրը պէտք էր նորան իր քաղաքական հեռանկարների համար: Հարիւր տարի շարունակ պատերազմալից տրամադրութ-եամբ դեգերելով թիւրքաց Հայաստանի ուրուագծի շուրջը՝ ռուս կառավարութիւնը անդադար պատրաստւում էր և շարունակ կոփում իր նիզակները: Ռուս իշխան-ութեան այդ թմբկահար կորովը միշտ աշխոյժ և պատրաստալից էր դարձնում նորա գումարտակները, և անդրադառնալով դէպի երկրի ազգաբնակութիւնը՝ նա այստեղ հմայում էր մարդկանց քաջազնական փայլուն շուքով:

Բայց երկիրը անվերաբեր էր ի հարկէ դէպի կառավարութեան քաղաքական հեռաւոր նպատակները: Եթէ Ռուսաստանը հարիւր տարի շարունակ շառաչելով իր զէնքը թիւրքաց Հայաստանի սահմաններում, յուսալից վարժեցնում էր այնտեղ իր գումարտակները և փայփայում իր ապագայ նուաճումների երազները դէպի արևելք և դէպի Բօսֆորի չքնաղ ջրերը՝ երկրի ազգաբնակութիւնը, այդ միամիտ և պարզ քրդերը, տեսնում էին իրանց շուրջը միայն զինուորական, ասպետական փայլ, միայն հմայք՝ և անհոգ ու հրճուալից գնում դէպի այդ *(տեքստը խզուած է):*

...Որպէս թռչկոտող թիթեռ՝ քրդերը շրջապատում էին ռուս զինուորական թմբկահար և գունալից խարոյկները, հրճւում շքանշաններով, զինուորական խայտաճամուկ տարազով, և այդ ունայն ու կաշառող մթնոլորտում՝ կուլ գնում

պետական իմաստալից և խորամանկ քաղաքականութեանը: Ռուս իշխանութիւնը միշտ ընդգծում էր իր համակրութիւնը դէպի քրդերը, և հանդէս էր բերում իր հոգատար վերաբերմունքը դէպի այդ բազմաթիւ ցեղերը: Բայց այդ խնամքը միայն ձևալից էր ու միայն հաշուելից՝ և հանգում էր կառավարութեան հեռաւոր և գաղտնի քաղաքական միտումներում:

Ռուսներին պէտք էր զբաղեցնել երկիրը ի դէմս քրդութեան՝ նոցա ասպետ և քաջազնական հակումներով: Եւ այդ ուղղութեամբ հմայիչ աղմուկ ու սնափառ ձգտումներ ստեղծելով մեր լեռներում՝ ռուս բանակը ապահովեցնում էր իր թիկունքը իր ապագայ արշաւի համար դէպի տաճկական վիլայէթները:

Այդպէս էր այն քաղաքական գործելակերպը, պետական ֆօկուսի իմաստը՝ ուր քրդերը միշտ առաջաւոր և պատուաւոր տեղ ունէին... 90 թուականների սկզբներում թիւրքաց Հայաստանի սահմաններում քրդերի մէջ յայտնուեց մի վարդապետութիւն, որ շատ վտանգալից էր թւում կառավարչական շրջաններում: Բարին ու սէրը կազմում էին այդ վարդապետութեան իմաստը, նա քարոզում էր հաշտութիւն և խաղաղութիւն, բացառում էր չարութիւնը, կռիւը, պատերազմը՝ և սերմանում հումանիստ և առաջադիմական գաղափարներ:

Այդ վարդապետութիւնը հմայում էր մարդկանց, քրդերը կարծես թէ պատրաստ էին ձգել զէնքը, վրէժը, թշնամութիւնը՝ և անձնատուր լինել նոր կենցաղի և կեանքի նոր հաւատալիքների: Եւ այդ գաղափարները՝ երկրի ասելով, երկնքից էին, և քրդերը աղօթելով առ երկինք և հմայուելով այդ նոր գաղափարներով՝ իրանց աղերսներին և պաղատանքներին տալիս էին շան հաչոցի ձայն: Այստեղից առաջացաւ այդ նոր աղանդի անունը՝ հաչող քրդերը:

Այդ վարդապետութիւնը քարոզող ու տարածող շէյխը մեծ անուն և մեծ հռչակ ստացաւ, և նորա շուրջը սկսեցին համախմբուել բազմաթիւ քրդեր թէ Տաճկաստանում և թէ Կարսի նահանգում: Հրահրելով իրար՝ քրդերը շտապում էին համբուրել շէյխի եթէ ոչ փեշը, գէթ նորա հեռացող ձիու թողած թրիքը, և ձեռքերը դէպի երկինք տարածելով՝ նրանք արտասուում էին և շան պէս հաչում...:

Այդ վարդապետութիւնը շատ նման էր ռուս այն աղանդներին՝ որոնք Ռուսաստանում հակապետական էին համարւում, և որպէս սպառնալից երկրի իրաւակարգի համար՝ նոցա տարածողները և հետևողները աքսորւում էին հեռաւոր վայրեր: Հաչող քրդերի վարդապետութիւնը իր իմաստում խախտում էր ի հարկէ ռուս կառավարութեան բռնակալ և միահեծան սկզբունքը, և այդ բոլոր միտումներով այդօրինակ աղանդը վերին աստիճանի վնասակար էր համարւում ռուս կառավարութեան կողմից: Այդ քրդերը կարող էին տակն ու վրայ անել ռուսների հեռաւոր նուաճող իղձերը՝ և յամենայն դէպս այդ հաչող քրդերը չէին հարթի ռուս արշաւի ուղիները դէպի տաճկական Հայաստան: Եւ այդ բոլոր միտումներով սպառնալից և վտանգաւոր գտնելով քրդերի այդ նոր աղանդը իր պատե-

ռազմական մեծ հանգոյցի ուղղութեամբ՝ Կովկասի փոխարքան խստագոյն միջոցներ ձեռք առաւ խափանելու այդ վարդապետութիւնը: Կարսի նահանգում նորա հետևողները ենթարկուեցին մեծ հալածանքների, բանտարկուեցին և աքսորուեցին, և այդպիսով այդ հաչող քրդերի խմորումը առանձին ձևակերպութիւն չը ստացաւ գէթ Կարսի նահանգում: Այնուհետև մօտ 30 տարի՝ գրեթէ ոչինչ չէր լսւում այդ աղանդաւորների մասին, և շատ շատերը նոյնիսկ չը գիտէին այդպիսի մի վարդապետութեան գոյութեան մասին:

Բայց այս պատերազմի 14-15-16 թուականների սարսափները նորից ցնցեցին երկրի խիղճը, և այդ մթնոլորտում երևի, նորից երևացին առ երկինք բողոքող և այնտեղ միայն դատ և արդարութիւն որոնող քրդերը:

Երբ 19 թուին Կարսի նահանգում ես յայտարարեցի Հայոց Հանրապետութեան իշխանութիւնը՝ պատերազմի արհաւիրքներից հարստահարուած և հալածուած քրդութեան մի մեծ զանգուած պատսպարուել էր այն երկար լեռնանցքում, որ Սարիղամիշի գեղածիծաղ վայրով անցնում է դէպի Էրզրում: Այն հռչակաւոր կիրճում, Թօփ-եօլի (թնդանօթի ճանապարհ) ուղղութեամբ՝ ուր դարերի ընթացքում փոփոխալից բախտով, մարտնչել են բազմաթիւ զօրավարներ, յաղթել և պարտուել է տոհմական հարստութիւնը՝ քրդերը սփռել էին իրանց վրանները և դիմադրալից ամրացել: Այդ բոլոր արիւնոտ և գիշատիչ տեսիլներից յետոյ երբ պատերազմի արհաւիրքը ցիր ու ցան արեց լեռների այդ հարազատներին, և բախտի հողմերի հետ միասին քշեց նոցա դէս ու դէն՝ քրդերը վաղեմի ասպետներ չէին այլևս:

Գաղտնագողի և սրտատրոփ թառած ձորերում՝ քրդերը նման էին այն վայրենի որսին, որ փախչում և քարանձաւ է մտնում շրջող և իրան որոնող որսորդի ձեռքից: Պատերազմի շփոթը, յեղափոխական ծափերի տակ Ռուսաստանում բռնկուած ջարդը, անիշխանութիւնը, «ազգերի ինքնորոշման» մթնալից պատմութիւնները միախառնուելով այն բոլոր սարսափների հետ, որ անցաւ քրդերի գլխի վերայով այդ երեք տարուայ ընթացքում՝ համակել էին քրդութիւնը միայն սարսափալից խուճապով: Եւ երբ Կարսի նահանգում յայտարարուեց Հայոց Հանրապետութեան իշխանութիւնը՝ պատերազմի լափիններից փախչող և պատսպարուող քրդերը տարուբերւում էին իրանց անելիքներում: Նրանք չէին կարողանում հասկանալ, թէ որտեղ է վերջը այդ արիւնոտ և կրակալից տեսիլների, և նոքա չէին հաւատում ոչ ոքի: Տաճկաց կառավարութիւնը պարտուած և քայքայուած՝ այլևս ոչ ուժեղ էր և ոչ հեղինակութիւն էր կրում: Թիւրք գումարտակների ողորմելի մնացորդները հալւում էին ժամէ ժամ, բոլորը փախչում էին սովից ու յոգնածութիւնից, և երկրի կառավարչական մեքենան ուժասպառ և անկարող՝ դադարել էր փաստօրէն գոյութիւն ունենալուց:

Բայց քաղաքական գաղափարների այդ խռովալից բեկորների առանցքում՝ բորբոքւում էին արդէն արկածալից խմորումներ, և Բագուն անդադար իր էմի-

սարներն էր ուղարկում տաճկական Հայաստան՝ հրդեհելու համիսլամ տեն-չանքները: Այդ բոլորը ստեղծում է մեր լեռներում մի առանձնակի շփոթալից և անիշխան մթնոլորտ, եւ քրդերը՝ այդ լեռների վայրենի այծերը, չէին կարող ի հարկէ գնալ օրերի այդ մշուշալից հողմերի յետևից:

Քրդերը կարող էին շփոթուել, խլանալ, խուճապով բռնուել այդ իրարանց-ման մթնոլորտում՝ բայց ոչ երբէք գիտակցօրէն անդրադառնալ: Եւ այդ բոլորից յետոյ պարզ կը լինի, թէ ի՞նչ էին վերապրում քրդերը այդ անցնող օրերի ընդմի-ջումում, և թէ որչա՞փ նոքա վայրենացել էին և ահաբեկուել:

Ռուս կայսերական բանակը թիւրքաց Հայաստանում խաչեց քրդերին:

Երբ 14 թուի վերջերում ես նշանակուած էի Ալաշկերտի զինուորական շրջա-նի կառավարիչ՝ Մասիսի քարանձաւներում ես անձամբ տեսայ գրեթէ մերկ հա-զարաւոր քրդեր, որոնք որպէս վայրենի երամներ՝ դեգերում էին լեռներում և ռուսների բռնութիւններից փախչում:

Ցիրուցան եղած քուրդ ազգաբնակութիւնը զինաթափ անելու պատրուա-կով՝ ռուս զօրամասերը շրջապատում էին այդ քարանձաւները, լրիւ թալանում քրդերին, բռնաբարում նոցա կանանցը: Ես անձամբ տեսել եմ, թէ ինչպէ՞ս ռուս կազակները իրանց ձիաներին ցրտից պահպանելու համար, քրդերից թալանած մետաքս կտորներով և այլ թանգարժէք գորգերով ծածկում էին իրանց ձիանքը:

Բայց բնորոշ կը լինի ասելու և այն, որ կազակները սովորութիւն էին դարձ-րել խորովել և ուտել ոչխարի սիրտը, ջիգեարը միայն: Եւ այդ քմահաճը բաւա-րարելու համար՝ կազակները մորթում էին հազարաւոր ոչխար, ուտում էին այդ «ջիգեարը», իսկ ոչխարի միւս մասերը՝ միսը և այլն, ձգում շներին... Այդպէս են այն սարսափալից պատկերները, որ ես 15 թուին առիթ եմ ունեցել տեսնելու թիւրքաց Հայաստանում: Այդ բոլոր բազմաթիւ պատճառները առիթ էին տուել քրդերին՝ իւրայնի բացատրութիւններ տալու Հայոց Հանրապետութեան ապա-գայ ընթացքին դէպի թիւրքաց Հայաստան: Եւ այդպիսով մեծ տակտ, շրջահա-յեաց, կառավարչական վերաբերմունք էր պէտք այդ առանցքում՝ քրդերին հանգստացնելու և ստեղծելու այդ վայրենի լեռներում լոյեալ և հաւատարմալից մթնոլորտ:

Սարիղամիշից դէպի սահման տարածուող ձորերում թառած քրդերը՝ մեզ պէտք էին ոչ միայն որպէս Հայոց Հանրապետութեան սահմաններում ապրող ժողովուրդ, այլ որպէս մի մեծ բազմութիւն, որ կապուած է տաճկահայաստանի քրդութեան հետ:

Իսկ այդ քրդութեան միջով պէտք է կատարուէր տարագիր տաճկահայերի ներգաղթը, այդ քրդերի միջով մենք պէտք է անցնէինք այն վիլայէթները, որ մեզ տալիս էր կախարդ Սեւրը, և միացեալ, ազատ ու անկախ Հայաստանի սահման-ները գծող մարշալ Ուիլսոն...

Բայց եթէ մեր քաղաքական իշխանութիւնը մտահոգուած էր այդ անցքում բարեկամ և մտերիմ մթնոլորտ ստեղծելու, և դորանով հարթելու մեր բազմահազար գաղթականութեան վերադարձը իր մոխրակալ օջախները՝ այլ միտումներով ու ձգտումներով էր համակուած մեր զինուորական իշխանութիւնը, որ կանգնած էր այդ անցքի դարպասներում:

Սարիղամիշը Կարսի զօրաբանակի կենտրոնական կայանն էր: Կարսի գեներալները ու «գնդապետները» իրանց մեծ ընդունակութիւնների համար բաւարար չը համարելով զինուորական ասպարէզը՝ հեղինակալից և իշխանալից զբաղուեցին և քաղաքական մեծ հարցերով: Բայց նոքա չուզեցին գնալ նահանգապետի բռնած ուղիներով, նրանք ձգտեցին անջատ քաղաքականութիւն վարել: Եւ օգտագործելով բարձր կառավարութեան թուլամորթ վերաբերմունքը դէպի երկրի կարդինալ խնդիրները՝ և տեսնելով, որ Երևանը չէ խանգարում նոցա զբաղուելու ոչ զինուորական գործով, այդ գեներալները և սպաները, որոնցից շատերը դեռ երեկ տիրացուներ էին և խանութպան՝ բազմապատկեցին իրանց այդ ուղղութեամբ ջանասիրութիւնը: Քրդերի թառած, առանձնացած դիրքերին այդ «զինուորականները» տալիս էին իրանց մեկնութիւնը: Նահանգապետի այդ առիթով բացատրութիւնները կառավարութեան առաջ ցրելու համար՝ Կարսի զօրաց հրամանատարութիւնը գրում էր իր իշխանութեանը, որ Տաճկաստանի սահմաններում քրդերը մեր դէմ մեծ դաւ են պատրաստում: Այդ խռովալից և ապստամբ քրդերը՝ գրում էին գեներալները և գնդապետները, դարան մտած, սերտ յարաբերութեան մէջ են Էրզրումի հետ: Նրանք զինւում, պատրաստւում են, ունեն մեծ ռազմական ոյժեր, և միայն հայ զօրահրամանատարութեան ձեռք առած միջոցները կապանքում են այդ քրդերին, և նոցա հետ միացած թիւրք գումարտակների յարձակումը դէպի Կարս...

Իսկ այդ «քաղաքական» բացատրութիւնների օրօրի տակ՝ մեր զինուորականները այդ ուղղութեամբ թալանում և կեղեքում էին այդ «դարան մտած» և «ապստամբ» քրդերին: Եւ երբ այդ թալանուած քրդերը փորձում էին պաշտպանուել ու իրանց վայնասունով լցնում այդ ձորերը՝ գեներալ Փիրումով-Յովսէփեանի ընկերութիւնը հեռագրում էր Երևան, Տաճկական կանոնաւոր զօրաբանակը փորձեց խուժելու Կարսի նահանգը՝ բայց «ետ շպրտուեց մեր անզուգական զօրաց անձնուէր ջատագով... »: Այդպէս էին այն իւրայնի դափնիքը՝ որոնցով իւր ժամանակին այդ զինուորականները իրանք պսակում էին իրանց գլխները: Այդ օրերում Կաղզուանի գաւառում, հենց մեր յիշած ձորում՝ նորից երևաց քրդերի մէջ հաչելու և առ երկինք բողոքելու տրամադրութիւն: Այդ առիթով ես ստացայ Կաղզուանի շրջանապետ Պալեանցի շատ տեղին զեկուցումը: Նա հաղորդում էր, որ այդ ձորերում նորից ծայր է տուել հաչողների աղանդը, որ նա տեսնուել է այդ առիթով այդ նոր վարդապետութեան պարագլուխ Շէյխ Հիւսնու հետ, և սպասում էր իմ կարգադրութիւններին: Ի նկատի առնելով այն բոլորը,

որ ես արդէն արձանագրել եմ՝ ես մտադրուեցի մեծ չափով օգտագործել քրդական այդ շարժումը մեր պետական միտումներում: Այդ աղանդը կարծես ընդառաջ էր գալիս մեր հոգսերին՝ ցրելու այդ ձորում թառած քրդերի խուճապալից վերապրումները: Ես ուզում էի օգտագործել շէյխ Հիւսնուն, ուզում էի իմ պաշտպանութեան տակ առնել նորան, և այդպիսով ոյժ և պաշտօնական նշանակութիւն տալով քրդերի այդ հաւատալիքներին՝ ես ուզում էի այդ գործելակերպում լոյեալ, հանգիստ և մեզ բարեկամ մթնոլորդ ստեղծել քրդութեան մէջ: Այդ բոլոր միտումներով, ստանալով Կաղզուանի գաւառապետի հաղորդագրութիւնը՝ ես ծածկագիր հեռագրով պատուիրեցի նորան ձեռքից չը թողնել շէյխ Հիւսնուն, և ամէն միջոցի դիմել նորան գործիք դարձնելու քրդերի հետ սերտ բարեկամ յարաբերութիւններ ստեղծելու համար: Եւ աւելացրեցի «առայժմ այդչափ, սպասեցէք հրահանգներիս»:

Բայց մեր այդ անելիքներում, թէ Շէյխ Հիւսնի և թէ ինքը մեծ գործը՝ չէին կարող բաւարարուել միայն պլատօնիկ ցանկութիւններով: Այդ մեծ և բարդ խնդիրը, որ յամենայն դէպս ստանում էր պետական մեծ նշանակութիւն՝ պէտք է զգուշալից մշակուէր և հրահանգուէր, և նա ամէնից առաջ պահանջում էր մեծ դրամական միջոցներ: Ես գաղտնի գրութեամբ մանրամասն զեկուցում ուղարկեցի այդ առիթով Երևան: Մանրամասն տեսութեան առնելով քրդական խնդիրը իւր անցեալում և ներկայում, և ծանրանալով այդ իմաստում մեր ապագայ ներգաղթի վերայ դէպի տաճկական Հայաստան՝ ես հրաւիրում էի կառավարութ-եան յատուկ ուշարդութիւնը դէպի իմ այս զեկուցումս:

Մենք պէտք է ամուր բարեկամութիւն կապենք քրդերի հետ՝ գրում էի ես, ինչ գնով և լինի այդ, ի նկատի առնելով այն, որ թէ մեր ճանապարհն է քրդերի միջով և թէ մենք պետք է անցնենք քրդերի հետ միասին: Եւ նկատի առնելով, որ հաչող քրդերի աղանդը կը հարթէ միայն մեր պետական հումանիստ ընթացքը և կը թուլացնէ քրդի ծարաւը դէպի զէնքը, արիւնը և վրէժը, մենք, անկախ այդ վարդապետութեան դաւանաբանական իմաստից՝ պէտք է օգտագործէինք մեր նպատկների համար նորա բարոյական մեծ և անվիճելի նշանակութիւնը:

Շէյխ Հիւսնին սպասում էր: Որչափ և տարուած լինէր նա իր ճակատագիր կոչումով, որչա՞փ և հմայուած լինէր նա երկնքից նորա վերայ իջած սուրբ զօրութեամբ՝ նա այնուամենայնիւ քուրդ էր, ասեացի, և մարդ իր բոլոր աշխարհիկ թուլութիւններով: Նորան էլ փող, միջոցներ էին պէտք: Նա սպասում էր, որ նորան կը շրջապատեն պետական ուշադրալից հոգսերով և խնամքով, և նա գուցէ իր յետևից տանէր քուրդ ցեղերը, և այդպիսով շաղկապէր քրդերին մեր պետական ընդհանուր աշխատանքին: Բայց իմ կառավարութիւնից ես ոչ մի կոպեկ փող և ոչ նոյնիսկ պատասխան չը ստացայ՝ և մեր յարաբերութիւնները շէյխ Հիւսնու հետ, որպէս պլատօնիկ զգացմունք՝ շատ կարճատև էին և շատ խաբուսիկ...

Բայց մինիստրի մի ձեռքը ծափ չէր կարող տալ ի հարկէ, իսկ մինիստրների դիւանները լցուած էին ոչ գործի և ոչ լուրջ ու տեղեակ մարդկանցով: Այդ մեծ բազմութեան մեծամասնութիւնը զբաղուած էր աւելի «կուսակցական» և այլ «հասարակական» խնդիրներով, «մօմենտի մասին» բոլորի գլուխը տարած «զեկուցումներով», «հասարակական հոսանքների» քննադատութեամբ, «աշխատաւոր մասսաների» անունից անպատասխանատու յայտարարութիւններով՝ բայց ո՛չ տեսական և գործնական պաշար պահանջող լուրջ պետական խնդիրներով: Այդ մթնոլորտում գեներալ Յովսէփեանները ու Փիրումովներն էլ ի հարկէ, մեծ դիպլօմատներ, մեծ զօրավարներ և շատ խելօք մարդկանց համբաւ ունէին այդ «կառավարչական խաւերում»: Մեր կառավարութիւնը շրջապատող ու պաշարող տափակութիւնը՝ այդ նախկին վարժապետները, տիրացուները և բազմատեսակ սիրողները՝ ակնածալից և հիացմունքով էին լսում ի հարկէ զանազան Փիրումովների կարծիքները երկրի բոլոր հարցերի մասին: Իսկ կառավարութիւնը, մինիստրները ի ծայր բեռնաւորուած երկրի շփոթ մթնոլորտում՝ անսիստեմ և միանգամայն երրորդական և չորրորդական խնդիրներով, որպէս խռովալից ալիքներում օրհասալից տարուբերուող մակոյկ՝ գնում էին ժամանակի հոսանքի յետևից, և մոլեռանդ հաւատում հայոց հնագոյն սրբերին...

Ընդհանուր առմամբ թէ՛ կառավարութիւնը, և թէ՛ պարլամենտի բանիմաց ու լուրջ անդամները՝ հաւանութիւն էին տալիս նահանգապետի գործելակերպին տեղագրական խնդիրներում: Նրանք ամբողջ հոգով ուզում էին բարեկամ լինել քրդերի հետ, և ստեղծել երկրում համահաւասար մթնոլորտ՝ բայց այդ ցանկութիւնները չէին անցնում պլատօնիկ վերաբերմունքի սահմաններից, և չէին կիրառւում կեանքում դրական և գործնական իմաստով:

Այդպէս էր մեր վերաբերմունքը դէպի պետական մեծ խնդիրները:

Բայց հետաքրքիր կը լինեն այդ ուղղութեամբ մի քանի պատկերներ ևս:

Անգլիացիք յանձնելով մեզ իշխանութիւնը Կարսի նահանգում, և քաշելով այնտեղից իրանց 3000 բանակը՝ այնուամենայնիւ դեռ մի 2-3 ամիս ունէին Կարսում իրանց ներկայացուցիչը, ի դէմս գլխապետ Պրօսսօրի:

Յայտարարուած պաշտօնական միսիա չունէր այդ ներկայացուցիչը, բայց բոլոր տուեալները ցոյց էին տալիս, որ անգլիացիք դիտում էին, թէ ինչպէ՞ս ենք մենք կազմակերպում մեր իշխանութիւնը երկրում: Միևնոյն ժամանակ նրանք ուսումնասիրում էին և թիւրքաց սահմաններում հում նիւթերը՝ որոնք երևի պէտք էին հեռաւոր քաղաքական ուրուագծերի համար, նրանք անդադար հաղորդում էին Թիֆլիզի վերայով Պօլիս: Պէտք է ասեմ, որ անգլիական սպաները կարծես տրամադիր էին աւել թիւքերի կողմը հակուելու՝ գուցէ և անջատ իրանց պետական նպատակներից: Թիւրքերը և թուրքերը մի առանձնակի հմայիչ ձևով շոյում են մարդկանց թոյլ կողմերը, և այդ առանցքում հայերը երբէք նոցա հետ չեն մրցել:

Եւ թողնելով պատմական և պետական նպատակները ու միտումները, թողնելով խնդրի իմաստը՝ չի կարելի չընդգծել, որ այդ բոլորից անջատ և այդ անգլիացիները ենթարկւում էին թուրք-տաճկական զազրալից փաղաքշանքներին:

Թուրքերն ու տաճիկները գիտեն մեծարել մարդկանց, գիտեն իւր ժամանակին գլուխ տալ, հառաչել, գիտեն քաղցր խօսքի տեղը, ուսումնասիրում են Ձեր թոյլ կողմերը՝ և այնպէս տանում իրանց գիծը:

Կարսի ռուսները, որոնց համար տանելի չէր ի հարկէ հայկական իշխանութիւնը, և որոնք իրանց շատ լաւ էին զգում թէ տաճիկների և թէ Շուրայի օրով՝ միացան այդ գործելակերպում թուրքերի հետ, և լծորդ ոյժերով անցքեր հարթեցին դէպի անգլիական սպաների դռները: Ինչպէս և առաջ Կովկասում՝ այնպէս և այստեղ Կարսում, ռուս օֆիցերի կինը կանգնած էր այդ յարաբերութիւնների հանգոյցում, և այդ չէզօք զրահի տակ Կարսի թէ թուրքերը և թէ ռուսները իրանց դաւերն էին տանում հայերի դէմ...

Եւ գլխապետ Պրօսսօր շարունակ կամ գրում, կամ բերանացի դիմումներ էր անում ինձ նահանգում պատահած այս և այն ուշադրութիւնը՝ իբր թէ հայերի կողմից գործած օրինազանցութեան վերայ: Ոչ մի ենթակայ յարաբերութիւնների մէջ չը լինելով անգլիական ներկայացուցչի հետ՝ այնուամենայնիւ գէթ արտաքին տպաւորութիւնը գալիս էր հրապարակում ասելու, որ հայկական իշխանութիւնը ինչ որ հակումն ունի անգլիացիներից, և այդ դրութիւնը հիմք էր տալիս Ուրքերին կարծելու, որ հայկական իշխանութեան խնդիրը դեռ բաց է, և դեռ յայտնի չէ կը մնան հայերը ընդմիշտ տիրելու այդ երկիրը՝ թէ այդ կախուած է այն Եւրոպաից, որ դեռ պահում է այդ վայրում իր ներկայացուցիչը: Այսպէս թէ այնպէս՝ անգլիական ներկայացուցչութիւնը փափուկ, դելիկատ դրութիւն էր ստեղծում, և շատ ծանրացնում ու կաշկանդում էր իմ աշխատանքը: Այդ բոլոր միտումներով՝ ես անհամբեր սպասում էի, թէ ե՞րբ կը թողնի Կարսը անգլիական սպան, որ միայն խտացնում էր ազգամիջեան փոխյարաբերութիւնների գոյները, և անորոշ անկայուն տրամադրութիւն տալիս երկրի իշխանութեանը: Այդպես էր Կարսի նահանգի քաղաքական մթնոլորտը՝ երբ 19 թուի Օգոստոսին գլխապետ Պրօսսօր իր մօտ հրաւիրեց Կարևոր գործով ինձ և գեներալ Փիրումովին ու Յովսէփեանին:

Նա հաւատարմօրէն հաղորդեց մեզ, որ իր ունեցած տեղեկութիւնների համաձայն՝ թիւրքաց զօրաբանակը արշաւ է սկսել Հայաստանի Հանրապետութեան սահմանների վերայ, և խնդրեց տեղեկացնել այդ մասին կառավարութեանը, և այստեղ դիմել պէտք միջոցների:

Ապա դիմելով նահանգապետին՝ գլխապետ Պրօսսօր հարցրեց, թէ ի՞նչ տեղեկութիւններ ունեմ ես այդ առիթով, և անջատ այդ հարցից՝ անգլիացին ասաց, որ ուզում է իմանալ իմ կարծիքը այդ իր տեղեկութիւնների մասին: Ես պատասխանեցի, որ այդ արշաւի մասին ես առաջին անգամն եմ լսում: Անցնելով այդ

խնդրի իմաստին՝ շարունակեցի ես, սահմանի այդ տարածութեան վերայ, դէպի Սարիղամիշ-Կարաուրգան՝ կան անբաւական քրդեր, որոնք հրոսակախմբեր կազմելով կարող են անհանգստացնել սահմանին մօտ մեր յոյն և հայկական գիւղերը: Բայց այդ բոլոր աւազակային յարձակումները՝ բացատրեցի ես, ինչպէս և առաջ ռուս տիրապետութեան ժամանակ՝ կարող են ունենալ իշխանութեան համար միայն վարչական նշանակութիւն և ոչ մի կերպ քաղաքական-ռազմական պատկերի չեն կարող վերածուել: Այդ բոլոր միտումներով՝ վերջացրեցի ես, նահանգապետը միանգամայն ժխտում է անգլիական ներկայացուցչի առաջարկը, դատարկել Սարիղամիշի գաւառակը, և միայն հարկաւոր վարչական, ադմինիստրատիւ կարգադրութիւններ կանէ՝ եթէ այդ աւազակային խմբերը յարձակուելու լինեն սահմանակից մեր գիւղերի վերայ: Այդ իմաստով ես հեռագրական զեկուցում ուղարկեցի Երևան:

Մեր գեներալները տատանւում էին, և յամենայն դէպս՝ շառաչում իրանց սրերով...

Մի երկու օրից յետոյ այդ երկու գեներալները, որ ծարաւի էին նոր ձրի էժանագին դափնիքի՝ հաղորդեցին Երևան, որ տաճկաց զօրամասերը երևացել են արդէն մեր սահմաններում, և մեր առաջաւոր զօրամասերի հետ ընդհարուելու տրամադրութիւն ցոյց տուել...

Պէտք չը կայ ասելու, որ զօրական այդ յայտարարութիւնը՝ թէ շատ ամպամած էր և թէ շատ առաձգական, և այդ պայմաններում ի հարկէ նա կարող էր անպատասխանատու լինել...

Գեներալները խօսում էին թիւրք զօրամասերի մի ինչ որ անորոշ և անյայտ խմբակցութիւնների մասին, պատկերացնում հաւանական հեռանկարը, և որովհետև այդ կարող էր կապուել անգլիական սպայի հաղորդագրութեան հետ՝ մեր գեներալները նախօրոք իրանց համար դափնիք էին պատրաստում: Այդ գեներալները շատ լաւ գիտէին ի հարկէ, որ այնտեղ թիւրքերը զօրք չունէին, որ այնտեղ կան միայն քուրդ աւազակներ, գիտէին, որ բաւական է այդ աւազակների դէմ ուղարկել մի վաշտ զինուոր՝ նոցա խուճապալից ցրելու համար: Եւ որովհետև այդ դրամատիկ խմորից կարելի էր մի ամբողջ «պատերազմ» հունցել, և այդ մեծ աղմուկ առանցքում դափնիք վաստակել՝ «Սարդարապատի» այդ «հերոսները» շատ բարձր տրամադրութեամբ հրահռեցին այդ կայծակալից մոխիրը, և մեծ խուճապ, մեծ իրարանցում բարձրացրին ոչ միայն Կարսի նահանգում՝ այլև Երևանում: Նորին գերազանցութիւնները Կարսից հեռադիտակով թշնամու բանակի մեծաքանակ վրաններ էին տեսնում թիւրքաց Հայաստանի դարպասում, և դրութիւնը շատ և շատ լուրջ գտնելով՝ պատերազմական դրութիւն էին յայտարարում Կարսի նահանգում... *(տեքստը խզուած է)* ...ամենքից շուտ փախչելու տրամադրութիւն ցոյց տուեցին Սարիղամիշի հայ և ռուս սպաները: Նրանք բռնի գրաւեցին երկաթուղու մի ամբողջ գնացք, բարձեցին իրանց իրերը, ըն-

տանիքները և առանց հերթի ուղարկեցին դէպի Կարս: Նոցա յետևից երկրորդ գնացքը՝ այդ երկաթուղու ծառայողներն էին իրանց ընտանիքներով: Եւ այդպիսով խուճապի ալիքը սկսեց բարձրանալ րոպէ առ րոպէ:

Երկաթուղուց փախած պաշտօնեաներին ես հրամայեցի բանտարկել, իսկ նոցա կանանցով ու իրերով գնացքը վերադարձրեցի իր տեղը: Բայց գեներալները շարունակում էին պատերազմալից շառաչել իրանց սրերով, և հրամայեցին բանալ Սարիղամիշի և Կարսի բազմաթիւ պետական պահեստները, և շտապ և տենդոտ վագօններ լցնելով՝ ուղարկում էին երևի Երևան...

Այդ աներևակայելի իրարանցման մթնոլորտում՝ ուր մարդիկ իրար չէին լսում և չէին ենթարկւում, տանող-տանողի էր... Թէ ո՞ւր գնաց պետական այդ մեծ հարստութիւնը, հասա՞ւ արդեօք Երևան, թէ ճանապարհին Աղէքսանդրապօլ՝ հալուեց ու գոլորշիացաւ, այդ այն «ռազմական» գաղտնիքներից մէկն է, որ կազմում է Հայոց Հանրապետութեան այդ ճգնաժամերի աղը:

Մի բան միայն ակներև էր՝ այդ կատակերգութիւնը, որ մեր գեներալների և սպաների փորձուած ղեկավարութեան տակ անցաւ որպէս մի մեծ դրամայ, շատ թանկ նստեց պետական գանձարանին:

Ցիրուցան եղան ու փչացան միլիոններ գին ունեցող պէտական գոյքը, և հայկական կառավարութիւնը ի դէմս իր զօրավարների՝ սնանկ հանդիսացաւ թէ երկրի այլազգիների առաջ և թէ մեր սահմաններից դուրս Տաճկաստանում, ուր այդ զինուորական ֆարսը պատմում էին շատ զաւեշտալից և շատ կօմիկ կերպով:

Ի նկատի առնելով, որ Կարսը արդէն բռնկուել էր խուճապով և կարող էր առաջընթաց լինել երկրի փախուստում՝ ես նոյն օրը պարտաւորեցուցիչ որոշում ստորագրեցի բոլոր խանութների համար էլեկտրական լոյս ունենալու իրանց դռների առաջ, և մեծ տուգանքի սպառնալիքի տակ՝ երեք օր ժամանակ տուեցի քաղաքը այդպէս լուսաւորելու համար: Բացի այդ, պատուիրեցի քաղաքագլխին և ոստիկանապետին՝ մի շաբաթուայ ընթացքում մաքրել բոլոր հրապարակները, փողոցները, ուր ռուս յեղաշրջումից յետոյ ոչ մի այդ ուղղութեամբ աշխատանք չէր կատարուել: Թուրքերի մէջ արդէն ջղայնացում էր նկատւում և մեր փախչելու լուրը կայծակի արագութեամբ անցնում էր արդէն նահանգի մի ծայրից միւսը: Մի առիթ էր պէտք միայն մեր դէմ ապստամբուելու համար, և ես տեղեկութիւն ունէի, որ թուրքերը և ռուսները տրամադիր են շահագործել այդ խուճապը: Այդ օրը ես մի խորհրդակցութիւն հրաւիրեցի նահանգի վերաշինութեան համար, իսկ ոստիկանապետին ու քաղաքագլխին խստիւ պատուիրեցի այդ օրերում բացառապէս զբաղուել այդ լոյսի և փողոցների գործով: Բացի այդ, պատուիրեցի ոստիկանապետին՝ երաժշտութիւն ուղարկել հասարակական այգին, և առհասարակ ի ցոյց դնել իշխանութեան միանգամայն հանգիստ տրամադրութիւնը: Եւ այդ բոլոր միջոցները արմատում հանգցրին խուճապը: Ազգաբնակութիւնը

տեսնում էր, որ նահանգապետը՝ որին յամենայն դէպս նա հաւատում էր աւելի քան ում և իցէ նահանգում, շատ հանգիստ և մեթոդիկ զբաղուած էր ընթացիկ և միանգամայն խաղաղ օրերի աշխատանքով: Այդ բոլորը չէր կարող չը հանգստացնել այն բնակչութ-իւնը, որ դեռ նոր էր վերադարձել իր հայրենի տնակները, և ոչ մի ցանկութիւն չունէր փախչելու ու նորից քանդուելու: Եւ երկրի խուճապային տրամադրութիւնը անմիջապէս մարեց, պետական գոյքով լցուած վագոնները մնացին ճանապարհում: Իսկ այստեղ և այնտեղ բազմաթիւ հայ գիշատիչներ օգտուեցին ի հարկէ դէպքից՝ թալանելու բաց մնացած այդ իրարանցման մէջ պահեստները, և թալանել պետական հարստութիւնը: Օգտուեցին այդ առանցքում, իրանց հաշուետու-ութեան մէջ պահեստապետները և միւսները... Բայց ամէն ինչ լաւ է՝ երբ նա լաւ է վերջանում: Դժգոհ մնացին այդ շինծու փոթորկի ելքից Կարսի գեներալները և Սարիղամիշի գնդապետները: Նոքա ռազմալից պնդում էին, որ իրանք կատաղի կռուից յետոյ յետ շպրտեցին տաճկաց զօրաբանակը» և միայն նահանգապետը՝ նոցա դափնիքը նսեմացնելու համար ջրեց երկրի և կառավարութեան առաջ այդ մեծ սպառնալիքի ուրուականը, և իրանց մեծ յաղթութիւնը ֆարսի վերածեց...

Դեռ 20 թուի սկզբներում, գարնանադէմ՝ ես ծածկագիր հեռագիր ստացայ Արդահանի գաւառապետ գնդապետ Կադիմովից, որ Էրզրում թիւրք պատգամաւորների ինչ որ համագումար է նշանակուած երկրի քաղաքական հարցերի մասին: Այնուհետև գնդապետ Կադիմով հաղորդեց ինձ, որ այդ ժողովին մասնակցելու համար ներկայացուցիչներ են պահանջուած թէ Աջարիահ, Բաթումի կողմերից և թէ Կարսի նահանգի սահմաններից: Մի քանի օրից յետոյ Արդահանի գաւառապետը հեռագրում էր ինձ, որ Աջարիայի կողմից, Արդահանի տակով անցաւ դէպի Էրզրում Վրաստանում ապրող յայտնի Խիմշիեւ աղալարը, իսկ ի դիմաց Կարսին սահմանակից վայրերից որպէս պատգամաւոր՝ Էրզրում մեկնեց Ջաֆար բէկը, որ ապրում էր այն ժամանկ Օլթի գաւառը Տաճկաստանից բաժանող լեռներում: Այդ Ջաֆար բէկը մեր ժամանակի արկածախնդիրներիցն էր, նա իրան մինբաշի գնդապետ էր անուանում, բայց չէր ճանաչում թիւրքաց իշխանութիւնը: Նա ունէր իր մի 100-150 հոգուց բաղկացած հրոսակախումը, բանակցութիւնների մէջ էր Բագուի թուրքերի հետ, Բագուից փող էր ստանում, պատսպարում էր Բագուից եկած թուրք էմիսարներին՝ և ինչ որ համիսլամ խմոր էր հունցում այդ հեռաւոր և վայրենի լեռներում: Շատ հետաքրքիր է, որ այդ բոլոր բախտախնդիրները կորզելով Բագուի Միւսաֆաթի ոսկին և այնտեղից հրահանգներ ստանալով՝ չը գիտէին իսկապէս, թէ ի՞նչ նպատակներ են յետապնդում: Օրերի «ինքնորոշման» պատուհասը մոլորեցրել էր և այդ աւանտիւրիստներին, և նրանք ոչ թիւրքերի և ոչ Հայաստանի գերիշխանութիւնը ճանաչելով՝ երազում էին իրանց ձորակներում առանձին իշխանութիւն ստեղծելու... Այդ թոկից փախած թշուառականները իրանց «յեղափոխական» անուանելով՝ կարծում էին, որ

ամէն մի խմբապետ կարող է իր սուվերէն իշխանութիւնը ունենալ, և այդ օրորներում նոքա սակարկում էին թէ Բագուի, թէ Էրզրումի և թէ ինձ հետ...

Գնդապետ Կադիմովի միջոցաւ ես կապ էի հաստատել այդ Ջաֆար բէկի հետ: Բոլոր տուեալները ցոյց էին տալիս, որ մինբաշի Ջաֆար բէկը լուրջ մարդ է, ազդեցիկ այդ վայրում, կամքի տէր: Էրզրում նորան հաշուի էին առնում, նա կապ ունէր Քեազիմ Կարաբեկիր փաշայի հետ, որին յետոյ վիճակ էր ընկել Կարս արշաւելու:

Ես յանձնարարել էի գնդապետ Կադիմովին բերանացի՝ հաւատարիմ քրդերի միջոցով հաղորդել Ջաֆար բէկին, որ Կարսի նահանգապետը լաւ կարծիք ունի նորա մասին, և հետաքրքրւում է նորանով և ուրիշ ոչինչ: Երբ իմ այդ առաջի յայտարարութիւնը, ըստ երևոյթին գրաւել էր Ջաֆար բէկի փառասէր ուշադրութիւնը՝ ես նոյն գնդապետ Կադիմովի միջոցով պատուիրել էի հասկացնել նորան, որ երբ մենք շարժուելու լինենք դէպի Վանի վիլայէթը՝ իսկ այդ վայրով երազում էր Ջաֆար բէկը, ես մտադիր եմ նորան գեներալի աստիճան և վարչական պաշտօն տալու: Այդպէս էր իրերի դրութիւնը քաղաքական կուլիսների յետևում Էրզրումի համագումարի նախօրեակում, այն համագումարի՝ ուր խմորուեց Անգօրայի կառավարութիւնը:

Այդ բոլոր տեղեկութիւնները իր ժամանակին ես հասցրել էի ներքին գործոց մինիստրին, բայց ինչպէս ցոյց տուեց յետագան՝ Երևանում կարդում էին Կարսի նահանգապետի այդ գաղտնի հաղորդագրութիւնները որպէս հերթական նորութիւն, մոռանում նոցա մասին միւս օրը...

V

Պէտք է ասեմ, որ Արդահանի գաւառապետի միջոցաւ ժամանակակից քաղաքական անցուդարձի մասին ես գործակալական տեղեկութիւններ էի ստանում և Բաթումից՝ Արդահանի վերայով: Բաթումը այն ժամանակ անգլիացիների ձեռքումն էր, և այդտեղ էր բորբոքւում և եռում Կովկասի թէ տնտեսական և թէ քաղաքական կեանքը: Կարսի նահանգը կապուած էր Բաթումի հետ Արդահանի միջոցաւ, և մարդկանց շարունակ անցուցարձը այդ ուղղութեամբ՝ ստեղծում էր Կարսի նահանգում շատ հետաքրքիր և կեանքալից մթնոլորտ: Երբ Անգորայի արտաքին գործերի մինիստրը դիմում էր մեր Կառավարութեանը անջատ Սեւրի դաշնագրից լուծելու հայ-թիւրքական դատը՝ ես ստացայ գնդապետ Կադիմովից հետևեալ ծածկագիր հեռագիրը «լուրեր են շրջում, որ աշնանը Կարսի նահանգի տիրապետութեան հարցը պէտք է ռեֆերենդումի ենթարկուի...»:

Այդ հաղորդագրութեան բովանդակութիւնը ես նոյն օրը ծածկագիր հեռագրով հաղորդեցի մեր կառավարութեանը:

Ես չէի կարող մարգարէ լինել, և չէի կարող ի հարկէ թափանցել ապագայի խորքերը ու գուշակութիւններ անել: Այնուամենայնիւ, իր բոլոր տարօրինակ իմաստով հանդերձ՝ այդ հեռագիրը սենսացիոն էր և բնազդօրէն ինձ թւում էր, որ մենք ինչ որ մեծ դէպքերի նախօրեակումն ենք: Սեւրի դաշնագիրը արդէն ստորագրուել էր, և մենք վերապրում էինք սուվերէն մեղրամիսը: Հազիւ թէ, ըստ երևոյթին կարող էին որևէ կասկած լինել այդ ուղղութեամբ, և այդ պատճառով երևի, ռեֆերենդումի մասին խօսակցութիւնները արժէքաւոր չէին, և յամենայն դէպս ոչ լուրջ ուշադրութեան արժանի մի տեղեկութիւն: Այդպես էր ըստ երևոյթին վերաբերուել Երևանը իմ այդ ծածկագիր հեռագրին: Հայկական կառավարութիւնը չը ստուգեց, կամ հնարաւորութիւն չունէր այդ անելու՝ իր արտասահմանի ներկայացուցիչների միջոցաւ այդ տեղեկութիւնը: Մինչդեռ այդ հեռագիրը կարող էր լինել թելի այն ծայրը, որ բացում է կնճռալից կծիկը... Բայց այսօր երբ մենք կարող ենք արդէն թերթել պատմութիւնը՝ մեզ համար պարզ է, որ այդ ռեֆերենդումի մասին այն ժամանակ շրջող լուրերը ունէին իրանց հիմքը և բացատրութիւնը: Խօսքը սուտ չի կարող լինել՝ ասում է ժողովրդական առածը, նա կարող է միայն սխալ լինել: Եւ եթէ դուք ընդհանրացնէք այն բոլոր գաղտնի տեղեկութիւնները՝ որոնք իր ժամանակին ես պարբերաբար հաղորդել եմ կառավարութեանը, և որոնց մի քանի ցայտուն նմուշներ արձանագրում եմ այս յիշողութիւններում, դուք կը ստանաք փաստերի և դէպքերի լրիւ մի պատկեր:

Երբ Աղէքսանդրապօլի կօնֆերանսի ժամանակ հայկական դելեգացիան շօշափեց Կարսի նահանգի խնդիրը՝ Քեազիմ Կարաբեկիր փաշան ասաց. «-Թիւրքաց մեծ ազգային ժողովի պատուիրակութիւնը ոչինչ չի ունենայ այդ հարցը ռեֆերենդումի ենթարկելու... »:

Բայց ռեֆերենդում՝ ի հարկէ թիւրք սուինների հովանու տակ... Այդպիսով, ինչպէս տեսնում էք, Կարսի նահանգի վիճակը արծարծուել է Էրզրումի համագումարում, և այնտեղից է առաջացել ռեֆերենդումի մասին շրջող լուրը: Այդ տեղեկութիւնը իւր ժամանակին հաղորդուել է մեզ Բաթումի վերայով, և մենք հասցրեցինք այդ մեծիմաստ տեղեկութիւնը մեր կառավարութեանը՝ Կարսի անկումից դեռ 4 ամիս առաջ: Ես չէի կարող դէշիֆրի ենթարկել իմ այդ ստացած հեռագիրը, որ գալիս էր միջազգային հարցերի մեծ կաթսայի բովից, բայց հայկական կառավարութիւնը, որ պէտք է ունենար իր գործակալները թէ Ռուսաստանում և թէ Եւրոպայում՝ պէտք է իրազեկ լինէր լուսաբանելու դրութիւնը, և դէշիֆրի ենթարկելու այդօրինակ քաղաքական հաղորդագրութիւնները:

Բայց այստեղ պէտք է յիշեմ և հետևեալ դէպքի մասին:

Քեազիմ Կարաբեկիր փաշայի Կարսի նահանգի վերայ արշաւից դեռ շատ առաջ դէպի մեր և Տաճկաստանի սահմանագծի անկիւնը՝ այնտեղ ուր Քուր գետը քերում է Օլթիի և Արդահանի սարալանջը, ժամանեց վրաց կառավարութեան զինուորական բազմաթիւ մի յանձնաժողով: Այդ կօմիսեայի նախագահն

էր վրաց պարլամետնի յայտնի պատգամաւոր և զինուորական գործերին միշտ միջամտող Չխենկելի: Նորան ընկերակցում էին վրաց զօրաբանակի հրամանատարը, գեներալնի շտաբի պետը, վրաց բոլոր սահմանապահ զօրքերի հրամանտարը, մի քանի նշանաւոր գեներալներ և գեներալնի շտաբի բազմաթիւ սպաներ:

Շատ հասկանալի էր, որ պատգամաւոր Չխենկելի, որ վրաց կաբինետում զբաղւում էր բացառապէս քաղաքական-ռազմական գործերով, և որ նոր էր վերադարձել արտասահմանից՝ ոչ զբօսանքի էր եկել այդ լեռնոտ և հեռաւոր աշխարհը վրաց զօրաբանակի բոլոր մասնագէտ բարձրաստիճան զինուորականների հետ, և ոչ ընթացիկ խաղաղ գործերի առիթով: Շատ պարզ էր, որ այդ յանձնաժողովը ունէր ինչ որ շատ գաղտնի քաղաքական նպատակներ: Արդահանի գաւառապետը ծածկագիր հեռագրով տեղեկացրել էր ինձ այդ յանձնաժողովի ժամանելու մասին, և ես քաղաքավարութեան սովորական ձևը պահպանելու համար՝ հեռագրեցի գնդապետ Կադիմովին շքախմբով անցնել Կուր գետի վրաց սահմանի այն կողմը, և իմ կողմից ողջունել բարձր յանձնաժողովի նախագահին: Միևնոյն ժամանակ ես յանձնարարեցի գաւառապետին՝ դիտել եկուոր զինուորականների անցուդարձը, և գաղտնի տեղեկացնել ինձ հետևանքի մասին: Այդ բոլորի մասին ես նոյն օրը ծածկագիր հեռագրով հաղորդեցի ներքին գործերի մինիստրին:

Բայց այդ առիթով՝ ի հարկէ կառավարութիւնից ես ոչ մի գրութիւն չը ստացայ: Բայց այդ ժամանակամիջոցում ուշագրաւ է և հետևեալ փաստը:

Արդահանի գաւառապետ գնդապետ Կադիմով ծածկագիր հեռագրով տեղեկացրեց ինձ, որ թիւրքաց հրամանատարութեան և վրաց կառավարութեան միջև ինչ որ բանակցութիւններ են տեղի ունենում: Գաւառապետին չը յաջողուեց ճշտութեամբ պարզելու, թէ ինչի՞ մասին են այդ գաղտնի բանակցութիւնները: Մի տեղեակութեամբ վրաց կառավարութիւնը ուզում էր գրաւել Օլթիի գաւառի մի մասը, միւս աղբիւրներից ստացուած տեղեկութիւնները ցոյց էին տալիս, որ այդ երկու իշխանութիւնները սակարկում են Աջարիայի մասին: Այնուհետև գնդապետ Կադիմով ծածկագիր հեռագրով հաղորդեց ինձ, որ վրաց գնդապետ Աբաշիդձէ, իր երկու սպաներով գաղտնի անցաւ տաճկաց սահմանը, և թիւրքաց հրամանատարութեան հետ ինչ որ խորհրդակցութիւն էր ունեցել: Եւ այդ բոլորը կատարւում էր Կարաբեկիր փաշայի Կարսի արշաւի նախօրեակում: Եթէ դուք հիմա աչքի անցնելու լինէք վրաց և թիւրք կառավարութիւնների բնոյթը տաճկահայ պատերազմի շրջանում, և ապա այն հանդիսաւոր ճանապարհորդութիւնը, որ Կարսի գրաւման միւս օրը Արդահանի վերայով դէպի Թիֆլիզ կատարեց թիւրքաց առաջի հիւպատոս գնդապետ Քեազիմ բէյ, Ձեզ համար շատ պարզ կը լինեն այդ բոլոր անցուդարձների և խորհուրդակցութիւնների պատկերը և իմաստը:

Կարսի նահանգը տիրելուց յետոյ, թիւրք զօրքերի հրամանատարը իր սպաներից մէկին, Քեազիմ բէյ անունով, նշանակեց թիւրքաց հիւպատոս Վրաստանում, և Քեազիմ բէյ Արդահանի վերայով մեկնեց Թիֆլիզ: Ճանապարհին՝ թէ՛ վրաց Արդահանում, թէ՛ և Ախալքալաք, Ախալցխայ՝ վրաց կառավարութիւնը փայլուն ընդունելութիւն է ցոյց տուել հիւպատոսին, և ճաշկերոյթներում արտասանած ճառերը Թիւրքիայի և Վրաստանի մասին համեմուած էին երկու կողմերի ջերմալից բարեկամութեամբ: Այդ բոլոր և յետագայ փաստերը մի աւելորդ անգամ ասում էին, որ այդ բարեկամութիւնը՝ ի հաշիւ ընկած Հայաստանի էր, և նորից ընդգծում, որ վրացիք և օսմանցիները վաղուց բանակցում էին և վաղուց խորհրդակցում մեր թիկունքում և մեզանից գաղտնի:

Բայց ի՞նչ էր անում Թիֆլիզի հայկական միսիան և հայաշատ Թիֆլիզը... Շատ հետաքրքիր է, որ իմ ծածկագիր վերջի հեռագրի վերայ, ուր ես տեղեկացնում էի կառավարութեանը գնդապետ իշխան Աբաշիձէի Տաճկաստան անցնելու մասին՝ այն ժամանակուայ զօրաց, նաև ներքին գործերի մինիստր Ռուբէն փաշան իմաստալից մակագրել էր. «Կասկածել*[ի]* է: Երևում է, որ մի անտեսանելի ձեռք դիտաւորեալ շփոթեցնում է մեզ պարզել»:

Մինիստրը ուզում էր ասել, որ այդ տեղեկութիւնները ի դէմս գնդապետ Կադիմովի՝ բխում են թուրքական աղբիւրից, և որ գնդապետ Կադիմով դիտաւորեալ մոլորեցնում է մեզ:

Պէտք է ասել, որ այդ օրերում Ռուբէն փաշան գտնւում էր իր ռուսախօս գեներալների ազդեցութեան գագաթնակէտում: Մեր ասպետ գեներալները Կարսի նահանգի բոլոր գաղտնի հաղորդագրութիւնները նաղլ՝ առակ էին համարում, և բոլոր միջոցներով աշխատում էին կառավարութեան առաջ նսեմացնելու այդ հաղորդագրութիւնների նշանակութիւնը: Ռուս կայսերական «օրիենտացիա» ունեցող մեր գեներալները՝ բռնելու և ջարդելու այդ խանդոտ կողմնակիցները, չէին կարողանում տանել նահանգապետի տեղեկալից և շրջահայեաց գործելակերպը: Այդ հերոսները ուզում էին ասել, որ Կարսի նահանգի գոյութիւնով հայ կառավարութիւնը երախտապարտ է զինուորականներին, և նոցանից դուրս և նոցանից բացի՝ բոլորը սուտ է և բոլորը սխալ: Եթէ դուք այսօր սիստեմի վերածէք այն բոլոր գաղտնի հաղորդագրութիւնները՝ որոնք իւր ժամանակին ես արել եմ կառավարութեանը, դուք կը ստանաք այն պատկերի գծերը, որ ապա այնչափ օրհասալից ծաւալուեց մեր առաջ: Եւ դեռ այն ժամանակ շատ պարզ էր, որ մեր սահմաններում, թիւրքաց և վրաց տարածութիւններում խմորւում էին ինչ որ դաւալից միտումներ: Այդ հատուկտոր տեղեկութիւնների հիման վերայ անկարելի էր ի հարկէ գուշակութիւններ անել, բայց այնուամենայնիւ այդ նախնական փաստերը բաւական էին յետախոյզ լուրջ աշխատանքներ կազմակերպելու համար: Եւ այդ աշխատանքները պէտք է յանձնուէին ոչ թէ ռուս սպայ Մեդվեդեւներին, որ յամենայն դէպս մի աչքով դէպի հիւսիս էին նայում՝ և իրանց հոգու խոր-

քերում փայփայում վերստին իշխանալից ճնշելու մեզ: Հայ զինուորական, պետական խուզարկու գործը պէտք է լինէր բացառապէս հայկական վստահելից ձեռքում, և պէտք է կազմակերպուած լինէր ոչ անցողակի և վայրիվերոյ: Այդ լուրջ և մեծ պատրաստականութիւն պահանջող գործը պէտք ունէր ոչ թէ սիրողների և ճառախօսների՝ այլ մարդկանց, որոնք շատ քիչ են խօսում և աւելի լսում և դիտում: Այդ գործը, որ պէտք է իր աներևոյթ ցանցերը ունենար և արտասահմանում և երկրի խորքում՝ պէտք է օժանդակուէր և մեր միջոցներով: Եւ միայն այդ պայմաններում մենք իրազեկ կը լինէինք մեր դրսի և ներսի անցուդարձին, և ազատուած կը լինէինք գլխապետ Մեդվեդեւի և ընկերութեան հեղինակալից յայտարարութիւններից, որ Կարսի նահանգապետի հաղորդագրութ-իւնները բոլորը սուտ են և բոլորը սխալ:

Բայց մի երկու խօսք էլ Ռուբէն փաշայի «մակագրութեան» առիթով:

Որչափ և տարօրինակ լինի այդ, Կարսի նահանգապետը առաջին անգամն էր տեսնում Ներքին գործերի մինիստրի ստորագրութիւնը:

Պէտք չէ ասել ի հարկէ, որ նահանգապետը ներքին գործերի մինիստրի աւագ աշխատակիցն է, և ամէնուրէք նահանգապետները անմիջական գրագրութեան մէջ են մինիստրի հետ: Եւ այլ կերպ՝ ի հարկէ չի էլ կարող լինել: Բայց այդպէս չէր մեզանում: Իմ ստացուած բոլոր հեռագիրները և գրութիւնները՝ ի տեղի մինիստրի ստորագրում էին բոլորը, բացի մինիստրից: Եւ նահանգապետը շատ անգամ ակամայ մտատանջւում էր, գրագէ՞տ է այդ մինիստրը, թէ ոչ... Ի հարկէ Ռուբէն փաշան պարփակելով իր մէջ երկու մինիստր՝ շատ զբաղուած էր թէ «կուսակցական» և թէ որպէս «մասնագէտ», «ռազմական» «կարևորագոյն» գործերով, բայց և այնպէս՝ կարծում ենք Կարսի նահանգապետը իրաւունք ունէր սպասելու ինքն էլ նորանից գէթ մի երկու տող ստանալու: Բայց փաշան՝ ինչպէս երևում էր, այնչափ զբաղուած էր, որ ժամանակ չունէր մի հեռագիր անգամ նահանգապետի անունով ստորագրելու: Եւ այդ շատ և շատ անգամ ի ծայր անգրագէտ խմբագրուած հեռագիրները ստորագրում էին մարդիկ՝ որոնց ազգանունը անգամ նահանգապետը առաջի անգամն էր հանդիպում: Եւ ես շատ անգամ չը գիտէի, պաշտօնեայ է այդ «ի տեղն մինիստրի» ստորագրողը՝ թէ շարքային «ընկեր» ու պատահական անցորդ...

Իմ գաղտնի հաղորդագրութիւնները բազմատեսակ խնդիրների մասին՝ մինիստրը ուղարկում էր մեր զօրաց գլխաւոր շտաբի գաղտնի բաժանմունքը, իսկ այս կարևորագոյն դիւանի պետը դարձեալ մի ռուս սպա էր: Թէ ինչն էր ստիպում մեր Զօրաց մինիստրին՝ պետութեան գերագոյն գաղտնի բանալին ռուս սպային յանձնելու, շատերի համար մնաց մի մեծ գաղտնիք: Մի բան միայն ակներև էր, եթէ մեր կառավարչական ընթացքում մենք ունէինք շատ և շատ թերի և միանգամայն անբաւարար հիմնարկութիւն՝ այդ մեր զինուորական խուզարկու բաժինն էր: Նա ոչինչ չը գիտէր, նա զբաղուած էր ինտրիգներով և իր հաշիւնե-

րով՝ բայց ոչ պետական վսեմագոյն իմաստի պահպանութեամբ: Այդ շտաբը միշտ հերքում էր Կարսի նահանգապետի գաղտնի հաղորդագրութիւնները, և միշտ կասկածի ենթարկում այն աղբիւրները՝ որտեղից ես ստանում էի այդ տեղեկութիւնները:

Զինուորականները նախանձում էին, թէ ինչո՞ւ այդ տեղեկութիւնները կառավարութիւնը ոչ իրանց միջոցովն է ստանում, իսկ գեներալներին թւում էր, որ իմ այդ հաղորդագրութիւնները նսեմացնում են իրանց նշանակութիւնը, և խախտում նոցա հաշիւները՝ առանց կռուի և առանց արեան դափնիք ու հռչակ ստանալու գործում:

Այդ ... բաւականին, կարծեմ *(փաստաթուղթը վնասուած է)* ... մեր զինուորական խայտառակ անյաջող յետագան:

Մեր հրամանատարութիւնը ոչինչ չը գիտէր՝ թէ ինչ է կատարւում սահմանից այն կողմը, նա չը գիտէր և երկրի տրամադրութիւնը դէպի ժամանակի վերապրումները: Այդ մթնոլորտում ամենաքաջազնալից բանակն էլ պէտք է պարտուէր, և մենք կուլ գնացինք այն ձախորդ ընթացքին՝ ուր ամէն ինչ մեր դէմ էր և մենք բոլորի դէմ: Իսկ մենք, ինքնահաւան և անգիտակից դէպի պայթալից շրջապատը՝ միայն զառանցում էինք և միայն օրօրւում այդ խաբուսիկ մթնոլորտում: Այդպէս է իրական այն տեսիլներից մէկը, որոնցով այնչափ հարուստ էր մեր կարճատև պետական գոյութիւնը:

Ինչպէս տեսնում էք, կառավարութիւնը ռուսախօս գեներալների ազդեցութեան տակ՝ նշանակութիւն չը տուեց իւր ժամանակին Կարսի նահանգապետի գործակալական տեղեկութիւններին: Կառավարութիւնը պետական կորով չունեցաւ օգտագործելու և հաչող քրդերին: Ռուբէն փաշային թւում էր, որ նահանգապետի զեկուցումները քրդերի մասին հաղորդւում են նորան որպէս մի բանասիրական միայն, և նա ժամանակ չէր գտնում ի հարկէ զբաղուելու այդ մանր-մունր խնդիրներով... Իսկ մինչ փաշան «կուսակցական» շրջաններում զբաղուած էր «տակտիկական» հարցերով՝ քեամալիստները եռանդալից կազմակերպւում էին, օգտագործում մեր բազմաթիւ պետական սխալները, իրանց կողմը քաշում քրդերին և մեր գլխի վերայով ձեռք էին մեկնում վրացիներին:

XVI

Մեր իշխանութեան կազմակերպութիւնը Կարսի նահանգում՝ կոչուած էր կատարուելու առանձնակի պայմաններում: Տասնեակ տարիների ընթացքում Կարսի նահանգը ռուս պետական միտումների համար մի ժամանակաւոր կայան էր: Ռուս կառավարութիւնը կանգ չառաւ այստեղ իր պետական և քաղաքացիական ստեղծագործութեան համար: Այդ տարածութեան վերայ նա միայն մարզւում էր իր նուաճողական ապագայի համար, և տասնեակ տարիներ որո-

տալից թմբակահարելով Հայաստանի մեծ անցքում՝ պատերազմական խաբուսիկ տրամադրութիւն էր ստեղծում Բագրատունեաց հարստութեան սահմաններում:

Եթէ Կովկասը առհասարակ մեծ չափով հարիւր տարուայ ընթացքում զբաղեցրել է ռուս իշխանութիւնը քաղաքական իմաստով՝ այդ հեռանկարները շատ բարդ և առանձնակի գունաւոր էին Կարսի նահանգում: Ռուս կառավարութիւնը միանգամայն կղզիացրեց իր պատերազմական զինուորական պէտքերի համար Կարսի նահանգը, և այդ ուղղութեամբ տանելով իր անելիքները՝ նա միակողմանի կրթեց երկրի տրամադրութիւնը:

Վերջի պատերազմի ընթացքում Կարսը դարձաւ ռուս մեծ զօրաբանակի կենտրոնական կայանը, և այստեղ աւելի քան ուր և իցէ՝ անդրադարձան այդ պատերազմի արհաւիրքը:

Իսկ պետական յեղաշրջման օրերում՝ ռուս զինուոր-մուժիկը լիովին արտայայտեց իր անզուգական ջարդարար կորովը:

Եւ անցնելով վերջին անգամ Արփաչայը՝ նա թողնում էր այստեղ միայն զըզուանք, և իր յետևից տանում երկրի բուռն անէծքը և ատելութիւնը:

Տաճկաց բանակը և թիւրքաց օրէնքները սփոփում չը բերեցին ի հարկէ բորբոքուած երկրին: Ժամանակաւոր մթնոլորտում բոլորը անցողակի տպաւորութեան տակ էին, և օդում չը կար կայուն հանգիստ՝ որին այնչափ կարօտ էր ի ծայր ջղայնացած երկիրը: Թիւրքաց զօրքերի հեռանալուց յետոյ նորից կրկնուեց ռուս պետական յեղաշրջման անիշխան ժամանակամիջոցը, և «յեղափոխութ-իւնը խորացնող» բախտախնդիրների համաձայնութիւնը վխտում էր այդ մութ և հեռաւոր երկրում, և «ինքնորոշման» կոչի տակ հնձում աջ ու ձախ...

Այդպէս էր այն երկրի անցեալ և ժամանակակից բարոյական տիպարը, որ պէտք է ժառանգէր հայկական կառավարութիւնը:

Պէտք չէ ասել կարծեմ, որ պատմական, քաղաքական, վարչական ազգային և տնտեսական այդ աւելի քան խայտաճամուկ երկրում՝ նոր իրաւակարգ, նոր պետականութիւն ստեղծելը մի շատ դժուարին և բարդ գործ էր: Եւ յամենայն դէպս, այդ խոշորագոյն պետական աշխատանքը չէր կարելի կատարել տեսական, տէօրետիկ, շաբլօն հիմունքներով, այլ պէտք էր հաշուի առնել այն հազարաւոր մեծ և փոքր տուեալները՝ որոնց բաղադրութիւնը կեանքի կենսունակութիւնն է և նորա իմաստը:

Յենուելով այդ բոլոր պայմանների վերայ, և ի նկատի առնելով, որ թուրք ազգաբնակութեան կեանքում դեռ տակաւին գերիշխում են նորա կրօնական զգացմունքները, որ այդ հաւատալիքներով տոգորուած է երկրի թէ քաղաքական և թէ բարոյական, քրէական աշխարհը, որ կինը, ամուսնութիւնը և ապահարզանը, արևելքի այդ նրբազգաց պատիւը՝ ամբողջովին հոգևոր օրէնքների և աշխարհայեցողութեան իրաւասութեան ներքոյ, ես հարկաւոր համարեցի մեծ

ուշադրութեամբ և լարուած զգուշութեամբ հաշուի առնել իմ կառավարչական գործելակերպում երկրի այդ առանձնակի դէմքը:

Շատ բնորոշ և հետաքրքիր է, որ մեր օրերի քաղաքական հրապարակի բոլոր արժէքաւորների վերագնահատումը թուրք ազգաբնակութեան մէջ չը երերեց կրօնի իմաստը: Թուրք հոգևորականութիւնը մնաց իր տեղում, հրապարակի թուրք «քաղաքական գործիչները» կատարում էին իրանց օրերի ծաղրածու փորձերը միայն այնտեղ, դուրսը՝ ի ցոյց օտարների և «յեղափոխութեան», իսկ երկրի ներսում այդ «գործիչները» նոյն մոլեռանդ թուրքերն էին՝ նոյն ի ծայր պահպանողական, ֆանատիկ և բռնապետ: Ժամանակակից քաղաքական արկածները «ինքնորոշման» «յեղափոխութեան խորացման» և մեր օրերի հերթական միւս տեսիլները թուրք առաջաւորները վերապահում և կատարում էին միայն ի ցոյց օտարների: Իսկ երկրի ներսը նոյն թուրքութիւնն էր, նոյն հարեմը, նոյն խանդը, և դարձեալ նոյն վրէժը, դաշոյնը և արիւնը...

Այդպէս էր Կարսի նահանգի թուրք մթնոլորտը, և նորա հոգևորականութիւնը:

Նահանգի օտարազգիների թւում՝ յոյները երկրորդ տեղն էին բռնում: Իրանց կենցաղով, նիստ ու կացով, հաւատալիքներով և ճաշակով՝ յոյները բնիկների հարազատներն էին:

Եւ եթէ յոյնը խորամանկ է իր բնոյթով՝ նորա հոգու այդ տրամադրութիւնը գերազանց կերպով զարգացել է տաճկաց սահմաններում:

Պայմանները ստիպել են նորան միշտ կեղծել, միշտ հաճոյանալ, և այդպիսով նա միշտ կապակցել է իր խղճի հետ: Եւ ազգային այդ տրամադրութիւնը մեծ չափով պարփակուել է յոյն հոգևորականութեան մէջ:

Յոյն կղերը միշտ մեծ կրքով միջամտել են երկրի հասարակական և իրաւակարգային բոլոր խնդիրներում, և միշտ իրանց յետևից տանելով ամբոխը՝ նշանաւոր դեր են կատարել պետական իմաստով:

Յոյն այդ խարդախ և ճիզուիդ հոգևորականութիւնը՝ միշտ մեծ խոչընդոտներ է յարուցել պետական աշխատանքների ասպարէզում, և միշտ մեծ հոգսեր պատճառել երկրի թէ տաճիկ և թէ ռուս իշխանութիւններին:

Հազիւ թէ պէտք է ասել, որ հայկական կառավարութիւնը չէր կարող միանգամից դաստիարակէր թուրք և յոյն ազդեցիկ և ուժեղ հոգևորականութիւնը, նա չէր կարող խօսել այդ ձորերում անջատ այդ ուժեղ և հզօր կրօնից: Հայկական կառավարութիւնը պէտք է երկրի իշխանութիւնը լինէր՝ և երկիր կառավարելու գործում նա պէտք է ներդաշնակ լինէր այդ աշխարհի հոգեբանութեան և տրամադրութիւնների հետ, և խուսափէր այնպիսի ցնցումներից՝ որոնք ոչ միայն նպատակայարմար չէին, այլ և շատ վտանգաւոր պետական շինարար գործում: Զուգընթաց այդ բոլորի հետ՝ ես չէի կարող չը նկատել, որ երկրի այն տարրը, որին ցանկալի չէր հայկական իշխանութիւնը՝ տրամադրութիւն ունի երկրի հոգ-

ևորականութիւնը գործիք դարձնել իր ներքին և գաղտնագողի կռւում իր նոր իշխանութեան հետ: Բացի այդ, այդ երկու կարող հոգևորականութիւնը, որ մինչև այսօր անջատ էին իրանց ընթացքում՝ տրամադրութիւն ունեն մերձենալու և ընդհանուր ոյժերով մտքերի շփոթ առաջ բերելով երկրում, երերալու նահանգի իրաւակարգը: Այդ բոլոր տուեալները և պայմանները պահանջում էին, որ ես հաշուի առնեմ մի կողմից երկրի հաւատացող, կրօնական տրամադրութեանը, և միւս՝ այն մեծ նշանակութիւնը, որ ունի նահանգում այդ օտարազգի կղերը:

Եւ ես պարտաւոր էի մեծարել երկրի այդ կրօնական զգացմունքը՝ իմ պետական, կառավարչական միտումներով երկրի հաւատը և համակրութիւնը տիրելու համար: Միւս կողմից, ես պէտք է իմ ձեռքում պահէի այդ մոլեռանդ և խարդախ հոգևորականութիւնը՝ և այդպիսով ստիպէի նորան խոնարհուելու պետական գաղափարի առաջ:

Եւ երկար տարիների ընթացքում ուսումնասիրած լինելով արևելքի այդ հոգեբանութիւնը՝ ես գիտէի, որ այդ կառավարչական գործելակերպը այն միակ խելացի ուղին է, որով պէտք է անցնէ մեր պետական բարդ աշխատանքը:

Հրաւիրելով ինձ մօտ սկզբից նահանգի թուրք և յետոյ յոյն անուանիներին և հոգևորականութեանը՝ ես պարզեցի նոցա, որ Հայաստանի կառավարութիւնը ոչ թէ հայերի կառավարութիւնն է՝ այլ այն երկրի իշխանութիւնը, որ ենթակայ է Հայաստանի Հանրապետութեանը, իսկ հայ ժողովուրդը ինքը հաւատացող լինելով՝ միշտ մեծարել է բոլոր կրօնները և նոցա սպասաւորներին:

Դառնալով իմ՝ նահանգապետի վերաբերմունքին դէպի երկրի այդ առաջնակարգ խնդիրները, ես ընդգծեցի, որ երկար տարիներ ժողովրդի մէջ ապրած լինելով՝ ես միշտ իմ պաշտօնաւորութեան ընթացքում գործակցել եմ երկրի բանիմաց մարդկանց, հոգևորականութեան հետ, և շատ ու շատ անգամ օգտուել եմ նոցա հեղինակաւոր ցուցմուքներով և նոցա ժողովրդականութեամբ: Եւ այդ բոլոր պատճառներով, խոնարհուելով իմ կառավարութեան վստահած երկրի հաւատի առաջ՝ ես կ՛ուզէի նախ և առաջ կանոնաւորուած տեսնել նահանգի հոգևոր գործերը:

Կառավարութիւնը՝ շարունակեցի ես, պէտք ունի իր օրէնսդիր, դատաստանական և վարչական աշխատանքներում հոգևորականութեան աջակցութեան, և այդպիսով հոգևոր գործերի կանոնաւորութիւնը նահանգում նա իր պետական պարտքն է համարում:

Այդ բոլոր միտումներով՝ վերջացրեցի ես, կառավարութիւնը յանձնարել է ինձ մշակել նահանգի հոգևոր կառավարութիւնների օրինագիծը, և ծախքերի նախահաշիւը:

Արքունի գանձարանից այդ կառավարութիւններին ռոճիկ և ծախք նշանակելով և պատիւ անելով երկրի ազգաբնակութեանը՝ նահանգական այդ հոգևոր ատեանները կառավարութիւնը իր պաշտօնէութեան շարքն է ընդունում:

Ես միանգամայն գերեցի թուրքերի և յոյների տրամադրութիւնը՝ իսկ նոցա ախունդները, մօլլաները և քահանաները միանգամից ենթակայ և խոնարհ դարձան...

Այնուհետև նոցանից մեծամեծները շատ անգամ գալիս էին իմ պաշտօնական ընդունարանը, և իմ պաշտօնեաներից իմ առողջութիւնը հարցնում, տեղեկանում, ինչպէս է այսօր նահանգապետի տրամադրութիւնը, չունի՞ արդեօք, նա որևէ հրամաններ տալու նոցայ, և բաւականանալով իմ պաշտօնեաների հետ զրոյցով՝ նոքա թողնում էին նահանգապետի ապարանքը...

Որչափ և տարօրինակ թուայ այդ բոլորը մեր օրերի համար՝ բայց և այնպէս արևելքում կառավարելուց առաջ պէտք է հրամանատարել, և այդպիսով իշխանալից տրամադրութիւն ստեղծել: Եւ ես չէի կարող այլկերպ վարուել: Հազարումի առանձնակի և արտակարգ պայմաններ ստիպում էին ինձ սանձահարելու այդ լեռների և ձորերի նախնական բնազդը և քաջազնական հակումները: Եւ ես ո՛չ միայն բռնութիւն չէի գտնում այդ գործելակերպում՝ այլ կարծում էի, որ իրերի այլ ընթացքը, մեր ձորերի ներկայ մթնոլորտում՝ կարող էր միայն և միայն անիշխանութիւն ստեղծել, ուր կը քանդուի երկիրը, և նորա իշխանութիւնը վարկաբեկ կը լինի:

Միաժամանակ, ի հարկէ ես մշակեցի և հայոց հոգևոր կառավարութեան օրինագիծը: Կառավարութիւնը յարգեց իմ այդ ուղղութեամբ պատճառաբանուած միջնորդութիւնս և օրէնքի վերածեց իմ այդ օրինագիծը, թուրք և յոյն հոգևոր կառավարութիւնների նախագահներին և անդամներին ես ինքս ընտրեցի և նշանակեցի՝ իմ յատուկ այդ առիթով արձակուած գրաւոր հրամանով: Այդ երկու հոգևորականութ-եան ամենաուժեղ և ամենավնասակար մարդկանց ինձ ենթակայ դարձնելով՝ ես չէի միջամտում ի հարկէ նոցա ներքին գործերին: Ինձ հարկաւոր էր միայն ապահովեցնել պետական աշխատանքները՝ այդ նենգ, չարամիտ և վնասակար մարդկանցից: Իսկ այնուհետև այդ մարդիկը գործիք դարձան իմ կառավարչական գործելակերպ-ում և ես բազմատեսակ յանձնարարութիւններ էի տալիս այդ ճարպիկ և կարող մարդկանց՝ նահանգի այս և այն անկիւնը ուղարկելով...

Բայց հրապարակի աղմկահարներին թւում էր՝ գէթ նրանք այնպէս էին յայտարարում, որ «նահանգապետը թուրքասէր է», մոլեռանդ երկրպագու հոգևորականութեան, «սօցեալիստական» գաղափարներ ըմբռնելու համար «պատշաճ պատրաստականութիւն չունի», «կուսակցական չէ» և այլն:

Նահանգի ռուսախօս գեներալները պայքարելով նահանգապետի աթոռի շուրջը՝ ձայնակցում էին ի հարկէ իրանց այդ «ընկեր սոցիալիստներին», և այդ առանցքում նահանգապետի անունը աջ ու ձախ հոլովում և շարունակ վայնասուն պահում: Եւ մինչ այդ քաղաքացիական և զինուորական «սօցիալիստները» զբաղուած էին այդ պայքարով՝ հիմնօրէն երերւում էր պետական պատուանդա-

նը: Թալանը, զեղծումները և ազգային կորովի բացակայութիւնը մի կողմից՝ իսկ միւս ներքին դաւաճանների դաշնակցութիւնը ռուս ջարդարարների հետ և Քեամալ փաշաի հետ, գալիս էին խորտակելու այն կարճատև իշխանութ-իւնը, որ դարերի ընթացքում հայութիւնը երկնել էր այնպէս դառնալից և համակուած, այնպէս մեծ սիրով դէպի երկիրը և իր ինքնուրոյնութիւնը:

Հազար ու մի ձախորդ պայմանների առանցքում՝ դղրդալից ընկաւ մեր պետականութիւնը, և մեր վաղեմի երազները նորից անցան դէպի բարձր, դէպի երկինք: Բայց այստեղ՝ ներքևում մնացին մեր ջարդուած յոյսերի բեկորները, անէծք և ատելութիւն դէպի պատմական դաւաճանութիւնը, և հիասթափ տրամադրութիւն դէպի աշխատանք, որ յամենայն դէպս անկեղծ էր և համակուած բուռն իղձերով և ցանկութիւններով:

Այդպէս էին մեր երկրի, մեր պետական աշխատանքների չար ու բարի ոյժերը, որոնց բովում միշտ ծլում և միշտ մարում է կեանքը...

Վերջացնելով յիշողութիւններիս այս մասը՝ ես չեմ կարող ցաւ չը յայտնել, որ մեր երկրի և տրամադրութիւնների վերածնութեան օրերում՝ Կարսի նահանգ չայցելեց Երևանի թեմակալ առաջնորդը, որի իրաւասութեան սահմաններումն էր և Կարսի նահանգը:

Խորէն արքեպիսկոպոս Մուրադբեկեան՝ մեր ժամանակակից ամենաականաւոր հոգևորականներից մէկն է: Միշտ առաջադիմական և միշտ մոլեռանդ մարտնչող ազգային իդեալների համար՝ նա միշտ իր շուրջը ստեղծել է պատկառալից և բարձր ազգային կորով:

Երկինքը վերապահել է նորան հմայելու մարդկանց հակումները, և նոցա դէպի պարտք և պատիւ կոչելու մեծ գաղտնիքը:

Եւ որպէս նահանգապետ՝ ես մեծ փափաք ունէի տեսնելու մեր այդ հեղինակաւոր արքեպիսկոպոսին Կարսի նահանգում: Անդրադառնալով երկրի տրամադրութեանը՝ ես յոյս ունէի մեծ պատուով ընդունելու մեր եկեղեցու այդ ժողովրդական երեցին, և ինձ թւում էր, որ ես կ՛օգտագործեմ նորա հեղինակութիւնը մեր օրերի հասարակական և պետական մթնոլորտը կեանքի կոչելու համար:

Բայց արքեպիսկոպոսը խորշեց այն վայրից՝ ուր յուզուած և յուսալից խմբուած էր թիւրքահայութիւնը, և զլացաւ իր դիւթիչ ներկայութեամբ յորդոր կարդալու մեր պատուի և մեր պարտաւորութիւնների մեծ իմաստի մասին...

Բայց անհասանելի են պատմութեան ուղիները, և գուցէ պէտք է կատարուէին այն բոլորը՝ ինչով որ տառապեցինք և ինչ որ տեսանք...

XVII *(ջնջած)*
XIX *(մատիտագիր)*

Վիճակագրական, ստատիստիկ տեղեկութիւնների խնդիրը Կովկասում՝ միշտ երկրի վարչական, ձևական, ամենաթոյլ կողն էր: Ստատիստիկան վարում էին բացառապէս գիւղական հասարակութիւնների գրագիրները: Գաւառներում այդ նիւթը խմբագրում էին գաւառական վարչութեան փոքր պաշտօնեաները, և այնուհետև այդ ճիշտ և ստուգուած «տուեալները գնում էին բարձր» և տարածւում պետական և հասարակական հիմնարկութիւններում՝ որպէս հում նիւթեր մեր երկրի ուսումնասիրութեան համար: Պէտք չը կայ ասելու, որ այդ տեղեկութիւնները ոչ միայն չէին գծում երկրի դէմքը՝ այլև միանգամայն շինծու և անշնորհք կերպով կազմուած լինելով, տարուց տարի ենթարկւում էին փոփոխութեան ոչ թէ ըստ էութեան, այլ միայն ձևօրէն: Նոյն գրագիրները տեղ-տեղ աւելացնում և պակասեցնում էին թուերի զերոները, և այդպիսով թխում էին այդ նիւթը, որ երկրի ուսումնասիրութիւն էր կոչւում:

Կովկասի նահանգական և գաւառական ադմինիստրացիան էլ, տգէտ և արկածախնդիր գեներալներից, գնդապետներից և այլ աստիճանաւորներից բաղկացած լինելով՝ չէր կարող ի հարկէ հասկանալ երկրի ուսումնասիրութեան նշանակութիւնը: Նա տարուած էր իր պաշտօնի անկոչ զուարճալից իմաստով միայն, և թողնելով ստատիստիկան, երկրի ուսումնասիրութեան գործը վարչութեան տականքին, գիւղական գլաւաներին և գրագիրներին՝ ինքը միայն աղմկում էր հրապարակում և շատ անգամ հեղինակաւոր յայտարարութիւններ անում երկրի դրութեան և պէտքերի համար, սասանեցնելով իր կարող ձեռքում ունեցած այդ «ճիշտ» թուերն ու տուեալները:

Այդպէս էր ստաստիստիկան՝ երկրի ուսումնասիրութեան գործը Կովկասում, Հայաստանի Հանրապետութեան նախօրեակում: Առանձին բացառութիւն էր կազմում այդ առանցքում Կարսի նահանգը միայն:

Հարիւր տարուայ ընթացքում Կարսը այն վայրն էր, ուր կուտակւում էր ռուս նուաճալից տրամադրութիւնը, և Կարսի անցքերում ռուս պետականութիւնը շարունակ փողահարել է, և շարունակ թմբկալից՝ դէպի արևելք արշաւի պատրաստուել...

Եւ այդ նպատակալից միտումներով՝ ռուս կառավարութիւնը ուսումնասիրել է Կարսի նահանգը: Նա կուտակել է բազմաթիւ վիճակագրական տեղեկութիւններ, բայց այդ բոլոր ժողովածուները տենդեցեօզ, որոշ նպատակներով կազմուած լինելով՝ չէին տալիս երկրի իսկական պատկերը: Այդ բոլոր տեղեկութիւնները բացառապէս զինուորական, ռազմական բովանդակութիւն ունէին, չէին անդրադառնում երկրի բոլոր այն տուեալներին՝ որոնց հաւաքածուն պարփա-

կում էր ինքը կեանքը: Եւ այդպիսով, եթէ ռուս զինուորական մասնագէտները տասնեակ տարիների ընթացքում ուսումնասիրել են Կարսի նահանգը, և բազմահատոր նիւթեր են ժողովել ռուս զօրաբանակի ապագայ դափնալից յաղթութիւնների համար՝ ռուս կառավարութիւնը ոչինչ չարեց այդ երկրի քաղաքացիական ուսումնասիրութեան համար:

Հայկական իշխանութիւնը գալիս էր տիրելու Կարսի նահանգը առանձնակի պատմական պայմաններում: Ռուս պետական յեղաշրջումը, ռուս զօրքի և հասարակութեան լքումը, թիւրքիայի արշաւը դէի Կարսի նահանգը և այդ բոլորի հետ կապուած քաղաքական արկածները՝ միանգամայն կերպարանափոխում էին նահանգի պատկերը: Հայ, ասորի, յոյն, եզիդ ազգաբնակութիւնը, մասամբ էլ մի քանի ռուս գիւղեր՝ թողել, գաղթել էին, ցիր ու ցան եղել: Եւ Կարսը, Կաղզուանը, Արդահանը և բազմաթիւ շէն ու հարուստ գիւղերը գրաւել էին թուրքերը և քրդերը, որոնք մասամբ տեղաւորուել էին այնտեղ նահանգի զանազան վայերից, մասամբ էլ Երևանի, Գանձակի և Թիֆլիզի նահանգի Բորչալու գաւառի եկուոր թուրքերն էին: Շինական և գաւառական կառավարութիւններում ոչնչացուած էին ի հարկէ բոլոր ընտանեկան ցուցակները (**տՏրպՎպռրՑՉպվվօպ րտՌրՍՌ**) ինչպէս որ անյայտացել էին և հոգևոր կառավարութիւններից բոլոր տօմարները և բոլոր գրքերը: Այդպիսով մենք ոչ մի գրաւոր տեղեկութիւն չունէինք այլևս նահանգի ազգաբնակութեան թուի մասին: Եթէ այդ դրութեանը մենք աւելացնէինք և այն, որ հայ, յոյն և միւս ազգաբնակութիւնը վերադառնում էր մաս-մաս, եկուոր թուրքերից մի մասը գաղթում, վերադառնում էր իր նահանգները, իսկ տեղական թուրքերն ու քրդերը, որ գրաւել էին հայ և յոյն գիւղերը՝ վերադարռնում էին ոչ թէ իրանց առաջուայ բնակատեղին, այլ շատ անգամ անցնում էին մօտակայ թուրք և քուրդ գիւղերը, մենք կը ստանանք այնպիսի շփոթ, որ վարչական աշխատանքների համար ստեղծում էր մեծ դժուարութիւններ: Ոչ միայն հողային տուրքի, առևտրական, արդիւնաբերական դրամական վճարների համար՝ այլև զինակոչի համար մենք ոչ մի գրաւոր տուեալ չունէինք, և իշխանութիւնը այդ առանցքում տարուբերւում էր շատ փափուկ պայմաններում: Երկար տարիների ընթացքում վարչական, ադմինիստրատիւ պաշտօններ վարելով երկրում և մեծ սիրով հետևելով գաւառական կենաքին՝ ես իրականութեան մէջ տեսնում էի, թէ որչա՞փ նշանաւոր են երկրի ուսումնասիրութեան տուեալները կառավարչական գործի իմաստում: Առանց թուերի, առանց գաւառի մանրամասն նկարագրութեան, առանց այն պատկերի՝ ուր նշանագրւում էին դաշտերի և լեռների բոլոր ուղիները, ջրաղացները, ջրվէժները, համեղ ջրերը և այլ և այլն՝ անկարելի է ըմբռնել երկրի ուրուագիծը և նորա հոգեբանութիւնը, հետևապէս անկարելի է առանց այդ ուղեցոյց տուեալների՝ կառավարել այդ երկիրը:

Այդ բոլոր միտումներով և անցնելով գործի ոչ ի պաշտօնէ՝ այլ իմ հոգու ամբողջ տրամադրութեամբ կատարելու հայրենի երկրում մեր ընդհանուր մեծ աշխատանքը, ես առաջի օրուանից ծանրացայ այդ մեծ խնդրի վերայ: Ինձ շրջապատող բազմաթիւ պաշտօնէութիւնը այսօր ռուս կապիտանները չէին այլևս, որոնք միժամանակ նապաստակը մեր լեռներում և սայլով էին բռնում: Իմ աշխատակիցները հայեր էին, մասամբ թուրքեր, յոյներ և քրդեր, այսինքն այն մարդիկը՝ որոնց համար մօտ և ընտանի են այն հազար ու մի մանրամասնութիւնները, որոնց բազմատեսիլ մանրանկարը ինքը գաւառական կեանքն է:

Երբ տարիներ առաջ, ես կատարում էի զանազան քրէական գործերի քննութիւնը, կամ ինձանից տեղեկութիւններ էին պահանջում երկրի բարդ տնտեսական-հասարակական խնդիրների մասին, և առաջարկում էին կցել այդ զեկուցումներին և իմ անձնական այդ առիթով կարծիքս և եզրակացութիւնս՝ ինձ ամէն անգամ պատասխանալից ճնշում էին իմ պարտաւորութիւններս: Ես չէի կարող չը տեսնել, որ սխալ, վայրիվերոյ տուեալները և տեղեկութիւնները՝ չէին կարող ճշմարտութիւն և արդարադատութիւն ստեղծել: Երբեմն հանելուկային քրէական գործում, ուր արևելեան զգացմունքների բնոյթը շատ անգամ ստեղծում է մի կախարդուած հանգոյց, և առիթ է տալիս բազմատեսակ մեկնութիւնների՝ ես մեծ յաջողութեամբ օգտւում էի երկրի ուսումնասիրութեան իմ պաշարով, և երերում այդ առանցքում՝ այդ դրամատիկ անցքի վարագոյրը: Իր պարտաւորութիւնների շրջանում պաշտօնեան պէտք է զինուած լինի այդ շրջփակի ուսումնասիրութեան տուեալներով, և միայն այն ժամանակ նա յաջողութեամբ կը տանէ իր գործը, և վարկ կունենայ իր գաւառակում:

Մի 30 տարի առաջ՝ Նոր Բայեազէտ լեռնոտ մասում, Ծաղկաձոր-Դարաչիչակում՝ ուր Զանգուն, Հրազդանը յորձանք տալով ահագին մեծ թափով նետւում է դէպի ցած, և զանգահար գնում դէպի Արաքսի հռչակաւոր հովիտը՝ կատարուեց մի մեծ հանելուկային ոճիր: Մի կաթնահամ աղբիւրի մօտ, որի արծաթել ջրերը ուշիկ ծփում են դէպի ջրվէժալից Զանգուն՝ գտնուեց մի չքնաղ աղջկայ դիակ: Սպիտակ հագուստով և խայտաճամուկ արախչինը գլխին, սափորը, կուժը կողքին՝ դիակը ընկած էր այդ կախառդալից ձորում: Ամէն բան իր տեղումն էր, չը կար միայն արևելեան թուխ գիսակներից մէկը...

Ոստիկանութեան և դատաստանական քննիչի նախնական քննութիւնները չը կարողացան պարզել գործի պատկերը: Պրոկուրորը պահանջեց, որ կատարվի լրացուցիչ վարչական քննութիւն, և ցանկութիւն յայտնեց Երևանի նահանգապետին, որ այդ քննութիւնը յանձնուի Նոր Բայեզէտի գաւառապետի աւագ օգնականին, տողերիս գրողին:

Այդ անցքից դեռ առաջ՝ ես շատ անգամ դեգերել էի այդ գեղաձիծաղ ձորում, և միշտ հմայուել այդ քչքչան ջրերով: Մեր գաւառը սիրում է բևեռել իր տրամադրութիւնները և իր հաւատալիքը բնութեան այդ բանաստեղծալից ծալ-

քերում՝ ուր գեղեցիկը և հանելուկայինը այնպէս լծորդում են մէկը միւսին: Այդ-պիսի անկիւններից մէկն էր և այդ աղբիւրը, այնտեղ գնում էին ոչ այնքան ջրի՝ որքան թախիծ ու վիշտ քաւելու: Այդ կնճռոտ և հանգոյցանման լեռանցքում կապանքուել է՝ ասում է ժողովուրդը, բախտը, և մարդիկ թախծալից և կարեկից՝ գնում էին այնտեղ սփոփանք և մխիթարութիւն գտնելու... Այդպէս էր այդ կաթնագոյն և կաթնահամ ջրերի իմաստը և հոգեբանութիւնը: Իւր ժամանակին ես մեծ սիրով ժողովել եմ այդ բոլոր հաւատալիքները, և այսօր անցնում էի ոճրի ուսումնասիր-ութեանը՝ զինուած որոշ տուեալներով, և երկրի մասին ընդհանուր հասկացող-ութիւններով: Գիշերելով Բաբաքշի մօտակայ գիւղում՝ ուր օրուայ նորութիւնը այդ հանելուկային սպանութիւնն էր, ես մի ընդարձակ օդայում երբ բոլորը արդէն պառկած էին՝ լսեցի մի շատ թախծալից հառաչանք. «Ա՜խ, Մարալ... քանդիր քո մուրազ...»: Այդ կապընկած բախտի, ջրերի և այդ իմաստալից հառաչանքի շուրջը կատարելով իմ նախնական հետազօտութիւնը՝ ես պարզեցի, որ մօտակայ հայ գիւղի Մարալ անունով մի երիտասարդ, սիրահարւում է մի աղջկայ վերայ՝ բայց աղջկանը նշանում են մի այլ երիտասարդի հետ: Թէ Մարալ և թէ նորա չքնաղ Նազլուն՝ յաճախ ուխտագնաց են լինում դէպի այդ կապնկաց ջրերը, և այդ քչքչան, կախարդ ջրերի մէջ սփոփում որոնում: Գարնան օրերից մէկում հանդիպելով Նազլուին սափորը ուսին՝ Մարալ խանդից պատուհաս, դաշոյնի մի հարուածով վերջ է տալիս Նազլուի սիրասուն տանջանքին, և դաշոյնի միւս հարուածով կտրելով նորա սքանչելի գիսակը՝ ընկնում է լեռները ողբալու իր քանդուած մուրազը: Եւ իր շուրջը ժողովելով կեանքից և ժամանակակից պայմաններից անբաւական մի քանի կտրիճներ՝ աւազակային խումբ է կազմակերպում և ահաբեկում Դարաչիչակի ձորը... Նազլուի Մարալի անմխիթար ընտանիքները՝ շատ թանձր քօղով պատեցին այդ դրամատիկ անցքը, և շաբաթների ընթացքում այդ հանելուկային ֆաբուլայի շուրջը կուտակւում էին բազմաթիւ ֆանտաստիկ բացատրութիւններ: Բայց այդ ջրերի ուխտագնաց առանձնակի նշանակութիւնը՝ պատահմամբ իմ լսած «Ախ, Մարալ» հառաչանքը, և այդ բոլոր հասկացողութիւնների շուրջը խմորուող պատմութիւնների ուսումնասիրութիւնը՝ միջոց տուեցին ինձ պարզելու գործի պատկերը, և արձանագրելու փաստեր և խորհրդածութիւններ՝ որոնք արժէքաւոր էին իւր ժամանակին ոչ միայն դատարանի համար, այլ այն պատմութեան համար, որ գալիս է պատկեր-ացնելու մեր կենցաղը, ճաշակը և մեր առանձնակի տրամադրութիւնը դէպի սէրը, պատիւը և բարոյականութիւնը: Ես գուցէ մի աւելորդ ծաւալով ծանրացայ այդ խնդրի վերայ՝ բայց արեցի այդ ցոյց տալու համար, թէ որչա՞փ նշանաւոր են երկրի կառավարչական գործում այդ երկրին վերաբերեալ բոլոր տուեալները, տեղեկութիւնները, նոյնիսկ և հառաչանքը, բանաւոր գրականութիւնը, երաժշտութիւնը: Եւ խորին համոզմամբ, որ երկիր կառավարելու համար պէտք է գիտենալ այդ երկիրը՝ Կարսի նահանգապետ նշանակուելու օրից ես զբաղուեցի

այդ մեծ խնդրով: Ես յանձնարարեցի մի երկու համալսարանականների՝ մշակել իմ ցուցմունքներով մի ընդարձակ ծրագիր նահանգի ուսումնասիրութեան համար: Ես յոյս ունէի կատարել բոլոր գաւառներում երկրի ուսումնասիրութեան մեծ աշխատանքը, ես ուզում էի տալ իմ գաւառապետների և նոցա աշխատակիցների ձեռքը տուեալների և տեղեկութիւնների մի լրիւ ժողովածու: Այդ ուսումնասիրութիւնը կատարելու ծրագիրը ես ուղարկեցի բոլոր գաւառները, քաղաքները՝ և յանձնարարեցի բոլոր վայրերում գումարել տեղական բանասէր ոյժերը, և մասերի բաժանելով գաւառակը՝ հաւաքական ոյժերով կատարել այդ հետազօտութիւնը: Ես շատ ուրախ էի, որ կենտրոնական կառավարութիւնն էլ, մեծ նշանակութիւն տալով ստատիստիկային՝ կազմակերպել էր առանձին վիճակագրական ատեան, որի գլուխն էր անցել մեր շատ պատրաստուած և բազմաշխատ Բախշի Իշխանեան: Ես ուղարկեցի Իշխանեանին իմ ծրագիրը, հաղորդեցի իմ անելիքները, և ի նկատի ունենալով որ Կարսի նահանգը մի առանձնակի պայմաններումն էր, որ երկրում գրագէտ մարդիկ շատ փոքրաթիւ էին՝ ես միջնորդեցի տրամադրել ինձ այդ աշխատանքների համար մի քանի բանասէր երիտասարդ, որոնք գէթ ղեկավարէին նահանգում այդ մեծ աշխատանքը... Իշխանեան ուրախացաւ ի հարկէ, խօստացաւ իր աջակցութիւնը, բայց նա էլ մի ձեռքով էր ծափ տալիս, ոչ միջոցներ ունէր և ոչ մարդիկ: Մի ամսից յետոյ նա ուղարկեց ինձ մի ստատիստիկ, բայց նա եկել էր առանց միջոցների, և փոխանակ օգնելու նահանգապետին՝ զբաղեցնում էր նորան միայն իր գանգատներով, որ նորան ուղարկել են աշխատելու առանց որևէ միջոցների...

Ձրի ազգասիրութիւնը ունի մեզանում իր հետաքրքիր պատմութիւնը: 30-40 տարի առաջ մեր հոգևորականութիւնը, ուսուցչութիւնը և գրողները՝ ձրի ազգասիրութիւն էին անում, և առաջ տանում ազգային գաղափարը: Բայց այդ ժամանակը անցաւ իդեալների հետ միասին, և մեր օրերը առաջ քաշեցին ռէալ, կանխիկ հասկացողութիւններ, որին համակերպուեց բոլորից առաջ ի հարկէ մեր երիտասարդութիւնը...

Մեր երիտասարդ ստատիստիկն էլ չը կարողացաւ գաղափարներով բաւականանալ, և միջոցներ չստանալով Երևանից՝ վերադարձաւ այնտեղ:

Նահանգի ուսումնասիրութեան գործը մնաց տեղական ոյժերին՝ բացառապէս պաշտօնեաներին: Իսկ ընթերցողը գիտէ արդէն, թէ ի՞նչ անձնուէր, գաղափարական պաշտօնեաներ տուեց հայ հասարակութիւնը իր առաջաւոր և կարողագոյն վայրին: Կարսի նահանգը լցուեց բախտախնդիրներով միայն, պատահական մարդկանցով՝ որոնք շտապում էին միայն կեղեքել և փախչել: Այդ մթնոլորտում չէր կարելի զբաղուել երկրի ուսումնասիրութեամբ: Իսկ պետական և երկրի շահերը նախ և առաջ պահանջում էին այդ նահանգի մասին բազմակողմանի և դրական տուեալներ: Ամերիկական գեներալ Հարբօրթ՝ իր Հայաստան գալուց առաջ պահանջել էր պատրաստել իր համար վիճակագրական և այլ տե-

ղեկութիւններ, երկրի ուրուագծի հետ ծանօթանալու համար: Բայց մենք չունէինք ի հարկէ մեր տեղեկութիւնները, և ստիպուած էինք քրքրելու ռուս զինուորական գրականութիւնը: Այսպէս թէ այնպէս՝ մեզ չը յաջողուեց ուսումնասիրել մեր երկիրը մեր պետական միտումների համար, և մենք չը կարողացանք գրի անցընել այն տուեալները, որ այնչափ պէտք էին պետական, ադմինիստրատիւ և մեր տնտեսական աշխատանքների համար: Եւ մեր բոլոր կառավարչական և հասարակական զբաղմունքը ոչ միայն հիմնաւորուած չէր, ոչ միայն չափուած ու ձևած՝ այլ կատարւում էր առանց որևէ հաշուի, ծրագրի ու սիստեմի:

Եւ հետևանքը մենք տեսանք:

Եթէ մեծավաստակ Սրուանտձեան՝ իր «Համով և հոտով» նկարագրութիւններով մինչև այսօր շոյում է մեր հայրենասէր զգացմունքը, եթէ մի Տիգրան Նաւասարդեան՝ իր ժամանակի գաղափարներով տարուած, տուեց մեր ժողովրդական հեքիաթների ժողովածուն, և որոշ չափով տրամադրեց ութսունական թուականների երիտասարդութիւնը գնալու դէպի գաւառ, դէպի ժողովուրդը՝ մեր ժամանակի երիտասարդութիւնը միանգամայն խուլ մնաց երկրի վերապրումներին:

Մեր օրերի համար Սրուանձտեանների ու Նաւասարդեանների զբաղմունքը խելքից պատուհասների գործ է համարւում: Ժամանակակից երիտասարդութիւնը սիրում է կանխիկը և ռէալը: Եւ նորան չէին կարող ի հարկէ հետաքրքրել Բախշի Իշխանեանի վիճակագրական աշխատանքները: Այդ երիտասարդութիւնը գերադասում էր շահաւետ զբաղմունքը մեր «զեմստվոներում», ուր կարելի էր հնձել առանց ցանելու, ադմինիստրատիւ, ինժեներ պաշտօններ, այն «գործունէութիւնը»՝ ուր կարելի էր անցնել միայն «գաղափարների» մօտով, մնալով նոցա զրահի և նոցա պաշտպանութեան տակ...

Կառավարութիւնը միջոցներ չունէր վիճակագրական հաստատութիւնների լայն ցանց կազմակերպելու համար, ջուխտ ու կենտ ստատիստիկները միայն զառանցում էին և ոչ աշխատում: Այդ մթնոլորտում չէր կարելի լուրջ խօսել այդ աւելի քան լուրջ խնդիրների մասին, և մենք շատերի հետ միասին՝ ստիպուած էինք սպասելու, երբ կ՛անցնէ հասարակական այդ այլասեռ և անտարբեր տագնապը: Մեզ չը յաջողուեց ի կատար ածելու Կարսի նահանգի ուսումնասիրութեան գործը, բայց եթէ այսօր ցիրուցան հայ ժողովուրդին վիճակուած է երբևիցէ նորից վերադառնալու իր հայրենիքը և նորից ստեղծելու իր պետական, քաղաքական անկախութիւնը՝ մենք կարծում ենք, որ երկրի ուսումնասիրութիւնը պէտք է լինի մեր առաջի կարևորագոյն աշխատանքը:

Անցնելով մեր կառավարչական և տնտեսական աշխատանքներին՝ մենք պէտք է իմանանք օրինակ, թէ որտե՞ղ ինչ ջրաղացներ մենք ունենք: Մենք պէտք է գիտենանք, թէ ո՞ր ճանապարհներով է ուշ աշնանը անցնում մեր երկրի ոչխարը ձմեռելու համար, և թէ ինչո՞ւ Ալաջայի բարձունքներից տարին մի երկու անգամ ոչխարը իջնում է դէպի Արաքսի ափերը: Այդ տափարակի խոտը աղա-

լից լինելով՝ կազդուրում է ոչխարը: Իսկ առանց այդ մեծ և փոքր տուեալների, առանց այդ բազմատեսակ և խայտաճուկ տեղեկութիւնների՝ ուր ինքը կեանքն է իր բոլոր բնորոշ կողմերով և պահանջներով, մենք չենք կարող կառավարել երկիրը, և երկրում մեծ տնտեսութիւն ստեղծել: Ծրագրելուց և ի կատար ածելուց առաջ՝ մենք պէտք է ուշադիր և լուրջ ուսումնասիրենք երկիրը, և միայն զրահաւորուած նորա մասին բոլոր տեղեկութիւններով՝ մենք կարող ենք անցնել մեծ պատասխանատու աշխատանքի:

Այդպիսի վիճակումն էր Հայոց Հանրապետութեան օրով մեր երկրի ստատիստիկ գործը:

XVIII

XX *(մատիտագիր)*

Շատ ուշագրաւ պէտք է համարել, որ Կարսի նահանգի ամբողջ երկայնութեամբ ընկած Տաճկաստանի և Վրաստանի հետ քաղաքական մեր սահմանագիծը միայն 20 թուին զբաղեցրեց մեր կառավարութիւնը, այսինքն՝ մեր Կարս մտնելուց մի տարուց յետոյ միայն: Իսկ մինչ այդ սահմանը միանգամայն բաց էր, անպաշտպան, և այդ մթնոլորտում՝ առաջ էին գալիս հազարաւոր դիպուածներ: Եւ գուցէ հենց այդտեղ էր այն պատճառներից մէկը, որ մինչև ի վերջը մենք ոչ մի տեղեկութիւն չունէինք, թէ ի՞նչ է կատարւում մեր հարևան երկրներում, մինչդեռ մեր հարևանները ուշադրալից պահակում էին իրանց սահմանները, և լարուած դիտում մեր երկրի շփոթ անցուդարձը...

Մեր սահմանային յարաբերութիւնները թէ Վրաստանի և թէ միւս տեղերի հետ՝ միանգամայն կատակերգիկ բնոյթ ունէին:

Կարսից Թիֆլիզ անցնելու համար՝ մարդիկ ստիպուած էին գնալ Երևան, վրաց դիւանագիտական ներկայացուցչի մօտ, ներկայացնել նորան իրանց լուսանկարը, և գրաւոր թոյլատուութիւն ստանալ «սահմանը» անցնելու համար: Այդ այնպիսի մի դժուարին պահանջ էր, որ շատ շատերը հրաժարւում էին Թիֆլիզ գնալուց: Այդ նախնական ուխտագնացութիւնը Երևան՝ պահանջում էր ոչ միայն մեծ ծախք, բայց և ժամանակ: Եւ եթէ նկատի առնելու լինենք «յեղափոխական» երկաթուղով ժամանակակից անցուդարձը՝ շատ հասկանալի կը լինի, որ մարդիկ, որ երբեմն շատ կարևոր գործեր ունէին Թիֆլիզ՝ հրաժարւում էին այդ ճանապարհորդութիւնից: Այդ առիթով ես մի երկու անգամ դիմեցի ներքին գործերի մինիստրին, և միջնորդեցի մի կերպ ազատել երկիրը այդ տանջանքներից: Մի քանի ամսից յետոյ դրութիւնը կարծես փոխուեց: Այդ գրաւոր թոյլատուութիւնը տալու համար՝ վրաց իշխանութիւնը իր պաշտօնեան ուղարկեց Աղէքսանդրապոլ: Բայց այդ «յարմարութիւնն» էլ շատ դժուար էր Կարսից եկողների համար, որովհետև նոքա ստիպուած էին կանգ առնելու Աղէքսանդրապոլ, գիշերելու և

միայն միւս օրուայ գնացքով կարող էին շարունակել իրանց ճանապարհը դէպի Թիֆլիզ:

Ես էլ չեմ ուզում խօսել այն մեծ դժուարութիւնների մասին, որ հանդիպում էին ճանապարհորդները «սահմանը» անցնելու, խտրութիւնները այս և այն կողմից՝ չափ ու սահման չունէին: Եւ մարդիկ ակամայ յիշում էին այն ժամանակները՝ երբ նրանք մի հասարակ 15 կոպեկանոց անցագրով հազարաւոր վերստեր էին անցնում, և ոչ մի հարց ու փորձի չէին ենթարկւում... Եւ մենք կարծում ենք, որ փոխանակ սահմանապահ զօրամասեր կազմակերպելու և ինչ որ մաքսային հաստատութիւններ հիմնելու՝ Կովկասի երեք ազգութիւնները պէտք է միանգամայն բացէին սահմանները, ազատելով դատարկ գանձարանները աւելորդ այդ առիթով ծախքերից, և երկրի ազգաբնակութիւնը ճնշումներից, ծախքերից և շատ ու շատ անախորժ տեսիլներից:

Բայց շատ ուշագրաւ էր, որ թողնելով տաճկական սահմանը առանց որևէ ուշադրութեան՝ մենք շտապեցինք կաշկանդել երկրի ացնուդարձը Վրաստանի և Ատրպատականի սահմաններում, ստեղծելով անշնորհք և խախուտ մաքսային հիմնարկութիւններ և թալանալից պահակներ:

Այդ կազմակերպութիւնները, ինչպէս և միւսները՝ վայրիվերոյ էին, շտապ և անիմաստ:

Սահմանապահ զօրամասերը՝ ռուս շաբլօնով ի հարկէ, ենթարկուած էին երկու մինիստրութիւնների, Զօրաց՝ ըստ զինուորական կազմի, և ֆինանսների՝ ըստ միջոցների: Աւելի քան ուշագրաւ է, որ այդ սահմանապահ զօրամասերի թէ բարձր և թէ ստորին հրամանատար կազմը գրեթէ բոլորը ռուսներ էին և ռուսախօս հայ սպաներ: Գործի գլխում կանգնած էր մի ռուս գնդապետ, տիպիկ ռուս: Նորա խելքի մասին երկու կարծիք չը կար՝ բոլորը նորան անվիճելի յիմար էին անուանում և հայատեաց: Նա միևնոյն ժամանակ՝ հայոց սպարապետի մօտ մարդկանցից էր: Վրաց սահմանի սահմանապահ զօրամասերի հրամանատարը դարձեալ մի ռուս գնդապետ էր: Շատ կարճ ժամանակում բացուեցին այդ գնդապետի մեծ դրամական զեղծումները, քննութիւնը պարզեց այդ բոլորը՝ բայց գործը ընթացք չը ստացաւ, և գնդապետը շարունակեց հրամանատարել...

Այդպէս էր հայ սահմանապահ կազմակերպութեան պատկերը Կարսի նահանգի սահմաններից դուրս՝ Աղէքսանդրապօլի և Ղարաքիլիսայի շրջանում:

Բայց անցնենք այդ սահմանապահ զօրամասերի կազմակերպութեան գործին Կարսի նահանգում: Երբ 20 թուին Կարս եկաւ սահմանապահ զօրամասերի հրամանատար կազմը՝ ես հարկաւոր համարեցի դարձնել կառավարութեան ուշադրութիւնը, որ նա գերազանցօրէն կազմուած էր ռուսներից, և շատ փոքր թուով հայերից, իսկ այդ վերջիններից ոչ ոք հայերէն չը գիտէր: Կարս ժամանած 20 սահմանապահ սպաներից 17 ռուսներ էին, երեքն էլ հայեր: Այդ երեքից մէկը գեներալ էր, Կարսի նահանգի սահմանապահ զօրամասերի հրամանատար,

միւս երկուսը գնդապետի աստիճան ունէին, և համարւում էին գեներալի օգնականներ: Երեքն էլ հայերէն ոչ մի բառ չը գիտէին: Ես լաւ չէի զգում ինձ՝ մեր տեղական օտարազգիների առաջ:

Մեր քաղաքական սահմանը տարածւում էր բացառապէս այն վայրով՝ ուր բնակւում են թուրքերը, քրդերը և յոյները, իսկ սահմանի այն կողմը կանգնած էր վրաց սահմանապահ բանակը՝ ուր հրամանատարութիւնը բացառապէս վրացիներ են, և բացառապէս վրացերէն խօսող ու մտածող: Իսկ հայկական կառավարութիւնը գալիս էր այդ աշխարհը միայն ռուսներով և այն հայերով՝ որոնք ոչ մի առնչութիւն չունենալով հայութեան հետ, նոյնիսկ ծաղրում էին իրանց մայրենի լեզուն...

Այդ 20 սպաների մասին իմ տպաւորութիւնները շօվինիստական չէին, ես արտայայտում էի ոչ միայն իմ, Կարսի նահանգի հայ ազգաբնակութեան՝ այլև թուրքերի ու քրդերի կարծիքը:

Թէև սկզբունքով այդ սահմանապահ մասերը պէտք է կազմակերպուէին ընդհանուր զինակոչի հիմունքներով՝ բայց այնուամենայնիւ հնարաւոր համարեցին առայժմ ընդունել կամաւորներ, առանց ի հարկէ ազգի և կրօնի խտրութեան: Եւ հետևանքը շատ շուտ երևան եկաւ:

Սահմանապահ 17 ռուս սպաները կազմակերպեցին իրանց զօրամասերը անցորդներից և բախտախնդիրներից, և իրանք էլ այդ հրոսակախմբերի գլուխը անցած՝ սկսեցին աջ ու ձախ թալանել:

Ես եռանդալից բողոքեցի պաշտօնական այդ նոր թալանի դէմ, սահմանապահ մասերի հրամանատար գեներալը ստիպուեց ինքը անցնել դէպի Արդահան՝ այդ թալանների մասին քննութիւն անելու: Վրաստանի սահմանում կանգնած մեր այդ զօրամասերի երկու ռուս սպաները իմանալով գեներալի գալը՝ անցնում են Վրաստան լի գրպաններով և փախչում...

Պէտք չէ ասել, որ ամէն տեղ ուղարկուած հեռագիրները այդ թալանչի սպաներին բռնելու մասին՝ մնացին անհետևանք, գողերի յետքն էլ կորաւ: Գեներալը ստիպուած էր այնուհետև մնացած իր ռուս սպաներից մի քանիսին բանտարկելու, միւսներին էլ պաշտօնից արձակելու: Եւ այդ բոլորը կատարւում էր երկրի առաջ, թուրքութեան կենտրոնում՝ և ի մեծ նախատինք հայկական սուվերէն սկզբունքի:

Ես մի երկու անգամ առիթ ունեցայ անցնելու Կարսի սահմանապահ զօրամասերի շտաբը, և ամէն անգամ ես վերադարնում էի ընկճուած, ես չէի հասկանում, հայկական հաստատութիւն է այդ՝ թէ նախկին ռուսական, ուր յօշոտւում և ծաղրի է ենթարկւում հայկական իշխանութիւնը: Ես դեռ չէի առարկի այդ ուղղութեամբ և կը հաշտուէի դրութեան հետ՝ եթէ այդ կապիտանները և գնդապետները լուրջ և անբիծ մասնագէտներ լինէին: Բայց երբ բոլորը տեսնում էին թէ ինչո՞ւ համար է եկել ախորժելից ժողովածու՝ ամէն մի հայ ընկճւում էր և ամօ-

թալից երես դարձնում, թէ ի՞նչ էր մտածում Հայաստանի Հանրապետութ-եան ծերունի սպարապետը, և մեր սահմանապահ զօրամասերը միայն ռուսներ-ով և միայն ռուսախօսներով լցնելով՝ չը գիտեմ, բայց որպէս հայկական նահանգապետ՝ ես ամաչում և կարմրում էի երկրի առաջ...

Սահմանի իրաւակարգի պատկերը թերի կը լինէր այդ ուղղութեամբ, եթէ ես չասեմ, որ Հայաստանի բոլոր մաքսատների պետն էլ դարձեալ հայերէն ոչ մի բառ չը գիտէր: Սահմանապահ զօրամասերը և մաքսատունը կազմակերպուեցին երկրի հարստութիւնը պահպանելու և արքունիքը հարստացնելու համար, բայց իրօք այդ կազմակերպութիւնները միայն ծանրաբեռնում էին գանձարանը մեծամեծ ծախքերով, իսկ երկրի հարստութիւնը հոսում էր դէպի դուրս՝ այդ սահմանապահ մասերի բարեհաճ աջակցութեամբ: Մի տարբերութիւն կար միայն առաջուայ և այսօրուայ դրութեան մեջ, առաջ երկրի ազգաբնակութիւնը ի վաճառ էր տանում իր ոչխարը, պանիրը և բուրդը՝ առանց որևէ վրադիր իր համար ծախքերի, իսկ այսօր նա ստիպուած էր կաշառելու սահմանապահ սպաներին և զինուորներին, և այնպէս անցնելու սահմանը: Բայց այդ բաւական չէր: Սահմանի այս և այն կողմը սփռուած գիւղերը, շատ մօտ դրացիներ՝ կապուած են իրար հետ բազմաթիւ տնտեսական, ազգակցական և գործնական կապերով: Ինչպէս և առաջ, նոքա անդադար գնում և գլաիս են իրար մօտ: Մի տեղ այսինչ գիւղերը աղում են իրանց հացը վրաց սահմանում գտնուող ջրաղացում, և հակառակը՝ մի այլ տեղ խաշնարածը իր յուրդը բարձրանալու համար անխուսափելիօրէն պէտք է պտոյտ գործէ և անցնի այնտեղ վրաց հողի շերտով, և այդպէս անվերջ դիպուածներ: Այդ բոլոր տեղական առանձնակի պայմաններից մեծ չափով օգտւում էին սահմանապահ զօրամասերը, բռնում գիւղացիներին, չարչարում և արձակում՝ կաշառք ստանալուց յետոյ միայն: Այդ առիթով ես բազմաթիւ հեռագրական և գրաւոր բողոքներ ուղարկեցի Երևան:

Այդպիսով և այդ կառավարչական կազմակերպութիւնը միանգամայն բացասական հետևանք ունեցաւ և դարձալ մի ապացոյց էր, որ երկիրը չի կարելի կառավարել շաբլօնով և միայն ընդօրինակելով օտար ձևեր և մեզ խորթ միջոցներ: Եւ մենք մի աւելորդ անգամ ուզում ենք ասել՝ հայ ապիկար ինտելիգենցիան, բազմատեսակ «կարևոր», «հասարակական» և «ազգային» կեղևի տակ խորշելով հայրենի աշխատանքից՝ խմբուել և լճացել էր հայրենիքից դուրս, իսկ հայկական «անկախութիւնը» ի կատար ածելու և հայկական պետականութիւնը դարբնելու գալիս էին միայն ռուսները, միայն ռուսախօս հայերը և արկածախնդիրների մի խառնիճաղանջ բազմութիւն: Այդպէս էր մեր սահմանների այն մացառոտ պարիսպը, որ պէտք է պաշտպանէր հայկական շահերը, և համակուած հայրենի տենչանքներով՝ պատուալից կանգնէր օտարների առաջ, մեր տիրապետութեան այդ առաջաւոր դիրքերում:

XIX

XXI *(մատիտագիր)*

Արտաքոյ կարգի ձախ պայմանները, ուր մեղաւորը թէ մենք էինք և թէ պատմութիւնը՝ ստիպեցին կառավարութիւնը աւելի պատերազմական խնդիրներով զբաղուելու, քան թէ քաղաքացիական: Բայց և զինուորական գործը տակաւին իր բարձրութեան վերայ չէր:

Զինակոչը, որ զինուորական կազմակերպութեան հիմքը և իմաստն է, մի այնպիսի շփոթ, մի այնպիսի քաոս էր՝ որի նմանը երևակայել անգամ դժուար է: Պէտք չէ ասել ի հարկէ, որ զինակոչի նախապատրաստական շրջանը դասւում է այն խաղաղ աշխատանքների շարքին, ուր կարելի է զբաղուել հանգիստ և անխռով մթնոլորտում միայն: Բայց աշխատանքի այդ պայմանները տակաւին բացասական էին:

Եթէ վրաց և թուրքերի վայրով՝ Թիֆլիզ, Գանձակ-Բագու պատերազմը միայն անցել էր, մեր երկրում նա կանգ էր առել և մեծ բանակ սփռել:

18 թուին մենք գաղթեցինք, երկիրը տակնուվրայ եղաւ, բոլորը տնաւեր, ցիրուցան եղան և մենք չունէինք զինակոչի համար ոչ միայն որոշ տարածութիւն, որոշ ազգաբնակչական սահմաններ, բնակիչների որոշ կօնտինգետ՝ այլև որոշ վիճակագրական տուեալներ գրաւոր տուեալների մասին խօսք չէր կարող լինել ի հարկէ: Ամբողջ Կարսի նահանգը կորցրել էր իր բոլոր մատեանները, ընտանեկան ցուցակները: Նոյն դրութեան մեջ էր Սուրմալուն, Երևանի և Շարուրի գաւառների մի մասը:

Մեր միւս վայրերը լցուած էին գաղթականներով, որոնք շփոթում էին վիճակագրութիւնը և այդ տարածութեան վերայ: Վիճակագրական նոր աշխատանքներ կատարել այդ մթնոլորտում, ստուգել ազգաբնակութեան թիւը, նորից ցուցակագրել երկիրը՝ այդ ոչ միայն դժուարին գործ էր, այլև միանգամայն անհնարին: Եւ այդպիսով, զէնքի կոչելով երկիրը՝ մենք հիմնւում էինք ոչ թէ որոշ տուեալների և հաշուելից դրութեան վերայ, այլ միայն և միայն կամայական պայմաններում և մթնոլորտում կատարում այդ մեծ պետական գործը:

Մեր ոստիկանութիւնը, որ կոչուած էր կատարելու այդ պատասխանատու աշխատանքները՝ միանգամայն նախապատրաստուած չէր դորա համար: ոստիկանութիւնը մեծ մասով կազմուած էր անպէտք, կաշառակեր և ոչ մի բարոյական կերպարանք չունեցող մարդկանցից:

Այդ անցորդներով ու պատահական մարդկանցով լցուած գործադիր մարմինը՝ չէր կարող կատարել այդ առանձնակի պայմաններում զինակոչի աշխատանքը: Եւ այդ էր այն պատճառներից մէկը, որ զինակոչը առհասարակ մեծ դժգոհութիւն և մեծ հակակառավարչական տրամադրութիւն առաջ բերեց երկրում: Պէտք չէ ասել այստեղ, որ այդ մթնոլորտում պէտք է լինէր ամենամեծ

անիրաւութիւնը: Հարուստ և դիրք ունեցող մարդիկ բազմատեսակ պատրուակներով՝ ազատւում էին զինակոչից, փախչում էին Թիֆլիզ, Բագու և երկրում մնում էր անպատասխան մասսան, որ չէր կարող հզօր և գիտակից բանակ ստեղծել: Եւ ի լրումն այդ բոլորի՝ մեր հայկական շտաբի զինակոչ պատասխանատու բաժինը ղեկավարում էր մի ռուս գնդապետ:

Պէտք չը կայ բացատրելու այստեղ, որ ռուս գնդապետի սիրտը չէր կարող ցաւել հայկական երազների համար: Եթէ այդ գնդապետը այնչափ ապիկար և անպատուախնդիր գտնուեց, որ մի ակնթարթում դաւաճանեց իր երբեմն հզօր սուվերէն իրաւունքներին, երես դարձրեց իր դարաւոր պատմութիւնից, ոչնչացրեց իր երկրի բոլոր թէ նիւթական և թէ բարոյական արժէքաւորները, և մնաց պաշտօնաւորելու մի երկրում՝ ուր ինքը երբեմն իշխել և հրամանատարել է, հազիւ թէ այդպիսի մի մարդու կարելի էր առհասարակ հաւատալ և յանձնարարել մի մեծ և կարևորագոյն պետական գործ: Շատ բնական է ի հարկէ, որ գնդապետը համակուած չէր մեր պետական իղձերով: Եւ եթէ նոյնիսկ ցանկանար էլ՝ նա չէր կարող վերապրել մեր զինակոչի առանձնակի արտակարգ նշանակութիւնը: Եւ այդպիսով իր այդ պարտաւորութիւններին միայն և միայն ի պաշտօնէ վերաբերուելով՝ ռուս գնդապետը ոչ մի տրամադրութիւն չունէր ապրելու մեր ցաւերով և պէտքերով, տանջուելու և յուսալու մեզ հետ: Նորա յուսալից տրամադր-ութիւնը պարփակւում էր որոշ սահմաններում միայն: Նա հայկական գանձարանից իր օրուայ ապրուստն էր սպառում միայն, իսկ դորանից դուրս՝ նորան ոչ մի բան չէր հետաքրքրում: Այդպէս էր մեր այն զինուորական բարձր ներկայացուցիչը՝ որին մեր Զօրաց մինիստրն ու սպարապետը հնարաւոր էին համարել վստահելու գլխաւոր շտաբի գաղտնի բանալին, նորան յանձնարարելով մեր ազգային բանակի մոբիլիզացիայի բարդ գործը...

Հայաստանում զինակոչից ազատուելու համար՝ շատ մատչելի միջոց կար, բաւական էր անցնել Թիֆլիզ, և դուք ազատ էիք միանգամայն Ձեր ազգային բոլոր պարտաւորութիւններից: Մեր միւս տեսակի ազգասէրները՝ կրում էին երկրում «զօրաց ծանրութիւնը» բազմատեսակ տարազների տակ և ամէն տեղ իրանց շատ լաւ էին զգում: Կառավարութիւնը ի հարկէ ոչ ժամանակ և ոչ հնարաւորութիւն ունէր զբաղուելու այդ մասնագիտական խնդրով, իսկ ռուս գնդապետի համար միանգամայն միևնոյն էր, թէ ի՞նչ հետևանք կ՛ունենայ հայկական անկախութեան համար մեր զինակոչի այդ աւելի քան այլանդակ ձևը:

Զինակոչի այդ պայմաններում մենք միայն շառաչում էինք մեր բութ սրերով, բայց ոչ երբէք բանակ և պետական պատուանդան դարբնում: Բացի այդ բոլոր չարիքներից և անիրաւութիւններից, որ կատարւում էին զինակոչի գործում մեր երկրի անկիւններում՝ մենք պէտք է հանդիսատես լինէինք և մի այլ տեսիլի:

Երբ վրացիները, թուրքերը աշխատում էին իրանց ուսանող երիտասարդութեանը մի կերպ միջոց տալ վերջացնելու ուսումը, և տասնեակներով ուղարկում էին այդ երիտասարդներին կառավարութեան հաշուով արտասահման՝ հայ ուսանող երիտասարդութիւնը գլխովին զէնքի էր կոչուած:

Եւ հետևանքը շատ հասկանալի պէտք է լինէր: Այդ երիտասարդութեան մի մասը փախչում է դէպի Թիֆլիզ, Բագու, Ռուսաստան, միւսը, որ մնում էր Հայաստանի սահմաններում՝ մի կերպ «տեղաւորւում էր» և սպասում, ռուս և ռուսախօս սպաների հետ միասին, թէ երբ կը շառագունէ հիւսիսը, և ե՞րբ վերջապէս կը վերանան այդ «ազգային» կապանքները... Եւ մեր զինակոչի այդ ծայրահեղ անարդար, ծայրահեղ հակազգային մթնոլորտում՝ և տեղական իշխանութիւնը չէր կարող խստապահանջ լինել: Երկրի իշխանութիւնը չէր կարող հանգիստ սրտով պահանջ դնել մարդկանց առաջ այդ իմաստով, գիտենալով, որ զէնքի կոչուողների մի մասը փախել է Եւրոպայ, միւսը պատսպարուել Թիֆլիզ, Բագու, և մնացածը՝ փոքրամասնութիւնը, «յաջող տեղաւորուել են» զանազան դիմակների տակ Հայաստանում: Այդ պայմաններում զինակոչը չէր կարող մեծ բարոյական բնոյթ ստանալ, նա չէր կարող համակուած լինել հայրենիքի պաշտպանութեան պատուալից պարտաւորութիւններով: Եւ այստեղ ջարդուեցին մեր ազգային կորովի յենարանները: Մեր ռուսախօս սպաները, իրանց ռուս գնդապետներով՝ չը կարողացան ստեղծել մեր իղձերին համապատասխան հզօր և բարձր տրամադրուած բանակ: Բայց գուցէ աւելի ճիշտ կը լինի ասել, որ հիւսիսի այդ սիրահարները տրամադրութիւն էլ չունէին ազգային կորով կերտելու մեզ համար: Նրանք աշխատում էին երկրում որպէս արհեստաւորներ՝ չափաւոր վարձագինը միայն աչքի առաջ ունենալով: Այդպիսի պայմաններումն էր առաջ գնում զինակոչը Հայաստանի Հանրապետութեան ամբողջ գոյութեան ընթացքում:

Երբ կառավարութիւնը պահանջեց իմ եզրակացութիւնը յոյներին զինակոչի ենթարկելու մասին՝ ես այն կարծիքը յայտնեցի, որ այդ ոչ միայն արդարացի կը լինէր, պետական դաստիարակիչ միջոցի բնոյթ կունենար՝ այլև կ՛ամրապնդէր երկրում մեր իշխանութիւնը, և մի աւելորդ ապացոյց կը լինէր երկրի համար, որ բոլորը հաւասար են մեզ համար իրանց քաղաքացիական պարտաւորութիւններում:

Բայց կառավարչական այդ օրէնքից առաջ՝ Կարսի մեր գեներալները յոյներից կամաւորական վաշտեր կազմակերպեցին ըստ իրանց հայեցողութեան, և այդ վաշտերը պահում էին յոյների հենց իրանց գիւղերում, որոնք սփռուած էին տաճկական սահմանագծով: Եւ երբ հրատարակուեց կառավարչական օրէնքը յոյներին ընդհանոր հիմունքներով զէնքի կոչելու՝ գեներալ Յովսէփեանի յոյն կամաւորական վաշտերը, գեներալի ի հարկէ դրդմամբ՝ հրաժարուեցին ենթարկուելու ընդհանուր օրէնքին, առարկելով, որ իրանք կը մնան իրանց գիւղե-

րում՝ որպէս արդէն ընդունուած զինուորներ, և կը պաշտպանեն իրանց գիւղերը միայն... Մեր գեներալների առանձին հովանաւորութեան տակ գտնուած այդ կամաւորական վաշտերի յայտարարութիւնը ըմբոստ իր բնոյթում՝ բնականաբար պէտք է բողոք առաջ բերէր յոյն ազգաբնակութեան միւս վայրերում: Գեներալները հրաժարուեցին լուծելու իրանց յոյն կամաւորական խմբերը, իսկ կառավարութիւնը անզօր գտնուեց ստիպելու իր գեներալներին խոնարհուել օրէնքի առաջ: Եւ յոյները հրաժարուեցին զինակոչի ենթարկուելու մի երկրում՝ ուր կառավարութեան համար, ի դէմս մեր գեներալների՝ կային հարազատ և խորթ քաղաքացիներ:

Այդ կայծալից մթնոլորտից օգտուեցին յոյն վարժապետները, և սկսեցին հրդեհել երկրում Յունաստան գաղթելու միտքը: Իսկ կրքերի և շահերի այդ մեծ համաճարակում՝ գեներալ Յովսէփեանի յոյն կամաւորական վաշտերը կրկնապատկեցին իրանց եռանդը, և աջ ու ձախ սկսեցին թալանել մեր քրդերին: Նահանգում մեծ աղմուկ բարձրացաւ, իսկ գեներալները և նոցա սպաները այդ թալանը ծածկելու համար՝ զինուորական դրութիւն յայտարարեցին այդ վայրում, առարկելով, որ «բռնկուել է յակահեղափոխութիւնը» և այդ յակահեղափոխական քրդերի պարագլուխն է՝ Կարսի նահանգապետը:

Եւ այդպիսով, Կարսի քաջարի գեներալները, որ ինքնագլուխ ինչ որ կամաւորական յոյն խմբեր էին կազմակերպել իրանց հաշիւների համար՝ պառակտում առաջ բերեցին դորանով յոյն ազգաբնակութեան մէջ ընդհանուր զօրակոչ յայտարարելու օրերում:

Եւ յոյները բնականաբար պէտք է հրաժարուէին այդ զինակոչից, ուր հաւասարութեան սկզբունքը միանգամայն ոտնահարուած էր, ուր կապեր և նշանակութիւն ունեցող յոյն երիտասարդութիւնը արդէն «տեղաւորուած էր» հայկական զինուորի տարազով իր տներում, և ուր միւսները ընդհանուր զինակոչի ենթարկուելով՝ պէտք է ծառայէին մի որևէ Դիլիջան, Երևան, Ղամարլու և այլ տեղեր:

Այժ գործ դնել այդ միանգամայն իրաւացի բողոքը զսպելու համար՝ կը նշանակէր մի նոր պատերազմ սկսել երկրի ներսում, այժմ էլ յոյների դէմ: Միւս կողմից յոյների այդ իրաւացի դեմօնստրացիան՝ ցոյցը, չէր կարող չը խախտել երկրում իշխանութեան համարումը: Ազգաբնակութիւնը տեսնում էր, որ կառավարութիւնը խաղալիք է դարձել ինչ որ գեներալների ձեռքում: Նա տեսնում էր, որ այդ ռուսախօսների ինտրիգները աւելի ուժեղ են՝ քան կառավարութեան օրէնքները:

Կառավարութիւնը, որ այն ժամանակ պարփակւում էր Զօրաց և Ներքին գործոց մինիստր Ռուբէն փաշայի անձնաւորութեան մէջ՝ ցանկութիւն չունէր ի հարկէ Կարսի իր գեներալների և սպաների խաթրին դիպչելու, եւ չը լուծեց գեներալների յոյն կամաւորական խմբերի ընդհանուր զինակոչը իրագործելու համար: Եւ այդպիսով յոյների զինակոչը մնաց թղթի վերայ միայն, և կրքերի մեծ

բռնկում առաջ բերեց՝ որովհետև այդպէս էին ցանկանում Կարսի գեներալները և սպաները, որոնք գործում էին «կուսակցական» զրահի տակ: Բայց ոչ պակաս հետաքրքրիր էր և եզիդի-քրդերի մէջ յայտարարած զինակոչը:

Կարսի նահանգապետի այդ առիթով կարծիքը հարցնելուց յետոյ՝ կայացաւ կառավարութեան որոշումը, և եզիդի քրդերի զինակոչը յայտարարուեց:

Պէտք չէ ասել, որ այդ զինակոչը մեծ խոչնդոտներ պէտք է առաջ բերէր, եթէ նկատի առնենք, որ ռուս տիրապետութեան օրով եզիդի-քրդերը ազատ էին զինուորական պարտադիր ծառայութիւնից:

18 թուից՝ եզիդի քրդերն էլ գաղթել են, ցիր ու ցան եղել: Նոցանից միայն մի մասն էր վերադարձել Կարսի նահանգը, վիճակագրական որևէ տուեալներ նոցա մասին չը կար, այնպէս որ շատ դժուարին էր նոցա զինակոչի գործը: Այնուամենայնիւ ես սկսեցի պէտք աշխատանքները, և Կաղզուանի գաւառում՝ ուր գլխաւորապէս բնակւում էին եզիդիները, կարգադրեցի բաց անել զինուորական ատեանի գործունէութիւնը: Մօտ հարիւր հոգի արդէն ընդունուած և յանձնուած էին Կաղզուանի զօրամասերը՝ երբ տեղեկութիւն ստացայ, որ զօրակոչը այլ բնոյթ է ստանում: Քրդերը սկսեցին փախուստ տալ, և զինակոչ ատեանի գործունէութիւնը դանդաղեց: Վերագրելով այդ գիւղական և գաւառական ոստիկանութեան թուլութեանը՝ ես պատուիրեցի գաւառապետներին խիստ միջոցներ ձեռք առնել, և մօտ 20 պաշտօնեաներ՝ գլաւաներ, գիւղական տանուտէրներ և նոյնիսկ մի գաւառակի պետ՝ կարգադրեցի բանտարկել: Բայց զուգընթաց դորա հետ՝ ես մասնաւոր տեղեկութիւն ստացայ, որ քրդերը խուսափում են զինակոչից բոլորովին այլ պատճառներով: Պատմում էին, որ քրդերի աղաներից մէկը՝ Ջահանգիր աղէն, միջնորդել է Զօրաց մինիստր Ռուբէն փաշայի առաջ դադարեցնել զորակոչը, և թոյլ տալ, որ ինքը՝ Ջահանգիրը, կամաւորական խմբեր կազմակերպէ նոցանից... Ասում էին, որ երկու մինիստրութիւնների ամենակարող տնօրէն Ռուբէն փաշան՝ յիշելով երևի իր խմբապետական անցեալը, հաւանութիւն էր տուել այդ մտքին, և զինակոչը դադարեցրել էր: Բայց նահանգապետը այնուամենայնիւ՝ ոչ մի պաշտօնական տեղեկութիւն չունէր այդ մասին: Ես գիտէի միայն, որ բոլոր քրդերը, որ ենթակայ էին զինակոչի՝ փախել էին և Ջահանգիր աղէն ըստ իր հայեցողութեան, մէկին սալդաթէ էր գրում, ընդունում՝ միւսին արձակում...

Եւ այդ մթնոլորտում քրդերի ցեղապետը ի կատար էր ածում իր զօրակոչը՝ անջատ Կարսի նահանգի իշխանութեան այդ առիթով կարգադրութիւններից... Բայց ես չէի ուզում հաւատալ այդ բոլորին, և շարունակում էի խիստ պահանջել գաւառապետներից՝ նշանակուած ժամանակամիջոցում վերջացնել զինակոչը: Բայց որչա՞փ մեծ էր զարմանքս՝ երբ մի քանի օրից յետոյ ներկայացաւ ինձ այդ Ջահանգիր աղէն, նա յանձնեց ինձ մինիստրութեան գրութիւնը, ուր ասուած էր, որ մինիստրը հարկաւոր համարեց եզիդիների զինակոչը յանձնարարել Ջահան-

գիր աղին, և ինձ պատուիրում էր դադարեցնել զինակոչ ատեանի աշխատանքները...

Ես շատ դժուարին կացութեան մէջ էի՝ և երկրի առաջ:

Ես ի զուր տեղը՝ պաշտօնական անփոյթութեան համար, բանտարկել էի տասնեակ մարդիկ, ի զուր ես կծու հեռագիրներ էի ուղղում գաւառապետներին, խիստ միջոցներ պահանջելով զինակոչը շուտափոյթ վերջացնելու համար, ու վերջապէս իզուր տեղը ես ինքս ինձ էի տանջում՝ երբ այդ զինակոչի խնդիրը մեր փաշան լուծել էր տնավարի...

Եւ բացի այդ բոլորից, պատկերին աւելի երևի զաւեշտ բնոյթ տալու համար՝ զօրաց մինիստր փաշան այդ կարգադրութիւնը արել էր առանց կառավարութեան գիտութեան: Եւ նա չէր էլ շտապում տեղեկացնելու այդ մասին Կարսի նահանգապետին, որ ջղայնալից տարուբերուում էր այդ առիթով տարածուած լուրերի մթնոլորտում... Այդպէս էր կատարուում մեզանում պետական մեծ նշանակութիւն ունեցող աշխատանքը:

Ինձ պէտք չէ ասել, որ Ջահանգիր աղայի կամաւորական խմբերը մնացին նորա խոստումների առանցքում միայն, իսկ եթէ նոքա նոյնիսկ և կազմակերպուելու լինէին՝ այդ վաշտերը, այդ Ջահանգիրի սանձերում կը լինէին այդ հրոսակախմբերը, որոնցից մենք դեռ պէտք է պաշտպանուէինք և ոչ նոցանից ոյժ և նեցուկ սպասէինք մեր կառավարչական ընթացքում:

Եզիդ քրդերի զինակոչի դադարը և նորա կամաւորական կազմակերպութեան վերացուելը հոգեբանօրէն պէտք է բացառօրէն անդրադառնար մեր երկրի ընդհանուր զինակոչի վերայ:

Եւ մեր այդ զինակոչը ոչ թէ քաղաքացիական պարտքի հատուցումն էր, որ պէտք է կատարուէր օրինակալից պայմաններում, դա պարտքի հատուցման սիմուլիացիա էր միայն, եթէ ոչ ծաղրածու և կատակերգիկ մի տեսիլ: Բայց այդ ուղութեամբ գոյները ներդաշնակ չէին լինի՝ եթէ չասեմ, որ Կարսի զինուորական պետը (военный начальник), որ տնօրինում է զինակոչ մոբիլիզացիոն գործը, մի հայ գնդապետ էր, որ ոչ մի բառ հայերէն չը գիտէր, որին նոյնչափ էր հետաքրքրում հայկական գործը, որչափ ինձ և ձեզ անցեալ տարուայ քամին:

Դժուար է երևակայել, թէ որչա՞փ յաջող էր մանաւանդ այն եռանդալից զինակոչը, որ կատարում էր Ռուբէն փաշան: Կարսի տագնապալից օրերում գնացքները բերում էին Կարս մարդկանց խմբեր՝ զինուորացուների անուան տակ: Մարդկանց այդ հաւաքածուն առաջ էր եկել իրարանցման, անիշխանութեան մթնոլորտում: Փախչողը փախել էր, մնացել էին անճարները միայն, որոնց լցրել էին վագոնները և գլխակոր բերել «հայրենիքի պաշտպանութեան» համար: Դասալիքութիւնը այդ օրերում համաճարակի բնոյթ էր ստացել: Փախչում էին ոչ միայն անհատներ՝ այլ ամբողջ վաշտեր, եթէ չասենք գումարտակներ: Կարսի գեներալները օգտուելով առիթից՝ անընդհատ հեռագրում էին Երևան,

որ դասալիքութիւնը աճում է օրեցօր, իսկ նահանգի քաղաքացիական իշխանութիւնը միջոցներ ձեռք չի առնում փախչողներին բռնելու: Երբ ես այդ առիթով հարցապնդում էի ստանում Երևանից՝ ես պատասխանում էի ոստիկանութիւնը յօգնեց դասալիքներին բռնելուց և զօրամասերին յանձնելուց: Եւ եթէ քաղաքացիական իշխանութիւնը պարտաւոր է բռնել դասալիքներին՝ զինուորական հրամանատարութիւնն էլ պարտաւոր է հսկել, որ զինուորները չը փախչեն, կամ աւելի ճիշտ՝ նա պէտք է պահէ զինուորին այնպիսի պայմաններում, որ նա ստիպուած չը լինի փախչելու...

Բայց այդ առանցքում մենք կորցրել էինք արդէն իրերի թելը, հաշիւը և անիշխանութիւնը ամէն տեղ աճում էր օրեցօր:

Բայց մենք արդէն պրեցեդենտ ունէինք այդ իմաստում: Երբ ռուս պետական յեղաշրջումից առաջ նկատելի կերպով երերուեց երկրի իրաւակարգը՝ դասալիք-ութիւնը ահռելի չափերի հասած, այդ ընթացքի առաջի շարքումն էր: Ես ինքս այդ օրերում վարչական ասպարէզում գործողներից մէկն էի, և տեսնում էի, որ երբ ոստիկանութիւնը բռնում էր 100 դասալիք՝ մի երկու օրից յետոյ փախչում էին 300 հոգի: Պարզ էր ի հարկէ, որ խնդիրը վարչական, պալիատիւ միջոցներում չէր, պատճառները օրգանական էին, կապուած կառավարչական ամբողջ սիստեմի հետ: Կարսի անկումից մի քանի օր առաջ՝ մենք անհամբեր սպասում էինք հայկական հեծեալ մի գունդ Աղէքսանդրապօլից, բայց գունդը ուշանում էր՝ որովհետև... գնացք չը կար: Այդ գունդը նոյնիսկ Կարս էլ չը պէտք է մտնէր՝ նա գնում էր դէպի Արդահան, այնպէս որ պէտք է իջնէր Բաշկադիկլար կայարանում, երկաթուղով միայն 40 վերստ անցնելով: Եւ փոխանակ գունդը օրերով Աղէքսանդրապօլ պահելու և խճուղով ուղարկելու՝ զօրամասը ուղարկուեց վերջապէս գնացքով:

Բայց ճանապարհին գնացքը խորտակւում է, և մօտ 60 զինուոր վնասւում... Այդչափ նախատես և հոգսալից էր զինուորական իշխանութիւնը՝ ի դէմս ռուս գնդապետների, մեր օրհասական և տրագիկ օրերում:

Բայց Հայաստանի Հանրապետութեան զինակոչը այլ բնոյթ չէր էլ կարող ունենալ, նա պէտք է այնպէս լինէր՝ ինչպէս որ մենք տեսանք նորան բազմաթիւ գունալից պատկերներում:

Զինուորական գործը մեր երկրում եկել էին վարելու ռուսները և ռուսախօսները, և պետական այդ հիմունքը մինչև վերջը մնաց նոցա ձեռքում և նոցա կամայական հաճոյքից կախուած:

Իսկ երկրի վերջի վեց ամսուայ հոգևարք ընթացքում՝ զինուորականները Հայոց աշխարհի տէր և տնօրէնն էին: Զրահաւորուած Ռուբէն փաշայի անսխալականութեամբ՝ նոքա այդ անպատասխանատու և անվճռաբեկ ֆիրմայի տակ սկսեցին այն արիւնալից արհաւիրքը, որ դղրդալից լուծուեց Կարսի անկումով, ապա և Հայաստանի Հանրապետութեան խորտակմամբ:

XX

XXII անասնապահութիւնը *(մատիտագիր)*

Կարսի նահանգը մեր երկրի խաշնարած աշխարհն է, և Վանանդի լեռներում, պատերազմի արհաւիրքներից պատսպարուելով՝ ազգաբնակութիւնը հնարաւորութիւն է ունեցել տնտեսելու իր տաւարն ու ոչխարը: Եւ այսօր երբ Երևանի, Գանձակի և միւս վայրերը ոտնահար և արիւնաքամ սպառուել էին անասնապահ պաշարից՝ Կարսի ձորերում դուք կը հանդիպէիք ոչխարի և տաւարի անհուն շարաններ: Եւ որովհետև Կարսի նահանգը առհասարակ 19 թուից ստացել էր հարուստ և կուսական երկրի հռչակ՝ դէպի Արփաչայ ձգտեցին թէ՛ մասնաւոր և թէ՛ պաշտօնական սպեկուլեանտներ, որոնք անդադար այս և այն անուան տակ քշում էին Կարսի սահմաններից անթիւ ու անհամար տաւարն ու ոչխարը: Բազմաթիւ զօրամասեր և հիմնարկութիւններ Հայաստանի բոլոր վայրերից անդադար ուղարկում էին Կարս իրանց ներկայացուցիչներին պաշտօնական գրութիւններով՝ այսինչ զօրամասի կամ քաղաքային վարչութեան համար տաւար գնելու համար: Այդ բոլոր բազմաթիւ տարազաւոր և անտարազ վաճառականները՝ ամէնից առաջ դիմում էին նահանգապետին, ու աջակցութիւն խնդրում: Եւ ես գրեթէ չեմ յիշում մի օր, որ ինձ չայցելէին այդ տեսակի մարդիկ:

Ինձ ամէն անգամ վրդովեցնում էր այդօրինակ ամէն մի դիմումը, ես գտնում էի, որ այդ բոլոր գնումները պէտք է միանգամայն մասնաւոր բնոյթ ունենային և չը զբաղեցնէին իրանցով առանց այդ էլ բեռնաւորուած ադմինիստրացիան: Իսկ ադմինիստրացիաի այս և այն մասնակցութեամբ՝ այդ գնումները երկրի աչքում տալիս էին այդ գնումներին ոչ թէ մասնաւոր առուծախի բնոյթ, այլ մի կիսապաշտօնական, եթէ ոչ միանգամայն պարտաւորեցուցիչ ազգաբնակութեան համար մի տուրքի նշանակութիւն: Այդ պայմաններում և մթնոլորտում այդ առ ու ծախքը կորցնում էր իր ազատ առևտուրի իմաստը, և վերածւում էր մի միջոցի՝ ուր կարելի էր շահագործել իշխանութեան համարումը, ի հաշիւ ի հարկէ երկրի ազգաբնակութեան և ի օգուտ այդ անհատների՝ որոնք իրանց այս և այն զօրամասի կամ քաղաքային վարչութեան ներկայացուցիչ էին կոչում: Բացի այդ, ես շատ և շատ տուեալներ ունէի կարծելու, որ այդ տաւարի և ոչխարի մեծ մասը այդ «ներկայացուցիչները» գնում են իրանց համար, սպեկուլիատիւ նպատակներով: Եւ այդ սպեկուլեանտները գնդապետներ էին, գլխապետներ, «զեմստվոյի ներկայացուցիչներ» և «ընկերներ»: Ես բազմաթիւ փաստեր ունէի, որ այդ բոլոր «հասարակական գործիչները», վկայականներով և յանձնարարականներով զրահաւորուած՝ այդ գնումները կատարում են իրանց համար, բայց մեր օրերի մթնոլորտը այնչափ տոգորուած էր գիշատիչ հակումներով, որ ոչ միայն իրաւօրէն՝ այլև ֆիզիկապէս հնարաւորութիւն չը կար մաքառելու այդ աս-

պատակ և աւազակ մթնոլորտում: Բոլորը տանում էին, բոլորը շտապ կրում, «տեղաւորեցնում էին» և այդ բոլորը կատարում «դեմօկրատիկ» և «ժողովրդական» գոռում-գոչումների տակ...

Եւ բացի այդ բազմաթիւ սպաներից և միւս պաշտօնեաներից՝ գալիս էին առանց այդ դիմակի սպեկուլեանտներ, և մասնաւոր նամակներ էին բերում ինձ «աջակցութիւն» ցոյց տալու համար: Եւ այդ նամակների գրողները ոչ շարքային մահկանացուներ լինելով՝ շատ փափուկ դրութիւն էին ստեղծում նահանգապետի համար...

Երբ այդ ուխտագնացների ախորժակը չափ ու սահմանը անցաւ՝ և ես տեսնում էի, որ այդ գիշատիչ պաշտօնաւոր և անպաշտօն պարոնները կարող են միանգամայն դատարկել նահանգը՝ ես հրաման արձակեցի, որ երկաթուղին չընդունի տաւար Կարսի նահանգից արտահանելու համար առանց իմ վկայականի: Այն ժամանակ այդ պարոնները այլ ելք գտան: Նոքա հանդես էին գալիս գեներալ Փիրումովի և գեներալ Յովսէփեանի վկայականներով, որ տաւարը տարւում է «զինուորական շտաբ» պէտքերի համար: Այդ առիթով ես մի քանի անգամ դիմեցի զօրաց մինիստրին և մինիստր նախագահին: Ես բացատրեցի, որ կառավարութիւնը տակաւին շահագրգռուած չէ հարստանալու ի հաշիւ երկրի, և մանաւանդ հարստացնելու այն մարդկանց՝ որոնք գալիս են Կարսի նահանգը այդ յանձնարարութեամբ: Բազմաթիւ անգամ, այս և այն պատրուակով՝ ես մերժում էի այդ դիմումները, բայց և այնպէս նոքա դարձեալ շարունակւում էին, դարձեալ պաշարում ինձ: Այդ խնդիրը իր ժամանակին այնչափ հրատապ էր, այնչափ շահալից, կրքոտ և ինտրիգ իր բնոյթով, որ ես շատ անգամ ստիպուած էի բաւարարելու այդ դիմումները, միայն թէ ազատուած լինեմ անխուսափելի իմ դէմ ինտրիգներից, որ այդ աստիճանաւոր և անաստիճան վաճառականները պատրաստ էին լարելու իմ դէմ այստեղ ու այնտեղ:

Այդպէս էր մեր օրերի «դեմօկրատիկ» մթնոլորտը, և այդպես էր այդ ազատ և «անկախ» հովերում Կարսի նահանգապետի փափուկ դրութիւնը:

Բայց 20 թուի ամառը՝ երկրագործութեան մինիստրութիւնը ձեռնարկեց մի քանի հարիւր գլուխ կաթնատու և լծկան տաւար գնելու գործը, և այդ յանձնարարութիւնը տրուած էր պարլամենտի անդամներից մէկին: Գալով Կարս՝ նա դիմեց ի հարկէ նահանգապետի աջակցութեանը, և ես այդ գնումների քարտէսը տարածեցի ամբողջ նահանգի վերայ, որոշելով, թէ ո՞ր գաւառում և որչափ տաւար կարելի էր գնել:

Բայց որչափ մեծ եղաւ զարմանքս՝ երբ պատգամաւորը առարկեց իմ այդ ծրագրի դէմ:

–Ես գտնում եմ,– ասաց օրէնսդիր պալատի պատգամաւորը,– որ այդ գնումների ծանրութեան մեծ մասը՝ եթէ ոչ ամբողջը, պէտք է ձգել Արդահանի գաւառի վերայ: Այդ վայրի ազգաբնակութիւնը բացառապես քրդեր և հարուստ

թուրքեր են,– շարունակեց պարլամենտի անդամը,– և մենք, պետական միտումներով, պէտք է թուլացնենք այդ որջը...

Բայց ի զուր էի ես բացատրում մեծապատիւ պատգամաւորին, որ կառավարութիւնը հարազատ և խորթ զաւակներ չունի, որ Կարսի նահանգում մենք ունենք մեզ հպատակ ազգաբնակութիւն, որի շահերը մեզ համար թանկ պէտք է լինեն, և պետութիւնը չի կարող շահագործել այս կամ այն ազգութիւնը՝ որովհետև երկրի վնասը մեր ընդհանուր վնասն է:

– Միայն և միայն Կարսի նահանգից տաւար տանելով և փոխարէնը մեզ ոչինչ չը տալով՝ դուք կը նուազացնէք միայն մեր անասնապահ կարողութիւնը, և այդ անխուսափելի կ՛անդրադառնայ պետութեան տնտեսական բիւջէում: Բացի այդ,– վերջացրեցի ես իմ բացատրութիւններս,– և որպէս նահանգապետ՝ ես պարտաւոր եմ մեծաչափ պաշտպանելու նահանգի ազգաբնակութեան շահերը, անվերաբեր այն բանին՝ թուրքեր են նոքա թէ հայեր, որովհետև ես ոչ թէ հայերի նահանգապետն եմ՝ այլ Հայոց Հանրապետութեան Կարսի նահանգապետ: Եւ, վերջապէս՝ երբ այդ գնումը որոշ չափով տուրք է, պետական իմաստով անհրաժեշտութիւն, ապա թոյլ տուեցէք նահանգապետին՝ հաւասար չափով բաժանելու այդ տուրքը ամբողջ նահանգի վերայ, և թոյլ տուեցեք դարձեալ նոյն նահանգապետին՝ աւելի քան ում և իցէ հեղինակալից ասելու, թէ ո՞ր գաւառը որչա՞փ կարող է վճարել: Այդ պաշտօնական խնդրում պէտք են իրական տուեալներ և ոչ թէ ազգային և ինչ-որ քաղաքական բացատրութիւններ ու մեկնութիւններ...

Արձանագրելով այս պատմութիւնը մեր կառավարչական անցուդարձից՝ ես ուզում էի պատկերացնել, թէ որչա՞փ երբեմն սխալ էին մեր հայեցակէտները երկրի ընդհանուր խնդիրներում, և որչա՞փ այդ հարցերին կցւում էր կիրքը, ոչ համբերատար վերաբերմունքը՝ և նորա ծալքերում մեր օրերի և գիշատիչ, տառափոխիկ բնազդը...

Այդ ամիսներում ես ստացայ և մի կիսապաշտօնական դիմում. աջակցութիւն էին խնդրում պարլամենտի համար մի քանի հարիւր փուդ պանիր և իւղ գնելու գործում, և դորա համար Երևանից յատուկ մարդ էր ուղարկուած:

Մթերքի այդչափ մեծ քանակի գնումը այդօրինակ կիսապաշտօնական ձևով՝ ես գտնում էի վերին աստիճանի անտակտ և վերին աստիճանի փափուկ մի խնդիր, թէ՛ պարլամենտի արժանապատուութեան՝ և թէ՛ նահանգապետի կոչման համար:

Պէտք է ասել, որ աջակցել՝ մեր ձորերում կը նշանակէ հրամայել: Բայց միթէ՞ կարելի է հրամայել մի այնպիսի մասնաւոր գործում, ինչպէս այս և այն մարդու համար պանիր և իւղ գնելն է: Այդ առանցքում ակամայ անցնում ես չափի սահմանը, և իր ընդհանուր դրութեամբ՝ ստիպում ես մարդկանց անել քեզ այս և այն զիջումը, մի բան, որ ոչ մի կերպ ի հարկէ հանդուրժելի չէ իշխանութեան համար: Ես շատ լաւ հասկանում էի, որ մթերքի այդչափ մեծ քանակ նուազա-

գոյն գներով յանձնելով պարլամենտին՝ մարդիկ կատարում էին միայն նահանգապետի անձնական ցանկութիւնը, և այդ նահանգապետին պարտաւորեցնում: Ես աւելին կասեմ՝ այդ պայմաններում միանգամայն հնարաւոր էին և մանր պաշտօնեաների կողմից զեղծումները: Եւ այդ զեղծումները կատարւում էին ի հաշիւ ազգաբնակութեան, բայց ի վարձ այն նահանգապետի՝ որի հեղինակութեան վերայ յենուելով, նորանից աջակցութիւն էին պահանջում տաւար և պանիր գնելու գործում:

Մեզանում մանաւանդ թուրքերը՝ շատ սիրում են անձնական ծառայութիւններ անել իշխանաւոր մարդկանց, բայց այդ բոլոր ուշադրութիւնը հաշուելից է, դիտաւորեալ և միտումնաւոր: Մի փութ արժան պանիր բերելով Ձեզ ի պաշտօնէ՝ նա այդ պանիրը տասնապատիկ աւելի կը գնահատէ իր տեղում, և դուք միանգամայն հիասթափուած կը լինէք, թէ ինչո՞ւ ընդունեցիք այդ խաբուսիկ ուշադրութիւնը, որ այդչափ թանկ նստեց Ձեզ վերայ...

Այդպէս է երկրի հոգեբանութիւնը, և կեանքի այդ բնորոշ գծերը չի կարելի հաշուի չառնել, և չի կարելի մասնաւորը շփոթել պաշտօնականի հետ՝ և այդ մթնոլորտում ստեղծել առնուազն փափուկ դրութիւն:

Արձանագրելով իմ յիշողութիւններից այդ փոքրիկ միջնադէպը՝ ես միանգամայն տրամադրուած չեմ այդ պատկերին որևէ մեղադրական բնոյթ տալու:

Ես կ՛ուզէի միայն ընդգծել, որ մենք ասիացիներս՝ երբէմն շփոթում ենք հասկացողութիւնները, և պետական դաստիարակութիւն չունենալով՝ չենք ըմբռնում տակտի իմաստը և իրերի տեղը: Այդ պանիրը և այդ իւղը իշխանութիւնից անջատ՝ պարլամենտը կարող էր ստանալ աւելի արժան, աւելի լաւ տեսակի և աւելի արագ, և մենք մեր շուրջը չէինք բարձրացնի այդ վայրենի ձորերում այդչափ իրարանցում և այդչափ աղմուկ:

Մի որևէ կապալառուի յանձնարարելով այդ գնումը՝ մենք նորմալ կերպով կատարած կը լինէինք մեր պէտքերի պահանջը, և առիթ չէինք տայ հրապարակի այն բազմաթիւ սրախօսութիւններին՝ որոնք անխուսափելի են մեր ոչ կրթուած, կրքալից և բացառիկ մթնոլորտում: Կովկասի տիրապետութեան հարիւր տարուայ ընթացքում, ռուս պաշտօնեան այնպէս է համեմել մեր տրամադրութիւնները կաշառալից հասկացողութիւններով, որ այդ պաշտօնեայի և իր սեփական փողով մածունը՝ դարձեալ կաշառք է համարւում:

Այդչափ բեդնամ, անամօթ ժառանգութիւն է թողել մեզ ռուս այսպէս կոչուած օրիենտացիան: Եւ պէտք է արդէօք ասել, թէ որչա՞փ պէտք է զգոյշ լինել իրերի և հասկացողութիւնների այդ մթնոլորտում, ուր երկիրը ունի իր նախապաշարմունքը, իր սնահաւատ տրամադրութիւնը և այն բոլոր սպեցիֆիկ հակումները, որ խմորուել են պարսից, թիւրքաց և ապա խոշորագոյն մասով ռուս բռնակալութեան օրերում, ռուս պաշտօնեաների ձեռքով:

Եւ ես այդչափ կանգ առա այդ միջանկեալ պանրի և իւղի վերայ, որվհետև այդ ոչ թէ միջանկեալ մի պատմութիւն է, անվերաբեր այն նիւթին, որ մենք ամբարում ենք մեր հասարակական կեանքի ուսումնասիրութեան համար, այլ մեր հասարակական և պետական կեանքի այն բոլոր գիծերը՝ ուր մենք պէտք է սովորենք տակտ, կառավարչական ու պետական աշխարհայեացք և պետական դաստիարակութիւն ստանանք:

XXI

Եթէ 70-80-ական թուականների հայ երիտասարդութիւնը տուեց հայ լրագրին հայրենասէր և անկեղծ զգացմունքներով համակուած թղթակիցներ, որոնք մեծ սիրով դէպի երկիրը և դպրութիւնը՝ օրեցօր տալիս էին մեզ երկրի նիստուկացը, նորա համով և հոտով բնորոշումները, 90 թուականներից՝ այդ լուրջ և բանիմաց կորովը սկսում է թուլանալ մեզանում, և միտումնաւոր:

Ես շատ մօտ ծանօթ եմ այդ խնդրի հետ, անմիջական գործ եմ ունեցել հայթուրքական ընդհարումների հետ գաւառում, դիտել եմ մեր գաւառական թղթակցութիւնները այդ ժամանակամիջոցում, և պէտք է ասեմ, որ այդ հաղորդագրութիւնների մեծագոյն մասը շատ հեռու էր ճշմարտութիւնից, և գաւառական թղթակցութեան այն տիպարից, որ իւր ժամանակին մեզ այնչափ զբաղեցնում էր մեր գաւառական կեանքով:

Բայց գաւառական թղթակցի այդ այլասեռումը կանգ չառաւ ի հարկէ հայթուրքական ընդհարումների շրջանում, նա ծաւալուեց այդ ուղղութեամբ և մինչև մեր օրերը: Եւ եթէ 80 թուականներում մեր գաւառական թղթակիցը մեր գաւառական կեանքի երդուեալ պաշտպան կարող էր անուանուել՝ մեր օրերում այդ յատուկ թղթակիցները վերացան ի սպառ:

Գաւառական կեանքի արձանագրութիւնը մնաց պատահական մարդկանց ձեռքում, որոնք զբաղւում էին այդ աշխատանքով այն չափով միայն՝ որ չափով որ այդ շահալից էր և նպատակայարմար իրանց համար: Այդ պայմաններում ու դաւանանքների այդ մթնոլորտում՝ գաւառական թղթակցութիւնը կորցնում էր մեզ համար վաղեմի ճշտութեան և գաղափարականութեան իմաստը: Լրագրական այդօրինակ հաղորդագրութեան մէջ՝ մենք տեսնում էինք մեր օրերի տենդենցիօզ ուղղութիւնը, իսկ ի դէմս գաւառական այդ թղթակցի՝ մենք հանդիպում էինք մեր օրերի այն ճարպիկ մարդկանց, որոնց համար նպատակը սրբագործում է բոլոր միջոցները: Եւ այսօր արձանագրելով այս նիւթերը մեր հասարակական կեանքի ուսումնասիրութեան համար՝ մենք տակաւին հակուած չենք մեղադրական ակտ գրելու: Բայց մեր օրերի գաւառական թղթակիցը՝ արդիւնք իր ժամանակի և հակումների, յանցաւոր էր այն չափով միայն, որչափով յանցաւոր էին պատմութեան առաջ նորա ժամանակը և մեր հասարակութիւնը: Ժամանա-

կակից հայ թղթակիցը չէր կարող գնալ իր ժամանակի գաղափարների առջևից, նա հետևում էր միայն այդ սրընթաց օրերին, և ձգտումների ու տրամադրութիւնների այդ կատաղի պայքարում՝ փշրւում էին նորա վաղեմի իդեալները, և ինքը կորցնում իր դէմքը և բարոյական կորովը...

Այդպէս էին հայ լրագրի առաջուայ և ժամանակակից գաւառական թղթակիցները:

Հայկական կարճատև իշխանութեան օրով՝ մեր մամուլը և մեր գրողները միանգամայն կղզիացան երկրից: Նրանք մոռացան կարծես, որ այդ ցաւալից երկունքը լուծուեց նոցա լծորդ աշխատանքով: Ռոմանտիկ իրանց բնոյթով՝ նրանք անջատուեցին մեր իրականացած երազներից, և դարձեալ դէպի բարձր փառելով՝ նրանք հեռուից միայն հմայուեցին հայկական աշխարհով...

Եւ այդ էր պատճառը կարծում ենք, որ մեր մամուլը և մեր հասարակութիւնը ի վիճակի չէին մեր ներքին ցաւերի և դրութեան մասին խօսել:

Կառավարութեան և կուսակցական օրգան «Յառաջ»-ը զբաղուած էր աւելի քաղաքական և կուսակցական հարցերով, իսկ նորա ստուերում՝ դէպի կեանք ձգտող փոքրիկ «Ժողովուրդ»-ը անդրադառնում էր միայն իր կուսակցութեան երազներին, բայց ոչ կապւում բուն երկրի և այն «ժողովրդի» հետ, որի մեծ վահանի տակ նա հաւակնութիւն ունէր առաջնորդելու հասարակական կարծիքը:

Տիրող մտքերի այդ մթնոլորտում գաւառական թղթակցութիւնը կորցնում էր իր իմաստը, և հասարակութիւնը չը գիտէր իսկապէս, թէ ի՞նչ է կատարւում հայկական գաւառում: Պատահական գաւառական թղթակիցը հաղորդում էր միայն արտակարգ դէպքեր, Աղէքսանդրապօլի համալսարանի բացումը, Երևանի կօնսերվատօրիայի մասին, զեմստվոների մասին իր անձնական դատողութիւնը, իսկ ինքը՝ երկիրը, իր հազար ու մի պէտքերով և ցաւերով՝ մնում էր հասարակութեան ուշադրութեան ստուերում, և բորբոքուելով՝ երերում էր մեր պետական արմատները: Այդպէս էր մեր մամուլը մեր երկրի և մեր ներքին պէտքերի տեսակէտից: Կարսի գրաւման օրից՝ հայկական Մազրա մեծ գիւղից սկսեցին երևալ լրագիրներում թղթակցութիւններ տաճկահայ բառբառով գրուած: Ես ուշադրութեամբ հետևում էի այդ թղթակցութիւններին, ինչպէս որ հետաքրքրւում էի բոլոր տեղեկութիւններով, որ վերաբերւում էին Կարսի նահանգին: Բայց Մազրայի թղթակիցը չը բաւականացաւ լրագրի սահմաններով, և նա սկսեց ուղարկել նոյն տեղեկութիւնները և դաշնակցութեան բիւրոյին, Կարսի զօրքերի հրամանատարին, Կարսի «դաշնակցական» քաղաքագլխին՝ բայց ո՛չ Կարսի նահանգապետին... Իսկ նահանգապետը ստանում էր այդ տեղեկութիւնները կողմնակի ճանապարհով, ներքին գործերի մինիստրի միջոցով, որ կամ ի գիտութիւն էր հաղորդում այդ տեղեկութիւնները, կամ խնդրում էր ստուգել նոցա ճշտութիւնը:

Վերլուծելով այդ թղթակցութիւնները՝ ես չէի կարող չը նկատել, որ այդ հաղորդագրութիւնները շրջանառում են բացառապէս թուրք-հայկական յարաբե-

րութիւնների շուրջը, և արձանագրում են միանգամայն սուտ լուրեր, և լաւագոյն դէպքում՝ միայն գունաւորում հարևան, ընթացիկ թիւրիմացութիւնները: Թղթակցութիւնների այդ տենդեցիօզ, միտումնալից բնոյթը՝ ակներև էր: Եթէ նկատի առնելու լինենք, որ այդ թղթակցութիւնների պատճէն ուղարկւում էր ոչ միայն դաշնակցութեան բիւրոյին՝ այլև Կարսի զօրքերի հրամանատար գեներալին, այսինքն այն իշխանութեանը, որ ոչ մի առնչութիւն չը պէտք է ունենար երկրի ներքին, քաղաքացիական, վարչական խնդիրների հետ, շատ պարզ կը լինի կարծեմ, որ թղթակիցը հետապնդում էր ոչ թէ երկրի ցաւերը՝ այլ ինչ-որ միտումներ, որ յամենայն դէպս շատ հեռու էին ճշմարտութիւնից:

Կարսի զօրքերի հրամանատար գեներալը դէպի փառք և իշխանութիւն ձգտելով՝ ուզում էր խառնուել նահանգի բոլոր գործերին, և այդ առանցքում անյաղթ տրամադրութիւն ունէր երերելու նահանգապետի համարումը կառավարութեան առաջ: Գեներալի այդ տրամադրութիւնից մեծ չափով օգտուեց և Կարսի դաշնակցական քաղաքագլուխ Նոհրատեան, որ յենուելով իր կուսակցական կոչման վերայ՝ մեծ ախորժակ ունէր Կարսի նահանգապետ դառնալու: Եւ միամիտ թղթակիցը փառքի երազներով տարուած՝ այդ երկու մարդկանց ծուղակը ընկնելով, նոցա ցուցմունքներով սկսեց հրդեհել մեր օրերի համար այդ շատ տարազալից խմորը, հայ-թուրքական մոխրակալ յարաբերութիւնները: Չէ՞ որ այդ առանցքում կարելի էր անպատասխանատու խօսել և ծափեր վաստակել: Բացի այն, որ այդ հաղորդագրութիւնները միանգամայն սուտ և դիտաւորեալ էին՝ ես գիտէի և այն, որ թղթակիցը գործ, զբաղմունք չունի, և միջոց է դարձրել իր համար այդ թղթակցութիւնները՝ որպէս ռեկլամ, իր վերայ ուշադրութիւն դարձնելու համար...

Կողմնակի ճանապարհով ես հասկացնել տուեցի երիտասարդին, որ նա կարող է պաշտօն ստանալ նահանգի վարչութեան մէջ, և մի երկու օրից յետոյ երիտասարդը ներկայացաւ ինձ:

Պարզելով երիտասարդին՝ թէ որչա՞փ հետաքրքիր և մեծ նշանակութիւն ունեցող աշխատանք է ադմինիստրատիւ պաշտօնը երկրում, թէ որչա՞փ մեծ գործ ունենք մենք կատարելու այդ ասպարէզում, և թէ վերջապէս՝ որ այդ միջոցով միայն կարելի է ուսումնասիրել երկիրը և ժողովուրդը, նոցա իսկական պէտքերով ու ցաւերով, ես առաջարկեցի նորան հենց այն գաւառակում, ուր նա բնակւում էր՝ մի փոքր այդմինիստրատիւ պաշտօն: Երիտասարդը շատ աշխոյժ, շատ կրակոտ և ընդունակ մարդու տպաւորութիւն էր թողնում: Ես յանձնարարեցի գաւառապետին՝ ուշադիր լինել դէպի երիտասարդը, և նա անցաւ իր պաշտօնին:

Բայց որչա՞փ մեծ էր իմ հիասթափութիւնս՝ երբ մի ամսից յետոյ տեղեկացրին ինձ, որ այդ երիտասարդը թողնելով թղթակցի անպատասխանատու զբաղմունքը՝ մեծ չափով անցել է կաշառակերութեան և զեղծումներին: Գաւառապե-

տը ուղարկեց իր օգնականին քննութիւն կատարելու այդ առիթով: Երիտասարդին ես ստիպուած էի պաշտօնից հեռացնելու, և դատի տալու մի շարք գործերով, և դատաստանական քննիչը որին յանձնուած էր այդ գործը՝ բանտարկեց երիտասարդին:

Անձնապէս ես շատ ու շատ ցաւում էի, որ այդ ընդունակ, եռանդոտ երիտասարդը սայթաքուեց կեանքի հրապուրալից ասպարէզում: Գուցէ այլ նորմալ պայմաններում՝ նա պիտանացու լինէր իր երկրին և ժողովրդին, բայց մեր օրերի ապականուած մթնոլորտում՝ նա անկարող եղաւ դիմադրելու ընդհանուր անհաւասարակշիռ հոսանքին: Դեռ որպէս թղթակից, ընկնելով գեներալների և քաղաքագլխի կրքալից և նենգ ծուղակը՝ նա անգիտակցաբար թեքուել էր արդէն գաղափարական իմաստից, և ապա դէպի կեանք և գործունէութեան անցնելով՝ նա արդէն ամուր բարոյական հիմունքներ չունէր իր նոր և պատասխանատու պարտաւորութիւնների համար: Առաջ եկաւ հասկացողութիւնների այն մեծ կոլլիզիան, որ վերածուեց դրամատիկ մի մեծ խմորումի: Եւ այդ խմորը հունցուեց մեր օրերի այն հորդառատ ջրերով, որ գալիս էին դէպի անդունդ տանելու այդ պետականութիւնը և հայ ժողովրդի վաղեմի երազները: Երբեմն տարուած իր հայրենիքի քաղաքական գեղածիծաղ պատկերներով՝ թղթակից մայրենի մամուլի, կրակոտ, պայթուն և անպայման գաղափարական երիտասարդը՝ շեղուեց շոյիչ իդեալներից և դէպի ցած գլորուեց: Անգիտակցօրէն նա վարակուեց սկզբում մեր օրերի կրքոտ և խարդախալից բնոյթով, և որպէս թղթակից՝ գործիք դարձաւ փառքի շուրջը վիճող այդ մարդկանց ձեռքում: Եւ արդէն երերուած բարոյական իմաստով անցնելով դէպի ռէալ և գործնական ասպարէզ՝ նա անկարող եղաւ կայուն լինելու այդ հրապուրալից և գունաւոր հրապարակում...

Եւ եթէ նորան վիճակուած չէր հերքելու իր սիրուած գաւառում բարին ու արդարը՝ կեանքի ծախորդ պայմանները անդրադարձան նորանում որպէս անողոք և անխուսափելի պայմաններ իր ժամանակի մտքերի և տրամադրութեան:

Այդ հազարաւոր ընդունակ և եռանդոտ երիտասարդութիւնը՝ կուլ գնաց իր օրերի լափող մթնոլորտին, և գուցէ այդ մեծագին արժէքով՝ հարթելով նոր ուղիներ դէպի անկախութիւն և ապագայ պետականութիւն: Նրանք յամենայն դէպս կուտակեցին բազմատեսակ նիւթեր մեր հասարակական կեանքի ուսումնասիրութեան համար:

XXII

XXIV *(մատիտագիր)*

19 թուի Հոկտեմբերին ես պաշտօնական հաղորդագրութիւն ստացայ, որ Կարսի նահանգը շրջագայելու գալիս է կառավարութեան նախագահ Ալ. Խատիսեան:

Արևելքում առհասարակ, և Կարսի նահանգում մասնաւորապէս՝ իշխանութիւնը ունի իր առանձնակի հմայքը և իրաւունքի ներկայացուցիչը, որպէս անձնաւորութիւն՝ միշտ շատ հետաքրքրել և զբաղեցրել է երկիրը:

Դեմօկրատիկ և ռամկավար սկզբունքները, որ գալիս էին կարծես հարթելու մարդկանց և դէմքերի տարբերութիւնը՝ անցան Կովկասի վերայով որպէս մի նոր-ութիւն միայն: Այդ բարձր և մեր կիրճերում ու ձորերում դեռ տակաւին օտար և խորթ գաղափարները՝ հայութիւնը և նորա իղձերի թարգման կարավարութիւնը *(տեքստը խզուած է)*... Նուագում է զուռնան, օրկեստրը կատարում է ազգային հիմնը, որոտում են թնդանօթները, թնդում է հազարաւոր կեցցէն՝ և ժողովրդի ոգևորութիւնը վերածւում է բուռն օվացիայի, ի պատիւ հայրենի կառավարութեան:

Երբ մինիստր նախագահը անցնում է դէպի իր աֆտօմօբիլը, և հրաւիրում է իր մօտ նահանգապետին՝ նորա կառքը շրջապատում է նահանգի միլիցիայի հեծեալ պահակախումբը, նահանգական միլիցիայի տեսչի հրամանատարութեամբ:

Առջևից, կառքով գնում է Կարսի ոստիկանապետը, իսկ նորա յետևից առաջնորդելով կառավարութեան նախագահի աֆտօմօբիլը՝ 50 հեծեալ զինուած զիլան քրդեր, իրանց ցեղապետ Արաբ Օղլու գլխաւորութեամբ: Լեռների այդ ազատ ասպետները խայտաճամուկ զգեստներով՝ տանում էին կառավարութեան նախագահի առջևից հայկական մեծ ծածանուող դրօշակը, և քրդերէն երգում: Պատուաւոր գնացքը բաղկացած աֆտօմօբիլներից և կառքերից՝ շրջապատուած թիւրքահայերի 200 հեծեալ կտրիճներով, դանդաղ և հանդիսաւոր ընթանում էր դէպի նահանգապետի տունը: Երկաթուղու վագզալից մինչև նահանգապետի բնակարանը՝ աջ ու ձախ շարուած էր ժողովրդի ահագին բազմութիւն, երաժշտութիւնը, բոլոր դպրոցների աշակերտութիւնը՝ մօտ 2000 հոգի, իրանց ուսուցչական կազմով: Բոլոր փողոցները զարդարուած էին հայկական դրօշակներով, գորգերով, կանաչ ժապաւէններով ու կամարներով: Իսկ ճանապարհի ամբողջ ընթացքում՝ կառավարութեան նախագահի աֆտօմօբիլը լցուում էր ծաղկեայ փունջերով, որոնցով այստեղից և այնտեղից հասարակութիւնը ողջունում էր երկրի առաջի *(տեքստը խզուած է)* ...

օրգանական ակօսներ չը թողեցին երկրում: Գաւառը դեռ տակաւին խարխափում է տգիտութեան մթնոլորտում, և քաջազնական կենցաղը դեռ քաղաքացիական բնոյթ ունի: Եւ ըմբռնումների ու ճաշակների այդ առանցքում՝ նահանգը սպասում էր տեսնելու ոչ թէ դեմօկրատիկ հանրապետութեան ընտրուած պետին, ոչ թէ իշխող քաղաքական կուսակցութեան հաւատարմատարին կամ անուանի հասարակական գործչին, նա ուզում էր տեսնել այն մարդուն, որ վայելում է երկրի գերագոյն իշխանութիւնը, որից, նորա կարծիքով՝ կախուած է ամէն բան: Նա ուզում էր տեսնել երկրի փայլը և ուրոյն իշխանութիւնը:

Այդպէս է Արևելքի հոգեբանութիւնը: Եւ ես՝ տասնեակ տարիների ընթացքում մեծ սիրով դէպի երկիրը, ուսումնասիրած լինելով գաւառական կեանքը, այսօր հայկական նահանգապետի դերում՝ պէտք է հաշուի առնէի այդ դրութիւնը: Ինձ հարկաւոր էր մի աւելորդ անգամ հմայել այդ ահարկու լեռներում հայկական իշխանութեան համարումը, և երկրի լեզուով և հասկացողութիւններով պատկառել այդ իշխանութեան առաջ: Իսկ նահանգը շատ և շատ հետաքրքրում էր ոչ միայն հայկական կառավարութեան նախագահով՝ այլև նորա անձնաւորութեամբ: Երկրում շատ շատերը լսել էին Թիֆլիզի նախկին քաղաքագլխի մասին, և այսօր մեծ հետաքրքրութեամբ սպասում էին տեսնելու այն մարդուն՝ որի անունը տասնեակ տարուայ ընթացքում չէ իջնում հասարակական բանասիրութեան հրապարակից:

Այդ բոլոր միտումներով՝ ես հարկաւոր համարեցի առանձնակի ընդունելութիւն ցոյց տալ հայկական կառավարութեան նախագահին, ի նկատի առնելով և այն, որ նա գալիս է դէպի Տաճկական սահմանագլուխը, այնտեղ ուր շուքը, պատիւը և փայլը դեռ տակաւին իշխելով՝ կազմում են երկրի իշխանութեան անկիւնաքարը:

Ես մի բազմամարդ ժողով հրաւիրեցի նահանգի բոլոր վարչական, զինուորական և հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչներից, և մշակելով կառավարութեան նախագահի ընդունելութեան ցերեմոնեալը՝ ծրագիրը, բաժանեցի նոցա մէջ մեր անելիքը: Բոլոր կարգադրութիւնները վերջացնելուց յետոյ՝ ես իմ շքախմբով մեկնեցի դէպի նահանգի սահմանը, մինիստր նախագահին դիմաւորելու համար:

Աշունը Կարսի նահանգում առանձնակի հմայիչ և շատ գեղեցիկ, շատ բուրալից է:

Ժողովրդի տնտեսական աշխատանքները, առատ բերքը և հայրենիքի դեռ չը հագեցուած կարօտը՝ տալիս էին այդ գուրգուրող և գեղածիծաղ օրերին մի առանձնակի տրամադրութիւն: Եւ մենք բոլորս շատ ուրախ էինք, որ կառավարութեան նախագահը այցելում է նահանգը, այդպիսի բարեյաջող ժամանակամիջոցում: Նոյեմբերի 2-ին, առաւօտեան ժամի իններին՝ Ախուրեան-Արփաչայի վերայ երևաց հայկական պրեմիերի արտակարգ գնացքը: Երբ սալօն վագօնը կանգ առաւ Կարայեալ առաջիկայ կայանում՝ գնացքի փայլուն պարետ, կօմենդատ փոխգնդապետ Շահխաթունի, մեր շնորհալի և տաղանդաւոր դերասանը՝ հրաւիրեց նահանգապետին ներս:

Մինիստր նախագահ Խատիսեան՝ շրջապատուած իր շքախմբով, ուր կային գեներալներ, հասարակական գործիչներ, հայկական բանակի սպարապետը և ֆրանսիական միսսիայի ներկայացուցիչ գլխապետ Պօադիբար, ընդունեց ինձ սալօն վագոնում:

Ընդունելով իմ կարճառոտ պատուաւոր զեկուցումս նահանգի ընհանուր դրութեան մասին՝ մինիստր նախագահ իմ և միւսների ուղեկցութեամբ դուրս եկաւ վագօնից: Պիրրօնի վերայ կանգնած էին շրջակայ գիւղերի ազգաբնակութեան ներկայացուցիչները և մօտակայ գիւղերի դպրոցների աշակերտութիւնը: Ընդունելով գիւղական հասարակութիւններից աղ ու հացը, լսելով ժողովրդի ներկայացուցիչների ողջոյնը՝ մինիստր նախագահը անցաւ դէպի դպրոցների աշակերտութեան շարքերը, և լսեց ազգային հիմնը: Ապա նա զրոյց ունեցաւ գիւղական համայնքների հետ նոցա առօրեայ կարիքների մասին, լսեց ուսումնարանների տեսչի զեկուցումը դպրոցական գործերի մասին, և պատասխանելով բոլորին խրախուսիչ և յուսալից դիմումներով՝ նա մեկնեց դէպի Կարս ժողովրդի բուռն ցոյցերի և կեցցէների տակ: Երբ ժամի 11-ին գնացքը մօտենում էր քաղաքին՝ Կարսի բոլոր ամրութիւնների թնդանոթները 101 որոտով ողջունեցին կառավարութեան նախագահին:

Գնացքը ուշիմ մօտենում էր Կարսի վագզալին, ուր բառի բուն նշանակութեամբ ասեղ ձգելու տեղ չը կար:

Այնտեղ էր ամբողջ քաղաքը, մօտ 15 հազար հոգի: Վագզալը ամբողջովին զարդարուած էր հայկական դրօշակներով, գորգերով և Սարիղամիշի անտառից յատկապէս բերուած ծառերով: Իսկ սալօն վագոնի առաջ բարձրանում էր ճաշակով կառուցուած և զարդարուած կամարը, որի անցքերում կանգնած էին յունաց և պարսից հիւպատոսները, ամերիկական ներկայացուցիչները, քաղաքագլուխը շրջապատուած իրաւասուներով, հայ, յոյն և թուրք հոգևորականութիւնը և քրդերի պատուիրակութիւնը իրանց ցեղապետով: Եւ աջ ու ձախ յոյն հասարակութեան ներկայացուցիչները դրօշակներով, թուրքերի մեծ բազմութիւնը, տաճիկ անուանիները, պետական և հասարակական հաստատութիւնների աւագ պաշտօնեաները և ժողովրդի շատ մեծ բազմութիւն: Երբ սալօն վագօնը կանգ առաւ կառուցուած կամարի առաջ՝ մինիստր նախագահ Խատիսեան, շրջապատուած մեզանով՝ դիմեց դէպի ելք: Երաժշտութիւնը հնչեց ողջոյն դիմաւորումը, զօրքերի հրամանատար գեներալը ներկայացրեց մինիստր նախագահին պատուաւոր պահակը, և ազգային հիմնը արձագանք տուեց օրուայ բարձր տրամադրութեանը: Ընդունելով քաղաքագլխից աղ ու հացը և լսելով նորա ողջոյնը՝ մինիստր նախագահ անցաւ դէպի օտարազգի հիւպատոսները, բոլոր հոգևորականութիւնը և հաստատութիւնների աւագ պաշտօնեաներին, որոնց ես հերթով ներկայացնում էի նորան:

Յոյները, ռուսները, թուրքերը և քրդերը բոլորը առանձին առանձին շտապում էին հաւաստիացնելու կառավարութեան նախագահին իրանց անկեղծ զգացմունքների և խորին հպատակութեան մասին:

Լսելով այդ բոլորը՝ հայկական պրեմիերը շատ յուզուած, դիմեց հազարաւոր բազմութեանը հայերէն, իսկ յետոյ և ռուսերէն: Յայտնելով ժողովրդին կա-

ռավարութեան ողջոյնը, և շնորհակալութիւն անելով նահանգի իշխանութեան ներկայացուցչին այդչափ մեծ ընդունելութեան համար՝ մինիստր նախագահ, շրջապատուած գեներալներով, հասարակական գործիչներով և շքախմբով՝ օրկեստրի ազգային հիմնի հնչիւնների ուղեկցութեամբ դիմեց դէպի ելք: Այստեղ, հրապարակում զարդարուած ազգային դրօշակներով, կանաչով, ծաղկալից ժապաւէններով՝ կանգնած էր մինիստր նախագահի աֆտօմօբիլը: Ապա գալիս էին սպարապետ Նազարբեկովի, հիւպատոսների, գեներալների և մինիստր նախագահի միւս ուղեկցողների աֆտօմօբիլները ու կառքերը:

Իսկ հրապարակում խառնուել էր ժողովրդի հազարաւոր բազմութիւն, որի առաջ՝ մինիստրական գնացքի դիմաց, թիւրքահայ երիտասարդութիւնը գոյնզգոյն թաշկինակներով բոլորելով երկրի զուռնան՝ շատ բարձր տրամադրութեամբ եալլի էր գնում...

Պետական-կառավարչական հմայքի տպաւորութիւնը տեղի է տալիս ազգային հոգեբանութեանը, և մինիստր նախագահ շատ բարձր տրամադրութեամբ դիմելով հայութեանը՝ ասում է. «Ինձ վիճակւում է վերապրել մի տեսիլ, որ ոչ միայն առանձնակի փայլուն է, այլև պատմական:

Ես տեսնում եմ այն երիտասարդութիւնը, որ սրտատրոփ սպասում է գարնան օրերին՝ դէպի իր թշուառ հայրենիքը անցնելու համար, և ես բախտաւոր եմ այս առանձնակի փայլուն պայմաններում ասելու Ձեզ հանդիսաւոր և ոգևորուած՝ Ձեզ հետ է մեր ազգային կորովը, ամբողջ *(տեքստը խզուած է)* ... » քաղաքացուն:

Նահանգապետի տան առաջ, հրապարակում՝ քաղաքը կառուցել էր մի մեծ և գեղեցիկ զարդարուած կամար, որի մօտ կանգնած էր միլիցիայի պատուաւոր պահակը իր օրկեստրով, երաժշտութեամբ, և ամբողջ հրապարակը բռնուած էր ժողովրդով: Ընդունելով ոստիկանութեան պատուաւոր պահակը՝ մինիստր նախագահ դարձաւ դէպի իր պատուաւոր հեծեալ շքախումբը, Զիլանի քրդերը:

Նահանգապետը ներկայացրեց նորան քրդերի ցեղապետ Արաբ Օղլուն: Մինիստր նախագահ սեղմելով ցեղապետի ձեռքը՝ ասաց, որ կառավարութիւնը իր նահանգապետի զեկուցումներից գիտէ քրդերի բարի դրացիական յարաբերութիւնների մասին հայերի հետ, և կառավարութիւնը, որ մի աչքով է նայում երկրի բոլոր ազգութիւններին՝ ամէն կերպ կ՛աշխատէ քրդերի բարօրութեան համար: Մի երկու ժամից յետոյ մինիստր նախագահ, սպարապետ Նազարբեկովի և միւս գեներալների ուղեկցութեամբ մեկնեց Կարսի ամրութիւնները և զինուորական պահեստները դիտելու, և ժամի եօթին ընդունեց նահանգապետի հանդիսաւոր ճաշկերոյթը: Ուղիղ ժամի եօթին՝ նահանգապետի ընդարձակ դահլիճը լցուեց Կարսի հասարակութեամբ: Այստեղ էին ֆրանսիական և ամերիկական ներկայացուցիչները, յունաց և պարսից հիւպատոսները, բոլոր գեներալ-

ները, գնդապետները, պարլամենտի անդամները, պետական և հասարակական հիմնարկութիւնների աւագ պաշտօնեաները, մօտ 75 հոգի:

Երբ օրկեստրը կատարեց հայկական քայլերգը և հիւրերը բռնեցին իրանց նշանակուած տեղերը՝ նահանգապետը հայերէն դիմեց հայկական պրիմիերին հետևեալ խօսքերով. «Պարոն մինիստր նախագահ, հայկական կառավարութեան Կարսի առաջի նահանգապետը, ի դիմաց երկրի ու ժողովրդի՝ պատիւ ունի ողջունելու Ձեր այցը նահանգին: Ողջունում եմ Ձեզ նաև որպէս ներկայացուցչի այն մեծ քաղաքական կուսակցութեան, որ 30 տարուայ ընթացքում դառնալից և ցաւալից երկնքել է մեր ազատագրական տենչանքները, և այսօր բերում, յանձնում է ժամանակակից սերունդին՝ մեր փայփայած իղձերի իրագործումը:

Ապա ես պատիւ ունեմ ողջունելու Ձեզ որպէս և մեր ականաւոր հասարակական գործչի՝ որի մեծահամբաւ անունը յայտնի է և մեր հայրենիքի սահմաններից դուրս: Կարսին վիճակւում է լինել այն առաջաւոր դուռը՝ որի միջով պէտք է անցնէ դէպի հայրենիք թիւրքահայութիւնը, և մեզ յանձնարարուած է վերականգնել մեր դարաւոր հարևանների հետ մեր վաղեմի բարեկամական յարաբերութիւնները, որովհետև կառավարութիւնը այդ քաղաքացիական հաւաստիացումների մէջն է որոնում իր անելիքները և իր կորովը: Մենք յոյս ունենք մեծ պատուով երկրի և կառավարութեան առաջ պաշտպանել մեր քաղաքացիական առաջաւոր դիրքերը, և ես ի դիմաց Կարսի նահանգի բազմաթիւ ազգութիւնների և ցեղերի՝ լիազօրութիւն ունեմ ասելու Ձեզ, պարոն մինիստր նախագահ, կեցցէ Հայոց Հանրապետութիւնը և կեցցէ նորա կառավարութիւնը»: Օրկեստրը նուագեց «Մեր հայրենիքը»՝ հայկական ազգային հիմնը, իսկ մի փոքր անց մինիստր նախագահ Խատիսեան՝ հայերէն, իսկ յետոյ և ռուսերէն դիմեց նահանգապետին երկու ճառերով: Յայտնելով նահանգապետին կառավարութ-եան վստահութիւնը նորա գործունէութեան համար նահանգում, մինիստր նախագահ ծանրացաւ երկրում տիրող հանգստի և զարգացող իրաւակարգի վերայ: Ապա նա յայտնեց, որ կառավարութիւնը առանձնապէս հոգում է Կարսի նահանգի կարիքները, և մի աւելորդ անգամ ուրախ կը լինի տեսնելու իր զեկուցումից, որ երկրի դրութիւնը այստեղ հարթուել է և վաղեմի հարևանները անցել են դրացիական բարի յարաբերութեանը: Միւս օրը նշանակուած էր մինիստր նախագահի Սարիղամիշ մեկնումը, և այդ պատճառով նա ցանկութիւն յայտնեց իր գնացքում գիշերելու:

Ճաշկերոյթը վերջացաւ ժամի 10-ին, և պրեմիերը ուղեկցութեամբ բոլոր հիւրերի՝ դիմեց դէպի պատրաստ աֆտօմօբիլները: Նահանգապետի տան առջևի հրապարակը լուսաւորուած էր բենգալեան լոյսով, մեծ կամարը վառւում էր գոյնզգոյն էլեկտրականութեամբ, և հրապարակում հաւաքուել էր ժողովրդի ահագին բազմութիւն: Հեծեալ պատուաւոր թիկնախումբը շրջապատելով մինիստրի կառքը՝ լուսաւորում էր ճանապարհը ասիական մաղալներով, ջահերով,

և գնացքը, որ մի ֆիւրեկ տեսիլ էր՝ դանդաղ շարժուեց դէպի վագզալ, երաժշտութեան հնչիւնների և ժողովրդի կեցցէների տակ:

Միւս օրը, առաւօտուայ ժամի 9-ին՝ մինիստր նախագահ արտակարգ գնացքով մեկնեց Սարիղամիշ:

Այստեղ, կայարանում՝ մինիստրին սպասում էին Սարիղամիշի գաւառակի բոլոր գիւղերի ներկայացուցիչները, հայերը, ռուսները, յոյները, քրդերը, տաճիկները, լեզգիք և թուրքմէն ժողովուրդը, որոնցից ամէն մէկը մատուցեց հայկական պրեմիերին իր ճաշակի աղ ու հացը, կարագը, մեղրը և թխուածքները: Ապա մինիստրների խորհրդի նախագահը ընդունեց պատուաւոր պահակը, դիտեց զօրահանդէսը, անցաւ զօրանոցները, և այնուհետև սպաների ակումբում ընդունեց զինուորականների ճաշը:

Որովհետև ես գրում եմ ոչ միայն իմ յիշողութիւններս այս ժամանակամիջոցի անցուդարձից՝ այլև ժողովում նիւթեր մեր հասարակական կեանքի ուսումնասիրութեան համար, ես հարկաւոր եմ համարում ծանրանալ ոչ միայն դէպքերի և պատահարների նկարագրութեան վերայ՝ այլ տալ և բնորոշ գծերի բարոյական, հոգեբանական մեկնութիւնը:

Սարիղամիշը մի գեղեցիկ և վայելչատես բնակատեղի է, շրջապատուած անտառներով, զով օդով և գեղաձիծաղ հեռանկարներով: Ռուս իշխանութիւնը միլլիոններ է թափել այստեղ, կառուցել է ջրանցք, էլեկտրական լուսաւորութիւն, տելեֆօնի ցանց, մեծ և ճաշակով բազմաթիւ շինութիւններ, հսկայ տաճար, և տուել է այդ գիւղաքաղաքին Եւրոպական կուրորտի տեսք:

Սարիղամիշը ռուս զօրքի կենտրոնատեղին էր, և իշխանութեան առանձնակի ուշադրութեան մի վայր: Շատ բնական է ի հարկէ, որ և մենք պէտք է օգտուենք այդ կայանով նոյն միտումներով, և մեր առաջաւոր լաւագոյն զօրքերի շարքերը այստեղ հաստատեցին իրանց բնակատեղին: Եւ ի պատիւ մեր կառավարութեան՝ մենք պէտք է ասենք, որ նա ոչ մի միջոց չը խնայեց իր նորակազմ զօրքը ամէն կողմից ապահովելու համար: Եւ բաւական կը լինի նկատել այստեղ, որ հայկական բանակը կլանում էր մեր պետական բիւջէի 95 տոկոսը:

Երբ մինիստր նախագահ՝ ի ցոյց այլազգիների մեծ բազմութեան ընդունում էր փայլուն զօրահանդէսը, որ կատարւում էր մեծ հրապարակում, Կարսի աշնան արևի գուրգուրող և տրամադրող ճառագայթների տակ մենք միանգամայն տարուած էինք մեր ազգային գոհացմամբ: Մինիստր նախագահի առջևից անցնող բազմաթիւ վաշտերը, թուխ և կրակոտ հայ զինուորներն էին՝ Արարատեան դաշտից, Շիրակից, Նոր Բայեազէտից և Արագածի բարձունքներից:

Երբեմն հզօր ռուս բանակում հայ զինուորը անուանի էր իր շրջահայեաց խելքով, իր աշխատասիրութեամբ, կարգապահութեամբ, լրջութեամբ և խիզախ սրտոտութեամբ: Եւ չէ՞ որ այդ բոլոր դրական և եզակի գծերը անդրադարձան ի դէմս հայ ազգի նշանաւոր Լազարեւի, Շելկովնիկովի և Տէր-Ղուկասովի, և չէ՞ որ

այդ անուններով պարծենում էր ոչ միայն հայութիւնը, այլև այն հզօր բանակը, որի նշանաւոր դափնիքը հիւսել և հռչակել են այդ խելօք և խիզախ հայ զօրավարները: Եւ մենք հմայուած դիտում էինք, թէ ինչպէ՞ս այդ առոյգ և յուսալից Աբարանցին ու Նորբայեազէտցին՝ մեծ պատկառանքով դէպի հարազատ կառավարութեան նախագահը, և մեծ սիրով դէպի իր հայրենիքի պատիւը ու փառքը՝ գոչում էր արձագանք տալով անտառապատ լեռներում, հազա՛ր բարով Ձերդ բարձր գերազանցութիւն... Այդպէս էր այն հմայիչ և ահարկու պատասխանը, որ ստանում էր հայկական պրեմիերը իր «բարև քաջաց» դիմումին: Այդ յուսալից և խրախուսող տեսիլի հետ կարծես մի ներդաշնակութիւն էր կազմում վիթխարի և իմպօզանտ սպարապետ Նազարբեկով, որ ակներև բաւականութեամբ ուղեկցում էր հրճուող և բախտաւոր մինիստր նախագահին, երբ նա անցնում էր վաշտերի առջևից: Երբ վերջացաւ զօրահանդէսը՝ պ. Խատիսեան շատ գոհ և շատ բարձր տրամադրուած ասեց ինձ մի քանի անգամ. «Ես միանգամայն բաւարարուած եմ մեր շարքային զինուորի յուսալից տեսքով, և եթէ մեզ վիճակուի պատշաճ ազգային դաստիարակութիւն տալ այդ զինուորութեանը՝ մենք կոփած կը լինենք մեր անկախութեան պատուանդանը...»

Երբ մինիստր նախագահ յայտնելով զօրքին կառավարութեան ողջոյնը և իր անհուն շնորհակալութիւնը ծառայութեան համար՝ դրեց զօրահանդէսը, մեծ հրապարակը գրաւեցին քրդերի և լեզգիների ձիաւորները, մօտ 200 հոգի, որոնք սկսեցին իրանց անուանի ձիարշաւը մինիստր նախագահի առջև: Այդ անտառների և ձորերի վագրը սրընթաց անցնելով մեծ հրապարակը՝ թռիչք էին գործում դէպի գետին, և առանց քաշելու ձիու սանձը՝ նորից ցատկում էին դէպի թամբ: Ապա բոլորը շարքեր կազմելով՝ երգեցին իրանց ժողովրդական մրմունջները, և խոր գլուխ տալով կառավարութեան նախագահին՝ սլացան դէպի իրանց սիրած սարերը...

Այդ բոլոր տեսիլներից յետոյ մենք ուղեւորուեցինք դէպի սպաների ակումբը, ուր ամբողջ սպայութիւնը օրկեստրի քայլերգով՝ հանդիսաւոր ընդունեց կառավարութեան նախագահին:

Բայց այստեղ արդէն վերջանում է մեր բնական, ազգային տրամադրութիւնը և մենք անցնում ենք մի մթնոլորտ, ուր պատշաճ կը լինէր ասելու՝ ի՞նչ է Գեկուբան ինձ համար, և ո՞վ եմ ես Գեկուբային...

Ծիծաղող և հրճուող դահլիճը լցւում էր հայ և ռուս գեներալներով ու սպաներով, որոնց ահագին մեծամասնութիւնը, եթէ չասենք բոլորը՝ ռուսախօսներ էին և խորթ հայութեանը:

Թէ ինչպէ՞ս այդ օտարացած սպայութիւնը, անտեղեակ հայ լեզուին, երկրին, մեր պահանջներին և մեր պատմութեան իմաստին՝ պէտք է կրթէր հայ վաշտերը, դա ոչ միայն հարց էր՝ այլ մտատանջութիւն, որ պէտք է ունենար պետական բնոյթ: Այդ դահլիճում մենք չը լսեցինք այլևս հայ բառբառը: Խօսում և

երգում էին ռուսերէն, շօշափում էին ամէն տեսակի խնդիրներ՝ բացի այն հարցերից, որոնց շուրջը պտոյտ էր գործում գէթ այդ օրերում հայ հասարակական և պետական բանասիրութիւնը... Եւ ես մինչև ի ճաշկերոյթի վերջը՝ մնացի այդ օտար և խորթ դահլիճում, հրամանատար Սեպուհի հետ միասին առանձնացած և մեկուսացած: Թէ ի՞նչ էր զգում իր հոգու խորքերում հայկական կառավարութեան նախագահը՝ չը գիտեմ, մի բան միայն ակներև էր, որ նա ստիպում էր իրան սիրալիր լինել դէպի տան տէրերը, և շտապում էր ժամ առաջ թողնելու այն անհոգ և ինքնագոհ դահլիճը, որ օդում փառում էր «Շատերը ինձ են ատելի, շատերին ես օտար եմ...»:

Երեկոյեան մենք վերադարձանք Կարս, ուր զօրքերի հրամանատար գեներալ Փիրումով, ի դիմաց Կարսի զինուորականութեան՝ հրաւիրեց մինիստր նախագահին ընթրիքի:

Ձորը, ուր բնակւում էր բերդի պարետը, կօմենդանտը՝ լուսաւորուած էր բենգալեան լոյսով և ներկայացնում էր մի կախարդ տեսիլ, որ տանում էր մեզ դէպի երազ և զառանցանք...

Բայց սովորական ընթրիքի ժամանակ առաջ եկաւ մի զաւեշտ պատկեր, որի մօտով չի կարելի լրջութեամբ անցնել: Նա շատ բնորոշ է մեր դաստիարակչական ըմբռնումների տեսակէտից: Երբ պ. Խատիսեան իր բաժակաճառում դրուատում էր գեներալ Փիրումովի արժանաւորութիւնները և նորան շնորհակալութիւն յայտնում՝ գեներալ Յովսէփեան, ոտնահարելով տարրական քաղաքաւարութիւնը՝ շատ բարձր, ինքը իր հետ խօսելով ասաց.

– Աշխատողը ես եմ, իսկ հերոսը Փիրումով դուրս եկաւ, և այդ ասաց ռուսերէն ի հարկէ, այնչափ բարձր, որ ակամայից լսեց և սպարապետ Նազարբեկով:

– Հանգստացէք գեներալ,– խրոխտ նկատեց նորան ծերունի սպարապետը,– բաւական է, լռեցէ՛ք,– ասաց նա գեներալ Յովսէփեանին, որ նախանձալից շարունակում էր նոյն ուղութեամբ իր նկատողութիւնները...

Այդչափ ներդաշնակ էին հայկական այն գեներալները՝ որոնց հայկական կառավարութիւնը վստահել էր երկրի գոյութիւնը պաշտպանելու մեծ գործը: Եւ գուցէ այդ է պատճառը, որ նոքա այնչափ պատկերալից հանդէս բերեցին ամբողջ աշխարհի առաջ մեր զօրական տհասութիւնը և խեղճութիւնը...

Միւս օրը, Նոյեմբերի 4-ին, առաւօտը 4 աֆտօմօբիլով մենք մեկնեցինք Կաղզուան:

Ճանապարհի բոլոր գիւղերում ժողովուրդը աղ ու հացով ընդառաջ եկաւ կառավարութեան նախագահին, որ բոլորի հետ զրուցում էր նոցա անցուդարձի, պէտքերի մասին, և ինձ այդ առիթով հարկաւոր կարգադրութիւններ անում:

Երբ մեր գնացքը մօտեցաւ Արաքսի մեծ կամուրջին՝ որտեղից սկսւում էին Կաղզուանի Ֆէյիրիկ այգիները, մինիստր նախագահին դիմաւորեց Զիլանցոց քրդերի ցեղապետ Հասան բէկը, մօտ 200 անուանի քուրդ ձիաւորներով: Արևել-

քը շատ սիրում է մեծարել իշխանութիւնը, և շատ սիրում է մեծի և փոքրի առանցքը: Երբ գնացքը մօտենում էր կամրջին՝ քրդերը, որ ճանապարհի աջ ու ձախ կողմը հեծեալ երկար շարքեր էին կազմել, իջան ձիաններից և լուռ սպասում էին աֆտօմօբիլից իջնող մինիստր նախագահին:

Ես ներկայացրեցի մինիստրին ցեղապետ Հասան բէկը, և երբ պ. Խատիսեան ձեռք մեկնեց նորան՝ քրդերի պարագլուխը ըստ դարաւոր սովորութեան, ուզում էր համբուրել մինիստր նախագահի ձեռքը...

Ապա ես դրուատեցի ցեղապետի ազդեցութիւնը, դիրքը գաւառում, նորա մեզ մատուցած ծառայութիւնը, քրդերի լոյեալ, բարեկամական վերաբերմունքը դէպի հայութիւնը, և խնդրեցի կառավարութեան նախագահին՝ անուշադիր չը թողնել նորա վաստակաւոր աշխատանքը: Պ. Խատիսեան, սեղմելով քրդերի պարագլխի ձեռքը՝ ասաց. «Քրդերը մեր դարաւոր բարեկամներն են, և ես շատ ուրախ եմ տեսնելու նոցա այստեղ պատմական Արաքսի ափերում: Գոհունակութեամբ լսեցի նահանգապետի զեկուցումը ցեղապետի մեծ անուան և հեղինակութեան մասին, և ի հատուցում նորա վաստակների՝ ես իմ կառավարութեան անունից շնորհում եմ նորան հայկական սպայութեան երկրորդ աստիճանը, առաջինը անբաւարար համարելով նորա դիրքին և մատուցած ծառայութեան համար...»

Երբ ես թարգմանեցի մինիստրի ասածը՝ քուրդը նորից յենուեց դէպի մինիստր նախագահը, սփռելով առ ոտս նորա իր հպատակ և մեծ պատկառանքը:

Արաքսի ափում, ապա ընդունելով Կաղզուանի գաւառապետ Պալեանցի զեկուցումը գաւառի վիճակի մասին՝ մինիստր նախագահ, շրջապատուած քուրդ անուանիներով, միլիցիայի հեծեալ կազմով՝ գաւառապետի առաջնորդութեամբ, սկսեց բարձրանալ դէպի Կաղզուան: Հինաւուրց և դարձեալ սգաւոր Արաքսը՝ դարձեալ փախչում էր իր հարազատ ափերից, և ինչո՞ւ արցունք ցայտում էին այդ սէգ, հպարտ աչերից, դարձեալ գաղտնիք էր, և դարձեալ նշանակալից...

Մինիստր նախագահը և նորա շքախումբը ինքնամոռաց և տարուած նայում էին դէպի ցած՝ դէպի գլորուող և հարազատ ափերից փախչող Արաքս, և դժուարանում էին երևի հաւատալ, որ այդ երազ չէ, այլ պատմութիւն, որ ունի իր իրաւունքները և իր օրէնքները... Եւ տպաւորութիւնների ու մտքերի այդ անցուդարձում՝ հայկական իշխանութիւնը մտնում էր հինաւուրց Կաղզուան:

Աշնանը, ինչպէս և գարնանը՝ Կաղզուանը միանգամայն ֆանտաստիկ է:

Այգիները, որ իջնում են բարձրավանդակներից և բևեռում Արաքսի արծաթաթել փեշերին, կարծես կախուած են օդում: Ամբողջութեամբ այգիների մէջ թաղուած՝ քաղաքը չի երևում սկզբից: Դուք տեսնում էք այգիներում կառուցուած աշտարակաձև տնակները միայն, ուր Կաղզուանցին ապրում է Մարտից մինչև Դեկտեմբեր, գոյնզգոյն և խայտաճամուկ կանաչը՝ ուր տերևաթափին ծիածան-

ւում է մուգ ոսկեգոյն ալիքներով: Իսկ ձորի և ճանապարհի ելևէջների առանցքում՝ բազմաթիւ ցատկող ջրվէժներ, որոնք սրընթաց և աղմկալից մի մեծ սիմֆոնիա, համերգ կազմելով՝ միանգամայն կախարդում են Ձեզ, և տանում դարձեալ այնտեղ, դէպի անդադար փախչող և այնչափ միշտ հմայող Արաքս...

Այդ մեծ գեղարուեստական տեսիլը վերջանում է բարձրաբերձ քարանձաւով, որ երբեմն բաժանում էր Ռուսաստանը Տաճկաստանից՝ և տանում էր դէպի Ալաշկերտի հռչակաւոր հովիտը: Այդ ահարկու և վիթխարի կիրճում կան անթիւ ու անհամար վայրենի այծ, կաքաւ, և այդտեղ՝ ասում են, սիրում էր արկածել Կովկասի հռչակաւոր Քէօր Օղլին:

Կառավարութեան նախագահի գալու պատճառով Կաղզուանի այգեպանները զարդարել էին քաղաքը խայտաճամուկ գիրլեանդաներով, ծաղկելից կամարներով, կարծես ի ցոյց դնելով երկրի բնութիւնը և այդ ձորի առանձնակի գեղեցկութիւնը:

Քաղաքի սկզբում, մեծ հրապարակում, որ ամբողջովին դարձել էր մի բուսական գորգ՝ կանգնած էր մեր զօրքը, հոգևորականութիւնը, պաշտօնէութիւնը և քաղաքի ամբողջ ազգաբնակութիւնը:

Ընդունելով քաղաքագլխի աղ ու հացը, և լսելով հայ, թուրք և քուրդ անուանիների ողջոյնը՝ մինիստր նախագահ ընդունեց տաճիկ Ախունդի հրաւէրը այցելելու մզկիթը: Անցնելով այդ հինաւուրց աղօթատունը, որ այդ օրը թիւրքերը առանձնակի ջահավառել էին, մինիստրը այցելեց և հայոց կիսաւեր եկեղեցին: Յանձնարարելով նահանգապետին նուիրաբերել երկու աղօթատներին էլ կառավարութեան անունից մի գումար՝ մինիստր նախագահ անցաւ աղահանքը, լսեց նահանգապետի զեկուցումը քաղաքի կարիքների մասին, և միւս օրը շնորհակալութիւն անելով Կաղզուանի գաւառապետին օրինաւոր կարգապահութեան համար՝ միւս օրը վերադարձաւ Կարս:

Ինձ ուղեկցող պաշտօնեաները վերցրել էին իրանց հետ մի քանի զոյգ սպայ-ական ուսադիրներ, և երբ պ. Խատիսեան շնորհաւորեց քուրդ ցեղապետ Հասան բէկի սպայական երկրորդ աստիճանը՝ այդ ուսադիրներից պատշաճը ընծայեցին նորան: Մի փոքր անց, Հասան բէկ այդ ուսադիրներով և շրջապատուած բազմաթիւ քրդերով՝ եկաւ մեր կացարանը: Ես հանդիսաւոր նորից ներկայացրեցի մինիստր նախագահին հայկական զօրաբանակի այդ նոր սպային:

Երբ աֆտօմօբիլները արդէն պատրաստ էին և պ. Խատիսեան շրջապատուած շքախմբով դուրս եկաւ հրապարակ՝ քրդերի ցեղապետ Հասան բէկը մի հարիւր պատուաւոր քրդերի գլուխ անցած, գունաւոր թաշինակը ձեռքին և բոլորելով մեր երկրի զուռնան՝ շատ բարձր տրամադրութեամբ եալլի էր գնում...

– Ջան իմանի, ջան իմանի,

Դիլբար եաման, ջան իմանի...

Լսուեց քրդական հռչակաւոր համերգը, և պարողները՝ մեր լեռների այդ ազատ և սրտոտ բնակիչները, ցատկում էին որպէս դեռափթիթ պատանիներ...

Արևելքը սիրում է մեծարել մեծ մարդկանց և ինքն էլ շատ գոհ է այդ գունաւոր տեսիլներով:

Աղմուկը, փայլը և անցողակի վայելչութիւնը կազմում են երկրի հոգեբանութիւնը, և այդ առանցքումն են այն տուեալները՝ թէ ի՞նչ է պէտք երկիր կառավարելու համար, և թէ ինչպէս պէտք է կառավարել այդ երկիրը:

Այդպէս էր մեր ճանապարհորդութիւնը դէպի Կաղզուան:

Կաղզուանից Կարս վերադառնալով՝ կառավարութեան նախագահը մեծ հաճոյքով դիտեց նոր կազմակերպուող 4-րդ հետևեակ բրիգադան, որ միանգամայն ազգային էր իր հրամանատար կազմով: Շնորհակալութիւն անելով բրիգադայի հրամանատար Սեպուհին՝ և մի անգամ ևս շեշտելով, որ նա մեծ հաճոյք է զգում գտնուելու զօրամասում, որ միանգամայն հարազատ, հայկական տեսք ու ոգի ունի՝ մինիստր նախագահ ընդունեց հրամանատար Սեպուհի առաջարկած բանկետը: Եւ եթէ մինչև այդ զօրական ճաշերի և ընթրիքների ժամանակ տիրում էր միայն ռուս լեզուն և ռուս հոգեբանութիւնը՝ Սեպուհի բանկետը տիպիկ հայկական էր, հայ լեզուով և հայ ըմբռնումներով: Եւ այդ ոչ միայն տարբերութիւն էր՝ այլ մի ազգային գեղեցկութիւն, որ պէտք է դաւանանք լինէր և օրէնսդիր պահանջ՝ եթէ մենք պետականութիւն էինք ստեղծում և կոփում նորա պատուանդանը մեր հաւատալիքներով և մեր իղձերով:

Միւս օրը, Նոյեմբերի 6-ին, մենք անցանք Արդահանի գաւառը: Մեր առաջի կայանն էր Մերդենեկը: Ռուս իշխանութեան օրով այդ վայրը զօրամասերի մշտական բնակատեղին էր, իսկ վերջի պատերազմի ընթացքում՝ Մերդենեկը այն մեծ հանգոյցն էր, ուր կուտակւում էին մեծաքանակ նիւթեր Տաճկահայաստանի գրաւած վիլայէթների վերաշինութեան համար, և այդտեղ գաղութներ հիմնելու համար՝ Տաճկական Հայաստանը ռուս նուաճողական ձգտումների առաջաւոր դիրք դարձնելով...

Մենք էլ ունէինք այստեղ մեր զօրամասերը: Թիւրքերի, թուրքերի, քրդերի և յոյների շատ մեծ բազմութիւն՝ մի քանի հազար հոգի, հաւաքուել էին այնտեղ մինիստր նախագահին դիմաւորելու համար: Զօրակայանը զարդարուած էր հայկական դրօշակներով, կանաչով, օրկեստրը կատարեց ազգային հիմնը: Մինիստր նախագահ ընդունեց պատուաւոր պահակը, և դիտեց մեծ զօրահանդէսը: Բազմաթիւ ազգութիւնները մատուցին մինիստրին իրանց դարաւոր աղ ու հացը, կայմաղը՝ կաթի թանձր սէրը, աննման կարագը, ոսկեզօծ ու բուրալից մեղրը, և ամէն մէկը իրանց ամենահպատակ զգացմունքները արտայայտեցին: Սպայութեան հետ նախաճաշ անելուց յետոյ՝ մենք շարունակեցինք մեր ճանապարհը: Արդէն մութն էր, երբ մեր գնացքը հասաւ Արդահան: Ուշացանք ճանապարհին՝ ժողովրդի ահագին բազմութիւն թափուել, եկել էր դիմաւորելու մի-

նիստր նախագահին: Ամէն մեկը ուզում էր տեսնել հայկական մեծ իշխանութիւնը, գէթ մի խօսք լսել նորանից, և մենք ստիպուած էինք, խախտելով մեր մարշրուտը, ծրագիրը՝ երբեմն կանգ առնել այստեղ ու այնտեղ: Պէտք էր ընդունել ազգաբնակութեան սրտալից ողջոյնը, պէտք էր լսել նորա կեցցէն և բարեմաղթութիւնները:

Արդահանից 15 վերստ հեռաւորութեան վերայ ճանապարհի քուրդ գիւղերը ընդառաջ էին եկել դէպի խճուղին, և մեծ խարոյկներ էին բացել անտառում՝ լուսաւորելով թէ ճանապարհը և թէ ներքևում տարածուող Կուր գէտի հովիտը: Հարիւրաւոր ձիաւորներ բոլորելով մեր գնացքը՝ սլանում էին մեզ հետ միասին և անտառապատ խճուղու լեռնոտ ելևէջները, լուսաւորուած բազմաթիւ խարոյկներով, մի գերբնական տեսիլ էր այդ վայրենի և հեռաւոր գաւառում:

Արդահան հասանք ձիաւորների ահագին բազմութեամբ շրջապատուած:

Քաղաքի մուտքում կառուցուած էր մեծ կամար, զարդարուած հայկական դրօշակներով և ծաղիկներով, վառում էին բազմաթիւ մեծ խարոյկներ՝ և լուսաւորում ամբողջ երկինքը: Այստեղ էին գաւառի բոլոր ներկայացուցիչները, բազմաթիւ ազգութիւնները՝ ի դէմս նոցա խօջաների, աղալարների, հեղինակաւոր և առաջադէմ մարդկանց:

Երբ մինիստր նախագահի աֆտոմօբիլը կանգ առաւ կամարի առաջ՝ նորան մօտեցաւ պատուաւոր զեկուցում տալու Արդահանի գաւառապետ գնդապետ Կադիմով, Ախալքալաքի գաւառի հայ երաժիշտները նուագեցին հայկական ազգային հիմնը, և հազարաւոր թուրքութիւնը գոչեց՝ կեցցէ Հայկական կառավարութիւնը:

Ընդունելով հայկական զօրամասի պատուաւոր պահակը, և շնորհակալութիւն յայտնելով գաւառի ազգաբնակութեանը այդչափ փայլուն ընդունելութեան համար՝ մինիստրը ցանկութիւն յայտնեց խօսելու ժողովրդի հետ միւս օրը: Եւ վաղ առաւօտուանից Արդահանը ամբողջովին բռնուած էր ժողովրդով, որ գաւառի բոլոր գիւղերից եկել էր տեսնելու կառավարութեան նախագահին: Ես առանձին առանձին ներկայացրեցի այդ քրդերին, կարափափախներին, յոյներին ու թուրքմեններին, և զեկուցանելով երկրի այդ նշանաւոր մարդկանց աջակցութիւնը նահանգի իշխանութեանը՝ միջնորդեցի մի քանի հոգու հայկական սպայի աստիճան տալ: Եւ մինիստր նախագահ, յարգելով միջնորդութիւնս՝ ասաց, որ կառավար-ութեան անունից, շնորհում է նոցա պատշաճ աստիճաններ, և յոյս յայտնեց, որ կառավարութեան այդ նոր ուշադրութիւնը դէպի երկրի բնակիչները՝ դարձեալ մի ապացոյց կը լինի, որ հայկական կառավարութեան համար նորա երկրում բնակուող ազգութիւնները կազմում են այն ամբողջութիւնը, որի շահերին և բարգաւաճմանը նուիրուած կը լինի հայկական կառավարութիւնը: Ապա յանձնարարեց նահանգապետին՝ կառավարութեան անունից մի գումար նուիրաբերել երաշտից վնասուած մի երկու քուրդ գիւղերի, պրեմիերը անցաւ

ընդունելու վրաց զօրահանդէսը, որ կայացաւ ի պատիւ նորան: Ընդունելով զօրահանդէսը՝ պ. Խատիսեան վրացերէն շնորհակալութիւն յայտնեց վրաց գումարտակի հրամանատարին, և կեցցէ բացականչեց ի պատիւ Վրաց Հանրապետութեան:

Մի երկու խօսք այստեղ վրաց զօրամասի Արդահանում մնալու առիթով:

Մեր Կարս գալուց առաջ՝ վրացիները գրաւել էին ամբողջ Արդահանի գաւառը, և այնտեղից գնալու միտք չունէին: Վրացիները առարկում էին, որ այդ վայրը երբեմն բնակեցրած է եղել վրացիներով, և գտնւում էր վրաց քաղաքացիութեան սահմաններում: Եւ այդ միտումներով՝ Արդահանի գաւառը վրացիները իրանցն էին համարում: Վերջապէս, 19 թուին անգլիացիների միջամտութեամբ՝ վրաց զօրքը քաշուեց այնտեղից, բայց և այնպէս Արդահանի գաւառի Շաւշէթ գաւառակի մի մասը, որ տարածւում էր Կուր գէտի ձախ ափով՝ մնաց վրացիներին: Իսկ յենուելով այն հանգամանքի վերայ, որ Կուր գետի վրաց ափում յարմար բնակարաններ չը կային զօրամասի համար՝ այդ զօրամասը կիսապաշտօնապէս մնաց Արդահանում:

Թէ քաղաքական և թէ վարչական իմաստով ես միանգամայն անյարմար էի գտնում այդ բանը, և մի քանի անգամ գաղտնի գրութեամբ դարձնելով կառավարութեան ուշադրութիւնը՝ պահանջում էի հեռացնել մեր սահմանից այդ զօրամասը: Ի նկատի ունենալով, որ մինչև վերջը այստեղ և այնտեղ շարունակ խօսում էին, որ թէ Արդահան և թէ Օլթի գաւառը պէտք է վրացիներին պատկանէ, և որ այդ բոլորի հետ զուգընթաց վրաց զօրամասի Արդահանում լինելը առիթ էր տալիս հրապարակի այս և այն ուղղութեամբ մեկնութիւնների, և որովհետև այդ մեկնութիւնները աննպաստ մեզ՝ այս և այն չափով երերում էին երկրի իշխանութեան համարումը և իրաւակարգը, ես դարձեալ և դարձեալ միջնորդում էի հեռացնելու այդ գումարտակը մեր սահմանից:

Բայց բանակցութիւնները շրջանառում էին միայն դիւանագիտական գրագրութեան առանցքում, և որովհետև խնդիրը փափուկ, դելիկատ էր՝ մեր կառավարութիւնը ժամանակի բազմաթիւ պայմանները նկատի առնելով, խուսափեց ուլտիմատիւ պահանջից, թողնելով վրաց կառավարութեանը լուծել այդ խնդիրը, որ գէթ զուտ քաղաքավարութեան ակտի իմաստումն էր: Մենք այս անգամ վերադառնում էինք Կարս այլ ճանապարհով, և խճուղին օձապտոյտ անցնում էր գեղեցիկ անտառով: Գաւառական միլիցիան, բազմաթիւ հեծեալ քրդեր՝ բռնել էին այդ բոլոր ելևէջների անցքերը, զինուորական պատիւ տալով մինիստր նախագահին, և գնացքը անցնում էր ոչ միայն գեղեցիկ անտառով՝ այլև ասպետական տեսիլ ունեցող վայրով:

Արդահանի և Կարսի գաւառների սահմանում, Սախկալ Թութան կոչուած տեղում, որ նահանգի ամենաբարձր վայրն է, որտեղից երևում է Կարս-Աղէքսանդրապոլ երկաթուղին, Մասիսի արծաթափայլ գլուխը, և ուր բազմաթիւ ջրեր

սրընթաց փախչում են լեռնաշղթայի այս և այն կողմը՝ մեզ դիմաւորեց հեծեալ, այդ վայրի բոլոր քուրդ գիւղերի ազգաբնակութիւնը, մոտ 400 հոգի, ապա և Կարսի գաւառական իշխանութիւնը: Երբ գնացքը կանգնեց քրդերի դիմաց՝ մինիստրը իջաւ աֆտոմոբիլից, ողջունեց քուրդ հասարակութեանը, շնորհակալութիւն արեց ընդունելութեան համար, և դիտեց քրդերի ձիարշաւը: Այնուհետև, հրաժեշտ տալով Արդահանի գաւառապետին և շնորհակալութիւն յայտնելով նորան փայլուն ընդունելութեան և կարգ ու կանոնի համար՝ մեր գնացքը մեկնեց Կարս:

Եւ հետևեալ օրը, Նոյեմբերի 8-ին, իր մի շաբաթուայ Կարսի նահանգում կատարած ճանապարհորդութիւնից յետոյ՝ մինիստր նախագահ ճեպընթաց գնացքով մեկնեց Երևան: Շատ հետաքրքիր է, որ մեր ճանապարհորդութեան ամբողջ ժամանակամիջոցում եղանակը աննման էր, կատարեալ ամառնային, և մինչև Նոյեմբերի 8-ն՝ նա փոխուեց:

Նոյն օրը, Աղէքսանդրապօլից՝ հայկական պրեմիեր Խատիսեան ուղղեց Կարսի նահանգապետին հետևեալ պաշտօնական հեռագիրը.

«Թողնելով Կարսի նահանգը՝ ես պահանջ եմ զգում նորից շեշտելու այն մեծ հաճոյքը, որ ստացայ ես իմ կատարած ճանապարհորդութեան ընթացքում: Ես տեսայ բազմաթիւ ազգութիւններ և ցեղեր, տեսայ նոցա լոյեալ վերաբերմունքը դէպի իշխանութիւնը, մեծ բաւականութեամբ դիտում էի նահանգում տիրող իրաւակարգը, և ջերմ շնորհակալութիւններս եմ յայտնում Ձերդ գերազանցութեանը և Ձեր հոգսերին յանձնուած նահանգի բոլոր քաղաքացիական հաստատութիւնների պաշտօնէութեանը»:

XXIII
XXV*(մատիտագիր)*

Կարսի նահանգում պ. Ալ. Խատիսեանի հետ ճանապարհորդելիս՝ ես առիթ ունեցայ երկար խօսելու նորա հետ երկրի բազմատեսակ տնտեսական խնդիրների մասին, և մի անգամ ևս բողոքեցի, որ երկրագործութեան մինիստրութիւնը միանգամայն չի հետաքրքրւում Կարսի նահանգով: Այդ առիթով մինիստր նախագահ ասաց, որ երկրագործութեան մինիստրի պաշտօնի համար հրաւիրուած է մի նոր մարդ, պ. Վրացեան, որ նա շատ ուշադիր է և շատ լուրջ, և առաջարկեց ինձ օգտուել նորա ազդեցիկ դիրքից՝ և մի յուշագիր կազմել նորա համար երկրի բոլոր տնտեսական խնդիրների և կարիքների մասին:

Իւր ժամանակին մեր գաւառներում ես շատ զբաղուել եմ երկրի և գաւառական կեանքի ուսումնասիրութեամբ, և ձեռքի տակ ունէի բաւականաչափ նիւթեր և Կարսի նահանգի մասին, ուր մի քանի տարի առաջ ես նոյնպէս պաշտօնավարել եմ: Այդ պատճառով ես մի 20 թերթից բաղկացած յուշագիր կազմեցի

և ուղարկեցի երկրագործութեան նոր մինիստր պ. Վրացեանին, և հասարակութեանը ևս ծանօթացնելու համար այդ բոլոր հրատապ խնդիրների հետ՝ ես համաձայնութիւն տուեցի Կարսում հրատարակուող «Աշխատաւորի ձայն» թերթի խմբագիր Արշալոյս Աւագեանին տպելու այդ ուսումնասիրութիւնը այդ լրագրում, և յուշագիրը լոյս տեսաւ թերթի մի քանի համարներում:

Եթէ բերրի Շիրակը, իր աննման հացով հռչակել է Կարսի նահանգը՝ ոչ պակաս անուն է տուել երկրին և նորա անասնապահութիւնը:

Չլդրը ծովակի բոլոր բարձրավանդակները միշտ ամպամած, միշտ մառախլապատ, այն հարուստ ալպիկ աշխարհն է՝ ուր առատ կեր ու խումի յետևից ընկած արածում են տաւարի ու ոչխարի անհամար հօտեր:

Չլդրի անասնապահ չօդարների հարստութիւնը անուանի է: Պատերազմից առաջ նոքա մեծ առևտրական կապեր ունէին Բաթումի, Թիֆլիզի և Բագուի հետ, և Չլդրի տաւարը ու ոչխարը շատ բարձր էր սակագնւում Կովկասի այդ բոլոր խոշոր շուկաներում: Բացի այդ, Կարսի նահանգի բուրդը նոյնպէս առաջնակարգ տեղ էր գրաւել բոլոր շուկաներում, և պատերազմից առաջ մեծ քանակութեամբ Բաթումի վերայով գնում էր արտասահման:

Կարսի նահանգի սահմաններում փռուած լայնածաւալ արօտները, որ սկսւում են Աղէքսանդրապօլի փեշերից, Արփագէօլ-Արփաչայ Ախուրեանի ակունքներից՝ և ծփում, անցնում են լեռնաշղթայով դէպի Արդահան, Օլթի, Կարսի բարձունքները, և հանգչում են Սարիղամիշից բարձր, Տաճկաստանի սահմաններում՝ այդ հարիւրաւոր վերստերի հռչակաւոր արօտ-եայլաղները, բոլորը արքունի՝ ռուս տիրապետութեան 40 տարուայ ընթացքում կապալով էին տրւում:

Շատ և շատ ուշագրաւ և բնորոշ է, որ մինչդեռ Կարսի նահանգի բնիկները՝ գլխաւորապես հայերը, որ սփռուած էին սարահարթում, մեծ կարիք ունէին իրանց տնտեսութեան համար արօտների, այդ մեծածաւալ եայլաղները թուրքերին կապալով տալ՝ իսկ Կարսի նահանգի հայերը այդ տարիների ամբողջ տարածութեան վերայ անյոյս բաղխել են այդ առիթով բոլոր իշխանաւոր դռները: Կարսի նահանգի հայ անասնապահները, ի դէմս ամբողջ գիւղական հասարակութիւնների՝ տարիներով հեղեղել են բոլոր դիւանները, Կարսից սկսած մինչև Պետերբուրգ, այդ արօտներից կապալով բաժին ստանալու համար, մեծամեծ ծախքեր կատարել այդ առիթով, բայց այդ բոլոր աշխատանքները ոչ մի դրական արդիւնք չեն ունեցել, աւելի քան զարմանալի էր ի հարկէ, որ տեղական ազգաբնակութեան պէտքերը չը բաւարարած՝ ռուս իշխանութիւնը երկրի այդ տնտեսութիւնը շահագործել էր տալիս դրսից եկուորներին, բայց այնուամենայնիւ այդ աղաղակող անարդարութիւնը յենուած մի կողմից ռուս պետական միտումների վերայ, իսկ միւս՝ ռուս պաշտօնեայի կաշառակերութեան վերայ, մնաց մինչև վերջ, մինչև մեր օրերը: Այսպէս թէ այնպէս՝ Թիֆլիզի նահանգի մահմեդական թուշերը գարնանից հեղեղում էին իրանց տաւար-ոչխարով այդ անծայր

արօտները, և մեծ կաթնատնտեսական հարստութիւն տանում երկրից: Կարսի նահանգում նոցա պատրաստած հռչակաւոր պանիրը՝ թուշի պանիր անունով, գերազանց տեղ էր գրաւում Թիֆլիզի, Բաթումի և Բագուի շուկաներում, և գուցէ շատ շատերը չը գիտեն, որ այդ պանիրը ոչ թէ թուշի պանիր է՝ այլ Կարսի պանիր: Բայց պատերազմից առաջ հայերը սկսեցին ձեռնամուխ լինել կաթնատնտեսական նոր ձևի աշխատանքների, և թուրքերից կապալով արօտ վերցնելով՝ մի քանի տասնեակ պանրագործ գործարաններ հիմնեցին: Այդ գործարանների հրաշալի կարագը ու Շվէյցարական պանիրը շատ բարձր էին սակագնւում Թիֆլիզի շուկայում, իսկ վերջի տարիներում ասում էին, որ Կարսի նահանգի կաթնեղէնը մրցում էր Սիբիրից բերած կարագի հետ: Մի քանի շվէյցարացիներ մանր գործարաններ էին հիմնել Կարսի և Արդահանի գաւառներում, և մեծամեծ վաստակներ ունէին: Մի շվէյցարացի Արդահանի լեռների փեշերում, որ Ալագէօզ է կոչւում, մինչև այսօր էլ ունի մի գործարան և նորա կարագը և շվէյցարական պանիրը շատ մեծ քանակութեամբ արտահանւում էր դէպի Թիֆլիզ և Բաթում: Բացի այդ, Կարսի նահանգի խոտը թէ իր քանակով և թէ իր սննդալից յատկութեամբ՝ գերազանց տեղ էր գրաւում ամբողջ Կովկասում, և այդ խոտի մեծաքանակ արտահանութիւնը թէ պատերազմի նախօրեակում և թէ պատերազմի ընթացքում՝ աճում էր օրեցօր:

Արդահանի վերայով այդ խոտը տրամադրութիւն ունէր ձգտելու դէպի Ճորոխ և Բաթումի վերայով արտասահման:

Հազիւ թէ պէտք է ասել, որ Կարս-Արդահան-Բաթում երկաթուղին, որի մասին այնչափ խօսում էին՝ մեծ դեր ունէր կատարելու երկրի տնտեսական զարգացման մեջ, և Կարսի նահանգի խոտը կը լինէր նորա ամենամեծ էքսպօրտը:

Գալով Սարիղամիշի և Արդահանի անհուն անտառներին՝ ես պէտք է ասեմ, որ պատերազմի ընթացքում ռուս կառավարութիւնը պատրաստել էր երկաթուղու շպալներ, շինութեան համար գերաններ և վառելափայտ այնպիսի մի ահռելի քանակութեամբ, որ այդ հարստութիւնը բաւական կը լինէր թէ Հայաստանի Հանրապետութեան պէտքերի համար, և թէ որպէս վալիւտային արժէք՝ մեծ զարկ կը տար մեր դրսի շուկաներում անելիք գնումների գործին:

Կարսի սառոյցը՝ դեռ պատերազմից առաջ, որպէս շատ ամուր, դիմացկուն և ընտիր տեսակի՝ մեծ քանակութեամբ տարւում էր Թիֆլիզ, Բագու-Բաթում, և այդ շուկաներում սակագնւում էր շատ բարձր: Ես փորձեցի հրաւիրելու Թիֆլիզից մարդիկ՝ շահագործելու այդ հարստութիւնը, բայց Կովկասի քայքայուած երկաթուղու դրութիւնը մի կողմից, և ընդհանուր քաղաքական և իրաւակարգային պայմանները միւս՝ հնարաւորութիւն չը տուեցին իրագործելու այդ ծրագիրը:

Մերդենեկի հանքային ջրերը, հռչակաւոր նարզանը՝ ըստ կատարուած հետազօտութեան, թէ իր բաղադրութեամբ և թէ իր քանակով այնպիսի մի հազ-

ուագիւտ աղբիւր է, որ կարող էր դառնալ պետական տնտեսութեան մի մեծ գործօն:

Գալով երկրի մեղուաբուծութեան, տեղական մեղրին՝ պէտք է ասել, որ Կաղզուանի մեղմ ու բուրալից երկնքի տակ ստացւում է աննման մեղր, որ մեծ արժէք ունէր և պատերազմից առաջ դրսի շուկաներում: Կարսի գաւառի ջրարբի տարածութիւնները, վաղուց ագարակային կուլտուրայի հռչակ են վայելում, և այդ վայրերի հռչակաւոր գետնախնձորը, կաղամբը և այլ բանջարեղէնը՝ մեծ տենդեցիայով դէպի դուրս արտահանւում էր Թիֆլիզ, և շուկայում առաջի տեղը գրաւում:

Կաղզուանը չոր մրգի մեծ շտեմարան է համարւում, և պատերազմից առաջ այդ բազմատեսակ չոր և համեղ մրգեղէնը շատ մեծ քանակութեամբ գնում էր թէ Տաճկաստան և թէ Մոսկուայ, Հիւսիսային Կովկաս:

Կաղզուանը բացառապէս պարապում է այգեգործութեամբ, և երկրի այդ տնտեսութիւնը կանոնաւորուելով և կատարելագործուելով՝ կարող էր պետական մեծ էքսպօրտ հանդիսանալ ապագայում:

Ծանրանալով ապա Կարսի նահանգի հանքային հարստութիւնների վերայ՝ որպէս երկաթը, աղը, քարածուխը, ծծումբը և բազմատեսակ խոտաբոյսերը, որոնք թանկարժէք դեղորայքի համար են պէտք, ես նորից ու նորից այն միտքն էի արծարծում, որ մեր պետական քաղաքական պատուանդանը պէտք է ծեծուի և կոփուի այդ զնդանի շուրջը: Եւ հրապարակ քաշելով՝ գրում էի ես մինիստրին, հայ կապիտալը և հայ բանիմաց ինտելեգենցիան՝ մենք մեզ հետ կը տանենք այդ բազմալեզու և բազմաբառբառ երկիրը: Եւ այդ առանցքով, կարծում էի ես, պէտք էր տանել մեր ոչ միայն տնտեսական՝ այլև պետական քաղաքականութիւնը:

Գալով ջրերի և ջրվէժների հարստութեանը երկրում՝ մենք ունէինք բոլոր տուեալները գործարանային մեծ անիւներ շարժելու համար Արդահանի և Կարսի գաւառների սահմանում, մի դրախտանման վայրում՝ հազարաւոր չայեր ու ջրեր ձայնակցելով իրար և մեծ սիմֆոնիա, մեծ համերգ տարածելով այդ վիթխարի լեռներում՝ ընկնում են դէպի ցած, դէպի անդունդ: Այդ ջրվէժը, որի բարձրութիւնը մի քանի հազար մետր է, և խորխորատում բացի այդ՝ եռում է տաք հանքային ջուրը, միշտ գրաւել է բանասէրների ուշադրութիւնը: Եւ ես ինքս շատ անգամ անցել եմ դէպի այդ բարձրութիւնը մի անգամ ևս տեսնելու, թէ ի՞նչ ճաշակ և ի՞նչ հմայք ունի բնութիւնը, այդպէս գեղարուեստօրէն սփռելով իր հրաշքները և իր մեծ կարողութիւնը:

Թուելով իմ այդ զեկուցման մէջ այն բոլոր մեծ և փոքր խնդիրները, որոնք հերթական են, թէ մեր պետական և թէ հասարակական ուշադրութեան առանցքում՝ ես օգտւում էի առիթից նորից յիշեցնելու և գէթ ընթացք տալ իմ այն միջ-

նորդութիւններիս, որ ի դէմս բազմատեսակ նախագծերի՝ ես իր ժամանակին ներկայացրել եմ կառավարութեանը:

Աւելի քան զարմանալի է ի հարկէ, որ երկրագործութեան մինիստրութիւնը այդ ժամանակամիջոցի ընթացքում հնարաւոր համարեց Կարսի նահանգը ուղարկելու *(փաստաթուղթը վնասուած է)* մէկ ներկայացուցիչը միայն ... թէ ինչո՞վ էր զբաղուած, որ իրան թէ գիւղատնտես էր անուանում և թէ Կարսի նահանգի պետական հողերի կառավարիչ՝ չը գիտեմ: Չը գիտէր նորա մասին ոչինչ և նոյն երկիրը, որի պէտքերի համար երևի, ուղարկուած էր նա:

Որպէս մի պաշտօնեայ, որ կախում ունէր միայն մինիստրից՝ նա իրան շատ անկախ էր զգում այդ բառի շատ լայն իմաստով...

Նա շարունակ գնում էր Թիֆլիզ, շարունակ գալիս և այդ առանցքում պարապում էր գուցէ ամէն տեսակի ժամանակակից գործերով՝ բացի երկրի և պետութեան շահերից:

Որպէս երևի հին պաշտօնեայ՝ նա շատ հետաքրքրւում էր թուրքերին արօտներ կապալով տալու գործով, և ըստ երևոյթին՝ այդ մասնագիտութեան մէջ նա շատ լաւ էր զգում իրան, որպէս հեղինակաւոր և կարող մարդ...

Եւ երբ լուծւում էր երկրի լինել կամ չը լինելու խնդիրը, երբ Կարսի մթնոլորտը ի ծայր էլէկտրականացած էր, և օդում փառում էր մեծ պայթումի ուրուականը՝ պետական հողերի այդ կառավարիչը նոյնպէս տենդոտ շարունակում էր իր գործը, բայց թէ ինչ էր անում՝ այդ նորա անձնական գաղտնիքն էր...

Բացի այդ, «մութ» մասնագիտութեան ներկայացուցչից մինիստրութիւնը ուղարկեց ինչ-ինչ նպատակներով և մի երկու երիտասարդ գիւղատնտես: Մէկը կարծեմ եկել էր գիւղատնտեսական մեքենաներ ժողովելու, բայց ֆանֆարոնները տաղտկալի գտան այդ ոչ «քաղաքական» զբաղմունքը: Նոցանից մէկը իրան ինչ որ էս-էր էր անուանում, միւսն էլ նորա նման մի խրթին բան, և վայրիվերոյ վերևից ներքև նայելով երկրին՝ անցան, գնացին, թողնելով մարդկանց միանգամ ևս խղճալու հայ հասարակութիւնը և հայ ինտիլիգենցիան:

Օլթիի ածխահանքի աշխատանքները, եթէ միայն այդ հարստութեան շուրջը բռնկուած վայնասունը կարելի է աշխատանք համարել՝ այնպիսի մի անսիստեմ, անհետևողական և անկերպարանք մի տեսիլ էր, որի նմանը դժուար է գտնել: Այդ ածխահանքը եկան և գնացին մի երկու լուրջ ինժեներ, իսկ նոցա յետևից շարաններով՝ ի հաշիւ ի հարկէ կառավարութեան և «աշխատաւոր մասսաների» parti de plaisir կատարելով, զուարճանալով՝ գալիս և գնում էին բազմաթիւ «ներկայացուցիչներ», «լիազօրներ», պարլամենտի անդամներ և հասարակական հոգսերի դիմակի տակ գոյնզգոյն կասկածելի տիպեր: Անցուդարձ անող այդ խառնիճաղանճ սիրողները՝ զբաղեցնում էին միայն նահանգի վարչական պաշտօնեաներին, ստիպելով նոցա զբաղուելու նոցա անձնաւոր-ութեամբ, և ստեղծում էին այդ ածխահանքների շուրջը ոչ լուրջ մթնոլորտ:

Աղմուկ, անցուդարձ, անկոչ և զաւեշտ կարծիքներ՝ մասնագիտական խնդիրներում, և այդ բոլորը ի հարկէ ձրի, ի հաշիւ պետական բարձր իդեալների:

Մէկը ասում էր, թէ պէտք է Սարիղամիշ երկաթուղու գիծը տանել դէպի Օլթի, և այդ ուղութեամբ արտահանել ածուխը: Թռուցիկ և վայրիվերոյ ի հարկէ՝ կազմակերպուեց մի մասնագիտական արշաւանք երկաթուղու այդ ապագայ գիծը ուսումնասիրելու համար, և այդ դելիտանտ ցանկութիւններին զոհուեցին ինժեներ Լևոն Խատիսեան և մի քանի մարդիկ: Այդ կամայական կարգադրութիւնները կատարելով՝ ինժ. Խատիսեան անցնում էր այն վայրով, ուր մեր առաջաւոր դիրքերի զօրամասերը փախչում էին քեամալականների արշաւի լուրը առնելով, և ինժ. Խատիսեան՝ շատերի ասելով, զոհուեց այն գնդակներին, որ մեր խուճապալից զօրքը ընդհանուր շփոթի մթնոլորտում իրար վերայ էր արձակում...

«Գործիչների» մի այլ խմբակցութիւն հարկաւոր համարեց վերջապէս՝ վերականգնելու Կարս-Մերդենեկ ձիաքարշ երկաթուղին, որի համար այնչափ նիզակներ էր փշրել նահանգապետը:

Բացի այդ, միւսները պահանջում էին այդ գիծը տանել Օլթի:

Եւ մինչ ինժիներ Խատիսեան ապարդիւն հետախուզում էր ճանապարհը տրամագծօրէն տարբեր ուղղութեամբ՝ ձիաքարշ երկաթուղու վերականգնման համար վարկեր էին բացուած: Բայց այդ աշխատանքների շուրջը դարձեալ բռնկուեցին գիշատիչ ախորժակները, և այդ ընդհանուր շփոթում՝ տանող տանողի էր...

Ճակատագիրը ունի իր անողոք օրէնքները, և մեզ վիճակուած չէր պետութիւն ստեղծելու:

Մեր ռուսախօս գեներալները շատ նահանջում էին անտես թշնամու առջևից, և երկու ամսից յետոյ՝ Օլթին էլ իր բազմաթիւ լուրջ և զաւեշտ նախագծերով, մնաց այն փլատակների տակ, որ եկան ծածկելու մեր յոյսերը ու երբեմն շատ բարձր տրամադրութիւնը...

Իմ յուշագիրը երկրագործութեան մինիստրին ուղարկելուց յետոյ՝ ես առիթ ունեցայ տեսնուելու և ծանօթանալու պ. Վրացեանի հետ: Բայց այդ տեսակցութիւնը Կարսի տագնապ օրերումն էր, երբ Ռուբէն փաշայի կառավարութիւնը մի աւելորդ «լիազօր» մարմնի միջոցով, ի դէմս երկու մինիստրների՝ Վրացեանի և Արտ. Բաբալեանի, որ եկել էին Կարսի նահանգը, ուզում էր փրկել երկրի դրութիւնը...

Բայց այդ մասին իր տեղում:

Վրացեան՝ յիրաւի թողեց ինձ վերայ լուրջ և անկեղծ հայրենասէրի տպաւորութիւն: Բայց արդէն ժամանակը չէր խօսելու քաղաքացիական խնդիրների մա-

սին: Պետական իրաւակարգը երերուել, ցնցուել էր միանգամայն՝ և պետութեան օրերը արդէն հաշուած էին:

Մենք, մահկանացուներս որպէս մարդիկ՝ բոլոր դրութիւններում տրամադիր էինք հաւատալու և յուսալու ի հարկէ, որ կանցնէ և այդ դառնալից փորձանքը, և չէինք տեսնում, որ ճակատագրական վիհը արդէն բացուած է՝ և մենք գնում ենք այդ խորխորատը մեր դարաւոր երազներով ու իղձերով...

XXIV

XXVI *(մատիտագիր)*

Իմ բոլոր քաղաքացիական տրամադրութիւններովս հանդերձ՝ ինձ հնարաւորութիւն չը տուեցին վարելու խաղաղ քաղաքականութիւն նահանգում:

Սկզբից ևեթ, իմ բազմաթիւ գրաւոր հանդիպումներում կառավարութեան, կուսակցական և հասարակական բանիմաց ներկայացուցիչների հետ՝ ես սիստեմատիկ և յամառ արծարծել եմ այն միտքը, որ մենք պէտք է յենուենք ոչ սուիններին և բռունցքի վերայ, այլ միայն և միայն պէտք է յարենք քաղաքացիական գործելակերպի: Եւ երկրի պայմանները, ազգաբնակութեան տրամադրութիւնը և ժամանակի պահանջը, բոլորը կարծես՝ նպաստաւոր էին մեր այդօրինակ գործունէութեան համար:

Եւ ես ամենուրէք, թէ կառավարչական և թէ մանաւանդ հասարակական շրջաններում՝ բուռն հաւանութիւն էի գտնում իմ այդ բռնած ընթացքում: Երկիրը միանգամայն հոգնել էր զինուորական շառաչիւնից և զզուել մեր օրերի քաղաքական պոռոտախօսութիւնից: Նա արդէն օրգանապէս տանել չէր կարողանում հրապարակի մեր դատարկաբաններին, և հրաժարեմ հրաժարւում էր այդ ձրի ճառերից և այդ անվերջ ծափահարութիւններից: Երկրի տնտեսութիւնը, աւերուած և քայքայուած կենցաղը՝ իրաւակարգը որպէս պատուանդան երկրի վերաշինութեան, և իշխանութեան անաչառ վերաբերմունքը դէպի ազգաբնակութիւնը, սպասելիքների այն ամբողջութիւնն էր՝ որով նահանգը ընդառաջ եկաւ հայկական իշխանութեանը:

Եւ ես շատ բարձր տրամադրութեամբ դէպի մեր մեծ յաղթանակը՝ անցայ աշխատանքի այդ ուղղութեամբ:

Ձօրքը ամէնուրէք և միշտ՝ եղել է երկրի պատիւը, և նա է մարմնացրել պետականութեան գաղափարը: Ահարկու իր բնոյթում զրահ՝ անկախ և ինքնուրոյն սկզբունքների համար, նա միշտ երկիւղալի է եղել որպէս գործիք քաղաքացիութեան:

Նա ասպետօրէն պաշտպանել է ազգային պատուախնդրութիւնը, և միշտ շատ բարձր է եղել միայն այն չափով՝ որչափով որ նա ազգային է, և անվերապահ պետական ու քաղաքական անցուդարձին:

Այդպէս էի ես հասկանում զօրքի կոչումը: Եւ ի ցոյց երկրի՝ մեծ պատիւներով ընդունելով առաջի անգամը Կարսի նահանգը եկած մեր զօրաբանակը, ես ուզում էի ընդգծել երկրի առաջ նորա նախամեծար տեղը:

Բայց միևնոյն ժամանակ ես կարծում էի, որ մեր հրամանատարութիւնն էլ կը հասկանայ, որ զօրքը առաջաւոր դիրքերումն է միայն պատերազմի ընթացքում, իսկ խաղաղ ժամանակ նա կառավարութեան թիկունքումն է՝ որպէս արթուն պահապան այդ իրաւակարգի և խաղաղութեան: Կարսի նահանգը ամբողջ մի դար եղել է մեծ թատերաբէմ՝ և ազգաբնակութիւնը բնականաբար ընտելացել էր տեսնելու փայլուն զինուորական շարքեր և զինուորական հզօր կորով:

Իմ յիշողութիւններում ես մի երկու անգամ արդէն ակնարկել եմ, որ երկրում, իր բոլոր խաղաղասէր տրամադրութիւններով հանդերձ՝ կային դեռ Բագուի և տաճկական համիսլամ էմիսարներ, որոնք այստեղ ու այնտեղ օգտուելով բոլոր առիթներից՝ պղտորում էին երկրի հանգիստը: Այդ վարձկան մարդիկ արծարծում էին նահանգում այն միտքը, որ Եւրոպական վեհաժողովը դեռ չի լուծել Կարսի նահանգի վիճակը, և որ իսլամ ազգաբնակութիւնը պէտք է ոչ միայն դիմադրէ հայկական իշխանութեանը՝ այլև պատրաստուի ապագայ ռազմական գործողութիւնների համար: Թէ այդ պրոպագանտան, որ անում էր Բագուի կառավարութիւնը՝ տաճկական ի հարկէ հրահանգներով, առանձին տրամադրութիւն չէր ստեղծում երկրում, բայց մենք չը պէտք է մոռանանք, որ Կարսի նահանգի իսլամը կազմում է ազգաբնակութեան աւելի քան երկու երրորդը:

Բացի այդ, այդ ազգաբնակութիւնը, քաջազնական իր բնոյթում աշխարհից կտրուած՝ ապրում էր հեռաւոր լեռներում և ձորերում, ուր ուժը ունի իր մեծ իմաստը երկրի հոգեբանութեան մէջ:

Երկչոտ իր բնոյթում՝ թուրքը սրտոտ է միայն ձորում պատահած թոյլի հանդէպ, և շատ բանի տրամադրուած՝ խուճապալից նա պատրաստ աւելի փախուստի, քան գրոհի: Այդպէս է Արևելքը առհասարակ, և թուրքը առանձնապէս:

Այդ բոլոր հիմունքներով և անցնելով մեր քաղաքացիական աշխատանքներին՝ ես ուզում էի նահանգի խաղաղ տրամադրութիւնը ամրապնդելու համար ի ցոյց հանել այդ լեռներում մեր զինուորական կորովը: Այդ իմաստով, ես մանրամասն զեկուցում ուղարկեցի կառավարութեանը, և միջնորդեցի զօրահրամանատարութեան առաջ զինուորական զբօսանք կազմակերպել նահանգի այս և այն խուլ անկիւնները: Ես առաջարկեցի այդ հրամանատարութեանը ինձ հետ միասին մշակել այդ մեծ զօրահանդէս զբօսանքի ծրագիրը, տրամադրում էի հրամանատարութեանը այդ ժամանակամիջոցի համար նահանգի ամբողջ ադմինիստրացիան՝ զբօսանքին շուք և փայլ տալու համար: Ես կարգադրել էի, որ զինուորական այդ զբօսանքի ամբողջ ճանապարհով՝ նահանգի ազգաբնակութիւնը դիմաւորէ զօրաբանակը աղուհացով, զարդարեն գորգերով կայանները: Իսկ երկրի բոլոր ականաւոր մարդիկ՝ ադմինիստրացիայի նախօրոք պատ-

ռաստուած ցուցակով, հեծեալ՝ որպէս մեր հրամանատար կազմի պատուաւոր թիկնապահներ, գաւառապետների և նոցա պաշտօնեաների հետ միասին՝ պէտք է ուղեկցէին զօրաբանակը: Ես միջնորդում էի, որ մեր զօրամասերը անցնեն դէպի այդ լեռները ոչ միայն իրանց թնդանօթներով ու գնդացիրներով, այլև երաժշտական օրկեստրներով: Եւ երբ տեղական զուռնան, պարկապզուկը կ՛ողջունեն զօրաբանակը կայաններում՝ ես ուզում էի, որ մեր երաժշտութիւնը տարածէր այդ լեռներում մեր պետական, ազգային հիմնը... Այդ մեծ հանդէսը՝ որին մեծ փայլ, մեծ շուք տալու համար ես պէտք է գործ դնէի բոլոր միջոցները, պատկառալից տրամադրութիւն կը ստեղծէր նահանգում դէպի մեր իշխանութիւնը: Մենք խաղաղ, երաժիշտների առաջնորդութեամբ՝ բայց հպարտ և իշխանալից կանցնէինք այդ ձորերով, և մեր այդ իմպօզանտ թափորը ահ ու պատկառանք կը տարածէր այս և այն անկիւնում դեռ ծխացող քաղաքական զառանցանքների վերայ... Արևելքը շատ սիրում է հաճոյքը, թամաշէն՝ և շատ սիրում է զբաղուել գունաւոր և ձայնակցող տեսիլներով: Նա պատրաստ է անվերջ նայել, անվերջ լսել աղմուկը՝ և այդ առանցքում նա մոռանում է ամէն բան...

Ես այդպէս հասկանալով իրերի իմաստը նահանգում՝ ուզում էի թմբկահար և զգեստաւորուած անցնել այդ ձորերով, և ի ցոյց երկրի դնելով մեր զօրքի մեծ կարողութիւնը՝ ես ուզում էի միայն սպառնալ, ինձ վերապահելով գործադիր միւս միջոցները, եթէ ապագայում այդ պէտք լինի...

Եւ այդ բոլորը ոչ միայն ներդաշնակ էր երկրի հոգեբանութեան հետ՝ այդ երկրի սրտովն էր, նորա ճաշակով ու նորա մտածելակերպով:

Այդ ծրագիրը միանգամայն գտել էր կառավարութեան հաւանութիւնը, և գեներալ Փիրումով, որ Կարսի բերդի պարետ, կոմենդանտն էր և նահանգի զօրքերի հրամանատարը՝ պայմանաւորուեց ինձ հետ, որ երբ զօրամասերը կը շարժուեն, ես ու նա մեր շքախմբերով՝ զինուորական զբօսանքին աւելի փայլ, կշիռ և նշանակութիւն տալու համար, կանցնենք այն վայրերը, ուր զօրաբանակը իր ընթացքում հանգիստ կ՛առնէ:

Զինուորական այդ մեծ զբօսանքի մանրամաս-ծրագիրը արդէն մշակուել էր, և բոլոր կարգադրութիւնները արուած էին: Գաւառապետները իրանց օգնականներով դուրս էին եկել արդէն իրանց շրջանները՝ հարկաւոր պատրաստութիւնները տեսնելու զօրքին դիմաւորելու համար, և 19 թուի Օգոստոս 30-ին, առաւօտը՝ այդ զօրաբանակը, 2-րդ հետևակ բրիգադայի հրամանատար գեներալ Յովսէփեանի առաջնորդութեամբ, պէտք է շարժուէր մշակուած ծրագրով:

Բայց այստեղ պարզուեց մի բան, որ ճակատագրական էր ոչ միայն Կարսի նահանգի համար՝ այլ գուցէ և պետութեան:

Գեներալ Յովսէփեան, որին անմիջապէս ենթարկւում էին Կարսի նահանգի բոլոր զօրամասերը, և որը պէտք է ղեկավարէր այդ զինուորական զբօսանքը՝ Օգոստոսի 29-ին անակնկալ զեկուցեց գեներալ Փիրումովին, որ նա չի վստա-

հում ծրագրում ցոյց տուած լեռներով տանել զօրքը դէպի Կաղզուան (2000 սուին և աւելի քան 20 թնդանօթ)...: Իր ունեցած տեղեկութիւններով՝ շարունակեց ռուսերէն ի հարկէ գեներալը, քրդերը թշնամաբար են տրամադրուած դէպի մեզ, և նա հարկաւոր է համարում նախ անձամբ միայնակ առայժմ անցնել Կաղզուան, ծանօթանալ քրդերի տրմադրութիւնների հետ, և յետոյ միայն առաջնորդել զօրքը դէպի այդ գաւառը:

Ես երաշխիք չունեմ՝ մաղձալից և նախանձ վերջացրեց գեներալը, որ քրդերը կարող են յարձակում գործել մեր զօրաբանակի վերայ... Այդչափ զգոյշ էր քաջարի գեներալը, որի տրամադրութեան տակ կար այդչափ կանոնաւոր զօրք և այդչափ թնդանօթ, և այդ էլ այն երկրում՝ ուր մեզ սպասում էին աղ ու հացով և զուռնայով:

Հազիւ թէ պէտք է ասել, որ գեներալ Յովսէփեան՝ որպէս ենթակայ մի պաշտօնեայ, իրաւունք անգամ չունէր որևէ առարկութիւն անելու ըստ էութեան խնդրի, որ գտել էր ոչ միայն սպարապետի՝ այլև կառավարութեան հաւանութիւնը:

Զբօսանքը կազմակերպուել էր նահանգապետի ձեռներեցութեամբ, նահանգի տրամադրութեան մասին խօսելը յամենայն դէպս գեներալի իրաւասութեան սահմաններից դուրս էր, և վերջապէս պատասխանատուն այդ գործում նահանգապետն էր՝ և ոչ ինքը, գեներալը: Ի հարկէ ռուս իշխանութեան օրով, մի քանի տարի առաջ, երբ գեներալ Յովսէփեան կապիտան, գլխապետ էր միայն՝ նա չէր էլ համարձակուի այդօրինակ դէպքում, ոչ միայն գեներալ Յովսէփան՝ Կարսի հայկական նախկին գեներալ նահանգապետը, ռուսախօս, հայ ազգանուն միայն կրող մի հասարակ սպայ էր պատերազմի ընթացքում՝ հայկական իշխանութեան օրով դարձաւ Կարսի գեներալ նահանգապետ: Բայց այդ արտակարգ լիազօրութիւնները շատ կարճատև էին, և նա հնարաւորութիւն չունեցաւ իրագործելու իր ջարդել ու փշրելու «քաղաքականութիւնը»: Զրկուելով գեներալ նահանգապետի տիտղոսից ու իրաւունքներից՝ գեներալը մնաց դարձեալ Կարսի նահանգում, և գտնելով, որ նահանգապետը շփոթեց նորա բոլոր հաշիւները և զրկեց նորան այդ առանձնակի փառքից՝ նա այդ օրուանից ուխտեց տապալել այդ նահանգապետին, ինչ գնով ու միջոցներով և լինի այդ:

Նորան պէտք էր խափանել նահանգապետի ձեռնարկած գործը՝ իր ասածը առաջ տանելու համար, իսկ միւս կողմից՝ նա ձգտում էր երերել երկրում իրաւակարգը բոլոր միջոցներով, որպէսզի ապացուցանի, որ պէտք է բռունցքալից իշխանութիւն ի դէմս գեներալ նահանգապետի:

Մի երկու շաբաթից յետոյ ես նորից միջնորդեցի զինուորական զբօսանքի մասին՝ բայց այս անգամ գեներալ Յովսէփեան հաւատացրեց գեներալ Փիրումովին, որ արդէն աշուն է, իսկ զինուորութիւնը դեռ ամառուայ շորերով են, որ լեռներում արդէն ցուրտ է և այլն: Մի ամսից յետոյ ես նորից դիմեցի այդ առի-

թով Երևան՝ կառավարութեանը, և տեղիս հրամանատարութեանը, բայց այս անգամ գեն. Յովսէփեան առարկեց, որ նա բաւականաչափ ռազմամթերք չունի և առանց որոշ պաշարի՝ նա շարժուել չի կարող: Եւ այդպէս, վեց ամսուայ ընթացքում՝ զանազան պատրուակներով նա ձգձգում էր այդ գործը: Իսկ այդ ժամանակամիջոցի ընթացքում՝ լեռներում տարածուեց արդէն, որ այդ ոչ թէ զինուորական զբօսանք է, այլ մի յարձակում՝ որովհետև գեներալ Յովսէփեան մեծ քանակութեամբ փամփուշտ ու ռումբեր է պահանջում իսլամ ժողովրդին ջարդելու համար... Բացի այդ, ասում էին այստեղ և այնտեղ՝ հայկական հրամանատարութիւնը հաշուի է առնում և մեր (թուրքերի) ոյժերը, և չի վստահանում իր զօրաբանակով և թնդանօթներով անցնել իր գաւառները...

Այդպիսով, ինչպէս տեսնում էք՝ գեներալ Յովսէփեանի արկածները ունեցան այն հետևանքը, որ երկրի կատարեալ տօնական Զբօսանքի առիթով տրամարդութիւնը վերածուեց մի դաւադրութեան մեր դէմ, և բնականաբար առաջ բերեց մեծ սառնութիւն մեր և թուրք ազգաբնակութեան միջև:

Կասեմ աւելի, թուրքերը այնուհետև սկսեցին մտածել զէնքի մասին, և միջոցներ էին որոնում պաշտպանուելու կառավարչական զօրքի յարձակման դէպքում... Բագուի գործակալները օգտուեցին ի հարկէ առիթից, և ուժգին առաջ տարան պրոպագանդան, և իսլամ ազգաբնակութիւնը կորցնելով հաւատը դէպի երկրի իշխանութիւնը՝ սկսեց առանձնանալ: Այդ զբօսանքի ձգձգումների ընթացքում՝ ես 17 անգամ գրաւոր դիմումներով և ծածկագիր հեռագիրներով սպարապետի, զինուորական և ներքին գործերի մինիստրների անունով պահանջում էի ի կատար ածելու մշակուած ծրագիրը զինուորական զբօսանքի մասին՝ բայց իմ այդ բոլոր դիմումները մնացին ապարդիւն: Բարձր կառավարութիւնը, գեներալ Յովսէփեանի անթափանցելի ինտրիգների առանցքում՝ խաղալիք էր դարձել այդ անպատասխանատու գեներալի ձեռքում:

Երևանից հրաման էին արձակում ի կատար ածել որոշուած մարշը՝ իսկ Կարսի գեներալները ամէն անգամ մի որևէ պատրուակով, հնարաւոր չէին գտնում կատարելու կառավարութեան հրամանը: Իսկ մինչ այդ, գեներալ Յովսէփեան, իր գործակալների միջոցով՝ Կարսի, Աղէքսանդրապօլի և Երևանի դաշնակցական շրջաններում տարածում էր, որ քաղաքացիական իշխանութիւնը (նահանագապետը) թուրքերին երես է տուել, մինչ նոցա պէտք է ջարդել ու փշրել, և որ նա՝ գեներալը, երկու օրում նոցա «հաւատի կը բերի», եթէ չը լինի նահանգապետը...

Վերջինը՝ գեներալի բացատրութիւններով, թուրքերի կողմնակիցն է, և ամէն տեսակի արգելքներ է հարուցում, որ մեր զօրքը չանցնէ թուրք վայրերով...

Այդ օրերում Կարս եկաւ պարլամենտական յանձնաժողովը, և հենց առաջի այցելութիւնը տալով նահանգապետին՝ շօշափեց այդ զինուորական զբօսանքի խնդիրը, որ այնպէս հմտալից ձևակերպուած էր գեներալ Յովսէփեանի և նորա

համախոհների կողմից: Բայց ես արդէն գիտէի պարլամենտի այդ յանձնաժողովի աննպաստ դէպի ինձ տրամադրութիւնը՝ և պատուիրել էի դիւանապետին գրաւոր քաղուածք պատրաստել գործերից, թէ ե՞րբ, ո՞ր համարով և ում եմ դիմել ես 17 անգամ այդ չարաբախտ զբօսանքի մասին:

Եւ այդ քաղուածքը 17 կէտից բաղկացած՝ ես յանձնեցի պարլամենտի շփոթուած և զարմացած պատգամաւորներին: Իսկ ինձ մնում էր միայն ցաւել և զարմանալ, որ երկրի բարձրագոյն հաստատութեան պատուիրակութիւնը՝ որին յանձնուած էր ծանօթանալ նահանգի դրութեան հետ, հիմնաւորում էր իր տրամադրութիւնները հրապարակում շրջող ասէկոսների վերայ, և պետական միսիայով Կարսի նահանգը մեկնելով՝ կառավարութեան դիւաններից նոյնիսկ հարկաւոր տուեալներ չէր վերցրել այդ նահանգի անցուդարձի մասին...

Ինչևիցէ, բայց 20 թուի Յունուարին՝ Երևանից ստիպեցին վերջապէս գեներալ Յովսէփանին շարժուել գաւառները, բայց այդ արդէն ուշ էր: Առաջինը՝ զինուորական զբօսանքը կ՛ունենար իր հմայքը և նշանակութիւնը ամառը, իսկ աշնանը գլխաւորն այն է, որ խնդիրը այս ձգձգումների առանցքում ստացել էր տրամագծօրէն այլ բնոյթ:

Հայ-թուրքական յարաբերութիւնները նորից սուր կերպարանք էին ստացել, գեներալ Յովսէփեան հասել էր իր նպատակին, նա գնում էր ոչ թէ հմայք և կշիռ վաստակելու իր կառավարութեան համար՝ ինչպէս այդ մտածում էր նահանգապետը, նա գնում էր ջարդելու ու փշրելու, ինչպէս որ այդ ինքն էր ցանկանում...

Ինչպէս մի անգամ այս յիշողութիւններում ես արդէն առիթ եմ ունեցել ասելու, հայ հասարակ զինուորը դեռ ռուս բանակի օրով՝ շատ լաւ համարում ունէր: Նա աշխատասէր էր, ճշտապահ, իր պարտաւորութիւններում արի և բարեխիղճ, և հայ զինուորներից շատ շատերը լրացնելով իրանց ծառայութիւնը՝ վերադառնում էին հայրենիք պարգևատրուած իրանց լաւ ծառայութեան համար:

Այդպէս էր հայ շարքային զինուորը:

Գալով հայ սպայութեանը՝ պէտք է նկատել, որ սպայական կոյտը ռուս իշխանութեան օրով հայի համար մի առանձին գրաւչութիւն չունէր, միւս կողմից և ռուս իշխանութիւնը հայերին բարձր պաշտօններ տալու տրամադրութիւն չունէր: Այդ բոլոր պայմանների շնորհիւ՝ հայ երիտասարդութիւնը խուսափում էր զինուորական ծառայութիւնից, իսկ հատուկտոր պատահած հայ սպաները՝ բոլորը ռուսախօսներ էին և ոչ մի առնչութիւն չունէին հայ երկրի և հայ ժողովրդի հետ: Վերջի մեծ պատերազմը առաջ բերեց հայ սպայութեան մեծ բազմութիւն, բայց այդ նորեկները անունով էին միայն սպայ, առանց պատշաճ դաստիարակութեան և կրթ-ութեան, և առանց շատ անգամ կոչումի և տրամադրութեան՝ զինուորական լինելու համար: Եւ հայ զօրաբանակի հրամանատարութիւնը կազմուեց այդպիսով ռուս սպաներից, ռուսախօս գեներալներից և սպաներից՝ որոնք հոգով և տրամադրութեամբ ոչ մի առնչութիւն չունէին հայ երկրի և հայ ժողովր-

դի հետ, և վերջապէս, այն մեծ խառնիճաղանճ բազմութիւնից, որ ակամայից և բախտի բերմունքով՝ սպայական ուսադիրներ ստացաւ այս պատերազմի ընթացքում:

Այստեղ էին մեր եկեղեցիների նախկին տիրացուները, ծխական ուսումնարանների վարժապետները, խանութների գործակատարները, աշակերտներ, սափրիչներ, և վերջապէս՝ մեր բուրժուազիայի հարուստ և մեծատուն զաւակները, որոնք առանց մի բառ հայերէնի՝ մի կերպ ուզում էին պատսպարուել հայկական զօրաբանակում, մինչև որ ճանապարհները բացուեն և քաղաքական հորիզոնը պարզուի...

Ինձ պէտք չէ ասել, որ այդ ռուսախօս սպաները՝ հայ օֆիցերների այդ մեծ բազմութիւնը, որ առաջ էր եկել պատահարների մթնոլորտում միայն, չէին կարող հրամանատար բարձրութեան վերայ լինել: Հայ շարքային զինուորութիւնը և նորա հրամանատար կազմը՝ այդ երկու խորթ և իրար հակասող ու բացառող հատուածներ էին:

Մեր հրամանատար կազմը ոչ կարողութիւն և ոչ էլ կորով ունէր բարձրանալու դէպի հասարակական մակերևոյթը, և ըմբռնելու պետական և հասարակական պահանջները: Իսկ երկիրը և ժողովուրդը իր պատմութեամբ, նորա գրականութ-եամբ, արուեստով, տենչանքներով և վաղեմի երազներով՝ մի խորթ և անհասանելի աշխարհ էր այդ բազմատեսակ և բազմալեզու սպայութեան համար:

Մեր շարքային զինուորութիւնը՝ իր երկրի և հայրենիքի սիրահար, տպաւորուող և ոգևորուող ազգային գաղափարներով՝ միանգամայն անջատ էր իր հրամանատարութիւնից: Եւ այդ առանցքում, ուր ենթական ու իշխողը՝ մէկը կենտրոնալից իսկ միւսը ապակենտրոնական տրամադրութիւն ունէին, չէր կարող կոպուել ամուր, հզօր և ինքնաճանաչ ազգային զօրաբանակ: Եւ այդպիսով մեր պետականութիւնը երբ այդ պէտք էր՝ չունէր այն ոյժը, որ պէտք է պաշտպանէր երկրի պատիւը և մեր լինել կամ չը լինելու խնդիրը: Մեր հրամանատար կազմը առանձին-առանձին վերցուած և բոլորը միասին՝ ժամանակաւոր հիւրեր էին համարում իրանց հայկական բանակում: Այդ գեներալների և սպաների գերազանց մեծագոյն մասը շտապում էր վայելելու միայն կեանքի հաճոյքը, և օր առաջ ապահովելով իրան՝ նա տրամադիր էր կարգաւորելու իր գործերը, և յամենայն դէպս՝ այդ «հայրենի» սահմաններից դուրս...

Եւ այդպէս տրամադրուած հրամանատարութիւնը՝ չէր կարող դաստիարակել հայ զինուորութիւնը, նա չէր կարող ազգային բանակ ստեղծել: Նա միայն վարակեց հայկական զօրամասերի կուսական շարքերը, քայքայեց հայկական ազգային բանակի մեծ գաղափարը, և խորտակելով մեր զօրական կորովը՝ դէպի անդունդ տարաւ մեր պետական նորածիլ վերապրումները:

Դառնալով մեր ընդհատուած պատմութեանը՝ մենք պէտք է ասենք, որ գեներալ Յովսէփեան միայնակ չէր իր այդ ձգտումներում: Բայց եթէ նման հրամանատարներին և նոցա ընկերակցող բոլոր բախտախնդիրներին պէտք էին ուժգին ցնցումնէր և մեծ աղմուկ՝ մենք ծարաւի էինք խորին հանգստի և մեր հայրենիքի հզօր գաղափարների: Եւ զօրքը այս անգամ պատրաստւում էր ոչ թէ զգեստաւորուած և թմբկահար զօրահանդէսի՝ ուր նորան սպասում էին աղ ու հացով, պատիւներով և առատ կերուխումով, նա գնում էր ի կատար ածելու իր քաղաքագէտ հրամանատարի՝ մահկանացուներիս անհասկանալի իդեալը, գնում էր ջարդելու ու փշրելու, և այդ առանցքում ի հարկէ թալանելու և հարստանալու...

Այս անգամ գեներալ Յովսէփեան հասել էր իր նպատակին, նորան արձագանք էին տուել և ներդաշնակ ձայնակցել «կուսակցական» այլ «խաւերը», որոնք կողմնակից էին «ջարդելու ու փշրելու» խորիմաստ սիստեմին: Իսկ հոգսալից գեներալը, իր տեղը ծանրացնելու և ապագայ «յաղթութիւններում» աւելի մեծ դափնիք «կուսակցութիւնից» պահանջելու համար՝ նորից յետաձգեց այժմ արշաւի վերածուած այդ զինուորական զբօսանքը: Այս անգամ նա առարկում էր, որ թուրքերը ուժգին զինւում են, որ նորան սպասում է մեծ ընդդիմադրութիւն, որ կանոնաւոր զօրքը բաւական չէ այդ գրոհի համար, և ոչ այն 22 թնդանօթը, որ նորա տրամադրութեան տակ էր: Եւ թմբկահարելով այդ իմաստով աջ ու ձախ՝ հռչակաւոր զօրավարը գեներալ Փիրումովի ընկերակցութեամբ թոյլատւութիւն պահանջեց Երևանից, լրացնելու բանակը «կամաւորական» վաշտերով...

Մենք պէտք է զինաթափ անենք այս անգամ «ըմբոստ թուրքութիւնը», գրում էին Երևան վարչագէտ-գեներալները, և դորա համար մեզ պէտք է մեծ ոյժ:

Ինչպէս յիշում էք, զինուորական զբօսանք ծրագրելով՝ ոչ ոք չէր էլ մտածում զինաթափութեան մասին: Ընդհակառակը, այդ զբօսանքը ունէր քաղաքական-պետական իմաստ, և միանգամայն հեռու էր կրքեր գրգռելու նպատակներից: Աւելի կ՛ասեմ: Իմ ադմինիստրատիւ գործունէրութեան երկար տարիների դիտող-ութիւնը և փորձը գալիս էին միշտ համոզելու ինձ, որ զինաթափութիւն ասուած բանը դա մի խաբուսիկ հասկացողութիւն է: Նոյնիսկ ռուս տիրապետութեան օրով՝ երբ իշխանութիւնը յենւում էր իր մեծ կարողութեան և ազգաբնակութեան հլու տրամադրութիւնների վերայ, ես չեմ յիշում մի դէպք, երբ զինաթափութիւնը ֆիկցիա չը լինէր: Իշխանութիւնը խլում էր ժողովրդից 5-10 անպէտք զէնք՝ իսկ ընտիր հրացանները մնում էին երկրում, և գաւառը միշտ զինուած էր ոտից ցըգլուխ:

Տիրող իրաւակարգը զէնք կրելու մասին, գրաւոր թոյլատւութիւնը՝ առաջ էր բերում ստորին պաշտօնեաների շարքերում զեղծումների մի աւելորդ աղբիւր միայն, և այդպիսով օրէնքի իմաստը չէր իրագործւում:

Ես երբէք կողմնակից չեմ եղել այդ արգելառիթ օրէնքների, և միշտ հակուած էի կարծելու, որ այդ խստութիւնը որպէս ոչ բնական և պալիատիւ՝ չի լուծում խնդիրը: Նա միայն ստեղծում է այնպիսի մթնոլորտ՝ ուր օրէնքը երկդեմի լինելով, կորցնում էր իր հմայքը և նշանակութիւնը: Եւ ես երբէք խիստ չեմ եղել այդ խնդրում: Իմ այս մտածելակերպս գիտէին գաւառներում, և երբ ես թէ որպէս գաւառապետ, շրջանապետ և յետոյ նահանգապետ եղած միջոցին շրջում էի գաւառները՝ զէնք ունեցող ժողովուրդը ինձ պատիւ և յարգանք անելու համար դիմաւորում էր ինձ զինուած, զէնք կրելու իրաւունք չունենալով հանդերձ:

Զէնքը մեր երկրի տարազն է և մեր լեռների ճաշակը: Չի կարելի գրչի մի փառումով ոչնչացնել իրերի բնական դրութիւնը, և չի կարելի կլասիկ օրէնքներով կռուել այն վայրում՝ ուր կեանքը ունի իր լուրջ օրէնքները: Եւ այդ վերաբերմունքը տակաւին օրինազանցութիւն չէր, և ոճիրը ոչ միայն չէր զարգանում վերաբերմունքի այդ պայմաններում՝ այլ ընդհակառակը բարոյապէս սանձահարւում:

Եւ ժողովուրդը շատ լաւ հասկանալով այդ բոլորը՝ վստահ և բաց սրտով էր գնում իշխանութեան ներկայացուցչի մօտ, և մենք ոչ թէ կողմեր էինք խորթ և տարբեր իրարու՝ այլ ընդհանուր հայրենիքի զաւակներ, մօտ մարդիկ և բարեկամներ...

Այսպէս թէ այնպէս, գեներալ Յովսէփեանի պատերազմական տրամադրութիւնը դէպի խաղաղ ազգաբնակութիւնը՝ տարաւ յաղթանակը, և նա կոչ հրատարակեց կամաւորական խմբեր կազմելու մասին:

Թալանի ուրուականը փառում էր օդում, և հարստանալու տենչը բռնկելով մարդկանց ախորժակները՝ դէպի գեներալներ քաշում բազմաթիւ անգործ մարդիկ, որոնք կամաւորական, ազգային դիմակի տակ՝ գնում էին թալանելու և կեղեքելու:

Երբ գեներալ Յովսէփեանի զօրաբանակը պատրաստ էր՝ ուր կար միայն 22 լեռնային թնդանօթ, նա շարժուեց դէպի թուրքաբնակ գիւղերը, թողնելով հայ ազգին գնահատելու իր մեծ վաստակը և անձնուիրութիւնը:

Ռմբակոծելով թնդանօթներով Շորագեալից Զարուշատի թուրք գիւղերը՝ նա սարսափելի թալանի ենթարկեց այդ երկու գաւառակների թուրք գիւղերը: Տասնեակ գիւղեր թողնելով տուն, տեղ՝ փախան լեռները, բայց փախան զէնքով, և գեներալ Յովսէփեան, որ այդչափ մեծ զօրաբանակ ունէր՝ չը կարողացաւ մի հրացան անգամ ձեռք բերել: Եւ այդ շատ բնական էր ի հարկէ: Մեր ահարկու զօրաբանակը ժամանակ չունէր այդ գործով զբաղուելու, մենք տենդոտ կրում էինք միայն թուրքերի թողած հարստութիւնը՝ հացը, գորգերը, տաւարը և այլ իրերը: Սպայութիւնը, հրամանատար կազմը՝ ժամանակ էլ չունէր զբաղուելու զինաթափութեան գործով, նա քշում էր դէպի Կարս, Աղէքսանդրապոլ և Երևան իր մեծ յաղթանակը՝ տաւարի, ոչխարի անվերջ հօտեր, գորգերով ու պղինձի անօթ-

ներով բարձած սայլեր և ամբողջ վագոններ: Երբ հասան ահռելի չափերի գեներալ Յովսէփանի դաշտային շտաբում թալանուած գորգերը, արծաթը, պղինձը ու տաւարը, որ բռնել էին ամբողջ հրապարակը՝ այնտեղ շտապ մեկնեցին գեներալ Փիրումով, Կարսի քաղաքագլուխ Նոհրատեան, Աղէքսանդրապօլի քաղաքագլուխ բժ. Մելքոնեան, և Աղէքսանդրապօլի «զեմսկի» գործիչները՝ «պատերազմական» աւարը «կարգաւորելու» ու «խնամելու» համար...

Այդ «շտաբում» » կատարեալ կօմմունա էր, մեծ և փոքր մշուշել էին մի ընդհանուր «պլատֆօրմ»՝ շտապել և վերջացնել... Եւ այդ տենդոտ իրարանցման մէջ՝ համայնօրէն «զեմսկի» գաղափարների սրբութիւնը պահպանելու համար երևի, հալւում և չքանում էին վագոններով գորգեր, տաւար, տասնեակ գիւղերի մեծաքանակ հարստութիւնը...

Եթէ գեն. Փիրումով, Յովսէփեան և Cº «ի պաշտօնէ» էին թալանի այդ մեծ խարոյկի շուրջը՝ միանգամայն անհասկանալի էր, ի՞նչ էին անում այնտեղ Կարսի և Աղէքսանդրապօլի պատուելի «կուսակցական» քաղաքագլուխները և զեմստվոյի ներկայացուցիչները: Երևի նոքա էլ տարուած էին կեանքի մէջ համայնական սկզբունքները կիրառելու գաղափարներով:

Ինչպէս և միշտ այդօրինակ դիպուածներում՝ տեղի ունեցաւ մի զաւեշտ պատկեր: Այդ համայնական աղմուկի մթնոլորտում՝ գեներալների շտաբում չքացաւ մի մեծ արծաթէ արժէքաւոր մատուցարան, որ նոյնպէս ի հարկէ պատերազմական աւար էր:

Թէ ո՞վ այդ գաղափարական և կուսակցական գործիչներից՝ սխալմամբ ի հարկէ թոցրեց այդ մեծ մատուցարանը, մնաց չը պարզուած: Բայց այդ մատուցարանի շուրջը պտտող պատմութիւնները այն տպաւորութիւնն էին թողնում, որ այդ մատուցարանը գրգռել էր շատերի գեղարուեստական ճաշակը...

Կարսի քաղաքագլուխ Նոհրատեան՝ «թատերաբեմից» մի վագօն գորգ էր բերել Կարս, «քաղաքի պէտքերի» համար, իսկ Աղէքսանդրապօլի քաղաքագլուխ բժ. Մելքոնեան՝ մի հօտ տաւար էր քշել դէպի Աղէքսանդրապօլ, նոյնպէս ի հարկէ «քաղաքի պէտքերի համար»: Բայց յետոյ պատմում էին, որ այդ տաւարը քաղաքագլուխը սխալմամբ իր տունն էր տարել: Յամենայն դէպս, «կուսակցական» մեր գեներալները պատուաւոր բաժին էին հանել «պատերազմական աւարից» իրանց «աւագ ընկերներին», և դորանով ապահովացրել էին իրանց որևէ պատասխանատուութիւնից:

Երբ թալանի աղմուկը տարածուեց ամէն տեղ՝ Երևանից սպարապետը ծածկագիր հեռագրով սպառնալից պահանջում էր գեներալ Փիրումովից վերջ տալ այդ մեծ, խայտառակ ամօթին, բայց ի հարկէ սպարապետին ոչ լսող կար և ոչ էլ հրամանը կատարող:

Թէ ինչպէ՞ս էին Կարսի գեներալները կատարում Երևանից ստացուած «խիստ հրամանները»՝ բնորոշ կը լինի առաջ բերել այստեղ սպարապետ գեներալ Նազարբեկովի խօսքերը:

Թալանի այդ օրերում գեն. Փիրումով գալիս է Կարսի հեռագրատունը, կանչում է Երևանից ուղիղ գծի մօտ իր մի կուսակցական ընկերոջը, և բոլորի ներկայութեամբ՝ այսպիսի մի զրոյցի է բռնւում Երևանի հետ. «Քեֆ, հալ, ինչպէս ես, անպատճառ պէտք է գաս ինձ մօտ Կարս, քո բաժին թալանը պահել եմ... »: Կատակ էր այդ թէ լուրջ բան՝ չը գիտեմ, յամենայն դէպս մի ժամից յետոյ այդ պիկանտ զրոյցը տարածուեց թէ Կարսում և թէ Երևանում: Երբ պատմում էր ինձ շատ յետոյ գեներալ Նազարբեկով գեներալ Փիրումովի այդ ի ծայր անտակտ վարմունքի մասին՝ տեղեկացրեցին ինձ, ես անմիջապէս պահանջեցի ինձ մօտ զինուորական պրօկուրօր փոխգնդապետ Եղիազարեանին, և հրամայեցի նորան քննութիւն կատարել գեներալ Փիրումովին դատի տալու համար: «Բայց իմ հրամանս՝– ասաց ինձ դառնալից ծերունի սպարապետը,– չը կատարուեց, և ես չը գիտեմ թէ ինչով վերջացաւ այդ խայտառակ միջադէպը... »:

Այդչափ ուժեղ էր մեր պետական անցուդարձում հայկական զօրաբանակի սպարապետը...

Բայց այդ «տանող-տանողի» մթնոլորտում՝ շատ փափուկ էր նահանգապետի դրութիւնը: Նորա վեց ամիս առաջ նախագծած զինուորական զբօսանքը, որ պէտք է պետական ուժեղ տրամադրութիւն ստեղծէր երկրում, և պատկառանք դէպի իշխանութիւնը՝ վերածուեց կողոպուտի, թալանի և իրաւակարգի չը տեսնուած խորտակման: Նորա բազմաթիւ այդ առիթով բողոքները Երևան՝ մնում էին առանց հետևանքի, իսկ գիշատիչ հրոսակախմբերը զինուորական և կամաւորական տարազներով՝ ահաբեկում էին գիւղերը և ամբողջ գաւառները: Բայց ինչպէս ամէն մի եղեռնագործութիւն ունի երբեմն և իր զաւեշտ կողմերը՝ այնպէս և այս անգամ տեղի ունեցաւ մի նմանօրինակ դէպք:

Երբ մեր այդ գեներալները, երկու քաղաքագլուխը և միւս «գործիչները» բաժան-բաժան էին անում «զինուորական շտաբում» «զինուորական» մեծ աւարթալանը՝ այդ «պետական և հասարակական» մարդիկը մի մեծ միտք են յղանում, անջատել այդ «թատերաբեմը» Կարսի նահանգից, և դուրս բերելով թուրքերով բնակեցրած այդ Աղբաբայ գաւառակը Կարսի նահանգապետի իրաւասութեան սահմաններից՝ կցել այդ գաւառակը Աղէքսանդրապօլի զեմստվոյին...

Թէ ի՞նչ «համայնական» միտումներ ունէին այդ թուրք գաւառակի մասին Աղէքսանդրապօլի «ինքնավար» մարմնի գաղափարական գործիչները՝ չը գիտեմ, գիտեմ միայն, որ Աղբաբայ գաւառակը Կարսի նահանգի ամենահարուստ և ամենամթին, վայրենի անկիւններից մէկն է...

Գալով այդ խորհրդակցութեան մասնակցող գեներալներին՝ նոցա պէտք էր մի աւելորդ անգամ խոցոտել իրանց ճանապարհի վերայ կանգնած Կարսի նա-

հանգապետին, և առանց նահանգապետի մասնակցութեան՝ լուծել այդ մեծ խնդիրը:

Այդ հեղինակաւոր խորհրդակցութեան որոշումը, որ կայացաւ թալանի բաժան-բաժան անելու ընդմիջումներում՝ հեռագրով հաղորդուեց Երևան, կառավարութեանը, և ի մեծ զարմանս իմ՝ ես ստանում եմ մինիստր նախագահի հետևեալ հեռագիրը.

«Կառավարութիւնը, լսելով Աղբաբայ գաւառակը Կարսի նահանգից անջատելու կարևորութիւնը՝ որոշեց կցել այդ գաւառակը Աղէքսանդրապօլի զեմստվոյին»:

Ես մի քանի անգամ կարդացի այդ հեռագիրը, և չէի ուզում հաւատալ կարդացածիս:

Ինձ համար միանգամայն անհասկանալի էր, որ այդպիսի մի մեծ խնդիր լուծւում էր այդչափ արագընթաց, և այնպէս վայրիվերոյ և առանց գէթ քաղաքավարութեան տարրական պայմանները պահպանելու համար՝ նահանգապետի գիտութեան:

Ինձ շատ և շատ զարմացնում էր մանաւանդ, որ այդ հեռագիրը ստորագրել էր պ. Խատիսեան, որ յամենայն դէպս միակն էր մեր կառավարչական կազմում իր վարչական ըմբռնումներով: Պ. Խատիսեան չէր կարող չիմանալ, որ չի կարելի լուծել այդպիսի մի խոշոր խնդիր՝ առանց նորա նախնական մանրամասն ուսումնասիրութեան, և առանց նախապէս նահանգապետի կարծիքը և եզրակացութիւնը պահանջելու: Բայց յետոյ պարզուեց, որ մինիստրների խորհրդում գործի զեկուցանողը եղել է ներքին գործերի օգնական Մանասեանը, որ ինչ-ինչ միտումներով՝ մասնակցել էր այդ խնդրի մասին խորհրդակցութեանը այնտեղ, վագօնում, գեներալների և երկու քաղաքագլխի հետ... Եւ Մանասեան, խեղաթիւրելով գործի տուեալները՝ զեկուցում է մինիստրների խորհրդին, որ Կարսի նահանգապետը, որին ուղարկուած էր այդ խնդիրը ի եզրակացութիւն՝ տուել է իր համաձայնութիւնը... Այդ առիթով՝ ես ուղղեցի մինիստր նախագահին և ներքին գործերի մինիստրին մի ընդարձակ գրութիւն:

Բացատրելով, որ Արփաչայը Կարսի նահանգի բնական սահմանն է եղել ոչ միայն ռուս՝ այլև հարիւր տարի առաջ տաճկաց իշխանութեան օրով, որ Աղբաբայի գաւառակը իր տնտեսական ձգտումներով, առևտրական կապերով և կենցաղով կազմում է Կարսի շրջանի անբաժան մասը, որ կցելով այդ գաւառակը Աղէքսանդրապօլի գաւառին՝ ազգաբնակութիւնը չի խախտի իր դարաւոր կապերը Կարսի հետ, և այդ ադմինիստրատիւ անջատումը կը լինի շինծու, անբնական և ոչ պետական իմաստի գործ: Ինձ զարմացնում է՝ գրում էի ես, որ կառավարութիւնը վճռում է այդպիսի մի մեծ քաղաքացիական խնդիր՝ առանց նահանգապետի գիտութեան, և ինչ-որ ռուսախօս գեներալների և ինչ-որ քաղաքագլուխների քմահաճոյքը կատարած լինելու համար...

Բայց ինձ աւելի զարմացնում էր, որ կառավարութիւնը նոյնիսկ թոյլ էլ տուել իրան լսելու մի խնդիր, որ ոչ մի կերպ չի վերաբերւում գեներալների և քաղաքագլխի իրաւասութիւններին:

Բայց իմ այդ գրութիւնը մնաց առանց հետևանքի:

Դառնալով անուանի թալանին՝ ես պէտք է ասեմ, որ թէև նա կատարւում էր «ի պաշտօնէ», և հրամանատարութեան զրահի տակ՝ բայց ես այնուամենայնիւ գտնում էի, որ ասպատակուել և թալանուել են տասնեակ գիւղեր, որ տասնեակ հազար ազգաբնակութիւնը սառնամանիք օրերում, բքում ու ցրտում՝ թողել հայրենի տնակը և փախել է լեռները, և որ այդտեղ միայն ոճիր է՝ և մեծ արտակարգ ոճիր: Ես գիտէի ի հարկէ, որ այդ թալանը, որ կատարել են սպաները և գեներալները՝ օրէնքով պէտք է հետազօտէ և քննէ զինուորական բարձր իշխանութիւնը, և ինքը դատի տայ մեղաւորներին: Բայց մի՞թէ ես կարող էի արդարադատութիւն որոնել զինուորական շրջաններում, ուր ամէն բան «ռազմական» զրահի տակ էր և այդ առանցքում անվճռաբեկ...

Եւ այդ միտումներով ուղարկեցի դատաստանական պալատի պրօկուրօրին և պատճէնը ներքին գործերի մինիստրին՝ հետևեալ հեռագիրը. «Ասպատակուած և թալանուած են տասնեակ թուրք գիւղեր, բարեհաճեցէք անյապաղ ուղարկել դատաստանական արտակարգ գործերի քննիչին, և յանձնարարել այդ մեծ աղմուկ գործը՝ շրջանային դատարանի պրօկուրօրի առանձին ուշադրութեանը»:

Ես կարծում էի, ինչպէս և պէտք է լինէր, որ դատաստանական քննիչի հետ կը շտապէ գալու այդ թալանի բեմը և ինքը, պրօկուրօրը՝ բայց ի հարկէ եկաւ մի ռուս դատաստանական քննիչ: Եւ ինձ հետ այդ առիթով խօսակցութեան ժամանակ ռուս իրաւաբանը ասաց. «Ես կատարում եմ ձևականութիւնը միայն, որովհետև այդ արտակարգ վակխանալիայում ճշմարտութիւն որոնել և ապարդիւն է և ի զուր... »: Եւ մեր ժամանակակից բարքերի տեսակէտից՝ այդ առանձնակի նշանակալից գործը դէմք և պատկեր չը ստացաւ: Դատարանը, որ կարող էր այդ պրօցէսում փայլել որպէս մարմնացումն ճշմարտութեան և արդարադատութեան՝ հնարաւորութիւն չունեցաւ լսելու մեր հասարակական կեանքի ուսումնասիրութեան համար այդ հարուստ նիւթը: Իսկ հասարակական կարծիքը զրկուեց հնարաւորութիւնից՝ տեսնելու այն գունաւոր պատկերները, որոնք շտապեցրին մեր հանրապետութեան խորտակումը:

Բայց մեր գեներալների զօրաբանակը մեծ յաջողութեամբ թալանելով այդ մի քանի տասնեակ գիւղերը, և ցիրուցան անելով ազգաբնակութիւնը՝ կանգնեց երկաթուղու գծի տարածութեամբ, Կարսից մինչև Արփաչայ:

Թալանը բաժին-բաժին անելուց յետոյ՝ քաջարի գեներալները զգացին այնուամենայնիւ, որ դրութիւնը մի կերպ պէտք է վերականգնել: Բայց ազգաբնակ-

ութիւնը, որ փախել և ապաստան էր գտել լեռներում՝ միանգամայն հրաժարուել էր այդ առիթով մեր գեներալների հետ խօսելու:

Այն ժամանակ գեներալ Յովսէփեան ստիպուած էր հեռագրով խնդրելու Կարսի նահանգապետին՝ գալ զօրակայան խորհրդակցութեան:

Ես առաջիկայ գնացքով մեկնեցի այդ «շտաբը», և զօրքերի հրամանատարը խնդրեց մի կերպ բերել տալ փախած գիւղերի ներկայացուցիչներին՝ նոցա հետ համաձայնութեան գալու համար ստեղծուած դրութեան մասին: Ես պատուիրեցի ինձ ուղեկցող գաւառապետին՝ մի երկու հաւատարիմ մարդ ուղարկել թուրքերին բերելու համար, և միւս օրը մօտ 30 անուանի թուրքեր ներկայացան ինձ:

Ես ընդունեցի նոցա հրապարակով, երկու գեներալների, Կարսի քաղաքագլխի և այլ «հասարակական գործիչների» ներկայութեամբ, որ եկել էին Աղէքսանդրապօլից՝ թէ թալանի և թէ թամաշի: Եւ թուրքերի պարագլուխը՝ մի շատ խելօք և լուրջ մարդ, դիմելով գեներալներին՝ շատ շեշտալից և շատ բարձր տրամադրութեամբ ասաց. «Մենք եկանք մեր նահանգապետի հրաւէրով, որովհետև ոչ թէ Ձեզ՝ այլ միայն և միայն նահանգապետին ենք հաւատում...»:

Եւ երկու գեներալները, իրանց մեծ զօրաբանակով և մի քանի տասնեակ թնդանօթներով աւերելով և հիմնահատակ անելով տասնեակ թուրք գիւղեր՝ այժմ դիմում էին նահանգապետին, որ նա իր ազդեցութեամբ ստիպի թուրք անուանիներին յոժարակամ յանձնել զէնքը և վերադառնալ իրանց տեղերը: Եւ թուրքերը ի կատարումն նահանգապետի հրամանի՝ մի քանի օրից յետոյ բերում, յանձնում են 2000 հրացան: Ջարդելու և փշրելու կողմնակիցները ի դէմս գեներալների և միւսների՝ վերջնականապէս փչացրեցին հայ-թուրքական յարաբերութիւնները, և Աղբաբայ գաւառակը «անջատուելով» Կարսի նահանգից և «կցուելով» Աղէքսանդրապօլի զեմսկի ախորժակներին՝ մնաց մինչև ի վերջը «անկախ հանրապետութիւն», այդ լեռնանցքում անջատուած և Կարսից և Աղէքսանդրապօլից: Իսկ Աղէքսանդրապօլի հետ այդ գաւառակը ոչ գործ, ոչ հնարաւորութիւն և ոչ էլ տրամադրութիւն ունէր ապրելու և աշխատակցելու: Բայց Աղբաբայ գաւառակի մասին մի երկու խօսք ևս: Ինչպէս յայտնի է, Կարսից անջատուելուց յետոյ՝ այդ գաւառակը «մի անկախ հանրապետութիւն էր», նա ոչ Կարսն էր ճանաչում և ոչ ի հարկէ Աղէքսանդրապօլի «զեմստվոն»: Այդպէս է երկրի ճաշակը իրաւակարգային խնդիրներում:

Թուրքերի հետ բանակցելուց յետոյ ես վերադարձայ Կարս, իսկ Կարսի քաղաքագլուխը և միւսները մնացին «շտաբում»՝ կարգաւորելու ու տեղաւորելու մեծաքանակ «պատերազմական աւարը»...

Այդպէս վերջացաւ երկու գեներալների պանծալի յարձակումը թուրք ազգաբնակութեան վերայ: Բայց աւելի զարմանալին այն է, որ այդ բոլորից յետոյ, այդ գեներալները մնացին ոչ միայն իրանց պաշտօններում՝ այլև իրանց տեղերում,

Կարսում: Իսկ նոցանից մեծը, գեներալ Փիրումով, ի հատուցում երևի իր մեծ յաղթութիւնների՝ ստացաւ աւագ զօրավարի աստիճան (генералъ лейтенантъ):

Եւ գեներալները շարունակեցին մաքառել նահանգապետի դէմ, երերել երկրի իրաւակարգը, և վերջացրեցին իրանց բազմաշխատ այդ ուղութեամբ գործունէութիւնը՝ Կարսի նահանգը Կարաբեկիր փաշային յանձնելով:

Թուրք գիւղերի շրջանում մեր այդ աւանտիւրան միանգամայն երերեց երկրի իրաւակարգը, և լքեց զօրքը: Շարքային զինուորութիւնը կապ չունէր հրամանատար կազմի հետ: Գեներալները և սպաները խորթ մարդիկ էին հայ զինուորի, հայ գիւղացու համար: Եւ, բացի այդ, նրանք ոչ մի բարոյական հեղինակութիւն չէին ներկայացնում հայ զինուորի աչքում: Այդ հրամանատար կազմը ձգտում էր միայն ապահովելու իրեն, և անում էր այդ ոչ միայն զինուորի աչքի առաջ՝ այլև նորա միջոցաւ: Գաղափարական, ազգային նոյնիսկ հեռաւոր սկզբունքների մասին խօսելն անգամ աւելորդ էր, և այդ առանցքում մենք չէինք կարող ազգայնացնել զօրքը, չէինք կարող պետական կրթութիւն տալ զօրքին՝ և հետևապէս չունեցանք այն ոյժը, որ պետական գաղափարի մարմնացումն է: Կառավարութիւնը ոչ միայն ոչինչ չէր խնայում, ոչինչ իր զօրաբանակի համար՝ նա տալիս էր նորան աւելի քան կարող էր, իր բիւջէի 85 տոկոսը:

Զինուորական մինիստրը, գեներալները և սպաների մեծ բազմութիւն՝ հայ հնչիւներին և հայ տրամադրութիւններին այդ խորթ մարդիկ, երկրի համար անհոտ և անհամ՝ չէին կարող ի հարկէ բարձր կորով ստեղծել մեր շարքային զինուորութեան մէջ: Իսկ պէսպէս, գունաւոր և անփառունակ սպայութիւնը՝ երեկուայ այդ տիրացուները, վարժապետները, գործակատարները և սափրիչները՝ միայն և միայն արատաւորում էին հայ սպայի անունը: 19 թուի Դեկտեմբերի 25-ին Կարսի պահակային գնդում (караульный баталионъ)՝ անիշխան տրամադրութիւնների սպառնալից նշաններ երևացին: Սոված և մերկ զինուորները համբերութիւնից դուրս գալով, և ինչ-որ ասում էին՝ պրոկլամացիաների ազդեցութեան տակ, ըմբոստացան և բռնութիւն գործ դրեցին իրանց մի սպայի դէմ:

Ինձ հասած հաստատ տեղեկութիւններով՝ միւս օրը Կարսի ամբողջ զինուորութիւնը պատրաստւում էր զինուած ցոյց անել իր հրամանատար կազմի դէմ, որ վայելելով կեանքի բոլոր հաճոյքը՝ քաղցի, կեղտի և ցրտի մէջ էր պահում հայ շարքային զինուորին: Ես նոյն գիշերը տեղեկացրեցի Կարսի ոստիկանապետի միջոցով գեներալ Յովսէփեանին (գեն. Փիրումով գնացել էր այդ օրերում Երևան)՝ և խնդրեցի անյապաղ միջոցներ ձեռք առնել: Այդ մասին ուշ գիշերը ես ընդարձակ ծածկագիր հեռագիր ուղարկեցի մինիստր նախագահին:

Գեներալ Յովսէփեան՝ հենց նոյն գիշերը ձեռք առաւ պէտք միջոցներ զինուորութեան ըմբոստ տրամադրութիւնը զսպելու համար: Բայց զինուորական իշխանութիւնը ոչ միայն չը գիտէր թէ ի՞նչ է կատարւում իր զօրամասերում՝ այլ նա

դեռ վիրաւորական համարեց իր համար, որ նահանգապետը միջամտում է իր գործերին, և հերքեց Երևանի առաջ նահանգապետի հաղորդագրութիւնը:

Բայց և այնպէս, ինչ-ինչ միտումներով զօրաց մինիստրը ուղարկեց գեներալ Խանկալամովին՝ դարձեալ մի ռուսախօս հայ, այդ ըմբոստ գումարտակի տեսութիւնը քննելու և գնդի հրամանատար փոխգնդապետ Միրզոեւ, որ գեներալ Փիրումովի փեսան էր՝ արձակուեց պաշտօնից...

Գեներալ Փիրումով այդ առիթով գնաց Երևան՝ աշխատեց իր փեսային վերականգնել իր պաշտօնում, բայց գնդապետ փեսայի հաշիւները այնչափ մրոտ էին, որ Երևանը այս անգամ չը կարողացաւ յարգել «Սարդարապատի հերոս» Փիրումովի միջնորդութիւնը:

Բայց գեներալ Փիրումով մեծ կապեր ունէր մեր աստղերի պալատում և նորա փեսան նորից պաշտօն ստացաւ Կարսում, նորան միայն տեղափոխեցին մի այլ գունդ՝ գնդի հրամանատարի օգնականի պաշտօնով: Այդպէս է հայկական հինաւուրց խնամիութիւնը: Փեսայի գնդի հրամանատար նշանակուեց դարձեալ մի ռուսախօս գնդապետ՝ հայութեանը միանգամայն խորթ մարդ: Մի քանի ամսից յետոյ նահանագապետի տեղեկութիւնները մեր զօրամասերի բորբոքալից դրութեան մասին ճշտուեցին միանգամայն:

20 թուի Մայիսեան օրերում՝ զինուորութեան այդ տրամադրութիւնը հրապարակ դուրս եկաւ, և Կարսի երկու գեներալները ցոյց տուեցին այդ օրերում իրանց իսկական դէմքը: Այդ գեներալները մի ակնթարթում կորցրեցին իրանց նօմինալ հեղինակութիւնը, երերուեցին, աջ ու ձախ ընկան՝ բայց ի հարկէ կորով չունեցան կանգուն լինելու այդ ուղութիւններից և ոչ մէկում: Եւ այդ բնական էր: Գեներալներն ու սպաները բանակի մի կողմն էին, իսկ զինուորութիւնը, մասսան, բուն հայութիւնը՝ այլ բանակ էր, տարբեր հոգեբանութեամբ, մտածելակերպով և ազգային կորովով:

Այդ մի շարք անհերքելի փաստերը բաւական էին ի հարկէ համոզուելու, որ Կարսի նահանգի զօրաց հրամանատար կազմի մեծագոյն մասը անպէտք էր, և անհամապատասխան մեր պետական միտումներին: Բայց և այնպէս, և Մայիսեան դէպքերից յետոյ՝ այդ բոլոր գեներալները և սպաները մնացին իրանց տեղերում: Երկրի և հասարակութեան համար պարզ էր այդ հրամանատար կազմի կատարեալ անկարողութիւնը, պարզ էր և այն, որ սանձարձակ զօրքը՝ այդպիսի հրամանատարների ձեռքում միայն չարիք էր երկրի համար: Եւ երկիրը հաւատացած էր, որ հրապարակի այդ «հերոսները» կը հեռացուեն, գէթ այլ վայրեր կը փոխադրուեն՝ բայց այդ բոլոր ինտրիգանտները մնացին իրանց տեղերում, և նորից թևաւորուած և խրախուսված՝ առաջ տարան հին գիծը: Այս անգամ նոքա նահանգում բաց թշնամալից դիրք բռնեցին երկրի քաղաքացիական իշխանութեան դէմ, իսկ այդ ադմինիստրացիան էլ գրի էր առնում և արձանագրում բոլոր

թալանները և զեղծումները, որ կատարում էր այդ ասպետ սպայութիւնը Կարսի նահանգի այս և այն անկիւնում:

XXV
XXII *(մատիտագիր)*

Իւր ժամանակին մենք տարածել էինք մեր իշխանութիւնը Կարսի, Կաղզուանի և Արդահանի գաւառներում՝ թողնելով Օլթիի շրջանի գրաւումը պատեհ օրերի: Օլթին մի հեռաւոր վայր էր, Կարսից մինչև Օլթի՝ խճուղով աւելի քան 200 վերստ է, այդ շրջանը բնակեցուած է բացառապէս թիւրքերով, քրդերով ու թուրքմեններով, մասամբ և յոյներով: Իսկ գաւառի սահմաններում, տաճկաց տերիտորիայում՝ վխտում էին բազմաթիւ քուրդ հրոսակախմբեր և այստեղ ու այնտեղ տաճկաց կազմալոյծ զօրամասեր:

Որպէս հեռաւոր և խուլ անկիւն՝ այդ շրջանում բոյն էին դրել Բագուի թուրքերի վարձկան գործակալները, և կապ հաստատել տաճկաց իշխանութեան Էրզրումի հետ:

Այդ բոլոր պատճառներով՝ Օլթին պէտք էր գրաւել զգոյշ և քաղաքագէտ, և ես ձեռք առայ այնտեղ կապեր հաստատելու և մշակում էի պատեհ մթնոլորտ՝ իմ իրաւունքները և դէպի այդ գաւառը տարածելու համար: Հազիւ թէ պէտք է ասել, որ քաղաքացիական իշխանութիւնը պէտք է տանէր դէպի այդ հեռաւոր վայրը հայկական դրօշակը ոչ միայնակ՝ այլ իր թիկունքում ունենալով և կազմակերպուած զինուորական ոյժ:

Եւ այդ ոյժը պէտք էր ոչ թէ պատերազմական որևէ գործողութիւնների համար՝ այլ միայն և միայն տեսքի, ազդեցութեան համար և յայտնի ակնածութիւն ստեղծելու դէպի եկող իշխանութիւնը: Երբ ես բանակցում էի Օլթիի ներկայացուցիչների հետ և հող էի պատրաստում առանց որևէ բռնութիւնների գրաւելու այդ վայրը՝ գեներալ Յովսէփեան ջարդելու, փշրելու տրամադրուած, քննադատում էր նահանգապետի «զգոյշ» և «երկչոտ» քաղաքականութիւնը: Եւ խանգարելով երկրում տիրող ամէնուրէք հանգիստ ու խաղաղ մթնոլորտը՝ գեներալը սպառնալից թմբկահարում էր Մերդենեկում, Օլթիի այդ սահմանակից շրջանում: Իսկ երբ ես յայտարարեցի, որ Օլթիի ազգաբնակութիւնը ի դէմս իր պատուիրակների՝ խնդրում է ինձ գալ և տիրել և ազատել գաւառը Բագուի և Գանձակի բախտախնդիր գործակալներից, գեներալ Յովսէփեան միանգամայն հակառակ դիրք բռնեց:

Նա պատասխանեց, որ պատրաստ չէ սահմանը անցնելու համար, և կ՛անէ այդ միայն այն ժամանակ՝ երբ այդ պէտք և հարկաւոր կը համարէ... Նա ուզում էր թագաւորութեան մէջ թագաւորութիւն խաղալ...

Իմ մի շարք Երևան դիմումներից յետոյ՝ կառավարութիւնը հրամայեց վերջապէս գեներալ Փիրումովին, ստիպել գեներալ Յովսէփեանին անցնել Օլթի:

Երկար առարկութիւններից յետոյ՝ գեներալ Յովսէփեան հրաման արձակեց վերջապէս, պատրաստուել զօրամասերին սահմանը անցնելու համար: Կազմակերպուած էր և գաւառի քաղաքացիական իշխանութիւնը, որ մեր զօրաբանակի հետ միասին պէտք է անցնէր Օլթի: Գաւառապետի պաշտօնակատար ես նշանակել էի Օլթի գաւառում մեծ ազդեցութիւն և համարում ունեցող Իզօ բէկին, և այդպիսով մենք առանց աղմուկի և հարթ պէտք է գրաւէինք այդ տարածութիւնը և պէտք է հաստատէինք այնտեղ մեր իշխանութիւնը:

Բայց գեներալ Յովսէփեան տեսնում էր, որ դարձեալ դափնիքը վաստակելու է նահանգապետը՝ և նա վճռեց խափանել դէպի Օլթի մեր իշխանութեան մարշը:

Մշակուած ծրագրով մենք պէտք է շարժուէինք դէպի Օլթի 19 թուի Հոկտեմբերի 14-ին՝ գեներալ Յովսէփեան յայտարարեց, որ հարկաւոր է համարում մի աւելորդ անգամ յետախուզական տեղեկութիւններ ունենալ այդ գաւառից, և մինչև որ այդ տեղեկութիւնները չը ստանայ՝ նա տեղից չի շարժուիլ:

Բայց յետախուզութիւնները թէ անյաջող եղան և թէ ուշացան, իսկ երբ եղանակը ցրտեց՝ գեներալ Յովսէփեան յայտարարեց, որ զօրքը բաւականաչափ մուշտակներ չունի, և նա անկարող է այդ էքսպեդիցիան կատարել: Այնուհետև ես անդադար դիմումներ էի անում այդ առիթով Երևան:

Կառավարութիւնը համակարծիք ինձ հետ՝ անվերջ հրամաններ էր արձակում առաջ խաղալ, բայց այդ բոլոր հրամանները հանդիպում էին գեներալ Յովսէփեանի կամակոր առարկութիւններին, կամ նա տաք հագուստ չունէր՝ կամ բաւականաչափ ռազմամթերք, կամ դրամական միջոցների պակասութեան վերայ էր յենում՝ կամ առհասարակ պատրաստ չէր: Իսկ կամքազուրկ և ենթարկուող գեներալ Փիրումով՝ թէև համարում էր Կարսի նահանգի զօրքերի հրամանատար, բայց իրօք խաղալիք էր գեներալ Յովսէփեանի ձեռքում, և այդպիսով Օլթիի խնդիրը, որպէս հակակշիռ նահանգապետին՝ ձգձգում էր:

Վերջապէս, 20 թուի Յունիսին՝ Երևանը ստիպեց Կարսի հրամանատարութեանը շարժուել դէպի Օլթի: Բայց այս անգամ գեներալները առարկեցին, որ Օլթու սահմանում կուտակուել են մեծ ռազմական ոյժեր, որ մեր զօրաբանակը թոյլ է, և իրաւունք խնդրեցին կամաւորական վաշտեր կազմելու, և պատշաճ ի հարկէ դորա համար՝ վարկեր...

Ինչպէս տեսնում էք՝ կրկնւում էր այն աւանտիւրան, որ այնպէս հմտալից խաղացին այդ քաջարի զօրավարները Արփաչայի թուրք ազգաբնակութեան գլխին:

Այդ կամաւորական վաշտերի «կազմակերպութիւնը» սկսուեց նորանով, որ գեներալները իրաւունք տուեցին այդ կամաւորական խմբերին բռնի կերպով

հափշտակելու «պատերազմական պէտքերի համար» սորա և նորա ձին և սայլը, կառքը:

Այդ բոլորը բացատրում էին գեներալները՝ «պատերազմի» համար է, պէտք է մեզ...

Եւ սկսուեց վակխանալիան: «Իրաւունքով» զրահաւորուած բազմաթիւ բախտախնդիր, որ իրանց «կամաւոր» էին անուանում՝ կանգնեցնում էին մարդկանց ճանապարհին, խլում մէկի ձին, միւսի լծկան տաւարը և սայլը և անյայտանում: Թէ ո՞վ էր այդ անողը և թէ ո՞ւր էին գնում այդ բազմաթիւ ձիանքը, տաւարը՝ յայտնի չէր: Բոլորը բռնանում էին գեներալների անունով, իսկ գեներալները անտես առնելով երկրի քաղաքացիական իշխանութիւնը, և վերջապէս բռնագրաւումներ անելու որոշ օրէնքները՝ մեծ բաւականութիւն էին զգում տեսնելու, թէ ինչպէ՞ս քաղաքացիական իշխանութիւնը ոչինչ չէր կարողանում անել ժողովրդի պաշտպանութեան համար, և ինչպե՞ս իրերի բնոյթով՝ իրանք էին երկրի ինքնակալները...

Գաւառներից թափւում էին գանգատներ զինուորականների այդ անիշխան և կամայական գործունէութեան մասին, տասնեակ մարդիկ օր ու գիշեր պաշարում էին գաւառապետների դիւանները, տասնեակ մարդիկ վազում էին նահանգապետի մօտ՝ բայց ոչ մի բաւարարութիւն ի հարկէ չէին ստանում:

Գեներալները, սպաները, իսկ նոցա հետ և աւելի մեծ չափով անյայտ և անպատասխանատու «կամաւորները»՝ անում էին ինչ-որ կամենում էին, և երերում երկրի իրաւակարգը: Իսկ գեներալները այստեղ ու այնտեղ նորից խօսում էին քաղաքացիական իշխանութեան «թուլութեան» մասին, պնդում թէ պէտք է ջարդելու փշրելու սիստեմ, պէտք է Կարսի նահանգում զինուորական դրութիւն յայտարարել, և ամբողջ իշխանութիւնը կենտրոնացնել զօրաց հրամանատարութեան ձեռքում...

Զինուորական այդ արշաւի դէմ, որ ուղղուած էր միայն խաղաղ ազգաբնակութեան դէմ՝ ես մի միջոց ունէի միայն, այդ օրէնքն էր, և ես շրջաբերական հրաման արձակեցի ինձ ենթակայ բոլոր վարչական մարմիններին՝ այդ օրինազանց ամէն մի դէպքի մասին արձանագրութիւն կազմել, քննութիւն կատարել, գործը ուղղել դատաստանական քննիչին, իսկ պատճէնները ուղարկել մեկը մեղադրեալի իշխանութեանը՝ գեներալ Փիրումովին, իսկ միւսը ներկայեացնել ինձ:

Իսկ ես, չը բաւականանալով այդ բոլորով՝ զինուորական սխրագործութիւնների արձանագրութեան մի պատճէն ուղարկում էի միշտ ի գիտութիւն զօրաց մինիստրին, իսկ միւսը ներքին գործոց մինիստրին:

Եւ այդ թալանը, որ կատարւում էր «ռազմական» զրահի տակ՝ շարունակուեց մինչև որ գեներալ Փիրումով վճռեց Օլթի շարժուել: Բայց այստեղ պատահեց մի աւելի վատթար խայտառակ բան:

Կարսից մինչև Օլթի՝ խճուղին անցնում է մոլոկան, յոյն և քուրդ գիւղերով, և զօրամասերը պատերազմական կորովով ի հարկէ տրամադրուած՝ ճանապարհին սկսեցին թալանել գիւղերը, և այդ յաղթական տրամադրութեամբ հասան մինչև Մերդենեկ, Օլթիի սահմանագլուխը:

Թէ այդ «կամաւորները» և թէ զօրամասերի շարքային զինուորները՝ միայն գործիք էին սպաների ձեռքում այդ թալանի ժամանակ: Գրեթէ ամէն մի սպայ ունէր իր «դաստին», իր «խումբը», որին այդ սպաները և ուղարկում էին այդ գաստրօլների, թալանի և յետոյ նոցա հետ կիսում «պատերազմական աւարը»:

Իսկ Օլթի, որ մի ժամանակ ինքն էր խնդրում մեզ գալ և տիրել այդ գաւառը՝ տեղեակ էր մեր «յաղթական» տրամադրութեանը: Եւ թէև երկրի մեծամասնութիւնը դարձեալ կողմնակից էր մեր իշխանութեան՝ բայց այնուամենայնիւ Օլթիի շուրջը հաւաքուել էին մօտ 500 զինուած փախստական ասկեարներ, քրդեր, թուրքեր՝ և Բագուից եկած Ատրպատականի գործակալների ղեկավար-ութեամբ սպասում էին մեզ:

Մեր առաջիկայ քայլերը այդ նոր երկրում թեթևացնելու համար՝ Օլթիի գաւառապետի ժամանակաւոր պաշտօնակատար ես նշանակեցի Իզօ բէկ Ադժարսկուն, որ մի անուանի և ազդեցիկ քուրդ էր, և որի մայրը հայ էր:

Գաւառը այդ միջոցում բաժանուած էր երկու կուսակցութիւնների, և Իզօ բէկը այդ կուսակցութիւնների, թայֆաների ամենաուժեղի պարագլուխն էր, և ես ուզում էի օգտագործել նորա ազդեցութիւնը երկրում: Կառավարութիւնը շնորհեց այդ միջոցում Իզօ բէկին սպայական ուսադիրներ: Ես կազմակերպել էի Օլթիի գաւառական կառավարութիւնը: Հանգամանքները պահանջում էին, որ բացի գաւառական կառավարութիւնից՝ միաժամանակ, մինչև որ կեանքը ստանար իր սովորական ընթացքը՝ Օլթիում ես ունենայի և իմ յատուկ ներկայացուցիչը: Իմ այդ ներկայացուցիչը ի հարկէ պէտք է լիներ փոխնահանգապետը, բայց ես օգնական չունէի, և ստիպուած էին ուղարկել Կարսի գաւառապետ Տէր-Անտոնեանին: Վերջինս թէ աւագն էր գաւառապետների մէջ և թէ փորձուած ու լուրջ մարդ, տեղեակ օրէնքների: Եւ ես ենթարկել էի գաւառապետ Իզօ բէկին Տէր-Անտոնեանին՝ թողնելով քուրդ ցեղապետին թագաւորել, բայց ոչ կառավարել...

Պէտք է նկատել այստեղ, որ հայ կամաւորական մասերի հետ զուգընթաց գեներալ Յովսէփեան՝ առանց ի հարկէ նահանգապետի կարծիքը հարցնելու, և նորա հետ խորհրդակցելու՝ կամաւորական խմբեր էր կազմել և յոյներից: Այդ այն յոյներն էին, որ ոխերիմ թշնամութիւն ունէին Օլթիի քրդերի հետ, և առիթի էին սպասում քրդերի հետ իրանց հին հաշիւները տեսնելու համար: Որպէս ուղեկիցներ, բոլոր լեռնանցքներին լաւ ծանօթ մարդիկ՝ յոյները մեր այդ արշաւի առաջընթաց մասը դարձան, և հենց որ մեր զօրաբանակը անցաւ դէպի Օլթի՝ այդ յոյները յարձակուեցին Օլթիի գաւառի խաղաղ քուրդ գիւղերի վերայ:

Միաժամանակ դորա հետ և այն 500 փախստականները, որ խմբուել էին Օլթիի շուրջը՝ ընդհարուեցին մեր զօրաբանակի հետ, և այդ ընդհանուր շփոթի մէջ դժուար էր որոշել, երկրի գրաւում է այդ պատերազմը՝ թէ թալան ու կազմակերպուած ասպատակութիւն:

Թիւրք հրոսակները, որոնց մէջ անկասկած կային և ասկեարներ՝ փախան, քաշուեցին դէպի ներս, իսկ մեր զօրքը տիրեց ածխահանքը: Թալանից և բռնութիւններից փախան Տաճկաստան՝ Օլթիի գաւառի 46 գիւղերը, երկրի խաղաղ ազգաբնակութեան կէսից աւելին, այն ժողովուրդը՝ որին կառավարելու և հովանաւորելու համար էր գալիս հայկական իշխանութիւնը: Իսկ մեր հրամանատարութիւնը գունաւոր հեռագիրներ ուղարկելով կառավարութեանը, ու Երևանի և Թիֆլիզի թերթերին իր տարած «մեծ յաղթութեան» մասին՝ աւելացնում էր, խտացնելով իր դափնիքը, որ «Տաճկաց կանոնաւոր զօրքի հետ միասին՝ մեր դէմ էր կռւում և Օլթիի ազգաբնակութիւնը... »:

Ճիշտ է, այդ ազգաբնակութիւնը պատրաստուել էր աղ ու հացով դիմաւորելու հայկական իշխանութիւնը, բայց մեր առաջաւոր մասերը ի դէմս հայ և յոյն կամաւորական խմբերի՝ հենց մեր սահմանից սկսեցին թալանել մարդկանց, և քշել գիւղերի ամբողջ տաւարն ու ոչխարը:

Եւ առաջի հերթին թալանուեց գաւառապետ Իզօ բէկը, այն անուանի մարդը՝ որի վերայ մենք պէտք է յենէինք մեր քաղաքականութիւնը այդ հեռաւոր գաւառում: Մեր կամաւորները, զինուորները, սպաների ի հարկէ ցուցմունքներով՝ քշեցին գաւառապետ Իզօ բէկի 27 լաւ ձիանքը, և կողոպտեցին նորա հիւրասէր ապարանքը: Եւ միթէ՞ մենք դեռ կարող ենք զարմանալ, որ մարդիկ, որոնց ձեռքից մենք յափշտակում ենք նոցա ունեցածը՝ դիմադրում են մեզ և փախչում մեզանից...

Եւ որչափ մեծ էր թալանն ու ասպատակութիւնը՝ այնչափ գունաւոր էին մեր գեներալների ռեկլամային հեռագիրները նոցա տարած «մեծ յաղթութեան» մասին: Օլթին դարձաւ մի ուխտատեղի՝ ուր շտապում էին բոլորը, այն տարբերութեամբ միայն, որ այնտեղ գնում էին ոչ թէ նուիրաբերելու՝ այլ միայն մի բան պոկելու և բերելու... Այդ օրերում դասալիքութիւնը Կարսի նահանգի մեր այն զօրամասերում, որոնք չէին մասնակցում Օլթիի «յաղթութիւններին» (թալանին)՝ հասան չը տեսնուած չափերի: Փախչում էին ոչ միայն ամբողջ վաշտեր՝ գնում էր այս ու այն պատրուակով և սպայութիւնը:

Գեներալ Փիրումով և գեն. Յովսէփեան՝ մի աւելորդ անգամ նահանգապետին կշտամբելու համար հեռագրեցին Երևան, որ Սարիղամիշի, Կարսի և այլ զօրամասերը հալւում են օրեցօր, դասալիքութիւնը հսկայական չափերի է հասել, որովհետև նահանգի ադմինիստրացիան միջոցներ ձեռք չի առնում դասալիքներին բռնելու:

Երբ այդ առիթով ես հարցապնդում ստացայ ներքին գործերի մինիստրից՝ ես պատասխանեցի, որ բոլոր դասալիքները խմբովին գնացել են Օլթի՝ մասնակից լինելու «յաղթական» գործողութիւններին, թալանին, որ այնտեղ են զանազան պատրուակներով զօրամասերից բացակայ և սպաները, և որ բռնել ու յետ բերել այդ բոլոր ճաշակալից մարդկանց՝ կարող է միայն ինքը, գեներալ Փիրումով, և ինքը՝ գեներալ Յովսէփեան...

Այդ հարց ու պատասխանով սպառուեց ի հարկէ «դասալիքութեան» խնդիրը, որովհետև նորին գերազանցութիւնները չէին կարծում, որ ես գիտեմ ամէն բան, ու կանուանեմ իրերը իրանց սեփական անուններով...

Այդ ժամանակամիջոցում ես տեղեկութիւն ստացայ, որ գեներալների աջ թևերից մէկը՝ կամաւորական խմբի հրամանատարը, քշում է Օլթիից դէպի Կարս, ծախելու համար՝ եզների և կովերի մեծ բազմութիւն:

Այդ կամաւորական խմբի պետը կատարում էր գեներալների «առանձին յանձնարարութիւնները», և նոցա հետ ընկերվար յարաբերութիւնների մէջ էր: Փողոցում՝ հրապարակով, այդ խմբապետը փաղաքշալից ձեռքով խփում էր գեներալի ուսին, և բարձր ինչ-որ պատմութեան մասին ծիծաղում: Այդչափ արձակ էին մեր սոցիալիստ գեներալները, և այդպէս էր հանդիսադրւում փողոցում հայկական հրամանատարութիւնը:

Միւս օրը ես ստացայ առաջի հետևակ գնդի հրամանատար գնդապետ Յարութիւնովից, որ առհասարակ հաճելի չէր գեներալներին՝ և նորին գերազանցութիւնները նորան միշտ Կարսում էին պահում, հեռու Օլթիից և միւս շահաւետ վայրերից՝ պաշտօնական հետևեալ գրութիւնը. «Ինձ վստահած գնդին մթերք մատակարարող կապալառուն գնել է կամաւորական այսինչ խմբի պետից 100 գլուխ տաւար 4 միլիոն ռուբլով, բայց այսօր այդ խմբապետը ծախել է նոյն տաւարը մի Իգդիրցու՝ աւելի մեծ գումարով: Միջնորդում եմ կարգադրել, որ գնդի համար գնուած տաւարը յանձնուի կապալառուին»:

Եւ այդ դէպքը տեղի է ունենում Օլթին գրաւելուց մի շաբաթից յետոյ:

Գնդապետի գրութիւնը, իր բնոյթում՝ կազմում էր քաղաքացիական պահանջ, և ադմինիստրատիւ իրաւասութիւնից ի հարկէ դուրս էր:

Բայց ես չէի ուզում, որ մեր հասարակական և պետական բարքերի ուսումնասիրութեան համար այդչափ թանկարժէք փաստը կորչէ պատմութեան համար: Թէև խմբապետի այդ թալանի գործը ենթակայ էր նախ և առաջ գեներալ Փիրումովի՝ որպէս նորա իշխանաւորի, իրաւասութեանը, բայց ես փորձով գիտէի արդէն, որ այդ ոճրալից մթնոլորտում դժուար է որոշել ո՞վ է մեղաւորը և ո՞վ մեղադրողը... Եւ այդ միտումներով ես խուսափեցի գործը ուղղել զինուորական իշխանութեանը: Ես օգտուեցի դէպքից, որ այն ժամանակ գործում էին ժամանակաւոր արտակարգ դատարանները, որոնց ենթակայ էին և պաշտօնական զեղծումները: Եւ ես պատուիրեցի այդ առիթով՝ կատարուած նախնական քննու-

թիւնը ուղարկել այդ դատարանին: Բացի այդ, գրութիւնների պատճէն ես ուղարկեցի ի գիտութիւն զօրաց և ներքին գործերի մինիստրներին: Իսկ այդ գործում շահագրգռուած մարդիկ հազար ու մի արգելք հարուցանելով արտակարգ դատարանի առաջ՝ ձգձգեցին գործը մինչև աշուն, երբ Կարսի անկումը իջեցրեց այդ բոլոր հետաքրքիր տեսիլների վարագոյրը...

Օլթիի հարստութիւնը տանում էին երկու ուղղութեամբ: Տաւարը քշում էին դէպի Վրաստան, և այդ կողմը անցաւ 32000 տաւար ու ոչխար, իսկ գորգերը, ցորենը և այլ իրերը՝ զինուորական սայլերով ու պահակներով, որպէս «յաղթութեան» «աւար», գնում էր դէպի Կարս, Աղէքսանդրապօլ, և այնտեղ հալւում... Թէ ինչպէ՞ս են երբեմն գունաւորւում դիպուածները, և ինչպիսի՞ մեկնութ-իւն էին ստանում՝ ես հարկաւոր եմ համարում պատմել այստեղ այսպիսի մի դէպք, որ տեղի էր ունեցել մեր Կարս գալու առաջի ամիսներում, այն օրերում՝ երբ գեներալ Յովսէփեան, որպէս գեներալ նահանգապետ այն ժամանակ՝ խաղաղեցնում էր Արդահանի գաւառում քուրդ-յունական խռովութիւնները:

Կարսի գաւառապետը տեղեկութիւն է ստանում, որ մի թուրք գիւղում, որ Կարս-Աղէքսանդրապօլ երկաթուղու վերայ է՝ հայերի ու թուրքերի միջև ինչ-որ ընդհարում է տեղի ունեցել: Եւ Կարսում արդէն պատմում էին, որ թուրքերը յարձակուել են երկու հայ զինուորների վերայ, որոնք պաշտօնական գործով անցնում էին այդ գիւղով, կողոպտել և զինաթափ են արել զինուորներին: Նորութիւնների սիրահարները՝ մանաւանդ նրանք, որ տրամադիր էին ամէն մի մասնաւոր դէպքում թուրք-հայկական ջարդի ուրուական տեսնել, «ջարդել ու փշրելու» միջոցներ պահանջելու և մի աւելորդ անգամ ընդգծելու, որ նահանգապետը «կուսակցական» չը լինելով՝ խնամում է թուրքերին, աղմկեցին այդ լուրը: Այստեղ ու այնտեղ պահանջներ էին արտայայտում «ճնշելու բոլոր թուրքերին», և «կտրուկ» միջոցներ ձեռք առնելու...

Ոչինչ այնքան դժուար չէ, քննադատելու և որոտալից անպատասխանատու որոշումներ արձակելու: Ես գիտէի, որ այդտեղ մի այլ բան պէտք է պատահած լինէր՝ և պատուիրեցի գաւառապետին անձամբ անցնել այդ գիւղը և քննութիւն կատարել: Եւ պարզուեց հետևեալը: Արդահանի յոյն-քրդական խռովութիւններում պատերազմող մի ինչ-որ գլխապետ Ներսէսեան կարծեմ՝ իր մի երկու զինուած զինուորի հսկողութեամբ «պատերազմի թատերաբեմից» ուղարկում էր իր տունը Աղէքսանդրապօլ, իր բաժին պատերազմական աւարը, մի քանի կով և մի քանի տասնեակ ոչխար: Երբ այդ «պատերազմական աւարը» անցնում է թուրք գիւղի միջով՝ թուրքերից մի երկուսը կանգնեցնում են զինուորներին ու հարձուփորձ անում: Զինուորներից մէկը հասկանալով, որ «պատերազմական աւարի» դիմակը կարող է բացուել՝ ընդհարւում է թուրքերից մէկի հետ և նրան հարուածում: Բարձրանում է գիւղի սովորական աղմուկը, զինուորները իրանց ապահովացնելու համար հաւանական բարդութիւններից՝ ասում են, որ այդ տաւարը,

«թագաւորական է» (պետական) և այդպիսով ապահով անցնում, գնում են Աղէքսանդրապոլ:

Իսկ միջադէպը, որ հետաքրքիր և նշանակալից էր թէ՛ կառավարչական և թէ՛ հասարակական շրջանների համար միանգամայն տարբեր տեսակէտից՝ գունաւորւում և այլ մանրամասնութիւններ էր ստանում պիկանտ նորութիւններ սիրողների բերանում: Այդ դէպքն էլ ի հարկէ արձանագրուեց, այդ գրութեան պատճէներն էլ իր ժամանակին ուղարկուեցին ամէն տեղ, բայց այդ բոլորը՝ ինչ-պէս ասում են ռուսները, какъ горохъ объ стенку...

Բայց դառնանք Օլթիի պատմութեանը: Օլթին գրաւելուց մի երեք շաբաթ անց՝ մի խումբ զինուած մարդիկ յարձակուելով գաւառապետ Իզօ բէկի ոչխարի հօտի վերայ, սպաննում են նորա երկու քուրդ հովիւներին, և քշում տանում են Իզօ բէկի 800 ոչխարը:

Գաւառապետի մարդիկը յետամուտ լինելով աւազակներին՝ հասնում են նոցա և բռնում 12 հոգի հայ զինուորներ և նոցա վաշտապետ մի հայ սպայ...

Այդ վաշտը գաստրօլների էր եկել Սարիղամիշից 4-րդ հետևակ գնդից, որի հրամանատարն էր ռուսախօս յայտնի գնդապետ Միրիմանով: Այդ այն դասալիքներն էին՝ որոնց մասին գեներալ Փիրումով հեռագիրներ էր ուղարկում Երևան, և գանգատւում Սպարապետին, որ Կարսի նահանգապետը միջոցներ չի ձեռք առնում դասալիքութեան դէմ...

Այդ մեծ և խայտառակ դէպքի մասին էլ արձանագրութիւն կազմուեց, ձերբակալուած աւազակները յանձնուեցին զինուորական «իշխանութեանը», հաղորդուեց դատաստանական քննիչին: Արձանագրութեան պատճէները ուղարկուեցին զօրաց և արդարադատութեան մինիստրներին և գեներալ Փիրումովին: Բայց այդ դէպքն էլ ի հարկէ մնաց առանց հետևանքի: Զօրաց, նաև ներքին գործոց մինիստր Ռուբէն փաշան՝ հրապուրուած իր գեներալ-գնդապետների անզուգական «յաղթութիւններով», որը միևնոյն ժամանակ և իր յաղթութիւնն էր՝ չէր շռայլում իր մտատանջ ուշադրութիւնը այդօրինակ մանր-մունր արկածներին:

Բայց ես դեռ ամիսներ առաջ, երբ զինուորականների սխրագործութիւնները սկսեցին օրեցօր աճել և բազմանալ, նախատեսնելով գալիք բարդութիւնները՝ պատուիրեցի իմ դիւանապետին զինուորականների գործած բոլոր ոճիրների մասին ունենալ յատուկ մատեան, որպէսզի ամէն րոպէ երբ այդ պէտք լինէր՝ կարելի լինի լրիւ պատկեր ստանալ նոցա յաղթական քաջագործութիւնների մասին: Ըստ աստիճանների՝ հրամանատար կազմը բաժանել էր իրար մէջ «ազդեցութիւնների զօնաները», և ամէն մէկը գծել էր իր տնտեսական իրաւասութեան սահմանը:

Որպէս նմուշ՝ արձանագրում եմ Դիմուր-կապի կայանի էտապի կօմենդանտի գործունէութիւնը: Այդ զօրակայանը գտնւում է Կարս-Մերդենեք մեծ խճուղու վերայ, և այդտեղից շարունակ գնում և գալիս էին զինուորականները, զինուո-

ական սայլերը, և առհասարակ կատարւում էր Արդահան-Օլթի-Կարսի միջև մեր երթևեկութիւնը: Այդ կօմենդատը՝ մի հայ սպայ, իրան էր վերապահել բոլոր մօտակայ քուրդ գիւղերի վերայ իշխելու բացառիկ իրաւունքը: Նա հերթով և հերթից դուրս գիւղերից տաւար, ոչխար, հաց, իւղ, պանիր էր պահանջում՝ «անցնող զինուորութեան համար», և այդ բոլորը ի հարկէ ձրի: Թէ ո՞ւր էր ուղարկում կօմենդանտը այդ բոլորը, և ում անունով՝ դա «ռազմական» գաղտնիք էր, որով այնպէս զրահաւորուած էր իր գործելակերպում հայկական զինուորական իշխանութիւնը, և ոչ ոք այդ գաղտնիքը չը գիտէր ի հարկէ: Յայտնի էր միայն, որ այդ սպայի շուրջը վխտում էին Կարսից, Աղէքսանդրապօլից և Երևանից եկած ինչ-որ «տղերք», և ռեալիզացիայի ենթարկում այդ «պատերազմական պարտադիր տուրքը»: Բայց սպան չը բաւականացաւ միայն իր այդ «իրաւունքներով»: Նա ծեծի, բռնութեան և վերջապէս սպաննութիւնների ենթարկեց այդ թշուառ քրդերին: Արձանագրուեց և այդ բոլորը՝ ուղարկուեց ուր հարկն է: Զինուորական իշխանութիւնը իմ բազմաթիւ հեռագիրներից յետոյ խնդիրը փակելու համար՝ փոխադրեց այդ ախորժակալից սպային մի այլ տեղ միայն...

Մի այլ կօմենդանտ, մի ռուսախօս գնդապետ Սերմաքեշով ազգանունով՝ Մերդենեկի շուրջը սփռուած բոլոր յոյն և քուրդ գիւղերը իր հպատակ ճորտեր համարելով, առանց քաղաքացիական իշխանութեան դիմելու՝ սայլեր էր պահանջել մի գիւղից ինչ-որ զինուորական ծանրութիւններ փոխադրելու համար, և երբ սայլերը մի փոքր ուշացել էին՝ քաջարի գնդապետը կարգադրել էր թնդանօթով ռմբագոծել այդ գիւղը, հիմնայատակ անելով այդ վայրը: Եւ քրդերը թողնելով տուն և տեղ՝ փախել էին լեռները: Ես հեռագրեցի այդ մասին Երևան, և զօրաց այն ժամանակուայ մինիստր Ռուբէն փաշան ուղարկել էր իմ այդ հեռագիրը գեներալ Փիրումովի «հայեցողութեանը»: Թէ ի՞նչ արեց այդ հեռագրի առիթով Կարսի և Սարդարապատի հռչակաւոր հերոսը՝ չը գիտեմ, գիտեմ միայն, որ ռուսախօս գնդապետը մինչև վերջը մնաց իր տեղում, և մեծ ջատագով զբաղուած էր իր ոչխարի հօտով և այլ դիզած հարստութիւնով: Եւ մենք թնդանօթի էինք բռնում, ռմբակոծում էինք խաղաղ քուրդ ազգաբնակութիւնը այն օրերում՝ երբ մենք անցնում էինք Օլթի, երբ մենք տանում էինք այդ քրդական գաւառը հայկական իշխանութիւնը և մեր խաղաղ-քաղաքացիական տրամադրութիւնը: Մի այլ գնդապետ Մազմանով ազգանունով՝ Սերմաքեշովից առաջ, երբ ամէնուրէք միանգամայն հանգիստ ու խաղաղ էր՝ արձակեց հետևեալ գրաւոր հրամանը, որի պատճէն, ի գիտութիւն և ի կատարում ուղարկեց Արդահանի գաւառապետին: «Իմ ունեցած տեղեկութիւններով՝ Արդահանի իսլամ ազգաբնակութիւնը տոգորուած է հակայեղափոխական զգացմունքներով, այդ պատճառով ես՝ այս տարածութեան գարնիզօնի պետը, որոշեցի Արդահանի գաւառում պատերազմական դրութիւն յայտարարել, և ենթարկել ինձ գաւառի ամբողջ քաղաքացիական իշխանութիւնը»: Այդ զաւեշտ և ծաղրածու հրամանի պատճէն, որ ես ստա-

ցել էի Արդահանի գաւառապետից՝ ես ներկայացրեցի մինիստր նախագահին, և ստիպուած էի ծանրանալ այն տարրական հիմունքների վերայ, որ օրէնսդիր ակտերը՝ որոնց թուին պէտք է կցել գնդապետի և այդ հոչակաւոր հրամանը, վերապահուած են միայն պետութեան գերագոյն իշխանութեանը՝ ի դէմս պարլամենտի: Եւ ի՞նչ դրութեան մէջ կը լինի երկիրը՝ գրում էի ես մինիստր նախագահին, եթէ ամէն մի անգրագէտ գնդապետ՝ որոնցով այնչափ հարուստ է հայկական բանակը, օրէնսդիր փորձեր անէ մեր գլխին... Ես միջնորդում էի մինիստր նախագահի առաջ վճռական միջոցներ ձեռք առնել՝ ազատելու երկիրը այդ զաւեշտ էքսպերիմենտներից, և փրկելու պետութեան պատիւը գէթ այլազգիների առաջ...

Զինուորական մինիստրը միայն բեկանեց գնդապետի այդ հրամանը, իսկ ինքը՝ գնդապետը, մնաց իր տեղում և շարունակում էր գնդապետի ուսադիրների տակ պարապել իր տնտեսութեամբ, թալանով, առևտրով, բայց ո՛չ պետական և զինուորական գործով: Բայց այդ մասին իր տեղում: Մենք գրաւեցինք Օլթին ամառը՝ երբ հացը ու միրգը հասել էին: Բերքը այդ տարի Օլթի գաւառում զարմանալի առատ էր: Ազգաբնակութիւնը թալանուած և կեղեքուած՝ փախել, գնացել էր, թողնելով հասած արտերը, այգիները և ագարակները: Ես միջոցներ ձեռք առայ փախած ազգաբնակութիւնը վերադարձնելու՝ բայց և այդ հարցում հանդիպեցի մեծ արգելքի: Օլթիի գարնիզօնի բոլոր զինուորութիւնը՝ կամաւորները, շարքային զինուորից սկսած մինչև հրամանատար բարձր աստիճանները, բերել էին այնտեղ իրանց ազգականներին և բարեկամներին Կարսից, Աղէքսանդրապօլից, Դիլիջանից, Ղարաքիլիսայից, Երևանից և նոյնիսկ Թիֆլիզից: Եւ այդ մեծ, խայտաճամուկ բազմութիւնը՝ եռանդուն հնձում էր հացը, քաղում այգիները, ագարակները, և սայլերով, ֆուրգօններով ու բեռներով, որպէս «պատերազմական աւար»՝ զինուորների ուղեկցութեամբ տանում, շարունակ կրում էին այդ մեծաքանակ հարստութիւնը: Եւ ո՞ւմ դէմ ես պէտք է կռուէի, ամբո՞ղջ հայկական բանակի...

Այդ պայմաններում, մեր զօրաբանակի հրամանատար կազմը գործ էր դնում բոլոր միջոցները՝ արգելելու փախած ազգաբնակութեանը տուն վերադառնալու, մինչև որ գաւառի այդ մեծ հարստութիւնը համայնօրէն ի հարկէ իրանք կը հնձեն, կը հաւաքեն և կը տանեն շուկաները վաճառելու:

Այդ անյուսալի դրութիւնը ստիպեց ինձ միջնորդելու կառավարութեան առաջ, որ այդ լքուած գիւղերի հարստութիւնը գէթ յարքունիս գրաւուի: Ես միջնորդում էի կազմակերպել միջվարչական մի մարմին՝ որին և յանձնել այդ հարստութեան ժողովելու մեծ գործը: Կառավարութիւնը այդ գործը յանձնեց պարլամենտի անդամ Արտ. Աբեղեանին: Բայց ոյժը զինուորականների ձեռքում լինելով՝ նրանք իրանց գումարտակները և գնդերը բացառապէս զբաղեցրին այդ հարստութեան ժողովելու գործով: Անտես առնելով պատգամաւոր Աբեղեանի գրաւոր

և բերանացի բոլոր դիմումները և բողոքները, ոչ մի հաշուի չառնելով պարլամենտի պատգամաւորին՝ զինուորականները քաշեցին դէպի Կարս, Աղէքսանդրապոլ գաւառի ամբողջ հարստութիւնը՝ ու բաժին բաժին արեցին... Կարսից մինչև Օլթի տարածութ-իւնը գտնուում էր ամբողջովին զինուորականների ձեռքում: Այդ առանցքում վխտում էին հազարաւոր մութ մարդիկ, բոլորն էլ վկայականներ ունէին գեներալներից և գնդապետներից, և բոլորը կրում էին և բոլորը շտապում: Երկրի ժողովուրդը այդ օրերում բոլորովին կղզիացել էր, քաշուել այդ ճանապարհից՝ որովհետև անցուդարձ անող այդ «զինուորականները» թալանում էին խաղաղ անցորդներին և բռնութիւն գործ դնում: Թուրք և քուրդ գիւղերը, որ ընկած էին այդ ուղղութեամբ՝ ենթարկւում էին սիստեմատիկ թալանի ու բռնութեան: Գալիս էին անընդհատ սպաներ և զինուորներ, պահանջում էին տաւար, ոչխար, իւղ, բուրդ՝ և շարունակ տանում ու տանում: Տարի ու կէս ժամանակամիջոցի ընթացքում ես հարիւրաւոր անգամ գրաւոր դիմել եմ Երևան, և միջնորդել, որ զօրամասերը ունեն մթերք մատակարարող իրանց կապալառուները՝ որպէսզի սպաները իրանք չը կատարեն գիւղերում գնումներ: Այդ գնումները շատ շահաւետ էին սպաների համար՝ բայց ոչ ժողովրդի, զինուորի և հայկական գանձարանի համար...

Բայց տնտեսութեան կապալառու եղանակը հրապարակական էր և կօնտրօլի ենթակայ՝ ցանկալի չէր հրամանատար կազմի համար, և զինուորական իշխանութիւնը գերադասում էր ինքը կատարել այդ գնումները, բայց վերջ ի վերջոյ պարզուեց, որ այդ գնումները, այն էլ ամենալաւ դէպքում՝ կատարւում են ոչ թէ շուկայի գնով, այլ այն գներով, որ առաջարկում է գնող սպան, իր յետևում ունենալով մի քանի զինուած զինուորներ... Եւ գիւղացիները ստիպուած էին լինում ծախելու իրանց հարստութիւնը այն կոպեկներով, որ սպառնալից սպան տալիս էր նոցա այս կամ այն մթերքը նոցանից «գնելով»: Հազիւ թէ պէտք է ասել, որ այդ մթնոլորտում գնողի հաշիւները ոչ մի հաշուետուութեան չեն ենթարկւում, և այդ անեզր կամայականութիւն էր և անծայր զեղծում... Բայց իմ բուռն այդ առիթով բողոքները Երևան, որ շօշափում էին այդ գեներալների սպաների հաշիւները՝ մնացին առանց հետևանքի: Կարսի հրամանատարութիւնը ասում էր, որ կապալառուներ չեն կարողանում գտնել, և ամէն մի գլխապետ, գնդապետ և վաշտապետ՝ ինքն էր իւր զօրամասի համար գնումներ կատարում և ներկայեցնում էր իր հաշիւները, որտեղ ամէն բան կար՝ բացի ի հարկէ ճշմարտութիւնից և ճշտութիւնից: Ժողովրդի հազարաւոր այդ առիթով բերանացի, գրաւոր և հեռագրական բողոքները՝ ոչ մի հետևանք չունեցան: Գիւղական հասարակութիւնները աղերսում էին, որ մթերքների պահանջը զօրամասերը անեն տեղական քաղաքացիական իշխանութեան ...

– Ի՞նչ էք կամենում պ. գլխապետ,– դիմեցի ես սպային:

– Խնդրում եմ պ. նահանգապետ, հրամայել տեղական իշխանութեանը՝ աջակցել ինձ զօրամասերի համար տաւար ձեռք բերել:

– Ես կարծում եմ, - պատասխանեցի ես,– որ ադմինիստրացիան գիտէ իր պարտաւորութիւնները, և այդ տարրական խնդիրներում բարձր իշխանութեան միջամտութիւնը աւելորդ է:

Բայց յետոյ պարզուեց, թէ ինչու էր սպան դիմում նահանգապետին: Գլխապետը բացատրեց, որ նա փող չունի գնումների համար, և խնդրում է հրամայել քրդերին, որ նոքա ապառիկ տան տաւարը...

– Իսկ երաշխի՞ք,– հարցրեցի ես սպային,– ո՞ւր է Ձեր գնդի ժապաւինեալ մատեանը, անդորրագրերը...

– Ես,– կմկմաց գլխապետը,– մատիտով մասնաւոր ստացական կը տամ...

Ինձ մնում էր միայն ծիծաղել այդ միամիտ և յանդուգն թալանչու վերայ, և ես ցոյց տալով պարլամենտի անդամին դարձեալ մի ապացոյց այն պայմանների՝ որոնց մթնոլորտում մենք կոչուած ենք իրաւակարգ հաստատելու երկրում, խնդրեցի և այդ դէպքը պատմել կարող և կառավարչական շրջաններում:

Հայկական իշխանութեան տարի ու կէս տիրապետութեան ընթացքում Կարսի նահանգում՝ այդ բազմաթիւ սպաները ընկած այս, այն քրդի գիւղը, շարունակ տարել են այդօրինակ «ստացականներով» «զօրքի» համար, մեծաքանակ տաւար, ոչխար, իւղ և այլ մթերք:

Ես պատրաստւում էի մի յանձնաժողով ուղարկել նահանգի բոլոր գաւառները՝ ժողովելու այդ «ստացականները», և արձանագրելու այդ բոլոր դէպքերը, երբ այդ սպաները «զօրքի» համար «գնումներ» էին արել: Եւ եթէ «զօրքի» համար 5 տաւար էր պէտք՝ գլխապետը քշում տանում էր 25...

Այդ մթնոլորտում չէր կարող հաւատ և պատկառանք առաջ գալ դէպի երկրի ոյժը, զինուորական իշխանութիւնը, և նահանգի այդ վերաբերմունքը դէպի մեր սպայութիւնը անդրադառնում էր ի հարկէ և դէպի կառավարութիւնը:

Ամէն անգամ, երբ ես առիթ էի ունենում շրջելու նահանգը՝ և շատ անգամ Երևանից եկած կառավարութեան անդամների հետ, ամէն անգամ և ամէն տեղ ժողովուրդը մեզ դիմաւորելուց, պատուելուց և մեծարելուց յետոյ՝ աղերսում էր ազատել երկիրը զօրքի, ի դէմս սպայութեան՝ բռնութիւններից, կամայականութիւնից ու թալանից:

Եւ ամէն անգամ խոստումներ տալով, որ այդ բոլոր ապօրինութիւնները խիստ կը քննուեն և կը պատժուեն՝ մենք նորից վերադառնում էինք նոյն գիւղերը, նոյն գանգատները լսելու, ամաչելու ու կարմրելու և նորից նոյն խոստումները անելու...

Երբ մինիստր նախագահ Խատիսեան այցելեց Կարսի նահանգը՝ ազգաբնակութիւնը, առանց ազգերի խտրութեան՝ մանաւանդ քրդերն ու թուրքերը, արքայական ընդունելութիւն ցոյց տուեց կառավարութեան նախագահին, և

ամէն տեղ խնդրում էր յանձնարարել զօրքի մթերքի պահանջը կանոնաւորել, և ազատել երկիրը քմահաճ պահանջներից: Մինիստր նախագահն էլ խոստացաւ անել հարկաւոր կարգադրութիւն՝ բայց զինուորական իշխանութիւնը նախամեծար էր մեզանում, նա ռուսախօս էր իր հրամանատար կազմով, իր բնոյթով և տենչանքներով, և հայ կառավարութիւնը գերի նորա ձեռքում՝ ստիպուած էր թիաւարելու աջ ու ձախ, առանց կօմպասի, առանց ուղեցոյցի և առանց հեղինակութեան...

Բայց այդ բոլորի մասին իր տեղում:

Գեներալները մարտնչում էին նահանգապետի հետ և այդ ուղութեամբ կրթում իրանց ենթակայ սպայութիւնը: Իսկ գնդապետները, գլխապետները՝ գաւառներում հաշուի էին բռնւում գաւառապետների և նոցա ենթակայ աստիճանաւորների հետ:

Այդ սպաները իրանց հերթին միջամտում էին նահանգի քաղաքացիական գործերին, բանտարկութիւններ էին կատարում, ծեծում մարդկանց, տուգանում դէպի իրանց գրպանները, գրաւոր «հրամաններ» արձակում պաշտօնով և աստիճանով իրանց հաւասար, իսկ երբեմն և իրանցից բարձր ադմինիստրատիւ պաշտօնեաներին, և միջոցներ էին որոնում՝ ձգելու քաղաքացիական իշխանութեան վարկը, երերելու երկրի իրաւակարգը, և այդ առանցքում՝ անարգելք կատարելու համար իրանց «բռնագրաւումները», թալանը և զեղծումները: Օլթիի համար կազմակերպուած «կամաւորական» վաշտերի պետերը իրանց թիկնապահներով, աւազակներով՝ Օլթիի թալաններից յետոյ շարունակ ապրում էին Կարսում: Նրանք դեռ հաշւում էին «ծառայութեան» մէջ, շրջում էին գաւառները, կեղեքում քուրդ, թուրք և յոյն գիւղերը, և աւարով վերադառնալով Կարս՝ հիւրանոցներում վատնում էին շատ մեծ գումարներ, հիւրասիրելով գեներալներին և նոցա արբանեակներին և մինչև ի լոյս զուռնայով պարելով...

Պատմում էին, որ այդ բոլոր «զինուորականները» այդ զեխութեան ընդմիջումներում թուղթ խաղալով՝ տանում և տարւում էին միլիոններ...

Այդպէս շահալից էր Օլթին, և այն քուրդ գիւղերը՝ ուր այդ ասպետները շարունակ «բռնագրաւում էին», շարունակ «ռմբակոծում» և շարունակ «պատերազմական դրութիւն» յայտարարում... Շատ և շատ հետաքրքիր է, որ զինուորականները, իրանք թալանով և կողոպուտով զբաղուելով՝ այստեղ ու այնտեղ տարածում էին, որ այդ թալանչիները թիւրքահայերն են, «մաուզերիստները», և «առհասարակ դաշնակցականները»: Բայց այդ խմորը զինուորականները հունցում էին ոչ հայ հասարակութեան համար ի հարկէ: «Հայաստանի» օրերը հաշուած համարելով՝ նորանք վերապրում էին արդէն ռուսների վերստին վերադարձի նախօրեակը, և այդ իմաստով նրանք տրամադրութիւն էին պատրաստում ռուս և մեր հակազգային մթնոլորտում: Շատ դէպքերում ի հարկէ այդ հրապարակում փայլել են և «մաուզերիստները», բայց չը պէտք է մոռանալ, որ այդ «մա-

ուզերիստները» հենց իրանք՝ այդ հայ սպաներն էին, կամ նոցա թիկնապահները: Եւ երբ այդ աւազակութիւնը բռնկել էր արդէն մթնոլորտը՝ գեներալ Փիրումով ուղարկում է զօրաց մինիստրին հետևեալ հեռագիրը. «Թալանը և կեղեքումը Կարսի նահանգում մեծ չափերի է հասել: Քաղաքացիական իշխանութիւնը անզօր է, պէտք է գեներալ նահանգապետութիւն հաստատել» (այսինքն՝ իր ձեռքը յանձնել երկրի և քաղաքացիական իշխանութիւնը):

Այդ հեռագիրը միայն ի գիտութիւն՝ ներքին գործոց մինիստրը ուղարկել էր ինձ:

Բայց ես հարկաւոր համարեցի մի երկար բացատրութիւն մեղադրական ակտ ուղարկելու այդ առիթով ներքին գործոց մինիստրին, և պատճէն՝ զօրաց մինիստրին:

Ինչպէս յիշում էք, իւր ժամանակին ես պատուիրել էի զինուորականների կատարած բոլոր քաջագործութիւնները առանձին ցուցակագրել, և այդ տեղեկութ-իւնները պէտք եկան հիմա: Այդ ցուցակից երևաց, որ գեներալ Փիրումովի ցոյց տուած ժամանակամիջոցում՝ զանազան աստիճանների սպաները և նոցա զինուորները կատարել են Կարսի նահանգում ոչ աւելի և ոչ պակաս 75 ոճիր, սպաննութիւն, թալան, զեղծումներ, բռնութիւն և այլն, որոնց մասին իւր ժամանակին հաղորդուել է թէ իրան՝ գեներալին, որպէս զօրքերի հրամանատարին, թէ դատաստանական իշխանութեանը և թէ զօրաց ու ներքին գործոց մինիստրներին: Բայց այդ 75 թալանը, սպանութիւնները և այլ բռնութիւնները մեր հրամանատար կազմը նահանգում կատարել էր միայն վերջի երկու ամսուայ ընթացքում, հետևապէս հետաքրքիր կը լինէր թերթել նախորդ ժամանակամիջոցի պատմութիւնը...

Կցելով իմ այդ գրութեանը այդ ցուցակի պատճէն, ես գրեցի մինիստրին մօտաւորապէս հետևեալը. «Նահանգի իրաւակարգի հսկողութիւնը պատկանում է նահանգի ադմինիստրատիւ և դատաստանական իշխանութիւններին, և ինձ համար պարզ չէ՝ թէ ի՞նչ դերում է հանդէս գալիս այստեղ զօրքերի հրամանատար գեներալ Փիրումով:

Այս գրութեանս կցուած տեղեկութիւններից դուք կը տեսնէք, որ գեներալ Փիրումովի մատնանշած ժամանակամիջոցում՝ նորին գերազանցութեանը ենթակայ սպաները և զինուորները գործել են նահանգում 75 ոճիր, որոնց մասին իմ բազմաթիւ գրութիւններից իրազեկ պէտք է լինի թէ զօրքերի հրամանատար գեն. Փիրումով և թէ դուք:

Եւ այդ այդպէս լինելուց յետոյ, ես դժուարանում եմ պարզել ինձ, թէ ո՞ր ոճիրների մասին է խօսքը գեներալի հեռագրում, այն սպաննութիւնների, թալանների և զեղծումների մասին, որ կատարել են նորին գերազանցութեանը ենթակայ պաշտօնեաները՝ թէ որևէ այլ ոճիրների, որոնց մասին ես տեղեկութիւն չունեմ... Եւ ես կարծում եմ, աւելացրեցի ես, որ գեներալին աւելի պատշաճ կը

լինէր հսկել իր հոգսերին յանձնուած զօրքի անցուդարձը, թողնելով նահանգի իրաւակարգի խնդիրը իրաւասու և պատշաճ իշխանութեանը... »

Այլայլուեց արդէօ՞ք զօրաց և այն ժամանակուայ նաև ներքին գործոց մինիստրը՝ Ռուբէն փաշան, կարդալով այդ տողերը, չը գիտեմ, որպէս առհասարակ չը գիտեմ՝ կարդո՞ւմ էր նա առհասարակ նահանգապետի որևէ գրութիւնները:

Ես օգտւում եմ դէպքից ասելու այստեղ, որ ներքին գործոց մինիստրի կողմից ինձ ուղղուած գրութիւնները և նոյնիսկ հեռագիրները՝ Ռուբէն փաշայի հարստութեան օրով, ստորագրում էին բազմաթիւ մարդիկ, բացի իրանից՝ մինիստրից:

Բացի մի երկուսից՝ այդ ստորագրութիւնները ինձ միանգամայն անծանօթ էին: Եւ ես դժուարանում էի շատ անգամ ասելու մինիստրական լուրջ և կարևորագոյն ակտեր էին այդ շատ անգամ վայրիվերոյ կազմուած և անգրագէտ խմբագրուած գրութիւնները, թէ պատահական թերթիկներ՝ որոնք կրում էին ի տեղի մինիստրի պատահական մարդկանց ստորագրութիւնները, նահանգապետին միանգամայն անծանօթ:

Յամենայն դէպս, Կարսի նահանգապետը չարժանացաւ ստանալու գէթ մի անգամ այդ «հռչակաւոր» փաշայի ստորագրութեամբ մի որևէ գրութիւն, կամ հեռագիր: Եւ թողնելով վերջին անգամ Կարսը՝ ես բազմաթիւ հանելուկների թւում տանում էի հետս և մի շատ մեծ հարցական նշան, գրագէ՞տ էր արդէօք Հայաստանի ներքին գործոց նաև զօրաց մինիստր Ռուբէն փաշան, թէ ոչ... Չը գիտեմ, ի հարկէ յայտնի էր այդ մինիստր փաշային, որ թէ էթիկ և թէ ի պաշտօնէ՝ մինիստրը իր երկու ծանրալից պօրտֆելներով հանդերձ, պարտաւոր էր ինքը ստորագրելու նահանգապետին ուղղուած գէթ կարևորագոյն և գաղտնի գրութիւնները ու հեռագիրները: Գէթ այդպէս է ընդունուած պետական անցուդարձում: Իսկ եթէ նկատի առնելու լինենք, որ Կարսի նահանգը առանձնակի նշանակութիւն ունեցող վայր էր մեզ համար, որ գրեթէ մինչև վերջը Հայաստանում կար մի նահանգ՝ և այդ Կարսի նահանգն էր, մենք կարծում ենք, որչափ և հոգսալից լինէր Հայաստանի դիկտատորը՝ այնուամենայնիւ նա ոչ միայն կարող էր, այլև պարտաւոր էր Կարսի նահանգապետի հետ անմիջական գրաւոր ...

պէտք է ձեռք առնել արմատական միջոցներ: Եւ այդ բոլոր հիմունքներով, գեներալները խնդրում էին ինձ որևէ պատրուակով կոչել ինձ մօտ՝ Կարս, Օլթիի գաւառապետ Իզօ բէկին և մի 50 նշանաւոր, անուանի քրդեր, և բոլորին բանտարկել: Իսկ յետոյ հեղինակալից շարունակեցին գեներալները մէկը միւսին խանգարելով, և ամէն մէկը իրան վերագրելով այդ հանճարեղ միտքը՝ իսկ յետոյ հաւաքել Օլթիի մնացած ազգաբնակութեան բոլոր արու 15 տարեկան հասակից սկսած մահմեդական ազգաբնակութիւնը, և քշել ներս դէպի Կարս, Կարսի շրջանում տեղաւորացնելու համար... Միայն այդ «լուրջ» և «կտրուկ» միջոցը՝

համերգալից վերջացրեցին գեներալները, կարող է փրկել մեզ կրիտիկ դրութիւնից: Այդ նոր մտածուած աւանտիւրան այն չափ էլ չը զարմացրեց ինձ:

Ես հանգիստ պատասխանեցի գեներալներին, որ նոցա սպառնացող այդ վտանգի մասին ես ոչինչ չը գիտեմ: Ինձ յայտնի է միայն, որ զինուորութիւնը և սպայութիւնը բազմաթիւ արկածախնդիրների հետ միասին՝ սկզբից մինչև այսօր բռնանում և կեղեքում են երկիրը, որ գաւառապետ Իզօ բէկ երկու անգամ թալանուած է, որ նորան թալանողների թւում բռնուել է Սարիղամիշից յատկապէս Օլթի գաստրօլների եկած 4-րդ հետևակ գնդի մի սպան իր 12 զինուորներով, որ մեր այդ ամօթալի և աղաղակող վերաբերմունքը դէպի երկիրը՝ չէր կարող բնականաբար սիրելի դարձնել մեզ թուրք ազգաբնակութեանը: Գալով գաւառապետ Իզօ բէկին՝ ես ասացի, որ նորան ես պաշտօն տուեցի նաև գեներալների միջնորդութեան համաձայն, որ նորա գործունէութեան մէջ ես ոչ մի կասկածելի բան չեմ տեսնում, և դեռ երեկ այդ անուանի մարդուն գաւառապետ նշանակելով՝ այսօր բանտարկել նորան և այն էլ առանց փաստերի և հիմունքների, ես ոչ մի կերպ չեմ կարող: Ես չեմ կարող՝ աւելացրեցի ես, խաբել և այն 50 ազդեցիկ մարդկանց, հրաւիրել ինձ մօտ Կարս և բանտարկել:

Անհեթեթ եմ գտնում՝ ասացի, գեներալների և վերջի առաջարկը դէպի նահանգի խորքերը տեղափոխելու Օլթիի գաւառի ամբողջ արու ազգաբնակութիւնը: Մենք չը պէտք է մոռանանք մեր դրութիւնը Կարսի նահանգում: Մեր շուրջը 300 հազար թուրքութիւն է, այդպիսի մի մեծ հրդեհ վառելով հեռաւոր Օլթի գաւառում՝ մենք կը բռնկենք ոչ միայն տաճկական մեր սահմանը, այլև մեր ամբողջ թիկունքը՝ Կարսի նահանգը, և կարող ենք մի ակնթարթում համաճարակի զոհ դառնալ: Վերջապէս, ասացի ես, իսկ այդ ահռելի գաղթականութեան պարենաւորման խնդիրը, ինչո՞վ մենք պէտք է կերակրենք նոցա...

Այդ բոլոր պատճառներով՝ ես միանգամայն հրաժարուեցի կատարելու գեներալների աւանտիւր առաջարկը, և նորին գերազանցութիւններն էլ ընկճուած երևի իմ բացատրութիւններով՝ չառարկեցին այլևս և... համաձայնուեցին:

Գեներալների «քաղաքական» այդ նոր փորձերի մասին էլ ի հարկէ ես մանրամասն հաղորդեցի կառավարութեանը, և մի աւելորդ անգամ էլ ընդգծեցի, որ ամէն մարդ պէտք է իր գործով պարապէ: Ես նորից և նորից դարձնում էի կառավարութեան ուշադրութիւնը, որ զինուորականը պէտք է հրամանատարէ վաշտերի շարքերում միայն, թողնելով քաղաքական և վարչական խնդիրները իրաւասու և կարող մարդկանց...

Բայց գեներալներին իմ տուած պատասխանը այնուամենայնիւ չը սպառեց նոցա այդ ուղղութեամբ տրամադրութիւնը: Թալանի, զեղծումների և կեղեքումների պատմութիւնները շրջում էին հասարակութեան մէջ, անցնում էին Երևան՝ և վատ մթնոլորտ ստեղծում քաջարի գեներալների համար, որ դեռ երեկ թալանի բեմից վերադառնալով՝ այնպէս ուժգին թմբկահարում էին Օլթիում իրանց

տարած մեծ յաղթութեան մասին... Եւ այդ դրութիւնից դուրս գալու համար՝ գեներալները յղանում են մի նոր մեծ միտք: Եթէ մեզ պէտք էր խաղաղ երկիր և նահանգի հանգիստ անցուդարձ՝ նորին գերազանցութիւնները ծարաւի էին մեծ աղմուկ իրարանցման, ուր երեկուայ դէպքերը գունատւում էին և մոռացւում: Գեներալների քաղաքական կասկածները այս անգամ Օլթիից տեղափոխւում են թիկունք, դէպի Արդահանի գաւառը: Այդ գաւառը այն հեռաւոր վայրն է, ուր գեներալ Յովսէփեան մեր առաջի օրերում դաշտային դատարան կազմեց, տուգանքի էր ենթարկում ամբողջ գիւղեր՝ մեծ յուզմունք, մեծ խռովութիւն առաջ բերեց, և ստիպեց այն ժամանակուայ հայկական կաբինետը մի կողմից՝ զրկել նորան գեներալ-նահանգապետի տիտղոսից, և յանձնարարել գնդապետ Ղազարեանին քննել բազմաթիւ զեղծումները: Գնդապետ Ղազարեան, յետոյ գեներալ՝ պարզեց թալանը, զեղծումները, դէպի Աղէքսանդրապոլ քշուած կովերը՝ բայց թէ ուր խորասուզուեց այդ քննութիւնը իւր ժամանակին՝ այդ շատերին էր հետաքրքրում: Մի բան բոլորը տեսան, ոչ ոք այդ թալանի հերոսներից դատի չը տրուեց և բոլորը մնացին իրանց տեղերում շարունակելու նոյն գործը...:

Բայց այստեղ մենք հանդիպում ենք մի այլ խոշոր անձնաւորութեան, որի հետ մեր Կարսի գեներալները անընդհատ բայց անյաջող մարտնչեցին:

Դա Արդահանի գաւառապետ գնդապետ Կադիմովն է:

Կադիմով մահմեդական է, և ես նորան ճանաչում էի 20 տարուց աւել:

Տարիներ առաջ, երբ ես գաւառապետ էի՝ նա պաշտօնաւորել է ինձ մօտ: Նա շատ խելօք, հեռատես, տակտով մի անձնաւորութիւն էր: Ի նկատի ունենալով նորա անձնական, ոչ օրդինար այդ յատկութիւնները, Արդահանի գաւառի առանձնակի քաղաքական պայմանները, թուրք մթնոլորտը՝ ես նորան Արդահանի գաւառապետ նշանակեցի: Եւ նա մեծ վարպետութեամբ առաջ տարաւ գաւառի կառավարչական աշխատանքը: Նա հանգստացրեց գաւառի տենդոտ ազգային տրամադրութիւնը, իր ձեռքը ժողովեց երկրի ազդեցութիւնը, ձերբակալեց և յետապնդման ժամանակ գնդակահարել տուեց մի քանի թուրք նշանաւոր աւազակներ, որոնք, հերոսակախմբեր կազմելով ասպատակում էին այդ տարածութիւնը: Եւ այդպիսով, գնդապետ Կադիմով մի քանի ամսուայ ընթացքում մեծ հեղինակութիւն և դիրք ստեղծեց իր համար գաւառում, և անուն հանեց և Երևանում: Այդ հեռաւոր գաւառը, ուր ապրում են բազմաթիւ իսլամ ազգութիւններ՝ մի մութ և վայրենի երկիր է, ուր պէտք էր լուրջ և խիստ իշխանութիւն, և այդ իշխանութիւնը պատուով՝ երկրի կառավարութեան համար ներկայացնում էր գաւառապետ Կադիմով:

Նա մեծ ուշադրութեամբ էր վերաբերւում Արդահանում ապրող հատուկենտ հայերին, և միջոցներ էր ձեռք առնում վերադարձնելու Արդահանի ցիր ու ցան եղած հայ ազգաբնակութեանը: Նա աշխատում էր շրջապատել իրան հայ ջանասէր պաշտօնեաներով, և յաջող տանում էր մեր պետական կուրսը այդ բա-

ցառիկ թուրք գաւառում: Գնդապետ Կադիմով տեղեակ էր գաւառի բոլոր անցուդարձին, և կապեր ունէր և դրսի հետ: Արդահանի գաւառը, որ թուրք ամբոխի աչքում նախամեծար նշանակութիւն ունէր՝ օրինակ էր միւս թուրք վայրերի համար, և այդպիսով այնտեղ ստեղծուած հանգստութիւնը անդրադառնում էր նահանգի և միւս վայրերը:

Այդ յաջող դասաւորուող իրաւակարգը նահանգում՝ քուն և հանգիստ չէր տալիս Կարսի նախկին գեներալ նահանգապետ գեներալ Յովսէփեանին, իսկ նորան նմանուելով՝ և գեն. Փիրումովին:

Եւ զինուորական իշխանութիւնը օր ու գիշեր այդ գաւառապետի յետևից ընկած՝ միջոց էր որոնում ամբողջ ժամանակ տապալելու նորան, որպէսզի զրկի ինձ տեղեակ և կարող գործակցից: Բայց այստեղ մի ծածկագիր միջանկեալ էլ կար: Գեներալ Յովսէփեան ստիպուած էր ինչ գնով և լինէր այդ՝ տապալել գաւառապետ Կադիմովին, որովհետև նա թէ գեներալների և թէ նոցա բազմաթիւ զինակիցների թալանների ու զեղծումների գաղտնիքները գիտէր: Երբ մեր սկզբի օրերում Արդահանի գաւառում բռնուեց քուրդ-յունական պայքարը, և գեներալ Յովսէփեան՝ գեներալ նահանգապետի դերում, աջ ու ձախ ջարդում ու փշրում էր, Արդահանի գաւառում յայտնուեց մի աջարացի ազնուական, մահմեդական Աբաշիձէ, որ թէ քաղաքական գործակալ էր և թէ աւանտիւրիստ:

Գաւառապետ Կադիմով առերես մեծ բարեկամութիւն անելով նորա հետ՝ գաղտնի յետևում էր նորան, և երբ լիովին պարզուեց Աբաշիձէի դէմքը որպէս մեր իշխանութեան դէմ, յօգուտ և Վրաստանի և Թիւրքիայի գործակալի՝ Արդահանի գաւառապետը սուրհանդակով տեղեկացրեց ինձ այդ մասին: Բացի այդ, գնդապետ Կադիմով միջնորդում էր մի որևէ պատրուակով պահանջել Աբաշիձէին Կարս, և բանտարկել: Իսկ ինքը՝ գաւառապետը, շատ հասկանալի միտումներով, առերես բարեկամութիւն էր անում այդ իշխանի հետ, և նկատի ունենալով Աբաշիդձէի դիրքը, երկրի դեռ բորբոքալից տրամադրութիւնը՝ գաւառապետը չէր ուզում զրկել իրան մարդկանց վստահութիւնից, և այդ պատճառով չէր ուզում ինքը բանտարկէ Աբաշիդձէին: Գեներալ Յովսէփեան՝ տեղեկանալով, որ գաւառապետ Կադիմով բարեկամութիւն է անում Աբաշիդձէի հետ, և չը կարծելով, որ այդ բարեկամութիւնը միայն ծուղակ է իշխանի համար՝ տեղեկացնում է այդ մասին, գունաւորելով գործի իմաստը, Երևանի զինուորական խուզարկու բաժինը, և միջնորդում է բանտարկել գաւառապետ Կադիմովին՝ որպէս պետական դաւաճանի: Եւ զինուորական մինիստրը՝ իր մայրենի լեզուի հոլովներին այդ միանգամայն խորթ մարդը, առանց ստուգելու գործը, առանց այդ մասին գէթ տեղեկացնելու նահանգապետին, առանց վերջապէս այդ խնդիրը ըստ իրաւասութեան յանձնելու ներքին գործերի մինիստրին՝ հեռագրում է գեներալ Փիրումովին բանտարկել գաւառապետ Կադիմովին...

Բայց բնութիւնը սիրում է կարծես երբեմն ծաղրել մարդկանց, և համեմել նոցա ոճրագործ տրամադրութիւնը զաւեշտալից տեսիլներով: Եւ այն ժամանակ՝ երբ գեներալ Փիրումով ստանում է այդ զաւեշտ հեռագիրը, իշխան Աբաշիդձէն արդէն Կարսի բանտումն էր...

Բայց աւելի հետաքրքիրն այն էր, որ այդ բանտարկութիւնից յետոյ՝ գեներալ Յովսէփեան իր զայրութն էր յայտնում նահանգապետի կարգադրութեան առիթով, աշխատում էր հաւատացնել սորան և նորան, որ Աբաշիդձէն մեղաւոր չէ, և միջոցներ էր ձեռք առնում իշխանին բանտից ազատելու:

Այդպէս են մարդիկ իրանց փառասիրական ձգտումներում:

Դժուար էր ի հարկէ երևակայել աւելի յիմար դրութիւն գեներալների համար, բայց ուշագրաւ է, որ կառավարութիւնը ի դէմս ներքին գործոց մինիստրի՝ անուշադիր անցաւ այդ միջադէպի մօտով: Ներքին գործոց մինիստրը չառարկեց անգամ, որ զինուորական իշխանութիւնը խառնւում է ոչ իր գործին, և այդպիսով դրսում այն տպաւորութիւնն էր ստացւում, որ ամէն մի գլխապետ, գնդապետ և գեներալ՝ կարող է զբաղուել երկրի վարչական խնդիրներով: Եւ գեներալ Յովսէփեան՝ այդ դէպքից յետոյ չի վիատւում: Ի դէմս գաւառապետ Կադիմովի՝ նա մեծ խոչընդոտ է տեսնում վերստին գեներալ նահանգապետ լինելու Կարսի նահանգում, և նոր ու նոր դաւեր է ստեղծում այնուհետև Կադիմովի, նահանգապետի և նահանգի ամբողջ քաղաքացիական իշխանութեան դէմ: Նա նորից ու նորից տքնում է ապացուցանել, որ պէտք է ջարդել ու փշրելու քաղաքականութիւն՝ իսկ դորա համար անհրաժեշտ է վերականգնել զինուորական դրութիւն, և գեներալ նահանգապետի պաշտօնը: Եւ նորան մեծ չափով աջակցում է այդ ուղութեամբ՝ Հայկական գլխաւոր շտաբի գաղտնի, խուզարկու բաժինը: Բայց մի երկու խօսք էլ «հայկական» այդ բարձր, նուիրական հաստատութեան մասին: Հայ հասարակութիւնը երազել անգամ չէր կարող ի հարկէ, որ հայկական ազգային բանակի գլխաւոր շտաբը, նորա ամենանուիրական գաղտնի բաժնով՝ գտնւում է ռուս սպաների ձեռքում: Ճիշտ է, այնտեղ կային և հայկական ազգանուն ունեցող սպաներ՝ բայց նոցա իսկական դէմքը պարզուեց շատ շուտ:

Երբ ռուս բանակը վերստին գրաւեց Հայաստանը՝ այդ «հայերը» ձգեցին իրանց դիմակը, և հանդէս եկան իրանց իսկական անուններով...

Պէտք չէ ի հարկէ զարմանալ, որ այդ շտաբը միացած գեներալ Յովսէփեանների հետ՝ այնպէս եռանդոտ ընկել էին հայկական կառավարութեան յետևից, և իրանց թէ անձնական և թէ ռուս իդեալները ունենալով՝ տքնում էին խանգարել հայկական կառավարութեան օրինալից ընթացքը: Մենք զայրոյթալից կարող ենք զարմանալ միայն, որ այդ հայկական կառավարութիւնը ի դէմս այն մարդկանց, որ յամենայն դէպս մեծ ազգասէրներ էին, և անպայման գաղափարական դաշնակցականներ, *(տեքստը խզուած է)* ... տալիս մահմեդականին, այլև հաւատարմալից պաշտօնավարողին շնորհում է գնդապետի բարձր աստի-

ճան, նա միանգամայն խանգարեց դորանով զինուորականների քունը և հանգիստը:

Եւ գեներալները կրկնապատկեցին իրանց եռանդը նահանգի իրաւակարգը երերելու և ապացուցանելու, որ պէտք է հեռացնել նահանգապետին, և նահանգում զինուորական դրութիւն յայտարարելով՝ վերականգնեցնել գեներալ Յովսէփեանի գերագոյն իրաւունքները:

Բայց դառնանք Օլթիի պատմութեանը: Գաւառապետ Իզօ բէկին և Օլթիի անուանիներին բանտարկելու դաւադրութեան խորտակուելուց յետոյ՝ գեներալները մեծ դաւադրութիւն են գտնում Օլթիի թիկունքում, այժմ Արդահանի գաւառում: Եւ այդ դաւադրութեան ոգին է ի հարկէ գնդապետ Կադիմով՝ իր մարդկանցով:

Գեներալ Յովսէփեան դարձեալ «գաղտնի» տեղեկութիւններ է «ստանում», որ Արդահանի Արփաշէն քուրդ գիւղական հասարակութեան տանուտէրը՝ Բահրի բէկը, մի շատ հարուստ, անուանի և ազդեցիկ մարդ այդ գաւառում՝ դաւաճանել է մեր կառավարութեանը: Այդ Բահրին, մինիստր նախագահ Խատիսեանի գաւառ անցնելու ժամանակ՝ իմ միջնորդութեան համաձայն, պարգևատրւում է իւնկերի ուսադիրներով, և այդ բանը մի աւելորդ անգամ գրգրել էր մեր գեներալների մաղձը, այդչափ և միամիտ էին և այդչափ կարճատես...

Գլխաւոր շտաբը և նորա գաղտնի բաժանմունքը ես սկզբունքով չէի տալ ոչ ռուսի և ոչ էլ այն հայի ձեռքը, որ հայերէն չը գիտէ: Եւ թէ ի՞նչ էր մտածում այդ մոլեռանդ և ի ծայր ազգային իդեալներով տարուած գաղափարական դաշնակցութիւնը՝ մնում է մեզ համար այն հանելուկային գաղտնիքը, որ ունի երևի իր պսիխօզ բացատրութիւնը, և իր ժամանակի առանձնակի հոգեբանութիւնը:

Բայց Կադիմով լաւ վարչագէտ էր՝ և Արդահանում առայժմ մեզ պէտք գաւառապետ: Եւ այդ ոչ միայն իմ կարծիքն էր, որ ես հաղորդում էի Երևան՝ այլև կառավարութեան այն անդամների և հասարակական գործիչների կարծիքը, որոնք անձամբ առիթ էին ունենում անցնելու Արդահանի գաւառը և տեսնելու երկրի անցուդարձը:

Եւ ի վարձատրութիւն այդ աշխատանքի՝ մինիստրների խորհուրդը որոշեց շնորհել գաւառապետ Կադիմովին հայկական բանակի գնդապետի աստիճան: Եւ եթէ այդ ակտը ունէր նահանգում մեծ պետական նշանակութիւն, եթէ նա գալիս էր ասելու իսլամ երկրին, որ կառավարութիւնը ոչ մի խտրութիւն չի դնում ազգերի և կրօնների միջև, որ նա ոչ միայն գաւառապետի պաշտօն է *(տեքստը խզուած է)* ...

և այսօր, օգտուելով պատեհ օրերով, նա ուզում էր մի հարուածով տապալել ոչ միայն գաւառապետ Կադիմովին՝ այլև նորա մօտ գործակից, նորա անուանի տանուտէր Բահրի բէկին:

Թէ ի՞նչ դաւադրութիւն էր կազմակերպւում Արփաշէն գիւղում և թէ ի՞նչ միտումներ ունէր այդ Բահրին՝ ոչ ոք բացի մեր գեներալներից և նոցա արբանեակներից չը գիտէր ի հարկէ: Եւ գեներալ Յովսէփեան, փոխանակ հաղորդելու այդ իր «ստացած» տեղեկութիւնները ըստ պատկանելոյն նահանգապետին՝ ուզում է ինքը բացել այդ մեծ դաւադրութիւնը և ինքը փայլել: Եւ այդ միտումներով նա մի վաշտ զինուոր է ուղարկում գնդացիրներով Արփաշէն քուրդ գիւղը՝ հասարակական տանուտէր Բահրի բէկին բռնելու համար... Բահրի մի անուանի մարդ է, պաշտօնեայ, և նորան այդպէս դաւադիր կերպով բռնելու կարիք չը կար: Եթէ ենթադրելու լինենք նոյնիսկ, որ նորան պէտք էր բանտարկել՝ չէ՞ որ դորա համար կան օրինաւոր միջոցներ, կայ օրէնք, պատշաճ իշխանութիւն: Բայց գեներալը բոլոր գործերը իրաւասու էր համարում իրան, և ուզում էր բոլորին ենթարկել իրան:

Զինուորների այդ վաշտին թալանի հօտ առնելով՝ միանում են գեներալների և մի քանի տասնեակ «կամաւորները»: Բահրին բախտի բերմունքով՝ գիւղում չէր այդ օրը: Զօրամասը յարձակւում է Բահրու մեծ տան վերայ, աւերում տունը, կողոպտում թէ Բահրու և թէ նորա շուրջը գտնուող տները, և սպաննում երկու ծեր քուրդ: Իսկ դիւաւորուած քուրդ ազգաբնակութիւնը տեսնելով ձեռքի այդ պայթող ռումբերը՝ թողնում են գիւղը, և գլխովին փախչում լեռները: Իսկ վաշտը այդ «խիստ խուզարկութիւնը» կատարելուց յետոյ՝ մեծ «պատերազմական աւարով» վերադառնում է իր կայանը, և վաշտապետ սպան զեկուցում է իր մեծին, որ քրդերը ընդդիմադրութիւն ցոյց տուեցին վաշտին, կրակ բացեցին նորա վերայ և նա ստիպուած էր ռումբերով մաքրելու այդ «աւազակների» բոյնը: Իսկ տանուտէր Բահրին՝ գրում էր վաշտապետը, փախաւ իր գաւառապետի մօտ...

Ստանալով այդ զեկուցումը՝ գեներալ Յովսէփեան կարգադրում է մի աւելի ուժեղ զօրամաս ուղարկել այդ «անհպատակ» գիւղը, «խռովարարներին պատժելու» և ձերբակալելու համար, և այդ արշաւը յանձնում է գլխապետ Շահնազարովին:

Բախտի բերմամբ՝ այդ գլխապետը բանիմաց մի երիտասարդ, իրազեկ չէր գեներալի յետին մտքերին: Նա գալիս է Արփաշէն գիւղը, տեղեկանում է դրութեան մասին, հանգստացնում քրդերին, և ուղարկում գեներալ Յովսէփեանին հետևեալ հեռագիրը. «Եկայ Արփաշէն, բայց ոչ աւազակ գտայ և ոչ դաւադրութիւն ու հակառակութիւն, հանգստացրեցի քրդերին և վերադարձայ... »: Եւ երբ գեներալները այդչափ գաղտագողի էին կատարում իրանց դաւադիր յետապնդումները՝ ես պատուիրեցի Արդահանի գաւառապետին, Արփաշէն գիւղի վերայ յարձակում գործելու գործին օրինական ընթացք տալ, հաղորդել դատաստանական քննիչին: Բացի այդ, ես օգտուեցի դատաստանական պալատի անդամ Աբգարեանի ներկայութիւնից Կարսում, որ եկել էր ծանօթանալու նահանգի դատաստանական քննիչների գործունէութեան հետ, և խնդրեցի նորան անցնել

Արդահան և լոյս սփռել այդ մեծ ինտրիգ գործի վերայ: Պ. Աբգարեան կատարեց խնդիրս, յետախուզեց այդ մեծ աղմուկ գործը, և դաւադրութեան ոչ մի հիմք ի հարկէ չը գտաւ: Նա նորից տեսնում էր թէ ինչպէս զինուորականները միջամտում են ոչ իրանց իրաւասու գործերին, և մի աւելորդ ապացոյց էր գտնում, թէ ինչպէ՞ս այդ գնդապետ-գեներալները զբաղուելով քաղաքականութեամբ, վարչական և ոչ իրանց զինուորական գործով՝ խախտում էին երկրի իրաւակարգը և անիշխան մթնոլորտ ստեղծում:

Ես օգտուեցի դէպքից, որ այդ օրերում Կարսումն էր պարլամենտի անդամ Մաքսապետեան, և խնդրեցի նորան էլ անցնել Արդահանի գաւառը, և ի մօտոյ ծանօթանալ այդ ինտրիգալից գործին: Պ. Մաքսապետեան անցաւ այդ գաւառը, այցելեց թշուառ Արփաշէնը, ծանօթացաւ դրութեան հետ, տեսաւ ահաբեկուած քրդերին, ժողովեց բազմաթիւ փաստեր զինուորականների բռնութեան, թալանի և կեղծիքների մասին, բայց դաւադրութիւն այնուամենայնիւ չը գտաւ: Գեներալների այդ մեծահամբաւ հերթական պրովոկացիայի մասին ես երկար զեկուցում ուղարկեցի ներքին գործոց մինիստրին: Ես նորից ու նորից խնդրում էի ցոյց տալ այդ դեռ երեկուայ գլխապետներին իրանց տեղը, և ազատել երկիրը նոցա այդ քաղաքական և վարչական էքսպերիմենտներից: Բայց մինչ այդ, թալանը և բռնութիւնները շարունակւում էին տակաւին: Կամաւոր և կանոնաւոր զօրամասերը ընկած այս և այն գիւղը՝ «բռնագրաւում» էին ձի, տաւար: Օլթի-Մերդենեկի զօրամասերը զբաղուած էին բացառապէս իրանց անձնական տնտեսական հոգսերով, և գեներալները մոռացութեան էին տուել, որ մի քանի օր առաջ կարծեցեալ ապստամբութիւն սպասելով Օլթի գաւառում՝ նոքա պահանջում էին, որ նահանգապետը բանտարկէ այդ գաւառի նշանաւոր մարդկանց, իսկ մնացած արու ազգաբնակութիւնը գաղթեցնէ դէպի Կարս:

Երբ մեր այդտեղի սպայութիւնը շահագործելով զինուորութիւնը՝ աշխատեցնում էր նորան լքուած, անտէր գիւղերի հարստութիւնը կրելով, տաճիկ բաշիբոզուկները յարձակում գործելով մեր առաջաւոր դիրքերի վերայ՝ ուր զինուորները կամ բացակայ էին կամ քնած, տանում են մեր ութը թնդանօթը...

Գեներալները ծածկեցին ի հարկէ պատահարի իսկական բնոյթը, նրանք չը բացատրեցին, որ բաշիբոզուկները միայն օգտուեցին ստեղծուած պայմաններից, և յարձակուեցին մեր հրետանու վերայ այն ժամանակ՝ երբ նորա պահակները կամ բացակայ էին, կամ քնած: Մեր հրամանատարութիւնը այստեղ ևս կեղծեց իրականութիւնը, գեներալները հեռագրեցին Երևան, որ Օլթիի մեր առաջաւոր դիրքերի վերայ յարձակում գործեց տաճկաց կանոնաւոր զօրքը, բայց ի հարկէ «յետ շպռտուեց» մեր տաղանդաւոր և ռազմագէտ գեներալների ջանքերով...

Բայց ես գիտէի մանրամասնութիւնները, և թէ ինչումն է գործը: Ինձ վաղուց յայտնի էր, և ես շարունակ գրում, զեկուցանում էի Երևան այն մասին, որ մեր

հրամանատար կազմը շահագործում է մեր շարքային զինուորութիւնը իր անձնական օգուտների համար: Այդ մթնոլորտում հասարակ զինուորը չէր կարող պետական դաստիարակութիւն ստանալ, նա տեսնում էր մեծերի օրինակը, և իրան էլ ի հարկէ չէր մոռանում... Այդ առանցքում խօսք չէր կարող լինել զինուորական կորովի, գաղափարի մասին: Պետականութիւնը, հայրենիքը, ազգային պատուախնդրութիւնը արդէն խորթացած հեռաւոր ուրուականներ էին: Եւ ո՞վ պէտք է արծարծէր հայ զինուորին այդ բարձր գաղափարները՝ ռուսախօս և հայութիւնից միանգամայն օտարացած սպան, կամ այն գնդապետը, որ երազում էր նորից տեսնել ռուս իշխանութիւն և վաղեմի անցուդարձ...:

Օլթիի մեր առաջաւոր դիրքերի վերայ յարձակում գործեց մի խումբ բաշիբոզուկ՝ տեղացիների առաջնորդութեամբ:

Եւ այդ այն քրդերն էին՝ որոնք հրաւիրեցին մեզ Օլթի, և որոնց մենք թալանեցինք և փախուստի մատնեցինք հայրենի օջախներից: Այդ մարդիկ, որ թողել էին տուն, տեղ, հասած արտեր և այգիներ՝ չէին կարող լեռներում, բացօթեայ, հանդիսատես լինել, թէ ինչպէ՞ս մեր գլխապետ-գնդապետները գիշեր ու ցերեկ կրում են նոցա հարստութիւնը: Նրանք առիթ էին որոնում վրէժ առնելու, և յարձակում գործեցին մեր առաջաւոր դիրքերի վերայ: Դիրքերի պահակները քնած էին, և նոցա բաշիբոզուկները կոտորեցին: Մնում էին անտէր, անպաշտպան և երեսի վերայ ձգած թնդանօթները, և այդ հրետանին թիւրքերը տարան...

Այդչափ աչալուրջ էր մեր հրամանատար կազմը Տաճկաստանի սահմանում, և այդպէս ուշադիր էր նա դէպի 8 թնդանոթը, թողնելով այդ հրետանին քնած և յօգնած մի քանի զինուորի խնամքին... Այդ դէպքը, որ ես միայն պատահար կարող եմ անուանել՝ միանգամայն վարկաբեկեց սահմանում օտարների առաջ մեր զինուորական անփոյթ, անհոգ և ապիկար դրութիւնը: Երկիրը տեսաւ, որ սահմանագիծը տիրում է ոչ թէ պետական զօրքը՝ այլ մարդկանց մի բազմութիւն, որ զբաղուած է թալանով և կեղեքումով միայն: Եւ այդ զօրքը այլևս սպառնալից չէր, նա ինքն էլ կորցրել էր իր հաւատը դէպի իր կարողութիւնը, և այդտեղ խախտւում էին մեր պետականութեան արմատները:

Այդ տուեալների հիման վերայ՝ ես միւս օրը ուղարկեցի մինիստր նախագահին հետևեալ ծածկագիր հեռագիրը:

«Հաճեցէք միջնորդել կառավարութեան առաջ՝ յատուկ սենատօրական յանձնաժողով ուղարկել Օլթիի պատահարը լուսաբանելու համար: Եւ որովհետև այդ պատահարը ունի ոչ այնքան ռազմական՝ որքան սոսկ իրաւական և հասարակագիտական նշանակութիւն, ես միջնորդում եմ, որ կառավարչական այդ յանձնաժողովը բաղկացած լինի դատաստանական բարձր ատեանի անդամներից և իշխող կուսակցութեան լուրջ և հեղինակաւոր հաւատարմատարից: Շտապեցէք յարգելու խնդիրս, նկատի առնելով, որ օրինականութիւնը արդարադատութեան հիմունքն է»:

Ես կարծում էի, որ այս անգամ վերջապէս կառավարութիւնը ուշադրութիւն կը դարձնի և կը ստիպի զօրաց մինիստրին, այդ օրերի ամենակարող և թագաւորող Ռուբէն փաշային՝ վերջ տալ զինուորական այդ ուզուրպացիային:

Ես գիտէի միևնոյն ժամանակ, որ պարլամենտի մի խմբակցութիւն, որ այդ ժամանակամիջոցում այցելել էր Կարս՝ համամիտ ինձ հետ և ի ծայր զայրացած, խորհրդակցութիւն կայացրեց Կարսի նահանգում ստեղծուած դրութեան մասին, և լիազօրեց իրանցից երկուսին գնալ Երևան՝ և բուռն կերպով բողոքել զինուորականների այդ հակապետական և աւերիչ գործունէութեան դէմ: Եւ մենք օրեցօր սպասում էինք, որ գուցէ այժմ, այդչափ դառնութիւններից յետոյ՝ կառավարութիւնը կ՛ոլորէ իր ղեկը դէպի աջ, դէպի կարգ և օրէնք, և գէթ պետական սնանկութեան նախօրեակում՝ կը փրկէ դառնալից դրութիւնը:

Բայց մեր սպասելիքները ի զուր էին: Շրջապատուած ռուսախօս գեներալներով ու սպաներով՝ մեր նշանաւոր հայդուկը մոռացել էր կարծես վաղեմի երազները, և միանգամայն ընկնելով այդ օտարացածների ազդեցութեան տակ՝ նա յամառ ուղղում էր պետական ճկուն առագաստները միայն դէպի ժայռ և միայն դէպի կործանում...

Օլթիի պատահարը անգամ չը սթափեցրեց զինուորականներին: Այդ պատահարը, ամենակարողի երևի ձեռքով պատառեց զինուորականների դիմակը, և ի ցոյց բոլորի դրեց մեր ողորմելի պետական սնանկութիւնը: Ես ոչ միայն մեր առաջի օրուանից ...էի, տեղեակ և իրազեկ բոլոր գործերի և բոլոր անցուդարձին՝ ես 30 տարի զբաղուել եմ վարչական գործերով, իմ ամբողջ կեանքս գաւառում ապրել, ուսումնասիրել եմ գաւառական կեանքը: Ես դիտում էի մեր պետական ընթացքը իր ամբողջութեամբ, ես տարի ու կէս ժամանակամիջոցում մարտնչում էի յանուն իրաւակարգի և իրաւասութեան, բայց իմ այդ բոլոր բախումները մնացին առանց արձագանքի:

Օլթիի պատահարը մի յուսահատ տեսիլ էր, մի բարձր ճիչ՝ բայց նա կարող էր լինել և վերջին ազդանշան դէպի իրաւակարգ և դէպի պետական կուրս: Եւ այդ պատճառով ես մեծ յոյս ունէի, որ կառավարչական բարձր յանձնաժողովը, որի մասին ես միջնորդել էի ծածկագիր հեռագրով, պարզելով իրերի իսկական դրութիւնը՝ վերջ կը տայ զինուորական այդ աւանտիւրաներին: Այդ յանձնաժողովը կը տեսնէր, որ մենք գործ ունէինք մինչև այժմ ոչ թէ տաճկաց զօրամասերի հետ և ոչ այն թշնամու հետ, որ հակապետական է, նա կը համոզուէր, որ մենք գործ ունէինք այն բազմաթիւ մարդկանց հետ՝ որոնց մենք շարունակ կեղեքել ու շարունակ թալանել ենք:

Այդ յանձնաժողովը կը ցրէր վարակուած ու թունալից մթնոլորտը, նա կը հեռացնէր այդ անընդունակ և ողորմելի գեներալներին, նա գէթ կը ցրէր սպաների այն գիշատիչ բազմութիւնը, որ մեր զինուորական զրահի տակ միայն թալանել և կոփել են, և նա այդպիսով կը փրկէր դրութիւնը: Եւ անկասկած մենք

այդ ժամանակ այլևս չէինք նահանջի Մերդենեկից, մենք առանց որևէ պատճառի չէինք դատարկի Կաղզուանը, անտեսանելի թշնամու առջևից չէինք փախչի Կարակուրտից, և առանց որևէ տուեալների չէինք թողնի Սարիղամիշը, ամբողջ երկաթուղու գիծը, և առանց մի գնդակ անգամ արձակելու ամենաանամօթ կերպով անձնատուր չէինք լինի Կարսի անմատչելի և անառիկ պարիսպներում... Այդպէս էր իմ խորին համոզմունքը՝ յենուած փաստերի, դիտողութիւնների և մեծ փորձի վերայ: Բայց այդ բոլորի մասին իր տեղում:

Շատ հետաքրիր է, որ օրը ցերեկով թալանելով և կեղեքելով երկիրը, խախտելով իրաւակագը և երերելով այդպիսով պետականութեան հիմունքները՝ ասպետ գեներալ-սպաները շարունակ ինտրիգներ էին լարում նահանգի ադմինիստրացիայի դէմ: Սարիղամիշի և Մերդենեկի, օրինակի համար, զօրականների պետ գնդապետները՝ միահեծան իշխանութիւն էին անում ոչ միայն իրանց վաշտերում, այլև գաւառներում: Այդ գնդապետ-կապիտանները արհամարհալից տրամադրուած դէպի հայկական իշխանութիւնը, և անտես առնելով գաւառի ադմինիստրացիան՝ իրանք էին անում ինչ-որ պէտք էր իրենց: Նրանք հրամաններ էին արձակում անկախ ադմինիստրացիայից, սուինների ուժով ժողովրդից պահանջներ էին անում, քննութիւններ էին կատարում, մարդիկ ծեծում, գնդակահարում, խուզարկութիւններ կատարում, տուգանքում մարդկանց՝ և վերջապէս տանում էին մեզ դէպի ժամանակաշրջան, որ յամենայն դէպս մեզանից բաժանուած էր մի հարիւր տարով...

Ես պատուիրեցի ժողովել այդ «կարգադրութիւնների», «հրամանների», սպաննութիւնների, ծեծի, խուզարկութիւնների մի մեծ, խայտաճամուկ կապոց, դօկումենտներ, մօտ հարիւր թերթից բաղկացած պատմութիւն մեր օրերի ինկվիզիցիայի և Կարսի գաւառապետի աւագ օգնական Քեասօեանին, որ մի լուրջ դաշնակցական էր՝ յանձնարարեցի գնալ Երևան և ներկայացնել իմ այդ զեկուցումս փաստաթղթերի հետ Զօրաց մինիստր Ռուբէն փաշային:

Մեր ռամկամավար և դեմօկրատիկ օրերի համար նիւթերի այդ պիկանտ ժողովածուն յանձնուած էր Ռուբէն փաշային, և սուրհանդակ պաշտօնեան բացի այդ՝ լիազօրուած էր և բերանացի մանրամասն զեկուցելու մինիստրին այդ անցուդարձի մասին: Փաստերի և փաստաթղթերի այդ մեծ ժողովածուն մի պատրաստի մեղադրական ակտ էր, որի հիման վերայ ամէն մի աչալուրջ իշխանութիւն՝ մինչ դատարան կ՛արձակէր պաշտօններից այդ գնդապետներին: Բայց թէ ի՞նչ եղաւ այդ հետաքրքիր և յամենայն դէպս մեծ պատմական նշանակութիւն ունեցող դօկումենտների կապոցը՝ չը գիտեմ, կարող եմ այն միայն ասել, որ իմ այդ դիմումս էլ մնաց առանց որևէ հետևանքի, և այդ Յովսէփեանները, Փիրումովները, Միրիմանովները և Մազմանովները շարունակում էին «ընդհանուր» գործը: Խրախուսուած և քաջալերուած իրանց թիկունքում զգալով այնպիսի անխորտակելի ժայռ՝ որպէս ներքին և Զօրաց մինիստր Ռուբէն, այդ սպաներն ու

գեներալները շարունակում էին իրանց յաղթական արշաւը երկրի ներսում, ահաբեկելով և կեղեքելով քրդերին, թուրքերին և նոյնիսկ հայերին: Բայց այդ ժամանակամիջոցում պատահեց մի շատ հետաքրքիր դէպք:

Կարսի զինուորականները անդադար այստեղ ու այնտեղ բազմատեսակ լուրեր էին տարածում Կաղզուանի գաւառապետի մասին, և դիտաւորեալ պղտորում հրապարակի մտքերը: Ես քննութիւն նշանակեցի, հեռացրեցի գաւառապետին պաշտօնից՝ և գործը պատուիրեցի յանձնել դատաստանական քննիչին:

Այդ նախկին գաւառապետը ապաւինում է դաշնակցութեան լիդեր, քաղաքագլուխ Նոհրատեանին, որ իրան վերականգնեն իր նախկին պաշտօնում: Քաղաքագլուխը՝ Կարսի նահանգապետի պաշտօնի այդ թեկնածուն, խորհրդակցեց ի հարկէ գեներալների հետ, և նոքա վճռեցին օգտագործել այդ դէպքը դարձեալ մի աւելորդ անգամ յիշեցնելու Երևանը նահանգապետի մասին:

Գեներալների և քաղաքագլխի դաշնակցութիւնը ձգտում էր նուազացնելու երկրում նահանգապետի նշանակութիւնը, վերականգնել պաշտօնում մի մարդու՝ որին նահանգապետը արձակել էր պաշտօնից, և այդպիսով նահանգապետին ենթակայ պաշտօնեաների թւում ունենալ մի երախտապարտ մարդ, որ այնուհետև գործիք կը լինէր իրենց ձեռքում այդ նահանգապետի դէմ...

Եւ ի կատարումն այդ հեռանկարի՝ գեներալ Յովսէփեան գրում է գեներալ Փիրումովին հետևեալ զեկուցումը. «Մեծ ուշադրութեամբ ամբողջ ժամանակ դիտելով Կարսի նահանգի ադմինիստրացիայի գործունէութիւնը՝ ես տեսնում էի, որ այդ պաշտօնեաները գրեթէ բոլորը կաշառակեր, ապիկար և անպէտք էին, և մարդկանց այդ մեծ բազմութեան մէջ՝ ես տեսնում էի միակ ճշմարիտ և անկաշառ պաշտօնեայ, այդ Կաղզուանի գաւառապետն էր, որին նահանգապետը արձակել է պաշտօնից: Այդ պատճառով խնդրում եմ Ձեր միջնորդութիւնը ուր հարկն է՝ վերականգնել իր պաշտօնում այդ արժանաւոր և վաստակաւոր մարդուն»:

Պէտք է ասել, որ գեներալ Փիրումով մեծ պատրաստակամութեամբ էր գալիս օգնելու Կաղզուանի նախկին գաւառապետին, որովհետև և ինքը՝ գեներալը, երբեմն վերապրել է նոյնանման դառնալից օրեր: Երբ 14 թուին պատերազմը սկսուելու վերայ էր՝ Փիրումով այն ժամանակ շարքային անյայտ ռուս փոխգնդապետ, նոյնպէս արձակուած էր պաշտօնից դրամական զեղծումների համար: Պատերազմը և ապա հայկական կառավարութիւնը նորից հանդէս բերեցին այդ փոխգնդապետին, և այսօր հմայուած հայկական բանակի աւագ զօրավարի генерал-лейтенант աստիճանով՝ նա կարեկցալից գալիս էր օգնելու մի մարդու, որ իր պէս հանդիպել է ձախորդ օրերի...

Եւ Կարսի հռչակաւոր ամրութիւնների պարետը՝ գեներալ Փիրումով, հետևեալ մակագրութիւնն է անում 2-րդ հետևակ բրիգադայի հրամանատար Յովսէփեանի զեկուցման վերայ. «Միանգամայն համամիտ եմ գեներալ Յովսէփեանի

հետ, խնդրում եմ սպարապետին միջնորդել ներքին գործոց մինիստրի առաջ Կաղզուանի նախկին գաւառապետին վերականգնել իր պաշտօնում»:

Ճշմարտութիւնը պահանջում է ասել, որ գեներալ Փիրումով, որ չէր բեռնաւորում իրան հոգսերով՝ չէր սիրում առհասարակ երկար մտածել, նորա փոխարէն այդ ինտրիգ գործերում, որպէս մասնագէտներ՝ աշխատում էին ուրիշները նորա «շտաբում», և վարպետալից տանում այդ գործը:

Գեներալների այդ միամիտ՝ եթէ չասենք աւելի, գրութիւնը, ներքին գործոց մինիստրը ուղարկեց ինձ, ի գիտութիւն միայն ի հարկէ: Բայց ես ցաւեցի, որ այն ժամանակուայ մինիստր պ. Գիւլխանդանեան, որ գիտէր այդ «գեներալների» իսկական արժէքը՝ հարկաւոր չը համարեց գէթ նկատել Զօրաց մինիստրին, որ գեներալները թող դիտեն իրանց շարքերի անցուդարձը, հանգիստ թողնելով ուրիշների իրաւասութիւնը: Գեներալները նոյնիսկ չամաչեցին միջնորդելու մի մարդու համար, որ յամենայն դէպս նախնական քննութեան տակ էր, և երաշխաւորութեամբ բանտարկութիւնից արձակուած:

Բայց մի՞թէ կարելի էր երեկուայ այդ շարքային, միջակից ցածր սպաներին էթիկ պահանջներ անել…

Այդ միջոցներում Երևանից ես առաջարկութիւն ստացայ պետական փոխառութեան գործը կազմակերպել Կարսի նահանգում: Այդ առիթով մեծ պրոպոգանդա սկսեցին մեր լրագիրները: Քաղաքներում՝ որպէս Կարսում, կազմակերպուեցին յատուկ կոմիտեէներ: Երևանից եկաւ այդ առիթով յատուկ պաշտօնեայ, բայց բոլոր միջոց *(փաստաթուղթը վնասուած է)*… ականին գուցէ միայն մեծ քաղաքներում, գրագէտ վայրերում, ուր կայ մամուլ, հասարակական կարծիք: Իսկ այնպիսի վայրեր՝ որպէս Կարսի նահանգն է, ուր հարիւր վերստ տարածութեան վերայ դուք չէք հանդիպի մի գրագէտ մարդու, այդ բոլոր միջոցները միանգամայն ապարդիւն են:

Փոխառութեան յաջողութիւնը հնարաւոր էր հեղինակաւոր իշխանութեան միջամտութեան դէպքում միայն, և այդ պարզուեց հենց առաջի օրերում: Կարսի կոմիտէն, ուր քաղաքագլուխը և միւսները արտասանեցին մեծախոստում ճառեր՝ մնաց կոմիտէն առանց միջոցների, իր պլակատներով և գրաւոր յայտարարութիւններով: Բայց բոլորը սպասում էին, թէ ի՞նչ կանէ նահանգապետը:

Ի նկատի առնելով, որ աւերուած և գաղթական հայութիւնը չէր կարող մասնակցել այդ փոխառութեանը՝ ես վճռեցի դիմել նահանգի մահմեդական ազգաբնակութեանը:

Եւ օգտուելով, որ այդ օրերում Կարս էր պարլամենտի անդամ Լ. Թադէոսեանը, հին դաշնակցականներից և գաղափարական, ազնիւ գործիչներից մէկը՝ ես հրաւիրեցի նորան ինձ հետ միասին փոխառութեան գործով անցնել նահանգը:

Ես պատուիրեցի հեռագրել Արդահանի գաւառապետին, որ նշանակուած օրը կը լինեմ այդ գաւառի ամենախիտ, քրդերով ու թուրքերով բնակեցրած վայրում, և մենք նշանակուած ժամին մեկնեցինք:

Երբ մենք մօտեցանք մեր իջևանին՝ մեզ դիմաւորեց Արդահանի գաւառապետը, շրջապատուած գաւառի բոլոր անուանիներով և ժողովրդի մի քանի հազար բազմութեամբ:

Երբ մեր աֆտօմօբիլը կանգ առաւ ժողովրդի այդ մեծ բազմութեան առաջ՝ ուր հրապարակը զարդարուած էր գորգերով և հայկական դրօշակներով, ուր քուրդ ցեղերը կանգնած էին խումբ-խումբ, ամէն մէկը իր ցեղապետի առաջնորդութեամբ՝ երաժշտութիւնը նուագեց հայկական ազգային հիմնը, և գնդապետ Կադիմով «Մեր հայրենիքի» ախորժ հնչիւնների ներդաշնակութեան տակ մօտեցաւ նահանգապետին զեկուցում տալու գաւառի դրութեան մասին: Քրդերի ցեղապետները, կարափափախների պարագլուխը և միւս թայֆաների ներկայացուցիչները, որոնց մինիստր նախագահ Խատիսեան մի քանի ամիս առաջ սպայական աստիճաններ էր շնորհել՝ բոլորը այնտեղ էին իրանց ազգային, գոյնզգոյն զգեստներով ու փայլուն ուսադիրներով:

Ես կանգ էի առնում այդ ազգութիւնների և ցեղերի ամէն մէկի առաջ՝ ընդունում նոցա աղ ու հացը, լսում նոցա բարևները ու բարեմաղթութիւնները, և ապա ողջունելով ժողովուրդը՝ ես դիմեցի նորան մի քանի խօսքով իմ գալու նպատակի մասին, և խնդրեցի մասնակցել հայկական կառավարութեան առաջի փոխառութեան: Ի պատասխան իմ այդ առաջարկութեան՝ օդը թնդաց. «Կեցցէ հայկական իշխանութիւնը» թուրքերէն, և ի դիմաց ժողովրդի՝ գաւառապետ Կադիմով ասաց ինձ թուրքերէն. «Գաւառի ազգաբնակութիւնը մեծ պատրաստականութեամբ եկել է լսելու Ձեր գերազանցութեան հրամանը, և լիազօրել է ինձ հարցնելու՝ բաւական կը լինի արդեօք, նուիրաբերել յիսուն միլիոն ռուբլի, որպէս երաշխիք մեր խորին հպատակութեան կառավարութեանը, և յարգանաց դէպի Ձեզ՝ պ. նահանգապետ»:

Ես շնորհակալութիւն արեցի ազգութիւնների և կրօնների այդ բազմաթիւ ներկայացուցիչներին՝ նոցա վերաբերմունքի համար դէպի երկրի իշխանութիւնը, և 10 օրից յետոյ՝ ի մեծ դառնութիւն մեր գեներալների, գնդապետ Կադիմով, ի դիմաց Արդահանի գաւառի թուրք և քուրդ ազգաբնակութեան՝ մտցրեց Կարսի գանձարանը 56 միլիոն ռուբլի, մի գումար, որ այն ժամանակուայ կուրսով շատ մեծ փող էր, և յամենայն դէպս խոշորագոյնը Հայոց Հանրապետութեան սահմաններում այդ առիթով ժողոված բոլոր գումարներից միասին վերացուած:

Երբ Կարսում տարածուեց մեր այդ մեծ ընդունելութեան լուրը, և այստեղ գիտէին արդէն, որ գիւղերում տենդոտ գանձում են փոխառութեան գումարները համաձայն կայացած համախօսականների՝ գեներալների հանգիստը նորից խանգարուեց: Եւ ես այդ օրերում ստացայ 2-րդ հետևակ բրիգադայի Յովսէ-

փեանից հետևեալ, ռուսերէն ի հարկէ, գրութիւնը. «Ինձ հասած տեղեկութիւններով՝ Արդահանի գաւառապետը բռնութեամբ և ծեծի ենթարկելով մարդկանց, ստիպում է գրուել փոխառութեանը, բարեհաճեցէք դադարեցնել փողի գանձումը»: Եւ ես հետևեալ պատասխանեցի գեներալին. «Արդահանի գաւառապետի ապօրինի գործողութիւնների մասին ես ոչ մի գանգատ չեմ ստացել: Ձեր հաղորդած տեղեկութիւնների մասին լսում եմ առաջին անգամը: Յամենայն դէպս հարկաւոր եմ համարում հաղորդել Ձերդ գերազանցութեանը, որ այդօրինակ խնդիրները դուրս են հետևակ բրիգադայի հրամանատարի իրաւասութիւնից»: Այդպէս նախանձալից էր հայ գեներալի տրամադրութիւնը դէպի համազգային գործի յաջողութիւնը Կարսի նահանգում:

Բայց այդ օրերում կազմակերպուեց Երևանում և հայկական Կարմիր Խաչը: Ըստ շաբլօնի ի հարկէ՝ Կարմիր Խաչի գլխաւոր վարչութիւնը այդ առիթով դիմել էր Կարսի քաղաքագլխին, և խնդրել էր իր վերայ վերցնել Կարսի նահանգում ճիւղերի կազմակերպութեան գործը: Այդ քաղաքագլուխը ժողով հրաւիրեց՝ կազմակերպուեց կոմիտէ, ճառեր արտասանուեցին՝ բայց ոչ մի կոպեկ փող չը կարողացան ժողովել:

Եւ այդպէս՝ Կարմիր Խաչի գործը յաջողութիւն չունեցաւ:

Այն ժամանակ, անջատ այդ կոմիտէից՝ ես դիմեցի նահանգի թուրք և քուրդ ազգաբնակութեանը, և միայն Կարսի գաւառի մի գաւառակից՝ մի տասը օրից յետոյ մտցրի Կարսի գանձարանը, ի հաշիւ Կարմիր խաչի գլխաւոր վարչութեան՝ հինգ միլիոն րուբլի, և այդ մասին ես հեռագրեցի Երևան: Քաղաքագլուխը և գեներալները, որոնք կոմիտէի «պատուաւոր» անդամներն էին՝ շատ դժգոհ մնացին, որ այդ գումարը ես պատուիրել էի ուղղակի գանձարան մտցնել և չէի դրել նոցա տրամադրութեան ներքոյ, և այդպիսով զրկել էի նոցա հնարաւորութիւնից ասելու Երևան, թէ մենք էլ հերկեցինք...

Կարմիր Խաչն էլ մեր օրերի այն զբաղմունքներից մէկն էր, ուր մարդիկ, հրապարակի տարազը պահպանելու համար՝ ուզում էին ինչ-որ մի բան արած լինեն: Կարմիր խաչի գործն էլ ի հարկէ աւելի դեկօրատիւ բնոյթ ունէր՝ քան գործնական: Այդ գործով մեր «հասարակական գործիչները» զբաղւում էին այն չափով միայն՝ որչափով որ այդ պէտք էր մի բանով պարապելու համար: Նա չուսումնասիրուեց ի հարկէ իր ներկայում և անցեալում, նա չը կապուեց երկրի հետ՝ և գնաց երկրից անջատ, որպէս մի բան, որ կարող էր և լինել և չը լինել:

Ընտրուեց կենտրոնական մարմին, շրջաբերական ուղարկուեց գաւառները փողի ժողովարութեան համար, հեռագրական գործակալութիւնը աւետեց աշխարհին՝ հայկական Կարմիր Խաչի լոյս աշխարհ գալը, և դորանով ի հարկէ փակուեց հայկական Կարմիր Խաչի անգոյն և անփառունակ պատմութիւնը:

Երբ մի քանի ամսից յետոյ սկսուեց քեմալականների արշաւը դէպի Կարսի նահանգը՝ մեր Կարմիր Խաչն էլ ի հարկէ աղմկեց: Կարսի տագնապ օրերում

երբ անիշխանութիւնը միանգամայն ուրուագծուել էր երկրում, ուր բացի թալանից, աղմուկից ու գիշատիչ անցուդարձից ոչինչ չը կար՝ Երևանից Կարս եկաւ Կարմիր Խաչի ներկայացուցիչ Արամ փաշայի այրին, որ կարծեմ և պարլամենտի անդամ պէտք է լինէր: Նա այցելեց նահանգապետին և աջակցութիւն էր խնդրում «տեղական» ոյժերով Կարմիր Խաչի գործը կազմակերպելու համար:

Ծիծաղելի էր ի հարկէ խօսել մի այնպիսի մեծ գործի մասին՝ առանց որևէ միջոցների, առանց բժիշկների, առանց դեղորայքի, վիրաբուժական որևէ գործիքների և առանց շարժական հիւանդանոցների, և գէթ դորա համար տարրական որևէ իրերի: Եւ բացի այդ, ծաղր էր անցնել մի այդպիսի մեծ գործի՝ առանց որևէ ծրագրի, որոշ նպատակների և առանց յատուկ պերսօնալի, մարդկանց և դրամական որևէ միջոցների: Իմ պաշտօնավարութեան գործնական երկար տարիների ընթացքում՝ ես առհասարակ չէի սիրում հրապարակի աղմկող և դատարկալից անցուդարձը, իսկ Կարսի խռովալից օրերում՝ երբ ամէն բան քանդւում և կործանւում էր, ես միանգամայն տրամադրութիւն չունէի մարդկանց կապրիզներով զբաղուելու, և չը կարողացայ զսպել ջղայնութիւնս յարգելի տիկնոջը ընդունելու ժամանակ: Ես շատ ցաւում էի, որ տաղանդաւոր Արամ փաշայի այրուն ես պատիւ էի ունենում առաջին անգամ ընդունելու ծախորդ պայմանների այդ եզակի մթնոլորտում, և շատ ցաւում էի, որ տիկինը շարունակելով իր բոլորից յարգուած ամուսնոյ եռանդալից ընթացքը, իրանից անկախ ի հարկէ պատճառներով, հանդիպում էր այդչափ մեծ անյաջողութեան: Ես գիտէի ի հարկէ, որ «տեղական ոյժերը», որոնց վերայ յոյս ունէր պարլամենտի անդամը՝ կաշխատակցեն նորան միայն աղմկելու համար, որ անկարելի է զբաղուել գործով առանց որևէ միջոցների, և մի այնպիսի խառնաշփոթ մթնոլորտում՝ ուր ոչ սկիզբ կար և ոչ ծայր:

Եւ այդպէս էլ ի հարկէ և եղաւ: Կարմիր Խաչի «օգնութիւնն» էլ մի խաբուսիկ, աւելի աղմկող և տարազ պահպանող մի տեսիլ էր մեր աշխարհի ընդհանուր անկման և կործանման ընթացքում:

Կարմիր Խաչի յարգելի ներկայացուցչուհին «ռազմաբեմ» չը գտաւ, նա չը տեսաւ ո՛չ «պատերազմ» և ո՛չ «վիրաւոր»: Նա տեսնում էր միայն խռովալից փախչող մեր սպաներին և զինուորներին, և նա ստիպուած էր թախծալից թողնելու այդ «ռազմաբեմը», ուր միայն թալանում էին, կեղեքում և փախչում առանց արիւն թափելու...

Այդպէս էր հայկական Կարմիր Խաչի առաջի և վերջի գաստրոլը...

Իսկ հեռագրական գործակալութիւնը դարձեալ աւետում էր ընթերցող աշխարհին, որ հայկական Կարմիր Խաչը «ռազմաբեմ» մեկնեց: Իսկ դրսում երևի հրճւում էին, և կանխօրէն ծափահարում հայկական հրամանատարութեան ապագայ դափնիքներին...

Այդպէս էր այն զաւեշտ պատկերներից մէկը, որի պակասը այդ օրերի նկարագրում կը նսեմացնէր Ռուբէն փաշայի խելակորոյս և շփոթալից փախչող բանակի արժանաւորութիւնները:

Բայց մի երկու խօսք էլ հայկական Կարմիր Խաչի նախագահի մասին: Այդ պատուաւոր բազկաթոռը շտապել էր գրաւելու Գրիգոր Չալխուշեան, Ռոստովի երդուեալ հաւատարմատարը: Երբեմն ֆանատիկ «մշակական»՝ յետոյ ոխերիմ թշնամի իր alma mater-ի, Չալխուշեան՝ որպէս ճարպիկ փաստաբան, շտապում է դէպի կարող նաւահանգիստ, և աղմկալից տեղաւորւում դաշնակցութ-եան փառումների տակ:

Այնուհետև սիրահար այն կուսակցութեան, որ այնպէս գերեց իւր ժամանակի մթնոլորտը՝ Չալխուշեան բուրվառ ձգելով նորա յաղթական ճանապարհով, գալիս հասնում է Հայոց Հանրապետութեան օրերին:

Եւ ի հատուցում այդ ջերմեռանդ ուխտագնացութեան՝ դաշնակցական կառավարութիւնը պսակում է վաստակաւոր դաշնակցականին գեներալ Դենիկինի մօտ իր դեսպանի լիազօրութիւններով:

Երբ ռուս ջարդուած և լքուած բանակը թախծալից թողնում է հայրենի ափերը՝ Հայոց Հանրապետութեան դեսպանն էլ շտապում է դէպի Արարատ, իր առանց պօրտֆելի լիազօրութիւններով: Բայց այստեղ նա դարձեալ «դեսպան է»: Երբ 20 թուի Մայիս 28-ին հայկական Հանրապետութիւնը մեծ հանդէսով Երևանում տօնում էր իր անկախութեան տարեդարձը՝ «դիպլօմատների օթեակում» պարսից և վրաց դեսպանների շարքում, բազկաթոռի վերայ վաստակալից յենուել էր և Չալխուշեան... այնուհետև նա նշանակուեց հայկական Կարմիր Խաչի նախագահ, և հարկաւոր համարեց մի տուրնէ կատարել դէպի Կարս:

Թուրքերը մի առած ունեն. «Քաջի անունը լսիր՝ բայց երեսը մի տես... »: Մինչ այդ մենք միայն լսել էինք «յայտնի հասարակական գործիչ Չալխուշեանի» անունը, բայց նորա երեսը չէինք տեսել: Կարսում նա ցանկութիւն յայտնեց հրապարակական դասախօսութիւն կարդալու հայկական հարցի և բոլշեւիկների մասին: Թատրօնական դահլիճը ծայրէ ի ծայր լցուած էր հասարակութեամբ, բոլորը շտապում էին լսելու բոլշեւիզմի մանրամասնութիւնները այն մարդուց, որ հազիւհազ ազատուել էր նորա ջարդից: Չալխուշեան պատմեց մեզ բոլշեւիկ այնպիսի սարսափներ՝ որից մեզանից ամէն մէկս փշաքաղւում էր: Գալով հայկական հարցին՝ նորա ասածները այնչափ յայտնի էին և այնչափ անգոյն, որ դահլիճը աւելի յօրանջում էր, քան լսում: Երբ Յունիսի սկզբներին առաջի անգամ ռուսները բախեցին Հայաստանի դարբասը Դիլիջանի ձորում՝ Կարմիր Խաչի նախագահ Չալխուշեան առաջինը ցնցուեց: Նա յայտարարեց, որ ինքը այստեղից, իր այդ նոր աւետեաց երկրից, նա ամէնի առաջ ողջունում է հայկական տառերով Թիֆլիզում հրատարակուող մի թերթ, և թոյլատուութիւն է խնդրում «սիրով» աշխատակցելու թերթին...

Այդչափ գաղափարական և այդչափ առաձգական են մեր «հասարակական գործիչները», որոնք շատ յաջող միշտ դիմակաւորւում են և վարպետալից տանում բազմատեսակ դերեր ժամանակակից մթնոլորտի ռեպերտուարում:

Բայց դառնանք մեր ընդհատուած պատմութեանը:

Եթէ չը հասնէին վերջի աշնան ծանր օրերը՝ երբ մենք թողեցինք Կարսը, ես յոյս ունէի նորից մտցնել գանձարան մեծ գումարներ թէ՛ ի հաշիւ փոխառութեան և թէ՛ յօգուտ Կարմիր Խաչի, և յամենայն դէպս աւելի քան ուրև իցէ Հայաստանում: Բայց մենք, հայ հասարակութիւնը, հայ ինտելեգենցիան, հայ օտարացած սպայութիւնը՝ ամէն միջոց գործ դրեցինք թշնամացնելու մեզ հետ մեր դարաւոր հարևաններին: Մենք ոչ մի միջոցի առաջ կանգ չառանք երերելու երկրի իրաւակարգը, ձգելու մեր կառավարութեան համարումը օտարների առաջ, և այդ առանցքում շփոթ և բաբելոնեան խառնակութիւն ստեղծելով՝ ամենախայտառակ կերպով թողեցինք նահանգը և փախանք այն երկրից, որի համար այնչափ երազել, տանջուել և արիւն ենք թափել...

Եւ երբ գեներալները միջից կէս էին լինում ձգելու նահանգապետի նշանակութիւնը, երբ նոքա տանել ու մարսել չէին կարողանում այն յարգանքը, որ վայելում էր այդ երկրում նահանգապետը՝ այդ բազմացեղ ու բազմակրօն ժողովուրդը հլու և հպատակ բերում և դիզում էր գանձարան տասնեակ միլլիոններ, և հաւաստիացնում իր հպատակ դէպի իշխանութիւնը զգացումներում: Այսպէս թէ այնպէս՝ հասարակական և կառավարչական բուռն ճնշման տակ, այն ժամանակուայ Հայաստանի տէր ու տնօրէն Ռուբէն փաշան զիջում է վերջապէս՝ և Կարս է գալիս այդ մեծ շփոթը պարզելու մի յանձնաժողով, գեներալ Սիլիկով և պարլամենտի անդամներ երդուեալ հաւատարմատար Բուդուղեան և գնդապետ Շահմաղեան, երկուսն էլ դաշնակցական: Մի երեք օրից յետոյ յանձնաժողովը վերադարձաւ Երևան՝ իսկ գեներալ Սիլիկով հրաժեշտ տալով ինձ, ասաց լակօնիկ՝ «Շատ պարզ է խնդիրը... »:

Երկրի հետ միասին՝ ես հաւատացած էի, որ ամէն բան ունի իր վերջաւորութիւնը, և որ վերջ պէտք է ունենայ և զինուորականների ուզուրպացեան:

Բայց և այնպէս, թէ՛ գեներալները և թէ՛ թալանչի սպաները մնացին իրանց տեղերում, և այնուհետև կրկնակի կորովով, ուժգին և տենդոտ՝ նրանք առաջ տարան «համայնական» աշխատանքը... Այդ օրերում գեներալ Յովսէփեան ցոյց տուեց իր առանձին իրաւունքները: Մարտնչելով նահանգի ադմինիստրացիայի հետ՝ նա մի սպայ և մի վաշտ զինուոր ուղարկեց Չլդըր գաւառակը, և առանց տեղական իշխանութեան գիտութեան՝ ձեռբակալեց 4 շատ անուանի ազդեցիկ և հարուստ թուրքեր, այն մարդկանց՝ որոնք շարունակ գնում և գալիս էին նահանգապետի, գաւառապետների մօտ, և շատ պէտք էին պետական վարչական միտումներով տեղական իշխանութեանը: Գեներալը ուզում էր ցոյց տալ երկրին, որ նա բանտարկում է այն մարդկանց՝ որոնք պատիւ և համարում ունեն քաղա-

քացիական իշխանութեան մօտ, և անում է այդ առանց այդ իշխանութեան գիտութեան: Մի քանի օր այդ պատուաւոր մարդկանց իր զօրանոցներում պահելուց յետոյ՝ գեներալը ուղարկում է նոցա Կարսի քաղաքացիական բանտը իր հետևեալ գրաւոր որոշումի հետ միասին. «Երկրորդ հետևակ բրիգադայի հրամանատար գեներալ Յովսէփեան ի նկատի առնելով, որ այս ինչ թուրքերը կասկածելի են հակապետական ձգտումներով՝ որոշեց պահել նոցա բանտում, մինչ իմ առանձին կարգադրութիւն...»: Ես տասնեակ տարիներ գործ եմ ունեցել ի պաշտօնէ քրէական բազմատեսակ գործերի հետ, ինքս բանտարկել և արձակել եմ մարդիկ, ինքս կազմել եմ նախնական բանտարկութեան գրաւոր որոշումներ, կարդացել եմ տաղանդաւոր դատաստանական քննիչների որոշումները՝ բայց այդպիսի մի քմահաճ, եթէ չասենք աւելի, այդպիսի մի կուրիոզ որոշում որպէս գեներալի այդ որոշումը՝ ես առաջի անգամն էի հանդիպում:

Զրկել մարդկանց ազատութիւնից անյայտ հիմունքներով և պատճառներով, և միայն որպէս «կասկածելի» մարդիկ՝ բանտարկել «անորոշ» ժամանակով, այդ առանց որևէ իրաւունքի և իրաւասութեան, դա այնպիսի մի ոճիր էր, որի համար ինքը գեներալը պէտք է անցնէր այն խրամատները, ուր նա ձգել էր այդ թուրքերին: Կարսի բանտապետը, օրէնքներին տեղեակ և լուրջ պաշտօնեայ՝ ստանալով գեներալի այդ գրութիւնը, զեկուցեց ինձ այդ արտակարգ դէպքի մասին և հրահանգ խնդրեց: Օրէնքով նա իրաւունք չունէր ի կատար ածելու այդօրինակ որոշում: Բայց ես նկատի առնելով գեներալի ծայրահեղ ինտրիգ տրամադրութիւնը, հաշուի առնելով, որ նա առիթ էր որոնում իմ դէմ աղմուկ բարձրացնելու՝ ես պատուիրեցի ընդունել կալանաւորուածներին և լռել... Մինչ այդ բանտարկեալները հեռագրով բողոքեցին գեներալի այդ բռնութեան դէմ Երևան պրօկուրօրին և բարձր կառավարութեանը: Այդ առիթով Երևանից հարցապնդում ստանալով և տեսնելով, որ իր այդ հերթական խաղը կարող է իր համար վատ վախճան ունենալ՝ գեներալը ասում է բանտարկեալների ազգականներին. «Ես կ՛արձակեմ Ձեր մարդկանց՝ եթէ նահանգապետը դիմէ ինձ գրաւոր և խնդրէ... »:

Հազիւ թէ պէտք է ասել, որ նահանգապետը երեկուայ այդ կապիտաններից օրէնքներ սովորելու պէտք չունէր, և այնչափ էլ միամիտ չէր՝ ինչպէս որ այդ կարծում էին գեներալները:

Ես պատշաճ պատասխան տուեցի թուրքերին, իսկ միւս օրը գեներալ Յովսէփեան մի կերպ իր այդ յիմար դրութիւնից դուրս գալու համար՝ ուղարկում է բանտապետին հետևեալ գրաւոր իր որոշումը. «Կալանաւորուած թուրքերին՝ որոնք մեղադրւում են հակապետական տրամադրութիւններում, շարունակել պահել բանտում, բայց հաշուել նահանգապետի տրամադրութեան ներքոյ»: Ռուս անգրագէտ կապիտանների շարքում՝ որոնք երբեմն կառավարել են երկիրը, ես շատ կուրիոզների եմ հանդիպել, բայց այդօրինակ նմուշ ես առաջին անգամն էի տեսնում: Գեներալին Կարսում հասկացրել էին, որ յիմարութիւնն էլ իր

սահմանը ունի, և նա շտապել էր դուրս գալ այդ դրութիւնից, միևնոյն ժամանակ փափուկ դրութիւն ինձ համար ստեղծելով:

Օրէնքով ես պարտաւոր էի կարգադրել անյապաղ արձակել բանտարկուածներին, բայց գործը ըստ բնոյթի՝ ունէր ինտրիգ բնաւորութիւն, գեներալը միւս «կուսակցական» ազգասէրների հետ զառանցում էր ինչ-որ «հակապետական տրամադրութիւնների» մասին, և զգուշութիւնը այդ պայմաններում պէտք էր: Այդ միտումներով ես պատուիրեցի կատարել բոլոր ձևականութիւնները, գրութիւնները ուղարկել Արդահանի դատաստական քննիչին՝ և բանտարկվածներին հաշուել նորա վերայ: Ինչ ասել կ՛ուզէ ի հարկէ, որ դատաստանական քննիչը արձակեց թուրքերին բանտից: Բայց մինչ այդ, գեներալի նախանձալից ինտրիգին զոհուեց նոցանից մէկը, թոքերի բորբոքում ստանալով բանտում և այտեղ էլ մեռնելով:

Այդ բանտարկուածները բազմաթիւ հեռագիրներ ուղարկեցին կառավարութեանը, իսկ Զօրաց մինիստրը փոխանակ անյապաղ կարգադրելու, որ գործը յանձնուի քաղաքացիական իշխանութեանը, փոխանակ անյապաղ պաշտօնանկ անելու գեներալ Յովսէփեանին այդչափ մեծ օրինազանցութեան համար, և դատի տալու նորան՝ ոչինչից ոչինչ չարեց:

Այդ դէպքի մասին էլ ես մի մեծ զեկուցում ուղարկեցի մինիստր նախագահին, նորից և նորից ես միջնորդում էի ցոյց տալ մարդկանց իրենց տեղը, և գէթ մի անգամ՝ մէկին պատասխանատուութեան ենթարկել: Ես միջնորդում էի կառավարութեան առաջ թոյլ տալ երկրին յարգելու օրէնքի սրբութիւնը, և կառավարվելու օրէնքներով և ոչ կապիտան գեներալների կապրիզներով և ոճրալից ոտնձգութիւններով: Բայց և այդ մեծ, պատճառաբանուած դիմումս մնաց առանց պատասխանի, և առանց որևէ հետևանքի: Պատմում էին, որպէս կուրիոզ, որ երբ մինիստր նախագահ զեկուցեց մինիստրների խորհրդում իմ այս յուշագիրս՝ զօրաց նաև ներքին գործերի մինիստր Ռուբէն փաշան վերցրեց իմ այդ մեծ զեկուցումը, դրեց իր գրպանը և ասեց. «Լաւ, կը տեսնենք»: Ինչպէս տեսնում էք՝ այդպէս հեղինակալից էր վճռում երկու պօրտֆել շալակած մինիստրը կառավարչական մեծ գործերը, և ոչ ոք չէր ուզում ասել հրապարակաւ, որ այդ դրութիւնը շարունակուել չի կարող...

Վերադառնալով Օլթիի պատմութեանը, մենք անցնում ենք մեր պետականութեան օրհասական շրջանը, ուր մեր օրերը արդէն հաշուած էին:

Իմ բուռն պահանջին Օլթիի պատահարը լուսաբանելու համար լուրջ իրաւաբանների յատուկ յանձնաժողով ուղարկել և փրկել դրութիւնը, որ սիստեմատիկ կերպով երերել է զինուորական իշխանութիւնը՝ ես ոչ միայն պատասխան չը ստացայ, այլ ինձ սպասում էր մի այլ անհեթեթութիւն, վերջինը իր տեսակների մէջ:

Մինիստրների խորհուրդը, լսելով գեներալ Փիրումովի հեռագիրը Զօրաց մինիստրին՝ թէ ինչպէ՞ս մեր զօրամասերը զբաղուած լինելով կալով և թալանով, մերկացրել էին տաճկական սահմանը, և թիւրք հրոսակախմբերը յարձակում գործելով գիշերը մեր հրետանու յօգնած և քնած պահակի վերայ, կոտորել են մեր պահապան զինուորներին և տարել մեր 8 թնդանօթը, գտաւ, որ Կարսի նահանգի իրաւակարգին սպառնում է լուրջ վտանգ: Անցնելով այդ միջոցներին, որոնք պէտք է ձեռք առնուեն վերականգնելու երկրում այդ խախտուած դրութիւնը, Մինիստրների խորհուրդը, ի դէմս ի հարկէ Ռուբէն փաշայի, հարկաւոր համարեց նահանգի և քաղաքացիական իշխանութիւնը ենթարկել «խելօք, փորձուած, երկրին և օրէնքներին լաւատեղեակ գեներալ Փիրումովին», որ բացի այդ քաղաքացիական մեծ առաւելութիւններից ու ընդունակութիւններից՝ վայելում էր ինչ-որ «Սարդարապատի» հերոսի հռչակ...

Այդ բոլոր միտումներով և պատմութեան ու հայ ժողովրդի առաջ մեծ պատասխանատուութիւնը աչքի առաջ ունենալով՝ Մինիստրների խորհուրդը հլու և հպատակ իր դիկտատոր փաշայի քմահաճ ցանկութիւններին, Կարսի նահանգում գեներալ նահանգապետութիւն յայտարարեց, և այդ միահեծան իրաւունքները կենտրոնացրեց գեներալ Փիրումովի խորհրդաստ և վստահալից ձեռքերում...

Այդպէս էր այն մեծ կառավարչական ակտերից մէկը, որոնցով այնչափ հարուստ է Հայաստանի Հանրապետութեան վերջին վեցամսեակը: Վերին աստիճանի հետաքրքիր և բնորոշ է, որ կառավարութեան այդ իմաստալից որոշման մասին ես տեղեկացայ միայն մասնաւոր կերպով, իսկ պաշտօնական հաղորդագրութիւն՝ ես այնպէս էլ չը ստացայ...

Եւ ես սփոփում էի ինձ նորանով, որ Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչը, ինչպէս և չը լինի, իրաւաբան՝ անյարմար գտաւ հաղորդել նահանգապետին մի ակտ, որ գլուխ գործոց պէտք է համարել այն թալանային արշաւի, որ տարի ու կէս ժամանակամիջոցի ընթացքում զինուորականները կատարում էին Կարսի նահանգում...

Ինչևիցէ, բայց այդ փաստը գալիս էր ասելու, թէ ինչ քաոս, շփոթ է տիրում Երևանում: Ես նոյն օրը վճռեցի հրաժարուել պաշտօնից, և հեռագիր պատրաստեցի մինիստր նախագահի անունով այդ մասին: Բայց հենց այդ միջոցին ինձ մօտ եկաւ պարլամենտի անդամ Լ. Թադեւոսեան, և բարեկամօրէն պահանջեց թողնել այդ միտքը:

Վերականգնեցնելով իմ յիշողութիւններում տարի ու կէս ժամանակամիջոցի ընթացքում իմ կատարած աշխատանքը նորա բոլոր դրական և բացասական կողմերով հանդերձ, նկատի առնելով երկրի դրութիւնը և իմ պատասխանատուութիւնս նոյն երկրի և իմ խղճի առաջ, հաշուի առնելով և այն, որ այդ շփոթ և անիշխան մթնոլորտում միայն ես, որ աւելի քան ով և իցէ տեղեակ դրութեանը՝

կարող կը լինէր մի կերպ թիավարել դէպի նաւահանգիստ, ես չուղարկեցի հրաժարականս:

Բայց այս անգամ զինուորականները, ի դէմս գեներալ Փիրումովի՝ դառնալով տէր և տնօրէն երկրի, բաժանեցին իրար մէջ «ազդեցութիւնների զօնաները» և արդէն որպէս իրաւատէր՝ հնձում էին և աջ և ձախ և անում այդ տենդոտ և անհաշիւ... Այդ միջոցին, երկրի այդ տագնապ օրերում՝ խզուեց հեռագրական կապը Արդահանի և Կարսի միջև, և տևեց մօտ 25 օր:

Իմ բազմաթիւ այդ առիթով հեռագիրներս փոստ հեռագրական գլխաւոր վարչութեանը, ներքին, հաղորդակցութեան մինիստրներին, և վերջապէս կառավարութեան նախագահին՝ մնում էին առանց հետևանքի: Այդ իշխանաւորները, այն էլ ոչ միշտ, պատասխանում էին՝ կարգադրուած է: Բայց այդ կապը, այնուամենայնիւ չէր գործում:

Աւելի քան երեք շաբաթ շարունակ՝ հարիւրաւոր կարևորագոյն պաշտօնական հեռագիրներ թափուած երեսի վերայ, մնում էին Կարսում և Արդահանում, և ես ստիպուեցի վերջապէս սուրհանդակների միջոցաւ կապ պահել Արդահանի գաւառապետի հետ: Բայց յետոյ պարզուեց, որ փոստ հեռագրական գլխաւոր վարչութեան և մինիստրների այդ առիթով կարգադրութիւնները ի կատար չէին ածւում այդ գիծը վերանորոգելու համար:

Իմ նշանակուած այդ առիթով քննութիւնը պարզեց, որ գեներալները, իրանց արբանեակ սպաներով, ցանկանալով զրկել նահանգապետին հնարաւորութիւնից Արդահանի գաւառապետի հետ հեռագրական կապ ունենալու՝ կաշառել էին Արդահանի և Կարսի միջև գտնուող Մերդենեկի հեռագրատան կառավարչին, չը վերականգնել գիծը: Ես հեռագրով պահանջեցի, որ փոստ հեռագրական գլխաւոր վարչութիւնը անյապաղ հեռացնէ Կարսի նահանգից այդ պաշտօնեային, և պատասխան ստացայ, որ կարգադրութիւնը արուած է:

Բայց անցնում էին օրեր, իսկ պաշտօնեան նստած էր իր տեղում: Իմ այդ առիթով հարցապնդմանը՝ ես ստացայ Երեւանից հետևեալ պատասխանը. «Պաշտօնեան փոխադրուած էր, բայց գեներալ Փիրումով հեռագրով միջնորդում է թողնել այդ պաշտօնեային իր տեղում, որպէս հարկաւոր և պէտք մարդու...»: Վերջում ընդհանուր թալանի միջոցում՝ այն փոքրիկ պաշտօնեան էլ ստացել էր այդ գնդապետներից իր բաժինը, նա ցորենի պահեստ ունէր՝ և պատրաստւում էր առևտուր անելու: Բայց զինուորականները փախան այդ վայրից՝ իրանց յետևից տանելով ընդհանուր խուճապի առանցքում և հայ ժողովուրդը, և այդ պահեստն էլ մնաց այնտեղ, ուր մնաց դիզուած և մարդկանց միւս հարստութիւնը: Ես կարծում եմ, որ այդ փաստերը առանձին բացատրութիւնների պէտք չունեն: Գեներալները կանգ չէին առնում ոչ մի միջոցի առաջ՝ երերելու երկրի իրաւակարգը, և այդ անում էին պետական պրեստիժի մեծ գնով: Այդ հեռագրագիծը այն ուղղութեամբ էր՝ ուր զինուորականները «համայնօրէն» ներ-

դաշնակ ժամանակի տրամադրութիւնների հետ, օգտւում էին կեանքի վայելքներից: Այդ գծի չորս կողմը խաւար և մութ երկիր էր, և այդ երկրում սպաները ոչ միայն թալանում և կեղեքում էին՝ այստեղ նոքա և հռչակ էին հանում, սուտը ճշմարտութիւն յայտարարելով, և փախուստ-պարտութիւնը՝ մեծ յաղթութիւն: Մի կողմից երկիրը անպատասխանատու կեղեքելու համար, իսկ միւս՝ կառավարութեանը հաւաստիացնելու, թէ ինչպէ՞ս շրջապատուած «թշնամիներով», «դաւադրութիւններով» և «դաւաճաններով»՝ նոքա այնուամենայնիւ միշտ յաղթող են, այդ մարդիկը և ստեղծում էին երկրի շփոթը՝ և այդ քաոսում իրանց շատ լաւ զգում:

Արդահանի գաւառապետի միջոցով ես ստանում էի այդ զինուորականների այդ հեռաւոր և մութ երկրում կատարած բոլոր «քաջագործութիւնների» մասին մանրամասն տեղեկութիւններ: Բացի այդ, նոյն գաւառապետը տեղեկացնում էր ինձ Տաճկաստանի և Վրաստանի սահմաններում կատարուող անցուդարձի մասին: Գեներալներին այդ էլ դուր չէր գալիս, որովհետև զբաղուելով վարչական-քաղաքական խնդիրներով՝ նրանք իրանց հերթին տեղեկութիւններ էին ուղարկում կառավարութեանը, և չէին կարողանում տանել, որ նահանգապետը աւելի ճիշտ տեղեկութիւններ ունէր միշտ և աւելի շուտ էր ստանում այդ տեղեկութիւնները: Այդ բոլոր միտումներով՝ նոքա սիստեմատիկ կերպով փչացնում էին հեռագրագիծը Արդահանի և Կարսի միջև, և հնարաւորութիւն չէին տալիս ինձ օրերի և շաբաթների ընթացքում կապ ունենալու այդ վայրի, Արդահանի գաւառապետի հետ, մինչդեռ իրանք ունէին այդ ուղղութեամբ իրանց զինուորական հեռախօսը, որից նահանգապետին օգտուել՝ ի հարկէ չէր կարելի:

Օլթին գրաւելու ժամանակամիջոցում՝ դեռ վեց ամիս առաջ, ես շարունակ պահանջում էի փոստ-հեռագրական վարչութիւնից բոլոր նախապատրաստութիւնները տեսնել, որպէսզի հեռագրագիծը Կարսից դէպի Օլթի անցնէ մեր զօրամասերի հետ միաժամանակ: Բայց երբ մենք անցանք Օլթի և հեռագրագիծը պատրաստ էր՝ զինուորականները իրանց պահակներով գրաւեցին հեռագրատունը, և արգելեցին քաղաքացիական իշխանութեանը օգտուել հեռագրագծով, առարկելով, որ հեռագիրը զինուորականների համար է: Եւ ես ստիպուած էի 200 վերստ տարածութեան վերայ կապ պահել Օլթիի գաւառապետի հետ՝ սուրհանդակների միջոցով, և այդպիսով միայն օրերից յետոյ ստանալ կարևորագոյն տեղեկութիւնները:

Իսկ զինուորականները օգտուելով այդ առանձնակի դրութիւնից՝ միայն թալանում ու կեղեքում էին գաւառը, ամէն կողմ հեռագիրներ ուղարկելով իրանց մեծ յաղթութիւնների մասին...

Ի զուր էի ես այդ առիթով բախում Երևանի բոլոր կարող դռները: Հայաստանի ինքնահաւան դիկտատոր Ռուբէն փաշան գտնում էր, որ հայրենիքի բախտը կախուած է իր ռուսախօս սպաներից: Դիկտատորը գտնում էր, որ Կար-

սի նահանգը ամբողջովին մի «ռազմական գաղտնիք է», և այդ մեծ գաղտնիքը կարելի է հաւատալ այդ երեկուայ այդ կապիտաններին ու դեռ երեկ տիրացուներին: Ռուբէն փաշան գտնում էր, որ հայկական պետականութիւնը ինքը ռուսախօս և օտարացած սպայութիւնն է: Եւ երկրի բախտը անվճռաբեկ յանձնուած էր այն փայլուն համաստեղութեանը՝ ուր գեներալ Ախվերդով, Յովսէփեան, Փիրումով և միւսները՝ պատիւ էին անում հայ ժողովրդին, իրանց ռուս թութակին համակերպելով երկիրը և կառավարութիւնը...

Թէ ի՞նչ հետևանք կարող էր ունենալ զինուորական իշխանութեան այդօրինակ կամայականութիւնը՝ կը բերեմ հետևեալ աղաղակող փաստը:

Կեազիմ Կարաբեկիր փաշայի առաջաւոր ոյժերը առաջին անգամ երևացին մեր սահմանագլխում 20 թուի Օգոստոս 27-ին, երբ միայն մեր հրամանատարութիւնը ձեռք ու ոտք ընկաւ: Իսկ Արդահանի գաւառապետ Կադիմով դեռ Օգոստոսի 19-ին ուղարկել էր ինձ հետևեալ ծածկագիր հեռագիրը. «Հաւաստի աղբիւրներից հաղորդում եմ, որ Քեազիմ Կարաբեկիր փաշան կ՛արշաւէ այս շաբաթուայ ընթացքում դէպի Կարսի նահանգը երկու ուղղութեամբ՝ համ դէպի Սարիղամիշ, համ դէպի Օլթի-Մերդենեք»:

Բայց այդ հեռագիրը ես ստացայ օգոստոսի 28-ին միայն, որովհետև զինուորականները խզել էին Կարս-Արդահանի միջև հեռագրագիծը և թոյլ չէին տալիս, որ ես կապ ունենամ Արդահան - Օլթու հետ:

Բայց զինուորականների այդ սանձարձակ տրամադրութիւնը միանգամայն իշխող և տիրապետող դարձաւ Օգոստոսի 28-ից: «Զինուորական պէտքերի համար», «պատերազմական միտումներով» և «ռազմական իմաստով» անվճռաբեկ ածականներով զրահաւորուած՝ մեր այդ ասպետները սկսեցին իրանց քաջ արշաւը թշնամու առաջ: Թողնելով ճակատը, Տաճկաստանի սահմանը՝ սպաները, զինուորները և «կամաւորները» փախչում էին դէպի երկրի ներսը, և յարձակում գործելով մեր քուրդ և թուրք գիւղերի վերայ՝ աւերում և կողոպտում էին ազգաբնակութիւնը: Եւ այդ քրդերը թողնելով տուն-տեղ, թողնելով հացը կալում, իւղ ու պանիրը տկերում՝ փախչում էին լեռները և գնում դէպի տաճկական սահմանը, գնում էին բողոքելու թիւրքերին՝ և բնականաբար միանալու նոցա զօրաբանակին, նորան ապաւինելով և այնտեղ դատ ու արդարութիւն որոնելով...

Դասալիքութեան առաջն առնելու համար իբր թէ, և մեծ ճանապարհների վերայ զինուորական ներկայացուցիչներ ունենալու համար իբր թէ՝ նշանակուեցին այս և այն տեղ ռուս և հայ սպաներ:

Այս կօմենդատները նախ և առաջ սկսեցին իրանց գործունէութիւնը «խուզարկութիւններից»՝ արգելուած յայտարարելով ոսկին, արծաթը, փողը, գորգերը և բոլորը... «բռնագրաւում էին»: Շատ հետաքրքիր է, որ երբ Կարաբեկիր փաշայի զօրամասերը շարժւում էին դեռ սահմանի տարածութեամբ՝ Կարսի շուրջի թուրք և քուրդ գիւղերի մօտ ուժգին որոտում էին հրացանները: Այդ մեր «Կամա-

ւորական խմբերն» և այլ զօրամասերը վարժւում էին իրանց քաջազնական հակումներում: Նրանք յարձակւում էին խաղաղ ազգաբնակութեան վերայ, փախցնում ժողովուրդը՝ և յետոյ թափւում էին գիւղերը և թալանում...

Այդ ի ծայր անիշխանութեան մասին ես հաղորդում էի գեներալ Փիրումովին, որի «հմտալից ձեռքում» ինչպէս որ այդ ասուած էր կառավարչական հրամանում, նա «կենտրոնացրել էր նահանգի ոչ միայն զինուորական՝ այլև քաղաքացիական գերագոյն իշխանութիւնը»: Այդ «լքուած» գիւղերի «պահպանութեան» համար «Սարդարապատի հերոսը» ուղարկում էր յետոյ սպաներ և զինուորներ: Բայց այդ «ապահովող» միջոցները կայանում էին նորանում, որ այդ սպաները սայլերով արտահանում էին այդ «լքուած» գիւղերից կաթսաներ, բուրդ, գորգեր և այլ հարստութիւն: Ես հրահանգում էի ոստիկանութեանը արձանագրութիւններ կազմել թալանի այդ նոր ձևի մասին: Բայց ի հարկէ, այդ արձանագրութիւնները մնում էին առանց հետևանքի, իսկ երկիրը՝ խռով, ալեկոծ և յուսահատ: Այդ միջոցներում զինուորական իշխանութիւնը պահանջում էր մեծաքանակ բեռնակիր միջոցներ թէ՛ ռազմամթերքի և թէ՛ իր «խնայողութիւնները» տեղափոխելու համար, և թուրք ու քուրդ ազգաբնակութիւնը անմոռունչ ուղարկում էր հազարաւոր սայլեր: Բայց շուտով պարզուեց, որ մեր քաջարի սպաները այդ արտակարգ օրերում հարստանալու մի նոր միջոց էին գտել: Երբ թուրք և քուրդ սայլերը բերում, տեղ էին հասցնում բեռները և տուն էին վերադառնում՝ մեր «տղերքը» կոտորում էին ճանապարհին այդ թշուառ սայլապաններին, իսկ եզները, սայլերը որպէս «պատերազմական աւար»՝ քշում Կարս, Աղէքսանդրապոլ և ծախում...

Զօրամասի մի հրամանատար յարձակուելով Արդահանի գաւառի Խօջևան գաւառակի քուրդ գիւղերի վերայ՝ փախցրեց ազգաբնակութեանը իբր «հակայեղափոխականների», իսկ ինքը իր վաշտերով զբաղուեց գիւղերը թալանելով:

Նա 5000 ոչխար քշեց դէպի Աղէքսանդրապոլ ծախելու, և այդ նա անում էր այն ժամանակ՝ երբ Կարաբեկիր փաշան Արդահան մտել էր, Կարսի նահանգը, երբ մեր հրամանատարութիւնը հարկաւոր էր համարել դատարկելու Օլթին, Մերդենեկը, Սարիղամիշը և Կաղզուանը: Ես հեռագրեցի Աղէքսանդրապոլի գաւառական «զեմստվոյի» գլխաւորին՝ բռնել ոչխարը և զինուորներին, որոնք որպէս չօբաններ՝ գնացել էին ոչխարի հետ, բանտարկել: Բայց ի հարկէ, Աղէքսանդրապոլի «ընկերները» չը գտան 5000 ոչխարից բաղկացած հօտը... Երբ զինուորականների մեծից մինչև փոքրը կատարած թալանը, կեղեքումները և բռնութիւնները հասան իրանց գագաթնակէտին՝ միայն Մերդենեկ-Կարս ճանապարհին մեր ասպետները կոտորեցին 70 թուրք սայլապան, որոնք կրում էին մեր ծանրութիւնները և երկրում արդէն չէր զգացւում ո՞ւմ դէմ է կռւում մեր զօրքը, ո՞ւմ է հալածում, թշնամուն թէ երկրի խաղաղ ազգաբնակութիւնը, ես վերջին կծու ծածկագիր հեռագիրը ուղարկեցի կառավարութեանը այդ մեծ հրդեհի առի-

թով, և աւելացրեցի՝ «Վերջ տուեցէք զինուորական այդ գեգեմօնեային, ի դէպ պետականութիւնը կը պայթէ»: Եւ նա պայթեց 10 օրից յետոյ՝ երբ ընկաւ Կարսը, իսկ նորա հետ և Հայոց Հանրապետութիւնը... Բայց Կարսի անկումից 4 օր առաջ մեզ վիճակուած էր արձանագրելու և հետևեալ փաստը, որ լիովին բնորոշում է մեր օրերի բարքերը, և այն կարող մարդուն՝ որին Մինիստրների խորհուրդը, կամ աւելի ճիշտ «փաշան»՝ հարկաւոր համարեց յանձնելու Կարսի նահանգի ոչ միայն զինուորական, այլև քաղաքացիական իշխանութիւնը: Կարսի անկումից 4 օր առաջ՝ Կարսի ոստիկանապետ Քեասօեան զեկուցեց ինձ, որ տեղեկութիւն ստանալով, որ գիւղերից զինուորականները սայլերով թալան են բերում՝ նա պատուիրեց բռնել թալանչիներին և սայլերը: Բռնուեց 28 սայլ բուրդ, և սայլերին ուղեկցող մի հայ սպեկուլեանտի մօտ գտնուեց գեներալ Փիրումովի հետևեալ վկայականը. «Թոյլ եմ տալիս քաղաքագլուխ Նոհրատեանին՝ «քրդերի լքուած սայլերից» բուրդ կրել քաղաքի պէտքերի համար»:

Թէ ո՞ւր պէտք է տանեն այդ հարամ բուրդը՝ գեներալ նահանգապետ Փիրումով և քաղաքագլուխ Նոհրատեան Կարսի անկումից չորս օր առաջ, այդ ի հարկէ երկու կուսակցական գործիչների անձնական գաղտնիքն էր: Իսկ Կարսի հասարակութիւնը վրդովում էր, թէ ինչպէ՞ս զօրքերի հրամանատարը, երբ թշնամին արդէն կանգնած էր Կարսի պարիսպների տակ՝ ժամանակ էր գտնում զբաղուելու իր բարեկամ քաղաքագլուխ Նոհրատեանի հետ առևտրական ձեռնարկութիւններով և քրդերի գիւղերից բուրդ կրում...

Երբ մեր հրամանատարութիւնը առանց հիմունքի, նոյնիսկ թշնամուն չը տեսնելով սկսեց դատարկել մէկը միւսի յետևից մեր բոլոր ռազմական շրջանները՝ Օլթի, Մերդենեկ, Կարակուրտ, Կաղզուան և վերջապէս Սարիղամիշ՝ ես հաստատ տեղեկութիւններ ունէի, որ քեամալիստները ոյժ չունեն, որ Կարաբեկիր փաշան յենւում է գլխաւորապէս այն խուժանի վերայ, որ ուղեկցում էր նորան, և յոյս ունէր նահանգի մահմեդական ազգաբնակութեան վերայ՝ որին թալանելու, ճնշելու մասին թիւրք հրամանատարութիւնը լաւ տեղեակ էր:

Ո՛չ Կաղզուան և ո՛չ Սարիղամիշ մենք թշնամի չը տեսանք՝ բայց և այնպէս գեներալ Փիրումով-Յովսէփեան, «առանձին սաղրական միտումներով» հարկաւոր էին համարում տենդոտ դատարկել այդ վայրերը, տնաւեր անել հայ ազգաբնակութիւնը, և փախուստի տրամադրել այն զօրքը՝ որին նոքա տարի ու կէս ժամանակամիջոցի ընթացքում դաստիարակում էին միայն թալանի և միայն կեղեքումների վարժողութիւններում: Հայ ժողովրդի առաջ նորից կանգնեց գաղթի ուրուականը, նորից աւեր, նորից լաց ու կոծ և նորից օտարութիւն իր բոլոր դառնութիւններով և կսկիծով: Իսկ երկիրը ոչ մի տրամադրութիւն չունէր քանդուելու և նորից տեղից շարժուելու: Մենք գերադասում ենք մեռնել մեր հայրենի երկրում, - ասում էր ժողովուրդը - այն օջախների շուրջը՝ ուր այնքան հոգացել,

հրճուել և դառնացել ենք, միայն թէ չանցնենք հեռաւոր և անհիւրընկալ օտարութիւն:

Եւ զարմանալի էր, որ հրամանատարութիւնը, իսկ նորա յետևից զօրքը՝ փախչում, գնում էր, իսկ ժողովուրդը միայն յետևում էր նորան, գնում դանդաղ, ակամայից, և շարունակ յետ նայում և արտասւում...

Այդ թշուառները նորից վերադառնում էին, նորից սկսում կիսատ թողած կալը, նորից հրդեհում մարած թոնիրը և նորից դառնալով դէպի ընդհատուած աշնան պատրաստութիւնը՝ կարծում էին, որ այդ մի տեսիլ էր, մի երազ, որ ուզում էին մոռանալ և չը տեսնել այլևս...

Այդպէս էր այդ պատմական օրերում երկրի հոգեբանութիւնը:

Թէև նահանգի թէ՛ զինուորական և թէ՛ քաղաքացիական լիազօրութիւնները կառավարութիւնը յանձնել էր իր տաղանդաւոր զօրաւար Փիրումովին՝ բայց ես այնուամենայնիւ հարկաւոր համարեցի ռազմաբեմի իսկական դրութեան հետ ծանօթացնել կառավարութեանը: Ես գիտէի, որ գեներալները և գնդապետները թալանից յետոյ խուճապով բռնուած՝ միանգամայն կեղծում են Երևանի առաջ իրերի իսկական պատկերը: Ես մի ծածկագիր հեռագիր ուղղեցի իմ այդ բոլոր տեղեկութիւններով մինիստր նախագահին: Ես հաղորդում էի, որ քեամալիստների արշաւը վերին աստիճանի անվճռական է, զգուշալից, որ Քեազիմ Կարաբեկիր փաշան ունի ոչ աւել քան 4-5 հազար կանոնաւոր զօրք, որ երկչոտ գնդապետ Միրիմանով՝ Սարիղամիշ-Կարաուրգան տարածութեան մեր զօրամասերի հրամանատարը, առանց որևէ հիմքի դատարկեց այդ երկու գաւառակը, ինքը անձամբ բոլորից շուտ փախաւ: Այդ ուղղութեամբ փաստեր և տուեալներ բերելով՝ ես հաղորդում էի և այն, որ երկրի քուրդ և թուրք ազգաբնակութիւնը միանգամայն ապշած է, թէ ինչու մեր գնդերը փախչում են, երբ մեր դիմացի թշնամին թէ դեռ շատ հեռու է և թէ շատ թոյլ:

Ինչպէս և միշտ՝ իմ բոլոր թէ գրաւոր և թէ հեռագրական դիմումներս ես անում էի կառավարութեանը հայերէն ի հարկէ: Միւս օրը ես ստացայ սպարապետ Նազարբեկովից հետևեալ ռուսերէն բաց հեռագիրը «նկատի առնելով, որ Ձեր հաղորդագրութիւնները միանգամայն տարբեր են զօրահրամանատարութեան տուեալներից՝ շփոթում են թէ կառավարութեան և թէ հասարակական կարծիքը, և ջղայնացում են առաջ բերում, կառավարութիւնը արգելում է Ձեզ որևէ տեղեկութիւններ հաղորդել Երևան: Դուք կարող էք Ձեր տեղեկութիւնները յանձնել գեներալ Փիրումովին, նորա հայեցողութեան... »:

Ես դժուարանում էի բացատրել ինձ, դաւաճանութիւն է այդ՝ թէ յիմարութիւն... Բայց ինչևիցէ, ես այլևս չէի բեռնաւորում ոչ «Հայոց փաշային» և ոչ նորա հոգսալից գեներալներին որևէ տեղեկութիւններով, որ կարող էին փչացնել նոցա ախորժակը և տրամադրութիւնը:

Երևանը ցանկանում էր կարդալ իր Կարսի հերոս գեներալ Փիրումովի յաղթալից հաղորդագրութիւնները, և ինձ մնում էր միայն չը խանգարել կառավարչական այդ բարձր տրամադրութիւնը:

Քեազիմ Կարաբեկիր փաշայի արշաւի ժամանակ առաջի խուճապի անվիճելի հեղինակը ռուսախօս գնդապետ Միրիմանովն էր: Նա ուժգին թմբկահարեց նահանջ՝ և ո՛չ թշնամի տեսնելով և ո՛չ էլ նորա հրացանի ձայնը լսելով, մի երկու-երեք ժամուայ խուճապային մթնոլորտում ոչ միայն մերկացրեց հայ-տաճկական սահմանը՝ այլև դատարկեց ազգաբնակութիւնից երկու մեծ գաւառակ, Խորասանը և Սարիղամիշը, և ինքը ի հարկէ առաջինը փախաւ:

Այդ խուճապով բռնուեց միշտ դէպի թիկունք տրամադրուած գեներալ Յովսէփեան՝ և փախուստի «ռազմական միտումները» յաջորդում էին այնուհետև մէկը միւսին:

Երբ գրում էի այս յիշողութիւններս՝ ես առիթ ունեցայ Թիֆլիզում խօսելու այս անցուդարձի մասին գեներալ Նազարբեկովի հետ: Բերում եմ այստեղ հայկական նախկին սպարապետի ասածը:

Գնդապետ Միրիմանով, որպէս գեներալ Փիրումով՝ այդ բարձր աստիճանները ստացան հայկական կառավարութեան օրով: Դեռ 16 թուին Միրիմանով կրտսեր, փոքրաստիճան սպայ էր Կարսում, և վարում էր մի ինչ-որ զինուորական խանութի հաշիւները...

Հայկական օրերում, առանց որևէ հայերէնի՝ նա գնդապետ դարձաւ և մեծաչափ մեծարուեց մեր կառավարութիւնից: Քեամալիստների արշաւի ժամանակ գնդապետ Միրիմանով առաջինը թողեց դիրքերը, փախաւ և գունդն էլ ի հարկէ յետևեց նորան: Երբ ես այդ առիթով եկել էի ռազմաբեմ՝ ես հրապարակով, ամբողջ շտաբի առաջ հանդիմանեցի գնդապետին և դուրս արեցի նորան իմ սենեակից: Շատ հետաքրքիր է, աւելացրեց սպարապետը, որ գեներալ Յովսէփեան և Փիրումով դրուատելով այդ երկչոտ և անպէտք սպային՝ միջնորդում էին Միրիմանովին գեներալի աստիճան տալու: Երբ հանդիմանեցի դորա համար գեներալ Յովսէփեանին՝ վերջինս խոստովանուեց, որ իրանք ուզում էին գէթ այդ միջոցով ազատուել այդ գնդապետից... Ձեր հարիւր թերթից մեծ զեկուցումը գնդապետ Միրիմանովի կատարած թալանների և զեղծումների մասին՝ ասաց ինձ գեներալ Նազարբեկով, չընկաւ իմ ձեռքը: Այդ արձանագրութիւնները մնացին Ռուբէն փաշայի մօտ, և նա շատ անգամ անում էր իր կարգադրութիւնները առանց սպարապետի գիտութեան, և ես շատ անգամ բոլորից ուշ էի իմանում զինուորական նորութիւնները:

Այսպէս, օրինակ, ասաց նախկին սպարապետը՝ մեզ բոլորիս անյայտ արժանաւորութիւնների համար, փաշան հարկաւոր համարեց Փիրումովին աւագ զօրավարի աստիճան շնորհել, և զինուորական մինիստրի այդ մեծ ակտի մասին հայկական սպարապետը իմացաւ post factum: Մասնաւորելով իր խօսքը

գեներալ Փիրումովի մասին՝ նախկին սպարապետը ասաց, որ նորա թէ՛ անցեալը և թէ՛ իսկական արժէքը մեզ բոլորիս շատ լաւ յայտնի էին...

Փիրումով Կարսի բերդի կոմենդանդ նշանակուեց անձնական շահերի և կրքերի առանցքում:

19 թուին՝ ասաց սպարապետը, բոլորի համար միանգամայն անսպասելի, մի անյայտ գնդապետ, յետոյ գեներալ՝ Արարատով, նշանակուեց Զօրաց մինիստր, երկու օգնականներով, որոնցից մէկը Դրօն էր, միւսը գեներալ Սիլիկով: Հազիւ թէ պէտք է ասել՝ աւելացնում է տողերիս գրողը, որ թէ առաջինը և թէ երկրորդը, իրանց անցեալով ու անվիճելի խելքով՝ գերազանց բարձր էին այդ Արարատովից: Մինիստրի այդ օգնականներին վերապահուած էր և զօրքի հրամանատարութիւնը: Դրոյին ենթարկւում էին այն բոլոր զօրամասերը՝ որոնք գտնուում էին Երևանի նահանգում, իսկ գեներալ Սիլիկով այն զօրքերի հրամանատար էր նշանակւում՝ որոնք ցրուած էին Կարսի նահանգում:

Դրոն թէև շատ մօտ էր Փիրումովի հետ՝ ընկերվար բնոյթ ունէր նոցա յարաբերութիւնը, բայց այնուամենայնիւ խելօք Դրոն գիտէր այդ «գեներալի» արժէքը, և գերադասում էր առանց այդ տեսակ աշխատակցի հրամանատարել: Գեներալ Փիրումով զօրաց այն բաժնումն էր, որ պէտք է ենթարկուէր Դրոյին, բայց ինչ-ինչ միտումներով՝ նա յանկարծակի նշանակւում է Կարս...

Ես՝ պատմում էր տողերիս գրողին գեներալ Սիլիկով, բացակայ էի Երևանից, երբ գեն. Փիրումով Կարսի բերդի կոմենդանտ նշանակուեց: Եւ գալով Երևան՝ ես շատ սուր և շատ անախորժ բացատրութիւն ունեցայ այդ առիթով մինիստր Արարատովի և սպարապետ Նազարբեկովի հետ, բողոքելով, որ օգտուելով իմ բացակաիթիւնից՝ նրանք դիտաւորեալ կերպով Կարս ուղարկեցին մի մարդու, որ ոչ մի կերպ համապատասխան չէր Կարսի կոմենդանտի բարձր կոչմանը:

Այդպէս էր այն մթնոլորտը, ուր այնուհետև իր տեսակի անուն և հռչակ հանեց գեներալ Փիրումով և այդպէս էր այն կռուաձաղիկը, որից այնպէս խանդալից հրաժարւում էին մեր երկու նշանաւոր զինվուորականները Դրոն և գեն. Սիլիկով:

Բայց դառնանք Կարսի վերջի օրերի մեր պատմութեանը:

Այդ միջոցում գեներալ Փիրումով, մի ինչ-որ զբօսանքի ժամանակ վնասում է իր ոտը, և այնուհետև մինչև Կարսի անկումը՝ գեներալը անկողնից էր հրամանատարում... Թէ ինչպէ՞ս էր տաղանդաւոր ռազմագէտը անկողնում պառկած դէպի նահանջ առաջնորդում իր կազմալոյծ բանակը՝ այդ մի ռազմական մասնագիտական խնդիր է, և վեր ի հարկէ մեր մահկանացուներիս իրաւասութիւնից:

Բայց մենք, բոլորիս հետ միասին՝ զարմանում էինք միայն, որ և ամենակարող Ռուբէն փաշան հնարաւոր չը գտաւ փոխարինել իր հիւանդ գեներալին մի

այլ զօրավարով: Ի հարկէ դժուար էր գտնել մի այլ տաղանդաւոր գեներալ, որ իր հռչակուած ռազմական ընդունակութիւններով հանդերձ՝ լինէր և ականաւոր որպէս գեներալ Փիրումով, վարչագէտ-քաղաքացիագէտ: Բայց երկիրը կարծում էր այնուամենայնիւ, որ հայոց աշխարհի այդ միակ փաշան պէտք է խղճար անկողնում տառապող իր մեծ զօրավարին:

Ժողովուրդը մեծ յոյս ունէր տեսնելու Կարսում մի հրամանատարի, որ արձագանք տալով երկրի տրամադրութեանը՝ հրամանալից կը գոչէր փախչող սպայութեանը, և նոցա խուճապալից ընթացքին յետևող զինուորութեանը՝ դարձ դէպի դիրքերը և յաղթութիւն կամ մահ...

Այդ դժբախտ և տագնապալից օրերում Կարս եկաւ ամենայն Հայոց կաթողիկոսի պատուիրակ մեր աշխատասէր և բանասէր Գարեգին եպիսկոպոս Յովսէփեան: Հայոց հայրապետը, վշտակից հայրենեաց՝ ուղարկել էր այդ եպիսկոպոսի հետ իր յատուկ այդ օրերի համար գրուած կոնդակը:

Մեր հնագոյն սրբավայրի առաջի աղօթարարը ուզում էր բարձրացնել հայ ժողովրդի տրամադրութիւնը՝ և հայ զինուորին յաղթութիւն դիւթել: Նա կոչում էր մեզ յառաջ այնտեղ, ուր պէտք է լինէր մեր պատիւը և մեր նախանձախնդիր կորովը: Եւ Կարսի այն տաճարում՝ որի սկզբնական օրերը հանգչում են X դարում, որ տասը դար շարունակ եղել է մզկիթ, մերթ օրթոդոքս եկեղեցի և նորից մայրենի մրմունջների ապաստարան՝ Գարեգին եպիսկոպոս յատուկ պատարագ մատուցեց Հայոց դարաւոր Աստծուն: Իսկ պատարագից յետոյ տաճարի ընդարձակ գաւթում՝ զօրքի և ժողովրդի չը տեսնուած բազմութեան առաջ, նորին սրբազնութիւնը կարդաց Հայոց հայրապետի ողջոյնը իր ժողովրդին, և կաթողիկոսի օրուայ ասելիքը:

Կեանքիս մէջ ես առաջին անգամն էի վերապրում այդչափ ջղային և այդչափ յուզալից րոպէներ: Ընչասպառ և ի ծայր յուզուած՝ եպիսկոպոսը բառը բառի յետևից տարածում էր դէպի ժողովրդի էլեկտրականացած ուշադրութիւնը, սուրբ Էջմիածնի գահակալի կրակոտ կոչը: Այդ վայրկեանում ինձ մօտ կանգնած Կարսի քաղաքագլուխ Նոհրատեան՝ չը կարողացաւ զսպել իրան, և շատ բարձր հեկեկաց... Իսկ մի երկու րոպէից յետոյ՝ ես իմ չորս կողմը լսեցի արտասուալից հառաչանք, աղօթալից մրմունջ և նորից հեկեկանք...

Արտասուքը խեղդում էր և ինձ, և ես ցնցւում էի իմ ամբողջ էութեամբ...

Իւր ժամանակին ես շատ բան եմ կարդացել՝ երբեմն բուռն կերպով յուզուել, ոգևորուել եմ, բայց երբէք ես չէի տպաւորուել այնչափ ուժգին և այնչափ ոգելից, ինչպէս այդ պատմական կոնդակի ընթերցման միջոցին: Երբ եպիսկոպոսը արտասանեց վերջի խօսքը՝ մի րոպէ կարծես բոլորը քարացան: Ապա ժողովուրդը, զինուորութիւնը նետուեցին համբուրելու այն խաչը, որ այնչափ ախորժ և այնչափ ընտանի էր մեր դարաւոր հաւատալիքներում...

Եւ պատկերը ոչ միայն եզակի դրամատիկ էր, ոչ միայն պատմական, վեհ՝ նաև բարձր հոգեբանական տեսիլ էր:

Ոչ հերթով, մարդիկ շտապում էին համբուրելու այն զօրավիգը, որին հաւատում էին կուրօրէն, և մեր տրամադրութիւնների այդ ընտանի շրջափակում՝ մենք սփոփանք և յոյս էինք փնտրում...

Ես հեռացայ հանդէսից թէ շատ բարձր տրամադրութեամբ և թէ ի ծայր ճնշուած:

Իմ ընդունարանում ինձ սպասում էին բազմաթիւ մարդիկ, շտապ զեկուցումներ, սուրհանդակներ, հեռագիրների կապոցներ՝ բայց ես դեռ չէի կարողանում տիրել ինձ, չէի կարողանում սանձահարել ջղերս...

Իմ առաջ կանգնած էր Հայոց պատմութիւնը, մեր եկեղեցու նշանաւոր երեցները, մեր հռչակաւոր դատը, անձնուրաց հայդուկները, կամաւորական խմբերը և մեր իրականացած երազները...

Իսկ այնտեղ, դէպի տաճկական սահմանը՝ նորից չարագուշակ ուրուական, նորից փորձանքներ և նորից խաբուսիկ հեռանկար, կամ մահ կամ ազատութիւն...

Եւ երբ տարուած այդ մտքերով և զգացմունքներով, ես կառքով գնում էի եկեղեցուց դէպի տուն՝ փողոցով անցնում էր մի գումարտակ, որ նոր էր եկել Աղէքսանդրապօլից:

– Մեր հայրենիք, թշուառ, անտէր...

Հնչեց օրկեստրը՝ յուսալից և բարձր տրամադրութիւնը բռնկեց ամբոխը: Նորից կորով, հայրենեաց ծխի գերագոյն քաղցրութիւն, մտածեցի ես, և զինուորական պատիւ տալով ազգային մեծ գաղափարին՝ ես անցայ իմ ընթացիկ աշխատանքներին... Բայց չափազանց ուշագրաւ էր այդ օրերում երկրի պատկերը: Կարսը մի մեծ զօրանոց էր, ուր տենդոտ գալիս և գնում էին գումարտակներ, հրետանի, ուր սրընթաց անցնում էր հեծելազօրքը, խումբ-խումբ գալիս էին հասակաւոր թիւրքահայերը, և բոլորը շտապում էին նուիրաբերելու ազգային կրակարանին իրանց ունեցածը...

Ճեպընթաց գնացքով եկաւ Անգլիայի գերագոյն կօմիսար Կովկասում գնդապետ Ստոկս: Մենք հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տուեցինք նորան վագզալում: Նա այցելեց նահանգապետին, ընդունեց նորա հանդիսաւոր նախաճաշը, անցաւ գնացքով դէպի մեր առաջաւոր դիրքերը՝ որոնք Սարիղամիշի դատարկումից յետոյ, գտնւում էին Սելիմ-Բեգլի Ահմետ ամրութիւններում: Գնդապետ Ստոկս դիտեց զօրքը, խորհրդակցեց մեր գեներալների հետ թատերաբեմի քարտէսի շուրջը, և թշնամու սպառնալից յետքեր չը գտնելով՝ վերադարձաւ Թիֆլիզ: Այնուհետև, մի քանի օրից յետոյ եկան Ֆրանսիայի ներկայացուցիչները, նոյն ընդունելութիւնը, այցելեցին նահանգապետին, անգամ դէպի մեր

առաջաւոր դիրքերը, և դարձեալ կարծես յուսալից տպաւորութիւն, յոյս դէպի դրսի միջամտութ-իւնը, դէպի խաբուսիկ Անտանտ...

Մեր զինուորական, պատերազմական գործերը ամբողջովին մի շփոթ էր, մի մեծ անիշխանութիւն: Հրամանատարութիւնը կանգնած էր երկրի առաջ իր բոլոր անկարող մերկութեամբ, և այդ ստիպեց սպարապետին՝ թէև արդէն ուշ, զօրքերի գերագոյն հրամանատարութիւնը Կարսի նահանգում յանձնել գեներալ Սիլիկովին:

Սիլիկով դարձեալ ռուսախօս է, կարծեմ ուտիացի, բայց յամենայն դէպս միակ լուրջ և խելօք գեներալը մեր բանակում, և ինձ թւում էր՝ հայրենասէր ջղով: Գեներալը իր կայանը, շտաբը, հաստատեց Աղէքսանդրապոլ, և միայն մի 2 անգամ՝ այն էլ մի քանի ժամով, նա այցելեց կարծեմ և մի անգամ, կարծեմ նորա մօտակայ դիրքերը:

Այդչափ հեռու լինել մի բուռն բանակից և թատերաբեմից՝ մի ճակատագրական սխալ էր մեզ համար, և այդպիսով թատերաբեմը՝ եթէ միայն այդ տարածութիւնը, ուր մենք միայն նահանջում էինք «ռազմական միտումներով» և միայն փախչում՝ կարելի է պատերազմի դաշտ անուանել, ենթարկւում էր գեներալ Սիլիկովին նօմինալ կերպով:

Փաստօրէն, այնտեղ դարձեալ իշխում էր գեներալ Փիրումով, որ պառկած անկողնում՝ կարծես թէ հրամանատարում էր...

Բայց գեն. Փիրումով ոչ միայն զօրքերի աւագն էր՝ այլև Կարսի ահեղ ամրութիւնների կօմենդանտը:

Կարսը՝ Կրօնշտատից յետոյ, համարւում էր առաջնակարգ բերդ, և անառիկ ամրութիւնների համաշխարհային հռչակ ունէր: Կարսի շուրջը անմատչելի դիրքերում կանգնած էր մօտ հարիւր ահռելի թնդանօթ, որ պէտք է պաշտպանէին ոչ միան Կարսը՝ այլև այն մեծ տարածութիւնը, պատերազմական վարժութիւններ էր կատարում հայկական բանակը:

40 տարուայ ընթացքում այդ բնական ամրութիւնները կատարելագործելու համար՝ ռուս գանձարանը ոսկէ միլիոններ է թափել այստեղ, և Կարսը իր 25 վերստի տրամագծով՝ այն արտակարգ ամրութիւնն էր, ուր թշնամու մեծ ոյժերը կարող էր ամիսների ընթացքում անյուսալի պաշարել Կարսը *(տեքստը խզուած է)* ... պահանջները...

Եւ ի հաստատութիւն այդ այբուբենական ճշմարտութիւնների՝ Կարսի անկումից 5 օր առաջ բոլորի համար հրապարակաւ պարզուեց, որ Կարսի ամրութիւնները և խրամատները ոչ միայն էլէկտրական, կամ որևէ այլ լոյս չունեն՝ այլ չունեն և ջուր, չունեն հեռագրական և տելեֆօնի կապ ո՛չ իրար հետ և ո՛չ շտաբի հետ: Երկաթուղու գծերը, որոնցով փոխադրւում էին դիրքեր ռումբերը՝ միանգամայն փչացել էին: Ոչ միայն ֆօրտերը, դիրքերը, այլ նոյնիսկ հրետանու

հրամանատարը՝ բոլոր ամրութիւնների անմիջական մեծը, իր տրամադրութեան տակ աֆտօմօբիլ չունէր...

Կարսի անկումից մի շաբաթ առաջ բերդի կոմենդանտը յայտարարեց, որ Կարսի ամրութիւններից փորձեր պէտք է կատարուեն, և որ թող այդ թնդանօթաձգութիւնը խռովութիւն չառաջացնէ... Եւ միայն այդ օրերում սկսեցին սրբել, կարգի բերել երեսի վերայ ընկած բազմաթիւ թնդանօթները, և միայն այդ օրերում սկսեցին պէտք վարժութիւնները:

Կարսի անկումից մի 5 օր առաջ՝ գեներալ Փիրումով իր անկողնու շուրջը զինուորական խորհուրդ էր գումարել, ուր ներկայ էին Կարսում գտնուող մեր երկու մինիստրները՝ Վրացեան և Բաբալեան:

Հրետանու հրամանատար գնդապետը (ոչ հայ ի հարկէ) զեկուցեց, որ նա ոչ միայն հեռագրական, կամ հեռախօսի կապ չունի իր առաջաւոր դիրքերի հետ՝ ուր կանգնած են իր բազմաթիւ թնդանօթները, այլ նոյնիսկ հեռախօս չունի իր և գեներալ Փիրումովի շտաբի միջև... 50 վերստ տարածութիւնը՝ ասաց դառնալից գնդապետը, ոտով անցնել անկարելի է, և այդպիսով նա ոչ մի տեղեկութիւն չունի, թէ ի՞նչ է կատարւում ֆօրտերում:

Նա կարող էր իր հրամանները ուղարկել ֆօրտերը սուրհանդակներով միայն, իսկ դորա համար պէտք էին ոչ միայն ժամեր՝ այլև օրեր... Բացի դրանից, հրետանու հրամանատարը իր տրամադրութեան տակ՝ ինչպէս պարզուեց այդ օրը, ոչ ձիաւոր սուրհանդակներ ունէր և ոչ իր համար աֆտօմօբիլ: Այդ խորհրդածութեանը ներկայ էր և գեներալ Սիլիկովի շտաբի պետը, գնդապետ Վեքիլով, նոյնպէս մի ռուսախօս սպայ:

Նահանգապետի հարցին, թէ կարո՞ղ է արդեօք թշնամին ռմբակոծել Կարսը, գնդապետը ինքնավստահ ժպտաց, և ասաց հեղինակալից՝ ամենաշատը նա կարող է պաշարել մեզ...

Բայց չէ՞ որ, մտածեցի ես, այդ երկար պատմութիւն է, չէ՞ որ մեր թիկունքում կանգնած է ամբողջ հայութիւնը, Անտանտը և մեր միջազգային իրաւունքը...

Այդ զինուորական խորհուրդը ոչ մի դրական հետևանքի չը հանգաւ:

Անկողնում պառկած զօրքերի հրամանատարը ոչ մի տեղեկութիւն չունէր թշնամու ոյժերի, նրա նպատակների և այն ուղղութեան մասին, որով հնարաւոր էր նորա արշաւը:

Շաբաթների ընթացքում օրեցօր Կարսի հրամանատարութիւնը պնդում էր, որ թիւրքաց գլխաւոր յարձակումը կը լինի Հարամ-Վարդան բարձունքներից: Ի զուր էին մի քանի փորձուած մարդիկ հաւատացնում «մասնագէտ» զինուորականներին, որ տաճկաց բանակը կ՛իջնէ դէպի Կարս Վազին-քէօյի վրայով, այն սարալանջով՝ որտեղով որ 77 թուին հռչակաւոր կոմս Լօրիս-Մելիքով ուղղեց իր գումարտակները դէպի Կարսի պարիսպները: Եւ յիրաւի, Հոկտեմբեր 29-ին Վա-

զինքէօյի բարձրաւանդակներում երևացին տաճկաց առաջաւոր մասերը, իսկ Հոկտեմբեր 30-ին, առաւօտուայ ժամի 11-ին՝ թշնամին արդէն քաղաքումն էր...

Այդչափ ռազմատեղեակ էր Կարսի շտաբը: Թէ ի՞նչ էր կատարւում Կարսի շուրջը սփռուած բազմաթիւ ամրութիւններում՝ որի հարիւր թնդանօթները նկատի ունէին թշնամու գէթ 100 հազարանոց բանակը, մեր շտաբում ոչ մի տեղեկութիւն չունէին: Բայց չէ՞ որ այդ շտաբը, որ երբեմն մի բարդ մասնագիտական մեքենայ էր, այժմ բաղկացած էր մեր եկեղեցու նախկին շնորհալի տիրացուից և մի երկու պատահական, թերուս սպաներից, և չէ՞ որ այդ շտաբը ոչ միայն ոչ մի կապ չունէր այդ ֆօրտերի հետ, բայց նոցանից շատ շատերը՝ եթէ չասենք բոլորը, նա երբէք չէր էլ տեսել...

Կարսի անկումից մի շաբաթ առաջ պարզուեց, որ ամրութիւնների վերայ սպաներ չը կան, որ այդ հարիւր թնդանոթները ղեկավարելու համար Կարսի բերդի տրամադրութեան տակ կան միայն մի քանի մասնագէտներ, և պակասում է 40-50 սպայ... Այդ առիթով միայն այդ օրը ձեռք ու ոտք ընկած «շտաբը» հեղեղեց սպարապետին և գեներալ Սիլիկովին հեռագիրներով, բայց արդէն ուշ էր ի հարկէ, Կարսի ժամերը արդէն հաշուած էին...

Նոյնիսկ վերջին և նախընթաց օրերում մեր հրամանատարութիւնը շարունակում էր հանգիստ նստել իր բնակարանում, և այնտեղից հրմանատարել: Այդ առիթով գեներալ Արարատով, մեր զօրաց նախկին մինիստրը, որ Կարսի անկումից մի քանի օր առաջ միայն, որպէս հայկական բանակի հրետանու տեսուչ, եկել էր ծանօթանալու Կարսի դիրքերի հետ, և թիւս այլոց՝ գերի ընկաւ, պատմեց մեզ Թիֆլիզում, Էրզրումից վերադառնալուց յետոյ հետևեալը. «Երբ մեզ բոլորիս քշեցին Էրզրում որպէս զինուորական գերիներ՝ Կարաբեկիր փաշայի շտաբի պետ գնդապետ Խալիլ բէյ, գերի սպաների և գեներալների ներկայութեան մի օր հարցրեց գնդապետ Վեքիլովին, որ գեներալ Սիլիկովի շտաբի պետն էր: Մեզ շատ հետաքրքրում էր, ասաց Խալիլ բէյ, թէ ո՞ր դիրքերից էիք դուք գեներալ Փիրումովի հետ վերջին օրերը դիտում ռազմաբեմը... Մենք՝ աւելացրեց Խալիլ բէյ, հաստատել էինք մեր հեռադիտակը Ուզլար բարձրութիւններում, և Կարաբեկիր փաշան այնտեղից էր արձակում իր հրամանները...

Իսկ մենք՝ ասաց շփոթուած գնդապետ Վեքիլով, Կարադաղ ամրութիւնների վերայ էինք...

– Մենք Կարաբեկիր փաշայի հետ այդպէս էլ կարծում էինք,– վրայ բերեց Խալիլ բէյ, շատ գոհ, որ իրանց ենթադրութիւնները ճիշտ էին... »:

«Բայց յետոյ՝ շարունակեց գեներալ Արարատով, երբ Խալիլ բէյ հեռացաւ՝ գնդապետ Վեքիլով ամօթալից բացատրեց մեզ, սպաներիս, որ նա ստիպուած էր կեղծելու... »:

Կարսի հրամանատարութիւնը դուրս չէր գալիս իր ապարանքներից, և ոչ մի հասկացողութիւն չունէր այն Կարադաշի մասին, որի ստորոտներում, 44 տա-

րի առաջ, հայ ազգի գեներալ Լազարեւ ջարդեց Մուխտար փաշայի բանակը: Եւ այդպիսի շտաբով ու այդպիսի հրամանատարներով՝ մենք դեռ ուզում էինք մրցել Կարաբեկիր փաշայի ու նորա շտաբի պետ Խալիլ բէյի հետ, որ գերմանական ուսում ստացած, օր ու գիշեր կանգնած էին առաջաւոր դիրքերում, քարտէսի շուրջը և հեռադիտակը ձեռքին...

Կարսի անկումի նախօրեակում, սպարապետ Նազարբէկով Երևանից պահանջում է գեներալ Փիրումովին ուղիղ գծի մօտ հեռագրատուն, և նորա ուշադրութիւնն է դարձնում Վազինքէօյ բարձունքների վերայ, որ ռազմական քարտէսի վերայ իր որոշ, յայտնի համարը ունէր:

–Այս ի՞նչ դիրք է, Վահան, յօրանջելով հարցնում է գեն. Փիրումով իր շտաբի պետին:

– Սատանեն կ՛իմանայ, անհոգ պատասխանում է նախկին տիրացուն՝ ի զարմանս նոցա շրջապատող հեռագրատան պաշտօնեաների, - գնանք տուն, Դանիէլ բէկ, այնտեղ կ՛իմանանք...

Այդ ջղային օրերում ոստիկանապետը զեկուցեց, որ հասարակութեան և զօրքի հետ ինչ որ խլրտում կայ, մեծ դժգոհութիւն, որ կարող է վերածուել մեծ բռնութիւնների: Պարզուեց, որ գնդապետ Փիրվերդիև՝ միանգամայն օտարացած, ռուսախօս, որին յանձնուել էին Կարսի ամենանշանաւոր՝ շտաբի կարծիքով, Հարամ Վարդանի ամրութիւնների պաշտպանութիւնը, շարունակ զբաղեցնում էր իր հրամանատարութեանը յանձնուած զօրամասերին նորանով, որ բացատրում էր հայ զինուորին, թէ ի՞նչ ճանապարհներով պէտք է հեռանալ, փախչել, երբ թշնամին գալու լինի...

Այդ օրերում, երբ երկրի ջղայնութիւնը հասել էր ի ծայր՝ բաւական էր ի հարկէ մի փոքրիկ անզգուշութիւն, փափուկ խնդիրների առանցքում մեծ պայթում առաջ բերելու համար: Ես ուղարկեցի ոստիկանապետին գեներալ Փիրումովի մօտ և խնդրեցի այդ մեծ սկանդալը հրապարակից հանելու...

Միւս օրը գեներալ Փիրումով ասաց ինձ,– հա, գիտէք ի՞նչ է, գնդապետ Փիրվերդիեւ արբած էր, նա յայտնի արբեցող է, և ես նորան մի երկու օրով պատուիրեցի բանտարկել... Ես ոչ ժամանակ և ոչ տրամադրութիւն ունէի զբաղուելու այդ հարցի քննութեամբ, յամենայն դէպս ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ գնդապետին շատ քիչ էին հետաքրքրում հայկական իղձերը, և նա այսպէս թէ այնպէս նայում էր դէպի հիւսիս, և սպասում ռուսներին...

Կարսի անկումից մի քանի օր առաջ Կարս եկաւ սպարապետ Նազարբէկով: Երկաթուղու վագզալում ասեղ ձգելու տեղ չը կար: Ամբողջ տարածութիւնը բռնուած էր զօրաց վագոններով, գնում և գալիս էին վաշտեր, բարձում ու դատարկում ռազմական մթերքներ, և ամբողջ կայարանը մի պատերազմական հրապարակ էր, ուր բոլորը շտապում էին, բոլորը անցնում և բոլորը մտալից և զսպուած սպասում...

Գեներալ Նազարբեկով եկաւ երեկոյեան ժամի իններին: Շատ բնորոշ և հետաքրքիր էր, որ հայ սպարապետի շքախմբում, ուր կային գեներալներ, գնդապետներ և սպաների այլ աստիճաններ՝ հայերէն ոչ ոք չը գիտէր...

Հայոց սպարապետը աշխատում էր հանգիստ ձևանալ, բայց ծերունու գծագրութիւնը ասում էր, որ նա ջղայնացած է: Աննպաստ և անհամապատասխան պայմաններում՝ նա ստիպուած էր ընդունել պատուաւոր պահակը: Նա կծու նկատողութիւն արեց Կարսի կօմենդանտի շտաբի պետին, որ դիմաւորում էր նորան գեն. Փիրումովի հիւանդութեան պատճառով:

«Ես չէի տեղեկացրել Ձեզ իմ գալու մասին, և դուք, հետևապէս իրաւունք չունէիք ինձ պատուաւոր պահակ կանգնեցնելու: Բացի այդ, դառնութեամբ ասաց սպարապետը, այդ պատուաւոր պահակը և հանդէսը ներդաշնակ չեն իրերի դրութեան հետ... »:

Երբ ծերունի սպարապետը իջաւ վագօնից և դարձաւ դէպի պատուաւոր պահակը՝ երևում էր, որ նա տրամադրութիւն ունէր մայրենի լեզուով մի բան ասելու, բայց գեներալը հայերէն չը գիտէր...

– Կեցցէ Հայաստան...

Ջղայնալից և խորհրդաւոր լռութեան մէջ գոչեց յանկարծակի իմպօզանտ սպարապետը:

– Հազար բարով, Ձերդ բարձր գերազանցութիւն, թնդաց էլէկտրականացած օդը, և օրկեստրի մեր հայրենիք, թշուառ, անտեր հմայիչ հնչիւնները ջերմացրին գիշերային մթնոլորտը, և կարծես տրամադրութիւն ստեղծեցին...

Հայոց ծերունի սպարապետը արտասանեց այդ երկու խօսքը հայերէն՝ բայց մեր ականջին օտար և խորթ առոգանութեամբ, և իմ առաջ նորից բացուեց այն վիհը, որ բաժանում էր մեր հրամանատար կազմը հայ զինուորից և հայ ժողովրդից...

Սպարապետը այցելեց նահանգապետին, ապա անցաւ անկողնում պառկած ճակատի հրամանատար գեներալ Փիրումովի մօտ, և առաւօտը մեկնեց Բեգլի-Ահմեդ՝ ճակատ:

Բայց հայոց զօրաբանակի ծերունի սպարապետը ուրախանալու ոչինչ չունէր: Նորա զօրաբանակը նահանջում էր անտեսանելի թշնամուց Օգոստոսի 27-ից, և միայն Հոկտեմբերի 15-ին գեներալ Յովսէփեան հնարաւոր համարեց ընդհարուել Քեազիմ Կարաբեկիր փաշայի հետ, և կանգ առնելով Սարիղամիշի տակ Սելիմի տափարակում՝ ընդունեց քեամալիստների մենամարտը...

Այդ հանդիպումը վերջացաւ մեր պարտութեամբ, հրամանատար կազմը փախաւ առաջինը, զինուորները յետևեցին նորան...

Ականատեսները պատմում էին, որ զօրքի հրամանատար գեներալ Յովսէփեան այնչափ շփոթուել ու կորցրել էր իրան, որ չէր կարողանում հեռախօսի խողովակը ձեռքում պահել: Իսկ 4-րդ գնդի հրամանատար գնդապետ Միրիմա-

նով այնպէս էր կորցրել իրան, որ փոխանակ հեռախօսով, կամ գէթ սուրհանդակի միջոցաւ զեկուցելու գեներալ Յովսէփեանին դրութեան մասին՝ գնդապետը նստել էր կառքը և փախել... Փախել եկել էր գեներալ Յովսէփեանի կայանը, որ առաջաւոր դիրքերից 15 վերստ հեռաւորութեան վերայ էր, և եկել էր, ինչպէս ինքն էր բացատրում՝ զեկուցանելու գեներալին դրութիւնը... Իսկ այդ միջոցին գունդը ձգելով ծանրութիւնները, մասամբ հրացանները՝ փախչում էր...

Գործին և հանգամանքներին տեղեակ մարդիկ, ականատեսները՝ ասում էին, որ յաջողութիւնը մեր կողմն էր, թշնամին՝ թոյլ և անվճռական, և մի ուժգին գրոհ մեր կողմից՝ և նա կը փախչէր թողնելով ոչ միայն Սելիմը, այլև Սարիղամիշը... Իսկ թէ որչա՞փ կազմալոյծ և շփոթալից էր մեր զինուորական գործը առհասարակ՝ բաւական կը լինի առաջ բերելու այստեղ հետևեալ փաստը: Երբ գրեթէ երկու ամիս շարունակ նահանջելով մենք ընդհարուեցինք վերջապէս թշնամու հետ՝ յանկարծակի յայտնուեց, որ զինուորները բաւականաչափ փամփուշտի պաշար չունեն...

Միայն այդ րոպէին Կարսից պէտք է փամփուշտ ուղարկուէր ճակատ, բայց այստեղ էլ առաջ եկաւ մի գունաւոր տեսիլ, զինուորական իշխանութիւնը տեղափոխութեան միջոցներ, տրանսպորտ չունէր... Վազեցին նահանգապետի մօտ, և նահանգապետը ստիպուած էր իր աֆտօմօբիլը տալ ռազմաբեմ փամփուշտ կրելու համար...

Այդ տեսակ պատերազմը այլ ելք չէր էլ կարող ունենալ: Ասում էին, որ յաղթութիւնը մեր կողմն էր՝ բայց զինուորութիւնը փամփուշտ չունէր, և մենք ստիպուած էինք փախչել: Միևնոյն ժամանակ պատմում էին, որ Հոկտեմբերի 15-ին արտակարգ քաջութիւն ցոյց տուեց առաջի հետևակ գնդի հրամանատար գնդապետ Մազմանեան, բայց զօրաց շարքերը արդէն լքուած էին, կազմալոյծ եղած, և զօրքը թողնում էր պատերազմի դաշտը և փախչում...

Ի զուր էր մեր եռանդոտ Գարեգին եպիսկոպոս ձի նստած՝ սրընթաց շտապում դէպի մեր առաջի պարտութեան վայրը, ի զուր էր Ամենայն Հայոց կաթողիկոսի պատուիրակը տքնում բարձրացնելու Զօրաց մարած տրամադրութիւնը: Մեր զինուորի մէջքը կոտրեցին՝ ասում էր խումբ-խումբ մտախոհ կանգնած ժողովուրդը, նա մեղաւոր չէ, նորան փախուստի մատնեցին...

Եւ այդ չարաբախտ օրուանից մեր շարքերը նոսրանում էին ժամեժամ:

Ամբողջ ոստիկանութիւնը զբաղուած էր նորանով միայն, որ պահակում էր ճանապարհները, և ամբողջ վաշտեր ձերբակալում: Զինուորների այդ խմբերը ձգելով պատերազմի դաշտում զէնքը՝ անգլուխ, կորցրած հրամանատար կազմը, փախչում էին, հաշիւ չը տալով իրանց, թէ ո՞ւր են փախչում և ինչո՞ւ... Այդ օրերում երբ ես ու մինիստր Բաբալեան գեներալ Փիրումովի մօտ էինք՝ բերեցին մի խումբ կալանաւորուած զինուորներ: Ինչո՞ւ էք բոբիկ, ո՞ւր են Ձեր նոր ամերիկական կոօշիկները, - հարցրեց զինուորներին շտաբի պետը: Զինուորները

գլխակոր լուռ էին... Պարզուեց, որ նոքա ձգել էին դիրքերում ոչ միայն իրանց հրացանները՝ այլ հանել և ձգել էին ճանապարհին և իրանց կօշիկները, որովհետև «պօլ սապօժկով» վազել, փախչելը դժուար է... Այդպիսի կրթութիւն էին ստացել մեր զինուորները իրանց ռուս և ռուսախօս հրամանատարներից:

Երևանը, թէև արդէն ուշ՝ ռմբակոծում *(տեքստը խզուած է)* ... գեներալ Փիրումովին և ինձ՝ բռնել դասալիքներին և կախել... Ինքնաբերաբար, Հոկտեմբերի 16-ին, բարոյական տպաւորութիւն գործելու համար՝ ես հրամայեցի ինժենիեր Քոչարեանցին Աղէքսանդրեան մեծ փողոցում կախաղան կառուցելու: Մի քանի ժամից յետոյ կախաղանը պատրաստ էր, և ժողովրդի մեծ բազմութիւն, արտակարգ բաւականութեամբ պաշարել էր օրուայ այդ մեծ պահանջը...

Ես պատուիրեցի ոստիկանապետին տեղեկացնել գեներալ Փիրումովին, որ կախաղանը պատրաստ է:

Բայց այստեղ պէտք է ասել, որ առաջի բռնուած դասալիքներն էին սպանները, յետոյ գալիս էին զինուորները: Գեներալ Փիրումով կարգադրեց, որ բոլոր ձերբակալուած սպաներին և զինուորներին զինուորական դատի տան: Միւս օրը դատարանը կայացրեց իր առաջի և վերջի վճիռը՝ կախաղան բարձրացնել ինչոր մի 17-18 տարեկան մի կամաւորի...

Այդ վճիռը մեծ դժգոհութիւն առաջ բերեց թէ՛ զօրաց շարքերում և թէ՛ հասարակութեան մէջ:

Զինուորները բացէ ի բաց ասել էին, առաջ պէտք է կախուեն սպաները, և սպառնալիք էին ուղղում գեն. Փիրումովի հասցէին... Գեներալը տատանուեց, նա ոչ այս արեց և ոչ այն, նա բեկանեց միակն այդ հրապարակական բողոքի ճնշման տակ՝ դատարանի վճիռը: Իսկ կախաղանը կորցնելով իր իմաստը, դադարեց սպառնալ և ամօթ տարածել... Զօրահրամանատար Փիրումովի այդ պատմական տատանման առիթով շրջում էին բազմաթիւ պատմութիւններ, բայց փաստը միայն այն էր, որ բազմաթիւ փախած սպաներից և զինուորներից և ոչ մէկը չը պատժուեց... Եւ դժուար էր ասել թուլութիւն, պաշտօնական անփոյթ վերաբերմունք էր այդ՝ թէ մի եզակի ոճիր... Յամենայն դէպս զօրքերի հրամանատարի այդօրինակ զիջողութիւնը՝ մենք գնեցինք երկրի արիւնով, և մեր պետականութեան գնով: Նորին գերազանցութիւնը երկրէն անյայտ միտումներով՝ տատանուեց օգտուելու կախաղանով իր հայրենիքի փրկութեան համար, իսկ այդ տատանումը խորտակեց ոչ միայն այդ փայտէ գերանները՝ այլև այն պետութիւնը, որի զօրքերի հրամանատարելու մեծ պատիւը նա վայելում էր բախտի քմահաճոյքով:

Այդ առանցքում չեմ կարող լռութեան տալ մի փաստ ևս, որ շատ գունաւոր բնորոշում է մեր օրերը և իրերի դրութիւնը: Գեն. Փիրումով զինուորական դատարանի նախագահ նշանակեց իր փեսայ փոխգնդապետ Միրզօեւին:

Վերջինս Կարսի պահակային գումարտակի հրամանատարն էր, բայց զինուորների բողոքալից ցոյցերի պատճառով՝ Երևանը ստիպուած էր հեռացնելու նորան պաշտօնից, զեղծումների համար:

Եւ այդ արատաւորուած սպան՝ բոլորին յայտնի այդ իմաստով, գալիս էր այսօր նախագահելու այն բարձր ատեանում, որ կոչուած էր վերականգնելու հայրենիքի պատիւը...

Եւ մի՞թէ նա բարոյական կորով կարող էր ունենալ հրամայելից գոչելու փախչող սպաներին ու զինուորներին՝ դարձէք ձեր դիրքերը և այնտեղ քաւեցէք ձեր մեղքը: Մի՞թէ նա կարող էր հեղինակալից կախաղան բարձրացնելու հայրենիքի դաւաճաններին...

Պէտք էր զարմանալ մի՞թէ, որ զեղծումների համար գնդի հրամանատարութիւնից արձակուած Միրզոեւ քաջութիւն չունեցաւ անվճռաբեկ որոշումներ կայացնելու: Եւ շատ բնական էր ի հարկէ, որ կախաղանի համար նա գտաւ միայն մի ինչ-որ անչափահաս կամաւոր միայն, և որին նորա աներ գեներալ Փիրումով ստիպուած էր «ներումն» շնորհելու...

Այդ դատարան չէր ի հարկէ, այդ մի նախատինք էր, մի ծաղր իրաւակարգի, որ անդրադառնալով օրուայ վերապրումները՝ բնորոշում էր բարքերը, մեր ժամանակը...

Եւ այդ առանձնակի պայմաններում երբ մարդկանց՝ նոցա մեծերին, անուանում էին իրանց անուններով, և կարծես առիթ էին որոնում մեծ սկանդալ, մեծ Պանամա բանալու՝ ժողովուրդը և էլէկտրականացած էր և ի ծայր անտարբեր...

Զէնքի չարագուշակ շառաչիւնը, ռուսախօս և մեզ օտար հրամանատարութեան անցուդարձը՝ ստեղծել էր անտարբեր մթնոլորտ, և հրապարակը, որ այնպէս սիրում է անդրադառնալ օրուայ նորութիւններին, եկող գնացողին՝ միայնգամայն անհոգ էր կարծես, անուշադիր: Գալիս և գնում էր սպարապետ Նազարբեկով, անցուդարձ էր անում գեներալ Սիլիկով, գեներալ Արարատով, գեներալ Կազարով և միւս մեծ և փոքր ռուսախօս գեներալներն ու սպաները՝ բայց այդ բոլորը կարծես անցնում էր ժողովրդի ուշադրութեան մօտով, առաջ չը բերելով ոչ միայն յոյս, սպասելիք՝ այլ նոյն իսկ հասարակ հետաքրքրութիւն դէպի նոր մարդը և նոր տեսարան...

Եւ երկրի այդ վերաբերմունքը դէպի հրամանատար կազմը՝ ունէր ի հարկէ իր մեծ հոգեբանական բացատրութիւնը: Նա ջլատում էր մթնոլորտի զինուորական կորովը, և առաջ չէր բերում եռանդ ու կրակ...

Բայց ահա հաղորդում են, որ Աղէքսանդրապօլից գալիս է թիւրքահայերի մի մեծ հեծելազօր զօրամաս, և հրամանատարը՝ ժողովրդականութիւն վայելող խմբապետ Սմբատ: Եւ անվերաբեր տրամադրութիւնը յանկարծակի փոխւում է: Խումբ-խումբ կանայք, մարդիկ աւետում են իրար այդ նորութիւնը՝ և երկրի

ուշադրութիւնը կենտրոնանում է խմբապետ Սմբատի շուրջը: Զօրամասի կազմակերպութիւնը բուն հայդուկային է՝ հրամանատար խմբապետ Սմբատ, օգնական Արտուշ խան, կամաւորական առանցքում անուն և հռչակ ստացած գումարտակների առաջնորդները՝ Մկօ, Ասլան, բոլորը ժողովրդի միջից, տարուած նորա ճաշակով և նորա միտումներով:

Խմբապետ Սմբատ իր շտաբով այցելում է նահանգապետին, և նահանգապետը հարկաւոր է համարում ընդգծել երկրի առաջ ժողովրդական հերոսի նշանակութիւնը, և մեծարում է նորան հանդիսաւոր ճաշով:

Եւ ճաշկերոյթի ժամանակ՝ ուր ներկայ էին միայն ազգային օրիենտացիայի մարդիկ, մինիստր Վրացեան, մինիստր Բաբալեան, 4-րդ բրիգադայի հրամանատար Սեպուհ, պարլամենտի անդամներ բժիշկ Ղազանչեան և ուրիշները՝ բայց ոչ մի ռուսախօս: Նահանգապետը դառնալով խմբապետ Սմբատին՝ ասաց. «Այսօր համազգային և պետական երկունքի ծանր օրերում՝ ես մեծ հաճոյք եմ զգում ողջունելու Ձեզ: Ժողովրդի բնազդը բեւեռել է Ձեր շուրջը իր սպասելիքը, և մենք մեծ հաւատով դէպի ժողովրդական զգացմունքը՝ հղում ենք Ձեզ մեր բարեմաղթութիւնները և սրտատրոփ աւետիս սպասում... »:

Վիթխարի Սմբատ՝ այդ մռայլ լեռների սիրահարը, լցուած և շատ բարձր տրամադրութեամբ՝ պատասխանեց. «Ես երկրի խորքերիցն եմ, ժողովրդի միջից, ծառայ եմ այդ երկրին և այդ ժողովրդին... »:

Նահանգապետի այդ ուշադրութիւնը դէպի ժողովրդական հերոսը, դէպի «խմբապետը»՝ մեր ռուսախօս հրամանատարութեան ճաշակովը չէր, բայց ես անում եմ ինչ կարող եմ, թող կատարէ աւելի լաւ՝ ո՞վ կարող է, մտաբերեցի ես նշանաւոր դարձուածը:

Բայց այդ օրերում տարածուեց մի մեծ նորութիւն, բուն հայկական 4-րդ բրիգադան Սեպուհի հրամանատարութեամբ, որ մի քանի ամիս առաջ ինտրիգ միտումներով հեռացուած էր Կարսի նահանգից՝ վերադառնում էր: Այդ լուրը մեծ սենսացիա, մեծ տրամադրութիւն ստեղծեց նահանգում: Եւ մարդիկ, որ առհասարակ տրամադիր էին մեկնութիւնները իրանց օգտին անել՝ ասում էին, որ Սեպուհ կը յօրինէ գեներալ Յովսէփեանին, որ միայն նահանջում էր և միայն ի փախուստ նայում...

Այստեղ պէտք է ասեմ, որ առաջի խուճապը Կարսի նահանգում՝ զօրաց հրամանատարութիւնը առաջ բերեց Սեպտեմբերի սկիզբներում: Նա առանց որևէ հիմունքների և տուեալների՝ դատարկեց ոչ միայն Մերդենեկ, այլև Խորասան, Սարիղամիշ և Կաղզուան, և բռնկեց այնպիսի մի խուճապ, որի առաջն առնել շատ դժուար էր:

Ամենքից առաջ լուսաբացին, գաղտագողի, պետական բեռնակիր աֆտոմոբիլներով և սայլերով՝ մեր հրամանատարութիւնը փոխադրեց դէպի Աղէքսանդրապոլ իր ընտանիքները, իր բոլոր ունեցուածքը, իրերը, պաշարը և վերջի

ջարդուած աթոռը: Այդ առաւօտ քաղաքում մեծ իրարանցում էր: Ժողովրդի մեծ բազմութիւն՝ տեղեկանալով, որ գեներալները և սպաները գիշերը փախցրել են Աղէքսանդրապոլ իրանց բոլոր ունեցածը, և այդպիսով խուճապի մատնել ազգաբնակութիւնը՝ եկաւ այդ առիթով նահանգապետի մօտ իր բուռն բողոքը յայտնելու:

Ես բացատրեցի ժողովրդին, որ խուճապի ենթարկուելու մենք առայժմ ոչ մի հիմք չունենք, և ամբոխի մի քանի ներկայացուցիչներին հրաւիրեցի իմ բնակարանը համոզուելու, որ նահանգապետը միանգամայն հանգիստ է, տեղից չի շարժւում և նորա բոլոր իրերը իրանց տեղումն են, այստեղ է և նորա ընտանիքը:

Ամբոխը միանգամայն հանգստացաւ և ցրուեց:

Բայց այդ առանցքում պատահեց մի բնորոշ դէպք: Երբ գեներալների սպաների ընտանիքները բազմաթիւ աֆտօմօբիլներով անցնում էին Մազրա հայկական գիւղով դէպի Աղէքսանդրապոլ՝ գիւղացիները կանգնեցնում են այդ մեծ գնացքը և հարցնում. «Ի՞նչ էք փախչում, ինչ կայ», տրամադրութիւն ունենալով արգելել նոցա անցնելու: Բայց սպաներից մէկը, որ ուղեկցում էր այդ գնացքը՝ ասում է, որ այդ նահանգապետի ընտանիքն է և նորա իրերը, և գնացքը արագ անցնում է...

Նահանգապետը անուն և համարում ունէր երկրում, և ինչու այդ կրիտիկ և փափուկ մոմենտում չը շահագործել այդ նահանգապետի անունը՝ ազատ փախչելու համար:

Միջոցներ ձեռք առնուեցին վերադարձնելու քաղաքի և գիւղերի գաղթականութիւնը: Եւ այդ միջոցին, երբ մարդիկ արդէն յուսալից տրամադրուած դառնում էին դեռ ծխացող օջախները՝ Կարս-Աղէքսանդրապոլ լայն խճուղու վերայ երևաց հրամանատար Սեպուհի աֆտօմօբիլը, ուր Բաթումից նա ստացել էր մի խումբ համակրողներից որպէս ընծայ: Կառքը դժուարութեամբ էր անցնում գաղթական սայլերի շարքերով, իսկ ժողովուրդը ճանապարհի ամբողջ տարածութեամբ աւետիս տալով և ձայնակցելով իրար՝ շատ բարձր տրամադրութ-եամբ գոչում էր կեցցէ Սեպուհ, կեցցէ հայ ժողովուրդը...

Երկրի այդ մեծ օվացիայի լուրը հասաւ Կարս, և անդրադարձաւ և քաղաքում, և ես նոյնութեամբ բնորոշելով հոգեբանական մօմենտը և վերապրումները՝ հեռագրեցի այդ մասին կառավարութեանը և հայկական հեռագրական գործակալութեանը:

Այսպէս է երկրի իսկական դէմքը, և այդտեղ են նորա առանձնայատուկ գծերը, իրանց բոլոր պարզութեամբ և մեծ անկեղծութեամբ... Բայց մեր ռուսասէր հրամանատար կազմին դուր չեկաւ Սեպուհի անակնկալ Կարս գալը:

Զբաղուած բուրդ և այլ «վալիուտային» ապրանք կրելով «ռազմաբեմից» (այն քուրդ գիւղերից, որի ազգաբնակութիւնը իրանք էին փախցրել)՝ մեր հրամանա-

տար կազմը դեռ յոյս ունէր այդ սպեկուլատիւ առանցքում դափնիք վաստակել, և շատ անախորժ էին այդ գալիք հռչակին մասնակից անելու «Սեպուհին-Մեպուհին», «Սմբատին-Մըմբատին», ասում էին ռուսերէն կոտրատելով մեր օրերի այդ սպաները:

Բայց մի երկու օրից յետոյ՝ թէ՛ հասարակութեան և թէ՛ Սեպուհի տրամադրութիւնը փոխուեց, նորից ծայր էր տալիս վաղեմի, ծանօթ ինտրիգը...

Սեպուհին շատ շտապ առաջարկել էին մեկնել Կարս, իսկ բրիգադան՝ ասել էր նորան Երևանի բարձր հրամանատարութիւնը, կը գայ, կը հասնի Ձեզ: Բայց օրերը անցնում էին՝ բրիգադան չեր գալիս, և Սեպուհ անգործ նստած Կարսում՝ ջղայնանում էր և անվերջ այդ առիթով փոխանակւում հեռագիրներով մերթ սպարապետի, մերթ գեներալ Սիլիկովի շտաբի հետ: Իսկ գեներալ Փիրումով՝ աւագը Կարսում, առարկում էր Սեպուհին, որ նորա անելիքների մասին Կարսի նահանգում նա տեղեկութիւն չունի...

Վերջապէս մի քանի օրից յետոյ եկաւ Սեպուհի բրիգադայից մի գումարտակ միայն, և Սեպուհ հրաման ստացաւ այդ գումարտակի և մի հարիւրակ ոստիկան՝ հեծեալ միլիցիայի գլուխ անցած, առանց թնդանօթի և առհասարակ անկազմակերպ՝ անցնել Արդահան, և կազմել մեր ոյժերի աջ թևը: Մասնագէտ պէտք չէ լինել ասելու համար, որ այդ կոմիկ ոյժերով չէր կարելի, առաջինը՝ թշնամու գրեթէ թիկունքը անցնել, և կարիք չը կար վերջապէս՝ այդ փոքրիկ զօրաբանակի գլուխ կանգնեցնել բրիգադաի հրամանատարին, մի մարդու՝ որին յամենայն դէպս հաւատում և սիրում էր երկիրը, և որի պատիւը շօշափելով՝ մենք մի աւելորդ անգամ հեռացնում ենք մեզանից ժողովրդական մասսաները: Կատաղեց մեր Սեպուհ, մռնչաց ռուսախօս գեներալների հասցէին՝ և ուղարկեց մինիստր նախագահին իր հրաժարական հեռագիրը:

Կառավարութիւնը չէր ընդունել ի հարկէ անուանի հայդուկի այդ իրաւալից յուզմունքը, և սպարապետ Նազարբեկով խնդրեց նորան անցնել Արդահան: Բայց այնուամենայնիւ պէտք եղաւ մինիստր Վրացեանի, Բաբալեանի և իմ միջամտութիւնը: Մենք հանգստացրեցինք Սեպուհին՝ և նա անցաւ Զարուշատ, ուր պէտք է լինէր նորա շտաբը, և ուր պէտք է կազմակերպուէին նորա հրամանատարութեանը յանձնուած զօրամասերը:

Զարուշատ գաւառակը քուրդ և թուրք ազգաբնակութեան կենտրոնն է, որտեղից մեծ խճուղին անցնում է թէ Աղէքսանդրապօլից և թէ Կարսից դէպի Զլդրի լիճը և այնտեղից Արդահան, Ախալքալաք և Ախալցխայ: Ես կարգադրեցի հրամանատարին՝ հանդիսաւոր ընդունելութիւն կազմակերպել և թուրք ազգաբնակութեանը մեծ խմբերով այդ տարածութեան բոլոր կողմերից շտաբից դիմաւորելու Սեպուհին, և աղուհաց մատուցանելու: Իսկ մի երկու օրից յետոյ դրութեանը կշիռ և համարում տալու համար՝ ես պատուիրեցի հեռագրել Զարուշատ գաւա-

ռակի պետին, որ մինիստր Վրացեան, Բաբալեան և ես գալիս ենք այցելելու մեր այնտեղի զօրամասերը, և նոցա հրամանատար Սեպուհին:

Սուրհանդակներ էին ուղարկուած և դէպի Չլդըր՝ քրդերին տեղեկացնելու, և երբ մեր աֆտօմօբիլը կանգ առաւ Զարուշատի այն հրապարակում, ուր գտնւում էր հրամանատար Սեպուհի կայանը՝ այդ հրապարակը ծայրէ ի ծայր լցուած էր քուրդ, թուրք անուանիներով: Այլազգի այդ մեծ բազմութիւնը հաւաստիացրեց, որ երկիրը միանգամայն հնազանդ և հպատակ է իր կառավարութեանը, և ուրախութիւն յայտնեց տեսնելու զօրքի գլուխ անցած հրամանատար Սեպուհին, որի բարի համբաւը աւելացրեցին քրդերը մեզ յայտնի է:

Մինիստրները շատ գոհ մնացին թէ երկրի ընդհանուր դրութիւնից այդ քրդական գաւառամասում և թէ Սեպուհի զօրամասից:

Գումարտակը տաճկահայերից էր, հրամանատար կազմը, շտաբը բացառապէս հայեր՝ և ոչ մի ռուսախօս, հրամանատարութիւնը մայրենի լեզուով, և Կարսի անվստահ մթնոլորտից յետոյ՝ մենք թողնում ենք այդ Զարուշատը կարծես սփոփուած:

Բայց այդ ոյժերով այնուամենայնիւ՝ Սեպուհ չէր կարող շարժուել Արդահան:

Երբ գեներալ Յովսէփեանի զօրամասերը փախան Մերդենեկից, և երբ այդ շրջանի ամբողջ քրդութիւնը հարստահարուած և կեղեքուած մեր գնդապետներով և նոցա այնտեղ թափուած բազմաթիւ ազգականներով անցաւ Տաճկաստան՝ մենք կանգնած էինք մի սպառնալից վրէժխնդրութեան առաջ:

Մինչ Սեպուհի անորոշ դրութիւնը Զարուշատում տարուբերւում էր գեներալ Սիլիկովի և գեներալ Փիրումովի հեռագրական բանակցութիւնների առանցքում՝ իրերի դրութիւնը ստիպում է այդ գեներալներին հրաժարուել դէպի Արդահան մարշից, և ուղղել Սեպուհին դէպի Մերդենեկ, ուր կուտակւում էին ոչ միայն տաճկաց կանոնաւոր ոյժերը՝ այլև այն քրդերը, որոնք մեր սիստեմատիկ բռնութիւնների տակ թալանուած ու կեղեքուած՝ թողել էին իրանց գիւղերը և փախել դէպի տաճկական սահման: Բայց այդ ի հարկէ արդէն ուշ էր: Շատ ուշագրաւ պէտք է համարել, որ գեներալ Յովսէփեան և գեն. Փիրումով շարունակ պնդում էին, որ տաճկաց գլխաւոր ոյժը կենտրոնանում է Մերդենեկում, որ այնտեղից, լեռներով իջնելով Շիրակի դաշտը՝ տաճկաց զօրաբանակը կը գրաւէ Կարս-Աղէքսանդրապօլի երկաթուղու գիծը և ապա կը պաշարէ Կարսը:

Անելով այդ հեղինակաւոր յայտարարութիւնը՝ գեներալ Յովսէփեան փախցնում էր իր զօրքը Կարակուրտ-Սարիղամիշ Կաղզուանի շրջաններից, այսինքն՝ տարբեր ուղղութիւններից, և քաշւում, պատսպարւում էր Կարսի պարիսպների տակ...

Իսկ Էլ Աղզը-Ջվալ Աղզը ժողովուրդը ասում էր, որ թշնամին կենտրոնացնում է իր ոյժերը բոլորովին հակառակ կողմում, և ժողովրդի մեկնութիւնները, որ հիմնւում էին երկրի ուսումնասիրութեան վերայ՝ արդարացան:

Կարաբեկիր փաշայի գումարտակները և հրոսակախմբերը կենտրոնանում էին Ալաջայի բարձրաւանդակներում, թողնելով մեր ռազմագէտներին զառանցել միանգամայն տարբեր ուղղութեամբ:

Եւ այդ այն հռչակաւոր Ալաջէն էր, ուր 77 թուին, Կարսի պաշարման նախ-օրեակում, հայ ազգի գեներալ Շելկովնիկով պատմական ջարդ տուեց Մուխթար փաշայի գնդերին: Իսկ երկրի աշուղները, փառաբանելով հայ տաղանդաւոր ռազմագէտին և վշտալից խփելով քնարի լարերին՝ ասում էին «Կործանուես դո՛ւ, Ալաջադաղ գնացողը չը դարձաւ... »:

Պէտք է ասել, որ Կարսի նահանգի հրամանատար կազմի դէմքը պարզ էր բոլորի համար: Թէ կառավարութիւնը և թէ հասարակութիւնը որոշ կարծիք ունէին այդ օտարացած և մեր երկրին միանգամայն խորթ սպայութեան մասին: Բայց մենք ևս ունէինք մեր աստղերի պալատը՝ և այդ պալատը անջատ կառավարութիւնից և պարլամենտից, տնօրինում էր երկրի բախտը:

Գեներալ Սիլիկովի վկայութեամբ՝ դեռ 19 թուին, ամառը, երբ պարզուեց Կարսի զինուորական պահեստների մեծ գողութիւնը՝ նա էլ այն իշխանաւորների թումն էր, որ հարկաւոր էին համարում հեռացնել գեներալ Փիրումովին Կարսից: Բացի այդ՝ ասում էր գեն. Սիլիկով, գեն. Փիրումովի Կարսի կօմենդանտ նշանակուելը տակաւին ցաւալի մի թիւրիմացութիւն էր, և ես դեռ այն ժամանակ մեծ կասկածի տակ դնելով գեն. Փիրումովի «Սարդարապատի հերոս» տիտղոսը՝ գտնում էի, որ նա ամենաշատը մի գնդի հրամանատար կարող է լինել, և ոչ երբէք աւելի: Եւ այդպէս էլ՝ ասում է գեն. Սիլիկով, որոշուեց, գեն. Փիրումով պէտք է թողնէր Կարսը:

Բայց այդ օրերում Կարսի հրամանատարը ուխտագնացութիւն է կատարում Երևան, դէպի աստղերի պալատը, «ընկերական շրջանները», և դրութիւնը դիւթիչ կերպով փոխւում է, Փիրումով մնում է իր տեղում և վերադառնում է Կարս...

Ես՝ աւելացրեց գեն. Սիլիկով, որպէս Զօրաց մինիստրի այն ժամանակուայ օգնական՝ բուռն կերպով բողոքեցի այդ առիթով, և շատ սուր ընդհարուեցի գեն. Նազարբեկովի հետ, որ առհասարակ իր եսը չունէր, և միայն յարմարւում էր և բոլորի հետ համաձայնւում...

Բայց ես անզօր էի՝ ասում էր դառնութեամբ գեն. Սիլիկով, որ մի լուրջ և բանիմաց զինուորականի համբաւ ունէր: «Սարդարապատի հերոսը» Աստղերի պալատում իր մարդն էր, և մենք պէտք է տեղի տայինք հրապարակում աղմկող այդ աներևոյթ ոյժին... բայց մի քանի փաստեր ևս այդ ուղղութեամբ:

Մեր հրամանատարութիւնը Սարիղամիշի շրջանում, բացի իրանից ոչ մի իշխանութիւն չը ճանաչելով, բացի թալանից՝ ուզում էր զբաղուել և քաղաքականութեամբ: Քաջարի սպաները կեղեքում էին այդ մութ և հեռաւոր անկիւններում քրդերին և միևնոյն ժամանակ, ի դէմս իրանց գեներալների՝ բանակցութիւններ էին վարում Երևանի հետ տեղական ազգաբնակութեան տրամադրութիւնների

մասին, երկրի քաղաքականութեան մասին, իրանց հեղինակաւոր դիտողութիւնները անում էին և տաճկաց սահմանի այն կողմի անցուդարձի մասին: Եւ դժուար էր ասել, այդ վաշտապետները, գումարտակների և գնդերի հրամանատարը և նոցա գեներալները զինուորական իշխանութիւն էր՝ թէ ադմինիստրատիւ, վարչական, և բացի այդ, քաղաքական միսիա ունեցող մի մարմին...

Յամենայն դէպս, այդ լայն գործունէութեան շրջափակում՝ նոքա շատ վարպետօրէն էին տանում իրանց անձնական գործերը այդ մութ և խուլ անկիւններում, իսկ հրապարակում, դուրսը, մանաւանդ Երևանում՝ ուր զինուորականը շատ մեծաշնորհ էր, նրանք անվրէպ լուծում էին ոչ միայն վարչական՝ այլև բարդ քաղաքական խնդիրներ... Այդ անիշխան և կամայական մթնոլորտում՝ բնականաբար պէտք է առաջ գար ժողովրդի մէջ բուռն դժգոհութիւն, և Սարիղամիշի շրջանի մի երկու քուրդ գիւղ թողեցին հայրենի վայրերը և զինուորականների բռնութիւններից փախան Տաճկաստան: Եւ այդ դեռ 19 թուին էր, ամառը: Եւ երբ այդ քրդերը անցնում էին քաղելու իրանց արտերը՝ մեր քաջ հրամանատարութիւնը թմբկահարում էր ամէնուրէք, որ այդ «յարձակում է», և այդ «յարձակումը» կատարում են ոչ թէ քրդերը՝ այլ տաճկաց կանոնաւոր զօրքը... Եւ կառավարութիւնից նոյնիսկ հրահանգ չը ստանալով՝ գեներալները իրանց կողմից «յարձակում էին» այդ «տաճկաց բանակի» վերայ... և հեռագրում Երևան «թշնամին յետ է շպրտուած... »: 19 թուի վերջերում ես ստացայ Ներքին գործերի մինիստր Գիլխանդանեանից հետևեալ ծածկագիր հեռագիրը. «Մեր գլխաւոր շտաբի շաբաթօրեակ հաղորդագրութիւններում ասուած է, որ Սարիղամիշի և Օլթիի ուղղութեամբ մեր զօրքերը ընդհարում են ունեցել տաճկաց զօրամասերի հետ, և կատաղի կռուից յետոյ՝ յետ են շպրտել թշնամուն: Հեռագրեցէք, ինչո՞ւ այդ արտակարգ դէպքերի մասին ես Ձեզանից ոչ մի տեղեկութիւն չունեմ»: Մինիստրի այդ հարցապնդման առիթով՝ ես ուղարկեցի նորան հետև-եալ հեռագիրը. «Այդ բոլորի մասին առաջին անգամն եմ լսում, մանրամասն-ութիւնները փոստով»: Եւ փոստով ես գրեցի մինիստրին հետևեալը. «Սարիղամիշի ուղղութեամբ տեղի է ունեցել հետևեալ դէպքը: Մի քանի մաքսանենգ քրդեր Արաքսը անցնելու ժամանակ՝ յետապնդւում են մեր զինուորների կողմից: Քրդերից մեկը սպանւում է, միւսներին մերոնք կողոպտում են: Այդպէս է «Սարիղամիշի ուղղութեամբ պատերազմը մեր և տաճկաց զօրամասերի միջև... »:

Գալով Մերդենեկի ուղղութեամբ տեղի ունեցած ճակատամարտին, որ մեր հրամանատարութեան հաղորդագրութեամբ վերջացել է տաճկաց զօրքի պարտութեամբ՝ այդտեղ էլ դիպուածը այսպէս է պատկերանում: Մերդենեկի մեր հրամանատարութիւնը միտք է յղանում ամրացնել իր առջևի բլրակներից մէկը, և այդ բլրակի վերայ բարձացնում և կանգնեցնում են մի թնդանօթ: Քրդերի մօտակայ գիւղերից մի խումբ ձիաւորներ գալիս են տեսնելու, թէ այդ ի՞նչ աշխատանքներ է կատարւում այդ լեռան գագաթին, և երբ քրդերը մօտենում են բլրա-

կին՝ մեր զինուորականները, потехи ради, թնդանօթ են արձակում, և քրդերը փախչում են ի մեծ զուարճութիւն հայ սպաների... Եւ եթէ այդ էլ՝ վերջացրեցի ես մինիստրին իմ գրութիւնս, հայկական շտաբի հաղորդագրութիւններում անուանւում է «պատերազմ», ուր մենք «յետ ենք շպրտել թշնամուն», դա էլ այլ խնդիր է...

Այդպէս էին մեր գեներալների «յաղթութիւնները» և այդպէս էին նրանք ռեկլամում իրանց անձնուէր ծառայութիւնը երկրին և հայրենիքին:

Ծանրանալով մեր յիշողութիւններում հայկական բանակի հրամանատար կազմի վերայ, մենք առաջ բերեցինք բազմաթիւ տուեալներ նորա անցուդարձից:

Այդ փաստերը՝ կարծում ենք, որոշ չափով պարզում են մեր սպայութեան բացասական կողմը, և մի անգամ ևս գալիս են ասելու, որ այդ հրամանատարութիւնը չէր կարող ազգային բանակ կրթել, հետևապէս չէր կարող պաշտպանել իր հայրենիքի պատիւը: Բնորոշելով մեր այդ գեներալներին, գնդապետներին և միւս սպաներին՝ մենք այդ խայտաճամուկ բազմութեան մէջ երկու խմբակցութիւն ենք տեսնում: Նոցանից առաջինը՝ հայ սպայութեան «հայրերը» բաղկացած էր ռուսներից և բացառապէս ու միայն ռուսերէն խօսող հայ գեներալներից ու սպաներից: Իսկ հրամանատար կազմի միւս մեծ բազմութիւնը՝ այդ մեծ պատերազմի օրերում նորընծայ հայ սպաներն էին, այդ թէժ գլխապետները, գնդապետները և գեներալները, որոնցից մեծագոյն մասը դեռ երեկ եկեղեցիներում տիրացուներ էին, խանութպաններ, գործակատարներ և լաւագոյն դէպքում ծխական ուսումնարանի վարժապետներ:

Պէտք չէ ասել ի հարկէ, որ գաղափարը չէր ծգել նոցա պատերազմի դաշտը: Նոցանից մի մասը բռնի էր կոչուել զէնքի, միւսը եկել էր հարստանալու, և բոլորը միասին բռնուած էին գիշատիչ բնազդով: Բայց այդ պէսպէս սպաները, հայ գիւղացիներ, գաւառացիներ և յամենայն դէպս հայ աւազանից դուրս եկած մարդիկ՝ համակուած պատերազմի բացասական հովերով, կանգուն չէր այլևս իր վաղեմի հաւատալիքներում: Եւ նմանուելով իր մեծերին, պատերազմի մթնոլորտում գերիշխող ընդհանուր տարազին՝ սպայութեան այդ խմբակցութիւնն էլ տքնում էր ռուսերէն խօսելու, բայց նա ռուսերէն միայն կոտրատում էր...

Շատ ծիծաղելի էր տեսնել այդօրինակ գլխապետ-գնդապետին:

Տարուած հրապարակի հովերով, դեռ տակաւին վերապրելով ռուս բանակի մեծ աղմուկ անցուդարձը՝ նա շարունակում էր սահել այդ մթնոլորտում, կարծելով, որ նա դարձեալ Ռուսաստանումն է և ենթակայ ռուս իշխանութեան: Այդ նախկին տիրացուն և նախկին գործակատարը այսօր գնդապետ ու գլխապետ դարձած՝ իր արժանաւորութիւններից ցածր էր համարում հայերէն խօսել, և ռուսախօս իր մեծերի հետ ընդհանուր ներդաշնակութիւն պահպանելով՝ նա էլ ռու-

սերէն էր կոտրատում, առաջ բերելով ռուսների մէջ միայն հեգնանք և միայն ծաղր:

Աւելի քան բնորոշ պէտք է համարել, որ այս և այն հանդիսաւոր ճաշկերոյթների և ընթրիքների ժամանակ՝ այն հանդէսների, որ կապուած էին հայ ազգային մի որևէ մեծ դէպքի հետ՝ այդ ռուսները, ռուսերէն խօսողները և ռուսերէն կոտրատողները Боже, царя храни էին երգում...

Կասեմ աւելի, ռուս սուվերէն այդ օրիներգը՝ մեծ, շատ բարձր տրամադրութիւն էր ստեղծում այդ ռուսախօս հայ գեներալների և սպաների շրջանում, և նոցա արտասուալից աչքերում՝ դուք տեսնում էիք մեծ թախիծ դէպի ռուսականը, և մեծ կարօտ դէպի այն իշխանութիւնը՝ ուր այդ գեներալներն ու գնդապետները երբեմն այնպէս ընտանի էին և այնպէս երջանիկ...

Այդ հաւաքատեղիներում սովորաբար արծարծւում էին քաղաքական ընթացիկ խնդիրներ, ուր հայկական իշխանութիւնը կենտրոնական տեղ էր բռնում: Արհամարհալից և հեգնօրէն այդ գեներալները և գնդապետները՝ ծաղրում էին «հայկական սուվերնիտետը», դրուատում էին ռուս պետական անցուդարձը, հայ մինիստրներին «խմբապետներ» անուանում, և կառավարութեան պահանջը բանակի ազգայնացման մասին զաւեշտ զառանցանք համարելով՝ այդ առիթով ռուսերէն էին սրախօսում...

Բաժակաճառերը վերջանում էին ռուսերէն «ուռայով», ուր բոլորի հայացքը դառնում էր դէպի հիւսիս՝ և ուր այնպէս շօշափւում և յօշոտւում էր հայ ազգային զգացմունքը:

Երբ 19 թուին աշնանը, Կաղզուանի մեր զօրամասերը այցելեց սպարապետ Նազարբէկով՝ նորան պատուեցին հանդիսաւոր ճաշկերոյթով: Սպարապետի և նրան ուղեկցող գեներալների կենացներից յետոյ՝ բարձրանում է տեղից 5-րդ գնդի հրամանատար գնդապետ Շաղուբաթով, որ Կաղզուանի գարնիզօնի աւագն էր, և բաժակ է առաջարկում ի պատիւ գեներալ Վրանկելի: Նա ոգևորուած խօսում է ռուս բանակի մասին, և արտասուքը աչքերին՝ իղձ է յայտնում նորից տեսնել ռուս իշխանութիւնը Կովկասում և իր սահմաններում... Եւ այդ՝ առանց ամաչելու և քաշուելու, հրապարակով ասում է հայ սպան, որին հայկական կառավարութիւնը գնդապետի աստիճան էր տուել և վստահել ամբողջ գաւառի զինուորական լիազօրութիւնները: Բայց աւելի զարմանալի է, որ հայ գեներալներն ու բազմաթիւ հայ սպաները ոչ միայն չեն բողոքում այդ անամօթ յայտարարութեան դէմ՝ այլև իրանց «ուռաներով» գալիս են ձայնակցելու այդ ռուսախօս ռուսամոլ գնդապետին: Երևանում հայ սպաների մի մեծ բազմութիւն՝ առատ կերուխումից յետոյ խմբուելով հայկական պարլամենտի շէնքի դիմաց, շատ բարձր տրամադրութեամբ Боже царя էին երգում... Երբ Անտանտը ճանաչեց Հայկական Հանրապետութիւնը՝ այդ առիթով Կարսում եկեղեցական մաղթանք կատարուեց և մեծ զօրահանդէս: Երբ ես կարդացի մինիստր նախագահի

այդ առիթով հեռագիրը՝ ժողովուրդը և զօրքը ցնծալից կեցցէ էր գոչում: Բայց մի ռուսախօս գեներալ՝ Յովսէփեան, խոժոռ աչքեր անելով հայ գումարտակներին, հրամանալից կրկնում էր нет՝ ուռռա, կարծես հաւանութիւն չը տալով հայկական զգացմունքների իւրայնի արտայայտութեանը...

Շատ կարելի է ի հարկէ, որ գեներալը անում էր այդ առանց յետին մտքի: Ծագումով և իր ազգանուամբ հայ գեներալը՝ ռուս էր իր ամբողջ էութեամբ, նա զգում և մտածում էր միայն ռուսերէն, և այսօր հայ գնդերի առաջ կանգնած՝ նա դարձեալ կարծում էր, որ ռուս շարքերումն էր, և կեցցէի փոխարէն՝ իր հարազատ և ընտանի ուռռան էր պահանջում: Երբ մի զօրահանդէսի ժամանակ ֆրանսիական ներկայացուցիչ գլխապետ Պուադիբար հայերէն մի քանի խօսքով դիմեց զօրքերի հրամանատար մի հայ գեներալի՝ ֆրանսիացու հայերէն արտասանած այդ ողջոյնը, ի մեծ խայտառակութիւն ներկայ հայ հասարակութեան՝ ստիպուած էին ռուսերէն թարգմանելու... հայ գեներալին...

Երբ խնճոյքներում և հաւաքատեղիներում խօսում էին Դենիկինի և առհասարակ Ռուսաստանում կատարուող անցքերի մասին՝ ռուսախօս հայ սպայութիւնը համակւում էր մեծ պատկառանքով դէպի ռուս կոչումը, և ներկայ անցուդարձը «ժամանակաւոր թիւրիմացութիւն» անուանում...

Բայց ռուս սպաները աւելի խորամանկ էին, նրանք խստօրէն ծածկում էին իրանց վերապրումները, և միայն կատակում էին հայ «գնդապետների» ռուսական տրամադրութիւնները, և այդպիսով երերում հայկական բանակի ազգային կորովը: Այդ ռուսախօսների կենտրոնում կանգնած էր գեներալ Ախվերդով: Նա ծագումով հայ էր՝ բայց ոչ մի բառ հայերէն չը գիտէր: Որպէս զինուորական բարձր ուսում ստացած գեներալ՝ հայոց առաջի կառավարութիւնը նորան Զօրաց մինիստր նշանակեց: Ինչ-ինչ պատճառներով յետոյ նա դարձաւ մինիստրի օգնական՝ բայց և այնպէս մինչև վերջը նա կանգնած էր մեր զինուորական գործի կենտրոնում, և նորա իմաստն էր կազմում: Որպէս թեորետիկ զինուորական՝ գեներալ Ախվերդով գուցէ և արժանաւոր էր, բայց նա միանգամայն խորթ էր հայութեան համար և միանգամայն անջատ մեր վերապրումներից: Նա իր ամբողջ էութեամբ ռուս էր, տարուած և հմայուած ռուս փառքով, «հայկական կառավարութիւնը» նա օրերի հերթական անցող տեսիլ էր համարում, և իրան բացառապէս ռուս խորհրդաններով շրջապատելով՝ նա հայկական դրօշակի տակ պատուաստում էր հայկական բանակում ռուսական գաղափար և ռուս գերիշխանութիւն: Իսկ մեր միամիտները գեներալի առաջ խունկ ծխելով՝ անուանում էին նորան միայն ռուս օրիենտացիաի տէր: Մեր «քաղաքական հոսանքներ»-ի ներկայացուցիչները աչքաթող էին անում, որ այդ «ռուս օրիենտաց-իան» չափազանց խորալից է ակօսում հայկական խրամը:

Մեր իրականացած երազների հետ միասին՝ լուծւում և թուլանում էր դաշնակցութեան վաղեմի կորովը և թափը, և այդ երազները իջած տեսնելով՝ նա

կարծում էր, որ ամէն բան վերջացած է: Այնուհետև մեր այդ հռչակաւոր քաղաքական կուսակցութիւնը՝ տրամադիր էր ներել իր դափնալից մթնոլորտում, չը երազելով անգամ, որ մեծ աղմուկ յաղթանակը դեռ տակաւին վիճելի է, և տակաւին երերուն: Հեղինակալից և անվճռաբեկ իր վերայ վերցնելով Հայաստանի մեծախորհուրդ խարիսխը՝ դաշնակցութիւնը չկարողացաւ համակուիլ իր վերայ ծանրացող պատմական մեծ պատասխանատուութեամբ: Հմայուած և տարուած իր երեսուն տարուայ փոթորկալից յաջողութիւններով՝ դաշնակցութիւնը կարծում էր, որ բախտը մի անհուն ժպիտ է միայն: Եւ ճոճուելով այդ անոյշ օրօրներով լի յիշողութիւններում՝ մեր ցայտուն ազգային կուսակցութիւնը աչքաթող արեց պետական լրջութիւնը: Նա չը կարողացաւ իւր ժամանակին բաժանուել իր վաղեմի ռոմանտիկ տրամադրութիւններից, նա կարծում էր, որ և պետական անցուդարձում՝ հնարաւոր են զգացմունքը և էֆեմիր հմայքը:

Միամիտ և հրճուալից որպէս ասպետ՝ դաշնակցութիւնը կարծում էր, որ գաղափարը և սկզբունքը անձեռնամխելի են: Եւ այդ միջանցքում զբաղուելով աւելի ակադեմիկ խնդիրներով՝ նա հաշուի չէր առնում իրական պահանջները և ոյժը: Իսկ այդ դաժան պայմանները իրաւունքի վերածուած՝ գալիս էին ցրելու էֆեմիր մթնոլորտը, և մի անգամ ևս ասելու, որ իրաւունքը ռէալ հասկացողութիւն է, միայն երկաթ և միայն կամք: Պետական առագաստների հովանու տակ՝ դաշնակցութիւնը աւելի թագաւորում էր, քան կառավարում: Եւ կեանքի գործնական ասպարէզը գեներալ Ախվերդովներին յանձնելով՝ նա անփոյթ գնում էր այդ գեներալների յետևից: Իսկ Ախվերդովները՝ այդ այլասեռ և օտարացած հայերը, միայն հեգնում և միայն ծաղրում էին, և արհամարհալից վերևից ներքև նայելով հայկական կառավարութեանը՝ լքում էին հայկական բանակը և նահանջ տրամադրութիւն ստեղծում մեր գումարտակներում:

Ախվերդով ակադեմիկոս էր, թեորետիկ զինուորական՝ բայց իր ամբողջ էութեամբ նա տարուած էր ռուսական միտումներով: Նա չէր հաւատում հայկական իշխանութեանը, Հայոց Հանրապետութիւնը նա պարապ ժամանակի զբաղմունք էր համարում, իսկ այդպէս տրամադրուած զօրավարը չէր կարող կոփել հայ զօրաց շարքերը: Գուցէ և հակառակ իր կամքի՝ գեներալ Ախվերդով լքում էր հայկական բանակը, բայց մի բան այսօր անվիճելի է՝ հայկական զօրաբանակը սիստեմատիկ այլասերւում էր: Երբ Կարսի հրետանու հրամանատար նշանակուեց բօլգարացի գնդապետ Բաբաջանով (Զօրաց մինիստրը հայ մասնագէտ չը գտաւ երևի...)՝ նա մի ընդարձակ զեկուցում ուղարկեց Երևան, Կարսի ամրութիւնների մասին թուելով հռչակաւոր բերդի բոլոր արժանաւորութիւնները, և մատնացոյց անելով, որ պատերազմի քմահաճ արհաւիրքներից յետոյ անգամ հայկական իշխանութիւնը ժառանգել է այդ ամրացած գօտիյում աւելի քան 300 ծանր թնդանօթ և անթիւ ու անհամար ռազմամթերք, գնդապետ Բաբաջանով գրում էր, որ այդ անհուն հարստութիւնը այսօր երեսի վերայ է, ամէն բան քանդ-

ւում է, փչանում ու կորչում: Երկուսից մէկը՝ առաջարկում էր հրետանու հրամանատարը, կա՛մ պէտք է վերականգնել Կարսի պաշտպանութեան աշխատանքը, կենդանացնել նորա վաղեմի ահռելի կորովը՝ կա՛մ պէտք է վերացնել Կարսը որպէս բերդ, թողնելով այդ վայրը որպէս ռազմական մթերքների մեծ պահեստ: Այս վերջի դէպքում՝ ի հարկէ պէտք է վերացնել Կարսի կօմենդանտի մեծ անունը գէթ իր անցեալում տիտղոսը, ու փակել նորա շտաբը:

Բայց կառավարութիւնը չզբաղուեց այդ մեծ խնդրով: Կարսի լայնածաւալ ամրութիւնները նորից կեանքի կոչելու համար պէտք էին մեծ միջոցներ, լուրջ աշխատանք և աւելի լուրջ մարդիկ: Բայց Կարսի բերդը պահեստ դարձնելու նախագիծն էլ համակրութեան չը հանդիպեց իշխող շրջաններում: Ամէնքից առաջ, լուսաբացին՝ գաղտագողի, պետական բեռնակիր աֆտօմօբիլներով և սայլերով մեր հրամանատարութիւնը փոխադրեց դէպի Աղէքսանդրապօլ իր ընտանիքները, իր բոլոր ունեցուածքը, իրերը, պաշարը և վերջի ջարդուած աթոռը: Վերացնել Կարսի բերդը՝ կը նշանակէր զրկել գեներալ Փիրումովին արդի մեծ տիտղոսից: Հայկական աստղերի պալատը, հայկական կամարիլեան՝ անտեսանելի հայ հասարակութեան համար, և անպատասխանատու հայ երկրի առաջ՝ չը ցանկացաւ զրկել իր արբանեակներից մէկին Կարսի կօմենդանտի լատիֆունդիաներից: Բայց այդ պալատը միևնոյն ժամանակ լրջութիւն էլ չունեցաւ զբաղուելու Կարսի ամրութիւնները կարգի բերելու գործով: Իսկ հայկական կառավարութիւնը, որ մի գործիք էր այդ կամարիլեայի ձեռքում՝ սրտոտութիւն չունեցաւ գէթ այդ կարևորագոյն պետական խնդրում արտայայտելու իր վճռալից կամքը: Հասկանալի միտումներով՝ նա չուզեց դիպչել գեն. Փիրումովի «խաթրին», և այդ եզակի, բոլորի համար անվիճելի տափակութեան առաջ խունկ ծխելով՝ նա գոհացնում էր գեներալի խնամիական կապերը այդ աստղերի պալատում... Կարսի դղրդալից անկումը եկաւ հրապարակով ասելու, որ իրաւացի էր գնդապետ Բաբաջանով: Կա՛մ պէտք էր հեռացնել Կարսի բերդի կօմենդանտին, որ մի զաւեշտ թիւրիմացութեամբ գրաւում էր այդ բարձր պաշտօնը, յանձնելով ամրութիւնների վիճակը՝ կարող, ընդունակ և լուրջ մասնագէտի, կա՛մ պէտք էր փակել այդ բերդը:

Բայց այստեղ մի բացատրութիւն ևս: Կարսի ամրութիւնների հռչակը հանգչում է դարերի ծալքերում, և նորա մեծ սպառնալիքը անդադար ծփել է Հայաստանի լեռներից դէպի Սև ծովի ափերը: Ժողովրդական ասուածներում և երկրի հասկացողութիւններում՝ առանց մասնագիտացնելու խնդիրը, միշտ այն համոզմունքն է տիրել, որ Կարսը այդ տարածութեան դարբասն է, որ տիրել Անատոլիան, Մերձաւոր Արևելքը՝ անկարելի է առանց Կարսի և առանց նորա կապի Սև ծովի հետ: Այդ բոլոր պատճառներով՝ դարերի ընթացքում Կարսը կապուած է եղել Սև ծովի հետ, և համարուել է երկրի այն բանալին՝ որի տիրապետութեան համար տասնեակ դարեր մարտնչել են այնքան ազգեր և այնքան զօրաբանակ:

Բայց եթէ ռազմական այդ համոզմունքը որպէս անկերպարանք և ընդհանուր ուրուագիծ փառում էր միայն ժամանակի մթնոլորտում՝ վերջի հարիւր տարուայ ընթացքում նա ստացաւ որոշ աշխարհագրական գծագրութիւն:

Դեռ նշանաւոր Կոմս Մուրաւիով, մարզացնելով Գիւմրու, Աղէքսանդրապոլի պարիսպների տակ իր գումարտակները դէպի Կարս՝ իր առաջի արշաւի նախօրեակում կապում էր պատերազմի բախտը Կարս-Ախալցխայ-Բաթում տարածութեան հետ, և այնուհետև, հարիւր տարուայ ընթացքում՝ Կարս-Բաթում գիծը միշտ պարփակել է իր մէջ ռուս կառավարութեան գաղտնի միտումները իր ապագայ մարշի, ընթացքի առիթով դէպի Մերձաւոր Արևելք:

Կարսի Կարադաղ ամրութիւնները՝ այդ Հայաստանի հռչակաւոր ֆերմօպիլն է:

Դժուար է գտնել աւելի հրամանալից և աւելի իշխող բնական ամրութիւն:

Երկու ահռելի սեպաձև քարանձաւների միջով, դարերի հետ միասին՝ կարկաչալից հոսում, անցնում է նշանաւոր Կարս չայը, հացաշատ Շօրագեալի այդ մեծ հարստութիւնը, պաշտպանողական դիրքեր քերելով բազմաթիւ գումարտակների համար:

Իսկ նորա չորս կողմը ձգւում են նշանաւոր Ալաջէն, ուր գնացողը, մեր աշուղների ասելով՝ չի վերադառնում, Սարիղամիշի հռչակաւոր բարձրավանդակը՝ Թախտը, Զար-Նիշանի (Զարուշատի) գեղեցկալից լեռները և Արդահանի բարձրաւանդակից իջնող քարքարուտները: Երբ դուք առաջի անգամ մօտենում էք Կարսին՝ մասնագէտ լինել պէտք չէ ասելու, որ դուք կանգնած էք բնութեան մի քմահաճ ստեղծագործութեան առաջ, որ իր ձևով, դիրքով և ընդհանուր հմայքով՝ կոչուած է պատսպարելու և պաշտպանելու մարդկանց:

Եւ Բագրատունեաց հարստութիւնը հայ պետական խարիսխը այստեղ ձգելով՝ այնուհետև հռչակել է Կարադաղը և դարերի առանցքում մեծ լեգենդա ստեղծել այդ վիթխարի քարանձաւներում:

Բազմաթիւ ազգեր ձգտել են տիրելու Մերձ. Արևելքի այդ կախարդ բանալին՝ իսկ նշանաւոր զօրավարները փոփոխակի բախտով, տասնեակ դարեր ճակատամարտի են բռնուել Կարադաղի ստորոտներում:

Բոլոր ազգերը բոլոր ժամանակներում շարունակ ամրացրել են Կարսի բերդը՝ իսկ վերջին 50 տարուայ ընթացքում ռուս կառավարութիւնը թափեց այստեղ իր առատ ոսկին և իր քաղաքական ամբողջ ուշադրութիւնը:

Բայց Կարսի ամրութիւնները իշխում էին այդ աշխարհում դեռ հեթանոսական ժամանակներում, և Բագրատունեաց նշանաւոր սպարապետ Գէորգ Մարզպետունին ժառանգեց միայն Կարադաղը:

Այդպէս էր այն ամրութիւնների պատմական իմաստը և նշանակութիւնը, որ վիճակ էր ընկնում հայերին նորից տիրելու այդչափ դարեր անցնելուց յետոյ: Բազմաթիւ նշանաւոր զօրավարներ յաղթելով ու պարտուելով Կարսի տակ՝

հրդեհում էին միայն այդ անառիկ ամրութիւնների հռչակը, և եթէ այս և այն հրամանատարը իր բոլոր քաջութիւններով հանդերձ ժամանակի ընթացքում իջնում էր պատմութեան հրապարակից և մոռացւում՝ Կարսը և Կարադաղը դարձեալ մնում էին իրանց տեղերում և նորից ու նորից հռչակում նոր նուաճողներ և նոր անուններ: Այդպէս էր Կարսի ճանաչուած հռչակը պատերազմական բոլոր տրամադրութիւններում:

Այդպիսով սերունդների յիշողութեան մէջ կրթուել է Կարսի անսասան կորովը, և բոլոր ազգերը բոլոր ժամանակներում՝ դարձել են դէպի Կարս մեծ հաւատով և բուռն յոյսով:

Յայտարարելով 19 թուին Հայոց Հանրապետութեան իշխանութիւնը Կարսում՝ մենք կանգ էինք առնում այդ վայրում ոչ միայն իրաւաբանօրէն և փաստօրէն, այլ որպէս այն ապահով ամրութիւններում, որ դարերի կռուածաղիկն է եղել: Մեր պետական ընթացքում մենք անցնելու դեռ երկար ճանապարհ ունէինք:

Մեր գաղթականութիւնը գալիս լճանում էր Կարադաղի հովանու տակ, և այստեղ կոփում իր ապագայ ներգաղթի միջոցները: Հայկական զօրաբանակը, որ պէտք է ուղեկցէր այդ ներգաղթը՝ հանգիստ ու ապահով տրամադիր էր մարզուելու Կարսի ամրութիւնների փորձուած պաշտպանութեան տակ: Իսկ այդ բոլոր անցեալ և արդի տուեալները՝ ստեղծում էին Կարադաղի շուրջը մեր մեծ հաւատը դէպի այդ ամրութիւնները, և Կարսի թնդանօթների պաշտպանութեան տակ՝ մենք մեզ ապահով ու հանգիստ էինք զգում:

Եւ որչա՞փ և նոսր լինէին հայ գումարտակների շարքերը, և որչա՞փ որ անընդունակ նոցա հրամանատար կազմը՝ հայ երկրի առաջ միշտ շատ բարձր տրամադրութեամբ կանգնած էր անառիկ Կարսը հայ ժողովրդի պետական վերապրումներում:

Բայց հայկական կառավարութիւնը, ի դէմս գլխաւոր շտաբի՝ չօգտագործեց պետական միտումներում Կարսի այդ առանձնայատուկ հոգեբանութիւնը: Նա անընդունակ եղաւ թև ու թիկունք լինելու հայութեան վճռալից հաւատին դէպի Կարսի ժայռալից պատուանդանը: Եւ փոխանակ թափելու այնտեղ իր բոլոր ուշադրութիւնը, փոխանակ օգտագործելու իր հեռանկարների նախօրեակում այդ հռչակաւոր ամրութիւնները՝ հայկական կառավարութիւնը միանգամայն բարձիթողի արեց Կարսի բերդը: Որպէս մի ռենտայ՝ Կարսի կոմենդանտի պաշտօնը նա յանձնեց բոլորից ճանաչուած մի անընդունակութեան, և նորան որպէս դայեակ՝ մի կուսակցական շտաբի պետ տուեց, որ շատ մօտ անցեալում շնորհալի տիրացու էր եկեղեցում, և յետոյ սպայ՝ մեծ պատերազմի ընթացքում:

Գլխաւոր շտաբը աչքաթող արեց երևի, որ հռչակաւոր Կարսի շտաբի պետը միշտ եղել է բարձր զինուորական ուսում ստացած մասնագէտ, Եւրոպական լե-

զուներ իմացող, վարպետ ռազմական քարտէսի ընթերցանութեան մէջ, և զինուորական գրականութեան հետ մօտ ծանօթ մարդ:

Եւ աչքաթող անելով ռազմական այդ տարրական պայմանները՝ մեր զինուորական բարձր հրամանատարութիւնը հնարաւոր համարեց այդ մեծ պատասխանատու պաշտօնի թեկնածութեան խնդրում ղեկավարուելու միայն կուսակցական տեսակէտներով: Ես չեմ կարող հաւատալ ի հարկէ, Զօրաց մինիստր ակադեմիկոս Ախվերդով անտես առնէր Կարսի շտաբի պետի մեծ նշանակութիւնը: Բայց գեներալ Ախվերդով պահպանում էր միայն օրուայ տարազը, և մի ողորմելի տիրացուի ձեռքը տալով մեր առաջաւոր դիրքերի ամբողջ բախտը՝ նա միովն գոհացնում էր ամենակարող և քմահաճ մեր Կամարելեան:

Իսկ հայ ժողովուրդը, որի սերունդները կրթուել են Կարսի պատմութեան ծխալից մթնոլորտում, որ իր հայրերից և պապերից լսել է Կարսի միշտ կամակոր տրամադրութիւնը՝ այդ ժողովուրդը գնում էր Կարս այսօր հանգիստ ու ապահով իր ապագայի համար: Նա սիրում էր մեծ պարծանքով պատմել Բագրատունեաց հարստութեան հռչակը, չէ՞ որ Կարադաղի տակ դարերի ընթացքում ջարդուել և պարտուել են թշնամու բանակներ և չէ՞ որ Կարսը՝ ժողովրդի ասելով, ընկել է միշտ ոսկու և միայն փողի ծանրութեան տակ... Այդպէս է եղել, ասում են, 28, 54, 77 թուականներում, երբ հայ նշանաւոր զօրավարները կաշառել են թիւրք փաշաներին, և այդպիսով տիրացել Կարսի ծանրալից բանալիներին...

Այդ տիրող համոզմունքը առանձնօրէն հմայում էր Կարսի կուսական ամրութիւնները, և տարագիր հայ ժողովուրդը այսօր տէր և տնօրէն Վանանդի՝ գալիս սփռւում էր Կարսի չորս կողմը, և հանգիստ ու ապահով անձնատուր լինում իր շինարար աշխատանքներին: Հայ սրբերից յետոյ՝ նա հաւատում էր և Կարսի վիթխարի թնդանօթներին, և նա գիտէր, որ հայրենի ձեռքերում գտնուող Կարսը կարող է անընկճելի և անձեռնամխելի լինել:

Այդպէս էր հայ ժողովրդի հոգեբանութիւնը 19 թուի ներգաղթին:

Բայց գեներալ Ախվերդով և նորա շտաբը տեղեակ չէր երկրի վերապրումներին, այդ վերապրումները նորան չէին էլ հետաքրքրում: Նա պաշտօնավարում էր ըստ ձևի միայն, և հայկական կեանքում ռուս շաբլօն միայն ծաւալում:

Իսկ հայ ժողովուրդը անդադար գալիս էր լճանում Կարսի նահանգում, և մեծ սիրով ակօսելով երկիրը՝ ամբարում էր նոր հարստութիւն, և հայ պետական կորով ստեղծագործում: Նա կարծում էր, որ ամպերի մշուշով միշտ ծածկուած Կարսի ամրութիւնները միշտ զգաստ են և միշտ արթուն: Նա գիտէր, որ Կարադաղի վերայից որոտող թնդանօթը միշտ ահ ու սարսափ է տարածել թիւրքաց Հայաստանի հեռաւոր լեռներում, և այդ հաւատը առաջ էր բերում մեծ վստահութիւն դէպի Կարսը, և հանգիստ աշխատանք ծաւալում երկրում:

Այստեղ է և այն բացատրութիւնը, թէ ինչո՞ւ մինչև Կարսի անկումը հայ ժողովուրդը հանգիստ մնում էր իր տեղերում: Եւ նոյնիսկ այն ժամանակ՝ երբ Կարաբեկիր փաշայի գումարտակները իջնում էին դէպի Կարաչայի հովիտը, հայ ժողովուրդը միայն քաշւում էր դէպի բերդի գօտին, և Կարսի հրետանու հովանու տակ սփռուելով՝ նա կարծում էր, որ գտնւում է ահարկու ամրութիւնների պաշտպանութեան տակ: Եւ մենք տեսանք, որ հայ ժողովուրդը չէր հաւատում Կարսի անկման հնարաւորութեանը: Կարսի էպօպէան, գեներալ Յովսէփեանի հրամանատարութեան տակ գտնուած հայ զօրաբանակը՝ իր պատմական նահանջը Թիւրքաց Հայաստանի սահմաններից դէպի Կարս սկսեց Օգոստոսի 27-ին: Եւ խուճապալից փախչելով՝ նա միայն Հոկտեմբերի 30-ին կանգ առաւ Կարսի պարիսպների տակ:

Նորա յետևից միայն հետևելով այդ երկչոտ նահանջին՝ տեղահան եղաւ և երկրի հայ ազգաբնակութիւնը: Եւ մենք տեսանք, թէ ինչպէ՞ս այդ մօտ 300 հազար հայ ազգաբնակութիւնը աւելի քան երկու ամիս շարունակ բացօթեայ թափառում էր Կարսի շուրջը, և հմայւում հայրենի քաղցրութեամբ: Նա չէր ուզում անցնել Արփաչայ, նա իրան պարտուած չէր զգում: Նա գիտէր, որ դեռ խորհրդալից լրումին Կարսի հարիւրաւոր թնդանոթները, և նա սպասում էր, թէ ինչպէ՞ս խռովալից ամպերի պէս կը ցրուի թիւրքաց բանակը՝ երբ Կարադաղի ազդանշանով կ՛որոտան Կարսի ամրութիւնների բոլոր թնդանօթները... Բայց հայ ժողովուրդը չը գիտէր ի հարկէ, որ այդ ահարկու Կարսը այսօր մի ֆիկցիա էր միայն, մի խաբուսիկ անուն: Նա չը գիտէր, որ Կարսի կօմենդանտը միայն թագաւորում է և ոչ հրամանատարում:

Եւ այդ 300 հազար հայ թշուառները ընկնում են այն ծուղակը, որ այնպէս տմարդի սփռել էր նորա առաջ գեն. Ախվերդովի հրամանատարութիւնը:

Հայոց բարձր կառավարութիւնը կորով չունեցաւ Կարսը նորից ահարկու դարձնելու, նա անփոյթ էր և անհոգ: Իսկ զինուորական մինիստրը սրտոտութիւն չունեցաւ այդ միջոցում ասելու, որ այդ պայմաններում աւելորդ է Կարսի կօմենդատուրան: Զօրաց մինիստրը խոնարհւում էր բերդապետի կուսակցական խնամիական կապերի առաջ, և քողարկելով հայ ժողովրդից այդ տափակութեան իսկական արժէքը՝ նա գեներալ Փիրումովին իր «ընկերների» հետ պահում էր իրանց տեղերում, և այդպիսով խաբում և օրօրում մեր հանգիստը: Պէտք չէ բացատրել այստեղ, որ եթէ երկրի համար պարզ լինէր իրերի դրութիւնը՝ նա չէր ապաւինի Կարսի ամրութիւններին: Կարսի նահանգի հայ բնիկ ժողովուրդը և թիւրքահայ գաղթականութիւնը օր առաջ կ՛անցնէին Արփաչայ և այդպիսով կը փրկէին իրանց այն անհուն հարստութիւնը, որ ռուսախօս մեր հրամանատարութեան շնորհիւ նա թողեց Կարսի նահանգում: Այդպէս էր Կարսի ամրութիւնների ոչ միայն ռազմական մեծ համարումը հայ ժողովրդի հասկացող-ութիւններում՝ այլև Կարսի հոգեբանութիւնը մեր բոլոր վերապրումներում:

Այդ երկու տուեալները մեծ հռչակ տուեցին Վանանդի մայրաքաղաքին, և հայկական սրտերը թէ երկրի ներսում և թէ նորա սահմաններից դուրս՝ ուժգին բաբախում էին տաճկաց արշաւի ամիսներում:

Երկու կարծիք չը կար հրապարակում, միշտ ամպամած Կարադաղը պէտք է արտայայտէր իր ազգային սուվերէն գերիշխանութիւնը, և տաճկաց զօրաբանակը վերջին անգամ պէտք է պարտուէր Կարսի պարիսպների տակ: Յուզուած և ջղայնալից թնդանօթների անդադար պայթումների մթնոլորտում մենք բոլորս շատ բարձր տրամադրութեամբ դէպի մեր պատմական դատը՝ սպասում էինք օրհասական այդ ճակատամարտը: Մարդկային վերապրումներում լինում են մոմենտներ, երբ զգացմունքը իրան է ենթարկում մարդուս բանականութիւնը:

Եւ Կարսի վերջի օրերում՝ երբ օդը տոգորուած էր ծխով և մօտալից կայծակի արհաւիրքով, երբ բոլորը շտապում էին, պատերազմալից շառաչում՝ բոլորս մեր զգացմունքների գերին էինք:

Դիտելու և դատելու ընդունակութիւնը կարծես բթացել էր: Մենք ծարաւի էինք սուվերէն իշխանութեան, կարօտ հայրենեաց հովերի, և այդ առանցքում մեր առաջ կանգնում էր վիթխարի Կարսը՝ իր փառքով, յիշողութիւններով և հռչակաւոր յաղթութիւններով:

Այդպէս էր ժողովրդական մեծ հաւատը դէպի անառիկ բերդը:

Բայց այդ յոյսերը միայն ռոմանտիկ էին իրանց բնոյթում, և մենք չէինք երազում անգամ, թէ որչա՞փ դրամատիկ էին նոքա իրանց իմաստում: Եւ Կարսը ընկաւ ոչ պարտուած, նա զոհ դարձաւ մեր ոճրագործ անհոգութեան: Մենք լատիֆունդիա դարձրինք բերդի ապարանքները, ուր կար ջրանցք, էլէկտրական լուսաւորութիւն, վաննա և փափկալից կեանքի բոլոր յարմարութիւնները:

Այդ պալատներում, որոնց համար ռուս գանձարանը միջոցներ չը խնայեց՝ մենք կուտակեցինք միայն տափակութիւն և միայն ինտրիգ: Եւ այդ ապարանքներում մարդիկ մեր օրով միայն խմում էին, միայն երգում, պարում և միայն կեանք վայելում…

Իսկ զինուորական մինիստրը խոնարհուելով այդ մարդկանց առաջ՝ որոնք կուսակցական-խնամիական կապերով բնակալել էին այդ բուրալից վայրում, կեղծեց իր պարտաւորութիւնները երկրի առաջ: Կարսում մեր գոյութեան 18 ամսուայ ընթացքում՝ նա սրտոտութիւն չունեցաւ ցրելու այդ որջանոցը, և մի բուռն մարդկանց այդ վայելքներին զոհելով պետութեան բախտը՝ Զօրաց մինիստրները հայկական Սեդան դարձրին անյաղթ Կարսը: Կարսի բերդի հրամանատար կազմը, որի մասին երկու կարծիք չը կար դեռ այն ժամանակ՝ կոչուած չէր ի հարկէ լուրջ գործով զբաղուելու: Բացի այդ, նա միանգամայն անընդունակ էր աշխատելու այն վայրում՝ ուր գիտութիւն և լրջութիւն էր պէտք: Մեր օրով Կարսի պարիսպներում մարդիկ շահւում էին միայն թալանելով ռուս գանձարանի տասնեակ տարիների ընթացքում ամբարած հարստութիւնը:

Իսկ իրար յաջորդող հայկական երեք զինուորական մինիստրները ժամանակ չէին գտնում հետաքրքրուելու՝ թէ ի՞նչ է կատարւում այդ բերդում, և որչա՞փ պատրաստ են հռչակաւոր ամրութիւնները նորից ահարկելու Վանանդի երկինքը:

Թէ գեներալ Ախվերդով և թէ գեներալ Արարատով շատ լաւ գիտէին ի հարկէ, որ հայկական Կարսը, որպէս ամրութիւն՝ մի խաբուսիկ անուն է միայն: Դէպի մինիստրութիւն տեղացող գանգատներից, հաղորդագրութիւններից և արձանագրութիւններից նրանք շատ լաւ գիտէին ի հարկէ, որ Կարսի պարիսպներում մարդիկ զբաղուած էին միայն իրանց անձնական գործերով:

Բայց և այնպէս, այդ երկու գեներալները չէին օգտագործում իրանց լիազորութիւնները, ի նկատի առնելով կուսակցութիւնը և նորա խնամիութիւնը:

Իսկ հայ ժողովուրդը անտեղեակ այդ անցուդարձին՝ հրապարակում լսում էր Կարսի կոմենդանտի մեծափքուն տիտղոսը միայն, և կարծում էր, թէ Կարսը իր տեղումն է, և նորա շուրջը շարուած բազմաթիւ թնդանօթները պատրաստ են հուր և մահ թափելու:

Ռուսախօս գեներալները հայկական պաշտօնները վարում էին միայն օրեցօր, և միշտ դէպի հիւսիս նայում:

Ռուս օրիենտացիայի այդ երկու երդուեալ երկրպագուներին յաջորդող Զօրաց երրորդ մինիստրը՝ Ռուբէն փաշան, կոչուած էր վերջ դնելու ռուս օրիենտացիայի այդ «խորացման»:

Բայց մեծահամբաւ հայդուկը յանկարծակի մոռացաւ վաղեմի պատգամները, և համակուեց ռուս գեներալի փայլով: Որպէս Urbi et orbi այդ քաղաքականութեան՝ նա աւագ զօրավարի աստիճան շնորհեց Կարսի կոմենդանտ գեներալ Փիրումովին: Նա բոլորին թողեց իրանց տեղերում, թողեց նոցա շարունակելու իրանց գործը՝ իսկ իրան, որպէս Նապոլէօն՝ վերապահեց Հայաստանը ի դէմս այդ թշուառ երկրի քմահաճ դիկտատորի: Իսկ կառավարութիւնը, «պարլամենտը» կարծում էին, որ «աշխատաւոր մասսաների» ներկայացուցիչ լինելով՝ նրանք կարող են նիրհել և թագաւորել...

Այդպէս էր այն օրօր մթնոլորտը, ուր հայ աշխարհը ինքնահաւան ճոճւում էր և պայթալից բորբոքում հասցնում իր գերիշխան սուվերէն իմաստում:

Բայց մի երկու խօսք էլ այստեղ Կարսի հրետանու մասին:

Կարսի ամրութիւնների պաշտպանութեան գործում բոլոր ժամանակներում հրետանին գրաւել է առաջի տեղը: Բաւական կը լինի ասել, որ երբ մեծ պատերազմի ընթացքում պէտք եղաւ Աւստրիական ֆրօնտում ամրացնել Պիրիմըշլի բերդը, իսկ Էրզրումի գրաւումից յետոյ վերամրացնելու և Կարինը՝ Կարսի պարիսպներից վերցրեցին և տարան այդ վայրերը կարծեմ երկուհազարից աւելի թնդանօթ: Իսկ Կարսի պահեստներում ամբարած ռազմամթերքը անհաշիւ էր: Անգլիացիք մեծաքանակ ռումբեր կրեցին դէպի Բաթում 19 թուին գեներալ Վ-

ռանգելի բանակի համար, իսկ մնացած ռումբի պաշարը այնչափ մեծ էր, որ եթէ Կարսը՝ մասմագէտների ասելով, մի քանի տարի պաշարուած լինէր և հրետանին գործէր այդ տարիներում գիշեր ու ցերեկ, այդ պաշարը, ասում էին չէր հատնի:

Կարսի հրետանու հրամանատարը, ենթակայ բերդի կօմենդանտին՝ միշտ աւագ զօրավարի աստիճան է ունեցել, և Կարսի հրետանին իւրացրել է իրան՝ Կարսի ամրութիւններին յատկացուած վարկերի մեծագոյն մասը:

19 թուին, երբ քաղաքական արկածալից բոլոր տարուբերումներից յետոյ Կարսում յայտարարուեց Հայկական Հանրապետութեան իշխանութիւնը՝ Կարսի ամրութիւնների այդ մասը, հրետանին, ռումբերի վիթխարի պահեստները և համապատասխան պարագաների մեծամեծ մնացորդներ՝ պատերազմական լուրջ միջոցներ էին, և հետևապէս մեծաքանակ պետական հարստութիւն:

50 տարի շարունակ ռուս արքունիքը թափել է այստեղ իր ոսկին, և որքան որ պատերազմի հողմերը և ցրած լինէին այդ հարստութիւնը՝ նոյնիսկ կիսով չափ սպառել նորան անկարելի էր: Այդպէս էր հրետանու գործը Կարսի պարիսպների շրջափակում հայկական իշխանութեան նախօրեակում:

Հայ հասարակութիւնը միշտ և իրաւօրէն պարծեցել է իր ինժեներներով և բազմաթիւ մասնագէտներով: Այդ ժամանակամիջոցում մենք ունէինք և հրետանու գործում բարձր ուսում ստացած զինուորականներ՝ գնդապետ, ակադեմիկոս Յովսէփ Տիգրանեան օրինակ, երբեմն քաղաքագլուխ Աղէքսանդրապօլի և Երևանի և ուրիշներ: Բայց հայկական բարձր հրամանատարութիւնը լապտերը ձեռքին՝ այդ պատասխանատու և մեծ պաշտօնի համար մի հայ մասնագէտ չը գտաւ, և Կարսի ամրութիւնների հրետանու հրամանատար նշանակեց մի ռուս գնդապետ: Երբ գնդապետը լցրեց իր գրպանները՝ նորա վաստակալից գործունէութիւնը շարունակելու համար ուղարկւում է մի այլ ռուս սպայ, որ նոյնպէս ի հարկէ անձնուէր անցնում է իրեն ևս շուտափոյթ ապահովացնելու գործին...

Թէ ինչ էր կատարւում Կարսի պարիսպների կուլիսների յետևում՝ դա ռազմական մի մեծ գաղտնիք էր...

Կարսի հրետանում նա պատկանում էր մեր երիտասարդութեան այն շարքերին՝ որոնք տիրապետում են մայրենի լեզուին, տեղեակ են մեր գրականութեանը և իրազեկ մեր ազգային անցուդարձին:

Գուցէ աւելի քան պէտք էր ծանրանալով երիտասարդ գնդապետի անձնաւորութեան վերայ՝ ես ուզում էի դորանով ասել միայն, որ նա յամենայն դէպս լաւագոյնն էր իր նախորդների թւում և մեր զինուորական բարձր իշխանութիւնը այժմ միայն անում էր այն՝ ինչ-որ նա պէտք է անէր մեր Կարս գալու առաջին օրուանից:

Բայց գնդապետ Ջանփոլադեանի թեկնածութիւնը Կարսի ամրութիւնների «շտաբի» սրտովը չէր, և նորա անուան շուրջը հենց առաջի օրուանից բարձրա-

նում է մեծ աղմուկ: Նորան մեղադրում են բոլշեւիզմի մէջ, գեներալ Փիրումով հայենիքը օր առաջ փրկելու կորովով բռնուած՝ շտապալից քննութիւն է նշանակում: Եւ սուրհանդակով տեղեկացնելով Երևանը, որ գնդապետ Ջանփոլադեան բոլշեւիզմ է սերմանում մեր բանակում՝ Կարսի հռչակաւոր կոմենդանտը շնչասպառ յայտարարում էր, որ հայրենիքը վտանգուած է...

Բոլշեւիզմը այն ժամանակուայ Զօրաց մինիստր Ռուբէն փաշայի ամենացաւագար տեղն էր, և մինիստրը հեռագրով արձակում է գնդ. Ջանփոլադեանին պաշտօնից: Իսկ հրապարակում ծաւալելով գնդապետի այդ արագընթաց անկման մանրամասնութիւնները՝ ասում էին, որ նա գեներալ Փիրումովի և նորա շուրջը վխտող նորա արբանեակների սրտովը չէր, որ գնդ. Ջանփոլադեան քրքրում էր իր նախորդների հաշիւները, և այդ «հին դարմանը քամու տալիս... »:

Այդ բոլորը դուր չէր գալիս Կարսի «շտաբին» գնդապետի այդ ընթացքը, ասում էին՝ շփոթում էր զինուորական տիրացուների հաշիւները, և կարող էր զրկել նոցա այն դափնիներից՝ որոնցով նոքա այնպէս պճնալից և այնպէս ինքնահաւան պսակում էին իրանց անունները... Այդ օրերում բոլշեւիզմը խուճապի անվճռաբեկ բնոյթ ունէր, և բաւական էր այդ անունը տալու, որ մարդիկ սարսափահար ու ջղայնալից փախուստի բռնուէին:

Եւ ժամանակի այդ հոգեբանութիւնից օգտուեց գեն. Փիրումովի «շտաբը»՝ գնդ. Ջանփոլադեանին տապալելու համար:

Բայց Ջանփոլադեանին յաջորդեց դարձեալ մի ռուս բոլգարացի գնդապետ: Ես չեմ կարող ասել, որ այդ գնդապետը գնում էր իր ռուս նախորդների ընթացքով, և գուցէ հենց այստեղ պէտք է որոնել այն բացատրութիւնը՝ թէ ինչու և այդ գնդապետի դէմ զինուեց գեն. Փիրումովի «շտաբը», ինչու և այդ գնդապետը նորա սրտովը չէր...

Այսպէս թէ այնպէս՝ գեն. Փիրումով և նորան ենթակայ հրետանու հրամանատար գնդապետ Բաբաջանով, շարունակ մրցում էին իրար հետ և շարունակ հերթով Երևան երթևեկում իրարու տակ փորելու և իրարու տապալելու համար:

Այդ հաշիւների մթնոլորտում Կարսի ամրութիւնները և նորա բազմաթիւ թնդանօթները՝ մնում էին ստուերում, փոշոտալից և ժանգոտած, և մենք տեսանք արդէն՝ թէ որչա՞փ անպատրաստի էին նոքա և որչա՞փ պայթալից էր մեր դիմադրութիւնը, երբ Կարսի դիմաց երևաց Քեազիմ Կարաբեկիր:

Ի հարկէ այնտեղ ուր հրետանու հրամանատարը և նորա իշխանութիւնը զբաղուած էին միայն հաշիւներով և միայն ինտրիգներով՝ թնդանօթը չէր կարող սպառնալ և ահաբեկել: Եւ նա ներդաշնակ իր գեներալների և գնդապետների հետ՝ հայ իշխանութեան օրով մնաց միշտ լուռ և միշտ պապանձուած...

Բայց բնութիւնը սիրում է իր անողոք ընթացքում սպառել իր սատիրիկ, երգիծաբան տրամադրութիւնը:

Եւ երբ տաճկաց հորդաները լցւում էին Կարսի պարիսպները, Բագրատունյաց հռչակաւոր ամրութիւնների հրետանու ռուս հրամանատարը՝ սպիտակ, պարլամենտեօր դրօշակը ձեռքին, դիմեց դէպի Քեազիմ Կարաբեկիր, և ի դիմաց Հայոց Հանրապետութեան՝ ռուսերէն մեղայ աղաղակեց... Ի հարկէ դա մի տխուր զուգադիպութիւն էր միայն, բայց յամենայն դէպս մենք հառաչալից չենք կարող չը յիշել Բագրատունեաց ամրութիւնների հռչակաւոր անցեալը, և մեր օրերի ամօթալից ներկան... Այդպէս էր իջնում Կարսի տեսիլների վերջին վարագոյրը, որի ստուերներում փառքի և հռչակի պսակում՝ երևում էին մեր նշանաւոր դէմքերը, Ներսէս V, Իշխան Բեհբութեան և միւսները: Իսկ այստեղ, ներքևում որպէս ծաղր ազգային վաղեմի փառքի՝ գերի և գլխակոր կանգնած էին գեներալ Փիրումով և այն բոլոր մեր հրամանատար կազմը, որոնց վիճակ էր ընկել իրանց նախատինքով ամոքելու համազգային դառնալից բաժակը...

Շատ հետաքրքիր է, որ ռուսները առհասարակ և ռուս կառավարութիւնը մասնաւորապէս՝ միշտ խանդոտ պաշտպանում էին Կարսի նահանգի սահմանները, և նորեկ հայերին ոչ մի կերպ թոյլ չէին տալիս բնակութիւն հաստատելու այդ նահանգում: Կարսի նահանգի հայ ազգաբնակութիւնը, բոլորը նախկին թիւրքահպատակներ էին՝ երկրի բնիկները, որոնց 77 թուականը Կարսի նահանգում գտաւ: Իսկ այնուհետև ոչ մի հայ հնարաւորութիւն չի ունեցել վերաբնակուելու այդ վայրում, և որևէ կերպով հողի հետ կապուելու: Երկրի ամենաբերրի, ամենահարուստ վայրերը՝ բնակեցուել էին ռուս աղանդաւորներով, իսկ միւս լայնածաւալ վարելահողերը՝ և գլխաւորապէս արօտները, տրւում էին կապալով թուրքերին և քրդերին, և ոչ մի կերպ տեղական հայերին՝ որոնք հողի և արօտի մեծ կարիք ունէին:

Այդպէս, օրինակ, Զիլանի քրդերը ի դէմս նոցա ցեղապետների՝ որոնք թափառում էին հռչակաւոր Ալաջա լեռների տեղերում, ստացել էին 11 հազար դիսեատին արօտ, իսկ հարևան հայկական Շօրագեալը ստիպուած էր իրան պէտք արօտը գնել տարուց տարի այդ իր դրացի քրդերից: Այդ 11 հազար դեսեատինից քրդերը հնարաւորութիւն ունէին օգտագործելու իրանց պէտքերի համար այդ տարածութեան հազիւ քառորդը, իսկ արօտի միւս ահագին տարածութիւնը վաստակով ծախում էին հայերին, որոնք հնարաւորութիւն չունէին օրինական ճանապարհով արքունիքից իրանց կարիքների համար համապատասխան հողաբաժին ստանալու:

Կարսի նահանգի հողային քաղաքականութիւնը ռուսների պետական գաղտնի գործելակերպն էր: Հողի առ ու ծախքը այդ նահանգում 50 տարուայ ընթացքում մնաց արգելուած, և Կարսի նահանգի միակ նօտարը իրաւասութիւն չունէր հողային համաձայնութիւնների որոշումներ վաւերացնելու ու հաստատելու:

Այդպիսով, Կարսի նահանգի հարուստ երկրագործ և անասնապահ, խաշնարած վայրերը մի կախարդ շրջան էր՝ ուր հայ ձեռներեցութեան համար խստալից փակուած էին բոլոր անցքերը:

Շատ ուշագրաւ է, որ երբ Երևանի նահանգի Սուրմալու գաւառի սակաւահող մի քանի գիւղերի հայ ազգաբնակութիւնը խնդրամատոյց եղաւ իրան յատկացնելու Կարսի նահանգի Ախուրեանի ընթացքով ընկած հռչակաւոր Մրէն տարածութիւնը՝ այնտեղ գաղթելու և բնակութիւն հաստատելու համար, այդ խնդիրը մեծ արգելքների հանդիպեց:

Մրէն՝ Բագրատունի իշխանների նախկին կալուածքն է, Կարսի նահանգի ամենապտղատու վարելահողն է, և երկրի աչքն է համարուել միշտ: Այդ մեծ տարածութիւնը ռուս արքունիքը միշտ իր ձեռքումն է պահել թէ որպէս կռվածաղիկ divide et impera, որպէս մի քաղաքական վահան, և թէ որպէս եկամտալից մի աղբիւր, որ տարուց տարի կապալով տալով սորան և նորան՝ ռուս պաշտօնեաները ունէին իրանց մշտական ռենտան...

Երբ Սուրմալուցիների խնդրի առիթով Կովկասի փոխարքան հարկաւոր տեղեկութիւններ պահանջեց Կարսի նահանգապետից Մրէնի մասին, և նահանգապետի կարծիքը հայերի այդ միջնորդութեան մասին, գեներալ Տօմիչ՝ շատ զարգացած, կարդացած և բարձր ուսում ունեցող այդ նահանգապետը, որ շատ հմտալից երկար տարիների ընթացքում տանում էր ռուս պետական քաղաքականութիւնը Կարսի նահանգում, տուեց հետևեալ պատասխանը, հաղորդելով փոխարքային Մրէնի մասին բոլոր պէտք տեղեկութիւնները, Կարսի նահանգապետը ծանրացաւ նորա պատմական անցեալի և հայկական սուվերէն միտումներում մեծ իմաստի վերայ:

Մրէն, գրում էր գեներալ Տօմիչ Կովկասի փոխարքային, Բագրատունեաց հարստութեան մեծահռչակ կալուածքն էր, այնտեղ լատիֆունդիաներ, ամառանոցներ և ապարանքներ ունէին հայոց աշխարհի մեծամեծները, նախարարաները և իշխանները: Այդ վայրը պարփակում է հայկական ազգային տենչանքները, և այդ տարածութեան վերայ հայկական գաղութ ստեղծել Կարսի նահանգում՝ այնտեղ ուր հայկական երազները տարածւում են դէպի Թիւրքաց Հայաստան, կը նշանակէ միշտ հրաբուխային անսպասելիքների առաջ լինել: Այդ հարուստ վայրը հայերով բնակեցնելով՝ մենք կը ստեղծենք հայկական մի գաղութ, որ միշտ տարուած կը լինի իր հայրենի վաղեմի փառքով և հմայքով, և այնուհետև իր չորս կողմը կը ծաւալի հայկական սեպարատիզմը, և կը շփոթի մեր բոլոր քաղաքական հաշիւները մեր ապագայ ընթացքում դէպի Մերձաւոր Արևելք...

Այդ բոլոր միտումներով՝ Կովկասի բարձր կառավարութիւնը անկարելի համարեց հայերով բնակեցնել Մրէնը, մասնաւորապէս և Կարսի նահանգը առհասարակ: Ռուս կառավարութեան այդ քաղաքական միտումները որպէս մեծ գաղտնիք՝ իւր ժամանակին յայտնի չէին: Ռուս տիրապետութեան ընթացքում

բազմաթիւ հայ գիւղական համայնքներ և մասնաւոր խմբակցութիւններ ու անհատներ շատ և շատ անգամ երկար աշխատել են, գաղթել Մրէն և առհասարակ Կարսի նահանգում վերաբնակուել՝ բայց կառավարութեան հողային քաղաքականութիւնը այդ նահանգում ուղղուած էր հայ տարրի դէմ:

Կարսի նահանգը միշտ ռուս զօրաբանակի առաջաւոր դիրքն էր համարւում նորա թմբկահար ընթացքում դէպի Բօսֆօր, իսկ այստեղից տարածուող թիւրքաց Հայաստանի հեռանկարները այն խաբուսիկ տեսիլն էր՝ ուր միշտ ծխում էին հայկական սպասելիքները:

Երբ այդ պէտք էր իրեն՝ ռուսը շատ վարպետօրէն օգտագործում էր հայկական այդ իմաստում տրամադրութիւնը, և իր առաջընթաց ուղիները հարթում մեր ձեռքերով դէպի իր տենչալի Արևելք: Բայց երբ այդ ուղիները հարթւում էին՝ և ռուս իշխանութիւնը այդ ձորերում ամրապնդւում, հայկական բոլոր ցանկութիւնները այդ ուղղութեամբ կուլտուր և տնտեսական իսկ, խստիւ արգելւում էին, և մեր առաջ անվճռաբեկ փակւում էին այն բոլոր անցքերը՝ որտեղով մենք կարող էինք անցնել Կարսի նահանգը:

Այդչափ նենգ և տմարդի էին ռուսները՝ իրանց քաղաքական միտումներում դէպի Կարսի նահանգը և հայ ժողովուրդը: Ռուս աղանդաւորներին կառավարութիւնը բնակեցրել էր գլխաւորապէս խճուղիների տարածութեամբ և երկաթուղու ընթացքով, և այդպիսով իր բանակի համար ապահով թիկունք էր ստեղծել:

Բացի այդ, ռուս գիւղերը ունէին բազմաթիւ լաւ սայլեր, ֆուրգոններ և լծկան ձիաներ, և ռուս զօրաբանակը այդպիսով ապահոված էր և տեղափոխութեան միջոցներով, տրանսպորտով: Իր միտումներում շահագրգռուած լինելով ընտիր տեսակի ձիաներ ունենալու գործում՝ կառավարութիւնը նպաստում էր իր աղանդաւորներին այդ տնտեսութիւնը զարգացնելու, ընտիր տեսակի ձիանքներ ուղարկում նոցա և դրամական նպաստ տալիս այդ նպատակով: Ռուս բոլոր գիւղերը կառավարութիւնը միշտ զինում էր, և այդպիսով միանգամայն ամրացնում իր գումարտակների անցուդարձի տարածութիւնը այն երկրում, ուր այնչափ իր համար օտար ազգութիւններ և ցեղեր կար: Կառավարութեան այդ մեծաշնորհ վերաբերմունքը դէպի երկրի ռուս տարրը՝ գերիշխան դրութիւն էր ստեղծում վերջինի համար և երկրի բնիկ ազգաբնակութիւնը միշտ ընկճուած էր և միշտ գերի այդ եկուոր ռուս աղանդաւորների ձեռքում: Հողային վէճերում, կամ բազմատեսակ տնտեսական քաղաքացիական պայքարում երկրի բնիկների հետ՝ այդ մոլականները միշտ անսխալական էին կառավարութեան առաջ, և զրահաւորուած իշխանութեան այդ հովանաւորութեամբ, այդ ռուսները միշտ բռնացել են և շարունակ հարստացել են ու իրանց շատ լաւ զգացել:

Հայկական իշխանութիւնը չէր կարող ի հարկէ ճանաչել այդ մենաշնորհ դրութիւնը, իսկ ռուս աղանդաւորները՝ սովոր առանձնաշնորհումների, թշնամալից դիրք բռնեցին հայկական կառավարութեան հանդէպ, և գաղտնագողի երե-

ռում էին երկրի իրաւակարգը: Այդ ռուսները սրում էին մեր դէմ թուրքերին, և միշտ լուրեր տարածում, որ հայկական իշխանութիւնը ժամանակաւոր է, և որ Ռուսաստանը այսպէս թէ այնպէս՝ պէտք է նորից տիրէ իր սահմանները:

Այդ բոլոր հանգամանքները ստեղծում էին երերուն մթնոլորտ, և հայկական կառավարութիւնը այդպիսով ստիպուած էր մաքառելու իր կազմակերպչական և շինարար աշխատանքների ընթացքում բազմաթիւ թէ՛ ակներև և թէ՛ անտեսանելի խոչնդոտների հետ, որոնց թւում ռուսների վերաբերմունքը ոչ պակաս դժուարութիւններ էր առաջ բերում մեր անելիքների ընթացքում:

Կարսի հայկական նահանգապետը, որ կանգնած էր այդ մէկը միւսին բացասող հոսանքների խառնուածքում, որ ծանօթ էր երկրի անցեալ անցուդարձին և հետևապէս գիտէր մոլոկանների իսկական դէպի մեզ տրամադրութիւնը՝ առանձնապէս հանդուրժելի չէր ռուսների համար: Եւ նոցա գրագէտները Թիֆլիզի իրանց ազգային ժողովի միջոցաւ՝ աշխատում էին նահանգապետի համարումը: Ապա նոքա ռուս լրագիրներում յօդուածներ տպեցին այդ նահանգապետի դէմ՝ մատնացոյց անելով, որ նա ռուս իշխանութեան օրով գաւառապետ է եղել, առաջադիմական չէ, և որպէս «յակահեղափոխական»՝ շատ վնասակար «յեղափոխական նուաճումների» համար...

Եւ վերլուծելով այսօր բոլոր այդ անցած գնացածը՝ ես պէտք է վկայեմ այստեղ, որ ռուսները ոչ պակաս թշնամի էին մեզ, քան թուրքերը: Թուրքերի հետ մենք ունէինք դեռ ընդհանուր հոգեբանութիւն, ընդհանուր անցեալ, հողի և ջրի ընդհանուր քաղցրութիւն: Բայց այդ ռուս աղանդաւորները, որ սովոր էին միայն ճնշել և միայն գերիշխել՝ տրամագծօրէն տարբերւում էին մեզանից իրանց վերապրումներով:

Եւ այդպիսով, եթէ թուրքերի հետ մենք դեռ կարող էինք համաձայնութեան գալ, և այդ դաշնակցութիւնը որպէս բնական և հարազատ՝ կ՛իրագործուէր անշուտ, եթէ չը լինէին մեր գեներալները, գնդապետները նոցա ձայնակցող «ընկերները» և «տղաները», ռուս աղանդաւորի համար մենք միշտ խորթ կը մնացինք՝ և ռուսները երբէք չէին կարող հաշտուել մեր քաղաքական գերիշխանութեան հետ:

Այդպէս էին Հայաստանի ռուս պաշտօնեաները, և Հայոց Հանրապետութեան ռուս գաղութները, և այդչափ փափկալից էր հայկական կառավարութեան դրութիւնը այդ ձախորդ քաղաքական բարդ պայմաններում:

Կարսի նահանգի յոյն ազգաբնակութեան թիւը պատերազմից առաջ մօտ 40 հազար էր:

18 թուի գաղթին՝ բոլոր յոյները, բացի մի քանի գիւղերից, փախան, գաղթեցին, և հայկական իշխանութեան օրով՝ Կարսի նահանգը վերադարձաւ մօտ 25-30 հազար յոյն:

Նահանգի յոյն ազգաբնակութեան սկիզբը հանգչում է դարերի ծալքերում, և Կարսի նահանգի բնիկների թւում յոյները՝ միշտ գրաւել են իրանց մեծ ազդեցիկ տեղը: Նրանք բնակութիւն էին հաստատել երկրի լեռնոտ և անտառապատ վայրում, գերազանց խաշնարած էին, առանձնապէս զբաղւում էին կաթնատնտեսութեամբ, մեղուաբուծութեամբ, և խելօք, շնորհալից մարդկանց համբաւ ունէին երկրում: Բոլոր յոյները խօսում էին թէ տաճկերէն, թուրքերէն և թէ հայերէն, տալիս էին երկրին հմուտ և ընդունակ վարչական պաշտօնեաներ, և քաղաքացիական իմաստով՝ հայերից յետոյ երկրորդ տեղն էին բռնում նահանգում:

Յոյն գիւղերը փռուած էին գլխաւորապէս թիւրք և քուրդ ազգաբնակութեան գօտիներում, և վերջինների ազդեցութիւնը յոյների վերայ նկատւում էր ամէնուրէք: Տնտեսական և վարչական հարցերում աւելի մօտ թիւրքերի և քրդերի հետ շփվելով՝ յոյները գրեթէ ամէն տեղ լարուած յարաբերութիւնների մէջ էին նոցա հետ, և այդ յարաբերութիւնները երբեմն այնչափ կրքոտ էին, որ կրօնով, ծագումով, կուլտուրայով և ընդհանուր աշխարհայեցողութեամբ այդ տարբեր ազգութիւնները թշնամիներ էին երկրում:

Պատմութեան քաղաքական քմահաճոյքը երերելով իսլամ և քրիստոնեայ ազգաբնակութեան հեռանկարները՝ ամէն անգամ աւելի սուր բնոյթ էին տալիս թիւրք-յունական երբէք ոչ հաշտ յարաբերութիւններին, և այդպիսով այդ բնակչութեան իրար հետ մաքառումը կեանքի բոլոր ասպարէզներում՝ մերթ բռնկուելով և նորից մարելով, կազմել է դարերի երկար շարաններ: Որպէս երկրի աշխատաւոր տարր՝ յոյները միշտ բարձր են եղել տաճիկներից, թուրքերից և քրդերից: Յոյների բոլոր հովիւ մզդուրները և մշակները քրդեր և թուրքեր են եղել, և վերջինները միշտ սովորել են յոյներից տնտեսութիւն և մարդավայել նիստուկաց:

Ռուս պետական յեղաշրջումից յետոյ՝ յոյների դրութիւնը Կարսի նահանգում երերուեց և թուրքերը զգալի կերպով սկսեցին ճնշել յոյներին: 19 թուին երբ տաճկաց զօրաբանակը քաշւում էր Կարսի նահանգից՝ յոյն գաղթականութիւնը առաջինը անցաւ Կարսի նահանգը և բռնեց իր բնակավայրը: Եւ այդ օրերում, երբ միւս կողմից Կարսի նահանգը հիւսիսային կողմից ներս խուժեցին վրացիները՝ յոյն-քրդական թշնամութիւնը բռնկուում է մեծ չափով: Այդ խառնաշփոթ առանցքում՝ և Կարսի նահանգում տարածւում են «ազգերի ինքնորոշման» շոյալից գաղափարները: Քաղաքական հորիզոնում՝ Յունաստանը տրամադրութիւն է ցոյց տալիս գրաւելու իր պատշաճ տեղը, և այդ մթնոլորտում անկերպարանք և մեր օրերին առանձնայատուկ անորոշութեամբ՝ յղանում է յոյների դէպի Էլլադա գաղթելու ուրուականը: 19 թուի ամառը Կարս եկաւ Թիֆլիզի յունաց դեսպանը, որին մենք մեծ պատուով ընդունեցինք: Հիւպատոսը այցելեց ինձ, և այդ գաղթի առիթով ինձ հետ ունեցած յատուկ խորհրդակցութեան ժամանակ՝ Յունաստանի դիւանագէտը հաւաստիացրեց ինձ, որ յոյն կառավարութիւնը ոչ

մի տրամադրութիւն չունի գաղթեցնելու Հայաստանի սահմաններից յոյն ազգաբնակութիւնը, ի նկատի առնելով առաջինը իր պետական միտումները՝ յետոյ Եւրոպական քաղաքական մթնոլորտի երերուն, անորոշ դրութիւնը, և վերջապէս և այն, որ յոյները այժմ գտնւում են այստեղ՝ Հայոց Հանրապետութեան հովանաւորութեան տակ, մի ազգութեան, որ վիճակակից լինելով յոյն քաղաքական ճակատագրի՝ համարւում է իրանց մեծ կողմնակիցը:

Այդ բոլոր միտումներով, որ յենւում էին հիւպատոսի ասելով՝ Վենեզիլոսի կարծիքի վերայ, յոյն կառավարութիւնը միանգամայն հանգիստ է իր ազգակիցների վիճակի համար Կարսի նահանգում, և ոչ մի ցանկութիւն չունի գէթ այս ժամանակամիջոցում նոցա Յունաստան գաղթեցնելու:

Բայց և այնպէս, նահանգում շարունակ հոլովում էին այդ գաղթի խնդիրը, և այդ հարցը ոչ միայն չէր իջնում օրուայ շահերի հրապարակից՝ բայց և օրեցօր աւելի և աւելի էր կենդանութիւն ստանում: Յետևելով իրերի ընթացքին երկրում և ուսումնասիրելով խնդիրը՝ ես չէի կարող չը տեսնել, որ գաղթի գաղափարը, որ յամենայն դէպս ներդաշնակ էր մեր օրերի բորբոքալից տրամադրութիւնների հետ՝ շատ մեծ եռանդով և յամառօրէն արծարծում էր յոյն երիտասարդութիւնը, մի բուռն մարդիկ՝ կտրուած փաստօրէն երկրից և իրականութիւնից: Կապուած չը լինելով երկրի հետ որոշ նիւթական շահերով՝ այդ տաքագլուխ երիտասարդութիւնը ոչինչ չը կորցնելով անձնապէս, աղմկում էր ի հաշիւ ընդհանուրի: Եւ իր յետևից տանելով ամբոխը՝ նա ցանկութիւն ունէր փայլելու հրապարակում և այդ աղմկալից պայմաններում զբաղմունք և վաստակ ձեռք բերում...

Շատ հետաքրքիր է, որ այդ բորբոքալից շարժման գլուխ էին անցել դարձեալ գիւղական վարժապետները, այդ իրանց անցեալում նոյնչափ աշխատասէր, նոյնչափ շիտակ, որչափ և շատ յամառ և շատ միակողմանի մարդիկ:

Հրապարակի անկախ քաղաքական սկզբունքները արբեցրել էին և յոյն վարժապետին: Հայկական իշխանութիւնը՝ որչափ և բարեկամ էր նա, գալիս էր չափաւորելու այդ վարժապետների քաղաքական վարչական թռիչքները: Այդ իշխանութիւնը անկեղծօրէն ուզում էր աջակցել յոյն դպրոցական գործին, և յոյն ազգաբնակութեան տնտեսական բարգաւաճմանը՝ բայց ոչ ի հարկէ աւելի:

Բայց յոյն վարժապետին չէր բաւարարում այս նախկին պատուաւոր տեղը: Վարժապետութիւնը նա այլևս հնացած, յետամնաց զբաղմունք էր համարում, և իր մէջ մեծ քաղաքական և վարչական ընդունակութիւնների կոչում տեսնելով՝ նա ձգտում էր քաղաքական և հասարակական ֆանտաստիկ հեռանկարներ ստեղծելու այդ Արդահանի և այդ Սարիղամիշի վայրենի ձորերում, և ինքը թիավարելու, ինքնահաւան և ինքնամոռաց՝ այդ հախուռն և տարազաւոր շփոթում:

Եւ տոգորուած այդ բոլոր բարձր և շատ բարձր մտքերով ու գաղափարներով՝ նա փորձեց սկզբում «այդ հայկական» իշխանութեան մէջ և իր իշխանութիւնը հիմնելու: Եւ ի դէմս ազգային խորհրդի՝ տրամադիր էր զբաղուելու երկրում

ոչ ի հարկէ կրթական և կուլտուր գործերով, այլ միայն մտածող քաղաքականութեամբ և մեր օրերում բոլորի համար այդչափ շոյալից վարչական և իրաւակարգային հարցերով ու իրաւունքներով:

Բայց իր այդ բուռն ցանկութիւններում՝ յոյն կիսագրագէտ վարժապետը հանդիպեց մեր նոյնչափ իշխանալից տրամադրութեան և կապանքներին: Յոյն ազգային խորհրդի այդ խարդախ, յամառ և բթամիտ վարժապետ նախագահին ես առաջարկեցի թողնել Կարսի նահանգի սահմանները, և նորա յետևից փախան և այդ խորհրդի անդամներից մի երկուսը:

Բայց այդ մարդիկ տեղաւորուելով Թիֆլիզում՝ այս անգամ հանդէս եկան այլ դերում: Նոքա կազմեցին յոյն ազգաբնակութիւնը Կարսի նահանգից և առհասարակ Հայաստանից Յունաստան տեղափոխելու մի կոմիտէ, և «ժողովրդի» անունից բանակցութիւնների մէջ մտան յունաց կառավարութեան հետ:

Մեզ թշնամալից ռուս լրագիրներում այդ մարդիկ սկսեցին տեղեկութիւններ տպել այն «բռնութիւնների» մասին՝ որոնց ենթարկւում է հայկական իշխանութեան կողմից յոյն ազգաբնակութիւնը, և այդ ուղղութեամբ անպատասխանատու և ձրի՝ պղտորում էին հրապարակում հասարակական կարծիքը: Այդ «ընտրուած» և «ճշմարտութեան համար աքսորուած և խաչուած» մարդիկ՝ կազմակերպեցին Հայաստանի Հանրապետութեան սահմաններում իրանց ծուղալից ցանցը, և հրահրելով երկրի այս և այն անկիւնում Էլլադայի դրախտի հեռանկարը՝ և միւս կողմից սուտ և յեղաշրջուած լուրերով դժգոհ տրամադր-ութիւն ստեղծելով յոյն ազգաբնակութեան մէջ, գաղթի պատրաստութիւններ էին տեսնում: Որպէս ամէն մի արկած՝ այս գաղթականական նախապատրաստութիւններն էլ, պրոպօգանդը, անցուդարձը, հեռագիրները, լրագիրները և այն գրպանները միջոցներ էին պահանջում ի հարկէ: Եւ այդ դրօշակի տակ այդ պարոնները փող էին ժողովում, անհաշիւ և անպատասխանատու ծախսում, աղ-մկում և այդ առանցքում իրանք լլլում: Բացի այդ բոլորից, նրանք կցեցին այդ գաղթական արկածին մի շատ շահաւետ և մեր օրերում մի մեծատարազ գործ: Այդ կարծեցեալ «սովն» էր յոյն ազգաբնակութեան մէջ:

Այդ պարոնները մեծաչափ հրդեհեցին այդ խաբուսիկ «սովը» Թիֆլիզ նոր եկած և իրերի դրութեան հետ անծանօթ յոյն դեսպանութեան առաջ, և սպառնալից տրամադրութիւն ստեղծեցին: Եւ վարժապետները հասան իրանց նպատակին: Մի կողմից նոքա եկամուտի նոր աղբիւր ստեղծեցին իրանց համար՝ իսկ միւս կողմից և ժողովրդի սիրտը առան, ձրի հաց բաշխելով, և այդ մթնոլորտում հեղինակաւոր դարձրին իրանց ձայնը գաղթի հարցում: Բայց յոյները Կարսի նահանգում շատ և շատ չափաւոր էին հողագործութեան մէջ: Նրանք գերազանցօրէն զբաղւում էին անասնապահութեամբ և մեղուապահութեամբ և այդ տնտեսութիւնն էր նոցա ապրուստի և բարգաւաճման միջոցը: Յոյները Կարսի նահանգում բնակալում էին միշտ լեռների բարձունքներում, այնտեղ, այն Ախար-

Բախար տարածութիւններում՝ ուր հացը, գարին չի հասնում, և շատ անգամ չը հասած քաղում:

Յոյները Կարսի նահանգում ունէին մեծ չափով տաւար ու ոչխար, ամենանուրբ և ամենահամեղ կարագը նորանցն էր, և նահանգի յոյն ազգաբնակութիւնը ունևոր և ապահով հոչակ ունէր:

Հացը նոքա միշտ դրսից են բերել, և այսօր ինչպէս և երեկ՝ այդ գնումների համար նոքա միջոցներ ունէին: Բայց այդ մանրամասնութիւնները հրապարակում յայտնի չէին ի հարկէ: Լրագիրներում կարդում էին. «Սովը յոյների մէջ», կարդում էին նոցա «նեղ իրաւակարգային վիճակի մասին Հայաստանի Հանրապետութեան սահմաններում» և հաւատում, բոլորը հալած իւղի տեղ ընդունում:

Այդ մթնոլորտում այդ վարժապետ դեմագօգներին յաջողուեց դրսում յոյն հարուստ մարդկանց և յոյն կառավարութեան ուշադրութիւնը գրաւել և կազմակերպել «սովեալների կոմիտէ»:

Դժուար է երևակայել ի հարկէ աւելի մեծաչափ գողութիւն ու զեղծումներ՝ քան թէ այդօրինակ կոմիտէների «գործունէութիւնը»: Հացը և միջոցները հալւում էին թէ ճանապարհային տեղերում...

Այդ բաշխումների շուրջը, ուր բացի արդարութիւնից կար ամէն բան՝ միշտ «տուր ու դմփոց էր» և վայնասուն: Իսկ այդ աղմուկը պէտք էր թէ այդ կոմիտէի ստեղծագործողներին, և թէ նոցա այն գործակալներին յոյն վայրերում՝ որոնք բոլորն էլ այդ գոչումների տակ իրանց գրպաններն էին լցնում:

Երբ այդ թէ՛ «գաղթականական» և թէ՛ «սովեալների» կոմիտէների աղմկալից գործունէութիւնը դարձրեց իր վերայ Թիֆլիզի յունաց հիւպատոսի ուշադրութիւնը, նա մի գնդապետ ուղարկեց իրերի հետ ծանօթանալու համար: Գնդապետը մի քանի անգամ այցելեց ինձ և դառնալից գանգատւում էր, որ փչացած և ապականուած բարքերի մթնոլորտում՝ շատ դժուար է մաքառել յանուն իրաւունքի և ճշմարտութեան...

Բայց շատ հետաքրքիր է, որ հեռահարելով երկրի անկախ տրամադրութիւնը և մտքերը դէպի գաղթ ուղղելով՝ վարպետների մի այլ խմբակցութիւն շատ շահաւետ զբաղմունք ստեղծեց իր համար:

Երբ Կարսի յոյն ազգաբնակութեան մէջ օրեցօր սկսեց աճել գաղթելու տրամադրութիւնը՝ այստեղ ու այնտեղ յոյները սկսեցին նախապատրաստական աշխատանքներ կատարել և լիկվիդացիայի ենթարկել իրանց տնտեսական երկրի հետ կապերը: Մէկը ծախում էր տունը, միւսը՝ մեղուները, սայլը, տաւարը և այլ իրերը: Եւ այդ մթնոլորտում բռնկուեց մեծ աճուրդ և մեծ վաճառք: Գնողների մի խումբ՝ հենց իրանք, յոյները, սուտ լուրեր էին տարածում տաճկաց սահմանից սպասուող մեծ վտանգի մասին, և այդ լուրերի ազդեցութեան տակ առաջ էր գալիս խուճապը:

Շատերը շտապում էին մի կերպ փողի վերածել անշարժը և իրանց ծանրութիւնները, իսկ միւսները օգտւում էին այդ իրարանցումից և կիսագնով ձեռք բերում ամէն բան: Այդ մթնոլորտում յղացաւ և բռնկուեց յոյն գաղթական հոսանքը Կարսի նահանգի սահմաններից: Յունաց Թիֆլիզի դիւանագիտական ներկայացուցչից ես մի երկու հեռագիր ստացայ, ուր նա հաղորդում էր ինձ, որ յոյն կառավարութիւնը առայժմ ոչ ցանկութիւն և ոչ միջոցներ ունի յոյներին Կարսից Յունաստան տեղափոխելու համար, և խնդրում է յայտարարել նահանգի յոյն ազգաբնակութեանը՝ որպէսզի նա տեղահան չը լինի և ապարդիւն չը քայքայէ իր տնտեսութիւնը: Բայց այդ բոլորը ի զուր էր արդէն:

Ծերերը, հասուն յոյները, դիրք ունեցողները՝ միշտ դառնալից գանգատւում էին ինձ, որ այդ արկածախնդիր դեմագօգները քանդեցին իրանց տունը, ստեղծեցին երկիրը ծախելու ամէն բան՝ և այսօր քարուքանդ ու անյոյս, նրանք կանգնած են ճանապարհի վերայ, ուր անցնելու ոչ մի փափագ ու ցանկութիւն չունեն: Բայց յոյները ձգում էին ամէն բան՝ և խումբ-խումբ անցնում դէպի Բաթում:

Յունաց հիւպատոսարանը Թիֆլիզից հեռագրում էր ինձ, որ յոյները, առանց իր թոյլատուութեան և կարգադրութեան՝ թափւում են Բաթում և հեղեղում այնտեղի նաւահանգիստը, որ ինքը ոչ պատրաստի նաւեր ունի այդ գաղթականութեան համար նոցա Յունաստան տեղափոխելու համար, և ոչ միջոցներ՝ այդ հազարաւորներին Բաթումում կերակրելու համար: Հիւպատոսը խնդրում էր յայտարարել այդ բոլորը յոյն ժողովրդին և դադարեցնել գաղթական-ութեան հոսանքը: Բայց այդ բոլոր միջոցները արդէն ուշացած էին: Դեմագոգ վարժապետները արեցին իրանց ասածը: Նրանք հրդեհեցին երկրի յոյն ազգաբնակութեան տրամադրութիւնը՝ ազգային և բարեգործական դրօշակի տակ լցրեցին իրանց գրպանները, փախան՝ ստիպելով հազարաւոր մարդկանց թախծալից թողնել դարաւոր, հայրենի վայրերը, տուն, տեղ, կապեր և հմայիչ երկինք և շաբաթներով թափառել Թիֆլիզի և Բաթումի վագզալներում ջարդուած հոգով և հաւատով...

Բայց այստեղ պէտք է ասեմ, որ յոյների այդ խուճապ տրամադրութեանը և գաղթին շատ և շատ նպաստեց և Կարսի մեր գեներալների «քաղաքականութիւնը»: Գեներալ Յովսէփեան, իսկ նորան նմանուելով և գեներալ Փիրումով՝ իրանց մեծ ընդունակութիւնների համար բաւարար չէին համարում զօրաց շարքերը: Համակուած մեր օրերի «ինքնորոշման» ձգտումներով՝ մեր գեներալները զբաղուեցին երկրի կառավարչական ու քաղաքական խնդիրներով:

Բայց շատ հետաքրքիր է, որ կառավարութիւնը՝ գէթ «հասարակական գործիչները», եթէ ոչ տրամադիր էին լսելու այդ «հեղինակաւոր կարծիքները»՝ գէթ այնչափ սրտոտութիւն և քաղաքացիական քաջութիւն չունեցան ասելու այդ «-Սարդարապատի» հերոսին, որ Սարդարապատը արդէն անցաւ և մի կերպ վերջացան Ձեր լիազօրութիւնները: Այսօր Ձեզ գնդեր և զօրամասեր են յանձնուած,

և բարեհաճեցէք կրթելու և մարզելու մեր այդ գումարտակները, պահակելու մեր սահմաններում, իսկ ներսում՝ երկրում, թոյլ տուեցէք աշխատելու այն մարդկանց՝ որոնք թէ կոչուած են դորա համար, և թէ իրաւասու այդ խնդիրներում:

Բայց մեր աստղերի պալատը թէև գիտէր այդ ամէն մի «գեներալի» իսկական արժէքը և նոցա անցեալը՝ այնուամենայնիւ, ինչ-ինչ միտումներով, մեր կամարելեան չուզեց այդ գեներալների խաթրին դիպչել: Եւ այդ երկու գեներալները իրանց գործը թողած՝ ընկել էին երկրի հանգստի յետևից, և այստեղ ու այնտեղ երերելով դրութիւնը նահանգում՝ հանգեցին իրանց աշխատանքները Կարսի պարիսպների տակ:

Անչափ ընդհանուր զինակոչից և ի վնաս պետական պրիստիժի ու երկրի իրաւակարգի՝ այդ գեներալները յոյներից առանձին, կամաւորական վաշտեր էին կազմակերպում և պահում այդ վաշտերը այն վայրերում՝ ուր յոյները հին հաշիւներ ունէին քրդերի և թիւրքերի հետ...

Պէտք էր զարմանալ միայն ի հարկէ, որ երեկուայ կապիտանը ու փոխ գնդապետը, անհասանելի կամօքն բախտի երկուսն էլ գեներալ այսօր՝ իրաւունք էին համարում իրանց զբաղուելու այնպիսի մեծ օրէնսդիր և պետական խնդիրներով, որպէս՝ զօրակոչի անկախ ձևեր ստեղծելով նահանգում: Նոքա ինքնագլուխ կամաւորական վաշտեր էին կազմակերպում յոյներից, կռուացնում էին այդ յոյներին քրդերի և թիւրքերի հետ, և այդ «պետական» էքսպերիմենտները անում էին տաճկական սահմանագծում:

Գեներալները բացատրում էին, որ իրանք «ուժեղացնում են» հայկական բանակը այդ յոյն կամաւորներով, ի նկատի առնելով թուրքերի «սպառնալիքը»: Բայց իրօք՝ նոքա յետամտում էին այլ նպատակներ և այլ շահեր: Առաջինը, գեներալներին պէտք էր ցոյց տալ երկրին, որ թէև զինակոչը նահանգում քաղաքացիական իշխանութեան գործն է՝ բայց նոքա անտես են առնում նահանգապետին, և իրանք են տնօրինում երկրի բախտը: Երկրորդը, նոցա պէտք էր խախտել զինակոչի յաջող ընթացքը նահանգում, և այդպիսով նահանգի քաղաքացիական իրաւասութեան համար անախորժ և դժուարալից մթնոլորտ ստեղծել: Բայց գեներալներին և նոցա սպաներին պէտք էր վերջապէս և մի այլ կարևոր բան: Յոյն կամաւորական վաշտերը օգտւում էին հայկական սուիններով և ամէն պատեհ դէպքում՝ ընդհարւում քրդերի հետ: Իսկ այդ առանցքում յոյները քշում էին քրդերի տաւարն ու ոչխարը: Երբ քրդերի այդ առիթով բողոքը երկինք էր հասնում՝ գեներալները առարկում էին, որ այդ վաշտերը ճնշում են «յակահեղափոխութիւնը»...

Գեներալների այդ քաղաքական-պետական գործելակերպի առանցքում չքացաւ քրդերի աւելի քան 30 հազար գլուխ տաւարը, որ գնաց գլխաւորապէս դէպի վրաց սահմանները: Այդ մեծ աւարի կենտրոնում որպէս հերոս՝ կանգնած էր կամաւորական վաշտերից մեկի հրամանատար մի յոյն սպայ, Փիլորով ազ-

գանունով, որ գեներալ Յովսէփեանի աջ թևն էր համարւում: Երբ քրդերի այդ տաւարը քշում էին նահանգից դուրս դէպի Բաթում, Աղէքսանդրապոլ՝ տաւարը մի քանի անգամ բռնուեց: Ոստիկանութիւնը արձանագրութիւն կազմեց, գործերը անցան արտակարգ դատարանին: Սպասւում էր սենսացիօն մերկացումներ դատարանում, գեներալները և նոցա աջակցող գնդապետները ջղայնանում էին և արտակարգ դատարանի նախագահ Մդիւանեանից երես դարձնում: Գեներալները մեղադրում էին իրաւաբան Մդիւանեանին հակայեղափոխութեան մէջ, առարկում էին, որ Մդիւանեան նահանգապետի բանակում լինելով՝ զինուորականների դէմ է:

Արտակարգ դատարանը պատրաստւում էր բանտարկութիւններ կատարել, որպէսզի հրապարակ հանէ թալանի այդ «քաղաքականութեան» իսկական մեծ հերոսներին: Սպասում էին, որ այդ բանտարկութիւնները սենսացիօն մերկացումներ առաջ կը բերեն, մի ամբողջ Պանամա բաց կանեն՝ բայց քեամալիստների արշաւը 20 թուի աշնանը դադարացրեց դատարանի այդ աշխատանքները և Կարսի անկումը եկաւ իր փլատակների տակ թողնելու այն մեծաքանակ և հետաքրքիր նիւթերը, որ ամբարուել էին արտակարգ դատարանում այդ աղի, տաւարի շուրջը, և պէտք է լոյս սփռէին, թէ ինչ էին անում մեր գեներալների կամաւորական յոյն խմբերը, և ինչ վակխանալիա էր տիրում այն տարածութեան վերայ, որ անցնում էր տաճկական սահմանով:

Մեր այդ գրպանային և անձնական «քաղաքականութիւնը» մենք կատարում էինք ոչ միայն օրը ցերեկով՝ այլև ի ցոյց Տաճկաստանում ապրող քրդութեան:

Երկրի այդ կազմակերպուած թալանը, որ կատարւում էր հայկական սուինների զրահի տակ, մեծ յուզմունք, մեծ ջղայնացում էր առաջ բերել տաճկական սահմանում բնակուող քրդերի մէջ: Եւ այդ է պատճառը, որ երբ մեր սահմանագլխում Օգոստոսի վերջերում երևացին Կարաբեկիր փաշայի առաջաւոր մասերը՝ ամբողջ քրդութիւնը երես դարձրեց մեզանից...

Եւ մենք, թողնելով թնդանօթներ, և մեծ հարստութիւն՝ փախանք, փախանք խելակորոյս, առանց յետ նայելու և թշնամուն չը տեսած...

Այդչափ բարձր էր մեր մէջ թալանի տրամադրութիւնը:

Իսկ մեր հրամանատարութիւնը ծածկելով իրերի իսկական իմաստը՝ հեռագիրներ էր տեղում Երևան, որ Կարաբեկիր, «անթիւ և անհամար զօրքով», արշաւում է իրանց վերայ... Գեներալները հաւատացնում էին կառավարութիւնը, որ իրանք նահանջում են «ռազմական միտումներով» և «ռազմագէտ» Ռուբէն փաշան հաւատացած էր, որ իր ռուսախօս հրամանատարութիւնը մեծ ծուղակ է պատրաստում տաճկական զօրաբանակի համար...

Երբ այդ դէպքերի նախօրեակում պարլամենտի նախագահ Աւ. Սահակեան այցելեց այդ վայրը՝ ամբողջ քրդութիւնը հրապարակով բողոքեց նորան և յայտ-

նեց, որ յոյները, հայկական զինուորի դերում և հայկական հրամանատար կազմը միանգամայն աւերեցին երկիրը, պարլամենտի ալևոր նախագահը ճնշուած էր այդ հրապարակական յայտարարութիւնից: Մենք յոյս ունէինք, որ գէթ երկրի առաջի քաղաքացին կը պարզէ վերջապէս Երևանին դրութիւնը՝ բայց մեր աստղերի պալատը քաջութիւն չունեցաւ դատելու իր գեներալներին ու գնդապետներին: Բայց Ռուբէն փաշան շարունակում էր խնկարկել այդ «Սարդարապատի հերոսներին» և ի հաճոյք նոցա՝ Հայաստանի դիկտատօրը զոհեց այն բոլորը, որով ապրել և ոգևորուել է այն դաշնակցութիւնը, որի սանձերը, որպէս ծաղր սրբութեան՝ գտնւում էին այսօր այդ պօմպադուրի կամայալից ձեռքերում...

Այն յոյն սպայի հայրը, որ գեներալների կամաւորական վաշտերի սիրտն էր, Փիլորով, շատ ազդեցիկ և շատ խորամանկ մարդ էր: Սուինների ոյժով ձեռք բերուած մեր խաղաղ քրդերի տաւարը յանձնւում էր այդ խորամանկ յոյնին, իսկ նա արդէն այս և այն ճանապարհով ոսկու էր վերածում այդ «աւարը»: Եւ երբ այդ յոյնը և նորա մեծ և փոքր բարեկամները բաւարարուել էին այդ առանցքում լիուլի՝ հենց այդ Փիլորովը իր բարեկամներով այստեղ ու այնտեղ սկսեց հորդորել յոյներին գաղթել, բացատրելով, որ քրդերը այսուհետև անխնայ կը լինեն դէպի յոյները...

Այսպիսի պայմաններում ու մթնոլորտում յղացաւ և բռնկեց յոյն գաղթական շարժումը Կարսի նահանգում: Եւ դադարացնել այդ շարժումը վարչական, ադմինիստրատիւ միջոցներով՝ ոչ մի հնարաւորութիւն չը կար ի հարկէ:

Իրաւակարգը խախտուել էր հիմնօրէն: Գեներալները և սպաները հրամանատարելու փոխարէն՝ զբաղուած էին քաղաքական և ադմինիստրատիւ, վարչական գործերով: Անկախ կառավարութիւնից՝ իրանց միտումներով գեներալները և սպաները զինակոչ էին կատարում և խանգարում, երերում երկրի զինակոչի ամբողջութիւնը: Այդ գեներալները և սպաները սրում էին ազգութիւնների միջև կայծալից յարաբերութիւնները, և երկրի խորտակուող իրաւակարգի մթնոլորտում իրանց յաղթալից և շատ լաւ էին զգում...

Կառավարութիւնը ի դէմս Ռուբէն փաշայի՝ երկրի փրկութիւնը այդ ռուսախօսների մէջ էր տեսնում, և զմայլուած այդ մեծ ընդունակութիւններով և նոցա ապագայ յաղթութիւններով՝ փաշան այդ գեներալ գնդապետներին էր յանձնարարել Հայաստանի բախտը: Այդ եզակի մթնոլորտում՝ Հայաստանի քաղաքացիական իշխանութիւնը մի թիւրիմացութիւն էր, եթէ չասենք մի ֆիկցիա:

Եւ իրերի ընթացքը անխուսափելիօրէն պէտք է հանգէր այնտեղ՝ ուր վերջացաւ հայկական պատմութիւնը...

Յոյները թողեցին իրանց հինաւուրց օջախները, վշտալից և յուսահատ նրանք գաղթեցին առանց որևէ ցանկութեան և հեռանկարի:

Սրտաճմլիկ էին յոյն գաղթական պատկերները ճանապարհին: Արտասուք, թախիծ, հառաչանք, անէծք, ոչ մի յուսատու ժպիտ դէպի ապագայ... Մենք զոհ

գնացինք մեր օրերի քմահաճ ցանկութիւններին՝ ասում էին արտասուալից յոյները, որոնք գալիս էին ինձ մօտ հրաժեշտ տալու։

Եւ յոյների գաղթը Կարսի նահանգից նոյնպէս մի անսպասելի սինեմատօգրաֆիկ պատկեր էր, որպէս մեր երկրի բոլոր յետագայ պատկերները *(տեքստը խզուած է)*…

ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, թթ. 1-463, բնագիր, ձեռագիր։

DOC №8

Յուշեր՝ Կարսում պատերազմական իրավիճակի, մարտից փախչող հայ գեներալների և թուրք զօրաց հրամանատար Կարաբեքիր փաշայի կողմից Կարսի գրաւման մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***ճշմարտութիւնը պահանջում է վկայել այստեղ, որ հայկական գլխաւոր շտաբի նախնական դիզլոկացիան, նախագիծը կազմուած էր շատ իմաստալից և մեծ ռազմական արժէք ունէր:***
- ***...եթէ հայ սպայութիւնը համակուած լինէր իր պարտաւորութիւններին սրբութեամբ՝ Կարաբեկիր իր ամբողջ բանակով և շտաբով մեր պատուաւոր գերին կը լինէր:***
- ***Դասալիքութիւնը այդ օրերում հասել էր ահռելի չափի, և մեր գումարտակները հալւում էին ժամէժամ:***
- ***Կարաբեկիր, խրախուսուած այդ մեծ յաղթանակով և իր առաջ տեսնելով խուճապալից փախչող հայ գեներալներին ու գնդապետներին՝ կրկնակի եռանդով այնուհետև սկսեց առաջանալ դէպի Կարս:***
- ***Թիւրքաց հրամանատարը չնուաճեց Կարսի նահանգը, նա միայն օգտագործեց երկրում տիրող անիշխանութիւնը և խուժեց մեր սահմանները անարգել և անարիւն իր համար:***
- ***...թիւրքաց հրամանատարը մշակեց իր մարզի դիզլոկացիան դէպի Հայաստան, մեր աշխարհում տիրող զարհուրելի շփոթի տուեալների հիման վերայ:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Զինադադար էք կնքում... Գոռում էր կատաղած Սեպուհ...

Ի հարկէ այդ թոյլատրելի չէր, ի հարկէ շնորհալի գլխապետ Մելիքեան յամենայնդէպս մասնակից չէր կառավարչական այդ մեծ ակտին, բայց հայդուկի բռնկումը մեր առաջ՝ ծաւալում էր միայն մեր օրերի հոգեբանութիւնը, և դարձեալ մի ապացոյց բերում ասելու, թէ որչափ խառը և շփոթ էին հայկական գործերը, ուր չկար օրէնք և կարգ, ուր իշխում էին զգացմունքը և մարդկանց անձնական վերապրումները: Շարունակելով մեր արձանագրութիւնները՝ ճշմարտութիւնը պահանջում է վկայել այստեղ, որ հայկական գլխաւոր շտաբ*[ի]* նախնական

դիզլոկացիան, նախագիծը կազմուած էր շատ իմաստալից և մեծ ռազմական արժէք ունէր: Երբ գեն. Փիրումով և գեն. Յովսէփեան խուճապալից նահանջելով թիւրքաց սահմաններից դէպի Կարս, իրանց վրայ էին նետում Կարաբեկիր փաշայի գումարտակները՝ Դրօ, Արաքսի հովտից, և գնդապետ Հասան-Փաշայեան Արփաչայի հոսանքներից պէտք է շրջապատէին Կարաբեկիրին թիկունքից: Խիստ և մետոդիկ ի կատար ածելով այդ դիզլոկացիան՝ հայկական հրամանատարութիւնը դաժան թակարդ էր լարում թիւրք զօրաբանակի համար: Եւ եթէ հայ սպայութունը համակուած լինէր իր պարտաւորութիւններին սրբութեամբ՝ Կարաբեկիր իր ամբողջ բանակով և շտաբով մեր պատուաւոր գերին կը լինէր: Եւ այնուհետև, իրօք, հաշտութեան կոնֆերենցիան ոչ թէ Աղէքսանդրապոլ՝ այլ դարձեալ հայկական Կարսում կը լինէր և մենք այնտեղ կը կնքէինք թիւրքերի հետ այն համաձայնութիւնը, որ կը լինէր Սևրի գէտ մասնակի ճշտումը...

Բայց հայ զօրաւորները, ընդունակ և քաջ ընդհանուր առմամբ՝ այլասեռուել էին մեր օրերում: Նրանք չէին ենթարկւում իրանց իշխանութեանը, և նոցանից ամէն մէկը իրան մի Նապոլիօն երազելով՝ ինքն էր ուզում հրամանատարել և ինքն էր ուզում բոլորին թելադրել:

Հռչակաւոր Բագարան, այնտեղ ուր Ախուրեան սրընթաց փախչում է դէպի Արաքս՝ ինչպէս և 77 թուին, թիւրք զօրաբանակի ամենացաւոտ թիկունքն էր:

Հայկական գլխաւոր շտաբը, իր նշանաւոր դիզլոկացիան կազմելով, հաշուի էր առել ռազմաբեմի այդ խոցոտալից անկիւնը, և այնտեղ ուղարկուեց իր ժամանակին փոխգնդապետ Կոնդախչեան: Այդ ըստ երևոյթին քաջ փոխգնդապետը իր հրամանատարութեան տակ ունէր հազար սուին, հարիւրից աւել հեծելազօր, ութը թնդանօթ և գնդացիրներ: Բագրատունեաց ամառանոցի չքնաղ կիրճում այդ մեծ բռունցքն էլ բաւական էր զինուորական մեծ ցոյց թշնամու թիկունքում անելու համար: Բայց սուրբ Գէորգի սպայական խաչով զարդարուած երիտասարդ հայ փոխգնդապետը երերուեց իւր անմատչելի դիրքում մի 2-3 հարիւր քուրդ ձիաւորներ տեսնելով, թողնում է իր տեղում իր թնդանօթները, ամբողջ ռազմապաշարը, իր զօրաբանակի բոլոր ծանրութիւնները՝ և ամենաանամօթ կերպով իր գումարտակներով փախչում...

Այդ միջոցում վրայ է հասնում այդ գաւառակում պատահմամբ եղած Կաղզուանի գաւառապետի օգնական Չիլինգարեան, որ ինքս ուղարկել էի դասալիք զինուորներին բռնելու: Նա իր մի 50 հեծեալ ոստիկաններով և գաւառակի մի բուռն կտրիճ հայերով հալածում է քուրդ հրոսակախումը, և այդպիսով ցրում Կարաբեկիր փաշայի առաջամասը, որից գնդապետ Կոնդախչեան՝ իր հազար սուիններով փախաւ որպէս խելակորոյս:

Մեր կանոնաւոր զորամասի այդ խայտառակ փախուստը՝ օդում փառող երերուն դրութիւնը խախտում է հարկէ և այդ գաւառակի... Նախճաւան...*(փաստաթուղթը վնասուած է)* հայ և եզիտ քրդերի հանգիստը: Եւ գաւառակի ազգաբ-

նակութիւնը, որ մինչ այդ յոյսով էր ապրում՝ ոչ մի օգնութիւն այլևս չը սպասելով հայկական զօրաբանակից, թողնում է տուն և տեղ և գաղթի ճանապարհը բռնում: Գաւառապետի օգնական Չիլինգարեան՝ ժողովրդի օգնութեամբ ժողովում է գնդապետ Կոնդախչեանի թնդանօթները, ռազմամթերքը և այլ պաշարով զօրաց սայլերը, և բերում հասցնում է Աղէքսանդրապոլ: Բայց այստեղ մի բնորոշ պատկեր էլ:

Ձորերով դէպի ցած փախչելով՝ գնդ.Կոնդախչեանի գումարտակը հանդիպում է քրդերի ոչխարի մի հօտի, և թալանում քրդերին, քշում նոցա ոչխարը...

Դասալիքութիւնը այդ օրերում հասել էր ահռելի չափի, և մեր գումարտակները հալւում էին ժամէժամ: Ռուբէն փաշայի Մինիստրութիւնը հեղեղում էր ինձ այդ առիթով հեռագիրներով, և ես ստիպուած էի նահանգի ոստիկանութեան ամբողջ կազմը ցրել գաւառները՝ դասալիքներն բռնելու: Այդպիսի մի յանձնարարութիւն էլ կատարում էր Տեգորի գաւառամասում Կաղզուանի գաւառապետի օգնական Չիլինգարեան, որին վիճակ է ընկնում յաջորդել փախչող *[փոխ]*գնդ. Կոնդախչեանին և ցրել քրդերի այն հրոսախումբը, որ փախուստի էր հարկադրել հայկական մի մեծ կանոնաւոր զօրամաս....

Պէ՞տք է արդեօք դեռ բացատրել, որ այնտեղ ուր զօրքը այդչափ լքել և կորցրել էր իր դէմքը, ուր բոլորը բռնուած էին միայն թալանի տենդով, ուր հազարանոց զօրամասը թողնում է իր հրետանին և խելակորոյս փախչում հեռւում երևացած քուրդ հրոսակախմբի առջևից՝ խօսք չէր կարող լինել յաղթութեան մասին: Կոնդախչեանները կոչուած չէին ի կատար ածելու տաղանդաւոր դիզլօկացիան, իսկ այդ դիզլօկացիան նպատակ ունէր ծուղակի մէջ ձգելու թիւրք զօրաբանակը և թիկունքից հարուածելով Կարաբեկիր փաշային՝ յարձակուել նրա գումարտակների վերայ մեր թևերից: Իսկ այդ միջոցում Կարսի ամրութիւնները պէտք է հուր թափէին տաճկաց հրամանատարի վերայ, և այդպիսով դժոխք ստեղծելով այդ միջանցքում՝ ստիպէին թշնամուն վայր դնել զէնքը և սպիտակ դրօշակ պարզել...

Այդպէս էին հայկական գլխաւոր շտաբի գաղտնալից փայփայումները... Բայց,...Գեներալ Սիլիկով, զօրքերի ընդհանուր հրամանատարը՝ կարծեմ բանտարկեց այդ երկչոտ փոխգնդապետին, դատի տալու համար: Բայց հայկական դատարանը՝ սկզբից ևեթ միայն մի ֆիկցիայ, կորով չունեցաւ արդարադատութիւն կերտելու:

Փոխգնդապետի տեղը 24 ժամուայ ընթացքում ի կատար ածուած կախաղանն էր, բայց հայ աշխարհի աչքը կարօտ հնուց գէթ մի դէպքի՝ երբ հայկական արդարադատութիւնը անդրադառնար վերջապէս երկրի սպասելիքը:

Կարաբեկիր, խրախուսուած այդ մեծ յաղթանակով և իր առաջ տեսնելով խուճապալից փախչող հայ գեներալներին ու գնդապետներին՝ կրկնակի եռանդով այնուհետև սկսեց առաջանալ դէպի Կարս: Բայց հայկական գլխաւոր շտա-

բը հետևողական այս անգամ՝ նորից յառնում է իր գաղտնի միտումները դէպի Բագարան:

Եւ երբ Կարաբեկիր երևաց հռչակաւոր Վազինքէօյի լեռնագօտում, և սկսեց իջնել դէպի Կարսի տափարակը՝ Սպարապետ Նազարբէկով նպատակի է բռնում Կարաբեկիրի թոյլ թիկունքը: Այս անգամ նա ուղղում է դէպի պատմական Ալուջա մի լուրջ զօրամաս՝ գնդ. Հասան Փաշայեանի հրամանատարութեամբ:

Ինչ-ինչ հիմունքներով՝ գնդ. Հասան-Փաշայեանը լաւ ու քաջ զինուորականի համարում ունէր: Այդ դիւերսիայի լուրը Կարսում առնելով՝ մենք շատ բարձր տրամադրուեցինք: Ծանօթ երկրի տեղեկագրութեանը՝ մենք տեսնում էինք, թէ ինչպէս գնդապետ Հասան Փաշայեան պէտք է խփէր դէպի Կարս իջնող Կարաբեկիրի թիկունքից, և ինչպէս մեր միւս զօրամասերը, որ մեր բանակի թևերն էին՝ պէտք է փակէին այն ծուղակը, որտեղից փախչելու այլևս հնար չը պէտք է ունենար թիւրք հրամանատարը: Բայց մինչ մենք սրտատրոփ սպասում էինք Կարսում այդ հրավառ տեսիլին, մինչ գեներալ Կազարով, որ այդ օրը փոխարինեց գեն. Յովսէփեանին՝ շնչասպառ դիտում էր, թէ ե՞րբ Վազենքէօյի բարձրունքներում կը տարածուի գնդ.Հասան Փաշայեանի հրետանու ծխալից մշուշը, գնդ. Հասան Փաշայեան հարկաւոր համարեց ոտը կարճ ձգել, դանդաղել իր մարշը՝ թողնելով դէպքերը իրանց բախտին ու իրանց ընթացքին...

Գնդ. Հասան Փաշայեան չերևաց Արփաչայի այդ խառնուածքում, Կարաբէկիրի թիկունքը միանգամայն *(փաստաթուղթը վնասուած է)* ... իջնում էր դէպի Կարս յաղթալից և թևաւորուած: Նրա հեռաւոր թիկունքում եղած հայ զօրամասերը չէին յետապնդում նրան, իսկ առջևի հայ զինուորութիւնը ձգում էր զէնքը և փախչում:

Այդպէս էր այն եզակի անբախտ հայ զինուորական մթնոլորտը՝ ուր Կարաբեկիր այնչափ ուղեկից և այնչափ հեշտ դափնիք ձեռք բերեց:

Մեր հրամանատարութիւնը համակուած քմահաճ օրինազանցութեամբ՝ չէր ենթարկւում իր իշխանութեանը: Մեր ամէն մի գլխապետ և փոխգնդապետ անսխալական համարելով իրեն՝ անում էր միայն իր ցանկացածը: Պէտք է դեռ ասել արդեօք, որ այդ պայմաններում ամենատաղանդաւոր դիզլօկացիան, ամենակատարեալ զինուորական նախագիծը՝ չէր կարող փրկել դրութիւնը: Այդ տեսակ հրամանատարութիւնը պէտք է միայն պարտուէր, և նա ի կատար ածեց իր քմահաճոյքը՝ հայ ժողովրդի գոյութեան գնով միայն: Մենք չէինք ուզում հասկանալ, որ ռազմաբեմում, ինչպէս և երկրի վարչական ասպարէզում՝ դերակատարները պէտք է համակուած լինեն հրամանի ի կատար ածելու անվճռաբեկ պարտաւորութեամբ և ճշտութեամբ միայն: Բայց մեր յեղափոխական օրերում՝ ամէն մի նախկին տիրացու, խանութպան այսօր գնդապետ դարձած՝ սիրում էր միայն ճառել և միայն ընդդիմախօսել: Նա հակուած չէր ենթարկուելու իր իշխանութ-

եանը, այդ գլխապետ-գնդապետներից ամէն մէկը ուզում էր ինքը փայլել հրապարակում, նա միայն խօսում էր, քննադատում ուրիշներին, և բոլորի վերայ վերևից ներքև նայելով՝ նա միայն իրան էր տեսնում ու իրան հաւանում:

Թիւրքաց հրամանատարը չնուաճեց Կարսի նահանգը, նա միայն օգտագործեց երկրում տիրող անիշխանութիւնը և խուժեց մեր սահմանները անարգել և անարիւն իր համար: Կարսի նահանգի մեր հրամանատարակազմը ոչ միայն ներդաշնակութիւն չէր զինուորական աշխարհում, նա ամէն քայլափոխում խառնւում էր նահանգի և քաղաքացիական անցուդարձին: Իր գործը երկրի վրայ թողած՝ այդ գնդապետ-գեներալները իրանց և վարչապետ էին համարում: Նրանք շարունակ և անդադար ինտրիկներ էին լարում նահանգի քաղաքացիական իշխանութեան դէմ, և օգտուելով Երևանի թուլութիւնից, օգտագործելով դաշնակցական կապերը՝ շարունակ պառակտում էին նահանգը, և շարունակ բորբոքում առաջ բերում կառավարչական անցուդարձում: Եւ ինչպէս յետոյ պարզուեց՝ Աղէքսանդրապօլի կոնֆերանսի ժամանակ պատմեցին մեզ թիւրք սպաները, Կարաբէկիր մանրալից իրազեկ էր մեր այդ խռովութիւններին, և թիւրքաց հրամանատարը մշակեց իր մարզի դիզլոկացիան դէպի Հայաստան՝ մեր աշխարհում տիրող զարհուրելի շփոթի տուեալների հիման վերայ:

Ո՛չ Սեպուհ ի հարկէ, չպէտք է այնչափ օրինազանց լինէր իր բռնկալից ազգասէր տրամադրութիւններում, և ո՛չ էլ Կոնդախչեաններն ու Հասան-Փաշայեանները չը պէտք է այնչափ երկչոտ և ապիկար լինէին իրանց պարտաւորութիւններում: Այդ երկու տրամագծօրէն տարբեր պայմաններում՝ երևում ու լուծւում էր հայկական իշխանութիւնը, և այդ մթնոլորտում ամենատաղանդաւոր դիզլոկացիան՝ չէր կարող փրկել երկիրը անօրինակ պարտութիւնից:

Այդպէս էին այն գունալից պատկերները, ուր անդրադառնում էր երկրի կեանքը, իր բոլոր թեր և դէմ կողմերով:

ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 8, թթ. 1-15, բնագիր, ձեռագիր:

DOC №9

Յուշեր՝ հայ զօրավարներ գեն. Ախվերդովի, Դրոյի, Սեպուհի և Նազարբեկովի մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Եւ այդպիսով, իր բոլոր թեորետիկ պատրաստականութեամբ հանդերձ, գեներալ Ախվերդով մեր վերջի օրերում շտաբի պետ դառնալով՝ չէր կարող այդ ջուխտ ու կենտ օրերում ազգային կուռ բանակ ստեղծել:***
- ***Ազգային մթնոլորտում պետական անկախութիւն ստացած Հայաստանը՝ չունէր իր ազգային բանակը, նա բնականապէս պէտք է պարտուէր:***
- ***Գեներալ Նազարբէկով՝ այդ օրերում թողել էր ռուս պաշտօնազգեստը և պճնուել էր հայկական զինուորական նոր տարազով:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Նա միշտ ռուսերէն էր մտածում, նա հնարաւորութիւն չունէր իջնելու դէպի հայկական իրականութիւնը, և գուցէ այդտեղ է այն գաղտնիքը, որ նա միշտ օտար էր մեզ համար, և մենք ոչ ցանկալի մթնոլորտ իր համար...

Եւ այդպիսով, իր բոլոր թեորետիկ պատրաստականութեամբ հանդերձ՝ գեներալ Ախվերդով մեր վերջի օրերում շտաբի պետ դառնալով, չէր կարող այդ ջուխտ ու կենտ օրերում ազգային կուռ բանակ ստեղծել:

Եւ եթէ Դրօ, պայթալից պատրաստ այդ բանակը դէպի Դուփնիկ և դէպի ազգային մեծ յաղթութիւն առաջնորդէր, գեն. Ախվերդով օժտուած չէր նորուն այդ բանակը կազմակերպելու և այդ փայլը ստեղծելու: Եւ իրագործում էր այն՝ ինչ որ պէտք է կատարուէր: Ազգային մթնոլորտում պետական անկախութիւն ստացած Հայաստանը՝ չունէր իր ազգային բանակը, նա բնականապէս պէտք է պարտուէր:

Այստեղ պէտք է ասեմ, որ թէ Դրոյի ու թէ Սեպուհի անունները սարսուռ էին առաջացնում թշնամու բանակում: Բայց այդ բաւական չէր ի հարկէ: Եզակի խնդութեամբ և եզակի վճռական այդ ժողովրդական հերոսները՝ միայն հմայում էին իրանց անուններով մեր յոյսերը. և համեմում մեր անխուսափելի անկումը և մեր չորս կողմը ծփող համազգային դառնութիւնը...

Այդպէս էր այդ օրերի մեր զինուորական մթնոլորտի հրապարակը: Ներքին գործերի Մինիստրի առանձնասենեակի լուսամուտներից Սպարապետ Նազարբէկովի առանձնասենեակը՝ ես շատ անգամ դիտում էի մեր այդ օրերի մեծի մա-

սով դահլիճի անցուդարձը: Դիմացի շէնքում Մինիստր նախագահի առանձնասենեակում կատարւում էր անընդհատ խորհրդածութիւն՝ տիրող ճգնաժամի առիթով, և հայկական բանակի ծերունի սպարապետը համակուած պատմական մոմենտով՝ միշտ շատ լուրջ էր և սպասողական դիրքում: Գեներալ Նազարբէկով այդ օրերում թողել էր ռուս պաշտօնազգեստը և պճնուել էր հայկական զինուորական նոր տարազով: Բայց որպէս հնագոյն զինուորական՝ սովոր կարգի, կանոնի և պարտաճանաչ՝ գեներալ Նազարբեկով այդ օրերում հարկաւոր էր համարում զինուած լինելու իր հրամանատարութեան բոլոր առանձնայատկութ-իւններով: Այդ օրերում նա հագնում էր իր փառաւոր շքանշանները, որպէս յիշողութիւն Դիլմանում և այլ վայրերում տարած յաղթութիւնների: Նա կապում էր այդ օրերում պատերազմի դաշտին վայել գօտին, և առհասարակ յիշեցնում էր այն անցած ժամանակները՝ երբ հրամանատարը ռազմաբեմ էր դուրս գալիս պճնուած և զարդարուած... Այդ փայլը և պաճուճանքը ստեղծում է յաղթական կորով և պատերազմական տրամադրութիւն, ու շատերը այդ փայլի հետ կապում էին յաղթութեան բախտը: Այսպէս էր նախնի պատերազմական շկոլան և նախնի ճաշակները, այսպէս էր և հայկական պատկառելի սպարապետը՝ որպէս վերջի ներկայացուցիչ այդ անցած ժամանակների: Դեռ 77 թուին, տակաւին երիտասարդ սպայ՝ նա ուղղեկցում էր հռչակաւոր Լօրիս Մէլիքովին դէպի Կարսի ամրութիւնները: Բայց այսօր ինքը սպարապետ և անհասանելի կամօքն երկնքի՝ տնօրէն հայկական պատերազմական բախտի, նա հարկաւոր ...

ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 9, թթ. 1-4, բնագիր, ձեռագիր:

DOC №10

Յուշեր՝ Կարսում պատերազմական իրադարձութիւնների, ռուսների ձեռքով արուող անկարգ զօրահաւաքի, զինադադարի առթիւ Կարաբեքիր փաշայի ուղարկած վերջնագրի, հայկական զօրքերի ցրման և զանգեզուրցիների մղած դիմադրական պայքարի մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Բոլորը զէնքի էին կոչւում, բոլորը կարծէս թէ վազում էին ռազմաբեմ, զինւում և պատրաստւում կրակ նետուելու՝ բայց գումարտակների շարքերը հալւում էին ժամէ ժամ...***
- ***Այդ շառաչող և աղմկող շարքերը սրտոտ և քաջարի էին միայն քաղաքի փողոցներում, իսկ դրսում՝ խուճապալից և պատրաստ փախչելու առաջի թրխկոցից...***
- ***...մոբիլիզացիոն գործը հայկական գլխաւոր շտաբում գտնւում էր դարձեալ ռուս գնդապետի ձեռքում, իսկ գաւառներում այդ մեծ և պատասխանատու գործը վարում էին դարձեալ ռուս սպաներ,...***
- ***...երկրի օրհասալից օրերում մենք ականատես եղանք մեր զորակոչի մեր զօրահաւաքի ամօթալի սնանկութեան:***
- ***Պաշտօնեաները ցիր ու ցական՝ նման էին մարդկանց այն բազմութեան, որ նաւի աւարիայի ժամանակ միայն աղմկում էին և ոչ օգնում նաւապետին:***
- ***Դաշնակցութիւնը պարտուել էր վերջնականապէս, և հրապարակում չկար այլևս նորա վաղեմի հմայքը և սարսափը:***
- ***Այդ զաւեշտ պատկերները գալիս էին մի աւելորդ անգամ ասելու, որ չի կարելի անպատասխանատու փորձեր անել երկրի համբերատար գլխի վերայ, և նա մանաւանդ չի կարելի այդ փորձերը յանձնել սիրողներին ու անցորդներին:***
- ***...Ռուբէն փաշան, թեքուեց վերջապէս Յովսէփեաններից և Մերիմանովներից: Եւ մեր զինուորական ցիրուցաքան հրապարակի վերայ վերջին անգամ, որպէս մի հրավառ տեսիլ՝ բռնկուեցին և մարեցին դարձեալ Դրօ և դարձեալ Սեպուհ:***
- ***Սեպուհ դաշնակցութեան հայդուկն էր, ծխի և արկածների մէջ կոփուած, Յովսէփեան ռուսերէն խօսող և ռուսերէն մտածող կայսերական իդեալների երկրպագու էր, և մի զաւեշտ թիւրիմացութիւն հայ ազգային բանակում:***

- *Եւ եթէ Նազարբէկով օրինականութիւնը ինքն էր և ինքը հնութիւնը՝ նորա դիմաց նստած Դրոն ինքը մեր օրերն էին, իրանց արձակ և անպատասխանատու կորովով: Դժուար է համաձայնեցնել այդ հինը այդ նորի հետ, բայց մի բան ակներև էր – Դրո լրացնում էր Նազարբէկովի պակասը: Եւ այդ երկու անունները, որոնք յամենայն դէպս կապուած կը մնան մեր օրերի պատմութեան հետ՝ բևեռում էին իրանց շուրջը երկրի վերջի, անցնող ուշադրութիւնը:*
- *Զօրաց շարքերում Մայիսին տեղի ունեցած առաջի խռովութիւններին իսկ Կարսի երկու գեներալները այլևս հրամանատար չէին, գէթ այդպէս էին իրանց ձևացնում հենց իրանք, գեներալները՝ առարկելով, որ զօրքը չի լսում և չէ հնազանդւում իրանց...*
- *Նրանք առանց մի գնդակի յանձնեցին Կարսի անառիկ ամրութիւնները ռուս տաճկական դաշնակցութեանը...*
- *Երբ թիւրք հորդաները ներս խուժեցին Կարս, փողոցում երևացին կասկածելի տիպի ռուսներ և Կովկասի թուրքեր... Պարզ էր, որ ազգերի ինքնորոշման այդ նախանձախնդիր արկածախնդիրները ուղեկցում էին Կարաբեկիրի բանակը որպէս պրոպօգանդիստներ՝ բերելով իրանց հետ թոյնը, որ ճաշակել էր հայ զինուորը դեռ Մայիսեան օրերում...*
- *Դուք կարող էք երևակայել, թէ ի՞նչ քաոս էր Կարսում, ռազմաբեմում և մեր լքուած բանակում, ուր գնդապետ Փիրվերդիեւները այնպէս եռանդալից վարժեցնում էին հայ զինուորին փախչել թշնամու առջևից...*
- *Նոցանից մէկը, մի երիտասարդ՝ Ղազանջեան ազգանունով, պատմեց մեզ երեքիս, որ Մայիսեան Կարսի խռովութիւնների կազմակերպողներից մէկը ինքն էր, որ գեն. Փիրումով և գեն. Յովսէփեան անցել էին նոցա խռովարարների կողմը, իսկ Ձեզ,– դարձաւ ինձ Ղազանջեան,– վճռուած էր ձերբակալել, բայց մենք պարտուեցինք և դուք ազատուեցիք...*

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

(Սկիզբը բացակայում է)...դատարանը, ուսումնարանական գործը և այլ հաստատութիւնները՝ դարձել էին ակադեմիկ հասկացողութիւններ միայն: Հրապարակում մնացել էին օրեցօր հաշուող և ի ծայր կազմալոյծ բանակի մնացորդները միայն, և ապիկար ու անպէտք ադմինիստրացիան:

Ամենակարևոր կարգադրութիւնները մնում էին թղթի վերայ, հրամանը կրկնւում էր մի քանի անգամ, բայց ոչ թէ կատարում՝ այլ և պատասխան չէր ստացւում: Իսկ հրապարակը տենդոտ և ջղայնալից աղմկւում էր: Բոլորը զէնքի

էին կոչում, բոլորը կարծէս թէ վազում էին ռազմաբեմ, զինւում և պատրաստւում կրակ նետուելու, բայց գումարտակների շարքերը հալւում էին ժամէ ժամ և ծերունի Նազարբէկով նորից և նորից դիմում էր ներքին գործոց Մինստրին և յուսահատ կոչում – հայրենիքը վտանգուած է, դասալիքութիւնը ահռելի, իսկ զինակոչը դեկորատիւ աղմուկ միայն, և յամենայն դէպս ոչ ցանկալի իրականութիւն...

Այդպէս էր մեր օրերի պատերազմական տրամադրութիւնը:

Բայց Երևանը, ինչպէս որ երկրի և միւս կենտորնները՝ նման էին ալեկոծ վայրերի, ուր զինուորական ուժգին և սպառնալից պատրաստութիւններ էին տեսնւում: Զէնքի էր կոչւում երկրի ամբողջ ազգաբնակութիւնը, և վաղ առաւօտուանից Երևանի արուարձաններում դուք կը տեսնէիք այդ խայտաճամուկ զինուորացուների անվերջ շարանները: Առաւօտուանից պարլամենտի դիմաց շարւում էին հայրենիքի այդ ապագայ պաշտպանները, և գլուխ առնելով պարլամենտի նախագահ Սիրական Տիգրանեանին՝ «Մեր հայրենիքի» շոյիչ հնչիւնների տակ անցնում էին մարշութեան

Պէտք է ասել այստեղ, որ այդ շարքերը պարլամենտի նախագահի առաջնորդութեամբ՝ իմպոզանտ էին և բարձր տրամադրութիւն էին ստեղծում կարծես: Բայց այդ մի դիւթիչ տեսիլ էր միայն, մի անցնող սինեմատոգրաֆիկ պատկեր, բայց ոչ լուրջ միջոց հոգևարք հայրենիքը փրկելու համար: Այդ շառաչող և աղմկող շարքերը սրտոտ և քաջարի էին միայն քաղաքի փողոցներում, իսկ դրսում՝ խուճապալից և պատրաստ փախչելու առաջի թրխկոցից...

Այդչափ ահաբեկիչ էր մեր թշնամիների համար երկրի զոօրահաւաքը: Բայց ես պէտք է ասեմ, որ և զօրահաւաքը և մոբիլիզացիան զինուորական գործի ամբողջ իմաստը և բանակի յաղթալից դափնիքը անմիջապէս կապուած են նորա հետ: Բայց դուք գիտէք արդէն, որ մոբիլիզացիոն գործը հայկական գլխաւոր շտաբում գտնւում էր դարձեալ ռուս գնդապետի ձեռքում, իսկ գաւառներում այդ մեծ և պատասխանատու գործը վարում էին դարձեալ ռուս սպաներ; գալով այդ գործի կազմակերպութեանը երկրում՝ դուք գիտէք նոյնպէս, որ նա գտնւում էր անշնորհք և ապիկար ադմինիստրացիայի ձեռքում: Այդպիսով այդ մեծ պետական գործը վարւում էր վայրիվերոյ առանց մշակուած սիստեմի, առանց խիստ հսկողութեան, և պարփակելով իր մէջ երերուն և պատահական անցուդարձ՝ հաւատ չէր ստեղծում իր շուրջը երկրի ազգաբնակչութեան մէջ:

Եւ պէտք է ինձ ասել արդեօք, որ գնալով այդպէս՝ այդ գործը չէր կարող օրինականութիւն ստեղծել: Նա օրեցօր թուլանում և հիւծւում էր և երկրի օրհասալից օրերում՝ մենք ականատես եղանք մեր զօրակոչի մեր զօրահաւաքի ամօթալի սնանկութեան:

Երբ Կարաբէկիր կանգ առաւ Արփաչայի վերայ և ուղարկեց մեզ իր վերջնագիրը զինադադարի առիթով՝ մեր կառավարչական շրջանները վերապրում էին ի ծայր յուզուած և ի ծայր ջղայնալից րոպէներ: Մինիստր նախագահի

առանձնասենեակում առաւօտուանից մինչև ուշ գիշեր անդադար նիստ ունէին կառավարութիւնը և պարլամենտի նշանաւոր անդամները:

Սարգիս Արարատեան, այն ժամանակուայ ներքին գործոց մինիստրը՝ յանձնարարութիւն ստացաւ տեսնուելու թիւրքաց հրամանատարի հետ, և շտապ մեկնեց Աղէքսանդրապոլ: Այդ ջղայնալից մթնոլորտում հնարաւորութիւն չունենալով անմիջապէս միջամտելու մինիստրութեան աշխատանքներին՝ նա յանձնարարել էր ներք. գործ. մինիստրի պարտաւորութիւնները ինձ:

Բայց ես մինիստրական առանձնասենեակում նման էի զօրավարի, որ ռազմաբեմ է կոչուած զօրաբանակի կատարեալ պարտութիւնից յետոյ:

Այդ զօրքը ֆիկցիա էր միայն, զօրաշարքերը լքել էին ու ցիրուցան եղել, բոլորը փախչում էին, բոլորը զբաղուած էին ձևական հոգսերով և ինձ մնում էր միայն յուսահատ փողահարել և սպառնալից բայց անյետևանք՝ կարգի կոչել մարդկանց...

Աղէքսանդրապոլի, Շիրակի նահանգապետ Կարօ Սասունու ուր լինելը յայտնի չէր: Ասում էին, որ թողնելով Աղէքսանդրապոլը՝ նա անցել է դէպի Արագած, և այնտեղ թառած քաջարի Սասունցիներից վաշտեր է կազմակերպում: Սասունի մեր լուրջ դէմքերից մէկն էր, նա հեղինակաւոր էր հայրենակիցների շրջանում, իսկ Սասունցիք Հայաստանի ռուս կազակներ էին, և մենք շատ բան էինք սպասում այդ եզակի կրակոտ և սրտոտ լեռնեցիներից:

Կարևորագոյն վարչական խնդիրների մասին ես մի քանի հեռագիր ուղարկեցի նահանգապետ Սասունուն, այդ հեռագիրները գնում էին Աղէքսանդրապոլի գծով, բայց ես հնարաւորութիւն անգամ չունէի ստուգելու տեղ էին հասնում այդ հեռագիրները թէ ոչ: Այդչափ շփոթ և անել խառն էր մթնոլորտը:

Ալէքսանդրապոլի փոխնահանգապետ Խոյեցեան՝ համակրելի երիտասարդ, իրաւաբան, տեղափոխուել էր Ղարաքիլիսայ: Ես նորան էլ դիմեցի մի շարք հեռագրական պահանջներով: Բայց Խոյեցեան աւելի թագաւորում էր՝ քան կառավարում: Եւ Ղարաքիլիսան՝ ճանապարհների այդ մեծ հանգոյցը և ուր բորբոքւում էին այն ժամանակուայ հայ քաղաքական վերապրումները, կորցրել էր արդէն հրամանների ի կատար ածելու կարողութիւնը:

Պաշտօնեաները ցիր ու ցրական, նման էին մարդկանց այն բազմութեան, որ նաւի աւարիայի ժամանակ միայն աղմկում էին և ոչ օգնում նաւապետին:

Ի նկատի առնելով, որ Կարսի անկման ոոպէին ինձ հետ մեկնած մի խումբ վարչական պաշտօնեաներ գտնւում էին Աղէքսանդրապոլում և Ղարաքիլիսայում՝ ես հեռագրեցի, որ նրանք մնան Շիրակի նահանգապետի տրամադրութեան տակ: Բայց Աղէքսանդրապոլը իր շրջակայքով արդէն դժոխք էր դարձել, և այդ անիշխան մթնոլորտում՝ ամէն բան տակն ու վերայ էր եղել: Շատ ուշագրաւ է, որ և այդ յուսահատ և օրհասալից ոոպէում՝ կառավարութիւնը ի դէմս դաշնակցութեան, ապաւինում էր կուսակցական կորովի վերայ: Նա նորից շփոթ և

վայրի-վերոյ միջանցքում՝ «մոբիլիզացիայի» ենթարկեց կուսակցական ջանքերը, և պարլամենտի անդամները և «վստահելի ընկերները» անցան երկրի բորբոքման վայրեը, «իշխանութիւնը կազմակերպելու համար»....

Խօսք չի կարող լինել ի հարկէ «բիւրօ-կառավարութեան» անկեղծութ-եան մասին, բայց այդ ռոմանտիզմը չէր շաղկապւում այլևս կեանքի հրամանալից պահանջների հետ: Դաշնակցութիւնը պարտուել էր վերջնականապէս, և հրապարակում չկար այլևս նորա վաղեմի հմայքը և սարսափը: Նորա ողորմելի, տափակ ներկայացուցիչները գաւառները անցնելով՝ միայն դեմօրալիզացիայի էին ենթարկում իշխանութեան թշուառ մնացորդները, և գալիս էին մի անգամ ևս ասելու, որ հայդուկային սիստեմը տեղ չունի կառավարչական սաղմում: Այդ պարլամենտի անդամները և «վստահելի ընկերները»՝ անշնորհք, անտեղեակ դրութեան և դատարկաբան՝ միայն շփոթում էին առանց այն էլ ջղայնալից մթնոլորտը, և միայն քայքայում իշխանութեան իմաստը: Բոլորը հրահանգում էին, բոլորը աղմկում՝ և այդ առանցքում ձգում երկրի առաջ կառավարչական լրջութիւնը: Ախըրը զարաֆաթ դուրս եկաւ՝ վերջը կատակ դարձաւ, ասում էր ապշած երկիրը, տեսնելով այդ անգոյն և ողորմելի մարդկանց, որոնք գալիս էին փրկելու դրութիւնը եզակի արտակարգ և եզակի օրհասալից ակնթարթում:

Կարսի նահանգապետի վարչական պաշտօնեաներից մի քանիսին ես տրամադրեցի և Երևանի նահանգի վարչական մարմիններին՝ բայց զեմստվոն ու նահանգապետը վիճում էին իրաւունքների մասին: Այդ զաւեշտ սիմֆոնիան լրացնելու համար՝ գալիս էին պարլամենտի անդամները և «վստահելի ընկերները» և այդ վարչական համերգի աղմուկի տակ՝ քանդւում և լուծւում էր հայկական իշխանութ-իւնը: Կարսի նահանգապետի պաշտօնեաները չը գիտէին՝ թէ ո՞ւմ լսել և ում ենթարկուել, նոքա էլ շտապում էին դէպի նաւահանգիստ, իրանց չորս կողմը տեսնելով համատարած աւեր, համատարած անիշխանութիւն և անյոյս մթնոլորտ...

Այդպէս էր մեր պետական ճգնաժամը՝ որի փրկութեան համար «մոբիլիզացիայի էին ենթարկուած պարլամենտի անդամները», «վստահելի և պատասխանատու ընկերները»... Զանգեզուրը ամբողջովին մի քաղցր երազ էր՝ և մեզանից ամէն մէկս տոգորուած էր Դաւիթ-Բէկի պատմուածքներով: Հռչակաւոր Ջրաբերդը, Մազի կամուրջը, և այդ չքնաղ երկրի ձորերի դևերը՝ կանգնած էին մեր առաջ որպէս մեր իղձերի նուիրական և դեռ կենդանի ուրու*[ական]*...

Եւ այդ ֆանտաստիկ տեսիլը և աւելի ռոմանտիկ պատկեր՝ շոյող և շատ բարձր տրամադրող, մոռացնել էր տալիս երկրի արհաւիրքը:

Մի րոպէ մենք մոռանում էինք երկրի խռովալից դրութիւնը, մի րոպէ մենք պատուալից էինք համարում կռուելու Տաճկաստանի հետ, և մեր առաջ ծաւալւում էր մեր ազատակիր պատմութիւնը՝ լի խիզախ հայդուկներով, արկածալից տեսիլներով և այն հմայիչ իմաստով, ուր հայ սերունդները ճաշակել են հայրենի-

քի սէրը և ազգային մեծ իդեալների բարձր նշանակութիւնը: Այդպէս էր մեր ժամանակակիցների հասկացողութիւններում անառիկ և սրբազան Տաթևը՝ և այդ նոյնիսկ մեր անկախութեան և գոյութեան տագնապ շրջանում: Հայոց կառավարութ-եան կապը Զանգեզուրի հետ՝ Դարալագեազի վերայով էր: Պէտք էր սաւառնալ չքնաղ Գէօքչու յստակ երկինքը, պէտք էր իջնել Վայոց Ձորի ահռելի խորխորատները, և Քեշիշքեանդ մեծ հայկական գիւղի վերայով՝ ոտք դնել այն կուսական աշխարհը, որ մեր պատմութեան ընթացքում արտօնուած էր նազելից փայփայելու և իր գերբնական անդունդներում պատսպարելու մեր ազգային երազները...:

Ճանապարհների բացակայութիւնը, հեռուն կանոնաւոր հաղորդակցութեան պակասը, հեռագրական գծի անընդհատ խանգարուելը և մեր հասարակութեան բանիմաց ոյժերի խորշումը այդ վայրից՝ ստեղծում էր Զանգեզուրում մի առանձնակի դրութիւն: Զանգեզուրն էլ այդ օրերում պաշարուած էր թուրքական հորդաներով, և այդ հեռաւոր գաւառին օգնելու խնդիրը մի առանձին մտատանջութիւն էր ստեղծում կառավարութեան համար: Այդ երկրումն էլ արտակարգ անցուդարձը պահանջում էր արտակարգ նիւթական միջոցներ, որ մենք չունէինք, գանձարանում յատուկ վարկը սպառուել էր, մինդեռ Զանգեզուրի լիազօրները մի ամիս ճանապարհ գալուց յետոյ՝ Նոյեմբերի կէսին ... (*առկայ է տեքստի խզում*)

Շատ հետաքրքիր էին այդ օրերում Զանգեզուրցիների հետ ժողովները մինիստրի ընդունարանում: Երբ Աղէքսանդրապօլից և Դիլիջանից տեղում էին թիւրքերի սպառնալից հաղորդագրութիւնները, և Հայոց Հանրապետութեան իղձերը սեղմուած էին այդ երկաթէ օղակով՝ մենք ակամայ ելք էինք որոնում այն լեռներում, որ տակաւին հայկական էին և տակաւին յուսալից: «Մենք կը տանք և Երևանը», ասում էին մի քանի տաքագլուխ և անպատասխանատու դեմագոգները, բայց Նոր Բայազէտի բարձունքներից՝ «Վէրք Հայաստանի» կերտողի հայրենիքից սկսած մինչև Մաշտոցները, Սևանի գագաթները՝ կը փակենք տաճկական հեղեղի առաջը, և այդպիսով կ՛ամրանանք Նոր Բայազէտ, Դարալագեազ, Զանգեզուրի լեռներում...: Ի հարկէ այդ մի ֆանտաստիկ ցնորք էր, մի անցնող սփոփանք միայն մեր դառնալից փորձանքների առանցքում, բայց այն-ուամենայնիւ այդ մթնոլորտը և՛ վարակիչ էր և՛ յամենայն դէպս ոչ ընկճող, այլ միայն յուզող...: Գանձարանում յատուկ վարկերի սպառման պատճառով՝ մենք ստիպուած էինք բաւարարել Զանգեզուրցիների պահանջը ի հաշիւ այլ վարկերի, և ես ստորագրեցի գանձարանին մի պահանջագիր՝ Զանգեզուրցիներին բաւարարելու համար և չքնաղ աշխարհում: Մենք ձեռնհաս չենք կանգ առնելու այդ աւելի քան հետաքրքիր անցեալի վերայ, բայց կարծում ենք, որ հայ ինտելիգենցիան և հայ կառավարութիւնը մեծաչափ մեղաւոր են Զանգեզուրի առաջ: Մենք եկանք կառավարելու այդ ժայռալից և քմահաճ երկիրը առանց սիստեմի, առանց նախնական տուեալների և առանց պետական ծրագրի:

Կառավարութիւնը չը խնայեց այդ հեռաւոր գաւառին իր միջոցները, բայց նա հրամանալից կորով չունեցաւ իշխելու այդ երկրում: Դաւիթ Բէկի սրբազան ստուերը յուզում էր ի հարկէ Զանգեզուրի իշխանաւորներին, և նոքա իրանց անառատ ձգտումներում կերտել և հռչակուել՝ մրցում էին և կրքալից հունցում պետական մերանը:

Անյաջող փորձերի և կրքերի այդ առանցքում՝ երկիրը չը կարողացաւ ունենալ կայուն և կենտրոնալից իշխանութիւն:

Դէպի այդ լեռները գալիս և գնում էին բազմաթիւ մարդիկ, և բոլորն էլ հռչակ և փառք էին որոնում...: Խամսայի մէլիքութիւնների այդ կախարդ ջրերի աշխարհը, ուր լեռներից ցատկող սելերը գնում էին դէպի Արաքս, դէպի նշանաւոր Դերիք՝ և այնտեղ լճանում հայ երազների հետ միասին, տակաւին նշանաւոր էր իր ինքնակալ և ինքնիշխան դիրքով: Բայց մենք չը կարողացանք օգտագործել մեր սուվերէն իրաւունքների համար այդ անձեռնմխելի բնական ամրութիւնները:

Պատկառելի օրինականութիւն ստեղծելու փոխարէն՝ մենք այդ լեռները դարձրինք կռուածաղիկ կրքերի և փառքալից միտումների: Կառավարութիւնը շրջապատուած մէկը միւսին յաջորդող ձախալից փորձանքներով՝ հնարաւորութիւն չունեցաւ իր առանձնակի ուշադրութեամբ գուրգուրելու Զանգեզուրը, և մեր առաջ նորից բացւում է հեռաւոր մի տեսիլ՝ կախարդալից Ջրաբերդը միայն Դաւիթ Բէկերի համար...:

Լեռները միշտ պահպանողական են եղել և բոլորից քիչ են ենթարկուել ազդեցութիւնների և հպատակ պահանջների: Մեր լեռներում մենք եղել ենք միշտ ինքնուրոյն և միշտ ազատասէր: Եւ գուցէ այդ է պատճառը, որ լեռնոտ Զանգեզուրը բոլորից շատ դիմադրեց թուրք ջարդարար հոսանքին:

Անտարակոյս ի հարկէ, որ Խամսայի մէլիքութիւնների շոյալից իդեալը սաւառնում էր և այդ օրերում Զանգեզուրի կիրճերում: Հազիւ թէ պէտք է վիճել, որ այդ քարքարոտ կատարներում թառել էր մի բուռն հայութիւն, որ աւելի քան ով և իցէ՝ տրամադիր էր պաշտպանուելու և ինքնուրոյն լինելու: Եւ Հայոց Հանրապետութեան երկու տարուայ փոթորկալից գոյութեան ընթացքում՝ Զանգեզուրը ցայտուն ըմբոստ էր այդ իմաստով, և յուսատու մեր պետական ու սուվերէն ձգտումերում: Մեր արտակարգ օրերում դժուար էր ի հարկէ միջնադարեան գուշակութիւններ անել: Ժամանակակից քաղաքականութիւնը, աշխարհակալ սնափառ միտումները և պատմական այն մեծ լափինները, որ ստեղծում են համաշխարհային ...(*առկայ է տեքստի խզում*)

Այդպէս էր մեր վարչական անցուդարձը Հանրապետութեան վերջի օրերում:

Ռուբէն փաշան՝ զօրաց, բայց երբեմն և ներքին գործոց մինիստր՝ Կարսի անկումից յետոյ յանկարծակի իջել էր հասարակական հետաքրքրութիւնների

ասպարեզից: Հրապարակապէս և եզակի պարտուած էր իր քմահաճ ընթացքում, նա իր ռուս և ռուսախօս գեներալների և սպաների հետ միասին նման էր մոլորուած և թշուառ մի մարդու: Նա շփոթուած և աննպատակ տարուբերուում էր դեռ պաշտօնական մթնոլորտում: Ինչ որ ուզում էր ասել, բացատրել, բացատրուել, ինչ որ ուզում էր անել և ուղղել՝ բայց այդ բոլոր ջղայնալից անցուդարձը աւելի խղճալից էր, քան թէ լուրջ պաշտօնական ու գործնական: Նա և մենիստր էր և ոչ...

Ասում էին, որ նա հրաժարւում է Զեմսկի անպատասխանատու փորձերի գլխաւոր վայրը, և համայնական զրահի տակ բոլորը փորձում էին, բոլորը տանում՝ և քաղաքական մեծ աղմուկի առանցքում անյայտացնում այդ «տենդոտ» աշխատանքի յետքերը...:

Երևանի նահանգապետ Մէլիք Եօլչեան՝ եռանդոտ և բարեմիտ երիտասարդը, նման էր այդ նահանգում դարձեալ մի Կարապետի, որից զեմստվոն բռնագրաւել էր նորա բոլոր իրաւունքները:

Երկրի այն օրհասական օրերում՝ երբ կառավարութեանը պէտք էր ռեալ իշխանութիւն և ոչ պոռոտախօսութիւն, զեմստվոն և նահանգապետը մրցում էին իրաւունքների համար:

«Համայնացնելով» նահանգի նիւթական միջոցները՝ այդ «կօալիցիօն կուսակցութիւնները» սեփականացրել էին նահանգի և օրէնսդրավարչական իրաւունքները:

Երկիրը հառաչում էր այդ անիշխան մթնոլորտում, կառավարութիւնը չէր կարողանում ի կատար ածուած տեսնելու իր խստագոյն պահանջները: Նահանգապետը յուսահատ տարուբերուում էր այդ մեծ դիմակահանդէսում՝ ուր նա օժտւում էր պատասխանատու կոչումով, իսկ զեմստվոն իրան ենթարկելով նահանգի գործադիր մարմինները՝ հնձում էր ի փառս «աշխատաւոր մասսաների»...

Այդ տեսիլը, այն պատկերալից հոգևարքները՝ ուր մարում և հանգչում էր հայկական իշխանութիւնը: Այդ ի՞նչ սարսափելի քաոս է, հարցրեցի ես ջղայնացած Սարգ. Արարատեանին:

-Այդ քաոսը ես չեմ ստեղծել, և թող այդ քաղցրութիւնը վայելեն այսօր պարլամենտի այն բարձրաձայն անդամները՝ որոնց ծափեր էր հարկաւոր միայն և ոչ պետական լրջութիւն...

Զեմստվոն ոչ նահանգապետ էր ճանաչում և ոչ մինիստր: Որպէս անսխալական՝ նա անում էր այն ինչ որ ցանկանում էր, և կառավարչական բոլոր պահանջները միախառնուելով մի անիշխան առանցքում՝ անցնում էին անհետևանք և ապարդիւն: Զեմստվոն իր գործադիր մարմիններով, պետական մեծ աւարիայի նախօրեակում՝ լիուլի օգտագործում էր իր օգտին իր «անկախ» դրութիւնը, բոլորը թալանում էին, բոլորը տանում, իսկ պետական աշտարակը՝ անյետաձգելի պահանջների աւերով: Բազմաթիւ կեղեքուած գիւղացիներ և քաղաքացիներ

պաշարում էին մինիստրի դուռը՝ և արդարադատութիւն սպասում բռնալից և կամայական զեմսկի հաստատութիւնների դէմ: Մինիստրը հրաման էր արձակում նահանգապետին՝ բայց վերջինին լսող չը կար: Զեմստվոն անում էր, որ ադմինիստրացիան, ոստիկանութիւնը իրան է ենթարկւում, և իր «էշն էր քշում» իր «համայնական հաշիւներում»... Այդ մթնոլորտում կարելի էր խելագարուել և ոչ օրինականութիւն պահպանել:

Այդպէս էին հայկական զեմստվոյի վերջին գունալից տեսիլները:

Այդ զաւեշտ պատկերները գալիս էին մի աւելորդ անգամ ասելու, որ չի կարելի անպատասխանատու փորձեր անել երկրի համբերատար գլխի վերայ, և նամանաւանդ չի կարելի այդ փորձերը յանձնել սիրողներին ու անցորդներին: Մեր պետական լուրջ աշխատանքներին մենք կցեցինք և զաւեշտ յաւելուած:

Զեմստվոյի տնտեսական և կրթական ֆունկցիաները վերածուեցին պետական և կառավարչական մեծ ախորժակի, և զեմսկի հաստատութիւններում տեղաւորուեցին թերուսները և զանազան վարչական հաստատութիւններից արձակուած մութ մարդիկ, որոնք պետութեան մէջ ուզեցին թագաւորութիւն անել:

Արմատում երերելով երկրի իրաւակարգը՝ զեմստվոն ինքն էլ ի հարկէ մնաց այդ մեծ փլատակների տակ: Զեմսկի գործիչները փախան մեծ բեռներով՝ իսկ երկրին թողեցին ասելու, որ չի կարելի շփոթել լուրջը զաւեշտի հետ, ինչպէս որ չի կարելի խաղալ երկրի և ժողովրդի բախտի հետ:

....Որպէս պահպանողական և դիսցիպլինար գեներալ՝ Նազարբեկով նստած էր գրասեղանի առաջ սուրը կողքին, այսինքն ամէն րոպէ պատրաստ ի կատար ածելու բարձրագոյն հրամանը...

Նա պատկառալից սպասում էր Մինիստրների խորհրդի նիստի վախճանին, և իրաւունք չէր համարում այդ նիստը փակուելուց առաջ թողնելու իր գլխաւոր շտաբը: Նա հասարակ և հաւատարիմ զինուոր էր, և 60 տարի շարունակ սիրել է հրամայել և ի կատար ածել...

Բայց սպարապետի առանձնասենեակում ես շատ անգամ տեսնում էի նոր հրամանատար Դրոյին: Որպէս կոնտրաստ Նազարբէկովի խորհրդալից տեսքի և տրամադրութեան՝ Դրօ խայտաճամուկ էր և կարծես անհոգ: Մոխրագոյն հասարակ վերարկու,... *(տեքստը խզաուած է)*...

... պաշտօնից, բայց իրօք նորանով այլևս ոչ ոք չէր հետաքրքրւում: Զինուորական մինիստրութիւնն էլ այդ շփոթ օրերում՝ նոյն զեմստվոն էր, նոյն անիշխանութիւնը:

...Ռուբէն փաշան թեքուեց վերջապէս Յովսէփեաններից և Մերիմանովներից: Եւ մեր զինուորական ցիրուցաքան հրապարակի վերայ վերջին անգամ որպէս մի հրավառ տեսիլ՝ բռնկուեցին և մարեցին դարձեալ Դրօ և դարձեալ Սեպուհ:

Հայ երազների սկզբնական պատմուածքը շաղկապուած է եղել հայդուկ անուններով, և պատմութեանը հաճոյ էր երևի փակելու մեր անցուդարձի այդ անցնող և հմայիչ գլուխը դարձեալ հայդուկներով և դարձեալ ռոմանտիկներով: Հայկական պարտուած և լքուած բանակը երկու մասերի էր հետ բաժանուել – Երևանի թևը՝ պատասխանատու և զգայուն ճակատ, հրամանատարում էր Դրո, միւս տարածութիւնը՝ Ղարաքիլիսայ – յանձնուած էր Սեպուհին: Ինչպէս որ այդ ընդունուած էր ռազմական եզակի դէպքերում՝ երբ հայրենիքը վտանգուած է, ...

... Ռուբէն փաշան զիջել էր իր օգնական գեներալ Ախվերդովին և վերջինս Դրոյի շտաբի պետն էր: Բայց այդ թէորետիկ և ակադեմիկ գործելակերպը ճիշդ սկզբունքում՝ արդէն ուշացել էր, և մեզ մնում էր միայն հաշուել մեր օրերը:

Դրո, այդ խիզախ և բախտաւոր հայդուկը՝ պատրաստ էր ի հարկէ կրակ նետուելու:

Այսօր նա դարձեալ թիկունք էր և ենթակայ գեներալ Յովսէփեանի: Սեպուհի հրամանատարութեան տակ կար մօտ 4000 հոգի, բայց նա դարձեալ պապանձ էր, դարձեալ մատնուած անգործութեան: Գեն. Յովսէփեանին ենթարկւում էր և խմբապետ Սմբատ, որի հրամանատարութեան տակ կար մօտ 2000 հոգի:

Կարսի դաշտային միւս զօրամասերից մի քանիսը մնացել էին Կարսում, անամօթ կերպով փախել՝ ձգելով զէնքը, միւս մասերը կենտրոնացել էին Բաշկադեկլարի շուրջը, երկաթուղու և խճուղու տարածութեամբ, և գտնւում էին գեն. Յովսէփեանի հրամանատարութեան տակ: Այստեղ էր և 4-րդ հետևակ գունդը՝ գեն. Միրիմանովի գլխաւորութեամբ:

Զօրավար Սեպուհի և գեն. Յովսէփեանի զօրակայանները գտնւում էին ռուս գիւղերում, և մէկը միւսից երկու վերստի վերայ: Այդ երկու զօրավարները յայտնի էին որպէս երկու տրամագծօրէն տարբեր սրբերի երկրպագու: Սեպուհ դաշնակցութեան հայդուկն էր, ծխի և արկածների մէջ կոփուած, Յովսէփեան ռուսերէն խօսող և ռուսերէն մտածող կայսերական իդեալների երկրպագու էր՝ և մի զաւեշտ թիւրիմացութիւն հայ ազգային բանակում: Մեր քաղցրախօս Ահարոնեանի հռչակուած անգութ ֆալակը, բախտը, շատ սիրում է քմահաճ առանցքը, և այդ անծայր և անվերջ սահմաններում սփռելով իր գունալից կապրիսները՝ վիճակը խաղում է մարդկանց հետ և ծաղրում նոցա անցուդարձը: Հովանաւորելով գեներալ Յովսէփեանին՝ այդ ֆալակը, նորա երկու ամիս անփառունակ նահանջից յետոյ բերում, պատսպարում է այդ գեներալին թիկունքում: Բայց այս ստուերում նա կապանքում է և խռովալից Սեպուհին՝ կարծես հակադրելով իրարու այն մարդկանց, որոնք իրանց ամբողջ էութեամբ բացասում էին մէկը միւսին:

Դժուար էր գտնել կոնտրաստի աւելի ցայտուն զուգադիպութիւն, և այդ կոնտրաստ ֆալագը կարծես թէ ի հանդէս էր դրել ի պարծանք և ի նախատինք

ազգային գաղափարի: Եւ կրակոտ ու անձնուէր ազգասէրը նախանձալից և սև ազգուրացի դէմ՝ լրացնում էին մէկը միւսին և գալիս էին մի աւելորդ անգամ ասելու հասնող սերնդին, որ ամենայն տեղ մահը մի է, մարդ մի անգամ պիտ մեռնի, բայց երանի որ իւր ազգի ազատութեան կը զոհուի...

Այդպէս էին մեր վերապրումները՝ երբ ես իջայ ձիանից Սեպուհի կայանի առաջ:

Սեպուհ տեղեկութիւն չունէր, թէ ինչ էր կատարուել այդ 3-4 ժամուայ ընթացքում Կարսում: Նա միայն հրաման էր ստացել գեն. Յովսէփեանից՝ իր զօրամասերով նահանջելու դէպի Արփաչայ, և այնտեղ երկաթուղու կայարանում հրահանգների սպասելու:

Խմբապետ Սմբատի զօրամասը գտնւում էր Զարուշատի ձորում: Նորա հեռախոսը այնչափ փչացած էր, որ հազիւ հազ կարելի եղաւ հաղորդելու նորան նահանջի մասին անակնկալ ստացուած տեղեկութիւնը, և Սմբատ լեռներով, թիւրքերի մի շարք գիւղերով՝ շտապեց Ախուրեան:

Մեր ընթերցողը յիշում է անշուշտ, թէ ինչպէս մեր ռուսական գեներալները, մարտնչելով Կարսի նահանգապետի վարած քաղաքականութեան դէմ՝ երկրի այս և այն թուրք անկիւնում շարունակ դաւադրութիւն և ապստամբութիւն էին գտնում: Կարսի «պատասխանատու» դաշնակցականների աշխատակցութեամբ՝ նրանք շատ ջանալից այդ ուղղութեամբ պղտորում էին մտքերը Երևան-ում և այդ առանցքում յոյս ...*(տեքստը խզուած է)*

...ճանապարհորդական կօշիկներ, հայկական հայդուկի վաղեմի զգեստը կազմում էին Դրոյի սովորական հագուստը: կարծես անհոգ և կարծես անփոյթ՝ նա նստած էր Նազարբեկովի դիմաց, և երկուսը միասին լուռ, ինչ որ սպասում էին և ինչ որ երազում: Ես առանձին հետաքրքրութեամբ դիտում էի այդ ուշագրաւ պատկերը հայկական վերջի պետական տեսիլում, և իմ առաջ ծաւալւում էր պապիկ և թոռնիկ հեռաւոր պատմուածքը: Նազարբեկով – պահպանողական, սովոր ենթակայ լինելու իր բոլոր անցած աստիճաններում՝ պատրաստ կատարելու հրամանը, և 60 տարի չափած ծերունին իր համազգեստով, թրով և շքանշաններով՝ տիպիկ պատկառանք էր ժամեր շարունակուող մինիստրական նիստի դիմաց: Իսկ այդ հանդիսաւոր գեներալի դիմաց՝ արձակ և անպաճոյճ նստած էր Դրօ, հրամանատար հայկական զօրքերի, երազող և հրճուող: Նազարբէկով յենւում էր իր աստիճանների, իր շքանշանների և իր սպարապետ իրաւունքների վերայ: Նա կարծում էր, որ նորա յետևում դեռ կանգնած է հայկական բանակը: Եւ նա հաւատալից սպասում էր կառավարութեան հրամաններին՝ նորից հրամանալից փողահարելու, և նորից դէպի գրոհ և ճակատամարտ կոչելու հայկական բանակը...

Այդպէս էր այդ հանդիսաւոր օրերում հայ սպարապետի պատկառալից տեսքը, և նորա առանձնակի հոգեբանութիւնը:

Եւ եթէ Նազարբէկով օրինականութիւնը ինքն էր, և ինքը հնութիւնը՝ նորա դիմաց նստած Դրոն ինքը մեր օրերն էին, իրանց արձակ և անպատասխանատու կորովով: Դժուար է համաձայնեցնել այդ հինը այդ նորի հետ՝ բայց մի բան ակներև էր – Դրօ լրացնում էր Նազարբէկովի պակասը: Եւ այդ երկու անունները, որոնք յամենայն դէպս կապուած կը մնան մեր օրերի պատմութեան հետ՝ բևեռում էին իրանց շուրջը երկրի վերջի, անցող ուշադրութիւնը: Այդ մեծ և փոքր սխալների առանցքում՝ յամենայն դէպս դեռ կենսունակ և կեանքալից հին հայկական երազները: Եւ եթէ այսօր ծերունի Նազարբէկով և երիտասարդ Դրօ փակում էին հայ զինուորական վերին աստիճանի անյաջող մի շրջան՝ երկիրը տրամադիր էր հաւատալու, որ ինքը դեռ նոր տեսիլների և նոր պետական վերապրումների նախօրեակումն է: Այդօրինակ մտքեր և զգացմունքներ էին առաջ բերում այդ օրերում մէկը միւսին յաջորդող գունալից և յուզիչ պատկերները:

(տեքստը խզուած է)... այնպէս անտեսանելի ձեռքերը նրան չէզոքացած էին պահում մեծ թռիչքներից, և փաստօրէն նա իր հրամանատարութեան տակ չունէր խոշոր ոյժեր... չարալեզուները ասում էին, որ աստղերի պալատը անհանգիստ էր Սեպուհի և Կարսի նահանգապետի բարեկամութեան առիթով, և երկիւղ էր կրում Սեպուհի ձեռքը զօրաց մեծ ոյժ տալուց, կարծելով, որ նա կարող է ձերբակալել մի քանի աչքի ընկնող գործիչներ, և տապալել կաբինետը...

Այսպէս թէ այնպէս, երկրում զգացւում էր երկու իշխանութիւն – իրականը այդ զինուորականն էր, իսկ տեսականը՝ կառավարութիւնը...

Կողմերի մրցութիւնը հանգում էր անձնաւորութիւնների պայքարում, և երբ ընկաւ Խատիսեանի կառավարութիւնը, ու իշխանութիւնը ձևակերպուեց հայրենիքի փրկութեան դրօշակի տակ՝ պարզուեց և այդ երկդիմի իշխանութիւնը: Համօ Յովհանջանեանի կաբինետը այն պատասխանատու ֆիրման էր, որի զրահի տակ սկսեց իր անպատասխանատու արկածները դիկտատոր Ռուբէն Տէր Մինասեան: Շրջապատելով իրան ռուս և ռուսախօս գեներալներով և սպաներով, առանց յետև առաջ նայելու՝ նա ինքնահաւան և անվճռաբեկ նետուեց դէպի փառք և իշխանութիւն, և հայ ժողովրդի ստրկութեան գնով փակեց իր վեցամսեայ թագաւորութիւնը Կարսի պարիսպների տակ...

Տարուած երկու մեծ մինիստրական պորտֆիլներով՝ նա մոռացաւ այն քարանձաւները, ուր Մայիսին երերուեց կառավարչական խարիսխը: Եւ երբ Տէր Մինասեան, քմահաճ և ինքնահաւան՝ կառավարչական և օրէնսդիր փորձեր էր կատարում ի հաշիւ իր թշուառ հայրենիքի, օտարամոլ թոյնը քայքայում էր հայ զօրաց շարքերը: Գեներալները գիտէին արդէն, որ թագաւորութիւնը այդ իրանք են, և այդ օրուանից սխրագործելու ասպարէզը մնացել էր բացառապէս այդ հերոսներին:

Երբ Կարսի նահանգում, զինուորական զրահի տակ սկսուեց հոչակաւոր թալանը՝ գեներալներից մէկը, որ սիրում էր ժամերով ուղիղ գծով խօսել Երևանի

իր բարեկամների հետ օրուայ նորութիւնների մասին, և այդպիսով զբաղեցնել իր պատմութիւններով հեռագրական միակ գիծը՝ գեներալի ու աստղերի պալատի մի անդամի միջև, տեղի է ունենում հետևեալ բանախօսութիւնը. –Ն ջան,– ասում է գեն. Փիրումով, քեզ շատ եմ կարօտել, երբ ես գալու Կարս, թալանի քո բաժինը պահել եմ...

Ես չեմ կասկածում ի հարկէ, որ նորին գերազանցութիւնը կատակ էր անում իր անուանի բարեկամի հետ, բայց խնդիրը նորանում է, որ այդ կատակը անում էր մի գեներալ հրապարակով՝ Երևանի և Կարսի հեռագրատան բազմաթիւ պաշտօնեաների ներկայութեամբ, և այդպիսով գեներալի բերանում այդ աւելի քան պիկանտ կատակը՝ մի ժամից յետոյ բերանից բերան էր անցնում թէ՛ Կարսում և թէ՛ Երևանում...

Գեներալ Նազարբեկով, մեր սպարապետը՝ պատմեց ինձ հետևեալը. –Այդ զրոյցի մասին ես էլ տեղեկացայ, անմիջապէս պահանջեցի ինձ մօտ զինուորական պրօկուրօր փոխգնդապետ Ստ. Եղիազարեանին, և առաջարկեցի կարգադրել քննութիւն ածել այդ առիթով՝ վճռելով դատի տալ գեն. Փիրումովին: Բայց,– դառնութեամբ աւելացրեց սպարապետը,– իմ այդ հրամանը անկատար մնաց, ինչպէս որ առ հասարակ անհետևանք էին մնում այդ ժամանակուայ մթնոլորտում իր բոլոր օրինական պահանջները... Շատ ուշագրաւ պէտք է համարել, որ երբ Կարաբեկիր փաշան սկսեց իր արշաւը դէպի Կարսի նահանգը, և այդ տարածութիւնը ոչ միայն ռազմաբեմ էր դառնում՝ այլև առանձնակի քաղաքական և պետական նշանակութիւն ունեցող մի վայր, այլ խօսքերով՝ Կարսի նահանգը որոշակի անդրադառնում էր իր մէջ մեր լինել կամ չը լինելու խնդիրը, թէ՛ կառավարութիւնը և թէ՛ Երևանի զօրաց բարձր հրամանատարութիւնը միանգամայն անտես առան մօտ անցեալի բազմաթիւ բացասական տուեալները: Նրանք մոռացան ըստ երևոյթին, որ դեռ երկու ամիս առաջ Կարսի հրամանատարութիւնը՝ ինքը իրան անկարող, հեղինակութիւնից զուրկ յայտարարեց: Զօրաց շարքերում Մայիսին տեղի ունեցած առաջի խռովութիւններին իսկ՝ Կարսի երկու գեներալները այլևս հրամանատար չէին, գէթ այդպէս էին իրանց ձևացնում հենց իրանք, գեներալները, առարկելով, որ զօրքը չի լսում և չէ հնազանդւում իրանց...

Եւ միթէ զարմանալի չէ, որ նոյն անկարող և անհամարում գեներալները այդ բոլոր խայտառակութիւնից յետոյ ոչ միայն մնացին իրանց տեղերում՝ այլև նոցա յանձնարարուեց առաջնորդել պետական ամբողջ բանակը քեամալիստների դէմ...

Եւ այդ անուանի գեներալները՝ ինչպէս յայտնի է, այդ դէպքում խիստ հետևողական լինելով, շարունակեցին իրանց գործը: Նոքա երկու ամիս շարունակ եռանդալից նահանջում էին անտեսանելի թշնամու առջևից՝ և իրանց այդ հանելուկային դերը պսակեցին Կարսի պարիսպների տակ: Նրանք առանց մի գնդա-

կի յանձնեցին Կարսի անառիկ ամրութիւնները ռուս տաճկական դաշնակցութեանը...

Երբ թիւրք հորդաները ներս խուժեցին Կարս՝ փողոցում երևացին կասկածելի տիպի ռուսներ և Կովկասի թուրքեր... Պարզ էր, որ ազգերի ինքնորոշման այդ նախանձախնդիր արկածախնդիրները ուղեկցում էին Կարաբեկիրի բանակը որպէս պրոպօգանդիստներ՝ բերելով իրանց հետ թոյնը, որ ճաշակել էր հայ զինուորը դեռ Մայիսեան օրերում...

Միթէ արժանի չէ առանձնակի ուշադրութեան, որ Կարսի անկման դեռ նախընթաց օրից զօրքերի հրամանատարը ոչ մի հեռագրական կամ հեռախօսային կապ չունէր իր զօրամասերի հետ... Կապը կամ խզուած էր, կամ նրանից օգտուելու ցանկացող չը կար... Երբ թիւրք հրոսակախմբերը լցուել էին արդէն քաղաք՝ զօրքերի հրամանատարին այդ բանի մասին տեղեկացրին կողմնակի մարդիկ: Նորին գերազանցութիւնը ոչինչ չը գիտէր՝ թէ ի՞նչ է կատարւում նոյն իսկ քաղաքում... Դուք կարող էք երևակայել, թէ ի՞նչ քաոս էր Կարսում, ռազմաբեմում, և մեր լքուած բանակում՝ ուր գնդապետ Փիրվերդիեւները այնպէս եռանդալից վարժեցնում էին հայ զինուորին փախչել թշնամու առջևից...

Եւ միթէ պէտք է զարմանալ, որ կրկնակի ոյժերով, Կարսի ամրութիւններով հանդերձ՝ ուր 100 ծանր թնդանօթները պերճախօս լուռ էին, մենք փախչում էինք խելակորոյս, անարգ...

Երկուսից մէկը. կա՛մ հրամանատարութիւնը ցանկութիւն չունէր դիմադրելու թշնամուն, կա՛մ նա այնչափ անկարող և անընդունակ և այնչափ ապիկար էր, որ լուրջ խօսել նորա մասին այդ ուղղութեամբ և աւելորդ է, և վիրաւորական մեր պետական և ազգային պատուի համար: Նախկին մինիստր նախագահ Խատիսեան, մինիստր Գիւլխանդանեան և Կարսի նախկին նահանգապետ Ղորղանեան՝ առաջի հայ խմբակցութիւնն էր, որին ռուս կառավարութիւնը առաջարկեց թողնել հայրենիքի սահմանները:

Երբ մենք երեքս ուղեւորուելով Թիֆլիզ՝ գիշերում էինք Ղարաքիլիսայ գիւղում, մեզ այցելեցին այնտեղի իշխանութեան ռեֆկօմի անդամները: Նոցանից մէկը, մի երիտասարդ՝ Ղազանչեան ազգանունով, պատմեց մեզ երեքիս, որ Մայիսեան Կարսի խռովութիւնների կազմակերպողներից մէկը ինքն էր, որ գեն. Փիրումով և գեն. Յովսէփեան անցել էին նոցա՝ խռովարարների կողմը, իսկ Ձեզ,– դարձաւ ինձ Ղազանչեան,– վճռուած էր ձերբակալել՝ բայց մենք պարտուեցինք և դուք ազատուեցիք...

Իսկ ամբաստանում էր Ձեզ մեր առաջ, – վերջացրեց Ղազանչեան,– Չալխուշեանի որդին, որ Ձեր դիւանատանն էր պաշտօնավարում և մեզ տեղեկութիւններ էր տալիս...

Այդպէս է ուրեմն՝ Չալ [*խուշեան*] «հասարակական գործիչ» ամբողջ տոհմը...

Այդպէս է Զանգեզուրի տպաւորութիւնը հայ պետական ասպարէզում երբեմն գործողներից մէկի յիշողութիւններում:

Գալով կառավարչական անցուդարձին Երևանի նահանգում և Դիլիջանի «-Զեմսկի» շրջանում՝ ես հնարաւորութիւն չունեմ քաղցրալից համեմելու այստեղ մեր յիշողութիւնները: Երևանի նահանգը դարձել էր…*(շարունակութիւնը բացակայում է)*

ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 10, թթ. 1-47, բնագիր, ձեռագիր:

DOC №11

Յուշեր՝ Մելիք-քէօյ գիւղի, Զարուշատ գաւառակի և զինուորական հրամանատարութեան կողմից Մելիք-քէօյի հետևակ գնդերը անուշադրութեան մատնելու մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Գնդապետն էլ հեռախօսային կապ չունէր Կարսի հետ, նա չը գիտէր՝ թէ ի՞նչ էր կատարւում Կարսում, ի՞նչ պէտք է լինէին իր անելիքները...***
- ***Եւ երբեմն հրամանալից այդ գնդապետը՝ հսկայ, պարթև և կրակոտ, մի ակնթարթում մարում և ընկճւում է...***
- ***Մեզ խորթ և ապիկար հրամանատարութիւնը առաջ բերեց ամօթալից մի սօդոմ միայն, զրկելով հայկական քաջութիւնը կռուելու և պատերազմի դաշտում ընկնելու մեծ պատուից:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Ճանապարհից դուրս դեռ դալար դաշտերով սփռուած էր ոչխարը, տաւարը և նորա շուրջը նոցա տէրերը՝ գիւղացիներ, քաղաքացիք և բազմաթիւ զինուորներ այս և այն զօրամասից:

Մէլիք-քէօյ այդ տարածութեան այն մեծ հանգոյցն է, ուր խճուղին բաժանւում է երեք ճիւղի: Մէկը անցնում է դէպի Մերդենեկ, Օլթի, միւսը տանում է դէպի հռչակաւոր Ջելաուս և այնտեղից Կարսի նահանգի ալպիկ երկինքը՝ Սախկալ--Թութանի վերայով Արդահան: Բայց խճուղու այս ճիւղը ևս ունի իր շերտաւորումը: Ջելաուզից այդ սքանչելի ճանապարհի մի ճիւղը անցնում է դէպի Սախկալ--Թութանի անուանի ջրվէժը, իսկ միւսը գլորւում, գնում է դէպի Զարուշատ և այնտեղից Չըլդըր լճի ֆանտաստիկ եզերքով, և վերջապէս անտառապատ անցքով անցնում է Արդահան, Ախալցխայ և Ախալքալաք:

Այդչափ հարուստ և բազմատեսակ են Կարսի նահանգի խճուղիները: Մէլիք-քէօյ անուանի է իր անցեալում:

Այդ գիւղը Զարուշատ գաւառակի դարբասն է: Կարսի նահանգում հազիւ կարելի է գտնել մի այլ վայր, որ աւելի բերրի լինէր, առատ և աւելի քաղցրալից ջրերով համեմուած:

Բազմաթիւ չայեր ու ջրեր, սրընթաց և զանգահար փախչում են այդ ձորով դէպի արևելք, և այս և այդ բոլոր դրական և գեղարուեստական տուեալները

ստեղծել են Մէլիք-քէօյի հռչակը Կարսի նահանգում: Եւ երկրի նախկին տէրերը, մէլիքները՝ այստեղ ապրելով, այստեղից էին իշխում դէպի Զարուշատ:

77 թուին գրաւելով Կարսի նահանգը՝ ռուս իշխանութիւնը ուզեց ամենից առաջ ապահովել իր թիկունքը, ռուս գաղութներ հաստատելով հարկաւոր տեղերում: Եւ հռչակաւոր Մէլիք-քէօյ, երկրի այդ արտօնուած վայրը, Վանանդի աչքը՝ բնակեցւում է ռուս աղանդաւորներով:

Թէև մենք շատ հեռացանք մեր ասելիքների իմաստից՝ բայց ես այնուամենայնիւ հարկաւոր եմ համարում պատկերի ամբողջութիւնը սպառելու համար մի երկու խօսք էլ ասել Զարուշատ գաւառակի մասին:

Այդ գաւառակում բնակւում էին բացառապէս քրդերը և հայերը: Արևը կարծես չի հեռանում այդ չքնաղ լեռնաշխարհից, և ջերմալից շոյելով նորա սարալանջերը՝ նա ստեղծում է այստեղ չքնաղ բուսականութիւն, և առատ անձրևում կեանքի վայելքները: Դեռ հեռաւոր անցեալում՝ այդ գաւառակը մեծահարուստ երկրի հռչակ ունէր, և նորա տէրը՝ այդ վայրի անուանի Մէլիքը, նշանելով իր աղջկանը՝ այդ գաւառակը օժիտ է տալիս նորան, անուանելով այդ ընծան Զար-նշան, գոհար, ոսկու նշան... Յետագայում դարերի առանցքում՝ Զար-նշանը աղաւաղւում է ժողովրդի բերանում, չէ՞ որ էլ աղզը-ջուալ՝ աղզը-ասում են մեզանում, և մեր օրերում այդ գաւառակը անուանւում է արդէն Զարուշատ: Այդչափ մեծ և այդչափ թանկարժէք էր այդ գոհարը, որ երկրի իշխանը օժիտ է տալիս իր աղջկանը: Այդպէս է այն հարուստ և գեղածիծաղ վայրը՝ որով այսօր անցնում գնում էր հայ գաղթականութիւնը և հայկական թշուառ բանակը, անփառունակ և բարոյապէս իսպառ ջարդուած...

Բայց շարունակենք մեր պատմութիւնը: Մէլիք-քէօյում հայկական զօրաբանակի դեսլօկացիայով, կանգնած էր այդ օրը հայկական հետևակ գնդերից մէկը: Գնդի հրամանատարին ես հանդիպեցի գիւղի կենտրոնում: Նա շփոթուած և այլայլուած մարդու տպաւորութիւն էր թողնում: Գնդապետն էլ հեռախօսային կապ չունէր Կարսի հետ, նա չը գիտէր՝ թէ ի՞նչ էր կատարւում Կարսում, ի՞նչ պէտք է լինէին իր անելիքները...

Նա տեսնում էր իր առաջ ժողովրդի սարսափահար լափինը, որ անվերջ ծփում անցնում էր, նա տեսնում էր զինուորների և սպաների բազմաթիւ խմբեր, զէնքի բոլոր տեսակի ներկայացուցիչներ՝ որոնք անկարգ և հեղեղալից, նոյնպէս անցնում, գնում էին: Նա տեսնում էր, թէ ինչպէս իր գունդն էլ՝ այդ հազարանոց մեծ զօրամասը, վարակուելով երերուն և խուճապ մթնոլորտում՝ տատանւում և պարտւում է իր նախնական տրամադրութիւններում:

Եւ երբեմն հրամանալից այդ գնդապետը՝ հսկայ, պարթև և կրակոտ, մի ակնթարթում մարում և ընկճւում է...

– Ո՞ւր է ծփում ժողովրդի այդ անվերջ և անծայր լափինը, ուր է փախչում այդ բազմաթիւ զինուորութիւնը, գոռում էր ինքը իրան հարցնելով, կանգնած մեծ ճանապարհի վերայ, քաջարի գնդապետ Իշխանեան...

Բայց մարդկային հեղեղը անցնում գնում էր, և գնդապետ Իշխանեան զգում էր, որ նորա թիկունքում չը կայ այլևս պետական և անվճռաբեկ հեղինակութիւնը...

Եւ դուք տեսնում էք, որ մինչ Կարսում Կաղզուանի գաւառապետ Ժամհարեան ստիպուած էր իր վերայ վերցնելու վագզալի շրջանում հրամանատարելու պարտաւորութիւնները և զոհ գնալու այդ առանցքում՝ Կարսից միայն մի քանի վերստի վերայ կանգնած էր ամբողջ մի թարմ գունդ, մատնուած կատարեալ մոռացութեան: «Շտաբը» կորցրել էր «թելը» և մոռացել երևի, իր ձեռքի տակ եղած ոյժերի մասին: Եւ այդ թարմ գունդը պատրաստ գրոհի՝ ոչ կապ ունէր կենտրոնի հետ և ոչ հրամաններ իր անելիքների մասին: Եւ հրամանատար այդ ոճրալից վերաբերմունքի մթնոլորտում՝ բնականաբար պետք է սօդոմ ստեղծուէր:

Այդ միջոցում, հայ թշուառ գաղթականներից մէկը տեսնելով ինձ՝ աղաղակով նետուեց առաջ և գանգատուեց, որ մի քանի րոպէ առաջ զինուորներից մէկը խլեց իր ձին, նստեց ու փախաւ: Իմ պաշտօնեաներից մէկին ես յանձնարարեցի պարզել աւազակ զինուորի ով լինելը, և յայտնել գիւղի կօմենդանտին: Եւ դառնութեամբ պէտք է աւելացնեմ, որ մինչև Աղէքսանդրապօլ հասնելս՝ ինձ վիճակուած էր մի քանի այդօրինակ գանգատներ ընդունել: Այդպէս էր մթնոլորտը այդ խուճապ և շփոթ օրերում: Մի 2 ժամից յետոյ՝ մենք հասանք *(առկա է տեքստի խզում)* ...

...հրամանատարութեան ամօթը, և ուղղում է ատրճանակը դէպի իր ճակատը...

Անմիտ ու աննպատակ գնդակ ի հարկէ, բայց նա պարզում է անկեղծ հոգեբանական վերապրումների մի աշխարհ, և դարձեալ մի ապացոյց է բերում մեզ ասելու՝ թէ որչա՞փ ոճրագործ էր մեր բարձր հրամանատարութիւնը: Այդչափ մեծ զօրաբանակով և Կարսի ահռելի ամրութիւններով հանդերձ՝ նա ստեղծեց եզակի սօդոմ: Եւ պատմութեանը մնում է ցաւել միայն, որ մեզ չը վիճակուեց գէթ Սեդան ունենալ: Մեզ խորթ և ապիկար հրամանատարութիւնը առաջ բերեց ամօթալից մի սօդոմ միայն, զրկելով հայկական քաջութիւնը կռուելու և պատերազմի դաշտում ընկնելու մեծ պատուից:

Սեպուհ՝ կարօտ կրակի և արեան, մինչև ի վերջը պահուեց թիկունք...

ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 11, թթ. 1-8, բնագիր, ձեռագիր:

DOC №12

Յուշեր՝ Կարսի անկման, զինադադարի, հայ զօրավարների խիզախ անցեալի, դաշնակցական կառավարութեան անդամների, հայկական լեռնաշխարհի քարտէսի ստեղծման, թուրք ժողովրդի ազգային բնաւորութեան իւրայատկութիւնների և նման հարցերի մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Ես զարմանում եմ նոյնիսկ, որ Կեազիմ Կարաբէկիր կանգ առաւ Աղէքսանդրապոլ: Ոչինչ չէր արգելում նորան անցնել և Երևան և փիրել ամբողջ երկիրը: Եւ այդ նա կարող էր անել աւելի քան մեծ յաջողութեամբ:***
- ***Ինչևիցէ, բայց մենք Օլթի մտանք ոչ միայն ի ծայր անկազմակերպ, այլև ի ծայր թալանալից ախորժակով:***
- ***Կարսի նահանգում գտնուած մեր զօրաբանակը, իր բոլոր անկազմակերպ և թերի կողմերով հանդերձ՝ յամենայն դէպս մի 4 անգամ մեծ էր թշնամու բանակից....***
- ***Երբ Կարսի անկման առաւօտը Խնուսցի խմբապետ Փիլոս, շնչասպառ քշում է ձին դէպի գեներալ Փիրումովի շտաբը, և տեղեկութիւն է բերում, որ տաճկաց առաջաւոր մասերը արդէն փիրել են հռչակաւոր Կանլին, ..., որ Կարսից մի 2-3 վերստի վրայ է միայն, գեներալ Փիրումով և նորա «շտաբը» դեռ անուշ նիրհում էին անկողնում:***
- ***Միջազգային շահերի առանձնակի դասաւորումը՝ ձգեց մեզ երկու ջարդարար ոյժերի առանցքը, ի դէմս ռուսների և թիւրքերի, և այդ մթնոլորտում ուր բռնաբարւում է իրաւունքի սկզբունքը՝ չի կարելի լուրջ խօսել որևէ իրաւական ակտի մասին:***
- ***Մենք եկանք փիրելու անպատրաստի և անտեղեակ երկրի կացութեանը, եկանք իշխելու առանց որևէ մշակուած ծրագրի և առանց սիստեմի:***
- ***Կարսի շուրջը սփռուած մի քանի տասնեակ ամրութիւնները, առաջաւոր դիրքերը, խրամատները՝ գիտութեան վերջի խօսքն էին:***
  Այդ ամրութիւնները լուսաւորուած էին էլեկտրականութեամբ, նոցանից ամէն մէկը ունէր իր ավտոմոբիլը, հեռագրագիծը, հեռախօսը, պրոժեկտորը, երկաթուղու սուղ գիծը ձիաքաշով ռազմամթերք մատակարարելու համար, ջրանցք և բոլոր կենսական և ռազմական յարմարութիւները:
- ***Ճանապարհը ամբողջովին ծածկուած էր փամփուշտի և ռումբերի արկղներով: Զօրամասերը նահանջելիս թափում էին սայլերից և***

բեռներից այդ ծանրութիւնները, և զինուորները իրանք էին տեղաւորւում այդ սայլերի վերայ...

- ***...այն բազմաթիւ սպաները՝ որոնց ես արձակել էի պաշտօններից կաշառակերութեան, պաշտօնական զեղծումների համար՝ անմիջապէս «տեղաւորւում էին» զանազան զօրամասերում, և միշտ իւղալի համով պաշտօններ ընտրում...***
- ***Երկաթուղու ամէն մի կայան մի սատրապութիւն, «ինքնորոշուող» մի հասպատութիւն էր, ուր գնացքը պէտք է կանգնէր և վճարէր իր մաքսը...***
- ***Մի երկու ամսից յետոյ 21 թուի Յունուարի 24-ին, առանց այն էլ ի ծայր էլեկտրականացած մթնոլորտում՝ մեր երկրում պայթեց մի նոր ռումբ: Ռուս կառավարութիւնը աքսորեց Ռուսաստանի խորքերը հայ բոլոր գեներալներին և սպաներին, թուով մօտ 1500 հոգի: Բացառութիւն կազմեցին և մնացին իրանց տեղերում միայն մի քանի ընտրեալներ՝ գեներալ Յովսէփեան, գեներալ Լօմիզէ (հայ), գնդապետ Միրիմանով և մի քանի սպաներ:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

(Սկիզբը բացակայում է)

...որ մենք երկու ամիս շարունակ նահանջեցինք ի զուր և անպատիւ: Օգտւում եմ դէպքից՝ արձանագրելու այստեղ մի միջնադէպ ևս, որ գուցէ ոչ պատմական, այլ միայն կենցաղագրական նշանակութիւն կարող է ունենալ: Զաւեշտ իր բովանդակութեամբ՝ այդ պատմուածքը բնորոշում է այնուամենայնիւ մեր օրերը, և այն ժամանակներում տիրող կարգերը:

Կարսի անկումը միայն շշմեցրել էր բոլորին, բայց մարդիկ, կարծես դեռ վերապրում էին յուսալից որպէներ: Եւ եթէ այդ վերապրումները համատարած չէին՝ նրանք ցայտուն էին գէթ ի դէմս այն մարդկանց, որոնց համար մահացու էր բաժանուել հայկական երազներից: Եւ այդ զգայուն դէմքերի թւում էր ի հարկէ և հրամանատար Սեպուհ: Բռի իր բնոյթով՝ նա չէր կարողանում համակուել քաղաքականութեամբ: Հայկական դատը նա հախ էր համարում, և հինաւուրց խնդրի լուծումը՝ ինչպէս և միշտ, նա տեսնում էր *[կռուով]* միայն:

Հայկական բանակը՝ 3-4 թիւրք զօրաբանակից մեծ, հալւում և լքում էր նրա աչքերի առաջ: Նա իր չորս կողմը տեսնում էր միայն անիշխանութիւն և միայն քայքայում: Ոչ մի տեղեկութիւն չունենալով սպարապետից՝ նա այդ ջղայնալից մթնոլորտում կորցնում է հաւասարակշռութիւնը, և սեպարատ յարձակում գործում Ջաջուրի լեռներում իր հանդէպ կանգնած թիւրք գումարտակների վերայ:

Այդ միջոցում սպարապետից հեռագրական հաղորդագրութիւն է ստացւում թիւրք հրամանատարութեան հետ կնքուած զինադադարի մասին:

Պատերազմալից շառաչող Սեպուհի զօրակայանի տրամադրութիւնը հանկարծակի փոխւում է, և գլխապետ Սուրէն Մելիքեան՝ մի շնորհալի երիտասարդ, մէկը հայ սակաւաթիւ հայաշատ սպաներից, սկսում է պատրաստել թիւրքերին ուղարկելու համար այդ հեռագրի ֆրանսերէն թարգմանութիւնը:

Երկրաց պարտութիւնը մի կողմից, և կնքուած զինադադարը միւս՝ ի ծայր ջղայնացնում են հրամանատար Սեպուհին, և նա տեսնելով ֆրանսերէն հեռագիրը՝ իր հոգու լճացած ամբողջ մաղձը թափում է գլխապետ Մելիքեանի վերայ, և մեծ աղմուկով նրան սենեակից հանում... Միջամտում է գեներալ Արեշ*[և]*, մեր թիկունքի հրամանատարը, և պարզելով թիւրիմացութիւնը՝ հանգստացնում է ջղայնացած և հաւասարակշռութիւնը կորցրած Սեպուհին...

-Ես արիւն եմ թափում, ընդհանուր անտարբեր մթնոլորտում ես կրակ եմ նետում լինել կամ չլինելու կոչով՝ իսկ դուք ....

.... Հայկական կառավարութիւնը, առանց զօրքի և նիւթական միջոցների շրջապատուած թշնամիներով՝ կորցրել էր երկրում իր հմայքը և համարումը:

Եւ ես դժուարանում եմ ասել նոյնիսկ, թէ ում պատուիրակներն էինք մենք այդ վայրկեանում...

Ես զարմանում եմ նոյնիսկ, որ Կեազիմ Կարաբէկիր կանգ առաւ Աղէքսանդրապոլ: Ոչինչ չէր արգելում նորան՝ անցնել և Երևան և տիրել ամբողջ երկիրը: Եւ այդ նա կարող էր անել աւելի քան մեծ յաջողութեամբ:

Կրքերի և քաղաքական բարդ ինտրիկների այդ մեծ խառնուրդում՝ մենք տարբերւում էինք որպէս մի թիւրիմացութիւն, և մենք ստիպուած էինք ...*(առկայ է տեքստի խզում)*

...չունէին անկում: Նոքա կարծում էին, որ նահանգապետին ուղարկուած հեռագիրն անպատճառ պէտք է աւելացնել «Վանանդ» բառը, նրանք կարծում էին, որ առանց այդ մասնիկի՝ նսեմանում էր նոցա «հայկական» սուվերէն իմաստը: Ինչևիցէ, բայց մենք Օլթի մտանք ոչ միայն ի ծայր անկազմակերպ՝ այլև ի ծայր թալանալից ախորժակով: Շատ բնորոշ է մեր օրերի համար, որ Օլթին գրաւելուց յետոյ անմիջապէս այնտեղ թափուեցին բացի թալանչներից՝ և մեր բոլոր թամաշաչիները և դատարկաբանները: Օր չէր անցնում, որ գնացքը Կարս չբերէր բազմատեսակ պաշտօնեաներ և անպաշտօն մարդիկ, որոնք «հետաքրքրւում էին» Օլթիի գաւառով և գալիս էին տեսնելու այդ աւետեաց երկիրը: Եկան ինժիներներ, գիւղատնտեսներ, ուսուցիչներ, ի հարկէ եկան բոլոր սիրողները՝ բայց այդ բոլոր անցուդարձը պետական լրջութիւն չունէր: Եթէ չհաշուենք մեր բազմաշխատ հանքային ինժիներ Կարապետեանին՝ այդ բազմութիւնը միայն թամաշաչիներ էին, առանց պարտաւորութիւնների և առանց ի հարկէ պատասխանատուութեան:

Ժամանակակից... հասարակական գործիչները տիրելով հրապարակը՝ հաւակնութիւն ունէին կառավարութեանը թողնելու միայն վարկեր բանալու պարտաւորութիւնը, իրանց վերապահելով բոլոր մնացած ակտիւ և նշանակալից իրաւունքները...

Այդպէս էին կազմակերպւում այն հաստատութիւնները՝ ուր գաղափարը և ժողովուրդը միայն դեկորատիւ հասկացողութիւններ էին, ուր մարդիկ համակուած էին միայն իշխելու և հարստանալու ծարաւով, և ուր յանուն այդ ժողովրդի և այդ գաղափարի՝ կատարւում էր ամէն բան, բացի երկրի և կառավարութեան պահանջներից:

Եւ երբ այդպիսով իշխանութիւնը փաստացի դուրս էր գալիս ներքին գործոց Մինիստրի ձեռքից՝ նա ուզեց զրահաւորել իրան գալիք պէտքերի համար: Մայրաքաղաքում նա իր համար ինչ որ պահեստային միլիցիա կազմակերպեց գնդացիրներով հանդերձ, և այդ զօրամասը ենթարկեց իր անձնական հրամանատարութեանը:

Իրանց բոլոր տրամաբանական անհեթեթութեամբ՝ այնուամենայնիւ ստեղծում էին մեր շուրջը մի թիւրիմաց շրջապատ, եթէ չասենք ռոմանտիկ մթնոլորտ: Եւ մենք որպէս վերջի սերունդը անցող ժամանակի՝ գերի էինք մեր ռոմանտիկ հակումների և մեր ակներև խորտակուող յոյսերի:

Դժուար էր երևակայել անգամ աւելի ծանր բարոյական կացութիւն: Երեք ժամից յետոյ լրանում էր թիւրքաց ուլտիմատիւ պահանջը, և մենք կանգնած էինք հայկական այն խռովալից ռուբիկոնի առաջ՝ որի կարկաչուն ալիքներում յուսահատ տարուբերւում էր դեռ հայկական խնդիրը...

Մենք անընդհատ խորհրդակցում էինք, ի ծայր ճնշւում մեր անելիքներում, և ամէն մէկս ջղայնալից ժամացոյցին նայելով՝ վճռեցինք վերջին անգամ խօսել հայկական վերջի իշխանութեան վերջի լիազօրի հետ:

Ժամի հինգին դիկտատոր Դրոյին մենք հեռագրե... ...*(առկայ է տեքստի խզում)* ...որպէս նահանգապետ՝ ես կատարել էի պարտքս, և սկզբունքը պաշտպանելով՝ կորցրել էի ամէն բան: Բայց ես կարծում էի, որ իմ կառավարութիւնը կը վարձատրի իր նահանգապետին, որ մեծաչափ տուժեց իր երկրի ձախորդ օրերում: Բայց կառավարութիւնը ինքը հանդիպեց իր սեփական ջրերում ստորերկրեայ ժայռերի՝ և անդունդ գնաց իր իղձերով և իմաստով...

Հրամանատարի ճաշկերոյթից յետոյ՝ երեկոյեան ժամի 9-ին մենք պէտք է մեկնէինք Երևան...*(առկայ է տեքստի խզում)*

...Գալով Երևան՝ ինչպէս և պէտք էր այդ, ամենից առաջ ես այցելեցի Մինստր նախագահին:

Համօ Յովհանջանեանի հետ ես ծանօթ չէի, մենք գրաւեցինք Կարսը այն ժամանակ երբ նա Եւրոպայ էր, և այժմ նոր վերադառնալով Երևան՝ նա յաջորդեց Ալ. Խատիսեանին:

Պէտք է ասեմ, որ ուղղելով քայլերս դէպի Հայկական պրիմիերի առանձնասենեակը՝ որի մուտքում որպէս արքայական հմայք կանգնած էր մի զոյգ զինուորական պահակ, ես թէ յուզուած էի և թէ շատ բարձր տրամադրուած: Ես առիթ եմ ունեցել ներկայանալու փոխարքաներին և շատ բարձրաստիճան մարդկանց, ես անցել եմ նոցա մօտ զգեստաւորուած և բոլոր շքանշաններովս հանդերձ՝ բայց իմ բոլոր այդ պաշտօնական հանդիպումներս համակուած էին միշտ ոչ ցնծալից զգացմունքով, ես միշտ ընկճուած էի և միշտ երկիւղալից...

Բայց առանձնակի էին իմ այս անգամուայ այցի վերապրումներս:

Հայկական պրիմիերի զոյգ պահակները զինուորական պատիւ տուեցին հայկական ... *(առկայ է տեքստի խզում)*

... դէպքերի համեմատութիւնը, գուցէ իրաւացի կը լինէր ասելու՝ այսպէս ընկաւ պաշարուած Տրոյեան: Եւ պաշարուած այդ բոլոր մտքերով և վերապրումներով՝ ես Նոյեմբերի մէկին մտայ Աղեքսանդրապոլ:

Իշխանութիւնը որոշ չափով դաշնակցական լինելով՝ գործում է բարձր կառավարութեան ցուցմունքներով և հրահանգներով, և յետևապէս տեղից վեր կենող դաշնակցականը՝ իրաւունք չունի *[պաշտօնեայ]* և հրամանատար լինելու:

Եւ այդ տարրական հասկացողութիւնների բացակայութիւնը՝ մահալից էր հենց դաշնակցութեան համար: Դառնալով մեր բանակին և նորա հրամանատար կազմին՝ Կարսի նահանգապետի հեռագիրները և զեկուցումները պարունակում են աւելի քան սպառնալից այդ բովանդակութեամբ նիւթ: Մենք շատ լաւ գիտէինք մեր բանակի դրութիւնը, մենք շատ լաւ ճանաչում էինք մեր հրամանատար կազմը: Բայց և այնպէս, մենք հնարաւոր չէինք համարում Կարսի հանկարծակի անկումը, և Կարսի նահանգապետը մէկն էր այն մարդկանցից՝ որոնք իրանց բոլորի ծայր բացասական վերաբերմունքով դէպի մեր հրամանատար կազմը, կուրօրէն հաւատում էր, որ Կարսի պարիսպների տակ կը խորտակուի թշնամու բանակը:

Վերլուծելով այսօր մեր վերաբերմունքը՝ մենք հակուած էինք կարծելու, որ մենք գտնուում էինք հոգեբանական անխուսափելի վերապրումների շղթաներում:

Պատմութիւնից մենք գիտէինք, որ Կարսի ամրութիւնները տեսել են եզակի ճակատամարտ, և Կարսի պաշարումը անվերաբեր նոցա հետևանքներին՝ տևել է գէթ ամիսներ: Միւս կողմից, դասալիքութեան բոլոր ահռելի չափերով հանդերձ՝ մենք լսում էինք շատ բարձր տրամադրութեան հաւաստիացում դրսում, Արփաչայի այն կողմը: Դրսի մեր ինտիլիգենցիան, հայ գաղութները կարծես թէ քաջազնօրէն շառաչում էին, և կարծես թէ մահացու սպառնում...

Կարսի նահանգում գտնուած մեր զօրաբանակը, իր բոլոր անկազմակերպ և թերի կողմերով հանդերձ՝ յամենայն դէպս մի 4 անգամ մեծ էր թշնամու բանակից.... *(առկայ է տեքստի խզում)*

…ճանաչուած Եւրոպայից «Դաշնակից» մեծ դաշնակիցների՝ մենք կարծում էինք, որ այսպէս թէ այնպէս՝ մենք գտնւում ենք համաեւրոպական հովանու տակ: Եւ այդ բոլոր պայմանները ստիպում էին մեզ կարծելու, որ այդ պայթող ռումբերը, ջղայնալից անցուդարձը, խուճապը և զէնքի ամէնուրէք շառաչիւնը՝ մի քաղցր երազ է միայն: Այդ սպառնալից և տենդոտ մթնոլորտը տրամադրում էին մարդկանց նորից հմայուելու հայրենի իդեալներով, և մենք բոլորս շատ բարձր տրամադրութեամբ դէպի իրաւունքը և ճշմարտութիւնը՝ գնում էինք այդ հոսանքի յետևից, որ այնչափ դիւրալից էր և այնչափ անխնայ:

Երբ Կարսի անկման առաւօտը Խնուսցի խմբապետ Փիլոս շնչասպառ քշում է ձին դէպի գեներալ Փիրումովի շտաբը, և տեղեկութիւն է բերում, որ տաճկաց առաջաւոր մասերը արդէն տիրել են հռչակաւոր Կանլին՝ գեներալ Լազարեւի քաջութեան …*(առկայ է տեքստի խզում)* որ Կարսից մի 2-3 վերստի վրայ է միայն՝ գեներալ Փիրումով և նորա «շտաբը» դեռ անուշ նիրհում էին անկողնում:

Կանլի արիւնոտ ամրութիւնները՝ Կարսի բանալին է: Երբ 77 թուին կոմս Լօրիս ռմբակոծելով Կարսը հրաման արձակեց յարձակում գործելու Կարսի վերայ՝ հայ ազգի խիզախ գեներալ Լազարեւ քաջութեան հրաշքներ ցոյց տուեց այդ ահռելի և հսկայ ամրութիւնների տակ:

Պայթող ռումբերի հետ միասին փայլատակում է Խամսայի Մէլիքութիւնների ներկայացուցչի վիթխարի սուրը: Որպէս կատաղած վագր՝ պատմում էին ականատեսները, առաջ է նետւում իմպոզանտ գեներալը, և իր յետևից տանելով իր բանակը՝ նա դղրդալից տապալում է թշնամուն: Ամբողջ Կանլին՝ ասում է պատմաբանը, մի ակնթարթում ծածկւում է ռուսների և տաճիկների դիակներով: Իսկ մի ժամից յետոյ՝ ծխացող և արիւնաշաղախ Կանլու բարձունքներում, վիթխարի փափախը ձեռքին՝ կանգնած էր արդեն հայ ազգի գեներալ Լազարեւ: Յարգանք տալով ընկած քաջերին՝ նա յարգանալից լսում էր երաժշտութեան օրհներգը, և կեցցէ գոչում ի փառս ահարկու Կովկասեան զօրաբանակի…

Կանլու ճակատամարտը լուծեց Կարսի բախտը, և Աղէքսանդր II հրամայեց այդ խիզախ Կանլին ընդմիշտ անուանել գեն. Լազարեւի ֆորտ, որպէս երախտիք պատմութեան այդ մեծ զօրավարի առաջ:

Այդպէս էր արիւնոտ Կանլին իր արիւնոտ անցեալում:

Տաճկաց բանակը բազմիցս պարտուել էր այդ վայրում, և թիւրքաց հրամանատար Կարաբեկիր շատ լաւ գիտէր ի հարկէ, թէ ո՞րտեղ է Կարսի բանալին:

Այդ օրը դեռ լուսաբացին՝ նա դիմացի բարձրութիւնների վերայ էր, և ուղղելով դէպի հռչակաւոր Կանլի իր գումարտակները՝ նա քարտէսը առաջին, հեռադիտակը և տելեֆոնի խողովակը ձեռքին՝ դիտում էր իր յարձակուող կոլոնուի մարշը և հարկաւոր կարգադրութիւններ անում ըստ այնմ: Այդչափ խորհրդաւոր

և վճռալից էր որպէն՝ երբ խմբապետ Փիլոս իրան ձգում է գեներալ Փիրումովի շտաբը:

Փիլոսի բերած տեղեկութիւնները լուսաբանելու համար՝ պէտք էր ի հարկէ քարտէս, բայց աւելի քան կէս ժամ էր պէտք՝ քարտէս գտնելու համար:

Այդչափ պատրաստալից էր գեն. Փիրումովի «շտաբը» և նորա պետը: Դեռ երեկ դպիր եկեղեցու՝ նա յոյս ունէր երևի իր քաղցրալից մրմունջներով գթալից դարձնելու հայոց սրբերին, և քարտէսն ու ռազմական այլ *[պիտոյքներ]* նա միանգամայն աւելորդ էր գտնում: *(առկայ է տեքստի խզում)*... Ինձ թւում էր, որ Ալ. Խատիսեան մեծաչափ ճնշւում էր մեծ պատասխանատուութեամբ, և զգում էր, որ ինքը անզօր է... *(առկայ է տեքստի խզում)*...Պարլամենտի անդամ Զարիֆեան՝ մոլեռանդ բայց պարզ դաշնակցական, առանց պահանջների և առանց յետին մտքերի՝ շատ լաւ հասկանում էր դրութեան փափուկ իմաստը, և հաշտւում մեզ ընկած վիճակի հետ:

Պարլամենտի անդամ Մինախորեան՝ այդ օրը արդէն Մինիստր, անդամ «կոալիցիոն» կառավարութեան, հաւասարակշռուած մարդու տպաւորութիւն էր թողնում: Նա չէր յուզւում և մատեմատիկ սառնասրտութեամբ դրուատում էր տուեալները: Ասում էին, որ նա «էսէր» է: Ես առհասարակ չեմ հասկանում այդ կուսակցութեան իմաստը, և գէթ մեզանում գոնէ՝ չը գիտեմ թէ ո՞րտեղ է այդ կուսակցութիւնը...

Հատուկենտ անհատներ՝ անջատուած դաշնակցութիւնից ու մեր կադետներից, «Մշակականներից», ...(*առկայ է տեքստի խզում*)

... Այդ միջոցում այլայլուած՝ ձիուց ցատկեց իմ բնակարանի առաջ Կաղզուանի գաւառապետ Տիգրան Ժամհարեան: Նա զեկուցեց, որ տաճկաց բանակի հրոսակները խուժեցին արդէն դէպի երկաթուղին, որ նա այդ մասին տեղեկացրեց գեն. Փիրումովի շտաբը, բայց այնտեղ ոչ մի տեղեկութիւն չունէին դրութեան մասին...:

Խուճապը և իրարանցումը հրդեհել էին արդէն քաղաքը, և մարդկանց ջղայնալից ալիքները ծփում էին խելակորոյս Կարսի մի ծայրից միւսը: Բոլոր փողոցները բռնուած էին մեր ցիր ու ցան եղած զինուորներով ու սպաներով, բայց այդ արդէն զօրք չէր, այդ մի հորդա էր առանց կարգի, առանց հրամանատարութեան և առանց որևէ պարտաւորութիւնների ու խղճի...: Եւ այդ լքած և կազմալոյծ զօրամասերը նոյն չափ սպառնալից էին երկրի ազգաբնակութեան համար՝ որչափ և այն թիւրք հորդաները, որոնք առանց կռուի և առանց արիւնի՝ այնպէս ամօթալից մեզ համար, քշում էին մեր փախչող զօրամասերը...: Հայ սպաները գրեթէ չէին երևում զինուորների այդ անկազմ և ծփող ալիքներում, նրանք կամ փախել էին վաղօրոք՝ կամ զբաղուած էին իրանց իրերով ու բարխանով...:

Մեր «Շտաբ»-ից եկող մէկը միւսից յուսահատ տեղեկութիւնները ստիպեցին ինձ պատուիրել Կաղզուանի գաւառապետ Ժամհարեանին՝ իր մի վաշտ հեծեալ միլիցիոներների հետ անցնել վագզալ, և իր հրամանատարութեան տակ առնելով մեր փախչող զինուորութիւնը՝ փակել թշնամու առաջը: Ես դեռ յոյս ունէի, որ մեր հրամանատարութիւնը կ՛անէ վերջապէս մի բան:

Կաղզուանի գաւառապետ, գլխապետ Տիգրան Ժամհարեան՝ տեխնոլոգ ուսանող էր: Վերջի մեծ պատերազմի ընթացքում նա հասել էր գլխապետի աստիճանի, վիրաւորուել էր, ստացել էր մի շարք շքանշաններ քաջութեան համար, և վերջում գերի էր ընկել թիւրքերին Միջագետքում և այնտեղից փախել: Նա շատ սրտոտ էր և շատ քաջ, ...(*առկայ է տեքստի խզում*)

և ստիպուած էին, երևի մի ձև ընդունելու և վերջում ստացուեց ոչ այս և ոչ այն, այլ ծնունդ մի նոր ազգի,...(*առկայ է տեքստի խզում*)

...Դառնալով պ. Մինախորեանին, որ յամենայն դէպս լաւ տպաւորութիւն էր թողնում՝ ես կարծում եմ, որ նա և դաշնակցական էր և կադետ, բայց ոչ մի կերպ ինչ-որ «էսէր»... նա ազգային դէմք ունէր, վճռալից էր որպէս դաշնակցական, և կորեկտ որպէս կադետ: Մեր խորհրդական Տիգր. Յոհաննիսեան՝ շատ շնորհալի քարտուղար դուրս եկաւ: Գերազանցօրէն տիրապետելով հայոց լեզուն՝ նա թէ որպէս իրաւաբան և թէ որպէս մեր շնորհալի թարգմանիչ, առանձնակի ճշտութեամբ տանում էր օրագրութիւնները, և ես զարմանում էի՝ թէ ի՞նչ լաւ յիշողութիւն ունէր մեր սենատորը, և թէ ինչպէ՞ս նա ակադեմիկ ճշտութեամբ արձանագրում էր մեր բոլոր նիստերը: Գալով նորա վերաբերմունքին դէպի Սեւրի խնդիրը՝ նա պաղարիւն էր որպէս դատաւոր, և որպէս իրաւաբան կարծում էր երևի, որ անխուսափելի են ճակատագրի որոշումները, և մեզ մնում է միայն խոնարհուել պատմութեան առաջ...:

Ծածկագիր հեռագրով մենք տեղեկացրինք կառավարութեանը մեր ստացած ուլտիմատիւ պահանջի մասին Սեւրի դաշնագրից հրաժարուելու վերաբերմամբ, և այդ պատճառով յայտնի չափով մեզ ազատ էինք զգում մեր անելիքներում:

Գիշերից բաւական անցել էր՝ երբ Ալ. Խատիսեան, ընդհատելով արդէն թուլացած վիճաբանութիւնը՝ այսպէս ձևակերպեց ընդհանուր տրամադրութիւնը՝ մենք ոչ բարոյական և ոչ իրաւական իրաւունք ունենք հրաժարուելու մի ակտից, որ ունի պատմական և միջազգային նշանակութիւն: Խնդրի այդ ակադեմիկ և ձևական կողմից դառնալով դէպի նորա գործնականը՝ մենք պէտք է ընդգծենք, որ հրաժարուելով Սեւրի դաշնագրից՝ մենք չենք շօշափում նորա իմաստը, այլ միայն նորա մօտով ենք անցնում...:

Տաճկական բռնութիւնը թոյլ և երերուն ...(*առկայ է տեքստի խզում*)

…*[երբ ռուսները]* նորից գրաւեցին Կովկասը՝ այդ «Էսեր»-ը իրան «կոմունիստ» հռչակեց, և նշանակուեց Հին Նախճաւանի «Հանրապետութեան նախագահ»:

Երբ ես գրում էի այս յիշողութիւններս՝ այդ «կօմունիստը», իր յատուկ վակօնով, «ժամանեց» Թիֆլիզ, և հարկ համարեց այցելել ինձ:

Նա շատ պատկառալից շարունակում էր ինձ «աղա» ասել, և ամէն անգամ երբ պատասխանում էր իմ հարցերին՝ արևելեան ընդունուած սովորութ-եամբ փորձ էր անում ոտի կանգնել և այնպէս պատասխանել մեծի հարցին…:

Երբ ես կատակով հարցրեցի այդ թուրքին, թէ ինչպէս համաձայնացնել նորա անցեալը նրա ներկայի հետ՝ «Հանրապետութեան նախագահը» աչքերը ամօթխած գետին ձգելով ասաց.

– Էհ, աղա՛, ի՞նչ արած, հացի և իշխանութեան խնդիր է, – բայց այնուամենայնիւ վերջացրեց կեղծալից ինձ այցելողը,– Ձեր հովանին մեր գլխի վերայից պետք է անպակաս լինի, ես էլի քո նոքարն եմ, քո խոնարհ ծառան…:

Այդպէս է թուրքը իր բոլոր դիմակների տակ:

Մեր երկրի ոչ մի վայրում հողային խնդիրը այնչափ սուր կերպարանք չէ ունեցել՝ որպէս Հին Նախճաւան և Շարուր: Անշարժ սեփականութեան բազմատեսակ իրաւունքները յենւում էին սկզբում ֆերմանների՝ պարսից շահերի անվճռաբեկ հաճոյքի վերայ: Ռուս իրաւակարգը առհասարակ, և նրա հռչակաւոր դատաստանական ռեֆօրմը մասնաւորապէս՝ կասկածի ենթարկելով այդ իրաւունքների իմաստը, յեղափոխեց երկրի տրամադրութիւնը: Իսկ ութսուն թուականների մեծ աղմուկ հողաչափութիւնը, ի յայտ շփոթելով և խճճելով Կովկասի հնադարեան հողային հանգոյցը՝ հրավառեց Հին Նախճաւանի դաշտերում արևելեան կրքերը: Նիւթական ակնկալութիւնները խառնուեցին տոհմական, դասակարգային և ասպետական միտումների հետ: Մարդկանց իշխանալից և փառասէր միտումները, տիրելու և հպատակեցնելու ծարաւը, վրէժխնդիր դաւադրութիւնները, թուրք հարեմը և նրա ապահարզանը և այլ բազմաթիւ պայմանները՝ գալիս էին հունցելու այն մեծահռչակ հասարակական խմորը, եւ հարիւր տարուայ ընթացքում զինալից և կրքոտ հունցուելով այդ իմաստում՝ այդ խմորը սպառեց երկրի բոլոր կենսունակ ջրերը:

Քաջազնական, ասպետ հակումները դեռ տակաւին կարող և տակաւին հեղինակալից՝ նա ձեռք է բերել յայտնի քաղաքացիական իրաւունքներ: Քաղաքական բազմատեսակ հոսանքներ սիստեմատիկ ցիրուցան արեցին հայ ժողովուրդը նորա բնակատեղերից, և այսօր այդ մեծ պատերազմեց յետոյ՝ Հայաստանը դատարկուել է հայ ազգաբնակութիւնից: Տարիների ընթացքում մաքառելով մեր ինքնուրոյն ազգային իրաւունքների համար՝ մենք այսօր պահանջ ենք անում տալ մեզ այն տարածութիւնը, ուր կարող կը լինի պարփակուել հայ ժողովուրդը: Եւ համոզուած լինելով, որ թիւրքաց մեծ ազգային ժողովը տրամադիր է կնքելու

մեզ հետ ոչ թէ ձևական, այլ անկեղծ ու մնայուն հաշտութիւն՝ մենք ցանկութիւն ենք յայտնում բանակցելու այդ առիթով նորա հետ առանց միջնորդի: Այդ միտումներով և հաւատալով, որ խնդրի այդօրինակ լուծումը կը բաւարարէ կողմերը՝ Հայոց Հանրապետութեան Աղեքսանդրապօլի պատգամաւորութիւնը հրաժարւում է Սեւրի դաշնագրից: Միւս օրը թիւրքաց հրամանատարը ...(*առկայ է տեքստի խզում*)

...որպէս ծաղր պատմութեան՝ հայկական գերիշխանութեան գաղափարը այդ բացառիկ իսլամ աշխարհում վերապահուած էր պաշտպանելու մի թուրքի, որի եսը ընդհատուեց թիւրքասէր և հայեատեաց մի ոչ օրդինար դէմքերի հետ: Եւ այդ երկու մեծ հակադիր ոյժերի առանցքում տարուբերուեց հայկական իշխանութիւնը տարիուկէս ժամանակի ընթացքում:

Շատ հետաքրքիր է, որ հայ գեներալները և նոցա արբանեակները կրքից կուրացած ձայնակցում էին այն մարդուն, որ դարան մտած սպասում է պատեհ օրերի նորից փայլատակելու Արդահանի լեռներում հակահայկական դաշոյնը: Եւ զուգընթաց այդ բոլորի հետ՝ մեր հայրենիքի այդ «նախանձախնդիր» ասպետները տարիուկէս որսում էին այն մարդուն, որ պաշտպանելով իր գոյութիւնը, յամառ կռիւ մղեց այդ թիւրքաց Ջալալի դէմ, և մինչև ի վերջոյ պատուով տարաւ հայկական իշխանութեան հմայքը այդ ծորերում ...(*առկայ է տեքստի խզում*)

...Եւ մենք կարծում էինք, որ մեր պահանջները աւելի քան չափաւոր լինելով՝ կարող են բաւարարուել: Մեր ենթադրութիւնների մէջ մենք հակուած էինք հաւատալու, որ Թուրքիան կ՛օգտուի դէպքից՝ բաւարարելով հայկական պահանջները, վերջնականապէս լուծելու հայկական խնդիրը, որ այդքան տարի բորբոքման ընթացքում ...(*առկայ է տեքստի խզում*)

...և նշանակում է: Արդէն գոյութիւն ունէր և դաշնակցութեան ի՞նչ հեռաւոր միտումներ էր պարփակում Դրոյի այդ յանկարծակի դիկտատուրան, մենք մեկնում էինք այս և այն ուղղութեամբ, որևէ տուեալներ չունենալով Երևանի վերջի վերապրումների մասին: Յամենայն դէպս, մենք շատ հեռու էինք կարծելուց, որ ամէն բան վերջացած է...(*առկայ է տեքստի խզում*)

...բռնում էին այդ մեծ իրարանցման մէջ կենտրոնական տեղը:

Արիւնը, դաշոյնը, կինը, վրէժը և հոչակի տենչը՝ առանձնակի համեմում էին երկրի այդ հասարակական բորբոքումը, և այստեղ քաղաքացիական դատը միախառնւում է քրէական պրոցեսի հետ: Դժուար էր որոշակի ասել, որտե՞ղ էին սկսւում երկրի քաղաքացիական հողային ու ջրային պահանջները, և որտե՞ղ էր վերջանում երկրի օրեցօր բռնկուող և մարող քրէական հանգոյցը: Մի բան ակներև էր՝ այդ աղմկալից իրաւունքների շփոթում կանգնած էր Կովկասի հոչակաւոր աւազակութիւն-ղաչաղութիւնը: Երկրի բոլոր նշանաւոր քաղաքացիական պրոցեսները համեմուած էին արիւնով և դաշոյնով, և ռուս դատարանը և ռուս ադմինիստրացիան տասնեակ տարիների ընթացքում քննելով ու դատելով՝ չը

կարողացան լուծել մեր վէճը, և բուժիչ սպեղանի գտնել մեր այդ մեծաչարչար և զգայուն վէրքերի համար: Ռուս պաշտօնեաները աղմկում էին միայն, և այդ մեծ աղմուկ առանցքում՝ կեանք էին վայելում: Եթէ ռուս քաղաքականութիւնը մի կողմից փշալից կապանքներումն էր պահում մեզ՝ միւս կողմից նա ի ծայր անբարոյականացրեց թուրք ազնուականութեան վաւաշոտ, լպիրշ և արկածախնդիր բնազդը: Եւ երբ 17 թուին ընկաւ այդ իրաւակարգը և երկրում յայտարարուեց «ազատութիւն»՝ այդ բոլոր բէկերը, բոլոր թուրքերը, որոնք այնպէս վարպետօրէն կաշառում և իրանց ձեռքում խաղացնում էին ռուս աստիճանաւորներին՝ բոլորը հրապարակ նետուեցին նոր դիմակի և նոր կերպասի տակ: Այդ վաւաշոտ և անգրագէտ թուրքերը բոլորը իրանց սօցիալիստ, էսէր, մէսէր հռչակեցին՝ հրապարակից հեռացած ռուս պաշտօնեաների տեղը գրաւելով, ...(*առկայ է տեքստի խզում*)

...պաշտօնապէս տեղեկացրեց մեր դելեգացիայի նախագահին, որ կոնֆերանսի հերթական նիստը նշանակւում է Նոյեմբերի 29-ին առաւօտուայ ժամի 10-ին:

Այստեղ հարկաւոր եմ համարում նկատել, որ Կեազիմ Կարաբեքիր պ. Խատիսեանի հետ մասնաւոր խօսակցութեան ժամանակ ասել էր, որ նորա համար անհասկանալի է ռուս մեծամասնական Մդիվանու Աղեքսանդրապոլ գալու բուն պատճառը, և նա միանգամայն կարիք չի համարում նորա մասնակցութիւնը Կոնֆերանսին, և նորա որևէ միջնորդութիւնը հայ-թիւրքական բանակցութիւններում... Խորհրդակցելով այդ մասին, և ապագայում հաւանական թիւրիմացութիւնների և բարդութիւնների տեղիք չը տալու համար՝ պ. Խատիսեանը պաշտօնապէս գրաւոր տեղեկացրեց Կոնֆերանսի նախագահին ռուս ներկայացուցչի այստեղ գալու մասին այն միտումներով, որ գուցէ նա հարկաւոր համարէ նորան կոնֆերանսի նիստերին հրաւիրելու: Մեր այդ գրութեանը տաճկաց հրամանատարը պատասխանեց, որ հաշտութիւնը վերաբերւում է թիւրք հայ ազգութիւններին, և ռուսաց ներկայացուցչի մանակցութիւնը կոնֆերանսին նա գտնում է միանգամայն աւելորդ: Դորանով փակուեց այդ խնդիրը:

Միւս օրը կայացաւ մեր երկրորդ նիստը: Թիւրքերը բաւարարուած այս անգամ կարծես՝ աւելի սիրալիր էին:

Բանալով նիստը՝ տաճկաց հրամանատարը դիմեց կոնֆերանսին մի ճառով...(*առկայ է տեքստի խզում*)

... ուրախութիւն յայտնելով նահանգ անուանել՝ և Շարուր-Նախճաւանի նահանգապետ նշանակուեց մի անյայտ մարդ Վարշամեան ազգանունով:

Նրա մասին ի հարկէ ոչ ոք երկրում ոչ մի տեղեկութիւն չունէր: Յայտնի դարձաւ այդ օրերում, որ նա պատիւ ունի դաշնակցութեան շարքերում լինելու և նրան յանձնարարուեց կալուածատիրական և ասպետ Հին Նախճաւանի հայկական նահանգապետ լինելու: Այդ չափ հին երկրի տեղեկութիւնները՝ նոր կառա-

վարչի մասին: Գուցէ անկեղծ կուսակցական Վարշամեան՝ այնուամենայնիւ միանգամայն պատրաստուած չէր այդչափ փափկալից և այդչափ պատասխանատու պաշտօնի համար: Նա ոչ մի հասկացողութիւն չունէր այն երկրի մասին՝ որի բախտը և գերագոյն իշխանութիւնը իրան էր յանձնւում:

Նա կարծում էր երևի, որ գալիս է մի աշխարհ, ուր մարդիկ գնում են … (*առկայ է տեքստի խզում*)

…որ երկու դարաւոր հարևաններ բանակցում են այսօր իրանց ներքին կացութեան մասին՝ առանց միջնորդների: Նա շեշտեց թիւրքաց Մեծ ազգային ժողովի տրամադրութիւնը կապել հայերի հետ անկեղծ և մնայուն հաշտութիւն, և այդ առիթով իր բարեմաղթութիւնները անելով՝ նախընտրեց հայկական պատգամաւորութեան ներկայացնել իր պահանջները: Ալ. Խատիսեան պատասխանեց նորան շատ զգացուած և շատ պատկերաւոր ազդու ճառով: Պ. Խատիսեան խօսում էր շատ բարձր տրամադրութեամբ և միանգամայն տիրել էր թիւրք պատուիրակութեան ուշադրութիւնը: Ամբողջովին լսողութիւն դարձած՝ Կարաբեկիր և միւսները լարուած ուշադրութեամբ լսում էին հայկական պրեմիրերի հրաբուխային ճառը, իսկ տաճկաց հրամանատարը անջատ իր քարտուղարներից՝ շատ արագ թղթի էր անցնում այդ ճառը …(*առկայ է տեքստի խզում*)

…նրանք փորձալից և սանձարձակ սկսեցին կեղեքել ու թալանել երկիրը, և «ազատութեան»» ու «յեղափոխութեան» վայնասունի տակ՝ չը տեսնուած անիշխանութիւն ստեղծեցին գաւառում: Այդպէս էր Հին Նախճաւանի անցեալը հայկական իշխանութեան նախօրեակում: Եթէ մի կողմից մենք գուցէ շատ հեռացանք մեր ասելիքներից՝ միւս կողմից ես շատ անցողակի և շատ հարևանցիօրէն շօշափեցի երկրի ներքին դրութիւնը: Բայց աւելի ես չէի կարող անել, որովհետև այդ խնդիրները հատորներ կը պահանջէին: Այնուամենայնիւ, հայկական իշխան-ութեան կարճատև օրերի մասին խօսելուց առաջ՝ ես հարկաւոր համարեցի այդ ընդարձակ նախաբանը անելու: Աշխարհագրական իմաստով բնորոշելով այն վայրը, ուր պէտք է ստեղծուած լինէր հայ իշխանութիւնը՝ մենք յառաջ բերեցինք և այն տուեալները, որոնք գուցէ մօտաւոր հասկացողութիւն տան ընթերցողին այդ երկրի իրաւակարգային և տնտեսական անցուդարձի մասին: Եթէ Արաքս՝ Մեծ Գէօլից մինչև Զանգեզուր հռչակաւոր Տաթև, դարերի ընթացքում «դարիւ դարիւ խփելով» սփռել և հերկել է հայկական մրմունջները, մեր աշխատանքը, մեր ձգտումները և մեր սրբազան երազները՝ մենք գալիս էինք այստեղ ոչ անկոչ և ոչ առանց իրաւունքի: Բայց հայկական կառավարութեանը վիճակուած չէին սուվերէն իդեալները, և նորա առաքեալները չը կարողացան բարձրանալ դէպի սրբազան Գողգոթայ:

III

Զզուելով ռուս պաշտօնեայից՝ որի թիկունքում խանը և բէկը անում էր ինչ կամենում էր, երկիրը նոր օրերումն էլ դարձեալ օր չը տեսաւ:

Յեղափոխութիւնից յետոյ՝ խլացած ...(*առկայ է տեքստի խզում*)

...համոզմունքների և հրապարակը աղմկող տրամադրութիւնների յետևից: Ընկերվար որպէս կուսակցական՝ Շարուր-Նախճաւանի հայկական նահանգապետը ակադեմիկ մեկնութիւններ էր տալիս իր կոչումին, և տարուած հրապարակի էժանագին լօզունկներով՝ նա ուզեց իւրայնի համեստ ընկեր լինել կապից արձակուած այդ աւազակ և ֆանատիկ երկրում: Վարշամեան աչքաթող առաւ երևի, որ Ատրպատականը արևելեան շուքի, փառքի և իշխանութեան հնագոյն խանձարուրն է, եւ փոխանակ ոտք դնելու այդ աշխարհը շրջապատուած փայլով և իմպօզանտ լրջութեամբ՝ հայկական նահանգապետը առաջի օրից իջաւ իր հրամանատար բարձրութիւնից: Փոխանակ ի ցոյց դնելու իշխանութեան կիտած յօնքերը և անվճռաբեկ տրամադրութիւնը, փոխանակ իր իրաւասութիւնների բարձր ...(*առկայ է տեքստի խզում*)

...Հայկական ներկայացուցչութիւնը շատ ուրախ է՝ ասաց Ալ. Խատիսեան, լսելու Ձերդ գերազանցութեան հաւաստիացումը թիւրքաց մեծ ազգային ժողովի բարեկամական տրամադրութեան մասին դէպի հայ ժողովուրդը, որ դարեր շարունակ թիւրք ժողովրդի հետ միասին հիւսել է իր պատմութիւնը: Դարաւոր պահանջներից և խոստումներից յետոյ՝ հայ ժողովուրդը ուզում է օգտուել ինքնորոշման իր սուվերէն իրաւունքներից: Կապել իր կեանքը համաձայն իր պահանջների և ներդաշնակ իր դրացիների շահերի հետ: Ոչ մի տրամադրութիւն չունենալով ճնշելու ուրիշի իրաւունքները և ուրիշի ազատութիւնը՝ հայ ժողովուրդը կը ցանկանար ստանալու այն տարածութիւնը, ուր կարող է նա պարփակուել և ուր հնարաւոր կը լինի նորա տնտեսական և քաղաքակրթական զարգացումը...(*առկայ է տեքստի խզում*)

...Եւ այդ բազմաթիւ իշխանաւորները, պարլամենտի անդամները ցրուելով գաւառները՝ ստեղծում էին եզակի շփոթ միայն, և հրդեհում երկրի անիշխանութիւնը: Բոլորը կարծիքներ էին յայտնում, վիճում, աղմկում, ճառեր արտասանում, իսկ հրապարակում՝ նոցա ոչ լսող կար և ոչ այդ առաջարկութիւնները ի կատար ածող: Եւ այդ առանձնակի կառավարչական շփոթը պէտք է վերջանար միայն ընդհանուր պայթումով: Շատ ուշագրաւ է, որ եթէ իւր անցեալում դաշնակցութիւնը կազմակերպչական բուռն կարողութիւն արտայայտեց, և նրա այդ խիստ սիստեմը կապեց նրա փայլը և անունը՝ իր յետագայում, այդ կուսակցութիւնը թուլացաւ իր այդ տրամադրութիւններում: Նա յուսեց հրապարակի քաղաքական հոսանքներին և ինչ որ աստիճաններից շնորհելու երկրին՝ ի դիմաց կառավարութեան, իշխանալից ուշադրութիւն, արդարադատ կամք և անկողմնապահ վերաբերմունք, հայկական նահանգապետը ձևացած «ընկեր»՝ և ոչ թելադրող և տիրող: Եւ իշխանութեան գործելակերպի այդ մեծաչափ սխալ առանց-

քում՝ պարտուեց հայկական կառավարութեան համարումը Պարսկաստանի սահմաններում: Երկիրը այդ օրերում վերապրում էր ձանձրալի մի շրջան:

Հին իրաւակարգը ընկել էր, իրաւունքի նոր գաղափարը դեռ չէր ձուլուել, և հրապարակը տիրել էր անիշխանութիւնը՝ ուր ճարպիկ մարդիկ, յանուն յեղափոխութեան և ազատութեան՝ հնձում էին անվրէպ և անպատասխանատու... Շարուր-Նախճաւանի թուրքութիւնը դեռ ռուս իշխանութեան օրով գիտէր հայերին՝ որպէս լուրջ և բանիմաց մարդիկ:

Երբ տասնեակ տարիների ընթացքում հարստահարուած թուրք ... (*առկայ է տեքստի խզում*)

...և շշման անվերջ ճառերից և փքուն ու դատարկ խօսքերից՝ երկիրը կարօտ էր կարգի և հանգստի:

Դեռ տակաւին նահապետական և տակաւին կուսական՝ նա չէր կարող հաշտուել ընկերվար գործելակերպի հետ: Երկիրը փափագում էր խիստ իրաւակարգի, և մեծ յոյսերով սպասում էր հայկական իշխանութեանը: Հայերը միշտ խելօք, լուրջ և դրական մարդկանց համբաւ ունէին Արևելքում: Եւ Հին Նախճաւանի թուրքութիւնը պառակտուած ընկերվար կեղեքիչ մթնոլորտում՝ ծարաւի էր խիստ սանձերի և արդարադատ օրէնքների. այդպէս էր Շարուր-Նախճաւանի տրամադրութիւնը հայկական իշխանութեան նախօրեակում: Վարչական և քաղաքական միտումներով՝ հարկաւոր համարուեց այդ տարածութիւնը առանձին ...(*առկայ է տեքստի խզում*)

...պէտք է հանգի հայկական սուինների շարքերում, նա չարաչար սխալւում էր: Նա պատերազմ չէր գնում, և սուինները ոչ թէ պէտք է հարթէին նորա մուտքը դէպի Գողթան՝ այլ միայն պէտք է շուք և փայլ տային այն իշխանութեանը, որ գալիս էր տիրելու յանուն իրաւունքի և յանուն պատմական հնագոյն պայմանների:

Նա կարող էր հանդիսալից խնկարկել հայրենի զինուորութեանը, և դորանով մեծ յարգանք և մեծ պատկառանք ստեղծել հայկական զօրաբանակի շուրջը այդ հեռաւոր վայրում, բայց նա ոչ մի կերպ չը պէտք է մասնակից դարձնէր այդ սուինները երկրի կառավարչական խորհրդարանի գործում: Եւ այդպէս ձևակերպելով իր մուտքը Նախճաւանի Արաքսի հովիտը՝ հայկական նահանգապետը լուծած կը լինէր խոշորագոյն պետական մի խնդիր: Բայց Վարշամեան՝ հաւատարիմ ...(*առկայ է տեքստի խզում*)

...ամբոխը մարտնչում և դատւում էր բազմաթիւ կալուածատերերի հետ, հայ առաջաւոր մարդիկը նորա այն կարապետներն էին՝ որոնք առաջնորդում էին նորան դէպի դատարան և իրաւունք: Դեռ այն ժամանակ, այդ անպաշտօն հայերը, փաստաբանելով իրանց հարևան թուրքերի համար՝ շատ հեռու էին ընկերվար հակումներից: Թուրքերը ներքևից վերև էին նայում հայերին, և դորանով բնորոշւում էր նոցա փոխ յարաբերութիւնները: Կալուածատէրը ընկաւ՝ բայց

երկրի հանգիստը ի ծայր վտանգուած էր, և հրապարակում վխտում էին բազմաթիւ գիշատիչներ՝ որոնք ազատութեան կոչումի տակ կեղեքում էին երկիրը:

Պէտք չէ ասել, որ իրերի այդ մթնոլորտում երկիրը ծարաւի էր հանգստի և իրաւակարգի, և նա բուռն կերպով հաւատում էր, որ ... (*առկայ է տեքստի խզում*)

...զանազան վիճակագրական թուեր, ծանրացանք քարտէսի վերայ և մինչև ուշ գիշեր խորհում էին դրութիւնը:

Էքսպանսիւ Գիւլխանդանեան դարձեալ բողոքում էր մեր չափաւոր քաղաքականութեան դէմ: Նա պահանջում էր Հայաստանը այն սահմաններում, որ պէտք է գծէր նախագահ Ուիլսոն, խօսում էր Կիլիկիայի, Միջերկրական ծովի մասին... Երբ խորհրդակցութեան անդամներից մէկը նկատեց, որ ոչ միայն Միջերկրական ծով՝ այլև Մուշ մենք ստիպուած ենք չը պահանջել, Գիւլխանդանեան միանգամայն յուզուեց և մօտենալով քարտէսին՝ ինքնամոռաց սկսեց խօսել Մշոյ դաշտի մասին, տալիս էր «Արծիւ Վասպուրականի» անունը, կոչ էր անում Մշոյ սուլթան սուրբ Կարապետին...:

Ալ. Խատիսեան ձևակերպելով բոլոր կարծիքները՝ ասաց, որ ներկայ առանձնակի պայմաններում մենք չենք կարող ի հարկէ թելադրել մեր ցանկութիւնները, ...(*առկայ է տեքստի խզում*)

...ի հարկէ, «դեմօկրատիկ» սկզբունքների և որպես երդուեալ երևի «սօցիալիստ»՝ անյարմար համարեց երկիր կառավարելու այդ գործելակերպը: Նա Հին Նախճաւան եկաւ ընկերվար լօզունգներով, և կարծելով, որ կեանքը մի իդեալ է, իսկ Ագուլեաց ձորերը՝ սոցիալիստ իդեալիստների մի աշխարհ, հայկական նահանգապետը անձնատուր եղաւ ատենաբանութեան և վայելքների...:

Բայց թուրքերը շատ խորամանկ էին և ընդունակ շատ շուտ ըմբռնելու մթնոլորտի հոգեբանութիւնը:

Առաջի օրից նրանք հասկացան, որ գործ ունեն ոչ լուրջ և ոչ կամքատար իշխանութեան հետ: Եւ այստեղ մեծ թափով բռնկուեցին արկածալից միտումները: Շատ բնական էր ի հարկէ, որ թուրք բազմաթիւ «սօցիալիստները», որ մինչ այդ տիրում էին...(*առկայ է տեքստի խզում*)

...բայց և այնպէս ըստ բնոյթի՝ այդ հաշտութիւնը պէտք է ժամանակաւոր համարել: Միջազգային շահերի առանձնակի դասաւորումը ձգեց մեզ երկու ջարդարար ոյժերի առանցքը՝ ի դէմս ռուսների և թիւրքերի, և այդ մթնոլորտում ուր բռնաբարւում է իրաւունքի սկզբունքը՝ չի կարելի լուրջ խօսել որևէ իրաւական ակտի մասին: Այդ միտումներով, ստորագրելով մեզ համար շատ ծանր և մահացու նշանակութիւն ունեցող մի դաշնագիր՝ մենք կատարում ենք միայն թշմանու ուլտիմատիւ պահանջը, բայց ոչ արտայայտում երկրի կամքը և նրա տրամադրութիւնը: Այդ բոլորը շատ լաւ կը հասկանայ քաղաքակիրթ աշխարը, և այդ ակամայից ստորագրուած դաշնագիրը կը գնահատուի ըստ արժանոյս:

Դառնալով խնդրի էութեանը՝ Ալ. Խատիսեան ասաց, որ մենք պէտք է ի հարկէ չափաւորենք մեր պահանջը, թէ որպէս նորա ...(*առկայ է տեքստի խզում*)

...այդ օրէնքը կարող է ի կատար ածել խելօք և լուրջ հայը: Եւ այդպիսով, եթէ հայկական իշխանութիւնը իր առաջ և ունէր Շարուր-Նախճաւանի մի բուռն արկածախնդիր՝ որոնց հանդուրժելի չէր նոր իշխանութիւնը, բայց նա իր թիկունքում ունէր և մի ամբողջ երկիր, որ ի ծայր զզուել և յոգնել էր այդ «յեղափոխական» թալանից...:

Արևելքը ունի իր առանձին հոգեբանութիւնը, և այդ օրէնքները ունեն իրանց իմաստը ու նշանակութիւնը: Ժպիտը և կատակը թեթևսոլիկ հասկացողութիւններ են համարւում այնտեղ, ուր մարդիկ խօսում են իշխանութեան և օրէնքի անունից: Երբեմն շատ ծանր է լինում իշխանաւորի առաջ կանգնած դրութիւնը, բայց և այնպէս նա որոշ չափով պէտք է տանէ այդ կուրսը, որովհետև այդպէս է պահանջում երկիրը և հրապարակը, և մեծ ախորժակով վայելում յեղափոխական սեղանը, «յեղափոխական նուաճումները» ոչ մի տրամադրութիւն չունէին յանձնելու հայերին իրանց ձեռքը ընկած երկրի իշխանութիւնը: Իսկ երկիրը տեսնելով թէ ինչպէ՞ս երերուեց այդ մի բուռն յանդուգն աւազակների գրոհի առաջ հայկական իշխանութիւնը՝ չը գնաց ի հարկէ նորա յետևից: Հայկական սուինները՝ որոնց վերայ յենւում էր Նախճաւանի նահանգապետը, անկարող եղան ի հարկէ հեղինակութիւն և կորով ստեղծելու հայկական նահանգապետի համար: Եւ «ընկեր Վարշամեան», որ միայն դեմօկրատիկ և միայն ընկերվար լոզունգներով էր ուզում կառավարել Ատրպատականի այդ հին որջանոցը՝ ստիպուած էր այրելու իր հաւատարմութիւնները, և ընդմիշտ թողնելու, որ գէթ մի որևէ բաւարարութիւն ստանայ, և թէ նորա համար, որ մեզ ծիծաղելի դրութեան մէջ չը դնենք...(*առկայ է տեքստի խզում*)

...Այդ բոլոր հիմունքներով և միտումներով՝ մենք գծեցինք մեր պահանջած Հայաստանի հետևեալ քարտէսը, Երևանի և Կարսի նահանգները, Վանի վիլայէթը, Ալաշկերտ և ելք դէպի Սև ծով Ռիզայի և Բաթումի միջև: Այդ քարտէսին մենք կցեցինք և մեր գրաւոր այդ առիթով յուշագիրը, և հարկաւոր վիճակագրական տուեալներ: Այդ յուշագրի մէջ մենք նորից ընդգծեցինք, որ մենք էֆիմիր պահանջներից շատ հեռու ենք, մենք կը ցանկանայինք ունենալ այնպիսի մի տերիտորիա՝ ուր կարող կը լինէր պարփակուել այսօր ցիրուցան եղած հայ ժողովուրդը, և ուր նա հնարաւորութիւն կ՛ունենար զարգացնելու իր տնտեսական և քաղաքակրթական պահանջները: Եւ այդ միտումներով ասուած էր մեր յուշագրի վերջում՝ մենք պահանջում ենք և ելք դէպի ծով...(*առկայ է տեքստի խզում*) ...առնում ռօմանտիկ և իդեալ տրամադրութիւն...(*առկայ է տեքստի խզում*)

…Եւ հայկական վերջի երազները որպէս վերջի ասպետներ՝ նորից քաշուելով Զանգեզուր, համայն հայութեան որոտընդոստ ծափերի տակ՝ դարձան վերջի պատգամներ մեր ազգային և սուվերէն իղձերի… *(առկայ է տեքստի խզում)*

…Եւ մենք կանգնած էինք դարձեալ հնագոյն դիլլիմայի առաջ. թէ ի՞նչ է պէտք երկիր կառավարելու համար, և թէ ինչպէ՞ս պէտք է կառավարել այդ երկիրը…

Այդչափ անյաջող էր, եթէ չասենք ամօթալից՝ մեր խաղաղ կառավարչական մարշը դեպի Օրդուբաթի քարքարոտ աշխարհը:

Բայց Շարուր-Նախճաւանը ոչ մի տրամադրութիւն չունէր յեղափոխութիւնով զբաղուելու: Այդ դիմակի տակ հանդէս էին եկել Բագուի մուսաֆատ թուրք քաղաքական շարլատանները, և տեղիս աւազակներից «յեղափոխական կօմիսարներ» կազմակերպելով՝ քաղաքական պառակտում էին ձգել Արաքսի ամբողջ հոսանքով:

Հայկական նահանգապետը սրտոտութիւն չունեցաւ առաջի օրուանից՝ փշալից սանձերի մէջ առնելու այդ մի բուռն աւանտիւրիստներին: Նա հաշուի առաւ նոցա որպէս «քաղաքական հոսանքների», և փոխանակ մթնդած և վեհանձն հայեացք նետելու դէպի ձախ՝ նա իրան «աւագ ընկեր» յայտարարեց այդ «սոցիալիստ» հաւասարների միջև…

Եւ այստեղ ի հարկէ հայկական իշխանութեան պարտութիւնը և ակներև էր և անխուսափելի: Մենք և այստեղ կրկնեցինք մեր ճակատագրական մեծ սխալներից մէկը: Մենք եկանք տիրելու անպատրաստի և անտեղեակ երկրի կացութեանը, եկանք իշխելու առանց որևէ մշակուած ծրագրի և առանց սիստեմի:

Եւ փոխանակ լուրջ և բանիմաց մարդիկ ուղարկելու այդ վայրը, և նոցա առաջ դնելու ոչ թէ ճառելու՝ այլ ի կատար ածելու որոշ ցուցմունքներ, մենք ուղարկում էինք տիրել …*(առկայ է տեքստի խզում)*

…այստեղ պէտք է ասեմ, որ վրաց կառավարութիւնը գնդապետի ճանապարհորդութիւնների համար յատկացրել էր նորան ամենափայլուն սալօն վագօնը, այն վագօնը, որ անգլիական թագաւորը նուիրաբերել էր մեծ իշխան Նիկօլայ Նիկօլաեւիչին: Թէ ինչո՞ւ եկաւ և ինչո՞ւ գնաց գնդ. Գասկել՝ այդ ոչ ոք չը գիտէր ի հարկէ, բայց այդ խորհրդաւոր մթնոլորտում… *(փաստաթուղթը վնասուած է)*

…ասպետական և կալուածատիրական Շարուր-Նախճաւանը միայն «ռեզօլիւցիաներով» և միայն տաղտկալի և անհամ «բանաձևերով»: Եւ այդ ոչ միայն մեծ սխալ էր՝ այլև զաւեշտալից մի ողորմելի պատկեր…

Այդպէս էին Հին Նախճաւանի հայկական տարեգրութեան անմխիթար, անփառունակ և սակաւաթիւ երեսները:

Անցնելով Զանգիբասարի պատմութեանը՝ այստեղ ևս մենք հանդիպում ենք նոյն տեսիլների: Վեդիբասարը, Արազդայանը և Զանգիբասարը Երևանի

գաւառի այն գաւառակներն են, որ միշտ երկրի աչքն են համարուել: Այդ տարածութիւնը նոյնպէս կալուածատիրական և նոյնպէս ասպետական էր, ուր Բալա-Սուլթան և միւս յայտնի բէկերը երբեմն այնպէս բռնացել և հռչակուել են թուրքերը, հայերը և ասորիները ...

Ղաբշաբաները կազմում են այդ վայրի բնակչութիւնը:

Մասիսը առանձնակի հովանաւորել է Արաքսի այդ աւազանը, և բնութիւնը լիառատ թափել է այստեղ իր բոլոր բարիքները: Երևանի առևտուրը, արդիւնաբերութիւնը, շուկան՝ ամբողջովին կապուած էին այդ երկրի հարստութեան հետ, և այդ տարածութեան վերայ իշխող կալուածատէր խաները, սուլթանները, բէկերը և աղալարները ոսկու և բարիքի մէջ կորած՝ միշտ մրցել են իրար հետ երկրի գերիշխանութեան շուրջը: Այստեղ հռչակուել և անուն են հանել Վեդիի հարուստ կալուածատէր Բալա-Սուլթանը, Դաւալեցի յայտնի հացաշատ Միրզա Կարապետը (Ամիրխանեան), Ռուտս բէկ և Քեալաշ աղէն Առաքելեանները Մասիսի ստորոտներից դէպի *(առկայ է տեքստի խզում)*

...Սեպուհի զօրակայանը:

Նրա շտաբի պետը, համակրելի երիտասարդ Չիլինգարեան՝ անձնասպանութիւն էր գործել Կարսում մի երեք ժամ առաջ: Նա մէկն էր այն սակաւաթիւ հայ սպաներից՝ որոնք իրանց ամբողջ էութեամբ տարուած էին հայրենի երազներով: Եւ գլխապետ Չիլինգարեան՝ տեսնելով Կարսում զօրքի սարսափելի լքումը, տեսնելով, թէ ինչպէ՞ս թշնամին ի դէմս խուժանի՝ առանց կռուի և առանց որևէ դիմադրութեան գրաւում է Կարսի անառիկ ամրութիւնները, տեսնելով թէ ինչպէս սպաները ծածկելով կառքերի գլուխը՝ փախչում են առանց յետ նայելու, կորցնում է հաւասարակշռութիւնը՝ և իր հոգու ծայրալից յուզմունքներում միակ ելքն է համարում գէթ իր վերայից սրբելու... *(առկայ է տեքստի խզում)*

...Իսկ մենք բաւականութիւն ենք զգում արձանագրելու այսօր այս թեր և դէմ օղակների շարքում այս վերջի տեսիլը, որ պարփակելով այդ գունաւոր և խայտաճամուկ պատկերը՝ գալիս է ասելու, թէ որչա՞փ մեղանչում էին մարդիկ կանխակալ կարծե... որոշումներում... մէկը միւսին: Ես ուզում էի անվերջ լսել. «Ամէնայն տեղ մահը մի է՝ մարդ մի անգամ պիտ մեռնի... »: Բայց միւս կողմից ինձ խեղդում և ճնշում էին այդ զգացմունքները, և ես հազիւ էի զսպում արտասուքս:

Եւ պատկառալից բարձրացնելով գլխարկս դէպի այն գաղափարները, որ ի դէմս երաժշտութեան... *(առկայ է տեքստի խզում)*

...Կարսի կոմենդանտը միշտ եղել է բարձր ուսում ստացած, ռազմագէտ և անուն ունեցող գեներալ, իսկ նորա աջ թևը՝ նրա շտաբի պետը, նոյնպէս ռազմագէտ, նոյնպէս բարձրագոյն կրթութիւն ունեցող, նոր լեզուների տեղեակ՝ և այդ բոլոր ամրութիւնները շատ լաւ ուսումնասիրած գնդապետ:

Եւ այդչափ զրահաւորուած ռուս իշխանութիւնը՝ այնուամենայնիւ մինչև 18 թուի վերջի օրը, շարունակում էր նորից և նորից ուսումնասիրել Կարսի ամրութիւնների գօտին, պատրաստուել, զինուել, կարգի բերել և լարուած ուշադրութեամբ դիտել իր չորս կողմը և պատրաստալից սպասել...

Կարսի շուրջը սփռուած մի քանի տասնեակ ամրութիւնները, առաջաւոր դիրքերը, խրամատները՝ գիտութեան վերջի խօսքն էին:

Այդ ամրութիւնները լուսաւորուած էին էլեկտրականութեամբ, նոցանից ամէն մէկը ունէր իր աւտօմօբիլը, հեռագրագիծը, հեռախօսը, պրօժեկտօրը, երկաթուղու սուղ գիծը՝ ձիաքաշով ռազմամթերք մատակարարելու համար, ջրանցք, և բոլոր կենսական և ռազմական յարմարութիւները:

Եւ եթէ ռուս իշխանութիւնը 40 տարի շարունակ միայն շինում էր և միայն լցնում այդ ամրութիւնները...*(առկայ է տեքստի խզում)*

... ու կէս ժամանակամիջոցի ընթացքում... աւերում և միայն կրում էինք այդ ամրութիւններից...

Գեներալ Փիրումով, Կարսի հայկական կօմենդանտը՝ պատերազմի ժամանակ փոխգնդապետ էր: Շատերի ասելով՝ նա անձնապէս քաջ սպայ էր, իսկ գեներալ Սիլիկովի վկայութեամբ՝ նա կարող էր մի գումարտակի լաւ հրամանատար լինել, կարող էր այդ գումարտակը դէպի յանդուգն գրոհ տանել՝ բայց ոչ երբէք աւելի...

Նորա շտաբի պետը՝ Տէր Առաքելեան, պատերազմի ժամանակ մեր եկեղեցիներից մէկում դպիր, տիրացու էր: Պատերազմի քմահաճոյքը՝ տիրացութիւնից նորան փոխգնդապետ դարձրեց, իսկ անհասանելի կամօքն հայոց նորագոյն պատմութեան՝ նա դառնում է մեր Կարսի ամրութիւնների շտաբի պետ... Տէր Առաքելեան շատ համակրելի ձայն ունէր, և Կարսի խնջոյքներում հմայիչ տպաւորութիւն էր թողնում իր ժողովրդական երգերով: Անկասկած ի հարկէ, որպէս դաշնակցական՝ նա անկեղծ հայրենասէր էր, բայց ազգային զառանցանքը և մելամաղձոտ լէ-լէն չեն կարող դիւթել ռազմական մաթեմատիկ տուեալներ, ինչպէս որ ռօմանտիկ տրամադրութիւնը չի կարող երերալ ռէալիզմը և փոխել նորա անողոք...*(առկայ է տեքստի խզում)*

...անձնուէր տաճկահայերով, ...*(առկայ է տեքստի խզում)*

...տոգորուած էին ազգային իղձերով, և վրէժալից մարդկանց տպաւորութիւն էին թողնում, գեն. Յովսէփեանի շտաբում տիրում էր այլ մթնոլորտ, և տրամագծօրէն տարբեր տրամադրութիւն: Խօսում էին միայն ռուսերէն, հրամանատարում այդ ոգով, այստեղ էին երկրին անյայտ և խորթ սպաները, զանազան Օրլովսկիներ, Երուսալիմսկիներ, Գրօս, Միրիմանով և այն խառնիճաղանջ բազմութիւնը, որ ակամայ ասում էր իր շրջապատ հայութեանը. «Ի՞նչ է Գեկուբան ինձ համար, և ո՞վ եմ ես Գեկուբային... »: Հայկական բառբառը ամօթխած և պարտուած՝ լսւում էր այդ ընդարձակ սրահում գաղտնագողի և զգոյշ: Եւ մենք,

ընդմիշտ թողնելով մեզ համար այդ օտար և խորթ շրջանը՝ լուռ նստեցինք մեր կեանքը և անյայտացանք գիշերուայ մթութեան մէջ...

Այդպէս էր Հոկտեմբերի 30-ը ...*(առկայ է տեքստի խզում)*

...պ. Խատիսեան, որ աւելի քան չափաւոր պահանջը կը բաւարարէ ոչ միայն հայերին՝ այլև կը ստեղծէ այն բարի դրացիութիւնը, ուր մենք առիթ չենք ունենայ ընդհարուելու...

Եւ այդ մեր պահանջների, մեր իղձերի այն մինիմումն է, որ ես ի դիմաց իմ կառավարութեան՝ պատիւ ունեմ ներկայեացնելու կօնֆերանսին:

–Մենք բաւականութեամբ,– ասաց Կարաբեկիր,– լսեցինք Ձեր յայտարարութիւնը՝ երբ Ալ. Խատիսեան վերջացրեց իր ճառը, բայց մենք խնդրում ենք, որ դուք ներկայեացնէք Ձեր ցանկութիւնների քարտէսը և կցեցէք այդ քարտէսին և Ձեր իղձերի գրաւոր բացատրութիւնները, ու հարկաւոր տուեալները և վիճակագրական տեղեկութիւնները:

Միւս ամբողջ օրը մենք զբաղուած էինք այդ խնդրով:

Նորից թերթեցինք Սեւրի *(փաստաթուղթը վնասուած է)* ...բժիշկ, մի հիւանդանոց և մի...*(առկայ է տեքստի խզում)*

...Ի նկատի առնելով, որ... նահանգը, որպէս մի ալպիկ երկիր՝ գերազանց խաշնարած մի վայր է, ես կառավարութեան առանձին ուշադրութեանն էի դարձնում կաթնատնտեսական մեծ հարստութեան վերայ: Հարկաւոր էի գտնում անասնաբուծական կայաններ հիմնել, և անասունների տեսակները զարգացնելու համար մատնանշում էի այն վայրերը, ուր մենք պէտք է ունենայինք գիւղատնտես-անասնաբոյժ և այլն և այլն: Նահանգում իմ անցուդարձի ժամանակ՝ ես իմ բազմաթիւ հանդիպումներում ժողովրդի ներկայացուցիչների հետ, ես շարունակ արծարծում էի կառավարութեան այդ ուղութեամբ հոգսերը: Եւ ես չէի կարող չը նկատել, որ երկիրը անհամբեր սպասում է իր ռէալ պէտքերի իրագործմանը:

Կասեմ աւելին, ես դիտմամբ կանխօրէն տարածում էի նահանգում կառավարութեան այդ բոլոր անելիքների մասին, որովհետև գիտէի, որ իշխանութեան այդ քաղաքացիական տրամադրութիւնները սփոփում են երկրի ջղերը, և հանգիստ մթնոլորտ են ստեղծում իրաւակարգօրէն իմաստով:

Ներկայացնելով այդ բոլորի մասին կառավարութեանը՝ ես գրում էի, այդ բուն երկիրը ոչ մի տրամադրութիւն չունի զբաղուելու քաղաքական... *(առկայ է տեքստի խզում)*

...ինձ շատ մտատանջում էր լաւ դիւանապետ ունենալու խնդիրը: *[Նահանգի]* դիւանատան ձեռնտու կառավարիչը աւելի մեծ նշանակութիւն ունէր ինձ համար՝ քան փոխնահանգապետի դեկորատիւ պաշտօնը, և ես մի նամակ գրեցի պարլամենտի անդամ իրաւաբան իմ մի բարեկամիս՝ խնդրելով այդ պաշտօնի համար ուղարկել ինձ մի համալսարանական զարգացած երիտասարդ:

Մի քանի օրից յետոյ բարեկամիս յանձնարարականով եկաւ, գտաւ մի երիտասարդ: Բարեկամս գրում էր, որ ուղարկում է դիւանատան կառավարչի պաշտօնի հանար Չալխուշեան անունով մի երիտասարդ, և աւելացնում էր, որ նա «մեր յայտնի հասարակական գործիչ Գր. Չալխուշեանի որդին է»: Գր. Չալխուշեանին ես երբէք չէի տեսել, բայց գիտէի նորան որպէս «Մշակ» լրագրի ... աշխատակցի, և հօր հռչակը երաշխիք էի համարում որդու համար:

Թէ ինչ թիւրիմացութեան մեջ էր ընկել ... իմ իրաւաբան բարեկամս ինձ համար դիւանատան կառավարչի ... ընտրելուն, չը գիտեմ, բայց ի հարկէ գալու միւս օրը պարզուեց, որ նա ... ... բացի այդ, թէև համալսարան աւարտած՝ բայց գրել կարդալու հետ առհասարակ գլուխ չունէր: Եւ ինձ համար մի շատ փափուկ դրութիւն էր ստեղծուել: Ես չէի կարող դիւանատանս մեջ շատ պատասխանատու պաշտօնում պահել մի մարդու, որ ոչ գրել գիտէր՝ ոչ որևէ օրէնք: Միւս կողմից բարեկամս ականաւոր դաշնակցական էր, և եկող երիտասարդն վաղօրոք ինքն էլ իրան դաշնակցական... *(առկա է տեքստի խզում)*

Մանասեան մէկն էր այն կարող մարդկանցից՝ որոնք մեր պարտականութեան առաջի շրջանում շատ բարձր տրամադրութեամբ դէպի դաւանած իդեալները, իսանդալից առաջ էին տանում մեզ ժառանգութիւն հասած ազգային պատգամները:

Յամենայն դէպս, բացի իր անվիճելի մեծ հայրենասիրութիւնից՝ Սարգիս Մանասեան մէկն էր մեր կառավարութեան այն անդամներից, որ աւելի լուրջ, դրական, քան յափշտակուող էր:

XIV

Ամէն անգամ շրջագայելով նահանգը, մի աւելորդ անգամ ուսումնասիրելով երկրի պէտքերը և ժողովրդի տրամադրութիւնը՝ ես նորից ու նորից համոզւում էի, որ մենք պէտք է նուաճենք երկիրը ոչ զէնքով ու բռունցքով, այլ միայն և միայն քաղաքացիական աշխատանքով:

...Երկու տարի անտես առնելով՝ Թիւրքիան չը փորձեց լուծելու հայկական խնդիրը Տաճկաստանի հետ միասին: Ազգային մեծ ժողովի յանձնարարութեամբ,– ասաց փաշան,– Անկարայի Արտաքին գործերի մինիստրը դիմեց Ձեր կառավարութեանը մի նօտայով, առաջարկելով համաձայնութեան գալ մեզ հետ Հայկական խնդրի մասին, և լուծել Արևելքի այդ ցաւոտ խնդիրը անջատ Անտանտայի միտումներից: Աւելի քան մի ամիս պատասխան չը ստանալով՝ մենք կրկնեցինք մեր առաջարկը, և յետոյ միայն՝ բացատրեց փաշան, մեր Արտաքին գործերի մինիստրը ստացաւ Ձեր պատասխանը: Բայց Ձեր կառավարութիւնը,– հեգնեց թիւրքաց հրամանատարը,– իր արժանաւորութիւններից ցած համարեց

անմիջապէս մեր մինիստրի հետ բանակցել, և յանձնարարել էր իր ինչ որ քարտուղարի պատասխանելու: Իր ...*(առկայ է տեքստի խզում)*

...մեզ մնում էր միայն մեր խիղճը, և մեզ վիճակ ընկած մեր մեծ պատասխանատուութիւնը:

Դեռ երեկ երկիրը ցնծում էր Սեւրի դաշնագրի առիթով: Մենք տօնեցինք, այդ օրը եկեղեցում, և փայլուն զօրահանդէս կազմակերպեցինք այդ առիթով: Այդ դաշնագիրը կարծես բարձրացրեց մեր պետական կուրսը, և մենք ոչ միայն կայուն էինք մեր ներկայ սահմաններում՝ մենք սպասում էինք գարնան օրերի և...: «Ցնորքները» ...մենք զոհ էինք պատմական այն անողոք պայմանների դասաւորման՝ որոնց առաջ այդչափ տարի և այդքան սերունդ ինքնամոռաց երգել և հրճուել է

Այդպէս էր այդ օրուայ մեծ տեսիլը՝ այդ իմաստի փաստերում ու բացատրութիւններում ...*(առկայ է տեքստի խզում)*

...խմբապետ Սմբատ իր մասերով դեռ լեռներումն էր և մենք ոչ մի տեղեկութիւն չունէինք նորա մասին:

Բայց շատ հետաքրքիր է, որ Սեպուհ այդ օրը Կարսումն էր՝ և գեներալ Փիրումովի շտաբը ոչ մի տեղեկութիւն չունէր ռազմաբեմի մասին:

Սեպուհ եկել էր իր շտաբը Կարսից՝ ինձանից միայն մի երկու ժամ առաջ, և այնտեղ միայն տեղեկութիւն ստանալով Կարսի անկման մասին՝ պատրաստւում էր, համաձայն գեն. Յովսէփեանի հրամանի՝ նահանջել:

Սեպուհի հետ միասին գիշերուայ ժամի 10-ին, մենք ճանապարհ ընկանք, անցնելով ռուս և թուրք գիւղերով:

Ճանապարհը ամբողջովին ծածկուած էր փամփուշտի և ռումբերի արկղներով: Զօրամասերը նահանջելիս՝ թափում էին սայլերից և բեռներից այդ ծանրութիւնները, և զինուորները իրանք էին տեղաւորւում այդ սայլերի վերայ...

Այդ թափուած ռազմապաշարը այնչափ շատ էր, որ մենք *(փաստաթուղթը վնասուած է)*... ...տրամադրութեամբ և ամօթ ու... կորցրած մարդիկ, ռուս սպաների միջոցով, անում էին ...սմինում...*(առկա է տեքստի խզում)*

...Ղարաքիլիսայի մեջ սպասում էր յեղափոխական կոմիտէն, և մեզ ուշադիր ընդունելութիւն ցոյց տուին: Կոմիտէի նախագահը և անդամները դիմաւորեցին մեզ աւտոմոբիլից դուրս գալու ժամանակ ու առանձին ուշադրութեամբ, որ նման էր պատկառանքի, ռեւկոմը ուղեկցում էր Հայաստանի պրեմիերին՝ դէպի մեզ համար պատրաստուած բնակարանը: *(առկայ է տեքստի խզում)*...

...գերադասում էի տեղ չը տալ արատաւորուածներին, հալածել իրաւակարգի այդ ցեցերին՝ գէթ դորանով վերականգնել երկրի աչքում իշխանութեան համարումը: Զօրաց մինիստրը ի հարկէ չէր կարող չը համաձայնուել նահանգապե-

տի հետ, բայց և այնպէս այն բազմաթիւ սպաները, որոնց ես արձակել էի պաշտօններից կաշառակերութեան, պաշտօնական զեղծումների համար՝ անմիջապէս «տեղաւորւում էին» զանազան զօրամասերում և միշտ իւղալի համով պաշտօններ ընտրում...

Պէտք չը կայ ասելու, որ այդ մթնոլորտում պետական պաշտօնը կորցնում էր իր բարոյական արժէքը և կշիռը, և արտաքսուածը միշտ տեղ ունէր եթէ ոչ այստեղ՝ գէթ մի այլ տեղ նա տեղաւորւում էր և շարունակում իր գործը...

Երկաթուղում տիրող ծայրահեղ շփոթի, անկարգութեան, զեղծումների... մասին, ես մի քանի *[անգամ]* դիմեցի Երևան, դիմեցի երկաթուղու պետին՝ բայց պատասխան անգամ չը ստացայ: Իսկ ես միամտութիւն ունէի կարծելու, որ այդ բարձրաստիճան հաստատութիւնները չեն խախտի գէթ քաղաքավարութեան տարրական պահանջները, և կը պատասխանեն ինձ: Չէ՞ որ դիմողը անցորդ չէր, այլ այն ժամանակ Հանրապետութեան միակ նահանգապետը:

Կարսի առևտրականները պատմում էին, որ այնչափ թանկ է բերուող ապրանքը՝ որչափ մեծ են վրադիր ծախքերը: Երկաթուղու ամէն մի կայան մի սատրապութիւն՝ «ինքնորոշուող» մի հաստատութիւն էր, ուր գնացքը պէտք է կանգնէր և վճարէր իր մաքսը... Եւ միթէ պէ՞տք էր զարմանալ, որ... *(առկայ է տեքստի խզում)* ապում մեր հեռանկարները...

Սեւրի դաշնագրից յետոյ մարեց երկրի օտարազգի սեպարատ տրամադրութիւնը, և թիւրքահայութիւնը նոր և մեծ թափով թմբուկահարելով՝ սեղմւում էր դէպի Տաճկա-Հայաստան...

Սեւրը, այն հմայիչ վերջնագիրն էր՝ ուր արձանագրուեց մեր դարաւոր մարտիրոսութիւնը: Միջազգային այդ մեծ վեհաժողովի յարաբերութիւնների մէջ լինելու՝ և ոչ թէ ի կատար ածելու իր հեղինակաւոր ցուցմունքները, ինչ-որ դիւանապետների և նոցա կրտսեր օգնականների ստորագրութեամբ: Այդպէս դառնալից և զաւեշտ էր վերջին վեց ամսուայ ընթացքում մեր կառավարչական մթնոլորտը...*(առկայ է տեքստի խզում)*

...Երբ Օլթիի թալանը և բազմաթիւ զեղծումները սկսեցին շատ և շատ զբաղեցնել հասարակական կարծիքը, և գեներալների յաղթական դափնիքը սկսեցին գունատուել և մարել՝ գեներալները նոր միտք յղացան փրկելու իրանց երերուն դրութիւնը: Նրանք ուզում էին ապացուցանել, որ Օլթին գրաւելու ժամանակ նոքա գործ են ունեցել տաճկաց կանոնաւոր մեծ ոյժի հետ, որ բացի դրանից՝ Օլթիի ամբողջ ազգաբնակութիւնը մեր դէմ է, և այդպիսով գեներալները՝ նոցա ասելով, ստիպուած էին դիմադրելու այդ վայրում երկու դաշնակից ոյժերի:

Նախօրոք այդ ուղղութեամբ թէ՛ Երևան հաղորդուած և թէ՛ Կարսում տարածած լուրերի առանցքում՝ գեներալները հրաւիրեցին ինձ մի շատ «գաղտնի» և «շատ կարևոր» խորհրդակցութեան:

Նախ սենեակի աջ ու ձախ կողմը նայելով որ ոչ ոք չը լսի, դրութեանը աւելի նշանակութիւն տալու և ինձ ճնշելու համար՝ գեներալները շատ խորհրդաւոր յայտնեցին ինձ, որ Օլթիյում «ապստամբութիւն է» սպասւում, որ մեր զօրաբանակը թոյլ է և այդ պատճառով ...*(առկայ է տեքստի խզում)*

...Ի պարծանք և ի պատիւ հայոց դպրոցի՝ պէտք է նկատել այստեղ, որ մեր այդ բանասէր տրամադրութիւնը գաւառներում խմորուել է միշտ մեր ծխական դպրոցի շուրջը: Այստեղից է ծաւալուել մեր սէրը դէպի լրագիրը, գրականութիւնը, ազգային և հասարակական գաղափարները, և այստեղից են շերտաւորուել այն բարոյական և քաղաքական վարդապետութիւնները՝ որոնք մեր օրերում համաճարակի բնոյթ են ստացել:

Բայց մեր գաւառական թղթակիցների այդ ակադեմիկ, գաղափարական տրամադրութիւնը՝ 90 թուականներից սկսում է շառագունուել հեռաւոր քաղաքական և ազգայնական միտումներով, և հայ թղթակիցը շեղւում է արձանագրողի և ուշադիր հաւաքողի ընթացքից՝ և քաղաքական անորոշ, բայց շոյող յուզմունքներով տարւում: Գաւառական թղթակցութիւնը անդրադառնալով իր ժամանակի տրամադրութեանը՝ ձևակերպւում է տենդենցիոզ և նպատակալից հաղորդագրութեան, ուր օրեցօր թանձրանում է քաղաքական գոյնը, և կասկածի ենթարկում թղթակցութեան հարազատութիւնը: Եւ հայ լրագրի գաւառական թղթակցութիւնը որոշակի շեղուեց իր լուրջ ընթացքից՝ հայ-թուրքական ընդհարումների օրով: Նա մեծ ցանկութիւն ունէր զբաղուելու հրապարակի քաղաքական խնդիրներով, և այդ առանցքում՝ նա հանդէս եկաւ ոչ թէ փաստերը և դրութիւնը արձանագրողի դերում, այլ որպէս մի հասարակական գործիչ, որ տրամադրութիւն ունէր զբաղուելու քաղաքական կրքերով, և փայլելու հրապարակում...

Եւ հազիւ թէ պէտք է ասել, որ նորա այդ գործունէութիւնը կրքալից էր, հետևապէս ...*(փաստաթուղթը վնասուած է)*

...առանցքում արդէն... մեծ աշխատանքների մասին նահանգապետին բաժանելու Սեպուհից, և մի երկու ամսից յետոյ հրաման ստացուեց, որ 4-րդ բրիգադան տեղափոխւում է Աղէքսանդրապոլ...

Պարզ էր ի հարկէ, որ ռուսախօս գեներալների դաշնակցութիւնը, որ իսկապէս մի գաղտնի համաձայնութիւն էր հայկական կառավարութեան դէմ՝ տարաւ յաղթանակը և հասաւ իր նպատակին, թողնելով, որ նահանգապետը միայնակ մենամարտի այդ ռազմագէտ և Կարսի պարիսպների տակ այնչափ մեծ հռչակ ստացած այդ երկու գեներալների հետ:

4-րդ բրիգադայի Կարսից տեղափոխուելուն առիթով՝ ես դիմեցի մինիստր նախագահին մի ընդարձակ գրութեամբ, ուր բացատրեցի, որ այդ բրիգադան կազմակերպւում է գլխաւորապէս թիւրքահայերից, որոնց մեծամասնութիւնը Կարսի նահանգումն էր, որ այդ բրիգադան զուտ հայկական, ազգային մի զօ-

ռամաս է և նորա այս վայրում ներկայութիւնը ունի իր կրթական և տեղական... *(փաստաթուղթը վնասուած է)*

Եթե ենթադրելու լինենք... իր պետական միտումներում... չունէր հարստացնելու, ուժեղացնելու... բանակի այդ առաջաւոր դիրքերում հայ տարրը...*(առկայ է տեքստի խզում)*

...Ես կարծում եմ, որ զուգընթաց դորա հետ՝ օգտուել է այդ խնդրում ռուս պաշտօնէութիւնը ի դէմս երկրագործութեան հաստատութիւնների, որ այդ կապալը, առանց քաշուելու՝ տարեկան իր բիւջէի աղբիւրն էր դարձրել:

Ռուս պաշտօնէութիւնը չէր կարող չնկատել, որ եթէ կաշառուելը այդ օրերի առանձնայատուկ բնոյթն էր, թուրքերն էլ աւելի քան ով և իցէ՝ տրամադիր էին կաշառելու: Բացի այդ, ի հարկէ կաշառքը պէտք չունի լոյսի, և խաւարը, մութը այն միակ զրահն է, որ պէտք է կաշառակերի համար: Այդ զրահը չէր կարող լինել հայ աշխատաւոր ազգաբնակութիւնը, որ թէ՛ իր բնոյթում կաշառելու ընդունակութիւն չունէր և թէ՛ որպէս մի ժողովուրդ, որ յամենայն դէպս միշտ ձգտում է դէպի լոյս և օրինականութիւն՝ չէր կարող տալ կաշառակերներին նոցա հարկաւոր այդ առանցքում խաւարը: Այդ բացատրութիւններով եմ ես պարզում ինձ, թէ ինչո՞ւ 40 տարուայ ընթացքում ռուս պաշտօնեան գերադասում էր այդ մեծ արօտները... *(առկայ է տեքստի խզում)*

...ոչ խաղաղ գրաւելու այդ գաւառը, երես առած՝ սկսեցին մասսայական թալան անել նահանգում: Եւ այդ պատահեց մի 10 օրուայ ժամանակամիջոցում, երբ ես առաջի և վերջին անգամ պաշտօնական գործերով մեկնել էի Երևան: Թիւրքահայերի արկածախնդիր տարրը, տեսնելով գեներալների ջարդելու, փշրելու տրամադրութիւնը՝ մեծ խմբերով յարձակուեցին մի քանի խաղաղ թուրք և քուրդ գիւղերի վերայ, քշեցին այդ գիւղերի ամբողջ տաւարն ու ոչխարը ու բաժան-բաժան արեցին...

Զինուորական իշխանութիւնը մեծ բաւականութեամբ տրորում էր ձեռքերը, և Կարսի այդ երկու գեներալները՝ որոնցից ամէն մեկը մեծ ախորժակ ունէր գեներալ-նահանգապետ դառնալու Կարսի նահանգում, հոգսալից ասում էին. «Բռունցք է պէտք, պէտք է գեներալ-նահանգապետութիւն՝ զինուորական դր-ութիւն յայտարարել Կարսի նահանգում, պէտք է ջարդել ու փշրել... »:

Այդ մեծ ասպատակութիւնների մասին մի քանի հեռագիրներ ստանալով Երևանում՝ ես շտապեցի վերադառնալ Կարս, և ծանօթանալով իրերի դրութեան հետ՝ շատ մանրամասն զեկուցում ուղարկեցի կառավարութեանը: Ես բացատրեցի, որ թիւրքահայութիւնը անցեալ դարու սկզբից ապրում է քաղաքական երազներով, և այդ առանցքում մի քանի անգամ թողնելով տուն, տեղ և հայրենիք՝ գաղթել ու բախտ է որոնել օտարութեան մէջ: Տասնեակ տարիների ընթացքում այդ վշտալից գաղթականութիւնը կուտակել ու ամբարել է մի բան միայն՝ մաղձ, անէծք և վրէժխնդիր տրամադրութիւն, և այսօր բացօթեայ և ընչազուրկ՝

նա առնում է իր պատմական վրէժը դարաւոր զրկանքների և այնչափ արցունքի համար... *(առկայ է տեքստի խզում)*

...որպէս նախկին դեսպան Վրանգելի մօտ, գաղափարական և երդուեալ թշնամի բոլշեւիզմի, և արդէն լիովին ճաշակած նորա զարհուրելի բռնութիւնները՝ օր առաջ պէտք է աճապարէ դէպի արտասահման: Այնուհետև գրեթէ երեք տարի այդ հասարակական գործչի մասին ոչինչ չէր լսւում, երբ յանկարծ այստեղի թերթերը ուրախալից հաղորդեցին, որ Չալխուշեան Բոլգարեա է, երես է դարձրել հայկական նուիրական երազներից, փառում է այժմ էլ ռուսներին, բոլշեւիկներին՝ և գրել է մի սենսացիօն գիրք «Ո՞րն է մեր ուղին» վերնագրով, ուր բոլոր ամաններից թափում է հայկական պատասխանատու գլխի վերայ իր անցեալի բոլոր մաղձը և դառնութիւնը... Եւ իրան ոգևորուած բոլշեւիկ յայտարարում... Եւ հիրաւի, որ այդ միակ ուղին էր տարագիր դրութիւնից դուրս գալու համար, և «Մշակական», «Հորիզոնական», «Դաշնակցական», «Բոլշեւիկ», «յայտնի հասարակական գործիչ» Չալխուշեան՝ անմիջապէս թոյլատուութիւն է ստանում տուն դառնալու, և մի քանի օրից յետոյ նա արդէն Մոսկուա է:

(առկա է տեքստի խզում)

Բագու... թուրքեր և մի... աստիճաններ, որ դեռ երեկ... հայկական կառավարութեան ...ներով և նրան՝ իբր թէ ծառայի... Այդ խառնիճաղանճ արկածախնդիրները, Մդիւանու առաջնորդութեամբ և ուղեկցութեամբ երաժշտութեան՝ Լենինի, Տրօցկու պատկերները ձեռքերին շրջում էին քաղաքը: Զարդարուած կարմիր ցնցոտիներով և կարմիր դրօշակներ ձեռքերին՝ այդ խառնիճաղանճ բազմութիւնը Հայկական Հանրապետութիւնը ...*(առկայ է տեքստի խզում)*

...բազմաթիւ և բազմակողմանի գրութիւնները, թէ բոլոր կառավարչական հարցերը լուծւում են «տնավարի» և բերանացի... Յամենայն դէպս այդ մթնոլորտում ես պետական լրջութիւն չը տեսայ, և հերթական հարցերը անցնում էին անհետևանք՝ որպէս դրամատիկ պատկերները սինեմատօգրաֆի ժապաւէնի վերայ...

Երբ ես գալիս էի դէպի Երևան՝ ինձ թւում էր, որ ես պետական խնդիրների շուրջ քննութեան նախօրեակումն եմ, և ես պատկառանքով մտայ այն դահլիճը՝ ուր նիստ ունէր հայկական կառավարութիւնը: Եւ եթէ այդչափ բարձր էր տրամադրութիւնս այդ միջոցին՝ Կարս էի վերադառնում ես արդէն հիասթափուած և ի ծայր ընկճուած...

Եթէ դեռ կար պետական կեղեւ, պետական մթնոլորտ՝ բայց այդ առանցքում ես հեղինակութիւն չէի զգում:

(փաստաթուղթը վնասած է)...օրէնքներով հիմնաւորուած յուշագիր ուղարկեցի այդ առիթով կառավարութեան նախագահին, և խնդրեցի օրէնսդիր կերպով պարզել վարչութիւնների և իշխանաւորների իրաւասութեան սահմանները և նոցա փոխյարաբերութիւնները: Ես միջնորդում էի ստեղծել կառավարչական

ապարատում այն անհրաժեշտ ներդաշնակութիւնը, որի բացակայութիւնը տանում էր երկիրը դէպի անիշխանութիւն և աւեր: Այդ գրութեան պատճէն ես ուղարկեցի միևնոյն ժամանակ պարլամենտի նախագահին, բոլոր մինիստրներին և դաշնակցութեան բիւրոյին, որ յամենայն դէպս վեցերորդ պետութիւնն էր հայկական աշխարհում:

Այդ գրութեան մէջ ես բնորոշեցի, որ եթէ կառավարութիւնը ի դէմս Կարսի նահանգապետի՝ հարկաւոր էր համարել այդ տարածութեան վերայ ստեղծել վարչական մի միաւոր, նա պարտաւոր էր ուրեմն հաշուի առնել օրէնսդրութեան մէջ նահանգապետի իրաւասութիւնը որոշող ...*(փաստաթուղթը վնասած է)*

...երկրի ներքին կացութիւնը, երբ հայկական կառավարութեան դելեգացիան մեկնում էր Գիւմրի: Վրացեան՝ դաշնակցութեան նոր պարագլուխներից մէկն էր:

Նախ խմբագրում էր մեր ամենատարածուած և ամենաազդեցիկ թերթը «Յառաջ»-ը, և որպէս պատգամաւոր՝ կազմում էր հայկական պարլամենտում ուժեղ կենտրոնը: Երիտասարդութիւնը գնում էր նրա յետևից, հասարակական կարծիքը տրամադրութիւն ունէր տեսնելու Վրացեանի լուրջ ու բանիմաց *(փաստաթուղթը վնասած է)*

...և գէթ դորանով փրկելու հայրենի բեկորները: Ախվերդով, հայերէն ոչ մի բառ չիմացող այդ գեներալը՝ գուցէ տեղեակ ռազմական թէօրեայի, շատ հեռու էր հայ իրականութիւնից և հայկական իդեալներից: Նա եղել էր հայկական առաջի զինուորական մինիստրը, այնուհետև նա վարել է Զօրաց մինիստրի օգնականի պաշտօնը: Ասում էին, որ նա մեր զինուորական գործի իմաստն է: Բայց մենք տեսանք, որ այդ կարծեցեալ մեծ իմաստը չը կարողացաւ ստեղծել մեզ հարկաւոր ազգային բանակ:

(առկայ է տեքստի խզում)...լինելով, շատ ցաւալից անդրադարձել դէպի Տաճկաստանի միջազգային դրութիւնը:

Ուղարկելով տաճկաց հրամանատարին մեր այդ գրութիւնը՝ մենք սպասում էինք նոր այդ առիթով նիստի, բայց միւս օրը թիւրքաց զօրաբանակի հրամանատարը հաղորդեց մեզ, որ այն ռազմամթերքը, որ մենք զինադադարի պայմանով պէտք է յանձնէինք թիւրքաց հրամանատարութեանը՝ լրիւ չեն, պակասում են ջորիներ, գնդացիրներ և այլն: Եւ այդ բոլորը լրացնելու համար՝ հրամանատարը մեզ 24 ժամ միջոց է տալիս... Այդ առիթով մենք փոխանակուեցինք Երևանի հետ հեռագիրներով և *(առկայ է տեքստի խզում)*...

Մի երկու ամսից յետոյ 21 թուի Յունուար 24-ին՝ առանց այն էլ ի ծայր էլեկտրականացած մթնոլորտում, մեր երկրում պայթեց մի նոր ռումբ:

Ռուս կառավարութիւնը աքսորեց Ռուսաստանի խորքերը հայ բոլոր գեներալներին և սպաներին, թուով մօտ 1500 հոգի: Բացառութիւն կազմեցին և մնա-

ցին իրանց տեղերում միայն մի քանի ընտրեալներ՝ գեներալ Յովսէփեան, գեներալ Լօմիզէ (հայ), գնդապետ Միրիմանով և մի քանի սպաներ:

Փետրուարին՝ գեներալ Յովսէփեանին յանձնարարուեց Լօռու շրջանում խռովութիւնների սիմուլեացիա կազմակերպել, և նա վարպետօրէն կատարեց իր համար ռուսների *(առկայ է տեքստի խզում)*...

...հնչիւնների, այդչափ դիւթիչ և այնչափ սրտատրոփ էին այդ րոպէին՝ ես ուժգին քշեցի ձիս դեպի Արփաչայ...

Ես պահանջ էի զգում հեռանալու և միայնակ մնալու իմ այդ ի ծայր խռովալից վերապրումներիս հետ...

Արփաչայի այս և այն կողմը ասեղ ձգելու տեղ չը կար, նա ամբողջովին բռնուած էր գաղթականութեամբ:

Արփաչայի կամուրջով անցնելու համար կը պահանջուէր գէթ մի ժամ, այդ կամուրջը բռնուած էր *(առկայ է տեքստի խզում)*...

...միւս օրը, ուղիղ ժամի 10-ին, շրջապատուած իր շտաբի սպաներով՝ տաճկաց հրամանատար Կեազըմ Կարաբեկիր փաշան եկաւ մեզ մօտ փոխայցելութեան: Այդ միջոցում, մեր միջնորդութեան համաձայն, և համաձայն *(փաստաթուղթը վնասուած է)*

...այդ ապաշխարանքը: Այստեղ գուցէ ի դէպ լինի ասելու, որ Զանգեզուրը մեր կառավարչական ամենաանյաջող փորձերի վայրն էր: Դրօ, գեներալ Կազարով և Մէլիք Եօլչեան՝ յաջորդաբար իշխում էին և յաջորդաբար պետական փորձեր անում այդ կուսական ...*(շարունակութիւնը բացակայում է)*

ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 12, թթ. 1-86, բնագիր, ձեռագիր:

DOC №13

Յուշեր՝ զինադադարի, Սևրի պայմանագրի և [Ալեքսանդրապոլի] հաշտութեան պայմանագրի մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Թիւրքաց պատուիրակութիւնը կազմում էին դելեգացիայի նախագահ Կեազըմ Կարաբէկիր, Արզրումի նահանգապետ Համիդ Բէյ, Թիւրքիայի Մեծ ազգային ժողովի մի անդամ:***
- ***Ապա, բնորոշ ի հարկէ և սիմպտոմալից՝ օրկեստրը կատարեց ինտերնացիոնալը, և երաժշտապետը հանդարտ հրամանատարելով օրկեստրին, զինուորական պատիւ տուեց առ կոնֆերանսի դահլիճը և հեռացաւ:***
- ***... հայկական պատուիրակութիւնը պարտաւոր է վաղը, մինչև ժամի 12, գրաւոր յայտարարութիւն ներկայացնել կոնֆերանսին, որ նա, ի դիմաց հայկական կառավարութեան՝ հրաժարւում էր Սեւրի դաշնագրից, բանակցելով Թիւրքիայի հետ հայկական խնդրի մասին անջատ Անտանտից, և նրա որոշումը արտայայտող Սեւրի դաշնագրից:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

(Սկիզբը բացակայում է)...[*Համաձայն*] զինադադարի պայմանի՝ մեզ տրամադրեցին հեռագրական գիծը, բայց հեռագրային ապարատը գտնւում էր նոյն շինութեան մէջ, ուր և Տաճկաց հեռագրակայանն էր և տելեֆօնի կենտրոնական բաժինը: Ընդհանրապէս թիւրքերը առանց բարդութիւնների կատարում էին մեր խնդիրները:

Այդ միջոցում մենք հեռագիր ստացանք, որ Համօ Յովհանջանեանի կաբինետը հրաժարուել է և կառավարութեան կազմակերպութիւնը պարլամենտը յանձնել է պ. Վրացեանին: Այդ առիթով ստացուած շատ անփոյթ կերպով խմբագրուած հեռագրից մենք կարողացանք հասկանալ միայն, որ երկրագործութեան Մինիստր նշանակւում է պարլամենտի անդամ Մինախորեան, զինուորական՝ Դրօ, Ներքին գործերի՝ իրաւաբան Տէրտէրեան: Իսկ թէ առհասարակ ի՞նչ էր կատարւում Երևանում, և մօտակայ ի՛նչ միտումներ ունէին մեր վարիչ շրջանները՝ մենք ոչ մի տեղեկութիւն չունէինք, և վերապրում էինք ջղայնալից րոպէներ:

Կոնֆերանսը *(Ալեքսանդրապոլի- Վ.Հ.)* բացուեց Նոյեմբերի 26-ին, ժամի 4-ին, մեր բնակարանի դահլիճում: Թիւրքաց պատուիրակութիւնը կազմում էին դելեգացիայի նախագահ Կեազիմ Կարաբէկիր, Արզրումի նահանգապետ Համիդ Բէյ, Թիւրքիայի Մեծ ազգային ժողովի մի անդամ: Երբ կօնֆերանսի անդամները բռնեցին իրանց տեղերը՝ Թիւրքաց հրամանատարը և Ալ. Խատիսեան նստում էին դէմ առ դէմ, իրանց աջ և ձախ կողմերում ունենալով իր պատգամաւորութեան անդամներին, Անգորայի ներկայացուցիչը, ֆրանսերէն ողջունեց հայկական դելեգացիան և կոնֆերանսին յաջողութիւն մաղթելով՝ խնդրեց նախագահ ընտրել: Նորան պատասխանեց, նոյնպէս ֆրանսերէն՝ Ա. Խատիսեան: Ի դիմաց հայ կառավարութեան շնորհակալութիւն անելով Թիւրքաց հրամանատարին մեզ ցոյց տուած պատուի և ուշադրութեան համար, և յիշելով 78 թուի Բեռլինի կոնգրեսը, հռչակաւոր իշխան Բիսմարկին և մեծանուն Անդրաշիին, որ ի դիմաց Բեռլինի բազմամարդ վեհաժողովի խնդրեց երկաթէ կանցլերին նախագահել կօնգրեսում, Ալ. Խատիսեան ասաց. «Այդ պատմական յիշողութիւններով առաջնորդուելով և յենուելով միջազգային սովորութիւնների վերայ՝ հայկական պատուիրակութիւնը հաճոյք է համարում, գտնուելով Ձեր հիւրասէր կամարների տակ, խնդրելու Ձեզ պարոն գեներալ, նախագահելու մեր նիստերում»: Եւ այդ բոլորին վերջացրեց Ալ. Խատիսեան. «Մենք պէտք է կցենք և մեր յարգանքը դէպի թիւրքաց զօրաբանակի հրամանատարի անձնաւորութիւնը... »:

Գլխի բաւարար շարժումով Կարաբեկիր արտայայտեց իր տրամադրութիւնը այդ առաջարկի համար, և շնորհակալութիւն... պատուի հա... (*փաստաթուղթը վնասուած է*)

...և Շօպենի գուրգուրալից վալսի ալիքները հմայեցին մթնոլորտը... Ապա բնորոշ ի հարկէ և սիմպտօմալից՝ օրկեստրը կատարեց ինտերնացիոնալը, և երաժշտապետը հանդարտ հրամանատարելով օրկեստրին՝ զինուորական պատիւ տուեց առ կոնֆերանսի դահլիճը և հեռացաւ:

Խորհրդակցութիւնը այդ օրը զբաղուեց միայն հաւատարմաթղթերի ստուգութեամբ, և նախագահը փակելով նիստը՝ խնդրեց միւս օրը, ժամի 10-ին վերսկսել կոնֆերանսի զբաղմունքները:

Մենք անբաւական էինք ի հարկէ, որ աշխատանքները ձգձգւում են, բայց և այնպէս ի հարկէ պէտք էր համբերել և սպասել:

Միւս օրը նիստը բացուեց նշանակուած ժամին: Նախագահը լուրջ և վճռական տոնով ասաց.- Համաձայն մեր ստացած ազգային մեծ ժողովից հրահանգի՝ մենք պայմանաւորում ենք կօնֆերանսի յետագայ աշխատանքները հետևեալ պահանջով. հայկական պատուիրակութիւնը պարտաւոր է վաղը, մինչև ժամի 12-ն, գրաւոր յայտարարութիւն ներկայացնել կոնֆերանսին, որ նա, ի դիմաց հայկական կառավարութեան՝ հրաժարւում էր Սեւրի դաշնագրից, բանակցելով Թիւրքիայի հետ հայկական խնդրի մասին անջատ Անտանտից, և նրա

որոշումը արտայայտող Սեւրի դաշնագրից: Բաւարարելով մեր այդ պահանջը միայն՝ աւելացրեց նախագահ Կարաբեկիր, մենք կարող ենք խօսել հաշտութեան մասին, ի դէպ՝ վերջացրեց տաճկաց հրամանատարը, ես ստիպուած կը լինեմ խախտել զինադադարը...

Տիրեց մի երկու րոպէ շատ հասկանալի ներքին խռովութիւն, և բոլորը ջղայնալից լուռ էին: Ապա Ալ. Խատիսեան մի ընդարձակ ճառով առարկեց, որ Հայկական կառավարութիւնը իր պատուիրակութիւնը ուղարկելով Թիւրքիայի ազգային Մեծ ժողովի հաւատարմատարութեան հետ բանակցելու և հաշտութիւն կնքելու համար՝ ինքնըստինքեան անտես էր առնում Սեւրի դաշնագիրը, և մենք զինադադարից յետոյ բարեկամական հաշտութիւն կնքելով Թիւրքիայի հետ՝ բնականաբար չէինք կարող հաշուի առնել Սեւրի դաշնագիրը, և միայն անջատ նորանից՝ կարող էինք հանգել բարեկամական համաձայնութեան...

Թիւրքաց հրամանատարը պատասխանեց, որ թիւրքերը միանգամայն հաւատում էին մեր անկեղծ ցանկութեանը հաշտուել առանց միջնորդի, Սեւրից անջատ՝ բայց և այնպէս Անգորաի ներկայացուցչութիւնը պարտաւոր է կատարել նորան տուած հրահանգը, և Կեազիմ Կարաբէկիր շատ ցաւում է, որ իր այդ նախնական պահանջը, իրանից անկախ միտումներով՝ կրում է վերջնագրի, ուլտիմատիւ բնոյթ...

Այդ յայտարարութիւնից յետոյ նախագահը փակեց ժողովը և աւելացրեց, որ նա կը սպասէ հայկական դելեգացիաի գրաւոր այդ առիթով յայտարարութեանը մինչև վաղուայ ժամի 12-ն՝ և յետոյ միայն կ՛որոշէ հետևեալ նիստի ժամանակամիջոցը:

ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 13, թթ. 1-6, բնագիր, ձեռագիր:

DOC №14

Յուշեր՝ Կարսի անկման, հայ սպաների փախուստի, Սեպուհի շտաբի պետ Չիլինգարեանի անձնասպանութեան, Սևրի դաշնագրի և թուրքերի ազգային յատկութիւնների մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***...Պահանջում էի, որ մեր նորաթուխ գնդապետներին և գեներալներին արգելուի միջամտելու երկրի քաղաքական, վարչական գործերին:***
- ***...եթէ դաշնակցութեան վիճակ էր ընկել կառավարելու երկիրը՝ այդ դեռ չէր նշանակում, որ ամէն մի դաշնակցական իրաւունք ունէր միջամտելու պետական գործերին և խանգարելու նորա ընթացքը:***
- ***Բոլոր հաշիւները մի կողմը թողած, մենք պէտք է խոստովանուենք, որ դաշնակցութեանը վիճակ էր ընկել դէմք ու կերպարանք տալու հայկական խնդրին, և դաշնակցութեան ձեռքիցն էինք մենք ստանում այն ժառանգութիւնը, որ այսօր հայոց հանրապետութեան անունն էր կրում:***
- ***Դրսում, ռուսների համար՝ նա սոցիալիստ է, ներսում, իր թուրքերի շրջանում՝ նա խնա դնող և մեծ նախանձախնդիր համիսլամ սրբութիւնների...***
- ***Նորան վիճակուած էր պատուալից ընկնելու այնտեղ, ուր հայ սպաները լքելով հայ զինուորութեան շարքերը՝ փախչում էին անպատիւ և անամօթ:***
- ***Սեպուհի շտաբի պետ, գլխապետ Չիլինգարեան՝ մի համակրելի երիտասարդ, որ այդ րոպէին Կարսումն էր, տեսնելով այդ սպաների խայտառակ փախուստը և ճնշուելով որպէս սպայ ժողովրդի առաջ՝ կորցնում է հոգու «հաւասարակշռութիւնը» և անձնասպանութիւն գործում...***
- ***...գեներալը մօտենալով ինձ՝ ասաց. Մենք բանակ չունենք այլևս, ամէն բան վերջացած է...***
- ***Եւ անվճռաբեկ իր իշխանալից ձեռքը առնելով երկրի ղեկը՝ կառավարութիւնը պէտք է գար անսասան կառավարելու և ոչ խորհրդակցելու ու վիճելու մարդկանց հետ:***
- ***Մթնոլորտը տոգորուած էր թալանի իմաստով, և խախտելով կառավարութեան կորովը և համարումը՝ տանում էր մեզ դէպի անդունդ:***
- ***Զանգիբասարի վերջի պատմուածքը աւելի հայդուկ արկած էր՝ քան կառավարչական լուրջ ակտ:***

- ***Գեներալ Նազարբեկով՝ հայկական բանակի այդ բեմուրազ և անբախտ սպարապետը, պատմում էր փողերիս գրողին, որ Զանգիբասարի արշաւը կատարուել է առանց իր անմիջական միջամտութեան:***
- ***Աւագ զօրավարութիւն էր շնորհւում մի գեներալի, որի գեղծումների մասին այնչափ հատորնէր էր գրուած, որ կազմալուծեց Կարսի բանակը, և այնպէս անփառունակ վերջացրեց իր հրամանատարութիւնը Կարսի պարիսպների տակ:***
- ***Փաշան մոռացաւ երևի, որ այսպէս թէ այնպէս նուաճելով երկիրը՝ նա վերջացած պէտք է համարէ այնտեղ իր զինուորական լիազօրութիւնները, և այնուհետև պէտք է ծաւալուէին նրա վարչական և քաղաքացիական ընդունակութիւնները:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Կարսի անկումը

Շատ ուշագրաւ պէտք է համարել հոգեբանական իմաստով, որ Կարսի նահանգապետը, որ գուցէ աւելի քան ով և իցէ՝ տեղեակ էր երկրի անցուդարձին, մինչև վերջը չէի հաւատում, որ Կարսը կարող է ընկնել: Սկզբից և մինչև վերջը, ես անվրէպ տանում էի միևնոյն քաղաքական պետական գիծը: Ես անդադար զանգահարում և պահանջում էի զբաղուել քաղաքացիական աշխատանքով: Ես բազմիցս կառավարութեան ուշադրութիւնն էի դարձնում մեր բանակի հրամանատար կազմի վերայ: Պահանջում էի, որ մեր նորաթուխ գնդապետներին և գեներալներին արգելուի միջամտելու երկրի քաղաքական, վարչական գործերին: Եւ ձևակերպելով իմ բազմաթիւ դիմումներս և միջնորդութիւններս՝ ես ամէն անգամ հանգում էի պետական և կառավարչական թեմական իմաստում, երկրի իշխան-ութիւնը իր բնոյթում պէտք է ինտերնացիոնալ լինի, և միայն այդ առանցքում երկիրը կը գնայ մեր յետևից, և մենք ի կատար կ՛ածենք մեր սուվերէն կոչումը:

Գալով կուսակցական խնդրին, ես միշտ այն միտքն էի յայտնում, որ եթէ դաշնակցութեան վիճակ էր ընկել կառավարելու երկիրը՝ այդ դեռ չէր նշանակում, որ ամէն մի դաշնակցական իրաւունք ունէր միջամտելու պետական գործերին, և խանգարելու նորա ընթացքը: Եւ պէտք չը կայ այստեղ ասելու, որ դրութիւնը միշտ խախտւում էր, և ամէն մի դաշնակցական, ամէն մի տափակութիւն, զրահաւորուած կուսակցական կոչումով, առանց քաշուելու և առանց ամաչելու՝ միշտ թելադրողի և պահանջ իշխանալից դերումն էր: Կուսակցական գերագոյն մարմինը չը կարողացաւ պետական դաստիարակութիւն մտցնել իր մեծ կուսակ-

ցութեան շարքերը, նա չը կարողացաւ խիստ և անվճռաբեկ դիսցիպլին ստեղծել:

Շարքային դաշնակցականը չէր ուզում հասկանալ, որ երկրի առաջ պաշտպանելով մեր իրաւունքները՝ մենք հաշուի բերեցինք մեր թափած արիւնը, գաղթականութեան երկար շարաններ, կոտորած, աւեր, մռմուռ և արցունք: Եւ արժէքի վերածելով այդ բոլորը, որ նուիրաբերւում էր սերունդների երկար շարքերից ազգային գաղափարի կրակարանի առաջ՝ մենք հատուցում էինք, ստանում ի դէմս մեր հայրենիքի, մեր անկախութեան և մեր ազատութեան: Սևրը հայոց նորագոյն պատմութեան այն փարոսն էր, որի շուրջը խնկարկել են մեր մտքի, գրականութեան և մեր արուեստի բոլոր մեծ կերտողները, և նորա շուրջը կուտակուել են ոչ միայն բողոքը, ճիչը և հառաչանքը՝ այլ և մեր ընդունակութիւնները, կենսունակութիւնը և մեր քաղաքակրթական կոչումը:

Սևրը այն նուիրական սրբարանն էր՝ ուր ուխտագնացութիւն է կատարել համայն հայութիւնը, կուսակցութիւնները, նորա երկար ճանապարհում խորտակուել և ծնուել են մտքեր: Եւ այնտեղ, վերջապէս դարերի խմորումից յետոյ՝ ձևակերպուել է մեր դատը, և հայկական հարցը միջազգային ճանաչուել: Եւ մենք իրաւունք չունէինք հրաժարուելու Սևրից:

Այդ բոլորը մենք ոչ միայն շատ լաւ հասկանում էինք՝ բայց և ցաւալից վերապրում: Բայց միևնոյն ժամանակ մենք հասկանում էինք և այն, որ հրաժարուելով Սևրի դաշնագրից՝ մենք չենք կատարում իրաւագիտական ակտ, որովհետև ոչ միայն մենք, այլ և հայկական կառավարութիւնը իրաւասու չէր լուծելու այդ խնդիրը:

Բայց մեր առաջ դրւում էր մի անլուծելի դիլլիմայ, կամ ստորագրել հրաժարումը՝ կամ ոտնատակ տալ և Արարատեան դաշտը...

Եւ ինչպէս դաշոյնի տակ ստորագրուած մուրհակը կորցնում է իրաւական փաստաթղթի իմաստը՝ նոյնպէս և մեր հրաժարուելը Սևրի դաշնագրից չէր կարող փոխել հայկական հարցի միջազգային դրութիւնը: Այդ ակտը մի եղեռնական էջ էր միայն մեր պատմութեան մէջ, բայց նա չէր կարող խախտել իրաւունքը, որ բացառում է բռնութիւնը:

Ծայրայեղ ջղայնացում արտայայտեց այդ խորհրդածութեան տասնևհինգ ժամուայ ընթացքում պատուիրակութեան անդամ Աբր. Գիւլխանդանեան: Նա անընդհատ ծխում էր ջղայնալից, անդադար շրջում սենեակում: Նա ոչ միայն դիմում էր մեզ, իր բացատրութիւնները տալիս՝ նա խօսում էր ինքը իր հետ և երբեմն զառանցում...

Եռանդուն քայլելով սենեակում՝ նա կանգ էր առնում մեր պատմութեան զանազան շերտաւորումներում, և դառնալով Սևրին՝ Գիւլխանդանեան բռունցքալից բողոքում էր և հառաչում...

Ես մեծ ուշադրութեամբ դիտում էի դաշնակցութեան այդ ցայտուն ներկայացուցչին, և շատ լաւ հասկանում էի՝ թէ ինչո՞ւ այդ վաստակաւոր հայրենասէրը այդչափ կրքոտ և այդչափ ջերմ անդրադառնում է իր մէջ այս պատմական մոմենտը: Եւ իմ առաջ կանգնում էր մեր ամբողջ ազատագրութիւնը: Իսրայէլ Օրի, Խամսայի Մէլիքութիւնները, Դաւիթ Բէկ, Ներսէս V, Հայոց Հայրիկը, Գր. Արծրունի, և վերջապէս մրրկայոյզ դաշնակցութիւն մեր ազատագրութեան այն մեծ օղակներն են, որ բերել, հասցրել են մեր դատը մինչև այսօր: Իսկ դաշնակցութիւնը վերջի 30 տարուայ ընթացքում տիրելով կռուի հրապարակը՝ արտօնուած էր պաշտպանելու մեր ազգային գաղափարը: Բոլոր հաշիւները մի կողմը թողած՝ մենք պէտք է խոստովանուենք, որ դաշնակցութեանը վիճակ էր ընկել դէմք ու կերպարանք տալու հայկական խնդրին, և դաշնակցութեան ձեռքիցն էինք մենք ստանում այն ժառանգութիւնը, որ այսօր հայոց հանրապետութեան անունն էր կրում:

Եւ Աբ. Գիւլխանդանեան, որ դաշնակցութեան շարքերում մէկն էր նորա անկեղծ մոլեռանդներից՝ չէր կարող ի հարկէ երես դարձնել Սևրից, որի ճանապարհում դաշնակցութիւնը այնքան մարտնչել ու այնչափ արիւն է թափել:

Ճշմարտութիւնը պահանջում է ասել, որ թուրքը խելօք է, շատ խորամանկ: Ռուս տիրապետութեան ընթացքում՝ թուրքը իր անձնական միտումներում իր ձեռքումն էր խաղացնում երկրի ամբողջ ռուս պաշտօնէութիւնը:

Նա կաշառում էր այդ ռուսներին, շարունակ արբեցնում նոցա, զբօսանք և ձիարշաւ էր կազմակերպում նոցա համար, և այդ աղմկալից վայելքների մթնոլորտում ռուսների աչքը հանելով՝ ինչպէս թուրքն է ասել միշտ, նա սիրային արկածներ է կազմակերպել ռուսների կանանց հետ... Թուրքը թուղթ էր խաղում ռուսների հետ, դիտմամբ միշտ տարուում էր, ուտեցնում և խմեցնում էր նոցա, նոցա կանանցից «եւրոպական» պար էր սովորում, թողնելով ռուսներին կարծելու՝ ո՞րչափ միամիտ և ո՞րչափ պարզ է այդ հիւրասէր և հացառատ թուրքը... Բայց այդ խորամանկ դիմակի տակ՝ թուրքը անվրէպ տանում էր իր հաշիւները - նա այդ միջոցներով պահպանում և աճեցնում էր իր հարստութիւնը, ծածկում իր աւազակութիւնը և անպատասխանատու ոճիրներ գործում: Այդպէս էր թուրքը Կայսերական Ռուսաստանում:

Յեղափոխութիւնը չը կերպարանափոխեց թուրքին: Նա ձգեց իր վերայից այն դիմակը, որի տակ նա երկրպագում էր ռուս Կայսերական քուրմերին, և մեծ թափով իրան «սոցիալիստ» յայտարարելով՝ նա նոր ծխի առանցքում սկսեց դարձեալ կեղեքել և դարձեալ վայելել կեանքի հրապոյրը: Ես ճանաչում եմ համալսարանական թուրքեր՝ «ինտիլիգենտ» անուանուողներ, որոնք իբր «սոցիալ» զանազան «հոսանքների» ներկայացուցիչներ և բարձր կոմիսարներ այսօր՝ իրանց ոտների մատները և մինչև այսօր ներկում, խնա են դնում...

Իւր ժամանակին նրանք ներկում էին խնայով և իրանց ձեռքերի մատները, բայց այսօր այդ արդէն ամօթ է, և չի կապւում «սոցիալիցմի» հետ: Բայց այդ «սոցիալիստ» կօմիսարը իր հոգու խորքերում թուրք է, և նրան պէտք է կրօնալից լինել իւրայինների շրջանում: Եւ գաղտագողի՝ գիշերները կանանց և ծառաների միջոցով ներկել տալով իր ոտների մատերը, այսօրուայ սոցիալիստ կոմիսարը համ սոցիալիստ է, համ էլ ուղղափառ մահմեդական... Դրսում՝ ռուսների համար նա սոցիալիստ է, ներսում՝ իր թուրքերի շրջանում նա խնա դնող և մեծ նախանձախնդիր համիսլամ սրբութիւնների...*(տեքստը խզուած է)*

...Տեսնելով, որ մեր «Շտաբը» արդէն միանգամայն կորցրել է իրան՝ ես տուեցի գլխապետ Ժամհարեանին այդ յանձնարարութիւնը:

Ընդհանուր շփոթի և իրարանցման մթնոլորտում նետուելով յառաջ՝ գաւառապետ Ժամհարեան կռուի է բռնւում թիւրքերի հետ: Ես այլևս չը տեսայ այդ համակրելի երիտասարդին: Նորան վիճակուած էր պատուալից ընկնելու այնտեղ՝ ուր հայ սպաները լքելով հայ զինուորութեան շարքերը, փախչում էին անպատիւ և անամօթ:

Այդ վայրկեանում Աղէքսանդրեան մեծ փողոցում երևաց չորս լաւ ձի լծած մի կառք, որի գլուխը խորհրդալից ծածկւում էր: Կառքը անցնում էր կատաղի սրընթաց, հրելով և վայր ձգելով իր ընթացքում ալիքանման շարժուող բազմահազար գաղթականութիւն, և իր ճեպընթացութեամբ առաջ բերելով մեծ յուզմունք և մեծ խուճապ: Կառքի ծպտեալ տեսքը և անբարտաւան փախուստը, որ ոտի տակ էր տալիս խուճապով բռնուած ժողովուրդը՝ առաջ բերեց մեծ զայրոյթ: Բռնեցէք այդ լրբերին, լսուեց այստեղ ու այնտեղ, բայց մինչ այն՝ կատաղի ձիանքը թռցրեցին կառքը և նորա յետքը կորաւ...

Պարզուեց, որ այդ կառքում տեղաւորուել էին չորս սպաներ, որոնք թողել էին իրանց զօրամասերը ցիր ու ցան թշնամու հանդէպ, իսկ իրանք ժամ առաջ ուզում էին փրկել իրանց թանկագին կեանքը: Եւ նրանք ծածկել էին կառքի գլուխը՝ որպէսզի ժողովուրդը, ճանապարհի բազմութիւնը չը ճանաչէ նոցա...

Սեպուհի շտաբի պետ, գլխապետ Չիլինգարեան՝ մի համակրելի երիտասարդ, որ այդ րոպէին Կարսումն էր, տեսնելով այդ սպաների խայտառակ փախուստը և ճնշուելով որպէս սպայ ժողովրդի առաջ՝ կորցնում է հոգու «հաւասարակշռութիւնը» և անձնասպանութիւն գործում...

Գլխապետ Չիլինգարեան՝ մէկը հայ ազնիւ և սակաւաթիւ սպաներից, չը կարողացաւ տանել իր զինակից «գնդապետ» - «գլխապետ»-ների այդ հրապարակաւ ամօթալից փախուստը, և ի ծայր ջղայնանալով՝ իր կեանքի գնով ուզեց ամոքել հայ սպայութեան անօրինակ խայտառակութիւնը:

Այդչափ դրամատիկ էին այն րոպէները՝ երբ Կարսը ընկնում էր: Խելակորոյս և սարսափահար՝ բոլորը փախչում էին դէպի «Շտաբ», դէպի գեներալ Փիրումովի կայանը: Թշուառ ժողովուրդը կարծում էր դեռ՝ ոչ ամէն բան է կորած:

Նա դեռ չէր կորցրել իր հաւատը դէպի իշխանութիւնը, նա կարծում էր, որ այդ հրամանատարը կայ և նա ապաւինում էր նորան...

Բայց շպաբը արդէն գոյութիւն չունէր: Եթէ մինչև այսօր նա միայն մի ֆիկցիա էր, մի խաբուսիկ հմայք՝ այսօր երկրի առաջ նա կանգնում էր սնանկ և խեղճ: Եւ միայն այսօր էր հայ ժողովուրդը տեսնում՝ թէ ո՞ւմ էր յանձնուած երկրի բախտը, և ո՞վ էր առաջնորդում մեր ազգային և «հանրապետական» բանակը: Ձի նստած իմ մի քանի պաշտօնեաների ուղղեկցութեամբ՝ ես հազիւ շարժւում էի փողոցներով, որ հեղեղել էր ժողովուրդը: Շտաբի չորս կողմը ասեղ ձգելու տեղ չը կար, այնտեղ էին բոլորը՝ քաղաքացիք, գիւղերի ազգաբնակութիւնը, պաշտօնեաներ, սպաներ, զինուորներ: Շտաբի մեծ դահլիճում՝ այլայլուած ու լուռ, կանգնած էր գեներալ Փիրումով, գեներալ Ղազարեան, գեներալ Արարատով, Գարեգին եպիսկոպոս, Մինիստր Բաբալեան և մի քանի գնդապետներ: Եւ բոլորը ոչ միայն յուսահատ՝ այլև պապանձուած մարդկանց տպաւորութիւն էին թողնում:

Գեն. Ղազարեան Երևանից Կարս էր ժամանել միայն երկու օր առաջ: Միայն երկու օր առաջ՝ մեր բարձր հրամանատարութիւնը ստիպուած էր թիկունք ուղարկելու երկու ամիս շարունակ նահանջող գեներալ Յովսէփեանին, և նորա տեղ առաջաւոր զօրքերի հրամանատարութիւնը գեներալ Ղազարեանին յանձնելու:

Տեսնելով ինձ գեն. Ղազարեան՝ շատ հասկանալի հոգեբանական վերապրումներում ուզեց բացատրուել: Նա ուզում էր ասել, որ ինքը հրաշքներ գործել չէր կարող, որ նրան ռազմաբեմ էին կոչել՝ երբ ամէն բան վերջացել էր, և գեներալը մօտենալով ինձ՝ ասաց.- Մենք բանակ չունենք այլևս, ամէն բան վերջացած է...

Ես մի երկու հարցով դիմեցի միւսներին՝ բայց բոլորը տարուած էին իրանց մտքերով, և ոչ ոք պատասխանելու կարողութիւն չունէր կարծես: Այդ մեծ դահլիճը, որ տեսել էր այնչափ պարտութիւն, և վկայ էր այնչափ յաղթութիւնների՝ կորցրել էր կարծես բանականութիւնը:

Կարսի ամրութիւնների հրամանատարի այդ նշանաւոր սրահում՝ խմբուած աստիճանաւորները կորցրել էին արդէն հաւասարակշռութիւնը:

Նոցանից մի մասը քարացած կանգնած էր դահլիճի մեջտեղում, կարծէս անվերաբեր դէպի պատմական արհաւիրքը, իսկ միւսը աննպատակ և ջղայնալից՝ նետւում էր դէպի այս և այն դուռը, և կարծես թէ մի բան էր սպասում և մի բան անում...

Իսկ հազարաւոր ամբոխը, որ պաշարել էր հայկական զօրքերի հրամանատարի ապարանքը, և որի ջղայնացումը խելագարութեան էր հասնում՝ դեռ սպասում էր, և նորից իրան յոյսերով օրորում...

Եւ այդ օրհասալից րոպէում նա կարծում էր, որ կորաց չէ ամէն բան, նա կարծում էր, որ բարձր հրամանատարութիւնը ինչ որ մտածում է, ինչ որ չափում և ձևում է: Դրսում դեռ տարուած էին յաղթութեան յոյսով...

Այդ արտակարգ դրամատիկ մթնոլորտում՝ դահլիճի մի անկիւնից միւսը նետուելով դարձեալ աղմկում էր քաղաքագլուխ Նոհրատեան. - Պարոններ, խորհրդակցենք, ժողով գումարենք, բա ի՞նչ անենք, ժողով, ժողով...

Խեղճ Նոհրատեան կարծում էր երևի, որ ինքը դարձեալ դաշնակցական է՝ նորա Կարսի լիդերը, նա կարծում էր, որ և այսօր նա պէտք է տնօրինէ երկրի բախտը, և այդ րոպէում նա խօսում էր «ժողովի» մասին, դարձեալ երազում...

Բայց նորան լսող չը կար այլևս: Հրացանների ու ռումբերի տրաք տրաքոցը և աւելանում և մօտեցնում էր:

-Ձերդ Գերազանցութիւն, մօտեցաւ ինձ իմ Միլիցիայի տեսուչը, մի երկու րոպէ ևս և մենք այլևս հնարաւորութիւն չենք ունենայ անցնելու...

Ուղղելով քայլերս դէպի ելք՝ ես մի երկու դիմում էլ արեցի դահլիճում խմբուածներին, և ի ծայր վտանգալից տեսնելով դանդաղումը՝ ես նստեցի ձին և իմ ուղեկիցներիս հետ թողեցի Կարսի հռչակաւոր Կարադաղը: Իսկ մի 10 րոպէ անց՝ այդ Կարադաղը արդէն թիւրքերի ձեռքումն էր, և հայկական դրօշակին նորից վիճակուած էր գլխակոր իջնելու...

Այստեղ և այնտեղ պայթում էին ռումբերը, լացը և հեկեկանքը որպէս ոգալից զանգ՝ ծփում էր օդում, բոլորը խելակորոյս փախչում էին, և բոլորը թախծալից թողնում հայրական օջախը...

Իսկ այդ վայրկեանում դարձեալ կանգուն և դարձեալ խորհրդալից էր միայն Սուրբ Առաքելոց հռչակաւոր եկեղեցին: Կարս չայը նորից կատաղի և դարձեալ փրփրալից՝ քերում էր մեր դարաւոր սրբութեան պատուանդանը, իսկ նա դարձեալ անսասան և դարձեալ անխռով՝ կանգնած էր նոյն Կարադաղի տակ: Բագրատունեաց հարստութիւնից յետոյ պահպանելով հայկական սուվերէն ժառանգութիւնը՝ մեր հինաւուրց տաճարը վկայ է եղել բազմաթիւ տիրապետութիւնների: Տասը դար շարունակ յունաց, պարսից, հրովմայեցոց, թիւրքաց և ռուս դրօշակները յաջորդել են մէկը միւսին, և դարձեալ մի ապացոյց բերել Վանանդին, որ ոչինչ մշտենջանաւոր չէ երկնակամարի տակ...

Եւ այսօր նորից թախծալից դիտելով հայ ժողովրդի գաղթը հայրենի երկրից՝ Ս. Առաքելոց Տաճարը մնում էր դարձեալ իր տեղում, մնում էր պահպանելու նուիրական ժառանգութիւնը...

Բայց անիմանալի են Արազի ուղիները, և մենք ակամայ դարձանք դէպի մեր դարաւոր սրբութիւնը, և վերջին անգամ թողնելով Բագրատունեաց հռչակաւոր մայրաքաղաքը՝ մենք լուռ և պատկառալից բացեցինք մեր գլուխը այդ մամրացած սրբարանի առջևով անցնելիս...

Ժողովրդի հեղեղալից ...ը, մի րոպէ կարծես քարացաւ, կանգնեց՝ բոլորը բացեցին գլխները, բոլորը յուսալից հառաչեցին: Եւ մենք ժողովրդի հետ միասին՝ մեծահաւատ տրամադրութեամբ և շատ բարձր կորովով դէպի ժողովրդական բնազդը, վերջին անգամ խաչ հանելով, խոնարհալից անցանք այդ տաճարի մօտով:

Մենք թողնում էինք այնտեղ մեր հաւատը և մեր յոյսը, բայց այդ բոլորը թւում էր մեզ՝ ցը նոր ծիածան և մինչ նոր երազներ ու խանդավառ օրեր...

Եւ զարմանալի ջերմալից և սփոփող է հաւատը: Այդ հինաւուրց և մայրական խաչից և ապաւէնից յետոյ՝ մենք կարծէս թէ և թափուել և կազդուրուել էինք: Եւ մենք շարունակեցինք մեր ճանապարհը նոր յոյսերի և նոր վերապրումների բաբախումով...

Այդպէս էին այն վերջի րոպէները՝ երբ մենք թողնում էինք Կարսը:

Բնորոշելով դրութիւնը և հրամանատարութեան վերաբերմունքը դէպի պատերազմի բաբախումը՝ հետաքրքիր կը լիներ առաջ բերել այստեղ և հետևեալ փաստը:

Կարսի անկման օրը՝ 4-րդ բրիգադայի հրամանատար Սեպուհ Կարս էր: նախընթաց օրը՝ պաշտօնական գործով բարձր հրամանատարութեան միտումները իր անելիքների մասին պարզելու համար, նա եկել էր Կարս:

Ըստ երևոյթին՝ պատերազմական երկնակամարը, Կարսի մեր «Շտաբի» հեռադիտակով ոչինչ առանձին բան չէր գուշակում և զօրաւոր Սեպուհ, առաւօտուայ ժամի եօթին՝ Կարսի անկման օրը, նստում է աֆտոմոբիլ և մեկնում իր կայանը: Զօրքերի հրամանատարի Կարսի Շտաբը ոչ մի ծայրայեղ հրահանգ չէ տալիս Սեպուհին: Շտաբը կարծում էր, որ թնդանոթների բաբախումը մի անցնող, ժամանակաւոր զբաղեցուցիչ տեսիլ է, և ոչ մի տեղեկութիւն չունենալով տակաւին մօտեցած թշնամու մասին՝ նա չէր շտապում գէթ այդ օրը մի որևէ միջոցի դիմելու:

Սեպուհ, որ թիկունք էր ուղարկուած՝ չէր կարող ի հարկէ իրազեկ լինել ճակատի անցուդարձին: Նա մէկն էր այն մարդկանցից, որ գիտէր այդ «Շտաբի» իսկական արժէքը, բայց և այնպէս նա էլ չէր կարող երևակայել անգամ, թէ զօրաց բարձր հրամանատարութիւնը կարող է այդչափ անհոգ, եթէ չասենք այդչափ ապիկար լինել այդ օրհասալից օրը: Առաւօտուայ ժամի վեցին մեկնելով իր կայանը՝ Սեպուհ այցելեց Կարսի նահանգապետին: Մենք ջղայնալից, բայց շատ բարձր տրամադրութեամբ փոխանակուեցինք մեր տեղեկութիւններով և կարծիքներով օրուայ խնդրի մասին, և Սեպուհ մի ժամից յետոյ աֆտոմոբիլ նստելով ինձ հետ միասին՝ չէր կարող երազել անգամ, որ չորս ժամից յետոյ Կարսը ընկած կը լինի, և մենք նորա հետ տարագիր...*(տեքստը խզուած է)*

...Կապի զօրականների հետ, առանց սուրհանդակների, լրտեսների, տեղեկութիւնների, հերթապահ տելեֆոնիստների, հերթապահ աֆտոմոբիլների,

առանձին յանձնարարութիւնների սպաների և առանց օկուրան տեղեկատու մարմնի՝ նման էր աւելի մի անկեալանոցի, և ոչ երբէք ինքնակալ հրամանատարի կայանի:

Թողնելով Կարսը և դիմելով Սեպուհի կայանը՝ ճանապարհին մենք հանդիպեցինք հրետանու սպայ Բէկնազարեանին և մի քանի այլ սպաների, որոնք նոյնպէս զանազան ամրութիւնների վերայ ղեկավարում էին թնդանօթները:

-Դուք էլ այստեղ էք,- դարձայ ես սպայ Բէկզադեանին և միւս օֆիցերներին:

-Մենք ոչ մի հրահանգ, ոչ մի հրաման չէինք ստանում գեն. Փիրումովի Շտաբից, ասում էին ընկճուած սպաները: Երեկուանից մեզ նոյնիսկ չէին պատասխանում մեր հեռախօսին: Մենք տեսնում էինք, թէ ինչպէ՞ս մէկը միւսի յետևից դադարում էին գործելուց ամրութիւնները և նոցա վերայի թնդանօթները հերթով, մէկը միւսին լսելով լռում: Մենք դիտում էինք, թէ ինչպէ՞ս բոլոր ամրացած կայաններից զօրամասերը որպէս անհովիւ ոչխար՝ փախչում, գնում էին և մենք մեր ներկայութիւնը այդ պայմաններում մեր դիրքերում միանգամայն աւելորդ համարելով՝ վճռեցինք նոյնպէս թողնել և ժամ առաջ հեռանալ…

Դիմել «Շտաբ»՝ ասացին սպաները, մենք դարձեալ հնարաւորութիւն չունէինք, մեր տրամադրութեան տակ չը կար ոչ թէ աֆտոմոբիլ՝ այլ նոյնիսկ ձի: Բացի այդ բոլորից՝ մենք արդէն տեսնում էինք, որ բանակը փաստօրէն հրամանատար չունի, որ անիշխանութիւնը զօրաբանակում ակներև էր: Դիմել դէպի Կարս՝ ուր լքուած և փախչող զօրքը ստեղծել էր միայն դժոխք, նոյնիսկ վտանգալից էր, և մենք վճռեցինք ոտով հեռանալ լեռները և ապա Աղէքսանդրապօլ…

Այդպէս էր Կարսի «Շտաբը»՝ հայկական գործող բանակի այդ սիրտը և ուղեղը:

Եւ շարքային հայ զինուորը՝ անուանի և կարող իր անցեալում և բնոյթում, պէտք է ցաքան ու ցրիւ գար, անջատ իր ցանկութիւններից և քաջազնալից կորովից:

Արևը թեքուելու վերայ էր՝ երբ ես իմ ուղեկիցներով հասայ Մէլիքքէօյ գիւղը, որ Կարսից մի 15 վերստի վերայ էր, Կարս-Աղէքսանդրապօլ խճուղում:

Գիւղը վերացծուել էր մի մեծ պատերազմական կայանի: Նրա շուրջը սփռուած էր ճանապարհի ընթացքում հանգիստ առնող բազմահազար գաղթականութիւնը, ճանապարհի երկարութեամբ ձգւում էին շարժուող անթիւ սայլեր, բեռներ, ձիաւոր և ոտաւոր, և նոցա հետ միասին՝ շփոթալից և անհոգ զինուորների և սպաների բազմաթիւ խմբեր, … տարազով, բարխանով:

Որպէս բնութեան գաղտնիք իրօք՝ հարստութեան շուրջը միշտ բորբոքուել են իշխանալից և տիրող տրամադրութիւնները, և գուցէ դորանով պէտք է բացատրել, որ այդ հարուստ գաւառակներում փառքի և իշխանութեան ծարաւը միշտ շատ բարձր է եղել և միշտ անհագ:

Ազդեցութեան և առաջաւոր անուն հանելու համար՝ այդ թէ՛ կալուածատէր ազնուականները, և թէ՛ հարուստ գիւղացիները՝ միշտ մրցել են իրար հետ և միշտ ուտեցրել, կաշառել են ռուս պաշտօնեաներին, և իրանք այդ առանցքում իրար հետ հաշիւ տեսել:

Պէտք չը կայ ասելու, որ այդ մթնոլորտում կառավարել դժուար չէր: Պրիստաւները, գաւառապետները և միւսները բաժանում էին, և այնպէս տիրում ու կառավարում: Ռուս պաշտօնեաները թողնում էին այդ ազնուականներին և հարուստներին՝ մրցել և կռուել իրար հետ, վերապահելով նոցա իրանց հիւրասիրելու և շահելու արտօնութիւնը, այդ պաշտօնեաները մի անվիճելի ծառայութիւն էին մատուցում իրանց կառավարութեանը:

Վիճող և մրցող կողմերից ոչ ոք չէր երազում պաշտօնական գերիշխանութեան մասին: Այդ իրաւունքը անվճռաբէկ՝ պատկանում էր ռուսին, և այդ ուղութեամբ ոչ մի խօսք չը կար: Պետական յեղաշրջումը տակնուվրայ արեց բոլոր հասկացողութիւնները: Բոլորը ձգտեցին դէպի ինքնորոշում՝ բայց աւելի նախանձախնդիր և աւելի եռանդոտ էին այդ իմաստով այն ազնուականները, որոնք ժառանգութեան օրէնքներով տիրացան ռուս պաշտօնեաների իրաւունքները, և այսօր իրանք որպէս «յեղափոխական» և ազատալից կոմ*[ի]*սարներ՝ եկան վայելելու վաղեմի առատ և համով սեղանը...

Բայց ազնուական և կալուածատէր հայ կոմիսարը որպէս իշխանաւոր այսօր՝ չունէր ռուս պրիստաւի և ռուս գաւառապետի անվճռաբեկ համարումը: Վէճալից հրապարակը նրան մրցող հակառակորդ էր համարում, և այդ առանցքում խախտւում և գունատւում էին կոմիսարի իշխանական իրաւունքները:

Այդ տրամադրութիւնից օգտուեցին դրսի խռովարարները, Բագուի համիսլամականութիւնը, և գրգռեցին թուրք ֆանատիկոսութիւնը:

Կովկասի սկզբնական ռուս կառավարութիւնը՝ օզակոմը, կարողութիւն չունեցաւ ըմբռնելու երկրի այդ վերապրումները: Այդ օզակոմը տարուած և ինքնագոհ՝ գնում էր իր օրերի հոսանքի յետևից, և ջերմագին ծափահարում միայն հրապարակի բոլոր գունալից տեսիլներին: Այդ մթնոլորտում երկրի իշխանութեան համարումը ընկաւ ի սպառ, և ճարպիկ ու լարախաղ մարդիկ՝ «ազատութիւն» և «յեղափոխութիւն» գոռալով, հրապարակում, տալիս *[էին]* միայն էժանագին ծաղրածու ներկայացումներ... Վեդիի, Զանգիբասարի և Արազդայեանի բոլոր թուրք և քուրդ երիտասարդ աւազակները՝ բոլորը յանկարծակի «սօցիալիստ» և «յեղափոխական» դարձան: Նրանք անցան Վեդիի լեռները և Արազդարայի Ղամիշով ծածկուած ճահիճները, և այդ տարածութեան վերայ ինքնորոշուելով՝ այդ գաւառակները յայտարարեցին ազատ և անկախ հանրապետութիւն...

Այդպէս էր դրութիւնը Երևանի գաւառի այդ անկիւնում հայկական իշխանութ-եան նախօրեակում: Մեր կառավարութիւնը, դիլիկատ կամ գուցէ «դեմօկրա-

տիկ» միտումներով՝ հարկ չը համարեց հենց սկզբից համակուելու իր սուվերէն իրաւունքներով: Նա սրտոտութիւն չունեցաւ ասելու՝ յեղափոխութիւնը վերջացաւ և երկրի նոր իշխանութիւնը գալիս է կերտելու նոր օրէնքներ և նոր կենցաղ:

Եւ անվճռաբեկ իր իշխանալից ձեռքը առնելով երկրի ղեկը՝ կառավարութիւնը պէտք է գար անսասան կառավարելու և ոչ խորհրդակցելու ու վիճելու մարդկանց հետ:

«Պարլամենտի» մեր «պատգամաւորները» և այնտեղ կարծում էին, որ Զանգիբասարում «քաղաքական հոսանքներ» կան և հարկ էին համարում, հաշուի առնելով այդ «հոսանքները»՝ նոցա հետ «կոնտակտ» կայացնելու: Եւ այստեղ նորից պարտուեց մեր պետականութիւնը:

Զանգիբասարում կային հին և նոր աւազակներ, կային փառքի և իշխանութ-եան համար մարտնչողներ, այդտեղ էին եկել Բագուից թուրք քաղաքական շարլատանները, և նկատելով հայկական կառավարութեան երերուն և ոչ իշխանալից տրամադրութիւնը՝ այդ բոլոր «հոսանքները» «բլոկ» կազմելով, մեծ թափով գրոհ գործեցին հայկական իշխանութեան վերայ: Այդ օրերում Երևան եկան և թուրքերի, Բագուի «դիւանագիտական» ներկայացուցիչ*[ներ]*ը: Բայց այդ «հիւպատոսարանը» մի դարան էր միայն, ուր ձևակերպւում և ուղղութիւն էր ստանում Զանգիբասարի հակահայկական խմորը: Այդ «հիւպատոսարանը» զբաղուած էր բացառապէս խռովալից մեր դէմ ինտրիգներով և նրա միջոցովն էր անցնում այդ վայրը «թիւրք օրիենտացիան», թիւրքաց ռազմագիտութիւնը, Բագուի ագիտացիոն ոսկին և Տաճկաստանի ապագայ միտումները:... (*առկայ է տեքստի խզում*)

...իւր ժամանակին իր հայրը, իշխելու ու փայլելու, նա յեղափոխական կօմիսար դարձաւ Երևանի նահանգի համար: Նա կարմիր ժապաւէնով միայն քօղարկել էր իր թուրք անհամբեր և մոլեռանդ դէմքը, և հայերը շատ շուտ տեսան, որ այդ «յեղափոխականը» նախկին պրիստաւի եղբօր կալուածատէրի որդին է: Հայկական իշխանութեան օրով նա չքացաւ ծափերի ասպարէզից, բայց ես ուզեցի օգտագործել այդ ընդունակ, խորամանկ, ճարպիկ և կապեր ունեցող թուրք երիտասարդին: Նա չէր նստում իմ ներկայութեամբ, իսկ ես իմ վարչական միտումներում՝ տրամադրուած չէի խախտելու այդ ամօթխածութիւնը: Ես պատուիրեցի Երևանի իմ թուրք բարեկամներից մէկին՝ ուղարկել երիտասարդին ինձ մօտ: Յիշեցնելով նորան իմ հին բարեկամութիւնը նորա հօր և ազգականների հետ՝ *[ա]*սացի, որ պարտաւորութիւն եմ զգում հովանաւորելու նորան կեանքի ձախորդ ալիքներից պահպանելու համար, և Կարսի գաւառապետի օգնական նշանակեցի: Հազիւ թէ պետք է ասել, որ այդ անուն ունեցող թուրքի միջոցով ես կը տանէի թուրք վայրերում իմ գիծը: Բայց ես պէտք է կատարէի մինիստրի խնդիրը, և ուղարկեցի երիտասարդին Երևան: Նա նշանակուեց Երևանի գաւառապետի օգնական, և նրան յանձնարարուեց Զանգիբասար կառավա-

ռել: Ինչպէս յետոյ պարզուեց, այդ ընդունակ և պէտք երիտասարդին՝ նորա մօտ իշխանաւորը չը կարողացաւ սանձերի մեջ պահել: Երիտասարդը շատ շուտ զգաց, որ ինքը ինքնագլուխ է, նա իր շուրջը հեղինակութիւն չը տեսաւ, որի առաջ նա կարող էր խոնարհուել և նրա մէջ մեծ չափով առաջ եկաւ արկածալից թուրքը...: Նա երկծայրանի սուր դարձաւ Երևանի վարչութեան համար, և աւելի խճճելով առանց այն էլ անիշխան դրութիւնը Զանգիբասարում՝ Սուլթանով փախաւ Բագու, չարիքի փոքրագոյնը ընտրելով իր համար այդ անյոյս դրութեան մէջ...:

II

Այդ օրերում Զանգիբասարի բորբոքումը հասնելու վերայ էր: Իւր ժամանակին փափուկ համարելով դեմօկրատիկ կառավարութեան համար կուրսը դէպի աջ այդ աւազակ և արկածալից վայրում՝ հայկական կառավարութիւնը այժմ հարկաւոր գտաւ ուղղելու իր վրիպումը զրահակիր բռունցքով: Եւ մի երկու արտակարգ անյաջող գրոհից յետոյ դէպի այդ չարաբախտ Զանգիբասար՝ այդ վայրում հռչակուելու վիճակը ընկնում է Ռուբէն փաշային:

Այդ օրերում փաշան ամենակարող մարդն էր մեր աշխարհում, նա և զօրաց և ներքին գործոց մինիստր էր, նա ձևակերպել էր իր ձեռքում օրերի իմաստը, ու դաշնակցութեան վիճակային ատեանը՝ բիւրօն, կառավարութիւն դարձնելով: Փաշան դիկտատորի անպատասխանատու պատուանդան կապեց իր համար:

Զանգիբասարը Ռուբէն փաշայի օրուայ լօզունգն էր, և թմբակահարելով այդ ուղղութեամբ՝ նա պատերազմական տրամադրութիւն ստեղծեց երկրի մթնոլորտում: Բայց նրա զօրաբանակին կցուեցին շրջանի բոլոր թալանչիները, և երբ դիկտատօրը փողահարում էր դէպի գրոհ՝ օդում արձագանք էր տալիս գիշատիչի դէպի թալան մեծ ախորժակը:

Երևանի բարձունքներից սկսուած մինչև Արազդայեան և Շարուր՝ փաշան անցաւ սրով և հրով մաքրելով երկիրը դարան մտած արկածախնդիր թուրքերից: Ամէն տեղից լսուեց թուրքերի մեղան՝ բայց այդ արդէն ուշ էր, դադարեցնել երկրի տարերային և վրէժալից հոսանքը դէպի թուրք վայրերը՝ անհնարին էր: Ճշմարտութիւնը պահանջում է ասել, որ թուրք ըմբոստ վայրերի այդ անխնայ և կայծակահար մաքրումը սկզբում շատ բարձր տրամադրութիւն առաջ բերեց երկրում: Որոշ չափով բաւարարուած էր հայ ժողովրդի մեջ պետական պատուախնդրութիւնը, և կառավարութեան համարումը կարծես թէ վերականգնում էր: Բայց այդ մի հետաքրքիր տեսիլ էր միայն՝ անցնող և դառնալից իր հետևանքներով: Այդ հրավառ պատկերը աւելի զգայնալից էր՝ քան բանիմաց և մտածուած: Քաղաքական և պետական միտումները մեր զօրաբանակի և նրան ուղեկցող խառնիճաղանճ ամբոխի մեջ շատ շուտ վերածուեցին հարստահար

թալանի: Մի ակնթարթում կարծես մարեց պատուախնդիր բարձր տրամադրութիւնը, և մենք մոռացանք մեր սուվերէն պետական կոչումը: Վրէժը պարունակում է ճշմարտութեան գաղափարը: Ժողովրդի բարոյական հասկացողութիւնների սաղմում նա ունի իր պատուաւոր ասպետ տեղը: Այդպէս էր համակուած երկիրը Զանգիբասարի արշաւի նախօրեակում: Բայց այդ տրամադրութիւնը շատ շուտ վերածուեց թալանի, և այնուհետև դժուար էր ասել՝ ի՞նչ հոսանք է անցնում Արաքսի աւազանով: Կառավարութեան զօրաբանակը, որ կոչուած է կարգ և իշխանութիւն վերականգնելու՝ թէ մի մեծ խառնիճաղանճ հորդայ, որ գալիս է թալանելու և լափելու երկրի մեծ հարստութիւնը...: Որպէս դէպի մի առատ հունձ՝ ռազմաբեմ թափուեցին սայլերով, բեռնակիր անասուններով, մեծ ջուալ-մեշոկներով, և թնդանօթներից տարածուող ծխի հետ միասին՝ այդ վայրից հոսում էր երկրի անհուն հարստութիւնը, անթիւ գորգեր, տաւար, ոչխար, բրինձ, մետաքս, անօթներ և ամէն տեսակի արժէքաւոր: Բայց արդէն Շարուրի դարբասների տակ՝ լիացած և կշտացած բանակը և ամբոխը տրամադրութիւն չունէին արդէն առաջ շարժուելու, և այստեղ պարտուեց Ռուբեն փաշայի դափնալից ընթացքը դեպի Հին Նախճաւան:

Անկարելի էր այլևս գաղափարական տրամադրութիւն ստեղծել բանակում: Մթնոլորտը տոգորուած էր թալանի իմաստով, և խախտելով կառավարութեան կորովը և համարումը՝ տանում էր մեզ դէպի անդունդ:

Շատ շուտ պարզուեց Ռուբէն փաշայի խաբուսիկ քաղաքականութեան բնոյթը, նա չէր հանգում պետական մտածուած և մշակուած խորալից սիստեմում: Զանգիբասարի վերջի պատմուածքը աւելի հայդուկ արկած էր՝ քան կառավարչական լուրջ ակտ:

Գեներալ Նազարբեկով՝ հայկական բանակի այդ բեմուրազ և անբախտ սպարապետը, պատմում էր տողերիս գրողին, որ Զանգիբասարի արշաւը կատարուել է առանց իր անմիջական միջամտութեան: Ռուբէն փաշան տարուած իր ծփալից լիազօրութիւններով՝ հարկաւոր չէր համարում հաշուի առնելու զօրքերի հրամանատար գեներալ Նազարբեկովին, և ռազմական կարգադրութիւնները Զանգիբասարի աւանտիւրայում ինքն էր անում: Ինձ զեկուցում էին՝ ասում էր ծերունի սպարապետը, փաշայի կարգադրութիւնների մասին կատարուած փաստից յետոյ, իսկ դրսում կարծում էին, որ այդ անյաջող զինուորական արկածների հեղինակը զօրքերի հրամանատարն է: Զանգիբասարը մաքրելուց յետոյ՝ ասում էր գեներալ Նազարբեկով, ինձ համար շատ պարզ էր բանակի դրութիւնը, և շատ հասկանալի մթնոլորտի հոգեբանութիւնը: Ես ոչ մի կերպ չէի կարող համաձայնուել, որ մենք շարունակէինք մեր մարշը: Ես բացատրեցի՝ ասում էր գեներալ Նազարբեկով, զօրաց մինիստր Ռուբէն փաշային, որ լիացած և մեծ բեռներով Զանգիբասարից դարձող մարդիկ ոչ մի տրամադրութիւն չունեն այս րոպէին յառաջ գնալու, և այդ մարշը արկած իր բնոյթում՝ կազմալուծեց

միայն մեր բանակը և շատ փափուկ դրութիւն ստեղծեց կառավարութեան համար: Բայց մինիստրը տրամադրութիւն չունէր կարծիքներ լսելու, և հմայուած իր արդէն գունատուող դափնիներով՝ նա առանց իմ գրութեան հրաման է արձակում մեր առաջաւոր մասերին յառաջ շարժուելու: Եւ այդ արկածալից հրամանի մասին զօրքերի հրամանատար Նազարբեկով իմանում է միայն միւս օրը, և իրան շատ անյարմար զգում ի հարկէ իր շտաբին առաջ: Պէտք է ասել արդեօք, որ իրերի այդ դրութեան առանցքում զինուորական և առհասարակ պետական դիսցիպլինան խախտուում և երերուում էր, խանգարուում էր հրամանատարութեան աստիճանալից իմաստը, և ենթական զգում էր, որ իր անմիջական իշխանաւորը՝ այս դէպքում սպարապետը, միայն մի ֆիկցիա է և ոչ հրամանատար: Եւ գեներալ Շելկովնիկով՝ մեր առաջաւոր մասերի առաջնորդը, յամենայն դէպս սպայական աստիճանների երկար շարք անցած զինուորականը, և սովոր պատշաճ իշխանութիւնից դիզլօկացիայ ստանալ՝ ստիպուած էր շարժուել դէպի Շարուր: Բայց այդ մարշը արդէն երերուն էր: Դասալքութիւնը աճում էր օրեցօր, և աւելի քան պարզ էր, որ այդ տրամադրութիւնը պարունակում է իր մէջ մեր մօտալից պարտ-ութեան բոլոր տուեալները: Երբ այդ օրերում՝ պատմում էր գեներալ Նազարբեկով, Զօրաց մինիստր Ռուբէն փաշան պճնալից տօնում էր իր յաղթութիւնները և փառքը՝ նա հարկաւոր համարեց այդ առիթով արքայական ակտ կատարել: Եւ ի թիւս այլ «հերոսների»՝ մինիստրը արդարացի գտաւ իր բարձր ուշադրութիւնը ուղղել և դէպի Կարսի պարետ, կօմենդանտ գեներալ Փիրումով:

Նա հեռագրով աւետեց գեներալին, որ այն ջանալից և իմաստաւոր ծառայութեան համար, որ գեներալը մատուցել է հայ ազգին և հայ կառավարութեանը՝ նա, Հայաստանի դեկտատօրը՝ ամենաողորմածաբար շնորհում է գեներալ Փիրումովին աւագ զօրավարի աստիճան: Եւ միայն միւս օրը՝ պատմում էր մեզ սպարապետ Նազարբեկով, նա տեղեկացաւ իր համար այդ միանգամայն անսպասելի և տարօրինակ նորութեան մասին: Աւագ զօրավարութիւն էր շնորհուում մի գեներալի՝ որի զեղծումների մասին այնչափ հատորներ էր գրուած, որ կազմալուծեց Կարսի բանակը, և այնպէս անփառունակ վերջացրեց իր հրամանատարութիւնը՝ Կարսի պարիսպների տակ:

Շատ և շատ ցաւում եմ՝ վերջացրեց գեն. Նազարբեկով, որ իւր ժամանակին ես չը հրաժարուեցի պաշտօնից: Ճակատագրին հաճոյ էր երևի ծաղրելու ինձ, ես հրամանատար էի միայն նօմինալ՝ իսկ քննադատ նիզակները թափւում էին իմ չորս կողմը և ջարդւում հայկական սպարապետի իմպօզանտ հմայքի շուրջը...

Այդպէս է բնորոշւում Զանգիբասարի պատերազմական պատմուածը հայկական սպարապետի բացատրութիւններում:

Բայց եթէ Զօրաց մինիստրը որոշ չափով պատրաստուեց արշաւի համար՝ նոյն փաշան, որպէս մինիստր Ներքին գործոց՝ գնաց դէպի Զանգիբասար, Շա-

ռուր և ապա Հին Նախճաւան, անպատրաստի և միանգամայն անհոգ այդ իմաստով:

Բնածին զինուորական համարելով իրան՝ Ռուբէն փաշան երկրի ներքին գործերը move ton էր համարում: Եւ իր այդ պօրտֆելը, որպէս մի աւելորդ և երկրորդական յաւելուած՝ նա անցողակի տալիս էր սրա և նրա ձեռքը, իրան վերապահելով միայն ներքին գործ. տիտղոսը: Հայկական անփառունակ «կեսարը» կարծում էր, որ Զանգիբասարը, Շարուրը և Հին Նախճաւանը ինքնաբերաբար կը կառավարուեն նրա հեղինակալից և անվճռաբեկ տիտղոսի ստուերում, և նա գնաց այդ վայրերը առանց որևէ վարչական նախապատրաստութեան:

Նա ոչ մի ադմինիստրատիւ, վարչական ծրագիր չունէր այդ գաւառները կառավարելու համար, նրան չէին ուղեկցում ապագայ գաւառապետները և քաղաքացիական միւս պաշտօնեաները: Փաշան մոռացաւ երևի, որ այսպէս թէ այնպէս նուաճելով երկիրը՝ նա վերջացած պէտք է համարէ այնտեղ իր զինուորական լիազօրութիւնները, և այնուհետև պէտք է ծաւալուէին նրա վարչական և քաղաքացիական ընդունակութիւնները: Բայց Զօրաց և Ներքին գործերի հզօր ինքնակալը՝ այդ շինարար աշխատանքը աւելորդ համարեց իր շառաչող և աղմկող սրի համար, և նուաճուած երկրները անիշխանութեան և իր «գնդապետների» կամայականութեանը մատնելով՝ նա սպառնալիք ստեղծեց իր զօրքի համար:

Երբ մեր բանակի առաջաւոր մասերը կանգնած էին արդէն Հին Նախճաւանի դարբասի առաջ՝ յանկարծակի միտք է յղանում այդ վայրի համար մի կարող գաւառապետ գտնելու: Եւ մինիստրի յանձնարարութեամբ հեռագրով խնդրում են Կարսի նահանգապետին՝ Հին Նախճաւանի գաւառապետի պաշտօնը առաջարկել Արդահանի շրջանապետ գնդապետ Կադիմովին: Բայց այդ հեռատես թուրքը ձեռնպահ մնաց այդ առաջարկութիւնից՝ թողնելով Շարուր - Նախճաւանի բորբոքալից խմորը աւելի կարող մարդկանց: Երբ մենք կանգնած էինք Հին Նախճաւանի առաջ՝ և այնտեղի թուրքութիւնը իրարանցման մէջ էր, երևան եկան այդ վայրի երկու կարծեմ, անուանի ներկայացուցիչները՝ մեր կառավարութեան հետ բանակցելու համար:

Մեզ թւում է, որ այդ պատուիրակներին պէտք էր ընդունել վեհանձն բայց իշխանալից, և մեր սուվերէն յօնքերի բարձրութիւնից նոցա շոյալից խօստումներ տալով՝ նոցա պէտք էր պահել Երևանում, որպէս պատուաւոր պատանդ, մինչ կը կարգաւորուէր տեղում մեր վարչական կազմակերպութիւնը, և մինչ մենք երկիրը մեր ձեռքը կ՛առնէինք:

Բայց այդ պատուիրակների հետ միայն խօսեցին, հաշուի չառնուեց ի հարկէ թուրքի և Արևելքի հոգեբանութիւնը, և այդ *(առկայ է տեքստի խզում)*...ընկել ճաշակելու մեր ազգային և պետական բոլոր դառնութիւնները, Տէր Մինասեան յամենայն դէպս մէկն էր այն սակաւաթիւ դաշնակցականներից՝ որոնք անկա-

շառ էին, անկեղծ և համակուած մոլեռանդ հաւատով դէպի մեր ազգային հնագոյն սրբութիւնները:

Այդպէս էր մեր անյաջող երկրորդ մարշը դէպի Հին Նախճաւան... *(փաստաթուղթը վնասուած է)*

...մարդիկը վերադառնալով նորից ըմբոստացան՝ տեսնելով մի կողմից մեր անկազմակերպ դրութիւնը, և միւս՝ մեր երերուն և ոչ հրամանալից գործելակերպը: Եւ մեր իշխանութիւնը պարտուեց, և այս անգամ երկու սխալների առանցքում՝ զինուորական անիշխան մթնոլորտում և վարչական անպատրաստ և անհոգ վերաբերմունքի շնորհիւ: Ռուբէն փաշան կարողութիւն չունեցաւ սահմանագծելու իր զինուորական և քաղաքացիական իրաւասութիւնները: Նրա մէջ մեծ թափով բռնկուել էր վաղեմի ասպետ հայդուկը, և սուրը բարձր քաշած՝ նա շատ մեծ տրամադրութեամբ դէպի փառք և անուն, նետուեց յառաջ ու դէպի անդունդ... Անպայման ընդունակ՝ կայծակալից հայրենասէր, և մէկը այն մարդկանցից՝ որոնց վիճակ էր ...*(Շարունակութիւնը բացակայում է)*

ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 14, թթ. 1-52, բնագիր, ձեռագիր:

DOC №15

Յուշեր՝ Դրոյի, Սեպուհի զօրագնդերի և Կարսի անկումից յետոյ Ջաջուռի բարձունքներում թուրքերի վրայ նրանց յարձակման մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***...Գեներալ Յովսէփեան և գնդապետ Միրիմանով՝ մինչ այդ բարեկամ դաշնակիցներ Կարսի բուրալից մթնոլորտում, ուր բաժանելով «ազդեցութիւնների շրջանները» քրդական հարուստ վայրերում՝ նոցանից ամէն մէկը իր համար էր հնձում, այսօր մեր նահանջի այդ երկու տխրահռչակ հերոսները թշնամիներ էին և հակառակ իրարու:***
- ***Այդ միջոցում հայոց աշխարհի անիշխանութիւնը կարծես ծաւալուել էր ծայրից ի ծայր, և հրապարակում մնում էր մի անխռով դէմք միայն՝ և այդ Դրոն էր:***
- ***Երբ Սեպուհ Ջաջուրի լեռներում անսպասելի նետւում է թիւրք գումարտակների վերայ՝ Քեազիմ Կարաբեկիր հիմք ունէր կարծելու, որ այդ հայկական զօրաբանակի գլուխն է միայն, նրա առաջաւոր մասերը:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Կարսի անկումից յետոյ հայկական կառավարութիւնը փաստօրէն գոյութիւն չունէր: Երերուն և անսիստեմ իշխանութիւնը փլեց Կարսի պարիսպների տակ, և այնուհետև երկրի դրութեան մասին երկու կարծիք չը կար այլևս: Անիշխանութիւնը բռնկել էր գաւառները և կառավարութեան համարումը ընկել էր միանգամայն, և զօրաբանակ մենք չունէինք այլևս, կային զօրամասերի ցրիւ ու ցաքուն խղճալի մնացորդներ միայն, բայց այդ հատուկենտ մասերն էլ հալւում ու չքանում էին օրեցօր: Հրամանատար կազմը՝ մեր թշուառական սպայութիւնը, կանգնած էր հրապարակում իր բոլոր խղճալի սնանկութեամբ: Նոցանից մի մասը շարունակում էր տենդոտ կարգի բերել իր թալանածը, միւսը դարձեալ օգտւում էր խառնաշփոթ մթնոլորտից, իսկ մի բուռն խռովարարներ՝ բացի այդ դարձեալ շարունակում էին իրանց ինտրիգները, կռւում իրար հետ և մի աւելորդ անգամ խո...ոտում հրապարակով

...Գեներալ Յովսէփեան և գնդապետ Միրիմանով՝ մինչ այդ բարեկամ դաշնակիցներ Կարսի բուրալից մթնոլորտում, ուր բաժանելով «ազդեցութիւնների շրջանները» քրդական հարուստ վայրերում՝ նոցանից ամէն մէկը իր հա-

մար էր հնձում, այսօր մեր նահանջի այդ երկու տխրահռչակ հերոսները թշնամիներ էին և հակառակ իրարու:

Այդ օրերում, երբ հայկական բանակը իր կառավարութեան հետ միասին վերապրում էր հոգեվարգի րոպէներ՝ միանգամ ևս փոփոխուեց զօրքի դիսլօկացիան:

Արաքսի հոսանքով սփռուած զօրամասերը ենթարկւում էին Դրոյի հրամանատարութեանը, իսկ միւսները, որ գտնւում էին դէպի հիւսիս՝ ենթակայ էին Սեպուհին: Այդ միջոցում հայոց աշխարհի անիշխանութիւնը կարծես ծաւալուել էր ծայրից ի ծայր, և հրապարակում մնում էր մի անխռով դէմք միայն՝ և այդ Դրոն էր: Դրօ՝ մեր հայդուկ տրամադրութիւնների քմահաճ բեկորն էր: Արկածալից անցեալը պողպատել էր կարծես նրա յանդուգն ջղերը: Եւ բախտի այդ սիրելին՝ տարբերւում էր կայծակալից մթնոլորտում որպէս միակը այն մարդկանցից, որի ձեռքում դեռ մնում էին մեր վաղեմի ոյժի մնացորդները...

Ասում էին, որ Դրօ, ընդունելով այդ տարածութեան հրամանատարութիւնը՝ ուզում էր պաշտօնանկ անել թէ գեն. Յովսէփեանին և թէ գնդ. Միրիմանովին: Յամենայն դէպս նա ցրեց այդ երկու մեծ ինտրիգանտներին և գէթ դորանով մասնակի բաւարարեց րոպէի յուզուած պահանջը:

Բայց երբ Արաքսի ափերում այդ գեներալը և այդ գնդապետը կռւում էին իրար հետ, և դորանով զբաղեցնում իրանց կազմալոյծ զօրամասերը՝ Արփաչայի աւազանում բռնկւում է մի այլ տեսիլ, որ ոչ պակաս բնորոշ էր հոգեբանական իմաստով:

Սեպուհ՝ հրամանատար այդ թևի զօրաբանակի, երկրի խորին անյոյս մթնոլորտում բռնկւում է մի արկածալից տենդով: Թողնուած իր բախտին՝ անթիկունք և անպահեստ, նա իր հատուկենտ գումարտակներով և իր պատասխանատուութեամբ փորձում է wo banc *[va banque]* գնալ:

Եւ զինադադարի նախօրեակում անսպասելի և յանկարծակի յարձակուելով Ջաջուռի բարձրունքներում Տաճկաց առաջաւոր զօրամասերի վերայ՝ նա ծիածանում է մի ակնթարթով մեր խռովալից հորիզոնը յուսալից վերապրումներով:

Ինչպէս և պէտք էր սպասել՝ Սեպուհ պարտւում է, բայց այդ պարտութիւնը այնուամենայնիւ ունէր իր բարոյական իմաստը: Սեպուհի այդ յանկարծակի յարձակումը՝ Կարաբեկիր փաշայի կայանում առաջ է բերում մեծ յուզմունք, և թիւրքաց հրամանատարը շտապում է Կարսում բանտարկել [*հայ գողամարդկանց*] և նոցանից զէնքի ընդունակներին շտապ ուղարկել Էրզրում: Այդ միջադէպը գալիս էր մի անգամ ևս ասելու, որ ճիշդ էր Կարսի նահանգապետի նախնական հաղորդագրութիւնը, որ Կարսի վերայ արշաւող Տաճկաց զօրաբանակը բաղկացած էր միայն 4-5 հազարից:

Երբ Սեպուհ Ջաջուռի լեռներում անսպասելի նետւում է թիւրք գումարտակների վերայ՝ Քեազիմ Կարաբեկիր հիմք ունէր կարծելու, որ այդ հայկական զօ-

ռաբանակի գլուխն է միայն, նրա առաջաւոր մասերը: Թիւրքաց հրամանատարը կարծում էր, որ մենք նահանջելով՝ կարգի բերեցինք Արփաչայի հովտում մեր դրուած ոյժերը, մեծ բռունցք կապելով՝ կարող ենք ոչ միայն ջարդել նորան, այլ և ծուղակի մէջ ձգել:

Կարաբեկիր ոյժ չունէր, նրա հրամանատարութեան տակ կար միայն 4-5 հազար կանոնաւոր զօրք, իսկ Կարսի ռազմաբեմում հայկական հրամանատարութիւնը կենտրոնացրել էր յամենայն դէպս ոչ պակաս քան 20 հազարանոց բանակ:

Այդ էր պատճառը, որ Սեպուհի յարձակման ռոպէում Կարաբեկիր շտապեց Կարսում խստութիւններ գործ դնել, և զէնքի ընդունակ հայերին թէ Աղէքսանդրապօլից և թէ Կարսից սկսեց շտապ Էրզրում ուղարկել:

Թիւրք հրամանատարը հիմք ունէր կարծելու, որ հայերը յարձակում են գործում նրա վրայ բոլոր կողմերից, և հաշուի առնելով իր թոյլ ոյժերը՝ նա մեծ իրարանցման մէջ ընկաւ:

Ի հարկէ Սեպուհի քմահաճ մարշը դէպի Ջաջուռ՝ թէ ռազմական և թէ վարչական տեսակէտից մի զաւեշտ արկած էր միայն, և անթոյլատրելի ի հարկէ կարգապահ իմաստով, բայց նա առիթ տուեց մեզ համոզուելու, որ Կարաբեկիր ոյժ չուներ և ...

ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 15, թթ. 1-6, բնագիր, ձեռագիր:

DOC №16

Յուշեր՝ Կարսի անկումից յետոյ թուրքերի ներկայացրած զինադադարի պայմանների, երկրի գերագոյն իշխանութիւնը Դրոյին յանձնելու, ռուսական կողմնորոշման, Բագուի արտակարգ յանձնաժողովի նախագահ Շախթախթինսկու, Թիֆլիսի հայ մտաւորականութեան և այլ հարցերի մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***...թիւրքաց ծառայութիւնից հաղորդեցին մեզ, որ ռուս զօրքերը հայ մեծամասնականների առաջնորդութեամբ գրաւել են Դիլիջանի ձորը և ընդհարուել Սեպուհի զօրամասերի հետ:***
- ***Հայաստանից անջատւում էր ամբողջ Կարսի նահանգը, Երևանի նահանգի Սուրմալուայի, Հին Նախճաւանի և Շարուրի գաւառները:***
- ***Յուշագրի մէջ թիւրքերը միանգամայն հերքում էին մեր իրաւունքները Տաճկա-Հայաստանի վերաբերմամբ:***
- ***Նրանք չնչին թուի էին հասցնում հայ ազգաբնակութիւնը, և ի բացատրութիւն այդ բոլորի՝ աւելացնում էին, որ հայ ժողովուրդը ոչինչ ինքնուրոյն բան չունի, որ նա չունի նոյնիսկ իր երաժշտութիւնը, որ հայը չէր կերտում՝ այլ միայն ընդօրինակում...***
- ***Մենք չէինք ընկել կռուի դաշտում, չէր ընկել և Կարսը: Աշխարհի այդ առաջնակարգ ամրութիւններից մէկը ո՛չ պաշարուել էր և ո՛չ ռմբակոծուել թշնամուց:***
- ***Բայց հայ զինուորը, և առիւծ և հլու՝ երբեմն պարծանք ռուս գումարտակների, չը ստացաւ ազգային դաստիարակութիւն իր հայրենի զօրաշարքերում:***
- ***Իսկ մենք ոչ մի կերպ չէինք կարող կարծել, որ երբեմն այնչափ սրտոտ և այնչափ խիզախ դաշնակցութիւնը՝ կարող էր այնչափ շուտ կորցնել իր 30 տարուայ խռովալից հաւասարակշռութիւնը, և այնպէս անփառունակ հրապարակից իջնել...:***
- ***Մենք ձևի համար միայն հակադրեցինք թիւրք պատգամաւորութեանը մի քանի պահանջներ, առարկեցինք թիւրքաց մի քանի յայտարարութիւնների դէմ: Հրամանատարը համաձայնուեց մի քանի աննշան ուղղումներ անելու համաձայնութեան ակտի մէջ, և Դեկտեմբերի երկուսին, գիշերուայ ժամի մէկին՝ մենք ստորագրեցինք այդ ծանր և չը տեսնուած պայմաններում կնքուած համաձայնութիւնը...***

- *Երբ մենք այցելութեան գնացինք տաճկաց հրամանատարին՝ նրա առանձնասենեակից դուրս էր գալիս Մդիվանին:*
- *Ցայտուն ազգային Աղէքսանդրապօլը՝ քարացել և չքացել էր:*
- *Հայ դաւաճանների ցուցմունքով՝ կալանաւորւում և վագոններն էին նեփուում Էրզրում ուղարկելու համար բոլոր հայ երիտասարդները, իսկ հասակաւորները, հայ ցայտուն ազգասէրները որպէս ցաւագարներ՝ «դաշնակցական» մեծահամբաւ տիտղոսի տակ, կցւում էին նոյն զինուորացուներին և քշւում Էրզրում:*
- *Աղէքսանդրապօլի և նրա գաւառի հայկական պաշտօնեաները կամ կալանաւորուած էին Մդիվանու դերեկտիւներով՝ կամ փախել էին:*
- *Ռուսաստանը և Թիւրքիան, ոխերիմ թշնամիներ՝ բարեկամ դիմակաւորուած այսօր, համայնօրէն խեղդում էին նորածին Հայաստանը:*
- *...այդ նախերգանքն էր այն աշխատանքների, որ պէտք է կատարէին ռուս սուինները հայ դաւաճանների առաջնորդութեամբ Երևանում և մեր երկրի միւս մասերում:*
- *Դեռ 19 թուի վերջերում՝ այստեղ ու այնտեղ խօսում էին, որ Մոսկուան մեծ գումարներ է ուղարկել մեր երկիրը:*
- *Ռուսները բոլշեւիկ դիմակի տակ՝ ձգտում էին գրաւել Կովկասը, վերահաստատել այստեղ իրանց նախկին տիրապետութիւնը և միջոցների մէջ խտրութիւն չէին դնում:*
- *Այլ դաշնագիր մենք չէինք կարող ստորագրել, մենք հարկադրուած էինք ստորագրելու Աղէքսանդրապօլի դաշնագիրը, և գէթ դորանով փրկելու աւերից և արիւնից երկրի վերջին բեկորները, Երևանի նահանգը...*
- *Վեց տարի շարունակ պատերազմելուց և կռուելուց յետոյ՝ մենք կանգնած էինք շրջապատուած թշնամիներով, և պառակտուած ներսում ազգուրացներով:*
- *Եւ այսօր դառնալով մեր այն ժամանակուայ վերապրումներին՝ մենք մեծ պատկառանքով դէպի հայկական կառավարութիւնը և դաշնակցութեան երդուեալները՝ պէտք է ասենք, որ մենք բոլորս գնում էինք մեր ժամանակի հոսանքի յետևից:*
- *Մենք գերմարդկային ոյժեր չունէինք, և մենք չէինք կարող կանգնեցնել պատմութեան ընթացքը: Մենք պատասխանատու չէինք հայ հասարակութեան և հայ ինտելեգենցիաի անպատեհ, անվերաբեր ու ապիկար վերաբերմունքի համար դէպի իրանց հայրենի պարտքը:*

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Պարզուեց, որ մենք այլևս ոչ մի հնարաւորութիւն չունենք թիւրքերին բան տալու: Երբ այդ պատասխանը մենք հաղորդեցինք թիւրքաց շտաբը՝ Կարաբեկիր պատասխանել էր, ես անձնապէս յարգում ու հաւատում եմ զօրավար Նազարբեկովին, և եթէ նա վաւերացնէ այդ՝ ես խնդիրը սպառուած կը համարեմ: Մի քանի ժամից յետոյ թիւրքաց հրամանատարը ստացաւ մեր սպարապետից այդ առիթով հեռագիրը, և հարցը փակուեց:

Եւ մենք րոպէ առ րոպէ սպասում էինք, որ կը նշանակուի կոնֆերենցիայի հերթական նիստը: Բայց երեկոյեան դէմ մենք ստացանք թիւրքաց հրամանատարի մի նոր գրութիւնը՝ ուր նա յայտնում էր, որ մենք խախտում ենք զինադադարի պայմանները, որ մեր ոստիկանութիւնը անցնում է դեմարկացիոն գիծը, իսկ գեներալ Արեշեւ՝ հակառակ զինադադարի պայմանների, իր շտաբով տեղաւորուել է Ղարաքիլիսա, երկաթուղու կայանում: Այդ հարցն էլ պարզուեց: Գեներալ Արեշև հեռացաւ Դիլիջան, իսկ ոստիկանութիւնը թողեց դեմարկացիոն գիծը: Այդ առիթով մենք հեռագրական հարցապնդում արեցինք Երևան: Բայց Երևանի հեռագրագիծը սովորաբար փչացած լինելով՝ մենք ստիպուած էինք խնդրելու թիւրքերին, իրաւունք տալ մեզ նոցա հեռախօսով խօսելու Ղարաքիլիսայի հետ: Վերջ ի վերջոյ մենք պաշտօնապէս տեղեկացրինք թիւրքաց հրամանատարին, որ գեներալ Արեշեւ մեկնեց Ղարաքիլիսայից Դիլիջան, իսկ մեր ոստիկանութիւնը չի անցել դեմարկացիոն գիծը: Եւ այդ մթնոլորտում մեր ջղայնացումը աճում էր րոպէ առ րոպէ, թիւրքաց ծառայութիւնից հաղորդեցին մեզ, որ ռուս զօրքերը հայ մեծամասնականների առաջնորդութեամբ գրաւել են Դիլիջանի ձորը, և ընդհարուել Սեպուհի զօրամասերի հետ:

Միւս օրը մենք ստացանք թիւրքերի մեզ առաջարկած «Հայաստանի» քարտէսը և նորան կցուած նոցա այդ առիթով յուշագիրը: Թէ՛ քարտէսը և թէ՛ յուշագիրը՝ տաճկերէն էին կազմուած:

Հայաստանից անջատւում էր ամբողջ Կարսի նահանգը, Երևանի նահանգի Սուրմալուի, Հին Նախճաւանի և Շարուրի գաւառները:

–Մենք թողնում ենք Ձեզ,– ասաց մեզ յետոյ տաճկաց հրամանատարը,– Կարսի նահանգի Աղբաբա գաւառակի մի մասը, որ ընկած է Արփաչայի ընթացքով և այդ անում ենք հետևեալ քաղաքական միտումներով: Մենք գիտենք՝ շարունակեց թիւրք զօրավարը, որ Վրաստանը ապօրինի կերպով գրաւել է Ձեր Ախալքալաք գաւառը, Աղբաբան սահմանակից է Ախալքալաքին, վերջում դուք կը գրաւէք Ախալքալաքը՝ և այդպիսով մենք Ձեզ ելք ենք տալիս դէպի ծով...:

Այդ չափ ուշադիր և այդ չափ վեհանձն էին դեպի մեզ թիւրքերը:

Յուշագրի մէջ թիւրքերը միանգամայն հերքում էին մեր իրաւունքները Տաճկա-Հայաստանի վերաբերմամբ:

Նրանք չնչին թուի էին հասցնում հայ ազգաբնակութիւնը, և ի բացատրութիւն այդ բոլորի աւելացնում էին, որ հայ ժողովուրդը ոչինչ ինքնուրոյն բան չունի, որ նա չունի նոյնիսկ իր երաժշտութիւնը, որ հայը չէր կերտում՝ այլ միայն ընդօրինակում...

Բայց յաղթողներին չեն դատում, և մեզ վերապահուած էր միայն ջղայնանալ և միայն յուզուել...

Եւ այդ ձախորդ րոպէներում՝ թիւրքաց շտաբից շարունակ նորութիւններ էին գալիս: Հաղորդում էին, որ Մոսկուան արդէն իր ներկայացուցիչներն է նշանակել «Հայաստանը» կառավարելու համար, որ Սեպուհ փախել է և այլն:

Եւ այդ ի յայտ ջղային վայրկեաններում՝ մենք ստացանք Երևանից մինիստր նախագահ Վրացեանի հետևեալ ծածկագիր հեռագիրը «Կառավարութիւնը հրաժարական տուեց, երկրի գերագոյն իշխանութիւնը յանձնուեց զօրքի հրամանատար Դրոյին, ստորագրեցէք հաշտութեան դաշնագիրը»:

Նոյեմբերի 30-ին կայացաւ վերջապէս կոնֆերանսի նիստը: Թիւրքաց քարտէսի շուրջը կայացած երկար բանակցութիւններից յետոյ՝ թիւրքաց հրամանատարը առաջարկեց հետևեալ լրացուցիչ պայմանները.

1. Մենք իրաւունք ունենք պահելու միայն 1500 հոգուց բաղկացած զօրաբանակ:

2. Մենք յանձնում ենք թիւրք իշխանութեանը մեր բոլոր աւելորդ զէնքը և ռազմապաշարը:

3. Մենք իրաւունք չունենք մեր սահմաններում ամրութիւններ կառուցանելու:

4. Երկաթուղու գիծը՝ մինչև այդ բոլոր պահանջների կատարումը, մնում է թիւրք հրամանատարութեան իրաւասութեան տակ:

Միւս օրը թիւրքաց հրամանատարը հաղորդեց մեզ, որ նա մինչև Դեկտեմբերի 2, երեկոյեան ժամի եօթը կը սպասէ մեր սկզբունքային համաձայնութեանը իր բոլոր պահանջներին, հակառակ դէպքում նա հրաման կ՛արձակէ զօրաբանակին՝ արշաւելու առաջ և գրաւելու Երևանը... Դժուար էր երևակայել աւելի դժոխային պահանջներ և աւելի ձախորդ մթնոլորտ:

Մենք չէինք ընկել կռուի դաշտում, չէր ընկել և Կարսը: Աշխարհի այդ առաջնակարգ ամրութիւններից մէկը ո՛չ պաշարուել էր և ո՛չ ռմբակոծուել թշնամուց: Երկու ամիս շարունակ թիւրքաց զօրաբանակը Կարսի նահանգումն էր՝ բայց նոցա հրամանատարը չը վստահացաւ յարձակում գործելու: Նա սրտայնութիւն չունէր այդ անելու նախ այն պատճառով, որ նա ոյժ չունէր, նա շարժւում էր իր ընթացքում, կազմակերպւում, զինում այն անբաւականներին՝ որոնք զանազան դիպուածներից փախչելով Տաճկաստան, միանում էին թիւրք զօրաբանակին՝ մեզանից իրանց վրէժը առնելու համար: Բացի այդ, թիւրք հրամանատարութիւնը հաշուի էր առնում հայ կտրիճների, մեր հայդուկների մեծ հռչակը,

և կարծելով, որ իր դէմ կանգնած է մի ոյժ, որ բացի իր ռազմական կորովից՝ տոգորուում է հայրենիքի բարձր գաղափարով, և նրա հետ ճակատամարտը կարող է ճակատագրական լինել իր համար՝ Կեազիմ Կարաբեկիր, ինչպէս այդ արդէն յայտնի է, խուսափում էր մեզ հետ կռուի բռնուելուց, և նա այդ երբէք չարեց:

Բայց հայ զինուորը, և առիւծ և հլու՝ երբէմն պարծանք ռուս գումարտակների, չը ստացաւ ազգային դաստիարակութիւն իր հայրենի զօրաշարքերում: Իր հրամանատարութեան հետ նա խօսում էր տարբեր լեզուներով: Թալանը և կեղեքումը նորա զինավարժութիւնն էր: Նա իր չորս կողմը չէր տեսնում կարող և հեղինակաւոր հրամանատարութիւն, նա չէր տեսնում ազգային կորով, ազգային պատուախնդրութիւն, նա մինչև վերջը զուրկ մնաց պետական հմայքից... *(փաստաթուղթը վնասուած է)*

...ընդունելու թիւրքաց հրամանատարի ուլտիմատումը և ստորագրելու նորա պատրաստուած հաշտութեան դաշնագիրը:

Թէ ի՞նչ էր կատարւում Երևանում՝ մենք չը գիտէինք: Վրացեանի վերջի փոքրիկ հեռագիրը կառավարութեան հրաժարականի, և Դրոյի որպէս զօրաց հրամանատարի, դիկտատուրայի մասին՝ տակաւին չէր պարզում իրերի իսկական դրութիւնը: Վերջապէս, մենք հիմք ունէինք կարծելու, որ դաշնակցութեան *[արիօպագը],* որ փաստօրէն ար...*(տեքստը խզուած է)* պէտք էր զարմանալ միայն ի հարկէ, որ Հայաստանի վերջի կառավարութիւնը նոյնիսկ հարկաւոր չը համարեց մանրամասն իրազեկ անելու իր Աղէքսանդրապօլի ներկայացուցչութեանը իրերի իսկական դրութեան մասին:

Իսկ մենք ոչ մի կերպ չէինք կարող կարծել, որ երբեմն այնչափ սրտոտ և այնչափ խիզախ դաշնակցութիւնը՝ կարող էր այնչափ շուտ կորցնել իր 30 տարուայ խռովալից հաւասարակշռութիւնը, և այնպէս անփառունակ հրապարակից իջնել...:

Իսկ Դրոյի «դիկտատուրան» գալիս էր մեզ միայն ասելու, որ դաշնակցութիւնը այս անգամ ինքը դարան մտնելով՝ պատրաստւում է մի ինչ-որ խիզախ յարձակման: Այդ բոլոր ենթադրութիւնները, *(տեքստը խզուած է)*

...ուղիղ գծի մօտ խնդրեցինք:

Նշանակուած ժամանակամիջոցից դեռ կէս ժամ առաջ՝ մենք տենդոտ անհամբերութեամբ անցուդարձ էինք անում հեռագրատան առաջ, իսկ ուղիղ ժամի հինգին՝ մենք կանգնած էինք ապարատի առաջ, բայց Դրոն չէր շտապում: Եւ մենք մի կէս ժամ էլ վերապրեցինք առանձնակի ջղայնութիւն, ուր ենթադրութիւնների և հաւանական պատահարների ուրուագիծը յաջորդում էին մէկը միւսին և տանում մեզ դէպի յոյս և դէպի դառնալից անդունդ...

Խատիսեան, որին վիճակ էր ընկնում ոչ առաջին անգամ վերապրելու խռովալից մոմենտներ՝ ուզում էր իշխանալից իր ձեռքը առնել մթնոլորտի ձեռներեցութիւնը: Նա վճռալից և կարծես հանգիստ ձևակերպեց Դրոյի առաջ պատգա-

մաւորութեան վերջի հարցը: (Բայց մեր լարուած ուշադրութիւնից չէր կարող վրիպել հայկական պրեմիերի բուռն յուզմունքը): –Կրկնում եմ, վերջացրեց Խատիսեան,– որ մի ժամից յետոյ վերջանում է ուլտիմատումի ժամանակամիջոցը, և դելեգացիան վերջին անգամ կը ցանկանար լսել Ձեր բերանից՝ ստորագրել համաձայնութիւնը, թէ ոչ...

Տիրեց մի երկու րոպէ մահալից լռութիւն, և հեռագրի ժապաւէնի վերայ երևացին հայկական վերջի դիկտատորի վերջի՝ այն էլ ռուսերէն խօսքերը. «Այդ ձեր գործն է... »: Ցնցուած և գունատ Խատիսեան՝ շեշտալից բացատրութիւն պահանջեց Դրոյից, և ի պատասխան այդ ակներև անբաւական հարցապնդման՝ հեռագրի ժապաւէնի վերայ նորից երևացին ռուսերէն նոյն խօսքերը. «Կրկնում եմ, որ այդ ձեր գործն է... »: Եւ այդ վերջի ակօրդն էր հայկական իշխանութեան, և հայկական դելեգացիաի վերջին բանակցութեան... Մենք լուռ թողեցինք հեռագրատունը: Ես կը դժուարանայի բնորոշել՝ թէ ի՞նչ էր վերապրում մեր պատգամաւորութիւնը այդ րոպէներում: Մեր պատասխանատուութեան բարձրութիւնից կարծես ընկել էր մի ճնշիչ ծանրութիւն՝ բայց մենք լցուած էինք անհուն դառնութեամբ դէպի կատարուածը, մարդիկ, և այն ամէնը, որ պարփակում էր իր մեջ մեր սխալները, մեր անհոգ և թեթևամիտ վերաբերմունքը դէպի մեր պետական խնդիրները:

Վերադառնալով մեր բնակարանը և հաղորդելով մեր աշխատակիցներին Երևանից մեր ստացած նոյնչափ լակօնիկ, որչափ և տարօրինակ պատասխանը՝ մենք նորից աչքի անցրինք մեր բոլոր...: Կառավարութիւնը ուղարկելով մեզ Աղէքսանդրապօլ՝ չէր կարող չը նախատեսնել, թէ որտե՞ղ պէտք է հանգեն թիւրքերի հետ մեր բանակցութիւնները, և Վրացեանի վերջի հեռագիրը նորից տալիս էր մեզ:

23 Նոյեմբերի երեկոյեան ժամի 9-ին, հայկական կառավարութեան պատուիրակութիւնը և նորան ուղեկցող մարդիկ մեկնեցին Աղէքսանդրապօլ:

Երկար տարիների իմ պաշտօնավարութեան ընթացքում՝ ես միշտ սիրել եմ ճշդութիւնը և սուբօրդինացիան, և այդ պատճառով ճիշտ ժամի 9 առանց քառորդի՝ ես երկաթուղու կայարանումն էի և պարտաւորութիւն էի համարում դիմաւորել այնտեղ դելեգացիայի նախագահին: Եւ ճիշտ ժամի 9-ին եկաւ պ. Խատիսեան: Նա երբեմն թերթում էր Սեւրի դաշնագրի ֆրանսերէն օրինակը, մերթ հայեացք ձգում քարտէսին՝ և մատիտով ջղայնալից ինչ-որ գծում էր և ջնջում... Նա հնարաւորութիւն էր տալիս մեզ արտայայտուելու, նա սպասում էր, թէ ե՞րբ կ՛իջնի մեր ջղայնացումը, և նիւթեր էր ամբարում՝ մտքերը և տրամադրութիւնները ձևակերպելու և մի որոշում կայացնելու համար:

(տեքստը խզուած է) ...տարրեր, որոնք իրանց թէ ներկայ և թէ ապագայ շահերի համար երերում էին երկրի դրութիւնը, և կործանում այն բոլորը, որ ձեռք

էր բերուել լաւագոյն սերունդների գաղափարական և անձնուրաց աշխատանքով:

Մենք մի աւելորդ անգամ ծանրացանք մեր հասարակական դէմքի այդ մռայլ, բացասական կողմի վերայ՝ որպէսզի ցոյց տանք, թէ ի՞նչ պայմաններում և շրջապատուած ի՞նչ ձախորդ հանգամանքներով հայկական պատուիրակութեանը վիճակ էր ընկել հաշտութիւն կնքելու թիւրք հրամանատարութեան հետ:

Մենք պատուաւոր գերիներ էինք տաճկական շտաբում: Հայկական զօրաբանակը փաստօրէն գոյութիւն չունէր: Զինուորութիւնը չը կռուեց մինչև վերջը: Սկզբից, խրախուսուած իր մեծերով՝ նա երկու ամիս շարունակ նահանջում էր: Յետոյ թողնելով Կարսը առանց թշնամու դէմ գնդակ արձակելու՝ նա քաշուեց դէպի Արփաչայ և հալուեց, զինուորութիւնը խմբերով թողնում էր իր մասերը և ցրւում իր տները...

Հրամանատարութեան մնացած մասը շարունակում էր իրար հետ հաշիւ մաքրել, իսկ *(տեքստը խզուած է)*

...այդպէս էր այն մթնոլորտը՝ ուր հայկական կառավարութեան պատգամաւորութիւնը Աղէքսանդրապօլում կոչուած էր կնքելու Դեկտեմբերի երկուսի բռնի «համաձայնութիւնը»:

Ուղիղ ժամի եօթին երևաց Կեազիմ Կարաբեկիր, շրջապատուած իր պատգամաւորութեան անդամներով: Թիւրքերը արտասովոր սիրալիր էին և երևի պահանջ էին զգում հենց այդ միջոցաւ մեղմացնելու մեր դառնալից տրամադրութիւնը: Մենք ձևի համար միայն հակադրեցինք թիւրք պատգամաւորութեանը մի քանի պահանջներ, առարկեցինք թիւրքաց մի քանի յայտարարութիւնների դէմ: Հրամանատարը համաձայնուեց մի քանի աննշան ուղղումներ անելու համաձայնութեան ակտի մէջ, և Դեկտեմբերի երկուսին, գիշերուայ ժամի մէկին մենք ստորագրեցինք այդ ծանր և չը տեսնուած պայմաններում կնքուած համաձայնութ-իւնը...

Բնութիւնը ունի իր մեծ անբացատրելի գաղտնիքները, որի շուրջը հաւիտեան կը մնայ մարդկանց նախապաշարումները: Ֆատալիզմը կեանքի աղն է, և մարդիկ ակամայ տրամադիր են հաւատալու ճակատագրին՝ և այդ առանցքում որոնելու կեանքի դրական և բացասական միտումներ: Եւ երևի այդ ֆատալիզմով պէտք է բացատրել և այն, որ ի դիմաց Հայոց Հանրապետութեան՝ մենք ստորագրում էինք Տաճկաստանի հետ հաշտութեան պայմանը այն ոոպէին, երբ Հայաստանի Հանրապետութիւնը այլևս գոյութիւն չունէր, երբ այդ արիւնոտ ու դեռ ծխացող փլատակների վերայ վխտում էին ամէն տեսակի չար ոգիներ, բացի այն ոգուց, որ այդչափ տարի իրան էր վերապահել ազգային գաղափարի գուրգուրանքը...

Դեկտեմբերի 3-ին թիւրքաց հրամանատարը մեզ հանդիսաւոր ճաշ տուեց: Պետք չը կայ ասելու, որ մենք պէտք է ընդունենք այդ հրաւէրը: Ներկայ էր տաճկաց ամբողջ շտաբը, մօտ 30 հոգի:

Երևանի վագզալում Ալ. Խատիսեանին դիմաւորեց քաղաքի նոր պարետը: Նա էլ եկուոր էր և մեզ բոլորովին մի անյայտ երիտասարդ, քաղաքավարի և կորեկտ: Վագզալում խմբուել էր մեզանով հետաքրքրուողների բազմութիւն: Բոլորը ի հարկէ հայեր էին և ծանօթ դէմքեր: Բայց այդ բազմութիւնը սովորական հետաքրքրուողների տպաւորութիւն չէր թողնում: Մարդիկ լուռ, խորասուզուած էին: Երբ նախկին հայկական դելեգացիայի նախագահ Խատիսեան՝ վաղեմի արժանապատուութեամբ մօտեցաւ աֆտօմօբիլին, զինուորականները, որոնք արդէն առանց ուսադիրների էին՝ զինուորական պատիւ տուեցին նորան: Իսկ վագզալում գտնուող միւս բազմութիւնը՝ բացեց գլուխը և այդ լուռ և անկեղծ պատուի առջևով անցաւ նախկին կառավարութեան նախկին նախագահը...

Վերջանում էր կարծես մեծ պատկերի *(տեքստը խզուած է)*

...և այլ իրեր ես դեռ կարող կը լինէի յետ ստանալ: Եւ ես ուզում էի հաշտութիւնը ստորագրելուց յետոյ՝ խնդրել Կարաբեկիր փաշայի աջակցութիւնը: Երբ առաջի օրը մենք եկանք Աղէքսանդրապոլ և անցանք մեզ յատկացուած բնակարանը՝ ես հենց առաջի սենեակում տեսայ մեր մահճակալներից մէկը: Շատ բնական էր ի հարկէ, ես յուզուեցի՝ բայց պ. Խատիսեան հանգստացրեց ինձ, որ այդօրինակ մահճակալներ կարող էին և Աղէքսանդրապոլ լինել: Ես հաւանական գտայ այդ բացատրութիւնը՝ թէև բոլոր նշաններից պարզ էր, որ այդ մահճակալը մերն էր:

Մի երկու օրից յետոյ մեր դելեգացիայի նախագահի քարտուղար Ղորղանեան՝ մի յանձնարարութեամբ այցելելով հրամանատարի շտաբի պետին, դառնութեամբ տեսնում էի նորա գրասեղանի վերայ իմ մարմարեայ մեծ թանաքամանը, և իմ գրասեղանի մի քանի այլ արժէքաւոր իրեր: Երբ մենք ստորագրեցինք հաշտութիւնը՝ ես հնարաւոր համարեցի խնդրել թիւրք հրամանատարի աջակցութիւնը Կարսում թողած իմ իրերի մասին: Նա իմ ներկայութեամբ պատուիրեց իր շտաբի պետին՝ անել հարկաւոր կարգադրութիւնը, բայց և այնպէս իմ խնդիրը մնաց անհետևանք: Միւս օրը հրամանատարի հանդիսաւոր ճաշն էր, և երբ մենք մտանք սեղանատուն՝ մեծ սեղանը ամբողջովին ծածկուած էր իմ սերվիզով, իմ հին և ընտիր անօթներով... Կասկածի տեղիք չը կար ի հարկէ այլևս: Հրամանատարի շտաբը իր յարմարութիւնների համար բերել էր Աղէքսանդրապոլ Կարսի նախկին հայկական նահանգապետի բոլոր իրան պէտք իրերը... Իսկ ինձ վիճակւում էր վայելել այդ դառնալից ճաշը իմ սեփական ափսէներից...

Ի հարկէ ես ոչինչ չասեցի հրամանատարին այդ մասին, խնդիրը ինձ համար դելիկատ էր: *(տեքստը խզուած է)*

...հայկական դելեգացիայի համար այդ վաթսունական թուականների էին զինուորական շինութիւններ, որ կառուցուել էր հռչակաւոր իշխան Բեհբութեանի օրով Կարսի առաջի գրաւումի նախօրեակում, այնտեղ էր թիւրքաց բանակի շտաբը և ինքը Կեազիմ Կարաբեկիր փաշան: Երբ մենք այցելութեան գնացինք տաճկաց հրամանատարին՝ նրա առանձնասենեակից դուրս էր գալիս Մդիվանին: Նա լուռ բարևեց պ. Խատիսեանին, իսկ վերջինս ծանօթացրեց նրա հետ ինձ և պ. Գուլխանդանեանին: Մդիվանին մի ատելից և անքաղաքավարի հայեացք ձգեց իր այդ երկու նոր հայ ծանօթների վերայ, և առանց բառ անգամ արտասանելու անցաւ:

Այդ հանդիպումը մի մարդու հետ, որ կատարում էր մեր երկրի դէմ մեծ և կեղտոտ դաւադրութիւնը՝ ի ծայր ցնցեց մեզ, և մենք անցանք *(տեքստը խզուած է)* ...մենք պայմանաւորուեցինք վաղուանից բանալու կօնֆերանսի աշխատանքները, հրաժեշտ տուեցինք փաշային: Մեզ ճանապարհ ձգեցին նոյն պատիւներով... *(տեքստը խզուած է)*

...յաղթահար հրամանատարի սենեակ մի աւելորդ անգամ խոցոտուած և միանգամայն ջղայնացած:

Այդպիսի ճախորդ ու չարագուշակ պայմաններում էր սկսւում հայ-թիւրքական բանակցութիւնը:

Կեազիմ Կարաբեկիր փաշան ընդունեց մեզ քաղաքավարի, բայց լուրջ և զսպուած դէմքով: Նրա խոշոր և հրամանալից աչքերը հաշտւում էին միայն տարրական քաղաքավարութեան հետ, բայց ըստ իմաստի և խօսակցութեան տօնի՝ նա համակուած էր յաղթողի և թելադրողի անվճռաբեկ իրաւունքներով: Այդ բոլորը մենք թէ՛ զգում և թէ՛ տեսնում էինք, և ես չեմ կարող ասել, որ մեր բոլոր սառնասիրտ ձևանալու ցանկութիւններով հանդերձ՝ մենք մեր հոգու խորքերում չը յուզուէինք և չը երերուէինք... Այդպէս էր ընկերական մթնոլորտը և նրա հոգեբանութիւնը:

Թիւրքաց հրամանատարի շտաբում մենք չը տեսանք այն ընկերական սկզբունքները, որ այնպէս, իբր թէ մեր տեղում էր ստեղծել ռուսների և թիւրքերի քեամալիստների... *(տեքստը խզուած է)*

... ընդհակառակը, մենք նորից հանդիպում ենք ծանօթ արևելեան բռնութեան, ուր մեծի կամքը օրէնք էր, և պատկան տաճիկ սպաները աւելի ենթակայ էին՝ քան թէ վաղեմի ռուս կայսերական սպան: Թիւրքաց շտաբի պետը՝ գնդապետ, որ մեր այցելութեան ժամանակ մի անգամ մտաւ հրամանատարի առանձնասենեակը մի ինչ-որ կարևոր գործով կանգ էր առնում դռան առաջ շէմքում՝ չը վստահանալով մի քայլ անգամ առաջ անելու: Եւ որպէս բնորոշ գիծ Անկարայի «ընկերվար» տրամադրութիւնների՝ պէտք է նկատել այստեղ, որ այդ գնդապետը հրամանատարի հետ խօսելիս աչքերը չէր բարձրացնում անգամ... Նա միանգամայն ենթակայ էր, և շատ հեռու այն հովերից՝ ուր խմորուել ու արծարծ-

ուել էր ռուս քեմալական ընկերվար «անկեղծ բարեկամութիւնը»: Թիւրքաց «աշխատաւոր մասսաները», որի անունից այնպէս սրտոտ և այնպէս անպատասխանատու ամէն անգամ խօսում են մեր օրերում՝ նոյն անմռունչ, նոյն համբերատար և բեռնակիր թիւրքն է: Երբ յետոյ մենք մտերիմ խօսում էինք թիւրք սպաների հետ, նրանք ասում էին՝ այդ կարմիր ցնցոտիները «ընկեր» անունը, շատ շահաւետ բաներ են: Սոցանով մենք կարողացանք խաբել այդ հաստագլուխ ռուսներին՝ և փոխարէնը ստանալ այն ոսկին, որ մենք այսօր ի հաշիւ այդ «աշխատաւորութեան», առատ ծախսում ենք...

Այդչափ համոզուած կօմունիստներ են թիւրքերը:

Մեր բոլոր կասկածներով հանդերձ՝ մենք դեռ կարծում էինք, որ Մդիվանու երկար ունկնդրութիւնը թիւրքաց հրամանատարի մօտ վերաբերւում էր նրա միջնորդութեանը մեր բանակցութիւններում, և այդ պատճառով վերադառնալով մեր բնակարանը՝ մենք յոյս ունէինք Մդիվանուն իր սենեակում գտնելու: Մենք միամտութիւն ունէինք կարծելու, որ տեսնուելով թիւրք գեներալի հետ՝ Մդիվանին կը շտապի խօսել այդ առիթով մեզ հետ: Բայց Մդիվանին տանը չէր: Տաճկաց շտաբից, հրամանատարի աֆտօմօբիլով՝ նա անցել էր արդէն քաղաք, և հրապարակում հակապետական, հակահայկական միտինգ կազմակերպել: Նրա շուրջն էին հաւաքուել ռուսները, հրեաները, Գանձակից ու ...ինչ որ կասկածելի ...: Հայ դաւա... *(փաստաթուղթը պատռուած է)* ...կործանուած յայտարարելով՝ կեցցէ էր կոչում ի փառս ռուս իշխանութեան, և իր այդ գիշատիչ գոչումները խառնում իրա ճշտութեան նոր հիմնի՝ ինտերնացեօնալի հետ... Ցայտուն ազգային Աղէքսանդրապօլը քարացել և չքացել էր: Մարդիկ մտել էին իրանց տները, փակուել ու վարագուրել բոլոր լուսամուտները: Քաղաքը նման էր մի վայրի՝ ուր բնակութիւնը փախել, անյայտացել է, և երկրի հայութիւնը մնացել է խուլիգանների մի բազմութեան, որ տօնում է իր յաղթութիւնը, և պատրաստւում ճաշակելու համայնական սեղանը...

Այդ զուտ հայկական քաղաքում՝ հայ լեզուն արդէն չքացել էր, ճառերը ու կոմունիստ յայտարարութիւնները ռուսերէն էին՝ որպէս արտայայտութիւն ինտերնացիօնալ գաղափարների: Այդ նոյնչափ զաւեշտ, որչափ և թշուառ վայնասունը՝ լրացնում էր տաճկաց հրամանատարութեան կարգադրութիւնը, ձերբակալել՝ դէպի Էրզրում ուղարկել բոլոր զինուորացու հայ երիտասարդութեանը:

Եվ Մդիվանու դիկտատուրան, որ դէմք ու կերպարանք ստացաւ ռուս-տաճկական սուիններ առանցքում՝ միաչափ օգտուեց այդ կարգադրութիւնից:

Հայ դաւաճանների ցուցմունքով՝ կալանաւորւում և վագոններն էին նետւում Էրզրում ուղարկելու համար բոլոր հայ երիտասարդները, իսկ հասակաւորները, հայ ցայտուն ազգասէրները՝ որպէս ցաւագարներ, «դաշնակցական» մեծահամբաւ տիտղոսի տակ՝ կցւում էին նոյն զինուորացուներին և քշւում Էրզրում:

Մդիվանու «կազմակերպուած» քաղաքի նոր «իշխանութիւնը»՝ նկուղներից դուրս սողաց տականքներից, «աջակցութիւն» էին ցոյց տալիս տաճիկներին այդ զօրահաւաքում: Բացի այդ բոլորից, թիւրքերը տենդոտ կրում էին Աղէքսանդրապօլից դէպի Էրզրում և հայկական հարստութիւնը, իսկ «ինտերնացիօնալ» իշխանութիւնը բաժանելով թուրքերի հետ «ազդեցութեան զօնաները»՝ նոյնպէս հնձում էր և տենդոտ կեղեքում թշուառ հայութեանը: Քաղաքում բարձրացել էր լաց ու կոծ, բողոքելու ոչ ճանապարհ կար և ոչ տեղ, միակ փրկութիւնն էր փախչել՝ և այդպիսով միայն ազատուել ռուս-տաճկական այդ հոգատարութիւնից: Եւ չը մոռանանք, որ այդ կատարւում էր Նոյեմբերի 25-ին՝ երբ Հայոց Հանրապետութեան կառավարութիւնը դեռ գոյութիւն ունէր, երբ նրա պատուիրակութիւնը դեռ նոր էր ժամանել Աղեքսանդրապօլ, և կօնֆերանսի նախօրեակում սպասում էր, թէ ի՞նչ դիւրութիւններ կը ստեղծէ մեր բանակցութիւնների համար ռուսների ներկայացուցիչ Մդիվանին, որ առ երես առաքելութիւն ունէր հաշտեցնելու մեզ Անգօրայի հետ...

Աղէքսանդրապօլի և նրա գաւառի հայկական պաշտօնեաները կամ կալանաւորուած էին Մդիվանու դերեկտիւներով, կամ փախել էին: Մդիվանի իր բազմացեղ ընկերներով՝ հրապարակում միջից կէս էր լինում փառաբանելու ռուսական միջնորդութիւն, հայհոյելու հայ ազգային սրբութիւնները, ծաղրելու մեր դարաւոր եկեղեցին: Բայց երկիրը չէր անդրադառնում այդ բոլոր խոսումներին: Քաղաքը մեռել, քարացել էր, և նման էր աւելի մի գերեզմանատան՝ ուր խուլիգանները օգտուելով դրութիւնից, թալանում և կեղեքում էին:

Մդիվանուն մենք այլևս չը տեսանք, թէև նա ապրում էր մեր հարևան սենեակներում: Նրա մօտ անդադար գնում ու գալիս էին ինչ-որ թուրքեր, որոնք յիշեցնում էին մեզ անձրևից յետոյ սունկը: Այդ յանդուգն և լիրբ թուրքերի մէջ աչքի էր ընկնում մի երիտասարդ՝ Շախտախտինսկի, Հին Նախճաւանի գաւառից: Շատ տարի առաջ ես պաշտօնավարել եմ այդ վայրում, և ճանաչում էի այդ երիտասարդի բոլոր ազգականներին, և շատերի հետ բարեկամ էի: Նա չէր կարող չիմանալ այդ բոլորը՝ բայց և այնպէս նա խորշեց ինձանից և իմ աչքին չէր երևում: Պարզ էր, որ յամենայն դէպս նա իրան լաւ չէր զգում իմ ներկայութեամբ...

Պէտք է ասել, որ Շահթախթու թուրքերը շատ ընդունակ մարդկանց համբաւ ունէին միշտ, և իւր ժամանակին տուել են երկրին նշանաւոր դէմքեր թէ՛ պետական և թէ՛ հասարակական ասպարէզներում: Հին Նախճաւանի գաւառում Շահթախթը *[իւրայնի]* Ագուլիսն է: Լաւ ծանօթ լինելով թուրք հոգեբանութեանը՝ ես շատ լաւ հասկանում էի և այն ժամանակ, որ Շահթախթինսկու անակնկալ երևալը այն բուն հայկական վայրում՝ չարագուշակ է մեզ համար: Նա շատ տենդոտ իրարանցման մէջ էր, շարունակ նոր և նոր թուրքեր էր բերում Մդիվանու մօտ, ջղայնալից գնում ու գալիս էր քաղաք, անվերջ փսփսում թիւրք սպաների

հետ, յետոյ միայն երբ ռուսները նուաճեցին ամբողջ Կովկասը՝ յայտնուեց և Շահթախթինսկու պաշտօնական դէմքը: Նա Բագուի չեկայի նախագահն էր...

Ի հարկէ շատ հետաքրքիր տեսիլ էր իր բնոյթում Մդիվանու-Շահթախթինսկու առաքելութիւնը: Առ երես՝ «ի պաշտօնէ» նոքա եկել էին մեզ թիւրքերի հետ հաշտեցնելու համար, ըստ իմաստի՝ նոքա եռանդալից գերեզման էին փորում հայկական երազների համար:

Պէտք չէ ասել այստեղ, որ Մդիվանին չէր էլ հետաքրքրւում մեր կօնֆերանսով: Այդ կօնֆերանսը հետևանք էր միայն ռուս-տաճկական դաւերի, և այսօր որպէս մի բեմական պատկեր՝ տարուբերւում էր միայն երբեմն երկու ուժեղ պետութիւնների քմահաճոյքներում: Դարերի ընթացքում մարտնչելով իրար հետ Կարսի պարիսպների տակ Արևելքի գերիշխանութեան համար՝ Ռուսաստանը և Թիւրքիան ոխերիմ թշնամիներ, բարեկամ դիմակաւորուած այսօր՝ համայնօրէն խեղդում էին նորածին Հայաստանը: Այդ փոքրիկ երկիրը գալիս էր պատնէշ լինելու Արևելքի հինաւուրց դռներում այդ երկու մեծ բռնակալների միջև: Դարաւոր օրգանական թշնամութիւնը դիմակաւորելով նոր լօզունգներով՝ այդ երկու մեծ հակառակորդները այսօր բարեկամ էին ձևանում: Կարսի նոր մենամարտի և նոր նուաճումների, Մերձաւոր Արևելքի այդ արտօնուած վիճողները՝ մէկը միւսին խաբելով հարթում էին միայն նոր ուղիներ, և նոր դիրքեր ստեղծում ապագայ ճակատամարտի համար: Հայոց Հանրապետութիւնը բռնում էր այն հանգոյցը, որի ճանապարհները տանում էին Թիւրքիան դէպի Կովկասի մահմեդական աշխարհը, իսկ ռուսներին՝ Արևելք և չքնաղ Բօսֆոր: Եւ ոսկեզօծելով այսօր ապագայի դառնալից պայքարը Ռուսաստանը ու Թիւրքիան՝ համայնօրէն վերացնում էին իրանց մէջտեղից հայկական բուֆերը, և միասին հարթում իրանց ապագայ մենամարտի մեծ հրապարակը...

Այդպէս է պատկերանում մեզ այն մեծ կատակերգութիւնը, որ խաղացին հայկական դրօշակի տակ այդ երկու հնագոյն մրցակից բռնակալները: Այդպիսով «քեամալիստները», նոցա «արշաւը» դէպի Հայաստան՝ ռուս սուինները Դիլիջանի ձորում, Լեգրանի դիւանագիտական հաստատութիւնը Երևանում, նրա առաջարկութիւնը մեզ մի «փոքր կարմրել», ապա և Մդիվանու առաքելութ-իւնը և ինքը՝ հայ-թիւրքական կօնֆերանսը Աղէքսանդրապօլում, այդ այն զաւեշտ և դառնալից պատկերներն են, որի հաւաքածուն կազմում է ռուս-տաճկական կօմիտէն:

Այդպէս էր այն խաղը՝ որին զոհ գնացին մեր դարաւոր ազգային իղձերը:

Սկզբում գրեթէ մի քանի օրուայ ընթացքում՝ մենք հեռագրական կապ չունէինք Երևանի հետ: Երբեմն այն էլ ծանր միջնորդութիւնից յետոյ՝ թիւրք շտաբը թոյլ էր տալիս մեզ Ղարաքիլիսայի հետ հեռախօսով խօսելու: Բայց Ղարաքիլիսայի մեր ներկայացուցիչը հնարաւորութիւն չունէր մեր հեռագիրները Երևան ուղարկելու, որովհետև հայկական հեռագրագիծը Ղարաքիլիսա-Դիլիջան-Եր-

ևան՝ անդադար փչանում էր և շատ անգամ չէր գործում: Երբ վերջապէս մեզ հեռագրական կապ տուեցին Երևանի հետ՝ այդ կապով մեծաչափ օգտւում էր Մդիվանին: Նրա հրեայ քարտուղարը շարունակ նստած էր հեռագրատանը, և անդադար մեծ ծածկագիր հեռագիրներ էր ուղարկում Երևան Լեգրանին և Բագու՝ այնտեղի իշխանութեանը: Պարզ էր ի հարկէ, որ այդ հաղորդագրութիւնները կօնֆերանսի մասին չէին, որի հետևանքները առաջուց գծել և նախորոշել էր ռուս-տաճկական համաձայնութիւնը: Այդ տենդոտ տեղացող հեռագիրները վերաբերւում էին այն նոր ռուս իշխանութեանը, որ Մդիվանին այնպէս յանդուգն և այնպէս բացէիբաց կազմակերպում էր Աղէքսանդրապօլում և նրա շրջանում: Եւ որովհետև այդ նախերգանքն էր այն աշխատանքների, որ պէտք է կատարէին ռուս սուինները հայ դաւաճանների առաջնորդութեամբ Երևանում և մեր երկրի միւս մասերում: Այդ պատճառով Մդիվանու ծածկագիր հեռագիրները դէպի Երևան ու Բագու՝ այնչափ տենդոտ էին ու այնչափ հորդորալից:

Թողնելով վերջին անգամ Աղէքսանդրապօլը՝ մենք հնարաւորութիւն չունէինք գէթ մօտաւորապէս պարզելու, թէ ի՞նչ կարող էր սպասել մեզ մօտակայ ապագայում:

Կաբինետների արագընթաց անկումը, և վերջապէս Դրոյի դիկտատուրան՝ գալիս էին մեզ մի աւելորդ անգամ ասելու, որ մեր կառավարչական մասը չարաչար ջարդուեց, և նրա հետ միասին խորտակուեցին և հայկական երազները: Դեռ Նոյեմբերին՝ Կարսի անկումից յետոյ, երերուեց Համօ Յովհանջանեանի կաբինետը, և երբեմն աղմկող Ռուբէն փաշան՝ յանկարծակի իջաւ կուսակցական յոյսերի և սպասելիքների հրապարակից: Նորից երևաց Ալ. Խատիսեանի խոժոռ ուրուականը, և օրինականութեան կողմնակիցները կառավարչական այդ կազմը միակ ելքն էին համարում ստեղծուած դրութիւնից: Բայց կուսակցական տրադիցիաները և «կուսակցական դիսցիպլինան»՝ ունեն իրանց յատուկ կապրիզները, իրանց յատուկ քմահաճոյքը, և նորից հրապարակ է գալիս դաշնակցութեան քրմերից մեկը՝ Քաջազնունին: Բայց թէ՛ վարիչ և թէ՛ հասարակական շրջանները մի երկու օր միայն զբաղուեցին այդ անուններով, և տրամագծօրէն տարբեր երկու հոսանքները հաշտեցնելու համար՝ որպէս modus vivendi, առաջի անգամ երևաց Վրացեանի անունը: Ասում էին, որ Վրացեանի կաբինետը անցողական, ժամանակաւոր է, և որ Ալ. Խատիսեան նորից կոչուած կը լինի կառավարութեան գլուխ կանգնելու: Այդ չափ երերուն և *(տեքստը խզուած է)*

....կառավարութիւնը: Այդ մթնոլորտում խմորուեց Վրացեանի կարճատև կաբինետը:

Վրացեան դաշնակցութեան վերջի գաղափարներից մէկն էր, և անկաշառ մարդու համարում ունէր: Որպէս օպտիմիստ՝ նա դիւրահաւատ էր և տարուած անկեղծ ցանկութիւններով: Եւ այդ բոլոր դրական գծերը անջատում էին նրան դաշնակցութեան արկածալից տարրից՝ և բախւում նրա շուրջը երկրի լուրջ

սպասելիքները: Բայց «Յառաջ»-ի խմբագրին վերապահուած չէր վերապրելու ցնծալից կառավարչական մի տագնապ, և հայկական այդ վերջին կաբինետը թառամում է դեռ չը ծաղկած:

Ռուս-տաճկական սուիններեր ներդաշնակ գրոհի տակ՝ Վրացեան վշտահար թողնում է հայրենի երազների քաղցրալից հրապարակը, և դաշնակցութիւնը վերջի անգամ փորձում է իր հինաւուրց միջոցը: Հայդուկային մթնոլորտում խմորուելով սկզբում՝ հայկական կայծերը կարծես վերջին անգամ տրամադրութիւն ունէին հանգելու նոյն առանցքում: Եւ Դրօ, այդ մեծահամբաւ հայդուկը՝ վերջին անգամ ճոճուելով իր բախտաւոր օրօրոցում՝ յայտարարւում է դիկտատօր ալեկոծ և վշտահար Հայաստանի...

Բայց անիմանալի են նախախնամ ուղիները, և մենք գնում էինք մեր օրերի աղմկալից հոսանքի յետևից: Տեսիլները փոփոխւում էին արագընթաց ու խաբուսիկ մեզ համար, իսկ մենք դարձեալ ռոմանտիկ էինք և դարձեալ զառանցող: Խօսում և մտածում էինք երկրի, ժողովրդի և իրաւունքի անունից՝ և չէինք ուզում հասկանալ, որ փողը, երկաթը, ոյժը և անարգ լրբութիւնը ոչ դաւանանք ունեն և ոչ խիղճ ու ամօթ...

Դեռ 19 թուի վերջերում այստեղ ու այնտեղ խօսում էին, որ Մոսկուան մեծ գումարներ է ուղարկել մեր երկիրը: Այն ժամանակ ռուս կայսերական հինգ հարիւրանոցները մեծ արժէք ունէին մեզանում, և ասում էին, որ Մոսկուան այդ փողով հեղեղել է երկիրը: Ի հարկէ մենք անուշադիր թողեցինք այդ շրջող լուրերը՝ և հնարաւորութիւն էլ չունեցանք ոչ միայն կռուելու այդ բանի դէմ, գալիք վտանգի առաջն առնելու՝ այլև անկարող գտնուեցինք անգամ ստուգելու այդ լուրերը: Այդ բոլորի համար նոյնպէս փող էր հարկաւոր, որ մենք չունէինք: Յանձնարարելով Վրացեանին նոր կաբինետ կազմակերպել՝ մեր վարիչ շրջանները յոյս ունէին դորանով առնել ռուսների սիրտը: Ասում էին, որ Վրացեան «ռուս օրիենտացիա» ունի: Մենք չէինք կարող ի հարկէ մարգարէ լինել, բայց այսօր փաստ է, որ միայն «օրիենտացիան» չէր կարող բաւարարել Մոսկուային: Ռուսները բոլշեւիկ դիմակի տակ՝ ձգտում էին գրաւել Կովկասը, վերահաստատել այստեղ իրանց նախկին տիրապետութիւնը, և միջոցների մէջ խտրութիւն չէին դնում:

Երբ Վրացեանի այդ «օրիենտացիան» էլ չօգնեց, և մեզանից պահանջեցին «մի փոքր կարմրել»՝ Դրոյին վիճակ ընկաւ այդ կարմիր ներկի նախապատրաստական աշխատանքները: Շատ հետաքրքիր է, որ մեր այդ անուանի հայդուկը խելօք, յանդուգն, անձնանուէր ու տոգորուած Ռաֆֆու երազներով՝ 18 թուին, հայկական անկախութեան օրից՝ յառեց ռուս գեներալներին և սպաներին, և շատ սիրում էր նմանուել ռուս զօրավարի: Բոլոր մարդիկ, իրանց փառասիրական ձգտումներում՝ ունեցել են իրանց թուլութիւնները: Եւ Դրօ, թողնելով հայդուկի շրջանը՝ անցնում է դէպի վայր, որ արկածապէս չի կապւում նրա էութեան հետ: Հայդուկը և ռուս սպան տրամագծօրէն տարբեր ոյժեր են, և բացա-

ռում են մէկը միւսին: Շրջապատելով իրան ռուսներով և ռուսախօսներով, հայկական իշխանութեան մէջ ռուս զինուորական շտաբ ստեղծելով՝ Դրոն հեռացաւ հայրենի իդեալներից: Եւ այստեղ մեր առաջ ծաւալւում է մի բնորոշ հոգեբանական տեսիլ: Դաշնակցութեան պատգամները կարծես գոլորշիանում ու երկինք են բարձրանում՝ և հայդուկ Դրօ, իր իդեալում սիրելի և հեղինակալից անցնում է մի շրջան, ուր շատերին ինքն է ատելի, շատերն էլ խորթ ու օտար են իրան...

Եւ Դրոյի այդ նոր տրամադրութիւնը, որ այնչափ անհարազատ էր նրան որչափ գուցէ և անխուսափելի՝ առիթ տուեց անուանելու նորան և եթէ ոչ կողմնակից ռուսների, գէթ «ռուս օրիենտացիա» ունեցող... Մտքերի և տրամադրութիւնների այդ մթնոլորտում՝ հրաժարուեց իշխանութիւնից հայկական վերջի կառավարութիւնը և պարլամենտը, և դաշնակցութեան պաշտօնական ներկայացուցիչ Վրացեան՝ յանձնեց երկրի գերիշխանութիւնը զօրքերի հրամանատար Դրոյին:

Մեր ծերունի սպարապետ Նազարբեկով արտօնուած հրամանատար հայկական ազգային զօրքերի՝ պէտք է խոստովանուել այսօր, աւելի շոյող ֆիկցիա էր, քան թէ ցանկալի իրականութիւն: Գեներալ Նազարբեկով թագաւորում էր՝ բայց ոչ կառավարում: Դիլմանի այդ հռչակաւոր հերոսը՝ հայկական իշխանութեան օրով շեղուեց իր դափնալից ընթացքից, և չբաւականանալով իր 18 թուի անուանի պարտութեամբ՝ նա 20 թուին Կարսի պարիսպների տակ տուեց իր վերջի անյաջող ճակատամարտը: Այստեղ վերջանում էր գեներալ Նազարբեկովի ձախալից գործունէութիւնը, և նա իջնում է հայկական մեծ աղմուկ հրամանատար բարձր-ութինից հայկական թնդանօթների վերջի պայթումների հետ միասին...

Ժառանգութեան օրէնքները ունեն իրանց անհասանելի գաղտնիքը, և իմաստի այդ հոգեբանութիւնը յանձնելով Դրոյին՝ գեներալ Նազարբեկովից յետոյ հայկական զօրքերի հրամանատարութիւնը ուղեկցում է նրան դէպի պատմական դիկտատուրա:

Երբ երկրի անյայտ մի բուռն մարդիկ, ծածանուելով ռուս սուիններ վերայ Դիլիջանի ձորում, 20 թուի Նոյեմբերի վերջերում յայտարարեցին orbi et urbi, որ «հայկական» «ռեւկոմը» ժամանել է «Հայաստան», Վրացեան, ի դիմաց Հայաստանի Հանրապետութեան՝ հրաժարուեց մեր ազգային դարաւոր իղձերից...

Շարունակելով բուռն կերպով հաւատալու դաշնակցութեան մարող աստղին՝ Վրացեան կարծում էր դեռ, որ ամէն բան կորած չէ:

Եւ դաշնակցական այդ ռոմանտիկ հոգեբանութեան առանցքում յանձնելով երկրի գերիշխանութիւնը իր մեծահամբաւ հայդուկներից մէկին՝ հայկական վերջի կառավարութիւնը տալիս է Դրոյին դիկտատորի դեկօրատիւ տիտղոսը...

Հայկական երազների այդ երդուեալ պահապանները կարծում էին դեռ, որ «մի փոքր կարմրելով»՝ նրանք կը խուսափեն ռուս գերութիւնից, և յանձնարարելով իրանց փորձուած մարտիկներից մէկին այդ «ներկարարի» փափուկ պար-

տաւորութիւնները՝ դաշնակցութիւնը դարձեալ երազում էր և դարձեալ ճոճւում իր գաղափարալից անցեալում...

Այդպէս էին հայկական իշխանութեան վերջի դառնալից տեսիլները, համեմուած սփոփիչ յոյսերով և դաշնակցութեան մեծ հաւատով դէպի ազգային սրբութիւնները, և դեռ բանակցում էր հայկական կառավարութեան հետ...

Այլ դաշնագիր մենք չէինք կարող ստորագրել, մենք հարկադրուած էինք ստորագրելու Աղէքսանդրապոլի դաշնագիրը, և գէթ դորանով փրկելու աւերից և արիւնից երկրի վերջին բեկորները, Երևանի նահանգը...

Աղէքսանդրապոլի դաշնագիրը հայկական պատուիրակութիւնը ստորագրեց իր բորբոքուած արիւնով և ջարդված սրտով: Իրազեկ երկրի անցուդարձին, կանգնած պայթալից կաթսայի մօտ՝ նա տեսնում էր իր չորս կողմը միայն թշնամի, միայն կրքեր և միայն դաւադրութիւն: Այդ ի ծայր փոթորկալից մթնոլորտում՝ մենք չէինք կարող անպատասխանատու խաղալ երկրի բախտի հետ: Մենք լիազօրուած չէինք վիճակ ձգելու: Հայոց վերջի հանրապետութեան վշտահար կառավարութիւնը, մանրամասն հաշուի առնելով այդ բոլոր ի ծայր ձախորդ պայմանները՝ կանգ առաւ փոքրագոյն չարիքի վերայ, եւ յանձնարարելով իր պատուիրակ-ութեանը՝ ստորագրել Աղէքսանդրապոլում միջազգային անցուդարձում չը տեսնուած մի հաշտութիւն: Հայոց կառավարութիւնը կատարում էր մի ակտ, որ նոյնչափ մահալից էր, որչափ և անխուսափելի՝ երկրի վերջի բեկորների պահպանութ-եան իմաստով:

Բայց ստորագրելով Աղէքսանդրապոլի դաշնագիրը՝ հայկական կառավարութիւնը կայացնում էր իր որոշումը ոչ միայն տուեալների, փաստերի և անելանելի դրութեան վերայ՝ այլև կատարում էր երկրի միահամուռ և հրամանալից պահանջը: Վեց տարի շարունակ պատերազմելուց և կռուելուց յետոյ՝ մենք կանգնած էինք շրջապատուած թշնամիներով և պառակտուած ներսում ազգուրացներով: Այդ պայմաններում չէր կարող բռնկուել հերոսալից տրամադրութիւն, և մենք անցանք ռուբիկոնը՝ զինուած սառնալից որոշումով, բայց դարձեալ յոյսերով և մեծ հաւատով դէպի սրբազան իրաւունքը...

Այդպէս էր Աղէքսանդրապոլի դաշնագրի իսկական իմաստը և նրա անվիճելի ապագան...

Եւ այսօր, դառնալով մեր այն ժամանակուայ վերապրումներին՝ մենք մեծ պատկառանքով դէպի հայկական կառավարութիւնը և դաշնակցութեան երդուեալները, պէտք է ասենք, որ մենք բոլորս գնում էինք մեր ժամանակի հոսանքի յետևից: Մենք կատարում էինք մեր վերջի պարտքը այնպէս՝ ինչպէս որ այդ մենք հասկանում և զգում էինք, և այդ զգացմունքների անկեղծութեան մէջ՝ նոցա բոլոր բացասական հետևանքներով հանդերձ, ոչ ոք մեզ կասկածել չի կարող: Եւ եթէ մենք որպէս անդամներ հայ հասարակութեան՝ որոշ չափով պա-

տասխանատու ենք մեր կառավարչական մեծամեծ սխալների համար, ըստ էութեան մենք հանգիստ ենք մեր խղճի առաջ:

Մեզանից գրեթէ ամէն մէկը՝ ջանալից և շատ բարձր տրամադրութեամբ ակօսում էր պետական հայրենի անդաստանը, և միշտ համոզուած էր, որ նա անում է ինչ կարող է, և թող կատարէ աւելի լաւ՝ ով կարող է...

Մենք գերմարդկային ոյժեր չունէինք, և մենք չէինք կարող կանգնեցնել պատմութեան ընթացքը: Մենք պատասխանատու չէինք հայ հասարակութեան և հայ ինտելեգենցիայի անպատեհ, անվերաբեր ու ապիկար վերաբերմունքի համար դէպի իրանց հայրենի պարտքը: Աղէքսանդրապօլի հայկական պատուիրակութիւնը գնում էր բանակցելու Կարաբեկիր փաշայի հետ՝ ջարդուած տրամադրութեամբ և պետականօրէն ոյժասպառ և ի ծայր պարտուած: Հայկական զօրքը գոյութիւն չունէր: Երկու ամսուայ ընթացքում միայն նահանջելով և միայն լքելով Կարսի նահանգի իր ահռելի դիրքերը՝ մեր զօրաբանակը հալուել ու չքացել էր: Նրա ռուս և ռուսախօս հրամանատարութիւնը՝ անընդունակ, ապիկար և անցաւակից երկրի իդեալներին, միշտ խորթ և միշտ օտար էր մեզ համար: Նա չը կոփեց մեր զինուորների քաջալից շարքերը, նա թալանի ընտելացրեց նոցա: Իսկ այդ գեներալներից և գնդապետներից մի քանիսը դրոշմուած ազգուրաց թոյնով՝ չը բաւականացաւ այդ *(տեքստը խզուած է)*

...թիւրքերի հետ կնքուած հաշտութեան մասին մեր դելեգացեայի նախագահը հեռագրեց Երևան և Թիֆլիզ, Հայոց Հանրապետութեան վերջին դիւանագիտական ներկայացուցչին: Ինչպէս և պէտք էր սպասել՝ Թիֆլիզի արուարձաններում անցուդարձ անող հայ ինտելիգենցիան մեծ ախորժակ ունէր «խիստ» քննադատելու հայ կառավարութեանը, և նա այդ անում էր թէ՛ ձրի և թէ՛ անպատասխանատու: Մի ամիս առաջ, Կարսի տագնապալից օրերում՝ նա դարձեալ բաւականացաւ դատարկաբան վերաբերմունքով դէպի իր հայրենիքի ծանր երկունքը: Փոխանակ իր խիտ շարքերով կոփելու կառավարչական կորովը, և իր մեծ հարստութեամբ նեցուկ դառնալու պետական վարկին՝ նա բաւականացաւ դարձեալ ձրի և դարձեալ անպատասխանատու ցոյցերով միայն: Թիֆլիզի կենտրոններում նա բազմամարդ թափոր կազմակերպեց, և կանգ առնելով ռուս «դիւանագիտական» ապարանքի առաջ՝ նա շատ սրտոտ սասանեցնում էր օդը ձրի, անհետևանք և զաւեշտալից սպառնալիքներով: *(տեքստը խզուած է)*

...բոլորով: Նրանք հարեցին դէպի բոլշեւիզմը՝ զոհելով ռուս բռունցքին մեր նուիրական և փայփայած ազգային իղձերը...

Պէտք չէ ասել ի հարկէ, որ այնտեղ ուր չը կար զօրք՝ չէր կարող և կառավարութիւն լինել: Պետութիւնը դարձել էր մի ֆիկցիա միայն, և կառավարութիւնը ցնցուած տարուբերւում էր իր վերջի վախճանալից ցաւերում: Երկիրը չէր կարող չանդրադառնալ այդ բոլոր թէ՛ ներսի և թէ՛ դրսի վերապրումները: Գանձարանը դատարկ էր, հայկական փողը ի ծայր ընկած, երկրի երակը՝ երկաթուղին

խզուած էր, և մենք պաշարուած էինք չորս կողմից, և պառակտուած ներսում՝ դաւաճան և կաշառուած մարդկանցով: Պէտք էր զարմանալ միայն, որ թիւրք հրամանատարութիւնը այնուամենայնիւ հաշուի էր առնում հայկական դելեգացիան, և փոխանակ անարգել տիրելու ամբողջ երկիրը՝ նա կանգ էր առել Գիւմրի և ...*(շարունակութիւնը բացակայում է)*

ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 16, թթ. 1-49; բնագիր, ձեռագիր:

DOC №17

Յուշեր՝ Կարսի անկումից յետոյ թուրք զօրահրամանատար Կարաբեքիր փաշայի հետ հայ պատգամաւորութեան ունեցած հանդիպման, Մոսկուայից Բ. Լեգրանի անունով ուղարկած գաղտնի գրութեան, Ալեքսանդրապօլում և Կարսի մարզում ստեղծուած ծանր իրավիճակի մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Դրսում մենք գործ ունէինք տաճկաց բանակի հետ, որ նուաճելով մեր երկրի գրեթէ կէսը՝ բախում էր մեր մայրաքաղաքի դռները: Իսկ երկրի ներսում, որպէս մի գերբնական անտեսանելի հրէշ՝ կանգնում էր դաւաճան և այլասեռուած հայը, որ յենուելով իր թիկունքում դարան մտած ռուս սուիններ և թուրք խուժանի վերայ՝ սպառնում էր ոչ միայն մեր քաղաքական սահմաններին, այլ և մեր լինել կամ չը լինելուն...***
- ***Լեգրան երևի ուզում էր ասել, որ «Հայաստանը» այդ մի զառանցանք է, իսկ իրականութիւնը՝ Ռուսաստանն է...***
- ***...շատերը կարծում էին, որ առ երես «կարմրելով մի փոքր»՝ նրանք բաւարարած կը լինեն հիւսիսում դարան մտած հրեաներին և նրանց այդպիսով, կը խաբեն...***
- ***...մեզանից ոչ ոք ոչ մի գաղափար չունէր բոլշևիզմի մասին, և ոչ մի հասկացողութիւն չունէր, թէ ի՞նչ դժոխային ցանցերով էր պատած մեր «միացեալ և անկախ Հայաստանը»...***
- ***Բայց այսօր Կարսի նախկին նահանգապետը ուղեկցում էր պրեմիերին դարձեալ դէպի Արփաչայ, որի պղտորուած ջրերի հորձանքում վերջինս ստիպուած է լինելու ստորագրելու այն Կարսի անջատումը, որ դեռ մի տարի առաջ արքայական ընդունելութիւն ցոյց տուեց հայկական պրիմիերին...***
- ***Եւ մեզ մնում էր միայն զարմանալ, թէ երկրի ի՞նչ մանրամասն ուսումնասիրութեամբ էր գալիս Կարսի նահանգը՝ թիւրքաց զօրաբանակի հրամանատարը:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

(Սկիզբը բացակայում է)... այդչափ անգոյն և այդչափ ողորմելի էին այն միջոցները՝ որոնցով հայկական կառավարութիւնը զրահաւորել էր իր պատուիրակութիւնը:

Շատ հետաքրքիր է, որ թիւրք դելեգացիայի կազմի մէջ էլ կար, օրինակ, նահանգապետ, այդ Էրզրումի նահանգապետն էր և պարլամենտի մի անդամ, բայց Անկարայի դելեգացիան ունէր իր ոչ միայն իսկական «մասնագէտները», այն նոյն իսկ մամուլի յատուկ ... *(փաստաթուղթը վնասուած է)*: Այսպէս թէ այնպէս, մեր դելեգացիան ուղեկցող «մասնագէտները» աւելի թամաշաչիներ էին:

Եւ այսօր, երբ մենք հնարաւորութիւն ունինք դիտելու անցած պատկերները իրանց իսկական իմաստում՝ մեզ մնում է միայն վկայել, թէ ո՞րչափ ողորմելի էին այն միջոցները, որ տրամադրել էր ներկայացուցչութեանը հայկական կառավարութիւնը:

Բայց մի ծաղրալից պատկեր ևս: Պատգամաւորութեան տնտեսական պէտքերը հոգալու համար՝ որպէս մետր դոթել, մեզ հետ ուղարկել էին մի տաճկաստանցի հայ, որ ամենաշատը մի էժանագին սրճարանում կարող էր սպասաւոր լինել: Իսկ դելեգացիայի պէտքերի համար տրուած էր հայկական դրամանիշներով մի քանի միլիոն ռուբլի, որոնք ոսկով գուցէ մի 200 ռուբլի. այնչափ մեծ խնամքով էր շրջապատուած հայկական դելեգացիան:

Բայց անցնենք մեր պատմութեանը: Դրսում մենք գործ ունէինք տաճկաց բանակի հետ, որ նուաճելով մեր երկրի գրեթէ կէսը՝ բախում էր մեր մայրաքաղաքի դռները: Իսկ երկրի ներսում, որպէս մի գերբնական անտեսանելի հրէշ՝ կանգնում էր դաւաճան և այլասեռուած հայը, որ յենուելով իր թիկունքում դարան մտած ռուս սուիններ և թուրք խուժանի վերայ՝ սպառնում էր ոչ միայն մեր քաղաքական սահմաններին, այլ և մեր լինել կամ չը լինելուն...

Այդ օրերում Երևանի ռուս «դեսպանութիւնը» մի առանձին աշխոյժ կեանք էր ստացել: Այդ դարանը մտած հայ մատնիչները վխտում էին այդ դեսպանութեան շուրջը մի առանձին բերկրանքով, իսկ դեսպանութեան ռուս և հայ անդամները, կարեկցալից (*մի ջնջուած բառ*) հայկական կառավարութիւնը, իրանց միջնորդութիւնն էին առաջարկում թիւրք արշաւի առաջն առնելու գործում:

Եւ հենց այդ օրերում հայկական կառավարութեան ձեռքը ընկաւ Մոսկուայի հետևեալ գաղտնի գրութեան պատճէն Երևանի ռուս «դեսպան» Լեգրանի անունով «Ուղարկելով Ձեզ 35 հազար ռուբլի ոսկով Հայաստանում պրոպոգանտա անելու համար, յայտնում ենք ի գիտութիւն, որ Հայաստանի դէմ բռնի միջոցներ առայժմ առնելու պէտք չկայ, որ մենք ունենք այնտեղ 138 գաղտնի գործակալներ և որ երկիրը ինքը կ՛ընկնի մեր գիրկը... »

Բայց աւելի հետաքրքիր էր, որ տողերիս գրողը այդ գաղտնի գրութիւնը պատահմամբ գտաւ Մինիստրի սեղանի վերայ, ուր բոլորը անցնում էին ու բոլորը ընկերավար կարդում... այդչափ գաղտնալից էր հայկական կառավարութիւնը և այդչափ կազմակերպ էր նրա դիւանը...

Բայց ինքը, Լեգրան, բացակայ էր, նա Բագու էր գնացել և նրան սպասում էին օրէն օր, թէ իր «դեսպանատանը» և թէ հայկական կառավարութիւնը...

Թիւրք հրամանատարութիւնը փակել էր Երևան-Թիֆլիզի միջև երկաթուղու երթևեկութիւնը և մարդիկ մեծ դժուարութիւններով գնում և գալիս էին Թիֆլիզ Դիլիջանի վերայով: Դեսպան Լեգրան վերադարձաւ Երևան Նոյեմբերի 20-ին կարծեմ: Նրան դիմաւորելու Դիլիջան էր ուղարկուած մեր կառավարութեան կողմից Երևանի պարետ փոխգնդապետ Շահխաթունին, որ մեծապէս օժտուած է հանդիսաւոր ընդունելութիւնների և սալօն ծէսերի համար:

Շահխաթունը մեր շնորհալի դերասանն է: Ասում են, ճանապարհին Լեգրան ասել էր պ. Շահխաթունուն - թողէք այդ «Երևանը», անցէք Մոսկուայի գեղարուեստական թատրոնը... Լեգրան, երևի, ուզում էր ասել, որ «Հայաստանը» այդ մի զառանցանք է, իսկ իրականութիւնը՝ Ռուսաստանն է...

Իր Երևան գալու միւս օրը, դեսպան Լեգրան՝ ուղեկցութեամբ վրացի յայտնի մեծամասնական Բուդու Մդիվանու, այցելեց Մինիստր նախագահին և կառավարչական կուլուարներում արդէն խօսում էին, որ Հայաստանի միակ փրկութիւնն է ստեղծուած դրութիւնից դուրս գալու համար այդ «թեթև սօվետիզացիան է», խորհրդային իշխանութեան հետ ձևական տեսք ընդունելն:

Պէտք էր կարծել, ինչպէս և պարզուեց յետոյ, այդ ռուսական օրենտացիայի կողմակիցների համար էլ պարզ չէր մեր օրերի այդ քաղաքական նոր ֆորմուլան, շատերը կարծում էին, որ առ երես «կարմրելով մի փոքր»՝ նրանք բաւարարած կը լինեն հիւսիսում դարան մտած հրեաներին, և նրանց այդպիսով, կը խաբեն...

Բայց այսօր մի բան միայն ակներև է, մեզանից ոչ ոք ոչ մի գաղափար չունէր բոլշևիզմի մասին և ոչ մի հասկացողութիւն չունէր, թէ ի՞նչ դժոխային ցանցերով էր պատած մեր «միացեալ և անկախ Հայաստանը»...

Եւ եթէ այն օրերում մենք չէինք կարողանում հասկանալ, թէ ի՞նչ զուգադիպութեամբ Կարսի անկման օրերում դեսպան Լեգրան մեկնում է Բագու և այնտեղից վերադառնում է ինչ որ Բուդու Մտիվանու հետ, գէթ այժմ, ի հարկէ շատ պարզ է, թէ ի՞նչ բարի խաղ էր կատարւում մեր շուրջը և ... (*ըստ երևոյթին կայ պակասող էջ*)...

...արտակարգ գնացքը, որ պատրաստւում էր մեզ համար, փայլում էր էլեկտրական լոյսով: Զուգադիպութիւնը երբեմն ոչ թէ պատահականութիւն է, այլ գուցէ պատմական դիպուածների դասաւորում, ու մարդիկ, որպէս բնածին սնոտիապաշտներ՝ տրամադիր են տեսնել այս և այն մեկնութիւն: Եւ այդ անհասանելի ճակատագրի բերմունքով էր երևի, որ Խատիսեան գնում էր այն սալօն վակոնով, որ ուղիղ մի տարի առաջ բերեց նրան դէպի Կարսի Արփաչայ: Ուղիղ մի տարի առաջ, շրջապատուած գեներալներով, հասարակական գործիչներով ու փայլուն շքախմբով՝ Մինիստր նախագահ Խատիսեան Արփաչայի վերայ ընդունում էր Կարսի նահանգապետի պատուաւոր զեկուցումը նահանգի դրութեան մասին, և շատ բարձր տրամադրութեամբ լսում այդ միջոցում ազգային հիմնը:

Բայց այսօր Կարսի նախկին նահանգապետը ուղեկցում էր պրեմիերին դարձեալ դէպի Արփաչայ, որի պղտորուած ջրերի հորձանքում վերջինս ստիպուած է լինելու ստորագրելու այն Կարսի անջատումը, որ դեռ մի տարի առաջ արքայական ընդունելութիւն ցոյց տուեց հայկական պրիմիերին...

Երբ դելեգացիայի նախագահը մտաւ սալոն վագոն՝ մենք բոլորս յուզուած և ճնշուած էինք:

Կան մոմենտներ, երբ մարդկանց տրամադրութիւնը անդրադառնում է դէպի շրջապատը անկախ խօսքերից և հառաչանքներից, և այդ զգայուն ու վիրաւոր տրամադրութիւնը խմորուել էր դելեգացիայի անդամների և նոցա ուղեկցողների շարքերում, անկախ խօսքերից և որևէ մեկնութիւններից...

Բայց ելքը ուղեկցում է ամէն մի դրութեան, և մենք լուծեցինք մեզ ճնշող մթնոլորտը և շտապելով առանձնանալու մեր կուպեներում... Եւ մեր այդ առանձնակի հոգեբանական վերապրումներով, խորին լռութեան և գիշերուայ թանձր խաւարի մէջ՝ մեր գնացքը շարժուեց դէպի Աղէքսանդրապոլ...

Բնութիւնը ունի իր մեծ գաղտնիքները, և այդ հանելուկների շուրջը մարդկութիւնը շարունակում է դեռ մաքառել ու հաւատալ: Մեր ձախորդ օրերը ստացել էին արդէն այդ ընթացքը, և մռայլ ու ճնշող տեսիլները կարծես թէ յետևում էին իրարու: Մի ամսից աւել Հայաստանը մազութ չէր ստանում Բագուից, և հայկական երկաթուղիների գնացքները բանում էին փայտով: Պետական ապարատը խանգարուել էր արդէն միանգամայն, և պաշտօնեաները իրանց վերջին ժամերն էին հաշւում... Այդ մթնոլորտում խօսք չէր կարող լինել պարտաւորութիւնների, պարտաճանաչութեան և մանաւանդ պատասխանատուութեան մասին, և ամէն ինչ կախուած էր պաշտօնեայի քմահաճ տրամադրութիւնից...(*առկայ է տեքստի խզում*)

...սպասում էր կայաններում փայտի, և Աղէքսանդրապոլ մենք հասանք ոչ թէ 5 ժամից յետոյ՝ ինչպէս առաջ, այլ միայն 40 ժամից յետոյ... Բայց այստեղ գուցէ իւր տեղում կը լինէր ասելու, որ Հայաստանի երկաթուղիները զինուորական դրութեան վերայ էին և ենթարկւում էին զինուորական հաղորդակցութիւնների պետին, որ դարձեալ մի ռուս գնդապետ էր, այն էլ արբեցող՝ Միխայլովսկի ազգանունով: Եւ այլ վերաբերմունք այդ ռուս գնդապետից դէպի հայկական կառավարութեան արտակարգ պատուիրակութիւնը, որ նշանակուած ժամին պէտք է Աղէքսանդրապոլ լինէր՝ չէր էլ կարելի ի հարկէ սպասել: Իսկ մեր յետևից, նոյնպէս շատ դանդաղ՝ գալիս էր մի աւելի մռայլ գնացք: Այդ մեծ զինուորական գնացքը ակամայից կարծես շարժուելով մերթ կանգնում, մտածմունքի մէջ ընկնում, ապա նորից շատ ծանր հառաչելով շարժւում և լալկան սուլում...: Այդ վշտահար գնացքը տանում էր Աղէքսանդրապոլ՝ թիւրք հրամանատարի ուլտիմատի պահանջով, մեր թնդանօթները, գնդացիրները, ջորիները և այլ պատերազմական աւարը:

Ես մոռացայ իր տեղում յիշել, որ երբ այդ ռազմամթերքը բարձում էին վագոնները Երևանի վագզալում՝ այդ զինուորական գնացքի պետ սպայ Վարդանեանն այնչափ յուզուած և ջղայնացած էր, որ չկարողացաւ զսպել իրան ու շատ բարձր հեկեկաց, յուզելով զինուորներին և վագզալի ամբողջ բազմութեանը...: Տիրեց մի աննկարագրելի թախիծ, և մարդիկ մռայլ ու պապանձուած կարծես՝ շարժւում էին որպէս ուրուականներ այդ դաժան մթնոլորտում...:

Կայարաններում երբ մեր գնացքները հանդիպում էին՝ մենք խուսափում էինք դուրս գալու վագոններից, թէ մի աւելորդ անգամ չը յուզուելու համար և թէ այն պատճառով, որ մեր երևալը աւելի ճնշում և նորոգում էր այդ գնացքի ուղեկցողների ծանր վերապրումները...: Իսկ նրանք՝ գնացքի այդ խեղճ պարետը և զինուորները, լուռ կանգնած էին այդ սգաւոր վագոնների շուրջը, կարծես վերջի անգամ բոլորելով այն նշխարները, որ այնչափ սիրելի ու այնքան մտերիմ էին այսօր:

Մեր գնացքը դանդաղ շարժուեց և այդ զինուորներից մէկը թախծալից դառնալով դէպի այդ անցնող գնացքը՝ սկսեց երգել - ինձ մի խնդրիր, ես չեմ յարգիլ, շատ տխուր է իմ երգը, նորա ձայնը կը խորտակի սրտիդ քնքոյշ բերկրանքը...

Նոյեմբերի 24, լուսաբացին մենք հասանք Աղէքսանդրապոլ: Դեռ Բայեանդուր՝ վերջին կայարանում, որ թիւրքերի ձեռքումն էր, մեր գնացքը անցաւ մի թիւրք սպայ, որին պատուիրուած էր ուղեկցել մեզ Աղէքսանդրապոլ: Երբ գնացքը մի երկու րոպէ կանգնած էր Բայեանդուր՝ վագոններին մօտեցան մի խումբ հետաքրքրուող թիւրք ասկերներ, որոնցից մէկը հարցրեց մեր պաշտօնեաների մէկին Կարսի վալին էլ (նահանգապետը) այստեղ է...

Նա լսել էր երևի, որ պատուիրակութեան կազմումն է և Կարսի հայկական նահանգապետը, և այդ պատճառով իրօք, նրան այդ հետաքրքրում էր...

Մի կէս ժամից յետոյ մենք արդէն Աղէքսանդրապոլ էինք: Վագզալի թիւրք պարետը՝ մի փոխգնդապետ, ի դիմաց տաճկաց զօրաբանակի հրամանատարի ներկայացաւ մեր դելեգացիայի նախագահին և ողջունեց մեր գալուստը: Նա խօսում էր ֆրանսերէն, և ինչպէս պարզուեց՝ շատ մօտ ծանօթ էր Կարսի նահանգի մեր բոլոր անցուդարձին: Նա մի քանի խօսքով կանգ առաւ իմ վարած քաղաքականութեան վերայ, ընդգծեց գեներալ Փիրումովի և գեն. Յովսէփեանի վերաբերմունքը դէպի երկրի իսլամ ազգաբնակութիւնը և այլն: Եւ մեզ մնում էր միայն զարմանալ, թէ երկրի ի՞նչ մանրամասն ուսումնասիրութեամբ էր գալիս Կարսի նահանգը թիւրքաց զօրաբանակի հրամանատարը: Աղէքսանդրապոլի վագզալը ես չէի կարողանում ճանաչել արդէն, այնչափ փոխուել էր այդ քսան օրուայ ընթացքում: Արդէն չկային դռներ, լուսամուտի ապակիները, սեղաններ ու աթոռներ, ամէն բան թալանուած և կողոպտուած էր: Ի զուր էի ես որոնում

վագզալում ծանօթ դէմքեր, այնտեղ վխտում էին տաճկաց զինուորները և մի երկու հայ մուրացկան... Մի ժամից յետոյ եկան թիւրքաց շտաբից մեզ համար ուղարկուած երկու աւտոմոբիլ և երկու կառք: Աւտոմոբիլներից մէկը այն աւտոմոբիլն էր՝ որով Կարսի հայկական նահանգապետը շրջագայում էր նահանգը: Դեռ երեկ այդ ավտոմոբիլի շուրջը խմբւում էին նորա բազմաթիւ ուղեկցողները և դիմաւորողները, խնդրատու, գանգատաւոր, այդ ավտոմոբիլը տեսել է հայկական իշխանութեան մեծ հանդէսներ և վկայ էր երբեմն մեծ ցոյցերի և մեծ հրավառութեան...

Իսկ կառքերից մէկը, երկու սև նժոյգներով, ժամերով կանգ է առել Կարսի նահանգապետի տան առաջ, այդտեղ էլ Կարսի բերդի նախկին պարետ գեներալ Փիրումովի կառքն էր...

Այդպէս փոփոխակի է աշխարհի բախտը, և որպէս այդպէս ունայն են իրաւունքը, փայլը և քաղաքական խաբուսիկ խմորումները: Եւ կեանքի այդ մօզայիկ հատուածները՝ կեանքի հետ միասին, անցնում, գնում են, թողնելով սերունդներին պատմութեան բեկորները, ուր հասարակական կեանքի ուսումնասիրողը կը գտնէ այնքան դրական և բացասական տուեալներ...

Մենք անցնում էինք Աղէքսանդրապօլի գրեթէ դատարկ փողոցներով: Թէև արդէն առաւօտուայ ժամի ինն էր, բայց փողոցներում մարդ չկար: Խանութները փակ էին, լուսամուտները վարագուրուած և այս ու այն դռան կիսաբաց անցքից երևում էին մարդկանց սիլուետները...

Այդպէս էր դեռ երեկ եռուն և բազմամարդ հայկական քաղաքի տեսքը:

Թիւրքաց շտաբը տեղաւորուել էր ամրոցում: Այդ հռչակաւոր ապարանքը երևի շատ բան էր յիշեցնում թիւրք հրամանատարութեանը: Նա կառուցուել է մեծանուն իշխան Բեհբութեանի օրով, և կրում է այն ահարկու անունը, որ անցեալ դարի 54 թուին Աղէքսանդրապօլի դիմաց, Բաշկադիկլարի սարահարթում ջարդեց թիւրքաց մեծ զօրաբանակը, և ստիպեց յամառ և գոռոզ Կարսը խոնարհուել հայ հրամանատարի առաջ...

Եւ երբ մեր կառքերը կանգ առան մեզ համար այդ ապարանքում պատրաստուած բնակարանի առաջ՝ մենք ոչ միայն ճնշուած էինք, այլև յուզուած-մենք անցնում էինք այն կամարներով՝ ուր երբեմն իշխել և ահաբեկել է հայ հռչակաւոր հրամանատարը...

Մեզ դիմաւորեցին թիւրք սպաները, և մենք անցանք մեզ յատկացուած սենեակները:

Հայկական դելեգացիայի նախագահը յանձնարարեց իր ադիւտանտ Ղորղանեանին անցնել թիւրքաց շտաբը իմանալու, թէ ե՞րբ տաճկաց հրամանատարը կարող է ընդունել հայկական պատուիրակութեանը: Եւ մի ժամից յետոյ՝ թիւրքաց սպաների առաջնորդութեամբ, պ.պ. Խատիսեան, Գիւլխանդարեան և ես անցանք թիւրքաց շտաբը, ուր բնակւում էր և ինքը՝ հրամանատարը:

Մեծ դահլիճում մեզ դիմաւորեցին բազմաթիւ սպաներ զանազան աստիճանների, և նոցանից աւագը առաջնորդեց մեզ դէպի հրամանատարի առանձնասենեակը: Աւագ զօրավար Կեազիմ Կարաբեկիր փաշայ, գլխաւոր հրամանատար արևելեան ճակատի՝ 40-45 տարեկան յաղթանդամ մի զօրավար է, Նապոլեօնի տարազով հագնուած: Նա լուրջ է, խելօք և իր գինը իմացող մարդու տպաւորութիւն էր թողնում: Նոր ընդարձակ սենեակը՝ և ննջարան էր և առանձնասենեակ: Մեծ գրասեղանի վերայ փռուած էր ռազմական մեծ քարտէսը, երկար մատիտ, հեռախօս և ուրիշ ոչինչ... Մեզ յետոյ պատմում էին, որ թիւրքաց հրամանատարը երկու բան է շատ սիրում - քարտէս և հեռադիտակ... Քարտէսի առաջ նա նստում է ժամերով, ուսումնասիրում և իր ռազմական դասաւորումները անում, իսկ որչափ ժամանակ նա ձեռքից վայր չէ թողնում հեռադիտակը... Ճիշտ այնպէս՝ ինչպէս որ մեր Կարսի գեներալները...

Կեազիմ Կարաբեկիր ստացել է բարձր զինուորական ուսում, ունի գրուածներ: Նա խօսում է ֆրանսերէն և գերմաներէն: Ալ. Խատիսեան, փոխանակուելով հրամանատարի հետ ողջոյններով, ապա ներկայացրեց նորան մեզ: Հրամանատարը սիրալիր վերաբերուեց դէպի իր հիւրերը, անմիջապէս բերեցին տաճկաց տրադիցիոն սուրճը փոքրիկ ֆինջաներով, և մենք, բոլորելով քարտէսով ծածկուած սեղանը, անցանք զրոյցի:

Կարաբեկիր փաշան շատ զգոյշ և կորեկտ, կրկնեց այն բոլորը, ինչ որ ասել էր մինիստր Արարատեանին և աւելացրեց, դառ նալով պ. Խատիսեանին. Բայց և այնպէս, երբ ես լսեցի, որ դուք, Ձեր կառավորութեան յատուկ յանձնարարութեամբ գնում էք Եւրոպայ, ես Էրզերումից յատկապէս եկայ Տրապիզոն: Ես յոյս ունէի, տեսնելու Ձեզ հետ և հաւատում էի, որ մենք կարող ենք գալ մեր դարաւոր վէճի մասին մի որոշ համաձայնութեան: Բայց դուք, ժպտալով ասաց թիւրքաց զօրավարը, խորշեցիք Անատոլիայի գեղածիծաղ ափերից և ես ստիպուած էի արշաւելու դէպի Ձեր սահմանները...

Բայց Թիւրքիայի ազգային մեծ ժողովը ոչ մի նուաճողական միտումներ չունէր, և սպառելով դիւանագիտական միջոցները՝ նա վճռեց զինուորական ցոյց կատարել Ձեր սահմաններում, յոյս ունենալով գէթ դորանով ստիպելու Ձեզ, Սևրից անջատ, մեզ հետ բանակցելու: Բայց, շեշտեց և երկարացրեց հրամանատարը, ուղղահայեաց դիմելով մեր երեքիս,- երբ իմ բանակի առաջաւոր մասերը, մի քանի հարիւր հոգուց բաղկացած, երևացին Ձեր սահմանների բարձրավանդակներում՝ դուք դատարկեցիք Օլթիից մինչև Կաղզուան և Սարիղամիշ:

Մեզ ոչինչ չէր մնում անելու՝ կարծես ներողութիւն խնդրելով վրայ բերեց հրամանատարը, մենք հանգիստ գալիս էինք Ձեր յետևից և ճակատագրին հաճոյ էր երևի, որ մենք կանգ առնէինք միայն այնտեղ, Արփաչայի ափերում... Բայց և այնպէս, վերջապէս [*աւարտեց*] Կեազիմ Կարաբեկիր, դառնալով դէպի

պ. Խատիսեան, ես շատ ուրախ եմ Ձեզ հետ գէթ այստեղ ծանօթանալու, որովհետև շատ անգամ լսել եմ Ձեր մասին...

Պ. Խատիսեան, որպէս ճկուն հռետոր՝ կարիք չունէր ... դարձուածներ որոնելու, նա նոյնպէս քաղցրալից պատասխանեց Տաճկաց հրամանատարին:

Երբ երեկոյեան ժամի 9-ին, մենք թողեցինք մեր բնակարանը ու անցանք դէպի պատրաստուած աւտօմօբիլները՝ երևաց թիւրքաց հրամանատարը շրջապատուած իր շքախմբով: Կարաբեկիր փաշան տրամադրել էր այս անգամ մեզ իր աւտօմոբիլը, և եկել էր մեզ ճանապարհ ձգելու: Շնորհակալութիւն ասելով զօրավարին նորա հիւրասիրութեան և ուշադրութեան համար՝ մենք թողեցինք իշխան Բեհբութեանի հռչակաւոր ամրութիւնները:

Բայց ես կ՛ուզէի մի քանի խօսք էլ ասել թիւրք հրամանատարի մասին: Կեազիմ Կարաբեկիր փաշան անպայման ընդունակ և լուրջ զօրավար է, և պատիւ կարող է բերել իր զօրաբանակին: Բայց նա անուն և հռչակ ստացաւ Կարսի անկումից յետոյ, և կործանուող Հայաստանի աւերակների առանցքում հիւսուեցին նորա դափնիքը:

Բախտը սիրում է տարուբերուել միշտ քմահաճ շրջափակում, և նա շատ անգամ ժպտում է մարդկանց անվերաբեր դոցա արժանաւորութիւններին և վաստակներին:

Թիւրքաց հրամանատարին վիճակուեց քշել հայկական բանակը առանց կռուի, և նա մտաւ Կարս ոչ որպէս յաղթող: Կարսի ամրութիւնների հարիւրաւոր ծանր թնդանօթները, որոնք պատմութեան ընթացքում խորտակել են թշնամու մեծ բանակներ և ամիսներով Կարսը անձեռնմխելի դարձրել՝ բախտի քմահաճ բերմունքով լռել էին Կեազիմ Կարաբեկիր փաշայի առաջ...: Եւ նա մտաւ Կարս մի քանի հարիւր քուրդ հրոսակների առաջնորդութեամբ, որոնց առաջ գլխակոր կանգնած էին թէ այդ ահռելի թնդանօթները և թէ Կարսում մնացած մեր գեներալները, սպաները և զինուորները...:

Կարսը ընկաւ, բայց ոչ նուաճուեց, ինչպէս չը յաղթուեց և հայկական բանակը, որին մի գերբնական ոյժ հեռացնում էր առաջացող թշնամուց: Հայկական բանակը, ինքնաբերաբար հոգեբանական մեծ վերապրումների առանցքում՝ թողեց պատերազմի դաշտը և հեռացաւ: Նա չարտայայտեց իր պատերազմական կորովը, և թողեց թշնամուն տարուբերուելու իր այդ առիթով ենթադրութիւններում: Եւ հայկական բանակը հեռանում էր հայրենի սահմաններից ոչ պարտուած և ոչ ջարդուած: Նա բռնուած էր իր ժամանակի տենդով, և ցրուելով գաւառները՝ նա տանում էր իր հետ իր վաղեմի կորովը, որ քնած, թմրած դրութեան մէջ՝ կը սպասէ նոր օրերի և նոր տրամադրութեան...:

Եւ այստեղ մեր վերջի հրաժեշտը տալով Աղէքսանդրապոլի կօնֆերանսի նախագահ թիւրքաց բանակի հրամանատար Կեազիմ Կարաբեկիր փաշային՝ մենք ընդգծում ենք մեր երեկուայ հակառակորդի բոլոր արժանաւորութիւնները:

Բայց և վերջին անգամ դասելով թիւրքաց հրամանատարին ոչ օրդինար զօրավարների շարքը՝ մենք չենք կապում նորա քմահաճ հռչակը Կարսի և հայ զօրաբանակի հետ: Այդ երկու հակառակ մէկը միւսին բացառող ոյժերը բնորոշելով մեր օրերը՝ մնացին մեկուսացած: Կարաբեկիր չը կարողացաւ ռմբակոծել Կարսը և ջարդել հայկական բանակը: Նա մտաւ Կարս ոչ որպէս երբեմն Կոմս Լօրիս, նա ստացաւ Կարսի բանալիները քմահաճ բախտի ձեռքերից:

Իսկ հայկական թշուառ բանակը՝ զոհ իր ժամանակի ցնորքների և ապականութեան, թողեց մեծահամբաւ ամրութիւնները, տանելով իր հետ նորից տրամադրուելու և նորից կայծակելու խորհրդաւոր խմորումը... Մեզ սպասում էր պատրաստ գնացքը: Էլեկտրական լոյսով վառուող սալօն-վագոնի դիմաց մեզ դիմաւորեց երկաթուղու պարետը, թիւրք փոխգնդապետը: Հայոց հանրապետութեան պրեմիերը՝ վճռական և մեծաեռանդ քայլերով անցաւ սալօն-վագոն: Ձախորդ օրերը չէին անդրադարձել նորա արտաքին տեսքի վերայ: Մեծ օպտիմիստ՝ նա կատարուող անցուդարձը հերթական, անցնող տեսիլ էր համարում, և իր սրտի խորքերում փայփայելով վաղեմի երազները՝ սպասում էր նոր գարնան և ջերմ օրերի...

Երևան դեռ չը հասած՝ մօտակայ կայարաններից մէկում իմացանք, որ Ռուբէն փաշան փախել էր բոլորից առաջ, և ստիպուած էր հեռանալու հայկական կառավարութեան նախկին նախագահ Հ. Յովհանջանեան և ուրիշները: Իսկ Դրոն՝ բախտի այդ քմահաճը, դեռ շարունակում էր «հայկական» զօրքի հրամանատար հաշուլրուել և սպասում էր նոր իշխանութեան և նոր հրամանի...

ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 17, թթ. 1-26, բնագիր, ձեռագիր:

DOC №18

Յուշեր՝ դաշնակցական կառավարութեան պարտութեան պատճառների, կառավարութեան անդամների և զօրահրամանատարների տակտիկական թերութիւնների, դաշնակցականների կողմից ստեղծուած «փրկութեան կոմիտէյի», բոլշևիզմի տարածման և ռուսական յեղաշրջման մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Մայիսի սկզբներում մի բուռն եկուորներ առաջ բերեցին Աղէքսանդրապօլում հակապետական բռնկում, և դաշնակցական «սիրելի ընկերներ» մի քանի ժամից յետոյ ձեռքից թողեցին իշխանութիւնը...***
- ***Շատ բնորոշ է, որ Կարսի նահանգում այդ շարժումը առաջ [եկաւ] միայն և միայն զօրամասերում և այն էլ այն գնդերում՝ ուր հրամանատարութիւնը ռուսախօս էր և օտար հայ զինուորին:***
- ***Մի բան ակներև էր, և նորանից մեծաչափ օգտուեցին հայրենիքի դաւաճանները...***
- ***...ապիկար պաշտօնեաները կաշառակեր, անպէտք և անշնորք՝ շարունակում էին պաշտօնավարել և կեղեքել երկիրը, և այդ մթնոլորտում պէտք է առաջ գար անբաւական տրամադրութիւն: Եւ երկրի այդ անբաւականութիւնից օգտուեցին խռովարարները, և մեր ներքին հաշիւների խնդիրը ձգեցին ընդհանուր հրապարակ, հրդեհի մատնելով երկրի անկախութիւնը և մեր պետականութիւնը:***
- ***Իրաւունքների և պարտաւորութիւնների այդ քաոսում խօսք չէր կարող լինել ի հարկէ իրաւակարգի և ուժեղ իշխանութեան մասին:***
- ***Մենք ոչինչ չը գիտէինք, թէ ի՞նչ է կատարւում մեր շուրջը, մեր բոլոր հաստատութիւններում բնակակալել էին գողերի և դաւաճանների մի մեծ բազմութիւն: Առաջինների հետ մաքառելու մենք ոյժ չունէինք, երկրորդ տեսակի գործիչները դիմակաւորուած էին, և մենք նոցա չէինք տեսնում:***
- ***Ամէնից առաջ ըմբոստացաւ և ապստամբուեց գեներալ Յովսէփեանի թիկնապահ վաշտը: Նա միացաւ այդ խռովութեան ռուս և հրեայ ղեկավարներին: Կարսի միւս զօրամասերը տրամադրութիւն չունէին միանալու գեն. Յովսէփեանի թիկնապահներին:***
- ***Գեներալ Փիրումով և գեն. Յովսէփեան միանգամից չքացան հրապարակից:***

- *Այդ ժողովում զօրքերի հրամանատար գեներալ Փիրումով յայտարարեց, որ զօրքը ամբողջովին անցել է խռովարարների կողմը և հրամանատարութիւնը միանգամայն անզօր է ճնշելու ապստամբութիւնը:*
- *Ռուս ազգային խորհրդի այն հրեայ նախագահը «էսէր», որին Սարգ. Մանասեան աքսորից վերադարձրեց Կարս, երկար փայտի գլխին մի կարմիր ցնցոտի կապած՝ առաջնորդում էր այդ գիշատիչ և ջարդարար հրոսակախումբը փողոցներով, ռուսերէն բարձր գոչում. «Թո՛ղ կորչի հայ իշխանութիւնը, կեցցէ՛ ռուս խորհրդային կառավարութիւնը... »:*
- *Մայիսի 12, փողոցում մի խումբ հայրենասէրների նախաձեռնութեամբ կազմւում է «Փրկութեան կոմիտէ», որ և որոշում է հրապարակից չքացած գեներալներից անկախ՝ կոչ անել զինուորութեանը և ցրել դարան մտած խռովարարներին:*
- *...գնդապետ Յարութիւնեան, Կարսի բոլոր զօրամասերի գլուխ անցնելով՝ սրիպում է դաւաճաններին անձնատուր լինել:*
- *Այս խռովարարները յարաբերութեան մէջ էին մտել բացի ռուսներից՝ թուրքերի, քրդերի և յոյների հետ, հայկական իշխանութեան տապալման ծրագիր մշակել:*
- *Շատ բնորոշ է, որ և Սարիղամիշում ըմբոստացան այն զօրամասերը, ուր հրամանատարութիւնը ռուսախօս էր, բայց աւելի ուշագրաւ պէտք է համարել, որ այդ բոլոր գեներալները և սպաները նախամեծար դարձան ռուս զօրաբանակում, նոցա հայրենիքի կործանումից յետոյ:*
- *Բոլշեւիկը պոչ չունէր, որի միջոցաւ կարելի էր բռնել նորան և նա առաջ էր գալիս այն չափով, որ չափով որ մենք անընդունակ էինք կառավարելու և իշխելու:*
- *Մեր այդ առիթով անսիստեմ և անյետևողական գործելակերպում՝ մենք աչքաթող արեցինք մեր բանակը: Իսկ այդ բանակը արդէն թունաւորուած էր և գնում էր հակազգային ճանապարհով:*
- *Հայ հասարակութիւնը տարուբերւում էր իր խղճի առաջ, նա պատասխանատու էր իր անտարբերութեան, երեսի և իր ապիկարութեան համար:*
- *Ի զուր են շատերը ձգտում տեսնելու մեղադրեալների նստարանի վերայ անհատներ, առանձին մարդիկ և հայկական կառավարութիւնը: Այդ տեղը պատմութիւնը վերապահած կը լինի հայ հասարակութեան համար, ի դէմս նորա ինտելեգենցիայի...*
- *Իսկ մի քանի օրից, երբ ռուս զօրաբանակը նուաճեց և Վրաստանը, գեն. Յովսէփեան՝ ամօթ կորցրած, կարմիր ռուս սաղաւարտը գլխին, մի քանի հայ զօրամաս բեկորների գլուխ անցած, յաղթական մտաւ Թիֆլիզ...*

- ***Չորս ամիս առաջ հայկական անուանի բանակը, որին հաշուի էր առնում ոչ միայն Տաճկաստանը՝ այլև նորա դաշնակից ռուսները, հնարաւոր չը համարեց պաշտպանել իր հայրենիքի սահմանները: Նա մոռացաւ 18 թուի կոտորածը, սովը, պանդխտութիւնը, մոռացաւ իր դարաւոր դատը, իրականացած երազները, և խաբուած իր կարծեցեալ բարեկամներից՝ նա թողեց իր դիրքերը, չը կռուեց ու նահանջեց...:***
- ***Եւ այսօր, կորցրած ամէն բան՝ մուրացկան օտարի դռներում, առանց հայրենիքի և իշխանութեան, բայց ռուս կարմիր սաղաւարտը գլխին, այդ այլասեռ և ապականուած հայը գալիս էր օտար հորիզոններում նախատինք և ամօթ վաստակելու...:***
- ***Գեներալ Յովսէփեան և գնդապետ Միրիմանով՝ երկրին խորթ և թշնամալից ծափերի տակ, պարգևատրուեցին ռուս կարմիր շքանշաններով:***
- ***Ծաղր էր այդ, թէ բախտի քմահաճ պատկեր՝ գեներալը և գնդապետը ստացան այդ ռուս շքանշանները մի ինչ-որ վրացու ձեռքից...:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

(Սկիզբը բացակայում է)...ինձ վերայ, բայց նորան ոչինչ չէր մնում անելու այլևս, զօրքի լքումը տարերային բնոյթ էր ստացել ու նա քայքայւում էր ժամէ-ժամ:

Պատերազմական օրէնքների համաձայն՝ կառավարութիւնը պէտք է տեղափոխէր Երևան առաջի հերթին պետական արժէքաւոր գոյքը, և երկաթուղին դորանով պէտք է զբաղուած լինէր: Կարսի նախկին նահանգապետը հազիւհազ կարողացաւ տեղաւորուել մի կեղտոտ ապրանքատար վագօնում, ուր ոչ կանգնելու և ոչ նստելու տեղ չը կար: Ինձ ասացին, որ այդ վագօնում տեղափոխւում է պետական գոյքը, բայց դուրս եկաւ որ այդ վագոնը ծայրէ ի ծայր լցւում էր մի երկու սպայի սեփական իրերով, ուր տեղաւորուել էին նոցա ընտանիքները:

Ինչպէս յետոյ իմացայ, այդ սպաները համբարակային, ինտենդանտ, տաք պաշտօններ... (*առկայ է տեքստի խզում*)...բեռները: Երկուսն էլ ռուսախօսներ էին: Թէ իրանք, պատերազմի ընթացքում «գլխապետ» դարձած այդ նախկին տիրացուները ու սափրիչները, և թէ նոցա կանայք՝ ամբողջ ժամանակ ռուսերէն էին կոտրատում, և ինձ համար մեծ տանջանք էր մի քանի ժամ այդ անկիրթ ու ամբարտաւան մարդկանց շրջանում գտնուել: Այդ մարդկանց տիպը բնորոշելու համար՝ բաւական կը լինի ասել, որ այդ նախկին հայ գործակատարներից մէկը հարկաւոր էր համարել իր որդուն բուն ռուսական անուն տալ: Եւ շատ բնական էր, որ այդ մարդիկ խորշում էին իրանց մայրենի լեզուից, և այդ նախկին սափրիչներն ու նոցա խաթուն կանայք՝ բացառապես միայն ռուսերէն էին կոտրատում: Եւ այդ սպաները, որ միայն լցնում էին իրանց գրպանները ու ծաղրում այն

կառավարութիւնը, որ այնչափ աջակցում էր նոցա հարստանալու՝ պէտք է պաշտպանէին հայրենիքի պատիւը...:

Շատ հետաքրքիր է, որ մինչ մինիստրները և պարլամենտի անդամները եկել էին Աղէքսանդրապօլ «թամաշի» յատուկ գնացքներով և յատուկ վագոններով՝ Կարսի նահանգապետի համար մի կուպէ անգամ չը գտնուեց: Նոյեմբերի 4-ին ես հասայ Երևան, և միւս օրը տեսնուեցի կառավարութեան անդամների հետ, ներքին գործերի մինիստր Սարգ. Արարատեան խնդրեց ինձ ժամանակաւորապէս ստանձնել իր օգնականի պաշտօնը և փոխարինել նորան: Ես երկար տարիների ընթացքում ընտելացել եմ դրսի ազատ աշխատանքի, և կաբինետ զբաղմունքը իմ բնոյթով չէր: Մինիստրի օգնականի առանձնասենեակը ոչ մի հրապուրիչ բան չէր ներկայացնում իրանով: Կ՛ասեմ աւելի, մեր առանձնակի իրականութեան մէջ, մինիստրի պաշտօնն էլ (*առկայ է տեքստի խզում*) ...և նշանակութիւնը... (*առկայ է տեքստի խզում*)

...Եւ երբ ներքին գործոց մինիստրը այդչափ մեծ կարծիք ունէր Աղէքսանդրապօլի ադմինիստրացիայի մասին՝ այդ քաղաքում արդէն ուժգին խմորուում էին հակապետական դաւերը, բայց այդ դարան մտած մարդկանց չէր տեսնում այդ ոստիկանութիւնը, և այդ «ինքնավարութիւնը»: Մայիսի սկզբներում մի բուռն եկուորներ առաջ բերեցին Աղէքսանդրապօլում հակապետական բռնկում, և դաշնակցական «սիրելի ընկերներ» մի քանի ժամից յետոյ ձեռքից թողեցին իշխանութիւնը...:

Երբ խռովարարները տիրեցին երկաթուղին և կտրեցին Կարսի հետ կապը՝ այդ խլրտումը ի հարկէ անդրադարձաւ և Կարսի նահանգը: Շատ բնորոշ է, որ Կարսի նահանգում այդ շարժումը առաջ *[եկաւ]* միայն և միայն զօրամասերում, և այն էլ այն գնդերում՝ ուր հրամանատարութիւնը ռուսախօս էր և օտար հայ զինուորին: Ժողովուրդը, հասարակութիւնը երտասարդ-ութիւնը չը մասնակցեց այդ խլրտման, և անցաւ կառավարութ-եան թիկունքը: Եւ պէտք չը կայ ասելու, որ այդ շարժումը համաժողովրդական չէր, որ նա շատ հեռու էր բոլշեւիկ բնոյթից: Մի բան ակներև էր, և նորանից մեծաչափ օգտուեցին հայրենիքի դաւաճանները կառավարութիւնը թոյլ էր, նա իր բարձր-ութեան վերայ չէր: Ոճիրը չէր դատւում, մեղաւոր չը կար, ապիկար պաշտօնեաները կաշառակեր, անպէտք և անշնորհք՝ շարունակում էին պաշտօնավարել և կեղեքել երկիրը, և այդ մթնոլորտում պէտք էառաջ գար անբաւական տրամադրութիւն: Եւ երկրի այդ անբաւականութիւնից օգտուեցին խռովարարները, և մեր ներքին հաշիւների խնդիրը ձգեցին ընդհանուր հրապարակ, հրդեհի մատնելով երկրի անկախութիւնը և մեր պետական-ութիւնը:

Այդպէս էր այդ ժամանակամիջոցի հոգեբանութիւնը, որ Մայիսեան օրերի անուն ստացաւ:

Բայց այդ օրերը ճակատագրական էին Հայաստանի համար:

Դժուար էր ի հարկէ գուշակութիւններ անել, դժուար էր երևակայել ներքին և արտաքին հանգամանքների աւելի աննպաստ և դժոխային դասաւորում: Բայց աւելի դժուար էր ենթադրել, որ կառավարութեան նոր գործելակերպը գալիս է վերջին հարուածը տալու մեզ, և միանգամայն կազմալուծելու իշխանութիւնը:

Հանգամանքների ճնշման տակ՝ Ապրիլին, դաշնակցութեան բիւրոն վճռում է արձակել Խատիսեանի կաբինետը, և երկրի ղեկը միահեծան իր ձեռքը առնել: Ես երբէք չեմ կասկածում ի հարկէ, որ բիւրոյի գաղափարական անդամները անկեղծ էին իրանց տրամադրութիւններում: Այսպէս թէ այնպէս, արդ անձն-ուրաց մեծ զանգուածը բերել, յանձնել էր ժամանակակից սերնդին մեր վաղեմի երազների իրագործումը, և նա չէր կարող անվերաբեր մնալ այն վայրկեանում, երբ վտանգուած էր նրա սրբութիւն սրբոցը, երբ անհասկանալի կամօքն պատմութ-եան՝ մենք պաշարուած էինք և ներսից և դրսից, և երբ վերջի գրոհը կարող էր կամ ճեղքել, կամ ճեղքուել...: Դաշնակցութեան բիւրոյի յանձնարարութեամբ՝ նրա արտօնուած պարագլուխ Համօ Յովհանջանեան, ինքն էլ իրան լաւ չը զգալով, այցելում է մինիստր նախագահ Խատիսեանին, և առաջարկում է նորան հրաժարուել...: Եւ մի երկու ժամից յետոյ պարլամենտի ճնշուած և երերուն մթնոլորտում՝ Ալ. Խատիսեան ներկայացնում է իր կաբինետի հրաժարականը...:

Իր բոլոր թեր և դէմ կողմերով հանդերձ՝ Ալ. Խատիսեան մեր առաջադիմական ցայտուն դէմքերից մէկն էր: Օժտուած մեծ ընդունակութիւններով՝ նա ունի անսպառ եռանդ և աշխատելու մեծ կորով: Դժուար է հաշուի բերել այն բոլորը՝ ի՞նչ է պահանջւում պետական գործչից, բայց և այդ բոլոր բարդ պայմաններում նա պէտք է ունենայ աշխարհիկ հմայք և վարչական իմաստ: Եւ ես կարծում եմ, որ այդ բոլորը ունէր Ալ. Խատիսեան, թէ որտե՞ղ կը հանգէր Խատիսեանի կաբինետը՝ այդ այլ խնդիր է ի հակէ, բայց որ նրա յաջորդը ոչ միայն չը փրկեց դրութիւնը, այլ միայն ընդհանուր քաոս և անիշխանութիւն ստեղծեց երկրում, դորա մասին էլ այժմ կարծեմ երկու կարծիք չի կարող լինել: Բայց Համօ Յովհանջանեան՝ որպէս մինիստր նախագահ, մի ֆիկցեա էր միայն: Կառավարութեան միւս անդամները դերակատարներ էին այս և այն չափով, և երկրի փաստացի իշխանութիւնը անվճռաբեկ և միահեծան, անցել էր Ռուբէն Տեր-Մինասեանի ձեռքը:

Ինքնահաւան և վստահ՝ նա իրան մասնագէտ էր համարում ոչ միայն զինուորական գործում, այլև ադմինիստրատիւ բարդ ապարատը կառավարելու մէջ, և այդ միտումներով՝ նա համ զինուորական մինիստր էր, համ էլ ներքին գործոց: Բայց նա առանձնակի ոչ թէ զբաղուեց՝ այլ միայն հմայուեց զինուորական գործերով, միանգամայն երեսի վերայ թողնելով երկրի ներքին գործերը: Նա կարծում էր երևի, որ այդ մինիստրութ-իւնը, որպէս իր ներքին տան գործերը, ոչ հե-

տաքրքրում է երկիրը՝ և ոչ նշանակութիւն ունի կառավարչական սիստեմում: Եւ այդ մեծ հրապարակը նա թողեց ինչ որ պատահական մարդկանց, որոնք փաշայի զրահի տակ վարչական կոմիկ անպատասխանատու փորձեր էին կատարում երկրի գլխին: Միակ մարդը այդ մինիստրութեան մէջ՝ այդ մինիստրի օգնական Սահակ Թորոսեանն էր: Ընդունակ և անպայման անկաշառ ու շիտակ, նա անկեղծ հայրենասէր էր, և դաշնակցական այն սակաւաթիւ այժմ գաղափարականներից մէկը, որ դեռ հաւատում էր իդեալներին, և այնտեղ սաւառնում: Բայց Ռուբէն փաշան և Թորոսեան չէին կարող պարփակուել մի կեղևի մէջ, և նա ստիպուած էր թողնել մինիստրութիւնը՝ որպէսզի չարգելէ Ռուբէն փաշային թագաւորելու, բայց ոչ ի հարկէ կառավարելու...:

Կառավարութեան նոր կազմը նոր ընթացք չը տուեց երկրին, նա չը լուծեց երկրի բորբոքումը: Դաշնակցութիւնը անկարող հանդիսացաւ զննելու երկրի հիւանդութեան պրոցէսը, և պատշաճ սպեղանի գտնելու: Նոր կաբինետի կազմը ընդգծեց երկրի առաջ միայն նորա գունաւոր դէմքը՝ բայց նոր բան երկրին ևս չասաց: Նա լիազօրեց իր անդամներին անցնել գաւառ, և «ուժեղ» իշխանութիւն ստեղծել, և «արտակարգ» դատարաններ հիմնեց դրութիւնը փրկելու համար: Բայց այդ բոլորը աւելի քան պոզիտիւ էր, և գալիս էր մի աւելորդ անգամ վկայելու, որ կառավարութիւնը պետական կուրս չունէր, որ խնդիրը բռնելու և ջարդելու մէջ չէ՝ այլ կառավարչական մտածուած սիստեմի, ուր բարդ մեքենայի բոլոր մասնիկները մէկը միւսին լրացնելով, և մէկը առանց միւսի ոչինչ կարող են միայն ստեղծել կառավարչական ապարատի ներդաշնակ ընթացքը: Բազմիշխանութիւնը մեր օրերի տագնապն էր և նա քանդեց մեր տունը: Կապեր արձակուած, մենք բոլորս ձգտեցինք հրամատարել և իշխել, իսկ աշխատող և ի կատար ածող դերերի համար մենք մարդիկ չունէինք, բազմատեսակ լիազօրները և ներկայացուցիչները բուսնում էին սնկի պէս, նրանցից ամէն մէկը ձգտում էր իրաւունք, իշխանութիւն բանեցնել, բայց ոչ աշխատել: Այդ ժամանակաւոր և քմահաճ տիտղոսները նսեմացնում էին պաշտօնի իմաստը, ձգում էին երկրում պաշտօնեայի նշանակութիւնը և այդպիսով երերում իրաւակարգը: Եւ այդ լիազօրութիւնների սիստեմը համաճարակի բնոյթ ստացաւ Մայիսեան օրերում, նոր կառավարութեան ժամանակ: Մինիստրը և պարլամենտի անդամը գաւառներում իր վերայ էր վերցնում պարտաւորութիւններ, որ միայն նսեմացնում էր երկրի առաջ նրա նշանակութիւնը, և զբաղուելով այդ երրորդակի և չորրորդակի գործերով՝ նա կազմալուծում էր տեղական պաշտօնէութեան կորովը: Իշխանութիւնը պէտք է միշտ պահպանէ իր հմայքը և դորանումն է իշխանութեան գաղտնիքը:

Իջնելով դէպի ցած, դէպի այն ֆունկցիաները, որ ունի իր առանձին պաշտօնեաները՝ մինիստրը դադարում է այլևս կառավարութեան անդամ լինելուց, և կորցնում է երկրում այն հմայքը, որ պէտք է պետական կուրսի անձեռնամխելու-

թեան համար: Եւ գաւառները ցրուեցին ոչ միայն մինիստրները՝ այլև պարլամենտի անդամները: Վերջիններից շատերը իրանք էլ չը գիտէին, թէ ինչու համար են ուղարկուած, նոցանից մի քանիսը 4-5 օր «իշխանաւորելուց» յետոյ՝ վերադառնում էին Երևան զեկուցում տալու, բայց այլևս չէին գալիս...:

Իրաւունքների և պարտաւորութիւնների այդ քաոսում՝ խօսք չէր կարող լինել ի հարկէ իրաւակարգի և ուժեղ իշխանութեան մասին: Մենք ձեռք առանք բոլոր միջոցները՝ երերելու և խախտելու այդ իշխանութիւնը, և այդ առանցքում լուծուեց մեր պետական բորբոքումը: Երբ մինիստրները և պարլամենտի անդամները շտապում էին գաւառները իրաւակարգը ամրացնելու՝ Երևանի մի կարևոր հաստատութեան մի աննշան ծառայող արձակուրդ է խնդրում Թիֆլիզ: Բայց այդ պաշտօնեան գնում էր ոչ թէ Թիֆլիզ՝ այլ Մոսկուա, ուր նա տեղեկութիւններ էր տանում իր թշուառ հայրենիքի մասին, և մի քանի ամսից յետոյ վերադառնում է Երևան ռուս զօրքի հետ միասին՝ բայց այս անգամ առանց դիմակի...:

Ես այդ փաստը, մէկը հազարից առաջ բերեցի միայն պարզելու, թէ որչա՞փ անտեղեակ էինք մենք մեր սեփական տան անցուդարձին, և որչափ անփոյթ: Մենք ոչինչ չը գիտէինք, թէ ի՞նչ է կատարւում մեր շուրջը, մեր բոլոր հաստատութիւններում բնակակալել էին գողերի և դաւաճանների մի մեծ բազմութիւն: Առաջինների հետ մաքառելու մենք ոյժ չունէինք, երկրորդ տեսակի գործիչները դիմակաւորուած էին և մենք նոցա չէինք տեսնում:

Ոստիկանութիւն մենք չունէինք, և չէինք կարող ի հարկէ ունենալ: Մենք անվերջ և անհաշիւ բազմացնում էինք միայն պաշտօնէութիւնը, պաշտօններ էինք ստեղծում մարդիկ տեղաւորելու համար՝ բայց չէինք վարձատրում աշխատանքը: ...(*առկայ է տեքստի խզում*)

...դեգերեց մեր գաւառներում Դալի-քեշիշ (խելագար քահանայ) կեղծ անուան տակ: Նա պատկանում էր մեր այն սերունդին, որ անձնուրաց հմայուեց Ռաֆֆու երազներում, և գնաց աշակերտելու այն մեծ գաղափարական հոսանքին, որ իննսուն թուականներում ստացաւ դաշնակցութեան մեծ և հեղինակաւոր անունը:

Երբ հայ-թուրքական կռիւների ժամանակ ես Նոր Բայազէտի գաւառապետ էի՝ Ար. Տ. Մելքոնեան, մեր անձնուրաց հայդուկների գլուխը անցած, շրջում էր գաւառները և հայ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը կազմակերպում: Այդ կռիւների տագնապ օրերում նա իր շտաբը Նոր Բայազէտի գաւառում զետեղեց, և այնտեղից ղեկավարում էր թէ՛ դէպի Դարալագեազ, և թէ՛ դէպի Աբարան...:

Մենք անձամբ ծանօթ չէինք նորա հետ: Բայց Դալի-քեշիշ իրան ապահով էր զգում այն վայրում, ուր ...(*առկայ է տեքստի խզում*) ...մեկնեց գաւառները:

Բայց դառնանք անցքերին Կարսի նահանգում:

Մայիսի սկզբներին Աղէքսանդրապօլի խռովութիւններից մի երկու օր առաջ՝ ես հեռագիր ստացայ, որ առանձին լիազօրութիւններով Կարսի նահանգը մեկնեց նախկին մինիստր Նիկ. Աղբալեան, պարլամենտի մի քանի անդամների ուղեկցութեամբ: Աղբալեանի գալուց յետոյ՝ Աղէքսանդրապօլի խռովարարները իրանց ձեռքը ձգելով իշխանութիւնը, փակեցին երկաթուղին և կտրեցին Կարսի հեռագրական կապը:

Մենք մնացինք մեկուսացած, և այդ առաջ բերեց շատ հասկանալի ջղայնացում և խրախուսեց Կարսում զանազան դիմակների տակ թագնուածներին:

Ամէնից առաջ ըմբոստացաւ և ապստամբուեց գեներալ Յովսէփեանի թիկնապահ վաշտը: Նա միացաւ այդ խռովութեան ռուս և հրեայ ղեկավարներին, տարաւ իր հետ մի քանի գնդացիրներ, և ամրանալով թէ իր զօրամասում և թէ գարաժում՝ սպառնալից դարձաւ իշխանութեան համար: Գեներալ Փիրումով և գեն. Յովսէփեան միանգամից չքացան հրապարակից: Կարսի միւս զօրամասերը տրամադրութիւն չունէին միանալու գեն. Յովսէփեանի թիկնապահներին:

Միւս օրը Աղբալեան՝ թատրոնի դահլիճում, զինուորականների մեծ բազմութեան առաջ օրուայ առիթով շատ զգացուած մի ճառ արտասանեց, և յուզեց աուդիտօրեան: Զինուորները և հասարակութիւնը ցրուեցին ազգային շատ բարձր տրամադրութեան տակ, և ես կարծում էի, որ տագնապը լուծուելու վերայ է: Բայց խռովարարները կապ ունէին Աղէքսանդրապօլի հետ, և այնտեղից եկող տեղեկութիւնները խրախուսում էին նոցա: Այդ պատճառով Աղբալեան իմ բնակարանում Մայիսի 9-ին մի բազմամարդ ժողով գումարեց ստեղծուած դրութեան առիթով: Այդ ժողովում զօրքերի հրամանատար գեներալ Փիրումով յայտարարեց, որ զօրքը ամբողջովին անցել է խռովարարների կողմը, և հրամանատարութիւնը միանգամայն անզօր է ճնշելու ապստամբութիւնը: Այդ պայմաններում մնում էր ժողովուրդը՝ որին և որոշեցին դիմել: Այդ խորհրդակցութիւնը տևեց մինչև ուշ գիշեր, բայց առաւօտը պարզուեց, որ գեներալները, ինչպէս և պէտք էր սպասել՝ տեղեկութիւն չունէին իրանց զօրամասերի անցուդարձի մասին, բացի հինգերորդ հետևակ գնդից, որի հրամանատարը մի ռուսախօս էր հայ. ազգանունով, գեն. Յովսէփեանի թիկնապահ վաշտից և Կարսի ամրութիւնների հրետանու, ուր հրամանատար կազմը դարձեալ և ռուսներ էին և ռուսախօս հայեր, մնացած զօրամասերը տոգորուած էին ազգային ոգով: Բայց խռովարարները ուժեղանում էին, նրանք իրանց ձեռքն էին ձգել Աղէքսանդր II բարձր և Կարսի վերայ իշխող ամրութիւնը, և թնդանօթները ուղղելով Կարսի վերայ՝ սպառնալիք և ուլտիմատում էին ուղարկել ինձ: Իսկ մի երկու ժամից յետոյ գարաժից՝ ուր ամրացել էին խռովարարները, «Կարսի ռեւկոմից» ես ու գեն. Փիրումով «հրամաններ» ստացանք, որ մենք արձակուած ենք մեր պաշտօններից...:

Նրանք գիտէին ի հարկէ, որ ազգային իշխանութիւնը, բոլոր կարգադրութիւնները նահանգապետի բնակարանումն էին, և այդ պատճառով մի երկու

թնդանօթ արձակեցին այդ ուղղութեամբ: Եւ ես բարեկամներիս պահանջով՝ մի երկու ժամով անցայ հարևան տունը...:

Իմ անունով արձակուած ռեւկօմի հրամանում ասուած էր, որ արձակելով ինձ պաշտօնից՝ նա Կարսի նահանգապետ է նշանակում Չալխուշեանին, այն մարդու որդուն, որ այսօր այնչափ մեծ հռչակ է ստացել Բուխարեստից մինչև Արաքսի ափերը...:

Բայց զուգընթաց այդ բոլոր նախորդ պայմանների հետ, ժողովրդի մէջ բարձրանում էր պատուախնդիր, ազգային տրամադրութիւնը և մեծ ծաւալ ընդունում: Խռովարարները՝ գեն. Յովսէփեանի թիկնապահ վաշտի և շօֆերների պաշտպանութեան տակ ամրանալով և շրջապատելով իրանց գնդացիրներով, պահանջեցին իրանց մօտ բանակցութիւնների համար գեներալ Փիրումովին և գեն. Յովսէփեանին: Երբ գեներալները գնացին խռովարարների մօտ՝ ժողովրդի մեծ բազմութիւն թափուեց այդ հրապարակը: Ունկնդրութիւնը տևեց երկու ժամ, իսկ ժողովրդի ջղայնացումը հասել էր ի ծայր: Եւ այդ էլ էկտրականացած մթնոլորտում գեներալները ցանկացան հաշիւ տալ ժողովրդին իրանց վարած բանակցութիւնների մասին: Գեներալներից աւագը Փիրումով ասաց՝ ռեւկօմի ասելով, հայկական իշխանութեան ժամերը հաշուած են, արդէն ռուս զօրաբանակը կանգնուած է Ակստաֆա երկաթուղու կայարանում և հրամանի է սպասում նուաճելու մեր երկիրը, բայց աւելացրեց թարգմանը, ռուսները բերում են մեզ հաց, շաքար, նաւթ և այլն...: Sapienti sat... Միւսները՝ ռուսները, հրեաները և մի քանի թուրքեր հայ դաւաճանների մասնակցութեամբ մեծ ցոյց կազմակերպեցին: Ռուս ազգային խորհրդի այն հրեայ նախագահը «էսէր», որին Սարգ. Մանասեան աքսորից վերադարձրեց Կարս, երկար փայտի գլխին մի կարմիր ցնցոտի կապած՝ առաջնորդում էր այդ գիշատիչ և ջարդարար հրոսակախումբը փողոցներով, ռուսերէն բարձր գոչում. «Թո՛ղ կորչի հայ իշխանութիւնը, կեցցէ՛ ռուս խորհրդային կառավարութիւնը... »: Եւ շատ ուշագրաւ պէտք է համարել, որ այդ տագնապ գիշերը, երբ քաղաքի ամբողջ հայութիւնը տենդոտ և ջղային արթուն մնաց՝ հինգերորդ հետևակ գնդի ռուսախօս հրամանատարը հնարաւոր համարեց պսակուելու և ուրախանալու...: Երբ խռովարները կարմիր ցնցոտի դրօշակներով անցնում էին զօրանոցների մօտով՝ այդ նոր ամուսնացած գնդապետը, արտասուքը աչքերին, որպէս մի սրբութիւն՝ հարկաւոր համարեց համբուրել իրանց այնչափ հարազատ այդ կարմիր ցնցոտին...: Եւ այդ այն գնդապետն էր, որ տեսնելով Կարսի պարիսպների տակ մօտեցող տաճկաց առաջաւոր մասերը՝ ամենաանամօթ կերպով ձգեց իր գնդի հետ զէնքը և փախաւ...: Իսկ այսօր, համազգային սուգի օրերում ամուսնանալով, նա իր թիկունքում զգում էր իր գնդի սուինները, որոնց նա թեքել էր տապալելու այն իշխանութիւնը, որ նրա պէսներին պահում, գնդապետի աստիճան տալիս և մեծարում էր բոլորին անյայտ արժանաւորութիւնների համար...:

Այդ չարաբախտ գիշերուայ առաւօտը՝ Կարսի վագզալից բերեցին ինձ Աղէքսանդրապօլից իմ անունով ռուսերէն ուղարկուած հետևեալ հեռագիրը. «Խնդրում եմ Ձեզ մնալ Ձեր պաշտօնում, և միևնոյն ժամանակ ստանձնել խորհրդային իշխանութեան ներքին գործերի կօմիսարի պաշտօնը: Բժիշկ Արտաշէս Մելքոնեան»:

Բժիշկ Մելքոնեան մեր ռօմանտիկ դէմքերից մէկն էր: Տարուած իր ժամանակի գաղափարներով՝ նա մեծ թափով նետուեց իր հայրենիքի ազատագրութեան կռուի ասպարէզը, և տարիների ընթացքում ...(*առկայ է տեքստի խզում*)

...պաշտօնեան ամիսներով ռոճիկ չէր ստանում, և համաձայնուեցէք՝ պէտք է մեծ իդեալիստ լինել, որ այդ մթնոլորտում չը խախտել ռօմանտիզմը...: Բայց լաւ ոստիկանութիւնը՝ բացի պաշտօնավարձը ունի և այլ պէտքեր: Իրազեկ լինելու ցանկութիւնը կապուած է և մեծ ծախքերի հետ, բայց ուզում էինք ձրի ստանալ այդ տեղեկութիւնները, կամ այնպիսի միկրօսկօպիկ չափերով էինք վարձատրում այդ աշխատանքը, որ առաջի տեղեկութեանը երկրորդը արդէն չէր յետևում...:

Այդ պայմաններում առանձին լիազօրութիւնները և բազմատեսակ պաշտօնները չէին կարող փրկել դրութիւնը: Եւ մենք արդէն տեսանք թէ ի՞նչ արեցին այդ «արտակարգ» միջոցները: Նրանք ի ծայր խճճեցին երկրի ներքին դրութ-իւնը, և միայն արագացրեցին իրերի անխուսափելի այդ մթնոլորտում լուծումը:

Այդպէս էր դրութիւնը, երբ մի քանի մինիստրներ և պարլամենտի անդամների մի մեծ բազմութիւն ...(*առկայ է տեքստի խզում*)

...գաւառապետը «Մշակի» աշխատակիցն էր, և «Գաւառական նամակների» հեղինակը: Իսկ ես սիրում էի հովանաւորել և բարեկամութիւն անել այն բոլոր մարդկանց հետ՝ որոնք ժողովրդի միջից լինելով, գաւառի և ժողովրդի սիրահարներն էին...: Անցան տարիներ, վերջացան հայ թուրքական կռիւները՝ Դալի-քեշիշ ընդհարուեց դաշնակցութեան գործիչների հետ, և թողնելով կուսակցութեան շարքերը՝ անցաւ արտասահման: Պատերազմը և յետագայ մեծ դէպքերը նորից հրապարակ նետեցին Արտ. Մելքոնեանին:

Ռուսաստանի պետական յեղաշրջումը լայն հեռանկարներ է բացում մարդկանց առաջ, և Արտ. Մելքոնեան, որ իր հայրենիքի անկեղծ սիրահարներից մէկն էր անշուշտ, և մէկն էր այն դէմքերից, որ ծանօթ է երկրին, հայ լեզուին և գրականութեանը՝ նորից հրապարակ է գալիս իր երազներով ու իր ռօմանտիկ տրամադրութիւններով:

Բայց դաշնակցութիւնը տիրող ու հմայիչ կուսակցութիւն էր, և գործել անջատ նորանից՝ կարելի էր միայն մի այլ կուսակցութեան անուան տակ, և բժ. Ար. Մելքոնեան՝ իրան «էսէր» յայտարարեց...: Բայց Դալի-քէշիշ իր բնոյթում էսէր չէր ի հարկէ, նա մեծ հայրենասէր էր և իր հոգու բոլոր վերապրումներում մնաց մինչև ի վերջը ցայտուն դաշնակցական: Դաշնակցութիւնը բաժանեց նորան,

նա կռիւ մղեց այդ կուսակցութեան ղեկավար դէմքերի հետ, բայց օրգանապէս նա մինչև ի վերջը մնաց դաշնակցական, և դեգերեց նորա զառանցանքներով՝ միայն այլ անուան տակ...:

Զեմստվոյի խմորման պատիւը մեր երկրում նորան է պատկանում: 18 թուին, երբ բոլորը «ինքնորոշւում էին»՝ նա անցաւ Դիլիջանի ձորը և այդ գեղաձիծաղ կիրճում փորձեց սերմանելու համայնական գաղափարների իմաստը, Զեմստվօ կազմակերպեց: Երբ ժողովրդական առաջի այդ առիթով շատ բազմամարդ համագումարում, ուր մասնակցում էին ոչ միայն Ղազախի ազգաբնակութիւնը՝ այլև Նոր Բայազէտի գաւառի մի մասը, իրաւասուների առաջ դրուեց Զեմստվոյի վարչական մարմնի կազմակերպութիւնը, ժողովը պահանջեց, որ վարչական մասը Զեմստվոյի յանձնուի տողերիս գրողին: Այդ առիթով ինձ հեռագրեցին Թիֆլիզ, ուր ես այն ժամանակ ապրում էի, իսկ մի քանի օրից յետոյ եկաւ ինձ հրաւիրելու և ինքը՝ բժ. Մելքոնեան: Եւ այստեղ առաջի անգամ ես տեսայ այն Դալի-քեշիշին, որի մասին գիտէի վաղուց: Ես անցայ Դիլիջան, բայց մի երկու շաբաթից յետոյ պարզուեց, որ աշխատել այդ մթնոլորտում անկարելի է: Բժիշկը անկեղծ անկաշառ հայրենասէր էր՝ բայց տարուած էր mania grandiosa հիւանդութեամբ, և ես թողեցի Դիլիջանը: Բայց մենք բարեկամ մնացինք Արտ. Մելքոնեանի հետ: Եւ ես չէի կարող չը յարգել մի մարդու, որ նուիրաբերել էր իր լաւագոյն տարիները իր երկրին և ժողովրդին:

Այդպէս էր բժ. Արտ. Մելքոնեան, որին, անհասանելի կամօքն պատմութեան՝ վիճակւում էր այսօր նորից հրապարակ գալու և լուծելու մի հանգոյց, որի կապանքների շուրջը նա այնքան զառանցել էր և տարիներ աշխատել...:

Ի պատասխան իմ ստացած առաջարկութեան՝ մի երկու ժամից յետոյ ես ուղարկեցի Աղէքսանդրապոլ բժ. Ար. Մելքոնեանին, բայց հայերէն, հետևեալ հեռագիրը. «Ջերմօրէն շնորհակալ եմ Ձեր բարեկամական ուշադրութեան համար: Ձեզ հետ միասին մենք միշտ սիրել ենք նիրհել մեր անկախութեան և ցայտուն ազգային երազների առանցքում, և այսօր երբ վտանգուել է հայրենիքը՝ մենք պէտք է լինենք ժողովրդի մօտ և նորա հետ միասին: Բայց սպառնալից վտանգի ալիքները անդրադարձել են արդէն դէպի Տաճկական Հայաստան, և թիւրք հրոսակախմբերը թողնելով իրանց որջերը՝ շարժուել են արդէն դէպի մեր սահմանները: Կարսի ռուսները, երբեմն հզօր Ռուսաստանի այդ անարժան ժառանգները միանալով թիւրքերի և թուրքերի հետ՝ ոտի են կանգնել մեր դէմ և այսօր մեծ ցոյց կազմակերպելով, հրապարակով գոռում էին՝ Կորչի հայկական իշխանութիւնը և կեցցէ Խորհրդային Ռուսաստանը...: Եւ այդ տագնապալից օրերում՝ երբ խորտակւում են մեր վաղեմի տենչանքները, որի ճանապարհներում մենք թափել ենք այնքան արիւն և այնքան արցունք, ես կոչ եմ անում դէպի Ձեր հռչակաւոր հայդուկային անցեալը: Չէ՞ որ այնտեղ է Ձեր հաւատամքը, Ձեր հոգու նուիրական զգացմունքը, չէ՞ որ այնտեղ են հունցուել Ձեր իդեալները և չէ՞ որ

այդ գաղափարների իրագործման համար Դալի-քեշիշ այնքան դեգերել և այնչափ տանջուել է...:

Եւ ես ուզում եմ հաւատալ, որ այդ մի տեսիլ էր միայն, որ Դուք չէք կարող ապրել առանց ժողովրդի և հայրենիքից դուրս: Եւ այդ միտումներով ես դառնալից հրաժարւում եմ Ձեր առաջարկութիւնից և բարձր գոչում Ձեզ. Ես մնում եմ իմ տեղում և հայրենի իդեալների հետ... Նահանգապետ Ղորղանեան»: Ես չեմ կարող չը հաւատալ, որ բժ. Արտ. Մելքոնեան իր հոգու խորքերում չը յուզուէր այդ հեռագրից յետոյ:

Նա բոլշեւիկ չէր, նա իրան չէր ներկայացնում գալիք բարդութիւնները: Նա ուզում էր օգտուել ընդհանուր անբաւական մթնոլորտից՝ և ստիպել դաշնակցութեանը նորից ճանաչել իրան...: Նա ձգտում էր դէպի փառք և իշխանութիւն: Բժ. Ար. Մելքոնեան իր երկրի մեծ սիրահարներից մէկն էր, և մէկն էր այն դէմքերից՝ որոնք կրաւորական դերերի համար չեն ստեղծուած: Եւ նա ընկաւ այդ թիւրիմաց կռւում՝ բայց ընկաւ որպէս Դալի-քեշիշ, և մինչև վերջը մնաց անկեղծ և ցայտուն դաշնակցական իր հոգու վերապրումներով, իր անցեալով և ներկայով և իր ամբողջ էութեամբ:

Թէ՛ բժ. Մելքոնեանի հեռագիրը և թէ՛ իմ պատասխանը ես պատուիրեցի տպագրել և տարածել քաղաքում, ուր ազգային պատուախնդրութեան բորբոքումը աճում էր ժամէժամ:

Մայիսի 12, փողոցում մի խումբ հայրենասէրների նախաձեռնութեամբ կազմւում է «Փրկութեան կոմիտէ», որ և որոշում է հրապարակից չքացած գեներալներից անկախ՝ կոչ անել զինուորութեանը և ցրել դարան մտած խռովարարներին:

Բայց մի քանի խօսք էլ այդ իմպրօվիզ «Փրկութեան կոմիտէի» մասին:

Տպաւորուող և էքսպանսիւ բնաւորութիւնը միշտ խմորել է յուզալից մթնոլորտ, և երբեմն անգիտակցօրէն այդ բորբոքումի առաջ ընկնելով՝ ստեղծել է ուժեղ հոսանք և բարձր տրամադրութիւն: Եւ հայկական երազները անշուշտ ունեն իրանց անիմանալի վիճակը, և այդ վիճակը նոցա է վերապահել ազգային զգայուն լարերի շոյումը: Այդ մթնոլորտում առաջ եկաւ «Փրկութեան կոմիտէն»: Երբ պարլամենտի անդամները, նահանգապետը և ուրիշները խորհրդակցում էին ստեղծուած դրութեան մասին՝ ալեկոծ և ջերմալից երիտասարդութիւնը տարուբերւում էր նահանգապետի տան շուրջը: Անհամբեր և կրակոտ՝ նա ձգտում էր դէպքերը իր յետևում թողնելու, և անվերաբեր թշնամու ոյժերին՝ նա նախօրոք ջարդում ու խորտակում էր...: Եւ այդ ալեկոծ և յուզալից տրամադրութիւնը արտայայտելու վիճակուեց երիտասարդ իրաւաբան Պարոյր Լևոնեան-Ջիւանուն՝ «Ձախորդ օրերի» հեղինակի որդուն: Հաշիւ չը տալով իրան և անգիտակից իր անելիքներում՝ Լևոնեան խնդրում է ոստիկանապետին օրկեստր երաժշտութիւն ուղարկել: Եւ երբ հնչում է ազգային հիմնը՝ «Մեր հայրենիք, թշուառ, ան-

տէր, մեր թշնամուց ոտնակոխ... », Ջիւանին բարձրացնելով գլխարկը՝ արտասուքը աչքերին դառնում է իր շուրջը խմբուած և ալեկոծ երիտասարդութեանը և ասում՝ Ընկերներ, ազգային պատիւը և մահը միշտ մարտնչել են իրար հետ, և մեզ վիճակւում է պաշտպանել այդ պատիւը ժողովրդական ոյժերով...: Կազմակերպենք Փրկութեան կօմիտէ, և ժողովուրդը կը տանէ մեզ դէպի դափնիք և յաղթութիւն...:

–Կեցցէ՛ Ջիւանին, կեցցէ՛ Պարոյրը,– թնդում է էքսպանսիւ երիտասարդութիւնը:

Եւ Լևոնեան, այդ կոմիտէի այդ շատ բարձր տրամադրուած մի խումբ երիտասարդութեան առաջը՝ երաժշտութեան հնչիւնների ուղեկցութեամբ շարժւում են դէպի քաղաքի կենտրոնը, հրդեհելով մթնոլորտը ազգային խանդով: «Մեր հայրենիքը» շոյող և տրամադրող հնչիւնների շուրջը մի քանի րոպէից յետոյ խմբւում է ժողովրդի ահագին բազմութիւն, և այդ ժողովրդական մեծ ցոյցի հանդէպ՝ գնդապետ Յարութիւնեան զօրահանդէս է ընդունում...: Լևոնեան և կոմիտէի միւս անդամները նետւում են այստեղ և այնտեղ, ոտի է կանգնում քաղաքի ամբողջ ազգաբնակութիւնը, և գնդապետ Յարութիւնեան Կարսի բոլոր զօրամասերի գլուխ անցնելով՝ ստիպում է դաւաճաններին անձնատուր լինել: Նոցա միացած զինուորութիւնը ոչ միայն խոստովանւում է իր մոլորութիւնը՝ այլև ազգային հոսանքի առաջն անցնելով յետապնդում է փախչողներին: Բայց այդ եկուոր խռովարարներից շատերին յաջողւում է փախչել և ազատուել ժողովրդական զայրոյթից, որովհետև ճանապարհի վերայի մի ռուս հրեաների գիւղում նոքա ապաստան և պաշտպանութիւն են գտնում: Ձերբակալուեց ի հարկէ և այն հրեան, որ ռուս ազգային խորհրդի նախագահն էր: Խուզարկութեան ժամանակ նրա մօտ գտնուեցին փաստաթղթեր՝ որոնք մանրամասն լուսաբանում էին նորա դևային գործունէութիւնը: Պարզուեց, որ ռուս ազգային ժողովը «էսէր»-ների դրօշակի տակ՝ բոլշեւիկ կազմակերպութիւն էր, կապ ունէր Թիֆլիզի և Ռօստովի հետ: Այս խռովարարները յարաբերութեան մէջ էին մտել բացի ռուսներից՝ թուրքերի, քրդերի և յոյների հետ, հայկական իշխանութեան տապալման ծրագիր մշակել: Ձերբակալուեցին ի հարկէ թէ՛ թուրք և թէ՛ յոյն ազգ. խորհրդների նախագահները: Գործը անցաւ Արտակարգ դատարանին՝ և դատարանի առաջ հրեան խոստովանուեց իր բոլոր արածը: Թուրք և յոյն նախագահները միայն խաղալիք էին այդ դև հրեայի ձեռքում, և դատարանը այնպէս էլ ի հարկէ վերաբերուեց այդ վերջիններին: Այդպէս էր այն «էսէր»-ը՝ որին խեղճ Մանասեան վերադարձրեց Կարս: Բայց նա չէր կարող երևակայել ի հարկէ, որ այդ «էսէր»-ը ոչ միայն փորում է իր փայփայած Հայաստանի հիմը՝ այլ ամէնից առաջ իր, Մանասի համար է գերեզման պատրաստում...: Շատ բնորոշ է, որ և Սարիղամիշում ըմբոստացան այն զօրամասերը՝ ուր հրամանատարութիւնը ռուսախօս էր, բայց աւելի ուշագրաւ պէտք է համարել, որ այդ բոլոր գեներալները և սպաները նա-

խամեծար դարձան ռուս զօրաբանակում՝ նոցա հայրենիքի կործանումից յետոյ: Այդ թշուառականները, որ այնպէս երկչոտ՝ «ռազմական միտումներով», փախչում էին Կարաբեկիր փաշայի հորդաներից՝ շատ բարձր տրամադրութեամբ մի քանի ամսից յետոյ արշաւեցին իրանց հայրենիքի վերայ: Նրանք կրակ ու հուր թափեցին իր երկիրը և իր սուվերէն իրաւունքները պաշտպանող հայ ժողովրդի վերայ, և յաղթողի գոռոզ դէմքով մտնելով աւեր և թշուառ Հայաստան՝ օտարի ձեռքից դափնիք, շքանշան ստացան...:

Դժուար է երևակայել անգամ աւելի բարդ հոգեբանական տեսիլ: Աստիճանների և փառքի հասնելով իր հարազատ իշխանութեան օրով՝ այդ դաւաճանները թեքուեցին նորա հենց օրօրման վայրկեանից: Եւ 21 թուի Փետրուարին այդ նորից ոտի կանգնած հայկական կառավարութիւնը ճնշելու և խորտակելու համար՝ այդ հրէշները ռուս զօրքի գլուխ անցած, արշաւում էին Հայաստանի վերայ...:

Հայկական իշխանութիւնը ջարդուեց, ցիր ու ցան եղան ազգային պատուախնդրութեան մեր վերջի բեկորները, իսկ հայ գեներալ Հովսէփեան և գնդապետ Միրիմանով տօնելով այդ օրը Երևանում իրանց մեծ յաղթութիւնը՝ ոչ հարազատ ծափերի տակ ընդունում էին ռուս իշխանաւորի ձեռքից ռուս արիւնոտ շքանշանը...: Եւ աւելի ցայտուն դաւաճանութիւն և աւելի այլանդակ հոգեբանական տեսիլ՝ չի կարող ստեղծել ամենավառ երևակայութիւնը անգամ:

Բայց չէ որ պատմութիւնը կրկնւում է, և չէ որ հայ դաւաճանները միշտ ուղեկցել են հայրենի պատմութիւնը...:

Պարլամենտի անդամ Աղբալեան՝ որին կառավարութիւնը ենթարկել էր Կարսի նահանգի թէ՛ քաղաքացիական և թէ՛ զինուորական իշխանութիւնը, ծանօթանալով իրերի դրութեան հետ երկրում՝ եկաւ այն եզրակացութեանը, որ զօրքի հրամանատար կազմը, օտար և խորթ հայ զինուորութեանը՝ միանգամայն համատասխան չէր իր կոչմանը: Նա տեսաւ, որ այդ հրամանատարութիւնը անտեղեակ է զօրամասերի անցուդարձին, որ հրամանատարը և զինուորը խօսում են տարբեր լեզուներով, որ կառավարութիւնը տալիս է զինուորին իր ունեցածի 85 տոկոսը, բայց զինուորը դարձեալ մերկ, դարձեալ քաղցած է և դարձեալ անխնամ: Նա տեսաւ, որ հայ զինուորը օրգանապէս չի կարող հաշտուել բոլշեւիկ, ջարդարար և բացասական բնոյթի հետ, որ նա տիպիկ ազգային դէմք է, իր բոլոր գունաւոր մոլեռանդութեամբ, որ կապուած է նրա մայրենի լեզուի, նորա հող ու ջրի, նրա նուիրական սովորութիւնների հետ: Եւ Աղբալեան՝ այդ մոլեռանդ գաղափարական դաշնակցականը, ազգային տիպարի և տրամադրութիւնների այդ երդուեալ պաշտպանը՝ չէր կարող միանգամից հենց արձագանք չը տալ հայ զինուորութեան շարքերում: Նրա առաջի կրակոտ ճառը Կարսի գարնիզօնի առաջ՝ միանգամայն հմայեց հայ զինուորութիւնը, և նա չէր կարող այլևս *[գնալ]*

բոլշեւիզմի յետևից: Հայ զինուորութիւնը դարձաւ դէպի տուն, դէպի իր ընտանի շարքերը՝ և այդտեղ հենց պարտուեցին Կարսի խռովարները:

Երբ կարգը վերականգնած էր և գնդապետ Յարութիւնեան շրջապատուած այն հայ սպաներով՝ որոնք հմայք տուեցին Փրկութեան կոմիտէի գաղափարին, մեծ զօրահանդէս կազմակերպեց Կարսի բոլոր զօրամասերից, ժողովրդի և զօրքի տրամադրութիւնը վերածուեց մեծ օվացիայի: Զօրքը անցաւ դէպի նահանգապետի տունը, և երբ շարքերը ուղղուած էին կառավարութեան լիազօր Աղբալեան՝ նահանգապետը և պարլամենտի անդամները շրջապատուած նահանգական պաշտօնեաներով, դուրս եկան դիմաւորելու զօրահանդէսը: Գեներալները ի հարկէ բացակայ էին, նոքա անպաշտօն կերպով հեռացուած էին դէպքերի դասաւորմամբ հրամանատարութիւնից, և Կարսի նահանգի զօրքերի հրամանատարութիւնը Փրկութեան կօմիտէն յանձնել էր գնդապետ Յարութիւնեանին:

Երբ մենք երևացինք հրապարակում՝ գնդ. Յարութիւնեան «հանդարտ» հրամանատարեց, օդում փարեց օրկեստրի «Մեր հայրենիքը» և հազարաւոր ամբոխը, համակուած ազգային մեծ գաղափարի զգացմունքներով՝ գլուխ բացելով, զօրքի հետ միասին գոչեց յաղթական «Կեցցէ՛ մեր հարազատ կառավարութիւնը... »:

Յուզուած և շնչասպառ՝ Աղբալեան դիմեց զօրքին և ժողովրդին մի այնպիսի ցնցող ճառով, որի ընթացքում մի քանի անգամ օդը թնդում էր «կեցցէ»-ներից և ժողովրդի յուզմունքից: Այնուհետև գնդ. Յարութիւնեան, յենուած այդ բարոյական մեծ տրամադրութեան վերայ և հպարտ իր ազգային արժանապատուութեամբ՝ ամբողջ զօրքով, թնդանօթներով և գնդացիրներով անցաւ քաղաքի կենտրոնական մասով: Ամբողջ քաղաքը, մեծ և փոքր, որպէս նուիրական ընտանի տօնի առիթով՝ հեղեղել էր փողոցները: Զինուորական բոլոր նուագախմբերը հերթով նուագում էին ու ժողովուրդը հրճւում էր: Երբ օրկեստրը սկսում էր քայլերգը՝ ամբոխը հրամայալից ազգային հիմն էր պահանջում, և նորից ու նորից բացւում էր ժողովրդի գլուխը, նորից բռնկում ազգային տրամադրութիւնը և օդում փառում էր մեզ այնչափ մտերիմ հոլովը՝ Ամենայն տեղ մահը մի է, մարդ մի անգամ պիտ մեռնի, բայց երանի, որ իւր ազգի ազատութեան կը զոհուի...:

Այդպէս էր այն բարձր տրամադրութիւնը, որ ճնշեց և տապալեց դաւաճանութիւնը:

Երբ խռովարարները խզել էին Կարսի և Երևանի միջև հեռագրական կապը՝ Աղբալեան և ես մի երկու անգամ օգտուեցինք ռադիոյից, որ նոր նոր էր կազմակերպւում: Բայց ռադիոն գեներալների ձեռքումն էր, և յետոյ պարզուեց, որ նրանք ուշացնում էին մեր հեռագիրների առաքումը, առաջ քցելով իրանց միտումնաւոր հաղորդագրութիւնները...:

Այդ բոլոր տուեալները առաջ բերեցին սառնութիւն գեներալների և կառավարութեան լիազօրի միջև:

Գեներալները ամբաստանեցին Երևանի առաջ Աղբալեանին: Աղբալեան բողոքում էր դրութեան դէմ, և տանելի չէր գտնում զօրաց այդ հրամանատար կազմը: Բայց կառավարութիւնը մի ֆիկցիա միայն՝ Ռուբէն փաշա և գեն. Ախվերդովի ձեռքում, ուշադրութիւն չը դարձրեց և Աղբալեանի պահանջների վերայ և նա ստիպուած էր թողնելու Կարսը որպէս լիազօր առանց իրաւունքների...:

Այդպէս վերջացան Կարսի նահանգում այդ «առանձին լիազօրութիւնները»:

Պէտք չէ ասել այստեղ, որ բարձր կառավարութեան այդօրինակ երկդեմի և երերուն ընթացքը չէր կարող հմայք ստեղծել իշխանութեան շուրջը: Այդ տարուբերուող և ինտրիգ իր բնոյթում գործելակերպը՝ միայն խախտում էր երկրի հաւատը դէպի օրէնքի անաչառ և անկործան իմաստը, և հիմքում երերում էր պետութեան իրաւակարգը:

Պարլամենտի մի մեծ խմբակցութիւն, որ եկել էր և Կարսի նահանգը՝ եկել էր առանց որոշ նպատակների, առանց որոշ ծրագրի, ցուցմունքների և գործելու դրական տուեալների: Պարլամենտի անդամները իրանք էլ չը գիտէին թէ ի՞նչ պէտք է անեն:

Նրանք միայն ընդհանուր շփոթ էին առաջ բերում իրաւունքների և պարտաւորութիւնների մթնոլորտում, անիմաստ զբաղեցնում էին տեղիս պաշտօնէութիւնը և այդ պաշտօնեաները չը գիտէին ո՞ւր է մեծը և ո՞ւր է փոքրը, որին պէտք է զեկուցել, որից հրաման և հրահանգ ստանալ և որին պէտք է լսել և ո՞ւմ հնազանդուել...: Պարլամենտի անդամը՝ այն էլ նոցանից խելօքը և դրականը, ուժեղ է այնտեղ պիւպիտրի առաջ, պարլամենտի դահլիճում: Իսկ այստեղ, գաւառում՝ ուր պետք է գիտենալ կեանքը, երկրի անցուդարձը և գէթ մի փոքր օրէնքներ՝ հասարակական այդ գործիչը դարնում է մի ողորմելի թիւրիմացութիւն: Նորա փափուկ դրութիւնը այդ առանցքում խախտում է իշխանութեան հմայքը երկրում, և եթէ երեկ երկիրը ակնածում էր դէպի բարձր կառավարութիւնը՝ իր աչքով տեսնելով այդ անզօրութիւնը, նա այլևս ոչ սպասում է նորանից և ոչ ակնածում...:

Այդպէս է այդ դրութեան հոգեբանութիւնը: Անցնելով նոր կառավարութեան կուրսի միւս ձեռք առանց միջոցներին՝ մենք կանգ կ՛առնենք արտակարգ դատարանների վերայ: Երբ թերի, վայրիվերոյ կարգադրութիւնը առաջ է գալիս վարչական ադմինիստրատիւ շրջանում՝ մենք սովոր ենք կամ անուշադիր, կամ ներողամիտ լինել: Բայց երբ թէժ, կամ գէթ ոչ հիմնաւորուած դրութիւնը հրատարակում է դատաստանական իշխանութիւնը՝ այդ արդէն խախտում է երկրի արդարադատ սպասելիքները: Եւ այդպիսի մի ներածութիւն էր արտակարգ դատարանը:

Ես առհասարակ կողմնակից չեմ «արտակարգ» և աւելի աղմկող քան թէ կերտող միջոցների: Ես երկար տարիների ընթացքում դեգերել եմ մեր գաւառներում, երկար պաշտօնաւորել, դիտել եմ կեանքը նրա բազմատեսիլ պատկեր-

ներում, ինքս ենթակայ և իշխող եղել և պէտք է ասեմ, որ արտակարգ միջոցները երբէք չեն տուել դրական յետևանքները: Մենք արդէն տեսանք, թէ ի՞նչ դրութեան մէջ էին մեր դատաստանական հիմնարկութիւնները: Այդ ատեանները միայն մի թիւրիմացութիւն էին մեր կառավարչական օղակների շրջանում, և ոչ օրէնքի սրբատեղի: Եւ այդ շաբլօնով ու նոյն անհոգութեամբ թխուեցին և արտակարգ դատարանները: Ի՞նչ էր նրա իրաւասութիւնը, որտե՞ղ էին այն օրէնքները՝ որոնցով պէտք է ղեկավարուէր այդ դատարանը, և թէ ինչպէ՞ս պէտք է կազմակերպուէր նա՝ այդ ոչ ոք չը գիտէր: Դատարանի կազմի համար մենք մարդիկ չունէինք, դատարանը միջոցներ չունէր: Այս և այն պատահական մարդիք հրաժարւում էին պաշտօնավարելուց, արդարադատութեան մինիստրութիւնը պարտաւորութիւն չէր համարում նոյնիսկ պատասխանելու այտակարգ դատարանի նախագահին, նրա նոյնիսկ հեռագրական հարցապնդումներին: Եւ դրութիւնը բնորոշելու համար բաւական է ասել կարծեմ, որ արտակարգ դատարանի նախագահը փող էր մուրում նահանգապետից՝ դատարանի ընթացիկ ծախքերի համար...: «Արագ» և «խիստ» հիմունքների վերայ յղացած այդ դատարանը բեռնաւորուեց բոլոր տեսակի գործերով, դարձաւ գործերի պահարան, բայց ոչ կեանքի և ընթացող պահանջների բաւարարող հաստատութիւն: Նա ևս դարձաւ մեր միւս դատաստանական հիմնարկութիւնների պէս մեր պահանջների և դիմումների անկեալանոց, և նա արմատում խախտեց արտակարգ դատարանի իմաստը:

Ես չեմ ուզում արդէն ծանրանալ, որ այդ դատարանի անձնական կազմը շատ և շատ անբաւարար էր: Չը կար ցայտուն, անյաղթող օրէնք, չը կար վճռական և անկախ դէմք, և այդ առանցքում՝ չէր կարող կոփուել արտակարգ վճիռը, և այդ արտակարգ դատարանը չէր կարող սանձահարել ըմբոստ և ապստամբ տրամադրութիւն:

Կարսի արտակարգ դատարանի նախագահ Մդիւանեան՝ իրաւաբան, մի շատ ազնիւ, շիտակ, անաչառ և առաջադիմական դէմք՝ չէր կարող ի հարկէ մի ձեռքով ծափ տալ: Նա առանց հրահանգների էր, առանց աշխատակիցների, առանց նիւթական միջոցների և առանց, որ գլխաւորն է՝ հեղինակաւոր բեկանող ատեանի: Բաւական է ասել, որ պրոկուրորի պաշտօնի համար մարդ չէր գտնւում, և նախագահը ստիպուած էր ընդունելու այդ մեծ և պատասխանատու դերի համար մի հայ երիտասարդի, որ ոչ միայն ոչ մի բառ հայերէն չը գիտէր՝ այլև ոչ մի գաղափար չունէր հայ կեանքի և հայ վերապրումների մասին:

Իսկ երկիրը, որ սկզբից այնպէս ակնածեց և այնչափ սպասեց այդ դատարանից՝ և այստեղ խաբուեց իր սպասելիքներում: Մեր դատաստանական միւս հաստատութիւնները, որոնք առանց այն էլ կիսակենդան էին՝ կորցրեցին արտակարգ դատարանից յետոյ իրանց բոլոր նշանակութիւնը: Եթէ իրաւասութեան

սահմանը առհասարակ շատ ճկուն և առաձգական հասկացողութիւն է՝ այդ խնդրի շուրջը կուտակուել է… …(*առկայ է տեքստի խզում*)

Իրաւաբանական մեծ գրականութիւն այստեղ պէտք չը կայ պարզելու, որ իրաւասութեան այդ խնդիրը մի մեծ բաց տեղ էր մեր այդ օրերի ընդհանուր դատաստանական հաստատութիւնների և արտակարգ դատարանի միջև:

Իրաւունքների և պարտաւորութիւնների այդ երկդիմի հանգոյցը բնականաբար պէտք է բացառէր թէ՛ առաջի և թէ՛ երկրորդ ատեանի բնոյթը, և այդ առանցքում չէր կարող կոփուել և ամրանալ երկրի իրաւակարգը և հանգիստը:

Բայց այդ ժամանակամիջոցում այդ շփոթ դրութիւնը անցաւ արդէն բոլոր սահմանները: Արտակարգ դատարանին կցւում էին դաշնակցութեան կուսակցական «գործիչները» և ուրիշները:

Աղէքսանդրապօլի արտակարգ դատարանի պրօկուրօրը օրինակ՝ անտես առնելով օրէնքում նախատեսուած դրութիւնը, խուզարկութիւն և ձերբակալութիւններ էր կատարում Կարսի նահանգում, և այդ մասին նա նոյնիսկ պէտք չէր զգում իրազեկ անելու Կարսի նահանգի դատաստանական իշխանութիւնը: Եւ այդ մթնոլորտում կատարուած բոլոր գործողութիւնները ոչ միայն թերի, անկապ ու անսիստեմ և անիմաստ էին՝ այլև ոչ լուրջ պաշտօնական ակտ…

Այդ աղմկալից և շփոթ առանցքում՝ ուր հրապարակում «կուսակցութիւններ» էին և ոչ իշխանութիւնը, մարդիկ շատ անգամ հաշիւ էին տեսնում իրար հետ և նորից շոշափում հասարակական հանգիստը: Այդօրինակ «արտակարգ» գործելակեպը չէր կարող ի հարկէ հասնել իր նպատակին: Բոլշեւիկը պոչ չունէր՝ որի միջոցաւ կարելի էր բռնել նորան, և նա առաջ էր գալիս այն չափով, որ չափով որ մենք անընդունակ էինք կառավարելու և իշխելու:

Այդ «արտակարգ» և առնուազը թեթև միջոցներով՝ մենք միայն ձգում էինք երկրի առաջ մեր իշխանութեան համարումը, և փոխանակ ոյժ և կշիռ տալու եղած մարմիններին՝ մենք այդ հաւելուածներով երերում էինք մեր առանց այն էլ ոչ կայուն դրութիւնը:

Չը կար պետական սիստեմ, չը կար պետական հատուածների ներդաշնակութիւն, մենք չէինք լրացնում իրարու, մենք բացառում էինք իրար: Մենք չունէինք յատուկ խուզարկու մարմիններ՝ ադմինիստրացիայի այդ առաջընթաց օրգանը, իսկ եղածներն էլ այնչափ անգոյն, այնչափ ողորմելի էին, առանց միջոցների և առանց խիստ և անսասան հրահանգների, որ ոչ մի նշանակութիւն չունէին պետական նպատակներում:

Մենք ոչ մի տեղեկութիւն չունէինք, թէ ի՞նչ է կատարւում երկրի ներսում, մենք միջոցներ խնայեցինք այդ մեծ և կարևորագոյն գործի կազմակերպութեան համար, և չունեցանք տեղեակ և լուրջ ադմինիստրացիա: Իսկ երբ այդ երկրի ներսում, առանց ծխի բռնկուեց հրդեհը՝ մենք արտակարգ դատարանով ուզեցինք այդ բոցը հանգցնել: Եւ հազիւ թէ պետք է ասել, որ այդ դատարանը,

առանց լրացուցիչ բազմաթիւ պայմանների, որ կառավարչական ապարատ է կոչւում՝ պէտք է սնանկ լինէր իր կոչումում: Եւ այդ առանցքում արտակարգ միջոցների դիմելով մինիստրներ ուղարկելով գաւառ, պարլամենտի անդամներ և արտակարգ դատարաններ հիմնելով՝ մենք միայն աղմկեցինք հրապարակը, բայց ոչ լուծեցինք պետական երկունքը: Բազմաթիւ պաշտօնեաներ, լիազօրներ, ներկայացուցիչներ և նոցա յարմարուող սիրողներ՝ միայն ի ծայր շփոթեցին դրութիւնը, և անիշխանութեանը նոր ծաւալ տուեցին:

Եւ ես մէկն էի նոցանից՝ որոնք բողոքում էին այդ արտակարգ դատարանի դէմ և պահանջում վերացնել այդ թէժ օրէնսդրութիւնը:

Այդ հաստատութիւնը չը տուեց սպասած դրական հետևանք, նա խախտեց և երերեց և միւս դատաստանական հաստատութիւնների նշանակութիւնը: Իսկ այդ մթնոլորտը չէր կարող դաստիարակել երկրում արդարադատ զգացմունք և չէր կարող դարբնել պետական իրաւակարգը:

Այդ օրերերում ասում էին, որ Կարս պէտք է գար արդարադատութեան մինիստր Չիլինգարեան: Ես պատիւ չունէի ծանօթ լինելու նորա հետ, ես կարդացել էի նորա մի քանի շատ սահուն և գրական ճաշակով յօդուածները «Յառաջ» լրագրում և տրամադիր էի կարծելու, որ մենք կարող ենք նորա հետ համաձայնութեան գալ մեզ երկուսիս մեծ չափով հետաքրքրող խնդիրների մասին:

Բայց մինիստրը մի օրով կարծեմ եկել էր Կարս, իմ քաղաքից բացակայ ժամանակ, ես այնուհետև հնարաւորութիւն չունեցայ տեսնուելու նորա հետ: Ես կարծում էի, Կարս վերադառնալով, որ գրասեղանիս վերայ կը գտնեմ մինիստրի այցետոմսը: Գէթ այդպէս է աշխարհիկ և քաղաքական անվիճելի էտիկէտը: Բայց հայկական մինիստրը անախրօնիզմ համարելով երևի այդ ամէնուրէք ընդունուած քաղաքավարութեան ակտը՝ աւելորդ էր պատուելու հայ նահանգապետին:

Եւ ես չեմ կարող չաւելացնել այստեղ, որ այդ այցետոմսների իմաստը բացի քաղաքավարութեան էտիկետից՝ ունի և պաշտօնական պրիստիժի նշանակութիւն: Մինիստրը, այն էլ օրէնքների պահապանը՝ պարտաւոր էր գիտենալ, որ կառավարութիւնը պէտք է ընդգծի իր վերաբերմունքը դէպի իշխանութեան ներկայացուցիչը նահանգում:

Այդ փոքրիկ և անմեղ գծերում պարփակւում է իշխանութեան մեծ գաղտնիքը, և երկիրը, որ սիրում է դիտել աշխարհի անցուդարձը՝ չը վրիպեց ի հարկէ նկատել այդ միջանկեալը...: Բայց արդարադատութեան մինիստրի այցը Կարսի նահանգը՝ չը լուծեց ոչ արտակարգ դատարանի շատ փափուկ դրութիւնը և ոչ բազմաթիւ այլ դատաստանական և իրաւակարգային խնդիրներ, որոնք այնչափ կարօտ էին իրաւասու հեղինակութեան: Մինիստրը երևի ունէր աւելի քաղաքական միսիա: Որպէս դաշնակցական՝ նա կուսակցական տեսակցութիւն և խորհրդակցութիւն ունեցաւ Կարսի «ընկերների» հետ, թողնելով դատաստանա-

կան գործը երկրում աւելի պատեհ երևի օրերի... այդպէս էր «ուժեղ» իշխանութիւնը՝ Մայիսեան օրերից յետոյ:

Մի քանի բնորոշումներ լրացնելու համար և ի նկատի ունենալով մեր օրերի առանձնակի հոգեբանութիւնը՝ մենք ստիպուած էինք երբեմն խախտելու մեր յիշողութիւններում ժամանակագրութիւնը:

Այս և այնտեղ առաջ բերելով փաստեր, նկարագրութիւններ և այդ առանցքում մեր դիտողութիւնները՝ մենք գերադասում ենք տպաւորութիւնների ամբողջութիւնը: Այդ հիմունքներով մենք թոյլ ենք տալիս մեզ դասաւորելու մեր յիշողութիւնները երբեմն ոչ այնքան ժամանակագրական ուղղութեամբ՝ որքան հոգեբանական և ընդհանուր հասկացողութիւնների իմաստով: Մայիսեան օրերը հետաքրքիր են ոչ միայն իրանց հրավառ բռնկումով և ապա ազգային շատ բարձր տրամադրութ-եամբ՝ այլև որպէս չարագուշակ ազդանշան, որ այդչափ ճակատագրական էր մեր երկրի համար: Ժամանակի իմաստով երևի, պէտք է ուշագրաւ համարել, որ մեր կառավարութիւնը չկարողացաւ ճշտօրէն վերլուծել բախտի այդ փորձնական նախագգուշութիւնը: Նա հրապարակ ձգեց իր կանխիկ բոլոր ոյժերը՝ բայց նա չը գտաւ այն ուղին, որ տանում էր դէպի լոյս և ազատութիւն: Ռեպրեսիաները և հալածանքը բռնակալ իրանց բնոյթում՝ երբէք չեն եղել վստահելի միջոցների շարքում: Նրանք ահաբեկել են, երբեմն հիացմունք առաջ բերել, ստեղծել են տպաւորութիւն՝ բայց այդ բոլոր պատկերները, որպէս լոյսը էկրանի վերայ, մարել, անցել են, թողնելով հրապարակը լուրջ միջոցների համար, որ պարփակում է իր մէջ ոչ անցողակի տրամադրութիւն, այլ կեանքի անողոք պահանջները, իր բոլոր դրական և բացասական կողմերով: Մեր այդ առիթով անսիստեմ և անյետևողական գործելակերպում՝ մենք աչքաթող արեցինք մեր բանակը: Իսկ այդ բանակը արդէն թունաւորուած էր և գնում էր հակազգային ճանապարհով: Հրամանատար կազմը, ռուս գեներալներն ու գնդապետները և նոցա aetezeqo ռուսախoս հայ սպաները՝ մի առանձին աշխարհ էին մեր երկրում: Նրանք անցողակի էին համարում «հայկական կառավարութիւնը» և մեզ վերայ վերևից ներքև նայելով՝ արհամարհում էին մեր սուվերէն իմաստը, և մեր ազգային բնոյթը morai ton համարում...:

Իր հոգու խորքերում՝ այդ գեներալներից և գնդապետներից ամէն մէկը փայփայիւմ էր վերստին ռուսերէն հրամանատարելու երազը, և շնչասպառ յետևում էր Ռուսաստանի անցքերին: Թէ ո՞վ կը տապալուի այնտեղ և ո՞վ կը յաղթէ՝ այդ նորան հետաքրքրում էր ի հարկէ այս և այն չափով, բայց և այնպէս նա տրամադիր էր նորից ընկնելու ռուս մեծ ովկիանոսը՝ ուր կարիք չէր լինի ոչ հայ լեզուի և ոչ հայ պատմութեան...: Այդպէս էր մեր հրամանատարութեան հոգեբանութիւնը Մայիսեան օրերում:

Երբ Աղէքսանդրապօլի զինուորական խլրտումները անդրադարձան Կարսի նահանգը՝ այդ հակազգային և հակապետական շարժման գլուխը կանգնեց գե-

ներալ Յովսէփեանի թիկնապահ վաշտը: Կարգը վերականգնելուց յետոյ պարզուեց, որ այդ խռովութիւններին մասնակից էր գեն. Յովսէփեանի ամենամօտ ադիւտանտներից մէկը, ռուս գլխապետ Կուտիրով: Կարսի արտակարգ դատարանը նորան պատասխանատուութեան կոչեց, գեներալ Յովսէփեան թափեց իր բոլոր հնարագիտութիւնը՝ մի կերպ ազատելու իր մտերմին, և արտակարգ դատարանը ստիպուած էր մաքառելու այդ ոչ միայն ակնյայտնի, այլև ծպտեալ դաւաճանների դէմ...: Անտեսանելի ձեռքերը այդ դատում այնչափ շփոթել և խեղաթիւրել էին գլխապետ Կուտիրովի դէմ առաջ բերուած մեղադրական տուեալները, որ արտակարգ դատարանը, հակառակ իր խորին համոզման՝ ստիպուած էր միայն արձակելու այդ ռուս սպային պաշտօնից, և աքսորել Հայաստանի սահմաններից...:

Գեն. Յովսէփեան այդ օրերում միանգամայն չէզոքացրել էր իրան զօրքից՝ առարկելով, որ զինուորները չեն լսում իրան...

Որպէս գործնական և հեռատես մարդ՝ նա այդ օրերում շրջում էր արդէն առանց սրի...

Նա նախնօրէն անդրադառնում էր գալիք օրերի պահանջը, և այսօր ի ցոյց խռովարարների՝ սուրն էր արձակել իր վերայից, որպէսզի վաղը ոչ այնչափ դժուարութեամբ կարող լինի վար թողնել իր ուսադիրներն ու շքանշանները...

Այդպէս էին մարդիկ իրանց հոգու խորքերում:

Այդ միջոցում խռովարարներից նահանգապետը ստացաւ հետևեալ գրաւոր հրամանը. Կարսի ռեւկօմը (այսինքն յեղափոխական կոմիտէն) որոշեց. Կարսի նահանգապետ Ղորղանեանին պաշտօնից արձակուած համարել...:

Իսկ միւս օրը քաղաքում ասում էին, որ նոյն ռեւկօմը Կարսի երկու գեներալներին շնորհել է կարմիր գեներալների տիտղոսը...

Այդ բոլոր մեծ և փոքր փաստերը, տուեալները և նշանակալից բացատրութիւնները՝ գիտէր ի հարկէ մեր կառավարութիւնը: Բայց թէ ինչո՞ւ այդ օրերի երկրի գերիշխան տնօրէնը՝ Զօրաց և Ներքին գործոց մինիստր Տէր Մինասեան, աչքաթող արեց այդ բոլորը, մնաց բոլորի համար մի հանելուկային գաղտնիք: Այսպէս թէ այնպէս, երբ անցաւ փոթորիկը՝ ամէն բան շարունակուեց հին կարգով և բոլորը մնացին իրանց տեղերում:

Ցայտուն ազգային տրամադրութիւն ցոյց տուեց այդ օրերում 4-րդ հետևակ բրիգադայի հրամանատար Սեպուհ: Տեղի տալով հասարակական կարծիքին՝ կառավարութիւնը գոհ էր հրամանատարից, բայց և մեր ցիրուցան եղած զօրամասերը բռնել էին Արաքսի և Արփաչայի հովիտը: Գեներալ Սիլիկովի շտաբը կազմալուծուել էր ի հարկէ, և մնացորդ զօրքերի հրամանատարութիւնը յանձնուած էր Դրոյին և Սեպուհին:

Դրօ տիպիկ հայդուկ է՝ կամաւորական այն բարձր տրամադրութեամբ, որ երբեմն հրաշքներ է գործել և տրամադրել երկիրը յոյսերի և երազների... Օժտուած բնական խելքով և պատերազմական կրակով՝ նա ամբողջ գլխով բարձր մեր ռուսախօս գեներալներից: Իր բոլոր բացասական կողմերով հանդերձ՝ նա մեծ հայրենասէր էր և կրակոտ գործիչ: Եւ եթէ Փիրումով-Յովսէփեանները որպէս տափակութիւն և խորթ մեզ համար՝ անջատում էին իրանցից հայ զինուորութիւնը, այդ զինուորութիւնը պատրաստ էր գնալու Դրոյի յետևից և մեռնելու յանուն հայրենիքի և յանուն մեր դարաւոր ու արդար դատի...

Նախկին Զօրաց մինիստր և յետոյ օգնական զինուորական մինիստրների՝ գեներալ Ախվերդով նշանակուեց Դրոյի շտաբի պետ: Ես միշտ այն կարծիքի էի, որ ռուսախօս և հայութեան հետ ոչ մի առնչութիւն չունեցող գեներալները համապատասխան չէին պետական առաջնակարգ դերերի համար: Նրանք կարող էին կատարել երկրորդակի դերեր, կարող էին ինստրուկտօրներ լինել՝ բայց ոչ առաջնորդել ազգային շաւղով և ոչ պետական կորով ստեղծել բանակում:

Դրօ սրտոտ էր, համարձակ և անձնուրաց, իսկ գեն. Ախվերդով տակտիկ և ռազմական, հաշիւ պահող: Եւ այդ երկու ոյժերը՝ մէկը գործնական, միւսը տեսական, թեորետիկ՝ լրացնելով մէկը միւսին կարող էին դէպի յաղթութիւն տանել հայկական դժբախտ բանակը, բայց մեզ մնում էր ցաւել, որ այդ յաջող զուգադիպութեան փորձը կառավարութիւնը անում էր միայն իր ձմեռնամուտ օրերում, երբ դեռ չը ծաղկած՝ նա սկսում էր այդչափ շուտ թառամել...

Բայց Դրոն չէր կարող ի հարկէ փրկել դրութիւնը: Նորա հրամանատարութիւնը մի թեթև սփոփանք էր միայն մեր պարտուած և վիրաւոր ինքնասիրութեան համար, և այդ առանցքում միայն ողջունւում էր այդ կարգադրութիւնը:

Գեներալ Յովսէփեան և գնդ. Միրիմանով քաշուելով Արփաչայի այդ կողմը՝ շարունակում էին ինտրիգներով զբաղուել և դորանով զբաղեցնել բարձր հրամանատարութիւնը: Եւ այդ պարոնները չէին ամաչում ոչ միայն հասարակ զինուորից՝ այլև այն թշնամուց, որ սպառնալից գրաւել էր արդէն Աղէքսանդրապօլը: Այդպէս էր այն հրամանատար կազմը, որ նահանջելով Թիւրքա-Հայաստանի սահմաններից՝ այսօր կանգնած էր Երևանի տակ...

Այդ բոլոր տեսիլները այն օրերումն էին՝ երբ Կարաբեկիր փաշան թելադրում էր մեզ իր պահանջները, երբ նա օր ու մէջ վերջնագիր էր ուղարկում հայկական թշուառ կառավարութեանը, խմորելով օդում անէծք, զայրոյթ և անոյժ վրէժ...

Այդպէս էր մթնոլորտը մեր շուրջը՝ երբ թիւրքաց հրամանատարը 24 ժամուայ կարծեմ ընթացքում, պահանջեց մեզանից 12 թնդանոթ, 2000 հրացան, գնդացիրներ, ռումբ, փամփուշտ, վագոններ, լոկօմօտիւ և այլ պատերազմական աւար: Այդ զինադադարի նախնական պահանջն էր՝ որից յետոյ պէտք է հետևէր հաշտութեան բանակցութիւնը:

Եւ երբ այդ հրետանին, գնդացիրները և ռազմական պաշարը անցնում էին Երևանի փողոցներով դէպի երկաթուղին՝ ժողովուրդը, որ սիրում է հանդէսները, թամաշան՝ անսպասելի դատարկեց այդ տարածութիւնը: Մարդիկ շտապում էին մտնել մօտակայ խանութները, այլ շեղուել դէպի այլ փողոց՝ որպէսզի չը տեսնեն այդ ազգային նախատինքը...

Մեզանից անդառնալի կտրւում էր մի բան, որ մենք սիրում և փայփայում էինք և այդ գնացքը նման էր մի սգահանդէսի՝ որի մօտով մարդիկ անցնում էին լուռ և գլխակոր... Այդ օրը հայ ժողովուրդը զգաց ազգային պատուի մեծ իմաստը, և գուցէ իր սրտի խորքերում՝ նա փայփայում էր վերստին վերադառնալու դէպի անկախութիւն...

Հայ հասարակութիւնը տարուբերւում էր իր խղճի առաջ, նա պատասխանատու էր իր անտարբերութեան, երեսի և իր ապիկարութեան համար:

Ի զուր են շատերը ձգտում տեսնելու մեղադրեալների նստարանի վերայ անհատներ, առանձին մարդիկ և հայկական կառավարութիւնը: Այդ տեղը պատմութիւնը վերապահած կը լինի հայ հասարակութեան համար՝ ի դէմս նորա ինտելեգենցիայի, որ իւր ժամանակին խմորելով մեր ազատագրական երազները՝ նորա երկունքի օրերում քաշուեց հրապարակից: Այդ այլասերուած և մեր օրերում օտարացած ինտելեգենցիան՝ տրամադիր էր զբաղուելու մեր դարաւոր իղձերով այն չափով միայն, որ չափով այդ համապատասխան էր նորա եսին և սպեկուլատիւ տրամադրութիւններին:

Հայ ինտելեգենցիան խորշեց իր հայրենիքից, և թողնելով անհատներին և պատահական մարդկանց դարբնելու իր պետականութիւնը՝ նա գերադասեց օտար հորիզոնների տակ քննադատելու և ծաղրելու մեզ...

Եւ եթէ այսօր այդ ինտելեգենցիան՝ ցիրուցան օտար երկրներում, տառապում է ոչ միայն հայրենիքի կարօտով՝ այլև այն զրկանքներով, որոնք հետևանք էին նորա օտարամոլութեան և ապիկարութեան, նա միայն հնձում է իր ցանածը...

Այդ օրերում հայկական կաբինետը արդէն երերուել էր: Միահեծան և ինքնակալ Ռուբէն փաշան, որ վեց ամիս շարունակ անվճռաբեկ թիավարում էր մեզ դէպի անդունդ՝ փաստօրէն հրաժարուել էր պաշտօնից և ամենաանպատիւ կերպով իջել հրապարակից: Մինիստր նախագահ Համօ Յովհանջանեան՝ միամիտ, պարզ և անբիծ իդեալիստ, ձեռքաթող էր արել պետական առագաստները, և տարուած իր հայրենիքի ճակատագրով՝ նետւում էր աջ ու ձախ, յարմար տեղ որոնելով խարիսխ ձգելու:

Հրապարակում շրջում էին հաւանական կաբինետի մի քանի ցուցակներ, և հասարակական կարծիքը հակուած էր նորից յանձնելու Ալ. Խատիսեանին կառավարութեան ղեկը: Բայց կառավարչական և դաշնակցական շրջաններում Ալ. Խատիսեան գրաւում էր արդէն կենտրոնական տեղ:

Խօսում էին նախկին վարչապետ Քաջազնունու մասին, տալիս էին երիտասարդ Վրացեանի անունը, կօալիցիօն կառավարութիւնը…

…Նորից անխուսափելի էին համարում և նորից հոլովում Ալ. Խատիսեանի թեկնածութիւնը:

Թէ որչա՞փ անկեղծ էր դաշնակցութեան կամարիլիան դէպի նախկին պրեմիերը՝ չգիտեմ ի հարկէ, բայց մի բան ակներև էր, գերիշխող շրջանները ոչ միայն հաշուի էին առնում Ալ. Խատիսեանին՝ այլև բոլորում նորան իրանց կարևորագոյն խորհրդածութիւններում և հրատապ դէպքերում:

Այդ օրերում կառավարութիւնը, բիւրոն և Ալ. Խատիսեան՝ դռնափակ նիստ ունեցան, և խորհրդածութիւնը յատուկ յանձնարարութեամբ շտապ ուղարկեց Ալ. Խատիսեանին Թիֆլիզ: Նորա մեկնելուց յետոյ նորից հրապարակ եղաւ Քաջազնունու անունը՝ բայց յետոյ ասում էին, որ նա վերջնականապէս հրաժարւում է կաբինետ կազմելու յանձնարարութիւնից և պրեմիերի աթոռը հրապարակում տարուբերւում էր Ալ. Խատիսեանի և Վրացեանի անուան միջև:

Այդ դէպքերի առանցքում մեր և տաճկաց հրամանատարութիւնը 24 ժամուայ զինադադար էին կնքել, բայց որովհետև այդ կարճ ժամանակի ընթացքում հնարաւոր չեղաւ հաշտութեան բանակցութիւն կատարել՝ մենք խնդրեցինք Կարաբեկիր փաշային երկարացնել այդ զինադադարը: Միջնորդութիւնը բաւարարուել էր և կառավարութիւնը յանձնարարեց ներքին գործոց մինիստր Սարգ. Արարատեանին՝ անցնել Աղէքսանդրապոլ և տեսնուել տաճկաց հրամանատարի հետ Հաշտութեան կօնֆերանսի մասին նախնական բանակցութիւնների համար: Կառավարութեան, բիւրոյի և պարլամենտի մի քանի անդամների մասնակցութեամբ կոնֆերանսը Աղեքսանդրապօլում՝ խորհրդածութիւն կայացաւ և որոշուեց այդ կօնֆերանսին մասնակցելու համար ուղարկել երեք հոգուց բաղկացած մի պատուիրակութիւն, ի դէմս նախագահ Ալ. Խատիսեանի, պարլամենտի անդամ Շանթի և Կարսի նախկին նահանգապետ Ստեփան Ղորղանեանի:

Այդ նիստից յետոյ ինձ մօտ անցաւ Ալ. Խատիսեան և ասաց. «Կառավարութիւնը աչքի առաջ ունենալով Ձեր մօտ ծանօթութիւնը երկրի անցուդարձին, Արևելքի հոգեբանութեանը, Ձեր օրինական վերաբերմունքը դէպի թուրք ազգաբնակութիւնը և Ձեր հեղինակութիւնը՝ որոշեց առաջարկել Ձեզ մտնել այն պատգամաւորութեան կազմը, որին կը յանձնարարուի հաշտութիւն կնքել Թիւրքիայի հետ»:

Կառավարութեան այդ թէ շատ բարձր և թէ շատ պատասխանատու ուշարդրութիւնը դէպի Կարսի նախկին նահանգապետի անձնաւորութիւնը՝ թէ շատ պատուաբեր էր և թէ շատ ծանր ինձ համար: Եւ ես մեծաչափ և զգացուած էի և ընկճուած…:

Իմ առաջ նորից կանգնեց մեր տարի ու կէս անցուդարձը Կարսի նահանգում: Ես նորից տեսնում էի մեր թեր և դէմ պետական և կառավարչական գոր-

ծունէութիւնը, և ես չէի կարող բուռն կերպով չը համակուել այն իմաստով, որ անհասանելի են ճակատագրական որոշումները, և պատմութեան անիւը դարձնում է իր պտոյտը անվերաբեր դէպի մարդիկ, նոցա իղձերը և տրամադրութիւնը...:

Ստացուեց թուրք հրամանատարութեան առաջարկը՝ զինադադար կայացնելու Հաշտութեան կոնֆերանսի մասին:

Տաճկաց հրամանատարը կոնֆերենցիայի համար առաջարկում էր մեզ Երևանը կամ Աղէքսանդրապօլը: Հազիւ թէ պէտք է ասել, որ հայ ժողովուրդը տրամադիր չէր տեսնելու կոնֆերանսը իր մայրաքաղաքում, որոշուեց անցկացնել կոնֆերանսը Աղէքսանդրապօլում: Բախտի քմահաճոյքներից դափնիք հիւսողին՝ և մենք համաձայնութիւն տուեցինք Աղէքսանդրապօլ գալու: Մինիստր Սարգիս Արարատեան յատուկ գնացքով մեկնեց Աղէքսանդրապօլ, բայց վերջի կայարանից մինչև Աղէքսանդրապօլ՝ մինիստրը ստիպուած էր ձիով անցնելու, որովհետև թիւրքերի ասելով, գիծը այդ տարածութեան վերայ փչացած էր: Բայց այդ ի հարկէ թիւրքաց պատերազմական գաղտնիքն էր: Պ. Արարատեանին բերեցին ուղիղ Աղեքսանդրապօլի բերդը, ուր գտնուում էր թիւրքաց հրամանատարի շտաբը: Անգորայի զօրավարը ընդունեց մեր մինիստրին երեկոյեան դէմ, իսկ ունկնդրութիւնը վերջացաւ լուսադէմ միայն:

Կարաբեկիր փաշան կշտամբեց մեր ներկայացուցչին, որ հայկական կառավարութիւնը ...(*առկայ է տեքստի խզում*)

...այդ յանձնարարութիւնը Վրաստանի նուաճման նախօրեակում: Իսկ մի քանի օրից, երբ ռուս զօրաբանակը նուաճեց և Վրաստանը՝ գեն. Յովսէփեան, ամօթ կորցրած, կարմիր ռուս սաղաւարտը գլխին, մի քանի հայ զօրամաս բեկորների գլուխ անցած՝ յաղթական մտաւ Թիֆլիզ...:

Թիֆլիզում հայկական զօրամասի մուտքը օրուայ նորութիւնն էր: Վրաց հասարակութիւնը շատ հասկանալի պատճառներով արհամարհօրէն և վրէժալից երես էր դարձնում այդ անկոչ հիւրից՝ իսկ պարտուած հայութիւնը ամօթից խանձուած, նոյնպէս խորշում էր այդ զօրամասերից...:

Իսկ թշուառ Ապարանցին անվերաբեր դէպի այդ փափուկ մթնոլորտը՝ երգում էր անհոգ Թիֆլիզի արուարձաններում.

«Աղչի, բախտաւոր
Երնեկ քու սէրին,
Քո սարի սովոր
Սև-սև աչքերին... »:

Դժուար էր երևակայել աւելի մեծ հոգեբանական տանջանք: Ոտնահար հայրենիք, բռնաբարուած կամք և իրաւունք, փշրուած յոյսեր և նորից երազներ ու նորից թախիծ...:

Եւ զուգընթաց մեր բոլոր զգայուն ցաւերի, մեր մարած տրամադրութեան՝ մենք տեսնում էինք հայ զօրամասեր և այն էլ Թիֆլիզում, բայց չէինք լսում մեր հայրենիք...:

Չորս ամիս առաջ հայկական անուանի բանակը, որին հաշուի էր առնում ոչ միայն Տաճկաստանը՝ այլև նորա դաշնակից ռուսները, հնարաւոր չը համարեց պաշտպանել իր հայրենիքի սահմանները: Նա մոռացաւ 18 թուի կոտորածը, սովը, պանդխտութիւնը, մոռացաւ իր դարաւոր դատը, իրականացած երազները, և խաբուած իր կարծեցեալ բարեկամներից՝ նա թողեց իր դիրքերը, չը կռուեց ու նահանջեց...:

Եւ այսօր, կորցրած ամէն բան, մուրացկան օտարի դռներում, առանց հայրենիքի և իշխանութեան, բայց ռուս կարմիր սաղաւարտը գլխին՝ այդ այլասեռ և ապականուած հայը գալիս էր օտար հորիզոններում նախատինք և ամօթ վաստակելու...:

Առանձնակի ջղեր էր պէտք անվերաբեր դիտելու հրապարակը, ուր գաղափարը, սրբութիւնը և իդեալները կարծես իջել էին իրանց հմայիչ բարձրութիւնից, ուր մարդիկ ծաղրում էին իրանց ամենանուիրական հաւատալիքները, և ուր չը կար այլևս ամօթ, պատկառանք և ազգային այն մեծ կորովը և տրամադրութիւնը, որ կրթել է սերունդներ և պատմութիւն ստեղծել...: Ես պատահմամբ անցնում էի փողոցով՝ երբ գալիս էր հայկական այդ գումարտակներից մէկը, ես լսեցի՝ «Աղջի բախտաւոր» ծանօթ և հմայիչ մեղեդին...:

Եւ ինձ տիրեց մի այնպիսի խռովութիւն՝ որի նմանը ես չեմ յիշում 50 տարուայ ընթացքում...: Իմ առաջ նորից վերականգնեց մեր ամբողջ անցեալը, ես կարծես դարձեալ իմ հայրենիքումն էի: Որպէս նահանգապետ՝ ես կարծես դարձեալ ներկայ էի մեր զօրահանդէսին, զինուորական պատիւ էի ընդունում և տալիս մեր զօրամասերին, և իմ հոգու խորքերում նորից բռնկուեց սուվերէն և իշխանալից տրամադրութիւն...:

Փողոցում կուտակւում էր պատահական ամբոխը այդ նորեկ զօրամասը տեսնելու, իսկ ես ի ծայր ճնշուած և յուզուած՝ նետուեցի դէպի այլ փողոց, որպէսզի չը տեսնեմ և չը լսեմ, բայց թէ ճակատագրական և թէ հոգեբանական մեծ տեսիլ պէտք է համարել, որ երբ խեղճ հայ զինուորը, հալածուած բախտից և անտարբեր դէպի քաղաքական դժոխը՝ հմայիչ երգում էր «Քո սարի սովոր», «Անուշ»-ի հռչակաւոր հեղինակը ռուս զօրքի գլուխ անցած՝ գնում էր Երևան...:

Որպէս հեղինակաւոր և անուանի հայ՝ նա գնում էր համոզելու հայութեանը նորից խոնարհուել ռուսի առաջ, և իր դայլայլիքների հմայիչ առանցքում՝ նա ուզում էր թմրեցնել իր հայրենիքի խիզախ ազատակիր ձգտումները...:

Ճակատագրական և ուշագրաւ էր ի հարկէ, որ հայկական լեռների այդ կախարդ աշուղը չայցելեց իր հայրենիքը՝ նորա ազատակիր ու անկախ օրերում: Մեր արձակ տրամադրութիւնների երգիչը պատիւ չարեց Հայկական հանրապե-

տութեանը: Նա երեսուն տարի շարունակ սիրասուն երգեց մեր երազների խորքերից, նա տրամադրեց և դաստիարակեց սերունդներ, և երբ այդ տրամադրութիւնների երկունքը առաջ բերեց մեր անկախութիւնը՝ մեր վաստակաւոր բանաստեղծը զլացաւ իր ներկայութեամբ դիւթելու մեր սուվերէն և ինքնիշխան կորովը...:

Ոչ միայն զարմանալի՝ այլև անբացատրելի է ի հարկէ, որ մեր անուանի գրողը գէթ մի անգամ չայցելեց այդ միջոցում այն երկիրը՝ որի կատարներից նա այնպէս հմայիչ և այնպէս ընտանի շոյում էր մեր իղձերը:

Եւ եթէ այն օրերում հայ աշխարհը ովսաննալից կ՛ընդունէր իր Մեծ քաղաքացուն՝ նորա ամբողջ ճանապարհով ազգային խունկ և հրճուանք ծխելով, այսօր նա գնում էր դէպի այն լացն ու կոծը՝ ուր նրա քնարը արդէն անզօր էր և ինքը անգոյն...:

Հայ երկիրը չը դիմաւորեց «Անուշ»-ի տաղանդաւոր կերտողին: Կեղեքուած ու ահաբեկուած հայ գիւղացին, հայ ինտելիգենտը, երիտասարդութիւնը՝ խելակորոյս փախչում էր անկոչ հիւրերից...: Յովհաննէս Թումանեանի հռչակը փլեց մեր քաղաքական անկախութեան հետ միասին, և լեռների այդ մեծ ջութակահարը հանդիպեց իր հայ հին աստուածները, երկրի համար մնաց մի մեծ հոգեբանական գաղտնիք:

Մի բան միայն ակներև էր, հայ աշխարհի համար չը կար այլևս Յովհաննէս Թումանեանի մեծ հեղինակութիւնը: Մնում էր «Անուշ» և «Սաքօն»՝ բայց անջատ նոցա տաղանդաւոր կերտողից, և որպէս միայն նուիրական ժառանգութիւն հայ երկրի և հայ ժողովրդի...:

Եւ այդ մեծ, բարի հոգեբանական տեսիլով՝ պատմութիւնը փակեց այն մեծահռչակ շրջանը, ուր ապստամբուած հայ աշխարհը ընկաւ ռուս սուինների ջախջախիչ հարուածների տակ...: Ժողովրդի սէրը դէպի իր հայրենիքը, և նրա մեծ կորովը դէպի ազատակիր ապագան...: Այդչափ անողոք է բռնի ոյժը, և այդպէս դեռ չը ծաղկած՝ թառամեց մեր անկախութիւնը:

Հայոց հանրապետութիւնը ընկաւ՝ բայց կեցցէ հայ պետութիւնը...:

Միւս օրը, հայ ժողովրդի և հայ տրամադրութեան բացակայութեամբ՝ Երևանի ակումբում տօնուեց Հայաստանի երկրորդ անկումը: Գեներալ Յովսէփեան և գնդապետ Միրիմանով՝ երկրին խորթ և թշնամալից ծափերի տակ պարգևատրուեցին ռուս կարմիր շքանշաններով: Առաջինը՝ Լօռու գաւառում վրաց իշխանութեան դէմ ապստամբութեան սիմուլիցեայի համար և Վրաստանի նուաճման առիթով, միւսը, որ ռուս ջարդարար գլուխն անցած՝ որպէս կեսար յաղթական Երևան մտաւ, Հայաստանի պարտութեան առիթով...:

Ծաղր էր այդ թէ բախտի քմահաճ պատկեր՝ գեներալը և գնդապետը ստացան այդ ռուս շքանշանները մի ինչ-որ վրացու ձեռքից...:

Այդպէս էր ռուս ինտերնացիոնալ ապօթեոզը:

ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 18, թթ. 1-86, բնագիր, ձեռագիր:

DOC №19

Յուշեր՝ յեղափոխութեան նախօրեակին հասարակարգում կատարուած փոփոխութիւնների, վարչական մարմինների թոյլ տուած սխալների, հայկական դիւրահաւատութեան և սոցիալիզմի ու ռուսական կողմնորոշման վերաբերեալ հեղինակի անձնական վերաբերմունքի մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Որչա՞փ և նենգ է բաժանելու ու տիրելու թեորեան՝ այնուամենայնիւ նա անխուսափելի է, մինչ գոյութիւն ունեն մարդիկ և նոցա ուղեկցող կրքերը:***
- ***Այսպէս անուանուած «ձախ դաշնակցութիւնը»՝ իր ժամանակի հիւանդութիւնն էր:***
- ***Եւ եթէ իւր ժամանակին, մեծ սիրով դէպի ժողովուրդը՝ դաշնակցութիւնը հմայուած ու տարուած իր գաղափարներով, շարունակ դեգերում էր երկրի ծալքերում, և ուշիմ դիտում երկրի անցուդարձը՝ այսօր պատասխանատու իշխանութիւն դարձած, նա կարծես հովացել էր և կարծես այլասեռուել:***
- ***Մի ինչ որ Աւիս, որ յետոյ ռուս մինիստր դարձաւ Երևանում՝ թագնւում էր Աղէքսանդրապոլ բուն հայկական գաւառում, և ռուսների ու հրեաների հետ ռումբ պատրաստում հայկական իշխանութիւնը պայթեցնելու համար:***
- ***...մենք չը գիտէինք նոյնպէս, որ մեր երկրի բոլոր անկիւններում, Երևանից սկսած՝ վխտում են ռուս վարձկանները, և ջանալից հրդեհում երկրի անբաւական տրամադրութիւնը:***
- ***Իսկ ռուսները մի կողմից յիմարացնելով մեզ, միւս կողմից կաշառելով մարդկանց՝ աղմկում էին հրապարակը կարմիր, բանուորութիւն, աշխատանք բացականչութիւններով, և աստիճանաբար ներս սողում Կովկաս՝ և նորից գրաւում իրանց շահաւետ և բուրալից անկիւնները...:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Այդպէս է մարդկանց վերաբերմունքը դէպի իշխանութիւնը և իրաւունքը:

Գալով նոր կառավարութեան վերաբերմունքին դէպի այն մարդիկը, որոնց քմահաճ ձեռքումն էր երկրի իշխանութիւնը՝ Շարուր-Նախճաւանի հայկական նահանգապետը չը կամեցաւ օգտագործել վարչական մի փորձուած մեթոդ: Հ-

ռապարակի մեծ պոռոտախօսներից մի քանիսին՝ գլխաւոր «սօցեալիստներին», «էսէր»-ներին և միւսներին՝ նա պէտք է որևէ զբաղմունք տար, որևէ պաշտօն: Մի քանի ազդեցիկ աղմկողներին, շողոքորթելով նոցա «յեղափոխական» փառասիրութիւնը՝ նա պէտք է մօտեցնէր իրեն, շրջապատուէր նորանով: Հայկական նահանգապետը պետք է ներշնչէր այդ մարդկանց իր շքախմբում լինելու մեծ պատիւը, և այստեղ անխուսափելիօրէն առաջ կը գար մարդկանց մրցութիւնը:

Թուրքերը շատ նախանձալից են և շատ փառասէր: Շահերի այդ առանցքում առաջ կը գար մրցութիւն՝ և իշխանաւորի առաջ կը բացուէին երկրի բոլոր գաղտնիքները և բոլոր անցքերը... Որչա՞փ և նենգ է բաժանելու ու տիրելու թեորեան՝ այնուամենայնիւ նա անխուսափելի է, մինչ գոյութիւն ունեն մարդիկ և նոցա ուղեկցող կրքերը: Զուգընթաց այդ բոլորի հետ՝ իշխանաւորը պէտք է ի ցոյց դնէր և իր իրաւունքները: Եւ փաղաքշելով ու շոյելով մի խումբ մարդկանց՝ նա պէտք է յօնքերը կիտէր, և դէպի ձախ սաստելով և ի կատար ածելով իր այդ նախազգուշացումը՝ ի տես երկրի և դարան մտած խռովարարների: Այդպէս է գէթ առայժմ Ատրպատականի այն վայրը, որ վիճակ էր ընկել հայկական նահանգ լինելու:

Եթէ հայկական նահանգապետը կարծում էր, որ իշխանութիւնը «սոցիալիստական» յայտարարելով իրան՝ նա դադարեց մեր ձորերում ազգայնական լինել:

Այստեղ թուլացան նրա հմայքը, և այդտեղ պարտուեց հռչակաւոր կուսակցութիւնը:

Եւ եթէ Թիֆլիզի տաղանդաւոր «Յառաջը» Ահարոնեանից կայծակուած, ապա և «Հորիզոնը» շատ բարձր տրամադրութեամբ առաջնորդում էին մեր ազգային վերապրումները՝ նրա յաջորդ «Աշխատաւորը» արդէն մեկուսացած էր և խորթալից...:

Երկրի անուանական տարազը արդէն ցոյց էր տալիս հրապարակում տիրող նմանուելու տրամադրութիւնը, և «Աշխատաւորը» հոլովելով «աշխատաւորութիւն» հասկացողութիւնը՝ զբաղուեց աւելի ակադեմիկ խնդիրներով, և ոչ գաւառով ու նրա կեանքով: Այսպէս անուանուած «ձախ դաշնակցութիւնը»՝ իր ժամանակի հիւանդութիւնն էր: Եւ եթէ ընդունելու լինենք, որ բոլոր քաղաքական խմորումները բորբոքւում ու հունցւում են կրքերով և փառասէր ձգտումներով՝ գուցէ շատ հասկանալի լինի «ձախ դաշնակցականների» երկունքը:

Մեծավաստակ դաշնակցականների դափնիքը հանգստութիւն չէին տալիս նոցա յաջորդներին, և վերջինները սոցեալիստի ծիրանին հագած՝ իրանց «ձախ» յայտարարեցին, ձգտելով դէպի փառք ու իշխանութիւն, դէպի համերգի առաջի ջութակը...:

Այստեղ ըստ իմաստի՝ հիւծուեցաւ դաշնակցութիւնը:

Եւ կուսակցութիւնը որպէս կառավարութիւն՝ արդէն ցաւագար էր և արդէն հարուածալից: Հայկական կաբինետը, պարլամենտը, դաշնակցութեան բիւրոն՝ պառակտուած էին արդէն ժամանակի աւերիչ հողմերով: Մեր այդ բոլոր հաստատութիւնները, որոնց վիճակ էր ընկել ընդգրկելու մեր իջնող երազները՝ այլևս ոչ ցայտուն ազգայնական էին և ոչ հարազատ դաշնակցական...:

Եւ եթէ իւր ժամանակին մեծ սիրով դէպի ժողովուրդը՝ դաշնակցութիւնը հմայուած ու տարուած իր գաղափարներով, շարունակ դեգերում էր երկրի ծալքերում և ուշիմ դիտում երկրի անցուդարձը՝ այսօր պատասխանատու իշխանութիւն դարձած, նա կարծես հովացել էր և կարծես այլասեռուել:

Մեր վարիչ շրջանները հակում չունէին կարծես դէպի ցած իջնելու: Պետական և կառավարչական խնդիրները շօշափւում և լուծւում էին սրաթռիչ ու վայր ի վերոյ, և երկիրը չէր ակօսւում մտածուած, հիմնովին ու հոգալից:

Դատարանը մի ֆիկցիա էր, վարչական, ադմինիստրատիւ մեքենան՝ մի ծաղր իրաւակարգի: Իսկ երկրի միւս հաստատութիւններում բռնակալել էին միայն հաշուելից մարդիկ, որոնք տենդոտ տանում էին միայն և շատ շտապ կրում...: Զեմստվոն, ոստիկանութիւնը և միւսները զբաղուած էին միայն թալանով և միայն վայելքով: Այդ մութ և արկածալից բազմութիւնը կարծում էր, որ երկիրը նոցա համար է, և այդ մթնոլորտում ժողովուրդը չէր կարող կառավարութեան թիկունքում լինել: Եւ մինչ ոստիկանութիւնը միայն սրբում էր և միայն կեղեքում՝ Աղէքսանդրապօլում հակապետական դաւադրութիւն էր խմորւում: Մի ինչ որ Աւիս, որ յետոյ ռուս մինիստր դարձաւ Երևանում՝ թագնւում էր Աղէքսանդրապօլ բուն հայկական գաւառում, և ռուսների ու հրեաների հետ ռումբ պատրաստում հայկական իշխանութիւնը պայթեցնելու համար:

Իսկ ոստիկանութիւնը, զեմստվոն, մենք բոլորս՝ այդ չը գիտէինք, մենք չը - գիտէինք նոյնպէս, որ մեր երկրի բոլոր անկիւններում, Երևանից սկսած՝ վխտում են ռուս վարձկանները, և ջանալից հրդեհում երկրի անբաւական տրամադրութիւնը: Շատ ուշագրաւ է, որ Մայիսեան օրերից դեռ շատ առաջ՝ շատ խօսում էին, որ ռուսները Մոսկուայից մեծ գումարներ են ուղարկել Հայաստան, և շատերը կաշառուած են, բայց մենք այդ ոչ լսում էինք և ոչ հաւատում: Մենք նիրհում էինք մեր իշխանալից բարձունքներում, պարլամենտում, լրագրութեան մէջ զբաղւում «աշխատաւոր մասսաներ»-ի շուրջը ծամծուած թեորիտիկ բառախաղութեամբ, և կարծում էինք, որ դորանումն է երկիր կառավարելու իմաստը և մեր պարտաւորութիւնները: Բայց մեր միամտութիւնը անցնում էր բոլոր չափերը և բոլոր սահմանները: Երբ ռուս ջարդարար ձգտումները, կարմիր սաղաւարտով դիմակաւորուած միայն յիմարացնում էին Կովկասը իրանց ինտերնացիօնալ յայտարարութիւններով, և այդ աղմուկի տակ առաջ մղում իրանց բռունցքը և իրանց նուաճալից ձգտումները՝ մենք տակաւին հաւատում էինք այդ յայտարարութիւններին, և նոցա հակադրում միայն ճառեր և միայն դատարկաբանութիւն:

Եւ երբ բոլորս զբաղւում էինք միայն ճառերով և միայն ակադեմիկ վէճերով՝ գաւառները խարխափում էին անիշխան կամայական մթնոլորտում: Այդ պայմաններում երկիրը չէր կարող մեզ հետ լինել, և նա օրեցօր ցնցւում էր և օրեցօր երերւում իր ցաւալից վերապրումներում:

Ռուս գործակալները հեղեղում էին մեր գիշատիչ հրապարակը ռուս անպէտք 500 ռուբլիանոցներով, վխտում բոլոր ուղղութիւններով, ուսումնասիրում մեր կացութիւնը, մեր անելիքները, մեր ոյժերը, և օգտուելով երկրի անբաւական տրամադրութիւնից՝ կոմունիզմի թունալից անուան տակ ցանում ռուս գերիշխանութեան սերմերը:

Իսկ մենք իշխանալից զառանցելով՝ կարծում էինք, որ երկիրը մեզ հետ է և մեր բոլոր յայտարարութիւնները նոյնպէս անում էինք «աշխատաւոր մասսաների» անունից...

Մենք միամտութիւն ունէինք կարծելու, որ ռուս ջարդարար բռունցքի համար «աշխատաւորութիւնը» սրբազան հասկացողութիւն է, և երբ նա իր բռունցքը փաթաթեց միայն կարմիր ցնցոտիով՝ մենք այդ բոլոր գունալից պատկերները հալած իւղի տեղ էինք ընդունում: Ռուս նուաճողական ձգտումներին դիմադրելու մենք գալիս էինք ոչ մեր կազմակերպութեամբ, ոչ մեր պետականութեամբ, այլ միայն «աշխատաւորութեան» անունից յայտարարութիւններով, զաւեշտ «բանաձևերով» և անվերջ ու տաղտկալի խօսքերով: Իսկ ռուսները մի կողմից յիմարացնելով մեզ, միւս կողմից կաշառելով մարդկանց՝ աղմկում էին հրապարակը կարմիր, բանուորութիւն, աշխատանք բացականչութիւններով և աստիճանաբար ներս սողում Կովկաս, և նորից գրաւում իրանց շահաւետ և բուրալից անկիւնները...:

Այդպէս էր այն մեծ կատակերգութիւնը՝ ուր մենք այնչափ յաջող տարանք մեր դերը...: Եւ պէտք է արդեօք այդ բոլորից յետոյ ասել, որ դաշնակցութիւնը մեծ և կարող էր՝ երբ գնում էր իր երկրի հետ միասին, երբ նա ցայտուն ազգային կուսակցութիւն էր՝ երբ անդրադառնում էր մեր իղձերը և տրամադրութիւնները: Բայց այն օրուանից, երբ հռչակաւոր կուսակցութիւնը դադարեց սպասաւորելու իր հին սրբերին, երբ նա յառեց դէպի սոցեալիզմ՝ նա անջատուեց մեզանից, նա խորթ էր երկրին, և նա կորով ու թռիչք չունեցաւ իր յետևից տանելու հայ աշխարհը: Սոցեալիզմը օրուայ տարազն էր ի հարկէ, և գուցէ անխուսափելի մի չարիք: Բայց յամենայն դէպս՝ մեր դաշտերում ու ձորերում մենք դեռ շատ հեռու ենք այդ հասկացողութիւններից, և գուցէ դորանով պէտք է բացատրել՝ թէ ինչու մեր օրերում այնչափ բռնալից իջան երկրի բոլոր հաւատալիքները:

Սրբապղծուեցին բոլոր նուիրական բարձունքները, և երկրի այդ անողոք և կեղտոտ բովում՝ ի փառս ռուս բռունցքի և ռուս իշխանութեան, այլասեռուեց և ամօթալից մեր ազգային պատուախնդրութեան համար, ընկաւ մեր հայ երիտասարդութիւնը:

Այդպէս էր մեծահամբաւ դաշնակցութիւնը իր անցեալում, և այդչափ սայթաքուն ու մահալից էր այն ուղին՝ որով գնաց այդ կուսակցութիւնը որպէս կառավարութիւն:

ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 19, թթ. 1-12, բնագիր, ձեռագիր:

DOC №20

Յուշեր՝ նախայեղափոխական շրջանում ժողովրդական բողոքալից փրամադրութիւնների և թուրքերի ազգային բնաւորութեան մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Եւ եթէ այսպեղ ու այնպեղ թուրքերը և քրդերը գերակշռել են մեզ իրանց թուով՝ այնուամենայնիւ կեանքի ձեռներեցութիւնը, կեանքի բոլոր ասպարէզներում, ամէնուրեք՝ մեր ձեռքումն է եղել:***
- ***Հարստութեան հետ միասին՝ մենք մեր ձեռքումն էինք պահում միշտ և մեր նախամեծար տեղը կրթական ու հասարակական բոլոր ասպարէզներում...***
- ***Քաղաքակրթութիւնը և կուլտուրան գէթ մինչև այսօր՝ երբէք չի պատուաստուել թուրք բնոյթին:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

...Բնորոշելով հայկական բանակի սպարապետ ծերունի գեներալ Նազարբեկովին և նորա օրերի տրամադրութիւնը՝ ես կ՛ուզէի արձանագրել այստեղ մի տեսիլ, ուր առանց խօսքերի անդրադառնում էր այդ օրերի անցուդարձը: Երբ տաճկաց զօրքերը գրաւում էին Աղէքսանդրապօլը և օդի ջղայնացումը հասել էր իր գագաթնակէտին՝ մարդիկ կորցրել էին կարծես մտածելու ընդունակութիւնը, Երևանում շարունակւում էր տենդոտ անցուդարձը: Պարլամենտը, զեմստվոն, հասարակական գործիչները, կառավարութիւնը՝ կարծես թէ մի բան էին անում: Տրամադրութիւնը և բարձր էր և ընկճուած: Բոլորը խօսում էին, աննպատակ շտապում, բոլորը քննադատում էին, անվերջ խորհրդակցում, իսկ երկինքը մթնդում էր՝ և սարսափելի պայթումը և ակներև էր և անխուսափելի: Երկրի նորածին, «պետական մեքենան» շրջապատուած դրսի և ներսի թշնամիներով՝ խանգարուել էր արդէն ի ծայր, և անիշխանութիւնը ակներև էր դառնում այնչափով, որ չափով որ առաջ էին շարժւում ռուս-տաճկական համաձայնալից սուիններները:

Առանց այն էլ կաղող հեռագիրը ամէն օր խզւում էր այստեղ-այնտեղ, և կառավարութիւնը զուրկ էր ճիշտ և ժամանակին ստացուած տեղեկութիւններից: Հեռագրացանցի նորոգութիւնը դանդաղում էր այն չափով, որ չափով ընկնում և լուծւում էր երկրում դիսցիպլինան և ընդհանուր իրաւակարգը, և կառավարութեան բոլոր այդ ուղղութեամբ ի ծայր ջղային պահանջները՝ նման էին վերջի

տագնապի, ուր կեանքի կարօտը դեռ շարունակում էր կռուել մահուան ուրուականի հետ...

Քաղաքացիական կեանքը ընդգծել է մեր տիրապետութեան և մեր սուվերէն իրաւունքների ուրուագիծը: Եւ եթէ այստեղ ու այնտեղ թուրքերը և քրդերը գերակշռել են մեզ իրանց թուով՝ այնուամենայնիւ կեանքի ձեռներեցութիւնը, կեանքի բոլոր ասպարէզներում, ամէնուրէք՝ մեր ձեռքումն է եղել:

Անուանի երկրագործութիւնը, հռչակաւոր ջրամբարները և ոռոգման ջրերի սիստեմը, ինչպէս աննման այգիները, մետաքսը և բոլոր արհեստները՝ բոլոր*[ը]* մեր ձեռքումն էին:

Հարստութեան հետ միասին՝ մենք մեր ձեռքումն էինք պահում միշտ, և մեր նախամեծար տեղը՝ կրթական ու հասարակական բոլոր ասպարէզներում ուսուցչութիւնը, իրաւաբանները, բժիշկները, վաճառականութիւնը, և ամբողջ դպրութիւնը՝ դարձեալ մենք էինք:

Հին Նախճաւանը ասպետական կալուածատիրական Պարսկաստանի վերջի բեկորն էր Ատրպատականի սահմաններում: Խաները, բէկերը ու աղալարները միշտ շատ ուժեղ են եղել այստեղ թէ՛ իրանց տնտեսութան կարողութեամբ և թէ՛ կառավարչական, պետական իմաստով:

Ռուս իշխանութիւնը դատաստանական ռեֆորմից յետոյ՝ ձգեց այդ իշխող դասակարգի վաղեմի հմայքը և նշանակութիւնը:

Մեծատարած լատիֆունդիա կալուածները փոքր առ փոքր սկսեցին վիճելի դառնալ կալուածատէրի և գիւղական ազգաբնակութեան միջև:

Որպէս ազնուականներ՝ նոր իշխանութիւնից ճանաչուեցին միայն խաները և միայն բէկերը, իսկ աղալարներին և միւսներին վերապահուեց ազնուական տիտղոսին հետամուտ լինելու իրաւունքը: Իրաւակարգային այդ առանցքը մեծ պայքար առաջ բերեց խաների, բէկերի և միւս չը ճանաչուած, կամ կիսապաշտօնական ազնուականների միջև, մեծ չափով զբաղեցրեց իրանով թէ՛ վարիչ և թէ՛ հասարակական շրջանները: Այդ արտօնուած իրաւունքները ի հարկէ՝ բացի տիտղոսից և փայլից, պարփակում էին իրանց բնոյթում աւելի մեծ նշանակութիւն ունեցող մի խնդիր, այդ բոլոր իրաւունքների հետ կապուած էին երկրի հողային և ջրային իրաւունքները, և այդպիսով այդ պայքարը՝ ասպետական և տոհմալից իր բնոյթում, վերածւում է տնտեսական խոշորագոյն խնդրի, որ տասնեակ տարիների ընթացքում բորբոքում և երերում էր երկիրը:

Հայերը՝ այդ բնածին հողագործ ժողովուրդը, թուրք գիւղացիութեան հետ միասին գալիս էին հակադրելու թուրք բէկերին: Եւ այստեղ բռնկւում է այն մեծ հրդեհը, որ ի դէմս դատաստանական և վարչական բազմաթիւ վէճերի՝ կրկին 60 տարի շարունակ լափում էր երկիրը:

Հայ ինտելեգենցիան՝ պրոգրեսիստ իր բնոյթում, եկաւ առաջնորդելու ժողովրդական տրամադրութիւնների այդ բողոքալից հոսանքը, և այդ հետաքրքիր խմորումը լուծուեց հայ-թուրքական մեծահռչակ ընդհարումով միայն 1905 թուին:

Եթէ Կովկասը վարչական և կառավարչական իմաստով մի առանձնակի երկիր է՝ Հին Նախճաւանի գաւառը մինչև ի վերջը պահպանեց այդ բնորոշ գծերը:

Ադմինիստրատիւ, վարչական գործելակերպը այդ վայրում՝ ուր դեռ տակաւին գերիշխում էին կալուածատիրական և ասպետական հասկացութիւնները, ուր Պարսկաստանի հարևանութիւնը պահպանել էր և այստեղ Ատրպատականի նախնի ճաշակը, հաւատալիքները և կենցաղը՝ այդ գործելակերպը շատ բարդ ու շատ պատասխանատու պէտք է լինէր:

Ռուս պետական յեղաշրջումը յեղափոխութիւն չը ստեղծեց այստեղ: Եթէ մի կողմից ամբոխը տապալեց նախնի տիրապետութիւնը, և խաների ու բէկերի ապարանքը ցիրուցան արեց այստեղ՝ տիրապետութիւնների այդ բազմաթիւ բեկորների առանցքում առաջ եկան նոր բռնակալներ և նոր կեղեքողներ:

Քաղաքակրթութիւնը և կուլտուրան գէթ մինչև այսօր երբէք չի պատուաստուել թուրք բնոյթին: Թուրքը ընդունել է այդ քաղաքակրթութեան արտաքինը միայն, իսկ օրգանապէս նա միշտ խորթ է եղել բոլոր առաջադիմական և կրթիչ հոսանքների:

Թուրքը ճարպիկութեամբ դիմակաւորուեց սոցիալիստի բոլոր փետուրներով, նա և սոցիալիստ է, և մենշեւիկ, և բոլշեւիկ, ինչ կամենաք՝ բայց իր հոգու խորքերում նա նոյն ֆանատիկ և անհամբեր թուրքն է:

ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 20, թթ. 1-7, բնագիր, ձեռագիր:

DOC №21

Յուշեր՝ բոլշևիզմի, Հայաստանում տիրող խառն իրավիճակի և Մայիսեան դէպքերի մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Մայիսեան դէպքերը բոլշեւիզմ չէր, ինչպէս անարխիկ, բոլշևիկ չէ և հայ մարդը:***
- ***Ռուս կայսերական ռեժիմը երկրի հասկացողութիւններում դառնում էր այն իդեալը՝ որին նա կարօտում էր:***
- ***Թէ ի՞նչ էր բոլշևիզմը և թէ ի՞նչ դիմակի տակ էր գալիս ռուսը այս անգամ Կովկաս՝ մենք չը գիտէինք:***
- ***...հայ ժողովուրդը բոլշևիկ, ջարդարար տրամադրութիւն չունէր, և իր խաղաղ, աշխատալից, տնտես ու «տուն դնող» բնորոշ ազգային յատկութիւններով՝ նա շատ հեռու էր բոլշևիզմից:***
- ***Հայ ժողովուրդը շատ հեռու էր սուվերէն իշխանութիւնից հրաժարուելու մտքից, նա նպատակ չունէր տապալելու իր կառավարութիւնը:***
- ***Երկիրը չը դիմադրեց այդ գրոհին, հոգեբանական առանձնակի վերապրումների ազդեցութեան տակ հայ զինուորը ձգում էր իր զէնքը և անտարբեր քաշւում հրապարակից:***
- ***Այդ բոլոր պատճառներով բոլշեւիզմը արկածապէս հակասում է մեր ազգային բնոյթին, և բախտի անողոք ծաղրով միայն՝ մենք զոհ գնացինք ժամանակի այդ աւերիչ հոսանքին:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Արձանագրելով այստեղ Մայիսեան բռնկումը՝ ես կ՛ուզէի մի քանի խօսք էլ ասել այդ շարժման բնոյթի և իմաստի մասին: Որպէս նահանգապետ և որպէս մի մարդ, որ երկար տարիներ զբաղուել է գաւառական կեանքով՝ ինձ համար և տեսանելի էր և հասկանալի այդ շարժման իսկական պատճառը: Մայիսեան դէպքերը բոլշեւիզմ չէր՝ ինչպէս անարխիկ, բոլշևիկ չէ և հայ մարդը: Երկիրը ի ծայր անբաւական էր տիրող կատարեալ անիշխանութիւնից: Նա իր չորս կողմը տեսնում էր միայն թալան, միայն դատարկաբաններ, նա *[կարօտ]* էր հանգստի և իրաւակարգի: Կառավարութիւնը թէ կենտրոնում և թէ գաւառներում՝ պետական լրջութիւն չունէր: Երկիրը դրական, շինարարական աշխատանք չէր տեսնում, նա կարօտ էր խիստ և արդարադատ կառավարչական վերաբերմունքի,

իսկ այդ տրամադրութիւնը նա չէր տեսնում: Հայկական դատարանը գէթ նմուշի համար մի վճիռ չարձակեց, որ երկրի սրտովը լինելով՝ բաւարարէր նորա խիղճը: Ադմինիստրացիան, սպայութիւնը՝ մրցում էին թալանի արհեստում, և այդ բոլոր «յեղափոխական» փորձերը կատարւում էին ի հարկէ ի հաշիւ «աշխատաւոր մասսաների», և անջատում երկիրը այդ «յեղափոխական» տարրից: Ռուս կայսերական ռեժիմը երկրի հասկացողութիւններում դառնում էր այն իդեալը՝ որին նա կարօտում էր: Եւ ռուս իշխանութիւնը այն միակ ելքն էր՝ որին ձգտում էր երկիրը 17 թուի արձակածներից յետոյ լիուլի ճաշակելով «յեղափոխութեան» քաղցրութիւնը...

Պէտք է ասել, որ այդ շփոթ և անիշխան օրերում մեր գիւղերում ռուսների մասին շարունակ շշուկներ կային: Ասում էին, որ Դենիկին՝ թագաւորի հանդիսաւոր մուտքի ճանապարհն է հարթում, և բոլորը սրտատրոփ սպասում էին: Հաղորդակցութիւնը 17 թուից միանգամայն խանգարուած լինելով՝ գաւառներում ֆանտաստիկ պատմութիւններ էին շրջում: Կողբի աղահանքի շրջանը, որ Սուրմալու գաւառի մի անկիւնն է՝ առանձին «հանրապետութիւն» էր, նա ոչ թիւրք էր և ոչ հայկական իշխանութիւն էր ճանաչում: Թէև այդ «հանրապետութեան» սահմանները «փակ էին»՝ բայց Արարատեան դաշտի ժողովուրդը հնագոյն ժամանակներից սովոր լինելով Կողբի աղին, այնուամենայնիւ միջոց էր գտնում երբեմն անցնելու դէպի Կողբ, և այնտեղից դառնալով՝ ցրւում էր գիւղերը բազմատեսակ ֆանտաստիկ «քաղաքական» նորութիւններ: Այդ օրերում Շօրագեալի մի սայլապան վերադառնալով Կողբից՝ պատմել էր, որ աղահանքում ևս ռուս զօրք է տեսել: Այդ պատմութիւնը հաւելումներով ու գունալից՝ կայծակի արագութեամբ անցնում է ամբողջ Կարսի նահանգը, և մեծ իրարանցում առաջ բերում Ախուրեանի հովտում: Այդ միջոցում մի երկու թուրք պատրաստւում էին անցնել Կողբ, աղի: Շրջակայ գիւղերում իմանալով այդ բանը՝ մի թուրք գալիս է Կողբ գնացողների մօտ և շատ խորհրդալից ու գաղտնի յանձնարարում է գնացողներին, եթէ ճիշդ է ռուս զօրքի Կողբ գալը՝ մի որևէ կերպով, ասում է թուրքը, ռուս զինուորի մի գլխարկ, մի փափախ կը բերէք Ձեզ հետ, որ մենք միամտուենք և այդ ռուս փափախի առաջ մեր զիարաթը, ուխտը կատարենք...

Ես կարծում եմ, որ այդ անպաճոյճ պատկերում երկրի հոգեբանական վերապրումներն են, և ժողովրդի ուխտը ու նրա սպասելիքները: Թէ ի՞նչ էր բոլշևիզմը և թէ ի՞նչ դիմակի տակ էր գալիս ռուսը այս անգամ Կովկաս՝ մենք չը գիտէինք: Երկրի յիշողութիւններում վերականգնում էր խիստ իշխանութիւնը, և նա ծարաւի էր այդ իշխանութեան՝ վերջի տարիների ճառերից ու ծափերից յետոյ: Յամենայն դէպս հայ ժողովուրդը բոլշևիկ, ջարդարար տրամադրութիւն չունէր, և իր խաղաղ, աշխատալից, տնտես ու «տուն դնող» բնորոշ ազգային յատկութիւններով՝ նա շատ հեռու էր բոլշևիզմից: Գալով նրա ցայտուն ազգայնական տրամադրութիւններին՝ հազիւ թէ պէտք է կրկնել, որ նա շատ սիրում է իր մայ-

ռենի մրմունջները, իր օջախը և իր ազատաձիր ուղիներում նա իւր ժամանակին թափել է շատ արցունք և շատ արիւն...

Եւ եթէ Կովկասի ազգութիւնների թւում կար մի ժողովուրդ, որ ունէր բոլոր տուեալները քաղաքական-ազգային ինքնորոշ պահանջների համար՝ դա անկասկած հայ ժողովուրդն էր: Եւ այդ բոլոր պատճառներով՝ նա չէր կարող ուխտազանց լինել, և չէր կարող այսօր դեգերել իրան միանգամայն խորթ և միանգամայն անընդունելի մթնոլորտում: Նա ի ծայր անբաւական էր իր հայրենիքում տիրող կարգերից, նա հիասթափուած էր սպասելիքներում և գուցէ այդ էր պատճառը, որ Ռուսաստանը անվերաբեր նորա դիմակին՝ ուրուագծւում էր նրա առաջ որպէս կայուն իշխանութիւն և խիստ իրաւակարգ:

Հայ ժողովուրդը շատ հեռու էր սուվերէն իշխանութիւնից հրաժարուելու մտքից, նա նպատակ չունէր տապալելու իր կառավարութիւնը: Հրապարակ ձգելով իր անբաւականութիւնը՝ երկիրը բողոքում էր միայն իշխանութեան թոյլութեան դէմ, և կոչ էր անում դէպի կառավարչական լուրջ և խիստ գործելակերպ: Եւ իր այդ պահանջները դէպի աջ՝ մենք բնաւ տրամադիր չէինք անելու ի հաշիւ մեր ինքնուրոյնութեան և մեր ազգային դէմքի: Մեր բողոքներով և յայտարարութիւններով՝ Մայիսին մենք հրապարակ դուրս եկանք ոչ ինտերնացիոնալով, այլ մեր ազգային հմայիչ «Մեր հայրենիքով»: Եւ այստեղ էր այդ բորբոքումի հոգեբանութիւնը:

Բայց հայկական կառավարութիւնը կարողութիւն չունեցաւ հասկանալու ժամանակի տրամադրութիւնը, և նա անկարող եղաւ բաւարարելու երկրի պահանջը: Եւ փոխանակ դէպի աջ, դէպի լուրջ և հեղինակալից նաւահանգիստ փութալու՝ հայկական կաբինետը հանդէս եկաւ իր հաշիւներով քաղաքական կուսակցութիւնների հետ, և դորանով միայն հրդեհեց հայկական անբաւական մթնոլորտը: Ռուբէն փաշայի միահեծան և ինքնահաւան կառավարութիւնը միամտութիւն ունէր կարծելու, որ իր անսիստեմ հալածանքներով անձնաւորութիւնների դէմ՝ նա կարող է փրկել դրութիւնը: Բիւրոյի կառավարութիւնը ի վիճակի չէր երկրի դրութեան և հրապարակի պահանջներին, և նա գալիս էր իշխանութիւն կերտելու հայդուկ և քալագէօզ միջոցներով: Նա մինչև ի վերջն էլ չը կարողացաւ հասկանալ, որ օրինականութիւնը արդարադատութեան հիմունքն էր, և որ չի կարելի կառավարել երկիրը վայրի ի վերոյ և թեթևընթաց: Կարսի անկման նախօրեակում անգամ՝ նա ընդունակ չեղաւ հասկանալու, որ հայկական ազգային բանակը լքել է նրա ռուս ու ռուսախօս հրամանատարութիւնը, որ չի կարելի երկիրը ամբողջովին զբաղեցնել զէնքի շառաչիւնով: Որպէս արկածալից հայդուկ՝ Ռուբէն փաշան չը կարողացաւ հասկանալ, որ երկիրը ծարաւի է քաղաքացիական զբաղմունքի, և որ անաչառ դատարանը ու լուրջ կազմակերպուած ադմինիստրացիան՝ երկրի հանգստի և խաղաղութեան գրաւականներն են:

Բիւրոյի կառավարութիւնը զսպեց կարծես թէ Մայիսեան խռովութիւնը, բայց այդ «կարգի վերականգումը» և խաբուսիկ էր և չարագուշակ...

«Արտակարգ» դատարանները և արտակարգ «լիազօրութիւններով» գաւառները մեկնած «ընկերները»՝ միայն վատթարացրին դրութիւնը: Բաւական կը լինի արձանագրել այստեղ, որ Նոր Բայազէտի պէս մի նահապետական և յետնկաց գաւառում՝ այդ Մայիսեան օրերում մի խումբ տաքագլուխներ բանտարկեց այն կողմերի զօրքերի հրամանատար գեներալ Սիլիկովին և նորա շտաբը: Եւ այդ շատ հասկանալի էր ի հարկէ, երբ այդ հրամանատարութեան մի հայ «գնդապետ», անյայտ արհեստի տէր իւր երեկուայ անցեալում, սրի է քաշում Բասարգեչարի թուրք գիւղերը, փախցնում ազգաբնակութեանը, իսկ ինքը իր «ընկերներով»՝ ասպատակում ու թալանում այդ վայրը, որ տասնեակ տարիներ խաղաղ և հանգիստ ապրել է Նոր Բայազէտի հայութեան հետ, և նոցա հետ միասին ամբարել երկրի հարստութիւնը:

Բիւրոն իր միահեծան իրաւունքներով հանդերձ՝ չը կարողացաւ հասկանալ, որ երկիրը երերւում է կառավարութեան անկազմակերպ և անսիստեմ առանցքում: Համօ Յովհանջանեանի կաբինետը չը կարողացաւ վերլուծել ժողովրդի անբաւականութեան պատճառը, նա միայն «դաւ» էր որոնում, և իր այդ որոշումը ի կատար ածելու համար՝ նա հրապարակ հանեց Ռուբէն փաշային: Սպայութիւնը, ադմինիստրացիան և «զեմստվոն» օգտուեցին միայն իրենց օրերի առաձգական իրաւունքներով, ու տիրող շփոթով և մեծ ներդաշնակութեամբ, բայց անջատ իրարից՝ «խորացրին յեղափոխութիւնը», իրանց գիշատիչ աշխատանքը: Մայիսեան օրերից յետոյ՝ հրապարակում այլևս իշխանութիւն չը կար:

Դաշնակցութեան վաղեմի համարումը ընկել էր ի սպառ: Պաշտօնեաների փոխյարաբերութիւնը և նոցա պարտաւորութիւնները Բաբելօնի այնպիսի մի շփոթ էր՝ որի լուծումը վեր էր օրինական միջոցներից:

Այդ մթնոլորտում երկիրը չէր կարող այլևս հաւատալ իր կառավարութեանը և նա բնականաբար իր փրկութիւնը դրսից էր սպասում: Եւ այդ առանձնակի, խեղդիչ մթնոլորտում՝ սկսուեց քեամալիստների մարշը դէպի Հայաստան:

Երկիրը չը դիմադրեց այդ գրոհին, հոգեբանական առանձնակի վերապրումների ազդեցութեան տակ հայ զինուորը ձգում էր իր զէնքը, և անտարբեր քաշւում հրապարակից: Նա նոյնիսկ չէր փախչում խելակորոյս, նա հոգնել և ձանձրացել էր իրար յաջորդող արհաւիրքներից: Կաթուածային (*առկայ է տեքստի խզում)*...անտարբերութեամբ իր իղձերի և սուվերէն իդեալների հրապարակը, նա քաշւում, գնում էր՝ առանց հասկանալու կատարուող մեծ անցքերի իմաստը և առանց որևէ բացատրութիւն տալու իրան այդ ինքնակործան հետևանքների մասին: Բայց ո՞վ էր մեղաւորը – մեղաւորը հայկական կառավարութիւնն էր, որ չը գիտէր իր երկիրը, նորա պահանջները և միանգամայն անպատրաստ էր պետական մեծախարիսխ նաւը փոթորիկներից փրկելու: Բայց անարդարացի

կը լինէր այդ ծանր մեղադրանքը միայն կառավարութեան վերայ բարդելու – աւելի մեծ չափով պատասխանատու էր իր երկրի առաջ հայ հասարակութիւնը, մեր բազմաթիւ ինտիլիգենցիան, որ խմբուած իր հայրենիքից դուրս՝ միայն քննադատում էր և միայն հայհոյում մեզ: Այդ մթնոլորտում հայկական կառավարութիւնը չէր կարող հրաշքներ գործել-...Նա պէտք է ընկներ բռնալից գրոհի տակ:

Հայկական հարցը դարձաւ այն modus vivendi, ուր գէթ որոշ ժամանակով կայսերական Ռուսաստանի և Թիւրքիայի միջև լուծւում էր արևելքում այդ դարաւոր մրցութիւնը: Միջազգային հրապարակից վտարւում էր մի մեծ պատմական դատ, որ այնչափ տարի բորբոքում էր Մերձաւոր Արևելքը, և այդչափ տարի գուրգուրում հայկական սպասելիքները: Այդ բոլոր պատճառներով՝ բոլշեւիզմը արկածապէս հակասում է մեր ազգային բնոյթին, և բախտի անողոք ծաղրով միայն՝ մենք զոհ գնացինք ժամանակի այդ աւերիչ հոսանքին: Մենք չէինք կարող ընդգրկել հայրենիքի գաղափարը վտարող և ազգային սրբութիւնները սրբապղծող այդ ջարդարար վարդապետութիւնը, մենք միայն անզօր ընկանք նորա հարուածների տակ՝ լքելով այն բոլորը, որի ճանապարհներով մեր սերունդները թափել են այնչափ հրճուանք և այնչափ արցունք...

Այդպէս էին Մայիսեան օրերը փաստերում և դիտողութիւններում:

ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 21, թթ. 1-15, բնագիր, ձեռագիր:

DOC №22

Յուշեր՝ Թիֆլիսի հայ մտաւորականութեան, Կարսի հասարակական քաղաքական կեանքի, Աղեքսանդրապոլի դաշնագրի նկատմամբ հայ հասարակութեան վերաբերմունքի և արտակարգ յանձնաժողովի կողմից Խատիսեանին, Գիւլխանդանեանին և Ղորղանեանին աքսորելու մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Եւ երբ այդ երկու հրեան, շատ հիմնաւոր կերպով սկսեցին իրանց հակապետական գործունէութիւնը Կարսի նահանգում՝ ես մանրամասն հաղորդեցի կառավարութեանը այդ մասին, և երկուսին էլ աքսորեցի նահանգի սահմաններից:***
- ***Մէկը՝ աւագը, Ազգային խորհրդի նախագահի դիմակի տակ, իսկ միւսը որպէս անդամ խորհրդի՝ շրջում էր ռուս գիւղերը և մեծամասնական պրոպօգանդա անում:***
- ***Ես տեսնում էի, որ դարան մտած դաւաճանները առիթ էին որոնում անկարգութիւն առաջ բերելու և դորանով հրապարակով երերելու իշխանութեան համարումը:***
- ***Մեծամասնական, բոլշեւիկ յանկարծակի բռնկումը Հայաստանում՝ պէտք է բացատրել ադմինիստրատիւ, վարչական անկազմակերպ դրութեամբ: Մենք չունէինք երկրում այն արթուն և ձեռնհաս ապարատը, որ ի դէմս ադմինիստրացիայի՝ պէտք է իրազեկ լինէր երկրի ներքին անցուդարձին և իր ժամանակին միջոցներ ձեռք առնէր ակնյայտնի ոճրի դէմ:***
- ***Եւ ի պաշտօնէ հրապարակ ձգել կանանց՝ դասալիքներ բռնելու համար, կը նշանակէ մի աւելորդ անգամ ծաղրել երկիրը և ծայր ձգել կառավարութեան պրիստիժի մնացորդը...***
- ***Պետականութիւնը պահանջում է սիստեմ, օրինականութիւն և հետևողականութիւն և չի կարող հանդուրժել պատահական մարդկանց, քմահաճ ցանկութիւններ, կրքեր և անկապանք «հայեցողութիւն»:***
- ***«Մայիսեան օրերը» բոլշեւիկ չէին իրանց բնոյթում, այդ երկրի անբաւականութեան յայտարարութիւնն էր միայն, և նրա իրաւակարգի պահանջը:***
- ***...հայ զինուորութիւնը ի դէմս նրա հրամանատար կազմի՝ միայն բացասական ֆակտոր էր մեր պետական իմաստում:***

- ***Երբ Վանանդի սարալանջերում առաջին անգամ որոտաց տաճկական թնդանոթը՝ հայ սպան փախաւ առաջինը, և մեր ռուսական ու ռուսասէր բարձր հրամանատարութեան առաջ բացուեց մի անվիճելի ճշմարտութիւն, մենք հրամանատար կազմ չունէինք...:***
- ***...«ռազմաբեմ» նեղուեց մի բուռն հայ երիտասարդութիւն: Բայց այդ եկուորները գնում էին ոչ թէ մեռնելու ապա սիրուած լինելու երազներով՝ այլ որպէս ռուս լրտեսներ և ռուս պրոպագանդիստներ, գնում էին լքելու հայկական թշուառ բանակը, և ստեղծելու այն սօդոմը՝ ուր պէտք է խորտակուէր հայկական անիշխանութիւնը:***
- ***Ընդհանուր շփոթի և ընդհանուր անիշխան մթնոլորտում՝ նրանք անարգել ցանում էին բոլշեւիկ թոյնը, և քաղցրալից քայքայելով սերունդների դարաւոր իղձերը՝ ռուս-տաճկական սուիններին թափնալից ընթացք հարթում...:***
- ***Երբ Ռուսաստանում բռնկւում է բոլշեւիզմը՝ Նուրին իրան բոլշեւիկ է յայտարարում, և որպէս կոմունիստ՝ նշանակւում է «Հայաստանի արդարադատութեան կոմիսար», ուր և գալիս է ռուս զօրքերի հետ միասին:***
- ***Մի երկու օրից յետոյ՝ Խատիսեանին, Գիւլխանդանեանին և ինձ բերեցին ռուսերէն ծանուցումներ, մեզ առաջարկւում էր ներկայանալ հռչակաւոր «չեկան», «արտակարգ կոմիսիան»:***
- ***Չեկայի նախագահ յայտնեց մեզ երկրի կառավարութեան որոշումը մեզ աքսորելու մասին, և առաջարկեց երկու օրից յետոյ թողնել «Հայաստանի» սահմանները:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Դեռ 19 թուի վերջերում և 20 թուականի Յունուարին՝ Կարսի ռուս ազգաբնակութեան մէջ նկատւում էր խուլ բորբոքում ու անցուդարձ: Այդ իրարանցումը կատարւում էր ռուս ազգային ժողովի շուրջը, և նա մի նոր կարծես բնոյթ էր ստանում: Խօսում էին այդ խորհրդի նոր «ընտրութիւնների» մասին, բայց այդ առիթով ինչ-որ գաղտնի ցուցմունքներ էին սպասում դրսից, Թիֆլիզից: Յունուարի սկզբներին Թիֆլիզից Կարս եկան երկու հրեայ մարդիկ, որոնք իրանց «էս-էր» էին անուանում: Մեր օրերում այդ անգոյն և անհոտ կոչումը շատ ձեռնտու զրահ էր այլևայլ պատահարներից: Այդ կոչումի տակ թաքնուողները ոչ այս էին և ոչ այն, և այդպիսով ապահոված էին թէ՛ ջրից և թէ՛ կրակից...

Այդ պարոններին ոչ ոք չէր ճանաչում Կարսում, բայց այնուամենայնիւ նրանք շատ շուտ ընտելացան մթնոլորտին և շատ շուտ յարաբերութեան մէջ մտան ռուս, թուրք և յոյն մի քանի արկածախնդիրների, որոնք ուզում էին թա-

գաւորութեան մէջ թագաւորութիւն անել և չէին կարողանում տանել հայկական իշխանութիւնը:

Մի քանի օրից յետոյ՝ ռուս գիւղերից եկան մի քանի գիւղական ուսուցիչներ, և Կարսում իբր թէ հաւաքուել էր Կարսի նահանգի ռուս ազգաբնակութեան համագումարը ազգային խորհրդի ընտրութեան համար: Պէտք չը կայ պարզելու կարծեմ, որ այդ պատահական և ինքնակոչ պատուիրակները ժողովուրդ չեն ներկայացնում:

«Ընտրութիւնների» բնոյթին մենք լաւ ծանօթ ենք, այդ ընտրութիւնները միայն կրում են «համաժողովրդական» անունը՝ բայց բուն ժողովուրդը այդ «ընտրութիւնների» մասին ոչ մի հասկացողութիւն չունի:

Մի բուռն մարդիկ գաղափարական հասարակական դիմակի տակ կարգաւորելով իրանց անձնական գործերը, և այդ դեմագօգ մթնոլորտում լաւ և անպատասխանատու վաստակ ունենալով՝ աղմկում են հրապարակը, և իրանք իրանց ժողովրդի ներկայացուցիչներ հռչակելով՝ չափում և ձևում են այդ թշուառ «ժողովրդի» անունից: Եւ այժմ, երբ «ազատագրական» և «գաղափարական» փորձերի բովը վերջանալու վերայ է կարծում եմ, որ այդ դիտողութիւնը, որ բոլորին շատ լաւ յայտնի է՝ կարելի է արձանագրել... Եւ Կարսի նահանգի ռուս ազգաբնակութեան այդ անկոչ «պատուիրակները» ժողով կայացնելով՝ այդ երկու հրեաներից մէկին «ռուս ազգային խորհրդի» նախագահ են ընտրում, իսկ միւսին՝ տեղապահ վարչութեան անդամ...:

Ես ուշադրութեամբ դիտում էի այդ բոլորը, և երբ այդ դիմակահանդէս «ընտրութիւնները» վերջացան և հրեաները գործի անցան՝ ես պատուիրեցի Կարսի ոստիկանապետին հրաւիրել երկուսին էլ իր գրասենեակը, և առաջարկել առաջիկայ գնացքով թողնել Կարսի նահանգի սահմանները...

Հրեաները փորձեցին միջնորդել ունկնդրութիւն խնդրելու ինձանից՝ բայց ես արդէն որոշ տուեալներ ունէի այդ խռովարարների մասին, մերժեցի այդ միջնորդութիւնը, և նրանք ստիպուած էին հենց նոյն օրը թողնելու Կարսը: Ռուս հասարակութեան բանիմաց մասը շատ գոհ մնաց իշխանութեան այդ կարգադրութիւնից, և իր ուրախութիւնն էր յայտնում, որ ազատուեց Իսրայէլի այդ զաւակներից:

Բայց այդ պարոնները գնում են Երևան, այցելում են Ներքին գործերի մինիստրի պաշտօնակատար Սարգ. Մանասեանին, և բողոքում «ընկերին» նահանգապետի կարգադրութեան դէմ: Այդ հրեաները հաւատացնում են մինիստրի պաշտօնակատարին, որ իրանք, առաջինը էս-էրներ են, և ի զուր է նահանգապետը նոցա մեծամասնական կարծում, երկրորդը՝ իրանք ռուսներ են և ոչ հրեաներ, իսկ երրորդը՝ նահանգապետը բռնանում է «ժողովրդի» կամքի վերայ, և նոցա ժողովրդի ընտրուածներ չի ճանաչում:

Առանց նահանգապետին հարցնելու և առանց վերջապէս ստուգելու հրեաների այդ պատմութիւնը՝ մինիստրի պաշտօնակատարը տարուած երևի ընկերվար սկզբունքներով, հաւատում է «ընկերներին» և հրաման արձակում, որ կառավարութիւնը իրաւունք է տալիս նոցա վերադառնալու Կարս...

Բայց խեղճ Սարգիս Մանասեան չը գիտէր, որ այդ մարդիկ ճակատագրական են իր համար, որ Մայիսին այդ էս-էրները, իրանց դիմակը ձգելով՝ ապստամբութիւն կը բարձրացնեն Կարսում հայկական կառավարութեան դէմ, իսկ նոցա ընկերները Դիլիջանի ձորում կը ձերբակալեն իրան՝ Մանասեանին, և ապա կը գնդակահարեն...

Մեր յիշողութիւնների սկզբում մենք առիթն ենք ունեցել բնորոշելու ռուս, թուրք և յոյն ազգային խորհուրդները Կարսի նահանգում: Այդ խորհուրդները կազմակերպուեցին այն մարդկանց ձեռքով՝ որոնք ռուս պետական յեղաշրջումից յետոյ առաջացած անիշխան մթնոլորտում պղտոր ջրում ձուկ էին որսում: Կարսի նահանգում այդ հաստատութիւնները առաջ եկան հայկական իշխանութեան օրով, և այնտեղ պատսպարուեցին այն բոլոր արկածախնդիրները՝ որոնց ճաշակով չէր ի հարկէ դէպի իրաւակարգ ձգտող իշխանութիւնը: Այդ զանազան արհեստների պարանից, թոկից փախածները՝ գէթ ազգային խորհրդի դիմակի տակ ձգտեցին պահպանել իրանց ձեռքում մի որևէ իշխանութիւն և նշանակութիւն երկրում, իսկ իրանց սրտի խորքերում ի հարկէ՝ նրանք փայփայում էին հայկական կառավարութիւնը տապալելու երազը:

Իւր ժամանակին ես փաստացի և մանրամասն զեկուցում էի ուղարկել կառավարութեանը այդ մասին, և ներկայացրել էի այդ բոլոր «գործիչների» կենսագրութիւնը: Եւ երբ այդ երկու հրեան, շատ հիմնաւոր կերպով սկսեցին իրանց հակապետական գործունէութիւնը Կարսի նահանգում՝ ես մանրամասն հաղորդեցի կառավարութեանը այդ մասին, և երկուսին էլ աքսորեցի նահանգի սահմաններից:

Բայց ասում են՝ անիմանալի է ամենակարողի կամքը, և կեանքի պրոբլեմը լուծւում է շատ անգամ ոչ մեր ցանկութիւններով: Եւ խեղճ Սարգ. Մանասեան՝ իր օրերի այդ մոլեռանդ հայրենասէրը, առաջինը ընկաւ այն դարանը, որի դժոխային անձեռնամխելիութիւնը նա այնչափ միամտօրէն պաշտպանում էր...

Այդ երկու հրեան նորից Կարս գալով՝ շարունակեցին իրանց գործունէութիւնը: Մէկը՝ աւագը, Ազգային խորհրդի նախագահի դիմակի տակ, իսկ միւսը որպէս անդամ խորհրդի՝ շրջում էր ռուս գիւղերը և մեծամասնական պրոպօգանդա անում: Բայց մի ամսից յետոյ այս վերջինը յանկարծակի մեկնեց Թիֆլիս, և այլև չը վերադարձաւ այնտեղից: Նա Կարս էր եկել կազմակերպչական հրահանգներով, և ծանոթանալով նահանգի դրութեան և տրամադրութիւնների հետ՝ վերադարձաւ ում հարկն էր զեկուցում տալու:

Այդ միջոցում ռուս մի թերթում, որ չեմ յիշում որտեղ էր հրատարակւում՝ մի երկու յօդուած երևաց Կարսի նահանգապետի «հակայեղափոխական» ուղութեան մասին:

Բայց այդ օրերում մթնոլորտը արդէն պղտորւում էր և Աղէքսանդրապօլից, այդ հոսանքների և հանդիպումների հանգոյցից անհանգիստ լուրեր էին գալիս: Նկատւում էր ազգային խորհուրդների ինչ-որ մերձեցում, նրանք սկսեցին բարեկամութիւն անել իրար հետ և ինչ որ խառն ժողովներ ունեցան:

Այդ ժամանակամիջոցում առաջ եկան առաջի անկարգութիւնները Կարսի զօրանոցներից մէկում, այդ Կարսի պահակական գումարտակն էր, որի հրամանատարն էր փոխգնդապետ Միրզօեւ: Նրա զինուորները ամենաթշուառ դրութեան մէջ էին, բոլորը մերկ, ցնցոտիների, կեղտի մէջ, բոլորը սոված և բոլորը անուշադիր:

Հազիւ թէ պէտք է ասել, որ մեր մատնիչ-դաւաճան հրէշները, շատ զգաստ դէպի մեր ցաւոտ տեղերը՝ օգտագործեցին այդ գումարտակի անցուդարձը, և Աղէքսանդրապօլից ինչ-որ հակապետական պրոկլամացեաներ տարածեցին այդ գումարտակի զօրանոցներում: Այդ պարարտ հողի վերայ առաջին անգամ խմորուեց ըմբոստ տրամադրութիւնը, և զինուորները ծեծեցին իրանց մի սպայի, որ իր զինուորներին մերկ և քաղցած էր պահում, իսկ ինքը կարագ ու մեղր վայելում...

Այդ գունդը արդէն տրամադրուած էր զինուած դուրս գալու, բողոքի ցոյց անելու համար իշխանութեան դէմ՝ բայց այդ մասին ես պատահմամբ տեղեկացայ մի քանի ժամ առաջ, և հենց գիշերը հաղորդեցի գեներալ Յովսէփեանին: Վերջինը ձեռք առաւ բոլոր միջոցները՝ և միջադէպը անցաւ... Այդ բոլորի մասին ես նոյն գիշերը ծածկագիր հեռագրով հաղորդեցի Երևան, բայց Կարսի հրամանատարութիւնը հերքեց ի հարկէ նահանգապետի հաղորդագրութիւնը, քնացրեց բարձր իշխանութիւնը՝ և ինքն էլ ի հարկէ շարունակեց նիրհել...

Ինչպէս յիշում է ընթերցողը, փոխ-գնդապետ Միրզօեւը Կարսի պարետ գեներալ Փիրումովի փեսան էր: *(ջնջած է)*

Խրախուսուած այդ բոլոր նպաստաւոր պայմաններից, և տեսնելով, որ իրազեկ նահանգապետի հաւաստիացումները զինուորական իշխանութիւնը տրամադիր է հերքելու անվերաբեր նոցա ճշտութեանը՝ մեր հայրենիքի թշնամիները, մեր այդ տան գողերը՝ շարունակեցին մեծ թափով իրանց գործունէութիւնը:

Ապրիլի վերջերում արդէն մթնոլորտը Կարսում անհանգիստ էր:

Մի քանի զօրամասերի զինուորներ, հայկական դիմակ հագած մի երկու սպաների դրդմամբ՝ խօսում էին Մայիսի մէկը տօնելու մասին, իրանք էլ ի հարկէ չը հասկանալով, թէ ինչումն է բանը: Այդ ալեկոծ դրութիւնը նկատւում էր և երկաթուղու ծառայողների մէջ: Երկար տարիների իմ վարչական պաշտօնավա-

րութեան ընթացքում՝ ես եկել եմ այն համոզմունքին, որ երկրի իշխանութիւնը միշտ արթուն լինելով դէպի երկրի անցուդարձը՝ պէտք է միևնոյն ժամանակ և տեսական նշանակութիւն չը տայ իր բոլոր իմացածներին:

Շատ հասկանալի հոգեբանական պատճառներով մարդիկ կրկնապատկում են իրանց ուշադրութիւնը դէպի այս և այն երևոյթը, երբ նորա շուրջը ուշադիր տրամադրութիւն են նկատում: Եւ որովհետև ամէն տեսակի կապանքներ առաջ են բերում բնական ընդիմադրութիւն՝ ես հակուած էի կարծելու, որ և մենք օդում տարուբերում նկատելով՝ առանձնօրէն չը պէտք է ծանրանանք Մայիսի մէկի տօնակատարութեան վերայ, այլ պէտք է թողնենք խնդիրը իրերի տրամադրութեանը:

Ես տեսնում էի, որ դարան մտած դաւաճանները առիթ էին որոնում անկարգութիւն առաջ բերելու և դորանով հրապարակով երերելու իշխանութեան համարումը: Այդ միտումներով ես հրահանգեցի ոստիկանապետին անտարբեր ձևանալ դէպի օրուայ այդ տենդը, և այդպիսով ձգել այդ տենդի տագնապ բնոյթը: Այդ օրերում Կարս էին պարլամենտի մի երկու անդամը և նրանք միանգամայն համաձայնուեցին ինձ հետ, թէև դաշնակցութեան Կարսի կօմիտէն տրամադիր էր արտայայտելու իր դիմադիր միջոցները: Բայց ինձ թւում էր, որ ես աւելի լաւ եմ ըմբռնում Արևելքի հոգեբանութիւնը, և համոզեցի ում հարկն էր՝ հետևել ինձ և անուշադիր թողնել հակառակ կողմի բոլոր ցոյցային հրաւէրները:

Ես շատ լաւ գիտէի, որ բոլոր թէ՛ յայտնի ու անյայտ խռովարարները և թէ՛ միամիտ ամբոխը ուշադրութեամբ դիտում են, թէ ինչպէ՞ս է անդրադառնալու դէպի սպասուող հակապետական ցոյցը կառավարութեան ներկայացուցիչ նահանգապետը: Եւ այդ տրամադրութիւնը ցրելու ու կրքերը հանգստացնելու համար՝ ես Ապրիլի 28-ին հրաման արձակեցի, որ գնում եմ շրջագայելու նահանգը և պարլամենտի անդամ Կարօ Սասունու հետ մեկնեցի Արդահան: Բայց Ապրիլի 30-ին բոլորի համար անսպասելի՝ ես վերադարձայ Կարս:

Տենդային տրամադրութիւնը իջել էր արդէն: Միւս օրը, երբ զանազան խմբեր իրանց դրօշակներով ժողովել էին հրապարակում՝ ես կառքով, ուղեկցութեամբ պարլամենտի անդամների, քաղաքագլխի, ոստիկանապետի և իմ շքախմբի՝ եկայ այդ հրապարակը, ի դիմաց կառավարութեան՝ ողջունեցի «բանուորութիւնը», ամբոխը ցոյց արեց ի պատիւ կառավարութեանը և ես կառք նստեցի «Մեր հայրենիքի» հնչիւնների ուղեկցութեամբ, խաղաղ լուծելով այդպիսով Մայիսի մէկի պրոբլեմը...

Կառավարութիւնը պահանջել էր, որ ես շուք ու փայլ տայի Մայիսի մէկի տօնակատարութեանը: Բայց ես ի նկատի առնելով առաջինը, որ երկիրը, ամբոխը, ոչ մի հասկացողութիւն չունի այդ տօնի մասին, և ոչ մի տրամադրութիւն զբաղուելու քաղաքականութեամբ, որ այդ օրով կարող էին օգտուել միայն մի քանի մարդիկ, հակապետական խմորումը հունցելու և իրանց միտումները առաջ տա-

նելու համար, և երկրորդ, որ երկրի իրաւակարգի համար պատասխանատուն ես եմ՝ վճռեցի տանել այդ խնդրում իմ գործնական գիծը, և այդպէս սպառել այդ սուր խնդիրը:

Ռուս կառավարութիւնը Մայիսի մէկի նախօրեակում՝ ամէն տարի ծածկագիր շրջաբերական հեռագիր էր ուղարկում նահանգապետներին «խիստ միջոցներ ձեռք առնել», որպէսզի Մայիսի մէկը չը տօնուի:

Պէտք չէ ասել, որ մեր գաւառներում գոնէ այն ժամանակներում՝ ոչ մի հասկացողութիւն չունէին Մայիսի մէկի մասին, և այդ առիթով որևէ «միջոցներ ձեռք առնել» առնուազը անտակտ կը լինէր: Հենց այդ միջոցները առիթ կը տային հակապետական տրամադրութիւններին, և յամենայն դէպս առաջ կը բերէին ալեկոծ մթնոլորտ: Եւ այդ միտումներով, ամեն տարի, որպէս գաւառապետ ստանալով այդ շրջաբերական ծածկագիր հեռագիրը՝ ես ոչ միայն ոչ մի քայլ չէի անում այդ իմաստով, այլ նոյնիսկ իմ պաշտօնեաներից ոչ ոք չէր իմանում, թէ մի այդպիսի հեռագիր է ստացուել: Իսկ Մայիսի 2-ին, ինչպէս որ այդ պահանջւում էր, ես ուղարկում եմ իմ նահանգապետին տարեց տարի կրկնուող միակերպ հեռագիրը. Մայիսի մէկը Նոր Բայազէտի գաւառում անցաւ շատ հանգիստ...

Այդպէս էր իմ փորձը այդ խնդրում, և այդպէս վարուեցի ես և այս անգամ, որպէս հայկական նահանգապետ:

Բայց Աղէքսանդրապօլը հանգիստ չէր մնում, և այնտեղ բորբոքումը հասնելու վերայ էր:

Դեռ ձմեռը, ես գաղտնի մի գրութեամբ հաղորդեցի Ներքին գործերի մինիստրին, որ Աղէքսանդրապօլի իշխանութիւնը վերին աստիճանի թոյլ է, որ քաղաքում իշխանութիւն չը կայ, որ վագզալում մարդկանց թալանում են օրը ցերեկով, որ Կարսի նահանգի Գետափի, Արփաչայի թուրք ազգաբնակութիւնը, որ կապուած էր միշտ Աղէքսանդրապօլի հետ՝ խորշում է այժմ քաղաքից, և գերադասում է առևտրի Կարս, կամ Ախալքալաք գնալ, որ այդ անիշխան մթնոլորտը անդրադառնում է և դէպի Կարսի նահանգը, և խնդրեցի մինիստրին ուշադրութիւն դարձնել: Բայց մինիստրը, այն ժամանակ դեռ կողմնակից «ինքնավար» զառանցանքների՝ վիրաւորուեց մինչև անգամ, որ Կարսի նահանգապետը այդչափ խիստ քննադատում է մի ոստիկանութիւն, որ ենթարկուած է այնպիսի մի հեղինակաւոր հաստատութեան՝ որպէս քաղաքային վարչութիւնն է:

Բացի այդ, Աղէքսանդրապօլը դաշնակցական վայրի հռչակ ունէր, այնտեղ էին «վստահելի ընկերները», և յանկարծ մի «անկուսակցական» նահանգապետ՝ ստուեր է ձգում մի իշխանութեան վերայ, ուր գերամեծար թուով բնակալել էին «մեր և լաւ տղերքը»...

Բայց Կարսի նահանգապետը կարծում էր, որ մինիստրը, թէև դաշնակցական՝ յամենայն դէպս բարձր կը լինի այդ նեղ կուսակցական միտումներից, և կարողութիւն կ՛ունենայ ըմբռնելու ընդհանուր խնդիրների իմաստը, և իր ակտիւ

ու ներգործական իմաստը: Մինիստրը ոչ միայն շրջապատուած էր՝ այլև կաշկանդուած հազար ու մի մարդկանցով, որոնք ի դէմս բիւրոյի, կուսակցութեան, պարլամենտի զանազան խմբակցութիւնների և այլ բազմաթիւ մարդկանց՝ ոչ թէ ուղղութիւն, նեցուկ և ոյժ էին տալիս մինիստրին՝ այլ միայն և միայն շփոթ և երերում առաջ բերում պետական մեքենայի ընթացքում: Այդ միտումներով, ես գտնում էի, որ Կարսի նահանգապետի առանձնակի դիրքը, նորա բազմաթիւ պարտաւորութիւնները, նորա իրաւունքները և ձեռներեցութեան աւելի քան լայն ասպարէզը՝ չեն կարող համեմատուել մինիստրի պաշտօնի հետ: Մեր օրերի մինիստրը աւելի ակադեմիկ մի դէմք էր, քաղաքականութեան պարագլուխ, ընդհանուր ֆորմուլաներ արձակող՝ բայց ոչ կեանք ստեղծող և թիւաւորող պետական մարդ:

Եւ այդ բոլոր պատճառներով, ես մեծ դժուարութեամբ ընդունեցի ինձ առաջարկուած պաշտօնը մեր պետական բոլոր ձախորդ պայմաններով հանդերձ: Ես յոյս ունէի դեռ, որ մրրիկը կանցնէ, որ մենք նորից կուղղենք մեր առագաստները դէպի կայուն նաւահանգիստ, իսկ յետոյ, մտածում էի՝ ես նորից կը քաշուեմ իմ սիրած գաւառը, և նորից գրի կ՛անցընեմ իմ դիտողութիւններս մեր գաւառական կեանքի մասին:

Պ. Արարատեան փաստօրէն յանձնել էր ինձ մինիստրութիւնը, և ես սեղմուած չէի օգնականի շրջափակում:

Բայց հենց առաջի օրուանից՝ ինձ դուր չեկաւ կառավարչական մթնոլորտի ընկերվար բանաձևը: Բոլորը «ընկերներ» էին, բոլորը՝ բացի Ալ. Խատիսեանից, «դու» էին ասում իրար, և առանց հաշուի առնելու մարդու պաշտօնական դիրքը, տեղը, պայմանները և ժամանակը…

Կառավարութեան անդամներից շատերը ձանձրացել էին այդ ֆամիլեար գործելակերպից, նրանք շատ լաւ հասկանում էին ի հարկէ, որ պետական ելևէջների վերայ պէտք է տարբերութիւն լինի, և պաշտօնը, դիրքը, պարտաւորութիւնները և նոցա հետ կապուած պատասխանատուութիւնը՝ պէտք է շերտաւորուած լինեն, ու չեն կարող բոլորը պատսպարուել ընկերվար վերաբերմունքի տակ:

Ինչևիցէ, բայց Կարսի նահանգապետի հախուռն պարտաւորութիւններից և իրաւունքներից յետոյ՝ մինիստրի փոքրիկ առանձնասենեակը ճնշում էր ինձ: Եւ ես օրեցօր ջղայնանալով սպասում էի պատեհ օրերի՝ նորից դէպի դուրս, դէպի օդ և կապուտակ երկինք դառնալու: Ինչպէս իւր ժամանակին Ռուսաստանի անուանի Ֆինանսների մինիստր Վիտտէն՝ յետոյ կոմս, փառքի և իշխանութեան ձգտելով, իր համար առանձին զօրաբանակ ստեղծեց, որ ի դէմս սահմանապահ մասերի՝ Ֆինանսների մինիստրին շեֆ համարելով, նրան էր ենթարկւում, այնպէս և հայկական Ներքին գործոց մինիստրը ուզում էր իր զօրաբանակը ունենալ:

20 թուի գարնանից՝ հայկական պարլամենտը վրացիներից յետ չը մնալու համար, բացի Կարսի նահանգից՝ ամէն տեղ զեմսկի կազմակերպութիւն մտցրեց: Եւ այն տարածութիւնը, որ առաջ կառավարում էր ոչ թէ մի նահանգապետ՝ այլ այդ նահանգապետի եօթը գաւառապետներից չորսը, միայն պարլամենտը երկու նահանգ ձևեց: Այդպէս ի կատար ածուեց պարլամենտի քմահաճ ցանկութիւնը՝ պատուաստել հայկական անդաստանում մի հաստատութիւն, որ թէ՛ բուն ռուսական էր, և թէ՛ արդէն անախրօնիզմ դարձած, մնացել էր իր ժամանակի հոսանքի յետևում...

Պէտք չը կայ ասելու ի հարկէ, որ զեմստվոն գերազանց դաշնակցական էր, և օգտագործելով իր կուսակցութեան կորովը՝ նա ձգտեց կառավարութեան մէջ թագաւորելու: Համայնական հաստատութիւնների առաձգական իրաւասութիւնը առիթ էր շատ լայն մեկնութիւններ տալու զեմստվոյի իրաւունքներին, և Մինիստրը զգում էր արդէն, որ զեմստվոն և ոստիկանութիւնը անջատուել են իրանից, և նա այդ «ինքնորոշուող» ըմբոստ հիմնարկութիւնները ճնշելու համար՝ իր յատուկ բռունցքը ուզեց ունենալ ի դէմս այդ պահեստային միլիցիայի և այդ գնդացիրների...

Այստեղ ես ի մօտոյ ծանօթացայ Երևանի և Աղեքսանդրապօլի նահանգապետների հաստատութեան հետ, որոնցից առաջինը անուանւում էր Արարատեան նահանգապետ, իսկ երկրորդը՝ Շիրակի: Այդ նահանգապետների իշխանութիւնը տարուբերւում էր զեմսկի հաստատութիւնների քմահաճ մթնոլորտում, և ոչ մի դրական յենարան չունենալով՝ նա մի հաստատութիւն էր, որ առկախ էր մնացել օրէնքների ճկուն և առաձգական ցանցի մէջ... Երկրի ադմինիստրացիան, վարչական հաստատութիւնները՝ ենթարկւում էին քաղաքային «ինքնավարութիւններին», գաւառական ու նահանգական զեմստվոներին, իսկ նահանգապետին այդ ինքնորոշուող մարմինների հետ կռուելու և մարտնչելու համար՝ երևի իրաւունքն էր տրուած կազմակերպել իրանց աթոռանիստ քաղաքներում մի առանձին միլիցիայ... Թէ ո՞ւմ դէմ պէտք է կռուէր ադմինիստրացիայից մեկուսացած նահանգապետը այդ իր յատուկ զօրամասով՝ յայտնի չէր ի հարկէ, մի բան միայն անվիճելի էր, իրաւունքների և պատասխանատուութեան այդ բարդ կօնցեպցիայում նահանգապետը մի յաւելուած էր, որ չունէր իր բացատրութիւնը...

Հայկական պարլամենտը ընդօրինակել էր այդ օրէնքը Կերենսկու անպատասխանատու փորձերի ժողովածուից և համեմել նոցա իր ճաշակի քմահաճոյքներով: Բայց հայկական պարլամենտի մեծապատիւ անդամները անտես էին առել երևի, թէ ո՞ւր հասցրեց լայնածաւալ Ռուսաստանը ձեռնածու Կերենսկու այդ թեթևիմաստ օրէնսդիր փորձերը... Եւ պարլամենտի մեր էժանագին դեմագօգները գնում էին իրանց դարի գաղափարների յետևից՝ և հաշիւ չէին տա-

լիս իրանց, որ այդ հախուռն հոսանքը կը տապալէ թէ՛ այդ «օրէնքները» և թէ՛ նոցա հեղինակներին...

Եւ այդ դեմօկրատիկ օրէնսդրութեան մթնոլորտում մինիստրը և նահանգապետները զրահաւորւում էին սեփական զօրամասերով՝ իրանց գոյութիւնը պահպանելու համար:

Դժուար էր երևակայել աւելի մեծ կօլլեզիա, դժուար էր հաշտեցնել այդ երկու՝ մէկը միւսին բացառող իրաւունքը: Բայց երկիրը, իր ժողովրդով, ոչ միայն տանող համբերատար է՝ բայց նաև իր գոյութեան գնով լուծում է այդօրինակ ձեռնածու փորձերը, յանձնելով պատմութեանը վերջի խօսքը և այդ անցուդարձի արժանաւոր գնահատութիւնը... Հայկական զեմստվոյին վիճակուած էր դեռ չը ծաղկած թառամել: Նա լոյս աշխարհ եկաւ մեր պետականութեան երկունք օրերում, և մեր վերջի օրերը ի ծայր դառնացնելու համար երևի՝ նա աղմկալից տիրեց հրապարակը, ի ցոյց դնելով իր կատարեալ սնանկութիւնը ու իր ողորմելի խեղճութիւնը:

Հայկական զեմստվոն անքակտելի կապուած է մեր պետական գոյութեան վերջի վեցամսեակում:

Եթէ մեր կառավարչական սիստեմը իր սկզբի օրերից ունէր իր մեծ թերութիւնները, եթէ պետական առաջի ապարատը՝ երկրի ադմինիստրացիան, կազմակերպւում էր շատ մեծ դժուարութիւններով՝ վերջի վեց ամսուայ ընթացքում մեր իրաւակարգը վերապրում էր ճգնաժամային շրջան: Զեմստվոյի օրով երկիրը չունէր այլևս ադմինիստրացիա, վարչութիւն, կային միայն մարմիններ և անհատներ այդ իրաւասութիւններով, բայց չը կար իրաւակարգ, իրաւունք և չը կար պարտաւորութիւն: Մեծամասնական, բոլշեւիկ յանկարծակի բռնկումը Հայաստանում՝ պէտք է բացատրել ադմինիստրատիւ, վարչական անկազմակերպ դրութեամբ: Մենք չունէինք երկրում այն արթուն և ձեռնհաս ապարատը, որ ի դէմս ադմինիստրացիայի՝ պէտք է իրազեկ լիներ երկրի ներքին անցուդարձին և իր ժամանակին միջոցներ ձեռք առնէր ակնյայտնի ոճրի դէմ:

Մեր կենտրոններում, գլխաւորապէս ի հարկէ Երևանում՝ կատարւում էր ոճրալից բորբոքում, այդ խմորումը հունցւում էր պաշտօնական անձանց միջնորդութեամբ, բայց զեմստվոն, քաղաքները, երկրի վարչութիւնը խարխափում էին խորին անգիտակցութեան մէջ՝ զբաղուելով վէճերով, «կուսակցական» խնդիրներով, զեղծումներով, բայց ոչ ի հարկէ գործով:

Բայց երկրի այդ խայտառակ սնանկութիւնը հանդէս եկաւ իր ամբողջութեամբ պատերազմի ընթացքում, այն օրերում՝ երբ Կարաբեկիր կանգնած էր արդէն Արփաչայի դիմաց:

Զօրակոչը, բազմատեսակ «բռնագրաւումները» և այլ սանձարձակ և անիշխան կարգադրութիւնները, որ կապուած էին պատերազմական դրութեան հետ, և ուր զեմստվոն, երկրի ադմինիստրացիան պէտք է հանդէս գային զինուած և

պատրաստ՝ ստեղծեցին երկրում այնպիսի շփոթ և այնպիսի զարհուրելի անիշխանութիւն, որ ինքնըստինքեան գալիս էր ասելու, որ մենք վերապրում ենք մեր պետութեան վերջի տեսիլը... Երբ ես ստանձնել էի մինիստրութեան մէջ իմ պարտաւորութիւններս՝ ինձ մօտ եկաւ Նորբայազէտցի իմ ծանօթներից մէկը, և արեց հետևեալ յայտարարութիւնը. «Երբ ես ձիով իջնում էի քաղաք՝ ինձ բռնեցին և տարան զեմսկի ատեանը, ուր խլեցին ձիս, որպէս թէ պատերազմական պէտքերի համար»: Ես յանձնարարեցի մինիստրութեան պաշտօնեայ պ. Լազոյին՝ քննութիւն կատարել: Բանից դուրս եկաւ, որ այդ Նորբայազէտցու ձին «պատերազմական պէտքերի համար բռնագրաւել են» հետևեալ գրութեան համաձայն. «Ինձ համար մի լաւ եօրղայ ձի բռնագրաւեցէք: Ներքին գործոց մինիստրի օգնական Քրմոյեան»:

Կասկածից դուրս է ի հարկէ, որ պ. Քրմոյեանին աւելի պատշաճ կը լինէր «լաւ եօրղայ ձի» նստած արշաւել լեռները՝ քան թէ մինիստրի օգնականի բազկաթոռը գրաւել, բայց ինչումն է մեղաւոր թշուառ երկիրը...

Թէ՛ զօրակոչի և թէ՛ բռնագրաւումների համար՝ երկրի իշխանութիւնը ո՛չ տուեալներ ունէր և ո՛չ մշակուած յատակագիծ: Պետական այդ կարևորագոյն պահանջները կատարւում էին անսիստեմ, անհաշիւ և անկօնտրոլ: Եւ այդ մեծ շփոթը՝ բնականաբար պէտք է առաջ բերէր մեծ երերում, և անիշխանութիւն ստեղծէր:

Հրամանները ուղարկւում էին ձևի համար միայն, նոցա ո՛չ լսող կար, կարդացող և ո՛չ ի կատար ածող: Ապակենտրոնացուած ադմինիստրացիան, որ լցուած էր պատահական և անձեռնհաս մարդկանցով՝ սնանկ էր իր պարտաւորութիւններում բառի բուն նշանակութեամբ: Իշխանութեան պրիստիժը, համարումը՝ վաղուց անջատուել էին երկրից: Ռոպէի լրջութիւնը, վաղուայ անորոշութիւնը և ընդհանուր քաղաքական երերուն մթնոլորտը՝ մարդկանց մղում էին դէպի կամայականութիւն ու ոճիր: Մարդկանց մէջ բթացել էր քաղաքացիական պարտաւորութիւնների զգացմունքը, բոլորը շտապում էին մի կերպ իրանց ապահովել, օր առաջ հրապարակից հեռանալ...

Նահանգապետները, նահանգական և գաւառական զեմստվոն խառնուելով իրար՝ առաջ էին բերել իրաւունքների և պարտաւորութիւնների այնպիսի շփոթ, ուր ամէն բան կար՝ բացի օրէնքից և իրաւակարգից: Բոլորը գրում էին իրար, բոլորը հրամաններ էին արձակում՝ բայց սայլը մնում էր իր տեղում, որովհետև աշխատելու և կատարելու ոչ ոք ոչ ցանկութիւն ունէր և ոչ էլ տրամադրութիւն: Այդ օրերում Նոյեմբերի 5-ից մինչև 20-ը, ես փաստօրէն Ներքին գործոց մինիստրութեան կառավարիչն էի: Ես հեղեղում էի հեռագիրներով ու սուրհանդակներով նահանգապետներին, զեմսկի և քաղաքային վարչութիւնները, ես բազմաթիւ ծածկագիր հեռագիրներ էի ուղարկում պետական կարևորագոյն

գործերի մասին, բայց ես ոչ միայն կատարումն չէի տեսնում՝ այլ նոյնիսկ պատասխան չէի ստանում...

Բոլորը ձգում էին իրար վերայ, բոլորը խօսում էին միայն իրաւունքների մասին՝ բայց պարտաւորութիւն ճանաչել ոչ ոք չէր ուզում: Զեմստվոն չէր ուզում ճանաչել նահանգապետին, նահանգապետը զրկուած էր միջոցներից ինքնուրոյն գործելու, գաւառական ու քաղաքային ոստիկանութիւնը չէր ենթարկւում նահանգապետին, զեմստվոյի հետ այդ ոստիկանութիւնը «ընկերներ էին», Մինիստրին զեմստվոն վերաբերւում էր զիջող և ոչ որպէս ենթակայ, և իր քմահաճ տրամադրութեանն էր թողնում կատարելու կամ չը կատարելու մինիստրի առաջարկութիւնը... Ես կարծում եմ, որ իրաւակարգային աւելի մեծ շփոթ դժուար է երևակայել անգամ, և այդ ծայրահեղ խառնաշփոթ դրութեան մէջ՝ չէր կարելի կառավարել և ուղղութիւն տալ պետական առագաստներին: Այդ առագաստները ջարդւում էին, ընկղմւում անդառնալից՝ և մենք ստիպուած էինք յուսահատ և անճար դիտելու այդ մեծ պատկերը, ուր անդրադարձաւ մեր պետական ամբողջ սնանկութիւնը:

Ես փորձեցի կառավարել երկիրը նահանգապետների միջոցով, բայց նահանգապետները ջլատուած էին իրանց իրաւունքներում, և չունէին համապատասխան կատարման միջոցներ: Փորձեցի ուղղել պահանջներս զեմսկի հաստատութիւններին՝ բայց վերջինները աւելի առարկելու, պոռոտախօսելու, քան ի կատար ածելու տրամադրութիւն ունէին: Փորձեցի անկախ նահանգապետից ու զեմստվոյից՝ պահանջներ ածել գաւառական ոստիկանութեանը, բայց այստեղ էլ հանդիպեցի կամ սնանկութեան, կամ ապիկարութեան: Այդ առանցքում ռեֆորմների մասին չէր կարելի խօսել ի հարկէ, և ես դիմեցի վերջի միջոցի, ես միևնոյն հրամանը արձակում էի մի քանի հասցէներով՝ նահանգապետներին, նահանգական և գաւառական զեմստվոներին, քաղաքագլխին և գաւառապետներին: Եւ ես մխիթարւում էի նորանով միայն, որ կարգադրութիւնը արուած է, բայց այդ կարգադրութիւնը ո՛չ կատարող կար և ո՛չ ըմբռնող... Կառավարութեան բանիմաց անդամներին հանդիպելով՝ ես ամէն օր յուսահատ կրկնում էի այդ դառնալից դրութիւնը: «Մենք էլ,– ասում էին բարեկամներս,– կրակն ենք ընկել դոցա ձեռքը, պէտք է սպասել՝ մինչև որ կանցնէ այդ քաղաքական պատերազմական մրրիկը, և յետոյ հիմնօրէն պէտք է վերլուծել այդ «ինքնավար» և «ընկերվար» որջանոցները... »: Առաջի օրը երբ ես նստած էի մինիստրական առանձնասենեակում՝ առանց նախնական զեկուցման, ընկերվար մտաւ Երևանի ոստիկանապետը: Կարծելով որ նա եկել է առաւօտուայ սովորական զեկուցումը անելու մինիստրին՝ ես ինչպէս որ այդ ընդունուած է, բարձրացայ տեղիցս ընդունելու այդ զեկուցումը: Բայց որչա՜փ մեծ էր զարմանքս՝ երբ երիտասարդ միլիցիապետը, յենուելով գրասեղանիս վերայ, ասաց ինձ ընկերվար տոնով. «Ի՞նչ նորութիւններ կան... »:

Ես խոժոռեցի նորա վերայ աչքերս և ասացի հրամայելից. «Բարեհաճեցէք զեկուցել Ձեր ասելիքը... »: Երիտասարդը այլայլուեց ու շփոթուեց...

Այդօրինակ յարաբերութիւններում չէր կարելի իրաւակարգ կոփել, մարդիկ չը գիտէին իրանց տեղը, համեստութեան չափը, պարտաւորութիւնների և իրաւունքների տարբերութիւնը, ու ընկերվար լինելով և պաշտօնական անցուդարձում՝ նրանք նսեմացնում էին պետական հմայքը և լրջութիւնը: Պաշտօնական ապօրինութիւնը այդ օրերում անցել էր բոլոր չափ ու սահմանները: Մարդկանց բանտարկում էին առանց որևէ հիմունքների և տուեալների, բռնագրաւում էին կառքեր, սայլեր, ձի, տաւար՝ և այդ անում էին առանց որոշ օրինական ձևերի, առանց արձանագրութեան և պահանջագրերի: Հազարաւոր այդ առիթով գանգատները տեղում էին ներքին գործերի մինիստրին՝ իսկ նորա շտապ հարցապնդումները մնում էին կամ առանց յետևանքի կամ անպատասխան: Նահանգապետը, զեմստվոն, քաղաքագլուխը և գաւառապետները ոչ թէ մի բարդ ապարատի մասերն էին՝ այլ առանձին առանձին հատուածներ, անկապ և անկախ իրարից: Նոցանից ամէն մէկը գործում էր իր համար, և իր քմահաճոյքը ունէր, իսկ գանգատաւորը խլացած այդ համերգից՝ անյոյս բախում էր բազմաթիւ դռներ, և իր չորս կողմը իշխանութիւն չը տեսնելով՝ թողնում, հեռանում էր, տարածելով իր շրջաններում ընկերվար կառավարութեան մասին իր դառնալից տպաւորութիւնները... Զօրակոչը, բռնագրաւումները և պատերազմի առիթով բոլոր համանման կարգադրութիւնները՝ ինձ ծանօթ էին աւելի քան գուցէ ում և իցէ: Ես գալիս էի այն վայրից՝ ուր արդէն խորտակուեց այդ անսիստեմ և անիմաստ գործելակերպը, և այդ բոլոր ակտերի կրկնութիւնները այսօր պատկերանում էին ինձ որպէս մի ծաղրածու և զաւեշտ տեսիլ: Այդ օրերում մեր պաշտօնական կարգադրութիւնների ժողովածուն հարստացել էր մի նոր հատուածով: Օրիորդներից և կանանցից՝ որոնք ի հարկէ տրամադիր էին զբաղուելու հրապարակաւ, կազմել էին խմբեր և յանձնարարել նոցա՝ թէ՛ տներում և թէ՛ փողոցներում ձերբակալել դասալիքներին և զինակոչից խուսափողներին: Երևանը, անջատ «պարլամենտից» ու զեմստվոյից՝ դեռ տակաւին ասիական երկիր է, իր բոլոր հին սովորութիւններով ու նախապաշարմունքներով: Եւ ի պաշտօնէ հրապարակ ձգել կանանց դասալիքներ բռնելու համար՝ կը նշանակէ մի աւելորդ անգամ ծաղրել երկիրը և ծայր ձգել կառավարութեան պրիստիժի մնացորդը...

Մինիստրը՝ Սար. Արարատեան, տեղեկանալով այդ կօմիկ կարգադրութեան մասին, հրամայում է անմիջապէս ցրել կանանց այդ դիմակահանդէսը, և դորանով ժամ առաջ փրկում կառավարչական համարումը ամբոխի ծաղրից:

Կարսի նահանգապետը պատշաճ դրամական միջոցներ չունէր՝ կարող ու գաւառական վարչութիւններից անջատ գործակալներ ունենալու երկրի ներքին ու արտաքին անցուդարձը ճշտօրէն դիտելու համար: Իսկ հանրապետութեան կենտրոնը աւելորդ համարեց մեծ վարձ բանալու այդօրինակ մի կարող ու լուրջ

հաստատութիւն ունենալու նոյնիսկ Երևանում: Մայրաքաղաքը բաւականանում էր հատ ու կտոր և անկապ տեղեկութիւններով, և նրան թւում էր, որ նա ամէն բան գիտէ և ամէն բան նախատեսում է...

20 թուին, անբաւարար համարելով Խատիսեանի կառավարութիւնը՝ «Աստղերի պալատը» լուծեց նրա կաբինետը, և երկրի միահեծան սանձերը յանձնեց բիւրոյին: Իսկ այդ տրամադրութիւնների ցայտուն արտայայտիչ Ռուբէն Տէր-Մինասեան՝ իր ձեռքում կենտրոնացնելով երկրի փաստացի իշխանութիւնը, հաւանութիւն չը տուեց ոչ սրան և ոչ նրան: Հայաստանի այդ չար ոգին՝ ուզեց ամէն բան ինքը լինել, և որպէս երբեմն ճկուն հայդուկ՝ նա ամէն տեղ ինքն էր ուզում լինել: Բայց գէթ այդ միտումներով՝ նա օրինալից սիստեմ չը ստեղծեց: Փաշան գերադասում էր երկրի մասին տեղեկութիւնները քաղել «ընկերների» մասնաւոր նամակներից, և իր կողմից նա այս և այն տղային էր յանձնարարում դիտել այս ու այն վայրի անցուդարձը և իրան «ճիշտ տեղեկութիւնները» հաղորդել:

Պէտք չէ կարծեմ ասել, որ այդ «մի կերպը» կառավարչական սիստեմ չէր, նա մի ծաղր էր միայն պետական իմաստում, և գալիս էր դարձեալ մի անգամ ևս ասելու, որ պետական գաղափարը բացառում է արկածախնդիր տրամադրութիւնը, և ոչ մի կերպ չի կարող գործակցել նրա հետ:

Պետականութիւնը պահանջում է սիստեմ, օրինականութիւն և հետևողականութիւն, և չի կարող հանդուրժել պատահական մարդկանց, քմահաճ ցանկութիւններ, կրքեր և անկապանք «հայեցողութիւն»: Շատ հետաքրքիր է, որ մինչ ռուս իշխանութեան գաւառապետ՝ ես պէտք էի զգում օգտուելու դաշնակցութեան տեղեակ կորովից, և նրա լուրջ ներկայացուցիչների միջնորդութեանը դիմելու՝ գաւառի այս և այն կրքալից հանգոյցը լուծելուս, այսօր հայկական նահանգապետի դերում՝ ես չէի զգում այդ երբեմն կարող կուսակցութեան ժողովրդականութիւնը:

Կուսակցութիւնը կառավարութեան վերածուելով՝ կարծես կորցրել էր իր կախարդ ոյժերի գաղտնիքը: Այլևս նա չէր դեգերում երազների մթնոլորտում, և չէր շոյում մեր ռոմանտիկ տրամադրութիւնը: Մանրանալով իր բնոյթում, բազմաթիւ կասկածալից խառնուածքի տեղ տալով իր դրօշակի տակ՝ դաշնակցութիւնը խախտել էր իր բարոյական հեղինակութիւնը: Նա անջատուելու վերայ էր ժողովրդական վերապրումներից, և այդ պայմաններում՝ դաշնակցութիւնը չէր կարող լինել դարձեալ հզօր և դարձեալ դիւթիչ: Եւ այստեղ է այն գաղտնիքը, թէ ինչո՞ւ հայկական իշխանութեան օրով դաշնակցութիւնը իրազեկ չէր ինչպէս երբեմն՝ երկրի անցուդարձին, և թէ ինչո՞ւ նրա կարող ձեռքերից ընկել էր երկրի բարոյական գերիշխանութիւնը: Այդ շրջանում դաշնակցութիւնը չէր առաջնորդում այլևս մեր ազգային տրամադրութիւնը, նա կայուն չէր այլևս իր վաղեմի հաւատալիքներում:

Կուսակցութեան կախարդ, շշմեցուցիչ յաջողութիւնները առաջ էին բերել կողմնակի ախորժակների բռնկում, իսկ դաշնակցութեան աւանդապահները, մի բուռն անկեղծ ու անձնուրաց մարդիկ՝ հեղինակութիւն չունեցան փակելու իրանց գաղափարական խորանի դռները այդ խայտաճամուկ և գիշատիչ լափինի առաջ...

Եւ դաշնակցութիւնը կառավարութիւն դառնալով՝ չառաջնորդեց այլևս հասարակական տրամադրութիւնը: Նա գնաց իր օրերի հոսանքի յետևից, և սայթաքուելով կեանքի այդ յախուռն ընթացքում՝ նա պարտուեց գոյութեան այդ անողոք կռուում... (*առկայ է տեքստի խզում*) ...Ռուսների համար յայտարարել: Պատերազմը խախտել էր երկրի բոլոր բարոյական հաւատալիքները՝ և վաղեմի բոլոր սրբութիւնները վաճառքի հանել: Եւ մեր բորբոքումի նախօրեակում յայտարարուած Հայոց Հանրապետութիւնը չէր կարող կանգուն մնալ յորձանքների այդ ընթացքում: Դաշնակցութիւնը յօշոտուեց իր ամենակարող և զգայուն կողմերում և այստեղ յառաջ եկաւ երկրի անբաւական տրամադրութիւնը: «Մայիսեան օրերը» բոլշեւիկ չէին իրանց բնոյթում, այդ երկրի անբաւականութեան յայտարարութիւնն էր միայն և նրա իրաւակարգի պահանջը: Բայց դաշնակցութիւնը ահարկու և կարող իր անցեալում՝ որպէս կառավարութիւն այսօր հանդէս եկաւ անկազմակերպ, թոյլ և ի ծայր խախտուած հեղինակութեամբ: Ձայնակցելով ռուսներին՝ հայոց աշխարը ոչ մի տրամադրութիւն չունէր նորից ընկնելու ռուս ջարդարար բռունցքի տակ, և սրբապղծելու այն նուիրական սրբութիւնները՝ որոնց նա դարերի ընթացքում մօտենում էր այնչափ անձնուրաց և այնչափ խանդավառ: «Մայիսին» հայոց աշխարը երերուեց տիրող անիշխան մթնոլորտում, և նա ուզում էր միայն կոչել իր թիավարներին դէպի աջ, օրինականութիւն և իրաւակարգ...: Բայց դաշնակցութեան բիւրոն երկրի այդ ցնցումները բացատրեց ռուս օրիենտացիայի սիրահարների իմաստով, և այդ բորբոքումը միայն կոմունիզմ համարելով՝ հանդէս եկաւ մաքառելու միայն բոլշեւիկների դէմ: Եւ այդ առանցքում ընկաւ Խատիսեանի կաբինետը: Բայց կուսակցութ-եան աէրոպակը սրտոտութիւն չունեցաւ խոստովանուելու, որ երկրի այդ բորբոքումը յառաջ է եկել իշխանութեան թոյլ և անկազմակերպ սահմաններում:

Իւրայնի մեկնելով հրապարակի իրարանցումը՝ բիւրո-կառավարութիւնը ուզեց խստալից զսպել բոլշեւիզմը, բայց նա չը հասկացաւ երկրի բորբոքման իմաստը, սայթաքուն ուղի ընտրեց իր անելիքներում: Երբեմն շատ տեղեակ դաշնակցութիւնը՝ այսօր սնանկ էր իր ժողովրդագիտութեան մէջ: Նա չը գիտէր, ի՞նչ է կատարւում երկրի ներսում, չէր տեսնում իր դրօշակի տակ պատսպարուող գողերի, դատարկաբանների մեծ բազմութիւնը, և յենուելով միայն իր գունատուած հեղինակութեան և ինչ որ «դեմօկրատիկ» «սոցիալիստական» յայտարարութիւնների վերայ՝ դաշնակցութիւնը կարծում էր, որ նա «կառավարում է» երկիրը...: Բայց իր կառավարչական գործելակերպը դաշնակցութիւնը յաջողու-

թիւն չունեցաւ պետական դարձնելու, նրա քաղաքականութիւնը դեռ նկուղներումն էր և ոչ իշխանալից հրապարակում: Կարսի մեր իշխանութեան ժամանակամիջոցում՝ բոլորից շատ այցելեց Կարսը դաշնակցութեան երդուեալ աւանդապահներից մէկը, Գէորգ Ղազարեան, անդամ բիւրոյի և պարլամենտի, իսկ յետոյ և մինիստր լուսաւորութեան...(*փաստաթուղթը վնասուած է)*:

Գէորգ Ղազարեանի հետ ես ծանօթացայ առաջին անգամ Կարսում: Դաշնակցութեան լիդերներից նա առաջինը այցելեց Կարս 19 թուի Մայիսին:

Նա պատկանում էր մեր անկեղծ և գաղափարական հայրենասէրների նոսր շարքերին, և մէկն էր այն մարդկանցից՝ որոնք մոլեռանդ հաւատով և անշահախնդիր պաշտպանեցին դաշնակցութեան սրբազնագոյն իղձերը: Այլ խնդիր է ի հարկէ, թէ ի՞նչ էին խօսում Գ. Ղազարեանի, որպէս հասարակական գործչի և պատօնաւորի կարողութեան մասին, բայց նրա անկեղծութեան և անկաշառ լինելու մասին ես երկու կարծիք չեմ լսել:

Որպէս աւելի քան հաւատարիմ դաշնակցականի՝ բիւրոն նրան էր անընդհատ յանձնարարում այցելել Կարսի նահանգը, երկրի անցուդարձի հետ ծանօթանալու համար:

Մեր առաջի ծանօթութեան օրն այցելելով Կարսի նահանգապետին՝ Գ. Ղազարեան լիազօրութիւն էր ստացել հաւաստիացնելու ինձ թէ՛ կուսակցութիւնը և թէ՛ կառավարութիւնը հաւանութիւն են տալի իմ կառավարչական սիստեմին, ի դիմաց նոցա խնդրից ուշադրութիւն չը դարձնել հրապարակի այս և այն ասեկոսեների վերայ:

Ես երկար խօսեցի պարլամենտի պատգամաւորի հետ իմ անելիքների և այն պայմանների մասին՝ որոնցով շրջապատուած էին մեր աշխատանքները, և մենք բաժանուեցինք որպէս բարեկամներ՝ որոնց վիճակւում է լծորդաբար տանելու երկրի պատուալից աշխատանքը: Այնուհետև Գ. Ղազարեան շատ *[անգա]*մ եղել է Կարսում, ...ամէն անգամ այցելել *[նահանգա]*պետին: Այստեղ ու այնտեղ ասում էին, որ նա շարունակ խորհրդակցում է Կարսի դաշնակցութեան կոմիտէի հետ, շարունակ հարց ու փորձ անում սրան և նրան, շարունակ իր դիտողութիւնները նշանակում իր յուշատետրում և շարունակ հոգսալից ինչ-որ անում և միշտ կոնսպերատիւ շտապում...

Այդպէս է իր ընդհանուր գծերում բիւրոյի երդուեալ հաւատարմատարի տիպարը:

Այդ օրերում ես արդէն հեղեղում էի իմ զեկուցումներով, հեռագիրներով և գրաւոր պահանջներով կառավարութեանը բազմաթիւ խնդիրների մասին, և շատ ուրախ էի, որ կուսակցութեան հաւատարմատարը, ականատես իմ աշխատանքների՝ մի աւելորդ անգամ կ՛ընդգծի Երևանում իմ պահանջների և հաղորդագրութիւնների իմաստը և նշանակութիւնը:

Այդ շրջանում սկիզբ ստացան և իմ դէմ կազմակերպուած ինտրիգները: Բայց ինձ չէր վիատեցնում Գ. Ղազարեանի անընդհատ կօնսպերատիւ տեսակցութիւնները Կարսում իր մի քանի կուսակցական ընկերների հետ, և ես կարծում էի, որ գաղափարը, հետևապէս և կուսակցական շահերը՝ աւելի բարձր են բիւրոյի ներկայացուցչի համար, քան որևէ միտումներ:

Եւ Գ. Ղազարեան, Կարսի իր անընդհատ այցելութիւններում չէր Կարող չը տեսնել, որ հայ զինուորութիւնը ի դէմս նրա հրամանատար կազմի՝ միայն բացասական ֆակտօր էր մեր պետական իմաստում: Նա տեսնում և լսում էր, թէ ինչո՞վ է զբաղուած հայ հրամանատարը, նրա յուշատետրում բազմատեսակ նիւթեր կային մեր զինուորական անցուդարձի մասին, նա գիտէր, որ այդ հրամանատար կազմը շատ հեռու է ազգային պատուախնդրութիւնից, և նա չէր կարող չը հասկանալ, որ այդ բանակը անընդունակ է պաշտպանել ազգային ինքնորոշումը՝ և հետևապէս կերտել երկրի հետ միասին սուվերէն հասկացողութիւն:

Իր բոլոր ոչ վարչագէտ տրամադրութիւններով հանդերձ՝ կուսակցութեան լիազօրը չէր կարող չը տեսնել, թէ ի՞նչ անիշխանութիւն և ախորժակների ի՞նչ բռնկում է տիրում մեր բազմաթիւ «անկախ» և «ինքնորոշուող» հաստատութիւններում՝ խնամատար, աղի, խոտի և այլ բուրալից նկուղներում: Ո՞վ էր՝ ում կաշկանդում և կապանքում. Աստղերի պալատը՞, բիւրո՞ն, գէթ ինձ համար մնաց անբացատրելի: Մի բան միայն ակներև էր, որ Հայկական կառավարութ-իւնը վերաբերուեց այդ բոլորին աւելի քան վայրիվերոյ, և շատ քիչ զբաղուեց երկրի կարդինալ, խոշորագոյն հարցերով:

Եւ այսօր, երբ ընկաւ Կարսը *[և թիւրքաց]* զօրաբանակը ոչնչացրեց մեր իշխանութիւնը և Արաքսի հովտի ջուխտ ու կենտ գաւառներում՝ ինձ համար կատարեալ հանելուկ է, թէ ի՞նչ էր անում իր տենդոտ և շարունակ անցուդարձում դէպի Կարս պարլամենտի անդամ Ղազարեանը: Վերջի անգամ ես տեսնուեցի նրա հետ Թիֆլիզում, 20 թուի Դեկտեմբերի վերջերում, դաշնակցութեան կոմիտէի աղմկալից շէնքում՝ ուր երկուսս էլ տարագիր էինք, երկուսս էլ ջարդուած ու փշրուած յոյսերով:

Նա պատրաստւում էր արտասահման անցնելու, և շատ զարմանալի է, որ նոյնիսկ այդ դրամատիկ րոպէներում՝ դաշնակցութեան այդ մոլեռանդ հաւատարմատարը խուսափեց բացատրուելու Կարսի նախկին նահանգապետի հետ անցած-գնացածի մասին: Երևի այդպէս է դաշնակցութեան իւրայնի, սպեցիֆիկ բնոյթը...: Բայց և այնպէս, ես բաւարարուած էի տեսնելու, որ նա իր ամբողջ հոգով հիասթափուած էր...: Ուշ էր ի հարկէ այդ լուռ մեղայ խոստովանութիւնը: Բայց և այնպէս, նա մի աւելորդ անգամ ևս գալիս էր ասելու այդ հաւատացեալ դաշնակցականի բերանով. «Ես արեցի ինչ կարող էի, թող կատարէ աւելի լաւ՝ ով կարող է... »: Եւ ինձ թւում է, որ մեր այստեղ արձանագրուած փաստերում, դիտողութիւններում ու բնորոշումներում՝ մեր օրերն են և մեր այդ օրերում իշ-

խող անսիստեմ, անկազմակերպ և ոչ պետական գործելակերպը: Երբեմն կարող ու ահարկու դաշնակցութիւնը շատ իրազեկ և ժողովրդական ռուս իշխանութեան օրով՝ իր հայրենի կառավարութեան ջուխտ ու կենտ տարիներում կանգնած էր մեր առաջ առանց պետական իմաստի և մեկուսացած երկրից:

Կուսակցութեան բազմաթիւ անդամները՝ նրա ոյժը և նեցուկը չէին այլևս, նրանք ոտնահարում էին միայն ազգային սրբութիւնները և խախտում կուսակցութեան համարումն ու հեղինակութիւնը:

20 թուականին բիւրոն կառավարութիւն դարձաւ՝ բայց այդ չփրկեց հայկական անկախութիւնը: Այդ միահեծան իշխանութիւնը իր բազմաթիւ արտակարգ լիազօրներով՝ դարձեալ չը գիտէր, թէ ի՞նչ է կատարւում երկրում, և նրա առաջարկած սպեղանիները միայն գրգռում էին երկրի ցաւոտ վէրքերը և միայն ջղայնացնում ընդհանուր մթնոլորտը: Այդ օրերում Թիֆլիզի լրագիրները հաղորդում էին, որ հայ հասարակութեան տրամադրութիւնը շատ բարձր է, որ հայ կամաւորները հեղեղում են երկաթուղու վագզալը և հերթի սպասում «ռազմաբեմ» մեկնելու համար, որ հայ բոլոր գաղութները բռնկուած մեծ հայրենասիրութեամբ՝ պատրաստ են զոհելու հայրենիքի փրկութեան համար իրանց ոչ միայն ամբողջ ունեցածը, այլև կեանքը...:

Այդպես էր Հայաստանից դուրս մնացած ստուար հայութեան և նրա ինտելիգենցիաի տրամադրութիւնը Թիֆլիզի լրագիրների ասելով: Դառնալով Կարսի ռազմաբեմին՝ ուր պէտք է անդրադառնար այդ հմայիչ տրամադրութիւնը և պէտք է ստեղծէր ահռելի դիրքեր և անյաղթ բանակ, Կարսի նահանգապետը, որ կանգնած էր այդ խռովալից անցուդարձի կենտրոնում՝ գալիս է հրապարակով վկայելու հետևեալը. «Դրսի հայութիւնը չը տուեց հայրենի կառավարութեանը ո՛չ մի զինուոր և ո՛չ մի կոպեկ»: Աղմուկը շատ մեծ էր, իրարանցումը յուսալից, բայց հետևանքը զրօ և միանգամայն ոչինչ: Հասարակութեան ցածր դասերից՝ գիւղերից եկան մի քանի տասնեակ կամաւոր, բայց այդ հերոսներից մի մասը փախաւ Աղէքսանդրապօլից, միւսը Կարսի վագզալից՝ ռազմաբեմ չը հասած:

Թիֆլիզի հայ բազմաթիւ ինտելիգենցիան՝ իրաւաբանների, բժիշկների, վաճառականների, ինժիներների, Թիֆլիզի փողոցներում թափառող բազմաթիւ զինուորականների և մտաւորականների խիտ շարքերը գէթ նմուշի համար՝ չուղարկեց Կարս «Հայրենիքի պատուախնդրութեամբ տոչորուող» և ոչ մէկին: Թիֆլիզը լցուած էր հայ սպաներով և հայ զինուորացուներով, բայց նոցանից և ոչ մէկը ի հարկէ տեղիցը չը շարժուեց: Կարսի ամրութիւնների համար այդ օրերում պակասում էր 50 մասնագէտ սպայ, նոյնիսկ Կարսի նահանգապետը հարկաւոր համարեց միջամտելու այդ գործին, պահանջելու Երևանի բարձր հրամանատարութիւնից լրացնելու այդ մեծ պակասը: Թէ որչա՞փ հոգատար էր գեներալ Փիրումով դէպի Կարսի ամրութիւնները՝ որի շուրջը շարուած էին հարիւրա-

ւոր թնդանօթներ, բաւական կը լինի ասել, որ այդ թնդանօթները, սփռուած ահագին տարածութեան վերայ՝ ունէին միայն չորս մասնագէտ սպաներ...:

Բացի այդ, այդ սպաները ռուսներ էին, ռուսախօսներ և ինչպէս յետոյ պարզուեց՝ շատ կասկածելի քաղաքական շահեր ունեցող մարդիկ էին...:

Նրանցից մէկին, հրետանու մի ռուս գնդապետի, որ շատ հետաքրքրւում էր Կարսի մեծահարուստ զինուորական պահեստներով՝ ես այժմ տեսնում եմ Թիֆլիզում: Նա չէ պաշտօնավարում, բայց պետական բանկի դռներում շատ տենդոտ վալիւտա է գնում ու ծախում...: Եւ ի հաշիւ մեր դատարկաբան «կուսակցականների»՝ իր ժամանակին լցնելով իր գրպանները, նա թողել է մեզ այսօր զբաղուելու իր մասին յիշողութիւններով...: Երբ Վանանդի սարալանջերում առաջին անգամ որոտաց տաճկական թնդանոթը՝ հայ սպան փախաւ առաջինը, և մեր ռուսական ու ռուսասեր բարձր հրամանատարութեան առաջ բացուեց մի անվիճելի ճշմարտութիւն, մենք հրամանատար կազմ չունէինք...:

Պակասում էին բազմաթիւ սպաներ, կարող և հմուտ հայ զինուորականները հանգիստ ապրում էին հայրենիքից դուրս և խուսափում հայրենի շարքերից: Երբ Կարսի անկումից մի հինգ օր առաջ ակներև էր ռազմաբեմի մեր հետ աւագ սպաների կատարեալ անպէտքութիւնը՝ Ռուբէն փաշայի շտաբը ուղարկեց Կարս այդ պակասը լրացնելու համար իր միջի այլ տականքների և մի գնդապետի: Գնդապետը հասակաւոր էր, արդէն կոյր մի աչքով, գերմանական ֆրօնտից արձակուած ֆիզիկական կատարեալ անկարողութեան պատճառով: Գուցէ շատ յարգելի իւր անցեալում՝ նա ոչ մի կերպ հնարաւորութիւն չունէր գրաւելու այսօր հրամանատար բարձրութիւն: Բախտի ծաղրով՝ այդ պատկառելի ինվալիդն էլ գերի ընկաւ Կարսի հետ միասին: Թէ ի՞նչ էր մտածում թիւրքաց հրամանատարը՝ դիտելով իր կենդանի պատերազմական աւարը հարիւրաւոր հայ գերի սպայութիւնը, դժուար չէ գուշակել: Այդ ինվալիդները և յամենայն դէպս ոչ պատուախնդիր հայ ցայտուն ազգայնականները՝ գալիս էին հիասթափեցնելու թիւրք փաշային, և մի անգամ ևս ընդգծելու, թէ որչա՞փ խաբուսիկ էր հայ քաջութեան հռչակը ի դէմս նրա ողորմելի և թշուառ սպայութեան...:

Այդպէս էր անդրադառնում հայաշատ Թիֆլիզը հայրենիքի կոչին, և այդպէս էր նա «վառւում» Թիֆլիզում հայրենասէր կորովով...: Բայց և այնպէս, Թիֆլիզի հայ ինտելիգենցիան ի հատուցում իր այն ցոյցերի, որ նա կազմակերպում էր Թիֆլիզում Հայաստանի ճգնաժամ օրերում՝ արտօնուած և հեղինակալից «խիստ» քննադատեց Աղէքսանդրապօլի դաշնագիրը: Նոյնիսկ հինաւուրց «Մշակ»-ը՝ հայ երազների այդ մեծահամբաւ դայեակը, հարկաւոր համարեց յարձակուելու մեզ վերայ: Բայց միայն հիմա է պարզւում, որ ի հատուցումն Թիֆլիզի «ռեզօլիւցեաների», որ գալիս էին արձագանք տալու Հայաստանի տառապանքներին՝ «ռազմաբեմ» նետուեց մի բուռն հայ երիտասարդ-ութիւն: Բայց այդ եկուորները գնում էին ոչ թէ մեռնելու՝ ապա սիրուած լինելու երազներով, այլ որ-

պէս ռուս լրտեսներ և ռուս պրոպագանդիստներ գնում էին լքելու հայկական թշուառ բանակը և ստեղծելու այն սօդոմը, ուր պէտք է խորտակուէր հայկական անիշխանութիւնը: Իսկ հայ թշուառ կառավարութիւնը գերի իր ժամանակի տարազի «լօզունգների» և «ռեզօլիւցիաների»՝ երազել անգամ չէր կարող, որ այդ «կամաւորական» շարքերը, որ գալիս էին «Ամէնայն տեղ մահը մի է, մարդ մի անգամ պիտ մեռնի» հմայիչ կեղծ քայլերգով, գալիս էին դաւաճան և ազգուրաց միտումներով: Ընդհանուր շփոթի և ընդհանուր անիշխան մթնոլորտում՝ նրանք անարգել ցանում էին բոլշեւիկ թոյնը, և քաղցրալից քայքայելով սերունդների դարաւոր իղձերը՝ ռուս-տաճկական սուիններին դափնալից ընթացք հարթում...: Այդպէս էր այն բարձր տրամադրութիւնը, որ բերում էին այդ կամաւորները ի դիմաց հայ գաղութների և ի դիմաց «հայրենիքի կարօտը» անչափ զգայուն քաշող օտար դռներում դեգերող հայութեան...:

Երբ անպատասխանատու յարձակումները տեղում էին Աղէքսանդրապօլի դաշնագրի առիթով՝ Հայոց Հանրապետութիւնը արդէն գոյութիւն չունէր, կառավարութեան անդամները ցաք ու ցրիւ էին և մեզանից ոչ ոք հարկաւոր չը համարեց պատասխանելու ու բանակռուի բռնուելու:

Եւ ի՞նչ պէտք է ասէինք մենք այդ պրոկուրօրներին: Մենք կարող էինք ասել միայն.– Ո՞ւր էիք դուք՝ հայ ինտելիգենցիան, երբ հայկական երազները, երկար դեգերելուց յետոյ իջան և թառեցին վերջապէս դէպ հայրենի նաւահանգիստ...: Դուք խորշեցիք պետական աշխատանքից՝ և բաւականացաք դիտելով միայն, թէ ինչպէ՞ս են տարուբերւում բազմաթիւ հողմերի առանցքում Հայաստանի նորաբողբոջ առագաստները... Զուգընթաց այդ բոլորի հետ՝ դուք Ձեզ վերապահեցիք քննադատելու և հայհոյելու հայկական կառավարութիւնը, և այսօր ոճրագործ համարելու Աղէքսանդրապօլի պատուիրակութիւնը: Ինչպէս և սկզբում՝ դուք այդ բոլորը անում էիք Ձեր թռչկալից բարձունքներից, կայացնում էիք Ձեր «անաչառ» որոշումները՝ առանց փաստերի, առանց տուեալների, երկրից դուրս և անտեղեակ նրա անցուդարձին և նրա դառնալից իրականութեանը: Ադպէս էինք դուք և մենք Հայոց Հանրապետութեան կարճատև գոյութեան ընթացքում: Բայց այդ ուղութեամբ մի երկու խօսք ևս:

Երբ մենք վերջացնում էինք այս տողերը՝ Թիֆլիզի հայ տառերով հրատարակուող մի թերթում Աղէքսանդրապօլի դաշնագրի մասին տուեց իր բացատրութիւնները հայ հասարակութեանը ոչ անծանօթ և Լևոն Սարգսեան:

«Վաթսունական թուականների» այդ մեծ սիրահարը՝ իւր ժամանակին տարուած հայ ազատագիր իղձերով և ջերմալից ուխտագնաց դէպ թիւրքաց Հայաստան, նա անհասանելի կամօք և երկնքի՝ բոլշեւիկ դեսպան էր այսօր Պարսկաստանում...:

«Այց Թիւրքաց Հայաստանի» լուրջ հեղինակը գտնում էր, որ Աղէքսանդրապօլի դելեգացիայի երեք պատգամաւորները դաւաճաններ են և պէտք է գլխատ-

ուեն: Հազիւ թէ պէտք է ասել, որ բոլշեւիկ պսիխոզի այդ ջարդարար օրերում այդ տեսակ յայտարարութիւն՝ առնուազը թոյլատրելի չէր: Այդ մի կոչ էր առ ջարդը՝ և մեր օրերի այդ ջարդարար տրամադրութիւնը գալիս էր հրդեհելու մի մարդ, որ այնչափ լուրջ և բանիմաց համբաւ ունէր հայ շրջաններում:

Բայց Պարսկաստանի ռուս դեսպանը իր որոշումը կայացնելով մեզ գլխատելու մասին՝ ոչ քարոզ էր արել երևի Աղէքսանդրապօլի դաշնագրի մեծ արժէքը անձնապէս իր համար:

Աղէքսանդրապօլի դաշնագիրը յամենայն դէպս այն լուսանցքն էր՝ որով անցան Հայաստան ռուս սուինները, և այդ սուինները հարթեցին այն դափնալից ընթացքը՝ որով երբեմն ցայտուն ազգայնական, եթէ չասենք մոլեռանդ դաշնակցական՝ Լևոն Սարգսեան անցաւ Պարսկաստան որպէս դեսպան և լիազօր բոլշեւիկ ռուսների... Չը կայ բարիք առանց չարիքի՝ և մեզ համար պատրաստուած կախաղանի աստիճաններով: Եւ «Մուրճի» պատկառելի խմբագիրը բարձրացաւ դէպի Պարսկաստանի բոլշեւիկ դեսպանի փափուկ բազկաթոռը...:

Այդպէս են այն անսպասելի պատկերները՝ որոնք խմորուում և գծագրուում են կեանքի գունաւոր արհաւիրքում...:

Բայց դէպքերը այնչափ արագ էին յաջորդում իրարու և այնչափ հրամանալից տիրում մտքերը, որ մարդիկ, անհատները՝ միանգամայն չքացել էին հրապարակից, և ժամանակակից կատաղի հոսանքը ծփում էր երկրի մի ծայրից միւսը:

Ազգային բարձր տրամադրութիւնը, պետական կորովը և ինքնուրոյն և անկախ զգացմունքները՝ կարծես անջատուել էին երկրից, և նորից փառել դէպ յաւերժ երազներ: Մեր նուիրական գաղափարները՝ որի առաջ հայ սերունդները այնքան երդուել և հրճուել են, նորից անցել էին դէպ արգելուած նկուղներ:

Թախիծը, վիշտը և ազատ հայրենիքի կարօտը՝ նորից դարձել էին մեր հոգու բնորոշ տրամադրութիւնը, և հայ աշխարհը գնում էր իր բախտի յետևից մոլորուած և յուսահատ...:

Այդպէս էին այն օրերը՝ երբ ռուս տաճկական սուինների համաձայնալից գրոհի տակ ընկաւ Հայոց Հանրապետութիւնը:

Երկրի «մի փոքր կարմրելը» վերածուեց թանձրալից անորոշ գոյնի՝ զազրելի մի ներկի, որի խիտ ծալքերում մարեցին երկրի բոլոր առանձնայատուկ գծերը...:

Բայց այդ կարմիր ներկը պարունակում էր իր մէջ և խուճապ տարրեր: Երևանում չէին արդէն Ռուբէն փաշան, Համօ Յովհանջանեան, Սարգ*[հս]* Արարատեան, պարլամենտի անդամների մի խումբ, այն մարդիկ՝ որոնք եղել են միշտ ցայտուն ազգայնական, և միշտ մոլեռանդ հաւատացող դաշնակցութեան պատգամների: Այդ արտակարգ, եթէ չասենք այլանդակ մթնոլորտում՝ վերջանում էր մեր թէ պետական և հասարակական գործունէութիւնը: Եւ հայկական նախկին

դելեգացիայի անդամները տրամադրութիւն ունէին խօսելու այն ջղայնալից երամներին, որ թախծալից թողնում էին հայրենի սովոր ափերը և նորից շոյում ծանօթ երազներ...:

Բայց մենք հնարաւորութիւն չունեցանք այդ էլ անելու:

Ճանապարհները կտրուած էին, երկաթուղին թիւրքերի ձեռքումն էր: Դիլիջանի ձորը լցուել էր ռուս զօրքով, վաղեմի հանգստութիւնը վերածուել էր բռնութեան, և այդ ճանապարհով դէպի Թիֆլիզ անցնելու մասին խօսք չէր կարող լինել: Անձնապէս ես վճռեցի միանգամայն քաշուել կեանքի հրապարակից՝ և Երևանի նահանգի անկիւններից մէկում զբաղուել դարձեալ այն հողով ու ջրով, որոնց մասին ես այնչափ գրել եմ «Մշակ» լրագրում: Բայց պ. Խատիսեան շարունակում էր դեռ դեգերել մեծ մակարդակների մթնոլորտում, և շարունակ ասում էր մեզ, որ մեծ աւարիային յաջորդում են պայծառ և արև օրեր...:

Յամենայն դէպս մենք դեռ միամտութիւն ունէինք կարծելու, որ մենք, որպէս նախկին դելեգացիայի անդամներ՝ գտնւում ենք էքստերիտօրեալ զրահի տակ, և մեզ թւում էր, որ օրերի բռնալից տրամադրութիւնը կարող է և չը շօշափել մեզ: Բայց սենսացիոն նորութիւնները արագնթաց յաջորդում էին իրարու, և մենք հանդիսատես էինք պատկերների՝ ուր այնչափ շօշափւում էր երկրի պատիւը և ինքնասիրութիւնը: Լօռիում՝ որի գագաթներից տասնեակ տարիներ Յովհաննէս Թումանեան այնչափ ինքնամոռաց փառաբանել է հայոց ձորերը, և ջերմալից խնկարկել հայրենի երազներին՝ կոպտալից կալանաւորում են Հայոց Հանրապետութեան երեկուայ մինիստր նախագահ Համօ Յովհանջանեանին իր ընկերներով:

Դժուար էր երևակայել անգամ այդչափ ստորութիւն հայկական վայրում: Բռնանալ առանց պատճառների մի մարդու վերայ, որ դեռ երեկ երկրի առաջի քաղաքացին էր, և ծաղրի ու բիրտ վիրաւորանքի ենթարկել այն մարդկանց, որ յամենայն դէպս երկրի սիրահարներն էին և տոգորուած հայրենեաց բախտով, այդ մի վարմունք էր, որ և տմարդի էր և ի ծայր ամօթալից հայ երկրի համար: Երբ Հայոց Հանրապետութեան երեկուայ պրիմիերին իւր ընկերներով որպէս քրէական ծանր յանցաւորների, բերում էին Երևանի բանտը՝ հայ-ռուսական այդ լպիրշ բռնութիւններից փախչում է Դիլիջանի ձորից Սեպուհ:

Եւ այդ տմարդի հալածանքի ենթարկւում էր այն Սեպուհը, որ դեռ երեկ այնչափ նախանձախնդիր դէպի իր ազգային պատիւը՝ երկրի բուռն ծափերի տակ փակել էր Դիլիջանի ձորը ռուս-թուրքական հորդանների առաջ: Բայց մինչ այդ՝ ռուս սուինների վերայ ծածանուելով Երևանում յայտնուեց մի խումբ ինչ-որ մարդիկ, որ իրանց երկրի կառավարիչներ յայտարարեցին: Այդ միանգամայն մեզ անյայտ հայ անունների թւում կար և մի թիւրք՝ որին մեծարուած էր երկրի արդարադատութեան կոմիսարի, մինիստրի պաշտօնը: Այդ «մինիստրը» յաճախ լինում էր թիւրքաց հիւպատոսի մօտ, և իր վերայ էր դարձրել այնտեղ նրան

հանդիպողների ուշադրութիւնը նրանով, որ թիւրքաց կօնսուլը նայել մեր այդ «մինիստրին» վերևից ներքև, իսկ այդ Նուրին՝ այդպէս էր այդ կոմիսարի անունը, մեծ պատկառանքով էր վերաբերւում դէպի Թիւրքիայի դիւանագիտական ներկայացուցիչը: Վերջապէս պարզուեց, որ այդ Նուրին հասարակ զինուոր էր, չաուշ մեծ պատերազմի ընթացքում տաճկաց բանակում՝ գերի էր ընկել ռուսներին և աքսոր ուղարկուել Ռուսաստանի խորքերը: Երբ Ռուսաստանում բռնկւում է բոլշեւիզմը՝ Նուրին իրան բոլշեւիկ է յայտարարում, և որպէս կոմունիստ՝ նշանակւում է «Հայաստանի արդարադատութեան կոմիսար», ուր և գալիս է ռուս զօրքերի հետ միասին: Նոր կառավարութեան օրէնսդիր սկզբնական ակտերից մէկն էր «Շաբաթօրեակ» և «Կիրակնօրեակ» յայտարարելը: Եւ «օրէնքների պահապան» Նուրի՝ Տաճկաստանի ջարդուած հորդանների այդ անգրագէտ և վաւաշոտ չաուշը, առաջնորդում էր բազմաթիւ հայերին, որոնք բռնուած փողոցներում՝ գնում էին «համայնօրէն» աւելելու երկաթուղու կայարանը և հասարակական արտաքնոցները...:

Եւ երկրի այդ ցնծալից ուրախութիւնը համեմւում էր ի հարկէ, որ կատարում էր երկրին խորթ և անծանօթ ինտերնացիօնալը...: Այդպէս էր սկսւում մեծ դիմակահանդէսը: Հայ պետական փլատակների տակ արդէն ոչինչ չը կար: Հրապարակումն էր միայն Դրօ, բայց ոչ «դիկտատոր» և ոչ նոյնիսկ հրամանատար զօրքերի: Հայ զօրաբանակ փաստօրէն չը կար արդէն, մնում էին նրա ողորմելի մնացորդները, և այդ թշուառ տականքը երկրի նոր տէրերին ներկայացնելու համար՝ Դրօ, որպէս վերջի հաւատարմատար հայկական կառավարութեան, ուղեկցում էր այդ տէրերին և թախծալից իջնում փայլի և կրքերի այդ դաւաճան հրապարակից...: Ինչպէս որ դժուար է բնորոշել այդ օրերի տրամադրութիւնը՝ նոյնպէս շատ դժուար է որոշակի ասել, թէ ի՞նչ էր Դրօ այդ օրերում:

Նա աւելի ոչ այս էր և ոչ այն...

Այդ ծանր և զաւեշտ տեսիլները, այնպէս և սինեմատոգրաֆիկ սենսացիոն նորութիւններ՝ յաջորդում էին մէկը միւսին, և մենք ակամայ սպասում էինք նոր պատկերների և նոր փորձանքի...

Մի երկու օրից յետոյ՝ Խատիսեանին, Գիւլխանդանեանին և ինձ բերեցին ռուսերէն ծանուցումներ, մեզ առաջարկւում էր ներկայանալ հռչակաւոր «չեկան», «արտակարգ կոմիսիան»:

Չեկան մեր աչքում չունէր դեռ իր իսկական նշանակութիւնը և իմաստը: Նրա պարտաւորութիւնների և իրաւասութեան մասին շրջում էին անորոշ մեկնութիւններ, բայց և այնպէս՝ այդ ծանուցագրի երկու տեղը չարագուշակ էին թւում ինձ, և ես ասացի այդ մասին իմ բաղդակիցներին:

Միւս օրը ես և պ. Խատիսեան գնացինք չեկա: Գիւլխանդանեան խուսափեց յանկարծակի ներկայանալուց, և միայն մի (օր) յետոյ անցաւ այնտեղ:

Չեկան ստացել էր արդէն իր արիւնոտ, խորհրդաւոր տեսքը, այնտեղ պահակում էին բացառապէս ռուս զինուորները, և գործածական պաշտօնական լեզուն ի հարկէ ռուսերէնն էր:

Մարդկային դէմքը կորցրել էր նախկին իմաստը, մոռացուել էին հասարակական և պետական դէմքը, համարումը, կշիռը և հեղինակութիւնը: Բոլորը «ընկերներ» էին շատ արձակ, եթէ չասենք՝ կոպտալից ու ջարդարար հակումներով:

Ի զուր էինք մենք քաղաքավարութիւն և պատիւ որոնում այդ մթնոլորտում, այդ հասկացողութիւնները կարծես անդամահատուել ու վերացուել էին՝ փոխարինելով կոպտութեամբ, արհամարհալից վերաբերմունքով դէպի մարդկային արժանաւորութիւնները և առհասարակ այն սկզբունքը, որոնք դարերի ընթացքում եղել են քաղաքակրթութեան անկիւնաքարը:

Մենք արդէն լաւ չէինք զգում մեզ այդ մթնոլորտում, և ակամայ ջղայնանում էինք:

Խստալից ձևականութիւնները կատարելուց յետոյ միայն՝ հայկական նախկին առաջի քաղաքացուն յաջողուեց վերջապէս ինձ հետ միասին մտնել այդ կախարդ հիմնարկութիւնը, ուր բոլշեւիզմի ամբողջ իմաստն էր և սրբազնագոյն խորանը:

Սենեակները լցուած էին մեծ բազմութեամբ, ամէն տեղ արդէն կեղտ, փոշի, ծուխ և այդ օրերի ամենայատկանիշ ուղղեկիցը՝ ծայրահեղ և ի ծայր անիմաստ մթնոլորտ:

Բազմութեան մեծ մասը ռուսներ էին, կային և եկուոր անծանօթ հայ դէմքեր, բայց բոլորը յանդուգն, լպիրշ, արհամարհալից և կռուող: Այդ խորթ և խառնիճաղանճ մոխրագոյն ամբոխի մէջ պատահում էին և ծանօթ դէմքեր:

Անկիւններից մէկումն, որպէս մի մեղադրեալ՝ կծկուել և մարել էր երբեմն իմպոզանտ հայկական բանակի նախկին սպարապետ գեներալ Նազարբէկով:

Ի թիւս այլ սպաների՝ նրան պահանջել էին ցուցակագրութեան:

Ինչպէս և միւսները՝ նա էլ ի հարկէ առանց ուսադիրների էր, և առանց իր վաղեմի քաջութեան շքանշանների, որոնք այնչափ ներդաշնակ էին նրա հրամանալից տեսքի հետ...

Տեսնելով հայկական պրիմիերին այդ փափուկ շրջապատում՝ սպարապետը և միւսները ոտքի էին կանգնում առանձնակի ուշադրութեամբ ճանապարհ տալիս նրան... Այդ համր պատկառանքը դէպի ազգային պատիւը՝ չէր կարող ի հարկէ չը յուզել մեզ, և մենք մի փոքր սփոփւում էինք, զգում մեզ այդ օտար և թշնամալից մթնոլորտում: Չեկայի նախագահը՝ եկուոր մի հայ երիտասարդ, որ ոչ մի բառ հայերէն չը գիտէր ի հարկէ, դիմեց մեզ ռուսերէն:

Երևում էր, որ նա իր բոլոր ծայրագոյն իրաւունքներով հանդերձ՝ ոչ լիօրէն բաւարար էր զգում իրան այդ րոպէին, և նա ուզեց համեմել իր ասելիքը մի երկու փաղաքշալից խօսքերով: Նա յարգալից ասաց Խատիսեանին, որ մեծ հե-

տաքրքրութեամբ լսում էր երբեմն Թիֆլիզում նրա դասախօսութիւնները, իսկ դառնալով ինձ՝ նա իր ուշադրութիւնն էր ընդգծում Ձերդ Գերազանցութիւն կոչելով ինձ...

Չեկայի նախագահ յայտնեց մեզ երկրի կառավարութեան որոշումը մեզ աքսորելու մասին, և առաջարկեց երկու օրից յետոյ թողնել «Հայաստանի» սահմանները: Թէ ինչ մեղադրանք էր բարդում մեզ վրայ՝ նա չը բացատրեց մեզ, իսկ մենք պէտք չը համարեցինք հարցնելու նրան այդ առիթով: Մենք թողեցինք այդ մթնալից և կոշմար հիմնարկութիւնը կարծես սփոփուած, և մեր վերայից մի ինչ որ ծանրութիւն թոթափած:

Մենք ուրախ էինք այսօր թողնելու այն վայրը, ուր շատերը մեզ էին ատելի, շատերին էլ մենք օտար...

Միակ տեղը, ուր մենք կարող էինք անցնել՝ այդ Թիֆլիզն էր: Բայց Աղէքսանդրապօլի վերայով անցնելու հնարաւորութիւն չունէինք, որովհետև թիւրքերը փակել էին երկաթուղին: Այսպիսով մենք ստիպուած էինք գնալ Ղարաքիլիսայ խճուղով, բայց և այնտեղ հանդիպում էինք նոր արգելքների: Երևանի ռուս կառավարութեան և Վրաց հանրապետութեան յարաբերութիւնները խզուած էին, վրաց դիւանագիտական ներկայացուցիչը հայկական կառավարութեան մօտ բանտարկուած էր բոլշևիկներից և Ղարաքիլիսա-Թիֆլիզ երկաթուղին չէր գործում: Վճռուում էր, որ մենք պէտք է պետական աւտոմոբիլով անցնենք Ղարաքիլիսայ, իսկ այնտեղից մի կերպ երկաթուղով Թիֆլիզ: Դեկտեմբերի 13-ին, առաւօտը, նշանակւում էր մեր մեկնումը և մենք սպասում էինք աւտոմոբիլի, բայց կառքը չէր գալիս և երկար հարց ու փորձից յետոյ պարզուեց, որ մենք ինքներս պէտք է անցնենք գարաժ, ուր և պէտք է նստէինք աւտոմոբիլ:

Ինչևիցէ, ստիպուած էինք ենթարկուելու և այդ պահանջին: Բայց գարաժում, բացօթեայ՝ մենք սպասեցինք աւտոմոբիլի մեկնելուն վեց ժամ: Մեզ հրապարակով խուզարկեցին և ապա առաջարկեցին նստել բեռնակիր մի կեղտոտ աւտոմոբիլ: Մեր ուղեկիցներն էին ինչ-որ երկու հայ երիտասարդ և մի օրիորդ, կոմունիստներ: Նրանք եկել էին Երևան ռուս զօրքի հետ միասին, և նշանակւում էին Աղէքսանդրապօլի յեղափոխական կոմիտէյի (ռեւկօմի) անդամներ և գնում էին իրանց պաշտօնատեղին: Պէտք չկայ ասելու, որ երիտասարդները աւելորդ համարեցին մարդկային կենցաղի պարտական պահանջները, և մեզ հետ ծանօթանալու ոչ մի փորձ չարեցին: Վերջապէս, ֆիզիքապէս ու բարոյապէս այդչափ տանջուելուց յետոյ՝ մենք մի կերպ տեղաւորուեցինք բեռնակիր այդ հին աւտոմոբիլում և դղրդալից դուրս եկանք փողոց...

Գոհ էինք վերջապէս, որ վերջանում էր այդ ինքվիզիտ տեսնելը և մեզանից ամէն մէկս շտապում էր միայն յառաջ և յառաջ, հեռանալ այն վայրից՝ ուր վերապրումները այնչափ ջղայնալից էին և մեզ համար, մահացու զգայուն...

Բայց բախտին հաճոյ էր ստիպելու մեզ ճաշակել մի դառնութիւն, որ մենք յամենայն դէպս ոչ մի կերպ երևակայել անգամ չէինք կարող:

Մի քանի րոպէից յետոյ մեր բեռնակիրը կանգնեց նախկին հայկական կառավարութեան շէնքի առաջ, այն մուտքի մօտ՝ ուր գիշեր և ցերեկ կանգնած էր երբեմն զոյգ պահակ զինուոր: Այդ մուտքի առաջ շատ և շատ անգամ կանգ է առել հայկական պրիմիերի կառքը, և հայ պահակը զինուորական պատիւ է տուել Հայոց կառավարութեան նախագահին: Մինիստր նախագահի կառքի երևալը այդ փողոցում՝ ամէն անգամ առաջ էր բերում պատկառալից ուշադրութիւն, և ամէն մի հայկական սիրտ՝ ակամայ և շատ բարձր տրամադրութեամբ, համակւում էր իր սուվերէն պետական արժանապատուութեամբ: Այդ մթնոլորտումն էր միշտ ժամանում կառավարչական ապարանքը մեր պրիմիերը: Բայց փոխուել էին մոգական քմահաճոյքով և հայկական նախկին պրիմիերը, իր երկու մինիստրների ուղեկցութեամբ՝ երևում էր այդ իշխանալից փողոցում հայկական նախկին կառավարչական ապարանքի դիմաց բեռնակիր աւտոմոբիլով...

Մեր ուղղեկիցները ինչ-որ գործ ունէին այդ ապարանքում, ուր այժմ վխտում էին ռուսները, հրեաները և նմուշի համար երևի՝ հայերը, և նրանք բացատրեցին, որ մի փոքր «խորհրդակցութիւն» ունին կառավարութեան անդամների հետ, և առանց ի հարկէ սովորական ներողութիւն խնդրելու՝ կանգնեցրին բեռնակիրը, ցատկեցին և անյայտացան...

Նախկին պրիմիերի և նախկին մինիստրների այդ տարօրինակ այցը դէպի կառավարչական շէնքը՝ առաջ բերեց մեծ հետաքրքրութիւն և մեծ իրարանցում փողոցում: Մարդիկ չէին հաւատում իրանց աչքերին, նրանք պատկառալից բացում էին հայրենի նախկին պրիմիերի առաջ իրանց գլխները և շտապ անցնում, կարծես ուզում էին կրճատել թէ մեր և թէ իրանց հոգու դառնալից վերապրումները:

Բայց մեր ուղեկիցները չէին շտապում, իսկ մենք շարունակում էինք տանջուել և ցնցուել մեր որջում:

Վերջապէս երևաց միայն օրիորդը, և յայտնեց, որ նրա երկու ընկերները մնում են Երևանում և միայն ինքը պէտք է շարունակէ ճանապարհը մեզ հետ: Մենք ազատցած զգացինք մեզ այդ բարոյական գերութիւնից և շարունակեցինք մեր ճանապարհը: Մենք պէտք է գիշերէինք Սուխոյ-ֆուտան մոլական գիւղում, բայց այդ գիւղը լցուած էր արդէն ռուս զօրքով, ընկերվար տրամադրութիւնը չափազանց ցայտուն էր այդտեղ, և մենք անխուսափելի էքսցեսներից ազատուելու համար՝ ստիպուած էինք համոզելու մեր «ընկեր» շօֆերին շարունակել ճանապարհը մինչև առաջիկայ Քախսի հայ գիւղը:

Մենք գնում էինք Նոր Բայազէտի գաւառով, ուր երկար տարիներ ես գաւառապետ էի, ուր ամէն մի քար ծանօթ է ինձ, և իմ ուղղի յանձնարարեցին ինձ կարգադրելու մեր ճանապարհորդութիւնը:

Քախսին մի փոքրիկ աղքատիկ գիւղ է և առանձին յարմարութիւններ գիշերելու համար չունէր, բայց նա ապահով էր ռուս զինուորների ընկերավար բռնութիւններից և մենք հանգիստ հոգով կանգ առանք այդտեղ: Երեկոյեան ժամի ինն էր, երբ գիւղը արդէն քնած էր: Մենք բախեցինք առաջի դուռը, ես յայտնեցի իմ ով լինելս և տան մէջ իրարանցում սկսուեց: Վառուեց գիւղական ճրագը, երկաթէ վառարանը, բերեցին ինքնաեռ, գաթա, լաւաշ, մածուն, պանիր, գինի, և տան տէրը չը հաւատալով իր աչքերին, որ հիւրասիրում է հայկական պրիմիտերին՝ շարունակ հրճուալից հառաչում էր և պատկառալից մեզ սպասաւորում:

Մեր բեռնակիրը շարունակ փչանում էր, կանգ առնում, և մենք փոխանակ միւս օրը Ղարաքիլիսայ հասնելու՝ ստիպուած էինք գիշերելու Սևանայ լճի բարձրունքներում, Չբուխլու գիւղում:

Մեր անսպասելի այցը այդ գիւղում նոյնպէս մեծ իրարանցում առաջ բերեց, և իմ վաղեմի բարեկամներս շտապում էին հիւրասիրել մեզ, ինչպէս որ կարողանում էին:

Գիւղը լցուած էր արդէն Կարսի նահանգի թշուառ գաղթականներով: Միւս օրը մեր առաջ հաւաքուել էր ամբողջ գիւղը, շտապում էին տեսնել պ. Խատիսեանին, որի մասին լսել էին և մեր քունջ ու բուջախներում շտապում էին տեսնուելու և ինձ հետ, որին երկար տարիների ընթացքում սովոր էին տեսնելու որպէս Նոր Բայազէտի գաւառապետ: Շատ բնորոշ մեր «յեղափոխական» յայտարարութիւնների համար՝ շատերը գանգատ և խնդիրներ ունէին: Շատ բնական էր ի հարկէ, եկել է Մինիստր նախագահը և գիւղացիք շտապում էին օգտագործել այդ պատահակի դէպքը իրանց դիմումներով ու գանգատներով:

Բայց և Չիբուխլու գիւղում արդէն սովետական կարգեր էին, մի երկու լակոտ կազմում էին «յեղափոխական կոմիտէն»: Գիւղը նորից ճաշակել էր ռուս զինուորի բռունցքը, տարել էին շատերի ոչխարը, գարին և գիւղը խմբուել էր գանգատուելու հայկական կառավարութեան նախագահին...

Այդ շատ բնորոշ թիւրիմացութիւնը մեզանից հեռացնելու համար՝ ես բացատրեցի ամբոխին իմ բարեկամների միջոցով, որ մենք շտապում ենք և այդ գանգատները պէտք է ածել գաւառական իշխանութեանը, խոստացայ Դիլիջանում ասել այդ մասին ում հարկն է, բայց գիւղացիները դարձեալ խմբւում էին մեր շուրջը և ամէն մէկը թախծալից դիմում պ. Խատիսեանին...

Եւ մեր առաջ պատկերանում էր մի հազուագիւտ տեսիլ – մթնալից հեռաւոր հայկական անկիւնը կեղեքում էին ռուս բռունցքները և հայ գիւղացին հաւատալից և պատկառանքով դիմում է այդ առիթով երկրի առաջի քաղաքացուն...

Եւ այդ տեսիլը նոյնքան բնական էր, որչափ և զաւեշտալից ու կոմիկ...

Դիլիջանում սովետական իշխանութիւնը վերապրում էր յաղթական օրերը: Այդ ձորը լցուած էր ռուս գումարտակներով, նոցա հայ եկուոր ուղեկիցները կատարում էին միայն «տեղեակ» մարդկանց դերը – ցոյց էին տալիս հարուստնե-

ին, մթերքների և առհասարակ երկրի հարստութեան տեղը, երկրի առաջաւոր մարդկանց և մանաւանդ նոցա, որ այս և այն ասպարէզում նշանակութիւն է ունեցել իր պաշտօնական կամ հասարակական դիրքով:

Դիլիջան մտնելիս մենք հանդիպեցինք Դիլիջանի հասարակութեան մեծ բազմութեան: Նոցա առջևից ռուս զինուորները հայ եկուորների սպասաւորութեամբ, տանում էին բուք օդում ծածանուող իրանց կարմիր դրօշակները, Մարքսի պատկերը, իսկ նոցա յետևից, գլխակուռ և վշտահար՝ գնում էր Դիլիջանի ինտիլիգենցիան, հայ հասարակութիւնը... Նոցա տանում էին անտառ «կոմունալ» պէտքերի համար փայտ ջարդելու, և այդ էլ սառնամանիք օրերում... Մենք ծածկուեցինք մեր մուշտակներով, որ մեզ չը ճանաչեն և շնչասպառ անցանք այդ տանջալից թափորի մօտով, որ նման էր աւելի մի մեծ սգահանդէսի:

Մեզ ուղեկցող «Կոմունիստ» հայ օրիորդը համակրելի էր: Նա խուսափում էր խօսելու «Կոմունիզմի» մասին և աշխատում էր շատ զգոյշ անցնել այն բոլորի մօտով՝ ինչ որ կարող էր շօշափել մեր ազգային պատիւը...

Այնպէս քաղցր քմահաճ վիճակի, օրիորդ Արէշեան դաշնակցական Համօ Յովհանջանեանի ազգականը դուրս եկաւ, և մեզ մնում էր մեր հոգու խորքերում մի քանի անգամ կրկնել այդ առիթով o tempora o mores...

Յամենայն դէպս, մենք այդ օրիորդի բոլշևիկ զրահի տակ անվնաս անցանք մինչև Ղարաքիլիսա, մինչդեռ ամէն քայլափոխում մենք կարող էինք հանդիպել բազմաթիւ անախորժութիւնների և բռնութիւնների – ճանապարհի բոլոր գիւղերը լցուած էին ռուս զօրքերով և անախորժութիւնները կարող էին անխուսափելի լինել: Օդը տոգորուած էր կրքերով, կամայական.... *(Շարունակութիւնը բացակայում է)*

ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 22, թթ. 1-87, բնագիր, ձեռագիր:

DOC №23

Յուշեր՝ Հայաստանից դուրս ապրող հայ մտաւորականութեան մասին:
(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***... նա հետաքրքրւում էր իր հայրենի գործերով միայն առաւօտները, սուրճի ժամանակ նոր լրագիր կարդալով:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

...Հայ ապիկար, փչացած ինտիլիգենցիան, որ իրան կադետ և ինչ որ էսէր, մէսէր էր անուանում՝ սիրում էր միայն քննադատել, հայհոյել և ծաղրել հայկական կառավարութիւնը: Զանազան պատրուակների և ձևերի տակ՝ նա խմբուել էր իր հայրենիքից դուրս, նա հետաքրքրւում էր իր հայրենի գործերով միայն առաւօտները, սուրճի ժամանակ նոր լրագիր կարդալով: Նա անպատասխանատու և ձրի խորհուրդներ էր տալիս միշտ և ձանձրանում էր «Հայաստան» գալ և զբաղուել «հայկական» գործերով: Իսկ այդ մթնոլորտում այդ «Հայաստանը» հեղեղում էին բազմատեսակ մութ...(*շարունակութիւնը բացակայում է*)

ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 23, թ. 1, բնագիր, ձեռագիր:

DOC №24

Յուշեր՝ Նախճաւանի և Զանգիբասարի մասին:

(1922)

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

- ***Որպէս Արաքսը՝ Զանգուն էլ Արարատեան դաշտում մեծ յարգ և պատիւ ունի:***
- ***Դժուար է որոշակի ասել՝ ո՞րն է Զանգի-Բասար գաւառակում աւելի թանկարժէք, հողը՝ թէ ջուրը:***
- ***Արբեցող և արկածախնդիր ռուս աստիճանաւորները բերում էին այստեղ թղթախաղ, իրանց կանանցը, զեխութիւն և անբարոյականութիւն՝ և այդ բոլորը անուանելով «ռուս քաղաքակրթութիւն» և «ռուս օրիենտացիա»:***
- ***Ռուս իշխանութեան օրով Զանգի-Բասարը ռուս կաշառակերների համար մի անսպառ աղբիւր էր:***

ԲՆԱԳԻՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Հին Նախճաւան

I

Վերլուծելով մեր յիշողութիւններում հայ պետական անցուդարձը, տեսիլները՝ մենք պէտք է կանգ առնենք երկու գունալից պատկերների առաջ ևս, որոնք իւր ժամանակին այնչափ զբաղեցնում էին մեր թէ՛ վարիչ և թէ՛ հասարակական շրջանները: Դոցանից մէկը Հին Նախճաւանի գաւառն է, միւսը Երևանի գաւառի մի փոքրիկ շրջան, որ Զանգի Բասար է կոչւում: Թիւրքաց Հայաստանի Բինգէօլից առաջացած Արաքս՝ վերևից ներքև ընկնելով գլորւում, գալիս է դէպի չքնաղ Կաղզուան: Դառնալով այստեղից դէպի Երուանդակերտի հռչակաւոր աւերակները՝ Արաքս հորձանք տալով ահագին, Հաջիբայրամի տափարակում գրկախառնւում է Կարսի բարձունքներից սրընթաց փախչող Ախուրեան-Արփաչայի հետ, և այստեղից ծփալով և հրճուելով՝ մեր պատմութեան այդ երկու հնագոյն հարազատները անցնում են ողողելու մեր երկրի միւս վայրերը:

Սուրմալու և Էջմիածին, մեր ժողովրդական լէ-լէների այդ անուանի հայրենիքը անցնելով՝ Արաքս ուժգին ողողում է Երևանի գաւառը: Քերելով հինաւուրց Մասիսի լայնածաւալ ստորոտը՝ նա մեծ թափով ուղղում է իր բերրի ջրերը դէպի ձախ, և յանձնարարելով Հրազդան-Զանգուին հորդորել այն տափարակը, որ

ընկած է Նոր Բայազէտի լեռների հովանում, նա ստեղծում է այստեղ հարուստ և անուանի Զանգիբասարը:

Բասար՝ թուրքերէն տիրել, ողողել կը նշանակէ: Որպէս Արաքսը՝ Զանգուն էլ Արարատեան դաշտում մեծ յարգ և պատիւ ունի: Նրա ջրերը Սևանա լճից գլորուելով՝ շատ անուանի և շատ բերրի են: Դժուար է որոշակի ասել ո՞րն է Զանգի-Բասար գաւառակում աւելի թանկարժէք, հողը՝ թէ ջուրը: Երկրի հասկացողութիւններում թէ՛ հողը և թէ՛ ջուրը ոսկի է այդտեղ: Բայց որովհետև այդ մեծ հարստութիւնը ժողովրդի բացատրութիւններում դիզուել և ամբարուել է այդ գաւառակում շնորհիւ այդ համեղ և անուշ ջրերի՝ ջուրը այդ վայրում ստացել է տնտեսական միաւորի նշանակութիւն:

Հարստութիւնը չափւում և որոշւում է ջրի քանակով: Հարկը, խարջը և բեշը որոշում էին ջրի չափով, և մարդիկ այնչափ հարկ, օլամ և բեգեար էին տալիս՝ որչափ ջրի բահ ունէին նոքա:

Տնտեսական այդ պայմանները ստեղծել են այստեղ առանձնակի ջրաբաշխական օրէնքներ: Գիշերները ջրի հերթը որոշում է աստղերի դասաւորութեամբ, և ջրից օգտուելու իրաւունքը ամենասրբազնագոյնը համարուելով՝ յառում է իր շուրջը երկրի ամբողջ ուշադրութիւնը: Գաւառակի ոճիրների ամենամեծ մասը առաջ է գալիս ջրաբաշխական իրաւունքների խախտման առանցքում, և սպաննութիւնները, մահափորձը, կատաղի կռիւները, կաշառքը և բռնութիւնները՝ կազմում են այն խայտաճամուկ խմորը, ուր տասն և երկու ամիս շարունակ բորբոքւում են երկրի կրքերը և հալւում նորա հարստութիւնը:

Ընդգրելով ամենաբերրի տափարակը՝ Զանգի-Բասարը իր միւս կողմում ունի Նոր Բայազէտի և Դարալագեազի չքնաղ արօտները: Այդպիսով, Արարատեան դաշտի երկինքը օժտել է այդ վայրը կեանքի բոլոր վայելքներով, և այդ պատճառով Զանգի-Բասարը անուանի է Երևանի նահանգում թէ՛ իր հարստութեամբ և թէ՛ իր բնակչութեան խիզախ և յանդուգն տրամադրութեամբ: Այդպէս է Երևանի գաւառի այն փոքրիկ գաւառամասը, որ ռուս իշխանութեան օրով կառավարւում էր մի պրիստաւի ձեռքով, և ուր հարիւր տարուայ ընթացքում ռուս պաշտօնեաները բաժանելով և տիրելով՝ միշտ լիացել են և շարունակ թալանել ու տարել...

Ռուս իշխանութեան օրով՝ Զանգի-Բասարը ռուս կաշառակերների համար մի անսպառ աղբիւր էր: Հարիւր տարուայ ընթացքում հազարաւոր ռուս պաշտօնեաներ լցրել են այստեղ իրանց գրպանները՝ և այնպէս բեռնաւորուած հեռացել, իսկ երկիրը լուռ վճարել է ու հլու հպատակուել ռուս օրէնքների...

Հայկական իշխանութեան օրով Զանգիբասարը դարձաւ քաղաքական կռուածաղիկ:

Թուրք ազնուականները և Բագուի հարստացած թուրքերը սկսեցին պարապել «յեղափոխութիւնով», և իրանց վարձկանների միջոցով՝ Զանգի-Բասարը կռուածաղիկ դարձրին իրանց և հայերի միջև:

Այդպէս են Զանգի-Բասարի գլխաւոր բնորոշ գծերը:

Բայց դառնանք Արաքսի ընթացքին: Հարստացնելով Զանգի-Բասարը՝ Արաքս ցած իջնելով կանգ է առնում փոքր Մասիսի դիմաց:

Եւ այստեղ, ուր սեպաձև բարձրաւանդակը, Դահնին (այդպէս է կոչւում այդ վայրը)՝ բաժանում է Երևանի գաւառը Շարուրից, կամ Արարատեան դաշտը Հին Նախճաւանի տափարակից, Արաքսը կարծես հանգիստ է տալիս իր ջրերին:

Ծփալով դէպի ձախ և ուժգին զարկուելով Շարուրի դարբասներին՝ նա լճանում և ծաւալւում է այստեղ: Արազ-Դայեան, ասում է ժողովուրդը այդ երկրի մասին այն տեղը՝ ուր Արաքս կանգ է առնում: Եւ կանգ առնելով՝ նա բերրի ոռոգում է այդ տափարակը և հռչակում ամբողջ Արազ-Դայեանը, և ամբողջ Շարուրը բամբակով ճալթիքով-բրնձով: Թէ՛ հարուստ Արազ-Դայեան և թէ՛ հարուստ Շարուր՝ ռուս տիրապետութեան օրով հլու կաթնատու կովեր էին ռուս կաշառակեր պաշտօնեաների համար:

Արբեցող և արկածախնդիր ռուս աստիճանաւորները բերում էին այստեղ թղթախաղ, իրանց կանանցը, զեխութիւն և անբարոյականութիւն, և այդ բոլորը անուանելով «ռուս քաղաքակրթութիւն» և «ռուս օրիենտացիա»՝ նրանք իրանց կաշառալից կապանքներումն էին պահում այդ հարուստ և հպատակ երկիրը: Այդպէս էր Զանգի-Բասարից յետոյ Շարուրը:

Դառնալով նորից դէպի Արաքսի ընթացքը, նրա պատմական ելևէջները՝ մենք տեսնում ենք, որ մեծաչափ հարստացնելով և Շարուրը՝ Արաքս թախծալից նորից ընկնում է դէպի ցած և օձապտոյտ քերելով Պարսկաստանի սահմանները, անցնում է Հին Նախճաւան և Զանգեզուր: Հին Նախճաւանը մեծ կալուածատիրական երկիր է:

Պարսից շահերը առատալից բաշխում էին այստեղ իրանց բազմաթիւ ազնուականներին՝ կադիմներին[15], գաւառի հողերը և անուանի իրերը և նոցա միջոցաւ իշխում Ատրպատականի այդ հեռաւոր վայրում:

Ջերմալից արևը բուսեցնում է այստեղ բնութեան բոլոր բարիքները, և Հին Նախճաւանի գաւառը վայելել է միշտ հարուստ երկրի հռչակը:

Բամբակը, բրինձը, անուանի խաղողը՝ որոնց տեսակները հարիւրից աւելի էին, մետաքսը, Օրդուբաթու մեծահռչակ չիրը, դեղձը հիւլի շաֆթալին և Այլաբաթու գովական քաղցրալից սեխը՝ դութմին, ստեղծել են Արաքսի այդ աւազանում

---

[15] «Կադիմ» արաբական բառ է, պարսից շահերի թիկնապահ, որտեղից և առաջացել է պարսից բազմաթիւ ազնուականութիւնը: (*Ծանօթագրութիւնը բնագրի հեղինակինն է - Վ.Հ.)*

համով և հոտով մի կենցաղ, ուր մարդիկ միշտ քաղցրալից երազել են և անհոգ ճոճուել կեանքի վայելքներում:

Նոյեան տապանի առաջ՝ Արաքս... նորից հանգիստ է առնում: Այստեղ նա նորից լճանում է, արծաթափայլ տալի դէպի Պարսկաստան և ուշիկ ծփալով դէպի հռչակաւոր Դերիք՝ հռչակաւոր ս. Նախաւկան, Մայր Արաքսն անցնում է դէպի Գողթան:

Աշխատասէր հայութիւնը յետևելով Արաքսի հորձանքներին՝ հերկել և մշակել է հողը նորա ամբողջ տարածութեամբ: Իսկ Արաքս, որպէս մի կախարդ ժապաւէն՝ իրար շարելով Բինգէօլը, Կարսի բարձունքները, Սուրմալու, Էջմիածինը, Զանգի-Բասարը, Շարուրը, Հին Նախճաւանը, Գողթանը և Զանգեզուրը՝ իր անուշ և համեղ ջրերով կերտել է այդ տարածութեամբ ժողովրդական մրմունջները, և մեր բանաւոր գրականութիւնը տուել է մեծ հմայք և մեծ ազգային փայլ: Սփռելով հայ ազգաբնակութիւնը այդ ուղղութեամբ՝ Արաքս ...(*շարունակութիւնը բացակայում է*)

ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 24, թթ. 1-9, ձեռագիր, բնագիր:

ԼՐԱՑՈՒՄ

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՆԱՄԱԿ-ՀԱՇՈՒԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐԻ ՄԻՆԻՍՏՐ-ՆԱԽԱԳԱՀԻՆ (ՎԱՐՉԱՊԵՏԻՆ) ԵՒ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Որտեղ խօսւում է նահանգապետի պաշտօնում աշխատած ժամանակահատուածում մարզի խնդիրների ու ընդհանուր իրավիճակի, մարզի քաղաքացիական և զինուորական իշխանութիւնների միջև եղած հակասութիւնների և պետութեան կառավարման մօտեցումների և սկբունքների վերաբերեալ իր տեսակէտների մասին

(1920 թ. Նոյեմբերի սկիզբ)

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՊԱՐՈՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ
ՊԱՏՃԵՆԸ՝ ՄԵԾ. Պ. ՆԱԽԱԳԱՀԻՆ.

Ես կ՛ուզէի մի ընդհանուր տեսութիւն ներկայացնել Ձեզ այն բոլոր աշխատանքների մասին, որ տարի ու կէս ժամանակի ընթացքում կատարել է մեր քաղաքացիութիւնը Ղարսի նահանգում: Այդ տեսութիւնը Ձեզ գուցէ պէտք լինի. Նոր ստանձնելով Ներք. Գործ. Մինիստրութիւնը՝ դուք հնարաւորութիւն չունէք որոնելու իմ բազմաթիւ զեկուցումները, որ սփռուած են բոլոր մինիստրութիւնների դիւաններում: Բայց այդ տուալները կը լուսաբանեն եւ այն արկածալից դրութիւնը՝ որի առանցքում մարդկանց քմահաճ ցանկութիւններով այսօր տարուբերւում է Ղարսի նահանգը:

Ես առաջին հայն էի, որ անգլիացիների հետ անցայ Ղարսի նահանգը: Անգլիացիք կազմակերպել էին տեղացիներից երկրի խորհուրդը, որ եւ կառավարում էր նահանգը: Նոքա տրամադիր չէին լուծելու այդ հաստատութիւնն եւ պահանջում էին որ ես, իբրեւ ներկայացուցիչ հայկական կառավարութեան՝ գրաւէի այդ խորհրդում նահանգի տեղը, որպէս աւագը հաւասարների մէջ: Ես չեմ ծանրանայ այն խնդրի վրայ, անգլիացիք չէին ըմբռնում մեր իրաւական հասկացողութիւնները եւ մեր պետական իրաւունքները, թե՞ անում էին այդ բոլորը քաղաքական միտումներով, մի բան միայն ակներեւ էր, նոքա 1 օրուայ ընթացքում սակարգում էին ինձ հետ իմ իրաւունքների խնդրում, եւ նոքա հրաման արձակեցին՝ ինձ որպէս նահանգապետի ճանաչելու մասին, միայն այն ժամանակ երբ ես ընդունեցի տեղական խորհուրդը, որպէս նահանգապետին կից մի հաստատութիւն:

Այդ խորհուրդը, որ բաղկացած էր արկածախնդիրներից՝ նայում էր մեզ վրայ վերեւից ներքեւ, եւ ոչ մի տրամադրութիւն չունէր գէթ համակերպուելու մեզ հետ:

Երկիրը երկու տարուայ ընթացքում քայքայուած բարոյապէս եւ իրաւօրէն անիշխանութեան առանցքում, անտեղեակ կատարուող անց ու դարձին՝ տակաւին սպասողական դրութեան մէջ էր: Ստանձնելով պաշտօնս, ես նոյն օրը հեռագրով պահանջեցի Աղեքսանդրոպօլից՝ կուտակուած ու սրտատրոփ սպասող գաղթականութիւնը, եւ այնուհետեւ գնացքների անվերջ շարաններ բերում էին տնաւեր եւ ուժասպառ հայերի խմբեր: Մի շաբաթից յետոյ Ախուրեանն անցաւ եւ մեր զօրքը: Ես արդէն կազմակերպել էի իշխանութիւնը, եւ ժողովելով շուրջս մի բուռն հայեր, տեղիս ազգութիւնների ներկայացուցիչներին՝ մեծ պատկառանքով ի ցոյց երկրի դիմաւորեցի կառավարական զօրամասերը:

Քաղաքականութիւնն եւ ոյժը արեւելքում միշտ ճանաչուել են որպէս կեանքի հզօր ֆակտորներ, եւ ես չէի կարող չնկատել, որ երկիրը խոնարհւում է իշխանութեան առաջ: Եւ ես օգտագործեցի որպէն, ես բաժանեցի տեղիս ազդեցիկների շահերը, խորհրդի անդամներին այլ եւ այլ հրապուրիչ պաշտօններ տուեցի՝ եւ 4 օրից յետոյ փաստօրէն ցրեցի այդ խորհուրդը: Անգլիացիք ոչ միայն չառարկեցին այդ գործելակերպին՝ այլ կարծես թէ հաւանութիւն տուին: Բայց այստեղ, ուր մենք մեծ թափով անցանք քաղաքացիութեան աշխատանքին՝ առաջ եկաւ մի միջադէպ, որ կամ սխալ էր կամ թիւրիմացութիւն - Ղարսի նահանգը գեներալ-նահանգապետութիւն յայտարարուեց, եւ այդ միահեծան իրաւունքները յանձնուեցին զօրավար Օսիփովին:

Ինձ պէտք չի բացատրել այստեղ, որ երկրի տիրապետութեան այն գործելակերպը, որ առաջարկում են մեզ անգլիացիք, եւ որ ըստ իմաստի այդպէս էր՝ չէր կարող հանդուրժել բռնակալից իշխանութիւնը: Մենք պէտք է կոփէինք պետականութիւնն սուինների հետ, բայց ոչ երբէք սուիններով: Եւ ի մեծ գոհունակութիւն երկրի ու ճակատագրի՝ կառավարութիւնը նկատեց այդ սխալն եւ 20 օրից յետոյ արդէն վերացրեց զինուորական դրութիւնը, որ այնպէս հասկանում էր երկրի ու մեր քաղաքացիական տրամադրութիւնների (հետ): Բայց այստեղ կառավարչական ուշադրութիւնից վրիպեց դարձեալ մի բան: Դուք գիտէք անշուշտ, որ երբ ռուսաց կառավարութիւնը վերացնում էր այս ու այնտեղ զինուորական դրութիւնը՝ երկրի կառավարութիւնը տեղափոխում էր գեներալ-նահանգապետին մի այլ վայր, ի նկատի առնելով, որ մարդկանց հետ միասին միշտ գոյութիւն ունեն անձնական, եսական, փառասիրական ձգտումները, եւ երբէք գերիշխողին չի կարելի թողնել նոյն վայրում, շատ հասկանալի վարչական ու հոգեբանական միտումներով: …

Բայց Գեն. Օսիփովին թողեցին Կարսի նահանգում, եւ այդ խանգարեց նրա հոգու անդորրութիւնն:

Ստանձնելով պաշտօնս եւ ներկայացնելով Երեւան վարչական շտատները՝ ես թախանձօրէն խնդրում էի վարձատրել աշխատանքը, ապահովել պաշտօնեայի վիճակը: Բայց մենք շարունակում էինք սաւառնել իդեալական մթնոլոր-

տում, եւ կարծում էինք, որ միկրոսկոպիկ ռոճիկները կը համեմուեն գաղափարական իմաստով: Այդ ակադեմիկ հաշիւը ի հարկէ խորտակեց, մարդկանց մեծամասնութիւնը կապուած է կեանքի հետ նիւթական միտումներով, եւ մեր գաւառները թափուեցին կեանքի վայելքին նախանձախնդիրները, իսկ ինտելիգենցիան, մեր ոսկեզօծ երիտասարդութիւնը գերադասեց կենտրոնը այն գաւառին՝ որի մասին երբեմն այնքան երազել ու մարտնչել է: Եւ իմ բոլոր դիմումները թէ մամուլի միջոցով եւ թէ մեր ականաւոր հասարակական գործիչներին աշխատակիցներ ուղարկել ինձ՝ մնացին ապարդիւն: Աւելի քան մէկ տարուայ ընթացքում ես ստիպուած էի հեռացնել, դատի տալ եւ նոյնիսկ բանտարկել աւելի քան 20 պաշտօնեաների այլեւ այլ աստիճանների, եւ այդ արշաւը չբարելաւեց դրութիւնը: Մարդիկ վարակուած են թալանելու, ապահովուելու՝ եւ ապա հեռանալու տենչով: Պաշտօնը կորցրել է իր վաղեմի նշանակութիւնը ու հմայքը, մարդկանց մէջ բթացել է երկիւղը դէպի քրէական պատիժը, եւ այդ մթնոլորդում՝ ոճիրը ստացել է տարերային կերպարանք: Եւ ես կարծում եմ, որ միայն վարչական եւ միայն դատաստանական գործելակերպն այդ առանցքում՝ անճար է: Ոճիրը պարփակում է իր մէջ քաղաքական, տնտեսական եւ իրաւական բացատրութիւններ, եւ այդ բարդ ու խճճուած պայմաններում է մեր օրերի քրէական տրամադրութիւնների գաղտնիքը:

Ես միշտ կարծում էի, որ օրինականութիւնն արդարադատութեան հիմունքն է, եւ ինքս դաստիրակուած լինելով հին ռեֆորմների դարագլխի մթնոլորտում՝ սովոր եմ պատկառելու դատարանի առաջ:

Դատարանը միշտ առաջնորդել է բոլոր յառաջադիմական տրամադրութիւնները, եւ դատարանի շուրջն են խմորուել մեր բոլոր ազատագրական ու հասարակական իդեալները: Եւ համակուած այդ գաղափարներով՝ ես մէկ տարուայ ընթացքում ուժգին բախել եմ բոլոր դռները, եւ եռանդալից պահանջել եմ ուղարկել նահանգը՝ դատաստանական գործիչներ: Դատարանը դաստիրակում է երկիրը, հետեւապէս նա պէտք է ազգայնացուած լինի: Բայց այդ կրթող ու բարձր հաստատութիւնը՝ պէտք է փակ լինի բոլոր թերուսների համար: Միայն եւ միայն այդ առանցքում՝ դատարանը կը լինի մեր սրբութեան սրբոցը:

Բացի խախտումն այս ակներեւ ճշմարտութիւնների՝ մեր գաւառական դատաստանական գործիչների շարքերը լցուեցին ոչ միայն թերուսներով, նախկին գրագիրներով, թարգմաններով՝ այլ եւ միայն ռուսախօսներով, եթէ չասենք ռուսներով: Դատական այդ կազմի առանցքում ադմինիստրացիան էլ պէտք էր գրաւէր իր պատշաճ տեղը, 10 տարուայ ընթացքում ադմինիստրացիան Կովկասում սովոր էր ակնածելու դատարանից: Համալսարանական ու առաջադիմական քննիչը եւ դատաւորը միշտ զսպել ու սանձահարել են ադմինիստրացիային, եւ այդտեղ է Ռուսաստանի 60-ական թուականների մեծ հմայքի եւ մեծ դաստիրակիչ իմաստը:

Եւ ես առաջի հայ նահանգապետը՝ իրաւունք ունէի պահանջելու, որ արդարադատութիւնն երկրում կերտէ իրաւաբան, համալսարանական հայը, եւ որ այդ ճշմարտութիւնն աւանդեն մեզ մեր մայրենի լեզուով: Եւ այսօր, տարի ու կէսի անյաջող այդ ուղութեամբ փորձից յետոյ՝ ես օգտւում եմ դէպքից նորէն շեշտելու, չի կարելի զրկել երկիրը արդարադատութիւնից, եւ այդ դատարանը պէտք է լինի մեզ բոլորիս պատիւ բերող բարձրութեան վրայ:

Երբ անգլիացիներից ինձ աւանդ թողած խորհուրդը լուծուեց՝ այդ խորհրդի շուրջը վխտող տարրը փութաց մի նոր նաւահանգիստ գտնել, եւ այդ առանցքում կազմակերպուեցին ազգային խորհուրդները: Կորցնելով քաղաքական նշանակութիւնն այնտեղ՝ այն մարդիկ, որոնք շատ լաւ էին զգում իրենց անիշխանութեան միջանցքում, շտապեցին կազմակերպել ազգային խորհուրդներ՝ ուր եւ տեղաւորուեցին: Այդ դիմակաւորուած ռուսները, եզդիներ եւ թուրքերը (եկուոր ատրբէյջանցիք)՝ շտապեցին իրենց ցանցը տարածել եւ նահանգում, հիմնելով գիւղերում ենթակոմիտէներ: Նոքա յոյս ունէին խառնուելու երկրի բոլոր գործերին՝ գէթ միջնորդ լինելով ժողովրդի եւ իշխանութեան մէջ, ընդունում էին ամէն տեսակի խնդիրներ ու գանգատներ, ինքնաբերաբար բարձրացնում էին այս կամ այն խնդիրը, ներդաշնակութեան մէջ մտան իրար հետ եւ նոյնիսկ փորձ եղաւ կոլլեկտիվ դիմումներ անել ինձ: Ես մեծ ուշադրութեամբ դիտում էի այդ կոմեդիան՝ եւ բոլոր միջոցները ձեռք առայ ձգելու ժողովրդի մեջ այդ խորհրդների նշանակութիւնը: Իսկ մինչ այդ, նրանք հեղեղում էին ինձ իրենց գրաւոր պահանջներով ու յայտարարութիւններով: Ես ոչ մի պատասխան չը տուեցի այդ դիմումներին, հրահանգեցի նոյն իսկ ենթակայ մարմիններին, բանտարկեցի գիւղական ոստիկանութեան մի քանի պաշտօնեաներին՝ որոնք իրենց իշխանութիւնը թողնելով ուղղակի յարաբերութեան մէջ մտան այդ խորհուրդների հետ: Իրենց բազմաթիւ գրաւոր դիմումներին ինձ, գավառապետներին, պրիստաւներին՝ ոչ մի պատասխան չստանալով, նոքա փոքր առ փոքր դադարեցին այդ ուղութեամբ աշխատելուց, իսկ երկիրը տեսնելով իշխանութեան վերաբերմունքը դէպի այդ «ընտրուած» մարդիկ՝ ի սպառ թեքուեց նոցանից: Եւ այդ խորհուրդները լուծուեցին բնական կերպով եւ չքացան մէկը միւսի ետեւից: Փորձեց կանգուն մնալ դեռ ռուս ազգային խորհուրդը: Դրսից եկած մի երկու հրեայ բոլշեւիկ գումարեցին Կարսում ներկայացուցչական ժողով, իրենք ընտրեցին, եւ երբ կատակերգութիւնը վերջացաւ՝ ես նոյն օրը ուղարկեցի ոստիկանապետին ցրելու ժողովը, ձերբակալեցի ընտրուածներին եւ քշեցի նահանգի սահմաններից: Բայց նոցանից երկուսը անցան Երեւան, բողոքեցին Ներքին Գործոց Մինիստրին, եւ վերադառնալով վերջինի համաձայնութեամբ Կարս՝ կազմակերպեցին այստեղ Մայիսեան աղմկալից բայց վերջին ցոյցը: Վերջում ազգային խորհուրդների երեք նախագահները պատիւ էին համարում ժամերով սպասել իմ նախասենեակում՝ եւ մեծ ջատակով կատարում էին մեր կոնֆիդենցիալ յանձ-

նարարութիւնները, ոչ առանց դրամական վարձատրութեան՝ իրենց խնամքին յանձնուած համայնքների մասին:

Այդպէս վերջացան այն խորհուրդները, որ հաւանութիւն ունէին թագաւորութեան մէջ թագաւորելու:

Այնուհետեւ հրապարակին բաւարարութիւն տալու համար եւ որպէս մի միջոց երկիրը մեր ձեռքում պահելու՝ ես կազմակերպեցի թուրքերի եւ եզդիների հոգեւոր կառավարութիւնը: Արեւելքը դեռ տակաւին ի հարկէ հաւատալիքների երկիր է, եւ այդ տիրող ու տակաւին իշխող դրութիւնը չի կարելի հաշուի չառնել երկիր կառավարելու բարդ խնդրում: Այդ մոլեռանդ, կարող, ազդեցիկ եւ խորամանկ կղերը մեր գանձարանից ռոճիկ ստանալով՝ այսպէս թէ այնպէս կապւում են մեր կառավարչական ղեկի հետ, եւ ինձ պէտք չէ ասել, որ ես վարւում եմ նոցա հետ այնպէս ինչպէս որ ցանկանում եմ:... Հանդէսներում նոքա պատիւ են համարում նահանգապետի շքախմբում լինել, իսկ օտարազգի հիւրերին դիմաւորելիս նրանք ջոկատով առաջ են տանում պետական միտումները: Չխախտելով նոցա կոչման իմաստը դէպի ծուխը եւ հոգեւոր իրաւասութիւնը՝ ես օգտագործում եմ նոցանից ինձ հարկաւորը պետական ուղութեամբ, իսկ նրանք միանգամայն հնարաւոր են համարում հաշտեցնել երկու դարաւոր սկզբմունք - երկինքը Աստծուն՝ իսկ երկիրը թագաւորին:

1918թ.-ին մեր նահանջից յետոյ՝ Կարսի նահանգը դարձաւ այն վայրը, որ թրքութիւնն աւետեաց աշխարհ էր համարում: Այստեղ էին Ատրբէյջանի, Բորչալուի ու Երեւանի նահանգի գաղթականութիւնը, տեղացիները անբաւարար գտնելով իրենց նախնի վայրերը՝ քոչել էին այլ գիւղեր, եւ այդպիսով երկրի քարտէսը կորցրել էր իր նախնի դէմքը, ու նոր խայտաճամուկ պատկեր էր ներկայացնում: Հայի բնակավայրը տիրել էին թուրքերը, եւ մի քանի տեղում մեծ դժուարութիւնների հանդիպեցինք՝ գաղթականութիւնն իրենց տեղերում բնակեցնելու խնդրում:

Բայց հայը դարձաւ ցնցոտիների մէջ եւ ուժասպառ: Նահանջը ոչնչացրեց ամէն բան. այրուեցին ու փչացան բոլոր գրաւոր տուեալները ազգաբնակչութեան քանակի մասին, այրուեցին բոլոր մատեանները, որ պարունակում էին հարկաւոր ստատիստիկական տեղեկութիւններ, կործանուեց ի հարկէ գիւղական համայնքների վարչական կազմը. իսկ այդ առանցքում թագաւորում էին միայն հրոսակախմբերը՝ որոնք իրանց շատ լաւ էին զգում այդ անարխիկ առանցքում:

Բնիկ հայերը վերադարձան հայրենիք ոչ բոլորը, որովհետեւ մէկ մասը մնաց Ռուսաստան, Հիւսիսային Կովկասում, բայց Կարսի նահանգը անցան թիւրքահայերի մեծ խմբեր, որոնք եւ փոխեցին երկրի ազգագրական դէմքը: Այդ խայտաճամուկ մթնոլորտում՝ ուր փոփոխուել էին ոչ միայն մարդկանց բարոյական հասկացողութիւններն, այլեւ չքացել էին հրապարակից եւ ֆիզիկական իրե-

ը, ուր միանգամայն խորտակուել էր կառավարչական մեքենան, ապարատը՝ այդ երկրում մենք կանչուած էինք ոչ միայն վերականգնելու պետականութիւնն, այլ ստեղծագործելու այդ իմաստով: Եւ այդ մեծ ու բարդ գործը պահանջում էր ոչ միայն տեսական ու գործնական գիտութիւն, այլեւ մեծ տակտ, մեծ շրջահայեացք եւ գործելու քաղաքագիտական ձեւ, որպէսզի պահպանուած լինեն երկրի ու պետութեան ներդաշնակ շահերը:

Այսպէս օրինակ, եթէ Երեւանի նահանգում զինակոչը կատարում է գաղտնի տուալների ու օրինականութեան շրջաններում՝ Կարսի նահանգում մենք չունենք այդ օժանդակիչ պայմանները: Ընտանեկան ցուցակները, եկեղեցիական մատեանները, ժողովրդի աճման եւ նուազելու տուեալները մենք չունենք. երկրի մեծագոյն մասը բորբոքման շրջանակումն է եւ ամէն մի գնացք բերում է մարդկանց եւ նոր խմբեր եւ մարդկանց այդ մեծաշարժման առանցքում՝ գրեթէ անհնարին է այդ իմաստով հաշուետուութիւնը: Այդ բոլոր բարդ ու տեսական օրէնքներով չնախատեսնուած պայմանները՝ աւելի քան դժուարին են դարձնում վարչական գործը երկրում, եւ մի աւելորդ անգամ գալիս են ասելու, որ երկիր կառավարելու խնդիրը ամենածանր ու ամենապատասխանատու խնդիրն է պետական իմաստի մթնոլորտում:

Գաղթականութիւնը թէ ներսի եւ թէ դրսի՝ վերադառնում է ցնցոտիների մէջ, առանց տնտեսութեան եւ ծայր չքաւոր:

Եւ նա գալիս է այն երկիրը՝ ուր մարդիկ պատերազմի ընթացքում հանգիստ են առել, ուր տնտեսութիւնը ոչ միայն չի խախտուել՝ այլ աճել է ի հաշիւ ուրիշների: Այդ տուեալներին եթէ աւելացնելու լինենք եւ ժամանակակից անիշխան վարդապետութիւնը, բոլշեւիզմի գիշատիչ քարոզները՝ մենք կը ստանանք այն բոլոր պայմանները, ուր ոճիրը, թալանը եւ բռնակալութիւնը պէտք է բռնկուէին: Բացի այդ՝ գաղտնիք չէ եւ այն, որ պետական հայեացք, պետական աշխարհայեցողութիւն մենք չունենք: Մեզանում կարծում են, որ Հայաստանը միայն հայերի համար է եւ ոչ թէ հաւասար բոլոր հայաստանցիների համար: Այդտեղից առաջ է գալիս անպատասխանատու տրամադրութիւն բռնանալու՝ եւ ոչ թէ կառավարելու, արդարադատութիւն կերտելու: Բացի իրերի եւ հասկացողութիւնների այդ մթնոլորտում՝ առաջին տեղն է բռնում տաճկահայութիւնը: Գրեթէ մի դար շարունակ ազատագրական սկզբունքների համար մարտնչելով՝ տաճկահայը տասնեակ տարիների ընթացքում գաղթել է, որից վերադարձել, շարունակ քայքայուել, եւ այժմ ի սպառ տարագիր անտեղ ու անտուն՝ ապրում է օրուայ սպասելիքներով: Եւ այս մի դար շարունակ կուտակուած եւ լճացած մաղձը, ջղայնացումը եւ վրէժխնդիր տրամադրութիւնը պայթելով՝ առաջ է բերում այն ոճիրը, որ այսօր տարերային բնոյթ է ստացել: Եւ թիւրքահայը լուծում է իր դարաւոր վրէժը իրան քայքայելու եւ տարագիր դարձնելու համար՝ բոլոր պարանոցների վրայ, լինի սա քուրդ, թե հայ…

Արեւելքը ոչ միայն մարդկութեան՝ այլեւ վրէժի հայրենիքն է, վրէժխնդրութիւնը մեզանում իրական հասկացողութիւն է, եւ մենք քաւում, սրբում ենք արիւնը արիւնով, թալանը ասպատակութեամբ, եւ հասկացողութիւնների այդ առանցքում՝ հաշտւում ենք եւ կեանք կոփում:

Ես ծանրացայ այդ բոլոր բացատրութիւնների եւ նկատողութիւնների վրայ՝ որպէսզի պարզեմ, թէ ինչ պայմաններում ես կոչուած էի պետական ապարատ ստեղծելու նահանգում: Այդ նիւթական եւ բարոյական փլատակների վրայ իրաւակարգ հաստատելու գործը ոչ այնքան հեշտ էր՝ ինչպէս կարծում են շատերը, եւ կառավարութիւնն ի դէմս Ձեր պ. Մինիստր՝ իր ապագայ անելիքների ընթացքում պէտք է հաշուի առնի կեանքի այդ հազար ու մի գծերը, որոնց խայտաճամուկ հաւաքածուն ինքը կեանքն է, մեր իրականութիւնը:...

Ամէն օր բազմատեսակ պաշտօններ թխելով՝ մենք անուշադրութեան մատնեցինք դատարանն, եւ այդ հաստատութիւնը փոխանակ առաջընթաց լինելու՝ քարշ է գալիս կառավարչական ապարատի յետեւից:

Արդարադատութիւն կերտելու նիւթական միջոցները այնքան չնչին են՝ եթէ չասենք աւելին, որ գործը ձեւականի է միայն վերածւում: Եւ այդ բոլոր պայմանների շնորհիւ է, որ երկիրը արդարադատութիւն չի տեսնում. դատաստանական քննիչը, որ երբեմն գաւառի ամենաահարկու մարդն էր՝ կորցրել է ի սպառ իր նշանակութիւնը, իսկ թէ որտեղ եւ ինչ է կատարածը՝ մենք արդէն մոռացել ենք:

Այդ բոլոր բազմատեսիլ մեծ ու փոքր պաշտօններում՝ ոճիրը սանձարձակուել է միանգամայն, եւ միամտութիւն կը լինէր ապաւինելու այս դէպքում միայն եւ միայն վարչական ուժերի վրայ:

Կեանքի քրէական կողմից դառնալով քաղաքացիական մասին՝ ես հարկաւոր եմ համարում նկատել այստեղ, որ դեռ անցեալ աշնանը ես դիմեցի կառավարութեան մի յայտարարութեամբ, որ ձմեռուայ ընթացքում մենք պէտք է պատրաստուենք, որպէսզի գարնանից մեծ թափով դիմենք շինարար աշխատանքի: Իմ այս միջնորդութիւնը յետագայ ամիսների ընթացքում՝ ես կրկնեցի մի քանի անգամ գրաւոր եւ հեռագիրներով, բայց մեր բոլոր այդ առիթով դիմումները շրջանառում էին միայն թղթի առանցքում, եւ մենք այս գարնան ու ամառուայ ընթացքում գրեթէ ոչինչ չարեցինք:

Կարսի նահանգը՝ Ռուսաստանում Լեհաստանից յետոյ առաջին տեղ է բռնում խճուղիների բազմութեամբ, բայց մենք չօգտագործեցինք այդ հարստութիւնը: Աւտոմոբիլների մեծաղմուկ գործը այս տարի ու կէս ժամանակի ընթացքում՝ շրջանառում էր միայն խօսք ու թղթի առանցքում: Հաղորդակցութեան ու Ձինուորական մինիստրութիւնների միջեւ այդ աւտոմոբիլները կռուածաղիկ էին, բայց մինչեւ շարունակւում էր այդ սկզբունքային ու գերիշխանութեան ձգտող այդ վէճը՝ աւտոմոբիլային գործը ատրոֆիայի էր ենթարկւում ավելի ճարպիկ ու ակնթարթ բաց չթողողների ջատագով...Իսկ երկիրը մնում էր առանց

հաղորդակցութեան միջոցների: Կարսից Կաղզուան՝ օրինակ, գնալու համար պէտք էր անվերջ սպասել պատեհ միջոցով, փոստի շրջանառութիւնը պաղատմունքի խնդիր էր: Իմ բազմաթիւ զեկուցումներն ու հեռագիրները զեմսկի փոստի եւ Մերդենեկի ձիաքարշի մասին՝ շրջանառում էին միայն թղթի առանցքում: Եւ դեռ անցեալ աշնանը ներկայացնելով Երեւան այդ առթով նախահաշիւներ՝ ես պատիւ եմ ունեցել գրելու, որ ճանապարհների վրայ երթեւեկութիւն ստեղծելով մենք կեանքի կը կոչենք երկիրը, եւ այդպիսով իրաւակարգ կը ստեղծենք: Բայց այսպէս թէ այնպես՝ մենք ձգձգեցինք գործը մինչեւ այսօր եւ զրկեցինք երկիրը տարրական յարմարութիւնից, հետեւապէս վտանգեցինք եւ իրաւակարգը:

Անցնելով երկրի վերաշինութեան այլ խնդիրներին՝ ես հարկաւոր եմ համարում մի երկու խօսք էլ ասելու մեր հեռագրական ցանցի մասին: Ռուսները թողեցին մեզ հարուստ հեռագրացանց եւ շատ ուղութիւններով. մէկ հեռագրաթելի փոխարէն՝ մենք ունէինք վեցը: Ինձ պէտք չէ ասել, որ յեղաշրջումից յետոյ աշխատանքը կանգ առաւ, եւ այդ տրամադրութիւնը դեռ շարունակւում է: Տարի ու կէս ժամանակամիջոցի ընթացքում՝ ես տասնեակ գրութիւններով եւ նոյնչափի բազմաթիւ հեռագիրներով բախել եմ այդ առիթով բոլոր դռները, շարունակ պահանջել եմ վերանորոգել հեռագրացանցը, բայց իմ այդ բոլոր պահանջները նոյնպէս շրջանառել են միայն թղթի առանցքում: Մենք օրերով գրեթէ ամէն շաբաթ հեռագրական կապ չունէնք Երեւանի, Սարիղամիշի, Կաղզուանի, Արդահանի միջեւ, իսկ վերջինի հետ ընդմիջումը որքան եւ տարոօրինակ թուայ նոյնիսկ եւ մեր օրերի համար՝ այս ամառ տեւեց երկու շաբաթ: Այդ առիթով ես տասնեակ հեռագիրներ ուղարկեցի, եռանդալից բողոքեցի ու սպառնացի՝ բայց սայլը դարձեալ իր տեղում մնաց: Եւ ինձ պէտք չէ ասել, որ իրաւակարգը առանց դատարանի, առանց հաղորդակցութեան միջոցների, առանց փոստի եւ շաբաթների ընթացքում առանց նոյնիսկ հեռագրական պատի՝ դա մի տեսական հաղորդակցութիւն է եւ ոչ գործնական: …

Քաղաքականութիւնը չի կարող յենուել միայն սուիններ եւ միայն ադմինիստրատիւ միջոցների վրայ. նա պէտք է պարփակուի այն բազմաթիւ պայմանների առանցքում՝ ուր ինքը կեանքն է, իր խաղաղ ու շինարար պահանջներով:

Անցնելով մեր գործունէութեան միւս ճիւղերին՝ աղի արդիւնաբերութեան, խոտի ամբարման գործին, մթերքներ ձեռք բերելու խնդրին՝ ես կարծում եմ, որ եւ այդ ճիւղերում գործը չէր կրում պետական բնոյթ: Այս հաստատութիւնների բազմաթիւ պաշտօնեաները անվերջ գնում էին Երեւան ու գալիս, աւելի խօսում եւ աղմկում՝ ընդհանուր շփոթ առաջ բերելով եւ ոչ զարգացնելով պետական տնտեսութիւնը: Այդ բոլոր հաստատութիւնները անկոնտրոլ ու ինքնավար զբաղուած էին աւելի ի հաշիւ պետական գանձարանի՝ իսկ երկիրը եւ պետութիւնը չկարողացան շոշափել այն սպասելիքը, որ նա իրաւունք ունէր պահանջելու նոցանից: Մենք չենք տեսնում ոչ այն աղը, ոչ այն խոտը եւ ոչ այն բազմազան

մթերքները, որ պէտք է բարձրացնեն մեր կուրսը, հետեւապէս եւ մեր կացութիւնը: Մենք գիտենք միայն, որ այդ բոլոր խնդիրների շուրջը տեղացել է հեռագիրների տարափը միայն, իսկ սայլը մնացել է իր տեղում, մենք անընդունակ եղանք արտահանելու՝ եւ սպառում էինք մեր ամբողջ եռանդը մեր պահանջների, դրսից սպասելիքների համար: Այդ անարժէք ու անգործնական աղմուկը ոչինչ չէր տալիս ի հարկէ երկրին, իսկ շոշափելի գործունէութեան բացակայութիւնը լրացնելով ժամանակակից կեանքի բոլոր բացասական կողմերը՝ միայն երերում էր երկրի իրաւակարգը:

Մեր անտառները, մեր պետական տնտեսութեան այդ մեծ հարստութիւնը՝ նոյն քաոսն էր: Արդէն ձմեռ է, բայց երկիրը վառելու փայտ չունի, հազարաւոր շինութիւններ՝ որոնց վերականգնելը կախուած է փայտեղենի հետ, անվերջ սպասում են, իսկ բազմաթիւ լիազօրները գնում եւ գալիս են, աղմկում են՝ բայց ոչ շինում են եւ ոչ աշխատում: Մեր օրերի երեւի շատ բնորոշ գիծը, որ ոչ պակաս քաոս է ստեղծում երկրում, երերում իշխանութիւնը, կարգ ու կանոնի իմաստը եւ այդպիսով իշխանութիւն ստեղծում՝ այդ այն է, որ մենք ենթակայ պաշտօնեաներ չենք ճանաչում: Մի որեւէ պահեստապետ, կամ նմանօրինակ մի պաշտօնեայ՝ իր դիմումները ուղում է ոչ այլ մի տեղ, այլ միայն մինիստրին, եւ նոյնիսկ Մինիստր-Նախագահին:

Ես չտեսայ մի մարդ, որ իր պահանջներով դիմէր ըստ պատկանելոյն, գիւղական, քաղաքային ու գաւառական իշխանութեանը. նոցա մենք հաշուի չենք առնում, եւ մեր արժանաւորութիւնից ցածր ենք համարում նոցա հետ խօսելու: Նուազագոյն դէպքում՝ մենք դեռ մի կերպ հաշտւում ենք նահանգապետի հետ, բայց ընդհանրապէս, բացի մինիստրից, Մինիստր-Նախագահից ու պարլամենտից՝ ոչ ոքի ճանաչել չենք ուզում: Մի օր ես հարցրեցի գաւառական մի քաղաքագլխի, - ի՞նչ արեցիք մեշոկների մասին, - հեռագրեցի Մինիստր-Նախագահին, պատասխանեց ինձ քաղաքագլուխը:

Մեր օրերի այս բնորոշ գծերը նոյնչափ զաւեշտական են՝ որչափ եւ ողորմելի ի հարկէ, բայց խնդիրը նրանումն է, որ նրանք երերում են երկրի իրաւակարգը եւ քաոս ստեղծում այնտեղ՝ ուր ամէն մարդ պէտք է իր տեղը ճանաչի: Անտես առնելով մի շարք պաշտօնեաներ՝ որոնցից ամէն մէկն ունի ոչ միայն իր պարտաւորութիւնը, այլ եւ իր բաւական մեծ իրաւունքներն ու իրաւասութիւնը, եւ դիմելով ուղղակի մինիստրին՝ մենք ձգում ենք երկրի աչքում նոյն մինիստրի եւ իշխանութեան համարումը, եւ անիշխան տրամադրութիւն ենք ստեղծում մեր շուրջ: Այդօրինակ արհամարական վերաբերմունքը դէպի մի շարք պաշտինեաներ՝ խախտում է պետական սիստեմը, եւ բացասօրէն դաստիրակում մարդկանց դէպի օրենքը եւ նրա ի կատար ածողները: Եւ ես կարծում եմ, որ դեմոկրատիկ սկզբունքները տակաւին իրաւունք չեն տալիս մեզ ձգտելու այն իշխանութեան համարումը, որ յանուն օրէնքի կոչուած է ծառայելու երկրին, լինի նա

պրիստաւ կամ մինիստր միեւնոյն է՝ նոցանից ամէն մէկը գործում է յանուն հանրապետութեան օրէնքի:

Անցնելով նահանգի բժշկական, անասնաբուժական եւ սանիտարական դրութեան՝ ես սրտի մեծ ցաւով պէտք է նկատեմ, որ նա եւս բացառութիւն չի կազմում երկրում գործող մարմինների շարքում: Եթէ ռուսաց իշխանութեան օրով նահանգական բժիշկն ու անասնաբոյժը միայն չինովնիկ էին՝ մենք այդ չինովնիկներին էլ չունենք: Հայ բժիշկը, որ երբեմն տարագրել է մեր ազատագրական իդեալները՝ միանգամայն երես է դարձրել հայրենի գաւառից, եւ այսօր բոլոր նահանգում գաւառական բժիշկների տասնեակ ազատ տեղեր կան: Գալով անասնաբոյժերին՝ բաւական կլինի ասել, որ ամբողջ նահանգի համար մենք ունենք միայն մի անասնաբոյժ, այն էլ… ոչ հայ: Տիրելով երկիրը՝ մենք պէտք է քաղաքացիներին ակօսենք այդ վայրը, բայց միթէ հնարաւո՞ր է այդ մեծ աշխատանքը հատուկենտ բարձր ուսում ստացած մասնագէտներով… Գիւղը ոչ մի հասկացողութիւն չունի բժշկական օգնութեան մասին, տարափոխիկ հիւանդութիւնները հնձում են մարդկանց անարգել: Դեռ անցեալ տարի՝ քաղաքական միտումներով մենք ուզեցինք կապել մեզ հետ քրդութիւնը, ծրագրուել էին քրդերի համար յատուկ դպրոցներ, բժիշկներ, դեղատուն՝ բայց այդ բոլորը մնաց ցանկութիւնների առանցքում միայն. հայ բժիշկը հրաժարուեց գաղափարական գործից՝ նախադասելով կենտրոնում «վիզիտներ» ստանալ եւ անպատասխանատու պարապել հայ ժողովրդի բախտով: Երբ մենք պէտք է գրաւէինք Օլթիի գաւառը՝ ես ամէն միջոցներ ձեռք առայ մի բժիշկ ուղարկելու այնտեղ, եւ ի հարկէ անպատճառ հայ՝ ի նկատի ունենալով որ անցնելով բացառապէս քուրդերով ու թուրքերով բնակեցրած մի վայր, մենք պէտք է պատուաստէինք մեր պետականութիւնը: Բայց հայ բժիշկը լսել չուզեց այդչափ «հեռու» գնալու մասին, եւ ես ստիպուած էի ընդունել մի ռուս բժիշկ:

Ծայրագաւառների վարչութեան, ադմինիստրացիայի համար, նոյնպէս եւ դատաստանական հիմնարկութիւնների համար՝ մարդիկ չենք գտնում, բոլորը հարցնում են նախ կեանքի ինչ յարմարութիւն ունի պաշտօնատեղին եւ…ռոճիկի չափը, եւ այդպիսով մենք մարդ չենք գտնում նոյնիսկ այնպիսի պաշտօնեաների համար՝ ինչպէս գաւառապետ հաշտարար դատաւորը: Գալիս են միայն եւ միայն գիշատիչ բնազդներով օժտուածները, գալիս են կեղեքելու, ապահովելու իրենց՝ եւ հեռանալու: Չգիտեմ ի՞նչ է մտածում այդ մասին կենտրոնական կառավարութիւնը՝ բայց ես կեանքի բովում գտնուելով եւ այդ կեանքը ուշադիր ուսումնասիրած լինելով աւելի քան 30 տարուայ ընթացքում, երկրի դրութիւնը կատաստրոֆիկ եմ համարում: Եւ այդ դրութիւնը աւելի հաստատ է նրանով, որ մարդկանց մէջ բթացել է պատասխանատուութեան, ամօթի եւ երկիւղի զգացմունքները: Ապրուստի միջոցներ որոնելով՝ եւ ոչ ի հարկէ աշխատանքի ձգտելով, մարդիկ, նոյնիսկ նոցա տափակները՝ արհամարում են փոքրիկ եւ միջակ պաշտօն-

եաների. բոլորն ուզում են կենտրոնական տեղը գրաւել՝ ծաղր ու զավեշտ դարձնելով պետականութիւնը:

Ընդհանուր կացութեան պատկերը լրացնելու համար՝ հարկաւոր եմ համարում մի երկու խօսք էլ ասել փոստ-հեռագրական գործունէութեան մասին: Այդ հաստատութիւնը ամէնուրէք մի բազար, հրապարակ է՝ ուր դուք կարող էք գտնել բոլորին ում որոնում էք. այստեղ գալիս են բոլոր պետական ու մասնաւոր նորութիւններ իմանալու՝ իրենց մասնաւոր յանձնարարութիւնները այս ու այն քաղաքը ուղիղ գծով հաղորդելու համար: Իմ բազմաթիւ պաշտօնական հեռագիրները, թէ ինձանից ուղղուած եւ թէ ինձ ուղարկուած՝ կորչում են, կորչում են նոյնիսկ մինիստրների հեռագիրները, եւ նոցա անունով ուղարկուածները:

Եթէ այդ վիճակում են բարձր պաշտօնական անձանց կարեւորագոյն հեռագիրները՝ կարելի է երեւակայել մասնաւոր մարդկանց դրութիւնը: Փոստ-հեռագրատունը բազար անուանելով՝ ես պէտք է նկատեմ, որ նրան բազար են դարձնում ոչ այնքան մասնաւոր մարդիկ՝ որքան մեր բազմաթիւ պաշտօն եւ իրաւունք ունեցողները: Իր պաշտօնի ու կոչման զրահի տակ՝ հեռագրատունը նա իր պապոնց անունն է համարում, եւ որտեղ ոչ իշխանութիւն է ճանաչում եւ ոչ մեծ: Դժուար է հետեւապէս այդ առանցքում իրաւակարգ պահպանել ու պահանջել... պաշտօնեայից ճշտութիւն եւ օրինապահութիւն: Նահանգապետը դիտմամբ միշտ խուսափել է հեռագրատուն գնալու՝ որպէսզի օրինակ լինի կարգի, բայց ի հարկէ մի ձեռքը ծափ չի տալիս:

Անցնելով քաղաքացիական գործունէութեան մեր միւս ճիւղերին՝ պէտք է յիշել եւ պետական կալուածների կառավարիչին: Որպէս եւ միակ անասնաբույժը նահանգում՝ նա եւս իր հոգսերն եւ իրաւունքները պէտք է տարածի ամբողջ նահանգի վրայ: Թէ ո՞վ է այդ կառավարիչը եւ թէ ի՞նչ է անում՝ երկիրը չգիտէ ի հարկէ. մի բան միայն ինձ համար անվիճելի է, նա ոչ մի հասկացողութիւն չունի նահանգի տափարակի, լեռնոտ մասերի մասին, հողատիրական ձեւերի եւ հողից օգտուելու պայմանների մասին. տեղեկութիւն չունի երկրի հռչակաւոր արօտների մասին, եւ երեւի ինքն էլ չգիտէ ինչի համար է ուղարկուած: Ռուս իշխանութեան օրով էլ կային այդ պաշտօնեաները, նոքա էլ քրդերին ծախում էին 200 ռուբլով ամբողջ Արարատը, եւ քրդերը հաւատում էին այդ ծայր ու մեծ իրաւունքներին եւ զարմանում, որ այդ փոքր գումարով ձեռք են բերել մեծակշիռ Մասիսը, բայց այդ մարդիկ գոնէ մրոտում էին թղթերը, աղմկում, ինչ որ հաշիւ ու ստատիստիկ տեղեկութիւններ ներկայացնում եւ աշխատանքի գոնէ իլյուզիա ստեղծում, բայց մենք այդ էլ չունենք եւ ակամայ ստացւում է մեր օրերի բնորոշ տպաւորութիւն - հողերի կառավարիչը իր համար է միայն... Այդպէս ողորմելի է մեր երկրի տնտեսական այն առանցքը՝ որի վերայ գաւառը տրամադիր է յառելու իր ամբողջ էութիւնը:

Գաղափարի ու առաջադիմական ձգտումների խմորումը մնացել է միայն դպրոցական աշխարհում, եւ այդ միակ փարոսն է, որի շուրջը դեռ աղօտ կուտակւում են մեր ստեղծագործական ուժերը: Շատ սուղ միջոցներով՝ մեր ուսուցիչը տանում է դեռ իր խաչը, եւ իրաւունք է տալիս երկրին կարծելու, որ այդտեղից կը ծաւալուի մեր քաղաքացիութիւնը: Եւ եթէ կեանքի միւս ասպարէզներում եռում են կիրքը, փառասիրական եւ նիւթական միտումները՝ կրթական անդաստանում մարդիկ շարունակում են յափշտակուել կեանքի ակադեմիկ խնդիրներով, եւ յամառ առաջ են գնում դէպի բարին, գեղեցիկը եւ լոյսը: Բայց այն միջոցները, որ տրուած են կրթական գործի համար՝ դա մեր բիւջէյի այն մինիմալ մասնիկն է, որ աւելի ձեւական բնոյթ ունի, քան թէ էականը, եւ ակամայ յիշեցնում է այն վերաբերմունքը, որ ունէր ռուս կառավարութիւնը դէպի գաւառը: Երբ մի երկու որ առաջ Մինիստր Վրացեանի եւ Բաբալեանի հետ մենք շրջում էինք նահանգը՝ մի շարք գիւղերում, ուր ժողովուրդը աղու հացով դիմաւորեց կառավարութեան ներկայացուցիչներին, վերջիններին հարցին, թէ ի՞նչ կարիքներ ունի համայնքն՝ ամէն տեղ ստացուեց միատեսակ պատասխան - ուսումնարան ենք խնդրում… Եւ դա այն նուազագոյն պահանջն է, որ անում էր իրաւատէր երկիրը: Պէտք չէ ինձ ասել ի հարկէ, որ լսելով այդ համեստ ու տարրական խնդիրը՝ մենք լաւ չզգացինք մեզ…

Երկրի կառավարչական այդ ընդհանուր եւ գլխաւոր խնդիրներից անցնելով պետական սիստեմի իմաստին՝ ես կը ծանրանամ այն քաղաքականութեան վրայ, որ ես վարում էի նահանգում եւ որ հաւանութիւն էր գտել իշխող քաղաքական կուսակցական ու կառավարութեան կողմից, անջատ իմ ինդիւիդու-ալ զգացմունքներից որպէս նահանգապետ՝ ես տեսնում էի առաջ ազգագրական մի խայտաճամուկ կալեյդոսկոպ, ուր մարդիկ կապուած էին հողին ու ջրին դարաւոր անքակտելի կապանքներով: Աշխարհի եւ կեանքի այդ հնագոյն անիւի շուրջը՝ պատմութիւնը կուտակել է բազմաթիւ ընդհանուր շահեր, տնտեսական կապեր, ընդհանուր եւ նուիրական սովորութիւններ, ու համանման ճաշակ: Եւ այդ բազմատեսիլ առանցքում առաջ է եկել առանձնակի հոգեբանութիւնը սովորութիւնների, ճաշակի, հակումի եւ հնչիւնների այն անտեսանելի ընդհանուր ցանցը, որ կազմում է մարդկանց վայրի հետ, եւ հայրենի երկրի քաղցրութիւն ստեղծում: Ես տասնեակ տարիների ընթացքում զբաղուել եմ վարչական գործերով, եւ շատ հետաքրքրուել, թէ ի՞նչ է պէտք երկիր կառավարելու համար, եւ թէ ինչպէս պէտք է կառավարել այդ երկիրը:

Տարիների ընթացքում ուսումնասիրելով գաւառական կեանքը՝ ես ամէն օր դարձեալ մի ապացոյց էի գտնում, որ միայն այդ գործելակերպի առանցքում հնարաւոր է ուժեղ ու արդար պետականութիւնը: Եւ ես մեծ բաւականութեամբ դիտում էի, թէ ինչպէս այդ երկիրը՝ ի դէմս այդ քրդերի, հայերի, թուրքերի, ասորիների, թուրքմենների եւ կարափափախների՝ սիրելով այդ վերաբերմունքը եւ

մեծ հաւատ տածելով, գնում էին այդ «Հախ ու արդար դիւանի» յետեւից: Եւ երեսուն տարի այդպէս գնալով՝ ես չէի սխալւում:

Արեւելքը ցոյցի (....) եւ շուքի աշխարհ է, եւ բոլոր իշխողները օգտագործելով երկրի այդ տրամադրութիւնը՝ յենուել են այդ հակման վրայ, եւ այդ առանցքում տիրել եւ կառավարել են: Ստանձնելով պարտաւորութիւններս մի երկրում, ուր 200 հազարն օտարազգի է, ես առաջին օրուանից շոյեցի մարդկանց այդ թոյլ կողմը, պաշտօններ, ուսադիրներ տուեցի ականաւոր, ազդեցիկ մարդկանց՝ երկրին մատնանշելու համար, ես նոցա կիսապաշտօնական յանձնարարութիւններ էի տալիս: Եւ ես տեսնում էի, թէ ինչպէս դէպի այդ, դէպի այդ ունայն թիթեռնիկները թեքուեց երկրի ամբողջ ուշադրութիւնը: ... Բայց եթէ իւր ժամանակին երկիր կառավարելու գործում այդ անցողական գործելակերպը կենտրոնական տեղ էր գրաւում մեր բարդ ու առանձնակի օրերում՝ միայն այդ ուղիները բաւական չէին: Կեանքի յարմարութիւնները եւ առհասարակ քաղաքացիական տրամադրութիւնն արդէն շատ զբաղեցնում են գաւառը, եւ երկիրը հակուած է գնալու այն կառավարութեան հետեւից, որ գալիս է բաւարարութիւն տալու նորա այդ պահանջներին: Սկզբից եւ եթ, իմ բազմաթիւ զեկուցումների մէջ մատնանշելով այդ դրութիւնը՝ ես պատիւ եմ ունեցել գրելու, որ քաղաքական զառանցանքներ մեր գաւառում չկան, եւ որ հող ու ջուրը, կեանքի տնտեսական հոգսեր էին միայն հետաքրքրում մեզ: Եթէ՝ զեկուցել եմ ես, մենք կարողանայինք զբաղեցնել երկրիը այդ իմաստով, եկուոր քաղաքական դաւերը կը չքանային ինքնըստինքեան, եւ մենք կը տիրէինք երկիրը առանց բռնի ուժի եւ առանց սուինների:

Բայց միեւնոյն ժամանակ երկրի հոգեբանութիւնը նկատի առնելով, եւ վորովհետեւ երկիրը սովոր է իրաւունքը զէնքի շառաջման մեջ տեսնելու՝ ես միջնորդեցի զինուորական զբօսանք կազմակերպել նահանգի այն վայրերը, ուր օսմանեան, ատրբէյջանեան խմորումների համար աւելի պատրաստ հող կար: Բայց հենց այստեղ առաջ են գալիս բացառապէս անձնական բնոյթ ունեցող բարդութիւնները՝ որոնք աւելի քան մէկ տարուայ ընթացքում զբաղեցնում են թէ վարող շրջանները եւ թէ հասարակութիւնը:

Եւ այս յուշագրի սկզբում ես նկատեցի, որ վերացնելով երկրում զինուորական դրութիւնը՝ կառավարութիւնն աչքաթող էր արել, որ երեկուայ միահեծան իշխող, այսօր այդ առանցքում իրաւազուրկ մնալով նոյն վայրում՝ չէր կարող միանգամայն անտարբեր լինել դէպի կատարուած փաստը: Սկզբունքները անառատ են միայն որպէս ակադեմիկ հասկացողութիւն, իսկ եթէ այդ իդեալները իջնում են այնտեղ, ուր աշխարհի սկզբից խօսում են մարդկային միտումներն եւ կիրքը՝ այդտեղ արդէն այդ գաղափարները երերում են եւ առաջ է գալիս եսը, իր բազմատեսիլ վարիանտներով: Այդպէս է երկրի բնոյթը աշխարհում:

Զինուորական իշխանութիւնն ի դէմս ի հարկէ անհատների՝ աշխատեց ապացուցանելու, որ Կարսի նահանգը կարող է գոյութիւն ունենալ միայն բռունցքով: Եւ նա ոչ մի միջոցի առաջ կանգ չառաւ խառնուելու երկրի քաղաքացիական, վարչական գործերին, հաւակնութիւն ունենալով թելադրելու կառավարութեանը իր քաղաքականութիւնը: Ինձ պէտք չէ ասել, որ այնտեղ ուր զինուորականը սկսում է պարապել քաղաքականութեամբ՝ թուլանում է զօրական կորովը եւ ստեղծւում է մի մթնոլորտ, ուր բոլորը խօսում են, բոլորը կարծիքներ են յայտնում, բոլորը քննադատում են, թելադրում՝ բայց ոչ ոք աշխատել չի ուզում: Հազիւ թէ կարիք լինէր բացատրելու, որ իրերի այդ առանցքում խմորւում է միայն պարտաւորութիւնների կազմալուծում, եւ երկրի իրաւակարգը ուժգին երերւում է: Կողմնակից լինելով երկրի քաղաքացիական նուաճման, եւ անընդհատ պահանջելով, որ մենք շտապենք մեր շինարարութեամբ՝ ես գտնում էի միաժամանակ, որ մենք պէտք է ցոյց տանք մեր բռունցքը մեր լեռներում, բայց ոչ գործադրենք: Արեւելքը սովոր է խոնարհուել բռունցքի առաջ, եւ ոյժը, իրաւունքի էմբլեման՝ նշանաբանն է եղել միշտ: Այդ միտումներով եւ ի նկատի առնելով թուրք-թաթարական մեր օրերի դաւերը՝ ես դեռ աւելի քան մի տարի առաջ պահանջեցի զինուորական զբօսանք կատարել մեր լեռներում, ուր երաժշտութիւնը պէտք էր կատարեր մեր քայլերգը, եւ մենք ի ցոյց ձորեր՝ պէտք է բերէինք մեր զրահը: Միանգամայն ներդաշնակ երկրի հոգեբանութեան հետ՝ այդ գործելակերպը կը ստեղծէր ուժեղ պետական հմայքը, Ատրբէյջանի ինտրիգները կը չքանային ինքնըստինքեան, եւ այդ զրահի տպաւորութիւնը կ՛ամրապնդէր երկրի իրաւակարգն, եւ մարդիկ անձնատուր կը լինէին խաղաղ աշխատանքի: Բայց այդ ձեռներեցութիւնը ինձ էր պատկանում՝ եւ տեղիս հրամանատարութիւնը ձեռք առաւ բոլոր միջոցները: Վերջապէս իմ 17 այդ առիթով գրաւոր եւ հեռագրական դիմումից յետոյ՝ տեղիս հրամանատարութիւնը ստիպուեց կազմակերպելու իմ պահանջած զբօսանքը: Բայց նրան չէր հետաքրքրում ի հարկէ գործի իմաստը, նրան պէտք էր օգտուել առիթից՝ երերելու երկրի հանգստութիւնն ու իրաւակարգը, եւ մի աւելորդ անգամ կրկնելու, որ պէտք է զինուորական հեգեմոնիա եւ ոչ քաղաքացիական դրութիւն:

Երկաթուղու գիծը ճիշտ է, մաքրուեց թրքութիւնից՝ բայց թուրքերն անցան լեռները զինուած, կողոպտուած ի ծայր … եւ վրէժխնդիր: Թալանն այդ օրերում առասպելական էր, պաշտօնական դիմակի տակ՝ մարդիկ գալիս էին կեղեքելու եւ հարստանալու, եւ ինձ պէտք չէ ասել, որ այդ առանցքում խախտւում էին պետական հիմունքները, եւ իրաւակարգը արմատօրէն կազմալուծւում: Կրկնւում էր մի պատմական տեսիլ-զուարճութիւն եւ հաց՝ եւ այդ մթնոլորտում խօսք չէր կարող լինել պետական վերաշինութեան մասին: Ի զուր էի ես իմ բազմաթիւ այդ առթով զեկուցումներում կարգի կանչում մեր սանձարձակ տրամադրութիւնը, ի զուր էի ես արտակարգ դատաստանական քննութիւն պահանջում - թալանի

տենչը մի տարերային բռնկումն էր՝ որի առաջ անզօր էին մարդիկ իրենց սկզբունքներով ու դատաստանական պատգամներով: Բայց շատ բնորոշ է, որ ալան թալանի առանցքում, ուր տանող-տանողի էր՝ Աղեքսանդրապօլի վագզալում ինչ որ քաղաքագլխների ու զօրավարների մասնակցութեամբ վճռւում է Կարսի նահանգի Աղբաբա գաւառամասը կցել Աղեքսանդրապօլի գաւառին: Եւ մեր օրերի համար ոչ պակաս հետաքրքիր է, որ այդ մեծ ու երկրի համար նշանաւոր խնդիր լուծելիս՝ Աղեքսանդրապօլի վագզալ հեղինակաւոր հաղորդակցութիւնը, գէթ ընդունուած քաղաքավարութիւնը պահպանուած լինելու՝ հարկաւոր չհամարեց Կարսի նահանգապետի կարծիքը այդ առթով լուծելու, եւ ինձ տեղաւորեցին Մինիստրների խորհրդի այդ առիթով որոշման մասին, միայն յետոյ ես լսեցի, որ Աղեքսանդրապօլի վագզալի խորհրդակցութիւնը ռազմաբեմում վճռելով այդ քաղաքացիական խնդիրը՝ ի նկատի ունէր թուլացման Աղբաբայի թրքութիւնն, եւ զեմսկի գաղափարներ պատուաստել այդ տարածութեան վրայ: Եթէ ռուս իշխանութեան օրով աւելի քան 40 տարուայ ընթացքում Աղբաբան Կարսի նահանգի սահմանումն էր՝ այդ ունէր իր հիմնաւոր պատճառները: Բացի առանձնայատուկ տոպոգրաֆիկ պայմանների՝ Աղբաբան կապուած է Կարսի նահանգի հետ տնտեսական, արդիւնաբերական ու վարչական կապերով, որոնք կոփուել եւ կերպարանք են ստացել տասնեակ տարիների տարածութեան վրայ: Այդ բնական սահմաններում՝ ուր Ախուրեանը միշտ բաժանել է Աղեքսանդրապօլը Կարսից, կեանքը տաշել է իր հորձանքները, եւ դժուար է մի տեսական ակտով փոխել դարաւոր ընթացքը: Այսպէս թէ այնպէս՝ Աղեքսանդրապօլի վագզալի խորհրդակցութիւնը չլուծեց խնդիրը: Աղբաբան առանձնացաւ ավելի քան երբ եւ իցէ, եւ Աղեքսանդրապօլի իշխանութիւնը նոյնքան տեղեակ է Աղբաբայի անցուդարձին՝ որքան ես Կարսի կեանքից: Գալով այն յոյսերին, որ ունէին զեմսկի գաղափարների ազդեցութեան վրայ՝ ես կարծում եմ, որ այդ զեմստվոն դեռեւս պէտք է ձեւ ու կերպարանք ստանայ Աղեքսանդրապօլում եւ ապա որպէս պատուաստ՝ տարուի Աղբաբայի որջերը: Թէ ի՞նչ է այդ զեմստվոն այդ Աղեքսանդրապօլում՝ մենք չենք վիճի կարծում եմ, որ դորա մասին այժմ երկու կարծիք չի կարող լինել: Մեր օրերին դա մի եքսպերիմենտ է քաղցր եւ հեռաւոր երազների... Մնում է խնդրի վարչական կողմը - բռունցքում պահել Աղբաբան: Բայց չէ՞ որ այդ էլ կարող ադմինիստրատիւ ապարատի հարց է: Եւ այդպէս, որ կողմից էլ մօտենալու լինենք Աղբաբան Կարսի նահանգից անջատելու խնդրին՝ մի բան միայն անվիճելի կը մնա - Աղբաբան առանձնացաւ ի սպառ, վարչական կապը նրա հետ դարձաւ աւելի փոքր քան նոմինալ: Գալով նրա վրայ բարոյական ազդեցութեան հարցին ի դէմս զեմստվոյի՝ ես կարծում եմ, որ դա մի ուտոպիա է, եթէ չասենք զառանցանք, որի մասին լուրջ խօսել անգամ չարժէ:...

Այդպիսով ինչպէս տեսնում էք, իմ պահանջած զինուորական զբոսանքը փախանակ ամրապնդելու մեր պետական համարումը եւ ուժեղ իրաւակարգ ստեղծելու՝ միանգամայն երերեց այդ գրութիւնը: Բացի այդ, նա գրգռեց մարդկանց գիշատիչ բնազդը, թուլացրեց պետական պաշտօնէութեան առաջ առանց պաշտօնէութեան մէջ առանց այդ էլ երերուն պարտաճանաչութիւնը:

Դառնալով նահանգի միւս քաղաքացիական աշխատանքներին՝ ես հարկաւոր եմ համարում կանգ առնել Օլթիի գաւառի գրաման վրայ: - Այդ խնդիրը ոչ ռազմական՝ այլ միայն քաղաքական է: Եթէ դուք աչքի անցնելու լինէք աւելի քան մի տարուայ ընթացքում այդ առիթով գրառած իմ զեկուցումները՝ Դուք կը տեսնէք, որ ես երկար բանակցել եմ այդ առիթով Օլթիի ազդեցիկ ջոջերի հետ, եւ հերկել եմ պէտք ուղիներ՝ այդ վայրը մեր սահմաններին կցելու համար: Բայց այստեղ էլ ես հանդիպեցի նոյն խոչընդոտներին: Տեղիս զինուորական իշխանութիւնը հաւակնութիւն ունենալով ինքը երկրի քաղաքականութիւնը վարելու՝ փոխանակ յենարան լինելու ինձ, ձեռք առաւ բոլոր միջոցները խանգարելու ինձ: Այդ հրամանատարութիւնը ոչ միայն անջատ ինձնից՝ այլ եւ գաղտնի ինձանից, սկսեց բանակցութիւններ վարել այդ ուղութեամբ թուրքերի հետ, եւ ստեղծեց մի մթնոլորտ, ուր Օլթիի ազգաբնակութիւնն չգիտէր, թէ ով է իշխանաւորն եւ ո՞վ ենթական: Ինձ պէտք չէ ասել, որ այդ առանցքում երեւում է երկրի հաւատը դէպի կառավարչական մարմինը, նամանաւանդ արեւելցու աչքում, որ սովոր է միահեծան իշխանութեան հրամանների, որ կատարւում են առանց առարկութեան…

Դեռ մի տարի առաջ, հարկաւոր ուղիները քաղաքական բանակցութիւններով հարթուած համարելով՝ ես պահանջեցի, որ մենք անցնենք Օլթի: Զօրքը պէտք է լինէր մեր պետականութեան առաջընթաց շարքը, բայց այսպէս ձեւակերպելով խնդիրը՝ ես բնաւ նկատի չունէի մեր կեանքի գնով նուաճելու երկիրը: Զօրքը կը լինէր մեր իրաւունքի եւ մեր ոյժի էմբլեման միայն: Բայց գործի ձեռներեցութիւնն ինձ էր պատկանում, եւ մեր հրամանատարութիւնը, որ ինքն հաւանականութիւն ունէր եւ քաղաքականութեամբ եւ երկրի վարչական հարցերով պարապելու՝ ամէն միջոց գործ դրեց խափանելու Օլթին տիրելու: Սկզբում այդ հրամանատարութիւնը փորձեց վախեցնելու Երեւանը թուրքական մեծ ուժերով, ապա տեղական ապստամբ տրամադրութեամբ, թիկունքի սպառնալիքով եւ վերջապէս հազար ու մի տեխնիկական արգելքներով: Այսպէս երբ ես եռանդուն պահանջում էի շարժուել ու գրաւել Օլթին՝ տեղիս հրամանատարութիւնը ջղայնացնում էր Երեւանը իր ահաբեկող հեռագրներով: Այդ օրերում նա Երեւան, որ երկու ուղութեամբ – Սարիղամիշ եւ Մերդենեք, Նոքա կռիւ են մղում Տաճկաց զօրամասերի հետ, եւ հետեւապէս Օլթին գրաւելու մասին խօսք չի կարող լինել: Ներքին գործերի մինիստր պ. Գիւլխանդանեան, կարդալով ռազմական այդ սենսացիոն բիւլետենը, եւ իր նահանգապետից ոչ մի տեղեկութիւն չունենալու

առթով՝ հեռագրով հարցապնդում է անում ինձ: Ես պատասխանում եմ, թէ այդ պատերազմների մասին ես չեմ լսել, ես հաղորդում եմ նրան հետեւեալը. «Սարիղամիշի ուղղութեամբ մի երեք մաքսանենք քուրդ Երասխն անցնելիս՝ հետապնդում են մեր զինուորների կողմից, քրդերից մէկը սպաննում է եւ բոլորը կողոպտում: Մերդենեկի մօտ տեղի է ունեցել այսպիսի մի դէպք: Մերոնք բարձրացնում են մի բլրակի վրայ մի թնդանոթ, լուրը տարածում է եւ Օլթիի գաւառի մօտակայ քրդերի մի խումբ գալիս է իմանալու, թէ ինչո՞ւմն է խնդիրը, գալիս են թամաշի: Մերոնք էլ նոնյպէս երեւի թամաշի իմաստով, մի թնդանոթ են արձակում այդ թամաշաջիների վրայ, որոնք եւ փախչում են: Եթէ այդ երկու արկածն են մի ռազմական հաղորդակցութիւններում՝ պարզեցի ես մինիստրին, պատերազմական գործողութիւններ են անուանում այդ դէպքում, մեր տեղիս հրամանատարութեան հետ մենք խօսում ենք տարբեր լեզուներով:.... Բայց այս դիպուածը միայն ի միջի այլոց: Ինչեւիցէ, այս ու այն պատրուակով երկար ձգձգումներից յետոյ՝ տեղիս հրամանատարութիւնը, Երեւանի պահանջով զիջեց վերջապէս իմ դիմումներին, եւ շարժուեց դէպի Օլթի: Եւ այս դէպքում էլ գործողութիւններին ռեկլամ տալու համար, եւ մի աւելորդ անգամ կառավարութեանն ու հասարակութեանն ցոյց տալու համար, որ մենք գործ ունենք Տաճկաց մեծ բանակի հետ՝ տեղիս հրամանատարութիւնը պահանջեց լրացնել իր ուժերը կամաւորական մասերով: Կազմակերպուեցին ինչ որ պարտիզան խմբեր, որոնք դեռ Օլթի չշարժուած՝ սկսեցին վարժուել ապագայ գործողութեան համար թալանել թիկունքում մեր խաղաղ, առանց ազգի խտրութեան, ազգաբնակութիւնը: Ի զուր էի ես հեղեղում դատաստանական, զինուորական հաստատութիւնները այդ առիթով կազմուած արձանագրութիւններով, ի զուր էի ես բազմաթիւ հեռագիրներով եւ գրութիւններով դիմում Երեւան, բռնութիւններն ու թալանը աճում էին օրեցօր: Տեղիս զինուորական իշխանութիւնը հետապնդում էր մի նպատակ - երերել երկրի իրաւակարգը եւ հասնել իր նպատակներին, նորից բռնանալ երկրի վրայ, նորից ի դէմս գեներալ-նահանգապետի գերիշխել: Եթէ Դուք թերթելու լինէք Օլթիի մասին իմ բազմաթիւ հեռագիրներն եւ գրութիւնները՝ Դուք կը տեսնէք, որ Օլթիի թուրքերը շատ քիչ ուժեր ունեն, որ այն 36 գիւղը, որ մենք գրաւել էինք՝ կեղծուած եկուոր արկածախնդիրներից եւ ի ծայր զզուած նոցանից, վաղուց խնդրում էին, որ մենք գանք եւ տիրենք. այդպիսով մեր ռեգուլյար զօրամասերը միանգամայն բաւական էին այդ գործողութիւնների համար, եւ այդ ուժերով գնալով այդ երկիրը՝ մենք տարած կը լինենք այնտեղ մեր համարումը եւ մեր պետականութիւնը: Բայց այդպէս ես էի մտածում՝ յենուած տուեալների եւ իրերի ընդհանուր իմաստի վրայ: Իսկ կային եւ այլ կերպ մտածողներ, որոնց իրերի խաղաղ ընթացքը անհանգստացնում էր, նոցա պէտք էր դղրդալից մթնոլորտ, պէտք էր հաւատացնել, որ Օլթին մի Վերդէն է, որ գրաւումը պահանջում է առանձնակի ուժեր ու ռազմական հանճար, եւ այդ պատճառով նահանգապե-

տին, որ մտածելակերպը քաղաքացիական է՝ հաւատալ պէտք չէ: Եւ այդ կամաւորական շարքերը լցրեցին մեր բազմաթիւ այն անպատասխանատուները, որոնք մեր ազատ օրերում ընտելացել էին հնձելու առանց ցանելու: Օլթիի 36 մեզ հպատակ գիւղերը մենք գրաւեցինք, որովհետեւ ի սպառ թալանեցինք այդ տարածութիւնը: Այդ թալանի հրչակն այնքան ռեկլամային էր, այնքան հմայիչ՝ որ Սարիղամիշի եւ Կարսի զօրամասերում սկսուեց դասալքութիւն, եւ այդ բոլոր դասալիքները փախչում էին դէպի Օլթի. Գնում էին դէպի այն աւետեաց երկիրը՝ ուր մարդիկ հերոսաբար թալանում էին եւ հարստանում...

Բայց այստեղ ես մի դառնալից եւ նոյնչափ զաւեշտական հաւելում պէտք է արձանագրեմ: Երբ մենք պէտք է գրաւէինք Օլթին, այնտեղի մի ազդեցիկ աղալարներից մէկին՝ Իզօ բեկին, որ աշխատել էր դէպի մեզ թեքել դեռ անցեալ տարուանից այդ 36 գիւղերը, ես ուզում էի գաւառապետի օգնական նշանակել: Բայց հրամանատարութիւնը միջնորդեց նրան գաւառապետի պաշտօն տալ, եւ ես էլ հակառակ իմ կամքի՝ յարգեցի այդ խնդիրը, որպէսզի զինուորականների մի աւելորդ անբաւականութիւնն ինձնից հեռացրած լինեմ: Բայց գաւառապետի հմայքը չօգնեց Իզօ Բեկին, եւ նրան էլ մերոնք թալանեցին: Այդ խայտառակ դէպքի մասին ես հաղորդեցի ի հարկէ Երեւան, բայց մի ամիս յետոյ այդ գաւառապետը նորից տուժեց՝ մեր պետական պատուի նախանձախնդիրները քշեցին նրա 800 ոչխարը, սպաննեցին նրա երեք հովիւներին: Դորա մասին էլ ի հարկէ կազմուեց արձանագրութիւն, բայց ո՞վ է կարդում այդ արձանագրութիւնները, եւ ո՞վ է ի կատար ածում օրէնքը:...

Բայց հենց այդ օրերում պահանջեց ոչ պակաս զաւեշտ միջնադէպ: Առաջին հետեւակ գնդի հրամանատարը հաղորդեց ինձ գրաւոր, որ գնդի փոտրատչին գնել է Օլթի պարտիզան զօրամասի հրամանատարից 4 միլիոնի տաւար, բայց պարոն հրամանատարը յետոյ ծախել է այդ տաւարը ոսկի փողով մի ուրիշին, ուստի գնդապետը խնդրում էր գրաւել պարտիզան զօրամասի հրամանատարի այդ տաք օրը, որ ի հարկէ Օլթիի ժառանգութիւնից նրան էր հասել: Դժուար էր ի հարկէ այդ պայմանին աւելի փաստացի ապացոյց ձեռք բերել, եւ ես այդ գրութիւնը ուղարկեցի ըստ պատկանելոյն, բայց այդ դոկումենտն էլ ի հարկէ դասուեց մեր այն գրաւոր նիւթերի շարքը, որոնք պէտք է ապագայում ծառայեն որպէս նիւթեր մեր հասարակական բարքերի ուսումնասիրութեան համար: Բայց որպէս նիւթ նոյն մթնոլորտի ուսումնասիրութեան համար՝ պէտք է արձանագրել այստեղ մեր օրերի համար բնորոշ մի միջնադէպ: Այդ ժամանակամիջոցում երբ Օլթի-Արդահանի տարածութիւնը ստանում էր մեծ պետական նշանակութիւն՝ ընդհատւում է Կարսի եւ Արդահանի միջեւ հեռագրական հաղորդակցութիւնը: Ի զուր էին տեղում իմ բազմաթիւ հեռագիրներս Ալեքսանդրապոլում նստած փոստ-հեռագրական վարչութեան Պետին, հաղորդակցութեան եւ ներքին գործերի մինիստրին, ի զուր էի այդ առիթով անհանգստացնում նոյն իսկ մինիստր--

Նախագահին: Իմ բոլոր դիտումները շրջանառում էին միայն եւ միայն թղթի առանցքում, եւ գիծը վերականգնող չկար տասն եւ չորս օրուայ ընթացքում: Ես կարծում եմ, որ նմանօրինակ դէպք հեռագրական տարեգրութեան մէջ գտնել դժուար է, եւ այդ բացառութիւնը, մարդկանց քմահաճոյքը՝ մեզ էր թողել ճաշակելու:

Ինձ պետք չէ ասել ի հարկէ, որ 14 օրուայ ընթացքում Կարսից մինչեւ Արդահան՝ կարելի էր նոր գիծ ստեղծել, ուր մնաց գծի խախտումը կապել: Այս 14 օրուայ ընթացքում հարիւրաւոր կարեւոր կառավարչական հեռագիրներ երեսի վրայ թափուած էին թէ Կարսում եւ թէ Արդահանում, իսկ Մերդենեկի հեռագրակայանը, որ գտնւում է Արդահան եւ Կարսի մեջեւ, հնարաւորութիւն ունենալով փոխանակելու հեռագիրները հեռախօսով՝ մերժում էր մեր այդ մասին պահանջը: Վերջում պարզուեց, որ կայանի կառավարիչը զրկում էր ինձ Արդահանի գաւառապետի հետ կապ ունենալու, որպէսզի հաճոյք պատճառի զինուորական ջոջերին, եթէ չասենք՝ վերջինների դրդմամբ:

Այդ մասին ես հեռագրեցի Աղեքսանդրապօլ վարչութեան պետին, եւ պահանջեցի հեռագրական կայանի այդ կառավարչին հեռացնել նահանգի սահմաններից. վերջինս պատասխանեց, որ կարգադրուած է տեղափոխել նրան այնտեղից: Երբ զինուորականներն իմանում են այդ բանը՝ նոցա մեծ հեռագրում է Աղեքսանդրապօլ, որ հեռագրական կայանի պետը օրինակելի պաշտօնեայ է, եւ խնդրում է նահանգապետի այդ առթով պահանջը մերժել: Հեռագրական վարչութիւնն այդպէս էլ անում է: Ինչպէս տեսնում էք, անձնական միտումներով մարդիկ զրկում են նահանգապետին 14 օրուայ ընթացքում կապ ունենալու իր ամենակարեւոր հեռաւոր գաւառի հետ, եւ երբ մեղաւորը պարզւում է, եւ նահանգապետը պահանջում է պատժել նրան՝ նոյն միտումներով արգելւում է այդ: Դուք կը համոզուէք յոյս ունեմ, որ նմանօրինակ կամայականութիւն՝ եւ զուլումների աշխարհում դժուար է հանդիպել: Եւ միթէ իրերի այդ առանցքում կարելի է խօսել իրաւակարգի ու առհասարակ պետականութեան մասին: Բայց այդ ուղութեամբ այդ դեռ բոլորը չէ: Դեռ անցեալ տարուանից, երբ մենք պէտք է գրաւէինք Օլթին՝ ես տասնեակ գրաւոր ու հեռագրական դիմումներ արեցի փոստ-հեռագրական վարչութեան, ներքին գործոց մինիստրներին, եւ վերջապէս Մինիստր-Նախագահին՝ Օլթի հեռագրագիծ պատրատելու մասին: Այդ տասնեակ խիստ ու երբեմն սպառնալից պահանջներից յետոյ վերջապէս՝ երբ մեր զօրամասերն արդէն շարժուել էին Օլթի, հեռագրական վարչութիւնը բարեհաճեց սկսել աշխատանքը: Բայց երբ գիծը պատրաստ էր՝ զինուորական իշխանութիւնը շահագրգռուած, որ նահանգապետը տեղեակ չլինի այդ հեռաւոր գաւառի անց ու դարձին՝ արգելեց հեռագրական ապարատ դնելուն, առարկելով, որ իրանք ունեն իրանց հեռախօսը եւ հեռագրաթելերի մէջ պէտք չեն տեսնում: Ես ստիպուած էի իմ պաշտօնական, ծածկագիր կարեւորագոյն հեռագիրներս ու-

ղարկել Օլթի՝ նոցա հեռախօսի միջոցով, բայց այդ հեռագիրները տարուբերելով այն առանցքում, ուր խօսում էին մարդկային կրքերը՝ տեղ չէին հասնում, եւ ես ստիպուած էի կրկնել հեռագիրներս իմ Օլթիի ներկայացուցիչին սուրհանդակների միջոցով գրաւոր, եւ փոխանակ մի երկու ժամից յետոյ պատասխան ստանալու՝ ես այդ ստանում էի շաբաթներից յետոյ: Զինուորականներին պէտք էր զրկել նահանգապետին հնարաւորութիւն կապ ունենալու Օլթիի հետ, բայց նրանք զրկեցին ինձ դրանով մի եւ նոյն ժամանակ եւ հնարաւորութիւնից միջոցներ ձեռք առնելու այն պատահարի հետ, որի հետեւանքով մենք ամօթալի թողեցինք Օլթին:

Գտնելով, որ Օլթիից մենք փախանք ոչ ռազմական պատճառներով՝ ես ուղարկեցի Ձեր նախորդին հետեւեալ ծածկագիր հեռագիրը. "բարեհաճեցէք միջնորդել մինիստրների խորհրդի առաջ մի յանձնաժողով ուղարկել Օլթիի պատահարը լուսաբանելու համար, գտնելով, որ այդ դէպքը ունի ոչ այնքան ռազմական՝ որքան հասարակագիտական եւ իրաւական մեծ նշանակութիւն, միջնորդում եմ, որ յանձնաժողովին մասնակցեն բարձր դատաստանական հիմնարկութեանը ներկայացուցիչները եւ իշխող քաղաքական կուսակցութեան ականաւոր մարդիկ: Օրինականութիւնը արտադրութեան հիմունքն է: Այդ յանձնաժողովը պէտք էր պարզէր՝ թէ ի՞նչով էին պարապում մարդիկ Օլթիում, հետեւապէս հայ հասարակութեան ու կառավարութեան համար կը պարզուէր՝ թէ ի՞նչու պէտք է թողնէինք Օլթին: Բայց յանձնաժողովը չեկաւ, իսկ խուճապով բռնուած մարդիկ՝ մի քանի օրից յետոյ դատարկեցին եւ Մերդենեկը: Այդ օրուանից զինուորականները խզեցին հեռագրական կապը Արդահանի հետ, հնարաւորութիւն չտալով ինձ կապ ունենալու Արդահանի գաւառապետ գնդապետ Կադիմովի հետ, եւ այդպիսով զրկեցին կառավարութիւնը այն արժէքաւոր տեղեկութիւններից, որ ես շարունակ ստանում էի այդ գաւառապետից:

Գնդապետ Կադիմովը դեռ Սեպտեմբերի 20-ին հեռագրել էր ինձ ծածկագրով, որ Խալիլ փաշան մեծ ուժերով պատրաստւում էր միաժամանակ յարձակուելու եւ Սարիղամիշի եւ Մերդենեկի վրայ, բայց այդ հեռագիրը զինուորական քմահաճոյքի շնորհիւ՝ ես ստացայ միայն եօթ օրից յետոյ: Ես զուր էի իմ բազմաթիւ հեռագիրներով բողոքում զինուորական այդ կամայականութեան դէմ, հեռագրական կապը Արդահանի հետ մնաց փակ ինձ համար մինչեւ Սեպտեմբերի 29-ն, երբ մերոնք դատարկեցին եւ Արդահանը:

Ինչպէս տեսնում էք, պետական սրբազանագոյն շահերը զոհ են բերւում մի ցանկութեան՝ չէզոքացնել քաղաքացիական իշխանութիւնը աշխատանքի հրապարակից, եւ զինուորական հեգեմոնիա ստեղծելով՝ ասել երկրին ու կառավարութեանը - մենք ենք ամէն ինչ եւ ամէն բան: Եւ այսօր երկիրը մեծաչափ ճաշակում է այդ բռնութիւնների հետեւանքը: …

Ինժիներ Խատիսեանը, որ զոհ գնաց այդ արկածալից մթնոլորտին, եւ որ այդ պատահարից մի քանի օր առաջ դարձեալ գնացել էր Օլթի՝ ասում էր, որ Օլթի բոլորը տոգորուած են միայն եւ միայն հարստնալու տենչով, եւ բոլորը տանում են, անվերջ տանում....

Պարլամենտի նախագահը, որ այդ պատահարից մի երկու օր առաջ միայն վերադարձել էր Օլթիից՝ ասում էր, որ նա ճնշուած է Օլթիում իր բոլոր տեսած ու լսածից: Ազգաբնակութիւնը՝ աւելացրեց պարլամենտի նախագահը, ահաբեկուած է սիստեմատիկ բռնութիւններից ու թալանից: Այդ օրերում Ձեր նախորդը ծածկագիր հեռագրով առաջարկեց ինձ զինաթափ անել մաուզերիստներին, եւ մաուզերներ կրելու ոչ ոք չտալ, ես պատասխանեցի, որ բոլոր մաուզերիստները գտնուում են մեր զօրամասերի կամաւորական վաշտերում, գտնուում են Օլթի... (եւ խնդրեցի զինուորական իշխանութիւնը նոցա զինաթափ անել, բայց այդ էլ ի հարկէ)

Ի նկատի ունենալով, որ այն օրերը, որ մենք վերագրում ենք, առաջ են եկել սիստեմատիկ բռնութիւնների եւ բազմատեսակ թալանի մթնոլորտում, եւ ամրապնդել այն անիշխան առանցքում՝ ուր իրաւունքը եւ իրաւասութիւնը ոտնահարւում էր ի հաշիւ անձնական եւ նիւթական միտումների, ես կ՛ուզէի ծանրանալ այդ ուղղութեամբ:

Երբ մի քանի ամիս առաջ, Պարլամենտի անդամ Լեւոն Թաթեւոսեանի հետ մենք շրջագայում էինք նահանգը, ամէնուրէք ամէնասիրալիր ընդունելութիւն գտնելուց յետոյ՝ ժողովուրդը խնդրում էր ազատել երկիրը բռնութիւններից ու կեղեքումներից: Անվերջ ասում էին գիւղացիները՝ գալիս են սպաներ, զինուորներ, նոցա անուան տակ բազմաթիւ մարդիկ՝ եւ անասուն, մթերք են պահանջում իբր թէ զօրամասերի համար: Մենք պատրաստ ենք պահել զինուորը՝ բացատրում էր ժողովուրդը, բայց մենք հիմք ունենք ասելու, որ այդ պահանջների նուազագոյն մասը միայն գնում է ըստ պատկանելոյն: Մեր խնդիրն է, վերջնականացնել այդ անվերջ պահանջները՝ եւ երաշխաւորութիւն տալ գաւառին, որ այդ բոլորը զօրքի համար է եւ ոչ մասնաւոր մարդկանց համար:

Ես մատնացոյց արեցի միայն Պարլամենտի անդամի ներկայութեամբ տեղի ունեցած բողոքը, հնարաւորութիւն չունենալով արձանագրելու այստեղ այն հարիւրաւոր գանգատները՝ որոնք մեր այստեղի տիրապետութեան օրից տեղում են եւ ի հարկէ անհետեւանք մնում:

Տարի ու կէս շարունակ ես բազմաթիւ գրութիւններով ու հեռագիրներով դիմել եմ տեղիս հրամանատրութեան, Զինուորական ու ներքին գործերի Նախարարներին, Մինիստր-Նախագահին՝ վերացնել կամայականութիւնը զօրքին մթերքներ մատակարարելու գործում, կենտրոնացնելով այդ գործը համբարակային մարմնի ձեռքում, եւ իրաւունք չտալ անհատներին զբաղուելու տնտեսական խմդիրներով: Բայց իմ բոլոր այդ անվերջ դիմումները շրջանառում էին

միայն թղթի առանցքում, եւ միայն բարդում եմ յարաբերութիւններս զինուորականների հետ:

Այս կամայական ու անկոնտրոլ մթնոլորտում՝ բնականաբար պէտք է առաջ գար երկրի դժգոհութիւնն, եւ մենք կարողութիւն չունենայինք զսպելու այդ սանձարձակ դրութիւնը, երերում էին երկրի իրաւակարգը:

Որպէս նահանգապետ՝ ես չէի կարող հաշտուել այդ դրութեան հետ, Պետական սկզբունքներ բարձր լինելով ինձ համար կողմնակի բոլոր միտումներից՝ ինձ հարկաւոր էր հեղինակացնել երկրում մեր համարումը, որովհետեւ պետութիւնը չի կարող պահպանել միայն սուիններով, նա պէտք է յենուի օրէնքի եւ արդարութեան վրայ: Բայց իմ հակառակորդները առանց քաշուելու ինձ հետ խտրութիւն չէին դնում միջոցների մէջ, եւ իրանց չիմանալու էին դնում, որ երերելով ինձ՝ նրանք խախտում էին պետութեան հիմքը: Ամէն միջոցներով խառնուելով վարչական եւ հասարակական շրջաններում հաւաստացնելու, որ նահանգապետի ուղութիւնը սխալ է, որ տեղական այլազգիների մէջ պէտք է տեսնել միայն ըմբոստ եւ միայն ապստամբ տարր, եւ այդ այլասեռ ժողովուրդը պէտք է ճնշել ոչ շոյել: Եւ երբ տեղական անուանիներին առաջ քաշելով ուսադիրներ եւ պաշտօնական յանձնարարութիւններ տալով, ուզում էի մեր ազդեցութիւնը կցել այդ որջանոցը՝ իմ հակառակորդներ միջից կէս էին լինում գցելու երկրում այդ մատնանշուած մարդկանց նշանակութիւնը միմիայն, եւ միմիայն ինձ կշտամբելու միտումներով: Եւ որովհետեւ Արդահան-Օլթի տարածութիւնում այդ քաղաքականութիւնը վարում էի ես գլխաւորապէս Արդահանի գաւառապետ Կադիմովի միջոցով՝ իմ բարեկամներս իրենց բոլոր նետերն ուղղեցին Կադիմովի վրայ, եւ տարի ու կէս ժամանակամիջոցի ընթացքում կանգ չառան ոչ մի միջոցի առաջ՝ նրան արատաւորելու, ձգելու, հետեւապէս խորտակելու եւ ինձ: Դեռ անցեալ տարուայ ամառը, նոքա հաղորդեցին Երեւան, որ Կադիմովը հակապետական յարաբերութիւնների մէջ է ինչ որ Աբաշիձէի հետ, եւ Երեւանը հեռագրով պահանջ դրեց ձերբակալելու Կադիմովին: Բայց բարեկամներս տեղեակ չէին, որ այդ Աբաշիձէի մասին ինձ տեղեկութիւններ հաղորդողը Կադիմովն էր, եւ նոյն Կադիմովի պահանջով ես բանտարկեցի Աբաշիձէին:

Այնուհետեւ, երբ այդ իմ դէմ փորձնական համարը չանցաւ՝ բարոյականներս սկսեցին հաղորդել Երեւան, որ Կադիմովը ծախուել է վրացիներին, որ նա պատրաստուել է Վրաստան անցնելու եւ այլն: Բայց այդ մարդիկ չգիտէին, որ նոյն Կադիմովը շարունակ գաղտնի տեղեկութիւններ էր հաղորդում ինձ Վրաստանի անց ու դարձի մասին, եւ խլրտում առաջ բերում Արդահանի հիւսիսային մասում:

Երբ այդ ապստամբութեան անկարողութիւնը պարզուեց՝ 12-րդ հետեւակ բրիգադայի հրամանատարը, որ ժամանակ էր գտնում եւ վարչական-քաղաքական խնդիրներով ձանձրացնելու՝ դաւադրութիւն է գտնում իր թիկունքում Օլթի,

եւ պահանջ է դնում հեռացնելու Օլթիի գաւառի ամբողջ յոյն ազգաբնակութիւնը դէպի Կարս որպէս պատանդ, եւ բացի այդ՝ պաշտօնանկ անելու գաւառապետ Իզօ-բեկին, որի թեկնածութիւնը մի երկու շաբաթ առաջ ինքն էր առաջ քաշում: Այդ յայտարարութիւնն արեց զօրավարն Օլթին գրաւելուց երկու շաբաթ յետոյ: Ես միանգամայն մերժեցի այդ երկու պահանջն էլ, եւ մի աւելորդ անգամ նկատեցի, որ պէտք է վերջ տալ թալաններին եւ բռնութիւններին, եւ դրանով վերացնել մեր կասկածները ինչ որ դաւերի մասին: Ես այդ բոլորի մասին մանրամասն հաղորդեցի ձեր նախորդին:

Անցան աւելի քան 2 ամիս, ապստամբութիւն Օլթիում չէինք տեսնում, բայց թալանն ու բռնութիւնները շարունակւում էին նոյն տեպմով, եւ ազգաբնակութիւնը մեզնից երես էր դարձնում: Բայց մէկ ամսից յետոյ մեր հրամանատարութիւնը նոր ապստամբութիւն էր գտնում, եւ այժմ Արդահանի գաւառում, քրդական այն գիւղերում՝ որոնք աւելի քան մէկ տարուայ ընթացքում անկոնտրոլ ու անհաշիւ շարունակ մատակարարել են մեր այնտեղի զօրքին տաւար ու մթերքներ: Այդ կարծեցեալ ապստամբութեան հետ նոյն մարդիկ միջից կէս եղան՝ կապելու եւ Կադիմովի անունը, բայց քրդերի հետ հաշիւների այդ մեծաղմուկ բռնկումը աւելի մնաց միայն բռնկում եսական միտումների:

Ես դատաստանական քննութիւն նշանակեցի այդ չակերտաւոր ապստամբութեան առթով, օգտուեցի դէպքից, որ Կարսումն էր այդ ժամանակ դատաստանական պալատի անդամ Աբգարեանը, եւ խնդրեցի նրան անցնել Արդահան ու հսկել այդ քննութեան վրայ, խնդրեցի եւ պարլամենտի անդամ Մաքսապետեանին անցնել նոյն գաւառը եւ ծանօթանալ իրերի հետ, բայց այդ բոլորը՝ մեծ ու փոքր մարդկանց հետախոյզի աշխատանքները ոչ մի դաւադրութիւն չգտան. Գլխաւորապէս Մելիք-Շահնազարեանն, որ իր վաշտի եւ գնդացիրների հետ ուղարկուած էր այդ վայրը հրամանատարութեան կողմից այդ ապստամբութիւնը ճնշելու՝ ուղարկում է իր մեծին զաւեշտ զեկուցում. եկայ ուր հարկն է, բայց ոչ թշնամի եւ ոչ ապստամբութիւն չգտնելով՝ վերադառնում եմ: …

Ի հարկէ այդ զեկուցումը շատ զաւեշտալի կը լինէր՝ եթէ նա միեւնոյն ժամանակ եւ դառնալից չլինէր: Բայց մինչ այս եւ մինչ այն, մինչ մեր մեծապատիւ հրամանատարութիւնը թմբկահարում էր այս ապստամբութեան մասին՝ իսկ մեր բազմաթիւ պաշտօնեաները եռանդալից հետամուտ էին լինում այդ մոգական թշնամուն, արկածախնդիրները՝ որոնք ակնթարթ բաց չէին թողնում, ռումբներ ձգեցին այդ ահաբեկուած Արպաշէն գիւղի վրայ, սպաննեցին երեք քուրդ, փախցրին քրդերին ու թալանեցին գիւղը: Այդպէս վերջացաւ այդ մեծաղմուկ գործը:

Ինչպէս յիշում էք՝ Օլթին դատարկելը ես պատահար, այդ մի խուճապ, որ բռնկուեց մի վայրում՝ ուր մարդիկ թալանում եւ կեղեքում էին, սպեկուլյացիայով զբաղւում: Թէ ինչու դերանից յետոյ դատարկուեց Մերդենեկը՝ այդ իրօք կը

պարզի ապագան, բայց ես չեմ կարող անուշադիր անցնել այդ խայտառակ փախուստի մօտով, որ տեղի ունեցաւ Մերդենեկում: - Կոմենդանտը կոչ էր անում մարդկանց փախչել, եւ նոքա թողնելով տուն, տեղ՝ խելակորոյս փախչում էին եւ փախչում... առանց պատճառի: Եւ եթէ այդ խուճապը առաջ չգար քրդերի ու օտարազգիների ներկայութեամբ, մենք դեռ այնչափ երկչոտ՝ պոռոտախօսներին պատժելու համար, որքան մեր օրերի տրամադրութիւնն ուսումնասիրելու համար:

Ինչ-ինչ գէթ ինձ համար անթափանձելի միտումներով՝ հրամանատարութիւնը փախցրեց Մերդենեկից հեռագրատունը, եւ այդպիսով ընդմիշտ խզեց այդ օրուանից կապը իմ եւ գնդապետ Կադիմովի միջեւ: Թէ ո՞ւմից էին փախցնում զինուորականները Մերդենեկից այդ խղճուկ հեռագրական ապարատը՝ ես չգիտեմ, ի հարկե մի բան միայն ակներեւ էր, որ ինձ զրկեցին ի վիճակի լինելու կարեւորագոյն գաւառի անցուդարձին:

Բայց Օլթիի պատահարը ունեցաւ իր մեծ նուաճումը: Զինուորականութիւնը ի դէմս հրամանատարութեան՝ հասաւ իր նպատակին, կառավարութիւնը զինուորական դրութիւն յայտարարեց Կարսի նահանգում, եւ քաղաքացիական իշխանութիւնն էլ յանձնուեց զօրավարներից մէկին: Բայց բռնութիւնը սիրում էր համեմել ամէն մի դրութիւն զաւեշտ գծերով, եւ այդօրինակ միջնադէպ պատահեց այդ օրերում: Պատուելի զօրավարներից մէկը, որ վաղուց երազում էր գեներալ-նահանգապետութեան մասին, եւ որի համար նա այնչափ եռանդ ու կիրք սպառեց, ի թերեւ տեսնելով իր իղձերը՝ փոխեց իր ֆրոնտը իր զինակցի հանդէպ, ամէնուրէք տրտնջալով, որ աշխատում է ինքը՝ իսկ դափնիքը վայելում է ուրիշը... Բայց այդ միջնադէպի մասին միակն այլոց:

Երբ մենք ճեպընթաց թողնում էինք ոչ միայն Օլթի, այլեւ Մերդենեկ, Կարակուրտ, Սարիղամիշ եւ միւս վայրերը՝ ուր այնքան շինարար աշխատանք էր թափուած, երբ հասարակական տրամադրութիւնը ամբողջովին ջղայնութիւն դարձած՝ իր միակ յոյսը յառել էր դէպի զինուորականութիւնը, գեներալները իրենց անվճռաբեկ գերիշխանութիւնը զգալով՝ պահանջ դրեցին գնդապետ Կադիմովի Արդահանից հեռացնելու եւ բերելու Կարս, որպէս վտանգ կամ գուցէ որպէս բանտարկեալ: Ես հարկաւոր չհամարեցի առարկել. Առաջինն այն պատճառով, որ կրքերի ու անձնական միտումների առանցքում՝ բանականութիւնն եւ ճշմարտութիւնը տեղ չունի, երկրորդը՝ կառավարութիւնն իր Սեպտեմբերի 19-ի ակտով՝ երկրի միահեծան կառավարութեանը բախտը վստահել էր աւելի կարող մարդու քան նահանգապետը, եւ հետեւապէս ես ձայն չունէի կառավարական գործում, եւ ինձ մնում էր համակերպուել մարդկանց քմահաճոյքների հետ, եւ ըստ ժողովրդական ասուածի՝ իմ այդ օրուանից կրաւորական աշխատանքում "մի կերպ փալաստ ջրից հանել"... Բայց իմ փոխարէն առարկեցին քաջարի գեներալներին պարլամենտի անդամները եւ տեղիս դաշնակցական կոմիտէն:

Բայց ի հարկէ երկրի միահեծան վարիչները՝ հազիւ անկոնտրոլ գրաւելով հրապարակը, լռել չուզէին այդ մասին, եւ պահանջեցին Կադիմովին, վերին հետամուտ էին լինում աւելի քան մի տարուայ ընթացքում: Լռեցին պարլամենտի անդամները, նոյնպէս եւ դաշնակցական կոմիտէն, որովհետեւ գեներալները անյուսալի ներկայացնելով մեր դրութիւնը՝ ահաբեկում էին մեզ բոլորիս:

Շատ պարզ էր ի հարկէ, որ այդ մոմենտում ձերբակալել Արդահանում այնպիսի մի մեծ հեղինակութիւն՝ որպէս Կադիմովը, կը նշանակէր անիշխանութեան մատնել այդ գաւառը, եւ մեր թիկունքում, այդ թրքութեան եւ քրդութեան մեծ որջում առաջ բերել բաց ապստամբութիւն: Երկար մտածելուց յետոյ, թէ ինչ ձեւ տալ Կադիմովին Կարս բերելուն, ես գրեցի նրան, որ վերցնի իր հետ երեք հոգի իմ մատնանշուած մարդկանցից, որոնք լաւ տեղեակ են երկրի անցուդարձին եւ գայ ինձ մօտ խորհրդակցութիւն: Մինչեւ այդ, 25 օրուայ ընթացքում՝ զինուորականները խզել էին Արդահանի եւ Կարսի միջեւ հեռագրական կապը, եւ պահպանել էին միայն հեռախօսը, զրկելով ինձ հնարաւորութիւնից փոխանակելու Կադիմովի հետ մոմենտի կարեւորագոյն անցքերի մասին:

Բայց այս անգամ մեծապատիւ գեներալները զիջեցին եւ թոյլ տուին, որ Կադիմովին բանտարկելու եւ Կարս կանչելու իմ հեռագիրս իրանց հեռախօսով գրուի:

Ինչպէս եւ պէտք էր սպասել, որչափ եւ քողարկուած լինէր հեռագիրս, Կադիմովը չէր կարող չհասկանալ նորա իմաստը, եւ նա ի հարկէ չեկաւ: Բայց եւ այնպէս, ինչպէս գիտէք Արդահանի գաւառը միանգամայն հանգիստ մնաց, փախան միայն մի քանի տասնեակ քրդական գիւղեր, եւ այնտեղ էլ թալանից եւ բռնութիւններից ահաբեկուած: Թողնելով տուն տեղ, անհամար հարստութիւն, դեռ չծեծուած հացը իսկ տեղ-տեղ էլ չինձուած՝ ազգաբնակութիւնը փախչում էր խելակորոյս: Իսկ Կարսում այդ միջոցին ստացւում էին այնպիսի զեկուցումներ - կռուով գրաւեցի այս ինչ գիւղը, թշնամին փախաւ: …

Այս քաջարի արշաւը դէպի խաղաղ ու հպատակ ազգաբնակութիւնը՝ վերջանում էր չտեսնուած թալանով, որ ծայրը, ի դէմս տաւարի եւ ոչխարների մեծաքանակ հօտերի՝ անցնում էր Ալեքսանդրապօլ…

Ի զուր էի ես բողոքում բերանացի, բազմաթիւ գրութիւններով եւ հեռագիրներով, մենք շարունակում ենք մեր կռիւները դեռ մեր թիկունքում: … Եւ սարսափահար քրդութիւնը փախչում էր այնտեղ՝ ուր գտնւում է մեր իսկական թշնամին, եւ բնակաբար բազմապատկում նրա ուժերը: Այդպէս եւ մեր քաղաքականութիւնը եւ մեր վերաբերմունքը դէպի երկրի բնիկները:

Մեր հրամանատարութիւնն այսօր ոչ մի տեղեկութիւն չունի թշնամու քանակի, նպատակների մասին, հետեւապէս տարուբերւում է իր անելիքների մէջ:

Հայ ազգի մեծահամբաւ Լազարեւ, իշխան Բեհբուդով եւ Կոմս Լորիս-Մելիքով՝ ռազմաբեմ էին գալիս շրջապատուած տեղացի անուանիների շքախմբով,

եւ այդ բեկերից ու աղալարներից՝ նոքա ստանում էին բոլոր տեղեկութիւնները: Բայց մեր այստեղի գեներալները պայքարելով նահանգապետի հետ՝ ամէն միջոց գործադրեցին բռնանալու օտարազգիների վրայ, փախցրեցին, ցիր ու ցան արեցին նոցա, եւ այսօր ոչ միայն մենակ մնացին՝ այլեւ այդ թուրքերով ու քուրդերով ուժեղացրին թշնամու բանակը:

Զինուորական իշխանութիւնը փոխանակ զբաղուելու իր գործով, կրթելու զինուորականներին եւ կոփելու նոցա շարքերը՝ գերադասեցին պարապել վարչական ու քաղաքական խնդիրներով: Քաղաքացիական իշխանութիւնը տապալելու համար՝ նա սիստեմատիկ արշաւանք կազմակերպեց նորա դէմ, նպաստեց բռնութիւններին ու կամայականութիւններին, եւ ամէն բան արեց երերելու երկրի իրաւակարգը:

Տաճկաց արշաւը մեծաչափ օգտուեց ստեղծուած մթնոլորտից: Թալանի եւ բռնութիւնների առանցքում՝ կարող էր առաջ գալ միայն անբարոյականութիւն, եւ ազգերի այդ բացասական դէպի մեզ վերաբերմունքի վրայ յենուեց տաճկաց արշաւը:

Թուրք քրդական վայրերը հարստութեան մի անհուն տարածութիւն էր մեզ համար, բայց մենք չկարողացանք օգտագործել այդ անձը, մենք կեղեքեցինք, թալանեցինք այդ վայրը՝ հարստացնելով արկածախնդիրներին եւ կեանքը վտանգողներին: Աւելի քան մէկ տարուայ ընթացքում՝ թուրք քրդական վայրերը մատակարարում էին ոչ միայն Կարսի նահանգում, այլեւ դէպի Արարատեան դաշտը՝ տաւար, ձի, մթերքներ: Բայց մենք կարողութիւն չունեցանք տնտեսելու այդ մեծ հարստութիւնը եւ միանգամից աւերեցինք այդ աղբիւրը:

Իմ բոլոր բազմաթիւ դիմումները այդ առթով, իմ բոլոր բողոքները, որ զինուորական իշխանութիւնը արշաւ կազմակերպելով քաղաքացիական իշխանութեան դէմ, երերում է երկրի իրաւակարգը, մնում էին ոչ միայն անհետեւանք, այլ եւ անպատասխան: Իշխելու եւ բռնանալու այդ անսանձ տենչը շարունակւում էր աւելի քան մի տարուայ ընթացքում, կրքերի եւ ոտնահարութիւնների այդ խառնուրդում ընկնում էր կառվարութեան համարումը, եւ երկիրը չէր տեսնում այդ հեղինակութիւնը, որ կարող լինէր վերջ տալ այդ խեղկատակութեանը:

Գալիս եւ գնում էին պարլամենտի անդամները, եւ այլ հասարակական գործիչներ՝ բոլորը միակարծիք էին, որ զէնքի շառաչիւնով երկիրը կառավարել չի կարելի, ամէնքը ասում էին, որ երկիր կառավարելու գործը զինուորականի կոչում չէ, բայց եւ բոլորը միայն ասում էին եւ միայն ցաւակցութիւն յայտնում:

Եւ այսօր երկիրը բացօթեայ, մերկ ու սոված՝ վայելում է արկածների այդ հետեւանքը: Մենք հնձում ենք այն՝ ինչ որ ցանել ենք:

Երբ դուք, պ. Արարատեան, ստանձնեցիք Ն. Գ. Մինիստրի պաշտօնը՝ ես գրեցի այս տեսութիւնը Ձեզ ծանօթացնելու համար այդ բոլորի հետ, որի մասին տարուց աւել ես այնպէս անյուսալի բախել եմ բազմաթիւ դռներ: Ձեզ հետ մօտ

ծանօթ չէի, բայց լսում եւ դիտում էի, որ դուք տրամադիր չէք քարշ տալու հոսանքի հետեւից եւ Ձեր կորովը ունենալու, կը փորձենք կրաւորական Ներք. Գործ Մինիստրութիւնը դարձնել պետական առաջին դէմք ունեցող գործօն: Եւ ես կարծեմ չէի սխալւում: Ինչպէս տեսար իմ տեսութիւնից, երբ ես գրում էի այս տողերը՝ ես դեռ յոյս ունէի վերականգնել դրութիւնը, յենուելով Ձեր հեղինակութեան եւ Ձեր վճռականութեան վրայ: Եւ ես չէի կարծում, որ մեր օրերը հաշուած են, որ մենք այնչափ մօտ ենք կատաստրոֆային:

Բայց մի երկու խօսք էլ Կարսի նահանգի մասին. Նրա վերջին երկու ամսուան ընթացքում, Սեպտեմբերի 28-ին սկսուեց մեր հռչակաւոր նահանջը: Թէ ինչ ուժերի ճնշման տակ էինք նահանջում՝ այդ զինուորական իշխանութեան արտօնեալ գաղտնիքն էր, եւ մենք, մահկանացուներս՝ իրաւունք չունէինք անցնելու դէպի այդ թանձրութիւնը: Երբ մի քանի օրից յետոյ նահանգապետը յենուած տուեալների վրայ փորձեց բնորոշել մթնոլորտը, եւ հեռագրով լուսաբանել դրութիւնը՝ ասաց, որ տեղիս հրամանատարութիւնը ապագայ դափնիների ախորժ հեռանկարներով տարուած՝ ուռցնում է դրութիւնը, զօրքերի հրամանատարը արգելեց նահանգապետին որեւէ տեղեկութիւն հաղորդել Ներք. Գործ. Մինիստրութեան: Մեծապատիւ զօրավարը գտնում էր, որ նահանգապետը իր սխալ հաղորդագրութիւններով մոլորեցնում է բարձր կառավարչական շրջանները, նսեմացնելով այն ահռելի ոյժը՝ որի դէմ այնչափ անձնուրաց կռւում են մեր գեներալները: Ոյժը իրաւունք է, ճշմարտութիւնների մասին խօսելու ժամանակ չէր, նահանգապետը ստիպուած էր ի հարկէ լռել՝ թողնելով ասպարէզը արկածներին եւ տափակութիւններին:

Մեր զօրքը մահկանացուներիս անհասկանալի միտումներով՝ հմուտ գեներալների ղեկավարութեամբ շարունակում էր նահանջել անտեսանելի թշնամու առջեւից, իսկ թիկունքի մեր հերոսները ուժեղ եռանդով՝ շարունակում էին իրենց անվիճելի նուաճումը, թալանում եւ կեղեքում էին: Եւ պապանձութեան մատնուած նահանգապետը՝ փորձեց խախտել հրամանատարի կարգադրութիւնը եւ ծածկագիր հեռագրով հաղորդելով իր մինիստրին ստեղծուած քաոսի եւ անիշխանութեան մասին, աւելացրեց,- վերջ տուեցէք այդ հեգեմոնիային, դորանից կը պայթի պետականութիւնը:

Շարունակ նահանջելով, ձգելով մեր համարումը, կոտորելով երկրի մէջքը, կազմալուծելով զօրքը, եւ ընկճելով նրա տրամադրութիւնը՝ գեներալները անզուգական էին մի խնդրում միայն: Օրուայ քուրմեր լինելով՝ որոնց համար էր ամէն բան եւ բոլորը, նրանք օգտուեցին առիթից՝ վերջին հաշիւը տեսնելու իրաւաբանական նահանգապետի հետ:

Զինուորական գործողութիւնները երկրորդական նշանակութիւն ունեցող հանգամանք համարելով՝ նոքա թմբկահարում էին մի ուղղութեամբ: Նոքա վայնասուն էին բարձրացնում թուրք ազգաբնակութեան եւ գնդապետ Կադիմովի

մասին, շարունակ կարծում եւ հաղորդում Երեւան, որ թուրքերը Կադիմովի գլխաւորութեամբ ապստամբել են իրենց թիկունքում:

Կարսի անկումից մի 10 օր առաջ բերդի դիմադրութիւնը կանոնաւորելով՝ զինուորական իշխանութիւնը թնդանօթների փորձնական կրակ ուզեց բանալ, իսկ դրա հետ միաժամանակ, բերդի հրետանիի հրամանատար գնդապետ Բաբաջանովը մի բազմամարդ ժողովում զեկուցեց, որ ամրութիւնները (ֆորտերը) պետք է կապել իրար հետ հեռախօսով: Այդչափ էինք պարտաւոր մենք պատմական դիմադրութեան:

Բայց այդ դրութիւնը ոչ միայն չապստամբուեց, նա ոչ միայն կողմնակից չեղաւ թուրքերին՝ այլ մինչեւ վերջ լուռ մնաց: Եւ երբ Կարսի անկումից յետոյ Արդահանի եւ Կարսի գաւառի պաշտօնեաները հեռանում էին գիւղերից՝ այդ ըմբոստ թուրքերը եւ քրդերը թախանձանք խնդրում էին այդ պրիստաւներին մնալ իրենց մօտ ու շարունակել պաշտօնաւորել եւ հենց տաճկաց օրով: Այդչափ երկիւղալի էին Փիրումով-Օսէպով ընկերութեան համար այդ թուրքերը:

Երբ Կարսի անկումից մէկ շաբաթ առաջ, երկու մինիստրների ներկայութեամբ ես հարցրի հրամանատարից - հնարաւո՞ր է արդեօք Կարսի պաշարումը, նա հեգնեց ծիծաղեց ու ասաց, մենք անձեռնմխելի ենք երեք ամսուայ ընթացքում: ... Բայց զօրաբանակը նահանջում էր. Հրամանատարութիւնը, որ մինչեւ այժմ զբաղուած էր միայն ադմինիստրացիայի դէմ ինտրիգներում, սկսեց պառակտել իր մէջ: Պատերազմի վախճանը իւր հետ նսեմացրել էր եւ նորութիւնների հրապարակում, շրջանառում էին միայն կուրյոզները գեներալների եւ գնդապետների մասին, եւ երգիծական նիւթ ամբարում ապագայ պատմութեան համար: Եւ երկիրը գտնւում էր տրադիկոմեդիայի մի առանձնակի մթնոլորտում, ծիծաղն ու արտասունքը միախառնւում էին: Մարդիկ կորցրել էին իրենց ամբողջ հաւատը դէպի մեր ռազմական կորովը, եւ սպասում էին միայն եւ միայն դրսի միջամտութեան:

Զէնքի շառաչման եւ գիշատիչ տրամադրութեան այդ առանցքում՝ երկիրը չէր տեսնում զօրական պէտք հեղինակութիւն, եւ մեր ընդիմադրական թափը ոչ միայն չէր աճում՝ այլ եւ օրեցօր ընկնում էր: Մարդիկ եռանդալից կարգաւորում էին իրենց անձնական գործերը, իսկ տարի ու կէս շարունակ միահեծան իշխելու տենչով տոգորուածները՝ նախօրոք տեղափոխեցին Կարսից իրենց բոլոր ունեցածը մինչեւ վերջին աթոռը: Ռոմանտիկ դուրս եկաւ միայն նահանգապետը, որ սկզբունքը պաշտպանելով՝ հնարաւոր չհամարեց մտածելու իր ունեցածի մասին, եւ (թողեց) դուրս եկաւ Կարսից մի վերարկոյով, թողնելով այնտեղ այն բոլորը՝ ինչ որ ձեռք էր բերել աւելի քան 40 տարուայ ընթացքում: Ծիծաղում է ի հարկէ նա՝ ով վերջինն է ծիծաղում, եւ ինձ մնում է միայն ցաւել, որ ես այդ վերջինների թւումը չեմ: Բայց եւ այնպէս, այսօր մի շապիկով մնալով հանդերձ՝ ես ինձ բաւարարուած եմ համարում: Տարի ու կէս կառավարելով Կարսի խայտա-

ճամուկ նահանգը՝ ես տեսնում եմ իմ առաջ բազմաթիւ ազգութիւններով եւ լեզուներով բնակեցրած մի տարածութիւն, ուր ես կոչուած էի պատուաստել պետականութիւնը, եւ կոփել իրաւակարգը: Մեր բարդ գիտութիւն եւ փորձ պահանջող աշխատանքը՝ հանգիստ չէր տալիս դափնիք երազողներին, եւ երեկուայ կապիտանները բարձի թողի անելով իրենց հոգացողութեան յանձնուած զօրական շարքերը՝ ուզեցին զբաղուել եւ քաղաքականութեամբ եւ վարչական գործերով:

Ի զուր էր նահանգապետը իր բազմաթիւ հեռագիրներում ծանրանում իրավասութեան սահմանների վրայ, ի զուր էր նա բացատրում, որ օրինականութիւնը արդարադատութեան հիմունք է: Այդ իրաւասութիւնն ու օրինականութիւնը չէր պարփակում մարդկանց անձնական միտումների շրջափակում. նոցա պէտք էր շփոթ, պղտոր ջուր, պէտք էր երերել երկրի իրաւակարգը, եւ տպալելով նոցա դէմ այդ առանցքում մարտնչող նահանգապետին՝ վայելել կեանքը հենց այդ իրաւունքների ու ճշմարտութեան փլատակների վրայ:

Բայց յետագայ բոլոր պատմութիւնը ցոյց տուեց, որ այդ մարդիկ ոչ միայն չեն պարապում իրենց գործերով՝ այլեւ անընդունակ էին այդ աշխատանքին: Նրանք միանգամայն վարկաբեկեցին մեզ օտարների առաջ, եւ երկրի բախդը իրենց միտումներում գործիք դարձնելով՝ խորտակեցրին բոլորին եւ ամէն բան:

Բայց համաշխարհային պատմութիւնը համաշխարհային դատն է:

ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 636, թ. 1-34, պատճէն, մեքենագիր:

ՅԱՒԵԼՈՒԱԾ 1

Ստեփան Ղորդանեանի հարցազրոյցը «ՄՇԱԿ» թերթին

(22 Դեկտեմբեր 1920թ.)

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻ ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Դեկտեմբերի 2-ից 3-ի գիշերը, ժամի 2-ին՝ դաշնակցական կառավարութեան ներկայացուցիչներ Ալէքսանդր Խատիսեանը, Աբրահամ Գիւլխանդեանը և Ստեփան Ղորդանեանը Ալէքսանդրոպօլի միջնաբերդում ստորագրեցին հաշտութեան դաշնագիրը, որ վերջ էր դնում հայ-թիւրքական պատերազմին.

Հայ ժողովրդի կրած դժբախտութիւններից ամենադժնդակն է այս խոշոր պատմական ողբերգութիւնը, և մենք նրան ամենայն անկողմնապահութեամբ պատմութեան համար արձանագրելու համար դիմեցինք պատուիրակներից մէկին, պ.Ստեփան Ղորղանեանին (Կարսի նախկին նահանգապետին) և խնդրեցինք պատմել մեզ այն դժբախտ հանգամանքները՝ որոնց մէջ տեղի ունեցաւ դաշնագրի ստորագրութիւնը. «Մշակի» վաղեմի աշխատակիցը և մեր յարգելի բարեկամը ամենայն յօժարութեամբ կատարեց մեր խնդիրքը, և պատմեց մեզ հետեւեալը, որ մենք բերում ենք ճշտութեամբ:

ԴԷՊԻ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼ

Երբ Կարսից, այս մեծ բերդի անկման նախընթաց ժամին, պ. Ղորղանեանը միւս հիմնարկութիւների հետ գնում է Ալէքսանդրոպօլ՝ Երևանի կառավարութիւնը նրան հեռագրով կանչում է իր մօտ և նշանակում է նրան ներքին գործերի մինիստրի օգնական: Իսկ երբ պատուիրակութիւն է ընտրում Ալէքսանդրոպօլում Կարա-Բէքիր փաշայի հետ հաշտութեան բանակցութիւներ վարելու համար՝ մինիստրների խորհուրդը պ. Ղորղանեանին էլ նշանակում է պատուիրակ: Նոյեմբերի 28-ին պատուիրակութիւնը, որի նախագահն էր Ալէքսանդր Խատիսեանը՝ Երևանից ճանապարհւում է Ալէքսանդրոպօլ: Մօտ մի ժամ առաջ այնտեղ է ուղևորւում և Սովետական Ռուսիայի ներկայացուցիչ Մդիվանին, որ պիտի մասնակցէր բանակցութիւններին:

Երկաթուղու կայարանում պատուիրակներին և նրանց խորհրդականներին սպասում էին աւտօմոբիլներ, որոնք տարան նրանց միջնաբերդը, ուր բնակարան էր պատրաստուած նրանց համար:

ՔԵԱԶԸՄ ԿԱՐԱ-ԲԷՔԻՐ ՓԱՇԱ

Տեղ հասնելուն պէս՝ պատուիրակներն այցելում են Քեազըմ Կարա-Բէքիր փաշային, որ թիւրք զօրքերի հրամանատարն էր, և նշանակուած էր թիւրքական պատուիրակութեան նախագահ:

Առաջին տեսակցութիւնը տևեց 1 և կէս ժամից աւել: Կարա-Բէքիրը թողնում է խելօք և կրթուած մարդու տպաւորութիւն. Նա կրթութիւն ստացել է Գերմանիայում, բայց գեղեցիկ խօսում է և ֆրանսերէն:

Հայ պատուիրակութեան նա յայտնեց թէ Անգորայի կառավարութիւնը ցանկանում է ուղղակի հայերի հետ բանակցութիւններ վարել առանց միջնորդների: Ապա պատմեց թէ ինչից առաջացաւ միլլիճիների արշաւանքը: Կարսի շրջանը գրաւելու միտք մենք չենք ունեցել, ասաց նա: Դեռ Յունիս ամսին Անգորայի կառավարութեան արտաքին գործերի մինիստրը մի յուշագիր ուղարկեց Հայոց կառավարութեան, առաջարկելով որ հայերի և թիւրքերի մէջ եղած դարաւոր արիւնոտ վէճը լուծուի խաղաղ բանակցութիւնների միջոցով: Սակայն Հայոց կառավարութեան կողմից ստացուած պատասխանն անհաշտ ոճով էր գրուած, և որ ամէնից վիրաւորականն է՝ այդ պատասխանը Հայաստանի արտաքին գործերի մինիստրի ստորագրութիւնը չէր կրում, թուղթը ստորագրել էր նրա գրագիրը (միրզան): Միաժամանակ հայոց զօրքերը յարձակումներ էին գործում Օլթիի շրջանի վրայ և վնասներ հասցնում մահմեդական ազգաբնակութեան: Մենք պատերազմական գործողութիւններ սկսեցինք: Ամենայն մանրամասնութեամբ մենք գիտէինք թէ ինչ է կատարւում հայերի մօտ, ինչ ոյժ ունեն նրանք և որտեղ են տեղաւորուած նրանց զօրամասերը: Բայց և այդպէս, չէինք կարող ենթադրել թէ այդքան շուտ մեզ պիտի տեսնենք Արփաչայի ափին կանգնած:

Առաջին տեսակցութեան միջոցին էլ որոշւում է որ միւս օրուանից առաւօտեան ժամի 10-ից սկսուեն հաշտարար կոնֆերանսի պաշտօնական նիստերը: Սակայն միւս օրը Կարա-Բէքիր փաշան իր շքախմբով գնում է հայ պատուիրակութեան մօտ, և յայտնում է թէ եկել է փոխայցելութեան: Այնպէս որ պաշտօնական նիստ նշանակւում է միւս օրը:

ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՐՑԸ

Պաշտօնական նիստին մասնակցում էին միայն հայ և թիւրք պատուիրակները: Թիւրքերը մերժեցին թոյլ տալ որ մասնակցութիւն ունենայ Սովետական Ռուսիայի ներկայացուցիչ Մդիվանին, այնպէս որ բոլոր բանակցութիւնների միջոցին Մդիվանին ոչ մի մասնակցութիւն չէ ունեցել:

Բանալով առաջին պաշտօնական նիստը՝ Կարա-Բէքիր փաշան առաջարկում է ընտրել նախագահ:

Ալէքսանդր Խատիսեանը պատասխանում է մի ճառով, որի մէջ ասում է թէ երբ 1878 թուին բացուեց Բերլինի վեհաժողովը և իշխան Բիսմարկն առաջարկեց նախագահ ընտրել՝ Աւստրիական ներկայացուցիչ կոմս Անդրաշին ասաց թէ որովհետև վեհաժողովը կայանում է գերմանական հողի վրայ, և բոլոր պատուիրակներն այդպիսով Գերմանիայի հիւրերն են հանդիսանում՝ ուստի նախագահ պիտի լինի հենց ինքն իշխան Բիսմարկը: Վեհաժողովը համաձայնուեց այդ առաջարկութեան և նախագահ ընտրեց Բիսմարկին: Այժմ էլ ինքը, Խատիսեանը, միևնոյն նկատառումներով առաջարկում է որ նախագահէ Կարա-Բէքիր փաշան[16]: Փաշան շնորհակալութիւն է յայտնում իր ընտրութեան համար, և կոնֆէրանսն սկսում է իր պարապմունքները:

ՀԱՅԵՐԸ ՀՐԱԺԱՐՈՒՄ ԵՆ ՍԵՒՐԻ ԴԱՇՆԱԳՐԻՑ

Ամենաառաջին պայմանը, որ դնում է Կարա-Բէքիր փաշան Անգորայի կառավարութեան կողմից, այն է, որ գրաւոր կերպով հրաժարուեն Սեւրի դաշնագրից: Միայն այդպիսի թուղթ ստանալուց յետոյ է, որ թիւրքերը բանակցութիւնների մէջ կը մտնեն: Հայ պատուիրակները յայտարարում են թէ իրանք այդպիսի լիազօրութիւն չունեն, և խնդրում են յետաձգել ժողովը՝ հարցը քննելու համար:

Նիստը յետաձգւում է միւս օրուան: Հայոց պատուիրակները ամբողջ օրը քննում են իրանց տալիք պատասխանը, և վերջը խմբագրում են մի թուղթ, որի մերձաւոր բովանդակութիւնն այն էր թէ նկատի առնելով որ երկու ազգերը - հայ և թիւրք - վճռել են անմիջական բանակցութիւններով վճռել իրանց մեջ եղած վիճելի հարցերը, և թէ կայ դէպի ծովը ելք ունենալու հարցը, Հայաստանը հրաժարւում է Սեւրի դաշնագրից:

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՏԷՍ

Թիւրքական պատուիրակութիւնն անցնելով այնուհետև հայ-թիւրքական սահմանների որոշման՝ առաջարկեց որ հայերը ներկայացնեն իրանց ցանկութիւնները, գծագրուած աշխարհական քարտէսի վրայ: Հայ պատուիրակութիւնը

[16] Հայաստանի նախկին վարչապետը, երևի մոռացել էր, որ Բերլինն իսկապէս գերմանական հող էր և որ վեհաժողովի անդամները ճիշտ որ Գերմանիայի հիւրեր էին, մինչդեռ Ալէքսանդրոպոլը… չէ որ նա հայկական հող էր, թէև ժամանակաւոր և բռնի ոյժով գրաւուած թիւրքերից: Որ թիւրքերն էլ նրան Հայաստանի հող էին համարում՝ այդ ցոյց է տալիս հենց Ալէքսանդրոպոլի դաշնագիրը: Ժ. Խ. (*Ծանօթագրութիւնը թերթինն է - Վ.Հ.*)

պատրաստում է այդ քարտէսը և մի առանձին յիշատակագրի հետ ներկայացնում է կոնֆէրանսին: Հայաստանի սահմանների մէջ մտցուած էին ամբողջ Երևանեան նահանգի, Կարսի շրջանը, իսկ Թիւրքած Հայաստանից Վանի վիլայէթը և Ալաշկերտի գաւառը: Յիշատակագրի մէջ հաշուած էր թէ հայ կառավարութիւնը իր հաւաքած տեղեկութիւններով կարող է հաստատապէս ասել, թէ հաշտութիւնը կնքելուց յետոյ այլևայլ երկիրներից Հայաստան կ՚երթան մօտ 800,000 հայեր:

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՔԱՐՏԷՍ

Հայկական քարտէսին Անգորայի պատուիրակութիւնը հակադրեց իր քարտէսը, կցելով նրան մի յիշատակագիր, որի մէջ աչքի ընկնող յայտարարութիւնն այն է, որ թէև հայերը համարում են իրանց առանձին կուլտուրայի տէր ժողովուրդ, բայց այդ ճիշտ չէ. ապացոյց երաժշտութիւնը, որ բաղկացած է արևելքից բերած մօտիւներից[17]: Իսկ քարտէսի վրայ գծագրուած էին Հայաստանի համար այսպիսի սահմաններ.- արևմուտքում՝ Արփաչայը, հարաւում՝ Արաքսը մինչև Գայլի Դուռանցքը: Այսպիսով միլլիճիներին են անցնում Կարսի նահանգը և Սուրմալուի գաւառը: Թիւրքերը, կատարելով այդպիսի անդամահատութիւն՝ դեռ բաւական չափով վեհանձնութիւն էլ ծախեցին, յայտարարելով թէ նրանք անկարելի են համարում թելադրել Հայաստանին 1918 թ.-ի Բաթումի դաշնագրի սահմանները, որոնք չափազանց անձուկ են, ուստի հայերին են թողնում Ալէքսանդրոպօլը և երկաթուղու գիծը դէպի Երևան:

Հայ պատուիրակութիւնը կարողացաւ միայն մի հինգ վերստի տարբերութիւն մտցնել առաջարկուած սահմանագծի վրայ:

---

[17] Միլլիճիները կարծել են, թէ յաղթելով հայոց դժբախտ գեներալներին՝ իրանք հենց դրանով հեղինակութիւն են ստանում խօսելու և իրանց խելքից ու ըմբռնողութիւնից շատ բարձր նիւթերի մասին: Եւ ստացուել է մի խղճուկ զաւեշտ, որ գալիս է միանգամ էլ հաստատելու թէ քարերն անգամ խնդալ կարող են թիւրք արիւնկզակ փաշայութեան վրայ, երբ նա խօսում է քաղաքակրթութիւնից և կուլտուրայից (*Ծանօթագրութիւնը թերթինն է - Վ.Հ.*):

ՅԱՒԵԼՈՒԱԾ 2

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՂՈՐՂԱՆԵԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԻ, ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆԵԱՆԻ ԵՒ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՍԻՆ

Աղբիւրներից[18] յայտնի է, որ Սուրմալու գաւառի հայազգի երևելիներից Ղորղան աղան, ում պատկանում էր Իգդիրի մօտակայքում գտնուող Ղորղան ամրոցը, 1415 թ.-ին թողնում է իր օրրանը և ամբողջ գերդաստանով Սուրմալուից գաղթում Վրաստան: Այստեղ ազնուականի իրաւունքներով նա վրաց թագաւորից կալուածքներ է ստանում Բորչալու գաւառում, ապա մայրաքաղաք Թիֆլիսի մօտակայքում (Մեծ և Փոքր Ենագեթի գիւղեր[19]): Վրաստանում Ղորղանեանները զբաղեցրել են պալատական, պետական և զինուորական բարձր պաշտօններ: Վրաստանը Ռուսաստանին միացնելուց յետոյ, Ղորղանեանների (Ռուսական կայսրութեան օրոք՝ Կորգանովներ – Горгановы, Коргановы, Каргановы) ազնուական կարգավիճակն ու իրաւունքները պահպանուել են նաև Ռուսական կայսրութիւնում[20]:



Выписка из заключения Верховного грузинского правительства общего собрания от 7 марта 1825 года за № 28.

Как представленные просителями Коргановыми грамоты, в которых предки их названы дворянами, по отзыву членов общего собрания из грузинских князей не подлежат никакому сомнению, то собрание сие полагает признав их Коргановых в дворянском достоинстве внесть в 6-ю часть дворянской родословной книги, о чем с приложением означить их доказательств представив наилучшее на благоусмотрение Вашему высокопревосходительству.

23 марта 1825 г.

Ղորղանեանների տոհմիկ ազնուական լինելը վկայող և հաստատող փաստաթուղթ

---

[18] ՀՍՀ, նոյն տեղում; **Եղիազարեան Ա.**, նոյն տեղում:

[19] Որոշ հեղինակների մօտ նաև՝ Էնեգեթ, Էնագեթ:

[20] Бекский дом- Пятигорск, 2006, вып. 3, сс.11-17; Общій Гербовникъ дворянскихъ родовъ Всероссийскія Имперіи, часть 20, с.116, Герб рода дворянъ Коргановыхъ, gerbovnik.ru/search/ search.html?query=%CA



Ղորղանեանների տոհմիկ ազնուական լինելը վկայող և հաստատող փաստաթուղթ



Ղորղանեանների տոհմիկ ազնուական լինելը վկայող և հաստատող տոհմի զինանշանը

Ռոմանովների թագին մէկ դարից աւել ծառայելու ընթացքում՝ Ղորղանեանների տոհմը ռուսական պետութեանն ու ռուսաստանեան (ներառեալ նաև հայ-

կական) հասարակութեանը տուել է մեծ թուով յայտնի մարդիկ: Ղուկաս Ա. Կարնեցուց յետոյ՝ 1801–1807 թթ., Ամենայն Հայոց կաթողիկոսն էր Դաւիթ Ե. Էնեգեթցի Ղորղանեանը: 1800-ական թուականների կէսերին Թովմաս Յովսէփի - Ղորղանեանը զբաղեցնում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր սինոդի դատախազի պաշտօնը: 1879 թ. Ռուսիոյ կայսր Ալեքսանդր II-ի հրամանագրով Երևան բնակավայրին տրւում է քաղաքի կարգավիճակ: Առաջին քաղաքագլուխ է նշանակւում Յովհաննէս Ղորղանեանը՝ պաշտոնավարելով մինչև 1884 թ.:

Ռազմական ասպարէզում Ղորղանեանների տոհմից յայտնի են ցարական բանակում ծառայած մեծ թուով գեներալներ և սպաներ, որոնք բոլորն էլ մասնակցել են ցարական Ռուսաստանի տարբեր ժամանակաշրջաններում վարած պատերազմներին: Ղորղանեան տոհմի գեներալներից մէկի պատուին Թիֆլիսում ժամանակին փողոց է անուանակոչուել: 1917 թ.-ին Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ՝ զգալի թուով Ղորղանեաններ ծառայել են նաև Ռուսաստանի Սպիտակ շարժման տարբեր զօրամիաւորումներում[21]:

1918-1920 թթ. Հայաստանում բարձրաստիճան զինուորական Ղորղանեաններին ներկայացնում էին Առաջին աշխարհամարտի ժամանակ Կովկասեան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ գեներալ-մայոր Գաբրիէլ Ղորղանեանը և գնդապետ Նիկոլայ Ղորղանեանը, որոնք Ռուսական կայսրութեան փլուզումից և Կովկասեան ռազմաճակատի լուծարումից յետոյ ծառայութեան են անցնում Հայաստանի Հանրապետութեան նորաստեղծ բանակում[22]: Նիկոլայ Ղորղանյանը Ղարաքիլիսայի ճակատամարտի եռանդուն կազմակերպիչներից ու խիզախ հրամանատարներից մէկն էր: Արդէն անկախ Հայաստանի ազգային բանակի գեներալի ուսադիրներով՝ 1921 թ. Փետրուարի 17-ի լոյս 18-ի գիշերը բոլշևիկների ձեռքով երկու տասնեակ ականաւոր հայերի հետ կացնահարւում է Երևանի բանտում: Գաբրիէլ Ղորղանեանը խուսափում է բոլշևիկեան բռնութիւններից, հաստատւում Ֆրանսիայում, որտեղ էլ կնքում է մահկանացուն 1954 թ.:

Իսկ մէկ այլ Ղորղանեան՝ Գրիգորը, 1918 թ.-ին գլխաւորում էր Բաքուի բոլշևիկեան կոմունայի զինուած ուժերը: Նա Բաքուի 26 գնդակահարուած կոմիսարներից մէկն էր:

1918-1920 թթ.-ին հայկական բանակի պորուչիկ Արմենակ Ղորղանեանին բոլշևիկները 1920 թ.-ի Յունուարին ձերբակալում են Վաղարշապատում և տե-

---

[21] Участники Белого движения в России, http://xn--90adhkb6ag0f.xn--p1ai/arhiv/uchastniki-grazhdanskoj-vojny/uchastniki-belogo-dvizheniya-v-rossii/uchastniki-belogo-dvizheniya-v-rossii-kor-koya.html

[22] **Аветисян Г.**, Генерал Гавриил Григорьевич Корганян, Вестник общественных наук НАН РА, 1997, т. 2, сс 155-177.

ղափոխում Բաքուի բանտ: Այլ տեղեկութիւններ նրա մասին յայտնի չեն: Երևանի Թոխմախ կոչուող գերեզմանոցում, որի մի հատուածում ամփոփուած են Երկրորդ աշխարհամարտի տարիներին Երևանի զինուորական հոսպիտալում մահացած զինուորները, շիրմաքարերից մէկի վրայ կարդում ենք.

КАРГАНОВ ИВАН СТЕПАНОВИЧ (1903-1944)

Գեներալ Գաբրիէլ Գրիգորի Ղորղանեան
(3 Մայիսի, 1880, Թիֆլիս - 8 Յունուարի, 1954, Փարիզ)

Գնդապետ Նիկոլայ Ադամի Ղորղանեան
(15 Յունիսի, 1878, Թիֆլիս - 17 Փետրուարի, 1921, Երևան, բանտ)

Արուեստի բնագաւառում մեծ ճանաչում են ունեցել երաժշտագէտ և երգահան Բարսեղ (Վասիլի)[23] և Գենարիոս Ղորղանեանները, երգչուհիներ՝ Նինա, Մարիամ, Հեղինէ Ղորղանեանները և այլք[24]:

Վերը թուարկուած պայծառ և ականաւոր անձանցով, բնականաբար ամենևին չի սահմանափակւում, առավել ևս սպառւում Ղորղանեանների նշանաւոր և շնորհաշատ ներկայացուցիչների ցուցակը: Նրանց թէ՛ ամբողջական պատմութեան (և ներկայի), թէ՛ առանձին անձանց կենսագրութեան և գործունէութեան

---

[23] Ամփոփուած է Երևանի Կոմիտասի անուան այգու պանթէոնում:

[24] ՀՍՀ, հ. 7, նոյն տեղում: Տե՛ս նաև **Եղիազարեան Ա.**, նոյն տեղում: **Ստեփանեան Գ.,** Կենսագրական բառարան, հ. Բ, Երևան, 1981, էջ 250-251:

մանրամասն ուսումնասիրութիւնն ու լուսաբանումը միանգամայն այլ ոլորտի հարցեր են: Ուստի և մենք կը սահմանափակուենք այսքանով: Ասենք միայն, որ չնայած քաղաքական (և ոչ միայն) բազմաթիւ փոթորիկներին ու արհաւիրքներին՝ Ղորղանեան-Կորգանով-Կարգանով տոհմի ներկայացուցիչներին այսօր էլ կարելի է հանդիպել Վրաստանում, Ռուսաստանում, մի շարք այլ երկրներում, իսկ ցավոք սրտի, ամէնից հազուադէպ՝ Հայաստանում:

Ինչ վերաբերում է սոյն գրքում ներկայացուած ձեռագրի հեղինակին, ապա Ստեփան Ալեքսանդրի Ղորղանեանը ծնուել է 1865 թ. Օգոստոսի 1-ին Իգդիրի մաքսատան պետ, ինչպէս արդէն նշուել է, տոհմիկ ազնուական Ալեքսանդր - Յովսէփի Ղորղանեանի ընտանիքում: Նրա հայրը յետագայում մասնակցել է 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմին, եղել է Իգդիրի զինուորական պարետը: Պատերազմից յետոյ Ալեքսանդր Ղորղանեանը նորից անցել է քաղաքացիական ծառայութեան և երկար տարիներ ապրել Իգդիրում՝ աշխատելով որպէս Սուրմալուի մաքսատան կառավարիչ:

Ստեփան Ղորղանեանի հայրը՝ Ալեքսանդր Յովսէփի Ղորղանեանը
Լուսանկարի շրջերեսի վրայ ռուսերէն գրուած է. Александр Осипович Коргановъ

Ստեփանն աւագ որդին էր, կրթութիւնը ստացել է նախ Թիֆլիսում բնակուող գերմանացի պարոն Տիգենհաուզենի մասնաւոր պանսիոնում, ապա Թիֆլիսի ռեալական դպրոցում:

Ուսումնառութեան տարիներին Ստեփանը մեծ հակում ունէր դէպի հումանիտար գիտութիւնները և մտադիր էր ռեալական դպրոցն աւարտելուց յետոյ մեկնել արտասահման՝ կատարելագործուելու հենց հումանիտար-հասարակական գիտութիւնների մէջ, սակայն հայրը գերադասում էր աւագ որդուն տեսնել յատկապէս պետական ծառայութեան ոլորտում: Ռեալական դպրոցն աւարտելուց յետոյ՝ 1885 թ.-ին, դեռ 20 տարին չբոլորած Ստեփան Ղորղանեանը զիջելով հօր ցանկութեանը՝ աշխատանքի է անցնում Իգդիրում որպէս Սուրմալուի գաւառապետի օգնական: 1888 թ.-ին տեղափոխւում է Նախճաւան և մինչև 1895 թ. աշխատում որպէս Նախճաւանի գաւառապետի օգնական: Մշտապէս ունեցել է պաշտօնէական առաջընթաց. 1895-1910 թթ.-ին եղել է Նոր Բայազէտի, իսկ 1910-1915 թթ.-ին՝ Քութայիսի գաւառապետը (уездный глава): Առաջին աշխարհամարտը սկսուելուց յետոյ որոշ ժամանակ վարում է ռուսական զօրքերի կողմից գրաւած Հին Բայազէտի և Ալաշկերտի շրջանների կառավարչի պաշտօնը, իսկ հետագայում՝ մինչև Ռուսական կայսրութեան փլուզումը, Կարսի շրջանի զինուորական վարչութեան պետն էր (окружной глава)[25]: Երբ 1917 թ. Հոկտեմբերեան յեղաշրջումը մեր տարածաշրջան բերեց անորոշութեան և անիշխանութեան աւերիչ ալիքը՝ Ստեփան Ղորղանեանը, որպէս նախկին ցարական պաշտօնեայ (статский советник- պետական խորհրդական, գեներալ-մայոր), առաջիններից մէկն էր՝ իր վրայ զգաց այդ ալիքի ազդեցութիւնը, դառնալով անցանկալի անձ:

1918 թ.-ի Ապրիլին՝ Անդրկովկասեան սէյմի որոշմամբ Կարսը երիտթուրքերին յանձնելուց յետոյ, Ստեփան Ղորղանեանը հեռանում է Կարսից և հաստատւում Դիլիջանում: Այստեղ, իր իսկ խօսքերով՝ նա զբաղւում էր իր «սիրած գործով», թղթակցում էր «Մշակին»: 1919 թ. Ապրիլի 14-ից մինչև 1920 թ.-ի Հոկտեմբերի 30-ը՝ Ստեփան Ղորղանեանը Հայաստանի Հանրապետութեան Կարսի նահանգապետն էր: 1920 թ.-ի Նոյեմբերի 5-ից՝ Ստեփան Ղորղանեանը մինչև Առաջին Հանրապետութեան կործանումն աշխատում է որպէս երկրի ներքին գործոց նախարարի օգնական (տեղակալ): Մասնակցում է Ալեքսանդրապոլի դաշնութեան ստորագրմանը, ինչից յետոյ Հայաստանում հաստատուած բոլշևիկեան իշխանութիւնը նրան արտաքսում է Հայաստանից:

---

[25] **Եղիազարյան Ա.**., նույն տեղում; Кавказский календарь на 1917 год, Учреждения министерства внутренних дел, Карсская область, с.221.

Դրանից յետոյ Ստեփան Ղորղանեանն ընտանիքով բնակութիւն է հաստատում Թիֆլիսում, որտեղ էլ վախճանւում է 1925 թուականի Մարտի 30-ին՝ վաթսուն տարին դեռևս չբոլորած:

Խորհրդային աղբիւրները Ստեփան Ղորղանեանի կեանքի վերջին հինգ տարիները ներկայացնում են գրեթէ որպէս «երջանիկ ծերութիւն». որևէ գործունէութեամբ չի զբաղուել, անցել է կենսաթոշակի... Նրա կեանքի այդ հատուածի իրական մանրամասներին մենք տեղեակ չենք, բայց յամենայն դէպս, ենթադրում ենք, թե ինչ «դրախտային» պայմաններում կ՛ապրէր խորհրդային այդ տարիներին նախկին ցարական, իսկ յետոյ դաշնակցական կառավարութեան օրոք գեներալի կոչումով այդ պաշտօնեան: Չնայած իր ազգակից Նիկոլայ Ղորղանեանի ճակատագրի համեմատ՝ դա կարելի է համարել դրախտից էլ վեր մի բան:

Ստեփան Ղորղանեանը Նախճաւանում աշխատած ժամանակ (1894 թ.)

Ստեփան Ղորղանեանը
Քութայիսի գաւառապետ



Ստեփան Ղորղանեանը մի խումբ ծառայակիցների հետ
Դատելով Ստեփան Ղորղանեանի (վրանից դուրս եկողն է) տարիքից և վրանի մօտ շարք կանգնած զանգուածի մահմեդական պատկանելութիւնն ընդգծող տարազից՝ կարելի է ենթադրել, որ լուսանկարն արուած է հաւանաբար Ղորղանեանի՝ Կարսի նահանգապետ եղած օրերին

3 նոյեմբերի 1919 թ.
Հայաստանի Հանրապետութեյան վարչապետ Ալեքսանդր Խատիսեանի դիմաւորումը Սարիղամիշի կայարանում
Վարչապետի հետևում կանգնածը Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանն է

Կը ցանկանայինք որոշ տեղեկութիւններ ներկայացնել ընթերցողին նաև Ստեփան Ղորղանեանի ընտանիքի մասին:

Ստեփան Ղորղանեանի կինը Կատարինէ Սարգսեանցն էր (ռուսական փաստաթղթերում՝ Катаринэ Саркисянц, Катаринэ Саргисянц, Екатерина Саркисова): Նրանք ունեցել են երկու զավակ՝ Կոնստանտինը և Մարգարիտը (Մարգօ, Մարգարիտա):

Ստեփան Ղորղանեանն իր կնոջ հետ

Ստեփան Ղորղանեանն իր կնոջ և զավակների հետ

Ստեփան Ղորղանեանի կինը՝
Կատարինէ Սարգսեանցը

Ստեփան Ղորղանեանի կինը՝
Կատարինէ Սարգսեանցը

Ստեփան Ղորղանեանի կինը՝
Կատարինէ Սարգսեանցը
1893 թ.

Մարգարիտը ծնուել է 1901 թ. Օգոստոսի 22-ին Նոր Բայազէտում, որտեղ այդ ժամանակ նրա հայրը գաւառապետն էր: Աւարտել է Թիֆլիսի օրիորդաց գիմնազիան (1918 թ.), իսկ յետագայում՝ արդէն խորհրդային կարգերի օրոք, օտար լեզուի քառամեայ դասընթացները և ստացել օտար լեզուի ուսուցչի որակաւորում: Մարգարիտն ամուսնացել է Ջանփոլադեանների յայտնի տոհմից Մկրտիչ Ջանփոլադեանի հետ, բնակուել Երևանում: Վախճանուել է 1957 թ.-ին: Մարգարիտի շառաւիղներից շատերն այսօր էլ բնակւում են Երևանում:

Մարգարիտ Ղորղանեան
(Քութայիսում ընտանիքով բնակուելու տարիներին)

Մարգարիտ Ղորղանեան
(Թիֆլիս, 21 Մայիսի, 1918 թ.)

Մարգարիտ Ղորղանեանը (Ջանփոլադեանը)
հասուն տարիներին

Կոնստանտին Ղորղանեանը ծնուել է 1897 թ. Սեպտեմբերի 1-ին: Կրթութեան մասին որևէ փաստաթղթային տուեալ մեզ չյաջողուեց պարզել, բայց որոշ հրապարակումներից[26] և նրան դեռևս յիշող անձանց հետ հանդիպումներից պարզ դարձաւ, որ նա յայտնի թարգմանիչ էր, լրագրող և հրապարակախօս:

[26] Տե՛ս https://zvezdaspb.ru/index.php?page=2&razd=biblio/name11.htm; Все люди-армяне, “Новое время”, 2013 թ., 17 Դեկտեմբերի:

Կոնստանտին Ղորղանեանը
մէկ տարեկանում

Կոնստանտին Ղորղանեանը
1911 թ. Դեկտեմբերին

Կոնստանտին Ղորղանեան

Կոնստանտին և Մարգարիտ Ղորղանեանները
Իրենց մօր և ընտանիքի մտերիմներից մէկի հետ

Կոնստանտին և Մարգարիտ Ղորղանեանները
(25 Նոյեմբերի 1902 թ., Երևան)

Կոնստանտին և Մարգարիտ Ղորղանեանները

Կոնստանտինն ամուսնացել է Աֆրիկեանների յայտնի տոհմի ներկայացուցիչ Մարգարիտա (Մարգարիտ) Աֆրիկեանի հետ: Ուսումնասիրելով Աֆրիկեանների տոհմածառը՝ մենք կանգ առանք այն վարկածի վրայ, որ այդ անձը հաւանաբար 1910 թ.-ին ծնուած Մարգարիտա Արմենակի Աֆրիկեանն է: Նրանք ունեցել են մէկ զաւակ՝ Նարբէյ (Նարբէհ, Նորբէյ), որը ծնուել է Թիֆլիսում 1938 թ.-ի Փետրուարի 2-ին: Ամենայն հաւանականութեամբ, Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատումից յետոյ Կոնստանտինն ընտանիքով բնակուել է հենց Թբիլիսիում: Երեխայի ծնուելուց որոշ ժամանակ անց ամուսիններն ու նորածինը յայտարարւում են ժողովրդի թշնամի, և ստալինեան խորշակը նրանց քշում-գցում է Սիբիրի խորքերը:

Եկէք ընթերցենք Նարբէյի ձեռքով գրուած ինքնակենսագրութիւնը (տրւում է բնագրի տեքստը).

Նարբէյ Կոնստանտինի Ղորղանեանը
ուսանողական տարիներին

« Ես ծնուել եմ 1938 թուի Փետրուարի 2-ին Թբիլիսի քաղաքում /Վրացական ՍՍՌ/: Մանկութիւնս և ուսման տարիներս անց էի կացրել Սիբիրում, ուր այդ ժամանակ գտնւում էին իմ ծնողները: Որովհետև մեր ապրած վայրում դպրոց չի եղել, ես անցել եմ դպրոցի դասընթացը ծնողներիս օգնութեամբ և յանձնել եմ քննութիւնները էքստեռն կարգով: 1956 թուականին ընդունուել եմ Երևանի Պետական համալսարանի ռուսաց լեզուի և գրականութեան ֆակուլտետը, իսկ 1961 թուին աւարտել եմ համալսարանը և անցել եմ աշխատանքի Պետական Մատենադարան, որպէս արտահաստիքային գիտաշխատակից: Ֆրանսերէն և գերմաներէն լեզուները ես սովորել եմ իմ ծնողներից միջնադպրոցի դասընթացը անցնելու ժամանակ: Համալսարանում սովորելու ժամանակ ուսումնասիրել եմ գրաբարը և անգլերէնը: Գրաբարն ինձ դասաւանդել է դոցենտ Խ. Կանայեանը, իսկ անգլերէնը՝ ընկ. Ռ. Թէրզեանը:

ՆԱՐԲԷՅ ԿՈՆՍՏԱՆՏԻՆԻ ԿՈՐԳԱՆՈՎ

3/10-62թ.

Երևան, Տերեան 1, բն.17, հեռախօս. 6-48-36»:

Միջնակարգ դպրոցի աւարտական վկայականը Նարբէյին յանձնել են Ալթայի երկրամասի Ռոդինսկի գիւղական դպրոցում: 1956 թ.-ին, ազատուելով ГУЛАГ-ից, Կոնստանտինն ընտանիքով գալիս է Երևան: Որքան մեզ յայտնի է, մինչև կեանքի վերջը նա աշխատակցել է «Коммунист» թերթին: Ցաւօք, մեզ չյաջողուեց պարզել Կոնստանտին Ղորղանեանի և Մարգարիտա Աֆրիկեանի մահուան տարեթուերը: Մերօրեայ Հայաստանի պատկան մարմիններում, ուր մենք դիմում էինք, ներկայացնելով այդ անձանց տուեալները և բնակութեան հասցէն, մեզ պատասխանում էին, որ մեր հարցմանը պատասխան գտնելը պարզապէս «ֆիզիկապէս անհնար մի գործ է»: Մեզ յաջողուեց միայն ճշտել, այն էլ նրանց ճանաչողների միջոցով, որ նրանք ամփոփուած են Կարմիր բլուր գերեզմանոցում, ուր նոյնպէս հնարաւոր չեղաւ պարզել նրանց յուղարկաւորման կոնկրետ տեղը: Բացի ծնողների տուած կրթութիւնից ու աւարտական վկայականից՝ Նարբէյը Սիբիրի խորքերից բերեց նաև կակազելով խօսելն ու մշտական վախի անբնական մի զգացողութիւն, որոնք նրա մօտ ի յայտ էին եկել այն բանից յետոյ, երբ երեխան սիբիրեան ձմռան մի երեկոյ յայտնուել էր գազազած շների մեծ ոհմակի մէջ, իսկ հայրը՝ Կոնստանտինը, ցրտահարել էր քիթն ու վերջոյթները: Այդ պաշարով ահա 1956 թ.-ին Երևան ժամանեց Կարսի նահանգապետի որդու ընտանիքը: Նարբէյը չի ամուսնացել, ժառանգներ չի ունեցել: - Մինչև կեանքի վերջին օրը (2007 թ.-ի Օգոստոսի 17) եղել է Մատենադարանի հաւատարիմ և նուիրեալ աշխատակիցներից մէկը: Այդ ընթացքում, բացի ընթացիկ գիտական ուսումնասիրութիւններից՝ Նարբէյ Ղորղանեանն իրականացրել է հսկայածաւալ ամփոփ մի աշխատանք. գրաբարից ռուսերեն է թարգմանել Աբրահամ Կրետացու «Պատմութիւն անցիցն իւրոց եւ Նատր-շահին Պարսից» երկասիրութիւնը[27]:

Չափազանց դիւրահաւատ և ըստ էութեան՝ կեանքի հարցերում բացարձակ անկարող այդ անձնաւորութիւնը՝ ոչ առանց «սրտացաւ» մարդկանց ջանքերի, աստիճանաբար զրկւում է ամէն ինչից և ի վերջոյ յայտնւում ծերանոցում (22 Նոյեմբերի 2001 թ.): 2007 թ. Օգոստոսի 14-ին նրան ծերանոցից դուրս են գրում և յանձնում մի խումբ անձանց խնամակալութեան, որից երեք օր անց Նարբէյը կնքում է իր մահկանացուն: Այսպիսին էր Հայաստանի Հանրապետութեան Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի և նրա հետնորդների ճակատագիրը:

ՎԼԱԴԻՄԻՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Մայիս-Յունիս, 2018, Երևան

---

[27] Տե՛ս Աբրահամ Կրետացի, Պատմութիւն անցիցն իւրոց եւ Նատր-շահին Պարսից, քննական բնագիր, ռուսերէն թարգմանութիւնը, առաջաբանը և ծանօթագրութիւնները՝ **Ն. Ղորղանեանի**, Երևան, 1973:



Ղորղանեանների տոհմածառը

Թիւ 30-ի տակ նշուած է Ալեքսանդր Յովսէփի Ղորղանեանը, թիւ 47-ի տակ՝ Ստեփան Ալեքսանդրի Ղորղանեանը, իսկ 52-ի տակ՝ նրա որդին, Կոնստանտին Ստեփանի Ղորղանեանը (ծն. 1 Սեպտեմբերի 1897 թ.)

Ազնուականի տիտղոսը Կոնստանտինին շնորհուել է 1907 թ. Մայիսի 17-ին

ԿԱՐՍԻ ՄԱՐԶԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒՄ
(1919 Ապրիլ – 1920 Հոկտեմբեր)
ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ
ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆԵԱՆԻ ՅՈՒՇԵՐԸ
աշխատասիրութեամբ՝ ՎԼԱԴԻՄԻՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

THE MARZ (PROVINCE) OF KARS WITHIN THE REPUBLIC OF ARMENIA (April 1919 – October 1920)
MEMORIES OF KARS
GOVERNER
STEPAN GHORGHANYAN (KORGANOV)
Compiled by:
VLADIMIR HARUTYUNYAN

Ստորագրված է տպագրության 02.08.2018:
Չափսը՝ 100x70 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ օֆսեթ: 40.25 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 500 օրինակ:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ

Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 52.79.74
էլ. փոստ lusakn@rambler.ru